Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1350

9(33
Z-85

9(33)
Z-85

30 MAY 2011

12 SEP 2006

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս·ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀԱՏՈՐ Բ.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ՀԱՒԱՔԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Տ· ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ
ՑԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԷ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ
Տ· Տ· ՄԱԿԱՐԱՅ
ԱՌԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս· ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ· ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ
Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ
Տ· ԽՈՐԵՆԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1890

9(33)
Z-85

JUN 2013

58209-67

Ա. ՀԱՏՈՒ

Ի ՍՈՑՆ Երկրորդ Հատորիս՝ առաջի կայ մեզ պատմել զանցս իբր 130 ամաց, յորս անընդհատ երեւին յաջորդութիւնք Պատրիարքաց Մ. Աթոռոյն ըստ կարգին, զանազան արկածք ժամանակին. սակաւ ուրեք, յորս փայլի Վանք Ս. Յակոբայ պայծառութեամբ, և հանգիստ ի խոր խաղաղութեան, Առաջնորդութեամբ խոհեմ և արթուն հովուաց։ Եւ է զի՝ բաղում անգամ պատահեալ ձախող ելից եւ անյաջող դիպուածոց, եւ վերստին անկեալ ի վտանգս՝ հեծէ դառնագին ի ներքոյ ատառապանաց. և այս յաւէտ ի դառնութեան և ի խիստ հարկապահանջութեան ժամանակս, ի նենգամիտ ատելութենէ և յոխերիմ թշնամութենէ օտարաց. եւ երբեմն եւս շահադէտ ընտանի դարանակալաց, զորս ունիմք պատմել ըստ կարգի ի գիրս յայս։ Սակայն ի սոյն միջոցիս՝ երբեմն առատութեամբ Հոխանան Նիւթք, և է զի՝ նուազեալ խսպառ դադարին. այլ որքան հասին ի ձեռս մեր հատակոտոր թուղթք, նամականիք, կոնդակք և դատաստանական թղթեանք, յորոց քաղեալ եդաք ի կարգի Պատմութեանս՝ խորշելով միանգամայն յաւելորդ և յերկար բանից։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԳԼՈՒԽ Ա.

Մինչեւ Շղթայակրի 'ի Կոստանդինուպօլսոյ. Ժամանել Նորա 'ի Բերիա եւ անտի Յերուսաղէմ։ Բարեկարգութիւն Ս. Յակոբայ։ Ուխտաւորք Յոպպէյու։ Կարապետ Կոթուղիկոս։ Կանոնք Ս. Յակոբայ։

Իսկ Գրիգոր եւ Յովհաննէս Պատրիարքունք աջակցեալ ընդ միմեանս՝ մեծավաստակ ջանիւք՝ ժողովեցին բազում ինչ յազգէն Հայոց, եւ վճարեցին ըստ մասին ըզպարտսն, եւ գնեցին 'ի Յոպպէ զերիս մթերանոցս, եւ ըզսենեակսն 'ի վերայ նոցա եւ խառնեցին 'ի վանս եւ յանդիման սոցին զփուռն հացի 'ի ծովեզրն՝ զոր յետոյ յափըշտակեցին այլազգիք։

Եւ ինքն Գրիգոր ետես զհաշիւն իւր ընդ Յովհաննու Պատրիարքի, սկսեալ 'ի թուականէն 1747, յոր եմուտ 'ի գործ ծառայութեան Ս. Աթոռոյն, եւ մաքրեաց զամենայն տուր եւ առ գործս իւր. եւ ապա գնացեալ երկոքեան 'ի դատարան Մահմուտ Փաշայի՝ ետուն հաստատել զայն դատաւորին, եւ ինքն Գրիգոր ետ նմա գիր անդորրութեան։

Եւ յետ այնորիկ կարգեաց զնոյն ինքն զՅովհաննէս Պատրիարք Փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի՝ հաճութեամբ ազգային երեւելեաց. և նա յօժարութեամբ յանձն առ աշխատիլ անձանձիր յօգուտ եւ 'ի շինութիւն Ս. Աթոռոյն եւ ամ ըստ ամէ առաքէր յերուսաղէմ զտուրմար հաշուի իւրոյ։

Եւ յետ կարդաւորելոյ Գրիգորի զամենայն գործս իւր՝ եկ 'ի Կոստանդինուպօլսոյ, և ճանապարհ արար յԵրուսաղէմ. և հասեալ 'ի Բերիա քաղաք՝ այն է Հալէպ, մնաց անդ աւուրս ինչ՝ դնեաց կալուածս 'ի նպաստ Ս. Աթոռոյն. նորոգեաց զհնացեալ և զաւերեալ Հոգեւոր տունն 'ի պէտս ուխտաւորաց՝ 'ի թաղն կոչեցեալ Ս-ԷՂ-, զոր կառուցեալ էր Գրիգոր Պատրիարք Պարոն Տէր 'ի ժամանակի իւրում, և զարդարեալ պայծառացոյց սենեկօք և խցովք և այլ կարեւոր պիտոյիւք՝ ձեռնտուութեամբ վաճառականացն Հայոց եղելոց անդ, և զկնի 5 ամաց եւ դնել արձանագիր յորմն 'ի դաւթի անդ գրեալ 'ի թուին Հայոց 1175 (1726)։

Եւ ելեալ անտի եկն յԵրուսաղէմ բազմութեամբ ուխտաւորաց յամի Տեառն 1721 'ի 12 Փետրվար ամսոյ, որոյ ընդ առաջ ելին միաբանք վանաց, քրիստոնեայք եւ այլազգիք քաղաքին. զի բազմիցս լուեալ էին զբարի համբաւ նորին, եւ անձկային եւս տեսանել զնա։ Եւ եմուտ Գրիգոր շքեղ հանդիսիւ և մեծաւ փառօք 'ի քաղաքն, և նստաւ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի. և ձեռն արկ բարեկարգել և նորոգել զվանօրայս, եւ զկրօնաւորս վանական կարգօք, և հետզհետէ վճարել զպարտսն և ազատել զկալուածսն 'ի Յոպպէ, 'ի Ռեմլէ եւ յԵրուսաղէմ. նոյնպէս զկահ և զկարասիս վանաց և զեկեղեցական ընտիր ընտիր անօթս և զպաս, զորս յառաջագոյն աշխարհական տեղակալք եղեալ էին 'ի գրաւի։ Եւ ապա կարգեաց առանձին տումար յեկեղեցին վասն եկեղեցական զարդուց. և ինքն սկիզբն արար գրել զայն, ուր ինքն ասէ. «Գրող այսմ տումարիս Ամիրտոլցի Գրիգոր մեղապարտ վարդապետս». և այսպէս մինչ 'ի վախճան իւր գրեաց զայս տումար, զոր միանգամ եւս եւ յաւելին 'ի գանձ Տեառն միաբանք և օրհնեալ ազգս Հայոց, և զորս միանգամ ինքն եւ չինել. 'ի վախճանի պատուիրէ խստիւ բոլոր միաբանաց՝ և մանաւանդ լուսարար և կամ փակակալ վարդապետին, ընդ հսկողութեամբ որոյ են եկեղեցական անօթք, զգուշութեամբ պահել և պահպանել, զի մի կրկին անկցի 'ի ձեռս աներկիւղ արանց, թէ միաբան իցէ և թէ եկամուտ ոք, եւ ցրուեալ կորուսցեն, զորս բաղում նեղութեամբ և աշխատութեամբ ժողովեալ էր։ Եւ ինքն սկիզբն

արար որոնել և քննել զվանս, թէ զի՞նչ արդեօք թողեալ իցեն նախորդք իւր. և ժողովեալ առ նա Միաբանաց երդմամբ վկայեցին առաջի նորա, թէ սոքա են զերծեալքն 'ի ձեռաց յափշտակչաց, 3 սկիհ զգինձ, 4 սկիհ արծաթ, 5 կանթեղ, 1 բուրվար, 12 փոքր խաչ և 1 միջակ, յորոյ վերայ տրամեցաւ յոյժ։ Եւ զկնի աւուրց ինչ եկին առ նա աթոռակալ Հաննա վարդապետ. Սպարկերտցի լուսարար Տէր Դաւիթ, և Ուրհայեցի վերակացու Տէր Յակոբ, եւ ասեն. մի՛ այդչափ տրամիր եւ հոգայր, զի սակաւ ինչ պահեալ եմք յարդեանց Ս. Աթոռոյն, ազատելով 'ի ձեռաց կեղեքիչ տեղակալաց։ Յորոց վերայ սակաւ ինչ ուրախացեալ, արձանացոյց և զայնս 'ի տումարին, թէպէտ և նոքա էին ոչ ինչ։ Եւ ապա սկսաւ զարդարել զեկեղեցի Ս. Յակոբայ պէսպէս յօրինուածովք և պատկերօք տնօրէնութեան Քրիստոսի Փրկչին մերոյ, եւ ամենայն Սրբոց Նորին։ Կանգնեալ իւրաքանչիւր խորանաց ոսկեզօծ եւ մանրաքանդակ խաչկալս, զիւրաքանչիւրս նուիրեալ յանուն երեւելի անձանց ազգիս, ըստ չափու նուիրաց նոցին, յորոց միջի փայլի Ակնցի Երեւանենց պերճապատիւ Սեղբոս Ամիրայն իւր բովանդակ ազգատոհմիւն, զորմէ լիցին բանք մեր նաեւ յետոյ. դրոշմեալ 'ի ճակատ իւրաքանչիւր յիշատակելեաց զանմահ անուանս բարերարաց։ Իսկ մեծ խաչկալն Աւագ Խորանի Տեառն եղբօր Յակոբայ Առաքելոյն, գերազանց է քան զամենեսին՝ մեծութեամբ և շքեղ յօրինուածովք, քանդակեալ յիշատակարան 'ի ճակատ նորին երկաթագիր տառիւք, որ ունի օրինակ զայս։

ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱԶՄԵԱԼ ԿԱՆԳՆԵՑԱՒ ՈՍԿԵԶՕԾ ԽԱՉԿԱԼՍ ԵՐԿՆԱՀԱՆԳՈՅՆ ԽՈՐԱՆԻՍ ՍՐԲՈՅՆ ՅԱԿՈԲԱՅ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐ ԱՍՏՈՒԱԾԱԳԻՐ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, Ի ԹՈՒԻՆ ՌՃՀ ՄԷԿ ԱՄԻՆ 1171 (1729). Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻՍ ԵՒ ԲԻԻԶԱՆԴԻՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ՝ ԱՇԱԿԵՐՏԱՅ ՏԵԱՌՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱԳԻՇԵՑԻՈՅ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՄԲՆ ԵՒ ՋԱՆԻՒՔ ԿԵՐՏԵՑԱՒ Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ ԻՒՐԵԱՆՑ, ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՄԱՐՄՆԱՒՈՐ

ԾՆՈՂԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՄԻԱԲԱՆԻՑ ԱՇԽԱՏՈՂԱՑ· ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂԱՑ ԵՒ ԲՈԼՈՐ ԱՐԱՄԵԱՆՍ ՏՈՀՄԻ· ՋՏԷՐ ՑԻՍՈՒՍ ԵՒ ՋՏՈՒՆՆՍ ՍԻՐՈՂԱՑ· ԸՆԹԵՐՑՈՂՔԴ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՑԷՔ ԱՄԷՆ։

Աստուածատուր Կաթուղիկոս Ս· Էջմիածնի իրրեւ լուսաւ թէ հասեալ է Գրիգոր Պատրիարք յԵրուսաղէմ յԱթոռն իւր, և ձեռն արկեալ 'ի գործ չինութեան վանաց Ս· Յակոբայ, գրեաց առ նա թուղթ սիրոյ և յարգանաց, հարցանելով զողջունէ նորին եւ զթեթեւութենէ պարտուց Ս· Աթոռոյն· զի թէպէտեւ ուխտաւորք տարւոյն այնորիկ 'ի դարձի իւրեանց 'ի հայրենիս, աւետաւորեալ էին նմա զբարեկարգ անուանութենէ Աթոռոյն, և զայլ ազգաչէն բարեգործութենէ նորին· այլ Աստուածատուր 'ի դիւրութիւն սրտի իւրոյ, խնդրէր գիր 'ի նմանէ, և ինքն յետ կարգաւորելոյ զգործս նուիրակացն Երուսաղէմի եւ անվնաս հասուցանելոյ զարդիւնս նոցին 'ի ձեռս Գրիգորի· յարէ 'ի վերջոյ· « զնուիրակն Գողթան գաւառի զմխիթար վարդապետ՝ կարգեցաք Նուիրակ Կարնոյ, զի մի՛ գործն խափանեսցի, եթէ հաճոյ է քեզ՝ բարի՝ իսկ եթէ ոչ, զո՛ ոք կամիս, զայն առաքեա, զի գործ Ս· Տանդ յառաջեսցէ, և մերն յետոյ լիցի »· 1721 'ի 18 Հոկտեմբեր ամսոյ։

Ի սմին ամի ելեալ ուխտաւորաց 'ի Յոպպէ քաղաքէ երթային յԵրուսաղէմ, և 'ի ճանապարհին յարձակեալ 'ի վերայ նոցա աւազակաց՝ կալան զնոսա եւ մերկացուցին· վիրաւորեցին զրազումս, և զոմանս սպանին իսկ· և այս եղեւ յանհոգութենէ Իշխանին Յոպպէ քաղաքի, որ ըզ-Ղ-ֆ-ը կոչեցեալ տուրս նոցին էառ, և զզարտ ու պատշաճ պաշտպանութիւնն զլացաւ 'ի նոցանէ· 'ի վերայ այսր անակնկալ դիպուածոյ՝ միաբանեցան երեք ազգք յԵրուսաղէմ, և եռուն փոխադարձ գիր դաշանց եւ երաշխաւորութեան միմեանց, չքակտիլ 'ի միաբանութենէ իւրեանց· ապա առին Հեռճէթ 'ի դատաւորէն և առաքեցին զայն 'ի Կոստանդինուպոլիս, բերել ոսկիկան հրովարտակաւ· զի պաշտպանութեամբ նորին ուխտաւորք իւրաքանչիւր ազգաց՝ առանց վտանգի եւ վնասու եկեսցեն

'ի Քաղաքն Ս· եւ անդրէն դարձցին 'ի տեղիս իւրեանց և զրովանդակ ծախսն հոգասցեն Հայք և Յոյնք, 'ի 13 Մայիս ամսոյ՝ 1722։

Իսկ Գրիգոր Պատրիարք աջակցութեամբ Հաննա վարդապետի ընդարձակեաց զաւանդատունն Ս· Ստեփաննոսի, կառուցեալն 'ի ժամանակս Թագաւորացն Կիլիկիոյ, չինեալ 'ի նմա սեղան Պատարագի յանուն Ս· Լուսաւորչին, եւ զԱւազանն Ս· առընթեր նմին՝ յօրինեալ վայելուչ և սպիտակ մարմարիոն քարամբք։ Կանգնեաց սեղան 'ի բարձր ամպիոնն 'ի կողմն հիւսիսոյ՝ յանուն Ս· Նշանի, և չինեաց 'ի վերայ սեղանոյն պահարան գեղեցիկ յոր պահէին զՍ· Խաչն, որ ունէր մասն 'ի Կենաց Փայտէն։ Գնեաց յայլազգեաց զբազում տունս՝ և խառնեաց զնոսա 'ի վանս, և պարսպեաց զնա չուրջանակի բարձր և ամուր պարսպաւ 'ի զգուշութիւն գողոց և աւազակաց· չինեաց զբազմաթիւ սենեակս 'ի պէտս բնակութեան ուխտաւորաց և միաբանաց· արար և զսրբենատունն՝ յորում եդեալ կայ խաչ մարմարիոն բերեալ յեկեղեցւոյ Յովակիմայ և Աննայի· նորոգեաց նաեւ զվանս Բեթղեհէմի՝ ընդարձակեալ սենեակս և զխուցս 'ի նմա, և զեկեղեցին հանդերձ ոսկեզօծ խաչիալօք, ժողովեալ անդ բարեկրօն միանձունս և աղօթաւորս կրօնաւորական կարգօք՝ կալ 'ի պաշտօն փառաբանութեան Աստուծոյ, և աղօթս առնել վասն ամենայն աշխարհի և օրհնեալ ազգիս Հայոց։

Յետ այնորիկ ձեռնարկեալ նորոգեաց զվանս Յոպպէի՝ կառուցեալ 'ի նմա հաստատուն քարամբք կամարս 8, և ընդարձակեաց զիջեւանս ուխտաւորաց և տեառնագրեաց զեկեղեցի յանուն Ս· Նիկողայոսի Հայրապետին՝ պաշտպանին նաւավարաց· զիպուածսն՝ էր զոր գնեաց նոր 'ի նորոյ, և էր զոր 'ի գրաւէ թափեաց, որոյ ձեռնտու և օգնական էր յամենայնի նա ինքն Հաննա վարդապետ իւրով անխոնջ աշխատութեամբ։ Այս ամենայն արձանագրեալ կայր 'ի վերայ դրան հոգեւան Յոպպէի վանաց 'ի թուին Հայոց 1174 (1725), զոր անզգոյշք ոմանք բարձին զայն անտի։ Նորոգեաց և զվանս Ս· Հրեշտակապետի՝ ծեփեալ սպիտակացոյց զեկեղեցին, եւ ընդարձակեաց զաւանդատունն· կանգնեալ 'ի նմա Սեղան Պատարագի յանուն

սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, որպէս պատմէ զսոյս ամենայն ընդարձակ նա ինքն Հաննա վարդապետ ականատես և գործակից Շղթայակրի։

Իսկ Տէր Կարապետ Կաթուղիկոսն և Հաննա վարդապետ, որ 'ի սոյն ժամանակի էին 'ի Կոստանդինուպօլիս, և Յովհաննէս Պատրիարքն, գրեցին գիր թախանձանաց հանդերձ ամենայն ժողովրդովք առ Գրիգոր Պատրիարք Երուսաղէմի, հանել 'ի պարանոցէ իւրմէ զՇղթայն, զոր կրէր յութն ամաց հետէ. և նորա զիջեալ 'ի խնդիրս նոցա եհան զայն, և չինեաց սեղան փոքրիկ յեկեղեցին Ս. Էջմիածնի՝ յանուն Սինայի, և էարկ զայն Շղթայ 'ի սիւնս նորա, և ապա գրեաց նոցա՝ թէ կատարեցի զխնդիր ձեր, (1726)։

Եւ 'ի սմին ժամանակի Կարապետ եպիսկոպոս Ուլնեցի ձեռնադրեցաւ Կաթուղիկոս 'ի Կոստանդինուպօլիս (1726) 'ի մեծի Պահոց երկրորդ շաբաթու յաւուր Կիւրակէի, Փետրվար 17. և 'ի 18 ին ձեռնադրեաց եպիսկոպոս զՅովհաննէս վարդապետ Կոլոտ՝ Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ, յետ վարելոյ նորա զամս տասն զիշխանութիւն իւր։ Կարապետ Կաթուղիկոս գրեաց գիր յԵրուսաղէմ առ Գրիգոր Շղթայակիր վասն խնդրոյ խմբի. և նորա կատարեալ զխնդիրն՝ գրեաց փոխադարձ գիր և առաքեաց ընդ Աթոռականին իւրոյ Հաննա վարդապետի, եւ իբր նուէր՝ մի ոսկի Խաչ, յոր ամփոփեալ էր մասն ինչ 'ի Կենաց Փայտէն, զոր սիրով ընկալեալ Կարապետի՝ էարկ զայն զլանջով իւրով։ Ապա ձեռնադրեաց անդ 'ի Կոստանդինուպօլիս եպիսկոպոս զՀաննա աթոռական վարդապետն եւ զԹովմայ վարդապետն աշակերտ Յովհաննու Կոլոտի։ Կաթուղիկոսն բնակէր 'ի վանս Իսկիւտարու, որ յայնժամ հոգեւոր կոչէին։ Սորա առաջին հիմնադիրն է Մարտիրոս վարդապետ Ղրիմեցի. զկնի մահուան նորին՝ աւերեալ և քայքայեալ էր, զոր Գրիգոր և Յովհաննէս վերըստին նորոգեցին։ Եւ յաւարտիլ շինութեան եկեղեցւոյն Միջագիւղի, յաւուր հանդիսի օծման նորին, հրաւիրեաց անդ զՏէր Կարապետ Կաթուղիկոսն, և եւ ծանուցանել նմա յատենի եկեղեցւոյ զերիս գլուխս բանից իբր կանոն վասն բարեկարգութեան Աթոռոյն Երուսաղէմի, որք են։

1°. Եթէ ոք չիցէ հմուտ ասուածային Հին և Նոր Կտակարանաց և տեղեակ եկեղեցական կարգաց եւ օրինաց, և չիցէ սնեալ միաբանութեամբ յԵրուսաղէմ, եւ կատարեալ հմուտ եղիցէ և մաքուր Աթոռոյն և ամենայն կարգաց, օրինաց և գործոց նորին, թէ արտաքուստ իցէ և թէ 'ի ներքուստ, այնպիսին ագահութեան եւ տգիտութեան ախտիւ ախտացեալ՝ եթէ յանդգնեսցի մարդահաճութեամբ և անտխտութեամբ Պատրիարք եւ կամ Փոխանորդ լինել Աթոռոյն այնորիկ՝ նզովեալ եղիցի։

2°. Եթէ ոք ժպրհեսցի յաշխարհականաց՝ Պապա՝ Նազր՝ Վէքիլ՝ և այլ անուամբ վերակացու և գործակալ կարգել Երուսաղէմի, և ցուցանել նմա զայլ իմն ճանապարհ խոտորնակ, յորմէ պատճառի ինչս վանաց Ս. Յակոբայ, այնպիսին թէ եկեղեցական իցէ, և թէ աշխարհական, նզովեալ եղիցի։

3°. Եթէ ոք կամիցի և կամ պատճառ լիցի միաւորել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ Պատրիարքութեան Կոստանդինուպօլսի, և կամ ընդ այլ Աթոռոյ, և ոչ յօժարեսցի առանձին լինել Աթոռոյն այնորիկ՝ որպէս այլոց ազգացն, այնպիսին որոշեալ եղիցի 'ի Քրիստոնէական սուրբ հաւատոյս։

Զայսոսիկ երիս Կանոնական գլուխս բանից եդին յայնժամ Կաթուղիկոսն և Պատրիարքն խորհրդով ազգին՝ 'ի հաստատութիւն Աթոռոյն Երուսաղէմի, զի միշտ 'ի մտի՝ եւ գրեթէ առաջի աչաց ունէին զառաջին անցս անկարգութեանց, որ 'ի ձեռն անզգաստից ոմանց տեղի գտեալ՝ վեր 'ի վայր արարին զամենայն կարգս և զկանոնս Աթոռոյն, և հասուցին զայն 'ի յետին վատթարութիւն, և առիթ եղեն բաղմապատիկ վնասուց, դայթակղութեանց և 'ի կորուստ ազգային իրաւանց. զի յաղագս եպերելի շահասիրութեան եւ անձնասիրութեան իւրեանց պառակտէին և զզուէին զկրօնաւորս և ցրուէին զնոսա, որպէս տեսաւ ցարդ յընթացս Պատմութեան։ Նմին իրի՝ սահմանեցին յօրէ յայնմանէ ընտրել զՊատրիարք Աթոռոյն Երուսաղէմի 'ի միաբանական Ուխտէ Ս. Յակոբայ։ Զի զայսպիսի սովորութիւնս ունէին նաեւ յառաջին դարս, յորում եղիպտական իշխանութիւնն տիրէր Պաղեստին երկրին

եւ բաղումք եւս 'ի Պատրիարքաց 'ի կենդանութեան իւրեանց հաճութեամբ միաբանաց յանձնէին զայն իշխանութիւն այլում, հաստատեալ օրինօք դատարանի · այլ այս եւս իբրեւ գործ ինքնակար խափանեցաւ յետոյ ։

Իսկ 'ի վերջին ժամանակս՝ յետ սահմանելոյ զերիս Կանոնս, առաւել ուշ դնէր ազգն՝ ընտրել զարժանաւորս և զվայելուչս՝ հմուտ աստուածային գրոց և կրօնական ուսմանց, վարժ և կիրթ յամենայն գործս Աթոռոյն, ծանօթ բարուց և քաղաքականութեան օտարաց, տեղեակ եկեղեցական բարեկարգութեանց, արթուն և անքասիր արտաքին և ներքին իրողութեանց Աթոռոյն ։

Եւ զի գահակալքն Աթոռոյն ոչ կարէին այնուհետեւ խոտորիլ 'ի շաւղաց նախնի Հայոց, և խախտել մասամբ իւիք զկանոնս և զեղեալ կարգս վանականութեան՝ և ոչ ըստ կամս վարել զգործ տնտեսութեան, աշառութեամբ և զրկողութեամբ պառակտել զմիաբանսն, այլ իբրեւ հայր գթած հաւասար ունէին խնամս 'ի վերայ ամենեցուն, եւ յոգիս սիրոյ և խաղաղութեան կապեալ ընդ միաբանակից եղբարս, աջակցութեամբ նոցին՝ գործէին արթուն մտօք եւ հասուն խորհրդով 'ի շինութիւն Աթոռոյն և 'ի մխիթարութիւն ազգին, ժառանգ թողլով զառաքինութիւնս և զբարեգործութիւնս յաջորդաց իւրեանց, զի ապագայ պատմութիւնն բարւոք ընտրէ զգործս իւրաքանչիւրոց ։

ԳԼՈՒԽ Բ.

Նորոգութիւն տաճարի Ս · Յակոբայ ։ Սեղբոս Ամիրա և բարեգործութիւնք նորին ։ Այլազգիք Վանի ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պատրիարք Կոստանդինուպօլսի ստիպեալ 'ի թախանձանաց և 'ի հարկեցուցիչ բանից մտերմին իւրոյ Գրիգորի Պատրիարքի՝ եհան հրաման արքունուստ վան նորոգութեան եկեղեցւոյն Ս · Յակոբայ (1727) · և առաքեաց զհրովարտակն 'ի ձեռն Ակնցի Սեղբոս Ամիրայի, որ 'ի սմին ժամանակի դէպ եղեւ նմա գնալ յԵրուսաղէմ

յուխտ և երկրպագութիւն տնօրինական Ս · Տեղեաց Քրիստոսի ։ Եւ Գրիգոր Շղթայակիր ուրախութեամբ ձեռնարկեալ նորոգեաց և սպիտակացուցեալ ծեփեաց և պայծառացոյց զեկեղեցին եւ զայլ տեղիս ։ Ընդ որս և զեկեղեցի Ս · Աստուածածնի և մատուռն Ս · Մինասայ · 'ի վանս Ասորւոց չինեաց և ոսկեզօծ փառաւոր խաչկալ Աւագ Խորանի նորին, որպէս երեւի հայկական տառիւք յիշատակարանն դրոշմեալ 'ի ճակատ նորա ։ Նորոգեաց զվանս Բեթղեհէմի, եւ զեկեղեցին ոսկեզօծ խաչկալիւ, որպէս ցուցանէ արձանագրութիւնն 'ի վերայ նորա · Երաց դուռն խանին 'ի կողմանէ վանաց, մաքրեալ և յարդարեալ զայն արար եկեղեցի յանուն ամենասուրբ Երրորդութեան, որ եւ յետոյ խանդարեցաւ · սալիւ յարդարեաց և զյատակս վանաց, որոց սակս կրեաց վիշտս եւ տառապանս յայլազգեաց և ծախեաց բազում ինչ ։

Իսկ Սեղբոս Ամիրայն, որ յԱրքունի հրովարտակս և 'ի դատաստանական գիրս կոչի Սեղբոս որդի Մինասայ, Պաշ պազիրկեան մեծի Վէզիրին եւ Թարգման Անգղիոյ դեսպանին, այրս այս մեծահաւատ, 'ի սմին ժամանակի երեւելի էր 'ի մէջ ազգին 'ի Կոստանդինուպօլիս, եւ բազմօք ձեռնտու ազգային գործոց · արար զմեծամեծ բարութիւնս ազգասիրական ոգւով, յամենայնի աջակից և օգնական դտաւ երկուց Պատրիարքաց բանիւ և արդեամբք, առաւել եւս Աթոռոյն Երուսաղէմի · մանաւանդ յուխտադնացութեան իւրում · դնեաց 'ի նաւահանգիստն Յոպպէյու Իջեւանատեղի (խան) մեծ, հանդերձ մթերանոցովք եւ տամբք, որ 'ի շրջապատս նորա եւ զայլ տունս, կըրպակս, մթերանոցս և պարտէզն արտաքոյ քաղաքին, ուր յետոյ ծախիւք Աթոռոյն չինեցաւ մաքրարան քառասնօրեայ զգուշութեան (քարանդինայ) 'ի սէնս ուխտաւորաց, որպէս յայտ առնէ զայսոսիկ հայկական արձանագրութիւնն եղեալ 'ի վերայ կամարի խանին, գրեալ 'ի թուին Հայոց 1100, թէպէտեւ թուականն բազմօք սխալ, զի 'ի սոյն ժամանակի չեւ եւս էր ծնեալ Սեղբոս Ամիրա, եւ օրինօք դատարանի այն ամենայն կտակեալ աղքատաց Ս · Յակոբայ · Եւ յեկեղեցական անօթս ընտիր երեւի յիշատակ նորին, գաւազանն Հայրապետական զարդարեալ

պատուական ակամբք։ Իսկ այլ յիշատակարանք նորին և ազգատոհմին իւրոյ, իւրաքանչիւրքն դրոշմեալ են 'ի պատշաճաւոր տեղիս 'ի տաճարի Ս. Յակոբայ։ Ունէր նաև առանձին կալուածս 'ի Յոպպէ քաղաքի յանուն իւր, որպիսիք են, բաղանիքն և 'ի կարգս նորա կրպակք մթերանոցք, և տունք 'ի վերայ նոցա, եւ պարտէզ արտաքոյ քաղաքին, և կարգեալ էր 'ի վերայ նոցա յատուկ վերատեսուչ, եւ 'ի ձեռն նորին կառավարեալ իւրաքանչիւր ամի զհաչիւն արդեանց և ծախուց նոցին առնոյր։ Այլ զկնի ժամանակաց՝ նոյն իսկ 'ի կենդանութեան նորին Սեղբոսի, յարեան ոմանք յայլազգեաց՝ իբր ժառանգ կալուածոց, և բռնացեալ 'ի վերայ նոցա յափշտակեցին զայնպէս Թէպէտ ինքն Սեղբոս բազում անգամ 'ի դատ եմուտ ընդ նոսա 'ի դատարանս Կոստանդինուպոլսի և յայտնի եղոյց զիրաւունս իւր՝ և զանտեղի վէճս և զբռնութիւնս այլազգեաց՝ որպէս յայտ առնեն բազմաթիւ դատաստանական գրեանք և Արքունի հրովարտակք, որք ցարդ պահին 'ի Ս. Աթոռն, սակայն չեղեւ հնար թափել զնոսա 'ի ձեռաց նոցին, զի տիրեցին և տիրեն մինչեւ ցայսօր ժամանակի. զի գժուարութիւնք ժամանակին և հեռաւորութիւն տեղւոյն՝ ոչ ինչ օգնեցին ջանից և դատաստանաց Ամիրային։

Իսկ ինքն Սեղբոս Ամիրայ՝ կացեալ ժամանակս ինչ յերուսաղէմ, արարեալ անդ զմեծամեծ բարեգործութիւնս, և կատարեալ զուխտս իւր, դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Գրիգոր Պատրիարք ջանիւք եւ աշխատութեամբ աւարտեաց զնորոգութիւն տաճարին Ս. Յակոբայ յուրախութիւն սրտի իւրոյ։ Այլ հոգ մեծ էր նմա վասն սուրբ Փրկչի վանաց, զի այլազգիք Սիոնի նեղէին եւ տագնապէին հանապազ զմիաբանսն վասն ջրոյ։ Զի թէպէտ նոքա ունէին զմեծամեծ ջրհորս 'ի վանքն Սիոնի, այլ առ չարութեան սրտի իւրեանց՝ հակառակութեամբ առանց ժամու և ժամանակի, և երբեմն 'ի գիշերի եւս եկեալ բաղխէին զդուռն, և ստիպէին բանալ զայն և լնուլ զոսփորն. և յոչ առնուլ յանձն միաբանաց՝ զայրացեալ թշնամանէին զնոսա սոսկալի հայհոյութեամբ և լուտանօք, և ձգէին զմեծամեծ քարինս 'ի ներքս, և չհանդուրժեալ միաբանաց այսպիսի յանդգնութեան նոցին, յակամայից բացեալ տա-

յին զդուռն, այլ միշտ 'ի յերկիւղի՝ զի մի՛ չարիս ինչ գործեսցեն, այլ չ'լինէր հնար՝ զի ընդ նոսա, սպրդեալ մտանէին 'ի ներքս արք անզգամք և սիկարեանք՝ և գործէին զչարիս, որպէս երբեմն 'ի պատճառս ջրոյ և այլոց սպանեալ էին զմանս 'ի միաբանաց։ Տեսեալ Գրիգորի Պատրիարքի թէ օր քան զօր բազմանան չարիք նոցին, և ոչ իւիք եղեւ հնար վախճան տալ դառնութեանց նոցին, գըրեալ ծանոյց զիրսն 'ի Կոստանդինուպոլիս առ Յովհաննէս Պատրիարք, և նա ազդ արար 'ի Դուռն զանցս չարչարանաց միաբանաց, և յաւել ասել 'ի գիրս իւր՝ եթէ ոչ սանձահարեսցին և պատուհասեսցին ապստամբքն այնոքիկ, անհնարին է միաբանաց կալ մնալ 'ի նոյն վանս Ս. Փրկչի։ Եւ ապա խնդրեաց զի հրովարտակաւ Արքայի խափանեսցի ապստամբութիւն այլազգեաց Սիոնի, և եթէ ընդվզեալ անասստեսցեն հրամանի Կայսեր՝ ըմբռնեալ մատնեսցեն 'ի բանս եւ 'ի պատիժ պատուհասից։ Եւ 'ի զգացուցանել զայս Արքայի, գրեցաւ հրովարտակ ըստ խնդրոյ Յովհաննու Պատրիարքի առ Կուսակալն Դամասկոսի եւ առ գաւառն Երուսաղէմի, սանձահարել զբռնութիւն այլազգեացն այնոցիկ։ 'Ի հասանիլ այսր հրամանի՝ թէպէտ եւ մեղմացան առ ժամն խստութիւնք նոցին, այլ ոչ եղեւ այն երկարատեւ, ՌՃԷ։ (1727)։

ԳԼՈՒԽ Գ.

Ծառայութիւն Յունաց ընդ Հայոց 'ի վերայ այսր խնդրոյ եւ միաբանութիւն նոցին։ Նամակ Թրխանդոս Պատրիարքին Յունաց։ Հրովարտակ Արքայի և ոստիկան. Առանձին կատարել զտօն Պասեքին երկուց ազգաց։

ՅԱՒՈՒՐՍ Գրիգորի Պատրիարքի պատահեցաւ գարձեալ այլայլութիւն Զատկի՝ որ կոչի Ծաղկազարդ, որպէս բազմիցս պատահեալ էր յառաջագոյն. զի 'ի ամին ամի՛ որ էր թուական Հայոց 1178 (1729), պասեքն Յունաց անկանէր 'ի 6 Ապրիլ ամսոյ, յորում աւուր պատահէր Հայոց

տօնել զսօն Ծաղիազարդի։ Եւ 'ի 13 Ապրիլի յաջորդ Կիրակէի՝ զՁատիկն։ Վասն զի վաղեմի սովորութիւն լեալէր 'ի մէջ Հայոց և Յունաց յերեկոյի Ծրագալուցի Պասեքին Ժողովիլ ուխտաւորաց խուռն բազմութեամբ 'ի տաճարին Ս. Յարութեան, և յաղագս կատարելոյ զՀանդէս Լուսաւորութեան՝ Պատրիարքունք երկուց ազգաց 'ի միասին մտանէին 'ի Գերեզմանն Քրիստոսի։

Իսկ 'ի սմին ամի յանջատիլ տօնին՝ տարակուսեալ կային երկոքին կողմանքն թէ ո՛րպիսի եղանակաւ հնար լիցի նոցա կատարել զայն, և թէ յո՞ր վախճան ունէր եղերիլ դործն։ Զի քաջ գիտէին 'ի պատմութեանց, թէ ո՛րքան խռովութիւնք և աղմուկք լեալ են յառաջին ժամանակս վասն այսր տօնի, մինչեւ հեղուլ զարիւնս միմեանց, առիթ լինելով տարապարտ մահուան ոմանց։ Նմին իրի՝ Գրիգոր Պատրիարք երկնէր և խորհէր հանապազ 'ի սրտի իւրում թէ ո՞րպէս կարող լիցի զերծուցանել զիւրան 'ի վտանգէ աստի, եւ կանխէր աղօթիւք առ Աստուած զի խաղաղութեամբ և առանց մեծի ցնաստս վճարեսցէ զայն։

Իսկ միաբանք Յունաց իրաւեկ լեալ այսմ՝ սկսան երթեւեկել առ նա, մերթ յայտնի և մերթ 'ի ծածուկ՝ հընարէին որսալ բան ինչ 'ի բերանոյ նորա։ Այլ նա ըստ բնաբոյս բարուց իւրոց՝ խոնարհութեամբ և խաղաղական սիրով առնէր նոցա պատասխանի։ Զի կարի դժուարին և ծանր է խնդիրս ասէ։ միայն աղաչեսցուք զԱստուած, զի ինքն ըստ բարի կամաց իւրոց առաջնորդեսցէ 'ի բարին։ Հանապազորդ կանխել յաղօթս, և խաղաղութեամբ անցուցանել զժամն։ Եւ յամենայն Նոյեմբերի դարձեալ եկին զլխաւորք միաբանացն Յունաց առ Գրիգոր Պատրիարք, եւ յետ այլոց բանից՝ իրրեւ բանք եղեն նաեւ վասն յառաջակայ տօնի Զատկին, ասեն ցԳրիգոր։ Հայր վարդապետ, դիտեմք զի այր Աստուծոյ ես դու, և սիրող խաղաղութեան, և ոչ են կամք քո բանալ զդուռն խռովութեան 'ի մէջ երկուց ազգացս։ Ահա մերձեցաւ տօն Պասեքին, եկեալ եմք առ քեզ, խնդալ զմիտս քո, որպէս կամիս և զի՛նչ հրաման առնես մեզ։ Եւ պատասխանի Գրիգոր և ասէ։ գիտեմ, զի ազգ ձոխ և փարթամ էք դուք և աւագագոյն քան զմեզ, և անհնարին է զիջանիլ ձեզ և

տօնել զՁատիկն ձեր ընդ մեզ։ Նոյնպէս և մեք, թէպէտեւ ազքատ և նուաստ, այլ անկարելի է մեզ փոխել զսահմանս հարց մերոց, և արկանել զերկպառակութիւն և խռովութիւն 'ի մէջ ժողովրդոց։ Այս է միտք և խորհուրդ իմ, զի դուք տօնեսջիք զՁատիկն ձեր առանձին, յորում աւուր և պատահեսցի։ Նոյնպէս եւ մեք 'ի ժամանակի մերում, միայն դիցուք պայման այսպիսի 'ի մէջի։ զի յաւուր տօնի Պասեքի ձերոյ՝ ոչ ոք մոցէ յեկեղեցի Ս. Յարութեան յազգէ մերմէ։ Նոյնպէս եւ 'ի Պասեքի մերում ոչ ոք մոցէ անդ յազգէ ձերմէ բաց 'ի մշանջենաւոր պաշտօնէից երկուց ազգաց, որք կան 'ի տաճարի անդ։ այսպէս երկաքանչիւր ազգ սառանձին խաղաղութեամբ կատարեսցեն զՁատիկն իւրեանց։

Փոխանորդն Յունաց Մելէթիոս եպիսկոպոս լուեալ զայսպիսի բանս 'ի Պատրիարքէն Հայոց, հաճեցաւ ընդ խորհուրդս նորա հանդերձ միաբանակցովքն, և հաւանութեամբ խոստացաւ հաստատուն կալ 'ի վերայ բանիցս այսոցիկ։ Ի վերայ այսր բանից յաւել Գրիգոր ասել՝ ոչ այդպէս՝ այլ հաւատարմացուսցուք զմիմեանս 'ի Ս. Աւետարանն, և դիցուք ուխտ և դաշինս յանուն Ամենասուրբ Երրորդութեան, զի մի՛ երեւեսցուք դաւաճան ընկերի՝ դնել որոգայթ միմեանց, այլ սիրով և խաղաղութեամբ անցուսցուք զտարիս, և թողցուք զկնի մեր յիշատակ բարի և զանուն լաւութեան։ Գրեցէք դուք զայս ամենայն Պատրիարքին ձերոյ և ծանուցէք նմա, նոյնպէս և մեք Պատրիարքին և ժողովրդոց մերոց 'ի Կոստանդինուպոլիս։ զի դուն դործեալ ջանասցին հանել հրովարտակ յարքունեաստ եւ առաքել յԵրուսաղէմ զմի ոմն 'ի մեծամեծաց Դրան՝ իրր ոստիկան և վերատեսուչ դործոյս, զի եկեալ նստցի 'ի դուռն տաճարին Ս. Յարութեան, եւ մի՛ տացէ թոյլ ժողովրդոց միոյ ազգի 'ի Պասեքի միւսոյն։ Ի վերջոյ հաստատեալ զայսոսիկ պայմանս 'ի մէջի իւրեանց՝ կնքեցին Տէրունական աղօթիւք՝ և ողջունեալ զմիմեանս մեկնեցան։

Ըստ այսմ պայմանի գրեցին Յոյնք առ Երիսանթոս Պատրիարքն իւրեանց, որ էր այր խոհեմ եւ հանճարեղ՝ համբաւեալ գիտութեամբ եւ խնամատութեամբ 'ի մէջ ազգին իւրոյ։ Նոյնպէս և Շղթայակիր առ Յովհաննէս Պատ-

ՀԱՅ ԱՌՔ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅ ԵՐԱՆԵՑԻ
ՀՍՍՌ-ԱՌՄ ՍՍՌ
Ա. ՄԱ Ա ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
58209-64

րիարք և առ իշխանաւորս ազգին 'ի Բիւզանդիոն, յայտ արարեալ զմիաբանութիւն իւր ընդ ազգին Յունաց՝ յաղագս տօնի Զատկին, խնդրեաց 'ի նոցանէ տնօրինել զարժանն։

Ի հասանիլ այսոցիկ գրեանց 'ի Թագաւորեալ քաղաքն՝ ընթերցեալ ազգային երեւելեաց՝ հաճեցան ընդ միաբանութիւնս երկուց ազգաց. ապա յայնմօրէ բարձին 'ի միջոյ երկուստեք զերկիւղ կասկածանաց և երկրպագութեան՝ բանակցին ընդ միմեանս, և խորհին սիրով և խաղաղութեամբ վախճան տալ գործոյն։

Յետ բազում բանից՝ խնդրեցին Յոյնք 'ի Յովհաննէս Պատրիարքէն Հայոց զգիր պայմանի վասն հաստատութեան բանից, և յետ տալոյ նորա զայն, խնդրեաց և ինքն 'ի նոցանէ փոխադարձ գիր ըստ այնմ, և նոքա խոստացան փութով տալ բերել զայն 'ի Պատրիարքէն իւրեանց, որ էր յայնժամ 'ի կողմանս Մոլտավիոյ։ Ապա միաբանեալ երկուց ազգաց՝ գրեցին գիր աղաչանաց և մատուցին զայն 'ի Դուռն, յայտ արարեալ զմիաբանութիւնս իւրեանց վասն տօնի Զատկին, սիրով և խաղաղութեամբ կատարել զայն յերուսաղէմ։

Իսկ Յոյնք զգիր Յովհաննու Պատրիարքի և զգիրն աղաչանաց առաքեցին 'ի Գուբրէշ առ Խրիսանթոս Պատրիարքն Երուսաղէմի. և նորա հաւանեալ ընդ միաբանութիւն երկուց ազգաց, գրեաց և ինքն գիր հաւատարմութեան և 'ի հաստատութիւն պայմանին եղելոյ, առ Յովհաննէս Պատրիարք Հայոց 'ի Կոստանդինուպոլիս, որ ունէր օրինակ զայս։

Ամենապատիւ և գերերջանիկ Տ. Տ. Յովհաննէս վարդապետ և Ս. Պատրիարք Հայոց 'ի Կոստանդինուպոլիս։

Սիրով ողջունեմք զՍրբազնութիւն ձեր՝ և գրեմք մշտերմաբար. Ընկալայ զպատուական նամակն ձեր, և քաջ ծանեայ զհանդամանս պատուական անձին ձերոյ, և ցընծացեալ բերկրեցայ 'ի սիրտ և 'ի հոգի. մաղթեմք՝ զի բարեգութն Աստուած պահեսցէ զձեզ 'ի բարօր կենդանութեան՝ 'ի խաղաղասիրութեան և յամենայն երկնապարգեւ բարութիւնս։ Իսկ բովանդակութիւն նամակին ձերոյ, ոչ զայլ ինչ իրաց բանս արկեալ ճառէր, այլ միմիայն զսրբոյ և մեծի Պասիքէն՝ որ ունի պատահիլ մեզ յայսմ ամի, որ-

պէս և աղերսագիրն, զոր առաքեալ էիք առ մեզ սակս սաորադրելոյ զայն, առաւել պարզ և բացայայտ կացուցանէր զվնդիրն՝ քան զնամակն ձեր. զի 'ի կողմանս յայսոսիկ դժուարին եղեւ մեզ գտանել զայնպիսի Հայազգի ոք, որ կարող լիցի ըստ օրինի թարգմանել զայն։ Մեք այժըմ զայս պատասխանեմք։ Յորժամ հանդիպեցաք Սրբազնութեան ձերում, և բանիւ բերանոյ երկար և խորաքննին խորհրդով ճառ արկեալ խօսեցաք 'ի վերայ այսր խնդրոյ, այլ անկարելի եղեւ մեզ զելս հնարից գտանել, և վշտագնեալ սրտիւ մեկնեցաք 'ի միմեանց։ Եւ յետ այնորիկ առանձին խորհելով դարձեալ ոչ կարացաք գտանել զելս հնարից՝ 'ի բաց բառնալ զանկարգութիւնն զայն, զոր ոչ մեք և ոչ Սրբազնութիւն ձեր կամիք՝ մի միայն այն է դիւրին ճանապարհն՝ զոր յառաջագոյն ծանուցի ձեզ, եւ գրով պատուիրեցի Փոխանորդին մերոյ որ այդր՝ զնոյն բան վերստին յայտ առնել ձեզ, կարի յոյժ հաճոյ թուեցաւ խորհուրդս այս Սրբազնութեան ձեր և աւագամեծար ազգային իշխանաւորացդ, որոյ վասն յայտ արարիք մեզ զչնորհակալիս ձեր։ Զմի եւ զնոյն բան գրեալ ազգ արարի յԵրուսաղէմ Փոխանորդին մերոյ, զի ծանուսցեն անդ Պատրիարքին և Փոխանորդին և համազգային երեւելեաց ձերոց, զի եթէ հաճոյ թուեսցի երկուց կողմանց վաւերացուսցեն զայն և տացեն մեզ տեղեկութիւն։ Իսկ նոքա կարի յոյժ պատշաճաւոր գտեալ զայս խորհուրդ՝ ընկալան, մեծի երախտեաց և գոհութեան արժանի համարելով՝ յայտ արարին մեզ։

Արդ՝ եթէ հաճոյ թուեցաւ առաջարկութիւնն մեր Սրբազնութեան ձերում և ամենեցուն՝ որք ընդ ձեզ են, զի՞արդ հնար է վերստին փոխել զխորհուրդս մեր։ Այլ այժմ ոչ երկարելով զբանս և ոչ 'ի մէջ բերելով զամենայն խօսս, գրեմք ահաւասիկ առ Սրբազնութիւն ձեր, և ձեօք առ ամենայն պատուարժան աւագանիս. զի եթէ Տէր կամեսցի և եկեսցէ օր մեծի և Ս. Պասեքի՝ կատարեսցին Հանդէսք և արարողութիւնք Ս. Պասեքիս մերոյ, որպէս ասացեալ եմք, այսինքն յաւուր շաբաթու Ճրագալուցի կատարեսցուք մեք զՀանդէս Լուսաւորութեան առանձին ընդ ուխտաւորս մեր միայն, ըստ տրամադրու-

թեան աղերսագրոյն՝ զոր առաքեցիք, առանց խառնելոյ և մտանելոյ Հանդիսի մերոյ ուխտաւորացն Հայոց, բաց 'ի մշտնջենաւոր պաշտօնէից Ս. Գերեզմանին։ Եւ ըստ ոմին օրինակի՝ կատարեսցին հանդէսք և արարողութիւնք ձեր յաւուր տօնի Զատկին ձերոյ՝ առանց մտանելոյ և խառնելոյ ուխտաւորաց՝ համազգեաց և միաբանաց մերոց, բաց 'ի նոցանէ որք կան 'ի սպաս ծառայութեան Ս. Գերեզմանին։ Այսու եղանակաւ յուսալի է մեզ սիրով և խաղաղութեամբ անցուցանել զաւուրս մեր և թողուլ զօրինակ բարի զկնի մեր յաջորդաց մերոց. զի եթէ պատահեսցի 'ի ժամանակին սոյն օրինակ փոփոխումն Զատկի, հետեւեսցին օրինակիս այսմիկ։ Հեռասցին և խափանեսցին այն ամենայն չարիք և անկարգութիւնք եւ փակեսցին դրունք տարապայման ծախուց, մանաւանդ դստրվելի դայթակղութեան, յորմէ ոչ ծնանի այլ ինչ, բայց միայն ցնաս և վատահամբաւութիւն՝ եւ այլ ամենայն անբարի գործք, զորս մեք և Սրբազնութիւն ձեր քաջ գիտեմք։

Նկատելով զհանգամանս վիճակին մերոյ և ձեր, ոչ ինչ պատշաճ համարիմ զերդումն բան 'ի մէջ ածել եւ երդնուլ, այլ եղիցի բանն մեր այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ։ Զի թէպէտեւ անայլայլելի Փրկիչն մեր տակս առաւել կատարելութեան եւ հաւատարմութեան մարդկանց բազում անգամ զերդումն 'ի կիր էարկ, «Երդուաւ Տէր և ոչ եւս զղջասցի», սակայն եւ այնպէս հետեւելով մշտնջենաւոր օրինակի նորա, ահա այսու դաշամբք հաւատեմք և խոստանամք, զի եթէ ոք յերկուց կողմանց, կամ մեք և կամ Սրբազնութիւն ձեր փոփոխել համարձակեսցի, եւ կամ ոչ կամեսցի կալ մնալ 'ի վերոյ այնմ ուխտի, որ խաղաղասէր մտօք հաստատեցաւ 'ի միջի երկոցունցս, ուղղակի և կամ անուղղակի, ընդ համազգիս եւ կամ ընդ օտարս, և կամ որ և իցէ եղանակաւ, և կամ նոյն իսկ 'ի մէջ Ս. Երուսաղէմի, նեղվք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի 'ի վերայ նորա, եւ դատապարտեսցի յայսմ աշխարհի և 'ի հանդերձեալն առաջի հրեշտակաց և մարդկան. և յաւուրն դատաստանի և 'ի սոսկալի ատենին Քրիստոսի՝ այնպիսին տացէ պատասխանի իրրեւ թշնամի միաբանութեան և օգտի հասարակաց։

Որպէս տեսցուք յառաջագոյն. զի յայսպիսի կարեւոր խնդիրս չէ ինչ աւելի տարապարտ կրկնումն։ Մեք առանձին ընդ ուխտաւորս եւ ընդ համազգիս մեր կատարեսցուք զարարողութիւնս մեր, առանց խառնելոյ ուխտաւորաց եւ համազգեաց ձերոց, բաց 'ի մշտնջենաւոր պաշտօնէից Ս. Գերեզմանին։ Նոյնպէս և դուք կատարեսջիք զարարողութիւնս ձեր ընդ ուխտաւորս եւ ընդ համազգիս ձեր, առանց խառնելոյ և մտանելոյ ուխտաւորաց մերոց, բաց յայնցանէ որք սպասաւորեն Ս. Գերեզմանին։

Արդ՝ առաւել քան զայս ոչ կարեմք գրել յայտնի և բացորոշ զիրս. զի վստահ եմք, որ առանց երկուանալոյ հաւատայք բանից մերոց, որպէս և մեք չունիմք երկրայութիւն ինչ խոստմանց և երդմանց ձերոց։ Յորժամ բարւոք թարգմանեալ զնամակս 'ի միտ առջիք, յայնժամ արդար և ճշմարիտ գտանիք զգրեալսդ մեր։ Հարկ է ուրեմն եւ Սրբազնութեան ձերոյ գրել և տալ թուղթ ըստ օրինակիս այսմիկ՝ Փոխանորդին մերոյ։ Եւ զկնի թարգմանութեան նամակիս, տաքեցէք զայն յԵրուսաղէմ առ Ամեն. Պատրիարքն ձեր, եւ ծանուցանել նմա ընդ ելեալն, զի մի անկարգութիւն ինչ պատահեսցի։ Նոյնպէս և ընդ թուղթ Սրբազնութեան ձերոյ տաջիք թարգմանել 'ի մեր լեզու ձեռամբ Փոխանորդին մերոյ, և տալ առաքել զայն յԵրուսաղէմ։

Առաւել բարւոք թուի ինձ վարձել ընկերոջի մի կամ երկու հեծեալս, և անկասկած փութով առաքել զնամակսն յԵրուսաղէմ, զի հանդարտեսցին մեր և ձեր վանականքն՝ որ անդ։ Մեք ըստ կարծեաց մերոց աւելի լաւ համարիմք գաղտնի պահել զայս խնդիր 'ի միջի մերում, և չյայտնել ժողովրդոց վասն բազում պատճառաց։

Իսկ աղերսագիրն և նամակներն, զորս առաքեալ էիք զմին ստորագրել և զայլն տալ ընթեռնուլ յեկեղեցիս, մնասցին այժմ. զի խորհեսցուք 'ի միասին, զի դեռ ունիմք ժամանակ. զի յայսմ ամի Զատիկն անկանի յԱպրիլ ամսոյ. յորժամ 'ի մի վայր դուսարիսիմք՝ որ ունի լինիլ յառաջիկայ ամսոյ, խօսեսցուք 'ի վերոյ խնդրոյդ այդոցիկ. 'ի բաց թողեալ զայլ ամենայն գործս թէեւ 'ի մեծ

զնա մեզ, եթէ չնորհեսցէ մեզ Տէր կեանս և կենդանութիւն, յառաջ քան զսոն Մննդեան Փրկչին մերոյ, աներկրայ լինիմք 'ի կողմանդ յայդոսիկ. յուսով եմք թէ յայնժամ խորհելով 'ի միասին, դիւրութեամբ գտանեմք զելս հնարից գործոյս։ Ահա այս է ճշմարիտ կարծիքն մեր, և եթէ հաճոյ թուեսցի ձեզ՝ պատասխանեցէք փութով 'ի ձեռն Փոխանորդին մերոյ։ Աղաչեսցուք զԱստուած զի տացէ բարի վախճան գործոյս, և առաջնորդեսցէ 'ի բարին՝ ըստ մեր յուսոյ և խորհրդոյ։ Օրհնութեամբ ողջունեմք զսիրելի բարեկամն մեր զմահտեսի Սեղբոսն, նոյնպէս և զպատուարժան միաբանութիւնս ձեր։ Մնամ սիրեցեալ ձեզ 'ի Քրիստոս։

1728 Նոյեմբեր 8։ 'է Պ–տրեզ։

Երուսաղէմի Պատրիարք Խրիսանթոս։

Ի հասանիլ թղթոյս 'ի Կոստանդինուպոլիս առ Յովհաննէս Պատրիարք, գրեաց և ինքն հանգոյն սմին թուղթ, և ետ ցՅոյնս առաքել յԵրուսաղէմ։ Իբրեւ դարձաւ Պատրիարքն Յունաց 'ի քաղաքն կայսերանիստ, մատուցին 'ի Դուռն զթուղթն, զոր պատրաստեալ էին յառաջագոյն. եւ 'ի զգայուցանել զայն Արքային Ահմետայ, հաճեցաւ՝ մանաւանդ թէ զարմացաւ իսկ ընդ այնպիսի անակնուն-ելի միաբանութիւնս երկուց ազգաց. և հրամանաւ նորին գրեցաւ հրովարտակ՝ ըստ մտաց աղերսագրոյն, յորում պատուիրէր առ ամենայն դատաւորս և գործավարս Երուսաղէմի, արթնութեամբ եւ զգուշութեամբ 'ի գլուխ տանել զհրաման Արքային։ Կարգեցին նաեւ ոստիկան և վերատեսուչ գործոյս՝ զայրն հաւատարիմ Իպրահիմ Աղա. գրեաց նաեւ վասն այսր խնդրոյ դիր հրամանի, (Պույրուլտի) նա ինքն Վէզիրն մեծ Իպրահիմ Փաշա, և յանձն արարեալ 'ի ձեռս ոստիկանին, առաքեցին յԵրուսաղէմ։ Եւ նորա ճանապարհ արարեալ եհաս անդ 'ի 16 ամսեանն Մարտի, և մատոյց զդրեանս դատաւորի քաղաքին, և նա կոչեաց զՓոխանորդն Յունաց զՄելեթիոս, և զՓոխանորդն Հայոց Հաննա կամ Յովհաննէս եպիսկոպոս, և ետ ընթեռնուլ առաջի նոցա զհրովարտակն Արքայի, և զդիր մեծի

Վէզիրին։ Իբրեւ յանձն առին նոքա հաճութեամբ կատարել զհրամանն, գրով հաստատեաց զմիաբանութիւնս նոցա և արձակեաց։

Իսկ Գրիգոր Պատրիարք 'ի Կիւրակէի Գալատեան, որ օր Մաղկազարդ էր Յունաց, առաքեաց զամենայն ուխտաւորս և զժողովուրդս Հայոց 'ի լեառն Զիթենեաց եւ ետ կատարել անդ պատարագ հանդիսաւոր 'ի վերայ Համբարձման ոտնատեղւոյն Քրիստոսի, եւ յաւուրն երկրորդի առաքեաց զնոսա 'ի Յորդանան գետ, եւ դարձան անտի խաղաղութեամբ յԵրուսաղէմ։ (Զայս սովորութիւն խափանեալ են այժմ Հայք, միայն 'ի տարւոջ միանգամ տան բերել ջուր 'ի գետոյ անտի՝ և բաժանեն ուխտաւորաց. իսկ Յոյնք ցարդ պահեն զսովորութիւնս իւրեանց, և 'ի տարւոջ միանգամ տանեն անդ զուխտաւորս)։

Եւ 'ի հասանիլ տօնի Պասեքին Յունաց՝ եկեալ ոստիկանին և այլ մեծամեծացն այլազգեաց՝ նստան 'ի դուռն տաճարին Ս. Յարութեան 'ի զգուշութիւն՝ եւ չթողուլ զոք 'ի Հայոց մտանել 'ի ներքս ըստ հրամանին։ Թէպէտ և Գրիգոր Շղթայակիր յառաջագոյն յորդորական բանիւք և քաղցրախօս վարդապետութեամբ իւրով պատուիրեալ էր ժողովրդոց չգնալ ումեք և մի' երեւիլ անդ, զի մի' գուցէ կրեսցէ պատիժս՝ և ազգն ողջոյն երեւեսցի իբրեւ անհնազանդ։ Այնպէս հետեւեցան ժողովուրդք խրատու հովուի իւրեանց, մինչ զի չիմանալ ումեք թէ՝ զինչ գործեցին Յոյնք 'ի Պասեքի իւրեանց։ Եւ այսպիսի եղանակաւ կատարեալ նոցա զՅատիկն՝ ելեալ գնացին 'ի տեղիս իւրեանց։

Եւ յաւուր յայնմիկ 'ի միջօրէի ետ բանալ Գրիգոր Պատրիարք զդուռն Տաճարին և գնացեալ անդ բազմութեամբ ուխտաւորաց, կատարեաց զսոն Մաղկազարդի մեծահանդէս փառօք, և դարձաւ 'ի վանս Ս. Յակոբայ։ Նոյնպէս կատարեաց անդ յաւուր Աւագ Ուրբաթու զխորհուրդ Զարչարանաց և Խաչելութեան Տեառն, թափօրական հանդիսիւ շրջելով 'ի բովանդակ անօրինական Տեղիս 'ի տաճարի անդ։ (Այս սովորութիւն Հայոց խափանեալէ այժմ, զոյն խորհուրդ կատարեն 'ի տաճարի Ս. Յակոբայ)։

Իսկ յաւուր Շարաթու յերեկոյի Ճրագալուցի Զատկին,

գնաց դարձեալ բազմութեամբ ուխտաւորաց և միաբանական գաւառք, ուր ժողովեալ էին գործակալք դրանն · խաղաղութեամբ և ուրախութեամբ կատարեաց զհանդէս Լուսաւորութեան, ըստ վաղեմի սովորութեան Հայոց, մխիթարելով զժողովուրդն · Եղիսաբեցիք, այսինքն Գոլթիք, որք ոչ կամեցան ընդ Հայոց ասնել զՁատիկն, դաղտագողի 'ի զննին կային սատ և անդ 'ի պատուհանս և յայլ տեղիս ընդ միաբանս Յունաց՝ տեսանել թէ յո՞ր եղերին ելք իրացն · այլ մեծ արար Տէր զողորմութիւնն եւ մխիթարեաց զծառայս իւր ։

Նոյնպէս և 'ի դիշերին յայնմիկ վառաւորապէս կատարեցին զսոն հրաշափառ Յարութեանն Քրիստոսի թափօրիւ, և դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց ։ Զեղեւ ինչ վէճ և կամ խռովութիւն յաւուրսս յայսոսիկ 'ի մէջ երկուց աղգաց, և ոտիկանն դրան գրով դատաւորին դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս ։

Զպատմութիւն Մաղատիի, զոր աւանդեցաք 'ի կարգի գործոյս, առեալ եմք 'ի ձեռագիր գրուածոց, ուշ եդեալ նաեւ 'ի դատաստանական գիրս, և 'ի յիշատակարանէ ձեռագիր Յայսմաւուրի, զոր գրեալ է նա ինքն Հաննա վարդապետ ակնատես ամենայն հանդամանաց։ Սակայն երեւի անհամաձայնութիւն բանից յերկուց կողմանց · զի յիշատակարանն աւանդէ, թէ Գրիգոր Պատրիարք առաջի եդ Յունաց զզայմանն առանձին ասնելոյ ըստ Պասէքն, իսկ 'ի բանս Նամակի Պատրիարքին Յունաց այնպէս երեւի, որպէս թէ ինքն սահմանեալ իցէ զՅովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ, առնել այնպէս · եւ նորա չիցէ յանձն առեալ 'ի սկզբան, և յետոյ զիջեալ 'ի կամս նորա, ուստի ծագի տարաձայնութիւն բանից · իսկ մեք սակս չշփոթելոյ զանդիրն, ամենայն պահեցաք զբանս երկուց կողմանց։ Սակայն եւ այս բնական է, զի իւրաքանչիւր ոք՝ զիւրն կամի հաստատել։ Այլ զանդիրն վաղեմի կարելի է այսպէս լուծանել · թերեւս յայնժամ Յովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ, լսելեաւն ազգ արարեալ իցէ յերուսաղէմ զմոս Պատրիարքին Յունաց · և 'ի լինել բանից 'ի մէջ Գրիգորի և Փոխանորդի նոցին, առաջարկեալ է նա այնպէս · եւ նորա ընկալեալ զայն իբրեւ

նախազգած խորհրդոյ Պատրիարքին իւրոյ · եւ այնպէս հաստատեալ զզայմանս դաշինն, և ասոն օրինակաւ յայտնեալ իցեն զգաղանիս իւրեանց ։

Իսկ Հ · Մ · Զամչեան՝ այլով ինն եղանակաւ աւանդէ զայս պատմութիւն խոտորման Զատկի · Տե՛ս Պ՝՝Դ՝ Հայոց, Հ՝՝Դ · Գ · Եր՝՝ 804 ։ Որպէս թէ ծախեալ իցեն 'ի դրունս բազում ինչ յերկուց կողմանց, խրոխտալ 'ի վերայ միմեանց և թշնամանել բանիւք զկծանաց, և լինել մեծամեծ աղմուկաց, և 'ի հասանիլ տօնի Զատկին՝ սպանանել երկու ոգիք 'ի Հայոց, և երկու եւս 'ի Յունաց ։ Այլ այսոքիկ բանք ոչ նշմարին 'ի գրչագիր օրինակս մեր եւ ոչ 'ի դատաստանական գիրս, որք պահին առ մեզ, բայց յայնց խռովութեանց որք յետոյ պատահեցան, զորոց հանդերձեալ եմք ասել։ Թէպէտեւ աղօտ ինն նշմարի 'ի Նամակիս Գրիգորի, այլ կատարեալն և ստոյգն ոչ հասին 'ի ձեռս մեր ։ Այլ մեք թողեալ զայսպիսի վայրապար քննութիւնս՝ մատիցուք պատմել որք զկնի այսմ պատահեցան ։

ԳԼՈՒԽ Դ ·

Ներդութիւն Յունաց ։ Խռովութիւն ժողովրդոյ յարեւելեան գաւառս ։ Վէճ Լատինաց ։ Մահ Աթոռակալ Հաննա վարդապետի ։ Վիճակ Գրիգոր Պատրիարքի ։

Յետ կատարելոյ զսոն Պասէքին յերուսաղէմ, ուխտաւորք Հայոց և Յունաց ցրուեալ գնացին յիւրաքանչիւր գաւառս և 'ի քաղաքս իւրեանց ։ Իսկ Պատրիարքունք Յունաց Պասիոս Կոստանդինուպօլսի՝ և Խրիսանթոս Երուսաղէմի՝ մատուցին գիր ամբաստանութեան 'ի Դուռն զազգէն Հայոց, և ասեն թէ՝ յետ մեկնելոյ յերուսաղեմէ ուխտաւորացն՝ գնացեալ յիւրաքանչիւր գաւառս և 'ի քաղաքս, և ոչ ճանաչելով զչափ անձանց իւրեանց և հանդարտիլ խաղաղութեամբ, մատեան առ դատաւորս և առ իշխանաւորս քաղաքաց՝ ատելութեամբ բանարկու եղեն զազգէն Յունաց, թէ նոքա ոչ կարացին ուղիղ ասնել ըստ

Զատիկն, և յաղագս լուսոյն՝ բանք մեր ասոյգ համարեցան, և այսպիսի ստութեամբ մատնեցին զնոսա 'ի բանտս և 'ի տուգանս, և խռովութեամբ լցեալ զաշխարհն, առիթ եղեն բազմապատիկ վնասուց. ապա խնդրեցին հրովարտակ, զի բարձցին նովաւ բռնութիւնք Հայոց, և մի լսելի լինիցին բանք նոցա. զի եթէ ոչ զդաստասցին՝ դատաւորք ծանուսցեն զանուանս նոցա 'ի Դուռն՝ 'ի կրել պատիժ պատուհասի, \\Է\ (1729)։ Գրեցաւ հրովարտակ առ ամենայն դատաւորս և իշխանս արեւելեան դաւառաց, տեսանել արդարութեամբ զվէճս նոցա և լուծանել օրինօք դատարանի։ Առեալ Ցունաց զայս հրովարտակ՝ ետուն 'ի ձեռս Եուսուֆ անուն առն ուրումն կեսարացւոյ, որ էր այր ժանտ և չարաբարոյ, և առաքեցին յարեւելեան դաւառս։ Հասեալ նորա 'ի Կեսարիա Կապադովկացւոց՝ ետ արձանագրել զայն 'ի դատարանի, և էառ անտի գիր ըստ մտաց հրովարտակին։ Յետ այնորիկ կոչեաց դատաւորն զգլխաւորս երկուց ազգաց, եւ ընթերցեալ առաջի նոցա եհարց՝ թէ լցե՞ն այնպիսի վէճ 'ի միջի իւրեանց սակս տօնի Զատկին, և նոքա ասեն՝ թէ գուցէ լուեալ է մեր զայդպիսի անուն խռովութեան, զի ահա կամք 'ի քաղաքիս յայսմիկ սիրով եւ խաղաղութեամբ ընդ միմեանս. լուեալ դատաւորին զլանս նոցա՝ ազգ արար 'ի Դուռն, թէ չեն պատահեալ այնպիսի իրք 'ի քաղաքին։ Եւ տեսեալ թէ ոչ դադարի Եուսուֆ աղմկելոյ զքաղաքն և խռովելոյ զժողովուրդն, և յարուցանելոյ զնոսա ընդդէմ միմեանց՝ հալածեաց զնա 'ի քաղաքէ անտի։ Եւ Նորա վախուցեալ անտի՝ գնաց 'ի քաղաքն Եւդոկիայ, և սկսաւ յայտնել անդ զչարութիւն իւր, որպէս արարեալէր 'ի Կեսարիա։

Ի կոչել դատաւորին զառաջնորդս և զգլխաւորս ժողովրդոց երկուց ազգաց, և յընթեռնուլ զհրովարտակն և 'ի հարցանել ցնոսա, Ցոյնք զարմացեալ ետուն պատասխանի. թէ ոչ ոք 'ի Հայոց բնակելոց 'ի քաղաքիս յարուցեալէ վէճս, և կամ ասացեալ բան ինչ վասն տօնի Զատկին. և նա ծանոյց 'ի Դուռն զխաղաղութիւն ժողովրդոց քաղաքին։ Սակայն Եուսուֆ ոչ դադարէր յայտնի և 'ի ծածուկ գրգռել զժողովուրդն Ցունաց ընդդէմ Հայոց։ Զնոյն արար 'ի Մարսվան, յԱմասիա, 'ի Զիլէ, 'ի Նիկսար և

յայլ տեղիս, ուր և ժամանեցին խռովարար ոտք նորին։

Եւ 'ի լինել այսպէս սաստկացաւ խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց. վիճէին եւ հակառակէին ընդ միմեանս, ուր և պատահէին։ Տեսեալ Հայոց թէ օր քան զօր բազմանան չարիք 'ի քաղաքին Եւդոկեայ յերեսաց անզգամին Եուսուֆայ, դիմեցին առ դատաւորն հանդերձ առաջնորդովք, և խնդրեցին աքսորել զայրն 'ի քաղաքէ անտի, և բառնալ զչարն 'ի միջոյ. զի վրդովեալէր զխաղաղութիւն ժողովրդոց։ Դատաւորն գրեալ 'ի Կեսարիա՝ եհարց ցնոսա, թէ ո՞րպիսի ոք իցէ Եուսուֆն. քրիստոնեայք և այլազգիք քաղաքին ետուն պատասխանի, թէ է այր չարաբարոյ և խռովարար՝ հոչակաւոր յամենայն վատթարութիւնս, զի ձեռնտուութեամբ եղբօր իւրոյ 'ի Կոստանդինուպօլիս առեալ հրովարտակ ինչ՝ չրջի բանսարկութեամբ և մատնութեամբ յամենայն տեղիս խռովել զժողովուրդն, ըստ բնական բարուց իւրոց՝ որպէս արար ասա։

Առեալ զայս գիր դատաւորին Եւդոկիայ՝ ազգ արար 'ի Դուռն. հասին անդ և թուղթք զանկատանացն Հայոց 'ի քաղաքաց և 'ի դաւառաց. լուաւ նաեւ զայսոսիկ անցս եւ Յովհաննէս Պատրիարք Բիւզանդիոյ. գրեալ էր նաեւ Գրիգոր Պատրիարք յԵրուսաղէմ զնեղութիւնս ազգին. եւ նա բողոք եարձ 'ի Դուռն, թէ ո՛րպէս Ցոյնք խարէյութեամբ առեալ հրովարտակ՝ զօրութեամբ նորին հայհոյեն և թշնամանեն զազգն, ուր և պատահեսցին. եւ 'ի պատասխանել նոցին, իբր ասասամբք Կայսերական հրամանին, մատնին 'ի ձեռս բռնաւորաց և տուգանին 'ի նոցանէ, մինչեւ սաղմոսանալ ամենեցուն. եւ այլ սոցին նման բանք։ Գրեցաւ հրովարտակ դարձեալ սակս խափանելոյ զբռնութիւնս Ցունաց. 'ի բաց առնուլ զհրովարտակն առաջին և զգիր դատաւորին Կեսարիոյ՝ ուր ուրեք եւ գտցի, և առաքել 'ի Դուռն. ջնջել զարձանագրութիւնս նոցին 'ի գիւանաց և 'ի դատարանաց, եւ արձանագրել զհրովարտակն Հայոց։ Ի հասանիլ այսր հրովարտակի յարեւելս, դատաւորք ծանուցին զվիճս նորա Հայոց և Ցունաց, և պատուէր ետուն երկաքանչիւրոց չյուզել այլ եւս զխռովութիւնն զայն 'ի միջի իւրեանց. եւ սպառնացան եւս, ըստ հրամանի արքային, ածել պատիժ պատուհաս-

սից 'ի վերայ անհնազանդելոց, եւ կապանօք առաքել 'ի Դուռն։ Այլ այսու եւս անհնարին եղեւ բառնալ զխռովութիւնն, զի Յոյնք դարձեալ խնդրեցին հրովարտակ յԱրքայէ, 'ի բաց առնուլ զառաջին և զերկրորդ հրովարտակս 'ի ձեռաց Հայոց և Յունաց՝ եւ պատառել զնոսա, և ջնջել զարձանագրութիւնս նոցին, չվիճել այլ եւս վասն տօնի Զատկին, և սպառնալիք պատուհասի՝ 'ի վերայ անհնազանդից։ Իսկ դատաւորք և գործավարք տէրութեան, 'ի ժամանակի խռովութեան յայնմիկ, եթէ առեալ իցեն յումեքէ դրամս ինչ տուգանօք, դարձուսցեն յետս առ տերս իւրեանց, և ինքեանք զրկեալ 'ի պաշտօնէ՝ դատապարտեսցին յաքսորս՝ արդելեալ 'ի բերդս։ Եւ առիթն խռովութեան ժանտագործ այրն Եուսուֆ՝ ուր և գտցի, առցի 'ի ձեռաց նորա հրովարտակն եւ պատառեսցի։ զի այսմ վերջին հրովարտակիս՝ հաճեցան Հայք և Յոյնք։ զի օր յառաջ բարձցի եւ անհետասցի խռովութիւնն 'ի միջոյ երկուց ազգաց։

Ի հասանիլ այսր հրովարտակի առ դատաւորս քաղաքաց, արարին ըստ հրամանի Արքային, և բարձաւ խռովութիւնն յարեւելս, և ժողովուրդք սկսան վարիլ սիրով և խաղաղութեամբ ընդ միմեանս։

Այս ամենայն անցք, որք անցին յարեւելս 'ի միջի Հայ և Յոյն ժողովրդոց, հանդամանօք պատմին 'ի գիրս դատաւորաց այլև այլ քաղաքաց և 'ի Կայսերական հրովարտակս, որք ամբողջ պահին 'ի շարս գրոց Ս. Աթոռոյն, յորոց քաղեալ համառօտեցաք զպատմութիւնս։

Այն ինչ հանդարտեալ էր Գրիգոր Պատրիարք 'ի չխոթութենէ Ծառայատիպ եւ յաղմկեալ խռովութենէ ժողովրդոց յարեւելս, և կամէր հանդարտել և խնամել զիւրսն, յարեւաւ այլ ինն խռովութիւն 'ի նմին իսկ յԵրուսաղէմ քաղաքի։ զի Լատին կղերք սկսան հակառակիլ և վիճել ընդ Հայոց վասն Պատանատեղւոյն Քրիստոսի 'ի Ս. Յարութիւն, և ջանային արգելուլ զնոսա 'ի մասնակցութենէ նորին, բառնալ կամելով անտի զաշտանակս Հայոց։

Եւ եղեւ յընդդիմանալ Գրիգորի Պատրիարքի, և առաջի առնել դատաւորաց զլաւերական գրեանս վասն այնր տեղւոյ, ծագեցաւ ատելութիւն 'ի մէջ երկուց ազգաց։

որով և երկարեցան վէճք և դատաստանք։ Հուսկ ուրեմն զիջան Լատինք 'ի հաշտութիւն եւ խաղաղեցան։ զի չէր հնար ծածկել ընդ քողով որ և իցէ ամբաստանութեան և բռնութեան զդաւաւոր իրաւունս Հայոց։ Ուստի ինքեանք եւս յայտնապէս խոստովան եղեն թէ հաստատեալ է այն 'ի սկզբանէ և այսր։ Այլ այս խաղաղութիւն նոցա ոչ տեւեաց ընդ երկար, զի գտին զայլ ինն պատճառս խռովութեան վերստին հակառակիլ Հայոց։

Զի 'ի սմին ժամանակի Հայք 'ի տաճարին Ս. Յարութեան յաւուրս հանդիսաւոր տօնից պատարագէին 'ի սեղանն Իշխաբերից հանդէպ Գերեզմանին, եւ դնէին զոյգ աշտանակս առաջի մեծի պատկերին, որ 'ի վերայ զոյգ մարմարիոն սեանց՝ կից սեղանոյն այնմիկ յարեւելս, եւ արկանէին փախթս և սփռոցս 'ի հրապարակի Գերեզմանին 'ի ներքոյ մեծի գմբեթին սակս ժողովրդոց, և դնէին անդ զԱթոռ Պատրիարքին, և զկնի հանդիսին բառնային զնոսա անտի։ Իսկ Լատինք զհետ մտեալ ջանային խափանել զայն, այլ Հայք ոչ եւս նոցա թոյլ վարիլ յամենայնի ըստ կամաց իւրեանց։ Եւ 'ի սաստկանալ վիճմանց՝ ազգ ազգաց դատաւորի քաղաքին, եւ նա բաղմութեամբ այլազգեաց եկն 'ի Ս. Յարութիւն, ուր ժողովեալ էին միաբանք Հայոց, Յունաց և Լատինաց, եւ ընթերցան անդ առաջի բազմութեան զգրեանս, զորս մատուցին Հայք։ Յետ այնորիկ եհարց դատաւորն ցլուսարարն և ցթարգմանն Յունաց, թէ Հայք՝ ըստ զօրութեան մուրհակացն, ունի՞ն զայսոսիկ իրաւունս, և ո՞րպէս գիտէք և տեսեալ իցէք, եւ նոքա եւսուն պատասխանի։ ունին զայսոսիկ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց, եւ անխափան կատարեն։ Կոչեաց և զայլազգի դռնապանսն, և նոքա ըզնոյն պատասխանիս երկրորդեցին։ զայն տեսեալ Լատինաց ակամայ կամօք յանձն առին խոստովանիլ զիրաւունս Հայոց։ Ապա պատուիրեաց դատաւորն Ֆրանչիսկեան կրօնաւորաց, չդրդռել զայնպիսի վէճս և խռովութիւնս, զորս ոչ կարեն հաստատել օրինաւոր գրովք։ Զի թէպէտ վերստին գրով հաստատեաց զսովորութիւնս Հայոց, ՌՍԼԲ (1730), այլ չեղեւ հնար զերծանիլ 'ի ձեռաց նոցա, որպէս ունիմք ասել յիւրում տեղւոջ։

Ի սին ժամանակի Հաննա վարդապետ, որ տակաւին կենդանի էր, միաբանեալ ընդ փոխանորդին Ցունաց, Նորոգեցին ընկերութեամբ զտանիս եկեղեցւոյ Ս. Աստուածածնի՝ 'ի ձորն Գեթսեմանի, եւ բարձրացուցին զսրմն, որ 'ի գաւթի անդ, նոյնպէս նորոգեցին զայլ կարեւոր տեղիս թէ 'ի ներքս և թէ արտաքս։

Հաննա վարդապետ կամ Յովհաննէս եպիսկոպոս Երուսաղէմացի, 'ի ժամանակէ անտի տեղակալաց, մինչեւ ցայս վայր, անխոնջ ջանիւք և մտադիւր յօժարութեամբ ծառայեաց եւ վաստակեցաւ յամենայն գործս Աթոռոյն, աջակցելով Գրիգորի Շղթայակրի 'ի զանազան դատաստանս ընդ օտարաց, և 'ի շինութիւնս Ս. Տեղեաց. և 'ի դիր եկար զամենայն անցս իւրոյ ժամանակի. և ըստ տուիցելոյ նմա շնորհին, նկարեաց զհրաշալի պատկերս տնօրէնութեան Փրկչին, և սրբոց նորին, աքանչելի արուեստիւք, որպէս տեսանի 'ի տաճարի Ս. Յակոբայ եւ յայլ եկեղեցիս. կաթուածահար եղեալ անկաւ 'ի մահիճս, եւ տառապեալ 'ի նմին աւելի քան զերկուս ամս վախճանեցաւ յամի Տեառն 1733 'ի 11 ամսեանն Յունիսի, և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի, թողեալ սուգ մեծ, առաւել քան ազգականաց իւրոց, նորին Գրիգորի Պատրիարքի, մինչեւ յանձն առնուլ իսկ հրաժարիլ 'ի Պատրիարքական յԱթոռոյ, զի յանկարծակի զրկեցաւ հաւատարիմ գործակցէ իւրմէ, որպէս է տեսանել 'ի նամակի նորին, զոր վերստահար սրտիւ գրեաց առ Յովհաննէս Պատրիարք եւ առ իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, ուր յետ այլոց բանից ասէ. Արդ հնազանդեալ յայնժամ հարկեցուցիչ բանից ձերոց արկի զպարանոց իմ ընդ լծով ծառայութեան ազգին. յաջողութեամբ Տեառն եւ օգնութեամբ ձերով՝ ազատեցաւ Ս. Աթոռն 'ի պարտուց եւ յաղքատութեանց և 'ի նախատանաց օտարաց, որոյ վասն շնորհ ունիմ յԱստուծոյ և համայն յազգէն։ Արդ՝ սիրելիք իմ, և տեարք Ս. Տանս, ես ծերացայ և անկարող 'ի գործս. մանաւանդ միջաբեկ և յուսակտուր արար զիս տարաժամ մահ սիրելի Աթոռակալին իմոյ, և կամ 'ի սուգ անմխիթար. ճշմարիտ և անկեղծ սրտիւ գրեմ ձեզ, զի ես այսուհետեւ անկարող եմ կատարել զգործս զայս. քաջ իսկ գիտէք, զի յառաջ քան

զերիս ամս, յորժամ խօթացաւ բարեյիշատակ որդեակն իմ, գրեցի ձեզ առաքել այսր զՊատրիարք վարդապետն տիրել տան ձերոյ, եւ ինձ առանձնանալ ուրեք ողբալ զթշուառութիւն անձին իմոյ։ Եւ յանցելումն ամի առաքեաց նա զանդրանիկ աշակերտ իւր զՅակոբ վարդապետ (Նալեան). և ես հաճութեամբ նորին արարի զնա ինձ և ինքեան փոխանորդ և առաքեցի այդր, և մնացի գալըստեան նորա, որպէս խոստացաւն. և այժմ վերստին թախանձանօք աղաչեմ, խնայել 'ի դադաշեալ ծերութիւնս և ազատել զիս. զի եթէ բանք իմ լսելի լինին ձեզ, առաքեցէք զվարդապետդ իմ լինիլ տէր տան ձերոյ, եւ մի մոռանայք զաշխատութիւն դորա, որ վասն Ս. Տանս եւ Ս. Եկեղեցեացդ, և մի անտես առնէք զաղաչանս իմ. զի ողորմութեամբ Տեառն տունն ձեր լի է հոգեւոր եւ մարմնաւոր բարեօք, կրօնաւորօք եւ աղօթաւորօք, որք զցայգ և զցերեկ կան 'ի պաշտօն փառաբանութեանն Աստուծոյ։ Զի եթէ ոք չարախօսեալ իցէ զսիրելի եղբարց իմոց. ինքն լիցի պարտաւոր, զի գլուխս մեղաւորաց ես եմ. աղաչեմ զբարեսպաշտդ կատարել զհայցուածս իմ, և ինձ որպէս հրամայէք այնպէս առնեմ, կալ, աստ, եւ կամ գնալ յերկիրն իմ, ուր ուրեք և իցէ. շնորհ ունիմ զձէնջ եւ զհամօրէն ազգէն իմմէ. զի ոչ ումեք եղբարց իմոց արարիք, որպէս ինձ. զի ցուպ 'ի ձեռին իմոյ եկի 'ի միջի ձերում, եւ այսքան բարիս արար Տէր օգնութեամբ ձեր։

Արդ՝ սիրելիք իմ վայելեցի և ողորմութեամբ Տեառն զտունն ձեր ամենայն բարեօք լցի, ոչ ես, այլ շնորհքն Աստուծոյ։ Եւ նշանն անկարողութեան իմոյ երեւեցաւ յանցելումն ամի, որոյ վասն վարդապետն իմ և դուք ամենեքեան վշտացեալ էիք յինէն, թէ ընդէ՞ր ոչ կռուեցար ընդ օտար ազգս։ Արդարեւ բարեյիշատակ Իշխանն մեր մահտեսի Յարութիւն, վառեալ 'ի նախանձ աստուածային կամեցաւ մտանել 'ի հանդէս մարտի, սակայն արգելի զնա խրատիւք և յորդորական բանիւք 'ի խաղաղութիւն. եւ եթէ մտեալ էաք 'ի մարտ ըստ խրատու ձեր, ապաքէն արիւնն մեր խառնէր 'ի տօնս Ս. Զատկին, որպէս Գալիլեացւոցն առ Պիղատոսիւ, և լինէր խափանումն տօնին,

և երկոքին ազգքս առաջի օտարաց առակ նշաւակի. և ո՞վ արդեօք լինէր պարտաւոր արեանց անմեղաց. վասն որոյ երկուցեալ յառաջակայ վտանգէ և 'ի տկարութենէ իմմէ՝ և յայլ իրաց, գրեցի զգիրս աղերսանաց աղաչել զիս 'ի գործոյ աստի՝ զի չեմ բաւական, կռիւն տեղւոյս՝ ոչ է ըստ կռուոյ տեղւոյդ, թէեւ ազգի նախանձ՝ այլ ես խոստովանիմ զտկարութիւն իմ յայդմ։

Եւ եթէ ընդ իս ցասուցեալ էք վասն հաշտութեանս՝ զոր արարի ընդ Յոյնս, այս էր պայման հաշտութեան մերոյ. երկոքին ազգքս երդուաք 'ի Ս. Աւետարանն, չ'յիշել զանցեալն, և չյարուցանել զվէճս 'ի ներկայն, զի եթէ դուք զայդ ոչ կամիք՝ դուք գիտէք, այլ կալարուք զիս հրաժարեալ. նախ առաքեցէք զոք 'ի տեղի իմ, եւ ապա զիրաւն արարէք։ Գոհանամ զԱստուծոյ՝ զի ոչ ինչ իմիք կարօտիք յօրհնեալ երկրիս յայսմիկ, զի ամենեքեան ցանկան տեղեաց ձերոց, զառաւելն կռուով և ատելութեամբ զի՞նչ ունիք առնել՝ ոչ վասն ազգացն ասեմ, այլ նոր վիճից վասն տեղեաց, զի եթէ նոքա ուխտաղանց գտեալ զայլ իմն չարիս մտաբերիցեն վասն Ս. Աթոռոյս և սեփհական տեղեաց մերոց, յերես անկեալ աղաչեմ, արթուն լինել և կալ արիութեամբ, վառիլ 'ի սէր և 'ի նախանձ ազգային, և Տէր լիցի ձեզ օգնական. այլ որքան հնար է զխաղաղութեան զհետ երթայք. զի մեք այլ եմք՝ և նոքա այլ, մեք տկար՝ ժամանակն չար՝ երկիրս անտէրունչ՝ ամենայն ոք ինքնագլուխ՝ միտք և դիտաւորութիւնք երկրիս 'ի վերայ երից վանաց՝ զոր Տէր փրկեսցէ. գրեալ յ7 Նոյեմբեր ամսոյ։

ԳԼՈՒԽ Ե.

Ամենազգիր Սիոնի։ Վկայ Յունաց ընդ Հայոց սակս մտանելոյ 'ի Գերեզմանն և հետեւակ երից ազգաց. Վկայ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Խռովութիւն Յունաց վասն Ս. Յակոբայ։

ԳՐԻԳՈՐ Պատրիարք նեղեալ յերեսաց յայսպիսի չարագուշակ դիպուածոց խորհէր հանապազ խնուլ զբերանս Յունաց, զի հանդերձեալ էին նոքա բանալ զդուռն մեծի խռովութեան. և մինչ նա յայսմ խորհրդի տագնապեալ վարանէր՝ յարեաւ այլ իմն խռովութիւն յերուսաղէմ քաղաքի։ Քանզի միաբանք Հայոց կարի իմն տաղտկացեալ էին 'ի բռնութենէ և 'ի նեղութենէ այլազգեաց Սիոնի, որք անդադար հասուցանէին նոցա զչարիս, խորտակէին զտապանաքարս գերեզմանատանց, եւ զպիտանիսն բարձեալ տանէին 'ի տուն 'ի կիր առնուլ 'ի պէտս շինուածոց իւրեանց, և 'ի ժամանակի գերեզման օրհնելոյ՝ և զննջեցեալս թաղելոյ՝ հասեալ 'ի վերայ քահանայից գանիւք խոշտանգէին՝ և խափանեալ զպաշտօնն՝ հալածական տանէին զնոսա մինչեւ 'ի ներքս 'ի քաղաքն. ապա կուտելով 'ի վերայ նոցա զբանս զրպարտանաց՝ կորզէին 'ի նոցանէ զգումարս դրամոց։ Եւ այսու եւս ոչ շատացեալ, ոմանք 'ի նոցանէ գնացեալ 'ի Կոստանդինուպօլիս, ստութեամբ և պէսպէս բարբանօք զրպարտէին զմիաբանս վանօրէից, որպէս թէ նեղեալ իցեն 'ի քրիստոնէից, և կալուածք մարդարէին Դաւթի մատնեալ 'ի յափշտակութիւն նոցա։ Այսպիսի հնարիւք առեալ հրովարտակս՝ դառնային յերուսաղէմ, եւ նովաւ բռնացեալ 'ի վերայ քրիստոնէից պահանջէին զդրամս, և 'ի վերջոյ ծանր գնով վաճառէին նոցա զհրովարտակն զայն. և այսպէս օր քան զօր զայրանայր չարիք նոցա 'ի վերայ քրիստոնէից՝ եւ չէղեւ հնար ցածուցանել զնոսա 'ի բարկութենէ իւրեանց։ Այլ իբրեւ անցին ըստ չափն՝ եւ յոչ արժանիս եղեն ձեռնարեց, սրտմտեալ քրիստոնէից արդար բարկութեամբ, խուռն բազմութեամբ դիմեցին առ դատաւոր քաղաքին,

եւ ամբաստան լեալ զչարութեանց այլազգեացն Սիոնի՝ յայտ արարին զամենայն արարս նոցա, և աղաչեցին զնա գրել և ծանուցանել 'ի Դուռն, եւ խնդրել հրովարտակ յԱրքայէ, զի թերեւս մարթասցին ազատիլ 'ի ձիրանաց կեղեքչացն այնոցիկ։ Իսկ դատաւորն Մէհէմմէտ Էմին՝ ծանոյց 'ի Դուռն զդառն գանկատանս քրիստոնէից, եւ ըստ այնմ գրեցաւ հրովարտակ առ կուսակալն և առ դատաւորն Երուսաղէմի՝ փութով բառնալ զբռնութիւնս այլազգեաց 'ի հպատակաց Արքայի, որպէս հօր եղբայր իւր Սուլթան Ահմէտ բարձրեալ էր յառաջագոյն հրովարտակաւ, զի հակառակ էր օրինաց և Կայսերական հրամանին, ١١٤٦ (1734)։ Սոյն հրովարտակ ընթերցաւ յատենի ժողովոյն, ուր էին եւ այլազգիք Սիոնի, եւ պատուէր ետ նոցա դատաւորն վարել ըստ հրամանի Արքային, և չ'յանդգնիլ միւսանգամ յայնպիսի չարիս։

Յետ կատարելոյ զսոսն Պասէքին՝ և հանդարտելոյ աղմկին, զոր յարոյց յարեւելս այրն Կեսարացի Եուսուֆ, որպէս գրեցաք 'ի Նախընթաց գլուխն, Յոյնք եւ Հայք յԵրուսաղէմ եկին 'ի հաշտութիւն և արարին խաղաղութիւն 'ի միջի իւրեանց՝ երդուեալ յԱւետարանն Սուրբ։ Այլ հաշտութիւն և երդումն Յունաց, թողիչ ինն էր ըստ լեցացն Հայոց, արկանել զնոսա 'ի քուն թմրութեան եւ անհոգութեան, և ինքեանց զհետ լինել պատրաստութեան որոգայթից։ Քանզի 'ի սոյն աւուրս լուծին 'ի պաշտօնէ զՄէլիտոս եպիսկոպոս՝ զՓոխանորդն Երուսաղէմի, և առաքեցին 'ի Վլահս՝ պատճառելով թէ ոչ որպէս արժանն էր վաստակեցաւ նա 'ի գործ Պասէքին։ Ընկեցին և զՓոխանորդն Բիւզանդիոյ՝ և 'ի տեղի նորա տնկեցին զԴիոնէսիոս քարոյ։ Եւ մինչ հանդերձեալ էր Պատրիարքն Յունաց գնալ 'ի Կոստանդինուպոլիս, չոքաւ առ նա Գրիգոր Պատրիարք Հայոց նախ քան զՊասէքն, եւ զկնի այլոց բանից՝ առեալ 'ի ձեռս իւր Մէլէթիոսի զպատկեր Փրկչին երդմամբ ասէ ցԳրիգոր, մի՛ անկցի 'ի սիրտ քո՝ թէ գնամ ես վասն կուսոյ, այլ վասն գործոց իմոց։ զի եթէ ոչ ելցէ այն 'ի ձէնջ, բնաւ ես ոչ յիշեմ զանուն նորին։ Եւ թէ՝ Յովհաննէս Պատրիարքն Բիւզանդիոնի սիրով էր ընդ իս, ընդէ՞ր արար այսպէս, գրեա՛ նմա զի նախկին սիրոյն վա-

բեսցի ընդ իս՝ և այլ սոցին նման բանք, և Գրիգոր Պատրիարք ողջունեալ զնա մեկնեցաւ անտի։

Եւ յետ կատարելոյ զՊասէքն Տեառն եւ ուղեւորելոյ զուխտաւորս՝ մեկնեցաւ Մէլէթիոս Պատրիարք յԵրուսաղէմէ (Յուլիս 5)։ Եւ 'ի հասանիլ նորա յաւանն Ռեմլէ՝ հարցին զնա ժողովուրդ տեղւոյն զպատճառս այսպիսի ա-ճապարանօք ուղեւորութեան նորին։ Եւ նա ասէ՝ Հայք այսպէս արարին մեզ յայսմ ամի, երթամ 'ի Բիւզանդիոն առնուլ 'ի ձեռաց Հայոց զվանս Ս. Յակոբայ, եւ զնաց զճանապարհ իւր։

Եւ Փոխանորդ նորին Կեսարիոս եդիտ Հեսճէթ ինչ հին, գրեալ 'ի թուին Հիճրէթի ١٠٦٢, իբրու թէ Հայք յետ գրաւելոյ զվանս Ս. Յակոբայ 'ի ձեռաց Յունաց, պայմանս եդեալ են տալ Յունաց ամ յամէ 200 ոսկիս։ Եւ 'ի դէպ ժամանակի 'ի հարցանել ցնա Գրիգորի Պատրիարքի, եւ նա ժպտելով ասէ՝ միթէ նո՞ր կամիս լսել զայդ, և նա լուռ եկաց։ Նա զի տեղեկացեալ էր Գրիգոր 'ի նոցին իսկ գործակալաց զգաղտնի մեքենայս զոր պատրաստէին ընդդէմ Հայոց, ուստի գրեալ ազդ արար առ Յովհաննէս Պատրիարք զգուշանալ 'ի նոցին դաւաճանութենէ, եւ արթնութեամբ չտալ տեղի խռովութեան։ Իբրեւ ետես Փոխանորդն Յունաց թէ՝ յայտնի եղեն 'ի քաղաքին գաղտնիք իւրեանց՝ եկն առ Գրիգոր եւ ասէ, ընդէ՞ր ամփոփեալ էք՝ և զի՞նչ լուեալ էք զմենջ, և թէ՝ գրեալ է Պատրիարքն մեր թէ Հայք գրժեցին ուխտին իւրեանց, զոր եդին յԵրուսաղէմ երդուեալ յԱւետարանն. զի 'ի հասանիլ Պատրիարքին մերոյ 'ի Կոստանդինուպոլիս, և 'ի գնալն առ նա Յովհաննու Պատրիարքի՝ հարցեալ է նմա թէ՝ ընդէ՞ր այսպէս արարեր, եւ նորա ասացեալ է թէ՝ ունիմք իրաւունս առնլոյ։ Ասէ ցնա Գրիգոր՝ յորժամ զերդումն զայն արարաք, ո՞չ ապաքէն պայման եդաւ 'ի միջի թէ ասա և թէ 'ի Բիւզանդիոն մի՛ եաս յիշել զայն երկու խնդիր մեր և ձեր ասել, այսինքն երեք հետեւակ ազգքն՝ և 'ի Գերեզման մատանելն, միթէ ե՞ս եղէ ուխտադրուժ, և զի՞նչ պարտ էր ասել Յովհաննու Պատրիարքի՝ ահա դարձեալ 'ի ձէնջ ել հրդեհ խռովութեան։ և զկնի այսոցիկ բանից՝ ասէ Կեսարիոս, գրեսցուք 'ի Կոստանդի-

նուպոլիս՝ զի խաղաղութիւն լիցի՝ և մեկնեցաւ։

Իսկ 'ի տօնի Վարդավառի, յԵրուսաղէմ 'ի վաճառանոցն, փոքր մանուկ մի այլազգի, հարեալ յերիվարէ իմեքէ մեռաւ անդէն։ և 'ի լինել քննութեան և դատաստանի, արկին զվնասն 'ի վերայ Հայոց, որպէս թէ երիվարն ի ցէջ վանաց Ս. Յակոբայ։ և վասն այսր կրեցին միաբանք նեղութիւնս ոչ սակաւ։

Ի պատարագելն Հայոց 'ի սեղանն Իւղաբերից 'ի Ս. Յարութիւն, արկանէին սիւռոցս վասն դպրաց 'ի հրապարակի անդ ըստ սովորութեան, որպէս գրեցաք յառաջագոյն։ և 'ի սմին ժամանակի Լատին կրօնաւորք դրդեալք 'ի Յունաց՝ վերստին արգելին զայն և Գրիգոր Պատրիարք առաքեաց 'ի վանս Նոցա զԳաբրիել վարդապետ, և ծանայց Նոցա զէին սովորութիւնն զայն։ եւ նոքա չառին յանձն անսալ բանից Հայոց։ Իսկ Գրիգոր ետ բանալ զդուռն տաճարին, և ժողովեցան անդ և եղեւ վէճ երկար 'ի վերայ այնր խնդրոյ 'ի մէջ երկուց ազգաց։ այլ Լատինք ոչ երբէք յանձն առին զիջանիլ 'ի խնդիրս Հայոց, որ և խափանեցին զայն սովորութիւն։ Տեսեալ Գրիգորի Պատրիարքի զյամառ միտս Նոցա, լուեաց, և չիշխեաց ասել զայլ ինչ։ զի մի և նոքա զայրացեալ առաւել չարիս գործեսցեն։

Իսկ միաբանք Յունաց գրեցին առ Մէլեթիոս Պատրիարքն Իերեանց, իբրու թէ Հայք միաբանեալ ընդ Լատինս կամին վշտացուցանել զՅոյնս։ այլ Լատինք ոչ կարեն ստանալ ինչ նոցա, զկնի սահմանադրութեան, որ կատարեցաւ 'ի դուռն Արքունի։ բայց 'ի ձեռն Հայոց նեղեն զմեզ, այս է այժմեան վրդովումն 'ի միջի երկուց ազգաց։ բայց մեք միշտ խաղաղութեամբ վարիմք ընդ նոսա, եւ ոչ երբէք կամիմք պատերազմ։ եթէ պատահեսցի եւս երբեմն 'ի մէջ լուսարարաց, և այն եւս չէ ինչ։ որովհետեւ առաքեցին նոքա դիր 'ի ձեռն Մկրտչի առ պատուելին Իերեանց, յորմէ երեւի թէ ոչ սիրեն զխաղաղութիւն, այլ չարժին 'ի խռովութիւն և 'ի դայթակղութիւն միաբանեալ ընդ Լատինս, այս է պատճառ խռովութեան մերում։ Մէլեթիոս առաքեաց զդիր միաբանաց իւրոց առ Յովհաննէս Պատրիարք՝ յղել զայն յԵրուսաղէմ, յորում խոստացեալ էին սիրով վարել ընդ Հայս։

Գրեաց ապա և ինքն յայտ արարեալ զբանս թղթոց միաբանացն Երուսաղէմի, ուր յաւելու ասել։ «Արդ աղաչեմք և մեք զվաճառականս և զիշխանս Հայոց, գրել առ վարդապետս իւրեանց սիրել զխաղաղութիւն եւ երթալ զհետ նորա, որպէս և մեք։ զի երկոքին ազգքս հպատակեմք Արքայի, և չէ արժան լինել դայթակղութեան 'ի միջի մերում, և վերստին աղաչեմք առաքել զդիր մեր առ նոսա, զի գիտասցեն և ծանիցեն զամենայն, և լինիցին իսկ պատուելիք ըստ անուանց իւրեանց։

Ի սմին ժամանակի եհաս յԵրուսաղէմ Յակոբ վարդապետ Նալեան ընդ ուխտաւորս, ունելով ընդ ինքեան եւ զտանս 'ի վարդապետաց։ Սա երեր ընդ իւր զպատուական չուրջառս, վարագոյրս և այլ ազնիւ ընծայս 'ի Յովհաննու Պատրիարքէ, զոր ընկալեալ Գրիգորի, բերկրեցաւ յոյժ, մանաւանդ 'ի տեսանելն զՅակոբ վարդապետ։ զի նովաւ ելից զփափագ սրտի իւրոյ, որ ունէր առ Յովհաննէս։ զի բաղում անգամ յորդորեալ էր զնա գալ յԵրուսաղէմ և մխիթարել զինքն վասն մահուան Աթոռակալ Հաննա վարդապետի, յորոյ վերայ անմխիթար ազգայր։ այլ չեղեւ հնար 'ի խառնակութենէ ժամանակին, մանաւանդ սկիզբն առեալ էր ծագիլ խնդիրն Յունաց։ Եկն 'ի սոյն աւուրս յԵրուսաղէմ և մեծ Պեկ ոմն, այր բարի և ծանօթ Սեղբոս Ամիրայի։ գնաց առ նա Գրիգոր Պատրիարք ընծայիւք՝ առեալ ընդ իւր և զՅակոբ վարդապետ, առաքեալ էր առ նա ազնիւ ընծայս նաեւ Յովհաննէս Պատրիարք, որ և մատուցին առ նա, և դարձան յետս, (1734 'ի 14 Սեպտեմբեր ամսոյ)։

Իսկ Պատրիարքն Յունաց էառ գաղտ հրովարտակ արքունուստ, զի յաւուր Ծրագալուցի Պասեքին ինքն միայն մտցէ 'ի Գերեզմանն Քրիստոսի և 'ի բաց վարեսցէ զՀայս։ և առաքեաց զայն յԵրուսաղէմ և ետ արձանագրել ծածկապէս 'ի դատարանն։ ազգ արարին ոմանք զդործն Գրիգորի Պատրիարքի 'ի ձեռն թարգմանին Պօղոսի։ ընդ որ զարմացեալ յոյժ, մանաւանդ 'ի վերայ կեղծ բարեկամութեան Յունաց, առաքեաց և ինքն զհրովարտակն, և ըստ մտաց Նոցին էառ գիր 'ի դատաւորէն եւ զպատճէն հրովարտակին այնմիկ և առաքեաց առ Յովհաննէս Պատրի-

արք, խափանել զայն և նորոգել զՀայոցն, և փութացուցանել նախ քան զՊասէքն. գրեաց առանձին առ Սեղրոս և Մելիտոն Ամիրայս լինել ձեռնտու գործոյն, Դեկտեմբեր 13։ Ի հասանիլ գրոց Գրիգորի 'ի Կոստանդինուպոլիս առ Յովհաննէս Պատրիարք, մատոյց գիր ամբաստանութեան առ Արքայ բազմութեամբ եկեղեցականաց և գլխաւորաց ազգին, յորում գանկատէր զանիրաւութենէ ազգին Յունաց, զորոյ զհամառօտ միտս դիցուք առաջնոր։

Դաշնագիրք Օմարայ, Ալիայ և Մելիք Սալահատտինի և վաւերեալ թուղթք դատարանի, յորս բացայայտ երևին նախնի պայմանագրութիւնք Հայոց, և թէ Հապէշք, Գալթիք և Ասորիք հետեւակ են նոցա. և զայս իրաւունս ոչ ոք յօտարաց բռնաբարեաց. և 'ի գահակալութեան նորին Արքայի, նորոգեցան այսոքիկ հաստատեալ Կայսերական հրովարտակաւ։ Սակայն Յոյնք ոչ շատացեալ հետեւակաց իւրեանց, որք են Վիրք, Սրբոյք և Ռուք՝ ստութեամբ և հնարիւք առին հրովարտակ 'ի Կայսերական յատենէ, յայտնակել զհետեւակս մեր. տեսեալ թէ հակառակ է այն նախնի պայմանագրութեանց, պահեցին, բաւական համարելով զարձանագրութիւն նորին 'ի Դուռն, եւ 'ի դէպ ժամանակի 'ի գործ դիցեն զայն իբրեւ հնացեալ, որպէս այժմ ետուն նորոգել. նոյնպէս և զհրովարտակն վասն հանդիսի լուսաւորութեան, որոյ վճռն լուծեալ էր յառաջագոյն քննութեամբ և հանրագրութեամբ այլազգեաց Երուսաղէմի. այժմ հակառակ այսմ, դարձեալ առին հրովարտակ, որով սպառնան հասուցանել մեզ չարիս յայտնակել զհետեւակս մեր և արկանել զնոսա ընդ իշխանութեամբ Պատրիարքի իւրեանց. թէպէտեւ այս անկարելի, սակայն զկնի ժամանակաց լինի առիթ խռովութեանց եւ առելութեանց. ուստի խնդրեմք ակնարկել յառաջին պայմանագրութիւնս և 'ի հրովարտակս մեր, և այնպէս լուծանել զխնդիրն։

Եւ ըստ հրամանի Արքային՝ քննեցան գրեանք Հայոց, որք են. Դաշնագիր Ալիի, գրեալ յԵրուսաղէմ 'ի վանս Ս. Յակոբայ (Է.). հրովարտակ Սելիմայ առաջնոյ (ՉՀՅ). Սիւլէյմանայ (ՉՀՇ) գիր դատարանի Հէօճճէթ (ՉՀՄ), յորում դատաստանք Հայ եւ Յոյն Պատրիարքաց յատենի

Կայսեր սակս հանդիսի Լուսաւորութեան, և ըստ վկայութեան իւրեանց Վիրք և Սրբոյք հետեւակ Յունաց, Հապէշք, Գալթիք և Ասորիք 'ի մասնէ Հայոց։ Քննեցան և արձանագրութիւնք դիւանին, յորում գտան հրովարտակ Սուլթան Մէհէմմէտի (١٠٦٦, ١١٣٠—١١٣٣) 'ի ժամանակի նորոգութեան տաճարին Ս. Յարութեան, յորում Յոյնք դաղտնի ետուն ջնջել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց 'ի դիւանէն, և հակառակ նոցին առին հրովարտակ եւ պահեցին, և 'ի նոտիլ թագաւորին նորոգեցին. իմացեալ Հայոց վերոյին հաստատեցին զիրաւունս իւրեանց, և ըստ այնմ տուաւ հրովարտակ և գործադրեցաւ յԵրուսաղէմ. ջնջեցաւ հրովարտակն Յունաց, եւ հրամանն եղեւ վարիլ ըստ նախնի սովորութեան, և հակառակ նմին չտալ հրովարտակ՝ և 'ի մատուցանել զայն յատեան՝ չընդունիլ։ Եւ արձանագրութիւնքն Հայոց գոլով յեպիսկոպոսական դիւանին՝ 'ի լուսանցն (տէրքենար) նշանակեալ են երեքին ազգքն հետեւակ Հայոց, եւ ըստ այնմ տուեալ հրովարտակ (١١٤٢), և զկնի միոյ ամի նորոգեալ։ Այսպէս 'ի բովանդակ գրեանս Հայոց, Հապէշք, Գալթիք և Ասորիք հետեւակ են նոցա, եւ նոքա տնօրինեալ զգործս նոցին։ Յետ քննութեանս այսորիկ՝ վճիռ ետ դենպէտն՝ այն է Բուսմէլի Գաղասկերի, բառնալ այնուհետեւ զհակառակութիւնս Յունաց, և չյուզել այլ ևս խռովութիւն, եւ ըստ այսմ մնաց տուաւ հրովարտակ Հայոց (١١٤٦ 'ի ٢٥ Շաբան ամսոյ) 'ի գանձատանէ (Մալիյէ)։ Եւ ապա յայս արարին թէ հարկ է ջնջել զհրովարտակն Յունաց՝ զոր առեալ են 'ի Կայսերական յատենէ՝ և 'ի տեղի նորա արձանագրել զհրովարտակն Հայոց, չտալ միւսանգամ հրովարտակ Յունաց, մինչչեւ ակնարկեալ իցեն 'ի հին օրինագրութիւնս, դրեալ յեպիսկոպոսական դիւանին, 'ի մատուցանել Յունաց յատեան զայն հրովարտակ, մի ընկալցի՝ եւ առցի 'ի ձեռաց նոցա, եւ հրովարտակն Հայոց դիցի 'ի գործադրութեան մշտնջենաւոր։ Եւ 'ի տեսանել զարձանագրութիւնս հրովարտակին Հայոց 'ի Մալիյէն՝ վերոյսին ետուն հրովարտակ նոցա՝ վարիլ ըստ առաջին սովորութեան, ջնջել զՅունացն՝ և պահել զՀայոցն, (١١٤٦ 'ի ١ Բամազան ամսոյ)։

Զայսպիսի փոյթ և աշխատութիւն մեծ յանձն առ Յով հաննէս Պատրիարք 'ի սէր Ս. Աթոռոյն և գահակալի նորին Գրիգորի սիրեցելոյն 'ի Նմանէ. եւ խնամով եւ որոնել և գտանել զհին արձանագրութիւնս հրովարտակացն Հայոց. զի յաւուրց անտի Տեղակալաց անփոյթ լեալ էին ամենեքեան զայսցանէ, եւ ոչ ումեք փոյթ էր գոնէ նորոգել զայնս. զի նոքա պատաղեալ էին զաղմկաւ իւրեանց. նմին իրի արձանագրութիւնք Հայոց անհետացեալ էին 'ի Կայսերական դիւանէն, և բազմադիմար ծախիւք գտին, զոր միանգամ գտին՝ յայլում տեղւոջ, և այսպէս կենդանացան գրեանքն Հայոց 'ի մեռելութենէ և Արքայն Մահմուտ առաջին վաւերացոյց զայնս իւրով ձեռօք, եւ ըստ մտաց նոցին եւ Խաթթի Շէրիֆ Հայոց, որպէս գրեցաք 'ի վեր անդր։

Իբրեւ լուան Յոյնք զայսոսիկ՝ աղմկեալ շփոթեցան յոյժ. զի 'ի կարծիս եղեն թէ Հայք նովաւ կարեն պահանջել զվիճակն Հապեշոց, զոր յափշտակեալ էին յառաջագոյն յաւուրս Սատուածատուր Պատրիարքի, որոյ վասն սկսան հակառակիլ ընդ Հայոց, և յայտնապէս ասել՝ եթէ կամիք խաղաղութեամբ կեալ ընդ մեզ. զայն հրովարտակ (Խաթթի Շէրիֆ), զոր առիք 'ի վերջին աւուրս՝ այրեցէք 'ի հուր առաջի աչաց մերոց, որպէս ասէր երբեմն Նահաս Ամոնացի ցորդիսն Իսրայէլի. եթէ կամիք մշտնջենաւոր հաշտութիւն իմ ընդ ձեզ, հանջիք զաջոյ ակն ձեր։ Բանզի Յոյնք երկնչին հանապազօր յափշտակել ըզվանս Ս. Յակոբայ, տիրել երից հեռաւակաց, արտաքսել 'ի տաճարէն Ս. Յարութեան, և զրկել 'ի Ս. Տեղեաց եւ 'ի քաղաքէն սրբոյ։ Սակայն լռեցին առ ժամն և սպասէին դիպոզ առթի. զի 'ի նմին ժամանակի Վէզիրն մեծ՝ Հէքիմ օղլու Ալի Փաշա՝ էր 'ի կողմն Հայոց, նմին իրի ոչ յաջողեցաւ գործն Յունաց, թէպէտեւ ծախեցին բազում ինչ 'ի Դրունս մեծամեծաց։

Այլ իբրեւ փոխեցաւ Վէզիրն՝ և էանց 'ի տեղի նորա Կիւրճի Իսմայիլ Փաշա, ազգաւ Վրացի՝ մատեան առ նա Յոյնք եւ հաւանեցուցեալ դիւրաւ ձգեցին զնա 'ի կողմն իւրեանց՝ ընդ որ և զմեծամեծս Դրան։ Յետ այնորիկ մատուցին առ նա գիր ամրաստանութեան զազգէն Հայոց,

որպէս թէ ըստ մտաց դաշնադրոյն Օմարայ, և զօրութեան հրովարտակաց Օսմանեան Կայսերաց՝ ժառանգութիւն սուրբ Երկրին և Ս. Տեղեաց աւանդեալ իցեն Յունաց, և Հայք զկնի ժամանակաց եկեալ անդ՝ և վանք Ս. Յակոբայ լեալ իցէ 'ի բնէ Պատրիարքարան նոցին, եւ ինքեանք իբրեւ ողորմութիւն 'ի վարձու տուեալ իցեն նոցա. և թէ Հայք պատիր խաբէյութեամբ ստացեալ են զգիրսն, եւ նոքա եւս օրինակք եւ ոչ նախատիպք, և թէ ամենայն ազգք քրիստոնէից յերուսաղէմ՝ պարտին հնազանդիլ Պատրիարքին Յունաց. և նախ նորա անկ է կատարել զօրէնս՝ և ապա այլոց, և այն եւս կամաք և հաճութեամբ նորին։ Յայս գիր ձեռնարկեալ կնքեցին Պատրիարքունք Երուսաղէմի և Կոստանդինուպոլսի, և 18 երեւելի եպիսկոպոսունք՝ եւ աշխարհականք ոչ սակաւ։ Եւ խնդրէին իսկ զոմանս 'ի գլխաւորացն Հայոց գլխապարտ ածել 'ի Դուռն, որ և ըմբռնեցան ոգիք երկու, Սեդրաս և Մելիտոն Ամիրայք եւ եդան 'ի բանտի։ Ուր ուրեմն լու եղեւ յականջս ազգին պատրաստութիւնք և գործք Յունաց, և սկսան դիմել այսր և անդր, այլ գտին զբարեկամս իբրեւ զթշնամիս՝ և զընտանիս իբրեւ զօտարացեալս, եւ չգտեալ 'ի նոցանէ օգնութիւն ինչ՝ մատուցին գիր աղաչանաց առ Եպարքոսն Կիւրճի Իսմայիլ Փաշա՝ քահանայիւք եւ խուռն բազմութեամբ ժողովրդոց՝ եւ խնդրեցին ատեան դատաստանի, զի երկու ազգաց հանդիսանալ յատենի Կայսեր և արդարացի քննութեամբ վճարել զիրսն, յայտնի կացուցանելով իւրաքանչիւր ոք զիրաւունս իւր։ Հաճեցաւ ընդ այս Եպարքոսն՝ և սահմանեցաւ օր. Հայք գնացին 'ի Դուռն՝ յորում ժամադիր լեալ էին, այլ լուան պատասխանի՝ թէ այսօր չլինի, գնացէք 'ի տեղիս ձեր, մինչեւ ազդ արասցուք ձեզ։ Բանզի Յոյնք խոյս տուեալ աստի՝ ոչ կամէին հրապարակաւ 'ի դատ մտանել, այլ հնարիւք եւ բռնութեամբ սիրել այլոց իրաւանց, որոյ վասն լուեցուցին ըզդատաւորսն առ ժամանակ մի՝ ձեռնարկել յայլ ինն խորհուրդ ըստ սադրելոյ Եպարքոսին։

Ապա անցանել աւուրց ինչ՝ Պատրիարքունք Յունաց նզովիւք պատուիրեցին ժողովրդոց յամենայն եկեղեցիս մայրաքաղաքին երթալ տալ գիր աղաչանաց առ Թագա-

ւորն. եթէ ոք անլսող լիցի հրամանին՝ չէ նա 'ի ժողովրդենէ Յունաց։ Ժողովեցան 'ի մի վայր մեծամեծք և փոքունք, նաւավարք և ձկնորսք և ռամիկք և եղեն ամբոխ մեծ, դիմեցին խուռն բազմութեամբ 'ի պալատն Արքունի, և աղմկեալ աղաղակէին՝ դատ արասցէ Տէր մեր Արքայ՝ դարձուցանել առ մեզ զվանս Ս. Յակոբայ՝ զոր հանեալ են Հայք 'ի ձեռաց մերոց։ Այսպիսի խռովեալ ամբոխիւ մատուցին զգիրսն մին առ Արքայ և զմիւսն առ Վէզիրն։ Թագաւորն խնդրեաց զհրովարտակս երկուց ազգաց, եւ նոցա տարեալ մատուցին առ Վէզիրն, ուր էր և Միւֆթին՝ և զիւրաքանչիւրսն ուրոյն ուրոյն եդեալ 'ի քսակի կնքեցին և առաքեցին առ Թագաւորն, այլ նա ոչ զքսակսն երաց և ոչ զգիրսն ետես, այլ պատուէր ետ միում 'ի քսակակրաց՝ երթալ ամոքել զմիտս երկուց ազգաց՝ խաղաղիլ և մի եւս համարձակիլ այնուհետեւ տալ գիր աղաչանաց, և որպէս տիրեալ են տեղեացն այնոցիկ՝ դարձեալ այնպէս տիրեսցեն, և անհնազանդքն ունին կրել պատիժ պատուհասի։ Եւ նորա եկեալ ծանոյց զհրաման Արքային երկուց ազգաց։ Հայք դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց, նոյնպէս և Յոյնք՝ լի տրտմութեամբ, զի 'ի դերեւ ելին յոյս և ակնկալութիւնք նոցին, և յուսալէտս վասնեցան ամբաւ դրամք. այլ ոչ կասեցան յետս՝ զի յետ աւուրց ինչ վերըստին դիմեցին առ մեծամեծս Դրան, և ձգեցին զնոսա 'ի կողմն իւրեանց, թէպէտեւ տոկոսիք պարտուց եւս քան զեւս յաւելեալ բարդէր, այլ չէր նոցա ինչ փոյթ։ Ապա հաղիւ ուրեմն կարացին շրջել զմիտս թագաւորին՝ յետս պահանջել զառաջին հրովարտակն տուեալ Հայոց, զորմէ գրեցաք 'ի նախընթաց երեսն, զոր առաքեալ էին յԵրուսաղէմ։ Եւ Եպարքոսն առաքեաց անդ զզինակիր իւր բերել անտի զհրովարտակն։ Յոյնք թելադիր լինէին սպանանել զերկուս Իշխանաւորս, որք եդեալ էին 'ի բանտի։ Հայք անկան 'ի վարանս եւ հոգային զփրկութիւն նոցա. թէպէտեւ ծախեցին զդումարս քսակաց, այլ առ ժամն չեղեւ ինչ օգուտ։ Այլ թէ զի՞նչ ինչ կրեցին 'ի միջոցիս յայսմիկ Պատրիարք վարդապետն և խորհրդականք նորին, երկար լինի և չէ հնար ընդ գրով արկանել։

Զեւ եւս հասեալ զինակրին 'ի Դամասկոս, անկաւ յիշխանութենէ Եպարքոսն Իսմայիլ Փաշա, և ամբարձաւ 'ի տեղի նորա զինակիր Արքայի Մէհէմմէտ Փաշա՝ ըստ սադրելոյ ներքինապետին, և արձակեաց 'ի բանտէ զկալանաւորսն Հայոց. զի փոխանորդ Եպարքոսին նախ յաղեցաւ 'ի Յունաց՝ արար այնպէս, և ապա 'ի Հայոց՝ եթող ըզնոսա։

Իսկ նոր Եպարքոսն առաքեաց հրովարտակաւ զայլ ոք 'ի պաշտօնէից իւրոց զինի առաջնոյն, և նորա հասեալ 'ի Դամասկոս, դարձոյց զնա յետս, և ինքն գնաց յԵրուսաղէմ. ընդ զինակրին եկեալ էին և երկու անձինք յազգէն Հայոց տանել զհրովարտակն, որ եւ բերեալ էին գիր 'ի Յովհաննու Պատրիարքէ. ընթերցեալ Գրիգորի ըմբռնեցաւ 'ի սուգ մեծ վասն բանտարկելոյ, մանաւանդ վասն Սեղբոս Ամիրայի, մաերիմ բարեկամին իւրոյ և բարերարին Աթոռոյ. զի կոչեր զնա մեծ մահտեսի և մեծ Աղա. եւ ծանեաւ նաեւ զնենգութիւնս և զխռովութիւնս Յունաց, զոր արարեալ էին 'ի Թագաւորեալ քաղաքին. եւ գլխաւորք ազգին յորդորէին զնա արիանալ 'ի գործ եւ չլինայել 'ի ծախս դրամոց, և նորա տարակուսեալ դիմեաց 'ի վանս Լատինաց, և 'ի յայտ առնել նոցա զխնդիր երից հետեւակ ազգաց, խոստացան նոքա օգնել նմա յամենայնի. զի բովանդակ այլազգիք քաղաքին վկայէին այնմ, եթէ դատն դարձցի յԵրուսաղէմ։ Յետ այնորիկ ետ որոնել 'ի տումարս Սուլթան Սէլիմայ, և գտին անդ արձանագրութիւն ինչ արքայական Թուղթայիւ այսպէս. Անդրիաս Պատրիարք եւ 34 կարգաւորք գրեալ յականէ յանուանէ, բնակեալ 'ի սեփհականութեան Հայոց 'ի վանս Ս. Յակոբայ. եւ թէ՝ ելին ընդ առաջ իմ. ետ վաւերել հին դատաւորին, և սպասէր դալստեան նորոյն, և երեքին ազգքն ետուն գիր վկայութեան 'ի դատարանի. էառ նաեւ հանրագիր յայլազգեաց, օգնեցին առ այս եւ Լատինք. էառ նաեւ գիր 'ի կուսակալէն Դամասկոսի, 'ի խնդրոյ քաղաքապետին Երուսաղէմի, եւ զայլ կարեւոր գրեանս, զորս արարին 2 ծրար. զմին առաքեցին ցամաքաւ, և զմիւսն յանձն արարին արանցն այնոցիկ, որք եկեալ էին ընդ զինակրին. ընկերացաւ սոցա և Յակոբ վար-

դապետ Նալեան, որք եւ ճանապարհ արարին 'ի Ծովու։ Գրեաց նաեւ Գրիգոր Պատրիարք բազում աղաչանօք եւ արտասուօք առ Յովհաննէս վարդապետ եւ առ զլխաւորս աղգին՝ մաբանիլ ընդդէմ Թշնամւոյ և վաստակիլ 'ի սէր Ս. Յակոբայ և 'ի փառս ազգին։ Չկնայել յինչս և յաշխատութիւնս, և մի երբէք վարանիլ վասն ծախուց, զի յամենայնի պատրաստ էր հոգալ զայն, զի պատրաստ եմ ասէր, վերստին արկանել զշղթայն 'ի զարանոց իմ 'ի վճարումն պարտուց։ Թէպէտ կամէր ինքն գնալ 'ի Կոստանդինուպօլիս, այլ Յակոբ վարդապետ և այլք արդիլին զնա, զի մի վնաս ինչ պատահեսցի 'ի բացակայութեան նորին (1735։ 'ի 15 Յունվար ամսոյ)։

Իսկ Մէլէթիոս Յոյն Պատրիարքն Երուսաղէմի նախ քան զմեկնիլ 'ի Ս. Քաղաքէն՝ երդուաւ 'ի վերայ Աւետարանին Սրբոյ ընդ Գրիգոր Պատրիարքին Հայոց, և այնպէս գնաց 'ի Կոստանդինուպօլիս։ և իբրեւ զէպ եղեւ ժողովիլ 'ի մի վայր ընդ Յովհաննու Պատրիարքին եւ երեւելի իշխանաւորաց երկաքանչիւր ազգաց, յետ երկար խօսելոյ եւ վիճելոյ 'ի վերայ խնդրոյն Երուսաղէմի, կամեցաւ խաբել զՅովհաննէս Պատրիարք և զորս ընդ նմա, որպէս խափեալ էր զԳրիգոր, տայ նոցա զայս կնքեալ և ստորագրեալ գիր յանդգնութիւն։ եւ ինքն դրժեալ երդման իւրոյ, զկնա եղեւ յարուցանել զանեծամեծ խռովութիւնս որպէս ոնիմք տեսանել յետոյ։ Ահաւասիկ թարգմանութիւն նամակի նորին։

Որովհետեւ թշնամին արդարութեան և խաղաղութեան երբէք դադարի արկանել խռովութիւն 'ի մէջ քրիստոնէից, ուստի պարտ է 'ի միտ առնուլ աշակերտացն Քրիստոսի թէ այսպիսի գրգռութիւնք 'ի ստատանայէ են։ Եւ ըստ Աւետարանին Սրբոյ հեռի լինել յայնպիսեաց եւ հետեւիլ պատուիրանաց Տեառն մերոյ։ զի ըստ որում թելադրութեամբ սատանայի յարուցին ոմանք վէճս եւ հակառակութիւնս 'ի մէջ բարեկամութեան Յունաց եւ Հայոց յերուսաղէմ յաղագս Թափօրի և հանդիսի Լուսաւորութեան, որ կատարի յաւուր երեկոյի Շաբաթու Ճրագալուցի։ Մէլէթիոս Պատրիարքս Յունաց և Գրիգոր Վարդապետն Հայոց, սակս չտալոյ տեղի անկարգութեանց և

վնասուց, համաձայնութեամբ երդուաք յԱւետարանն Ս. Վարիլ խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ ըստ սովորութեան նախորդաց մերոց 'ի Թափօրս եւ 'ի Ս. Տեղիս, որոց իշխեմք առանց նոր ինչ սովորութեան։ այսու դաշամբ եդաք զձեռս մեր 'ի վերայ սատուածային Ս. Աւետարանին՝ կալ մնալ խաղաղութեամբ, որպէս կացին նախորդ Պատրիարքունք Յունաց և Հայոց։ Ապա եկեալ 'ի Կոստանդինուպօլիս վերստին ժողովեցաք 'ի մի վայր ընդ Յովհաննու վարդապետին Հայոց, և ընդ այլ երեւելի իշխանաւորս յերկուց կողմանց։ եւ յետ այլոց բանից հարցաք զմիմեանս։ թէ արդեօք ընդունելի՞ են երդումն զոր արարաք յերուսաղէմ ընդ Գրիգոր վարդապետի։ եւ համութեամբ ընկալաք մեք և Յովհաննէս վարդապետն, եւ որոց ընդ մեզ էին 'ի ժողովի անդ։ խաղաղութեամբ անցուցանել ըստ երդման մերոյ, որպէս անցուցեալ են յառաջագոյն նախորդ Պատրիարքունք մեր ընդ վարդապետս Հայոց՝ տեղեաց միաբան ազգաց, եւ որք մի անդամ ընդ իշխանութեամբ նոցա են, արարողութեանց հանդիսի Լուսաւորութեան Թափօրոյն՝ որ կատարի յաւուր երեկոյի շաբաթուն, և այլ ամենայն եկեղեցական սովորութիւնք նոյն։ Նոյնպէս սիրով և խաղաղութեամբ անցուցանել յայսմ հետէ, ըստ Բանի Տեառն մերոյ սիրոյն խաղաղութեան, առանց առաջարկելոյ յերկուց կողմանց որ և իցէ նորանոր եւ աւելորդ իրս եւ խնդիրս։ Եթէ ոք կամիցի թարգմանել զգիրս զայս յայլ լեզու՝ և ստերիւրեսցէ զիմաստս սորին 'ի վնաս երկոցունց կողմանց՝ մի լիցի ընդունելի, զի սոյն այս գիր խաղաղութեան առեալ 'ի պահպանութիւն և 'ի հաստատութիւն հին սովորութեանց երդման և համաձայնութեան։ Ի Կոստանդինուպօլիս՝ 1735։ յամսեանն Մարտի։

Մէլէթիոս Պատրիարքս Երուսաղէմի հաստատեմ։

Մեթրապոլիտս Կեսարիոյ Պաղեստինոյ Բարդէնիոս։

Յովհաննէս Պատրիարք պատրուակաւ իւիք առաքեաց սուրհանդակ յԵգիպտոս, զի 'ի ձեռն բարեպաշտի ուրուք, որ էր յայնժամ 'ի Դուռն Իշխանին Եգիպտոսի, և թախանձանօք էառ 'ի ձեռն նորին զկարեւոր գրեանս, զոր

խնդրեին Հայք, և նորա կատարեալ զխնդիր նորին յղեաց զայն 'ի ձեռն զինակրի միոյ իշխանին 'ի Յոզպէ. այլ նորա ոչ ինչ դիտացեալ զիրացն, եթող անդ զգրեանս՝ և դարձ արար յԵգիպտոս։

Իսկ Գրիգոր Պատրիարք՝ աւուրքք յառաջ գնացեալ էր յուխտ ընդ միաբանս իւր 'ի դերեզման Ս. Աստուածածնի յաւուր տօնի Ս. Ստեփաննոսի, և 'ի դարձի իւրում եգիտ զթղթաբերն ժամանեալ, և ընթերցաւ առաջի միաբանաց զթուղթս Պատրիարքին և գլխաւորաց ազգին, և ծանեան զհանգամանս իրաց՝ զաղմուկն և զխռովութիւնն Յունաց՝ զորս անցուցեալ էին 'ի Թագաւորեալ քաղաքին. Թէպէտ եւ լցան յայնժամ միաբանք տրտմութեամբ՝ այլ Գրիգոր քաջալերեալ խրախուսեաց զնոսա չվհատիլ իբրեւ վատասիրտ, այլ արիանալ և աշխատիլ խոհեմութեամբ և զգօնութեամբ, և մի երբէք հանել զբանն 'ի վեր՝ զի մի լուիցեն Յոյնք՝ և ճեղքեսցի քաղաքն, և լինիցին խոչ գործոյն՝ զի Թէպէտ բարեկամք մեր են ասէ՝ այլ յայտնի է բնաւորութիւն նոցին. եթէ հնար լինի՝ դրամով վաճառեն զորդիս և զընտանիս իւրեանց։

Իսկ Յոյնք 'ի Կոստանդինուպօլիս եդին հարկս 'ի վերայ ժողովրդոց և կրօնակցաց իւրեանց, և ժողովեցին զայն բռնի մինչեւ 'ի յետին չքաւոր աղքատաց, 'ի պէտս ծախուց իւրեանց. Նմին իրի ոչ իշխեցին խլրտիլ յԵրուսաղէմ 'ի խախանումն գործոյն, և հայեցեալ յայնչափ ծախս դրամոց՝ տակաւին ոչ գիտէին թէ 'ի յաջողութեա՞ն իցեն՝ և թէ 'ի ձախողութեան, անտեղեակ էին և 'ի դալստենէ զինակրին, մինչեւ եկին դրեանք նոցին, յորոց ծանեան զամենայն հանգամանս գործոյն՝ զի և նոքա խնդրեալ էին հանրագրութիւն յԵրուսաղէմէ, սակայն կարի անագան ժամանեցին դրեանք նոցին վայրկեան։

Այլ յորժամ լու եղեւ 'ի քաղաքին թէ Հայք պատրաստեցին զկարեւոր դրեանս՝ բորբոքեցաւ թարգմանն Յունաց Կեսարիոս, և դիմեաց զայրագին առ դատաւորն, և աղաղակ բարձեալ գոչէր, թէ ընդէ՞ր եառեր գիր Հայոց. բայց դատաւորն արբոյց նմա զբաժակն դառնութեան, զի եւ ասէ ըստ մտաց հին հրովարտակաց նոցին եառու զգիրն, մի՞թէ ստեցի ինչ, եւ կշտամբեալ զնա եհան արտաքս։

Եւ նորա մեկնեալ անտի եկն առ Գրիգոր Պատրիարք հարցանել զպատճառն իրրեւ յանդէպս, եւ լուեալ 'ի նմանէ զարժանաւորն մեկնեցաւ անտի։

Յետ այնորիկ չոքաւ Գրիգոր Պատրիարք հանդերձ իւրովքն 'ի դատարան, ուր էին ժողովեալ բազմութիւնք այլազգեաց և քաղաքացեան. կոչեցան անդ և գլխաւորք Յունաց եւ Լատինաց, ընթերցան առաջի նոցա զառաջին հրովարտակն Հայոց և զգիրս պատմութեան Արարատցւոց (Թարիխ էլ Համպելի)։ և ամենեքեան վկայ կացին, թէ ճշմարիտ են բանք հրովարտակաց և պատմութեանն, եւ վանք Ս. Յակոբայ սեփհական է Հայոց, ուր վերստին կընքեցան հանրագրութիւնք կրկին, և Գաբրիէլ վարդապետ փոխանորդ Գրիգորի չոքաւ 'ի Դամասկոս և էառ գիր 'ի Կուսակալէն. գրեաց և առանձին քաղաքացեան Երուսաղէմի գիր ամբաստանութեան զազգէն Յունաց, ուր ասէ. անհետ արարին յԵրուսաղէմէ զՍրբոյս և զՎրացիս և զԵթովպացիս, և յանիրաւի տիրեցին վիճակաց նոցին, որոց անկ էր տիրել Թագաւորին. եւ թէ՝ յառաջադոյն չորս գլխաւոր ազգ էին 'ի քաղաքիս, յորոց վերայ հաւասար բաժանէր տուրք Տէրութեան. իսկ Յոյնք տիրեալ վիճակաց նոցին հալածելոց, զբաժին հարկն նոցա ոչ կամին հատուցանել, որ մինչեւ ցայժմ Հայք և Լատինք պահանջեն 'ի նոցանէ։ Զայսոսիկ գրեանս արար Գրիգոր երկու ծրար, զմին առաքեաց 'ի ցամաքէ և զմիւսն 'ի ծովու 'ի Կոստանդինուպօլիս, և Գաբրիէլ վարդապետ դարձաւ յԵրուսաղէմ։ Ի հասանել գրոց՝ մատուցին Հայք 'ի Դուռն, և նոցա ընթերցեալ, յայտ արարին Յունաց զբովանդակ միտս նոցին։ Տագնապեցան առ այս Յոյնք, եւ կասկածէին իսկ զի մի գուցէ այլ խնդիր յուզեսցի, և ինքեանք վրիպեսցին 'ի նըպատակէ իւրեանց։ Նմին իրի սկսան դեգերել 'ի դրունս իշխանաց, և հաղիւ ուրեմն կարացին խափանել եւ տալ պահել զգրեանս Հայոց։

Եւ ապա եառուն գրել նոր հրովարտակ առ կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, չտալ երբէք Հայոց և Յունաց հանրագրութիւն, և կամ որ և իցէ գիր։ և եթէ յանդգնեսցի ոք խնդրել, կալեալ դիցի 'ի բանտի, և ազդ առնել 'ի Դուռն, զի սահմանեսցի պատիժ նորին։

Այս հրաման եհաս յերուսաղէմ զկնի ճանապարհորդելոյ Գրիգորի Պատրիարքի 'ի Բիւզանդիոն, և միաբանք խորհէին առաքել զայլ կարեւոր գրեանս. այլ մնացին առնուլ լուր ինչ բարի։ Սակայն հակառակ խորհրդոյն եհաս գիր 'ի Յովհաննու Պատրիարքէ, յորում թախանձէր քահանայիւք եւ ժողովրդովք զԳրիգոր Պատրիարք փութալ դալ հասանել 'ի Կոստանդինուպոլիս, զի կարի տաղտկացեալ էին յերեսաց խնդրոյն Յունաց. եկ ասէին՝ կաց ընդդէմ ախոյեանի քում, զի քեզ հաւատացաւ տունդ այդ։

Եւ Գրիգոր Պատրիարք յօժարութեամբ յանձն առ կատարել զխնդիր նոցա, եւ յերկրորդ աւուր մեծի Պասքին ընթերցաւ ղգիրս յեկեղեցւոջ Ս. Յակոբայ 'ի լուր ուխտաւորաց և միաբանաց, եւ որոշեաց զարս գլխաւորս յեկեղեցականաց, և կարդեաց զնոսա Տեղապահ, Փոխանորդ, Գանձապետ և Թարգման, և յանձն արար զկատարվարութիւն Աթուոյն 'ի իշխանս նոցա, արքունական եւ ծառայել հաւատարմութեամբ և խոհեմութեամբ. և պատրաստեալ զամենայն ինչ, էջ 'ի Յոպպէ ընդ ուխտաւորս տարւոյն (1736, 'ի 6 Մայիսի)։

ԳԼՈՒԽ Զ.

Ուղեւորութիւն Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս։ Կարեւոր գործք որք պատահեցան անդ։ Պայմանագիր Յունաց։ Բնագիր Գաղղիական նամակի Կարտինալի Ֆլորենց։ Վէճ Լատինաց։ Դարձ Գրիգորի 'ի Կոստանդինուպոլսէ յԵրուսաղէմ։

Գրիգոր Պատրիարք հասեալ 'ի Նաւահանգիստն Յոպպէի, դադարեաց անդ զաւուրս ինչ. ապա եմուտ 'ի Նաւ ընդ ուխտաւորս (Մայիս 15), եւ պատահեալ յայծոգակ հողմոյ հասին 'ի Կիպրոս. փութաց ընծայիւք Ակնցի Մարտիրոս վարդապետ 'ի Նաւն, և յարգանօք մեծարեաց ըստ Հայրապետն։ Եւ մեկնեալ անտի և ծանրանաւեալ հաղիւ

հասին 'ի Նաւահանգիստն Ֆինիքէ (Յունիս 5), տագնապեալ 'ի մրրկէ ծովու և 'ի պակասութենէ ջրոյ եւ ինն անդ 'ի ցամաք, և ճանապարհ արարին 'ի նպատակեալ տեղին։ Ի հասանիլ Բոչէ Պոչէ կոչեցեալ աղրիւրն յորդահոս, տկարացաւ Գրիգոր 'ի տենդ ախտէ, և ոչ կարաց գրել այնուհետեւ զոթեւանս՝ որ ցայնվայր գրեալ էր, յիշելով 'ի նմա զանուանս ազգայնոց, որք սիրով և բարութեամբ պատահեցան նմա։ Հասեալ նեղութեամբ և վշտօք 'ի Կուտինա քաղաք, անկաւ 'ի մահիճս և ուխտաւորքն մեկնեալ ցրուեցան իւրաքանչիւր 'ի քաղաքս և յաւանս, եւ ինքն դադարեաց անդ աւուրս 21, և Ժողովուրդ քաղաքին սիրով ընկալեալ զնա հոգացին զամենայն ինչս՝ զարմանելով զհիւանդութիւն նորին։ Իսկեւ լուաւ Յովհաննէս Պատրիարք զհիւանդութիւն սիրելւոյն իւրոյ՝ տրտմեցաւ յոյժ, և փութանակի առաքեաց անդ զչորեսին գլխաւոր վարդապետս, որք էին Յարութիւն, Յակոբ, Սահակ եւ Յակոբ Պալատցի հանդերձ այլովք՝ եւ Գրիգոր կազդուրեալ սակաւ ինչ 'ի հիւանդութենէ իւրմէ զօրացաւ, և ել նոքօք հանդերձ 'ի Կուտինայ. ուղղիկ եղեն նմա և ոմանք յերեւելեաց քաղաքին, և հասին 'ի Գրուսա։ Ներսէս վարդապետ Առաջնորդ քաղաքին և երեւելի անձինք ընկալան զնա փառօք և պահեցին զաւուրս ինչ։ Ապա մեկնեալ անտի, նաւեցին 'ի Մուտանիայ և հասին 'ի Կոստանդինուպոլիս (Յուլիս 23)։ Եւ տեսեալ Գրիգորի զսիրելին իւր ընդ Յովհաննէս Պատրիարք և զայլս ուրախ եղեն յոյժ և խընդացին, և անցեալ յիւսկիւտար՝ օթեւանս կալաւ 'ի վանքն Երուսաղէմի, և ետ շինել անդ սենեակս։ Յելս Նոյեմբեր ամսոյ չոքաւ յեկեղեցի Ս. Գէորգայ 'ի Սամաթիա՝ կատարել անդ զսոն Մինդեան Քրիստոսի։ Ոմանք 'ի կուսակցութենէ Կաթոլիկ անուանելոց, գնացեալ մատնեցին զնա ստութեամբ Դեսպանին Գաղղիոյ (Վիլնիով մարքիզ), թէ Պատրիարքն Երուսաղէմի 'ի քարոզի իւրում հայհոյեաց զպատարագն ձեր, իսկ նա գոլով այր խոհեմ՝ անարգանօք դարձոյց զնոսա յետս՝ ասելով, ոչ հաւատամ թէ այրն այն խօսեսցի զայդպիսի բան։

Հ. Մ. Զամչեան գովութեամբ յիշատակէ զհամարումն Դեսպանին՝ զոր ունէր 'ի վերայ Գրիգորի, գրելով այսպէս.

«Զղեաց առ նա զերիկուս 'ի Լատին կրօնաւորաց, հարցանել զողջունէ նորա և ասել, բարեաւ եկիր աղաւնի քաղցր շքաբեր ոստոյ ձիթենւոյ։ Եւ նորա մեծարեալ զնոսա, դարձոյց պատասխով՝ և արար պատասխանի առ Դեսպանն ասելով՝ հիւանդն զի՞նչ խնդրէ՝ եթէ ոչ՝ առողջութիւն, նեղեալն զի՞նչ, բայց միայն մխիթարութիւն»։ Պարտ. Հայոց. Հայ. Գ. Երես 811։ Դեսպանն արար կոչունս (Յունվար 24) և հրաւիրեաց զերկոսին Պատրիարքունս, զԳրիգոր և զՅովհաննէս՝ հանդերձ երեւելի իշխանօք, և պատուով մեծարեաց զնոսա, և ապա ետ նոցա ընծայս, ըստ Հայր Մ. Զամչեան, երկու սակի ժամացոյցս, մին Գրիգորի և միւսն Յովհաննու, և մեկնեցան անտի խաղաղութեամբ։ Իսկ Գրիգոր Պատրիարք փոխարէն ընծայից Դեսպանին տայ երկու գոհարազարդ մատանիս՝ մին տիկնոջ եւ միւսն որդւոյն։ Եւ ապա յաւուրս Բարեկենդանի մեծի պահոց՝ վերատին անկաւ 'ի մահիճս. այլ 'ի դարմանելոյ բժշկաց եգիտ զառողջութիւն և փութաց հիւանդագին յեկեղեցի Ս. Աստուածածնի՝ բառնալ զդժուութիւնս՝ որ 'ի պատճառս չնչին իրաց անկեալ էր 'ի մէջ Պատրիարքին Յովհաննու եւ Անթապցի Պետրոս վարդապետի՝ Բիւթիւր կոչեցեալ՝ նուիրակին Էջմիածնի. թէպէտեւ հաշտեցան նոքա առ երեսս, բայց վնասն եղեւ միջնորդին։ Գուժեաց յանկարծ 'ի Թադաւորեալ քաղաքի անդ մահ Աբրահամու Կաթուղիկոսի Էջմիածնի՝ որ էր 'ի Թէքիրտաղ, վախճանեալ 'ի Նոր կիւրակէի (1737. 'ի 18 Ապրիլի)։ Ի սմին ժամանակի եկեալ էին 'ի Կոստանդինուպոլիս Թովմայ և Մկրտիչ վարդապետք և այլք ոմանք. սոցա առեալ զնուիրակ Պետրոս վարդապետն՝ գնացին յիւսկիւտար առ Գրիգոր Պատրիարք. եկին անդ և Իշխանաւորք Կոստանդինուպոլսոյ, և եդին առաջի նորա թուղթ ինչ բաղմակնիք՝ յորում հրաւիրէին զնա գալ եւ նստիլ յԱթոռն Հայրապետական, եւ նորա խնդրեալ 'ի նոցանէ պայմանս խորհիլ մինչեւ ցաւուրս երիս, և արձակեաց զնոսա։ Ապա ասաց առանձին առ Յովհաննէս Պատրիարք և ցիշխանաւորս Հայոց, թէ այս երիցս անգամ եղեւ՝ խնդրեն զիս լինիլ Կաթուղիկոս ազգին, բայց անհնարին վարկուցեալ զիրան հրաժարեցայ՝ և արդ դարձեալ հրաժարիմ. եւ զկնի երից աւուրց եկն յեկեղեցի

Ս. Աստուածածնի՝ եւ յատենի անդ յայտնապէս առաջի ամենեցուն հրաժարեցաւ 'ի կոչմանէն յայնմանէ։ Խնդրեալ էին երբեմն և ժողովուրդք Կարնոյ զԳրիգոր՝ Առաջնորդ քաղաքին իւրեանց՝ այլ չէր հնար լինիլ այնմ։

Ապա առաջի եդին հրաւիրակքն Էջմիածնի զայլ դիր. եթէ չառնուցու յանձն Գրիգոր, ասեն. խնդրեմք զՂազար վարդապետն Ջահկեցի, և ոչ զայլ ոք. գրեցին յայնժամ առ Ղազար վարդապետ 'ի Զմիւռնիա, զի եկեալ անտի երթիցէ 'ի Ս. Էջմիածին։ (Օգոստոս 7)։ Ի վայրն ոսն Եփեսոսի Ս. Ժողովոյն, եկն հրաման խիստ յեկեկն Մէհէմմէտ Փաշայէ առ Յովհաննէս Պատրիարք, պատուիրել յեկեղեցիս, զի մի' երգեսցեն զյեսին երիս տուն Ով հրաշալի երգոյն, և նա առ ահին, այնպէս արար. եւ եղեւ աղմուկ եւ խռովութիւն 'ի մէջ ժողովրդոց։ Ոմանք 'ի Կեռաբացւոց ետուն ասել յիւսկիւտար զՇարականն զայն եւ մատնեցան 'ի թիւ Արքունի նաւատեղեաց ոգիք 6 (Սեպտեմբեր 12)։ Եպարքոսն Մէօհսիւն օղլու դարձաւ 'ի պատերազմն դրօշիւք եւ երեւելի փառօք, և եմուտ 'ի մայրաքաղաքն և գնաց 'ի պալատն Արքայի. եւ ապա ընկեցեալ 'ի պատուոյն տարագրեցաւ 'ի Թեսաղոնիկէ, եւ փոխանակ նորա ամրարձաւ յայն իշխանութիւն Գայմաքամ, հակառակն քրիստոնէից (Յունվար 20)։ Ամբաստանեցաւ Ղազար վարդապետ 'ի Դուռն 'ի Բգեշխէն Կարնոյ, իբր առանց հրովարտակի, և առաքեցաւ Նուիրակապետն Եպարքոսին ածել զնա 'ի Կոստանդինուպոլիս. թէպէտեւ Գրիգոր եւ Յովհաննէս բազումս աշխատ եղեն դարձուցանել զնա յետս, այլ չեղեւ հնար։ (Փետրվար 2) լուան թէ մեռեալ է Բգեշխն Կարնոյ, և Ղազար վարդապետ զերծեալ 'ի Ս. Էջմիածին։ (Մարտ 13) Եկ արտաքս Թուղն կայսերական, և Վէզիրն մեծ գնաց 'ի պատերազմ ընդդէմ Աւստրիոյ։ Յերիրորդ Կիւրակէի աղուհացից, խորհեցան Գրիգոր և Յովհաննէս ընդ գլխաւորս ազգին, եւ առաքեցին զտնանս առ դեսպանն Դաղլիոյ, լինել միջնորդ և ձեռնտու կարգադրութեան խնդրոյն Երուսաղէմի (1738, յԱ Ապրիլի)։ Յետ կատարելոյ Գրիգորի զոսն Պասքին յեկեղեցի Ս. Գեորգայ, դարձաւ յիւսկիւտար 'ի վանքն. և մեծաւ ջանիւք գնեաց զերիս բաժինս այգւոյ տեղւոյն

և խառնեաց յառաջին երիս մասունս, զոր ունէին՝ և ընդարձակեաց զտեղին, եւ ետ չինել 'ի վանքն յայն գինեատուն մեծ, եւ արար այլ նորոգութիւնս։ Թէպէտեւ կոչէին զայն տեղի վանք Երուսաղէմի, այլ ոչ էր անդ սեղան պատարագի։ Եւ Գրիգոր ետ չինել անդ սենեակ մի 'ի կողմն հիւսիսոյ, և կանգնեաց անդ սեղան 'ի ծածուկ, յանուն Ս. Յակոբայ, յորոյ վերայ պատարագէր։ Եւ յեկեղեցին Ս. Աստուածածնի ('ի Պատրիարքարանի) ետ չինել իւրովք ծախիւք սենեակ մի մեծ վերին և ստորին սրահիւք, և արար զայն տեղի իջեւանի միաբանացն Երուսաղէմի, և կամ փոխանորդարան։ զի մինչ ցայն վայր չունէին առանձին տեղի։ (Հոկտեմբեր 14) դարձաւ Վէզիրն մեծ 'ի պատերազմէն։ (Մարտ 11) մեծ Վէզիրն Եէկէն Մէհէմմէտ Փաշա, աքսորեցաւ 'ի Կղզին Հռոդոսի եւ 'ի տեղի նորա եդաւ Այվազ Մէհէմմէտ Փաշա, որ յայնմ ժամանակի էր 'ի Վիեննի, ուր առաքեցաւ կնիք Արքային։ Եւ տեղապահ Վէզիրին առեալ զմեծ դրոշն գնաց բազմութեամբ յԱդրիանուպոլիս, ուր եհաս և Վէզիրն մեծ և ընկալաւ զդրոշն, և Տեղապահն դարձաւ 'ի տեղի իւր 'ի Կոստանդինուպոլիս։

Իսկ ինքն Գրիգոր Պատրիարք այսպէս համառօտել ըստ պատճառ գնալոյ իւրոյ 'ի Կոստանդինուպոլիս։ Քանզի յետ վճարելոյ զպարտսն և կարգաւորելոյ զԱթոռն Երուսաղէմի՝ ձեռն արկ խորհրդով Յովհաննու Պատրիարքի տալ նորոգել զհրովարտակ և զՄաթթի Շէրիֆս, որ 'ի ժամանակս ժամանակս տուեալ էին Հայոց յՕսմանեան կայսերաց, վասն սեփականութեանց Երուսաղէմի, որ և արար իսկ։ Լուեալ Յունաց զայսպիսի ձեռնարկս Գրիգորի և Յովհաննու, լցան նախանձու, թէ ահա զօրանան Հայք, որով և յարուցին աղմուկ մեծ 'ի կայսերանիստ քաղաքի անդ, և ամբաւ ծախիւք ձգեցին 'ի կողմն իւրեանց զմեծամեծս Դրան։ Եւ զԱրքայ հանին 'ի կամաց, որպէս թէ զրկեալ իցեն Հայք զՅոյնս, և ետուն յետս առնուլ 'ի ձեռաց Հայոց զնոր Մաթթի Շէրիֆն և պատռեալ։ և զերկու գլխաւոր իշխանս ազգին մատնեցին 'ի բանտ, և ըստ առնային տալ ընդել զրովանդակ ազգն։ այլ Տէր ողորմեցաւ եւ փրկեաց զմեզ։ Իսկ ազգայինք Կոստանդինուպոլսոյ վասն այսր խնդրոյ ծախեալ էին բազում ինչ, և

առեալ զդրամն պարտեօք։ Եւ զիջեալ Գրիգորի 'ի Թախանձանս նոցա չոքաւանդ, և վճարեաց զամենայն պարտս նոցա, եւ դեգերեալ 'ի բազում աւուրս 'ի դրունս այլազգեաց վասն խնդրոյն Երուսաղէմի, շահեցաւ եւ ոչ ինչ։ Ապա դիմեցին առ դեսպանն Գաղղիոյ և յայտ արարեալ զինդիրն, աղաչեցին զնա լինել ձեռնտու և օգնական, զի Յոյնք եւս յառաջագոյն առ սա դիմեալ էին։ և ասի եւս թէ խորհրդով դեսպանին յետս առ Արքայ ըՄաթթի Շէրիֆն Հայոց։ Իսկ դեսպանն խստացաւ կատարել զինդիրս նոցա, բայց ասաց բերել առ ինքն զամենայն վաւերեալ գրեանս, իմանալ զվիճս նոցա, և ըստ այնմ կարող լիցի վերստին առնուլ զՄաթթի Շէրիֆն, և տալ նորոգել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց 'ի դիւանն։ զի Յոյնք եղծեալ և արտաքսեալ էին զայնս։ Խոստումն այս երկարեցաւ ամ մի ողջոյն։ զի որքան սաքա թախանձէին, նա համբերեցէք ասէր, և ոչ այլ ինչ։ Ի սոյն աւուրս եկն 'ի Կոստանդինուպոլիս Միքայէլ Կաթուղիկոսն Սսոյ, եւ իջեւանեցաւ յիւսկիւտար 'ի վանքն Երուսաղէմի։ (Հոկտեմբեր 18)։ դարձաւ 'ի պատերազմէ Վէզիրն մեծ առեալ զՊիլկրատ քաղաք, և եմուտ յաղթանակաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ Գրիգոր Պատրիարք եկն յեկեղեցի Ս. Աստուածածնի վասն գործոց Երուսաղէմի, ուր լուաւ զմահ Նուիրակ Յարութիւն վարդապետի, վախճանեալ 'ի վանքն Շնքուչայ։ (1739. 'ի 23 Դեկտեմբերի) ըստ բանի Դեսպանին 'ի գութ շարժեցաւ Բէյիզ էֆէնտին՝ որ էր 'ի կողմն Յունաց, և ասէր թէ 'ի Հայոց այսչափ.... բայց բարութիւնս ինչ ոչ կարացաք առնել։ Հուսկ ուրեմն միջնորդութեամբ Դեսպանին Գաղղիոյ նորոգեցաւ Մաթթի Շէրիֆն Հայոց՝ եւ Արքայն վաւերեաց զայն ձեռագրով իւրով։ Ընդ այս նախանձաբեկ լեալ Յունաց, սկսան դեգերիլ այսր և անդր, մանաւանդ թախանձել զԴեսպանն՝ զի որպէս չնորհեաց Արքայ սաեն՝ հրովարտակ Հայոց, նոյնպէս և մեզ չնորհեսցէ։ և զինի միոյ ամսոյ առին եւ նոքա զայն։ Բայց հրովարտակք երկուց ազգաց զմի եւ զնոյն ունին զիմաստս, այսինքն Հայք և Յոյնք զոր ինչ ունէին յԵրուսաղէմ բաժին ժառանգութեան 'ի սկզբանէ և այսր, և որպիսի եղանակաւ վարէին անդ զպաշտամունս

և զսովորութիւնս իւրեանց, նոյն օրինօք վարեսցին դարձեալ այժմ և առ յապայն, և մի յարուսցեն վէճս և խռովութիւնս՝ և կռուեսցին ընդ միմեանս։

Ահա այսպէս ծանր և դժուարակիր նեղութեամբ եւ աշխատութեամբ՝ վասնզի եղեւ այս ահագին յուզմանց և խռովութեանց, թող զմեծագումար ծախս երկուց կողմանց, որք գրեթէ յումպէտս վատնեցան։ Եւ հուսկ ուրեմն հաշտեցան Պատրիարքունք եւ գլխաւորք երկուց ազգաց միջնորդութեամբ Դեսպանին Պաղդիոյ, և ըստ առաջարկելոյ Գրիգորի և Յովհաննու Պատրիարքաց՝ գրեցան անդ 'ի Դեսպանատան փոխադարձ դաշնագրութիւն ինչ 'ի բարբառ Իտալացւոց ստորագրութեամբ և կնքով Պատրիարքաց և գլխաւորաց երկուց ազգաց։ Դաշնագրութեան բուն խակ օրինակն՝ պահեալ էր 'ի Ս. Աթոռս մինչեւ ցաւուրս մեր, զորոյ զիմաստս թարգմանութեան դնեմք աստ 'ի ստորեւ, որ ունէր օրինակ զայս։

Շնորհիւ Տեառն մեք Պատրիարք Երուսաղէմի և Գահակալ Աթոռոյ Նորին, յայտ առնեմք այսու գրութեամբ, տարաձայնութիւնն որ յամաց հետէ տեղի եդիտ 'ի մէջ Հայոց եւ Յունաց, յաղագս եկեղեցական սովորութեանց և արարողութեանց, մտանելոյ 'ի Ս. Գերեզմանն Քրիստոսի, հետեւակ երից ազգաց և սեփհական տեղեաց իւրաքանչիւր քրիստոնէից։ Ի վերջոյ զմտաւ ածեալ զանպատեհ խռովութիւնս և հետեւապէս զվնաս նորին՝ որք պատահին 'ի վիճմանց և 'ի հակառակութեանց, և փափաքելով մեր միաբան սիրոյ և խաղաղութեան՝ հաճութեամբ համաձայնիմք ընդ վարդապետս Հայոց Կոստանդինուպօլսի և Երուսաղէմի՝ և ընդ համայն ազգս նոցա, բառնալ 'ի միջոյ զդժուարութիւնս անհամաձայնութեանց վիճմանց և վրդովմանց, , յորոց ծնանին խոչք բարեկամութեան եւ խաղաղութեան, ուստի յայտ առնեմք 'ի դրի աստ զյառաջադրութիւն մտաց մերոց։

1°. Յեկեղեցական արարողութիւնս՝ 'ի սկզբանէ և այսր ըստ սովորութեան՝ Յունք ունին զառաջնութիւնն՝ և պահեսցի նոցա այն, մանաւանդ յարարողութեան Ս. Շաբաթուն 'ի միասին մտանել 'ի Ս. Գերեզմանն երկուց Պատրիարքաց՝ Յունաց և Հայոց, և կամ Փոխանորդաց նոցին,

զի միշտ և հանապազ առաջնութիւնն պահեալ և տուեալ է ազգին Յունաց։ Նմին իրի յայտ առնեն Յոյնք՝ թէ յաւուր Ս. Շաբաթու սակս վառելոյ զհուրն օրհնեալ՝ մտանել ազգին Յունաց և յետոյ անմիջապէս ազգին Հայոց։

2°. Ազգն Ասորւոց 'ի ժամանակէ հետէ գոլով ստորադրեալ ազգին Հայոց՝ մնասցեն յայսմհետէ եւս այնպէս, որպէս և էին։ Իսկ երկոքին ազգքն Հայէշք և Գպթիք յորոց մասնէ էին և ընդ որում գտանէին 'ի հարիւր ամաց հետէ մինչեւ ցայսօր՝ ըստ նմին օրինակի մնասցեն եւս յայսմհետէ։

3°. Վասն վանաց Ս. Յակոբայ մեծի, և վասն այլոց տեղեաց որք յԵրուսաղէմ, զորս սեփհականեալ ունին այժմ Հայք 'ի ժառանգութեան իւրեանց, բացայայտ ծանուցանեն Յոյնք չունել այսուհետեւ իրաւունս միջամտելոյ և պահանջելոյ ինչ։ Յետ ընդունելոյ Հայոց զայս գիր խաղաղութեան և համաձայնութեան, զոր պահեսցեն առ իւրեանս։

Վասն ամենայն որ և իցէ պատճառաց, որպէս գրեցաք 'ի վեր անդր, ստորագրեալ կնքեցաւ այս թուղթ 'ի մէջ երկուց Պատրիարքաց Կոստանդինուպօլսի և Ս. Երուսաղէմի, և յայլոց իշխանաւորաց մերոց անեղծանելի և անփոփոխելի երդմամբ։ տալով փոխադարձաբար զնոյն ստորագրութիւն Պատրիարքացն Հայոց, ընդ մեծամեծս ազգին իւրեանց։

Միաբանութեան գիրս գրեցաւ վասն խաղաղութեան և համաձայնութեան, և 'ի բաց բառնալոյ զվնասս յիւրաքանչիւր ազգէ, 'ի հաճոյս բարերար կամաց ծայրագոյն դեսպանին եւ բարեպաշտ հրեշտակին Պաղդիոյ 'ի Դուռն Օսմանցւոց, որպէս պատմեաց և ազդ արար մեզ թէ վասն խռովութեանց մերոց, պատահի վնասուց ինքն եւ իւր ազգն Ֆրանկաց։ Ուստի հարկ է պահել զհամաձայնութիւն 'ի մէջ երից ազգաց, և եթէ հակառակ ինչ գրելոցս պատահեսցի, յայնժամ գրեալքս անընդունելի եղիցին։ (1739 յ7 Ապրիլի)։

Սակս խնդրոյ Ս. Յակոբայ գրեալ էր Գրիգոր Պատրիարք թուղթ սիրոյ եւ յարգանաց առ Կարտինալն Ֆլորի 'ի Փարիզ՝ խնդրելով 'ի նմանէ, զի 'ի ձեռն Արքայի ձեռնաս-

վեցի գործոյն, որոյ պատասխանն ընկալաւ անդ 'ի թագաւորական քաղաքի, հանդերձ Գաղղիական թարգմանութեամբ, որ ունէր օրինակ զայս.

à Versaille le 31 Aoùt 1739.

C'EST avec la plus sensible consolation que j'ai reçu, Monsieur, Votre lettre du 1er. de Janvier de la presente année. J'y ai admiré les traits brillants et les tours ingenieux qui rendent la langue Arménienne si recommandable et si majestueuse; mais ce qui me touche encore davantage est de voir que l'écriture Sainte vous est si familiere et que vous en possedez parfaitement l'esprit.

La conformité entière de nos sentiments avec la tradition constantes de l'Eglise Apostolique et Romaine mère et maitresse de toutes les eglises est un argument invincible pour convaincre, les hérétiques des derniers siècles des nouveautés qu'ils ont voulu introdruire dans la doctrine que nous avons reçu des apôtres.

Nous gardons précieusement dans la trés magnifique Bibliotèque de notre Empereur et Monarque très chretien un grand nombre d'illustres monuments tirés de vos Conciles et des écrites de vos anciens Evéques qui font un honneur immortel à l'Eglise d'Arménie, et serviront de témoin dans les siécles futures, de la pureté de votre foi et de la fermeté avec laquelle Dieu vous a fait la grace de la maintenir au milieu des persécutions, que les hérétiques et les Schismatiques n'ont presque jamais cessé de vous Susciter.

C'est le sort de l'Eglise de Jesus-Christ, et ce divin Sauveur nous l'avait annoncé dans les Saints Evangiles. Elle n'a jamais été plus fervente et plus sainte que dans les attaques qu'elle a eu à soutenir dès sa naissance contre les Empereurs païens, et la paix dont elle

à joui de temps en temps, aulieu de lui être avantageuse, n'a produit souvent que les fruits les plus amères et des divisions intestines plus funestes que les plus cruelles persécutions.

C'est dans cet esprit que vous devez remercier Dieu de celles dont il permet que vous soyez affligés et l'usage que vous en faites, deviendra pour vous une source de Bénediction et un gage de la Couronne que sa bonté infinie prépare à ceut qui l'auront fidèlement servi pendant cette vie.

Je partage bien sincèrement, Monsieur, toutes vos souffrances en qualité de votre confrère dans l'Episcopat et je m'estimerais très heureux si dans la place dont l'Empereur mon maître à daigné m'honorer dans ses conseils je pouvais contribuer à votre soulagement et à votre repos.

Le témoignage avantageux que vous rendez à Mr. le Marquis de Villeneuve, dont je connais depuis longtemps le zèle et les tatents, ne me surprend pas, mais il ne laisse pourtant pas de me faire un extreme plaisir. Il n'a pas besoin d'être excité à continuer ses soins et ses bons offices en faveur de votre Eglise, et on ne peut trop louer son exactitude à suivre les ordres de sa Majesté.

Vous pouvez donc vous adresser à ce digne Ministre avec une entière confiance dans toutes les occasions où vous croirez qu'il pourrez vous être utile. Je voudrais pouvoir mériter tous les éloges qu'il vous plaix de me donner et dont je me reconnais très-indigne, mais je puis vous assurer du moins du zèle que j'ai pour notre sainte réligion et de l'envie que j'ai de procurer aux églises de votre Patriarcat tous les biens et tous les avantages qui peuvent dépendre de mon ministère.

Je ne souhaite pas moins ardemment, Monsieur, de vous marquer personnellement l'estime et la considéra-

tion particulière avec laquelle je vous honore.

Signé, le Card. de Fleury.

P. S. Je fais traduire cette lettre en Arménien pour vous prouver que nous connaissons votre langue et le cas que nous en faisons.

Թարգմանութիւն նամակին Կարտինալ Ֆլորեայ՝ գրեալ առ Գրիգոր Պատրիարք Շղթայակիր։

Ի Վերսայլ 31 Օգոստոսի 1739։

Մեծ և զգալի վսեմութեամբ ընկալայ, Տէ՛ր, զնամակն Ձեր՝ գրեալ յառաջնում աւուր Յունվարի 'ի սոյն ամի. ոքանչացայ 'ի վերայ փայլուն և բաղմահանճար բանիցն՝ զոր ընծայէ չքեզ և մեծավայելուչ բարբառն հայկական։ Բայց առաւել քան զայս աղդեաց ինձ 'ի տեսանելս զՁեզ հմուտ և ընտանի Ս. Գրոց՝ և լիովին տեղեակ իմաստից նորին։

Կատարեալ համակերպութիւն զգացմանց ձերոց ընդ ճշմարիտ աւանդութիւնս Առաքելական Եկեղեցւոյն Հռոմայ՝ որ մայր և դահեակ է ամենայն Եկեղեցեաց, է անընկրկուն յանդիմանութիւն 'ի յաղթահարել զհերետիկոսս յետին դարու՝ և զնորութիւնսն՝ զոր կամեցան մուծանել 'ի վարդապետութիւնս՝ զոր ընկալաք յԱռաքելոց անտի։

Ինամով պահպանեմք 'ի փառաւոր գրատան Ամենաբարեպաշտ Թագաւոր Կայսեր մերոյ զրաղմութիւ երեւելի յիշատակարանս առեալ 'ի ժողովոց՝ և զգրեանս առաջին Եպիսկոպոսաց Ձերոց՝ որք անմահ փառք են Եկեղեցւոյն Հայոց, և վկայ ապառնի դարուց 'ի ցուցանել և հաստատել զամբծութիւն հաւատոցն Ձերոց՝ և զհաստատամտութիւն՝ որով շնորհեաց Ձեզ Աստուած պահպանել զայն (հաւատս) 'ի մէջ հալածանաց՝ զոր հերետիկոսքն և հերձուածողք երբէք չդադարեցան գրգռել ընդդէմ Ձեր։

Այս է բանդ Եկեղեցւոյն Յիսուսի Քրիստոսի, և երկնաւոր Փրկիչն քարոզեաց մեզ զայն 'ի Ս. Աւետարանին։

Առաւել փորձ և ընտիր դատ 'ի պատերազմունս՝ զոր 'ի ծննդենէ մեզաց ընդդէմ հեթանոս Կայսերաց 'ի պաշտպանութիւն՝ և խաղաղութիւնն զոր վայելեաց ժամանակ առ ժամանակ՝ փոխանակ օգտակարութեան ստէպ արտադրեաց զդառն պտուղս՝ եւ աղիողորմ ներքին բաժանումն՝ քան զդժնդակ հալածումն։

Այսմիկ հոգւով պարտիք շնորհս մատուցանել Աստուծոյ՝ որ եթող զՁեզ չարչարիլ, և փորձն՝ զոր կրէք՝ լիցի աղրիւր օրհնութեան և առհաւատչեայ պսակին յանսահման բարերարութենէ պատրաստեալ այնոցիկ՝ որք հաւատարմութեամբ ծառայեցին նմա յայսմ կենցաղոյս։

Անկեղծութեամբ հաղորդ եմ Տէր, ամենայն չարչարանացդ երբեւ եղբայրակից յեպիսկոպոսական վիճակի. եւ ունիմ երջանիկ համարել զիս՝ եթէ յաստիճանին՝ յորում Տէր մեր կայան եդ զիս 'ի ժողովս՝ կարող լինիցիմ ձեռընտու լինիլ 'ի դիւրութիւն և 'ի հանգիստ Ձեր։

Զօգտակար վկայութիւնս զոր տայք վասն Պ. Վիլլինով Մարքիզին՝ չեն ինչ զարմանք, զի արդէն 'ի վաղուց անտի գիտեմ զեռանդն և զտաղանդ նորին, սակայն և այնպէս՝ այդ վկայութիւնք եռուն ինձ զմեծամեծ հաճոյս. չունի նա պէտս յորդորանաց անընդհատ կատարել զիւնամս եւ զբարի պաշտօնն իւր 'ի պաշտպանութիւն Եկեղեցւոյն Ձերոյ՝ զի փոյթ մեծ է նմա հետեւիլ հրամանաց նորին վերհսկութեան։

Արդ՝ կարող էք կատարեալ վստահութեամբ դիմել առ մեծարգոյ պաշտօնեայն յամենայն դէպս Ձեր, յորս կարծիցէք թէ կարող է լինել Ձեզ պիտանի։

Կամէի արժանաւոր լինիլ այն ամենայն գովեստից՝ զորս շնորհէք ինձ, և որոց զիս անարժան ճանաչեմ, այլ կարեմ յապահովի կացուցանել զՁեզ՝ թէ նախանձաւոր եմ վասն սուրբ կրօնիս մերոյ, և փոյթ ունիմ հոգալ Պատրիարքական զեկեղեցին Ձեր, և առնել զրովանդակ բարիս և զյաջողութիւնս՝ որ կախեալ կացցեն զպաշտօնէ իմմէ։

Ոչ նուազ եռանդմամբ մաղթեմ և ես Տէր՝ առ 'ի ցուցանել անձնապէս զառանձին յարգանս և զհամակրութիւնս իմ, որով յարգեմ զՁեզ։

Կարտինալ Ֆլորի։

Յ. Դ. Զայս նամակ եւսեւ թարգմանել 'ի բարբառ Հայոց՝ առ 'ի ցուցանել Զեզ թէ ծանօթ եմք լեզուին Ձերոյ, և 'ի կիր արկանեմք զայն 'ի դէպս։

Այլ մինչդեռ 'ի Կոստանդինուպոլիս էր տակաւին Գրիգոր Պատրիարք՝ պատահեցաւ դարձեալ վէճ 'ի մէջ Հայ և Լատին միաբանաց, 'ի տաճարին Ս. Յարութեան վասն Իւղարերից սեղանոյ՝ եւ յեկեղեցին Բեթղեհէմի. և միաբանք գրեալ ազգ արարին Գրիգորի՝ որ ինչ եղեւն, եւ նա ծանոյց Դեսպանին Գաղղիոյ մոսիւիմ բարեկամին իւրոյ, իսկ նա էառ զիր նախ 'ի Գրիգոր Պատրիարքէ՝ զի սիրով վարեսցին իւրքն ընդ Լատին կրօնաւորս, և ապա գրեաց ինքն պատուէր և սպառնալեաց առ Տեսուչ և Փոխանորդն Լատին վանաց՝ չվիճել եւ չկռուիլ ընդ Հայս, այլ վարիլ ըստ բնական սովորութեան, թէ 'ի Ս. Յարութեան եւ թէ 'ի Բեթղեհէմ, եւ չառնել հակառակ ինչ ընդդէմ կանոնաց։ Զայս զիր եւ յԳրիգոր Պատրիարք, և նա գրեաց առ Գաբրիէլ, Թէոդորոս և Յովհաննէս վարդապետս՝ եղեալ 'ի միջի զգիր Դեսպանին և զթարգմանութիւն նորին, պատուիրելով նոցա և ինքն յամենայնի սիրով վարիլ ընդ նոսա՝ և չտալ տեղի ատելութեան, և թէ Դեսպանն և տիկին նորին, ո՞րքան սիրով և խաղաղութեամբ վարեցան անդ ընդ Գրիգորի, և ո՞րչափ աշխատ եղեն 'ի հանել զԽաթի Շէրիֆին՝ եւ այլ բազում գովութիւնս գրեաց զԴեսպանէն, խրատ և յորդորական բանս առ վարդապետս, ապա պատուիրէ նոցա՝ զի ինքեանք ձեռօք իւրեանց տարեալ մատուցցեն զգիր Դեսպանին առ Փոխանորդն Լատինաց, և սիրով հաշտեսցին ընդ նոսա, (1740. 'ի 6 Մայիսի)։

Եւ 'ի սմին ժամանակի՝ յորում խսկապէս լուծաւ խնդիրն, և ատեաւ Կայսերական հրովարտակ Հայոց և Յունաց, դարձեալ ծախեցան 'ի դրունս գումարք դրամաց, եւ Գրիգոր Պատրիարք վերստին անկաւ 'ի ներքոյ պարտուց եւ յաւուրս Աղուհացից՝ տեսեալ զաղքատութիւն նորա՝ շարժեցան 'ի գութ սեղանաւորք և հանայն արհեստաւորք ազգին և եւսուն ողորմութիւն առատ, որ և շրջեցաւ նա յամենայն եկեղեցիս քաղաքին, յորէ անտի մեծի

Պատերին մինչեւ Օգոստոս ամսոն՝ օրհնելով զժողովուրդն եւ գոհանալով զՏեառնէ՝ որ տուիչ է ամենայն բարեաց։ Եւ յետ այնորիկ եմուտ 'ի նաւ ընդ ուխտաւորս (Օգոստոս 25) այլ ոչ այնքան ուրախութեամբ՝ որպէս ինքն զանկատի. «Բազում արդեամբք մտաք 'ի Բիւզանդիոն, եւ յորով պարտիւք ելաք անտի»։ Եւ ապա նաւեալ 'ի Թագաւորեալ քաղաքէ հասին 'ի Թէքիրտաղ. Յովհաննէս վարդապետ Առաջնորդ քաղաքին բազմութեամբ ժողովրդոց բազում յարգանօք ընկալաւ զնա, եւ եղեն նմա ձեռնտու տրօք և ողորմութեամբ։ Եւ զկնի Ս. Պատարագին և օրհնելոյ զժողովուրդն՝ մեկնեցաւ անտի. և մերձ 'ի Պօղազ Հիսար խրեցաւ նաւն յաւազ, և հազիւ զերծուցեալ զնա, հասին 'ի կղզին Հռոդոս։ Ի չչնչելոյ նաւորդաց ըմբռնեցան յերկիւղ մեծ՝ զի նաւն սկսեալ էր առնուլ ջուր յատակէն՝ ապա զօրացուցեալ զբազուկս երիտասարդաց եւսուն աշխատիլ զտիւ և զգիշեր զաւուրս 4, թափելով զջուրն։ Եւ յերեկոյի շաբաթու (Սեպտեմբեր 7) անշնաս հասին 'ի Յոպպէ, ուր սպասէին Աթոռական Գաբրիէլ վարդապետ և թարգման Պօղոս, և այլք 'ի միաբանաց. եկեալ էր անդ և քաղաքապետն Խուլ Մուստաֆա՝ այլովքն հանդերձ. (Սեպտեմբեր 15) 'ի տօնի Վերացման Ս. Խաչի եմուտ Գրիգոր Պատրիարք յԵրուսաղէմ բազմութեամբ ուխտաւորաց եւ մեծաւ փառաւ։ Որոյ ժամանակ պանդխտութեան եղեւ 4 տարի, 4 ամիս և 9 օր։ Յետ այնորիկ գրէ զհաչիւ ծախուցն և զարդիւնս ժողովրդոց։ Եւ այսպէս կնքէ զբան իւր, զոր ինչ պարտք արարի 'ի Կոստանդինուպոլիս՝ զբովանդակն հատուցի հանդերձ շահովն եւ չմնաց պարտք 'ի վերայ Աթոռոյն, զոր 'ի պատճառս Խաթի Շէրիֆին արարեալ էին։

Ապա յաւելու ասել. «Դատ արասցէ Առտուած ընդ մեզ և ընդ հակառակորդս մեր, զի յետին յաղքատութիւն և 'ի չքաւորութիւն հասուցին զմեզ»։ Վասն որոյ ես Գրիգոր մեղաւորս վարդապետս սպասաւոր Ս. Աթոռոյս իբր անդարձ եւ կտակ գրեմ զկնի իմ եկելոցդ, մի և մի իւիք հաւատայք ազգին Յունաց և Լատինաց. զի այլապէս զիք միայն վասն արծաթոյ նեղեն զմեզ, այլ ոչքա վասն Ս. Հաւատոյս. բաժին Ս. Տեղեաց և Ս. Աթոռոյս մերոյ

են ներհակք եւ անհաշտ թշնամիք. նմին իրի պարտ է զգոյշ և պատրաստ լինել 'ի նոցանէ, զի ես փորձիւ իմացայ և ձեզ գրեցի, զի ծանիջիք, յորոց չարեաց փրկեսցէ Տէր Աստուած զՍ. Աթոռս և զազգն մեր. ամէն։

Այսպէս կնքէ զայս ուղեւորութիւն իւր երանելի Հայրապետն, որ ինքն գրեալ է ամենայն հանգամանօք, որպէս է տեսանել 'ի յիշատակարանս ձեռագիր Աւետարանի, որ և հրատարակեցաւ 'ի Սիոն ամսաթերթի. (1866. Եբ. 122. 141. 184)։

Զպատմութիւն հակառակութեանցն Ցունաց յաղագս վանաց Ս. Յակոբայ, և այլոց իրաց՝ քաղեալ եդաք 'ի կարգի պատմութեանս հաւատարիմ յաղբերաց։ Սակայն զայս պատմութիւն այլով ինն եղանակաւ առանդէ Տէր Մելքոն քահանայ եկեղեցւոյն Պալատու 'ի Կոստանդինուպոլիս, առեալ յաւանդութենէ ծերոց ժամանակիս, որպէս զբերեալ տեսանի 'ի ձեռագիրս ինչ, և յածի 'ի լեզուս ռամկաց, զորմէ զանց արարաք դնել 'ի կարգի Պատմութեանս։

ԳԼՈՒԽ Է.

Զարութիւն Ցունաց։ Ֆելլահք Պէյթ Ճալա գիւղի։ Այլազգի դռնապանք։ Սկզբն Հայոց 'ի Ս. Աստուածածին։ Մահ Յովհաննու Պատրիարքի, զգեստ նորին։ Վանք Ս. Փրկչի։ Կռիւ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Նամակ Գրիգորի Պատրիարքի առ դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպոլիս։ Խնդիր Լատինաց վասն գմբեթի Գերեզմանին։

Ասացուք սակաւուք զոր ինչ միանգամ պատահեցաւ յԵրուսաղէմ զկնի մեկնելոյ Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս։ Քանզի 'ի նմին ժամանակի 'ի սաստկանալ հակառակութեան Ցունաց 'ի Կայսերանիստ քաղաքի անդ, գրգռեցան և վանականք նոցին ատելութեամբ յԵրուսաղէմ ընդդէմ Հայոց. այլ ջանիւք Աթոռական Գաբրիէլ վարդապետի վերստին յանձնեցան վանքն Հայոց 'ի ձեռս Հայոց օրինաւք դատարանի։

Եւ յետ այնորիկ ըստ մտաց Կայսերական հրովարտակաց եւ վաւերական գրոց դատարանի, որք ընթերցան յայնժամ յատենի բազմութեան այլազգեաց, տուաւ հանրագրութիւն սակս խարէյութեան Ցունաց՝ և 'ի հաստատութիւն սեփականութեանց Հայոց։ Դառնացեալ յոյժ ընդ այս կեսարիոսի Փոխանորդին, ձէնաթի՝ Թարգմանին՝ և Թէոդոսի Քարտուղարին, կոչեցին զԼիրաբացի Ֆելլահս Պէյթճալա գիւղին, որք էին կրօնակից ինքեանց, և գրգռեալ յարուցին զնոսա 'ի վերայ ազգին Հայոց, և պատուէր ետուն նոցա երթալ 'ի գիշերի խորտակել զդուռն Սուրբ Փրկչի վանաց՝ տալ յաւարի զինչս նորա՝ եւ կոտորել 'ի բերան սրոյ զմիաբանսն որ 'ի նմա։

Առեալ զայս խրատ գիւղականաց՝ եկին շարունակ զերկուս և զերիս գիշերս 'ի դուռն վանաց, այլ ոչ կարացին որ և իցէ հնարիւք խորտակել և կամ խախտել զերկաթի դուռն և մտանել 'ի ներքս. դառնացեալ նոցա ընդ այս կատաղութեամբ, սկսան արձակել զհրացանս, եւ ձգել զմեծամեծ քարինս 'ի ներքս։ Լուեալ բնակչաց քաղաքին զաղմուկս նոցին և զդղրդումն խաժամուժ ամբոխին՝ զարհուրեցան յոյժ, և շփոթեալ աղաղակէին թէ պաշարեցաւ քաղաքն 'ի թշնամեաց։ Լուեալ քաղաքապետին և Եէնիչէրի աղային, բացին 'ի գիշերի զդուռն քաղաքին, և եկին բազմութեամբ զօրաց արտաքս, և յարձակեցան 'ի վերայ ապստամբաց, այլ ոչ կարացին ըմբռնել զոք 'ի նոցանէ. զի դարձուցին նոքա զզէնս իւրեանց 'ի զօրն և 'ի պարիսպ քաղաքին, և այսպէս խոյս տուեալ անհրեութեացն անտի։ Եդան այնուհետեւ պահապան զօրք 'ի պարիսպն 'ի զգուշանալ քաղաքին, եւ զկնի աւուրց ըմբռնեցան յապստամբաց անտի ոգիք 4 և եդան կապանօք 'ի բանտի. և 'ի ճաղկել զնոսա 'ի հրապարակի, խոստովան եղեն թէ թելադրութեամբ գլխաւորացն Ցունաց արարեալ իցեն զայն։ Եւ յետ արձակելոյ 'ի կապանաց, չոքան առ մեծամեծս այլազգեաց եւ գանկատանօք չարաձայն եղեն զազգէն իւրեանց, թէ գրգռեալ զմեզ արկին 'ի վտանգ մահու, այժմ յերեսս իսկ հայիլ ոչ կամին։ Եւ յետ կատարելոյ զքննութիւնս զայս, միաբանք Հայոց խնդրեցին 'ի դատաւորէն զայս ամենայն անցս ծանուցանել 'ի

Գուռն, եւ նա տրաք ըստ բանից նոցա (1737 · 'ի 25 Փետրվարի)։

Այլազգի դռնապանք Ս · Յարութեան ոչ չատացեալ սահմանեալ տրօք իւրեանց, պահանջէին 'ի Լատինաց յիւրաքանչիւր ամիս 30 դահեկան, և զայլ դուռարս տարեկան զգեստուց եւ ջուխայի · և 'ի բացատել Լատինաց, ոչ բանային զդուռն տաճարին, որով լինէր նոցա վիշտ եւ նեղութիւն, և արհամարհումն ուխտաւորաց նոցին · և 'ի խստանալ այլազգեաց, ազգ արարին դեսպանին Գազզիոյ 'ի Կոստանդինուպօլիս · և նա եհան հրովարտակ ըստ դաշնագրութեան իւրեանց, չնեղել զԼատին կղերս, և չպահանջել 'ի նոցանէ աւելի ինչ քան զսահմանեալն, և 'ի ժամանակին անարտունջ բանալ զդուռն, ՌՆԷԹ։ Ընթերցաւ նաեւ հրովարտակն այն, յորում խստիւ պատուիրէր Արքայ կուսակալին Դամասկոսի և դատաւորին Երուսաղէմի, ասատել զՀայս և զՅոյնս զդաղարիլ 'ի խռովութենէ եւ 'ի կռուոյ, եւ անհնազանդից սահմանեալ պատիժն է բանտ և բերդարգել · և չատալ թուղթս դատաւորաց՝ մեծամեծացն այլազգեաց եւ այլոց, եւ նոյն իսկ կուսակալին ոչ Յունաց և ոչ Հայոց, ՌՆԷԹ (1737)։

Իսկ Գաբրիել վարդապետ Աթոռակալ՝ կամեցեալ զերծուցանել զվանս Ս · Փրկչի 'ի վերահաս վտանգէ, եւ չարել զմանր քարինս առանց չաղափի չուրջանակի 'ի վերայ պարսպին 'ի զգուշութիւն գողոց և աւազակաց · զի սովորութիւն լեալ էր նոցա գալ 'ի գիշերի և ձգել պարանս 'ի պարիսպ անդր և ելանել 'ի վեր։ Եւ երաց պատուհան 'ի վերուստ 'ի վերայ արտաքին դրան, 'ի դիտել անտի դռնապանին զեկեալսն եւ զբաղիսոզ դրան · զի բազում անգամ այլազգիք խաբէութեամբ տային բանալ զդուռն, և մտեալ 'ի ներքս գործէին զչարիս և զվնասս։ Մեծացոյց և զպատուհանն 'ի վերայ դրան եկեղեցւոյ · արար և նորոգութիւնս ինչ 'ի վանս ՌԼԹ (1738)։

Մինչդեռ զբաղեալ էր Գաբրիել վարդապետ 'ի նորոգել զաւերեալ տեղիս, յարեան Լատինք և կամէին յափշտակել զսեղանն Հայոց կից յարեւմտեան յորմն դերեզմանի Ս · Աստուածածնի, 'ի ձորն Գեթսէմանի, և հակառակեալ պնդէին իսկ թէ սեփհականութիւն սեղանին այ-

նորիկ է Լատինաց 'ի վաղ ժամանակէ։ Իբրեւ ոչ կարացին Հայք ճողոպրիլ 'ի բանութենէ նոցա, դիմեցին առ դատաւորն, եւ յայտ արարին զիրաւունս իւրեանց և զանիրաւ պահանջս Լատինաց։ Իսկ դատաւորն կոչեաց զերեւելի այլազգիս քաղաքին և զդռնապանս եկեղեցւոյն այնորիկ, և 'ի ժողովի անդ վկայութեամբ նոցին յայտնի եղեւ թէ սեղանն այն սեփհական է Հայոց և 'ի վերայ նորա կատարեն զպաշտամունս իւրեանց · հակառակութիւն Լատինաց վասն այնր 'ի զուր է և ընդունայն, եւ գիտեմք իսկ զի մինչեւ ցայսօր ժամանակի լինել 'ի ձեռս Հայոց։ Յետ այնորիկ խնդրեաց դատաւորն 'ի Լատինաց հրովարտակ Արքայի եւ կամ գիր ինչ 'ի դատարանէ վասն այնր սեղանոյ, Լատինք յայտ արարին յատենի անդ չունել զայնպիսի գիրս, ապա դատաւորն եւ աւագանին հաստատեցին զսեփհականութիւնս Հայոց վկայութեամբ այլազգեաց, և հրաման ետուն ունել զայն եւ կատարել զպաշտամունս իւրեանց ըստ վաղեմի սովորութեան, և արգելին զհակառակութիւնս Լատինաց, զի մի' եւս բռնասցի 'ի վերայ Հայոց ատելութեամբ, ՌՆԵ։ (1738)։

Վախճանեցաւ Յովհաննէս Պատրիարք Կոստանդինուպօլսի Կոլոտ վերաճայնեալ յամի Տեառն 1741, Փետրվար 13 · վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան ամս 26։ Եւ արժանաւոր յուշարկաւորութեամբ թաղեցաւ յեկեղեցի Ս · Լուսաւորչի 'ի Գալաթիա։ Եւ յաջորդեաց յԱթոռ Պատրիարքութեան աշակերտ նորին Յակոբ վարդապետ Նալեան Զիմարացի՝ 'ի 15 Փետրվարի։ Լուեալ Գրիգորի Պատրիարքի զմահ սիրելւոյն իւրոյ՝ տրամեցաւ յոյժ, և ողբայր զմահ նորին տխրագին · յերկիր կործանեցայ ասէր և քաղեցաւ ոգի իմ, այլ սուղ ինչ մխիթարեալ 'ի վերայ Պատրիարքութեան Յակոբայ վարդապետի, գրեաց առ նա գիր շնորհաւորութեան և քաջալերութեան, եւ յորդոր առ գլխաւորս ազգին զօրավիգ և օգնական լինիլ յամենայն գործս նորա։ Գրեաց և վասն հրովարտակաց՝ զորս 'ի դարձին իւրում յերուսաղէմ, խորհրդով ազգին թողեալ էր առ Յովհաննու Պատրիարքին, և ինքն մեայն զօրինակս նոցին բերեալ ընդ իւր · եւ այժմ անկեալ 'ի կասկածանս, մի' գուցէ մնաս ինչ պատահեսցի, թախան-

ձանօք խնդրէր զայն, և ընդ դրոյն առաքեաց զմահտեսի Յակոբ հաւատարիմն իւր բերել զնոսա յԵրուսաղէմ, եւ նոքա յանձն արարեալ առաքեցին։

Յովհաննէս Պատրիարք նախ քան զվախճանիլ իւր պատուիրեալ էր աշակերտին իւրոյ առաքել յԵրուսաղէմ զեպիսկոպոսական զգեստս պատարագին։ Լուեալ զայս Գրիգորի Պատրիարքի՝ շնորհեաց զայն Յակոբ վարդապետի, իբր արժանաւոր ժառանգ պատուոյ հոգեւոր հօր իւրոյ, այլ նորա ոչ ընկալեալ զայն՝ փութացաւ կատարել զկտակ հանգուցելոյն, առաքելով ընդ Սեղբոս Ամիրայի, որ եկն յուխտ յԵրուսաղէմ որդւովք և ընտանեօք, և յանձն արար 'ի ձեռս Գրիգորի Պատրիարքի (1741։ 'ի 18 Յուլիսի)։ Որք են այսոքիկ՝ 1 թագ եպիսկոպոսական ասղնեղործ մարգարտով և պատուական ակամբք։ 2 եմիտրոն գործ ասղանի։ 3 կոնքեռ։ 8 փէչ տիպայ շուրջառ մին անկար։ 12 դեղեցիկ շապիկ։ 1 կորիւրայ։ 1 արծաթի սկիհ։ 1 մանատուփ։ 3 արծաթի հաղորդի տաս։ 1 մինչի արծաթ գօտի։ 3 գաւազան։ 2 սկհի ծածկոց Գրէնք փէսէնդ։ 1 շղարշ։ 1 զոյգ ասղնագործ հողաթափ։ 1 փորուրար։ 1 զոյգ բազպան։ 1 Աւետարան մագաղաթ ոսկեռուփ գոհարակնեայ։ 1 Աւետարան փոքր մագաղաթ ոսկեռուփ։ 2 զոյգ արծաթ բուրանոց՝ և վարդի ջրաման։ 3 արծաթ թաս։ 4 թէլաթին մաթարայ ոսկեթել։ 1 ջուխայ գորգ։ 1 մինչի արծաթ Խաչելութեան պատկեր երեք փեղկեան։ 1 ապանոս գաւազան՝ բոլոր գլուխն ոսկով և պատուական ակամբք։

Ի սոյն աւուրս Արարացի աւազակք հասեալ 'ի գիշերի պատեցին զվանս Ս։ Փրկչի, և կործանեցին զորմն հիւսիսային յարեւելից յարեւմուտս։ Սիմոնակալ Գաբրիէլ վարդապետն և Պօղոս Թարգմանն աղէ արարին դատաւորին, և նա գրեաց առ ճարտարապետ քաղաքին, և ապա եկին բազմութեամբ այլազգեաց 'ի քննութիւն, և չափեալ ըստ կործանեալ տեղին՝ դրին 8 կանգուն յերկայն՝ և բարձրութիւն կանգուն 6։ և զորմն արեւելեան խախտեալ կանգուն 5։ Ապա հրամանաւ դատաւորին և քաղաքապետին չինեցին Հայք զկործանեալ տեղիսն, և խցին զծակոտիս պարսպին՝ զի աւազակք զետեղէին 'ի նոսա զմատուռն ոտից իւրեանց և կռուեալ ելանէին 'ի վեր։ չինեցին նաեւ

զատիճանս քարամբք առանց շաղախի, ՌՈՀ (1741)։

Ի տաճարին Ս։ Յարութեան մինչդեռ աւել ածէր Աբրահամ վարդապետ Ալտուլլահեան 'ի բաժնին Հայոց, 'ի ներքոյ մեծի կամարին մերձ 'ի Պատանատեղն, հասին 'ի վերայ նորա երեք անձինք 'ի կրօնաւորացն Լատինաց, և սկսան հարկանել զնա բրօք չարաչար, և մին 'ի հարուածոց անտի պատահեալ 'ի գլուխ նորին՝ ճեղքեցաւ, և սկսաւ հոսել արիւն հորդ՝ և ինքն անկաւ անդ իբր ըստմեռեալ։ Լատին կրօնաւորք ոչ չատացան այնու, այլ 'ի կատաղութենէ իւրեանց, զոր ինչ միանգամ գտին անդ 'ի սպասուց և 'ի կարասեաց՝ հարեալ զգետնի խորտակեցին՝ ընդ որս և զգրքակալն մեծ եւ զպղնձի շրջանակն Ուժաթամման տեղւոյն Ս։ Աստուածածնի։ Իբրեւ ազդեցեալ Գրիգորի Պատրիարքի որ ինչ միանգամ գործեցին Լատինք 'ի տաճարի անդ՝ տրտմեցաւ յոյժ, այլ զի մի՛ առաւել դրդռեսցին Լատինք 'ի յանդգնութիւն, առաքեաց զԳաբրիէլ վարդապետ և զԹարգմանն Պօղոս առ դատաւորն, ընդ որս էր և Թարգմանն Յունաց։ Յանդիման լեալ սոցա յատենի սկսան ամբաստան լինել զկրօնաւորացն Լատինաց և ասեն։ տակաւին 'ի սմին ամի ընթերցաւ Կայսերական հրովարտակն 'ի լուր ամենեցուն, չհակառակիլ Լատինաց ընդ կրօնաւորս Հայոց, չնեղել և չբռնանալ 'ի վերայ իրաւանց նոցա։ Եւ զի՝ սովորութիւն է քրիստոնէից մաքրել և աւել ածել զիւրաքանչիւր սեփհական տեղիս 'ի սահմանեալ աւուրս 'ի տաճարի անդ, և 'ի սմին աւուր 'ի մաքրել զտեղիս մեր, գործեցին Լատինք զայսպիսի ոճիրս։ և արդ խնդրեմք քննել զխնդիրն և դատ առնել ընդ մեզ եւ ընդ Լատինս։ Իսկ դատաւորն առաքեաց զոմանս յերեւելի այլազգեաց 'ի Ս։ Յարութիւն ստուգել զեղեալսն, և նոքա եկեալ տեսին զտեղին։ զԱբրահամ վարդապետ վիրաւոր, զպղնձի շրջանակն հանեալ 'ի տեղւոջէն և խորտակեալ, և զայլ ինչսն։ և դարձեալ անտի պատմեցին դատաւորին։ Եւ կոչեաց առաջի իւր զկրօնաւորս Լատինաց, եւ եհարց ցնոսա։ թէ ընդէ՞ր արարիք զայդ և հեղիք զարիւն առն անմեղի։ և նոքա թագուցին զիրան եւ ուրացան առաջի դատաւորին, թէ ոչ երբէք ամբարձեալ է նոցա ձեռս 'ի վերայ ուրուք։ այլ միայն կամե-

ցաք ասեն արգելուլ զվարդապետն Հայոց 'ի տեղւոջէ յայնմանէ։ Սակայն փոխանորդք Հայոց և Ցունաց պընդէին և յայանի կացուցանէին զբռնութիւնս երից կրօնաւորաց, եւ պահանջէին զիրաւունս, այլ նոքա դարձեալ յուրասա լինէին։ Եւ այսպէս յերկարիլ դատաստանին և վիճմանց, խնդրեաց դատաւորն վկայս 'ի փոխանորդէն Հայոց, և նորա ածեալ կացոյց առաջի նոցա զերկուս ոմանս յերեւելի այլազգեաց քաղաքին, որք եւ ասէին, լուաք զձայն աղաղակի եւ կռուոյ յեկեղեցին Ս. Յարութեան 'ի Խանքէ կոչեցեալ մենաստանէ մերմէ, և կարկառեալ 'ի պատուհանաց, որք հային 'ի հրապարակ Գերեզմանին, տեսաք զերիս կրօնաւորս Լատինաց, որք մահակ 'ի ձեռին հարկանէին զվարդապետն Հայոց. զնոյն ասացին և միաբանք Հայոց և Ցունաց, որք էին ընդ Սրբահամու 'ի տաճարի անդ, եւ զոր ինչ գործեցին Լատին կրօնաւորք։ Ցետ հաստատելոյ դատաւորին 'ի գիր զբընութիւնն եւ զվկայութիւնս նոցա, յաւել փոխանորդն Հայոց, որովհետեւ յայսպիսի դժնդակ իրս գտանին Լատինք՝ ապաւինեալ 'ի Թագաւորս Եւրոպիոյ, 'ի ճոխութիւնս և 'ի բազմութիւնս իւրեանց, արդելուն և անարգեն զուխտաւորս մեր, եւ յաճախակեալ 'ի ձեռաց նոցա զմոմեղէնս չիջուցանեն և ընկենուն 'ի բաց. յայսպիսի զըզուանաց և յատելութենէ նուազին ուխտաւորք մեր, եւ մեք հանդիպիմք բազմադիմի ինասուց և զրկանաց. և եթէ ոչ լինիցի խնամք և պաշտպանութիւն Օսմանեան տէրութեան 'ի վերայ հպատակաց իւրոց, դժուարին լինի բնակութիւն մեր յԵրուսաղէմ եւ 'ի Ս. Յարութիւն. զի անձինք մեր իսկ կան 'ի վտանգի. զի 'ի նուազիլ ուխտաւորաց մերոց ինաս հասանէ դանձուց Արքայի։ Եւ դատաւորն զայս ամենայն հաստատեալ 'ի գրի՝ ետ ցփոխանորդն Հայոց, եւ մեկնեցան անտի 'ի տեղիս իւրեանց, ՌՈՐ (1742)։

Իսկ Գրիգոր Պատրիարք 'ի խռովութեանս յայսմիկ՝ կըրեաց բազում վիշտս և նեղութիւնս, և հանդիպեցաւ մեծամեծ ծախուց և ինասուց. ապա կամեցեալ օգնութիւն գտանել նոյն իսկ 'ի մեծամեծացն Եւրոպացւոց զրեաց զկ թուղթս, մին առ թագաւորն Գաղղիոյ, մին առ երկրորդ նորին, երրորդն 'ի Հռոմ առ ժողովն Կարտինալաց, և զմիւսն առ դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպոլիս, զորոց զպատճեն միոյն և եթ ունիմք 'ի ձեռին զոր և կարգեսցուք ասա 'ի ստորեւ։ Պատճէն թղթոյն Գրիգորի առ դեսպանն Գաղղիոյ։

Ամենաբարեպաշտի և Քրիստոսասիրի ծայրագոյն դեսպանի Ֆրանցայու ուղղափառ Արքայի, և պատկի պարծանաց ամենայն թագաւորաց գերազնիւ և քաջաշաւիղ հըրեշտակի Քաստելլայի. 'ի Տէր Գրիգոր վարդապետէ եւ Արք եպիսկոպոսէ և Պատրիարքէ սրբոյ քաղաքիս Երուսաղէմի, յոյժ սիրով ողջոյն եւ առաքելական օրհնութիւն յայտարարութեամբ։

Քանզի արդարեւ մեծ ստացաւ զպատիւ ճոխութեան աստուածասէր նախնին քո Վիլլանովայն, մինչ 'ի ժամանակի խռովութեան միջնորմ եղեւ խաղաղութեան 'ի մէջ մեր և Ցունաց, եւ 'ի մշտնջենաւորս ստացաւ զմեզ աղօթողս վասն ինքեան, և արդարեւ իւրում արարելոյ խաղաղութեան զամենաբարեպաշտութիւնդ եթող յանձանցիչ և խնամածու եւ աւանդապահ, որ ոչ պակաս քան զնոյն ընդունելոց է աստուածասիրութիւնդ զդովութիւն և զաղօթս 'ի մէնք՝ եթէ զխաղաղութիւնն զայն հաստատ պահիցէ. քանզի 'ի զրկիլ մեր յամենայնի յայլոց ազգաց, զիրաւունս գտանէաք 'ի Հռոմայեցւոցդ աստուածահաստատ թագաւորութենէ, որ այս եթէ յայլոց թագուն իցէ՝ 'ի խորհրդական ատենադպրէ ձերմէ 'ի Քերսոնարէ և 'ի Նրբամիտ միւսիւ Նարիէն չէ ծածուկ։

Թէ որպէս 'ի ժամանակս լուսահոգի Պատրիարք եղբօր մերոյ՝ աղաչանօք մեր և նորա 'ի գութ շարժեցաւ գթած Կայսրն Ֆրանցայու՝ աղաչանօք գերապայծառ Իշխանաց Իշխան Տեառն մերում Կարտինալ Ֆլորիայ՝ իցէ թէ եւ Աստուածասիրութիւնդ քաջ տեղեակ իցէ, մինչ էրն 'ի Վիրալիա 'ի թագաւորական քաղաքի։

Արդ՝ որ մեք երբեմն զրկեալ յայլոց՝ առ գթած և իրաւարար թագաւորութիւն ձեր բողոքէաք, 'ի Նարդեանս 'ի Ս. Քաղաքս 'ի սադրելոյ արքանեկացն բանսարկուին, ոչ գիտեմք թէ վասն ոյր պատճառի առ 'ի զրկիլ գիտեալ լինիմք յոմանց 'ի ձերոցդ կարգաւորաց՝ զոր ոչ այլ իւիք՝

եթէ ոչ աստուածայական թելադրութեամբ համարիմք զե-
զեալն՝ որ մախալով զառն մերս աղօթելոյն վասն ձեր՝
խառնեաց զորսն չարութեան 'ի մէջ բարի սերման խա-
զաղութեան մերում ընդ ձերայնոց՝ եւ կամեցաւ իրաւա-
զուրկ առնել զմեզ, և զաղօթելն մեր վասն ձեր խափա-
նել, և զսիրոյն օրէն ոչնչացուցանել՝ և բծախնդրութեամբ
հիմնայատակ առնել, զոր չունիմք մեզադրել ումեք՝ եթէ
ոչ մեզաց մերոց։ Բայց ո՞վ աստուածասէր և բարեպաշտ
ծայրագոյն Դեսպան, իրաւունս 'ի քումմէ երջանկութենէ
խնդրեմք, մինչ չիցէ՞ արժան քրիստոսապատակեալ թա-
գաւորութեան Ֆրանցայու ունիլ աղօթող ոչ միայն զիւ-
րականն ազգ, այլ և գրեթէ զամենայն ազգս օտարազ-
նեայս, զոր ահա մեք թէպէտ ազգաւ օտար, բայց հաւա-
տով կարի քաջ ընտանիք, և զիա՞րդ աղօթից մերոց առ
ուղղափառ Կայսրն Ֆրանցայու խափան լինիցի։ ո՞չ ապա-
քէն և Աստուածպետութիւնն ընդունի և 'ի բերանոյ մե-
զաւորաց զաղերս աղօթից։ Եւ զի՞նչ պակասի 'ի փառաց
Աստուածասէր թագաւորութեան նորա՝ մինչ այս խղճալի
ազգս հովանաւորիցի 'ի ներքոյ չքոյ գթութեան նորա։
յիրաւի ոչ պակասի՝ քան թէ յաւելանի։ Ուրեմն եթէ
ամենայն Դեսպանաց յատկութիւն իցէ՝ զաւելի ինչ քան
զնախնին իւր հնարել 'ի պարծանս ինքեան և յօգնութիւն
իւրական ազին, այս է ուրեմն մեծագոյնն մեծագունից։
եթէ զհիմնեալ խաղաղութիւնն մեր՝ եւ զսէրն հաստատ
պահել ջանայցէ Աստուածասիրութիւնդ ընդ եղբարց մե-
րոց, որ աստ 'ի Ս. Քաղաքս Երուսաղէմ։ Զի որպէս սրբա-
զան Առաքեալն Պօղոս անկեաց և Ապողոս ջուր ետ եւ
Աստուած աճեցոյց, հաւատամք զի ոմն Աստուածասէր,
այսինքն Վիլլանովայն անկեաց զսէր 'ի մէջ երկուց ազ-
գաց, և միւս գեր Աստուածասէրդ կամի ջրով ոռոգել
և ոչ երկբայեմք եթէ Աստուած զայնպիսի տունկն և զո-
ռոգեալն աճեցուսցէ։ Ուստի խնդրի 'ի քումմէ ամենա-
բարեպաշտութենէ ստանալ զպարծանս պարծանաց զերա-
նութիւնն խաղաղարարաց, եւ ըստ շնորհի զորդւոյ Ա-
ստուծոյ մականունութիւնն ժառանգել։ Եւ այն որո՞վ լինի
ո՛վ գերապայծառ Իշխան, եթէ ոչ ունկն ոչ դնելով ա-
ւելորդաբանից զրասացութեանց, զոր ահա զատոյգն զբ-

ռեմք քումմէ բարեպաշտութեան։ Քանզի ասա 'ի Ս. Քա-
ղաքս Երուսաղէմ 'ի մէջ Ս. Յարութեան Աշխարհամատ-
ռան տաճարին՝ իւրաքանչիւր ազգ ունի զյատկօրէնու-
թիւն ինչ առ ոմանս տեղիս՝ յորում զաղօթս և զսրբազ-
նասուրբ պատարագն մատուցանէ։ և զոմանս տեղիս՝ զորս
վասն ջերմեռանդութեան 'ի չարաթուոջ միանգամ աւելէ՝
եւ ոչ ոք ումեք ներհակի։ Իսկ այս մի քանի ժամանակ
եղեւ որ վասն անտեղեկութեան (գալոց փոխանորդաց
և մեծաւորաց) երկրիս սովորութեան՝ դրդմամբ ոմանց
փաթերայից զսիրոյն օրէն արմատաքի խլել ջանացողաց լի-
նի՝ և եղեւ սակաւ ինչ դժուութիւն՝ կամելով զրկել զմեզ
յիրաւանց մերոց։ զպատարագելն եւ զաւելելն կամելով
խափանել, որ եթէ մեք 'ի մեր սեփհական տեղիսն զպա-
տարագելն նոցա ոչ արգելումք, այլ հիւրասիրութեամբ
պատուեմք յաւուրս պատարագելոյ նոցին, և զի՞նչ վնաս
պատուոյ նոցին ծնանէր 'ի տեղիս մեր պատարագելն մեր
'ի Ս. Յարութեան տաճարին, և զաւելելն 'ի սահմանեալ
տեղիսն։ Ո՛վ գերապատիւ եւ աղնուափառ իշխան, եր-
բեմն ըստ սովորութեան մերում վասն կապերտից ճգման
խոժոռելին, և զայն բարձին։ և այժմ յաւուրս քոյոյ աս-
տուածասիրութեան 'ի խորանի մերում զպատարագելն
մեր խափանել ջանան և զաւելելն, և այն ոչ առանց գա-
նից՝ և արիւնաթափաւ առնելոյ զսին 'ի մերոց միաբանից,
որոյ ներկայս Աստուած՝ թէպէտ մեծ իցէ յանցանքն։ զի
եթէ առաջի աստուածասէր առնի ձերոյ առանց հրա-
մանի սպասաւորք ձեր զոմանս խոչտանգիցեն՝ յանդուգն
թիւն, քանի՞ն եւս յորժամ առաջի Քրիստոսի Գերեզ-
մանին մինչ ցարեան հեղուսն գանիցեն։ Բայց սէրն ծած-
կէ զրաղմութիւն մեղայ։ ըստ օրինի սիրոյն Քրիստոսի՝
թողեալ լիցին յանցանքն նոցին։ Սակայն զի փոքր պատ-
ճառաւ անբաւ չարիք տարածանին յաշխարհի, վասն ո-
րոյ ջանալի է արմատաքի խլել զորս հանդերձեալքն են
բողբոջիլ, եւ զկայծն չիջուցանել մինչդեռ ոչ իցէ լեալ
հրդեհ։

Աստուածասէր և խաղաղասէր Կայսերութիւնն ուղղա-
փառ քրիստոսապատակեալ թագաւորին Ֆրանցայու այնքան
հիմնեալ է 'ի խոր խաղաղութեան, մինչ զի չարժուն զե-

զուն և թաթաղուն գոլով, և առ այլս թափանցել ջանաց զխաղաղասիրութեանն օրէն, և մինչ 'ի մեր խղճալի ազգս հասեալ զհրաժարականն ողջոյն տալոց իցէ խաղաղութեան. քա՛ւ լիցի, Տէր իմ, թէ 'ի ժամանակի գեր աստուածասիրութեան ձերոյ հիմնեցեալն տապալիցի. քանզի յուսամք և յաւուրս քոյոյ բարեպաշտութեան հաստիլ առաւելապէս, որպէս եւ յաւուրս նախնոյն քո քրիստոսասիրի ամենիմաստի եւ բարեպաշտի Վիլլանովային. ուրեմն աղաչեմք 'ի ձեռն քոյդ բարեսիրութեանդ, զարուսն տախտակաց նաւակի խաղաղութեան մերոյ. իբր բեւեռաւոր սիրոյդ պնդել և անխախտ յօրինել, և զկնի բեւեռելոցդ սիրով, և նաւթիւ և ձիթով զՋրանցական տեղս գծամերձից փակել քոյովդ աստուածսիրութեամբ. զի թերեւս նաւակ սիրոյն եւ խաղաղութեան 'ի նաւահանգիստն արքայութեան յաջողակ հողմով ներշնչութեան Հոգւոյն Սրբոյ փութապէս ժամանիցէ, որում զաստուածսիրութիւնդ զկնի երկար կենաց աստէն և բարերջանկութեան արժանի արասցէ Յիսուս Քրիստոս անդր հաւաքման 'ի տեսութեան իւրում, ամէն։

Ի վախճան գրոյս խնդրի 'ի գեր աստուածասիրութենէդ, ո՛վ ամենապայծառ իշխան, գրել ասա եղելոց եղբարց մերոց սիրով կեալ ընդ մերոյս խաղութեան և յանձնել եւս զմեզ 'ի սէր նոցա, առ 'ի հաստատուն պահել զպատուշ նախնոյդ եւ քոյոյ բարեպաշտութեան. ըստ որում և մեք միշտ 'ի մտի ունիմք և 'ի բերանոջ զձերդ աստուածսիրութիւն 'ի յաղօթս. վերստին ողջ լեր 'ի Տէր Յիսուս անձախորդ կենօք յամերամ ժամանակս։

Յամի Տեառն 1742. Հոկտեմբեր 26. 'ի Ս. Երուսաղէմ 'ի վիճակի ժառանգութեան մերոյ որ 'ի Ս. Յակոբ։

Ի թղթոց աստի և յայոքան աղաչանաց թէ զինչ արդիւնս չահեցաւ Գրիգոր Պատրիարք, չէ յայտ. սակայն Լատին կղերք երբէք չզիջան անսալ բանից դատաւորին, որոց պատուիրէր հանդարտիլ և կեալ 'ի խաղաղութեան. եւ առ 'ի պատրուակելոց զյանցանս իւրեանց, բողոք կալան 'ի Դուռն Արքայի 'ի ձեռն դեսպանին Գաղղիոյ, որպէս թէ այլազգիք Երուսաղէմի նեղեալ եւ տառապեալ իցեն զնոսա։ Եւ ըստ դանկատելոյ նոցա, գրեցաւ հրովարտակ առ դատաւորն ստուգել զիրսն։ Եւ նա ժողովեալ զբազմութիւնս այլազգեաց 'ի դատարան, կոչեաց և զկրօնաւորս Լատինաց եւ ընթերցաւ առաջի ամենեցուն զհրովարտակն. եհարց ապա զԼատինս, ո՛վ ոք յայլազգեաց աստի նեղեաց զձեզ և զրկեաց, և կամ յափըշտակեաց զինչս ձեր, որպէս չարախօս լեալ էք առ Արքայ, և նոքա յուրասա եղեալ ասեն. ոչ բողոքեցաք 'ի Դուռն, ոչ այլազգիք նեղեցին զմեզ և կամ արկին տուգանս 'ի վերայ մեր, եւ կամ յափշտակեցին զինչս. այլ միայն երեք կրօնաւորք մեր հարին զվարդապետն Հայոց, և այն օրինաւք դատարանի հաստատեցաւ 'ի վերայ նոցա։ Լուեալ դատաւորին զխոստովանութիւն բանից նոցին առաջի բազմութեան այլազգեաց՝ արձանացոյց 'ի գիր, եւ արարեալ հանրագիր առաքեաց 'ի Դուռն։

Գրեալ էին նաեւ Լատինք առ Կուսակալն Դամասկոսի Սիւլէյման Փաշա, և նա գրեաց առ դատաւորս Երուսաղէմի, և առաքեաց 'ի ձեռն պաշտօնէի միոյ, որ կոչէր Գատրի աղա, ստուգել զխնդիրն։ Դարձեալ կազմեցաւ ժողով 'ի դատարանի՝ կոչեցան եւ միաբանք Լատինաց, ընթերցաւ գիր Կուսակալին. ապա եհարց Գատրի ցմիաբանս Լատինաց, ով ոք 'ի սոցանէ և կամ յայլազգեաց Երուսաղէմի բռնացաւ 'ի վերայ ձեր և էարկ զձեզ 'ի տուժս և 'ի տուգանս ընդդէմ օրինաց և դատաստանաց, և նոքա ասեն՝ և ոչ ոք, և շնչիմք դանկատանս զումեքէ. և դատաւորն հանդերձ ժողովով հաստատեաց զբանս նոցա 'ի գիր, եւ տուեալ 'ի ձեռս Գատրի աղայի առաքեաց 'ի Դամասկոս, \\00 (1742)։

Յետ այսր դատաստանաց՝ ձեռն արկին Լատինք և յայտ իմն գործ, զոր խորհեալ էին. զի պատճառէին թէ հընացեալէ Գերեզմանն Քրիստոսի, որոյ վասն պարտ է քակել զայն, զհողս և զքարինս նորին փոխադրել յԵրուսալէմ յաշխարհն իւրեանց. լուեալ զայս Իպրահիմ աղայի վերատեսչի կալուածոց Սիւլէյմանայ Արքայի՝ ազդ արար 'ի Դուռն, թէ Լատինք պատճառանօք կամին նորոգել եւ կամ նորոգ շինել զԳերեզմանն, և զրկել անտի զայլ քրիստոնեայս։ Վաղ ընդ փոյթ եհաս հրովարտակ յԵրուսաղէմ, խափանել զայնպիսի ձեռնարկս Լատինաց. զի տուեալ էր

նոցա հրովարտակ տակս նորոգելոյ զերկու ամբարանոցս ցորենոյ՝ և երկու սենեակ 'ի բնակութիւն ուխտաւորաց նոցին. ապա պատուիրէ՝ զի առանց Կայսերական հրամանի չթողուլ երբէք լինիլ ձեռնամուխ յայնպիսի իրս, կամ նորոգել զԳերեզմանն և զայլ տեղիս, ոչ հրամանաւ կուսակալին և ոչ դրով դատաւորին, և իւրաքանչիւր ազգաց բնակիլ խաղաղութեամբ 'ի սեփհական տեղիս իւրեանց. որպէս յայտ առնէ հրովարտակն տուեալ 'ի թուին ՌՃԾ (1739) 'ի վեհին Յունաց ընդ Հայոց. Արդ՝ Հայք, Յոյնք եւ Լատինք՝ խաղաղութեամբ բնակեսցին 'ի սեփհական տեղիս իւրեանց՝ առանց կռուոյ եւ հակառակութեան, ՌՃՀ (1742).

ԳԼՈՒԽ Ը.

Կոտակ Գրիգորի Պատրիարքի. Գիւղակնք Բեթղեհէմի. Նորոգութիւն Ս. Հրեշտակապետի. Մահ Գրիգորի. Ընտրութիւն Յակոբ Պատրիարքի Նալեան. Եաղուպ աղա. Ա.Աղազկիք Սինի.

ԳՐԻԳՈՐ Պատրիարք Շղթայակիր հասեալ յամս ծերութեան՝ զգածեալ տկարութեամբ անձին, և զմտաւ ածեալ զմահն հասարակաց՝ կամեցաւ ինքն 'ի կենդանութեան իւրում որոշել զյաջորդ Պատրիարքութեան իւրոյ. զի մի ասէ զկնի մահուան իմոյ բազմեցուսցեն յԱթոռն զանհմուտ եւ զանիմաստ ոք, յեղծումն եւ յապականութիւն այնքան բազմավաստակ ջանից և աշխատութեանց իւրոց. Նմին իրի ինքնին ձեռամբ իւրով դրեաց կտակագիր, և առաքեաց զայն 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն աշակերտին իւրոյ Թէոդորոսի Եպիսկոպոսի Խորենացւոյ 'ի Տարոնոյ. յորում բազմօք թախանձէր առ քահանայս եւ Իշխանաւորս ազգին, զի 'ի կենդանութեան իւրում հաստատեսցեն յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի զնոյն ինքն զԹէոդորոս, և փութանակի դարձուսցեն զնա յետս 'ի Ս. Աթոռն. զի եթէ ոչ հաճեսցի ազգն 'ի խորհուրդ իւր, մի հանցեն զայն 'ի հրապարակ՝ չ'լինիլ

ատեթ գժտութեան և խռովութեան ազգին և միաբանաց։ Ի հասանիլ այսր դրոյ 'ի Թագաւորական քաղաքն, Յակոբ Պատրիարք Նալեան, գլխաւորք ազգին եւ քահանայք վեց եկեղեցեաց սիրով ընկալան զնդիր նորին. և գրեցին ինքեանք եւս դիր անդորրութեան, յորում տեսանի և պատճէն կտակի նորին բառ առ բառ օրինակեալ, յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան. զի համաձայն խորհրդոյ նորին զկնի մահուան իւրոյ դիցեն յԱթոռն ընդ Թէոդորոս, զի 'ի կենդանութեան իւրոյ չկամէր ազգն տեսանել զայլ ոք յԱթոռ նորին։ Եւ առանձին դրով եւս ազգ արարին նմա, յԱստուած առնել ապաստան զանօրէնութիւն այնր մեծի խնդրոյ՝ զի ինքն ամենաբարի կամօք իւրովք ընտրեսցէ և տնօրինեսցէ զարժանաւորն յօգուտ Ս. Աթոռոյն և 'ի մխիթարութիւն համօրէն ազգին, միայն առ այժմ յանձնել Թէոդորոսի զկարեւոր գործս Աթոռոյն, զի առաւել հմտութեամբ վարժեսցի յայնս, (1743. Օգոստոս 30)։ Զայս դիր ընկալեալ Թէոդորոսի Եպիսկոպոսի՝ դարձ արար յԵրուսաղէմ։

Նախ քան զմեկնիլ Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլսոյ (1740), հաճութեամբ Յովհաննու Պատրիարքի կարգեալ էր զՅակոբ վարդապետ Նալեան փոխանորդ իւր անդ, արթնութեամբ լինել վերահասու բովանդակ գործոց Աթոռոյն Երուսաղէմի, եւ 'ի սմին ամի (1746. Փետրվար 14) առաքեաց առ Գրիգոր զտուումար հաշոյ Աթոռոյն, և վերստին հաստատեցաւ 'ի նոյն պաշտօն։ Եւ 'ի սոյա ժամանակս նորոգեցաւ վանքն Իւսկիւտարու արդեամբ Ս. Աթոռոյն, որպէս յայտ առնէ արձանագրութիւնն եղեալ 'ի վերայ դրան, օրինակ զայս։

Ի հիմանէ նոր չինեցաւ յարկս վերնատնօք, և միջնատնօք, և ներքնատնօք արդեամբք Տ. Գրիգորի եւ Տ. Յակոբայ Պատրիարքաց Ս. Երուսաղէմի և Կոստանդինուպոլսոյ, 'ի վայելումն նոցա, և համայն բարեկամաց նոցա, և Ս. Աթոռոյն Ջատագովչաց, անծախ և անքակ, յիշատակ Ս. Յակոբայ որ յԵրուսաղէմ. որք քակեն կամ ծախեն՝ զման Յուդայի առցեն։

Ի սմին ժամանակի դարձեալ տաղտկացեալ էին վանականք Երից ազգաց 'ի Բեթղեհէմ յերեսաց Արաբացի Ֆէլլահաց. զի սոքա մշանջենաւոր սովորութիւն արարեալ

գային եւ ի Ջանէին 'ի վանօրայս , եւ բռնացեալ 'ի վերայ տեսչաց և միաբանաց նոցին , պահանջէին 'ի նոցանէ ուտելիս և զըմպելիս , և յետ յաղենալոյ խնդրէին նաեւ զդրամըս։ Եւ բազում անգամ վակէին զարտաքին դրունս վանօրէից եւ ամրանային անդ իրր ամուր ապաստանի , եւ կանգնէին պատնէշս և պատերազմէին անտի ընդ թշնամիս իւրեանց , յորմէ քանդէին և աւերէին բազում տեղիք , և վանականք տագնապէին 'ի ներսն և 'ի վայրագ բնաւորութենէ և յընչաքաղց ագահութենէ նոցին։ Թէպէտ եւ գլխաւորք երից վանօրէից բազում անգամ բողոք կալան առ Բդեշխն Երուսաղէմի , բառնալ 'ի միջոյ զբռնաւորսն զայնոսիկ , այլ նա չէր ձեռնհաս առնել նոցա ինչ , այլ միայն ապաստէր դիպող առթի։ Ապա հնարս խորհեցան ազատել զվանօրայս յանարգութենէ և 'ի բռնութենէ նոցին , զի 'ի միում նուագի հնարիւք ժողովեցին զնոսա 'ի դատարան , և բռնադատեցին զնոսա երդմամբ չմտանել միւսանգամ 'ի վանօրայս եւ ոչ Օթագայիլ 'ի գիշերի , չպահանջել կերակուր և զայլ ինչ , չկանգնել պատնէշ ոչ պատերազմի , և այլ սոցին նման անկարգ սովորութիւնք նոցին։ և նոքա խոստացան առնել այնպէս , եւ եւուն երաշխաւոր՝ և զերծան անտի , ١١٥٩ (1746)։

Գրիգոր Պատրիարք 'ի ծերութեան իւրում նորոգեաց զդաւիթ եկեղեցւոյն Ս։ Հրեշտակապետի , բայց կրեաց նեղութիւնս և վիշտս ընդ միաբանաց իւրոց , թող զծախսն այլազգեաց։ քանզի քաղաքապետն Երուսաղէմի Օմար աղա արգել և խափանեաց զնորոգութիւնն , ուստի հարկ եղեւ Գրիգորի առնուլ հրաման 'ի կուսակալէն Դամասկոսի, և զկնի քննութեան դատաւորին և այլազգեաց , ձեռնարկ վերստին չինել և բարձրացուցանել զորմն և զկամարս դաւթին , և զսեղանն չարշարանաց։ Եւ յետ տարւոյ միոյ՝ ելից զկամարսն եւ երաց մէն մի պատուհան , եւ զսեղանն չարշարանաց առաւել ընդարձակեաց , նորոգեաց և զեկեղեցին և զայլ տեղիս , և այլազգիք վերստին ելին 'ի քընութիւն , զի մի աւելի քան զհրամայեալն առնիցեն , ١١٦١ (1748)։ Շինեաց նաեւ զընդարձակ սեղանատունն միաբանաց 'ի Ս։ Յակոբ , որպէս յայտ առնէ արձանագրութիւնն 'ի վերայ դրան նորին։

Գրիգոր Պատրիարք հասեալ 'ի բարւոք ծերութիւն , հիւանդացեալ անկաւ 'ի մահիճս։ Թէպէտ և դարմանեաց զնա բժիշկ ժամանակին , այլ չեղեւ ինչ օգուտ , որ և վախճանեցաւ 'ի նոյն հիւանդութեան յամի Տեառն 1749 եւ թաղեցաւ 'ի վանս Ս։ Փրկչի , վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի ընդ ամենայն ամս 32 , տարեալ բազմադիմի վշտաց և նեղութեանց , յորս իրրեւ հովիւ քաջ և ժիր մշակ անխոնջ վաստակեցաւ յամենայն գործս՝ ազատելով զՍ։ Աթոռն յամենայն վերահաս վտանգաց , լցեալ զտուն Ս։ Յակոբայ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարութեամբ , թողեալ զկնի իւր զանուն եւ զհամբաւ բարի , որոյ անուանն օրհնութեամբ յիշատակի միշտ 'ի Ս։ Աթոռս։ զտապանաքար երջանիկ Հայրապետիս տուեալ էր յօրինել բարեյիշատակ Սեղբոս Ամիրայ բարեկամ նորին , հանդերձ գեղեցիկ ոտանաւոր վերտառութեամբ։

Յետ վախճանի Գրիգորի Պատրիարքի՝ հաճութեամբ ազգին ընտրեցաւ Պատրիարք Աթոռոյն Երուսաղէմի նոյն ինքն Յակոբ Եպիսկոպոս Նալեան Պատրիարքն Կոստանդինուպօլսի , հակառակ կտակի հանգուցելոյն , զոր ինք վաւերացուցեալ էր յազգային ժողովի անդ 'ի Պատրիարքութեան իւրում , զի զկնի մահուան Գրիգորի , նստուցանել յԱթոռն զԹէոդորոս , որպէս գրեցաք։ Եւ նախ քան զամենեսին , նոյն ինքն Նալեան կնքեալ և ստորագրեալ էր 'ի հանրագրին , թէ «Ինձ Յակոբ Պատրիարքիս ընդունելի է»։

Սակայն առ 'ի բառնալոյ զհակառակութիւնս ազգայնոց ոմանց , ստիպեցին զՅակոբ մեկնիլ 'ի Կոստանդինուպօլսէ , և նորա եկեալ անտի եկն յԵրուսաղէմ եւ նստաւ յԱթոռ Պատրիարքութեան , որոյ Պատրիարքական Պէրաթն ١١٦٢ (1749) կայ մինչ այսր։ Սա եբեր ընդ իւր 'ի Ս։ Աթոռն ստոյգ մեծ մասն 'ի Նշխարաց Ս։ Լուսաւորչին , զոր յանձնեալ էր նմա Յովհաննէս Պատրիարք Կոլոտ , և զմի փոքր մասն 'ի նմանէ ամփոփեաց 'ի գերեզմանի Ս։ Մակարայ 'ի յիշատակ Աստուածասէր Եաղուպ աղայի , կոչելով ըստ ելին Սեղոհ Լեռն։ Իսկ միւս մնացեալ մեծ մասն ամփոփեալ 'ի տուփ արծաթապատ , պահի 'ի Ս։ Աթոռն։

Եւ զկնի միոյ ամի կաւ հրովարտակ յԱրքայէ վասն նո-

րոգութեան կալուածոց Երուսաղէմի, Բեթղեհէմի, Ռեմլէի, Յոպպէի, Դամասկոսի, Բերիոյ եւ Եգիպտոսի, եւ ըստ մտաց հրովարտակին էառ գիր 'ի դատարանէն Երուսաղէմի՝ և արգել զհակառակորդս կալուածոց։

Յաւուրս սորա երեւելի էր 'ի մէջ աղգին 'ի Կոստանդինուպոլիս Ակնցի Եաղուպ աղայն Յովհաննէսեան, մտերիմ բարեկամ Յակոբայ Պատրիարքի՝ ձեռնտու և օգնական յամենայն գործս նորին։ բաղում անգամ գրեաց առ նա յԵրուսաղէմէ թուղթ սիրոյ և յորդորանաց, և բազմապատիկ յարգանօք հրաւիրէր զնա գալ յուխտ յԵրուսաղէմ. կոչէր զսա վաճառապետ արքունի, նոր Յովսէփ գեղեցիկ ժամանակին և երկրորդ Զորաբաբել տաճարաշէն, որպէս գրեալ կայ 'ի պղնձի տախտակի յիշատակարան նորին, յորում մի առ մի թուին ընծայք և յիշատակիք պարեպաշտառնն, զորս նուիրեաց 'ի տաճար Ս. Յակոբայ։

Արդ զիջեալ սորա 'ի խնդիր Յակոբայ Նալեան եկն յուխտ յԵրուսաղէմ ընտանեօք, և ընկալան զնա Պատրիարքն և միաբանք բազում սիրով և յարգանօք։ Եւ ապա ինքն զկնի արդիւնաւոր ողորմութեան, եւ բանալոյ ըղձուն տաճարին Ս. Յարութեան, և բաժանելոյ զընծայս բոլոր միաբանաց, և կատարելոյ զբարեպաշտական սովորութիւնս, յաւել տալ զնուէրս 'ի դանձս Ս. Աթոռոյն, և Ս. Տեղեաց Քրիստոսի՝ 'ի յիշատակ իւր և աղգատոհմին իւրոյ, որք են, 1 արծաթի ջահ 56 օխայ, կախել 'ի մէջ գմբեթի եկեղեցւոյն Ս. Յակոբայ, և 'ի ներքոյ նորին կանթեղք 8։ 1 մեծ և պատուական վարագոյր Աւագ Խորանին ոսկիթել աղնեգործ, յորոյ վերայ տեսանին կերպարանք վիշապաց։ 2 ծաղկեայ տիպայ գոգնոց։ 1 Իւղաբերից շուրջառ։ 1 Ստոփա վարագոյր Ս. Գլխադրի, և որմոց նորին պատկերք Տնօրէնութեան Փրկչին, գործ ընքանչելի, հանդերձ արծաթի շրջանակաւ և վանդակաւն։ 1 արծաթ կանթեղ 'ի մատուռն Մակարայ Հայրապետի։ 1 ոսկեթել թաւիշագործ (կլապիտոն աթլազ տօգումայ) վարագոյր, Ս. Էջմիածնի խորանին։ 1 պղինձ ծորակ տրնտեսատան, երկաթեայ արտաքին մեծ Դուռն վանաց։ Ս. Յարութեան՝ 1 ոսկի կանթեղ 600 տրամ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։ 1 շուրջառ։ 1 սաղավարտ։ 1 վա-

կաս։ 3 շապիկ։ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ՝ 1 լէհ չիթ վարագոյր։ 1 տիպայ գոգնոց։ Ս. Թորոս եկեղեցւոյ՝ 1 արծաթ ոսկեզօծ սկիհ։ 1 տիպայ գոգնոց։ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ՝ 2 տիպայ գոգնոց։ 1 լէհ չիթ վարագոյր։ 2 քարեայ աշտանակք մոմեղինօք։ Ս. Փրկիչ եկեղեցւոյ՝ 1 տիպայ գոգնոց։ 1 զոյգ քարեայ աշտանակ մոմեղինօք։ Ս. Աստուածածնի գերեզմանին՝ 1 տիպայ գոգնոց։ 1 սաղավարտ։ 1 վարշամակ։ 3 շապիկ։ Ս. Ծննդեան եկեղեցւոյն՝ 1 շուրջառ։ 1 սաղավարտ։ 1 վարշամակ։ 4 շապիկ։ 1 լէհ չիթ վարագոյր։ Ս. Գէորգ եկեղեցւոյն 'ի Ռեմլէ՝ 1 շուրջառ։ 1 սաղավարտ։ 1 վարշամակ։ 1 փորուրար։ 3 շապիկ։ 1 արծաթ բուրվառ։ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն Յոպպէի՝ 1 շուրջառ։ 1 սաղավարտ։ 1 վարշամակ։ 1 փորուրար։ 4 շապիկ։ 1 լէհ չիթ վարագոյր։ Իսկ բարեպաշտուհի տիկին նորին Սողոմէ՝ արար յիշատակ զվերնատունն կանանց 'ի տաճարին Ս. Յարութեան՝ 2 տիպայ գոգնոց։ 1 չիթ լէհ վարագոյր, քանդակագործ և ոսկիզօծ շրջանակն պատկերի Խաչելութեան հանդէպ Գերեզմանին Քրիստոսի, որոց յիշատակքն օրհնութեամբ եղիցի, (1751)։

Ի սմին ամի պատահեցաւ դարձեալ վէճ ընդ այլազգիս Սիոնի սակս գերեզմանատան, զի որդիք եւ ժառանգք Շէյխ Ահմէտ Տէմէնեայ բողոք բարձեալ առ դատաւորն, ամբաստան եղեն զերից ազգաց քրիստոնէից, Հայոց, Յունաց, եւ Լատինաց, իբրու թէ խոտորեալ են յորոշեալ սահմանաց գերեզմանատանց, եւ մտեալ 'ի սահմանս կալուածոց հաւուն իւրեանց, թաղեն անդ զմեռեալս, և թէ սահմանքն այնոքիկ որոշեալ էին 'ի թուին ١١٢٣ օրինօք դատարանի առաջի փոխանորդաց երից ազգաց, և խընդրեցին վերստին ելանել 'ի քննութիւն, և 'ի բաց հանցեն 'ի գերեզմանաց զմեռեալս, զորս թաղեալ են արտաքոյ սահմանացն, և ըստ օրինի կարգաւորել զգերեզմանատեղիս։ Կոչեցան 'ի դատարան փոխանորդք և թարգմանք երից ազգաց։ Յովհաննէս վարդապետ և թարգմանն Պողոս Ետուն պատասխանի՝ քրիստոնեայք ոչ են յամենայնի զիրաւունս այլոց, և ոչ խոտորեալ 'ի սահմանաց իւրեանց, զի 'ի ժամանակին յայնմիկ նախնիք մեր ոչ կամեցան ունկն դնել ձայնի քրիստոնէից, այլ ինքեանք որոշեցին զսահ-

մանան. զի 'ի նմին ժամանակի նոքա եւս ամբաստան լեալ էին՝ թէ ազարակն սահմանափակ 'ի չորից կողմանց՝ է 'ի կալուածոց Շէյխ Ահմէտ Տէմէնեայ։ Սակայն փոխանորդք երից ազգաց հաստատեցին յայնժամ՝ թէ տեղիքն այնոքիկ դերեզմանատուն է քրիստոնէից՝ յաւուրց անտի Մէլիք Սալահատտինի և Սէլիմայ Արքայի, զորս թողին 'ի ձեռս քրիստոնէից լինիլ սեփհական դերեզմանատեղի, և Արքայն Սէլիմ շնորհեաց զպատմէն Կայսերական տումարին, եւ մինչեւ ցայսօր թաղեն նոքա անդ զմեռեալս, եւ տիրեն առաջի որդւոց և ժառանգաց Շէյխ Ահմէտ Տէմէնեայ առանց խռովութեան։ Ապա մատուցին զպատմէն Կայսերական տումարին և զայլ գրեանս, և ասեն. Առաջին դատաւորք ոչ գտին 'ի ձեռս նախնեաց ձերոց մուրհակս ինչ, զի ամբաստանութիւնք ձեր յառաջանային յատելութենէ և 'ի հակառակութենէ, որոյ վասն արդիւլեալ 'ի բաց մերժէին զնոսա յատենէ՝ եւ տային 'ի ձեռս քրիստոնէից գիր 'ի դատարանէ, նմին իրի ոչ եղեւ խռովութիւն ինչ մինչեւ ցայսօր, իսկ դուք ամբաստանողքդ ոչ կարէք մատուցանել մուրհակ և գիր օրինաւոր։

Եւ 'ի խնդրել դատաւորին վկայս 'ի քրիստոնէից, մատուցին նոքա զարս չորս 'ի նոյն իսկ յայլազգեաց Սիոնի, որք և ասէին թէ՝ տեղիքն այնոքիկ դերեզմանատունք են քրիստոնէից։ Ապա արդեալ զհակառակորդսն, խելամուտ արար զնոսա 'ի վաւերական գրոց, և թէ վէճն ընդդէմ է նախնեաց իւրեանց։ Եւ նոքա ծանեան զիրաւունս քրիստոնէից, և 'ի բաց կացին 'ի դատաստանէ իւրեանց, եւ խոստովան եղեն յատենի անդ. թէ որդիք Տէմէնեայ չունին այսուհետեւ իրաւունս 'ի վերայ դերեզմանատանց քրիստոնէից, եւ դատաւորն 'ի գրի եհար զայս դատաստան և եւ ցփոխանորդն Հայոց, ՌՌՂԷ (1751)։

Իսկ Յակոբ եպիսկոպոս 'ի գալստեան Եաղուպ աղայի արարեալ էր նմա եւ ընտանեաց նորին ընդունելութիւն մեծ, ընկալեալ զնոսա մեծաւ փառաւք ըստ արժանաւորութեան նոցին։ Եւ 'ի միջոցի ասա սիրելի եղոյց զինքն Յակոբ Եաղուպայ եւ բաղում ինչ խօսեցաւ ընդ նմա. և աղաչեաց զնա դարձուցանել զինքն 'ի Պատրիարքութիւն Կոստանդինուպօլսոյ. զի կարի տաղտկացեալ էր յերեսաց

յոնութեանց այլազգեաց և յանսովոր պահանջանաց նոցին, որոց վասն բազում անգամ դառն դանկատանօք գրեալ էր առ ազգային, եւ Եաղուպ աղա անսացեալ բանից նորա, խոստացաւ 'ի դառնալ իւրում 'ի Կոստանդինուպոլիս, կացուցանել Պատրիարք Երուսաղէմի զԹէոդորոս Եպիսկոպոս, զորմէ կատաւ պատուիրեալ էր Գրիգոր Շղթայակիր, և զՅակոբ առեալ ընդ իւր գնաց 'ի թագաւորական քաղաքն, եւ կացոյց զնա անդ վերատին Պատրիարք (1752)։ Եւ 'ի նոյն աւուրս մատոյց գիր աղաչանաց առ Արքայ, յորում յայտ արար թէ ինքն կամօք իւրովք հրաժարեալ է 'ի Պատրիարքութենէ Երուսաղէմի, և թէ չունի երբէք իրաւունս այնուհետեւ միել ձեռն յայն իշխանութիւն, և 'ի տեղի իւր ընտրեալ է զազգն զԹէոդորոս Եպիսկոպոս։ Գրեցաւ ըստ այնմ հրովարտակ, և հաստատեցաւ Պատրիարքութիւնն Երուսաղէմի 'ի վերայ նորա, ՌՌԾ (1752)։ Այլ նա ինքն Եաղուպ աղա յետ բազում գործոց իւրոց 'ի նմին ամի գլխատեցաւ 'ի Կոստանդինուպոլիս հրամանաւ Արքայի, Յուլիս 9։

ԴԼՈՒԽ Թ.

Վէճ Յունաց ընդ Լատինաց։ Տիրել Յունաց գերեզմանի Ս. Աստուածածնի և մեծի եկեղեցւոյն Բեթղեհէմի։ Զրկանք Հայոց և նեղութիւնք վասն այնց տեղեաց։ և վերատին հաստատիլ իրաւանց Հայոց։

Ի ՀԱՍԱՆԻԼ Պատրիարքական Գէրթին՝ նստաւ Թէոդորոս Եպիսկոպոս Խորենացի յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և կացոյց Փոխանորդ իւր զՅովհաննէս Եպիսկոպոս յԵրուսաղէմ, եւ զՍամուէլ վարդապետ 'ի Կոստանդինուպոլիս, և իշխանաւորք ազգին առաքեցին առ նա կանոնական բանս, և ընկալեալ նորա զայն՝ յաւել և ինքն ինչ ինչ 'ի վերայ նորա, 'ի բարւոք կառավարութիւն Աթոռոյն, զոր լուեալ Յակոբայ Պատրիարքի և գլխաւորաց ազգին ուրախացան յոյժ, (այս կանոնական բանք՝ չհասին 'ի ձեռս մեր)։

Ի սմին ժամանակի ծագեցաւ վէճ և խռովութիւն 'ի մէջ Ցունաց և Լատինաց վասն գերեզմանի Ս. Աստուածածնի՝ 'ի ձորն Գեթսէմանի, զի Յոյնք երկնչին հանապազ 'ի միտս իւրեանց կերպիւ իւիք արտաքսել յեկեղեցւոյ անտի զԼատինս՝ և 'ի զայրանալ կռուոյն՝ Փոխանորդք եւ Թարգմանք երկուց ազգաց դիմեցին առ դատաւոր քաղաքին, և նա արար ատեան մեծ յերեւելեաց քաղաքին, ուր եկին և դասք դիտնականացն այլազգեաց։ Եւ 'ի լինել բանից՝ ամբաստան եղեն Յոյնք զԼատինաց եւ ասեն՝ 'ի գարուց և 'ի ժամանակաց անտի գերեզմանն Ս. Աստուածածնի սեփհական է Ցունաց, և նոքա միայն տիրեալ են այնմ առանց ուրուք ընդդիմանալոյ, այժմ Լատինք յարուցեալ հակառակին ընդ մեզ վասն այնր, ուստի խնդրեմք բառնալ զընդդիմութիւնս նոցա։ Ցակնարկել դատաւորին՝ եւ պատասխանի Փոխանորդն Լատինաց և ասէ. եկեղեցին այն որոշեալ և սահմանեալ է երից ազգաց՝ Հայոց, Ցունաց և Լատինաց, և իւրաքանչիւր ազգ ունի անդ առանձին տեղիս, և մէն մի սպասաւորս, և որոշեալ ժամանակս կատարելոյ զպաշտամունս, մաքրելոյ և լուցանելոյ զկանթեղս, և սեփհականեալ է այն երից ազգաց, և ոչ միոյ ազգի. և Փոխանորդն Ցունաց Անանիա ոչ անսայր բանից նորա։ Հարկ եղեւ դատաւորին հարցանել ցժողովեալ այլազգիս, և նոքա զնոյն ետուն պատասխանի՝ թէ եկեղեցին սեփհական է երից ազգաց։ Դատաւորն ազգ արար Փոխանորդին Ցունաց լռել յամբաստանութենէ և չկալ հակառակ նախնի սովորութեան. կոչեաց նաեւ ընդ Թարգմանն Հայոց և պատուիրեաց նմա չկռուիլ ընդ միմեանս, այլ կալ մնալ անդ որպէս էին յառաջագոյն՝ յիւրաքանչիւր ահմանեալ տեղիս, եւ սիրով կատարել զպաշտամունս իւրեանց, և այսպիսի եղանակաւ արձակեաց զատեանն. ՌՌԶԱ (1754)։

Հանդեաւ 'ի Կոստանդինուպոլիս Ակնցի Մահտեսի Սեղբոս Ամիրայն, մեծ բարերարն Աթոռոյն Երուսաղէմի, յերեկոյի յաւուր տօնի Խաչակայ Պարթեւի Հայրապետին, (1754. 'ի 5 Փետրվար անոյ)։

Իսկ Լատինք թէպէտեւ լռութեամբ մեկնեցան յատենէ դատաւորին, այլ ոչ կամեցան խսպառ հանդարտիլ.

զի յետ տարւոյ միոյ դիմեցին 'ի Դուռն եւ միջնորդութեամբ դեսպանին Դաղղիոյ առին հրովարտակ յԱրքայէ ՌՌԶՁ, նորոգել զեկեղեցին Ս. Աստուածածնի և ինքեանք միայնակ տիրել այնմ։ Մանր թուեցան իրքն յաչս Ցունաց, և կարի զայրացեալ ընդ այս Բարդենիոս Պատրիարքին Ցունաց, բոլորք կալաւ առ Արքայ, եւ ամբաստան լեալ զբռնութենէ Լատինաց ասէ. 'ի պատճառս նորոգելոյ զՍ. Տեղիս, զհողս և զքարինս նոցին քակեալ փոխադրեն Լատինք յաշխարհն իւրեանց, և բռնադատեն զուխտաւորս Ցունաց երթալ անդր և յանձն առնուլ զկաթոլիկ կրօնս նոցին. ապա աղերս արկեալ խնդրէ յանձնել 'ի ձեռս ազգին Ցունաց զբովանդակ Ս. Տեղիս Երուսաղէմի, զնոյն յայտ առնէր և հանրագիրն Ս. Քաղաքին այլազգեաց։ Ցետ այնորիկ 'ի դատիլն Ցունաց ընդ Լատինս յատենի Կայսեր, հարկ եղեւ 'ի քննութիւն ածել զարձանագրութիւնս Կայսերական դիվանին, ուր գտան արձանագրեալ հրովարտակք առաջին Թագաւորաց Սէլիմայ, Սիւլէյմանայ, Մուրատայ, Իպրահիմայ և այլոց, տալ ընդ Ս. Տեղիս 'ի ձեռս Ցունաց. իբրեւ ոչ առին յանձն Լատինք զայսոսիկ՝ կազմեցաւ ատեան նախարարաց, ուր պարտ էր վճարել երկուց ազգաց զդատաստանս իւրեանց. Լատինք ոչ կարացին մատուցանել յատենի ատ զկարեւոր գրեանս իւրեանց, այլ միայն խոստացան բերել զայնս յետոյ. անցին 'ի վերայ ամիսք իբրեւ 6, Լատինք ոչ երեւեցան, և ոչ կարացին մատուցանել զխոստացեալ գրեանս։ Զի թէպէտեւ մատուցին Լատինք հուսկ ուրեմն զերկուս հրովարտակս գրեալ 'ի թուին ՌՌԱ եւ ՌՌԼ, այլ Յոյնք յառաջ բերին զհակառակս նոցին առաւել զօրաւոր քան զնոսա, մանաւանդ 'ի միումն յայտնի ծանուցանէր անվաւեր համարել զհրովարտակս Լատինաց, ուստի որոշեցաւ յանձնել զՍ. Տեղիս 'ի ձեռս Ցունաց. գրեցաւ հրովարտակն 'ի թուին ՌՌՎ, յորում երկար և բացայայտ բանիւք պարզաբանէ զսեփհական տեղիս Ցունաց 'ի տաճարին Ս. Յարութեան. զեկեղեցիս Գեթսէմանի եւ Բեթղեհէմի տալ 'ի ձեռս Ցունաց. զայս հրովարտակ ընթերցան առաջի Արքայի բառ առ բառ, եւ նորա հաւանեալ հրամայեաց գրել զմաքուրն, և ապա ձեռամբ իւ-

ռովք վաւերեալ (Խաթթի Շէրիֆ) եւ 'ի ձեռս Ցունաց։

Յետ առնլոյ Ցունաց զայս հրովարտակ, եւուն կարգել 'ի դրանէ զիպլրահիմ Աղա իրրեւ պաշտօնեայ եւ ոստիկան սպամ գործոյ։ եւ նովաւ հանդերձ դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Զէթէֆի Ապտուլլահ Փաշա, և 'ի նմանէ առին գիր հրամանի առ դատաւորս Երուսաղէմի, զի անթերի կատարեսցեն զհրաման Սրբոյին։ եւ ապա մեկնեալ անտի հասին յԵրուսաղէմ, և 'ի դատարանի 'ի բազմամբոխ ատենի ընթերցան զհրովարտակն և զայլ գրեանս, և անտի չոքան 'ի դերեզմանն Ս. Աստուածածնի։ եւուն դատարկել և հանել արտաքս զամենայն անօթս և եկեղեցական սպասս, զկանթեղս և զաշտանակս Լատինաց, առին նաեւ զլանալի արտաքին դրան։ Եւ անտի չոքան 'ի Բեթղեհէմ, ուր 'ի հրապարակի վերատին ընթերցաւ հրովարտակն, և ապա եւուն դատարկել Լատինաց զեկեղեցին մեծ։ Էառ ոստիկանն զփականս դրանց 'ի ձեռաց Լատինաց և եւ ցՑոյնս, և նոքա եդին նոր փականս 'ի դրունս Այրին Ծննդեան, և անտի եկին 'ի տաճարն Սուրբ Յարութեան, նոյնպէս կարգադրեցին անդ զխնդիրս Ցունաց։ Այսպէս բարձաւ իշխանութիւն Լատինաց 'ի դերեզմանէ Ս. Աստուածածնի եւ յեկեղեցւոյն Բեթղեհէմի յամի Տեառն 1758։ յ7 Հոկտեմբեր ամսոյ, որպէս գրէ Զուզայեցի Սամփանոս վարդապետ լուսարար Ծննդեան։ Իրրեւ կատարեցին Ցոյնք զայս ամենայն՝ եւ նուաճեցին զԼատինս, ձեռն արկին գործել զայլ ինչ՝ զոր ոչ էր հրամայեալ Սրբոյի, զի տենչանք տիրապետութեան սակայիր զնոսա հալածել նաեւ զայլ քրիստոնեայս 'ի Ս. Տեղեաց եւ զրկել զնոսա 'ի մասնակցութենէ նոցին՝ եւ ինքեանք միայնակ տիրապետել։ Սակայն վէճն Ցունաց միայն ընդ Լատինաց էր, և 'ի հրովարտակին զոր առին Ցոյնք՝ չէր ինչ հրաման եւ կամ նշանակեց ինչ վասն Հայոց։ Այլ Իպրահիմ աղա յետ արտաքսելոյ զԼատինս 'ի տեղեաց անտի՝ արտաքսեաց նաեւ զՀայս, զի եւ հանել զեկեղեցական զարդս և զկանթեղս 'ի դերեզմանէ Ս. Աստուածածնի, և էառ զլանալի արտաքին դրանն և եւ ցՑոյնս, և արգել այնուհետեւ զՀայս և զհետեւակս նոցին չմտանել յեկեղեցի անդր։ Ցոյնք բարւոք որսացեալ զիմս

ոստիկանին եւ գտեալ համարձակութիւն առաջի նորա՝ չնորհիւ նորին արգելին զՀայս նաեւ յեկեղեցւոյն Բեթղեհէմի և յԱյրէն Ծննդեան, առին զլանալի հիւսիսային դրան, բարձին զկանթեղսն յԱյրէն Ծննդեան, և սկսան բռնանալ 'ի վերայ սեփհական վանաց նոցին կատուցեալ անդ 'ի Բեթղեհէմ մերձ յեկեղեցին։ սպառնային նոցա չմտանել 'ի Ս. Յարութիւն, կամելով բառնալ զաշտանակս 'ի Պատանատեղւոյն, խափանել զպաշտամունս և զարարողութիւնս՝ զոր կատարէին անդ։

Տեսեալ Թէոդորոս Պատրիարքի և միաբանացն Հայոց զայս ամենայն գործս եւ զհամարձակութիւնս Ցունաց՝ տագնապեցան յոյժ, և անկեալ 'ի դրունս այլազգեաց աղաչէին զնոսա ձեռն տալ ինքեանց և չկորուսանել զսեփհական իրաւունս ազգին։ ապա չոքան առ դատաւոր քաղաքին, և գանկատանօք պատմեցին նմա զանիրաւութիւնս Ցունաց, զի բռնարարութիւնք նոցին արտաքոյ էր Կայսերական հրամանին։ զի կարգադրութիւնք սեփհականութեանցն Հայոց 'ի Ս. Տեղիս Կայսերական հրովարտակօք և վաւերեալ գրովք հաստատեալ էր։ և զի վէճն Ցունաց միայն էր ընդ Լատինս, և հրովարտակն գրեալ վասն բարւոքման վիճակի երկուց ազգաց էր եւ չգոյր 'ի նմա բառ ինչ վասն Հայոց։ յետ ծանուցանելոյ զայսոսիկ՝ թախանձանօք խնդրեցին 'ի դատաւորէն՝ գրել և ծանուցանել 'ի Դուռն, զի վերատին դարձուսցեն առ Հայս զբռնալի արտաքին դրան դերեզմանի Ս. Կուսին, կախել ըստ Ջահս և զկանթեղս և մուծանել զամենայն սպասս եկեղեցւոյ, կատարել զպատարագս եւ զպաշտօնս ըստ նախնի սովորութեան՝ զորս խափանեցին Ցոյնք, և տալ զբռնալի հիւսիսային դրան Այրին Ծննդեան, որպէս եւուն Ցունաց, եւ բառնալ զհակառակութիւնս նոցա որ վասն վանաց սեռնեկաց, եւ այլ անչարժ ստացուածոցն Հայոց 'ի Բեթղեհէմ։ չխափանել զպատարագս և զպաշտօնս, զթափօրս և զայլ ամենայն արարողութիւնս 'ի տաճարին Սուրբ Յարութեան, չբառնալ զաշտանակս 'ի Պատանատեղւոյն։ չփակել զՋիհորն անդ, չբռնանալ 'ի վերայ վանօրէից Ս. Յակոբայ, Ս. Փրկչի, Ս. Հրեշտակապետի, և Ս. Յովհաննէս եկեղեցւոյ։ Զայս ամենայն լուեալ դատաւորին

դրեալ ազգ արար 'ի Դուռն, և ծանոյց միանգամայն՝ թէ Յոյնք յենլով 'ի նոր հրովարտակն՝ արդելին զքրիստոնեայս 'ի Ս. Տեղեաց, զի իւրաքանչիւր ազգ ունի իւր բաժին տեղիս և առանձին վանօրայս՝ հաստատեալ օրինօք։

Բաց յայսմանէ էառ Թէոդորոս նաեւ հանրագիր յայլազգեաց կնքով դատաւորին վասն վանորէիցն Հայոց, զի Յոյնք զհետ մտեալ էին փոխել զանուանս նոցա, և մուծանել յարձանագրութիւնս դիվանին և 'ի հրովարտակս, որպէս և արարին իսկ կոչելով զՍ. Յակոբ (Մար Եագուպ) վանք Վրաց, զՍ. Փրկիչ (հաղրէթի Իսանին զընտանի), և զՍ. Հրեշտակապետ (ՃԷնանին էվի)։ Նոյնպէս և զեկեղեցին Ս. Յովհաննու։ Զի թէպէտ վկայեցին այլազգիք 'ի գրի անդ թէ Յոյնք ստութեամբ եւ խաբէյութեամբ ջանան փոխել զանուանս վանօրէիցն Հայոց, դաւադրութիւն պատրաստեալ առ յապա ժամանակի, սակայն վանօրայքն են սեփհական Հայոց։ Այս գիր ոչ ինչ օգնեաց յայնժամ, այլ արարին Յոյնք որպէս և կամեցան։

Թէոդորոս Պատրիարք հանդերձ 6 խորհրդականօք իւրովք, որք էին գործակալք Սթուռոյն, թախանձանօք զբրեաց առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, և ծանոյց զոր ինչ միանգամ արարին Յոյնք յերուսաղէմ, եւ խնդրեաց հանել նոր հրովարտակ արքունուստ, առ 'ի դարձուցանել յետս զառաջին իրաւունս Հայոց, զորս յափշտակեցին Յոյնք։ Իսկ Յոյնք 'ի գահակալութեան Սուլթան Մուստաֆայի Գ. առաքեցին զոմանս նորոգել զհրովարտակսն, որոյ վասն աղաչէր Թէոդորոս զգուշանալ, զի մի մուծանիցեն 'ի նոր հրովարտակս զանուանս վանօրէիցն Հայոց, այլ այս չեղեւ հնար, որպէս գրեցաք։

Ի հասանիլ գրոց դատաւորին 'ի Դուռն, նոյնպէս Պատրիարքին և միաբանաց առ գլխաւորս ազգին, և ապա մի ըստ միոջէ ծանուցին Արքայի զգործս Յունաց, թէ որպէս զրկեցին զՀայս 'ի տեղեաց իւրեանց։ Հրամանաւ Արքայի գրեցաւ նոր հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) համաձայն մնաց առաջին հրովարտակացն, և առաքեցաւ այն յերուսաղէմ 'ի ձեռն ոստիկանի ուրուք, և նորա եկեալ ետ ընթեռնուլ զհրովարտակն 'ի դատարանի, և սկսաւ կարգաւորել զգործս Հայոց, ետ մուծանել զեկեղեցական սպասս Հայոց

'ի գերեզման Ս. Աստուածածնի, եւ զետեղել զիւրաքանչիւրն 'ի տեղիս իւրեանց, և ետ նոցա զբանալի արտաքին դրանն, և հրամայեաց կատարել զպաշտամունս ըստ առաջին կերպի, նոյնպէս և յեկեղեցին Բեթղեհէմի, և ետ ըզբանալի հիւսիսային դրան Այրին, որպէս և ունէին։ ՌՌՄ (1759)։

Թէոդորոս Պատրիարք յառաջագոյն աղերսական գրով խնդրեալ էր յԱրքայէ զպատճէն հրովարտակին Յունաց, և նորա կամեցեալ բառնալ զխռովութիւնս ազգաց, հրամայեաց առաքել զայն 'ի ձեռն Մէհէմմէտ էվին պաշտօնէի գրան, որ ունէր օրինակ զայս։ «Յաղագս բառնալոյ ըզխռովութիւնս Յունաց և Լատինաց պատահեալ յառաջագոյն 'ի միջի նոցա վասն Ս. Տեղեաց քրիստոնէից, քննեցան ասա 'ի Դուռն դաշնագիրն Լատինաց և հրովարտակք Յունաց, եւ յայտնի եղեն խնդիրք երկաքանչիւրոց։ Այսոքիկ են օրինադրեալքն որք չհակառակին դաշնագրոյն, երկոքին աչտանակքն Պատանատեղւոյն էին 'ի ձեռս Լատինաց, իսկ հին գրեանքն Յունաց՝ հաստատեն զայնս լինել նոցա, այլ վասն խաղաղութեան հրամայեցաւ Յունաց եւս դնել անդ զերկուս աչտանակս, և իւրաքանչիւր ազգ ուշ դնել աչտանակի իւրոյ։ Փոքր գիւղքն Գերեզմանին Քրիստոսի՝ ըստ առաջին սովորութեան մնալ ընդ հրկողութեամբ Յունաց, եւ վերին յարկն եօթն կամարաց Ս. Կուսին՝ լինել բնակութիւն կրօնաւորացն Լատինաց, և ստորին կողմն մնալ 'ի ձեռս Յունաց, եւ իւրաքանչիւր ազգաց 'ի սահմանեալ տեղիս իւրեանց կատարել զօրէնս։ Գերեզմանն Ս. Աստուածածնի՝ 'ի հին հրովարտակս Յունաց բացայայտ երեւի իրաւունք նոցին, իսկ 'ի դաշնագիրս Լատինաց չիք ինչ յիշատակութիւն վասն այնր, որոյ վասն եկեղեցին այն տուաւ պատրիարքին Յունաց և կղերաց նորին՝ տիրել նմա։ Նոյնպէս և մեծ եկեղեցին Բեթղեհէմի։ Իսկ Այրն Ծննդեան անդ՝ դղրոմ ուխտատեղի երկուց ազգաց, և վասանք նորին լեալ էին յառաջագոյն 'ի ձեռս Յունաց, զորս նենգութեամբ յափշտակեալ Լատինաց, և 'ի գալստեան ուխտաւորացն Յունաց, տային սպասել արտաքոյ դրան զերկուս և զերիս ժամս։ առ 'ի բառնալ ըզնեղութիւնս զայս, հարկ եղեւ տալ զմի բանալի 'ի ձեռս

վերակացուի պատրիարքին Յունաց և կղերաց նորին, զի 'ի կատարելս զորէն իւրեանց յԱյրի անդ՝ չհակառակիլ միմեանց, այս ամենայն կատարեցաւ 'ի ձեռն պաշտօնէի դրան։

Ապա դարձուցանէ զդէմ բանին առ դատաւորն Երուսաղէմի, քանզի ընդդէմ Կայսերական հրամանին գիր տուեալ էր Լատինաց, չփոխել զինքիրն կարգադրեալ, ջնջել և բառնալ 'ի միջոյ զգիրն գրեալ 'ի բարբառ Արաբացւոց (Հէօճէթ), և մի եւս համարձակիլ յայնպիսի կատկածաւոր գրութիւնս, մինչենաւոր յարդել զկայսերական օրինադրութիւնն։ Տեղիքն զորս յիշեցաք, մնալ 'ի ձեռս Յունաց, և բառնալ 'ի նոցանէ զիշխանութիւնս Լատինաց, բանալի դրան Այրին եւ հրովարտակս այս մնալ 'ի ձեռս Յունաց։ Չհամարձակիլ Լատինաց 'ի կռիւ և 'ի հակառակութիւն ընդդէմ օրինադրութեանցս։

Նմանապէս ըստ մտաց Կայսերական հրովարտակին եւ օրինադրութեանն, որ նախ քան զայս տուաւ ազգին Հայոց, մի՛ լիցի վէճ եւ խռովութիւն պատճառանօք։ պատուէր տալ մեծամեծացն այլազգեաց չվրդովել և արկանել խռովութիւն 'ի մէջ Պատրիարքաց և միաբանաց սակս ազահութեան իւրեանց՝ լինելով միոյն պաշտպան և միւսոյն զրկող, յետ կարգաւորելոյ եւ աւարտելոյ զայսոսիկ ծանուցանել 'ի Դուռն, ՌՌՎՌ (1759)։

Լատինք 'ի ժամանակի խռովութեանս այսմիկ առին հրաման Արքունուստ, միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, և նորոգեցին զվանս իւրեանց յԵրուսաղէմ, և զսենեակս 'ի Ս. Յարութիւն, և զվանօրայս Բեթղեհէմի եւ Յովհաննու Մկրտչեան։

Յետ գործադրելոյ Կայսերական հրովարտակին և գրուելոյ Յունաց զՍ. Տեղիս, չհանդուրժեալ Լատինաց ընդ այս, դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Զէթէհի Ապտուլլահ Փաշայ, և չրջեցին զնա 'ի կողմն իւրեանց մեծամեծ արօք և պատարագօք, որոյսին նաեւ 'ի կամս իւրեանց զգլխաւորս այլազգեաց Երուսաղէմի և զդատաւորն իսկ գլխովին։ Եւ 'ի գալստեան Կուսակալին յԵրուսաղէմ ըստ սովորութեան միանգամ 'ի տարւոջ, արգել զՅոյնս 'ի լուանալոյ զՊատանատեղին Քրիստոսի, զոր օրինադրեալ

էին ընդ Լատինաց յեօթնեկի միանգամ փոխադարձ լուանալ։ Եւ ետ դնել անդ զերկուս աշտանակս Հայոց, զոր բարձեալ էին Յոյնք։ Երբարձ զլուսարարն կամ զպահպանն Յունաց 'ի Գերեզմանէն Քրիստոսի, և եդ անդ զսմն 'ի Լատինաց։ Դարձոյց անդրէն առ Լատինս զսարին կողմն Եօթն կամարաց Ս. Կուսին։ և զկարասին զոր եդեալ էին անդ Յոյնք՝ ետ արկանել առ ընթեր որմոյ եկեղեցւոյ նոցին։ Եւ հրաման ետ Լատինաց սալել զտանիս տաճարին Ս. Յարութեան մինչ 'ի դմբեթն եկեղեցւոյն Յունաց։ Կախել զկանթեղս 'ի գերեզմանի Ս. Աստուածածնի եւ պատարագել անդ։ Եւ ետ դատարկել յԱյրէն Մենդեան Քրիստոսի զկանթեղս, զսատկերս և զայլ սպասս Յունաց՝ և արգել զնոսա 'ի պատարագելոյ անդ։ Էառ և զբանալի մեծի եկեղեցւոյն եւ ետ ցԼատինս։ Եւ 'ի վերջոյ կալաւ զիսխանորդն և զթարգմանն և զսմանս 'ի միաբանաց և 'ի ժողովրդոցն Յունաց՝ մատնեաց 'ի տուգանս և 'ի բանտս։ սակայն ժողովրդականք յանձն առեալ զկրօնս Լատինաց՝ զերծան 'ի բանտէ։ Ընդ այս անակնկալ գործ կուսակալին տագնապեցան Յոյնք՝ և դիմեցին առ դատաւորն, և հաղիւ ուրեմն գողացան զմիտս նորա և բազում աղաչանօք ետուն գրել 'ի Դուռն դառն և ցաւագին գանկատանս ընդ կուսակալէն, հակառակութեամբ և թշնամութեամբ մեծ անիրաւութիւնս և զրկանս արար հպատակաց Արքային, և 'ի հրապարակի ճաղանօք խայտառակեաց զմիաբանս և զազգն Յունաց, և եղեւ առիթ մեծամեծ վնասուց և նքուազելոյ ուխտաւորաց։ ապա ազերս արկեալ խնդրեն յԱրքայէ, ըստ մտաց Կայսերական հրովարտակին՝ դարձուցանել վերստին առ Յոյնս զայն ամենայն տեղիս՝ զորս յափշտակեցին Լատինք, ՌՌՎՌ (1759)։

Իսկ Օսմանեան Դուռն կամելով բառնալ զխռովութիւնս ազգաց՝ որ յառաջեալ էր յայնժամ, առաքեաց նոր հրովարտակաւ յԵրուսաղէմ զսատիկանն Միխիս Մուստաֆա էֆէնտի՝ որ էր այր բարեբարոյ, կարգաւորել զգործս Յունաց ըստ հրամանի Արքային։ Եւ 'ի ժամանել նորա անդ՝ ոչ միայն յարգեաց զառաջին կարգադրութիւնս խնդրոցն Հայոց, այլ ուշադրութեամբ եհարց և քննութիւն արար։ զի եթէ հակառակ կամ ընդդիմութիւն ինչ պատահեալ

իցէ 'ի կողմանէ Յունաց և Լատինաց՝ բարձցէ և ուղղեսցէ զայնս ածելով յառաջին վիճակն, սակայն չեգիտ միաբանակար ինչ։ Եւ ընթեռնուլ զգիրն Յունաց՝ զոր բերեալն էր 'ի դատարանի առաջի խուռն բազմութեան, ասէ, Տէրութիւնն յատկապէս ետ գրել զայսոսիկ տողս 'ի պաշտպանութիւն Հայոց, զի մի՛ պատճառանօք հակառակեսցին նոցա։ ընդ այս բան անչափս ուրախացաւ Փոխանորդն Հայոց՝ որ նստէր 'ի ժողովի անդ։ Յայս գործ բազմօք աշխատեալն 'ի կայսերանիստ քաղաքի անդ՝ Պետրոս և Ղազարոս Իշխանաւորք ազգին, յորդորանօք Գրիգոր վարդապետի Փոխանորդին երեւեցան մի՛ զի զառաջին հրամանակն Յունաց ետուն պատառել Հայք՝ և զերկրորդս այս, երեր ոստիկանն՝ յորոյ վերայ զիջան Յոյնք սակաւ ինչ 'ի կամս Հայոց, և սկսան ընկերութեամբ վարել 'ի գերեզման Ս. Աստուածածնի, զի 'ի չորեքշաբաթի Հայք 'ի վերայ գերեզմանին, Յոյնք 'ի վերայ գերեզմանաց Յովակիմայ և Աննայի, 'ի Կիւրակէի Հայք 'ի սեփհական տեղանն արտաքոյ գերեզմանին, Յոյնք 'ի ներքին կողմն յարեւելս 'ի տեղիս իւրեանց պատարագէին։ Եւ յետ կարգաւորելոյ զայս ամենայն՝ դարձաւ ոստիկանն 'ի Կոստանդինուպոլիս, զորմէ Հայք գովութեամբ գրեն, (1758. 'ի 25 Հոկտեմբերի ամսոյ)։

Գ Լ Ո Ւ Խ Ժ.

Բռնութիւնք ազգացոյց։ Տառապանք վանօրէից յերեսաց Կուսակալացն Դամասկոսի։ Աղօտամտութիւն Թէոդորոսի։ Վերջին կոակ Թէոդորոսի և մահ նորին։

Թէոդորոս Պատրիարք հաղիւ ուրեմն զերծեալ 'ի խռովութեանց Ս. Տեղեաց, յորս յետ բազմագիմի աշխատութեանց, ծախեցան նաեւ քսակք դրամոց, ապա ձեռն արկ նորոգել զոմանս 'ի վանօրէից. իսկ այլազգիք երուսաղէմի բռնացան 'ի վերայ նորա, և պատճառանօք պահանջէին 'ի նմանէ զգումարս դրամոց. երբեմն իբրու թէ առանց հրամանի չինեալ են, և երբեմն թէ՝ պարտ է վերստին քննել, և ոմանք եւս զանյօդելի բանս կարկատէին, մանաւանդ յաւուրց անտի նորոգութեան Ս. Հրեշտակապետի վանաց. և 'ի չանսալ միաբանաց սնոտի պատճառանաց նոցին, ամենասան լինէին առ դատաւորս եւ առ իշխանաւորս, եւ մատնէին զնոսա 'ի տուգանս. թէպէտեւ միաբանք ցուցանէին նոցա զվաւերական գրեանս, զի նոքօք արարեալ էին զամենայն ինչ. այլ 'ի զուր, զի ոչ միայն անլսող լինէին բանից նոցին, այլ և անարգէին իսկ, թէ ոչ են նորոգեալ 'ի նոր Աբքայէ։ Տեսեալ Թէոդորոսի թէ չէ հնար յաղեցուցանել զնոսա եւ զերծանիլ 'ի բռնութեանց եւ 'ի նեղութեանց նոցին, բաղձք կալաւ 'ի Դուռն՝ յայտ արարեալ զտառապանս իւր և իւրոցն 'ի պատճառս նորոգութեանց վանօրէից և կալուածոց. եւ խնդրեաց հրովարտակ՝ ըստ մտաց առաջին հրովարտակաց, յորս բացայայտ ծանուցեալ են վանօրայք եւ կալուածք մինչ յեգիպտոս։ Քննեցան արձանագրութիւնք դիւանին և տուաւ հրովարտակ, սանձել զստահակութիւնս այլազգեաց, զի հակառակ է օրինաց և Կայսերական հրամանին, ՌՌՄ (1760)։

Փոխանորդն Յովհաննէս եպիսկոպոս և Թարգմանն Մարտիրոս՝ առին հրաման Յոսման Փաշա Կուսակալէն Դամասկոսի և նորոգեցին զվանս Ս. Ծննդեան և յատակեցին սալիւ զեկեղեցին Ս. Լուսաւորչի՝ 'ի Ս. Յարութիւն, եւ զտանիս նորա յատակեցին քարամբք։

Զկնիռ այնքան դժուութեանց եւ խռովութեանց, որք ծագեցան յերեսաց Յունաց, 'ի պատճառս Ս. Տեղեաց, անկան վանօրայք քրիստոնէից դառն յաղքատութիւն եւ մատնեցան 'ի տառապանս այլազգեաց, որպէս է տեսանել 'ի նամակին՝ զոր գրեաց ցաւօք սրտի Թէոդորոս Պատրիարք առ ազգայինս Կոստանդինուպոլսոյ, ուր յետ այլոց բանից ասէ. «Արդ՝ լուեալ իսկ է ձեր թէ՝ զի՞նչ եհան 'ի գլուխս երից վանաց յանցելումն ամի կուսակալն Դամասկոսի 'ի գալատեան իւրում ասա, թէպէտ և մեք ծանուցաք ձեզ զամենայնն, այլ հարկադրեցիք զմեզ լռել»։ Իսկ նորս այս լուեալ զգործս նախորդին իւրոյ՝ 'ի ձեռն քսու արանց, և ակնարկեալ 'ի տումար նորին, ծանեալ զոր ինչ գործեալ էր նորա։ Եւ 'ի գալատեան իւրում յե-

ռուսաղէմ՝ ցամաքեցոյց զարիւնս վանականաց և գոսացոյց զոսկերս նոցա։ Հուսկ ուրեմն 'ի միաս եկեալ Յունաց եւ Լատինաց՝ զգաստացան և 'ի բաց թողեալ զթշնամութիւն և զդաւադրութիւն՝ միաբանեցան 'ի մի կամս՝ 'ի նոյն կոչեցին և զՀայս, զի զիտէին իսկ թէ անկարելի է գործել ինչ առանց միաբանութեան երից ազգաց, որոյ վասն ժողովեալ 'ի միասին խորհեցան հնարս գտանել՝ թերեւս զերծանիլ կարասցեն 'ի նեղութենէ ասի։ Զի եթէ քարինք և հող երկրին Աւետեաց դառնային յոսկի և յարծաթ որպէս յաւուրս Սողոմոնի, չէր հնար յագեցուցանել զնոսա։ Զի նոքա իւրաքանչիւր գրեցին գիր ազաչանաց 'ի Դուռն Արքայի և առ ազգայինս իւրեանց 'ի Կոստանդինուպոլիս՝ զի 'ի մի վայր եկեալ ընթերցցին եւ հնարս մարթասցին գտանել վասն հաստատութեան վանօրէիցն Երուսաղէմի, զի սպառնալիք յառաջակայ տարւոյն ստիպէր զնոսա թողուլ զքանել զվանօրայս և փախչիլ 'ի Պաղեստինոյ։ Զի կարելի ասէ՝ մնալ ասա և տպագրիչ լինել պարտամուրհակայ՝ որպէս երբեմն և լինիլ առիթ ապագայ հայհոյանաց։ զի տակաւին չէ զերծեալ մեր 'ի ձեռաց պարտատերց, մանաւանդ դրամ չգտանի 'ի քաղաքիս՝ և մուտք վանացս չէ համապատասխան ելից։

Կուսակալք որք 'ի տարւոջ միանգամ ելանեն շրջիլ 'ի գաւառս, ոչ վասն բարեկարգութեան երկրին, այլ զվանօրայս կեղեքելոյ։ զի տեսին զքրիստոնեայ վանականս խածատիչք և գիշատիչք իրերաց, զի նոքա կարծէին թէ՝ փութով շինանի հրդեհ խռովութեան, այլ այնպիսի վերս բացին, որ չեն այժմ ձեռնհաս պատել և դարմանել զնա։ Երկիրս ազատ է 'ի հարկատուութենէ, և գիւղօրայք՝ ոմանք Ճամարին, ոմանք Թէքիէի, և այլք ջրմլին են Վագրի։ Եւ տարեկան իշխանի երկրիս տահմանեալ է 25 քսակ, և իւրաքանչիւր վանօրայք տան 2379 դահեկան։ Վասն զի բարձին ասի զերկու ձողաւորն, և զգաւառսն արկին ընդ իշխանութեամբ Դամասկոսի, և 'ի գալ նոցա կանխիկ պահանջեն և առնուն եալտըղ ոսկի, և զայն եւս իրրեւ ոչ ինչ և արհամարհեալ յաջս նոցա, տոչորեն զմեզ և գնան, թողեալ ասա տեղապահ ինչ 30 ոգւով, զորոց ծախսն տուժեն երեք վանօրայք 30 քսակ արծաթոյ, և ինքն ոչ կարէ տի-

բել երկրին, զի չունի զօրս, անկարդութիւն բաղում ցաւ և նեղութիւն 'ի վերայ վանօրէից, զի յիւրաքանչիւր ուխտաւորէ ընդ այր և ընդ կին առնու 8½ դահեկան եալտըղ ոսկի, այլ ոչ կարէ տանել և բերել զնոսա 'ի Յոպպէ։ վասն այսր տամք այլոյ ուրուք 3750 դահեկան և 2 դահեկան յ7 դահեկանէ՝ զոր առնու մաքսապետն յիւրաքանչիւր անձէ։ Եւ բնակիչք Բեթղեհէմի թշնամութեամբ յերկուս բաժանեալ՝ արտաքսեցին զմիաբանս երից վանաց, և ինքեանք ամրացան 'ի նոսա։

Եւ յաւուրս Զէթէէի Ապտուլլահ Փաշայի, յորս Յոյնք դժտեալ էին ընդ Լատինս, և քարտուղար քաղաքին ազգաւ Յոյն՝ յաւելեալ էր 'ի տուրս Էսէտ Փաշայի 1000 դահեկան, եւ Լատինք ընկեցեալ էին զայն 'ի պաշտօնէ։ Եւ 'ի գալստեան Զէթէէնոյն յԵրուսաղէմ, լուելեայն տումարս առաքեաց առ նա, եդեալ 'ի վերայ 2000 ոսկի տրոցն Հայոց 3750 դահեկան եւս։ առաւելագոյն բարդեաց և Լատինաց, Յունաց 4 քսակ, զի թեւարկութեամբ նոցին հասեալ էր 'ի պաշտօնն։ Տուրքն Հայոց եհաս 12,100 դահեկան։ զայս արար, մի՝ վասն վրէժխնդրութեան, և երկրորդ՝ յուսով հասանելոյ յառաջին պաշտօն իւր։

Իսկ այժմեան կուսակալն յառաջին գալստեան իւրում յղեաց զոմն առ Հայս թէ՝ Յոյնք տուեալ 1000 ոսկի առին հրաման շինութեան, պարտին եւ Հայք առնել այնպէս, որ և արարին իսկ։ Եւ յերկրորդ գալստեանն վերըստին էառ զնոյն գումար։ և 3000 դահեկան եւս յերից վանաց վարձ ոստիկանաց արձակելոյ 'ի Սիկիմայ պատրաստել վանօրէից զդրամս։ Նոյնպէս էառ և 'ի սոյն ամի, զի զոր սահմանեացն, արկ 'ի կարգս բնական տրոց։ Միայն 'ի Հայոց էառ 15,850 դահեկան, բաց 'ի ջուխայէ մամէ և այլ պէսպէս ընծայից, եւ տակաւին որոնէ հնարս հանելոյ զինչս 'ի նոցանէ։ Եւ յանիշխանութենէ գաւառին, սովորութիւն լեալ է շրջակայ գիւղական Արաբացւոց անկասկած կոտորել զմիմեանս, և աւարել զինչս, և սովորութիւն էր գաւառաց տասանորդել զկապուստս աւարաց նոցին։ Գիւղականք Բեթղեհէմի 'ի գիշերի միում վարեցին 700 այծս 'ի թշնամեաց իւրեանց, և բաժանեցին յիւրեանսն, իսկ քսուք ոմանք արք ապիրատք հասուցին զայն յուն-

կըն Կուսակալին, և յորդորեցին զնա արկանել զվնասն 'ի վերայ վանօրէից. և նորա կոչեալ զԹարգմանն պատուիրեաց նոցա տալ բերել զԲԵԹՂԵՀԷՄցիս վասն խնդրոյ այծից, և 'ի չառնուլ նոցա յանձն, առաքեաց ինքն դրով զզինուորըս ածել զնոսա յԵրուսաղէմ, և նոցա ապստամբեալ ասեն, այս է բնական սովորութիւն մեր. զի թշնամիքն սպանին 'ի մէնջ զարս երիս, և մեք զայս գործեցաք, եւ յորո՞ւմ ժամանակի եկեալ իցեմք 'ի քաղաքն վասն դատաստանի. զոն դատաւորք 'ի միջի մերում, առաջի նոցա դատիմք, և դարձուցին զնոսա ունայն յետս։

Մոմռեալ Կուսակալին սպառնացաւ 'ի դնալ իւրում 'ի Բերրոն՝ կործանել զգիւղն, և ունէր ընդ իւր քարտուղար զոմն ազգաւ Յոյն։ Սորա կոչեալ զԹարգմանս Յունաց եւ Լատինաց սահմէր զնոսա տալ 2000 դահեկանս, առնուլ նաեւ ինչ 'ի Հայոց, և չիջուցանել զբարկութիւն Կուսակալին։ Իսկ նոքա չառին երբէք յանձն լինել միջամուխ յիւրս գիւղականաց։ Եկ Կուսակալն բազմութեամբ զօրաց գնալ 'ի Բերրոն, և ԲԵԹՂԵՀԷՄցիք պատրաստեցան կազմեալ զինուք. 'ի հասանիլ անդր, խաղացին զօրքն 'ի վերայ գեղջ, և գիւղականք դիմագրաւ ելին ընդ առաջ նոցա, և 'ի հարկանել զմիմեանս, 'ի պարտութիւն մատնեցան գիւղականք և փախուցեալ ամրացան 'ի վանօրայս։ Կուսակալն մատնեաց յաւար զգիւղն զօրականաց իւրոց, եւ առաքեաց զմի ոմն 'ի պաշտօնէից իւրոց յԵրուսաղէմ, ածել անտի զփոխանորդս երից վանաց. զի եթէ ոչ կամեսցին դալ, ինքն կործանեսցէ զվանօրայս նոցա։ Առ այս Հայք ետուն պատասխանի. պատիժն սահմանեալ է միայն ստահակաց, չունիմք զոք անդ ընդդիմակաց նմին, և 'ի բաց խորշիմք յապստամբաց, որք յայտնի են ամենեցուն թէ յորմէ ազգէ իցեն։ Եթէ կամք նորա դրամ առնուլ իցէ, այլով եղանակաւ խնդրեսցէ. զի ոչ կամիմք երբէք արատաւորել զմաքուր անուն մեր առաջի Տէրութեան իրրեւ ապստամբ։ Լատինք և Յոյնք խոստացան տալ նմա 20 քսակս դրամաց 'ի հոգալ զբանն. և նորա ելեալ գնաց տարեալ ընդ իւր և ԹԵԹԱՆՕԹ մի. և ըստ հաշուի Լատինաց արձակեալ իցէ 180 ռումբս, ընկեցեալ զերիս քարինս յորմոց վանացն Հայոց, և ծակոտիս բացեալ յաշտարակն

Յունաց, և չարարեալ ինչ Լատինաց, և այսպէս եկաց անդ զաւուրս 5. եւ տեսեալ թէ լուեալ են վանօրայք, առաքեաց յԵրուսաղէմ զփոխանորդն իւր եւ զքաղաքապետն, և նոցա կոչեալ զերիս փոխանորդս, առաջի եդին նոցա զերիս խնդիրս. տալ դիր չրողբելոյ երբէք, յորժամ քակեսցէ Կուսակալն զվանօրայս եւ յաւարն մատնեսցէ զինչս նոցա։ Երկրորդ հանել զՄահմետականս 'ի միջոյ ապստամբ ապաստանելոց 'ի վանօրայս եւ տալ 'ի ձեռս նոցա։ Եւ կամ երթալ երից փոխանորդաց եւ անկանիլ յոտս նորա, զի չնորհեսցէ զյանցանս ընտակարաց։ Եթէ ոչ առնիցէք զմին յերից ատտի, Կուսակալն ոչ ելանէ անտի՝ եւ ոչ եւս առաջնորդել ուխտաւորաց իւրոց, առաքեցին զնոսա յառանձին տեղի ինչ խորհիլ 'ի միասին։ Եւ կոչեալ զԹարգմանս Յունաց և Լատինաց յորդորանօք առաքեցին առ Քարտուղարն Յոյն՝ կանխել նորա առ Կուսակալն և սահմանել զտուժն, և յետ այնորիկ տանել ընդ փոխանորդսն 'ի բանակն աղաչել զնա։ Մինչչեւ հասեալ փոխանորդաց 'ի կէս ճանապարհն՝ դարձոյց զնոսա յետս Քարտուղարն, և պատուիրեաց նոցա գրել 'ի ԲԵԹՂԵՀԷՄ, զի վանօրայք մոմեղինօք լուցելովք երեւեսցին առաջի Կուսակալին, ուր ետուն ասել նմա՝ հաճեալ եմ ընդ Լատինս եւ ընդ Յոյնս, (Թէպէտ նոքա սպանեալ էին 'ի մարտին զչորս թուով այծից). այլ ընդ Հայս՝ ոչ երբէք։ Ապա գլխատեաց զերկուս կալանաւորս՝ և երկուց ոմանց զգեցոյց վերարկու պատուոյ, և եդ հարկս 'ի վերայ գիւղին ԲԵԹՂԵՀԷՄի 45 քսակս արծաթոյ, զի եթէ կուսեսցին միւսանգամ տուժեսցեն։ Եւ 'ի դարձի նորին 'ի Բերրոնէ մինչ կային կանգնեալ քրիստոնեայք 'ի վերայ ճանապարհին, ինքն անցանէր երիվարաւն՝ ասէ ցՓոխանորդն Հայոց լու 'ի լու ամենեցուն, «Մերունի նիստ այդր և լեր լրտես, զի 'ի դարձուցանելն զձեզ Քարտուղարին 'ի կէս ճանապարհէ զերծուցիք զգլուխս ձեր 'ի սրոյ։ Իսկ Յոյն քարտուղարն նախ քան զդառնալ կուսակալին 'ի Բերրոնէ էառ յերից վանաց 70 քսակս արծաթոյ, վասն ապստամբելոց ԲԵԹՂԵՀԷՄի, որ և անկաւ բաժին Հայոց 11,668 դահեկան. և վասն իւր էառ 800 ոսկի. 1 ժամացոյց. 1 մուշտակ. 1 ծըրար ագանելիք. 1 շալ և այլ ինչ. բովանդակ գումարն և-

հաս 31,800 դահեկան. զայս ամենայն գրեալ ծանուցին առ իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս »։ Երկիւղ մեծ էր վասն յառաջակայ տարւոյն, որոյ վասն խնդրէին բաժանել զերկիրն յիշխանութենէ Դամասկոսի, եւ կարգել զերկուս ճողաւորս 20 դրօշակօք 'ի պահպանութիւն երկրին, ապա թէ ոչ՝ անհնարին է ասեն մնալ մեզ ասա. պատրաստեցէք մեզ վասն, այսքանս սակաւուք գրեցաք. զի չէր կարելի զրովանդակն գրել, փակեալ կամք 'ի խուցս և յեկեղեցիս, հաց դառնութեան եւ ջուր արտասուաց, Տէր այց արասցէ, (1760. 'ի 13 Մայիսի)։

Ապա գրեն յառանձին Թղթի զհաշիւ տարեկան տրոց, զոր ետուն Կուսակալին Դամասկոսի, որոյ ամբողջ գումարն է 41,229 դահեկան. Թող զայլս որ 'ի ձեռն Թարգմանին, յորս զարմանալի է հազար ոսկի գումարն ծախք ոստիկանի. զի ստիպէր Բդեչին առաքել զմիաբանս 'ի Բեթղեհէմ, յորմէ փախուցեալ էին. սոքա անկարելի ասէին երթալ անդ յահէ գիւղականաց. ապա ասէ, Թէ երթիցեն և Թէ ոչ, պարտիք հատուցանել զվարձս ոստիկանին, ըստ օրինակի Ցուանց և Լատինաց։

Աղէքսանդր Կաթուղիկոս յառաջ դասեաց զգանձանակն Ս. Էջմիածնի քան զգանձանակն Ս. Երուսաղէմի՝ յեկեղեցիս, զնոյն արարին և Նուիրակունք նորին 'ի տեղիս տեղիս. լուեալ զայսոսիկ Թէոդորոս Պատրիարքի գրեաց առ Յակոբ Պատրիարք և առ իշխանազունս ազգին, տալ բառնալ զայնպիսի նորասահման սովորութիւն, և չլինիլ առեալ զնաստուց Աթոռոյն Երուսաղէմի յայնպիսի դառն ժամանակի. և մի ստիպել կարգել զոք Նուիրակ 'ի կողմանէ Երուսաղէմի, որ չիցէ միաբան նմին. եւ մի ընկալցին զգիրս այլոց և հաւատասցեն նմա, որ չիցէ կնքեալ 'ի Պատրիարքէն և 'ի Խորհրդականաց Երուսաղէմի. զի դժուար խանգարումն Ս. Աթոռոյն յայսպիսի իրաց պատճառի։

Ի սին ամի պատահեցաւ երկրաշարժ և առատութիւն անձրեւաց, յորոց խախտեցան բազում տեղիք վանօրէից, մանաւանդ 'ի Բեթղեհէմ. Հայք առին հրաման յՕսման Փաշա Կուսակալէն Դամասկոսի, և նորոգեցին զպարիսպն և զաստիճանս և զայլ տեղիս Բեթղեհէմի վանաց (1761)։

Թէոդորոս Պատրիարք հասեալ 'ի խոր ծերութիւն, և

ոչարացեալ 'ի դառն վշտաց ժամանակին անկաւ 'ի մահիճս, եւ ոչ կարէր այլ եւս վարել զպաշտօն իշխանութեան իւրոյ. որոյ վասն ժողովեալ զմիաբանս իւր, առաքեաց զվերջին կտակն պատուիրելով զի ամենեցուն աւանդեսցէ զվերջին կտակն նորոգելով նոցա կալ մնալ ընդ միմեանս սիրով եւ խաղաղութեամբ, գործել միաբան խորհրդով և աջակցութեամբ իրերաց 'ի պահպանութիւն ազգային սեփհականութեանց, արթուն կալ ընդդէմ նենգութեան և յափշտակութեան օտարաց։ Եւ ապա խոստովան եղեւ առաջի ամենեցուն թէ՝ ամենայն ինչք և ստացուածք իւր, մինչեւ ցյետին պատմուճան և վերարկու, են սեփհականութիւնք Աթոռոյն, զորս նուիրեալ են բարեպաշտ ազգայինք իբրեւ ողորմութիւն։ Եւ զնին մահուան իւրոյ՝ ոչ ոք յազգականաց եւ 'ի ժառանգաց եւ կամ յայլոց՝ ունի իրաւունս պահանջել 'ի միաբանութենէ և կամ յԱթոռոյն զիրս ինչ մինչեւ ցյետին դանկ մի. զայս ամենայն ետ գրել միաբանաց՝ եւ իբրեւ մուրհակ հաստատեաց կնքով իւրով առաջի բազմութեան։ Եւ յանձն արար զկառավարութիւն Աթոռոյն՝ և զյանձանձանս միաբանութեան ցՅովհաննէս Եպիսկոպոսն Աթոռակալ, եւ պատուիրեաց ամենեցուն ճանաչել զնա հայր և հնազանդիլ իբրեւ զվերոյ իւրեանց, և կամակար յօժարութեամբ աջակցիլ գործոց նորին 'ի չինութիւն եւ 'ի պայծառութիւն Ս. Տանն։ Եւ 'ի վախճանի իւրոյ՝ թաղել զմարմին 'ի վանս Ս. Փրկչի ըստ սովորութեան 'ի կարգս առաջին Պատրիարքաց. և միաբանք հաճութեամբ ընկալան զվերջին կտակ նորին, և միաբան գրեցին 'ի կոստանդինուպօլիս առ Յակոբ Պատրիարք և առ գլխաւորս ազգին, զի հրովարտակաւ Սրբոյն հաստատեսցեն զփոխանորդութիւն Յովհաննէս Եպիսկոպոսի ցընտրութիւն նոր Պատրիարքի՝ և զայլ բանս կտակին։ Եւ զի 'ի նմին ժամանակի կային 'ի մեծի երկիւղի յերեսաց այլազգեաց վասն Թաղելոյ զմարմին Պատրիարքի 'ի վանս Ս. Փրկչի, զի յայսպիսի դէպս պահանջէին նոքա զյոլով դրամս և հաստատեցին բազում չարիս, որոյ վասն խնդրեցին տալ գրել 'ի հրովարտակին՝ չգործել այլազգեաց զսնապատեհս ինչ։ Ի հասանիլ Թղթոյն 'ի Թադաւորական քաղաքն, Յակոբ Պատրիարք ինքնին մատոյց գիր աղաչանաց 'ի Դուռն, և

յայտ Թրար զկամն միաբանաց Ս. Յակոբայ. գրեցաւ հրովարտակ ըստ խնդրանաց նոցին։ Վախճանեցաւ Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի յամի Տեառն 1761. 'ի վերջն Դեկտեմբերի, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ ամս իրրեւ 10։ Եւ միաբանք արարեալ նմա փառաւոր յուղարկաւորութիւն, թաղեցին պատուով 'ի վանս Ս. Փրկչի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Կարապետ վարդապետ Գանձակեցի։ Ժառանգք վախճանեալ միաբանաց։ Հակառակութիւն Յունաց։ Կուսակալն Գանձակոյ։ Ալաղդիք Սիսի։ Նարոդութիւնք վանօրէից։ Վախճան Կարապետ Պատրիարքի։

Զկնի ննջման Թէոդորոս Պատրիարքի Խորենացւոյ, նստաւ յԱթոռն Երուսաղէմի նա ինքն Կարապետ Եպիսկոպոս Գանձակեցի, մին 'ի գլխաւոր միաբանաց Ս. Յակոբայ՝ ըստ Կտակի հանգուցելոյն, որպէս աւանդի 'ի Պատրիարքական Պէրաթն, ՌՌՀ.

Սա ինքն Կարապետ 'ի 18 ամաց հասակին իւրոյ եկեալ էր 'ի քաղաքն Եւդոկիա, ուր հանդիպեաւ 'ի Բրիստոս բարեպաշտ մայր Նորին, և 'ի Նմին ժամանակի Թէոդորոս վարդապետ եկեալ էր անդ 'ի Նուիրակ, եւ Կարապետ ընկերացեալ Նմա՝ եկն յԵրուսաղէմ յաւուրս Գրիգորի Շղթայակրի (1734), ուր սնեալ վարժեցաւ յուսումն աստուածային գրոց, ըստ տանելոյ ժամանակին և ձեռնադրեցաւ վարդապետ, առաքեցաւ 'ի Նուիրակ յԱկն, եւ ապա 'ի կողմանս Ռումելիայ. և մինչ էր 'ի քաղաքն Բիլի՝ լուաւ զմահ Գրիգորի Պատրիարքի, և յաջորդ Նորին Յակոբ Նալեան կացոյց զնա Փոխանորդ 'ի Կոստանդինուպոլիս, ուր վարեաց զպաշտօնն զայն զամս 6։ Եւ 'ի լինիլ գժտութեան և վիճին 'ի մէջ միաբանաց և Թէոդորոս Պատրիարքի, միաբանք ամբաստանեցին զԹէոդորոս առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս, և նոքա առաքեցին զԿարապետ վարդապետ յերուսաղէմ իբր Նազր, ընկերացան սմա և ոմանք 'ի վարդապետաց, և նորա եկեալ դադարեաց զաղմուկն, և նստաւ անդ ամս 3 և ամիս 6. և ապա առաքեցաւ 'ի Նուիրակ յԵւդոկիա, ուր կատարեալ զպաշտօն իւր՝ դարձաւ անտի բարութեամբ եւ եհաս 'ի քաղաքն Ատանայ, ուր լուաւ զմահ Թէոդորոս Պատրիարքի, եւ զկտակ Նորին վասն իւր. ընդ որ հաւանեալ միաբանաց գրեցին հանրագիր բազմակնիք 'ի Կոստանդինուպոլիս։ Յակոբ Պատրիարք և Իշխանաւորք ազգին հանին զՊատրիարքական Պէրաթ Նորին, և ինքն Կարապետ Եպիսկոպոս եհաս յերուսաղէմ զկնի Զատկին, նոյնպէս և նամականիք 'ի կայսերանիստ քաղաքէ 'ի ձեռն Թղթատարի, եւ նստաւ Կարապետ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի. զայսոսիկ քաղեցաք 'ի կենսագրութենէ Նորին՝ զոր ինքն գրեալ է։

Սահակ Կաթուղիկոս Էջմիածնի՝ ԱՀՈՒՆ կոչեցեալ, անկեալ յիշխանութենէ Կաթուղիկոսութեան Նստէր 'ի Կարին, ուր վախճանեցաւ իսկ (1763. 'ի 22 Փետրվարի)։ Իսկ Յակոբ Պատրիարք հանեալ գիր արքունական առաքեաց անդ զՍարգիս վարդապետ իւր բերել առ ինքն զստացուածս Նորին։ Եւ 'ի մեռանիլ մեծի Վէզիրին՝ էանց 'ի տեղի Նորա Նիշանճի Համզա Փաշա, որոյ եղեն վաճառապետք յազգէն Հայոց Ճանպազեան Յարութիւն, Սարգիսեան Մարտիրոս, և այլ ոմն Սարգիս անուն։ Եւ վաճառապետք առաջնոյ Վէզիրին, Պօղոս, Ղազար եւ Ասլան Ամիրայք ըմբռնեալ եդան 'ի բանտի՝ եւ մատնեցան 'ի գանս և 'ի տանջանս. գրաւեցան ինչք և ստացուածք Նոցին յարքունիս, և 'ի վերջոյ Ղազար Ամիրայ կախեցաւ զնայտէ, և երկոքեանն ազատեցան 'ի բանտէ (1763. 'ի 25 Մայիսի)։

Յաւուրս Պատրիարքութեան Կարապետի, յարեան ոմանք յազգականաց վախճանեալ միաբանաց Ս. Յակոբայ և պահանջէին զժառանգութիւնս նոցա, որպէս գրէ փոխանորդ Գրիգոր վարդապետն 'ի Կոստանդինուպոլսոյ։ Իսկ Կարապետ Պատրիարք գրեաց առ նա պատասխանի երկար բանիւք, յորում ձեռն արկեալ կնքեցին ամենայն միաբանք վանաց. զի խնամ կալցի ընդ Պատրիարքին եւ ընդ գլխաւորս ազգին, խափանել զայդպիսի սնոտի և վը-

նամակար խնդիրս յաջողկոտաց, որ հակառակ է եկեղեցական և վանական օրինաց, մանաւանդ Կայսերական հրովարտակին շնորհեալ Պատրիարքաց։ Զմտաւ ածցեն այնպիսիքն, թէ աղդականք նոցին 'ի դալատեան իւրեանց 'ի վանս զի՞նչ բերին, և այժմ զի՞նչ խնդրեն։ Ապա սոսկալի զնա փոյթ տանել խափանել զայնպիսի անհեդեդ խնդիրս նոցա հրամանաւ Արքայի և առնուլ հրովարտակ, զի մի՛ զկնի մահուան միաբանաց աղդականք նոցին կողոպտիչ լիցին վանաց (1763)։

Սակաւ ինչ դժուարութիւն միաբանաց Ս. Յարութեան ընդ Լատինս սակս կանթեղ լուանալոյ տեղւոյն. այլ Փաւլոյ տեսուչ նոցին փութով զիջաւ ընդ խոհեմ բանս Կարապետ Պատրիարքի, և եղեւ խաղաղութիւն։

Ի դալատեան Կուսակալին Դամասկոսի ըստ սովորութեան յԵրուսաղէմ, և առնոյ զասիմանեալ տուրս 'ի վանօրէից թէ յայտնի և թէ դաղտնի, Ապա 'ի դրդմանէ ուրումն դնաց 'ի Սիոն յուխտ, և 'ի դարձին իւրում եկեալ նստաւ 'ի պարտէզն Հայոց, և կոչեալ առ ինքն զերկուս յայլազգեաց քաղաքին եհարց ցնոսա վասն Փրկչի վանաց. թէ զի՞նչ իցէ անհեդեդ չինուածն այն, և նոքա ասեն թէ վանք է Հայոց. Ցոյնք և Լատինք ունի՞ն բաժին ինչ 'ի տանէ, նոքա ասեն, ոչ, միայն սեփականութիւն է Հայոց։ Հի՞նդ է չինուածն թէ նոր. ասեն, որպէս տեսեալ եմք 'ի սկզբանէ այսր, նոյն է։ Շինուածն կարի բարձր է քան զպարիսպ քաղաքին և քան զՍիոն։ Ապա յարուցեալ անտի դնաց յիջեւանս իւր, և առաքեալ զտանս խնդրեաց 'ի Հայոց զհրովարտակ Վանաց, եւ Կարապետ Պատրիարք յղեաց առ նա զպատճէն հրովարտակին Սէլիմայ. և նորա կոչեալ զայլազգիս Սիոնի ընթերցաւ զայն առաջի նոցա, ապա եհարց ցնոսա, դուք եւս այսպէս գիտէ՞ք, նոքա ետուն պատասխանի. մանաւանդ Սաչագլի կոչեցեալն, թէ եմ 'ի հասակի 70 ամաց եւ 'ի Սիոն ծնայ, այսպիսի տեսի զվանքն։ Լուեալ զայսոսիկ Կուսակալին դարձոյց վերստին զհրովարտակն առ Պատրիարքն առանց ասելոյ ինչ։ Եւ 'ի չուելն իւրում դնացին առ նա Փոխանորդք երից վանաց յուղարկել զնա. յայնժամ բանս արկեալ ասէ ցՓոխանորդն Հայոց թէ յինէն վչտացեալ էք, իբր թէ

զպակասորդ տրոց նախընթաց տարւոյն, պատճառանօք վանաց կամիմ ընուլ. ոչ այդպէս՝ գիտէ տէր զի չէնքն այն կարի անհեդեդ թուեցաւ ինձ, որոյ վասն խնդրեցի ըզդիրն, տեսանել թէ ո՞րպիսի ինչ իցէ։ Ապա դարձուցեալ զբանս իւր ցերիս Փոխանորդս ասէրսէ 'ի նոցանէ չգրել դանկատանս զնմանէ 'ի Դուռն. զի նախընթաց ամին Լատինք կամ դեսպանն Գաղղիոյ դանկատեալ, և 'ի քննութեան պահու արկին զայն 'ի վերայ Հայոց, և ստատեալ վարեցին զփոխանորդ նոցին յատենէ անտի. զնոյն արարին եւ փոխանորդին Լատինաց, գգուելով զՑոյնս իբրեւ դոհ զինքենէ։ Ցետ այսր ամենայնի Ցոյնք կրկին հրաման առին նորոգել զՊատանատեղին և զԳողգոթայ, եւ սալել զտանիս Ս. Եղիայի վանաց, 'ի ճանապարհին Բեթղեհէմի, և դտին համարձակութիւն 'ի քաղաքին և անխնայ վատնէին զդանձս իւրեանց 'ի վնաս Հայոց, յորոյ վերայ զարմացեալ էին Լատինք, (1764. 'ի 1 Յունվարի)։

Միաբանք Յունաց իբրու թէ հանդարտեալ երեւէին ժամանակս ինչ, ահա դարձեալ սկսան խլրտիլ. զի ամբաստանեցին զՀայս առ դատաւորն. իբրեւ թէ դերեզմանն Ս. Աստուածածնի 'ի սկզբանէ անտի լեալ իցէ 'ի ձեռս Յունաց, իսկ Հայք օգնութիւն գտեալ 'ի Լատինաց և զօրութեամբ դրամոց և հրովարտակին դրաւեցին զեկեղեցին զայն. նոյնպէս և 'ի մեծ եկեղեցին Բեթղեհէմի կախեցին կանթեղս և զայլ զարդս, որով նեղեն զՑոյնս. զի յառաջագոյն Սուլթան Մահմուտ Արքայ տուեալ էր զնոսա Յունաց, և Հայք միայն հրաման ունէին երթալ յուխտ 'ի տարւոջ մի կամ զաւուրս երկու։ Խնդրեմք այժմ զի ողորմեսցի Արքայ շնորհել մեզ հրովարտակ 'ի բառնալ 'ի տեղեացն այնոցիկ զկանթեղս եւ զարդս, զորս եդին Հայք։ Իսկ դատաւորն առանց ունկն դնելոյ դրոց և բանիցն Հայոց, դրեաց 'ի Դուռն զոր միանգամ յայտ արարին Ցոյնք։ Այլ իբրեւ իրազդաց եղեւ Կարապետ Պատրիարք, կոչեաց զդատաւորն 'ի գիշերի 'ի վանս, եւ ետ ընթերնուլ նմա զհին և զնոր հրովարտակս. եւ իբրեւ 'ի միտ առ զսխալանս իւր, ասէ. թէ Ցոյնք խաբեցին զիս և առին զայնպիսի գիր 'ի ձեռաց իմոց. ապա գրեաց զերկուս գիրս, մին թէ Ցոյնք խաբէյութեամբ առեալ են

զգիրն զայն, յելանել նորա յատեան մի լեցի ընդունելի, և միւսն վասն իրաւանցն Հայոց. զայսսոսիկ գրեանս առաքեաց Կարապետ Պատրիարքն՝ 'ի Կոստանդինուպոլիս առ Գրիգոր վարդապետ խոսիլ ընդ Յոյնս. զի պատուիրեսցեն իւրոցն չառնել զայսպիսի խաբէութիւն, (1764)։

Այլազգիք Սիոնի վերսին նորոգեցին զվէճս իւրեանց, զոր յառաջագոյն խափանեալ էին Հայք. քանզի եկեալ խնդրէին ջուր 'ի վանաց Ս. Փրկչի, զորոյ զմնասն կրեալ էին միաբանք բազում անգամ. այլ իբրեւ ոչ կարաց ողոքել զմիտս նոցա թարգմանն; ազգ արար դատաւորի քաղաքին. կոչեցան յատեան մեծամեծք Սիոնի, և 'ի հարցանել դատաւորին վասն այսր՝ ետուն պատասխանի և ասեն, եթէ պակասեսցի 'ի մեզ ջուր, ունիմք սովորութիւն առնուլ զայն 'ի վանաց Ս. Փրկչի, եւ եթէ Հայք ոչ կամին տալ, հատուսցեն մեզ 18 դահեկան, զի գնեսցուք ջուր յաղբերէն Սելավամայ. մերժեաց թարգմանն զխնդիր նոցա, թէ ոչ ունիմք զայդպիսի սովորութիւն, ոչ ջուր տալոյ և ոչ դրամ, և առաջի արար նոցա զհրովարտակն \\\է. և ընթերցեալ զայն դատաւորին, մերժեաց զնոսա յերեսաց իւրոց, և պատուիրեաց նոցա մի եւս պահանջել 'ի վանաց անտի ոչ ջուր և ոչ դրամ, զի հակառակ էր Կայսերական հրամանին։

Վախճանեցաւ Յակոբ Պատրիարք Նալեան 'ի Կոստանդինուպոլիս 1764 'ի 20 Յուլիսի, և թաղեցաւ 'ի գերեզմանատունն Հայոց 'ի Պէյօղլու կոչեցեալ տեղին։

Իսկ ինքն Կարապետ Պատրիարք հրամանաւ Օսման Փաշա կուսակալին Դամասկոսի չինեալ աւարտեաց զ16 սենեակս 'ի մէջ վանաց Ս. Յակոբայ, 'ի պէտս բնակութեան ուխտաւորաց, և ետ յատակել քարամբք զտանիս եկեղեցեաց Ս. Յակոբայ, ուր եղեալ է ինքնին ձեռամբ իւրով զյիշատակարանն. Ս. Հրեշտակապետի, Ս. Փրկչի, վերնատան և Լուսաւորիչ եկեղեցւոյ 'ի տաճարին Ս. Յարութեան, և վանաց Բեթղեհէմի, և զայլ կարեւոր նորոգութիւնս յիւրաքանչիւր տեղիս։ Ի տանիս վերնատան Ս. Յարութեան եդ արձանագիր Հայերի տառիւք, այլ յետ ժամանակաց Յոյնք անհետ արարին զայն անտի։ Սակայն 'ի միջոցի աստ կրեաց բազում նեղութիւնս եւ տուգանս

մինչեւ անկանիլ ընդ պարսիւք՝ յերեսաց քաղաքապետին և այլազգեացն Երուսաղէմի։ Եւ յետ կատարելոյ զչինուածսն գրեալ ազգ արար միաբանակցովք իւրովք առ ազգայինս 'ի Կոստանդինուպոլիս, սակայն Ս. Յովհաննէս և Ս. Փրկիչ եկեղեցիքն ոչ նորոգեցան, զի ոչ էին գրեալ 'ի գրի Կուսակալին, որոյ վասն ոչ ետուն թոյլ։ Նորոգեցին և յատակեցին նաեւ Յոյնք և Լատինք զեկեղեցիս և զվանորայս իւրեանց, որք մնասեալ էին յերկրաշարժէ, նոյնպէս և այլազգիք զմզկիթս իւրեանց։

Կարապետ Պատրիարք զկնի Պասեքին առաքեաց ընդ ուխտաւորս 'ի Կոստանդինուպոլիս զՅովակիմ վարդապետ իր Փոխանորդ Աթոռոյն, եւ նորա կրեալ զնեղութիւնս 'ի ծովային ճանապարհորդութեան, եհաս անվնաս 'ի թագաւորեալ քաղաքն, և մատոյց զգրեանս Պատրիարքին և իշխանաւորաց ազգին։ Գժտմնեցաւ Պատրիարքն ընդ Կարապետ սակս չկատարելոյ զխնդիր իւր, զոր գրեալ էր առ նա յառաջագոյն գիտութեամբ իշխանաւորաց, և յետ աւուրց ինչ ժողովեցան 'ի Նոր Խան 'ի սենեակ Սիմոն Ամիրայի, կոչեցին անդ և զՅովակիմ վարդապետ, ուր բազմօք մեղադրեցին զՊատրիարքն Երուսաղէմի վասն ինչ ինչ խնդրոց, եւ զկնիք նորին վասն արգի՝ որ մնայր առ Պատրիարքին, առեալ ետուն ցՅովակիմ վարդապետ, եւ զՊատրիարքն Երուսաղէմի իբրեւ ստորադրեալ և կամ իբր Փոխանորդ Պատրիարքին Կոստանդինուպոլսոյ անուանեցին (1765. 'ի 28 Օգոստոս)։

Ի սմին ժամանակի 4 գլխաւոր սեղանաւորք յազգէ Հայոց գլխաւեցան յԱկռ, հրամանաւ Մուստաֆա Արքայի, ըստ բողոքելոյ որդւոց Նագիպ էլ Աշրաֆի, որպէս թէ առանց քննութեան, ոչ լեալ իցեն պատճառ տարապարտ մահուան հօր իւրեանց, (1766)։

Կարապետ Պատրիարք հասեալ յալիս ծերութեան հանգեաւ 'ի Քրիստոս (1768), 'ի 24 Յունվար ամսոյ, և մարմին նորա թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց Աթոռոյն, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեանն ամս իբր 6։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Պատրիարքութիւն Պօղոսի։ Կենսագրութիւն նորին։ Ապա Տահատ։ Պատրաստ Յոպպէի։ Սավ։ Մահ Պօղոսի։ Ընտրութիւն Յակոբի վարդապետի։ Վէճ ընդ Լատինաց վասն դերեզմանատան որ ի Սիոն։

Զկնի վախճանի Կարապետ Եպիսկոպոսի Գանձակեցւոյ, ընտրեցաւ 'ի նմին ամի յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի Պօղոս եպիսկոպոս Վանային, մին 'ի գլխաւոր միաբանաց Աթոռոյն, և հաստատեցաւ իշխանութիւն նորա Արքունի հրովարտակաւ. ՌՌՍՍ (1768) 'ի 12 Ապրիլի. ժամանակ նեղութեան և չարչարանաց Յոպպէի առ Ապա Տահատիւ և Ալի Պէկիւ։

Զկենսագրութիւն Պօղոսի քաղեմք 'ի ձեռագրէ, զոր ինքն գրեալէ։ Սա էր 'ի Վասպուրական աշխարհէ և 'ի քաղաքէն Վանայ, անուն հօրն Մարգարա, և մօրն Փերուզայ. 'ի 6 ամեայ հասակին մեռաւ մայրն։ Եւ Հայր նորին եկեալ էր յԵրուսաղէմ յաւուրս Շղթայակրի եւ յարեալ 'ի սէր տնօրինական Ս. Տեղեաց, և ապա դարձեալ յաշխարհ իւր, և յետ ամաց ինչ եկն յԵրուսաղէմ ընդ բազմութեան ուխտաւորաց, եւ 'ի ճանապարհին ընկղմեցան բեռինք ուխտաւորաց 'ի դեռն Եփրատ և ոմանք վնասեցան խակ. Եւ ապա դիմեալ 'ի Բերիա 'ի Դամասկոս, հասին յԵրուսաղէմ, որք էին ուխտաւորք թուով անձինք իբրեւ 700. 'ի սոյն կարաւանի էր և Առաջնորդ Ս. Կարապետի Գլակայ վանայ, Աբրահամ եպիսկոպոս, որ էր եղբօր որդի Գրիգորի Պատրիարքի և աշակերտ նորին, որ և նստաւ յետոյ Կաթուղիկոս Հայոց յԷջմիածին. Պալատցի Յակոբ վարդապետ, և Գաբրիել վարդապետ որ եղեւ առաջնորդ Պրուսայու, և այլ երեք վարդապետք. խակ բազմութիւն ուխտաւորաց զարդարեալ էին 'ի զէնս և 'ի զարդս երիվարօք և հեծելովք, որոց ընկերացաւ և Կուսակալն Դամասկոսի Իսմայիլ Փաշայ՝ թողեալ զքօրս իւր 'ի Նային։ Եւ եղեւ 'ի հասանիլ սոցա յԵրուսաղէմ, Գրիգոր Պատրիարք միջնորդութեամբ Աբրահամ եպիսկոպոսի հաղիւ ուրեմն զիջաւ

ընդունել զՊօղոս եւ զհայր նորա 'ի կարգս միաբանաց. զի յայնմ ժամանակի չէր օրէն ընդունիլ զմանկահասակս 'ի միաբան. հայրն եղեւ պարտիզպան և երբեմն ժամակոչ 'ի Հրեշտակապետ, և մանուկն եռուն առ տեսուչն Հրեշտակապետի Մարտիրոս վարդապետ. զկնի չորից ամաց հօրեղբայր Պօղոսի առեալ զմանուկն դարձաւ 'ի Վան, իսկ նորա չկարացեալ մնալ անդ՝ վերստին դարձաւ յԵրուսաղէմ (1734)։ Եւ 'ի սմին ամի եկին յԵրուսաղէմ Յակոբ վարդապետ Նալեան՝ աշակերտ Յովհաննու Կոլոտի, եւ Կեսարացի դիտնական Յովհաննէս վարդապետն, և Պօղոս կոյր 'ի սպաս ծառայութեան Ս. Տեղեաց. ապա ձեռնադրեցաւ Սարկաւագ՝ եւ զկնի չորից ամաց Վարդապետ և Ժամասաց ձախակողմեան դասուն, հրաւիրակ ուխտաւորաց, վերատեսուչ գրատան, օգնական փակակալ Աստուածատուր վարդապետի. ապա Նուիրակ 'ի Վան (1744), և դարձաւ անտի յետ չորից ամաց. և զկնի մահուան Գրիգորի Պատրիարքի գնաց հրաւիրակ ուխտաւորաց 'ի Կոստանդինուպօլիս, և 'ի դարձին իւրում Յակոբ Պատրիարք առաքեաց Նուիրակ յԵդեսիա, և անտի գնաց յԷջմիածին հրաւիրմամբ Մինաս Կաթուղիկոսի, և ձեռնադրեալ 'ի Նը-մանէ Եպիսկոպոս եկն յԵրուսաղէմ յաւուրս Թէոդորոսի, և նա առաքեաց զնա Նուիրակ 'ի Դրիմ և 'ի Բուսմելի, և կատարեալ զայն պաշտօն դարձաւ յԵրուսաղէմ. և յետ միոյ տարւոյ գնաց 'ի Զմիւռնիա, և 'ի քաղաքին Նիկոմիդեայ լուաւ զմահ Թէոդորոս Պատրիարքի, ուր աւարտեալ ընդգործս իւր՝ դարձաւ յԱթոռն 9 վարդապետօք, եւ եղեւ դարպասընկալ (1762). եւ վարեաց զայն պաշտօն ամս 6. և յետ վախճանի Կարապետի՝ ընտրեցաւ Պատրիարք Աթոռոյն, և կարգեաց զԵդեսիացի Մարգիս վարդապետ Ֆէրմանեան դարպասընկալ և փոխանորդ, և ապա սկսանի գրել զարդիւնս Ս. Աթոռոյն։

Վասն պատերազմին Ռուսաց ընդ Օսմանցիս՝ փակեցաւ նեղուցն Կոստանդինուպօլսոյ, ուստի ոչ նաւ, ոչ ուխտաւոր և ոչ օգնութիւն եհաս յԵրուսաղէմ. 'ի սմին ամի գտան ուխտաւորք միայն անձինք իբրեւ 300։ Եւ 18 նաւ Օսմանցւոց այրեցան մերձ 'ի Զէյտէլի, Եգիպտացիք գիմէին 'ի Պաղեստին, յորմէ երկիւղ բնակչաց՝ թէպէտ ե-

բուսաղէմ էր ընդ Իշխանութեամբ Օսմանացւոյ (1770)։ Ալի Պէկ Եգիպտոսի էկն բազմութեամբ զօրաց 'ի Պաղեստին, եհաս առ նա յօգնութիւն Շէյխ Դահա Օմար յԱքքէ քաղաքէ, և պատերազմեալ առին զԳազա և զՌեմլէ եւ զԼիւդիա։ Կողոպտեցին զվանօրայս և 'ի սուր հանին զվանականս ընդ քրիստոնէից։ Եւ ապա եկեալ պաշարեցին զքաղաքն Յոպպէացւոց, որ և տեւեաց ամիս 7, և անկաւ սով 'ի քաղաքին՝ եւ բաղումք 'ի բնակչաց մեռան, և 'ի նահանգէն Երուսաղէմի գաղտնի տանէին զպաշար և կերակուր 'ի բանակն։ և 'ի սատոկանալ սովուն՝ բաղումք մեռան 'ի դիւղականաց և 'ի քաղաքէն։ Ալի Պէկ սատակացոյց զպատերազմն Յոպպէ քաղաքի անընդհատ զաւուրս 5։ 'ի պարտութիւն մատնեցան Յոպպէացիք, և արկեալ թաշկինակս 'ի պարանոցս իւրեանց չոքան և անկան յոտս Ալի Պէկին, և նա յաղթանակաւ եմուտ 'ի ներքս, և յաւարի առեալ կողոպտեաց զվանօրայս երից ազգաց (1772 'ի 6 Փետրվար ամսոյ)։ Իսկ Պօղոս Պատրիարքք 'ի կարօտութեան և 'ի նուազութեան ժամանակի կերակրեաց զուխտաւորս և զՀայ ազգի ժողովուրդն Երուսաղէմի, նաեւ զաղքատս և զկարօտեալս։ Ի սմին ժամանակի նստաւ Փաշա յԵրուսաղէմ, զի յառաջագոյն Միւսէլիմ էր։ Եղեւ հաշտութիւն Ռուսաց ընդ Օսմանցիս (1773։ Յունիս)։ բայց ծովն դեռ պաշարեալ էր, ուստի ոչ կարաց գալ նաւ ուխտաւորաց։

Աւանդէ նաեւ 'ի յիշատակարանս ձեռագիր Մատենից Կոստանդինուպօլսեցի Մարկաւագ Գալուստ՝ որ եկեալ էր յուխտ յԵրուսաղէմ, եւ ականատես լեալ գործոց Ապու-Տահապի։ Եգիպտացի Ապու Տահապն յարձակեցաւ 'ի վերայ Յոպպէյու 1775։ 97 Մայիսի յաւուր տօնի Երեւման Ս։ Խաչի, և մտեալ 'ի քաղաքն 'ի սուր մաշեաց զինակիչս նորա և ապա գիմեաց 'ի վերայ երից վանօրէից անդ՝ Հայոց, Յունաց և Լատինաց, և առհասարակ ուր եդեալ կոտորեաց զմիաբանս և զկրօնաւորս և զայլս զորս եգիտ անդ, և մերկացուցեալ զվանօրայս եւ անտի։ Աւանդութիւն է ծերունեաց քաղաքին, թէ Մինաս վարդապետ Հայոց 'ի պատարագելն գլխատեցաւ առաջի Սեղանոյն՝ ուր զՍեղանն կործանեցին, և տեսուչն թէպէտեւ էջ 'ի ջրհորն՝ այլ ոչ զերծաւ 'ի մահուանէ՝ զի անդ հարեալ սպանին զնա։ Եւ

ինքն Ապու Տահապ ըստ ասելոյ սմանց՝ զկնի 10 աւուրց սատակի անդ 'ի Յոպպէ։ Եւ 'ի ձեռագիրս ինչ ասի թէ՝ զորքն Եգիպտացւոց զՅոպպէ և զՌեմլէ աւարեցին՝ զ6 միաբան և զ6 ուխտաւորս արտաքոյ Յոպպէյու գտեալ նահատակեցին։

Պօղոս եպիսկոպոս չհանդուրժեալ վշտաց և դառնութեանց ժամանակին հանդեաւ 'ի Քրիստոս, որպէս գրի 'ի տապանաքարի իւրում, թուն ինչ ցաւօք խիթացեալ (1775 'ի 18 Մայիսի), և թաղեցաւ 'ի նմին աւուր 'ի վանս Ս։ Փրկչի։

Միաբանք վանաց Ս։ Յակոբայ դրեալ ծանուցին 'ի Կոստանդինուպօլիս զմահ Պօղոս Պատրիարքի առ Զաքարիայ Պատրիարք և առ գլխաւորս ազգին, եւ առ փոխանորդն Երուսաղէմի Յովակիմ եպիսկոպոս՝ յանձն առնելով 'ի կամս նոցա զընտրութիւն նորոյ Պատրիարքի։ Եւ 'ի լինել ազգային ժողովոյ ընտրեցաւ Պատրիարք Աթոռոյն նա ինքն Յովակիմ եպիսկոպոս Բանաբերացի թեւարկութեամբ Զաքարիայ Պատրիարքի Կաղզվանցւոյ 1775, յամսեանն Օգոստոսի, և հաստատեցաւ իշխանութիւն նորա Կայսերական հրովարտակաւ ՌՌՁ։ Յետ այնորիկ Յովակիմ եպիսկոպոս կարդեաց անդ 'ի տեղի իւր փոխանորդ Երուսաղէմի զՄարգիս անուն ոմն յանձանձել զամենայն գործս Աթոռոյն, որ և կատարեաց նա զայն պաշտօն ժրաջան աշխատութեամբ մինչեւ ցաւուրս Պետրոս Պատրիարքի։ Ապա 'ի կարգի եդեալ զգործս իւր եկ Յովակիմ 'ի կայսերանիստ քաղաքն անտի և եկն յԵրուսաղէմ, եւ միաբանք սիրով և ուրախութեամբ ընկալեալ զայն նստուցին յԱթոռ Պատրիարքութեան 'ի 5 Հոկտեմբերի։ ապա գրեցին պատասխանի գրոց ազգային երեւելեաց եւ առ Պատրիարքն յայտ առնելով 'ի նմին զգոհունակութիւնս իւրեանց, եւ ըստ պատուիրելոյ նոցին խոստացան հնազանդիլ Յովակիմայ իբրեւ գլխոց իւրեանց, և անտրտունջ աշխատիլ յամենայն գործս 'ի պայծառութիւն Աթոռոյն։ Այս գիր ձեռնարկեալ կնքեցին բոլոր միաբանք (1775։ 'ի 24 Նոյեմբերի)։

Իսկ և իսկ յառաջին ամի Պատրիարքութեան Յովակիմայ յարեաւ վէճ անդարմանելի։ քանզի Լատին կղերք

հանապազ երկնէին 'ի միտս իւրեանց յափշտակել զմի մասն գերեզմանատան Հայոց, և խառնել 'ի բաժինս իւրեանց, սակայն սպասէին դիպող առթի և ժամանակի արդիւնաւորել զիսորհուրդս իւրեանց։ Եւ զի յառաջագոյն որսացեալ էին 'ի կողմն իւրեանց զդատաւորն եւ զայլազգիս քաղաքին եւ հնարիւք առեալ 'ի նոցանէ մուրհակս, որպէս թէ փոխանորդն Հայոց զմի մասն գերեզմանատան, (յերկայն · յարեւելից յարեւմուտս 65 · և 'ի լայն · 'ի հարաւոյ 'ի հիւսիս 37 կանգուն) օրինօք դատարանի վաճառեալ իցէ Լատինաց 'ի թուին Հիճրեթի ١٠٦٩։ Զայսմանէ ոչ ինչ տեղեկութիւն ունէին Հայք։ Եւ 'ի ժամանակիս յայսմիկ յետ մերժելոյ երից Փոխանորդաց զամբաստանութիւնս այլազգեաց Սիոնի սակս բովանդակ գերեզմանատանց, Փոխանորդն Լատինաց չոքաւ առ դատաւորն, և մատուցեալ նմա զմուրհակն զայն, խնդրեաց 'ի նմանէ հրաման չինել զորմն շուրջանակի թզաչափ, և որոշել ըստահմանս տեղւոյն ըստ չափոյ կանդնոց զոր գրեցաք ըստ ցուցանելոյ մուրհակին։ Եւ 'ի հրամայել դատաւորին, ըստկիզբն արար փորելոյ զհիմունս · տեսեալ զայս Փոխանորդին եւ ժողովրդոցն Հայոց՝ դիմեցին բազմութեամբ առ դատաւորն, և ամբաստան եղեն զյափշտակութենէ Լատինաց։ Դատաւորն յետ քննելոյ եւ իմանալոյ զխնդիրն՝ արգել զփոխանորդն Լատինաց 'ի գործոյ, զի տեղին չէր ինքեանց, և պատուիրեաց իւրաքանչիւրոց չելանել արտաքս քան զահմանն։ Լատինք ոչ բանից դատաւորին ունացին, և ոչ 'ի գործոյ անտի յետս կասեցան։ Հայք վերըստին բողոքեցին, եւ յայտ արարին թէ նախնիք իւրեանց թաղեալ կան անդ, և չէ հնար զայն տեղի մատնել 'ի ձեռս օտարաց · դատաւորն բազմութեամբ այլազգեաց 'ի քննութիւն եկ տեղւոյն, յորում եւտես զբազում գերեզմանս Հայոց · և 'ի հարցանել ցայլազգիսն, նոքա ասեն թէ Հայք թաղեալ են զմեռեալս իւրեանց, որպէս յայտնի երեւին տապանաքարքն։ Դարձ արարեալ անտի դատաւորին գրեաց 'ի Դուռն, և ըստ թախանձելոյ Հայոց խնդրեաց հրովարտակաւ բառնալ զընդդիմութիւնս Լատինաց։ Զկնի աւուրց կուսակալն Դամասկոսի Ազիմ Զատէ Մէհէմմէտ Փաշա եկ 'ի շրջիլ 'ի գաւառն ըստ սովորութեան և

եկեալ բանակեցաւ մերձ յԵրուսաղէմ · դիմեցին առ նա Լատինք մեծամեծ պատարագօք և որսացին զնա 'ի կողմն իւրեանց։ Եւ 'ի լինել անդ ժողովոյ՝ մատուցին զմուրհակն գերեզմանատան եւ յեցեալ յիմաստս նորա պնդէին թէ՝ տեղին սեփականութիւն է Լատինաց։

Իսկ կուսակալն կամելով չնորհս առնել Լատինաց, ոչ ընկալաւ զՀայս մարդասիրութեամբ եւ ոչ ունկն մատոյց բանից նոցա։ Եւ այս եղեւ բովանդակութիւն բանից նորա, «Առ այժմ գրաւեսցեն Լատինք զտեղին, և յաղագս սահմանաց նորին գրեսցի մուրհակ», զայս ասաց և ցրուեաց զժողովն։ Լատինք դարձ արարեալ անտի դիմեցին բազմութեամբ ժողովրդոց եւ միաբանաց 'ի գերեզմանատուն անդր փայտատ և բրիչ և զայլ գործիս 'ի ձեռին, և տապալեալ խորտակեցին զտապանաքարս գրոշմեալս հայկական տառիւք, աւելի քան զերեք հարիւր, եւ պեղեցին զհող տեղւոյն, և զոսկերս մեռելոցն արկին կոխան ոտից, և եղեւ աղմուկ և խռովութիւն մեծ, և այսպիսի բռնութեամբ չինեալ հաստատեցին զահմանն զայն զոր կամէին։ Ողբային ժողովուրդք Հայոց արք և կանայք՝ զի կորուսին զգերեզմանն ազգատոհմի իւրեանց և դառն արտասուօք դիմեցին առ Կուսակալն, և մատուցին առ նա գիր աղաչանաց, յորում աղաչէին չզրկել զինքեանս 'ի գերեզմանաց նախնեաց իւրեանց · վկայ կոչէին զրովանդակ այլազգիս Երուսաղէմի, և զքարինս հայկական տառիւք դրոշմեալ, յորոց ներքոյ հանգչէին մարմինք հարց, մարց, եղբարց, որդւոց և ազգականաց նոցին, զորս անխնայ խորտակեցին և զտեղին յափշտակեցին՝ այլովքն հանդերձ։ Սակայն կուսակալն ոչ զգերս նոցա ընթերցաւ և ոչ բանից նոցա ունկն մատոյց, այլ հրամայեաց վարել զնոսա անտի բռնութեամբ։ Թէպէտ նա ինքն յառաջագոյն ըստ աղաչանաց Հայոց 'ի Դամասկոսէ գրեալ էր առ դատաւորս Երուսաղէմի, զի մի թոյլ տացեն Լատինաց բռնանալ 'ի վերայ Հայոց։ Յետ այսր ամենայնի վերստին դիմեցին Հայք առ դատաւորն, և աղաչանս արկեալ պաղատէին առ նա գրել 'ի Դուռն զամենայն չարիս զոր անցուցին Լատինք ընդ Հայս, և նա յանձն առեալ գրեաց զամենայնն, ուր յետ այլոց բանից ասէ՝ գերեզմանատանց Սիոնի տիրեալ են Հայք ըստ զորու-

թեան հրովարտակաց Սէլիմայ և Սիւլէյմանայ, 'ի հիւսիսոյ Սիոնի՝ վանք Ս. Փրկչի, յարեւմտից կուսակ գերեզմանատունք Հայոց։

Իսկ յորժամ Շէյխ Ահմէտ Տէճէնի Արքունի հրովարտակաւ թափեաց զաղարտին իւր 'ի ձեռաց Լատինաց եւ վանեաց զնոսա անտի, յայնժամ Լատինք՝ որք կարի նուազ էին թուով՝ հրամանաւ ազգին Հայոց թաղէին զմեռեալս իւրեանց 'ի գերեզմանատունս նոցա։ Ի հոլովիլ ամաց և 'ի նորոգել ժամանակաց՝ տենչանք բաղմանալոյ հրապուրեաց զնոսա ընչիւք և հարստութեամբ վրդովել զմիտս հպատակ ժողովրդոց, և ապէսպէս հնարիւք բաժանեալ և օտարացուցեալ զմի մասն ժողովրդոցն Հայոց, մուծին զնոսա 'ի կրօնս իւրեանց, (զայս բան ակնարկէ 'ի դէպս որ պատահեցաւ յաւուրս Յովակիմայ, զի ոմանք 'ի ժողովրդոցն Հայոց 'ի պատճառս չնչին իրաց գժտեալ ընդ միմեանս՝ թողին զՀայրենի զեկեղեցին իւրեանց, և դիմեցին 'ի գիրկս Լատինաց որդւովք և ընտանեօք, և ընկալեալ զկրօնս նոցա մնացին անդ՝ որոց որդիք եւ թոռունք մինչեւ ցայսօր յիշատակին հայկական անուամբ հարց իւրեանց, և ինքեանք յայտնապէս վկայեն, թէ են յազգէ Հայոց), եւ այսպէս օր քան զօր զօրացեալ բազմացան 'ի քաղաքի աստ և զգեցան զշքութիւն։ Եւ բաց 'ի տեղւոջէն յայնմանէ, բռնաբարեն զայլ մի մասն գերեզմանատան, զոր Հայք կալուածական օրինօք սեփականեալ են. սակայն չէ յայտ թէ յայնմ ժամանակի որպիսի եղանակաւ հանեալ են դիր Լատինք 'ի դատարանէ։ Եւ զի զօրացուսցեն զմուրհակն եւ համարձակ հաստատեսցեն զիրաւունս իւրեանց, յարուցին վէճս յանիրաւի ընդ որդւոց Ահմէտ Տէճէնեայ ՌՈՒԱ։ Եւ զկնի խռովութեանն այնորիկ տեղւոյն այնորիկ, որ առիթ եղեւ թշնամութեան, քարամբ և կրիւ սահմանս որոշեցին։ Չհանդուրժեալ Հայոց վնասակար և յանդուգն գործոյս, բողոք բարձին առ դատաւոր տարւոյն, և նորա արարեալ քննութիւն՝ զդէպս և զզրկանս Հայոց ճշդութեամբ գրեալ առաքեաց 'ի Դուռն, բայց 'ի ճանապարհի գիրն մատնեցաւ 'ի կորուստ։ Իսկ 'ի սոյն ամի 'ի գալստեան Կուսակալին Դամասկոսի, առեալ Լատինաց հրաման 'ի նմանէ որոշեցին զսահմանն զայն, տալով զմեծամեծ վնասս Հայոց։ Եւ 'ի մատուցանել ժողովրդոց նոցին գիր աղաչանաց առ Կուսակալն, մերժեաց զնոսա յատենէ իւրմէ։ Այլ զկնի մեկնելոյ նորին յԵրուսաղեմէ՝ Հայք վերստին դիմեցին առ դատաւորն, յայտ արարին զզրկանս, մատուցին զվաւերական գրեանս սակս գերեզմանատան։ Իսկ Լատինք մինչեւ ցայսօր ոչ դադարին 'ի թշնամութենէ, մատնելով զՀայս յիշխանութիւնս, 'ի բռնութիւնս, 'ի տուժս և 'ի տուգանս, և հակառակեալ սեփական ուխտատեղեաց և ստացուածոց նոցին, առիթ լինին մեծամեծ վնասուց, որպէս պատմեն զայս ամենայն այլազգիք Երուսաղէմի։ Ասա խնդրէ հրովարտակաւ բառնալ զնեզութիւնս և զտուտպանս ազգին Հայոց, և վերստին դարձուցանել առ նոսա զմասն գերեզմանատան այնորիկ. ՌՈՒԱ (1776)։

Միաբանք Հայոց առին նաև հանրագիր 'ի մեծամեծացն այլազգեաց վասն այսր խնդրոյ, յայտնի վկայելով զյաջողակութիւնս Լատինաց, յոր ձեռնարկեալ կնքեցին ոգիք իբրեւ 30։ Գրեաց և Յովակիմ Պատրիարք գիր բազոքոյ 'ի Դուռն, առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, և Զաքարիա Պատրիարք ընդ գրի իւրոյ մատոյց զայն 'ի Դուռն։ Լատինք եւս գրեալ էին ամբաստանութիւն զմիաբանութենէ Հայոց առ դեսպանն Գաղղիոյ, եւ նա եւս մատուցեալ էր 'ի Դուռն։ Լուեալ Արքայի զհանգամանս իրաց եւ տեղեկացեալ իսկ 'ի գրոց տուելոց յերկոցունց կողմանց։ Գրեցաւ հրովարտակ առ Կուսակալն Դամասկոսի եւ առ դատաւորն Երուսաղէմի, ուր յետ 'ի մէջ բերելոյ զգիր գանկատանաց Տալիա դեսպանին Գաղղիոյ, անմիջապէս յարէ եւ զգիրս Պատրիարքացն Հայոց Երուսաղէմի և Կոստանդինուպօլսոյ, թէ ո՞րպէս յայտ առնէին սոքա վկայութեամբ այլազգեաց զսեփականութիւնն Հայոց, և թէ ո՞րպէս նա ինքն Կուսակալն գիր տուեալ է յաւաջագոյն չհակառակիլ Լատինաց վասն այնր։ Սակայն դէնպէտն Երուսաղէմի, այն է Միւֆթին, զոր որսացեալ էին Լատինք 'ի կողմն իւրեանց, սակս ագահութեան իւրոյ խաբեալ զԿուսակալն, զՀայս եւ զայլազգիս տուեալ է գանակոծել և վիրաւորել և զմանս շրջթայական մատնեալ 'ի բանտ և տուգանելով զնոսա՝ թափեալ է 'ի կարողութենէ. և թոյլ տուեալ Լատինաց գոր-

ծել ըստ կամաց իւրեանց՝ յափշտակել զգերեզմանատունն՝ զրկել զՀայս, հանել 'ի գերեզմանաց զՀին և զնոր ննջեցեալս, չընդունիլ զվաւերական գրեանս նոցին, այլովքն հանդերձ։ Ապա դարձուցանէ զրանն առ Կուսակալ և առ դատաւորն. Թագաւորն Գաղղիոյ մշանջենաւոր բարեկամ է ասէ, Տէրութեան մերոյ և կամիմ հաստատուն պահել զբարեկամութիւնն և զդաշնադրութիւնն. չնեղել զկղերս եւ զվաճառականս նոցա հակառակ ոգւոյն դաշնադրութեան։ Իսկ Հայք հարկատու հպատակ են Տէրութեան իմոյ. 'ի հարկի հպատակասիրութեան յամենայնի պարտ է պաշտպանել և խնամել զնոսա և բառնալ զնեղութիւնս նոցա։ Ի բաց կացէք յադահութենէ եւ զամենայն ինչ արդարութեամբ գործեցէք. մի լիցի ձեզ զմի կողմն զբրկել, և զմիւսն պաշտպանել ընդդէմ Կայսերական կամացս. զգոյշ լերուք չնանրացուցանել զվաւերական գրեանս երկուց կողմանց։ Եթէ ըստ գրելոյ Դեսպանին զգետինն զայն յառաջ քան զ120 ամս գնեալ իցեն Լատինք օրինօք դատարանի և լեալ 'ի ձեռս նոցա. Թաղեալ իցեն անդ ըստ մեռեալս իւրեանց, և Հայք տարապարտուց ընդիմացեալք՝ խափանել զհակառակութիւնն. իսկ եթէ Լատինք աւելի յափշտակեալ իցեն՝ պաշտպան լինել Հայոց՝ և մի թոյլ տալ նեղել զնոսա, և բառնալ զխռովութիւնն։ Եւ եթէ լսելի լինիցի յունկն իմ թէ սակս ադահութեան զմի կողմն զրկեալ՝ եւ զմիւսն պաշտպանեալ էք, ոչ երբէք ունիք զերծանիլ 'ի պատիժ պատուհասից. նոյն օրէնէ և կաշառառուաց՝ զի մին բարեկամ և դաշնադիր է Տէրութեանս, և միւսն հարկատու հպատակ, ١١٩١ (1776)։

Թէպէտեւ եհաս այս հրովարտակն յԵրուսաղէմ, այլ գործն աւարտեալ էր, և Լատինք տիրեալ տեղւոյն, եւ չէր հնար վերստին թափել զայն 'ի ձեռաց նոցին։ Սակայն Կուսակալն վերստին կազմեաց ժողով, և զմի մասն հրովարտակին ետ ընթեռնուլ, և արձակեաց զնոսա պատուիրելով երկուց կողմանց կալմամբ սիրով ընդ միմեանս։

Յետ այսր վերջին ժողովոյ մատեան Լատինք առ դատաւորն՝ զի արդարացուցանել կարասցեն զինքեանս առաջի Արքային և Դեսպանին, և սկսան պատմել նմա ըստ խնդիրն ըստ ախորժակի իւրեանց՝ զի 'ի գրի հարեալ

ծանուցէ 'ի Դուռն, և նա արար ըստ կամաց նոցա այսպէս. «Քառակուսի գերեզմանատունն գնեալ են Լատինք 'ի մեծ Փոխանորդէն Հայոց՝ 'ի թուին ١٠٦٩, որ 'ի նմին ժամանակի իշխան և անօրէն էր համօրէն գաւառաց նոցին, և տիրեալ են նմա զամս իբրեւ 120. Հայք չունին առընչութիւն ինչ ընդ տեղւոյն այնորիկ»։

Այլ երկպառակութիւնն որ ծագեալ է յամաց հետէ 'ի միջի սոցա, վեր 'ի վայր չրջեալ է զբարեկամութիւնն. Հայք 'ի պատճառս ատելութեան և ոխակալութեան հակառակեալ են Լատինաց. և 'ի դատին սոցա յառաջնում կառակեալ են Լատինաց. և 'ի դատին սոցա յառաջնում խափանեալ է ընդդիմութիւնն Հայոց, և տուեալ մուրհակ Լատինաց 'ի դատարանէ։ Հայք ստութեամբ ամբաստան լեալ են առ Արքայ, որպէս թէ հանեալ իցեն զմեռեալս 'ի գերեզմանաց, և զնոսա դանակոծեալ և արդելեալ 'ի բանտ, և մատնեալ 'ի տոյժս և 'ի տուգանս, եւ յայլ յայդպիսի պատիժս հակառակ կամաց Կայսեր, որպէս տեսաւ 'ի հրովարտակին, «որպէս համարձակին Հայք ձեռն մխել յիրաւունս Լատինաց հակառակ մուրհակաց, և 'ի ստութիւնս խոնարհին. և յատենի անդ յորժամ հարցաւ 'ի վարդապետացն Հայոց, թէ յի՞նչ պատճառս 'ի դատ ելիք սակս զօրաւոր մուրհակս, մատուցէք. Փոխանորդն Հայոց ոչ է կարացեալ առաջի առնել մուրհակս եւ բերել վկայս, այլ խոստովանեալ թէ չունիմք իրաւունս 'ի վերայ տեղւոյն այնորիկ, և թէ՝ չունիմք տեղեկութիւն ինչ զաղերսագրին մատուցելոյ առ Արքայ և յերկարել զգործս. գուցէ յուխտաւորաց լուեալ իցէ զայն։

Ապա յարէ դատաւորն 'ի կողմանէ իւրմէ, որ տուեալ էր յառաջագոյն Հայոց եւս գիր, արդարեւ գերեզմանատունն այն սահմանօքն սեփական է Լատինաց, ըստ վկայութեան այլազգեաց. եւ ես բարւոք խելամուտ լեալ, ետու նոցա մուրհակ 'ի դատարանէ ժառանգել զտեղին առանց հակառակելոյ ուրուք, եւ բարւոք ծանեաք որ այսպիսի խռովութիւնք ծագեալ են յերկպառակութենէ, պաշտպանեցաք զերկոսին կողմն և հաշտեցուցաք ընդ միմեանս և բարձաւ 'ի միջոյ խռովութիւնն, եւ երկաքան-

չիւրքն յանձն առին հաստատել զրարեկամութիւն. և ըստ զօրաւոր մուրհակին տուելոյ 'ի մէնջ՝ այսուհետեւ Լատինաց տիրել զերեզմանատան այնմիկ. և եթէ պատահեսցի միջամտութիւն յօտարաց, դարձեալ բռնութիւն համարի. ՌՃՂԲ (1777)։

Զայս գիր էր զոր եռուն Լատինք գրել դատաւորին 'ի Դուռն, յոր յայտնապէս նշմարին ստութիւնք Լատինաց, կուսակցութիւնք դատաւորաց եւ Կուսակալին եւ վտանգիլն Հայոց, որպէս տեսաւ 'ի բանից պատմութեանս թարգմանեալ 'ի գատառատանական գրոց։

Ահա այսու եղանակաւ բռնութեամբ յափշտակեցին Լատինք զմի մասն դերեզմանատան Հայոց, այլ թէ քանի գումարս քսակաց վատնեցին, չէ մեզ ասել։ Եւ հուսկ ամենեցուն եռուն կոմել քարինս 7 քանդակեալ 'ի վերայ պսակ 'ի ծաղկանց իբրեւ յաղթանակ, և 'ի միջի նոցա գրեալ զթուական տարւոյն (1777), որ յայտ առնէ զժամանակ տիրապետութեան նոցին։ Այսոքիկ քարինք դան մնան մինչեւ ցայսօր ժամանակի 'ի դերեզմանատան անդ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Այրն քառասնից։ Կանոնական բանք։ Նուիրակութիւնք Յովակիմայ և մեռ նորին։ Նեղութիւն դատաւորին վասն թաղելոյ զմարմին նոցա Ի Ս. Փրկիչ։

ՀԱՅՔ մինչդեռ զրաղեալ կային զդատաստանաւ դերեզմանատան իւրեանց, Լատինք փութացին յարուցանել զայլ խմն վէճ եւս. քանզի 'ի սմին ժամանակի ձեռն արկեալ փոխեցին զդուռն Քառասնից Այրին, զոր Լատինք Կ-ՐՆ-ՆՆ կոչեն, արտաքոյ գիւղին Բեթղեհէմի. փակեցին զհին դուռն և բացին զայլ խմն նոր դուռ, եւ հաստատեցին զայն փականօք, և զարդարեցին զայրն կանթեղօք, պատկերօք և այլ եկեղեցական սպասուք, և կամէին տիրել այնմ միայնակ. լուեալ դատաւորին Երուսաղէմի

փութաց անդր, և ժողովեալ զայլազգիս և զքրիստոնեայս դեղջն՝ հարցանէ ցնոսա զվիարդն, և նոքա ասեն. Այրն ուխտաւորեալ է Հայոց, Յունաց և Լատինաց և այլ ամենայն քրիստոնէից, և պատուի 'ի նոցանէ և աղօթեն անդ. եւ 'ի նախընթաց ամին մուծան սպասքս այսոքիկ եւ եդան յիւրաքանչիւր տեղիս, եւ փոխեցաւ դուռն։ Յայնժամ հրամայեաց դատաւորն Լատինաց հանել անտի արտաքս զամենայն կարասիս զոր մուծին. փակել զնոր դուռն եւ բանալ զհին, և թողուլ զԱյրն յառաջին վիճակի իւրում, ուխտաւորեալ ամենայն քրիստոնէից եւ մի' սեփհականել զայն և եթէ ազգի միոյ, որ և արարին իսկ, ՌՃՂ (1776)։

Իսկ Զաքարիա Պատրիարք Կաղզվանցի, որ նստէր 'ի Կոստանդինուպոլիս, կամելով բառնալ զտրտունջ միաբանաց եւ զդայթակղութիւն հասարակութեան, խորհրդով և հաճութեամբ գլխաւորաց ազգին գրեաց զեօթն գլուխս բանից իբր կանոն, վասն բարւոք կառավարութեան Աթոռոյն Երուսաղէմի, որ ունէր օրինակ զայս։

Մեծի արքայանիստ քաղաքիս Կոստանդինուպոլսոյ Պատրիարքս հանդերձ իշխանօք և գրեթէ համայն ազգօք, 'ի թուին Հայոց 1240 (1791) 'ի 23 Յունիս ամսոյ, 'ի միասին հաւաքեալ համախոհ և համակամ հաճութեամբ զայսոսիկ կանոնս հաստատեցաք վասն բարեպէս կառավարութեան Ս. Երուսաղէմի առ 'ի զերծուցանելոյ զսոյն Ս. Աթոռն 'ի բամբասանաց։

Ն-Ի՝ Պատրիարքն զվեց Նաղբրս ունիցի ինքեան օգնական, որոց այժմ անուանքն են, Սարգիս եպիսկոպոս Կուզիկեան, Աւետիք եպիսկոպոս, Զաքարիա, Կարապետ, Պետրոս եպիսկոպոսունք, Մարտիրոս վարդապետ, և զամենայն ինչ ժողովեալ հաւաքեսցեն թէ 'ի դարպասական ողորմութենէ և թէ յայլոց. սոյն հարազատ գործակալքն՝ թուով և տուսմարաւ դիցեն յարկղն երկաթի, և զբանալին ինքեանք պահեսցեն, և մի տուսմար եւս Պատրիարքն ունիցի. երբ պիտոյ լիցի գործակալքն ըստ բաւականին հանցեն զդրամն 'ի մատակարարութիւն Ս. Տանն մինչ 'ի վերջ տարւոյն. և 'ի տարեգլխոյն մեծաւորն կոչեսցէ զգործակալսն և պահանջեսցէ 'ի նոցանէ զհաշիւ բոլոր տարւոյն, եւ նոքա տացեն։ Պատրիարքն նորեկ սպասաւոր

մի՛ առցէ, այլ 'ի հին միաբանաց զոն եւ կամիցի, թէ 'ի օգնականորացն վարդապետաց և թէ յայլոց գործակալաց։ Նոյնպէս Լուսարարն եւ Զուխտաճին · զի մեծամեծ վնաս կրեալ է յայսպիսեաց Ս · Վանքն և երեւի կրել։ Պատրիարքն եթէ կամիցի չինութիւն կամ նորոգութիւն առնել, խորհրդով գործակալաց արասցէ · զի մի՛ յետոյ բամբասանաց տեղի լինիցի։

Երկրորդ, զոր ինչ տացեն Զուխտաճի կոչեցելոյն՝ տումարաւ լիցի, մի տումար յարկին պահեսցի և մի տումար առ Զուխտաճին · և 'ի կատարիլ տարւոյն հաշիւն տեսցի, և Զուխտաճին զոր ինչ տացէ, գրեսցէ, և առանց հարցանելոյ գործակալաց ումեք ինչ մի՛ տացէ · զի մի՛ յետոյ բամբասանս կրեսցէ։

Երրորդ, Պատրիարքն առանց դիտութեան Նազրաց միաբան մի՛ առցէ · Նոյնպէս եւ այլք առանց դիտութեան Պատրիարքին, եւ առանց դիտութեան միմեանց մի զոք արտաքսեսցեն և կամ աքսորեսցեն։

Չորրորդ, 'ի մէջ վանաց և արտաքոյ գործակալ կարգել՝ եւ Նուիրակ կացուցանել դիտութեամբ խորհրդականաց լիցի ըստ պատշաճին, և մի՛ ըստ ոմանց ախորժակաց։

Հինգերորդ, Ս · Պատրիարքն զիւրոն և զհասարակն մի՛ որոշեսցէ նախանձ արկանելով 'ի մէջ միաբանաց և տեղի տալ տրոնջանաց և բամբասանաց · զի վերասցի ինն և քոյն։

Վեցերորդ, 'ի մեռելոց որ ինչ 'ի Զուխտաճին տուեալ լինի, ըստ հաճոյից իւրոց մի՛ անօրինեսցէ · այլ կամօք և դիտութեամբ խորհրդականաց ըստ պատշաճին, եւ մի՛ զոք յաւիշտակեսցէ ըստ հաճոյից իւրոց։

Եօթներորդ, Ս · Պատրիարքն բաց 'ի հասարակ ծախուց՝ վանն Պատրիարքարանին, զոր ինչ ծախեսցէ գրով նշանակեսցէ, և ձեռամբ խորհրդականաց հասարակաց արկղէն առցէ · եւ թէ ում և ինչ պարգեւ ինչ տացէ՝ զայն եւս դիտութեամբ 'ի հասարակ հաշիւն համարեսցէ եւ անտի առցէ, ում եւ երբ տուեալ է, նշանակեսցէ։ Եւ 'ի կատարիլ տարւոյն քննութիւն լիցի տումարաց, եւ Ս · Պատրիարքն վրէժխնդիր լիցի · եւ ինքն տացէ զհաշիւ կոնդակագրամոց և այլոց, և յայլ գործակալաց պահանջեսցէ, և մի՛ զոք ընդդիմասցէ Ս · Պատրիարքին։

Այս վասն հաստատութեան սոյն օգտակար կանոնաց, մեք Պատրիարքս, իշխանապետքս և իշխանքս, վասն հաստատութեան Ս · ցանկալի Աթոռոյն Երուսաղէմի, եւ գործակալութեան միաբան եղբարց եւ մանաւանդ հանգստութեան Ս · Պատրիարքի, համակամ գրեալ զայս կանոնական գիրս յատուկ կնքով մերով կնքեցաք, և տուեալ 'ի ձեռս հարազատ և հաւատարիմ (¹) ..... ահա առաքեցաք 'ի գիմաց մերոց խօսիլ և զմիտս մեր այսու գրովս հանդերձ յառաջացուցանել և հաստատել, և որպէս զայս գիր 'ի մէնջ, նոյնպէս և այդր աներկրայ հաստատութեան կանոնական բանիցս՝ Ս · Պատրիարքն, եպիսկոպոսունք եւ միաբան եղբարք 'ի միասին, զմի հաստատ հանրագիր կնքով ձերով առնուլ 'ի նոցանէ և ատ առ մեզ առաքել · յետ որոյ և մեք զոր ինչ պատշաճն է այնպէս հոգասցուք անօրինմանն Աստուծոյ · ուստի վասն հաստատութեան բանիցս, եւ չքեղութեան ցանկալի Ս · Աթոռոյդ գրեցաք և կնքեցաք զայս կանոնագրեալ գիրս հանդերձ Պատրիարգօք, իշխանապետօք և իշխանօք։ Եւ ընդ կանոնական բանիցս այսոցիկ, գրեցին նաեւ զկիր յորդորանաց առ Ցովակիմ Պատրիարք եւ առ համօրէն միաբանս Աթոռոյն, տքնիլ և աշխատիլ արթնութեամբ վասն հաստատութեան Աթոռոյն, որպէս պահեցին զայն նախնի Հայրապետք եւ միաբանք, կալ մնալ միաբան սիրով եւ խաղաղութեամբ ընդ միմեանս · ունիլ ժողովանս Պատրիարքին յուշիմ ծերունի և 'ի փորձառու արանց, որք տեղեակք են հանգամանաց Աթոռոյն և հմուտ անցիցն անցելոց, որպէս յաւուրս Գրիգորի և Թէոդորոսի, նոյնպէս և խորհրդականաց միաբան սիրով և հաւատարիմ վաստակիլ 'ի գործ վանաց, հեռացեալ յինքնակամ հաճութենէ, յեսականութենէ, և 'ի կուսակցութենէ, յուրախութիւն ազգին և 'ի պայծառութիւն Աթոռոյն։ Եւ 'ի կատարել նոցա զվնդիրս, ինքեանք եւս խոստանային յամենայնի ձեռնտու և օգնական լինել գործոց Աթոռոյն · զայս գիր եւս ձեռնարկեալ կընքեցին անձինք իբր 14, և առաքեցին ընդ կանոնական բա-

(¹) Ցովհաննէսի ուրուն։

նից 'ի ձեռն երկուց արանց։ Որոց հասեալ յԵրուսաղէմ
օրհով ընկալեալ եղեն 'ի Պատրիարքէն եւ 'ի միաբանից։
Եւ սիրով ուենկնդիր եղեն բանից աղգին։ այլ և խոստացան
կատարել զբովանդակն կանոնական բանից հետ զհետէ։
Նոյն ժամայն սահմանեցին արկղ, ուր ունէր հաւաքիլ ա-
մենայն արդիւնք վանաց, և զբանալի նորին յանձն արա-
րին Մարտիրոս վարդապետի, և տումարակալ կարգեցին
զԼուսարար Պետրոս եպիսկոպոսն։ տեսին եւս զՀաչիւ Ջու-
խաձէոյն եւ կարգաւորեցին զգործ նորին ըստ կանոնին,
եւ զայլս թողին գործադրել ըստ պիտոյից ժամանակին,
եւ խոստացան վճարել զպարտս Աթոռոյն օգնութեամբ
աղգին։ Եւ վասն այսր ամենայնի գրեցին գիր գոհունա-
կութեան, ուր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան, և ա-
ռաքեցին 'ի Կոստանդինուպոլիս։ գրեցին նաեւ պատգա-
մաւորքն բացատրելով զհանգամանս գործոյն և զԱթոռոյն։
Թէպէտեւ կարգաւորեցին զներքին կառավարութիւն Աթո-
ռոյն այսպիսի եղանակաւ, սակայն տագնապ մեծ էր Պատ-
րիարքին և խորհրդականաց յերեսաց դառնութեան ժա-
մանակին։ զի հարկ անհրաժեշտ կայր 'ի վերայ հատուցա-
նել զսահմանեալ տարեկան տուրս այլազգեաց, եւ արդ-
իւնք ուխտաւորաց ժամանակին չէին բաւական հոգալ
զպէտս Աթոռոյն, որոյ վասն առաքեաց զնուիրակս յայլ
եւ այլ գաւառս ըստ նախնի սովորութեան։ Եւ 'ի սին
ժամանակի վախճանեցաւ Կարապետ վարդապետ Նուիրակն
Երուսաղէմի 'ի քաղաքն յԱժտերխան։ լուեալ զայս Յով-
սեփիմ Պատրիարքի գրեաց գիր խնդրանաք առ Կայսրու-
հին Ռուսաց Կատարինէ, շնորհել գիր հրամանի անկա-
կած չրջիլ Նուիրակաց Երուսաղէմի յամենայն քաղաքս և
յաւանս յաշխարհին Ռուսաց, յորս բնակին յազգէն Հայոց
եւ ժողովել զկանաւոր նուէրս նոցա 'ի նպաստ վանօրէից
և վանականաց Հայոց եղելոց յԵրուսաղէմ։ Եւ պատրաս-
տեաց Կայսրուհւոյն ընծայ պատուական Խաչ ոսկի զար-
դարեալ պատուական ակամբք, յորում էր և մասն ինչ
'ի Կենաց փայտէն։ այս Խաչ Ճոցեալ էր 'ի Գրիգոր Նըղ-
թայակիր Պատրիարքէ։ Գրեաց նաեւ գիր օրհնութեան
առ եղիազար Հայ իշխանազուն, լինիլ միջնորդ առ Կայս-
րուհին 'ի կատարումն խնդրոյ իւրոյ։ Զայսոսիկ գրեանս

և զընծայսն յանձն արար Մովսէս և Վարդան վարդապե-
տաց, եւ առաքեաց զնոսա յաշխարհն Ռուսաց։ Գրեաց
նաեւ գիր օրհնութեան հանդերձ ընծայիւք առ թագա-
ւորն Վրաց Հերակլ, յորում խնդրէր խնամ տանել նուի-
րակացն Երուսաղէմի 'ի մայրաքաղաքն Տփխիս և 'ի սահ-
մանս նորա, զորոյ պատասխանն ընկալաւ։

Յետ այսր ամենայնի և անցանելոյ ամաց ինչ՝ հիւան-
դացաւ Յովակիմ Պատրիարք և անկաւ 'ի մահիճս և չգը-
տեալ դարման ցաւոցն վախճանեցաւ, յամի Տեառն 1793
'ի 25 Սեպտեմբերի յաւուր տօնի Վարագայ Ս. Խաչի։ Եւ
յաւուրն երկրորդի ըստ իւրումն արժանաւորութեան թա-
ղեցաւ հանդիսիւ 'ի վանս Ս. Փրկչի ըստ սովորութեան
'ի կարգս Պատրիարքաց, վարեալ զիշխանութիւն Պատրի-
արքութեան Աթոռոյն Երուսաղէմի ամս 18, բազում վըշ-
տոք և տառապանաք յերեսաց դառնութեան ժամանակին։
յաւուրս սորա չնչմարի այլ երեւելի դէպք ինչ ընդ օ-
տարս, բաց 'ի խնդրոյ դերեզմանատան ընդ Լատինս։ այլ
միայն զբաղեալ 'ի յանձնձանս վանական իրաց, և փոյթ
ընդունել զփոխանակագիրս Բդեշխից, դատաւորաց, մաք-
սապետաց և այլոց 'ի հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս,
որոց վասն կրեաց բազում նեղութիւնս և աղքատութիւնս,
մանաւանդ 'ի հատուցանել զտարեկան սահմանեալ հարկս
Կուսակալացն Դամասկոսի եւ այլազգեացն Երուսաղէմի։
Եւ այս տագնապ և դառնութիւն չէր միայն 'ի վերայ Հա-
յոց, այլ նաեւ 'ի վերայ Յունաց եւ Լատինաց։ զի Հայք
պարտաւորեալ էին միշտ առ երիւղ ընթացակից լինել
նոցա, զի մի վտանգեսցին, որպէս երբեմն պատահեալ է-
թէպէտ տառապանաք և աղքատութեամբ, որպէս է տե-
սանել 'ի բովանդակ նամականիս Յովակիմ Պատրիարքի,
գրեալ առ աղգայինս Կոստանդինուպոլսոյ, յորս ստէպ
խնդրէր հնարել սակաւ ինչ դիւրութիւն նեղութեանցն։

Ասի զսմանէ իբրեւ անդիր աւանդութիւն՝ թէ 'ի յե-
տին ամս Պատրիարքութեան իւրոյ կացին աչքն 'ի տեսա-
նելոյ ամս իբրեւ 7. և այս յայտնի եւս տեսանի 'ի ստո-
բագրութեանց նամակացն։ Ընտիր եւ պատուական է յե-
կեղեցական անօթս Ս. Յակոբայ սորին եպիսկոպոսական
թագն հանդերձ վակասիւ, հեռեալ մարգարտով և զար-

դարեալ պատուական ակամբ եւ այլ անօթք չինեալ յաւուրս սորա։

Իսկ յաղագս թաղելոյ զմարմին Յովակիմայ 'ի Քրիստոս հանգուցելոյ 'ի վանս Ս. Փրկչի, կրեցին միաբանք ոչ սակաւ նեղութիւնս. զի դատաւոր քաղաքին արգել զայն և ոչ ետ թոյլ թաղել զնա անդ. մինչեւ բազում աղաչանօք հազիւ ուրեմն կարացին համել զմիտս նորա խոստանալով հատուցանել նմա ինն քսակս արծաթոյ. 'ի վերայ այսր զիջաւ 'ի բարկութենէ, և ապա հրամայեաց թաղել զնա։

Գ Լ Ո Ւ Խ ԺԴ.

Ընտրութիւն Պետրոս Եպիսկոպոսի։ Գանձապետն Ս. Յարութեան։ Նաւութատաւորաց։ Մաքսապետ Յոպէի։ Աղլաղիք Երուսաղէմի։ Կաւսակալն Դամասկոսի։ Գիւղական Ֆեզանք։ Մաքսապետն Յոպէի։

Զկնի վախճանի Յովակիմ Պատրիարքի և անցանելոյ աւուրց ինչ 'ի վերայ, ժողովեցան միաբանք յեկեղեցի Ս. Յակոբայ, ուր համութեամբ և խորհրդով ամենեցուն ընտրեցին զՏէր Պետրոս Արք եպիսկոպոսն Եւդոկիացի, որ էր Լուսարար կամ Փակակալ տաճարի Ս. Յակոբայ, լինել Պատրիարք Աթոռոյն Երուսաղէմի. թէպէտ նա բազմիցս հրաժարեցաւ, անբաւական համարելով զինքն այնմ ծանր և դժուար պաշտօնին, այլ 'ի վերջոյ զիջեալ 'ի թախանձանս միաբան եղբարց յանձն առ, որպէս գրէ նա ինքն Պետրոս առ Պատրիարքն Բիւզանդիոյ. «Դիտելով ամէն զներքին և զարտաքին զանտանելի ցաւս Ս. Աթոռոյն, զահի հարեալ եմ և դողամ. ոչ այնքան սարսեցին երեք մանկունքն 'ի Բաբելոնեան հնոցէն, որքան ես 'ի պաշտօնէս յայսմանէ. զի նոքա աներկիւղ դիմեցին 'ի հուրն յուսացեալ 'ի սրբութիւն անձանց իւրեանց, իսկ ինձ չիք վստահութիւն 'ի տեսականս և 'ի գործնականս. աղաչեմ զհայրիկ յերեսս մարդոյ, այլ արժանաւորութիւն անձին. գիտէ Տէր զի 'ի հարկեցուցիչ բանից միաբանաց ետու հաւանութիւն, եւ ոչ ներքին յօժարութեամբ. զի հրա-

ցեալ զգետս և փչեայ պսակ համարիմ, և ոչ փառս, որոյ վասն կրկին աղաչեմ, ճանաչել զօգուտն Ս. Աթոռոյն և այնպէս առօրինել»։

Յետ այնորիկ հինգ եպիսկոպոսունք գնացին առ Ծերունազարդ Մարտիրոս վարդապետն, որ անկեալ դնէր 'ի մահիճս. այր հանճարեղ եւ խոհեմ, տեղեակ ամենայն գործոց Աթոռոյն և տաճկական դպրութեան. զի տեսեալ իսկ էր նորա զվախճան և զնորոգումն Պատրիարքաց ոմանց և յայտ արարին նմա զընտրութիւն Պետրոսի իբրեւ հըմուտ և տեղեակ բովանդակ գործոց Աթոռոյն, սնեալ և վարժեալ 'ի նոսա 'ի մանկութենէ իւրմէ, զի մի' մատնեսցի ասեն՝ այս իշխանութիւն 'ի ձեռս անխոհեմաց ոմանց, և տապալեսցի բարեկարգութիւնք տանն, եւ մեք լիցուք առիթ բազմապատիկ վնասուց և անդարմանելի ծախուց, որպէս լեալէ երբեմն՝ զնոյն և ամենայն միաբանք կրկնէին։ Եւ նորա համեալ 'ի բարի խորհուրդս նոցա, գրեաց և ինքն գիր առ Պատրիարքն, և զկնի այսմ գրեցին և ինքեանք գիր հանրական՝ յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան, և թախանձանօք խնդրէին 'ի Պատրիարքէն և 'ի գլխաւորաց ազգին համիլ ընդ ընտրութիւնս իւրեանց, և զՓակակալ Պետրոս Եպիսկոպոսն ճանաչել Պատրիարք Ս. Աթոռոյն Երուսաղէմի, և փութալ հանել զհրովարտակն յարքունուստ յանուն նորա. զայսոսիկ գրեանս առաքեցին 'ի ձեռն Մելքոն վարդապետի։ Ի ժամանել թղթոցն 'ի Բիւզանդիոն՝ Պատրիարքն և իշխանաւորք ազգին ետուն հաւանութիւն ընդ ընտրութիւն Պետրոսի, և առին հրովարտակ յԱրքայէ՝ գրեալ \٢٠٨ և առաքեցին զայն յերուսաղէմ, և Պետրոս Եպիսկոպոս նստաւ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի (1794. 'ի 14 Փետրվարի) յաւուր տօնի Քառասնօրեայ դալստեան Տեառն 'ի Տաճարն։ Արաբացիք և այլազգիք Երուսաղէմի այսպիսի դիպաց և առթի սպասէին. զի սովորութիւն էր 'ի նստիլ նոր Պատրիարքի ընդունիլ պարգեւս, որոյ վասն առհասարակ դիմեցին 'ի վերայ նորա՝ և նա բաժանեաց ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան, մինչեւ հայանիլ գումար դրամոցն 20,000 դահեկան, բայց կարի դժուարին եղեւ համել զկամս քաղաքապետին, դատաւորին և այլոց։

Դռնապանք տաճարին Ս. Յարութեան՝ մոռացեալ ըզչարի սահմանին, բռնացեալ էին 'ի վերայ ուխտաւորաց և միաբանաց երից վանօրէից, զի բաց 'ի սահմանեալ մէն մի փարայից պահանջէին և զայլ իրս, երբեմն յայտնի և երբեմն 'ի ծածուկ, եւ երբեմն թաղմութեամբ եկեալ կանգնէին 'ի դուռն Ս. Գերեզմանին, և երբեմն ելեալ շրջէին 'ի սենեակս ուխտաւորաց. նեղեալ յայսպիսի անկարգութեանց՝ միաբանեալ երից վանօրէից գրեցին 'ի Կոստանդինուպոլիս խափանել զանվայել գործս նոցին։

Յայտնի է թէ, որպէս գրեցաք 'ի Նախընթաց գլուխն, յաւուրս Յովակիմ Պատրիարքի, ազգայինք Բիւզանդիոյ առաքեալ էին կանոնական գիրս ինչ՝ վարիլ նովաւ Պատրիարքին և խորհրդականաց, և 'ի նմին ժամանակի ընկալեալ և կնքեալ էին զայն։

Իսկ այժմ վերստին գրեցին ազգայինք չխափանել ըզկանոնն զայն, նմին իրի և Պետրոս Եպիսկոպոս եւս ընկալաւ զայն, և եդ զնինք իւր 'ի ներքոյ կնքոյ Յովակիմայ, և սահմանեաց վարիլ ըստ տրամադրութեան նորին ինքն և խորհրդականք իւր. և բաց յայսմանէ կարգաւորեաց զաւուրս՝ կարգաւ գրել անդ զնուրաքանչիւր տարուոյ զնը և զմուտս Ս. Աթոռոյն, և բոլոր գործակալաց և Նուիրակաց, և ժողովել զամենայն արդիւնս 'ի մի արկղ՝ զոր կոչէին Օրէ-ոյէ Նոռ՝ մինչեւ ցժամուց Պատրիարքին։

Պետրոս Եպիսկոպոս խնդրեաց յազգայնոց Կոստանդինուպոլսոյ նորոգել զկանոնն զայն, եւ բացորոշ գրել 'ի նմա զանուանս Խորհրդականաց։

Այլազգիք Պրուսայ քաղաքի քակեցին զեկեղեցին Հայոց՝ և Արքայ հրամայեաց վերստին չինել զայն, և բառնալ զգլուխս ոմանց երեւելի այլազգեաց տեղւոյն։

Յովսէփ Եպիսկոպոս Երկայնաբաղուկ Արզրութեանց խնդրեաց յերուսաղէմ զլատմութիւնս և զանուանս առաջին Պատրիարքաց, բայց ոչ ոք 'ի միաբանաց փոյթ կալաւ հետազօտել և առաքել զայն։

Յաւուրս Պետրոսի զարդարեցաւ յախճապակեայ (չինի) չինուածովք որմք եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, 'ի յիշատակ Կեսարացի Պաշպաղիրկեանեան Յովհաննէսի։ Եւ յետ սորա սկիզբն եղեւ եկեղեցւոյն Ս. Հրեշտակապետի։ Ծանուն

դանկատէր Պետրոս Պատրիարք վասն Իւսկիւտարի վանաց, որոյ տարապայման ծախքն 'ի Ս. Աթոռոյն ելանէր, (1794)։

Առագաստաւոր նաւն ուխտաւորաց Հայոց 'ի Զմիւռնիոյ՝ յորում էին ոգիք իրրեւ 60, եհաս 'ի Շամ Թարապուլուս՝ յ2 Յունվարի, եւ 'ի սաստիկ ալէկոծութենէ ծովուն խզեցաւ պարան, և մրրիկն ընկեց զնաւն 'ի ցամաք հեռի 'ի քաղաքէն ժամս 9 և խորտակեցաւ, և մեռան անձինք 8. և ամենայն ինչ որք էին 'ի նաւին՝ կորեան, եւ ոգիք 52 ապրեալք 'ի ծովէ, տարակուսեալ թափառէին 'ի Թարապուլուս քաղաքի. լուեալ զայս Պետրոս Պատրիարքի՝ առաքեաց անդ զարս ոմանս, և ժողովեալ սփոարքի՝ առաքեաց անդ զարս ոմանս, և ժողովեալ սփոփեաց և ետ բերել զնոսա յԵրուսաղէմ, հոգալով զամենայն պէտս նոցին, մինչ 'ի վերադարձ յերկիր իւրեանց։

Գլխաւորք երից վանօրէից միաբան խորհրդով գրեցին 'ի Կոստանդինուպոլիս, Լատինք առ Դեսպանն Գաղղիոյ, Հայք և Յոյնք առ Պատրիարքունս և առ գործակատարս իւրեանց. զի ժողովեսցին առ Դեսպանն եւ միաբանութեամբ խնդրեսցեն Ռաւոսցի յԱհմէտ աղայէ՝ հանել հրովարտակ և առաքել առ մոերիին իւր Մաքսապետն Յոսվարտակ և առաքել առ մոերիին իւր Մաքսապետն Յոսպէյի՝ Ալի աղա, զի ծախիւք երից ազգաց և ձեռամբ նորին չինեսցի երկաթապատ արտաքին մեծ դուռն տաճարին Ս. Յարութեան, զի այնպէս միաբանեալ և սահմանեալ էին յառաջագոյն 'ի միջի իւրեանց, զի դուռն գոլով փայտեայ էր հնացեալ՝ և յառաջագոյն թշնամիք ոմանք հուր եդեալ էին 'ի գիշերի առ 'ի այրել զնա, այլ խմացեալ քրիստոնէից փութանակի շիջուցին զայն։

Այլազգիք Երուսաղէմի՝ և մանաւանդ Սիոնի, ոչ միայն բռնացեալ 'ի վերայ վանօրէից պէսպէս տառապանօք նեղէին զնոսա, այլ բաղում անգամ դիմեալ 'ի Բիւզանդիոն բողոք բառնային 'ի Դուռն և բարրանօք զրպարտէին ըզվանականս Երուսաղէմի, և առեալ հրովարտակ ինչ եկեալ բռնանային 'ի վերայ նոցա, և տային վնաս և նեղութիւն. որոց յերեսաց տաղտկացեալ՝ միաբանութեամբ գրեցին գլխաւորք երից վանօրէից 'ի Կոստանդինուպոլիս առ գործակատարս իւրեանց՝ դարման տանել իրաց, և կամ հանել հրովարտակ առ 'ի զսպել զապիրատութիւնս նոցա։

Կուսակալն Դամասկոսի առաքեաց զորս ոմանս և կալաւ զՄիւսէլլիմն Ռէմիլի և Լիւդիա, և զՅոյն գրագիրն՝ և ետ տանել զնոսա Յաքքէ, ուր կապանօք եդին 'ի բանտի։ Դարձեալ առաքեաց զօրս 'ի Յոպպէ և ետ փակել զդրունս քաղաքին, և եթող զմի դուռն բաց յել և մուտ բնակչաց, եւ կարգեաց անդ պահապան զինուորս հսկել զցայդ և զցերեկ, թէպէտ եւ պատճառն անգիտելի բաղմաց, բայց շարժումն Գաղղիոյ հասեալ էր յականջս նոցա (1795)։

Ի ժամանել կուսակալին Դամասկոսի յԵրուսաղէմ, էառ զսահմանեալ տուրս յիւրաքանչիւր վանաց 26,500 դահեկան՝ բաց յընծայից։ Սակայն գիւղականք Բեթհեղէմի և այլոց ապստամբեալ՝ չետուն նմա զիրս ինչ, եւ նա էառ զբաժին նոցա յերից վանաց 12,000 դահեկան և մեկնեցաւ։ Իսկ դատաւոր քաղաքին առեալ էր բաղում ինչ 'ի վանօրէից։ Լատինք բոլոր բարձին 'ի Դուռն, եւ բերին հրովարտակ՝ և առաքեցին զայն առ Կուսակալն Դամասկոսի, եւ յետս պահանջէին զոր ինչ ետուն դատաւորին։ Թէպէտեւ Հայք եւս բազում անգամ յայտ արարին ըզգրկանս և զդառն աղքատութիւնս իւրեանց առ աղդային Կոստանդինուպօլսոյ, զի հնարս հնարեսցեն թեթեւացուցանել սակաւ ինչ զծանրութիւն բեռին, այլ չեղեւ ինչ հնար։ Ի սմին ժամանակի պատահեցաւ երկրաշարժ 'ի Բերիա և բազումք մեռան ընդ փլատակօք, և ասասուածատաստ բարկութիւնն եհաս մինչեւ 'ի Շամ Թարապուլուս (1796 · 'ի 20 Ապրիլի)։

Իսկ կուսակալն Դամասկոսի 'ի գալ իւրում 'ի Գաղեստին յայսմ ամի, կալաւ զոմանս 'ի գիւղական Ֆելլահից, որք ապստամբեալ էին՝ և արկ զնոսա 'ի տուգանս, և էառ 'ի նոցանէ յոմանց 6 և յոմանց 7—8 քսակս դրամոց՝ և արձակեաց զնոսա։ Եւ իբրեւ մեկնեցաւ նա 'ի սահմանացն Երուսաղէմի՝ սոքա յարեան ամենեքեան 'ի տեղւոջէ իւրեանց եւ միաբանեալ կալան զանցս ճանապարհաց Ծովու և ցամաքի, և ոչ տային թոյլ ումեք անցանել ընդ այնս. չէր ինչ փոյթ զայնցանէ քաղաքապետին և դատաւորին, մինչեւ վճարեցին վանօրայք զդրամս նոցա՝ զոր էառ կուսակալն, և բարձին զկոչն 'ի ճանապարհաց (1797)։

Մաքսապետն Իպրահիմ Աղա, որ նստէր 'ի Յոպպէ, գրեաց յԵրուսաղէմ առ միաբանս Հայոց եւ Յունաց, ընդունել երկաքանչիւրոց 50 քսակ փոլիցա, և փութով տալ փոխանակագիր։ Յոյնք անյապաղ կատարեցին զհրաման նորին, և ետուն դիր 50 քսակի։ Իսկ Հայք ոչ ընկալան զայն, և աղերսագրով դարձուցին յետս, առաջի եդեալ զանբաւականութիւն իւրեանց · զի աղդայինք Կոստանդինուպօլսոյ ճանձրացեալ յերեսաց փոխանակագրոց, պատուիրեալ էին չընդունել այլ եւս։ Սակայն մաքսապետն առանց բանալոյ զգիրն դարձոյց յետս · Հայք վերստին առաքեցին զայն առ նա 'ի ձեռն բարեկամի միոյ։ Եւ նորա առեալ զգիրն լի բարկութեամբ և ցասմամբ մեծաւ ընկէց արտաքս, և նախատական բանիւք անարգեաց զաղգն ողջոյն, և եդ 'ի բանտի զտեսուչն վանաց Յոպպէի զՂազար վարդապետ, սպառնացեալ նմա տալ ըմպել զչարաւուծս դաւազանաց 1000, և նորա երկուցեալ անկաւ անդ սրտաբեկ։ Իսկ ոմանք յայլազգեաց իբր բարեկամ գրեցին գիր յորդորական, և եդին 'ի նմա զգիրն զայն եւ առաքեցին յԵրուսաղէմ՝ հարկադրելով զմիաբանսն ընդունիլ և տալ զփոխանակագիրն · զի եթէ ոչ կամիք տալն, ունկն մատուցանել խրատուց մերոց · անպարտ եմք ազատայ չարեացն, որք ունին հասանիլ 'ի գլուխս ձեր։ Գրեաց առանձին և Ղազար վարդապետ զամենայն անցս, զոր անցոյց ընդ նա մաքսապետն։ Այլ միաբանք Հայոց գրեցին գիր և ընդ նմին առաքեցին զայնոսիկ գրեանս 'ի Կոստանդինուպօլիս 'ի ձեռն սուրհանդակի, զի թերեւս կարասցեն դատանել անտի օգնութիւն (1798)։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Հանքաւ Գաղղիական զօրաց։ Դղրդումն Արաբիոյ. Վրդովումն այլազգեաց և զինուորիլ նոցա։ Նեղութիւն քրիստոնէից։ Սոսկալի տառապանք վանականաց։ Բանտարկութիւն միաբանաց. ուխտաւորաց և ժողովրդոյ քաղաքին։ Տիրել Գաղղիացւոց Յոպպէի և Գազայի։

ԱՆԴ Նաբոլիոն Պոնապարդ կոչեցեալ, բազմութեամբ Գաղղիական Լեգէոնաց եւ 200 պատերազմական նաւուք դիմեաց 'ի սահմանս Եգիպտոսի, և յետ արիւնահեղ պատերազմին Ապուքիրայ, եմուտ յԱղէքսանդրիա, (1798 յ30 Յունիսի)։ Այս լուր անակնկալ ահարեկեալ դղրդեաց զերկիրն Պաղեստինոյ. զի ասէին թէ ոչ երբէք զերծանի 'ի ձեռաց Նորա բովանդակ երկիրն Արաբիոյ։ Մահմետական ժողովուրդք բնակեալ յԵրուսաղէմ և 'ի սահմանս Նորա, խուճապեալ տագնապեցան իրրեւ 'ի վերահաս վտանգէ մեծէ, և միաբանեալ ամենեքեան դիմեցին 'ի քաղաքն Ս. և ժողովեցան բազմութիւն մեծ, եւ կազմեցան կացին իբրեւ ախոյեան ընդդէմ հեռաւոր թշնամւոյ։ Սակայն խժդժութիւն բնատուր բարուց Նոցին, գրգռէր զնոսա ընդդէմ անզէն քրիստոնէից բնակելոց յԵրուսաղէմ եւ 'ի սահմանս Նորա, և թափել 'ի վերայ նոցա զցասումն սրբութեան իւրեանց։

Եւ սկիզբն արարին դործելոյ զանհնարին չարիս և զանլսելի դառնութիւնս, զորս անկարելի լինի մի ըստ միոջէ դրոշմել 'ի գիր. զի առ զայրոյթ սրտի իւրեանց սպառնային 'ի մի ումն կլանել զքրիստոնեայս, և կամ 'ի մի հարուած սուսերի ջնջել և բառնալ 'ի միջոյ և պատահիլ ճոխ աւարի եկեղեցեաց և վանօրէից. զի առաւել կասկած տիրեալ էր 'ի սիրտս նոցա, իբրեւ թէ քրիստոնեայք և վանականք Ս. Քաղաքին, դոլով կրօնակից Նաբոլիոնի, համախոհ են և դրդիչ նմին։ Յետ այնորիկ գլխաւորք այլազգեացն Երուսաղէմի ժողովեցան 'ի դատարանի, և զկնի խորհրդոյ, կոչեցին անդ զթարգմանս երից վանաց, եւ պատուիրեցին նոցա ժողովել և բերել զզէնս, որք միանգամ գտանին 'ի վանօրայս, և ոչ թաղուցանել. զի ահա

ելանեմք ասեն, որոնել և քննել զամենայն տեղիս ձեր, առ ով գտանիցի՝ եղիցի պարտաւոր արեան իւրոյ։ Իսկ նոքա զոր միանգամ գտին 'ի վանս, ժողովեալ առաքեցին առ նոսա։ Եւ քաղաքապետն խուսմբ մի վառեալ զօրօք գնացեալ էառ զրանալիս Յոյն եւ Լատին վանաց. ապա եկեալ էառ և զՀայոցն, և եդ առաջի դրան պահապանս 'ի զինուորաց իւրոց զարս 20. և դուռն վանաց մնաց բաց զտիւ և զգիշեր, և զինեալ խաժամուժ ամբոխն անդադար և անարգել մտանէին և ելանէին, և հասուցանէին մահարեր վիշտս և դնեղութիւնս միաբանաց։ Եւ 'ի պատճառս պահ ունելոյ քաղաքին՝ հարին վրանս 'ի մեծի պարտիզին յանդիման վանացն Հայոց, ուր լցան բազմութիւն զօրաց, զորոց պէտս հոգային վանականքն։ Բաց յայսմանէ հասարակ ամբոխն զինեալ, խուսմբ արարեալ դիմէին 'ի վերայ երբեմն այս և երբեմն այն վանաց՝ գոչմամբ և աղաղակաւ, սպառնացեալ սրով բառնալ զզլուխս քրիստոնէից, և տալ աւարի զինչս վանօրէից։ Ապա կալան զՓոխանորդս և զԹարգմանս Յոյն և Լատին վանաց, նոյնպէս միայն զԹարգմանն Հայոց, և եդին կապանօք 'ի դղեակն Դաւթի։ Եւ մինչդեռ խորհէին այլազգիք հասուցանել 'ի գլուխս քրիստոնէից զայլ չարիս՝ յանկարծ լուր ելն աւետեաց տարածեցաւ 'ի քաղաքին, թէ որ ինչ լու եղեւ վասն թշնամեաց յԵգիպտոս՝ սուտ են և անստոյգ, և 'ի վերայ այսր ցրուեցին զզօրս և ինքեանք հանդարտեցան։ արձակեցին զկալանաւորսն՝ ետուն զվանս վանօրէից և բարձին 'ի նոցանէ զպահապանսն։ Յետ այսմ ամենայնի միաբանեալ գլխաւորաց երից վանօրէից և գրեալ յայտ արարին զեղեալսն 'ի Կոստանդինուպօլիս, զի ծանուսցեն Արքայի զրառնութիւնս այլազգեաց, և հրովարտակաւ սանձել զպակերասան բարս նոցին 'ի պաշտպանութիւն հպատակաց իւրոց, որք ոչ են վնասակար ումեք։

Առաւել քան զայն դառնութիւն, զորս գրեցաք, կրեցին նաեւ քրիստոնեայք Յոպպէի։ Դադարեցան գրութիւնք յԵրուսաղէմէ, զի ըմբռնէին զերթեւեկ նամակաց և բանից։ Եւ յանցանել աւուրց ինչ ('ի 21 Յուլիս) զինեալքն քաղաքին Երուսաղէմի, 'ի մեռասան ժամու առնջեան յանկարծ գրոհ տուեալ յարձակեցան 'ի վերայ

Լատին վանաց, և բացեալ խրամ յորմն՝ զեղան բազմութեամբ 'ի ներքս՝ և կիսով չափ աւարեցին զվանքն. զայս լուեալ գլխաւորացն այլազգեաց, փութացին անդ՝ առեալ ընդ իւրեանս զՇէյխ Օպատար անուն զմն, սուրբ նոցին, եւ հաղիւ ուրեմն կարճեալ զձեռս աւարառուաց հանին զնոսա արտաքս։ Եւ 'ի սմին գիշերի գրեթէ կենդանւոյն մնացեալ էին վանականք Հայոց։ Եւ 'ի վաղիւանդր ('ի 22 Յուլիս) գարձեալ խմբեցան 'ի մի ապստամբաւորքն՝ և դիմեցին 'ի վերայ Յոյն և Լատին վանաց, և ժողովեցին զմիաբանս նոցին 'ի մի վայր, և անտի հասին 'ի վանս Հայոց։ առին կիսով չափ և զմիաբանս նոցա, Եպիսկոպոսք, Վարդապետք, Սարկաւագունք և այլն, և խառնեալ զամենեսեան 'ի մի, մուծին 'ի տաճարն Ս. Յարութեան և աղխեցին զդուռն 'ի վերայ նոցա։ Իսկ նոքա որք ներողութեամբ մնացեալ էին 'ի վանս՝ կային 'ի մեծի յերկիւղի, և ոչ գիտէին թէ ուր ունի եղերիլ վախճան դառնութեանն։ Ապա առին այլազգիք յերից վանօրէից 15 քսակս դրամոց գին վառօթի և գնտակի։ Եկաս հրաման 'ի Ճէզար Փաշայէ ընդունիլ երից վանօրէից 150 քսակս փոլիցա, և փութով տալ զվոխանակագիրսն, վանականք անյապաղ կատարեցին զհրամանն։

Իսկ միաբանք որք եղան 'ի Ս. Յարութիւն իբր յարգելանս, մնացին անդ աւուրս 170. ծերունազարդ Զաքարիա եպիսկոպոսն անկաւ անդ 'ի մահիճս, եւ յամրացաւ լեզու նորին. նոյնպէս հիւանդացան ոմանք 'ի միւս ազգաց. իսկ որք արտաքս էին, դեգերէին 'ի դրունս այլազգեաց, եւ պաղատանօք խնդրէին, գոնէ զհիւանդացեալսն հանել արտաքս, եւ փոխանակ նոցին մուծանել զառաջնոսն. այլ չեղեւ հնար, զի կային յերկիւղի մեծի. մի՛ դուցէ պատահիցէ ումեք մահ եւ տուգանիցեն զբազում քսակս դրամոց։ Ի սոյն միջոցի փակեալ էր և դուռն Ս. Փրկչի վանաց և միաբանք արգիլեալք 'ի ներքս, չէր կարելի երթալ 'ի դերեզման Ս. Աստուածածնի, ոչ միայն յաւուր Կիւրակէի՝ այլ և 'ի ոչնի Վերափոխման նորին։ Արգելին նաեւ թաղելոյ զմեռեալս՝ իբրեւ զվաղեմի թշնամի, որոյ վասն անկեալ 'ի դրունս այլազգեաց բազում աղաչանօք հաղիւ ուրեմն համձին զմիոս նոցա, և առեալ

հրաման դնէին 'ի դիր հանգստեան։ և ոմանք յուխտաւորաց արգիլեալ էին 'ի վանս իբր 'ի բանտի, և ոչ կարէին ելանել արտաքս, մեծամեծք եւ փոքունք այլազգեաց իբրև զգազանս ագռիի ծծէին զարիւնս քրիստոնէից, և զոր առնուին՝ ոչ ինչ համարէին իբրեւ զչառեալ, անհնարին սրտմտութեամբ սպասէին կլանել զվանօրայս հանգերձ վանականօք, որք իբրև զփեսարաթափ թռչուն անկեալ էին 'ի ծուղակս նոցա՝ ոչ փախչիլ և ոչ թագչիլ ուրեք։ տխրութիւն և վիշտ գալստեան կուսակալին պաշարեալ էր զնոսա, և ինքեանք կապեալ յաղքատութեան որպէս յերկաթս, պակասեցան գնողք և վաճառողք ոսկւոյ և արծաթոյ. այսպէս ամենայն սիրտ 'ի վէրս և ամենայն գլուխ 'ի ցաւս։ Այսպիսի տխրութեամբ և ցաւօք օգնութիւն հայցէին յաղգայնոց Կոստանդինուպօլսոյ։

Իսկ այլազգիք Երուսաղէմի յետ այսքան ապիրատութեանց՝ գրեցին գիր ամբաստանութեան զքրիստոնէից առ կուսակալն Դամասկոսի, և առ Ճէզար Ահմէտ Փաշա յԱքքէ, մի՝ զի բերեալ հրաման ինչ՝ առաւել բռնասցին 'ի վերայ նոցա, երկրորդ՝ ծածկել կարասցեն զառաջին չարիսն՝ զոր անցուցին ընդ քրիստոնեայս։

Սակայն քրիստոնեայք փութով ազդ արարին զնեղութիւնս իւրեանց առ Բդեշխն Աքքէի, և նա գրեաց առ մեծամեծս քաղաքին չնեղել զքրիստոնեայս՝ եւ չծանրանալ 'ի վերայ նոցա (1798. յ9 Սեպտեմբերի)։

Ի սմին ժամանակի վախճանեցաւ Զաքարիա Պատրիարք Կաղզուանցի՝ եւ կալաւ զԱթոռ Պատրիարքութեան Կոստանդինուպօլսոյ Դանիէլ Եպիսկոպոս, որ յետոյ ընտրեցաւ Կաթուղիկոս Ս. Էջմիածնի։ Ի սմին ամի Հայք ետուն Ճէզար Փաշայի և զօրաց նորա 63,416 դահեկան (1799. 'ի 25 Յուլիսի)։ Բազմաթիւ նամակներք Պետրոս Պատրիարքի՝ զորս գրեալ է առ իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս ցաւօք սրտի՝ յայտ առնեն զաղէտս դառնութեան ժամանակին, որպիսիք են՝ հարկապահանջութիւնք անվերջանալի փոխանակագիրք, մերժելն կարի երկիւղալի՝ զի առաջի կայր նոցա անկանիլ 'ի գանս և 'ի տանջանս, որպէս տեսանէին զայլս, խնդրեաց հրաման 'ի նոցանէ երթալ 'ի Բիւզանդիոն՝ զի թերեւս զերծցի 'ի

տառապանաց, և բազում անգամ դրեաց առ նոսա միաբանութեամբ՝ թէ չէ հնար կալ մնալ նոցա յերուսաղէմ, զի միաբանք պատրաստեալ էին գտանել դիպող ժամանակ և մեկնիլ անտի՝ և գնալ յայլ տեղի, և ինձ ասէ անկարելի արգելուլ և ընդդէմ կալ նոցա, պատահեցաք այսպիսի դառն ժամանակի՝ զի հասին կալան զմեզ ազգի ազգի ճախորդութիւնք, նեղութիւնք, վիշտք, սաստկութիւն սովու հարկապահանջութիւնք՝ իբրեւ զհեղեղս ջուրց, և հասուցին զմեզ 'ի դրուն մահու, օրական պարէն միաբանաց բազում նեղութեամբ հայթայթին։

Սակայն նոքա արարին պատասխանի թէ՝ պարտ է համբերել վշտաց և տանել նեղութեանց և չթողուլ լքանել զժառանգութիւն ազգին։ Ցայսպիսի դառն դանկատանաց Պետրոս Պատրիարքի եւ միաբանաց ստիպեալ խնդրեցին աղգայինք զՏուսմար ծախուց և արդեանց Ս. Սթոռոյն, և նոքա առաքեցին զայն։

Իսկ այլազգիք Երուսաղէմի յետ արձակելոյ զմիաբանսն 'ի տաճարէն Ս. Յարութեան եւ անցանելոյ աւուրց ինչ՝ ժողովեցին դարձեալ զուխտաւորս տարւոյն եւ զժողովուրդս քաղաքին երից ազգաց, բայ 'ի կանանց՝ ոգիք իբրեւ 2000, և 'ի 14 Փետրվարի յաւուր Քառասնօրեայ Գալստեան Տեառն 'ի Տաճարն, արգելին յեկեղեցին Սուրբ Յարութեան, որք և ասէին թէ սոքա են լրտեսք և բանադնաց առ հաւատակիցս իւրեանց Գաղղիացիս, այր ազգաւ որդիք մահու են դոքա և չեն արժանի արեւ տեսանելոյ. մահաբեր ձայն խուժանին լսելի լինէր ամենայն ուրեք՝ բարձին քրիստոնեայք 'ի կենաց, եւ իբրեւ ոչ գտանէին զոք 'ի հրապարակի՝ խումբ արարեալ դիմէին 'ի գաւիթ Ս. Յարութեան, և ճայնէին լուտանօք 'ի փոքր պատուհանէ 'ի ներքս, արձակէին հրազէնս, որ և պատահեալ գնաակի մուտ 'ի միաբանացն Հայոց մեռաւ անդէն։ Ի զուր էին աղաչանք և պաղատանք վանականաց վասն ազատութեան ժողովրդոց եւ անդորրութեան քաղաքին, զի թոթափեալ էին յամենայն ընչից և մերկացեալ 'ի դոյից, հեծէին ընդ լծով տոկոսաւոր պարտուց։

Զօրք մեծին Նարպոլիոնի տիրեցին Արեւ քաղաքին Եգիպտոսի և սահմանաց նորին. և չգտեալ զոք ընդդիմակաց,

դարձուցին զքէնս իւրեանց յերկիրն Գաղեստինոյ. առին զՅոպա, զՌեմլէ և զԻրուսաղէմ, այն է Լիւդիա, և անտի դիմեալ պաշարեցին զքաղաքն Յոպպէացւոց, ուր ժողովեալ էին բազմութիւնք Արաբացւոց դիմադիր լինել նմա. այլ 'ի սաստկանալ պատերազմին արտաքուստ, 'ի պարտութիւն մատնեցան այլազգիքն, և Գաղղիացիք առին զՅոպպէ, և սուր եդեալ կոտորեցին զԱրաբացիս և զբնակիչս իսկ. զօրքն աւարի առին զքաղաքն, եւ մտեալ 'ի վանս Հայոց կողոպտեցին զորս գտին անդ՝ և թողին զմիաբանսն 'ի թշուառութեան եւ զվանքն պահմանեցին հիւանդանոց զօրաց։ Եւ դադարեալ զաւուրս ինչ՝ չու արարեալ գնացին 'ի վերայ Աքքէ քաղաքի, և պաշարեցին զնա, Մարտ 3։ Իսկ տէր քաղաքին ՃԷզար Փաշայ, ամրացուցեալ էր զնա և լցեալ բազմութեամբ զօրաց, և ոչ տայր թոյլ նոցա մերձենալ 'ի պարիսպն. զի թէպէտեւ Գաղղիացիք քանիցս սաստկութեամբ յարձակեցան 'ի վերայ նորա, այլ նոքաւն եղեալ 'ի քաջացն Օսմանցւոց յետս մղեցան, եւ տեւեաց պաշարումն մինչ 'ի Մայիս 10։ Եւ տեսեալ թէ չէ հնար նուաճել զՃԷզար Փաշայ և տիրել քաղաքին, մանաւանդ զի վտանգեալ իսկ էր բանակն Գաղղիական 'ի վերահաս ժանտախտէ, բարձին զպաշարումն և դարձան յետս, եւ թափեցին զցասումն բարկութեան իւրեանց 'ի վերայ Յոպպէ քաղաքի. կործանեցին զպարիսպն, արկին տուգանս 'ի վերայ բնակչաց. բաժին անկաւ կողոպտեալ վանացն Հայոց 100 քսակ արծաթոյ. զկնի աւերանաց և յափշտակութեանց, արկին հուր 'ի քաղաքն և յամիւն դատեցին զբազում երեւելի շինուածս, ընդ որս տունք և մթերանոցք Հայոց. և յետ այսր ամենայնի չու արարեալ գնացին անդրէն 'ի կողմանս Եգիպտոսի։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Անդք Ռեմզէ աւանի։ Վանք Ս. Փրկչի։ Քեռ Եուսուֆ Փաշա։ Անտոն Ամիրա։ Մահ Պետրոս Պատրիարքի։ Գործ Բդեշխին։ Մեհեմմեդ Ապու Մեհրագ։ Նեղութիւն միաբանաց։ Անլոգիք Սիոնի։ Թողուլ միաբանաց զվանս Ս. Յակոբայ և մեկնիլ 'ի քաղաքն։

Ի ԺԱՄԱՆԱԿՍ պաշարման Աքքէ քաղաքի, բնակիչք Ռեմզէ աւանի, յերկիւղէ Արաբացւոց՝ խոյս տուեալ անտի եւ եկեալ ամրացեալ էին 'ի քաղաքն Յոպպէ։ Լեռնական Ցէլլանդք տեսեալ զաւանն դատարկ և անպատսպար, դիմեցին բազմութեամբ 'ի վերայ նորա, և համարձակ գործեցին զամենայն չարիս, կողոպտեցին զտունս և զեկեղեցիս։ և զվանս Հայոց Ս. Գէորգայ՝ յետ դատարկելոյ զամենայն ինչ, խլեալ հանին նաեւ զերկաթս 'ի պատուհանաց, և զայլ տեղիս քանդեալ աւերեցին, եւ կոտորեցին զորս կենդանի գտին յաւանին, մինչ չխնայել նաեւ 'ի հաւատակիցս իւրեանց։ բաժանեցին յիւրեանս զաղջկունս և զմանկահասակս, որք մնացեալ էին անդ՝ եւ ընդ աւարին առեալ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Զերծեալ ոմանց 'ի սրոյ աստի հասին յԵրուսաղէմ, և արտասուօք պատմէին զանցս Ռեմզէի։

Իսկ աւարառուքն բազմութեամբ ժողովեալ եկին յԵրուսաղէմ և բանակեցան մերձ 'ի Սիոն, որպէս թէ կազմել զզէնս և երթալ 'ի բանակն Օսմանեցւոց։ Եւ 'ի գիշերին այնմիկ մտին 'ի վանս Ս. Փրկչի, յափշտակեցին զոր ինչ միանգամ գտին անդ։ խորտակեցին զպատկերս և զպաշկալ եկեղեցւոյն և զսեղանն կործանեցին, և աւերեալ եղծին և զայլ տեղիս։ և մտեալ 'ի պարտէզն յարմատոյ խլեցին զձիթենիս 33։ և անտի մեկնեցան 'ի կողմանս Ռեմզէի։ Արդ 'ի 12 Փետրվար ամսոյ մինչ 'ի մեկնիլ զօրաց Նաբոլիոնի յերկրէն Պաղեստինոյ եւ 'ի ժամանել մեծի Վէզիրին 'ի Յոպպէ, թէ որպիսի անցս չարչարանաց կրեցին 'ի միջոցիս յայսմիկ քրիստոնեայք և վանականք Երուսաղէմի, մանաւանդ Հայք և միաբանք Նոցին՝ կարի դառն է պատմել։ զի իսպառ նուաղեցան 'ի զօրութենէ և անկան 'ի կարողութենէ, մինչեւ լինել նոցա հոգիս ապաստան։

Իսկ Վէզիրն մեծ Քեռ Եուսուֆ Փաշա հասեալ 'ի կողմանս Յոպպէացւոց, բանակեցաւ 'ի դաշտի անդ՝ և հանգիստ ետ զօրաց իւրոց զաւուրս 20։ եւ ապա եկ և գնաց զկնի Դաղղիացւոց, և պատահեալ միմեանց ետուն ճակատ սաստիկ։ պարտեցաւ բանակն Օսմանեան, և անկան բազում մեռեալք և վիրաւորք 'ի դաշտի անդ։ և ինքն Վէզիրն մնացեալ զօրօք իւրովք փախուցեալ անկաւ 'ի քաղաքն Յոպպէ, թողեալ յաւար թշնամեաց զկազմածս, զզէնս, զկարասիս և զգանձս բանակին։

Եւ զի յառաջագոյն որդի Բդեշխին Ապու Մեռէֆ կոչեցելոյ, եկեալ յԵրուսաղէմ արկեալ էր տուգանս 'ի վերայ վանօրէից։ եւ 'ի սմին աւուրս (12 Ապրիլ) վերստին եկ անդ և նեղութեամբ վչտացոյց զվանականս տուժիւք եւ ակնօք՝ կողոպտելով զնոսա դարձաւ 'ի բանակն։ Եկեալ էր ընդ մեծի Վէզիրին և սեղանաւոր Ակնցի Զօփենց մահտեսի Անտոն Ամիրայն։ 'ի սմանէ կանխաւ խնդրեալ էր Պետրոս Պատրիարք՝ լինել միջնորդ առ որդի Բդեշխին, զի մի խսպառ նկուն արասցէ զՀայս։ այլ նա բնաւ ունկն ոչ մատոյց բանից Անտոնի։ թէպէտեւ զերծան առ ժամն 'ի ձեռաց նորա, այլ կասկած մեծ էր 'ի դառնալ նորա յետս։ և նոցա պատահիլ նորանոր տառապանաց, սրակատեցան կարեւոր պէտք վանաց, և դժուարութեամբ հայթայթէին զաւուրն պարէն, որոյ վասն աւաղէ Պետրոս Պատրիարք զթշուառութիւն իւրոյ ժամանակին, և բիւրեցս երանի ասէ մեռելոց որք 'ի Տէր ննջեցին։

Ի մեռանիլ ակրացու Սարգսի 'ի Կոստանդինուպոլիս, զոր իբր գործակատար Երուսաղէմի կարգեալ էր զնա Յովակիմ Պատրիարքի, որպէս գրեցաք, եւ նա հաւատարմութեամբ վարեաց զայն պաշտօն։ իսկ զկնի մահուան նորա Պետրոս Պատրիարք 'ի տեղի նորա առաքեաց փոխանորդ Երուսաղէմի զթէքիրտաղցի Յակոբ եպիսկոպոս։

Եւ 'ի սոյն դառն ժամանակիս էառ նա ինքն Պետրոս զպատասխանիս նամակացն, զոր գրեաց ինքն և նախորդ իւր Յովակիմ առ Կայսրուհին Ռուսաց, և առ Յովսէփ եպիսկոպոս առաջնորդ կողմանցն այնոցիկ։ ընդ նոսին եւ

ազնիւ ընծայ չքանչան արծիւ երկգլխի, զոր 'ի գլուխ կոչեն զայն Եկեր։

Առաւել նեղեալ Պետրոսի և չդտեալ հանդիստ կենաց 'ի բանութենէ այլազգեաց և 'ի չքաւորութենէ, ել և գնաց 'ի Ցոպզէ, ուր էր բանակն Սրբոյնի, յոտս մեծի Վէզիրին (1800 · 'ի 11 Մայիսի) դտանել օգնութիւն 'ի նմանէ, ճեռընտուութեամբ առն բարեպաշտի Անտոն Ամիրայի։

Իսկ միաբանք Ցունաց, որք յԵրուսաղէմ, անկան 'ի կասկածանս, թէ գնաց Պատրիարքն Հայոց աղաչել զեպարքսան առնուլ 'ի ձեռաց Ցունաց զսեղանն յԱյրին Ծնընդեան Քրիստոսի 'ի Բեթղեհէմ եւ զԳողգոթայն · վասն այսորիկ սկսան երկնել 'ի միտս իւրեանց հասուցանել չարիս Հայոց, որպէս և արարին իսկ · զորմէ գրեսցուք։

Եւ մինչդեռ Պետրոս եպիսկոպոս դեղերէր 'ի Ցոպզէ առ Վէզիրն եւ առ այլ մեծամեծս, եհաս նմա հիւանդութիւն և անկաւ 'ի մահիճս, և չդտեալ դարման 'ի բժշկաց՝ վախճանեցաւ անդ (1800 · Ցունիս 18) երկուշաբթի, ժամ 9, եւ թաղեցաւ 'ի դերեզմանատան հասարակաց՝ թողեալ 'ի սուգ և 'ի տրտմութիւն զմիաբանս վանաց Ս · Ցակոբայ, որ եւ յետոյ 1837, փոխադրեցան ոսկերք նորա 'ի դաւիթ եկեղեցւոյն։

Զեւ եւս սրբեալ միաբանաց զարտասուս յաչաց, եհաս հրաման 'ի մեծէ Վէզիրէ փութալ 'ի բանակն փոխանորդաց և թարգմանաց Հայոց և Ցունաց · Պետրոս եպիսկոպոս Փոխանորդն եւ Թարգմանն, ընկերացեալ Ցունաց գնացին անդ։ Եւ եղեւ իբրեւ յանդիման եղեն նմա, լուան զասատ բարկութեան նորին, և փոքու ինն պատահիլ ունէին պատուհասի · խնդրեաց 'ի նոցանէ սատար լինիլ բանակին · զի թշնամիք կողոպտեալ և մերկացուցեալ էին, և պահանջէր յերկուց վանաց 2000 քսակս արծաթոյ · և նոցա անկեալ յոտս նորին պաղատէին և յայտ առնէին զյետին չքաւորութիւն եւ զերկամեայ տառապանս իւրեանց զոր կրեցին · զնի բաղում բանից և աղաչանաց, զիջաւ սակաւ ինչ Վէզիրն 'ի ցասմանէ իւրմէ · բայց սակայն զնոսա անպատճառ հասուցանել 'ի բանակն 1000 քսակ։ Դարձ արարեալ տոցա յԵրուսաղէմ, յայտ արարին զիրս միաբանաց · և զի յայնմ ժամանակի ոչ միայն չդտա-

նէր դրամ 'ի վանս, այլ և անկեալ էին ընդ պարտեօք, և հրաման Վէզիրին սաստիկ և անդառնալի էր · ուստի անկան 'ի դրուանս քաղաքացի ժողովրդոց, և ժողովեցին դրամս որքան եւ դոյն կրկին տոկոսեօք, մինչեւ առնուլ զզարդս կանանց, խոստանալով նոցա դարձուցանել զկնի ամսօրեայ ժամանակի, և այսպիսի եղանակաւ հատուցին զ500 քսակս զրաժին Հայոց։

Յետ վախճանելոյ Պետրոս Պատրիարքի, որ կալաւ զԱթոռ Պատրիարքութեան ամս եօթն, ժողովեալ միաբանաց գրեցին զիր հանրական առ Պատրիարքն և առ իշխանաւորս ազգին՝ ծանուցանելով զմահ Պետրոսի · եւ ապա թախանձանօք խնդրէին 'ի նոցանէ ընտրել զմի ոք 'ի միաբանաց Ս · Ցակոբայ լինել հովիւ և առաջնորդ ինքեանց, որում խոստանային հնազանդիլ և կրել 'ի գլուխս իւրեանց իրրեւ զպսակ ոսկի, և մի' ընտրել զոք յարտաքին Եպիսկոպոսաց · գրեցին նաեւ առ Ցակոբ եպիսկոպոս փոխանորդն հոգ տանիլ գործոյն։

Եւ յերկարիլ խնդրոյն, գրեցին նաեւ 5 Եպիսկոպոսունք, յորում յայտ առնէին զոզբալի վիճակ թշուառութեան Աթոռոյն՝ յերեսաց հարստահարիչ և կեղեքիչ այլազգեաց · սոքա տկարացան և ճանձրացան 'ի գրելոյ զաղէտս իւրեանց, այլ ոչ կարացին զարթուցանել զազգայինս 'ի քնոյ · Ցոյնք և Լատինք ծանեան զաղքատութիւնս և զթշուառութիւնս միաբանացն Հայոց, սկսան ոտնահար լինել և թշնամանել զնոսա և հակառակիլ 'ի բազում պարագայս, որպէս յայսմ ամի արգելին Լատինք զժամարարն Հայոց ելանելոյ 'ի Գիւտ Խաչն, որոյ վասն եղեւ վէճ 'ի մէջ երկուց ազգաց, և Ցոյնք սկսան ծածկապէս որոգայթ լարել · զի ջանային հանել հրովարտակ հակառակ Հայոց, և չրջեցին զառաջին սէրն յատելութիւն։

Զկնի մահուան Պետրոս Պատրիարքի, խորհրդականք բացին զՊատրիարքարանն և գտին միայն 9000 դահեկան, եւ զտուփարս ելից և մտից Աթոռոյն · պարտքն ծանրացեալ, եկեղեցական անօթք նուազեալ, և առանց գրաւի չէր ոք որ տայր զդրամ։ Յետ ծանուցանելոյ զայսոսիկ, զերկուս իրս առաջի եդին ազգին · կամ դնել 'ի գրաւի զմին 'ի վանաց, որպէս լեալ էր յաւուրս Տեղակալաց,

եւ առնուլ դրամ 'ի փոխատուէ, և կամ թողուլ լքանել զվանօրայս եւ ցրուիլ անտի, եթէ թողուցուն պարտատերքն եւ իշխանք երկրին · լաւ համարէին զմնայ քան զայնպիսի դառնագոյն կեանս · զի եթէ ոչ լինի այցելութիւն Աթոռոյն, 'ի զուր եւ նանիր է ընտրութիւն Պատրիարքի · զի ոչ ոք գտանի այնպէս անմոռոգոյն, դնել զայնպիսի անուր դժուարակիր 'ի պարանոց իւր · նախ այցելութեամբ թեթեւացուցանել զպարտսն, և ապա ընտրել զոք Պատրիարք 'ի միաբանաց Աթոռոյն (1800 · 'ի 22 Յունիսի)։

Եւ յելս տարւոյն մեկնեցաւ Վէզիրն 'ի կողմանց Յոպպէի եւ չոքաւ 'ի Կոստանդինուպոլիս։ Բնակիչք երկրին տաղտկացեալէին 'ի բռնութեանց և 'ի զզուանաց Բդեշխի իւրեանց Աղա Մէրէ կոչեցելոյ, նմին իրի գրեցին գիր ամբաստանութեան զնմանէ առ ձէզար Փաշա, որ նստէր յԱքքէ · եւ զի նա ինքն ձէզար ատելութեամբ էր ընդ Բդեշխին, և սպասէր դիպող առթի բերել զնա 'ի ձեռս և պատուհասել, որոյ վասն առաքեաց զօրս և պաշարեաց զՅոպպէ քաղաք, յորում որջացեալ էր այրն։ Եւ 'ի ժամանակի ասա պաշարման քաղաքին, անհնարինս սրտմտեալ նորա՝ մատնեաց 'ի հարուածս դանից զտեսուչ վարդապետն Հայոց և զմիաբանս նորա, էառ 'ի նմանէ 300 քսակս դրամոց՝ թող զառաջին առեալսն։ Եւ 'ի սմին ժամանակի անկեալ էր սով սաստիկ 'ի քաղաքն, 'ի սաստկանալ սովոյն եւ բռնութեան՝ խոյս ետ անտի տեսուչն միաբանօք՝ և մտեալ 'ի նաւ փախեան 'ի վերայ ծովու · զայս լուեալ պարտատերքն՝ եռուն զպարտամուրհակս 'ի ձեռս զինուորաց, եւ նոցա եկեալ յԵրուսաղէմ պահանջէին 'ի միաբանաց զդրամն տոկոսեօք, և այսպիսի դառն վշտաց և նեղութեանց ժամանակին՝ վանքն Ս · Յակոբայ սկսաւ անկանիլ ընդ պարտեօք։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս Յակոբ Եպիսկոպոս փոխանորդն՝ խորհուրդ 'ի մէջ առեալ ընդ գլխաւորս ազգին, եւ ընտրել նոցա Պատրիարք Աթոռոյն զդարպասընկալ Թէոդորոս Եպիսկոպոս Վանեցի, բայց Թէոդորոս ինքնին հրաժարեցաւ 'ի ծանր պաշտօնէ անտի, հայեցեալ 'ի չքաւորութիւն Աթոռոյն և 'ի դառնութիւն ժամանակին,

Թէպէտ եւ բազմիցս յորդոր եղեն նմա միաբանք յանձն առնուլ՝ այլ չեղեւ հնար, զի նա պատճառէր զոկարութիւն անձին իւրոյ։ Ապա ազգ արարին միաբանք զմիոս Թէոդորոսի և խնդրեցին չզնդել առ այժմ զընտրութիւն Պատրիարքի · զի 'ի դառն եւ յանբարի ժամանակիս դըժուարին էր ստիպել և կամ յորդորել զոք յայն պաշտօն · և յայն սակս բարի վարկան կառավարել զԱթոռն ժամանակս ինչ առանց Պատրիարքի · զի երկիրն Պաղեստինոյ տակաւին կայր 'ի ծվանս յերեսաց մրրկեալ խռովութեանց։ Գրեաց նաեւ ինքն Թէոդորոս զպատճառ հրաժարման իւրոյ · զմի ըստ միոջէն ընթեռնուլ, ասէր, 'ի հանրագրութիւնս միաբանաց և մի լինել մեղադիր։ Զի միաբանք կային վարանեալ և տարակուսեալ յերեսաց պարտուց և նեղութեանց։ Սմին իրի առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս զՊետրոս և զԿարապետ Եպիսկոպոսունս եւ զՍտեփաննոս վարդապետն՝ բանիւ բերանոյ պատմել զթշուառութիւն միաբանաց՝ և հնարս գտանել ազատութեան · զի ինքեանք յորդորանօք եւ սիրով կապեալ ընդ միմեանս, սպասէին այցելութեան Տեառն և ազգին, եւ 'ի վերջոյ ասէին · զի եթէ ձեռնտու լեալ երեւելիք ազգին ազատեսցեն զՍ · Աթոռն 'ի պարտուց, խոստանամք մնալ 'ի վանս · իսկ եթէ ոչ՝ ցրուիլ երթալ իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոց։

Եւ զկնի մեկնելոյ նոցա յԵրուսաղէմ, կացուցին փոխանորդ զԿիրակոս վարդապետ 'ի տեղի Պետրոսի։ Եւ 'ի սոյն աւուրս Մէհէմմէտ Փաշա էառ 'ի Հայոց 40 քսակս արծաթոյ, նոյնպէս և 'ի Յունաց, որոյ վասն դարձեալ փութացուցին գիր զկնի նոցա (1800)։

Նախ քան զմեկնիլ մեծի Վէզիրին 'ի կողմանցն Յոպպէի, խնդրեաց 'ի Հայոց 'ի ձեռն սեղանաւորի իւրոյ Անտոն Աղայի իբր օգնութիւն կամ փոխ 100,000 դահեկան · զի որպէս օգնեցին ասէ, յառաջագոյն տէրութեան, օգնեսցեն այժմ և ինձ։ Անտոն Աղա ծանոյց նմա զաղքատութիւն վանաց, և առաջին պարտքն տակաւին անվճար · բարկացեալ ընդ այս Եպարքոսն ասէ · գիտեմ զդարս ձեր, զի քաղցրութեամբ չկատարէք զիրս ինչ · կոչեցից ասա զտեսուչ վանաց Յոպպէի, և 'ի նախատելն իմ զնա յատենի, տեսանես թէ որպէս փութով կատարէ զինդիրն։

ասէ Անտոն, դիտեմ թէ 'ի վանս Հայոց չգտանի գրամ, այլ գրեցից առ վանահայանս Երուսաղէմի և առուցմ գոցի ինչ, առաքեսցեն այսր յանուն իմ. 'ի հաճիլ Եպարքոսին այսմ, անապարեալ Անտոնի գրեալ ազդ արար յԵրուսաղէմ եպիսկոպոսաց չորիցս անդամ. անպատճառ յղել ըստ գրամն, զի անկարելի էր դառնալ Եպարքոսին 'ի բանից իւրոց։ Իսկ միաբանք դեգերեալ այսր անդր ազաչանօք եւ պաղատանօք հազիւ ուրեմն գտին 50,000 դահեկան տոկոսեօք, և առաքեցին առ Անտոն։ Այլ Եպարքոսն ոչ բաւականացեալ այնու՝ ետ կոչել առ ինքն զտեսուչն Յոպպէի և սպառնացաւ նմա ինքն և Ստեփան Ամիրայն, որ այն ինչ եկեալ էր առ Անտոն 'ի Մատէն աւանէ, փութալ հասուցանել նմա 50,000 դահեկան. զի ահա ասէ Փիլիպպոս ամիրայն դայ յԵրուսաղէմ յուխտ, և է 'ի ճանապարհի բերել ինձ դրամ, առեալ անտի հատուցից ըստ պարտս իմ։ Յայնժամ տեսուչն և Ստեփան Ամիրայն ելին յԵրուսաղէմ, եւ պատմեցին եպիսկոպոսաց զրանս Եպարքոսին, և նոքա իբրեւ խելագար ապշեալ մնացին, զի ոչ գտանէր դրամ 'ի քաղաքին. վերստին ելին դեգերիլ 'ի դրունս, ոմանց եւոն փոխանակագիր հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, և յոմանց տոկոսեօք առեալ, հազիւ ճարեցին և առաքեցին 'ի բանակն։

Իսկ այլազգիք Սիոնի 'ի բերել զբեռինս իւրեանց 'ի Գազայէ՝ 'ի ճանապարհին հասեալ 'ի գիւղն Սէրիզ՝ յափըշտակեցին Արաբացիք զբեռինս նոցա և տարեալ եղին 'ի գիւղն՝ թէ սոքա են Հայոց. այլազգիք Սիոնի եկեալ 'ի դուռն վանաց աղաղակէին և խօսէին բանս անլսելիս. միաբանք ազդ արարին քաղաքապետին անօրինել զգործն, և նա ծանոյց զիրան Մէհէմմէտ Փաշայի, խոստացաւ եւ նա կարգաւորել զնոցին։ Վէճն Արաբացւոց էր այս, որպէս թէ Պատրիարքն և Փոխանորդն Հայոց 'ի գնալ իւրեանց 'ի Յոպպէ և 'ի դառնալն անտի՝ 'ի ճանապարհին ոչ են տուեալ զահմանեալ պարգեւս նոցին, և այժմ խնդրեն զայն։

Կռիւ եւ նեղութիւն այլազգեաց Սիոնի սաստկանայր օր քան զօր, և յաւուր միում եկեալ 'ի դուռն վանաց՝ յետ անարգելոյ՝ գնացին բազմութեամբ 'ի վանս Սուրբ

Փրկչի, ուր ժողովեալ էին միաբանք եւ ժողովուրդք 'ի ժամ հաշու, և մտեալ յեկեղեցին խանդարեցին զժամերգութիւնն, և կալեալ զոմանս դանիւք և խոշտանգանօք ճգեցին արտաքս, և զոմանս հարկանելով մուծին 'ի Սիոն ուր եդին 'ի բանտի, և այլք փախուցեալ եկին 'ի Ս. Յակոբ։ Լուեալ Եպիսկոպոսաց զեղեալսն՝ առաքեցին զայլազգի դառնալսն և զՀավալ Վէղիրին՝ որ եկեալ էր յայնժամ ընդ տեսչին Յոպպէի իբրեւ Մուսաշիր, ազատել զբանտարկեալսն 'ի Սիոն։ Սակայն կարի դառնացեալ սիրտ բոլոր միաբանաց, ծերունի Եպիսկոպոսաց և Վարդապետաց ընդ այսպիսի անարգանս նոցին, կոչեցին զԵնիչէրի Աղասին և յանձն արարին նմա զվանս Ս. Յակոբայ՝ և ինքեանք ամենեքեան ելին 'ի ճանապարհ յետիոտս ինչանել 'ի Յոպպէ, և հասին մինչ 'ի գիւղն կամուրջի 'ի Գալանեա. լու եղեւ 'ի քաղաքին թէ թողին միաբանք Հայոց զվանս իւրեանց և գնացին 'ի բաց։ Յայնժամ Մուֆթին, Դպրապետն դատարանի՝ Եէնիչէրի Աղասին և այլք ոմանք 'ի մեծամեծաց քաղաքին յարուցեալ պնդեցան զհետ նոցա, և հասեալ 'ի ճանապարհի բազում թախանձանօք և աղաչանօք հազիւ կարացին դարձուցանել զնոսա յետս՝ և գըրեցին զեղեալն առ Ահմէտ Փաշա։ Այսպիսի էր նեղութիւն ժամանակին, թող զպակասութիւն հացի, զի ոչ կարէին պատրաստել պարէն միաբանաց, և էին 'ի կասկածի ցրուիլ և գնալ նոցա յԵրուսաղէմ (1801. յ8 Փետրվարի)։ Եւ 'ի սոյն ժամանակի հասանէ գումար տոկոսաւոր պարտուց 74,730 դահեկան, սկսեալ յաւուրց անտի Յովակիմայ եւ Պետրոսի։

Իսկ Մէհէմմէտ Փաշա՝ որ նստէր 'ի Ռեմլէ՝ կոչեաց առ ինքն զԹարգմանս յԵրուսաղէմ և բանադատեալ ընդ նոսա էառ յերկուց վանաց 100,000 դահեկան. զայս նամակ ողբով և արտասուօք դրեն 'ի Կոստանդինուպոլիս, զի բազում աղաչանօք ժողովեալ էին զզարդս կանանց և վճարեալ, երկուցեալ յապագայ չարեաց և նեղութեանց. և ոմանք 'ի միաբանաց սկսան մեկնիլ յԵրուսաղէմ, եւ այլոցն սպասէին առնուլ զպատասխանիս նամակացն, եւ ըստ այնմ գործել։

Փակեցան դրունք քաղաքին Երուսաղէմի, և պատուէր

եղեւ գլխաւորացն այլազգեաց զգուշանալ քաղաքին, եւ թողին զերկոսեանն բաց՝ կարդեալ 'ի նոսա զինեալ պահապանս, չընդունել զոք յարտաքուստ 'ի ներքս, թէ և կարի յերեւելեաց անտի իցէ՝ եւ եթէ ոք յանդգնեսցի բռնութեամբ մտանել՝ գլխատել զնա, յորմէ արգելան ուխտաւորք քրիստոնէից, ընդ որս և սպասաւոր Անտոն աղայի՝ որ եկեալ էր վասն հարկաւոր իրիք գործոյ, և այս եւս 'ի վնաս վանականաց։

Եւ 'ի սոյն աւուրս երեւեցաւ յԵրուսաղէմ նշան ժանտամահ հիւանդութեան, որ և ոմանք ըմբռնեալ 'ի նոյն մեռան, (Փետրվար 30)։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է։

Ընտրութիւն Թէոդորոսի։ Շնորհաւորութիւն Բգեշլոց։ Պաշարումն Ցոպպէի՝ և պատերազմ։ Վէճ Լատինաց։ Կիրակոս Կաթուղիկոս Աստ։ Վէճ Յունաց 'ի Ս։ Աստուածածին։

Ի ԼԻՆԵԼ աղգային Ժողովոյ 'ի Կոստանդինուպոլիս (1802։ Փետրվար) վասն ընտրութեան Պատրիարքին Երուսաղէմի, յետ բազմադիմի բանից և վիճմանց, հաճութեամբ բազմաց վերատին ընտրեցաւ Թէոդորոս եպիսկոպոս Վանցի։ առ որ յառաջագոյն գրեալ էր Յակոբ եպիսկոպոս յանձն առնուլ զպաշտօնն զայն։ Եւ յետ այնորիկ գրեցաւ գիր 'ի դիմաց Ժողովոյն, գրեցին նաեւ ոմանք յերեւելեաց աղգին առանձին, ընդ որս և Յակոբ եպիսկոպոս հարկեցուցիչ բանիւ, յորդորելով զնա յարգել եւ մեծարել զընտրութեան պատիւն և զկամս աղգին։ Զայսոսիկ գրեանս բերին յԵրուսաղէմ Պետրոս եպիսկոպոս և Կարապետ վարդապետ յաւուր Աւագ հինգշաբթի ('ի 10 Ապրիլի)։ Ընթերցեալ Թէոդորոսի զգրեանս և զմտաւ ածեալ զծանրութիւն զանխուսաբերի լծոյն, յօժարեցաւ հնազանդիլ կամաց աղգին, եւ յանձն առ նստիլ յԱթոռն և վարել զիշխանութիւն Պատրիարքութեան Երուսաղէմի,

յոյր սակս զրեաց գիր հաճութեան եւ առ երեւելիս աղգին, յոր ձեռն արկեալ կնքեցին բոլոր միաբանք և առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս։ Ի հասանիլ Պատրիարքական Պերաթին, եւ արձանագրեալ զայն 'ի դատարանի, և շահեցաւ զմիտս այլազգեաց ընծայիւք։ այլ ոչ նստաւ յԱթոռն առ ժամայն, եւ զկնի ամսոց, յերեկոյի շաբաթու 'ի նախատօնակի Պայծառակերպութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, նստաւ հանդիսիւ յԱթոռն Երուսաղէմի (1802 'ի 19 Յուլիսի) յետ մնալոյ թափուր Աթոռոյն զամս իբրեւ 2։

Ի սմին ժամանակի Մէհէմմէտ Բգեշլն Երուսաղէմի, որ նստէր 'ի Յոպպէ, գրեաց յԵրուսաղէմ առ Աղ-հէ կոչեցեալ այլազգիս, եւ խնդրեաց 'ի նոցանէ հասուցանել նմա 60 քսակս արծաթոյ։ Եւ նոցա ընթերցեալ զգիրն, իսկ և իսկ ապստամբեալ դիմեցին 'ի զէն և աղմկաւ լցին զքաղաքն։ փակեցին զդրունս նորին և եդին պահապանս, և միաբանեալ ամենեցուն գրեցին գիր ամբաստանութեան բազմակնիք զնմանէ առ Արքայ եւ առ Ճէզար Փաշա, որ նստէր յԱքքէ։ Գլխաւոր կէտք ամբաստանութեանն էին այսոքիկ։ Մէհէմմէտ Բգեշլն ասէին, միայն 'ի հրէից էառ 700 քսակս արծաթոյ, իսկ 'ի քրիստոնէից ոչ գոյ թիւ։ պարտ է բառնալ զայրն 'ի քաղաքէ աստի և առաքել զայլ ոք 'ի տեղի նորա։ և խնդրեցին 'ի Ճէզար Փաշայէ առաքել զմի ոմն 'ի սպասաւորաց իւրոց յանձնել նմա զքաղաքն, զի զնա ճանաչէին սկսա և գլուխ ինքեանց։ Իսկ Ճէզար Փաշա զկնի աւուրց ինչ առաքեաց զԻսմայիլ Փաշա 3 թուղով բազմութեամբ զօրաց և Արաբացւոց 'ի Ռեմլէ, մարտնչիլ ընդ Մէհէմմէտ Փաշայի որ 'ի Յոպպէ։ Եւ ընդ Սիւլէյման Փաշա 2 թուղով յԵրուսաղէմ, նոյնպէս զօրօք, որ և մեծաւ փառօք եմուտ 'ի քաղաքն ('ի 10 Մայիսի)։ Եւ յետ երկուց աւուրց դնացին առ նա յայցելութիւն Փոխանորդք երից աղգաց, և զկնի բանից՝ մատոյց իւրաքանչիւրոց մէն մի Պույրուլթի՝ գրեալ յանուն երից վանաց՝ ելերկնչիլ յումեքէ։ Եւ Սիւլէյման բանիւ բերանոյ յայտ արար թէ հրաման Ճէզար Փաշային է, 'ի գալստենէ Մէհէմմէտ Փաշայի յԵրուսաղէմ մինչեւ ցայժմ՝ զոր ինչ տուեալ էք նմա՝ գրեալ 'ի տումարի բերէք առ իս յղել

առ Ճէզար և նա 'ի Կոստանդինուպոլիս։ Հայք տուեալ էին նմա 300 քսակս արծաթոյ, նոյնպէս եւ Յոյնք, զոր հաստատեալ 'ի դատարանէ՝ ետուն նմա։ Եւ Իսմայիլ Փաշա եկեալ պաշարեաց զքաղաքն Յոպպէ, և սկսաւ պատերազմիլ ընդ Մէհէմմէտ Փաշայի՝ որ որջացեալ կայր անդ, և 'ի նեղ արկեալ տագնապէր զտեսուչն Հայոց զՂազար վարդապետ, արկեալ զնա 'ի դանս և 'ի բանտս։ Տեւեաց պատերազմն ընդ երկար՝ զի Իսմայիլ արտաքուստ և Մէհէմմէտ 'ի ներքուստ՝ որոտմունք հրանօթից դղրդէին ըզդաշտն Սարոնի։

Մէհէմմէտ Փաշա կոչեալ զվարդապետս վանօրէից՝ երկիցս և երիցս՝ պահանջէր 'ի նոցանէ դրամ, և 'ի բաց ասել նոցա, հարկանէր ուռամբ և կամ կացնիւ՝ որ 'ի ձեռին իւրում, և սպառնայր ժողովրդոց մատնել 'ի մահ, և այսպիսի եղանակաւ էառ 'ի Ղազար վարդապետէ 120 քսակս, թող զայլս։ Քայքայեալ աւերեցան շինուածք վանաց եւ կալուածոց, զի այժմեան բռնութիւնն առաւել եղեւ քան զԳաղղիացւոցն, զի յայնժամ վաճառեցին զոսկի, զարծաթ և զպղինձ, և զծանրութիւն հարկացն բարձին։ Իսկ այժմ մերկացեալ յամենայնէ՝ ոչ ինչ գտանին հատուցանել նոցա։ Եւ յաւուրս յայսոսիկ եկ համբաւ լինել կուսակալ Դամասկոսի և Երուսաղէմի Սալտուլլահ Փաշայի, որոյ վասն հրամանաւ Ճէզար Փաշայի առին զսահմանեալ տարեկան տուրսն՝ զորս կոչէին Ռոսոդէյեր և Սանճաքէյէ, և ասա պահանջէին 50 քսակ եւս Իէրուշէյ։ Նեղեալ յայսպիսի տառապանաց Թէոդորոս Պատրիարքի վշտագին սրտիւ գրեաց առ ազգայինս Կոստանդինուպոլսոյ ձեռն կարկառել և թեթեւացուցանել զծանրութիւն բեռին։

Միաբանք Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան, 'ի պատարագելն յիւղաբերից սեղանն, զլուացարանն դնէին առաջի Խաչելութեան պատկերի, եւ լուսարարն Լատինաց յանդգնութեամբ համարձակեցաւ բառնալ զայն անտի. 'ի ծանուցանել Թէոդորոսի Փոխանորդի նոցին, նա ազդարար 'ի ձեռն ոմանց չդնել զայն 'ի նոյն տեղի. և ընդդիմանալն Հայոց, ահացուցին զնոսա երկեցուցիչ բանիւք լինել անհնարին. ապա 'ի խորհրդեան սահմանեալեն դրել 'ի Կոստանդինուպոլիս և յայլ տեղիս, թէ Հայք բրա-

նցեալ յափշտակեն զտեղիս մեր, այլ այս խորհուրդ նոցա խափանեցաւ խոհեմութեամբ ոմանց։ Եւ յետ այնորիկ եկին ոմանք 'ի Լատինաց առ Հայս, ասեն. եթէ կամիք դնել զլուացարանն ձեր յայն տեղի, դիցուք և մեք զերկուս աշտանակս մոմեղինօք 'ի սեղանն Լուսաւորչի, 'ի ժամ մշանջենաւոր թափօրին. Հայք մերժեցին զընտրեալս նոցա եւ բարձին զլուացարանն 'ի տեղւոջէն յայնմանէ (յ3 Սեպտեմբերի)։

Եհաս յականջս Թէոդորոս Պատրիարքի, թէ Գրիգոր Պատրիարք Կոստանդինուպոլսոյ առեալ է հրովարտակ Արքունուստ չ'շրջել վարդապետացն Հայոց, ընդ որս և Նուիրակացն Երուսաղէմի 'ի գաւառս և 'ի քաղաքս. եւ եթէ ոչ դոցի 'ի ձեռս նոցա դիր Դանիէլի Կաթուղիկոսի, կալեալ դիցեն 'ի բանտի։ Գրեաց առ Փոխանորդն վասն այսր իմանալ զստոյգն. զի ինքն ծանուսցէ 'ի Դուռն և բովանդակ ազգին, թէ որպիսի հնարիւք արկանել կամին զԱթոռն ընդ իշխանութեամբ իւրեանց. զի եթէ չ'լինիցի շահ ինչ ասի՝ թողուլ զԱթոռն և 'ի բաց դնալ, զի նոքա եկեալ տիրեսցեն։ արդեալ զ3000 դահեկանն զոր տայր Փոխանորդն իրրու ծախք խոհանոցի. զայսոսիկ ստիպմամբ գրեաց, զի փութով առցէ զպատասխանին ('ի 25 Հոկտեմբերի)։

Տէր Կիրակոս Կաթուղիկոս տանն Կիլիկիոյ եկն յԵրուսաղէմ յուխտ, ունելով ընդ ինքեան զարս 15. և Թէոդորոս Պատրիարք սիրով և յարգանօք ընկալաւ զնա և զորս ընդ նմա, պատրաստեալ սենեակ ըստ արժանոյն, և յեկեղեցին աթոռ 'ի ձախակողմեան դասագլուխն. մի սար հագուստ ժամացուցիչ և ազնիւ մատանեաւ. և 4 եպիսկոպոսաց մէն մի ծաղկեայ փիլոն և մատանի. և 4 վարդապետաց և քահանայից դարձեալ ծաղկեայ փիլոն և սպասաւորացն ջուխայ վերարկու. 'ի տօնի Քառասնօրեայ դալստեան Տեառն 'ի տաճարն՝ Պատարագ ամենվանեաւ, յաւուր Ծաղկազարդի յերեկոյեան և առաւօտեան Թափորն և Պատարագն, և արմաւենի բաժանելն՝ շնորհելով նմա, և Զատիկ երկուշաբթի աւուր մեծահանդէս Թափորն՝ 'ի Ս. Յակոբ։ Պատուեցին զնա նաեւ Յոյնք և Լատինք տալով կոչունս 'ի վանս իւրեանց. եւ զկնի տօնի Զատկին

մեկնեցաւ յԵրուսաղէմ ուրախութեամբ և սիրով՝ հանդերձ իւրովքն ընդ ուխտաւորս տարեայն 'ի կողմանս Աքքէի, ուր եդիտ բազում մեծարանս 'ի ձէզար Փաշայէ։ Հոգաց Թէոդորոս զծախս ճանապարհին եւ զկաթուղիկոսական պարգեւսն։ (1803, 'ի 4 Յունվարի)։ Յընծայսն, զոր առաքեաց Թէոդորոս առ Յովհաննէս Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ նշանաւոր է պատուական մատանին յակինթ քարամբ (կեօք եադութ · տամլայ), որ կարի սիրելի էր ինքեան Թէոդորոսի։

Իսկ 'ի սաստկանալ սովոյն եւ նեղութեան 'ի քաղաքն Յոպպէ՝ փախեաւ փոքր նաւակաւ իւրովքն հանդերձ Մէհէմմէտ Փաշա Ապու Մէրադ և եհաս 'ի Բերիա և անտի 'ի Տիգրանակերտ (յ2 Փետրվարի)։ Բարձաւ պաշարումն և բացան դրունք քաղաքին, եւ ազատեցան բնակիչք 'ի նեղութեանց եւ 'ի տառապանաց։ Զերծեալ անտի եկին յԵրուսաղէմ տեսուչք վանօրէից՝ Հայոց, Յունաց եւ Լատինաց, և պատմեցին զանտանելի տառապանս և զաշխատութիւնս իւրեանց 'ի գործ պատերազմին դանիւք, հարուածովք և նախատանօք, զորս կրեցին ինքեանք և ժողովուրդք 'ի ձեռաց բռնաւորին այնմիկ · զյափշտակութիւն և զբռնի պահանջումն դրամոց, որոյ միայն տուեալ էր Ղազար վարդապետ 200 քսակ, առեալ տոկոսօք ամսի եւ անտի · եւ զսաստկութիւն սովոյն, մինչեւ ուտել բնակիչաց զմիս գրաստուց եւ այլոց անասուրբ կենդանեաց զաւուրս 20, և զսերմն բամբակի խառնեալ ընդ աղրս և ընդ արիւնս անասնոց եփեալ ուտէին փոխանակ հացի, և զայլ քստմնելի իրս՝ զորս ոչ տանեն լսելիք 'ի պատմելն։ Յերեսաց պատերազմին քայքայեցան բազում տեղիք։ Տեսուչքն Յունաց և Լատինաց հասեալ յԵրուսաղէմ կընքեցին զկեանս իւրեանց 'ի լլկանաց անտի · իսկ Ղազար վարդապետ թէեւ տկար՝ վերստին դարձաւ 'ի Յոպպէ, յորդորանօք Պատրիարքին։ Սակայն պարտն Յոպպէի կուտեցան 'ի վերայ Թէոդորոսի՝ զոր սկսաւ վճարել նեղութեամբ և տառապանօք, թող զտարեկան սահմանեալ տուրս և զայլ պահանջս այլազգեաց և Բդեշխից, որոց 'ի հատուցանելն կրէր բազմօրինակ վիշտս։ Յեկեղեցին Ս. Աստուածածնի 'ի ձորն Գեթսէմանի տեսուչն Յունաց

յաւուր Կիւրակէի ոչ ինչ պատճառաւ եհար և խորտակեաց զմամեղէնս և զերիս կանթեղս կախեալ 'ի շղթայէ առաջի գերեզմանին, նախատելով զմիարանութիւնն եւ զազգն, և արգել զժամարարն մտանել 'ի գերեզման։ Լուեալ զայս Թէոդորոսի՝ աղդ արար Փոխանորդին Յունաց 'ի ձեռն Թարգմանին իւրոյ, և նորա կոչեալ զՏեսուչն յանդիմանեաց՝ և խնդրեաց զի ներեսցէ Պատրիարքն, իբրու թէ նա 'ի բարկութեան իւրում յանդգնաս արարեալ իցէ զայն։ Միարանք Հայոց 'ի խորհուրդ գումարեալ քննեցին զվերական դրեանս վասն գերեզմանի Ս. Կուսին, և գտին զնոսա հաստատուն, մեծարանելն և խրոխտալն Յունաց՝ հակառակ էր այնց գրոց։

Եւ 'ի խորհրդեան սահմանեցաւ՝ զի ինքեանք եւս յաւելցեն զայլ իրս յեկեղեցւոջ անդ, որպէս Յոյնք արարեալ էին։ Եւ զկնի աւուրց եկին ոմանք 'ի Յունաց մինչնորդ լինել հաշտութեան, իսկ Աւետիս Թարգման տայ նոցա զարժանաւոր պատասխանիս, առաջի դնելով զներողութիւնն Հայոց եւ զըմբոստութիւնն Յունաց՝ սահմանելով նորանոր իրս յեկեղեցւոջ անդ, և զսահմանեալն Հայոց ջանալ բառնալ և ջնջել 'ի միջոյ։ Ո՛վ եւ ձեզ զիշխանութիւնդ զայդ · գործել ըստ հաճոյից ձերոց՝ և աղարտել զզատիւ ողջոյն ազգի մերոյ · զի եթէ ոչ էր լուեցուցեալ մեր զծերունիս՝ վաղու եւս հանդիսալէր ձեր մեծամեծ վնասուց՝ և զայլ սոցին նման բանս լուեալ Յունաց մեկնեցան։ Իսկ Հայք կախեցին 6 կանթեղս 'ի շղթայէ անտի փոխանակ երից, և սամանեցին ածել աւել յեկեղեցին։ Լուեալ զայսոսիկ Յունաց վերատին եկին առ Թէոդորոս՝ և խնդրեցին 'ի նմանէ բառնալ զերիս կանթեղս 'ի շղթայէ անտի։ Առ որս եատն պատասխանի՝ 'ի խորտակել երից կանթեղացն՝ ոչ ինչ խնդիր արարին միարանք ձեր, այժմ ընդէ՞ր թախանձեն բառնալ զերիս կանթեղս։ ուստի՞ առեալ է ձեր զայդ հրաման օր քան զօր յաւելուլ և սահմանել նորանոր իրս, և այլ սոցին նման բանք · 'ի մէջ առին նաեւ զբանս Աւետիս Թարգմանին զոր խօսեցեալ էր նոցա, 'ի վերջոյ անկարելի ասացին բառնալ զերիս կանթեղս · իսկ եթէ ոչ անսայք՝ բողոք բառնամք առ դատաւորն և դատաստան խնդրեմք, որոյ հրամանաւ արար զայն

Տեսուչն ձեր. և զկնի երկարելոյ բանից յերկուց կողմանց եկեալ մեկնեցան Յոյնք 'ի վանս իւրեանց։ Այլ Թէոդորոս Պատրիարք գրեալ ծանոյց առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, լինել զդոյշ 'ի նենգութենէ և 'ի չողոքորդ բանից Յունաց. զի մի' խաբեալ 'ի նոցանէ՝ ստիպեսցեն զինքեանս վասն կանթեղացն։ Ապա յայտ առնէ թէ Յոյնք որպիսի անարգական բանիւք նախատական առնեն զմիաբանս և զուխտաւորս Հայոց յամենայն տեղիս՝ համարելով զնոսա իբրեւ զգերիս եւ զաստուկս, ապա խնդրէ հոգ տանել և դարմանել զիրան և մեղմել զխրոխտանս Յունաց։

Դատաւոր քաղաքին լուեալ զայսոսիկ 'ի ծառայից իւրոց՝ առաքեաց զդպրապետն 'ի վանս Հայոց, եւ եհարց 'ի նոցանէ՝ թէ զի՞նչ է զոր լսեմս, ընդէ՞ր ոչ ազդ արարիք մեզ. եւ նոքա ասեն՝ ներեսցէ մեզ դատաւորն, զի չէր ինչ խնդիրն այնչափ կարեւոր, և երբեմն պատահին այսպիսի դէպք 'ի միջի մերում, եւ իբրեւ թեթեւ ինչ զանց արարաք։ Այլ դատաւորն դարձոյց անդրէն զդպրապետն յղեալ ընդ նմա և զիոխանորդ իւր, ընթեռնուլ զվաւերական գրեանս և տեսանել զսորտակեալ կանթեղսն, եւ ըստ այնմ տալ գիր, մի գուցէ ասէ, հասանիցի խնդիրն յականջս տերանց մերոց, եւ 'ի հարցանել նոցա զամօթի հարցուք իբրեւ զոգէտ ոք։ Իսկ Յոյնք յայտնի և ծածուկ խորհէին և խօսէին իսկ զրկել իսպառ զՀայս յեկեղեցւոյ Ս. Աստուածածնի, ուստի հարկ եղեւ Թէոդորոսի առաքել զհրովարտակն ընդ գրի դատաւորին 'ի Կոստանդինուպօլիս՝ և նորոգել զայն։ Եւ 'ի լինել բանից 'ի միջ Հայոց և Յունաց սակս խնդրոյն 'ի թագաւորեալ քաղաքի անդ, դրեցին Պատրիարքունք փոխադարձ գիր յԵրուսաղէմ, զի զդիրն Յունաց առաքեաց Պատրիարքն Հայոց՝ և զՀայոցն Յոյնք։ Յետ ընթեռնլոյ զդրեանս, եկին դարձեալ Յոյնք 'ի վանս Հայոց և ասեն. փոխեսցուք ըստ Տեսուչս և զհուսարարս, և եղիցի ամենայն ինչ ըստ առաջնոյն, այսինքն՝ բառնալ զերիս կանթեղսն, արգելուլ զաւելածութիւնն՝ և չմոռանել 'ի գերեզման 'ի Կիւրակէից. այլ Հայք ոչ առին յանձն, պատուիրեսցուք ասեն երկոցունց եւս վարիլ սիրով ընդ միմեանս, եւ եթէ պատահեսցի դէպք ինչ՝ ազդ արասցեն մեզ, եւ մեք զարժանն անօրինեսցուք։ Սակայն զկնի աւուրց ինչ՝ Հայք կամօք իւրեանց բարձին զերիս կանթեղսն՝ զմտաւ ածեալ զի մի առիթ լիցին ապագայ մեծի չարեաց եւ խռովութեանց՝ սրպէս եղեւ իսկ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Գործ ճէզար Փաշայի։ Ցեղասէր գեղջ Յովհաննու ծննդեան։ Խռովութիւն Յունաց։ Օթման Ապուդէջ գիւղ։ Նեղութիւն ուխտաւորաց 'ի Հանապարհի։ Հոգեւոր Լաւոդիկեայ։ Գործ Մեհեմմէտ Փաշայի Ապու Մէրագ կոչեցելոյ, և բռնութիւնք նորին 'ի Յոպպէ։

ՅԵՏ փախստեան Ապու Մէրագ Մէհէմմէտ Փաշայի և տիրելոյ բովանդակ երկրին ճէզար Փաշայի՝ հրաման ետ Յոպպէացւոց, չինել և նորոգել զաւերեալ տեղիս յերեսաց պատերազմաց, թէ առ Նաբոլիոնիւ՝ և թէ առ Մէհէմմէտ Փաշայիւ, եւ թէոդորոս Պատրիարք ձեռն արկ նորոգել զաւերեալ տեղիս Յոպպէի վանաց, եւ 'ի տեղի փայտաշէն ծածկութիւն, մնացեալ 'ի Գրիգոր Շղթայակրէ, ետ կառուցանել կամար քարուկիր 'ի ձեռն Ղազար վարդապետի Տեսչի տեղւոյն. զայն տեսեալ մաքսապետին և ոմանց այլազգեաց՝ խափանեցին զգործն և կամէին քակել զշինուածն, զի չունիք ասէին հրաման 'ի ճէզար Փաշայէ։ Իսկ Թէոդորոս լուեցուցեալ զնոսա առ վայր մի՝ էառ գիր 'ի դատաւորէն Երուսաղէմ՝ և ետ վերստին սկսանիլ 'ի գործն և գրեալ առ ճէզար՝ երեր հրաման եւս 'ի նմանէ. այլ չվստահացեալ 'ի նոյն, գրեաց 'ի Բիւզանդիոն հանել հրովարտակ արքունուստ, զի մի յետոյ այլազգիք բռնասցին 'ի վերայ իւր՝ և իւրոցն։

ճէզար Փաշա ետ գրել 'ի ձեռն Յոյն քահանայի միոյ յԵրուսաղէմ առ Հայս և առ Յոյնս՝ փութով առաքել առ ինքն 200,000 դահեկան, հանդերձ տարեկան սահմանեալ տրօք և ընծայիւք. 'ի հասանիլ գրոյն սարսափեցան Յոյնք և Հայք, և խորհէին առաքել առ նա զմանս իբրեւ աղաչաւորս, բայց երկնչէին՝ զի մի խեղանդամ դարձցին

նոքա յետոյ, քանզի բազմաց հանեալ էր զմի ակն, և ոմանց հատեալ զունջն և զականջն։ Թէպէտեւ գրեցին երկիցս դիր աղաչանաց, այլ քահանայն ոչ կարաց մատուցանել զայնս, այլ ստիպէր հասուցանել զդրամն, զի ծածկաբար առեալ էր անթերի 'ի Լատինաց։ Ուստի յակամայ կամս պատրաստեցին Հայք 114,000 դահեկան, նոյնչափ և Յոյնք, և առաքեցին յԱքքէ 'ի ձեռն Գաբրիէլ և Մեսրոպանոս վարդապետաց։ Իբրեւ աղէ արարին զժամանել գանձուն, եւ խմացեալ ճէզար զամբողջութիւնն, լուեաց։ զի այն ինչ դարձեալ էր 'ի պատերազմէ 'ի կողմանց Սամարիոյ և այլոց, և նոքա յետ հատուցանելոյ զդրամն դարձան յետս։ Խռովութիւն յեգիպտոս յերեսաց Բեօլէմէն կոչեցելոյ, խեղդամահ լինելն եղբօր Եղիսաբեթ տիկնոջ, որոյ անուն կոչէին Մուստաֆա քեահեայ, որպէս գրէ զայս Տեսուչ վարդապետ տեղւոյն։

Քաղաքապետն Երուսաղէմի եղեալ էր 'ի բանտի զոմն 'ի բնակչաց գեղջ Յովհաննու Մնդեան վասն չհատուցանելոյ զհարկն։ զայրացեալ ընդ այս գիւղականաց զհետ էին գործել չարիս՝ ուխտաւորք Հայոց ըստ աղդարարութեան Պատրիարգին չելանէին արտաքս քան զքաղաքն։

Իսկ Յունաց ծաղր արարեալ զնովաւ առաքեցին 'ի Բեթղեհէմ զ50 ուխտաւորս, և 'ի դառնալ նոցա անտի, ընդառաջ ելին գիւղականք 'ի դաշտի անդ մերձ 'ի գիւղն Յուդայի, և կալեալ զարս և զկանայս մերկացուցին, և զոմանս գան հարեալ վիրաւորեցին, ապա որոշեցին 'ի նոցանէ զարս 18 եւ վարեցին զնոսա 'ի գիւղն իւրեանց։ Յոյնք ամապարեալ ետուն արձակել զկալանաւոր նոցին, բայց նոքա յետ երկուց աւուրց արձակեցին զուխտաւորս, այլ զաւարն զորս կողոպտեցին, ոչ կամեցան տալ։ Յոյնք եւ ուխտաւորք նոցին հանդիպեցան վնասուց յերեսաց անիշխանութեան քաղաքին (1803։ Դեկտեմբեր)։

Միաբանք Յունաց գրգռեալ 'ի փոքր շփոթութենէ եղելոյ յեկեղեցին Ս։ Աստուածածնի, որպէս գրեցաք, ծածկեցին առ ժամն զխորհուրդս իւրեանց, եւ 'ի վերին երես բարեկամ ցուցանէին զինքեանս Հայոց, արք եղբարք եմք ասելով, և այպէս ընդարմացուցեալ զնոսա, դտին պատեհ ժամանակ՝ և բանս եդին ընդ ազգայինս իւրեանց

'ի Կոստանդինուպօլիս, խսպառ զրկել զՀայս 'ի ժառանգութենէ Ս։ Տեղեաց, ամբաստան լեալ 'ի Դուռն առին հրովարտակ 'ի Սուլթան Սէլիմ երրորդէ հակառակ Հայոց ՌՌԹ, որպէս թէ՝ Հայք տիրել կամեցեալ են տեղեաց և ժառանգութեանց նոցին, եւ առանց հրամանի կախեալ կանթեղս։ Եւ յետ այնորիկ համարձակութիւն գտեալ ձգեցին 'ի կողմն իւրեանց զմեծամեծս Դրան, և սկսան որոնել զարձանագրութիւնս հին հրովարտակացն Հայոց։ Խմացեալ զխորամանկութիւնն Յունաց Զէլէպի քէօսէ քեահեայ Բէյիզ էֆէնտի, ազգ արաբ լեռնականն բարեկամին իւրոյ հայկազն Սիւրենեան Մուրատ ամիրայի, ունել 'ի պատրաստի զհին և զհաստատուն հրովարտակս, որ և նա ծանոյց փոխանորդ Յակոբ եպիսկոպոսին, և անտի յԵրուսաղէմ։ Իսկ միաբանք Հայոց խաբեալ 'ի խորամանկութենէ Յունաց, ընկերացեալ էին նոցա հաւասար վճարել գքաղաքական տուրս և զայլ տուգանս։ այլ 'ի հասանիլ գրոց փոխանորդին և այլոց 'ի կայսերանիստ քաղաքէ, զարթեան 'ի թմրութենէ որպէս 'ի քնոյ։ Յոյնք որ պահեալ էին զհրովարտակն զայն, 'ի սոյն աւուրս կոչեցին զդպրապետն դատարանի՝ ետուն նմա արձանագրել զնա անդ 'ի տումարի։ Իսկ այրն դոլով բարեկամ Հայոց, հանեալ զպատճէն նորին կնքով դատաւորին՝ երեր առ Պատրիարքն Հայոց, և նոցա ընթերցեալ, ծանեան զթակարթն, զի դիտաւորութիւն Յունաց ոչ միայն արտաքսել էր զՀայս 'ի Ս։ Տեղեաց, այլ նաեւ յափշտակել 'ի ձեռաց նոցա զսեփհական վանօրայս, զՍ։ Յակոբ և զայլս։

Թէոդորոս Պատրիարք 'ի լինել վիճին ընդ Յունաց սակս երից կանթեղաց, յառաջագոյն առեալ էր նորոգել զհրովարտակն Ս։ Աստուածածնի, որ 'ի սոյն ժամանակի յետս պահանջէր զայն Բէյիզ էֆէնտին։ Զայն խմացեալ Յունաց առին և նոքա նոր հրովարտակ 'ի Սուլթան Մուստաֆայէ ՌՌՌՁ, յորում Յունաց սեփհականէ Արքայն ըզբովանդակ Ս։ Տեղիս, և զհրովարտակս Հայոց խափանեալ, Յոյնք ետուն ջնջել 'ի գիւանաց զարձանագրութիւնս Հայոց, եւ ինքեանց սեփհական համարէին զգերեզմանն Ս։ Աստուածածնի և զեկեղեցին Բեթղեհէմի հանդերձ բանալեօք, եւ Հայք իբրեւ հպատակ տէրութեան՝ գնասցեն

միայն յուխտ 'ի Ս. Տեղիս, որպէս ունէին սովորութիւն յաւուրց անտի Սէլիմայ առաջնոյ մինչ 'ի Թուականն \\Հ\։

Իսկ Թէոդորոս Պատրիարք կոչեաց զդատաւորն և ըզդպրապետն, և ետ ընթեռնուլ նոցա զամենայն կարեւոր գրեանս, և ըստ մտաց նոցին գրել Հէօշէկը Ա Էլմ՝ յայտ արարեալ զբովանդակ տեղիս եւ զրաժինս Հայոց։ Գրեաց նաեւ ինքն հանդերձ միաբանօք զիր աղերսախառն առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, արիանալ եւ քաջութեամբ պաշտպանել զիրաւունս ազգին, և մի առնել զնոսա կոխան ոտից օտարաց, և զայլ կարեւոր գրեանս որոնել յարձանագրութիւնս կայսերական դիւանին, զի յերուսաղէմ ոչ կարացին դտանել զպատճէնս մեծ հրովարտակաց, զորս Թախանձելով խնդրէր Յակոբ Եպիսկոպոս 1804։

Եւ մինչդեռ սոքա յայսմ խորհրդի էին ճէղար Փաշայ կալեալ զմին յերեւելեաց Ապուզօշ գիւղի Օթման անուն եդ 'ի բանտ, և եղբարք նորին դեգերեալ այսր անդր ոչ կարացին ազատել զնա. ապա եկեալ բռնացան 'ի վերայ երից վանօրէից, և 'ի նոցանէ խնդրէին զեղբայրն իւրեանց, և նոքա խոստացան գրել առ ճէղար վասն ազատութեան նորին։ Իբրեւ տեսին թէ անազատեաց պատասխան գրոյն, կալան 'ի ճանապարհի զուխտաւորս Հայոց և Յունաց, որք գային 'ի Յոպպէ քաղաքէ, և արգելին զնոսա 'ի դեօղն իւրեանց։ Եւ եկեալ յերուսաղէմ 'ի դուռն քաղաքին՝ յափշտակեցին զմին 'ի մանկանց Լատինաց և տարեալ եդին զնա 'ի գիւղն. պատգամ առաքեցին առ վանականս, եւ ասեն եթէ ոչ եկեսցէ Օթման՝ չիք փրկութիւն ուխտաւորաց ձերոց, թէպէտ եւ քաղաքապետն և Միւֆթին յղեցին զոմանս և խնդրեցին արձակել զնոսա, այլ չեղեւ հնարիսկ ճէղար գրեաց առ վանօրայս թէ չէ հնար արձակել զայրն։ Վանականք հաղիւ ուրեմն զերծուցին զուխտաւորս և բերին զնոսա յերուսաղէմ։ Բդեշխն Յոպպէի մեծամեծս սպառնայր յոչ ընդունել զիրոխանակագիր իւր, տանջանօք սպառել զկեանս վանականաց, աւերել և կործանել զվանորայս։ Սիւլէյման Փաշայ 'ի Նազարեթէ խնդրէր զգումարս դրամոց, և 'ի չանալն սոցա, կալաւ և արգել զուխտաւորս 'ի ճանապարհի, որք գային յաշխարհէն Դամրաց,

եւ 'ի նոցանէ առ զոր խնդրէրն, եւ նոքա եկեալ յերուսաղէմ առին զդրամն իւրեանց 'ի Պատրիարքէն։ Եւ յերկիւղէ նորին փակեցան դրունք քաղաքին և կարգեցան պահապանք, յաւելաւ սովն և տագնապ նուազութեան ջրոյ։ Բռնացան այլազգիք 'ի վերայ երից վանօրէից, պահանջելով դրամս և զայլ իրս, և նոցա անճարացեալ գումարեցան 'ի խորհուրդ, և գրեցին աղերս առ իւրաքանչիւր ազգայինս 'ի Կոստանդինուպօլիս, զի թերեւս մարթասցին դտանել ազատութիւն ինչ։ Իսկ զկնի տօնի Ս. Զատկի եկաս յերուսաղէմ լուր մահուան ճէղար Փաշայի, և 'ի տեղի նորա յաջորդելոյ Արապկերցի Իսմայիլ Փաշայի արձակումն ոմանց յերեւելեաց 'ի բանտէ, և Օթմանին մնալ անդ։ Եւ յուղեւորիլ ուխտաւորաց 'ի հայրենիս իւրեանց 'ի ցամաքէ, եղբարք եւ ազգականք Ապուզօշի դիմեցին բազմութեամբ 'ի վերայ նոցա, և կալեալ բռնութեամբ և անարգանօք դարձուցին զնոսա յերուսաղէմ, և խնդրէին 'ի վանականաց զեղբայրն իւրեանց. միաբանեալ էր ընդ նոսա և Միւֆթի քաղաքին։ Հայք եւ Յոյնք գրեցին զիր աղաչանաց առ Բդեշխն Իսմայիլ, և առաքեցին զԳաբրիէլ և զՄեթոդիանոս վարդապետս յԱքքէ վասն ազատութեան առնն և վասն այլոց խնդրոց, եւ յերկարիլ միջոցին զայրացեալ Յոյն ուխտաւորաց դիմեցին 'ի վերայ փոխանորդի նոցին, եւ ձգեալ զնա արտաքս առեալ գնացին առ Միւֆթի քաղաքին, և աղմկեալ կոչէին անդ՝ թէ ընդէ՞ր արդելուք զմեզ 'ի ճանապարհաց մերոց, զի ոչ գոյ տեղի հանդստեան և ջուր ըմպելոյ 'ի քաղաքիս. գնացին անդ եւ թարգմանք, բազում աղաչանօք և խոստմամբ դրամոց հազիւ կարացին հաճել զմիտս նորա, այլ գիւղականք ոչ երբէք հաւանէին ընդ այն։ Եկաս դիր 'ի բանտարկելոյ անտի թէ՝ թողէք զուխտաւորս, զի վարդապետքն ջանիւք մեծաւ աշխատին վասն ազատութեան իմոյ, գիւղականք ընդ այն ևս ոչ հաճեցան, մինչեւ առին յերաշխի զթարգմանս Հայոց և Յունաց, և այնպէս թոյլ ետուն ուխտաւորաց ելանել 'ի ճանապարհ և քաղաքապետն ընդ նոսա։ Եւ յետ մեկնելոյ ուխտաւորաց 'ի ճանապարհ երից աւուրց, գիւղականք արդելին առ իւրեանս զթարգմանս, և 'ի սաստելոյ Միւֆթիին և քաղաքապետին, ետուն դիր երաշխա-

ւորութեան վասն ազատութեան բանտարկելոյն, ապա զերծան 'ի ձեռաց նոցա։

Գրեաց Գաբրիէլ վարդապետ յԱքքէ քաղաքէ առ Թէոդորոս՝ թէ վասն ազատութեան Օթմանայ պահանջեն զ500 քսակս դրամոց։ Լատինք ոչ կամեցան մերձենալ յայս գործ մասամբ իւիք։ իսկ Հայք և Յոյնք առաքեցին զԹարգմանն յԱքքէ, և նոցա հասեալ անդ՝ խոստացան անթերի հատուցանել զդումարն, և ետուն մուրհակ օրինօք դատարանի ինքնընտիր Իսմայել Փաշայի՝ և հանեալ 'ի բանտէ ըստ Շէյխ հաճի Օթման զափարճի բերին ընդ ինքեանս յԵրուսաղէմ և առաքեցին 'ի տեղի իւր։ Եւ այս ծանրութիւն բեռին մնաց 'ի վերայ Հայոց և Յունաց։ Թէոդորոս Պատրիարք կողկողանօք գրէ առ ազգային 'ի Բիւզանդիոն հասանիլ 'ի Թիկունս, զի չէր մնացեալ յայս կենդանութեան յերեսաց կեղեքիչ բռնաւորաց։ Նեղութիւնք, տառապանք յափշտակութիւնք և այլ սոյնպիսի տարօրինակ իրք, զորոց երկար գրէ 'ի նամականիս իւր։

Իսկ ուխտաւորքն հասեալ 'ի կողմանս Դամասկոսի՝ վնասեցան 'ի զօրաց Տէյէ կոչեցելոց, և գերի վարեցաւ մանուկ մի 'ի նոցանէ (1804)։

Յաւուրս Թէոդորոս Պատրիարքի Խորենացւոյ յաջորդի Յակոբայ Նալեան, գնեցաւ արդեամբք վանաց Ս. Յակոբայ մեծ տունն 'ի Լաւոդիկէ՝ և կարգեցին զայն հոգեւոր տուն 'ի պէտս ուխտաւորաց եկելոց ծովային ճանապարհաւ, և յաւելին միաբանք և այլք 'ի նոյն՝ քանի մի տունս իրր կալուած հոգեւոր, արդեամբք նոցին պատսպարիլ տեսուչ վարդապետին։ Եւ 'ի սմին ժամանակի Բդեշխն Լաւոդիկեայ բռնացեալ 'ի վերայ հոգեւոր նստոյց զօրս, եւ տեսուչ վարդապետն փախուցեալ 'ի ձեռաց նորա մաղապուրծ զերծաւ յԵրուսաղէմ։ փակեցաւ դուռն եկեղեցւոյ, և ժողովուրդք տեղւոյն զրկեցան 'ի հոգեւոր մխիթարութենէ որպէս գրեն դառն դանկատանօք առ Թէոդորոս Պատրիարք, առաջի եղեալ նմա զտարագրիչն իւրեանց 'ի քաղաքէն, զքանդումն եւ զաւերումն չինուածոց հոգեւոր 'ի զօրաց անտի։ Իսկ Թէոդորոս Պատրիարք չկարացեալ առնել ինչ առ ժամն առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս զհրովարտակն Սուլթան Մուստաֆայի նորոգել զայն յանուն

իշխողի Լաւոդոկեայ, զի մի իշխեսցեն բնակեցուցանել անդ զզօրս և գործել զայնպիսի ոճիրս։

Վէճ Դաւթի և Դանիէլի, որպէս գրէ Եփրեմ Եպիսկոպոս յաշխարհէն Ռուսաց։

Մովսէսն Օսմանեան նստէր մերձ յԱքքէ՝ և խնդրէր զինչս ճէզարին։ Իսմայիլ Փաշայ ոչ առնոյր յանձն յանձնել զայնս, ապա եդին պայման 'ի միջի, եթէ թագաւորն տացէ զիշխանութիւն ճէզարին ինքեան, ինքն եւս խոստանայ տալ զինչս նորին, և զայս գրեցին 'ի Դուռն եւ սպասէին առնուլ զպատասխանն։

Լուր դալստեան Ապու Մէրագ Մէհէմմէտ Փաշայի 'ի կողմանս Պաղեստինոյ՝ դղրդեալ սասանեցոյց զերկիրն, մանաւանդ զվանականս Երուսաղէմի։ Ապա յաւուր միւսմ յանկարծ եմուտ 'ի քաղաքն Յոպպէ ('ի 18 Նոյեմբերի)։ Եւ զկնի խնդակցութեան և ուրախութեան ընդ բնակիչս և ընդ տեսուչս վանօրէից՝ խնդրեաց 'ի Ղազար վարդապետէ տալ փոխանակագիր 200 քսակի, զի փոխանորդն վճարեսցէ 'ի Կոստանդինուպոլիս, և ինքն յետոյ հատուսցէ անդ 'ի Յոպպէ։ Այս գիր կարի յոյժ տրամեցոյց զԹէոդորոս Պատրիարք և գրեաց 'ի Կոստանդինուպոլիս դատանել հնարս ազատութեան, զի յառաջագոյն զիսորհ առեալ էր բռնութեան նորին։ Եւ եղեւ յետ աւուրց ինչ կոչեաց առ ինքն զՂազար վարդապետ, և էառ 'ի նմանէ փոխանակագիր 100 քսակի, որ եղեւ 300 քսակ, և 150 քսակ պատրաստի դրամ էառ, թող զայլ զծանրագին ընծայս և զպարգեւս 'ի Պատրիարքէն։ Նոյնչափ եւս 'ի Յունաց։ Եւ ապա վերստին կոչեալ առ ինքն սպառնալեօք պատուիրէ գրել առ Պատրիարքն՝ զի փութով վճարեսցեն զդրամն 'ի Կոստանդինուպոլիս և մի դարձուսցեն յետս, ապա թէ ոչ 'ի սուր մաշեցից ասէ զձեզ, զվանօրայս և զժառանգութիւնս ձեր յաւեր և յապականութիւն դարձուցից։ զի ինքն եղեալ էր 'ի մտի առնուլ զկուսակալութիւնն Դամասկոսի և տիրել բովանդակ Պաղեստինոյ, և եթէ ոչ հաճեսցի ընդ այն Սրքայ՝ ապստամբիլ 'ի նմանէ։ Սմին իրի խորամանկութեամբ իւրով Ջանայր որսալ զվիսս մեծամեծացն Երուսաղէմի, բայց նոքա գիտելով զառաջին գործս և զանաւորութիւնս նորին, ոչ տային տեղի բանից նորա։

Իսկ Սիւլէյման Փաշա՝ որ նստէր 'ի Նաղարէթ, խընդրէր դրամս 'ի վանականաց, և 'ի բաց ասելն սոցա՝ կալաւ 'ի ճանապարհի զուխտաւորս և արկ զնոսա 'ի դանս և 'ի տանջանս՝ կամեցեալ խոպառ մերկացուցանել զնոսա. զի վանականք ձեր ասէ՝ ոչ հասին ինձ 'ի Թիկունս 'ի Նեղութեան իմում. և 'ի պաղատիլն ուխտաւորաց՝ առնու 'ի նոցանէ 13 քսակս եւ արձակէ, եւ սպառնալեօք գրէ յերուսաղէմ առ Հայս եւ առ Յոյնս բռնանգակել զայն 150 քսակ. զի եթէ ոչ ասէ՝ չիք հնար անցանել ասսի ուխտաւորաց ձերոց։ Եւ նոցա վարանեալ 'ի միտս իւրեանց, խոստացան կատարել զհրաման նորին։ Յետ այնորիկ բռնացեալ Սիւլէյմանայ 'ի վերայ Լատին կղերց՝ պահանջէր 'ի նոցանէ 1000 քսակս դրամոց, և 'ի չառնուլ նոցա յանձն՝ աւարի ետ զվանս նոցա 'ի Նաղարէթ, և մերկացոյց զնա յամենայն գոյից, սպառնացեալ հիմն 'ի վեր տապալել զնա։ Իսկ վանականք մոգոսպուր վախճեայ զերծան անտի և անկան յերուսաղէմ՝ պատմիչ լինելով անցիցն։ Եւ Թէոդորոս Պատրիարք իւրովքն հանդերձ ապանպէին և տառապէին 'ի Նեղութիւնս յայսոսիկ, և հասեալ 'ի չքաւորութիւն յետին յերեսաց կեղէքչաց, դառնացեալ ոգւով գոչէին առ Աստուած և առ ազգն հասանել յօգնութիւն։

Որոյ վասն ժողովեալ միաբանաց և երեւելի ուխտաւորաց տարւոյն գրեցին 'ի Կոստանդինուպոլիս աղերսախառն պաղատանօք անպատճառ վճարել զփոլիցայս Ապու Մէրագի և տգատել զինքեանս 'ի բռնութենէ նորին, զի վակեալ էին ճանապարհք յերիւստէք, և չէր հնար նոցա խոտորիլ յաջ կամ յահեակ (1805. Յունվար)։

Փոլիցայք Ապու Մէրագի դարձան յետս 'ի Կոստանդինուպոլսոյ՝ զի ոչ առին յանձն աղդայինք վճարել զայնչափ դումարս դրամոց։ Մէհէմմէտ Փաշայ լցեալ անհնարին բարկութեամբ ձեռն արկ չարչարել զվանականս Յոպպէի՝ պահանջելով 'ի նոցանէ զդումարս դրամոց 'ի նոյն տեղի, և ուխտաւորք տարւոյն արգիլեալ մնացին յերուսաղէմ. առաքեաց նա զօրականս և կալաւ զամենայն անցս ճանապարհաց՝ զի զամենեսեան դումարեսցեն 'ի Յոպպէ՝ և արասցէ նոցա ըստ հաճոյից իւրոց, իսկ ուխտաւորք այլ ոչ

եւս կարացին մնալ յերուսաղէմ, եւ դէմ եդեալ իջին 'ի Յոպպէ. յայնժամ պաշարեալ զնոսա Ապու Մէրագ՝ պահանջէր յիւրաքանչիւր վանաց 200 քսակս, և նոքա յանձն առին փոլիցայիւ վճարել 'ի Բիւզանդիոն. 'ի նոյն պահու եհաս առ նա գիր 'ի գործակատարէ իւրմէ (Գարու քահեասի), թէ քրիստոնեայք ոչ զփոլիցայն ընկալան և ոչ զդրամն ետուն՝ և դուն գործեն այսր անդր կորուսանել զքեզ, ուստի քեզ մնայ կողոպտել զդոսա և առաքել դրամս առ 'ի հոդալ զգործս քո։ Իսկ նա 'ի վերայ այսր թղթոյ բորբոքեալ իբրեւ զհուր՝ թափեաց զցասումն բարկութեան իւրոյ 'ի վերայ ուխտաւորաց և տեսչաց վանօրէից՝ պահանջելով 'ի նոցանէ զդումարն վճարել անդ 'ի Յոպպէ։ Եւ նոքա խոստացան վճարել յերուսաղէմ, եւ ուխտաւորք արձակեալ գնացին յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Յաւուրս յայսոսիկ այլազգիք Երուսաղէմի յահէ բռնաւորին գումարեցին զօրս՝ որպէս յաւուրս մեծին Նաբոլիոնի, և բնակեցուցին զնոսա վրանաւ 'ի պարտէզն Հայոց հանդէպ վանաց Ս. Յակոբայ, զորոյ պէտս սկսան հոդալ վանականք՝ իբրեւ թէ պահպան են քաղաքին, եւ ապա առեալ յիւրաքանչիւր վանաց 22,000 դահեկանս, բաց յընծայից և այլոց՝ արձակեցին զնոսա։ Ապու Մէրագ յեցեալ 'ի բռնութիւնս իւր կոչեաց զՏեսուչս վանաց ասէ՝ գրեցէք յերուսաղէմ առ Մերուէիսն՝ առաքել առ իս ծըրարս ոսկւոյ 'ի թոշակ զօրաց իմոց, զի իմ եդեալէ 'ի մտի ելանել յերուսաղէմ. լուեալ զայս վանականաց՝ խորհեցան խոյս տալ անտի, բայց զնոսա ածէին թէ 'ի դալստեան նորա դուցէ մեղմասցին այլազգիք 'ի բռնութենէ, այլ ինքեանք եւս ունէին ըմբռել զրաժակն դառնութեան։ Տեսուչքն Լատինաց և Յունաց Յոպպէի չկարացեալ տոկալ բռնութեան նորին, փախուցեալ եկին յերուսաղէմ, փախեաւ և Աբրահամ վարդապետ Տեսուչն Ռեմլէի։ Լուեալ զայս բռնաւորին՝ բնակեցոյց զօրս 'ի վանս նոցա, և նոքա քանդեալ ապականեցին զամենայն վայտակերտս և զշինուածս։ Իսկ Ղազար վարդապետ չկարացեալ դտանել հընարս վախճանան՝ մատնեցաւ 'ի ձեռս բռնաւորին. զկնի դանից և խոշտանգանաց՝ վճառեաց զայն 25,000 դահեկանի Տեէ կոչեցեալ զօրաց՝ զոր լուեալ Թէոդորոս Պատ-

րիարքի վրկանաւորեաց զնա, եւ նորա տուեալ կաշառս պահապան զօրաց՝ փախուցեալ անկաւ յԵրուսաղէմ։ Ոչ կարէ պատմել ասէ նամակագիրն զգործս նորա՝ զի ոչ եթող տեղիս զոր ոչ աւերեաց՝ և ոչ զոք՝ զոր ոչ մատնեաց 'ի տուգանս, մինչեւ զկանայս և զմայրն իւր իսկ գլխովին (1805)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Ընդվզումն Լատինաց։ Ոտիկան ասէ Ապու Մէրագի։ և փախուստ նորա։ Ապտուլլահ Փաշա։ Խռովութիւն և վէճ Յունաց։ Նեղութիւն Հայոց վասն Հրովարտակաց։ Դիտաւորութիւն փախչելոյ Թէոդորոսի։ Նեղեալ յոյժ 'ի տառապանաց։

ԼԱՏԻՆՔ կամեցան խափանել զթափորն Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան՝ յաւուր մեծի Հինգշաբթի, յարուցեալ 'ի վերայ նոցա բրօք և մահակօք, այլ յետոյ նոքին իսկ Լատինք առաքեցին աղաչաւորս առ Թէոդորոս Պատրիարք չգրել ինչ զայնմանէ 'ի Կոստանդինուպոլիս, զի մի անկցի ցրուութիւն 'ի մէջ մեծամեծաց երկուց կողմանց. զի մեք ծանեաք ասեն զյանցանս մեր, թէ պէտեւ Լատինք գրեալ էին, և զլխաւորք ազգին պատուիրէին Թէոդորոսի սիրով վարիլ ընդ Լատինս և ընդ Յոյնս։ Իսկ Թէոդորոս Պատրիարք նեղեալ յոյժ յայսպիսի տագնապալից ժամանակի՝ խայս եւ 'ի Բեթղեհէմ, յետ կատարելոյ զտօն Պայծառակերպութեանն Քրիստոսի, դտանել անդ սուղ ինչ անդորրութիւն, այլ 'ի սխալել հարկին անդրէն դարձաւ 'ի տեղի իւր։

Ի բազմանալ դանկատանաց և բողոքագրոց 'ի Դուռն վասն չարութեան Ապու Մէրագ Մէհէմմէտ Փաշայի՝ գրեցաւ հրովարտակ քննել զգործս նորին և բառնալ զնա 'ի կենաց. յայս պաշտօն կարգեցաւ 'ի Դրանէ Խասէքի Մուստաֆա աղա։ Ի հասանիլ սորա յԵրուսաղէմ կոչեաց առանձին զԹարգման Հայոց, եւ սկսաւ խօսիլ ընդ նմա սիրով եւ քաղցրութեամբ՝ ըստ պատուիրելոյ Թնկրեան

Յակոբ աղայի՝ ընթեռնլով զգիր նորին։ Զկնի բազում բանից և յայտ առնելոյ զպատճառ գալստեան իւրոյ, առաջի ետ նմա զվարձ ծառայութեանն լինիլ առատ. եթէ չահեսջիք զիս ասէ ըստ արժանաւորութեանս, իմ է հոգալ զգործն՝ որոյ վասն եկեալ եմ։ Թարգմանն ոչ ինչ ատացեալ նմա, ծանուցանէ Յունաց և Լատինաց զբանս նորին, և միաբանութեամբ սահմանեն տալ նմա յերից վանաց 15,000 դահեկան. և 'ի կրկին պատահիլ առն Թարգմանին՝ հարցանէ նմա զվիտս վանականաց, և նա ասէ՝ դու ըստ պատուոյ քո կատարեա ըստ օրինի զգործն՝ նոքա պատրաստ են շահել զսիրտ քո, այլ նա պնդեալ եկաց թէ պահանջեմ յերից վանաց 30,000 դահեկան, եւ եթէ ոչ կամիք՝ դուք գիտասջիք, զի այս գործ Արքունի է՝ տամ ընթեռնուլ զհրովարտակն 'ի դատարանի՝ և դառնամ յետս, յայնժամ արարէք և դուք որպէս և կամիք։ Լուեալ զայս վանականաց՝ յանձն առին տալ զգումարն զայն, այլ նա զգուշացոյց զնոսա ամենեւին չհանել զբանն 'ի վեր, ոչ դատաւորին և ոչ այլոց, զի մի մեծասցի իրն յաչս նոցա, այլ ասել թէ խոստացաք տալ 5,000 դահեկան յերից վանաց։ Եւ յետ այնորիկ քննութիւնք և դատաստանք կատարեցան 'ի դատարանի. դատաւորն գրեաց Իլամ և այլազգիք հանրագիր բազմակնիք, թէ փոլիցայք Մէհէմմէտ Փաշայի էին բռնութեամբ, եւ ցարդ չէ տուեալ ումեք գրաւն ինչ՝ և առաքեցին 'ի Դուռն։ Եւ մինչ սոքա զբաղեալ էին յայս գործ, Ապու Մէրագ ստիպէր առաքել 'ի Յոպպէ զՏեսուչս վանօրէից 'ի պատճառս գալստեան ուխտաւորաց, այլ նոքա հաղիւ զերծեալ էին 'ի ձեռաց նորա, ոչ կամեցան գնալ, այլ արարին պատասխանի՝ զի ինքն առաքեսցէ զուխտաւորս, զի բազմութիւնք զօրաց պատեալ էին զքաղաքաւն և զնոքօք։

Մէհէմմէտ Փաշայ իրաւեկ լեալ եղելոցն Երուսաղէմի՝ կողոպտեաց զնախնեւանցի ուխտաւորս Հայոց՝ առեալ 'ի նոցանէ 18 քսակս արծաթոյ, և անապարեալ փախեաւ 'ի Դամասկոս (1805. 'ի 21 Նոյեմբերի)։ Տեսուչք և միաբանք դարձան 'ի վանօրայս Յոպպէի։

Կուսակալն Դամասկոսի Ապտուլլահ Փաշայ եկն յԵրուսաղէմ ըստ սովորութեան՝ Հայք հաղիւ զերծան 'ի ձեռաց

նորա տալով 30,000 դահեկանս։ Եւ նորա կալեալ զմանս 'ի գիւղականաց՝ որք մտեալ էին 'ի քաղաքն հրամանաւ քաղաքապետին՝ և եդ 'ի բանտի և պահանջէր 'ի նոցանէ 1000 քսակս արծաթոյ. իսկ գիւղականք յարեան 'ի վերայ վանօրէից, թէ 'ի ձէնջ խնդրեմք զկալանաւորս մեր. Հայք և Յոյնք տուեալ վասն նոցա 115 քսակս և զերծուցին զնոսա։

Բդեշխն խոստացաւ 'ի վերայ նոցա՝ պահանջելով 'ի նոցանէ զայլ իրս, եւ նոքա առաջի եդին նմա զաղքատութիւնս իւրեանց և զհրովարտակն Արքայի, այլ նորա ոչ մատուցեալ ունկն, ասէ՝ եթէ յօժարութեամբ տայք՝ բարի, իսկ եթէ ոչ՝ առնում բռնութեամբ եւ խայտառականօք 'ի լուր ամենեցուն, և դուք գրեցէք առ Թագաւորն և առ որ յուսացեալն էք։ Այսպէս պաշարեալ էին վանականք յամենայն կողմանց 'ի տառապանս յուսարեկ 'ի կենաց, և գումար տակուսաւոր պարտուց հասեալ էր 870 քսակ արծաթոյ, թող զհարկապահանջ այլազգիս և զմեծամեծս քաղաքին։ Գլխաւորք Լատին և Յոյն վանաց ժողովեցան 'ի Պատրիարքարանն Հայոց, միաբանութեամբ խորհիլ եւ դարման գտանել տառապանացն, զի կուսակալք Դամասկոսի անխոյթ լեալ զկառավարութենէ և ըզբարեկարգութենէ երկրին, միայն զհետ էին կեղեքել ըզվանօրայս և առնուլ զտարեկան հարկս՝ և զայլ ինչս իբրեւ սահմանեալ, որոյ վասն գրեցին առ իւրաքանչիւր ազգային 'ի Կոստանդինուպօլիս և առաքեցին մէն մի վարդապետս՝ Գաբրիէլ և Մետրոփանոս 'ի Լատինաց և 'ի Յունաց, և Կեսարացի Մկրտիչ վարդապետ 'ի Հայոց, փոխի տանել և տալ կարգել զոք յատուկ կուսակալ Երուսաղէմի 'ի բարեկարգութիւն գաւառին եւ յանդորրութիւն վանօրէից և ուխտաւորաց, և խոստացան յերից վանաց հատուցանել, զոր ինչ միանգամ ծախեսցեն 'ի դրունս վասն այսր և այսպիսի որոշմամբ մեկնեցան երեքին վարդապետքն 'ի Կոստանդինուպօլիս (1806 · յ2 Փետրվարի)։

Երուսաղէմի Յոյն Պատրիարքն Անթիմոս, որ յառաջագոյն առ հրովարտակ յԱրքայէ հակառակ իրաւանցն Հայոց, և մինչեւ ցարդ պահէին զայն յերուսաղէմ, 'ի սոյն աւուրս փոխանորդն Նազարէթ ետ արձանագրել զայն 'ի

դատարանի, և սարսէին դալստեան Կուսակալին գործադրել զայն։ Ապա սկսան պարծանօք խօսիլ այսր և անդր, թէ Հայք զկնի աւուրց ինչ ունին հանդիսիլ մեծամեծ վնասուց եւ խսպառ զրկիլ 'ի քաղաքէս։ Իսկ դպրապետ դատարանի Ալի Էֆէնտի ըսելեայն ազգ արար Թէոդորոս Պատրիարքի զգործս Յունաց, և հանեալ զպատճէն հրովարտակին վաւերեալ 'ի դատաւորէն երեր զայն. զոր տեսեալ ապշեցան և զարհուրեցան յերեսաց ահագին վտանգի։ Եւ կոչեալ զդատաւորն ետուն նմա գրել Իլամ ըստ մտաց գրոցն Հայոց՝ յիշելով 'ի նմա զրովանդակ վանօրայս Հայոց, զրաժին տեղիս և զերիս հետեւակ ազգս, այլովքն հանդերձ. զպատճէն հրովարտակին Յունաց, եւ զմանս հին հրովարտակացն Հայոց, և զայլ կարեւոր գրեանս պատրաստեալ յանձն արարին Ադրիանուպօլսեցի Պօղոս վարդապետին, եւ առաքեցին ծածկապէս ցամաքաւ 'ի Կոստանդինուպօլիս։ Թէպէտեւ Թէոդորոս Պատրիարք ինքնին կամեցաւ երթալ, որպէս յայտնի երեւի 'ի նամակաց նորին, այլ միաբանք արգելին զնա 'ի խորհրդոյն, զի մի 'ի հեռանալ նորին 'ի քաղաքէն սրոյ, Յոյնք առաւել համարձակութիւն գտեալ, դառնացուցեն զինքեանս։ Իսկ Պօղոս վարդապետ տկարացեալ 'ի ճանապարհի տապանայր 'ի տենդէ, և հասեալ հիւանդագին 'ի Կոստանդինուպօլիս, յանձն արար զգրեանս փոխանորդ Յակոբ Եպիսկոպոսին, եւ ինքն անկաւ 'ի մահիճս։ Եւ Յակոբ Եպիսկոպոս ետոյց զգրեանս գլխաւորաց ազգին, և ազաչէր զնոսա, որպէս Պատրիարքն եւ միաբանք Երուսաղէմի, չառնել անտես զծանրակշիռ խնդիրս ազգին, և փոխի տանել յեղծումն հրովարտակին Յունաց, և նորոգել զՀայոցն։ Բանզի Յոյնք չրջեալ 'ի կողմն իւրեանց զԱրքունի քարտուղարս, ետուն ջնջել և բառնալ 'ի դիւանաց զարձանագրութիւնս հին և նոր հրովարտակացն Հայոց. թէպէտեւ բազումք 'ի գլխաւորաց ազգին խորհէին գտանել զհնարս և դարմանել զվէրսն, զոր ընկալան 'ի գաղտնի նետաձգութենէ Յունաց, այլ դէպք ժամանակին ոչ յաջողէր նոցա գործել համարձակ. զի ոմանք 'ի նախարարաց որք էին Վալիտ քահանայի Եուսուֆ, Իպրահիմ քահանայ՝ Ինկիլիզ Մահմուտ, Հաճի Իպրահիմ՝ և այլք կամակից սոցին, ո-

ռոց յանձն էր զեկ Արքունի Կառավարութեան, լեալ էին պաշտպան Ցունաց, մանաւանդ թէ 'ի սադրելոյ սոցին լարեցաւ որոգայթ Հայոց, և չէր հնար ուժեք առնել զիրս ինչ արտաքոյ կամաց սոցին, որոյ վասն դժուարին էր Հայոց զերծանիլ յորոգայթէ անտի, և կամ մերձենալ առ նոսա, այլ իբրեւ զփորձ մատեաւ առ Իպրահիմ քեահեայ Կեսարացի Կիւլպեան Ցակոբ աղա, զի սիրելի էր նմա. այլ ընկալաւ 'ի նմանէ պատասխանի՝ չյիշել մուսանդամ զինդիրն. զի ամենեքին երդուեալ եւ նզովիւք փակեալ էին լինել 'ի կողմն Ցունաց։ Ապա հարկ լինէր Հայոց սպասել պատեհ ժամանակի։

Ցոյնք 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն Երուսաղէմացի Մուսա Էֆէնտեայ, որ դպրապետն էր յառաջագոյն 'ի դատարանն Երուսաղէմի եւ բարեկամ Ցունաց, առեալ էին զիլանն Հայոց, զոր առաքեալ էին յԵրուսաղէմէ, և 'ի սոյն միջոցին առաքեցին զայն առ միաբանս իւրեանց, եւ Փոխանորդ նոցին կոչեալ զդպրապետ դատարանի՝ բարկութեամբ հարցանէ թէ ընդէ՞ր եռուք զայդպիսի գիր Հայոց, և կամ ընդէ՞ր ոչ ծանուցիք մեզ. և նա հարցանէ, ո՞րպէս 'ի ձեռս բերիք զայս գիր, ասէ. ոսկին զամենայն ինչ կատարէ, և բռնադատէ զայրն յորդորել զդատաւորն տալ գիր հակառակ Հայոց, այլ դատաւորն ոչ կամեցաւ։

Իսկ Ցակոբ Եպիսկոպոս և Պօղոս վարդապետ Ջան 'ի գործ եդեալ անդադար աշխատէին և դեգերէին 'ի դրունս մեծամեծաց։ Լուեալ Ցունաց զկլրտիլն եւ զչչնջիւն Հայոց, կազմեցան եւ նոքա հարկանիլ 'ի դիմի, հանեալ 'ի հրապարակ զդաղտնի մեքենայս իւրեանց, և տարեալ ցուցանէին մեծամեծաց Դրան զվաւերական գրեանս իւրեանց, իբրեւ թէ նոքօք ժառանգեալ են զՍ. Տեղիս, եւ Հայք յանիրաւի յափշտակեալ են զայնս։ Իսկ Նախարարք իբրեւ իրաւարար խնդրեցին եւ զհրովարտակս Հայոց տեսանել թէ ո՞րպիսի օրինակաւ տիրեալ են տեղեացն այնոցիկ, և զյափշտակեալն 'ի Ցունաց դարձուցին առ նոսա։ Փոխարէն բազմաթիւ գրեանցն Ցունաց՝ մատուցին զօրինակս հրովարտակաց առ Ղալիպ Բէյիզ Էֆէնտի 'ի ձեռն Կեսարացի Պաշ Պազիրկեան Յովհաննէս Աղայի, խնամեալ զմիտս նոցա։ Եւ նորա առեալ պահեաց զնոսա առ իւր. և խնդրէր խսկականն, զնոյն ասէր և Իպրահիմ քեահեայ. գրեցին յԵրուսաղէմ զի առաքեսցեն զհրովարտակն, այլ ընկալան պատասխանի՝ թէ յղեցաք զամենայնն 'ի Կոստանդինուպոլիս. իսկ զդաշնագիրն Օսմարայ տարեալ եղիցաղրու 'ի քաղաք անդր, այլ ոչ դարձուցեալ զայն, կորուսեալ եւ կամ յափշտակեալ 'ի ձեռաց նորա։ Եւ եղեւ 'ի սատականալ խնդրոյն 'ի Կոստանդինուպոլիս, տեսեալ Հայոց թէ առանց իսկական հրովարտակաց չէ կարելի առնել ինչ, գրեցին դարձեալ յԵրուսաղէմ և հանին կրկին սուրհանդակ, զի որքան Թուղրալի հրովարտակ գտանիցի յԱթոռն՝ յղեսցեն անվատտառ, իսկ Թղթատարացն հասեալ 'ի Կիրինտիրէ առ Կիպրոսիս՝ եղեն ծովամոյն։ Իսկ Թէոդորոս Պատրիարք տագնապէր եւ տառապէր յետին աղքատութեան և 'ի ներքոյ տոկոսաւոր պարտուց. միայն 'ի շրջանի երից ամսոց կառ 500 քսակս, և այն չէր ինչ յագուրդ կեղեքիչ այլազգեաց։ Տագնապ գալստեան Կուսակալին. փոփոխութիւն քաղաքապետին։ Բանգի Ցոյնք և Լատինք միաբանեալ խնդրէին զնախկին քաղաքապետն զԳասըմ աղա՝ որ հակառակ էր Հայոց. համարձակութիւն Ցունաց, նոր հակառակութիւն Լատինաց վասն բաժնի Հայոց 'ի Ս. Յարութեան, զի դրաւեցին նոքա զտեղի սեանն առաջի մեծի դրան, անփոյթ լինելն ազգին վասն դերեզմանի Ս. Աստուածածնի. Ցոյնք առաւել վստահութիւն առեալ 'ի թուլութենէ Հայոց՝ յաւելին անդ կանթեղս և զարդս, և այս ամենայն անտրմելելի ցաւոց ոչ կարելով տոկալ Թէոդորոսի՝ թախծագին սրտիւ գրէր՝ թէ չիք յոյս յայսմհետէ մնալոյ մեզ առա՝ զրկիմք 'ի ժառանգութենէ, և ինքն ջանահնար եղեւ փախչիլ ծածկաբար յԵրուսաղէմէ, այլ խմացեալ զայն միաբանաց՝ պահեցին զմանապարհն և կալան զնա, և եղին ուխտ ընդ նմա՝ թէ զկնի գնալոյ ատի Կուսակալին՝ արա զոր խորհիր, եւ այնպէս հանդարտեցուցին զնա։ Եւ 'ի վերայ այսր՝ թախանձանք Ցակոբ Եպիսկոպոսի եւ Պօղոս վարդապետի, միոյն հրաժարիլ 'ի Փոխանորդութենէ, եւ երկրորդին՝ հեռանալ 'ի մայրաքաղաքէն (1806)։

Ազգայինք Կոստանդինուպոլսոյ մուսանդամ գրեցին առ Թէոդորոս Պատրիարք խիստ բանիւք փութով առա-

քել զհրովարտակն, այլ նա արար նոցա պատասխանի՝ թէ դաշնագիրքն եկեալ են այդր առ Եղիազար Կաթուղիկոսիս՝ և ոչ դարձեալ այսր, և զայլն չվստահիմք հանել արտաքս, դուցէ վասանգ ինչ պատահեսցի 'ի ճանապարհի՝ և զօրինակն հանել դժուարին առ 'ի չդոյէ դատաւորի և ծախուց. զլուսս չարեացս այսոցիկ ցուցանէ լինել ըզ-Մուսա էֆէնտի նախկին Դպրապետ դատարանին Երուսաղէմի, զի կարի քաջ տեղեակ եւ հմուտ էր ամենայն անցից անցելոց երից ազգաց։ Իսկ նոցա տարակուսեալ 'ի վերայ ճախորդութեանցս այսոցիկ, խնդրեցին 'ի Դալիպ էֆէնտեայ զպատճէնս հրովարտակաց զոր տուեալ էին յառաջագոյն, և երեր զայնս Պաշպազկրկեան Յովհաննէս՝ թացեալ 'ի ջուր անձրեւաց՝ եղծեալ և անընթեռնլի, եւ ետուն վերստին օրինակել զայնս դժուարութեամբ, զի թերեւս կարելի լիցի ընդդիմանալ նոքօք ոսկեզօծ հրովարտակացն Յունաց։ Իսկ մինչոց ժամանակի՝ Հայք ոչ կարացին մատուցանել 'ի Դուռն զսոյդ հրովարտակս իւրեանց, որով հաստատէին զկարծիս Նախարարաց՝ չունել Հայոց զայնս՝ և զբանս Յունաց՝ որք ասէին՝ թէ հրովարտակք Հայոց կորուսեալ են 'ի ծովային և 'ի ցամաքային ճանապարհի՝ 'ի գալ և 'ի գնալն 'ի Կոստանդինուպոլիս, փոքու իմն ծառայէին այսմ եւ միաք Հայոց. զի միշտ բացաստութիւն ընկալան յերուսաղէմ, թէպէտեւ դարձն անդ զցանկն հրովարտակաց բերեալ յերուսաղէմ յաւուրս Շղթայակրի, այլ տարակուսեալ էին թէ դարձուցեա՞լ են զայնս վերստին յերուսաղէմ, թէ ոչ։

Ասա Կարապետ Աղնաւորեան եւ Գրիգոր Զէրեղեան յարգելիք՝ հմուտք Տաճկական դպրութեան, ձեռն արկին որոնել յարձանագրութիւնս Կայսերական դիւանաց, զի թերեւս մարթասցին 'ի նոցանէ հանել զպատճէնս եղծեալ օրինակաց՝ այլ ոչ կարացին գտանել, և Նախարարք Դրանն զիսկականն խնդրէին 'ի սագրելոյ Յունաց. այսպէս անյաջող գտեալ զգործն՝ պաշարեցան Հայք 'ի տրտմութիւն մեծ, զի յամենայնի ընդդէմ ելանէին նոցա խոչք եւ հակառակք. նմին իրի արժան համարեցին լուել առ ժամանակ մի և սպասել այցելութեան Տեառն։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ յարեաւ խռովութիւն մեծ 'ի Թագաւորեալ քաղաքի անդ, վասն օրէնդրութեան Արքայի՝ (Նիզամի ճէտիտ), և միաբանեալ եէնիչէրի զորաց բարձին յԱթոռոյ զՍուլթան Սէլիմ Գ. եւ եդին 'ի տեղի նորա զՄուստաֆա, և ոմանք 'ի Նախարարաց մատնեցան 'ի սուր, որոց խոստացեալ էր տալ Յունաց զժառանգութիւնն Հայոց։ Եւ 'ի ժամանակի խռովութեանս յայսմիկ մեկնեցաւ Պօղոս վարդապետ 'ի Զմիւռնիա 'ի գործ Նուիրակութեան։ Առաքեցան յերուսաղէմ Մարկոս Եպիսկոպոս և Մկրտիչ վարդապետ Մեղրիկ։ Եւ զկնի անցանելոյ աւուրց ինչ գայր հասանէր յՈռոմաքաղաքէ Մուստաֆա Փաշայ, այր հզօր և անպարտելի. 'ի խորտակել զդրունս Արքունեաց՝ խեղդեցաւ Սէլիմ Արքայ յիւրոց, էջ և Սուլթան Մուստաֆա յԱթոռոյն։ Ամբարձաւ 'ի գահ Կայսերութեան Օսմանեան եղբայր նորին Սուլթան Մահմուտ Բ. այր զգօն և արդարակորով՝ յաջողակ յամենայն գործս Կայսերական կառավարութեան, յորմէ սարսեալ դողայր ազգայր ազատամբ և ստահակ խուժ եէնիչէրեաց։ Սորա սեղանաւորք՝ և Գարուտան Փաշայի՝ ծանօթ էին Յարութիւն և Յակոբ Հայկազն յարգելիք, որք և ծանուցին ըզխնդիրն Մուստաֆա Փաշայ մեծի Վէզիրին, և նա խոստացաւ կարգաւորել զինդիրն յերուսաղէմ ըստ նախնական սովորութեան։

ԳԼՈՒԽ Ի.

Խռովութիւն այլազգեաց Երուսաղէմի։ Հաշիւ Ս. Աթոռոյն։ Միաբանութիւն Հայոց ընդդէմ Յունաց։ Քաղաքական դէպք։ Հրեշ 'ի տաճարին Ս. Յարութեան։

Եւ 'ի եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ կարգեցաւ կուսակալ Դամասկոսի Կէնճ Եուսուֆ Փաշայ, որոյ համբաւ գործոցն հասեալ յերուսաղէմ, սարսեցոյց զբնակիչս, առաւել եւս զվանականս, զի 'ի գալստեան նորին՝ բանային դրունք մեծամեծ ծախուց և տուգանաց. զի թէպէտեւ յառաջագոյն խնդրեալ էին յատուկ կառավարիչ Երուսաղէմի՝ որպէս դրեցաք, այլ չեղեւ յաջողութիւն այնմ 'ի

Կոստանդինուպոլիս։ Գասըմ Պէկն՝ որ զրկեալ էր յառաջադոյն յիշխանութենէ Երուսաղէմի՝ յաւուրս Ճէզար Փաշայի, այժմ կարգեալ քաղաքապետ Երուսաղէմի, յանկարծ եկն և եմուտ 'ի քաղաքն և նստաւ 'ի տեղի իւր՝ և կալեալ զառաջին քաղաքապետն Եահեայ Պէկ եդ 'ի դիպահոլ 'ի բերդն, որպէս հրամայեալ էր նմա կուսակալն։ Միւֆթի և Նախկին քաղաքին յահէ նորա փախուցեալ ամրացան 'ի Սիոն։ զի յառաջադոյն թշնամացեալ էին ընդ նմա՝ դիմեցին անդր և կուսակիցք նոցին, և դիմեցան ընդդէմ Գասըմի։ ճեղքեցաւ քաղաքն յերիսուս, գործեցին ավիրատութիւն մեծ տիւ և գիշեր։ Զայն եւ Միւֆթին Ապուղոչ Օթմանին ժողովել զիւրսն և հասանել յօգնութիւն 'ի Սիոն։ գրեաց և Գասըմ առ բնակիչս Յովհաննու Ծնընդեան դալ 'ի Թիկուանս, և ժողովեցաւ բազմութիւն մեծ 'ի քաղաքին յերիսուց կողմանց։ Միւֆթին ելեալ 'ի Սիոնէ դիմեաց բազմութեամբ 'ի վերայ բերդին, հանել անտի զզօրս և նոքօք զինիլ ընդդէմ Գասըմայ, այլ ամրանք դարձուցին զզէնս իւրեանց 'ի վերայ նոցա և արարին ըստնասա փախստական, և նոցա հասեալ 'ի դուռն քաղաքին արեւելեան՝ պատգամ յղեցին անդ 'ի բերդն տալ զբանալի դրան, զի աղխեալ էին դրունք պարսպին և վանօրէից։ և իբրեւ չառին նոքա յանձն՝ խորտակեցին զփականս և բացեալ զդուռն ելին արտաքս, և վերստին յուզեցաւ աղմուկն 'ի քաղաքին, եւ Միւֆթին եկեալ իւրովքն հանդերձ ամրացաւ 'ի Սիոն, և 'ի զայրանալ բանից յերկուց կողմանց՝ բանս եդին գրել առ Կուսակալն։ Իսկ Միւֆթին առանձին միջնորդ կալաւ առ Եուսուֆ Փաշա, զՍիւլէյման Փաշա, որ նստէր յԱքքէ, բառնալ զԳասըմ յերուսաղէմ, և հաստատել 'ի տեղի նորա Եահեայ։ Կարգեցան զօրականք 'ի դրունս պարսպին և վանօրէից պահել 'ի տիւ և 'ի գիշերի։ պիտոյք քաղաքին և վանօրէից պարանաւ ձգէին 'ի պարապէն։ Եւ 'ի խռովութեանս յայսմիկ քրիստոնեայք պաշարեցան յերկիւղ մեծ։ Միւֆթին յարաքուստ և Գասըմ 'ի ներքուստ պահանջէին 'ի վանականաց ուտեստ և դրամ։ Իսկ Կուսակալն արար պատասխանի՝ զի զոր կացուցի՝ այն է քաղաքապետ, զի ոչ եմ իբրեւ զայլս, խորհրդով ձերով տնտեսել զգործս իմ։ եւ

Գասըմ հաստատեցաւ 'ի պաշտօնի իւրում։ գրեաց և առ Միւֆթին և ասէ՝ դու գոլով 'ի դասէ գիտնականաց, զի՞ վոյթ է քեզ ձեռն մտել 'ի գործ քաղաքականութեան և կառավարութեան, նիստ 'ի տուն քո և արա աղօթս վասն կենաց Թագաւորին։ Եւ 'ի գիշերին յայնմիկ եղեւ ուրախութիւն մեծ 'ի քաղաքին՝ արձակելով հրանօթս 'ի բերդէն։ և Միւֆթին անկաւ խօթ 'ի Սիոն եւ արձակեաց յինքենէ զրազմութիւն Ցէլլահից։ Եւ 'ի վաղիւ անդր գնացին առ նա դատաւորն եւ քաղաքապետն՝ այլովքն հանդերձ։ և նորա զիջեալ 'ի կամս նոցա՝ արար հաշտութիւն, այլ ոչ էջ 'ի տուն իւր։ բացան դրունք քաղաքին և վանօրէից։

Ի խառնաշփոթ ժամանակիս յայսմիկ անտանելի էր ըստահակութիւն այլազգեացն Սիոնի, զի կալեալ զդագաղս ննջեցելոց 'ի ճանապարհի դնէին անդ 'ի հրապարակս, և ոչ տային թոյլ թաղել զնա մինչչեւ առեալ իցեն զդուստարս դրամոց։ Նեղեալ Հայոց յանհանդուրժելի չարութեանց նոցին, բողոք կալան առ դատաւորն՝ եւ եմուն նմա գրել 'ի Դուռն, զի հրովարտակաւ Արքայի բարձցին անկարգութիւնք նոցին։

Աղա Յովհաննան 'ի Սուրմթ քաղաքի յաշխարհին Հնդկաց, 'ի կենդանութեան իւրում՝ զկնի այլոց՝ կըտակաւ աւանդէ 'ի կտակատուն ընկերութեան Անգղիոյ դուստրս ինչ վասն Աթոռոյն Երուսաղէմի։ Զկնի մահուան իւրոյ, կտակակատար նորին աղա Մուսէս Խաչիկ Առաքել՝ անկեալ 'ի Ներքոյ պարտուց։ զձեռագիր մուրհակս կտակացն հանէ 'ի վաճառ։ զայս լուեալ Թէոդորոս Պատրիարքին գրէ առ Յակոբ վարդապետ Նուիրակն Հնդկաց վերահասու լինել և հաստատութեամբ կարգաւորել զայն գործ խորհրդով Հայ Իշխանաց այնր աշխարհի։ Սակայն չեղեւ ինչ օգուտ՝ զի 'ի վաղ վաստնեալ էր նորա զամենայն գոյս հանդուցելոյն և իւրն իսկ (1807)։

Ի բազմանալ տակաւաւոր պարտուց 'ի վերայ Աթոռոյն՝ և 'ի յաճախել բողոքոյ և գանկատանաց միաբանաց յականջս երեւելեաց ազգին, գրեցին առ Թէոդորոս Պատրիարք առաքել զտուստարս բովանդակ ելից և մտից Աթոռոյն, սկսեալ յառաջին ամէ Պատրիարքութեան իւրոյ։

Իսկ Թէոդորոս ասաբ Նոցա պատասխանի՝ Ծանր իմն է Նորասահման խնդիրդ՝ զի յաւուրս ձեր և մեր խորհրդական հաշիւք Աթոռոյն յայտնի քարոզել 'ի բերանս հաստատակաց. եթէ իշխանաւորքդ միայն կամիք գիտել և իմանալ, առաքեցէք զարս հաւատարիմս, յորս վստահ են անձինք ձեր, 'ի Ս. Աթոռս, քննել զմայր տուսարս և խելամուտ առնել զձեզ. զի մի կարծեսցի թէ պահեալ ըզդանձս իբրեւ մուրացիկ շրջիմք 'ի դրունս ձեր, զի եթէ առ այս եւս ոչ հաճեսջիք՝ տուք ինձ հրաման գալ 'ի Կոստանդինուպոլիս, և տալ զհամար տնտեսութեան իմոյ առաջի մեծի և փոքրու. զի մի 'ի պատճառս այս զանց արասջիք զմեօք՝ թողեալ 'ի ձեռս կեղծիչ բռնաւորաց, 'ի կործանումն ազգին և 'ի յափշտակութիւն ազգային սեփականութեանց։

Եւ 'ի զայրանալ խռովութեանն ընդ Յունաց 'ի Թագաւորական քաղաքի, գումարեցան զվսաւորք ազգին առ Յովհաննէս Պատրիարք, և միաբանեալ ընդ միմեանս ուխտ եդին, դաշինս և պայմանս հաստատեցին 'ի միջի իւրեանց, զի միակամ և համախորհուրդ յամենայն սրտէ սիրով և ջանիւք աշխատեսցին վասն սեփական ժառանգութեան ազգին՝ որ յերուսաղէմ, և մի երբէք թողցեն զայն 'ի յափշտակութիւն օտարաց. այսոքիկ են պայմանքն զորս եդին։ Ի սահմանեալ ժամանակին առանց իւիք պատճառի փութալ եւ հասանել 'ի խորհուրդ և 'ի գործ, բարւոք քննել զխնդիրս եւ միաբան հաճութեամբ որոշել. լինել խորհրդապահ յամենայնի։ Զերկպառակիլ 'ի բանս և 'ի գործս, միաբան մնալ 'ի մահ և 'ի կեանս. միաբան սիրով վաստակաւորաց՝ օրհնութիւն Տեառն. անձնասիրաց, հակառակորդաց և նենգաւորաց՝ անէծս ցաւագինս. գիտութեամբ ամենեցուն մխել 'ի գործ։ Զայս դիր եատուն կնքել նախ Պատրիարքին՝ և ապա ինքեանք մի ըստ միոջէ։ Սակայն ձայն պատերազմին Ռուսաց ընդ Օսմանցիս խոչ եղեւ գործոյն առ ժամն։

Մկրտիչ վարդապետ, նոյնպէս և վարդապետք Յունաց և Լատինաց դեղերէին 'ի դրունս սակս կարգաւորելոյ ըղկառավարութիւն Երուսաղէմի, որպէս դրեցաք, և չգըտեալ օգնութիւն ինչ յուստեքէ, միջնորդ կալան զգեսպանն Գաղղիոյ, այլ ազմուկ մեծ էր յայնժամ 'ի Թագաւորական քաղաքին։ Գանկատ և դժգոհութիւն 'ի բռնաւոր այլազգեաց Երուսաղէմի։ Տոկոսաւոր նոր պարտք սոյն տարւոյ 965 քսակ։ Հրաժարումն Թէոդորոսի 'ի Պատրիարքութենէ, և միաբանացն յերուսաղէմէ, իբրեւ ոչ կամեցան ունկնդիր լինել բանից Նոցա ազգայինք. վերստին գրեաց Թէոդորոս, եթէ ոչ կամին տալ նոքա հաստուն խորհրդով որոշ պատասխանի, կրեսցեն զխայտառակութիւն մեծ 'ի մօտոյ, եթէ ոչէր ասէ՝ ածեալ իմ զմտաւ զաջ և զահեակ, ասպաքէն ոչ ոք կարէր գիտել և իմանալ զտեղի փախստեան և թագստեան իմոյ. մայր տուսարքն պատրաստ, ահա տուն ձեր և դուք, քննել եւ իմանալ զորպէսն։

Անգղիական նաւատորմիղն մտանէ 'ի Տարտանելէ եւ սիրեալ առաջի Կոստանդինուպոլսոյ. դղրդումն քաղաքին, անդուլ աշխատութիւն քրիստոնեայ ժողովրդոց 'ի գործ չինութեան մարտկոցաց. Հայ և Յոյն Պատրիարքաց խառն ընդ ամբոխին, տեսանել Արքայի եւ զգեցուցանել նոցա վերարկու պատուոյ. և մեծարգոյ Երեւելի Յովհաննու Պատրիարքին յաչս Արքայի։ Խնդիր հրաժարելոյ Յակոբ եպիսկոպոսի 'ի փոխանորդութենէ վասն չքաւորութեան դրամոց եւ անբաւ ծախուց, յոյր սակս անկաւ գժտութիւն 'ի մէջ Նորա և Թէոդորոսի, մինչեւ ծանր գրել միմեանց. այլ Պատրիարքն ոչ էտ տեղի բանից Նորա, և յորդորեաց զնա արիութեամբ կալ 'ի պաշտօնն, և խիստ բանիւք Հայուելոյ վերս 'ի վերայ վիրաց 'ի վնաս ինքեան և Աթոռոյն։

Անգղիացիք մտանեն յԱղէքսանդրիա, և դրաւեն զքաղաքն Ռէշիտ, պարտին յայլազգեաց և բազմաթիւ գերիք նոցին խեղին յաջս և յականջս և կապին 'ի տուն բանտի։ Խռովութիւն յԵգիպտոս, մահ առաջնորդի տեղւոյն Յարութիւն վարդապետի, հանդիսաւոր թաղումն նորին նախագահութեամբ Պատրիարքին Խալեպոյ։

Զկնի բազմադիմի խռովութեանց և ատելութեանց որ 'ի մէջ Դաւիթ և Դանիէլ Կաթուղիկոսաց Էջմիածնի, 'ի վերջոյ իշխանաւորք ազգին Կոստանդինուպոլսոյ առին հրովարտակ Յարքայէ վասն հաստատութեան Կաթուղիկոսութեան Դանիէլի, և գրեցին գիր հանրական, և այլք

առանձին բաղմութիւն գրեանս շնորհաւորութեան, եւ առաքեցին 'ի ձեռն Յովհաննէս Եպիսկոպոսի և Աստուածատուր վարդապետի՝ յԷջմիածին, զի բարձցի տարաձայնութիւնն 'ի միջոյ ազգին և հաստատեսցի խաղաղութիւնն։ Իսկ Դանիէլ Կաթուղիկոս ըստ խնդրոյ իշխանացն Հայոց ձեռնադրեաց զԱստուածատուր վարդապետ յաստիճան Եպիսկոպոսութեան, եւ դարձոյց զնոսա ուրախութեամբ 'ի Կոստանդինուպոլիս, որպէս յայտ առնէ զայս կոնդակ նորին զոր գրեաց առ Յակոբ Եպիսկոպոս փոխանորդն Երուսաղէմի (1807· Սեպտեմբեր 14)։

Յամի Տեառն 1808 յ30 Սեպտեմբեր ամսոյ, և 'ի Թուին Հիճրէթի ١٢٢٣ 'ի ٢٨ Շաբան ամսոյ, 'ի գիշերի չորեքշաբաթու՝ ժամ 9, յետ կատարելոյ միաբանաց երից ազգաց զգիշերային հոգեւոր պաշտօնս եւ բերանց՝ մինչդեռ էին 'ի քուն ամենեքեան, յանկարծ եկ հուր և բորբոքեցաւ Վերնատունն Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան, և ճարակեցաւ բոցն 'ի փայտակերտ շինուածս սենեկաց եւ այլոց իրաց, և յաճիւն դատեաց զամենայն ինչ զոր միանգամ եդիտ 'ի Վերնատան անդ· անտի ձգեցաւ բոցն 'ի Գողգոթայ և 'ի տաճարն Յունաց, և ապա 'ի շրջապատ հրապարակս Գերեզմանին Քրիստոսի· դղրդեցաւ քաղաքն ողջոյն և ժողովեցաւ բազմութիւն մեծ յամենայն ազգաց· այլ չէր հնար մերձենալ ուստի 'ի կատաղի բոց հրդեհին· մաչեցան 'ի հուր ամենայն ծանրագին տպասք եկեղեցւոյն, հալեցան անօթք սակեղէնք և արծաթեղէնք· շրջապատեալ հրոյն զբովանդակ տաճարն ելանէր ծուխն իբրեւ զհնոցի· յաղթ սիւնք մարմարեայք իբրեւ զմոմ հալեալ փչրեցան, եւ կապարապատ գմբեթին մեծ, որ 'ի վերայ նոցա, անկաւ ահագին շառաչմամբ· կործանեցան և այլ կամարք և շինուածք, և եղեւ սուգ մեծ քրիստոնէից։ Զի թէպէտ ոմանք 'ի ժողովրդոցն Յունաց՝ կամէին ելանել 'ի Վերնատունն Հայոց պատրուակաւ շիջուցանելոյ զհուրն, այլ այլազգիք արգելին զնոսա, զի մի դաւ ինչ գործեսցեն ընդդէմ Հայոց և կամ աւարեսցեն։ Իսկ միաբանք որք էին 'ի տաճարին՝ ոմանք ելեալ 'ի կողմն Լատինաց, ոմանք 'ի Գիւտ Խաչ և 'ի Լուսաւորիչ եկեղեցին, և ոմանք խորտակեցին 'ի վերուստ զվանդակս պատուհանաց դմբեթին և պարանաւ ձգեալ հանին զնոսա արտաքս։ Եւ Ադրիանուպօլսեցի Մելքոն վարդապետ Տեառչն Հայոց 'ի տաճարի անդ՝ կամեցեալ փախչիլ 'ի կողմն Լատինաց, իբրեւ եհաս առաջի մուտքն Գպթաց, հոսեցաւ 'ի վերայ նորա հալեալ կապարն մեծի գմբեթին և մնաց անդ ընդ փլատակօք· և յետոյ 'ի մաքրել զհողս եւ զքարինս տեղւոյն, գտին զմարմին նորա՝ ունելով ընդ իւր զգրեանս Հայոց և զբեկորս արծաթոյ։ Այրեալ տեղիքն են՝ ամբողջ Վերնատունն Հայոց, խորանք, փայտակերտ սենեակք 16, ամենայն պարագայիւք, և ոչ մի ինչ զերծաւ անտի· Պատանատեղին Քրիստոսի, արտաքին մեծ դուռն տաճարին, Գողգոթայի մայն զարդքն, տաճարն Յունաց, դարանք և պահարանք նոցին, շրջապատ Գերեզմանին, մեծ գմբեթին։ Ներքին կողմ Գերեզմանին անվնաս և ամբողջ· Գիւտ Խաչ, Լուսաւորիչ եկեղեցին Հայոց, Լատինաց եկեղեցին՝ և զարդքն անվնաս և ամբողջ· մի միայն մեծ ճնասն եղեւ Հայոց եւ յետ այնորիկ Յունաց։ Զպատմութիւն այրման տաճարին Ս. Յարութեան՝ գրեալ են ոմանք 'ի ժամանակին յայնմիկ, որպէս և Թէոդորոս Պատրիարք 'ի նամականեխ իւր, և գտաւորք 'ի դատաստանական գիրս, յորոց քաղեալ եդաք սատանօր։ Գրեալ է նաեւ ոտանաւոր բանիւք Նէոփիտոս Կիպրացի Յոյն կրօնաւոր, այլ ի թշնամանօք և անլսելի հայհոյութեամբ, զորս ոչ տանին մարդկեղէն լսելիք, զի առաւել զհետ մտեալ է իրրեւ գուեհիկ և դեղջուկ նախատակոծ բանիւք անարգել եւ անպատուել, մանաւանդ զրպարտել և բամբասել զազգն Հայոց հանդերձ նոցին եկեղեցականօք, քան ուղիղ պատմութեան միտ դնել, որոյ վասն թողցուք ինքեան զվայրապար լուտանս նորին եւ մեք գրեսցուք որ ինչ եղեւն յետ այնորիկ։

Ի ծագել արեգական եկին և ժողովեցան յարտաքին դաւիթ տաճարին՝ մեծամեծք այլազգեաց, քաղաքապետն, Եէնիչէրի աղասին, Մուֆթին և այլք, և բազմութիւն մեծ խառն յամենայն ազգաց· գիմեցին անդր եկեղեցականք Յունաց և բոլոր բարձեալ աղաղակէին՝ թէ Հայք գիտամբ այրեցին զտաճարն, հասին անդ եւ եկեղեցականք Հայոց և Լատինաց, եհարց քաղաքապետն զՀայս, ընդդէմ

արկիք հուր 'ի Ս. Տեղիս ձեր, և նոքա ասեն՝ քաւ լիցի մեզ առնել զայդպիսի իրս, զի այս դէպք իմն է և պատահար. դարձեալ աղաղակեցին Յոյնք, զի եթէ դէպք էր՝ վասն է՞ր ոչ աճապարեցիք չիջուցանել զհուրն կոչելով օգնութիւն յարտաքուստ, այլ կայիք 'ի զննին անհոգաբար, և այլ սոցին նման բանք՝ ջանալով պարտաւոր ցուցանել զՀայս, այլ նոքա դարձեալ զնոյն բան երկրորդեցին։ Կոչեաց դատաւորն զմիաբանս տաճարին երից աղգաց և մի առ մի եհարց ցնոսա՝ թէ նախ ուստի եկ հուրբն, և նոցա պատասխանի տուեալ ասեն, այս պատուհաս իմն է քրիստոնէից յԱստուածակոյս կողմանէ. բայց նախ տեսաք զի այրէին եկեղեցին եւ խորանքն Հայոց։ Եւ զի որսացեալ էին Յոյնք զԼատինս 'ի կողմն իւրեանց, և ընդ նոսա միաբանութեամբ առին գիր 'ի դատաւորէն 'ի վնաս Հայոց։ Առին և Հայք բաղում աշխատութեամբ եւ ծախիւք չինել զբաժին տեղիս իւրեանց, այլ Յոյնք արօք և չարախօսութեամբ ջանային պարտաւոր ցուցանել զՀայս, և երկնէին 'ի միտս իւրեանց միայնակ չինել ընտաճարն և արտաքսել անտի զՀայս և զհետեւակս նոցին, և նուաճել զԼատինս ընդ իշխանութեամբ իւրեանց։ Զայս զգացեալ Լատինաց 'ի բաց կացին 'ի միաբանութենէ Յունաց՝ և յարեցան 'ի Հայս, և եդին պայման 'ի միջի՝ կալ մնալ սիրով և խաղաղութեամբ. դարձուցին յետս զգերեանս զոր առեալ էին ընդ Յունաց 'ի դատաւորէն, թէ ոչ կարեմք յայտնապէս լինել զրպարտիչ աղգին Հայոց, ապա առին գիր ընդ Հայոց։ Ապշեցան Յոյնք ընդ այս և ոչ համարձակէին առաքել զգրեանս 'ի Կոստանդինուպօլիս, այլ թողին առ ժամն հոգալ զամենայն ինչ անդ։ Լատինք գրեցին առ ազգային իւրեանց և առ Դեսպանն Գաղղիոյ, հոգալ և պատրաստել զամենայն կարեւոր նիւթս 'ի կառուցումն հրկիզեալ տաճարին 'ի ձեռն թագաւորացն Եւրոպիոյ, որպէս երբեմն մեծն Կոստանդիանոս. այսպէս ասէին Հայոց իբրեւ բարեկամ։ Իսկ Հայք կասկածեալ 'ի նենգութենէ Յունաց՝ զի մի' չարիս ինչ կրեսցեն 'ի նոցանէ, խափանել զթափօրս և զայլ արարողութիւնս եւ զհանգէս Լուսաւորութեան 'ի Ճրագալուցի Զատկին, թախանձանօք գրեցին առ Պատրիարքն և առ գլխաւորս աղ-

գին, հանել գիր արքունուստ վասն այսր. գրեաց Թէոդորոս Պատրիարք և առ Մանուկ Պէյ հայկազն Իշխանաւոր, որ 'ի նոյն աւուրս եկեալ էր 'ի Կոստանդինուպօլիս 'ի Պուքրէշէ, և յորդորեաց զնա լինիլ միջնորդ առ մեծամեծս Դրան վասն չինութեան բաժին տեղեացն Հայոց։ Գրեաց և առ Պատրիարքն Ղպթոց յԵգիպտոս, հոգալ ընտեղիս իւրեանց. զի ամենայն գոյք և գրեանք նոցին այրեցան 'ի հրկիզութենէ։ Եւ զկնի աւուրց ինչ մաքրեցին զՍ. Յարութիւն 'ի հողոյ և 'ի փոշւոյ, և կարգեցին իւրաքանչիւր ազգ զսաչտօնեայս՝ կատարել անխափան զհոգեւոր պաշտօնս իւրեանց. նոյնպէս և Հայք 'ի Ս. Լուսաւորիչ։ Եւ չինել քաղաքապետն առ ժամանակեայ կերպիւ զդուռն տաճարին, բանալ և փակել ըստ սովորութեան։

Իսկ սակս թաղելոյ զմարմին Մելքոն վարդապետի որ մեռաւ 'ի հրայրեացսն, ընդդէմ կացին այլազգիք, զի չէր օրէն հանել մեռեալ 'ի տաճարէ անտի, մինչեւ առին տուգանս 'ի Հայոց՝ և ապա թոյլ տուին. Թէոդորոս Պատրիարք գրեաց վասն այսր 'ի Դուռն 'ի ձեռն դատաւորին եւ ամենասան եղեւ զբռնութենէ այլազգեաց. գրեցաւ հրովարտակ սաստել զայլազգիսն զի մի' բռնասցին 'ի վերայ քրիստոնէից վասն թաղման ննջեցելոց իւրեանց։

Հասին գրեանք դատաւորին 'ի Կոստանդինուպօլիս, զորս տուեալ էր Հայոց, Յունաց և Լատինաց, կամ 'ի միասին և կամ իւրաքանչիւր ազգ չինել զբաժին տեղիս իւրեանց. սակայն Յոյնք ոչ առին զայս յանձն և ոչ միաբանեցան ընդ այս, զի կամէին միայնակ չինել, եւ խոպան վանել անտի զՀայս եւ զԼատինս։ Զի յաւուրս Եուսուֆ Փաշայի՝ առանց իմանալոյ Հայոց գաղտնի հանին հրովարտակ չինել զսեփհական տեղիս իւրեանց, ըստ առաջին ձեւոյն և որպիսութեան՝ համաձայն վճռոյ մեծի դէնպետին, որ և պատրաստեցին զգործաւորս և զամենայն հանդերձանս չինութեան հանեալ 'ի նաւ, եւ ճարտարապետ զսին Դումպիանոս անուն. առին և վերակացու 'ի Դրանէ Էլմաս Փաշա Զատէ մեր Ապտարահման Պէյ։ Ճարտարապետն չոքաւ առ վերատեսուչն Արքունի նաւատեղեաց (Թէրսխանէ Էմինի) ասել մնաս բարեաւ, ուր նստէր յայնժամ

Ազնաւորեան Կարապետ Ամիրայ, և ստուգեալ իմացաւ 'ի նմանէ, թէ երթայ այրն յԵրուսաղէմ չինել զտաճարն Ս. Յարութեան. ո՞չ ապաքէն ասէ՝ տեղին այն յատակացեալ է երից ազգաց, եւ չինութեանն միաբանութեամբ պարտ էր լինել. առ այս պատասխանէ ճարտարապետն. Լատինք եւս անհմուտ գոլով՝ այնպէս գիտեն, որպէս եւ բարեկամն այս. զայս ասացեալ մեկնի 'ի նաւն ճանապարհորդել յԵրուսաղէմ, և Կարապետ Ամիրայ զամենայն հանգամանս խնդրոյն և տեղւոյն մի առ մի պատմէ վերատեսչին, եւ յօրէ յայնմանէ խորհէին գլխաւորք ազգին մատուցանել գիր աղաչանաց առ Արքայ։

Այլազգիք Երուսաղէմի միաբանեալ ընդ Միւֆթի եւ ընդ Նախիպի քաղաքին, որոց պարագլուխ էր Ապուզոչ Օթման, ապստամբեալ ամրացան 'ի Սիոն, և սկսան մարտնչիլ ընդ այլազգիսն, որք ամրացեալ էին 'ի բերդն. այրեցին զարտաքին դուռն բերդին, և գործեցին զայլ ինչ բազում. յահէ նոցին տագնապեցան վանօրայք։ Եւ 'ի դալըստեան Կուսակալի Դամասկոսի ըստ սովորութեան յԵրուսաղէմ, խոյս եառուն ապստամբեալքն 'ի լերինս և թագեան յայրս և 'ի փաղարս լերանց. իսկ Բդեշխն թափեաց զյաստու�մն իւր 'ի վերայ արանց, որք ամրացեալք էին 'ի բերդն. եւ ապա որպէս թէ հաշտութիւն արար 'ի միջի նոցա, գրեաց ինքն գիր հրամանի առ ապստամբսն անէծիւք և դառնութեամբ, զնոյն եւ գրել և դատաւորին. շրջանեալ 'ի վերայ վանօրէից և չնեղել զնոսա. և խոստացաւ կարգել զոք հմուտ և քաջակիրթ քաղաքապետ բազմութեամբ զօրաց՝ 'ի հանգիստ վանօրէից. և զայս ծանոյց հասարակութեան քաղաքին 'ի ձեռն մունետիկի եւ ինքն սկսաւ մերկացուցանել զվանականս. միայն 'ի Հայոց էառ 270 քսակս արծաթոյ, թող զսահմանեալ ագանելիս եւ զընծայս և դարձաւ անդրէն 'ի տեղի իւր, առանց թողլոյ զզօրս և բարեկարգելոյ զքաղաքն։ Ապստամբք իրրեւ լուան զչու Կուսակալին, ելին 'ի ծակուց իւրեանց և զեղան յԵրուսաղէմ. կրճատելով զաստամուռս իւրեանց 'ի վերայ քրիստոնէից, սկսան անարգել գործել զառաջին չարիսն, պահանջելով 'ի վանականաց զայլ և այլ իրս. և քաղաքապետին չէր հնար միայն զդէմ ունել բռնութեան

ստահակաց։ Եւ դաշինս եդեալ էին ընդ միմեանս, զի զկնի աւուրց ծանրագոյնութեան իւրեանց՝ կատարել, զոր միանգամ եդեալ էին 'ի մտի. բայց ոմանք 'ի նոցանէ դըրժեալ երդմանն՝ կալեալ զոմանս 'ի քրիստոնէից 'ի պատճառս վանօրէից՝ դան հարին զնոսա։

Ատի համարձակութիւն առեալ գիւղականաց Մելվամայ՝ յարձակեցան սրովք և քարամբք 'ի վերայ Հրէից, որք բարձեալ տանէին զմեռեալս իւրեանց 'ի Թաղել, և վիրաւորեցին զնոսա, և զմեռեալն ընկեցեալ 'ի դաշտն՝ թաւալեցին 'ի ձորն, եւ բացեալ զգերեզմանս նոցին 'ի բաց յրուեցին զոսկերս մեռելոց։ Բնակիչք Բեթղեհէմի զհետ եղեն աւազակութեան. իսկ Ֆէլլահք Յովհաննու Մննդեան կալեալ զերկուս ոմանս յայլազգեաց քաղաքին, տարեալ 'ի գիւղն եդին 'ի փուռն հացի. և ապա միաբանեալ ամենեցուն, որոց գլուխ եւ առաջնորդ էր Ապուզոչ Օթման, յարեան 'ի վերայ վանօրէից եւ խնդրէին 'ի նոցանէ գիր երաշխաւորութեան. զի 'ի դալըստեան Կուսակալին մի պահանջել 'ի նոցանէ դրամս, այլ զսուրս նոցին հատուցցեն վանականք։

Այլ զայս ամենայն չարիս յուզէին Եահեայ և Գասըմ հին քաղաքապետք որջացեալք յԵրուսաղէմ, ո՞ւր դիցուք զկամ եւ զկռիւս այլազգեաց ընդ երիս վանօրայս սակս ջուխտի, և ընդ Հրէայս վասն շաքարի։ Յերեսաց այսպիսի անկարգութեանց եւ չիսթից՝ անկան միաբանք Հայոց 'ի ներքոյ տոկոսաւոր պարտուց իրր 1000 քսակս արծաթոյ։ Տագնապեալ 'ի նեղութեանց ստի Թէոդորոս Պատրիարքի կամեցաւ փախչիլ 'ի Կիպրոս և անտի յայլ տեղի. այլ միաբանք արգելին զնա, գուշակելով զապագայ մեծամեծ չարիս. վասն որոյ առաքեցին զԳարրիել վարդապետ մահսերական գրով 'ի Կոստանդինուպօլիս՝ զի Հայք, Յոյնք և Լատինք գումարեալ 'ի միում վայրի, խորհրդով գրեցին առ գլխաւորս ազգի իւրեանց, եւ առին գիր 'ի դատաւորէ քաղաքին ծածկապէս, եւ առաքեցին 'ի Թագաւորեալ քաղաքն. զի գլխաւորք երից ազգաց խորհեսցին անդ 'ի միասին հաճել զկամս Արքայի 'ի կարգել զոք Բդեշխս Երուսաղէմի երկու թուղով, բաժանելով 'ի Դամասկոսէ, զի բարեկարգեսցի երկիրն և սանձահարեսցին

ստահակք։ բառնալ նաեւ հրովարտակաւ Արքայի զնորա-
սահման տուրս, թէպէտեւ վասն այսր Լատինք բազում
աշխատութեամբ առեալ էին հրովարտակ, այլ 'ի մատու-
ցանել զայն Կուսակալին ոչինչ օգտեցան։ Եւ ապա յաւե-
լին ասել. եթէ անհնարին լիցի կատարել զինդիր իւր-
եանց, առցեն հրաման և ոստիկան 'ի Դրանէ հանել զվա-
նականս յԵրուսաղէմ, զի երթեալ բնակեսցին 'ի Կիպրոս
և յայլ տեղիս. զի Արաբացիք ոչ հանդիստ տան և ոչ փա-
խըստեան տեղի. զի հրեշտակական հոգեղէն բնութիւնն
անդամ ոչ կարէ տոկալ այսպիսի նեղութեանց, թող թէ
մարդ երկրածին (1807. Նոյեմբեր 17)։ Յետ այսր ամե-
նայնի դատաւորն, Միւֆթին, քաղաքապետն և այլք, իբր
խնայելով առին 'ի Հայոց 15,000 դահեկան. նոյնչափ եւս
'ի Յունաց և 'ի Լատինաց և պահանջէին զդինս ջուխտի,
որոյ վասն հանին խայտառակութիւն մեծ։ Հրէայք իսպառ
անշնչացեալ՝ փոխանորդ նոցա փախեաւ 'ի քաղաքէն։ Տե-
սուչ եւ փոխանորդն Լատինաց անհանգիստ փակեցան 'ի
վանս իւրեանց, թարգմանն Յունաց իբր հիւանդ խոյս եւ
'ի Խաչվանքն, իսկ վասն Հայոց չէք ինչ ասել, զի 'ի յա-
ճախել պարտատերաց տային յիշել զաւուրս Տեղակալաց։

Դամասկոս առ հասարակ բնակչօք հեծէ 'ի նեղութիւնս
'ի բռնութենէ իշխողին, զի բռնադատէր զքրիստոնեայ
գործակալս թլփատիլ՝ որոց փախուցեալ ընտանեօք զեր-
ծան, զնոյն պահանջէր և 'ի հպատակաց ստիպելով, որպէս
գրէ զայսոսիկ առաջնորդ տեղւոյն Պետրոս վարդապետ։

Զկնի հասանելոյ գրեանց 'ի Կոստանդինուպոլիս, գրեաց
Յակոբ եպիսկոպոս փոխանորդն թէ՝ անհնարին է որոշել
զԵրուսաղէմ 'ի Դամասկոսէ և կարգել առանձին Բդեշխ։
Եւ 'ի սոյն աւուրս ընթերցաւ հրաման կուսակալին 'ի դա-
տարանն Երուսաղէմի և 'ի ձեռն քարոզի ծանուցաւ բնակ-
չաց, յորում ասէր, զի առհասարակ Մահմետականք մեծ
և փոքր պարտին թողուլ մօրուս, սակայն երիտասարդք
ոչ անսացին հրամանին, որոյ վասն եղեւ աղմուկ 'ի քա-
ղաքին, նեղութիւն վանօրէից վասն գլխահարկի (1808.
Յունվար)։ Յիշատակի անուն Դանիէլ Կաթուղիկոսի յե-
կեղեցիս (Մարտ 7)։

Նեղութիւն քրիստոնէից Դամասկոսի վասն զգեստուց։

Եգիպտոս 'ի Յուզմունս, որպէս գրէ Կարապետ վարդա-
պետ առաջնորդ տեղւոյն։ Այլազգիք Սիոնի արգելին ըզ-
Քրիստոնեայս թաղելոյ զմեռեալս իւրեանց. որպէս 'ի մի-
ում նուագի յարձակեալ 'ի վերայ եկեղեցականաց Յունաց
կամէին դանակոծել զնոսա, եւ նոցա թողեալ զմեռեալն
անդ՝ փախեան, և յետ երկուց ժամուց հաճեալ զկամս նո-
ցա՝ դնացեալ թաղեցին զնա. և յօրէ յայնմանէ ոչ կարէր
ոք 'ի Քրիստոնէից ելանել 'ի գերեզմանատուն, և դատա-
ւորք տեղւոյն ոչ կարէին ասել ինչ, Լատինք յառաջագոյն
վասն այսր բերեալ էին հրովարտակ յԱրքայէ՝ իսկ Հայք
և Յունք 'ի վերայ այսր չիսթի առին գիր 'ի դատաւորէն և
առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս խնդրել հրովարտակ,
զի մի դարձեալ յանդգնեսցին այլազգիք Սիոնի գործել
զայնպիսի չարիս. (1808. 27 Ապրիլ)։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Մահ Յակոբ եպիսկոպոսի։ Փոխանորդ Պօղոս վարդապետ։ Տումարք
Աթոռոյն։ Գաբուշի պաշի։ Նիւթք շինութեան։ Գրգռութիւն Յոն
Ժաղմեղոյ։ Խռովութիւն այլազգեաց ասկ շինութեան տաճարին։
Զինակիր Կուսակալին Դամասկոսի։

Ի ՍՈՅՆ աւուրս փոխանորդն Երուսաղէմի Յակոբ
եպիսկոպոս՝ տաղտկացեալ 'ի ծանրութենէ գործոյն հրա-
ժարեցաւ 'ի պաշտօնէ իւրմէ, և անկաւ խօթ 'ի մահիճս
որ և վախճանեցաւ իսկ 'ի վանքն Իսկիւտարու, և մեացին
անդ Մարկոս եպիսկոպոս եւ Մկրտիչ վարդապետ, որոց
միաբանեալ զբոլոր գլխաւորս արհեստաւորաց մեծ բազ-
մութեամբ մատուցին գիր աղաչանաց առ Արքայ Աֆ Էֆ-
ֆայ կոչեցեալ տեղին, յաւուր Ուրբաթու (1809. յ23 Ապ-
րիլի), վերստին դարձուցանել առ Հայս զգաղտնի յա-
փըշտակեալ տեղիս 'ի Յունաց, և այս գործ հաչակեցաւ
'ի քաղաքն ողջոյն, և զայրացեալ երկուց կողմանց սպա-
ռել ջանային զիրեարս։ Իսկ Յովհաննէս Պատրիարք և այլք

ազգ արարին յԵրուսաղէմ զմահ Փոխանորդին եւ Թէոդորոս Պատրիարք որոշեաց 'ի տեղի Նորա զԱդրիանուպոլսեցի զՊօղոս վարդապետ Նուիրակն Զմիւռնիոյ՝ որ և հասեալ էր 'ի Մխալիճ, և գրեաց առ նա հարկեցուցիչ բանիւ փութով հասանիլ 'ի Կոստանդինուպոլիս 'ի գլուխ պաշտօնի իւրոյ, որ և Նորա թողեալ զառաջին պաշտօնն եհաս անդր։ Եւ սկիզբն արար ջանասէր մտօք անդադար աշխատիլ և դեգերիլ հանապազ 'ի դրունս մեծամեծաց, նոյնպէս և գլխաւորք ազգին առ իւրաքանչիւր ծանօթս իւրեանց, թախանձէին լրումն տալ գործոյն։ Ոմանք 'ի նախարարաց կամելով հաճել զմիտս Հայոց՝ խոստացան տալ հրովարտակ ինչ և յանձն առնել նոցա շինել զբաժին տեղիս իւրեանց, ընդ որ զուարթացեալ Հայոց՝ ըստասէին յօրէ օր 'ի ձեռս բերել զայն։ բայց իբրեւ ծանեան առանձին զմիտս խոստացեալ հրովարտակին՝ 'ի ձեռն հաւատարիմ արանց, որ առաւել նպաստաւոր էր Ցունաց քան Հայոց և առիթ ապագայ վնասուց և մեծամեծ խռովութեանց, բազում աշխատութեամբ հազիւ ուրեմն կարացին 'ի բաց թողուլ զայն, յորմէ վշտացան մեծամեծք դրանն, և թշնամանօք վարէին ընդ Հայս՝ որք համարձակէին մերձենալ առ նոսա, որոյ վասն հարկ էր տեղի տալ ժամանակ ինչ՝ և սպասել փոփոխութեան պաշտօնէից։

Թէոդորոս Պատրիարք եւ միաբանք իւր՝ չկարացեալ հանդարտիլ 'ի խռովութենէ Ցունաց՝ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս զՊաղտասար եպիսկոպոս Փակակալ սուրբ Յակոբայ, զՄատթէոս վարդապետ հանդիսադիր ըստոյ, զԴիոնէսիոս վարդապետ՝ Քարտուղար իւր՝ այր բանիրուն և ճարտար՝ հմուտ ներքին և արտաքին գործոց Աթոռոյն, և հոգացեալ զվէտս ճանապարհի նոցին, յանձն արար ըստայր տումարն ելից և մտից Աթոռոյն՝ սկսեալ յաւուրց անտի Պետրոս Պատրիարքի՝ և զտումար եկեղեցական զարդուց, որպէս խնդրեալ էին յառաջագոյն գլխաւորք ազգին։ և գրեաց առ նոսա տեսանել զհաշիւ երկուց Պատրիարքաց՝ զմթին և զտարակուսելի բանս և զայլ կարեւոր խնդիրս հարցանել 'ի վարդապետաց անտի, որք կարող էին տալ բացատրութիւն ամենայն հանդամանաց խնդրոյն՝ և փութանակի դարձուցանել յետս (Մայիս 8—18)։ Մեկնեցան 'ի Ցոպպէ և անտի 'ի նաւ։ Չեւ եւս հասեալ նոցա 'ի Կիպրոս, ելին 'ի ճանապարհ և միաբանք Ցունաց՝ անձինք 13։ և մտեալ 'ի նաւակ ինչ նաւեցին յԱքքէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս։

Եհաս Գարուճի Պաշին 'ի Ցոպպէ՝ ընդ ճարտարապետին Ցունաց (Մայիս 5) և անտի ելին յԵրուսաղէմ, և գնացին 'ի վանս Ցունաց։ և զկնի դադարելոյ զաւուրս ինչ՝ կոչեաց առ ինքն զԹարգմանս Հայոց և Լատինաց։ և յայտնելոյ թուղթեան իւրում 'ի վանօրայս՝ սիրով և քաղցրութեամբ ասէր, ունիմ հրաման յՍրբայէ չինել զամենայն բաժին տեղիս ազգաց 'ի տաճարին Ս. Յարութեան։ Եւ մեկնեալ 'ի տեղի իւր՝ խնդրեաց զկին հրովարտակս Հայոց։ բայց նոքա արարին պատասխանի, չեւ իմացեալ մեր զմիտս եկեալ հրովարտակին, ոչ կարեմք յայտնել զայնս, զնոյն կեալ հրովարտակին, ոչ կարեմք յայտնել զայնս, զնոյն ասացին և Լատինք, և յորդոր եւս լինէին Հայոց չամաստացին և Լատինք, և յորդոր եւս լինէին Հայոց չամաստացին և Լատինք, այլ ըստ թեամբ սպասել վախճանի գործոյն։ Սակայն Ցոյնք և վերատեսուչ գործոյն սպասէին գալստեան Նորոյ Դատաւորին։ և ահա եկն և եմուտ նա յԵրուսաղէմ ('ի 12 Ցունիսի) և զկնի երից աւուրց ժողովեցան առ նա գլխաւորք այլազգեաց, Ցոյնք և վերատեսուչն։ 'ի Հայոց և 'ի Լատինաց ոչ ոք երեւեցաւ անդ։ Սոփոկէին Ցոյնք ընթեռնուլ զհրովարտակն, այլ այլազգիք ասէին՝ թէ չէ օրէն առանց գրի կուսակալին Դամասկոսի ընթեռնուլ զայն, յայր վասն առաքեցին զոմանս բերել գիր անտի։ Դարձեալ ժողովեցան անդ ընթեռնուլ զհրովարտակն ('ի 22 Ցունիսի), այլ ոչ հանին յերեւան զգիր կուսակալին, թէեւ պնդէին Ցոյնք թէ բերեալ են։ ուստի ոմանք ասէին ընթեռնուլ՝ և ոմանք 'ի քննութիւն ելանել։ Եւ 'ի մինչ տարաձայնութեան ցրուեցան ('ի 23 Ցունիսի)։ Եհաս մեծ նաւն Ցունաց 'ի Ցոպպէ, յորում էին նիւթք չինութեան, և գործաւորք 150, որ և հանին զամենեսեան արտաքս, և զկնի երից աւուրց Մէհէմմէտ աղա Ցոպպէի՝ ըստ ազգ արարելոյ Սիւլէյման Բդեշիի Աքքէի, գրաւեաց տուն մարաւ զամենայն կարասիս, զորս հանին 'ի նաւէն, և լցեալ զնոսա 'ի մթերանոցս՝ պահեաց առ ինքն զբանալիս նոցին, և զգործաւորսն արձակեաց յԵրուսաղէմ իբրեւ ուխտաւոր՝ առեալ 'ի նոցանէ զտուրս Ղսիարին, եւ խնդութիւնն

Ցունաց փոխեցաւ 'ի տրամութիւն։ Եւ յելանել նոր դատաւորին 'ի Ցոպպէ՝ պատմեալ էր թէ խափանեցաւ հրովարտակն Ցունաց և աքսորեցաւ Պատրիարքն և բանտարկեցան անձինք երեւելիք 8 յազգէ նոցին։ Իսկ 'ի վերջ կոյս Ցունիս ամսոյ՝ զայրացեալ միաբանացն Ցունաց ընդ յապաղումն գործոյն, և 'ի պատ 'ի պատ բանս այլազգեաց՝ և գրգռեալ զխուժանն առհասարակ՝ յարուցին աղմուկ մեծ, որք և աղաղակէին դնել զինչս և զստացուածս և զկեանս իսկ գլխովին, կամ խսպառ ջնջիլ 'ի քաղաքէն և կամ նորոգել զտաճարն։ Եւ ինքեանք առանց խնայելոյ սկսան յաճախել 'ի տուրս, որով ձգեցին 'ի կողմն իւրեանց զմեծման այլազգեաց։ և իջեալ 'ի դատարան ետուն ընթեռնուլ զհրովարտակն, յորում հրամայէր Արքայ Ցունաց չինել զբովանդակ տաճարն, եւ մի ումեք այլոց ազգաց լինել ձեռնամուխ յայն գործ, և յետ այնորիկ շնորհիւ Ցունաց՝ ստանալ Հայոց և Լատինաց մէն մի պատարագամատոյց սեղանս։ Եւ ապա մատուցին զայլ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) յորում հրամայէր Արքայ գրաւել Ցունաց զբովանդակ Ս. Տեղիս, և զվանօրայս Հայոց՝ զՍուրբ Ցակոբ, այլովքն հանդերձ։ զօրութիւնք հրովարտակաց, առատութիւն դանձուց զօրացոյց զկամս դատաւորաց, և Ցոյնք 'ի խորհուրդ մտին ընդ նոսա, թէ յո՞ր խնդիր արժան իցէ նախ ձեռնարկել, արտաքսել զՀայս և գրաւել զվանօրայս նոցա՝ թէ 'ի չինութիւն տաճարին, այլ քաջ խորհուրդ այլազգեաց պատրուակ էարկ 'ի միտս Ցունաց։ նախ ձեռն արկանել 'ի չինութիւն տաճարին, առ 'ի նուաճել զԼատինս, որ հզօրագոյն են քան զինքեանս, և ապա դիւրին է նկուն առնել զՀայս։ իսկ ոմանք որ 'ի կողմն Ցունաց էին՝ սոսկէին խուռն բազմութեամբ երթալ 'ի տաճարն և քննել զտեղիս իւրաքանչիւրոց՝ և տալ հրաման չինութեան Ցունաց։ Սակայն Հայք և Լատինք՝ նախ քան զվրդովիլ Ցունաց՝ ձգեալ էին 'ի կողմն իւրեանց զոմանս յերեւելեացն այլազգեաց, եւ մտերմացեալ ընդ նոսա։ Սոքա բանս եդին յականջս ռամկին եւ դրդեալ զնոսա յարուցին աղմուկ մեծ, որք էին իրրեւ անձինք 1000, և դիմեալ առ դատաւորն աղաղակէին, եթէ ոչ միասցին երեք ազգք 'ի մի կամ և 'ի մի խորհուրդ՝ չէ

հնար ումեք ձեռնարկել 'ի չինութիւն տաճարին։ զի եթէ Ցոյնք միայն կամին չինել զայն, նորոգեսցեն նախ զմզկիթն Օմարայ և զՋրմուղն՝ բերել Ջուր 'ի քաղաքն յաւազանաց Սողոմոնի՝ և ապա թոյլ տամք։ Այս միաբանութիւն ռամկին հաստատեալ էր երդմամբ յօրէնս և 'ի պաշտամունս իւրեանց։ 'ի սոյն նուազ եւս այսպէս խափանեցաւ խորհուրդն Ցունաց, եւ լռեցին ժամանակ ինչ, այլ ոչ դադարէին 'ի նախատելոյ եւ 'ի ձաղելոյ զՀայս, որ պաշարեալ նստէին 'ի սուգ տրամութեան՝ զի փոխանակ դրամոց՝ ունէին զրաղմագումար պարտս։ Թէպէտեւ ետուն ընթեռնուլ առանձին զհին հրովարտակս Միւֆթիի քաղաքին, այլ ընկալան պատասխանի՝ թէ առանց դրամի ոչ ինչ օգնէ։

Տեսեալ Ցունաց թէ ձեղքեցաւ քաղաքն եւ խոչ են գործոց իւրեանց, այլ ինն խորհուրդ 'ի մէջ առին։ ձգել զբովանդակ այլազգիս 'ի կողմն իւրեանց՝ առանց խտրելոյ զանարգն և զպատուականն։ նախ չահեցին զմիտս դատաւորին՝ տալով նմա 115 քսակս դրամոց։ Նոյնպէս և այլոց՝ ըստ կարգի և աստիճանի, ձգեցին 'ի կողմն իւրեանց նա և զբարեկամս Հայոց և Լատինաց, և զայնոսիկ իսկ, որք աշխատութեամբ իւրեանց պահէին զորդիս և զընտանիս 'ի վանացն Հայոց՝ եւ յետին աղքատն՝ որ կրէր զանուն Տաճկի՝ էառ 40 ըռեալ, և այսպէս բովանդակ այլազգիք քաղաքին դարձան 'ի կողմն Ցունաց, և Հայք քակեցան 'ի բուն բարեկամաց իւրեանց՝ և կային 'ի տարակուսանս, և յօրէ օր սպասէին հանդիպիլ մեծի փոթորկի և կրել զանպատուութիւն, թող զյոխորտանն եւ զմեծաբանէն Ցունաց։

Ի սոյն աւուր եկեալ էր յԵրուսաղէմ Եւսուֆ աղա՝ զինակիր Եւսուֆ Փաշայի կուսակալին Դամասկոսի՝ բերեալ գիր 'ի նմանէ։ վերստին գումարեցաւ ժողովն ('ի 16 Ցուլիսի)։ Ի սոյն հանդէս կոչեցան Հայք և Լատինք։ նախ ընթերցան զհրովարտակն և ապա զհրաման կուսակալին՝ որ ասէր, ըստ հրամանի Արքային եւ համաձայն Շէրիֆի օրինաց ելանել 'ի քննութիւն և չինել։ Հարցին ցփոխանորդն Լատինաց՝ թէ զի՞նչ ունիք ասել առ այս, և նա արար պատասխանի՝ այսպիսի խնդիրք դատաստա-

նաւ լուծանին 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն գործակալաց Թագաւորացն Եւրոպիոյ. իսկ այժմ Յոյնք առանց մոռանելոյ 'ի դատ ծածկագէս առեալ են հրովարտակ, ուստի պարտ է մոռանել ընդ նոսա 'ի դատ, եւ յայտնի կացուցանել զսեփհական տեղիս մեր՝ և ծանուցանել Թագաւորաց մերոց։ Դատաւորքն ասացին՝ չէ օրէն այժմ ասա մոռանել 'ի դատ, զի 'ի քննութեանս յայսմիկ ուրոյն ուրոյն նշանակին տեղիք ազգաց. իսկ եթէ ունիք զայլ իմն դատ ընդ միմեանս՝ առեալ զվաւերական գրեանս ձեր՝ գնասջիք 'ի դատարան, և անդ տահմանեմք զիրաւունս ձեր։ Կոչեցին ապա և զԹարգմանն Հայոց, և նա արար պատասխանի. որովհետեւ խոստանայք գրել ուրոյն ուրոյն զսեփհական տեղիս իւրաքանչիւր ազգաց, և յետ այնորիկ հանել զայն 'ի դատաստան և արդարութեամբ տալ վճիռ՝ հնազանդիմք։ Եւ ապա սկսեալ գրեցին զտեղիս իւրաքանչիւր ազգաց 'ի տաճարին, բայց զթիւ սենեկացն Հայոց ոչ կամեցան մուծանել 'ի գիրն, և արձակեցան՝ խոստանալով 'ի վաղիւ վերստին գումարել զժողովն. բայց Յոյնք արգելին զայն, և առին 'ի կողմն իւրեանց զքաղաքապետն և զայլս, և սկսան ասել թէ՝ ըստ մտաց հրովարտակին մեզ անկ է չինել յանուն մեր՝ և ոչ երթամք 'ի դատարան. 'ի բազմանալ բանից՝ անկաւ գժտութիւն 'ի մէջ այլազգեաց եւ սկսան նախատել զմիմեանս վասն կաշառացն, ոմանք 'ի կողմն Հայոց էին և այլք Յունաց։

Ի սմին ժամանակի քաղաքապետն Յոպպէի Մէհէմմէտ աղա Ալու ԼօպուԹ կոչեցեալ՝ գրաւեաց զմի մասն վանացն Հայոց՝ որ 'ի կողմն Լատինաց, և բնակեցոյց անդ զզօրս զամս 3, և արարին զայն իրրեւ աւերակ, և Հայք զկնի բազում աշխատութեան հազիւ ուրեմն կարացին դատարկել զայն։ Ցափշտակեաց ապա նաեւ զերեւելի տունս և զմթերանոցս 'ի կալուածոցն Հայոց անդ 'ի Յոպպէ, զոմանս կարգեաց տեղի դատաստանի, զոմանս մաքսի, եւ զայլս բանտի, և սկսաւ ըստ հաճոյից իւրոց քակել զայնս և չինել, և զսենեակս որ 'ի վերայ եկեղեցւոյ՝ արար խոհանոց, յորմէ կասկածէր Տեսուչ վանաց մինիլ վտանգ ինչ, և 'ի պահանջել զվարձս նոցա՝ անարգանօք յետս դարձուցանէր զնոսա, սպառնացեալ հասուցանել զմեծամեծ չարիս՝

տագնապէր նաեւ 'ի մեծի տառապանս զուխտաւորս Հայոց՝ 'ի պատճառս մաքսի։ Ոչ ինչ ազդէին 'ի լսելիս նորա աղաչանք և պաղատանք Թէոդորոս Պատրիարքի և Ղազար վարդապետի, և կալուածքն այնոքիկ մնացին երկար ժամանակ 'ի ձեռս այլազգեաց, և յետոյ հազիւ ուրեմն կարացին Թափել զնոսա 'ի ձեռաց նոցին։

Վերստին կազմեցաւ ժողով 'ի դատարանին Երուսաղէմի, ուր էին Հայք և Լատինք. խնդրեցին 'ի Հայոց զէին հրովարտակս՝ և նոքա մատուցին 12, որոց առաջինն էր Սէլիմայ առաջնոյ՝ տիրոջին քաղաքին պրոյ, յորոց զկնաւ փոքր ինչ սիրտ այլազգեաց։ Հրաման եւս դատաւորն չինել Յունաց զտեղիս իւրեանց, զի 'ի հրովարտակի նոցա ոչ էր յիշեալ տեղիքն Յունաց և Հայոց, և վասն այնոցիկ խոստացաւ գրել 'ի Դուռն և սպասել հրամանի Արքային։ Յոյնք սկսան չինել զարտաքին մեծ դուռն, և իրրեւ կանգնեցին զմայատակերտս չինել զայն տեղիս կից նմին, հասին այլազգիք քաղաքին և արգելին զնոսա, զի տեղիքն այնոքիկ սեփհական էին Հայոց, և դադարեցաւ գործն աւուրս 8։ Յոյնք ըստ հրամանի դատաւորաց վերստին սկսան չինել զվերին կողմն Աւագ խորանի իւրեանց, եւ պայման եղաւն Հայոց աւուրս 30՝ բերել հրաման արքունուստ վասն տեղեաց իւրեանց. և նոքա գրեցին թախանձանօք 'ի Կոստանդինուպոլիս առ գլխաւորս ազգին, և յօրէ օր սպասէին գալստեան հրամանին, բայց երկարէր մէջոցն, և մաքանք մնացին ոգեսպառ յանյաջողութենէ գործոյն, 'ի նախատանաց և 'ի գանից Յունաց։ Գրեալ էր դարձեալ Կուսակալն Դամասկոսի խաղաղութեամբ չինել զտեղիսն ըստ հրամանի Արքային։ Իսկ Սիւլէյման Փաշա Աքքէի գրեաց սոսա առ դատաւորս Երուսաղէմի, թէ օրպիսի հրամանս չինեցին Յոյնք զդուռն տաճարին, եւ օրպէս թոյլ եղուք, զի դուռն այն երից ազգաց է, եւ Միւթէվէլլի տաճարին ես իսկ եմ, այլ նոքա լռելեայն գրեցին առ նա զոր ինչ և կամեցան։

դէր, և համարձակ հրապարակէր զդաղտնի դաւադրութիւնս Ցունաց. պատրաստ եմք ասէր 'ի բանտ և 'ի մահ, և ոչ դադարիմք 'ի թախանձելոյ զարդարասէր Թագաւորն, զի գթած է նա և ողորմած. և իրաւամբ տնօրինէ զիրաւունս մեր, և այլ սոցին նման բանք բազում իբրեւ ժամս 2, զի փոխանակ Ցունաց նոքա հակառակէին Հայոց, և Պէյլիքճին իսկ ասէր, հնար է զերկուս ձեռս հատանել, քան զարձանագրութիւնս Ցունաց ջնջել. զորոյ զգլուխն իսկ երարձ Արքայ զկնի աւուրց, սակս ինչ ինչ պատճառաց. և Հայք մեկնեցան 'ի տեղիս իւրեանց։ Բէյիզ էֆէնտին կամեցեալ երկիւղ ինչ արկանել 'ի միտս Հայոց, կոչեաց առ ինքն զմին յերեւելեաց և ասէ՝ մի՛ հետեւիք բանից Փոխանորդին ձերոյ, զի մեծամեծ ինասուց տայ պատահել ձեզ։ Յետ աւուրց ինչ ըստ ծանուցման Բէյիզ Էֆէնտեայ՝ վերատին չոքան առ նա 'ի տուն նորին երկոքին Պօղոս վարդապետք, ուր մանրախոյզ քննութեամբ տեղեկանայր ամենայն անցիցն զոր անցուցին Ցոյնք ընդ Հայս։ Յայնժամ 'ի միտ առ այրն, թէ վեցն օր քան զօրունի սաստկանալ, եթէ ոչ լիցի արդար դատաստան 'ի մէջ երկուց ազգաց։

Եւ 'ի ծանուցանելն զայս ամենայն Արքայի՝ էլ հրաման լինել դատաստան 'ի Փաշա Գարուսի կոչեցեալ տեղին, և կայսերական հրամանաւ կարգեցան Դատաւորք՝ 'ի գիտնականաց դասէ՝ Էմին Պէկ, Ֆէթվա Էմինի, Թահիր եւ Գասրմ Էֆէնտիք։ Ի Նախարարաց կարգէ, Բէյիզ Էֆէնտի, Ազիզ և Եուսուֆ Ակեայ Էֆէնտիք։ Եւ Հայք ընտրեցին 'ի կողմանէ իւրեանց Աղնաւորեան Բեահեայ Կարապետ Ամիրայ, Յովհաննէս Զէլէպի Յարութեան, Զէրէզեան Գրիգոր, Տատ Վառօդապետ, Գլճեան Անտօն, Թնկրեան Մինաս, և Պօղոս վարդապետ Փոխանորդ Երուսաղէմի. սոքա գնացին բազմութեամբ 'ի Հասան Փաշա խանն մերձ 'ի Դուռն Փաշայի, եկն անդ եւ Յովհաննէս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։

Իսկ 'ի կողմանէ Ցունաց եկին Երասիմոս եպիսկոպոս Առաջնորդ Թեսաղոնիկեայ, Առաջնորդն Իկոնիոյ, Մեթրոփանոս միաբան Երուսաղէմի, և այլ երկու անձինք յիշխանաւորաց նոցին։ Սոքա ամենեքեան իբրեւ Երեսփո-

ԳԼՈՒԽ ԻԲ.

Աղերսագիր Հայոց առ Սուլթան Մահմուտ Բ։ Բէյիզ Վահիտ Էֆէնտի։ Դատ Հայոց ընդ Ցունաց 'ի Փաշա Գարուսին վասն Ս. Տեղեաց. 'ի 4 Նիսան։

ԻՍԿ 'ի Կոստանդինուպօլիս յետ անցանելոյ ամսօրեայ ժամանակի՝ էլ բանակն Օսմանեան 'ի դաշտն Տավուտ Փաշա կոչեցեալ՝ գնալ 'ի պատերազմ ընդդէմ Ռուսաց, և ամենայն աւագանին ընդ նմա, և 'ի տեղի նոցա անցին այլք։ Յայնժամ Հայք խորհրդով իշխանաւորաց ազգին մատուցին գիր աղաչանաց առ Արքայն Սուլթան Մահմուտ Բ. բազմութեամբ Վեղարաւորաց, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից և այլոց, որք էին արք իբրեւ 500, յաւուր Ուրբաթու յիւսկիւտար առաջի Այազմայ մզկիթին։ Զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն Բէյիզ Էմին Վահիտ Էֆէնտի զերկուս 'ի գլխաւորացն Հայոց խօսիլ ընդ նոսա և հարցանել և կամ սպառնալեօք ահացուցանել։ Գնացին առ նա 'ի Դուռն Պօղոս Եպիսկոպոս Առաջնորդ Պրուսայի, Պօղոս վարդապետ Փոխանորդ Երուսաղէմի, և այլ անձինք 4 'ի ժողովրդոց, ուր էին Պէյլիքճի և Մեքթուպճի Էֆէնտիք։ Հարցին ցնոսա և ասեն, զի՞նչ է այս յանդգնութիւն ձեր, զի առանց գիտութեան մերոյ գիր աղաչանաց մատուցանէք առ Արքայ, ճանճրացուցանէք զնա եւ զմեզ։ Յայնժամ Պօղոս վարդապետ յառաջ մատուցեալ սկսաւ պատմել մի առ մի զամենայն արարս Ցունաց. եւ կոչել Բէյիզն զԱտենական Թարգմանն (Տիվան Թէրճիմանի) ազգաւ Ցոյն, յոր յուսացեալ էին ամենայն ազգայինք նորին, և ասէ ցնա՝ լուր զի՞նչ ասեն Հայք. և նորա պլուցեալ հայէր՝ և ոչ կարէր առնել պատասխանի ինչ։ Իսկ Պօղոս վարդապետ առաւել համարձակեալ 'ի բանս իւր՝ հաստատէր զանիրաւութիւնս Ցունաց։ Եւ Պէյլիքճին որ 'ի կողմն Ցունաց էր, ընդդէմ կացեալ բանից Պօղոսի՝ ահարեկէր զնա. անկարելի է ասէր գիտումն ձեր՝ զի իրաւունքն Ցունաց է, դուք ոչ գիր և ոչ արձանագրութիւն ունիք, և ոչ հրովարտակի հաւանիք. իսկ Պօղոս զհակառակն պընդ-

խանք երկուց աղգաց յանդիման եղեն Մեծի առենին՝ և բազմեցան ըստ կարգի, իսկ բազմութիւն ժողովրդոց ընդ Պատրիարքին մնացին 'ի Հասան Փաշա խանն։

Նիստ Առաջին, (12 Օգոստոսի)։

Նախ հարցին Դատաւորքն ցՀայս, զի՞նչ է վէճն ձեր ընդ Ցունաց, եւ զիա՞րդ համարձակեցայք տալ գիր վերբստին առ Արքայ։ Պատասխանի ետուն Հայք և ասեն. Ոչ ինչ ունիմք ընդ Ցոյնս, բայց միայն խնդրեմք 'ի Տէրութենէ դատ առնել արդարութեամբ ընդ մեզ և ընդ Ցոյնս, որք գաղտնի ստութեամբ եւ անիրաւութեամբ խարեալ զՏէրութիւնն առեալ են հրովարտակ, 'ի դէպ ժամանակի յափշտակել զՀայրենի ժառանգութիւնս մեր՝ և զրկել զմեզ 'ի բնակութեանց մերոց, որոյ վասն աղաչեմք շնորհել մեզ զսեփհական ժառանգութիւնս մեր։ Հարցին ցՑոյնս, զի՞նչ ունիք առ այս պատասխանի, նոքա ասեն՝ ամենայն բանից նոցա ունիմք մի մի հրովարտակս, զի բովանդակ վանօրայք և բնակութիւնք, որք են այժմ 'ի ձեռս Հայոց՝ 'ի բնէ մեր էն, և չուներն նոքա տեղի ինչ յատկացեալ։ Պատասխանի ետուն Հայք՝ հարցէք զՑոյնս թէ զո՞ն յերուսաղէմ միաբանութիւն յազգէն Հայոց, ո՞ւր բնակին և քանի՞ ամ է։ Ցոյնք ասացին, Այո՛ զոն անդ միաբանք, բայց հիւր են մեզ, և վասն լինելոյ նոցա հպատակ և հարկաւոր Տէրութեան, խնամս տանիմք և յարգանօք նստուցանեմք 'ի բուն տեղիս մեր։ Ժպտեալ ընդ այս Դատաւորաց՝ ասեն, ո՞րպիսի հիւր լցէ այդ, որ ունի հիւրանոց և ըստ հաճութեան և կամաց իւրոց բազմութեամբ ուխտաւորաց և միաբանաց համարձակ և անկախ յուսմէքէ բնակի անդ, միթէ հնա՞ր լցէ այդմ լինել։

Հարցին Դատաւորք՝ ո՛ւր են բնակութիւնք և վանօրայք ձեր, քանի՛, և զի՞նչ անուանք նոցա։ Հայք ասացին՝ 'ի Թաղն Սիոնի մեծ վանքն Ս. Յակոբայ (Մայր Եկեղեցի) ուր բնակի ցարդ Պատրիարքն մեր միաբանութեամբ եւ ուխտաւորօք. ասա մի առ մի պատմեցին զսեփհական վանօրայս և զրաժանորդ տեղիս Հայոց։ Այլ իբրեւ դժկամակ եղեն Ցոյնք վասն ումանց տեղեաց տաճարին Ս. Յարութեան, յայնժամ մատուցին Հայք զյատակագիծ տաճարին,

զոր պատրաստեալ էին յառաջագոյն, որոշեալ 'ի թղթի անդ զտեղիս իւրաքանչիւր ազգաց այլ և այլ գունով, որով ծանեան Դատաւորք զտեղիսն՝ եւ անաչխատ պարզեցաւ խնդիրն։

Հարցին Դատաւորք ցՑոյնս, զի՞նչ ունիք առ այս պատասխանի. նոքա մատուցին զդաշնագիրն մեծին Օմարայ գրեալ 'ի թուին Հիճրէթի 15 'ի 20 Բէպիլ էվվէլ ամսոյ 'ի բարբառ Արաբացւոց. ոչաւ տիրեալ եմք ասեն ամենայն տեղեաց մերոց և այլոց ազգաց. և առեալ ընթերցան և դարձուցին զայն առ նոսա, և ասեն՝ պահեցէք զայդ զի կարի հնագոյն է՝ և բազում աչխատութեանց պէտս ունի հաստատել զտուգութիւն դորա, զի զկնի Օմարայ՝ Լատինք, ապա Սալահատին եւ զկնի Սուլթան Մէլիմ առաջին՝ տիրեցին Երուսաղէմի, և չունի պէտս ինչ յառաջակայ դատին ձերոյ. Ցոյնք աղաչէին անսալ և քննել զիմաստս նորին. և եղեւ 'ի քննելն, գտին զայն չինծու և յարմարեալ՝ և ասացին, սուտ է այս, զի թիւ սորա կանխագոյն է քան զգահակալութիւն Օմարայ։ Մատուցին զհրովարտակն Ֆաթի Սուլթան Մէհէմմէտի (1), առեալ զկնի առման Կոստանդինուպօլսոյ. և զայն բնաւ ոչ ընթերցան, զի չէր հարկաւոր առ այն վէճ։ Ապա հանին զհրովարտակս Սէլիմայ Արքայի եւ որդւոյ նորա Սիւլէյմանայ՝ զոր ընկալեալ ընթերցան՝ յորս գրեալ էին ամենայն վանօրայք և տեղիք նոցա, բայց անհամաձայն արձանագրութեանց. 'ի հրովարտակին գրի Սըրալ եւ յարձանագրութեան Սիւրեան. թէպէտեւ ծանեան Դատաւորք, բայց Բէիլ էֆէնտին ջատագով էր Ցունաց։ Փակեցաւ Ատեանն, և արձակեալ անտի Հայոց, եկին 'ի Հասան Փաշա խան, ուր սպասէին բազմութիւն գլխաւորաց եւ ժողովրդոց ընդ Պատրիարքին՝ լսել ինչ 'ի նոցանէ։ Եւ նոքա պատմեցին նոցա զոր ասացին և լուան։ Եւ զի ազգն Հայոց առհասարակ կանխեալ էին յաղօթս, և պատուէր ստէպ լինէր յեկեղեցիս չտալ տեղի նախատական բանիցն Ցունաց և չդրգռիլ 'ի կռիւ ընդդէմ միմեանց,

(1) Այս հրովարտակ 'ի մեծի հրկիզութեան մայրաքաղաքին պրկեցաւ։ Տես կենսագրութիւն Սուլթան Սէլիմի Տաճկերէն. Երէ. 79։

այլ լուութեամբ եւ համբերութեամբ տանել յամենայնի մինչ ցաւարտումն գործոյն։

Հասին 'ի Կայսերանիստ քաղաքն Կոստանդինուպօլսեցի Պաղտասար եպիսկոպոս, Մատթէոս եւ Դիոնէսիոս վարդապետք՝ որպէս գրեցաք, բայց յամառնային եղանակի պատահեալ վնասակար օդոց 'ի ճանապարհի, անկան խօթ 'ի մահիճս. Պաղտասար եպիսկոպոս զկնի 17 աւուրց հանգեաւ 'ի Բրիատոս՝ կացեալ 'ի միաբանութեան ամս իբր 20 ամենայն հաւատարմութեամբ։ Եւ յԵրուսաղէմ եդին 'ի տեղի նորա 'ի պաշտօն Լուսարարութեան զաշակերտ նորին զՍիմէոն վարդապետ հեղաբարոյ. այլ երկոքեան գտին զառողջութիւն, և Մատթէոս վարդապետ 'ի նոյն ամի դարձաւ յԵրուսաղէմ եւ Դիոնէսիոս ստիպմամբ աղգին մնաց 'ի մայրաքաղաք անդ, մինչ 'ի վախճան գործոյն, զի ինքն հմուտ էր ամենայն հանգամանաց Աթոռոյն և Ս. Տեղեաց։

Նիստ Երկրորդ, (յ8 Օգոստոսի)։

Գնացին դարձեալ ըստ առաջնոյն Երեսփոխանք երկուց կողմանց՝ եւ յանդիման եղեն Դատաւորաց. ընթերցաւ ատենագրութիւնն՝ և բաղդատեցին զհրովարտակս Ցունաց ընդ արձանագրութեանց՝ և 'ի տեղիս ինչ գտաւ անհամաձայն, զի ճիւս բառն դարձուցեալ էին 'ի Հապէշ։ Ապա խնդրեցին 'ի Հայոց զհրովարտակս Սէլիմայ և որդւոյ նորա Սիւլէյմանայ, զի զնոսա եդեալ էին հիմն հաստատութեան, և նոքա մատուցին զօրինակս ինչ անվաւեր, և Ատեանն ոչ ընկալաւ զայնս. իբրեւ խնդրեցին Հայք հանել զայնս յարձանագրութեանց, ասկան խրոխտալ Ցոյնք՝ թէ քաջ գիտեմք զի Հայք ոչ հրովարտակ ունին և ոչ արձանագրութիւն, առ որս ասացին՝ դուք պահէք զհրովարտակս ձեր ատ 'ի Կոստանդինուպոլիս, իսկ մերքն պահին յԵրուսաղէմ. ապա մատուցին զպատճէն հրովարտակին գրեալ 'ի թուին Հիճրէթի \\ էՀ, զորոյ արձանագրութիւնն յառաջադոյն ջնջեալ իսկ էին Ցոյնք, բայց տհաճութեամբ ընկալաւ ժողովն, զի իսկականն խնդրէին, ըստ օրինակի Ցունաց։ Զօրացեալ Ցունաց 'ի վերայ այսր՝ սկսան խիզախել եւ աղաղակել՝ լինել իրաւանց 'ի կողմն իւրեանց։

Հայք ասացին՝ դուք դաւանանութեամբ յառաջադոյն պատրաստեալ զնիւթ խարդախութեան ձերոյ՝ զինիք այժըմ ընդդէմ մեր զրկել զմեզ 'ի Ս. Տեղեաց, սակայն 'ի հարիւրաւոր ամաց հետէ բնակիմք 'ի վանս Ս. Յակոբայ՝ և ժառանգեմք զայլ սեփհականեալ տեղիս՝ զորս ջանայք խարէյութեամբ յափշտակել. և ո՞վ արդեօք վկայեսցէ թէ տեղիքն այնոքիկ անկեալ իցեն 'ի ձեռս Ցունաց. թէպէտ և երբեմն անիրաւութեամբ բռնաբարեցիք՝ այլ ըստ ճշմարտութեան եւ իրաւունքն արդարութեան փութով խորտակեաց զբռնութիւնս ձեր, և ժառանգութիւնն մեր վերստին դարձաւ առ մեզ։ Դատաւորք ասեն, Արդ ըստ վճռոյ մեծի դէնպետին, եթէ ոք թողեալ իցէ զժառանգութիւն իւր իբր ամս 30, յետ այնորիկ ոչ կարէ տիրել նմա. թող զի Հայք որ հարուստ ամաց հետէ բնակին անդ 'ի տեղիս իւրեանց, թէ և չիցէ սեփհական ինքեանց, սակայն եւ այնպէս չէ հնար ումեք հանել զնոսա անտի։ Հաւանեալ ընդ այս Ատենին՝ ասացին, վանք Ս. Յակոբայ սեփհական է ազգին Հայոց՝ եւ եղիցի։ Գժտմնեալ Ցունաց 'ի բանից ատի տրտմեցան յոյժ, փակեցաւ Ատեանն։ Եւ արձակեալ անտի Երեսփոխանացն Հայոց եկին պատմեցին բաղմութեան, որք սպասէին 'ի Հասան Փաշա խան։ Ապա ընտրեցին զՁերեզեան Գրիգոր և զԲերէստեան Մանուէլ դեգերիլ յԱրքունի դիւանս և որոնել զարձանագրութիւնս հրովարտակացն Հայոց։

Նիստ Երրորդ, (յ9 Օգոստոսի)։

Եկին դարձեալ Հայք և Ցոյնք 'ի սահմանեալ տեղին և հանդիսացան յատենի Դատաւորաց։ ընթերցաւ դպիրն զառաջին ատենագրութիւնն։ Ցայսմ նստի Դատաւորք 'ի նուրբ քննութեան մտին վասն ժառանգութեանց ուխտատեղեաց և կանթեղացն Հայոց, զորս մի առ մի հարցանէին ցնոսա և ստուգեալ ելս 'ի Ցունաց արձանագրէին, բայց Ցոյնք զամենս ճշմարտութեամբ խոստովանէին և զամենս ոչ. մինչեւ տաղտկանալ դատաւորաց ընդ յամառ մաքառումն նոցին։ Այլ իբրեւ եկին 'ի քննութիւն վանաց Ս. Յակոբայ՝ պնդէին Ցոյնք թէ 'ի վարձու տուեալ եմք զայն

Հայոց և մատուցին զանտոյդ դիլա ինչ Դատաւորաց ոմանց (Հէօճմէթ), որովք ջանային հաստատել որպէս թէ Հայք պարտաւոր են հատուցանել յիւրաքանչիւր ամի 200 ոսկիս երբ վարձ Ս. Յակոբայ։ Եւ 'ի լինել երբեմն հակառակութեան՝ Յոյնք պահանջեալ իցեն 200 ոսկիս, Հայք խոստացեալ են հատուցանել 50 ոսկի միայն՝ և զայն չեն տուեալ, այժմ խնդրեմք ասեն զվարձս այնքան ամաց, և այսուհետեւ ծանր դնով տամք զայն 'ի վարձու, եւ այլ սոցին նման երազական բանք։ Ընդ այս պատասխանի ետուն Հայք և ասեն՝ Յոյնք ունի՞ն քան զայն մեծապայծառ և փառաւոր տեղի. ասեն, ոչ, ապա զիա՞րդ անխոհեմութեամբ զայնպիսի պատուական տեղի 'ի վարձու տուեալ էք, որ զՀայս իբրեւ զթշնամի ձեզ ճանաչէք, եւ դուք նատիք յոռի և յանշուք տեղիս, և կամ ունի՞ք գիր ինչ վկայութեան, որ երբեմն Հայք վարձս տուեալ են ձեզ։ Դատաւորք ասեն՝ ավ ոք իցէ այնքան անմիտ զայնպիսի տեղի տալ 'ի վարձու իւրոյ թշնամւոյ, եւ այն 'ի գին անարգ. դուք այնքան առելութեամբ վարիք ընդ Հայս՝ մինչ ոչ կամիք բնակիլ նոցա յերուսաղէմ, թող թէ զայնպիսի փառաւոր տեղի տալ 'ի բնակութիւն նոցա։ Յոյնք եւուն պատասխանի, Հայք գոլով հպատակ և հարկատու Տէրութեան՝ 'ի պատիւ երեսաց նորին յարգեմք զնոսա, եւ ընդունիմք իբրեւ հիւր եւ վարձաւոր մեր։ Դատաւորք ասեն՝ ոչ ինչ է պիտոյ անհիմն և անտեղի բանից ձերոց տալ պատասխանի և հաստատեցին՝ թէ վանք Ս. Յակոբայ սեփհական է Հայոց, և բարձաւ զանուն վարձու։ Յոյնք ասեն՝ որովհետեւ բարձիք զայդ անուն, գըրեսցի ուրեմն Ս. Յակոբ վանք Վրաց՝ զի Վիրք գոլով կըրօնակից ինքեանց՝ միցի առիթ ապագայ խռովութեանց, և տիրելոյ այնմ իբրեւ սեփհականութիւն հետեւողաց իւրեանց, որպէս տիրեցին բովանդակ վանօրէից և ատացուածոց Վրաց և Սերվիացւոց։ Հայք ընդ այս եւս ոչ հաւնեցան, զի այլէ վանք Վրաց Ս. Յակոբ 'ի դաւթի Սուրբ Յարութեան, և այլէ վանքն Հայոց. սակայն Յոյնք որ և իցէ նենգութեամբ ետուն գրել 'ի հրովարտակին իւրեանց որպէս զՍ. Փրկիչ և զՀրեշտակապետ, զառաջինն կոչելով Հաշրեմի Իսանը ղեռանը, որ 'ի հրովարտակս Հայոց և ժողովուրդք տեղւոյն առհասարակ կոչեն զայն՝ Հաշ էլ Մեսիհ. և զերկրորդն՝ ձեռանը եվի, այսինքն տուն Աննա քահանայապետի, որ այժմ ասի՝ Տէյր էլ ղեյրանէ։ Սակայն Հայք ցուցին թէ այլ են այդոքիկ տեղիք, որք են աւերակ, և այլ մերքն՝ որք են չէն։ Յետ ծանուցելոյ զայս ամենայն Սատենին երկար բանիւք, մատուցին զյատակագիծս վանօրէից Հայոց և Յունաց, որով առաւել պարզեցաւ խընդիրն, և գրեցաւ վանք մեծ Ս. Յակոբ 'ի թաղն Սիոնի, և օրն տարաժամեալ փակեցաւ Սատեանն։

Այս նիստ առաւել տաժանելի եւ դժուարին եղեւ Հայոց, զի ոչ ունէին 'ի ձեռս իւրեանց ոչ գիր և ոչ արձանագրութիւն, զի զոր ինչ ասէին բանիւ՝ ոչ կարէին հաստատել գրով, և տարակուսեալ էին թէ իցե՞ն արդեօք հրովարտակք յերուսաղէմ։ Զի թէպէտեւ բոլոր տեղիքն Հայոց գրեցան յիլամին, բայց երեք հետեւակ ազգքն մնացին արտաքոյ. զի Յոյնք ասէին՝ թէ մեր են, և Հայք զհակառակն պնդէին, Դատաւորք խոստացան՝ եթէ իցեն անուանք նոցա գրեալ 'ի հրովարտակս Հայոց՝ նոցա լիցին, իսկ եթէ ոչ՝ Յունաց. և Հայք յանձն առին և խոստացան յԱտենի անդ բերել զհրովարտակս իւրեանց, զի Դիոնէսիոս վարդապետ հաւաստէր նոցա, թէ հրովարտակքն են 'ի գանձարանն Ս. Յակոբայ։

Եւ 'ի վաղիւն ժողովեցան Իշխանաւորք ազգին ընդ Յովհաննու Պատրիարքի 'ի Նոր խան՝ ԼՀԾՀ ԷՈՈՒ կոչեցեալ տեղին ('ի 10 Օգոստոսի), որոց միաբան սիրով յանձն առեալ էր յօժարութեամբ աշխատիլ յայս գործ բանիւ և արդեամբք 'ի փրկութիւն ազգային սեփհականութեան, և գրեցին յերուսաղէմ առ Թէոդորոս Պատրիարք սպառնալեօք եւ ստիպմամբ մեծաւ, անպատճառ առանց ինչ ածելոյ զմտաւ առաքել զԹաթի Շէրիֆն, զի առանց նոցին չէր հնար ընդդէմ զինիլ թշնամւոյն՝ և թափել 'ի ձեռաց նորին զսեփհականութիւնս ազգին, զի կարի կարեւորք էին նոքա առ այն դատաստան։ Զկնի ելանելոյ իրաւանց 'ի ձեռաց մերոց ասէին՝ զի՞ եւս պիտոյ են հրովարտակք, բայց եթէ ընկենուլ 'ի հուր, զի եթէ դարձեալ կասկածելով 'ի սնոտի երկիւղէ ինչ ոչ առաքեսցես զնոսա, անպարտ եմք առաջի Աստուծոյ, հրաժարեալ

դադարիմք յամենայնի յայսմ գործոյ 'ի յափշտակութիւն ազգային դարաւոր իրաւանց եւ 'ի կործանումն Աթոռոյ մերոյ, և այլ սոցին նման բանք աղդողականք։ Ցայս նամակ ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան, որք էին Յովհաննէս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ, Պօղոս եպիսկոպոս Պրուսայի, Աստուածատուր եպիսկոպոս Էջմիածնի, Քեահեայ Կարապետ Աղնաւորեան, Յովհաննէս Տիւզեան, Մկրտիչ Ալիքարեան, Յակոբ Լաթիֆեան, Յովհաննէս Յարութեան, Առաքել Վառօդապետ, Մանուկ Աստուածատուրեան, Գասպար Գէորգեան, Անտոն Գլմեան, Յակոբ Թնկրեան, Անտոն Տավուտեան, Գրիգոր Գէորգեան, Յարութիւն Նորատունկեան, Մանուէլ։

Գրեաց և նա ինքն Պօղոս վարդապետ՝ Փոխանորդն Երուսաղէմի վասն այսր առ Թէոդորոս երկար բանիւք եւ ստիպելով զնա. «Լաւ իմա ասէ՝ Տէր իմ, զի եթէ չէ օրէն ելանել հրովարտակաց յԱթոռոյ, յայնժամ օրինաւոր տեղիք մեր, ապօրինի բռնաբարին յօտարաց, եւ զկնի մահուան հիւանդին՝ դեղ պատրաստել անօգուտ. երանի թէ մինչեւ ցարդ յղեալ էիք զնոսա, և մեծ շահ լինէր մեզ, և լուր ուրախութեան աւետէաք ձեզ»։ Ապա կալան զերկուս սուրհանդակս, և եդին ընդ նոսա զերկուս արս հաւատարիմս, Քիւփելի Աբրահամ և Կարապետ վանահայր Իսկիւտարի, և արձակեցին զնոսա յԵրուսաղէմ, պատուէր տուեալ նոցա, զի սուրհանդակքն մնասցեն 'ի Սամարիա, և ինքեանք իբրեւ ուխտաւոր մտցեն յԵրուսաղէմ։ Հասին արքն 'ի քաղաքն Ս. (յ7 Սեպտեմբերի) և մատուցին զգրեանս առ Թէոդորոս Պատրիարք, և նա ընթերցաւ առաջի միաբանաց, և ամապարեալ պատրաստեաց զհրովարտակն, որք էին թուով 10, սկսեալ 'ի Սուլթան Սէլիմայ առաջնոյ և որդւոյ նորին Սիւլէյմանայ, և այլքն զկնի նոցին մի ըստ միոջէ 'ի Թագաւորացն Օսմանցւոց, ամենեքեան հիմնեալ 'ի վերայ հրովարտակին Սէլիմայ իբրեւ 'ի միոյ աղբերէ բղխեալ. և յանձն արար զնոսա խնամով Սահակ միաբանի և արանցն որք եկեալ էին։ Էառ նաեւ գիր 'ի դատաւորէն ըստ տրամադրութեան նոցին ստորագրութեամբ մեծամեծացն այլազգեաց։ Գրեաց և ինքն գիր առ Իշխանաւորս աղդին, և

դարձոյց զնոսա փութանակի յետս, ամապարել և փութալ հասանիլ 'ի Կոստանդինուպօլիս (յ9 Սեպտեմբերի)։

Նիստ Չորրորդ, ('ի 12 Օգոստոսի)։

Վերստին կոչեցան Հայք և Յոյնք յատեան Դատաւորաց. ընթերցան զառաջին ատենագրութիւնս և զթերին լցին 'ի բանից Յունաց՝ զորս յառաջագոյն ոչ կամէին խոստովանիլ, և իբրեւ թէ երկոքին կողմանք համեցան խաղաղութեամբ իրաւախոհ լինել, սակայն Տաճութիւնն Հայոց՝ էր ակամայ, զի առանց վաւերական գրոց մտեալ էին 'ի դատաստան, և զարձանագրութիւնս հրովարտակաց ոչ գտին. գրեանքն Յունաց գրեցան յԻլամին, իսկ Հայոցն ոչ. զի բանիւ Յունաց հաստատեալ լինէին սեփականութիւնք նոցին. զորս կամէին՝ այո՛ ասէին, և զորս ոչ կամէին՝ մերժէին, այսպիսի եղանակաւ չահեցան Յոյնք զիրաւունս իւրեանց. սակայն Տէրութիւնն գթացեալ 'ի վերայ Հայոց, ոչ կամեցաւ զրկել զնոսա խաղաղէմէ. զի տեղիքն Յունաց անուանեցան Ժառանգութիւն, իսկ Հայոցն՝ հիւրանոց և պատահական, և պատուէր եղեւ այլոց չհերքել զՀայս 'ի տեղեաց անտի։ Եւ չինութիւն տաճարին Ս. Յարութեան յատկացաւ Յունաց միայն, որում թէպէտեւ ցաւէին Հայք 'ի ներքուստ՝ քաջ գիտելով զկորուստ իրաւանց ազգին, այլ չէր հնար չրջել ընդ բանն յայլ եղանակ և Դատաւորք խոստացան 'ի հասանիլ հրովարտակացն՝ կրկին առնել քննութիւն, եւ այսպիսի եղանակաւ մեկնեցան անտի։ Իսկ 'ի 16 Օգոստոսի դարձեալ ելին յԱտեան, ուր ընթերցան 'ի լուր ամենեցուն զկատարեալ Իլամն, չլինել այնուհետեւ այլ եւս վէճ եւ խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց յԵրուսաղէմ վասն տեղեաց. համեցան ընդ այս Հայք և Յոյնք, և որպէս թէ հաշտեալ ընդ միմեանս գնացին իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց։ Իսկ Դատաւորք ձեռն արկեալ կնքեցին զպատրաստեալ Իլամն և մատուցին զայն առ Արքայ, և զկնի աւուրց ինչ ել 'ի Դրանէ երկու հրովարտակ գրեալ 'ի թուին Հիճրէթի ١٢٢٤ և տուաւ մին Հայոց և միւսն Յունաց։ Նոքա արարին զայն Խաթթի Շէրիֆ և զարդարեցին ծանր նկարիւք, և ետուն արձանագրել 'ի Դամասկոս, 'ի

Սիդոն, և Յերուսաղէմ, և Հայք պահեցին զՀրովարտակն իւրեանց, զի ակն ունէին տալ փոխել զայն 'ի հասանիլ Հրովարտակացն Յերուսաղէմ։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Ամբաստութիւն Յունաց Յերուսաղէմ։ Կուսակալ Դամասկոսի։ Շինութիւն Ս. Գերեզմանին։ Մզրպի զրբ և Եննիշերիք։ Խռովութիւն 'ի մէջ զրաց։ Վանք Ս. Փրկչի։ Ժողով 'ի դատարան վասն շինութեան Ս. Յարութեան։ Գործ զրավարին Ապուզուբեան։

ԱՒՆԶԴԵՌ այսպիսի դատաստանական գործով ըղբաղեալ էին Հայք 'ի Կոստանդինուպոլիս 'ի Դուռն, Յոյնք Յերուսաղէմ սկսան յորդորել զՀապէշս լինիլ հետեւող ինքեանց՝ և խոստանային տալ նոցա կերակուր ըստ սովորութեան Հայոց, այլ նոքա ետուն պատասխանի, եթէ հասանիցի մեզ սովամահ լինել, ոչ ընդունիմք զկերակուրս ձեր, մեք զՀայս գիտեմք եւ ոչ բաժանիմք 'ի նոցանէ մինչեւ ցմահ։ Յոյնք որսացին զվին յեկեղեցականացն Ղպթոց, և ետուն նմա գրել առ Պատրիարքն և առ ազգն նոցին յԵգիպտոս, թէ Յոյնք տիրեցին Ս. Տեղեաց, եւ խնդրեն զմեզ լինել հետեւող ինքեանց. բայց Պատրիարքն ասաւել կշտամբեաց զնա, և գրեաց առ Թէոդորոս Պատրիարք գիր սիրոյ և հաստատուն միաբանութեան։ Յոյնք ոկսան յորդորել զկանայս Ղպթոց, բայց ընկալան 'ի նոցանէ պատասխանի, զոր չէ 'ի ճահ գրել ասասնօր ('ի 21 Սեպտեմբերի)։

Ի սոյն աւուրս եհաս և գիրն Ամիրայից առ Թէոդորոս Պատրիարք, յորում մխիթարէին զնա սակս նեղութեանց և տառապանաց, զոր կրէր յերեսաց թշնամեաց. ծանուցանէին նաև զմիսրան ջանս և զաշխատութիւնս իւրեանց, համակամ միութեամբ եղեալ ոսխտս և դաշինս, 'ի փարատումն վշտաց՝ 'ի պահպանութիւն և 'ի պայծառութիւն սեփհականութեան ազգին, և զուրախութիւնս իւրեանց 'ի հասանիլն օրինաւոր հրովարտակաց, և յաւուրս ծանապահութեան Տաճկաց խոստացեալ հանել զհրովարտակ

չինութեան բաժին տեղեացն Հայոց։ Յորդորէին զնա առաքել զվարդապետս առ սմենայն ազգս Հայոց ժողովել զողորմութիւն 'ի նպաստ (Իմոսոսիէ) և առաքել առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպոլիս, զի բազմագումար ծախսուց պէտս ունէր գործն. ապա խրախուտէին զնա չվհատիլ, այլ ապաւինիլ յԱստուած և յաղօթս, (1809. 'ի 19 Հոկտեմբերի)։

Կուսակալն Դամասկոսի Եուսուֆ Փաշա եկն յերուսաղէմ ըստ սովորութեան (յ7 Հոկտեմբերի), եւ զիջեալ յաղաչանս Յունաց, ետ հրաման նոցա չինել զԳերեզմանն Քրիստոսի փոքր դմբեթիւն իւրով. Լատինք և Հայք կամեցան բառնալ զկանթեղս և զպատկերս 'ի Գերեզմանէն գիտութեամբ այլազգեաց և օրինօք դատարանի, զի մի' յետոյ խռովութիւնս յարուցեն Յոյնք. այլ նոքա ոչ անսացեալ բանից նոցա, հանեալ զնոսա արտաքս և նախատանօք ընկեցին 'ի բաց։ Հայք իբրեւ ծանուցին զայս կուսակալին Դամասկոսի, հրամայեաց նա օրինօք դատարանի գրել զամենայն ինչ, և յետ աւարտելոյ չինութեան կախել զիւրաքանչիւրսն 'ի տեղիս իւրեանց, որ և արարին այնպէս։

Յոյնք կամեցան խափանել զհանդէսն Հայոց՝ զոր կատարէին յաւուր Գիւտի Խաչին, և պատճառանօք չինութեան լցին զարտաքին դուռն տաճարին քարամբք և հողով, և թէ՝ Հայք չունին այսուհետեւ մասն և բաժին ասասրայոց Կուսակալն ետ բառնալ անտի զքարինս և զհողն, և Հայք կատարեցին զհանդէսն իւրեանց։ Ապա կոչեալ առ ինքն զգլխաւորս երից ազգաց և պատուիրեաց նոցա հաշտիլ սիրով և խաղաղութեամբ վարիլ ընդ միմեանս։ Ա՛ռ զսահմանեալ տուրս յերից վանօրէից յայտնապէս, բայց 'ի ծածուկ 'ի Յունաց էառ 161,000 դահեկան վասն հրաման տալոյն չինութեան, և խոստացան եւս բազում ինչ եթէ թոյլ տացէ յափշտակել զբաժին տեղիս Հայոց եւ Լատինաց, այլ նա սատեաց նոցա, և չարար զնոսս ինչ տեղեացն այլոց։ Ապա 'ի սադրելոյ Յունաց եւ յերիվեղ այլազգեաց՝ եթող 'ի քաղաքի անդ 200 զօրականս. զ100 եդ 'ի բերդն և զ100 բնակեցոյց յիջեւանս քաղաքապետին, և ինքն մեկնեցաւ 'ի տեղի իւր ('ի 18 Նոյեմբերի)։

Ցոյնք քակեցին զԳերեզմանն Քրիստոսի մինչ 'ի վիմափոր այրն եւ զդանձարանն, այսինքն տեղի Հրեշտակի վիմի, մինչ 'ի հիմն, և փակեցին զշրջապատս նորա տախտակաւ. խափանեցաւ տեղի պատկերին և կանթեղին Հայոց։ Իսկ Թէոդորոս Պատրիարք Թախանձանօք խնդրէր 'ի Փոխանորդէն փութով դարձուցանել զԴիոնէսիոս վարդապետ յԱթոռն, զի չունէր զոք իրրև զնա վարել զպաշտօն Քարտուղարութեան և զայլ կարեւոր գործս, բայց ազգային երեւելիք ընտրեալ էին զարս 6 և Դիոնէսիոս ընդ նոսա քննել զհաշուետուսմարն Ս. Աթոռոյն, զոր առաքեալ էր յառաջագոյն, և զկնի աւարտելոյ զայն գործ՝ խոստացան առաքել ընդ տուսմարին ('ի 12—27 Նոյեմբերի)։

Գործ Կուսակալին ընդդէմ էր կամաց քաղաքացի այլազգեաց եւ Եէնիչէրի զօրաց՝ որք նստէին 'ի բերդն. տաղտկացեալ սոցա 'ի Մզրբպի կոչեցեալ զօրաց, մեկնեցան անտի որդւովք և ընտանեօք, և ցրուեցան յայլ եւ այլ տեղիս քաղաքին։ Եւ ապա ժողովեալ 'ի դատարան խնդրէին 'ի մեծամեծացն այլազգեաց հանել անտի զզօրսն և տալ ինքեանց զբերդն. ասիպէին և զՑոյնս՝ զի որպէս առիթ եղեն բնակելոյ զօրաց անդ, այժմ եւս ասիպեսցեն զԿուսակալն հանել զնոսա անտի։ Ցոյնք խոստացան 'ի վերին երես կատարել զխնդիր նոցա. և նոքա լուեցին աւուրս 20։ Իրրեւ տեսին Եէնիչէրիք թէ անփոյթ արարին Ցոյնք զխնդրով իւրեանց՝ և պատաղեալ են 'ի գործս չինութեան, խորհրդով գլխաւորաց քաղաքին մատն առ մատն մոին 'ի Ս. Յարութիւն ('ի 17 Դեկտեմբերի) մինչեւ լցաւ թիւ նոցա իրրեւ հազար, որ և յանկարծ հանին անդ չիրթ մեծ և աղմկաւ լցին զտաճարն, և հանեալ զզէնս իւրեանց դիմեցին 'ի վերայ Ցունաց և սկսան հարկանել, և մի ոմն 'ի գործաւորաց մեռաւ անդ, և սպառնային մաչել զնոսա 'ի սուր սուսերի. զի դաւաճանութեամբ առիք զանկութիւնս մեր ասէին՝ և արարիք զմեզ թափառական, այժմ ոչ կամիք լսել ձայնի մերում, ահա զվանօրայս ձեր սահմանեմք 'ի բնակութիւն մեզ, և եթէ մեռանիլ իսկ հասանիցէ մեզ՝ պատրաստ եմք առ այն. և ընթացեալ լցան 'ի վանօրայս Ցունաց. և ոմանք մնացին 'ի տաճարին, և խնդրէին զԹարգմանն, զՓոխանորդն, զՃարտարապետն և զայլ գլխաւորս Ցունաց, և երդմամբ հաստատէին սպանանել զնոսա։ Փոխանորդն և գրագիրն փախեան 'ի տուն Նախարարին, Թարգմանն Ճարտարապետն և Վերատեսուչն յայլ տեղի, գործաւորք ընդ միաբանաց զողեցան 'ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին, անձինք իրրեւ 20, զորս կերակրէր Տեսուչն Հայոց, ժողովուրդք Ցունաց փակեցան 'ի տունս իւրեանց։ Եէնիչէրի աղասին արգելաւ 'ի բերդն, քաղաքապետն յօթեւանս իւր։ Եէնիչէրիք՝ որք մնեալ էին 'ի վանս Ցունաց՝ խորտակեցին զդրուանս սենեկաց և որոնէին զգլխաւորս նոցա. յափշտակեցին զոր միանգամ գտին. ապա դիմեցին բազմութեամբ 'ի Ս. Յարութիւն, և գործեցին անդ ոճիր մեծ, խորտակեցին զկանթեղս և զաշտանակս զմմանղէնս և զպատկերս Գողգոթային, և կործանեալ ըստ փայտակերտս գործաւորաց՝ եդին 'ի հուր և զտախտակս 'ի շրջապատս Գերեզմանին՝ քակեալ լցին անդ. փշրեցին և զոմանս 'ի մարմարիոն քարանց Գերեզմանին, և 'ի տեղիս տեղիս արատաւորեցին զշինուածն, եւ սպառնային միանգամայն այրել եւ կործանել և կոտորել զՑոյնս 'ի բերան սրոյ, և այսպէս զէն 'ի ձեռին շրջէին 'ի քաղաքին և ժողովէին 'ի Ս. Յարութիւն, և եղեւ վնաս մեծ Ցունաց և սուգ ինչ եւս Հայոց։ Ցոյնք որ թագուցեալ կային այսր և անդր՝ միջնորդ կալան զգլխաւորս այլազգեաց, և նոքա ասիպէին զքաղաքապետն հանել զզօրսն 'ի բերդէն. իսկ նա չէր ձեռնհաս առ այն, զի հրամանաւ Կուսակալին նստեալ էին նոքա անդ։ Ապա միաբանեալ Մզրբպի զօրաց՝ կանգնեցին զերիս դրօշակս 'ի վերայ բերդին եւ պատրաստեցան 'ի մարտ, զի եդեալ էին 'ի մտի մեռանիլ և ոչ ելանել անտի։ Ապա ժողովեալ ամենեքեան 'ի միասին եդին պայման 'ի միջի՝ գրել առ Կուսակալն և զկնի 12 աւուրց յանձնել Եէնիչէրեաց զբերդն. զնոյն խոստացան առնել և Ցոյնք, և ետուն մուրհակ թէ՝ 'ի մասին յափշտակութեան վնաս ինչ ոչ տեսաք. և յետ այնորիկ ելին 'ի վանօրէիցն Ցունաց և 'ի տաճարէն Ս. Յարութեան, և փակեցաւ դուռն և դադարեցաւ շինութիւնն. բայց երկոքին կողմն կասկածեալ 'ի միմեանց՝ կային 'ի պատրաստի։ Յետ այսր չիրթութեան Ճարտարապետն, գրագիրն և Մետրոփանոսն Ցունաց մեկնեցան 'ի Ցոպէ զԸ-

նալ 'ի Կոստանդինուպոլիս, պատճառն անդիտելի։

Իսկ գիւղականք Բեթղեհէմի 'ի պատճառս գործոց եւ չվոթութեանցն Յունաց, եւ պահանջելոյ յուխտաւորաց զՊափարն՝ ճեղքեցան յերկուս, կէսք մնալ ամրացան 'ի վանս Յունաց, և այլք մնացեալ արտաքս պատերազմէին ընդ միմեանս, և սպանին զոմն յազգէ Լատինաց, որոյ վասն արգելան Յոյնք գնալոյ 'ի Բեթղեհէմ։

Լուեալ Կուսակալին Դամասկոսի զամենայն անցս Երուսաղէմի՝ առաքեաց 1000 Մղրըպի զօրականս, որոց զօրավար կարգեալ էր զայրն քաջ Ասլուզուրեան. հասեալ սորա Յերուսաղէմ (1810. յ8 Յունվարի) յաւուր շաբաթու եմուտ 'ի քաղաքն, և 'ի Կիւրակէի սկսան ժողովիլ եէնիչէրիք, և ոմանց փախչիլ և թագչիլ, և այլք խորհէին մտանել 'ի վանս Ս. Յակոբայ, և անտի տալ պատերազմ ընդդէմ թշնամւոյն, այլ վաղ իմացեալ քաղաքապետին՝ խափանեաց զսորհուրդս նոցա, կարգելով պահապան զօրս 'ի դուռն վանաց։ Եւ ոմանք յեէնիչէրեաց անտի անձինք իբրեւ 18 գնացին 'ի վանս Ս. Փրկչի, և կալեալ զդռնապանն գան հարին և կորզեցին 'ի ձեռաց նորա զբանալի դրանն, և մտեալ ամրացան անդ։ Հասին անդ և զինուորք և պատեցին զվանքն և սկսան պատերազմիլ ժամս իբրեւ 4. և իբրեւ ոչ կարացին ածել զնոսա 'ի հաւանութիւն, ածին զթնթանօթս և սկսան ռմբակոծել զպարիսպ վանաց, յորմէ խարխալեալ կործանեցաւ որմն հիւսիսային, և բացաւ խրամ յերկուս տեղիս, և մտեալ անտի 'ի ներքս կալան զդիս 14, և որոնեալ գտին զայլ անձինս որք իջեալ էին 'ի ջրամբարն, և հատեալ զգլուխս ամենեցուն բերին առ քաղաքապետն, որ կայր առաջի դրան քաղաքին։ Միաբանք և ծերունի Յակոբ եպիսկոպոսն նուաղեալ հաղիւ անկան 'ի Ս. Յակոբ, զկարասիս վանաց եւ զանօթս եկեղեցւոյն ետուն յաւարի, մինչեւ հանել զբեւեռս եւ զնիգս դրանց։ Եւ 'ի բերդին խեղդամահ արարին զարս 12. ապա արձակեցին անտի հրանօթս՝ աւերելով քաղաքին զյաղթութիւնն, եւ զայլս արկին 'ի բանտ. սաստկացաւ լալ և կոծ 'ի քաղաքին մերձաւորաց եէնիչէրեաց։ Սակայն գլխաւորք այլազգեաց գժամնեալ իմն էին ընդ այս գործ, թէ չէր օրէն սակս Յունաց կոտորել զայս քան անձինս։

բայց զօրապետն ասէր, վասն խաղաղութեան քաղաքին արարի։ Յետ այնորիկ քաղաքապետն ետ չինել զխրամատս պարսպի Ս. Փրկչի, և զայլ քակեալ և աւերեալ տեղիս։ ստիպէին զՀայս չինել զնոսա և դնել անդ միաբանս։

Ի միջոցիս այսպիսի խռովութեանց՝ երկուցեալ միաբանացն Հայոց ոչ կարացին երթալ 'ի Բեթղեհէմ և տօնել զՅունուար Տեառն, զի փոքր մեծ էր նոցա պահել զվանս Ս. Յակոբայ չմտանել եէնիչէրեաց անդ, որոյ վասն բազումս աշխատ եղեն բանիւք և արգեամբք իսկ։

Հուսկ ուրեմն եհաս հրովարտակն Յունաց յերուսաղէմ ('ի 12 Յունվարի), և կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանն. կոչեցին զԹարգմանն և զՊոլսանորդն Հայոց, և ընթերցան զայն առաջի բազմութեան, յորում յետ պատմելոյ զդատաստանս Հայոց ընդ Յունաց, Տերութիւնն չնորհէ զչինութիւն տաճարին Ս. Յարութեան միայն ազգին Յունաց։ Ապա հարցին զՀայս թէ՝ ունի՞ք ինչ ասել առ այս, և նոքա ասեն՝ հնազանդ եմք օրինաց Շէրիի և հրամանի Արքային, բայց խնդրեմք համբերել մինչ 'ի գալուստ հրովարտակին Հայոց։ Ետուն պատասխանի՝ այժմ Յոյնք ըստ կիզքն արասցեն չինութեան ըստ հրամանի Արքային եւ ապա որ ինչ հրամայի վասն ձեր՝ այնպէս առնեմք։ Ետուն հրաման Յունաց՝ և ցրուեցաւ ժողովն։ Քաջալերեալ և ոգի առեալ Յունաց թերի թողին զչինութիւն Գերեզմանին Քրիստոսի, և փութացեալ կանգնեցին փայտակերտս առաջի մեծի դրան 'ի ներքին կողմն, և սկիզբն արարին չինել զբաժին տեղիս Հայոց, զսենեակս Տեսչին և զՎերնատունն՝ այլովքն հանդերձ. ժողովեալ զքարինս չինուածոց նոցին, դատարկեալ հանին արտաքս զկահ և զկարասին Հայոց, և եղեւ միաբանաց և ուխտաւորաց տարուոյն սուգ մեծ եւ անմխիթար տրտմութիւն առաջի աչաց տեսանելով զյափշտակութիւն դարաւոր իրաւանց ազգին. և ժողովեալ ոմանց իբրեւ անձինք 20, ցաւ 'ի սիրտ գրեցին առ Իշխանաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս հոգալ զկարեւորն և բառնալ յազգէն զնախատինս Յունաց ('ի 24 Յունվարի)։

Իսկ զօրավարն Ասլուզուրեան յետ բառնալոյ զխռովու-

թիւնն եէնիչերեաց և խաղաղելոյ զքաղաքն, մնաց յԵրուսաղէմ զօրօք իւրովք ըստ հրամանի Կուսակալին և 'ի սադրելոյ Ցունաց · եւ զկնի աւուրց ինչ սկսաւ հակառակիլ ընդ Հայս և այս՝ 'ի դրդմանէ Ցունաց · արդեալ զերկաթի կոչնակն Ս · Յակոբայ, և հրամայէր մխիթարիլ միայն փայտեայ կոչնակաւ · խափանեաց զպատարագելն Հայոց 'ի վերայ գերեզմանի Ս · Աստուածածնի, զոր կատարէին 'ի չորեքշաբթի, 'ի կիւրակէի եւ յաւուրս տօնախմբութեան Ս · Կուսին · այլ միայն երկիցս 'ի շաբաթու պատարագել ասէր, և այն 'ի վերայ արտաքին խորանին։ Թէպէտեւ Հայք առաքեցին զոմանս հարցանել ցՅոյնս զպատճառն, այլ նոքա արարին պատասխանի թէ 'ի Կոստանդինուպօլիս այնպէս կարգադրեալ են · և առաջին հրովարտակին, զոր մատուցին Հայք, ոչ կամեցան լսել դատաւորք, եւ այս եղեւ յետ գալստեան հրովարտակին Ցունաց, զոր ընթերցաւ Խոճաքեանն ըստ կամաց իւրոց եւ դարձոյց առ նոսա։

Արժան համարիմ ասասանօր յառաջ բերել զանպատեհ գործս Խոճաքեանին, զոր սկսաւ յանդգնաբար գործել յԵրուսաղէմ · քանզի 'ի քննութեան պահու տաճարին Ս · Յարութեան գնացեալ էր անդ և Աւետիս Թարգմանն Հայոց, յանկարծ յարձակեալ 'ի վերայ նորա և սկսաւ նախատել զազգն ողջոյն եւ հարկանել զնա բռնցի · միթէ՞ զազգ ինչ իցեն Հայք՝ զի Նախարարք Տէրութեանն վարեցին 'ի Դրանէ զմեծամեծս նոցա, և զիս Տէրութիւնն ոստիկան և դատաւոր կարգեաց 'ի վերայ երից ազգաց։ Մեծամեծք այլազգեաց նախատէին զյանդգնութիւնս նորին եւ ասէին իսկ լուել։ Թարգմանն զամօթի հարեալ առաջի բազմութեանն, և չկարացեալ ասել ինչ՝ դարձաւ 'ի վանքն, և առաքեաց անդ զերկրորդ իւր։ Զայն տեսեալ Խոճաքեանին կալաւ զնա 'ի հրապարակի դաւթի տաճարին՝ ձաղէր զնա այպանօք և հարկանէր դաւազանաւ զգլուխ նորին, և ելեալ 'ի Վերնատունն Հայոց դռայր անտի իրրեւ ամպ մրրկալից՝ թէ Հայք չուներն տեղի ինչ ասա, եւ այսպէս արար խայտառակութիւն մեծ, ժայթքելով 'ի բերանոյ իւրմէ՝ բանս նախատանաց և լուտանաց ընդդէմ պատուոյ ազգին, յորմէ զուարթանային

միտք և պարարէին ականջք Ցունաց ('ի 18–24–29 Ցունվարի)։

Եւ այսպէս համարձակութիւնն Ցունաց փոխեցաւ յանդգնութիւն · զի նոքա եւս սկսան թշնամանել և նախատել զազգն ըստ բնարոյս բարուց իւրեանց, կռփէին եւ հարկանէին զմիարանս տաճարին Ս · Յարութեան, և արկանէին զհողս և զքարինս 'ի վերայ գլխոց նոցա։ Տաղտկացեալ միաբանաց 'ի խժդժութենէ ասաւ՝ աղաչէին ընթէոդորոս Պատրիարք աղաչել զնոսա 'ի գերութենէ Ցունաց · այլ նա սիրով և հայրարար յորդորեաց զնոսա համբերութեամբ տանել նախատանաց, և մնալ 'ի տեղիս իւրեանց։

Ցոյնք 'ի չինութեան Վերնատան և այլ տեղեացն Հայոց՝ փոխեցին և այլայլեցին զձեւ և զկերպարան եկեղեցւոյն, և ոչ թողին տեղի խորանի և այլ կարեւոր իրաց, որպէս էրն յառաջագոյն՝ և ոչ չինեցին զսենեակս միաբանաց · խափանեցին զլուզարերից սեղանն եղեալ մէջ յաղթ և ատուար առաջի նորա, զի մի պատարագեսցեն անդ Հայք · նոյնպէս և յայլ տեղիս, մինչ զի չճանաչել թէ իցեն սոքա վիճակք Հայոց։ Արդեալին և զլատինս 'ի պատարագելոյ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի · զի նախ խոստացան թոյլ տալ զկնի թափորի նոցին, այլ յետոյ ժխտեալ ընդդէմ կացին հակառակութեամբ և 'ի ձեռն Խոճաքեանին գրել եւուն Հէօճէթ, որպէս թէ Տէրութիւնն տուեալ իցէ Ցունաց զրովանդակ տեղիս տաճարին Ս · Յարութեան · եւ իրրեւ հանին զայն 'ի դատաստան ասկս հատատութեան, ոչ ընկալաւ զայն Միւֆթի քաղաքին · եւ զկնի մահուան նորին՝ վերատին հանին զայն գիր յատեան և եւուն կնքել դատաւորին, այլ նոր Միւֆթին և Նախիպն տհաճութիւն ցուցեալ առ այն ոչ կամեցան հաստատել, եւ այնպէս խնդիրն մնաց թերի · զի մատադիր էր Խոճաքեանն ձեռամբ իւրով յանձնել զտեղիս Ցունաց ('ի 1–17 Մարտի)։

Թէոդորոս Պատրիարք յառաջագոյն խնդրեալ էր 'ի Կուսակալէն Դամասկոսի բառնալ զհակառակութիւնս Ցունաց վասն Գերեզմանի Ս · Աստուածածնի և վասն պատկերաց և կանթեղաց Ս · Յարութեան · և նա գրեաց առ դատա-

ւորս և մեծամեծս քաղաքին կատարել զխնդիրս Հայոց, մինչ 'ի գալուստ հրովարտակի նոցին, որ յուսայր լինել 'ի ճանապարհի. վաղուցին ասէ ըստ առաջին սովորութեան։ Յետ ընթեռնլոյ զայս գիր 'ի դատարանի՝ ուր էր և Աւետիս Թարգմանն, գրեաց Դատաւորն առ Թէոդորոս Պատրիարք, առնել զամենայն ինչ ըստ հրամանի Կուսակալին, եւ նա ետ դնել զպատկեր Լուսաւորչին 'ի վերայ դրան Գերեզմանին Քրիստոսի կանթեղաւն, և զայլս յիւրաքանչիւր տեղիս՝ յաւուր Ծաղկազարդի եւ պատարագեցին 'ի վերայ Գերեզմանի Ս. Աստուածածնի ('ի 6 Ապրիլի). յուրախութիւն միարանաց և ուխտաւորաց տարւոյն, և ծանոյց զայսոսիկ ազգայնոց 'ի Կոստանդինուպօլիս։ Յոյնք զչարեալ առ այս՝ տճապարեալ գրեցին առ Կուսակալն ամբաստանութիւն զՊատրիարքէն Հայոց, եւ առաքեցին 'ի Դամասկոս զարս երիս, ընդ որս էր և Մոհաքեանն, և շրջեցին զմիտս Կուսակալին 'ի կողմն իւրեանց, և առին գիր հակառակ առաջին գրոց. և դարձ արարեալ անտի մտին յԵրուսաղէմ յաւուր Ծրագալուցի Զատկին. և պահեալ ըզգիրն՝ խաղաղութեամբ կատարեցին ընդ Հայոց զհանդէս լուսաւորութեան. յորմէ կասկածէին Հայք լինել խռովութեան եւ էին յերկիւղի։ Եւ ապա ետուն ընթեռնուլ զգիրն 'ի դատարանի, որպէս և գրեալ էր նա ինքն Կուսակալն առ Թէոդորոս Պատրիարք, եւ դարձեալ խափանեցին զպատարագն Գերեզմանի Ս. Աստուածածնի, եւ բարձին զպատկեր Լուսաւորչին, և զկանթեղն 'ի տաճարին Ս. Յարութեան, և կամէին խափանել նաեւ զպատարագելն Հայոց յիւրաքերից սեղանն, բայց Հայք ընդդիմացան ընդ այն և կատարեցին։

Ի բռնադակ նամականիս Թէոդորոս Պատրիարքի, զոր գրեաց 'ի միջոցիս յայսմիկ առ գլխաւորս ազգին եւ առ Փոխանորդն իւր 'ի Կոստանդինուպօլիս, ոչ այլ ինչ պատմին, բայց եթէ վիշտք, դառնութիւն, դաւաճանութիւն, զրկանք, տուգանք պէս պէս, անտանելի նեղութիւնք, դժուարակիր և դառն աղքատութիւն, (1810. 'ի 25 Մայիսի)։

Գ. ԼՈՒԻՍ ԻԴ.

Աղերսագիր Հայոց առ Արքայ. զրոնել զարձանագրութիւնս։ Դատաւորն վերստին 'ի գուռն մեծի դենպետին։ Խնդիր երից հետեւակ ազգաց։ Բռնութիւն քաղաքապետին։ Հրաման Կուսակալին Դամասկոսի։ Նոր Կուսակալ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻՆ և արքն՝ որոց յանձն արար Թէոդորոս Պատրիարք զհրովարտակս և եհան 'ի ճանապարհ՝ յետ թափառելոյ զաւուրս 32 հասին 'ի Կոստանդինուպօլիս և մատուցին առ Փոխանորդն Պօղոս վարդապետ զոսկենկար Խաթիբ Շէրիֆն, որով եղեւ ուրախութիւն մեծ 'ի մայրաքաղաքին Հայ ժողովրդոց, եւ բարձրացան կորացեալ գլուխք Իշխանաւորաց՝ յընթեռնուլն և յիմանալն զմիտս նոցա։ Եւ ապա գիտութեամբ մեծի դենպետին ետուն հանել զպատճէնս նոցա եւ վաւերել կնքով առն որ կոչի՝ (Հարամէյն Միւֆէթթիշէյն), և տարեալ առանձին ետուն ընթեռնուլ Նախարարաց դրան, զի լցցին միտք նոցին։ Եւ յետ այնորիկ 'ի ձեռն մտերմաց ոմանց հասուցին զամենեսեան առ Արքայ, և յընթեռնուլն՝ եղեւ հմուտ ճշմարտութեան, եւ առաքեաց դարձեալ արտաքս։ Եւ ապա ըստ ազգ արարելոյ նորին Արքայի՝ մատուցին առ նա Հայք գիր աղաչանաց, թէ ահա եկին հրովարտակքն մեր յԵրուսաղէմ. Եւ յետ երից աւուրց առաքեցաւ աղերսագիրն 'ի Դուռն առ Բէյզ Էֆէնտի գրով Արքայի, և նա խնդրեաց զհրովարտակսն 'ի Հայոց, որ և մատուցին 'ի ժողով Նախարարաց, որոց ընկալեալ յարգութեամբ ընթերցան։ Եւ հրաման 'ի Սուլթան Մահմուտ Բ. յԱրքայէ զգուշութեամբ որոնել յամենայն դիւանս Տէրութեան զարձանագրութիւնս նոցա, մինչեւ 'ի ներքին գրապահ դանձարանսն. և 'ի վերայ այսր գործոյ գրով Արքայի կարգեցաւ Սաադ Էֆէնտի այրն երեւելի, զի մի դաւ ինչ գործեսցի 'ի դրդմանէ Յունաց։ Ժողովեցան առ նա յամենայն դիւանաց Քարտուղարք և Քննիչք՝ իբրեւ արք 40. և ընդ նոսա տիրացու Առաքել։ Նախ մտին 'ի մեծ դանձարանն և աւուրս 4 աշխատ լեալ՝ գտին

եւ ոչ ինչ։ Ծանոյց Սատրդ զիրսն Արքայի։ Եկ հրաման դարձեալ՝ զի գացին տուփարք առաքանն Երուսաղէմի յաւուրս Սէլիմայ առաջնոյ։ Եւ չորքան 'ի պալատն (Թէֆթէրխանէ) ուր պահէին հին տուփարք, մերձ 'ի Դուռն՝ ուր բնակին Թագուհիք, և անդ որոնեալ գտին զայն՝ յորում գրեալ էր յականէ յանուանէ վանորայք իւրաքանչիւր ազգի, և Մար Անդրիաս անուն վանք Հայոց՝ որ այժմ չէրեւի 'ի միջի։ Եւ անտի գնացին 'ի գանձարանն Ամ Դիպանէ, ուր յառաջագոյն ամսօրեայ ժամանակաւ վաստակեալ և ոչ ինչ շահեալ էին։

Իսկ այժմ գտին զարձանագրութիւնս հրովարտակին Սուլթան Մահմուտի առաջնոյ, գրեալ 'ի թուին Հիճրէթի ՌՃԾԴ տուեալ Գրիգորի Շղթայակրի։ բայց այս գործ տեւեաց ամիս մի, և զոր ինչ գտին անդ՝ համառօտեալ եւ բաղդատեալ ընդ հրովարտակաց առաքելոցն առ Արքայ, ընդ նոսին զհին և զնոր հրովարտակս Ցունաց, և մնացին անդ 'ի ներքս աւուրս 40։ և ապա առաքեցան 'ի Դուռն ('ի 14 Մարտի), և ընդ նոսին հրաման սատիկ առ Տեղապահն (Դայմագամ) և առ մեծ Դենպեան (Շէյխ էլ Իսլամ) կարգել վերատին Ատեան մեծահանդէս 'ի Դուռն դենպետին։ Ժողովեցան անդ Նախարարք և դասք դիտնականաց, ոչքա ամենեքեան նստեալ նախ ընթերցան զհրովարտակս երկուց ազգաց, եւ քննութեամբ ծանեան զմիտս նոցին և զճշմարտութիւն խնդրոյն։

Նիստ Առաջին, (17 Ապրիլի)։

Հրաւիրեցին զՀայս և զՑոյնս 'ի Դուռն մեծի դենպետին, գնացին Հայք ոգիք իրրեւ 60 ամենեքեան արք երեւելիք՝ և վարդապետք 6։ Եկին անդ և Ցոյնք բազմութեամբ մեծաւ։ Մտին յԱտեան Դատաւորաց Երեսփոխանք երկուց կողմանց և արձանագրեցան անուանք իւրաքանչիւրոց։ Հարցին Դատաւորք զՀայս, զի՞նչ է խնդիր ձեր, որ աղերսագիր մատուցեալ էք առ Արքայ։ Եւ նոքա ետուն պատասխանի, յայտնի է Տէրութեան ձերում, թէ եկեալ են Խաթթի Շէրիֆքն մեր յԵրուսաղէմ, և ըստ տրամադրութեան նոցին տիրեալ եմք անդ ամենայն տեղեաց մերոց, և խնդրեմք կայսերական հրովարտակ ըստ մտաց նոցին լինել համարձակ յիրաւունս մեր, և ազատ 'ի բռնութենէ Ցունաց, և զբաժին տեղիս մեր 'ի տաճարին Ս. Յարութեան մեք չինեսցուք, և ասէլ ինչ վիճաբանեալ 'ի վերայ այսր խնդրոյ փակեցաւ Ատեանն։

Նիստ Երկրորդ, ('ի 11 Ապրիլի)։

Ի սոյն նուագ կազմեցաւ Ատեան մեծ քան զառաջինն՝ զի յաւելան 'ի նոյն ոմանք 'ի Նախարարաց։ սկիզբն խօսեցան Հայք ըստ առաջին բանից։ Եւ 'ի հարցանել Դատաւորաց ցՑոյնս՝ մատուցին նոքա Ատենին հանրագրութիւն ինչ բազմակնիք 'ի դիմաց բոլոր ազգի իւրեանց, լցեալ դանիւք բարուրանաց և գանկատանաց ընդդէմ Հայոց, և ընթերցեալ զայն Ատենակալաց՝ չետուն ինչ պատասխանի։ Մատուցին Ցոյնք զվարձեցեալ զիրն Օմարայ, յոր յուսացեալ էին՝ այլ չեգիտ նա ընդունելութիւն ինչ յԱտենի անդ։ աղաղակ բարձին Ցոյնք և ասեն՝ սա է դաշնագիրն մեծին Օմարայ՝ պարտիք կատարել որ ինչ 'ի սմա գրեալն է։ Հայք ետուն պատասխանի՝ դաշնագրութիւնն լինի 'ի մէջ երկուց հաւասար տէրութեանց, իսկ հպատակի դաշնագիրն հարկատուն է։ զարմանք են որ ընդ մեծազօր Տէրութեան դաշնագիր ունիմք ասէք։ Ետուն զպատճէն Բէնէֆէ մարգարէին և առաջնորդին Արաբացւոց, գրեալ 'ի բարբառ նոցին՝ ընթերցան և զայն։ Հայք ասացին՝ սա ոչ վասն Երուսաղէմի է՝ զի չիք 'ի սմա անուանդ Երուսաղէմ եւ ոչ հարկաւոր 'ի վէճն յառաջակայ, այլ վասն համարձակութեան վանականացն Սինայի։ Ապա հանին ըստ հրովարտակն Սուլթան Մահմուտի առաջնոյ, տուեալ 'ի թուին Հիճրէթի ՌՃԾԴ զոր առեալ էին 'ի դատին ընդ Շղթայակիր Պատրիարքին, զորոյ զպատճէնն ունէին Հայք, որպէս և զայլոցն, և գիտէին զգրեալսն 'ի նմա։ Բէիզ էֆէնտին ասեալ զայն սկսաւ ընթեռնուլ, և մերձ 'ի վախճանն լուեաց։ յառաջեաց Փոխանորդ Պօղոս վարդապետն և ասէ՝ բոլորն ընթերցցի, Բէիզն ասէ՝ ահա կատարեցաւ, կրկնեաց անդրէն Պօղոս՝ մինչ խսպառ ընթերցցի, զի գոյ 'ի դմա հարկաւոր ուսանելիք։ և նորա ընթերցեալ աւարտեաց, որոյ 'ի վերջին տողս գրեալէր, երեք ազգք՝ Լատինք,

Ցոյնք՝ և Հայք, սեփհական տեղեաց իւրեանց՝ որպէս յառաջն, նոյնպէս այժմ և առ յապայն սիրեսցեն, և ոչ ոք ըզտեղիս այլոց յափշտակեսցէ և վնասեսցէ։ Զայն բարձին Հայք՝ ահա հրովարտակն իւրեանց հաստատէ զինդիրս մեր, և արգելու յափշտակել զտեղիս այլոց։ Դատ արարէք արդարութեամբ, սրով իւրեանց պարտ է հատանել զգլուխս նոցին, զի մուրհակ իւրեանց վկայէ թէ գործք նոցին են անիրաւութեամբ։ Ստրչայան Ցոյնք զի յայտնեցին զհրովարտակն զայն և կարեւէր խոցեցան սիրտք նոցին իրրեւ 'ի սլաքէ։ Աստանօր յամախեցին յերկուց կողմանց բանք վիրաւորիչք և կսկծեցուցիչք։ Դատաւորք ողոքելով զնոսա ասէին՝ հանդարտեցէք բաւական է, զի իւրաքանչիւր ոք պարտի հնազանդիլ հրամանի իւրոյ հրովարտակին և խաղաղիլ։ Եհարց Բէիզ Էֆէնտին ցՑոյնս եւ ասէ՝ հրովարտակքն Հայոց ճշմարի՞տ են՝ թէ ոչ, Ցոյնք ասեն՝ ոչ գիտեմք, կրկնեաց անդրէն՝ ասացէք կամ ճշմարիտ և կամ սուտ։ Ցոյնք ասեն՝ եթէ ունին արձանագրութիւն՝ ճըշմարիտ են։ Վերստին ասէ՝ Բէիզն, եթէ ասէք սուտ լինել հրովարտակացն Հայոց՝ ձերն եւս ստին, զի դուք եւս յետոյ 'ի թուին ١١٤٢ տուեալ էք արձանագրել, զի երկուց ազգաց եւս հին արձանագրութիւնքն ոչ գտան։ Նըմին իրի բռնադատիք վասն նոցին հրովարտակաց ասել ճշմարիտ, զի և ձերն ճշմարտեսցի։ ուրեմն բարւոք խորհեցէք եւ ըստ այնմ տուք պատասխանի՝ փակեցաւ Ատեանն։

Ի նմին աւուր բերին անդ զտումարն վադֆի 'ի մըզկթէն Սէլիմա, յորում էր իսկ ձեռագիրն և օրինակն Թուղրայի Սէլիմայ առաջնոյ։ ընդ որ բաղդատեցին զհրովարտակս Հայոց և Ցունաց, առաւել յայր և նման գտաւ վերնագիրն և Թուղրայն հրովարտակին Հայոց, քան Ցունաց՝ ըստ վկայութեան գիտնականաց Նախարարաց և Քարտուղարաց։ յայսմանէ ծագեցաւ լոյս ճշմարտութեան հրովարտակացն Հայոց, զորս Ցոյնք ստել ջանային։

Նիստ Երրորդ, ('ի 14 Ապրիլի)։

Գնացին դարձեալ Հայք եւ Ցոյնք ըստ առաջնոյն յԱտեան Դատաւորաց։ Նախ հարցին ցՑոյնս, Հապէշք, Դըպ-

թիք և Ասորիք ա՞զգ են ձեզ, թէ ոչ։ Նոքա ասեն, ոչ։ Դատաւորք ասեն, եթէ ոչ են ձեզ ազգ, ընդէ՞ր պնդէք թէ մեզ հետեւողք են (եամագ)։ Ցոյնք եռուն պատասխանի։ վասն այնորիկ՝ յորժամ տկարացին և պակասեցին յերուսաղէմէ, տեղիք և ստացուածք նոցին մեզ մնացին։ Հայք ասեն։ երեք ազգքն այնոքիկ 'ի վաղ ժամանակաց անտի հետեւողք են մեզ, եւ 'ի հրովարտակս մեր գրեալ է կրօնակից և համազգային։

Տեսեալ Դատաւորաց թէ երկարի վէճն 'ի վերայ այսր խնդրոյ, ասեն։ մնացէ այժմ քննութիւնն հետեւակաց, զի նոքա չեն 'ի միջի և դուք հակառակ միմեանց վիճէք, պարտ է հարցանել ցնոյն իսկ հետեւակսն։ Թէպէտեւ ուզարտ է հարցանել զնոյն իսկ հետեւակսն։ Նէպէտեւ ուզարտ է հարցանել ցնոյն իսկ հետեւակսն։ Թ

բարին Հայոց և Յունաց, և նոքա դնացին անդ բաղմութեամբ ըստ առաջնոյն. ընթերցան նախ զհրաման Արքային, որ ունէր օրինակ զայս. Եթէ ստոյգ համարին Հայք և Յոյնք զհրովարտակս Սէլիմայ Արքային, զորս տուեալ է նոցա 'ի տիրելն իւրում Երուսաղէմի, բարւոք է. իսկ եթէ ոչ, առցի 'ի ձեռաց նոցին, անվաւեր և խափանեալ համարեսցի. եւ եթէ իսկապէս ընկալցին զնոսա, որպէս Սէլիմ, նոյնպէս և ես տուս նոցա տիրել ըստ այնմ եղանակի տեղեաց իւրեանց, և մի լինիլ յափշտակիչ իրաւանց իրերաց և կագել ընդ միմեանս. այլ վարիլ ըստ առաջին օրինաց և կարգի, թէ 'ի սեփհական և թէ յընկերովի տեղիս։ Եւ հետեւակ երեք ազգքն ում եւ կամեսցին, նմա հետեւեսցին, եւ այս խնդիր ստուգեսցի յԵրուսաղէմ։ Այլ 'ի խնդիրն չինութեան մի ոք համարձակեսցի յառաջ մղիլ. զի ես եմ տէր և Թագաւոր երկրին եւ իմ է իրաւունքն այն, ում կամիմ նմա յանձն առնեմ. սակայն որպէս նախ քան զայս տուեալ եմ Յունաց, յայս նուազ ես տուս նոցա. բայց ոչ որպէս իւրեանց, այլ իբրեւ գործադիր հրամանի իմոյ. զի որպէս են Հայք, նոյնպէս են եւ Յոյնք. չիք ինչ տարբերութիւն 'ի մէջ նոցա առաջի աչաց իմոց. եթէ հնազանդին այսմ, բարի. իսկ եթէ ոչ, կրեսցեն պատիժս անպատճառ։ Զայս ամենայն լուեալ Հայոց խոնարհեցան յերկիր և ասեն. յամենայնի հնազանդեմք ազգովին բարձր հրամանի մեծազօր Արքային, որպէս հրամայեալ է, նոյնպէս և եղիցի։ Յոյնք լռեցին իսպառ. և Տեղապահն կրկնեաց երիցս, թէ անհնազանդքն անկանիլ ունին ընդ մեծի պատժովք։ Հայք ասեն. զչինութիւն տաճարին Ս. Յարութեան այլայլեցին Յոյնք, և փոխեցին զառաջին ձեւն և խանդարեցին զտեղիս մեր. հրամայեցէք զի քակեսցին նորահնար իրքն, և վերստին չինեսցին ըստ առաջին ձեւոյն։ Դատաւորք ասեն, այո՛, հակառակ է օրինաց և վճռոյ մեծի դենպետին այլայլել զառաջին ձեւ չինուածոյն։ Վերստին հարցին երկուց կողմանց, հնազանդի՞ք հրամանի Կայսեր, Հայք եռուն հաւանութիւն, ակամայ կամօք Յոյնք եւս զիջան ասել այո՛։

Ապա արարեալ նոցա Իլամ մատուցին առ Արքայ ('ի 29 Մայիսի). զի ստոյգ հրովարտակ առ 'ի բառնալ զիրաւունս երկուց ազգաց։ Սակայն արգելաւ Իլամն անդ 'ի ներքս առ Արքայի ամիսս 8, և տուրս 13։

Յերկարիլ դործոյն անկան 'ի տարակուսանս գլխաւորք ազգին, եւ վարանէին տրտմութեամբ 'ի միտս իւրեանց, զի մի գուցէ դաւ ինչ դործեսցի 'ի հակառակորդաց անտի. և 'ի հարցանել բարեկամաց՝ ակնարկէին միայն լռել։ Յամենայն դաւառաց և քաղաքաց թախանձանօք խնդրէին լուր աւետեաց. բայց նոքա տարակուսեալ էին թէ զինչ պատասխանի տայցեն։ Աղաղակ միաբանաց Աթոռոյն Երուսաղէմի յերկինս ելանէր, զի 'ի բռնութենէ Յունաց նեղեալ և տագնապեալ հոգիս էին ապատան. եւ յօրէ օր սպասէին լրոյ աւետեաց և գալստեան հրովարտակին, այլ նոքա յառաջադրէին միայն հարցերել։ Յոյնք խոստային թէ խափանեցաւ Իլամն եւ այլ ոչ եւս յիշէ զայն Արքայ։ Սակայն արքունի ճարտարապետն Գրիգոր Ամիրայ քաջալերեալ յուսադրէր զիշխանաւորս ազգին յորդորական բանիւք, կալ անվրդով և մի կասկածիլ երբէք. զի միտք Արքային ասէր՝ անդրդուելի է. և փոյթ նորա չառնել ինչ ընդդէմ իրաւանց. նմին իբրի պարտ է հաստերել երկայնմտութեամբ. քաջ գիտէր զպատճառն արգելման Իլամին, զի ներքին խորհրդակիցն Արքայի բարւոք հմտացեալ մտաց հրովարտակացն խելամուտ առնէր զԱրքայ, և առաջնորդէր յամենայն իրս արքունի. այրս այս մինչ 'ի վախճան գործոյն աշխատեալ պատճառ եղեւ փրկութեան Հայոց։

Յետ պատմելոյ մեր զայս ամենայն անցս որ անցին 'ի Թագաւորեալ քաղաքին, դարձցուք այժմ ասել զդէպսն որք պատահեցան յԵրուսաղէմ։

Եհաս նոր Դատաւորն 'ի քաղաքն Ս. մեծամեծս խոստանայր Հայոց միայն բանիւ, որպէս արարեալ էր 'ի Կոստանդինուպոլիս կատարել զխնդիրս ազգին, 'ի Ս. Աստուածածին և 'ի Ս. Յարութիւն։ Առ զահմանեալ տուրս լուր, առ նաեւ 12,000 դահեկանս, և 'ի Յունաց 150 քըսակս արծաթոյ։ Եւ ըստ խնդրոյ Թէոդորոս Պատրիարքի կոչեաց առ ինքն զերիս հետեւակ ազգս, և 'ի բանից նոցա դրեաց հէոշէրիֆ. թէ ոչքա 'ի սկզբանէ անտի հետեւակ են ազգին Հայոց, և վասն այսր խնդրոյ էառ 3500 դահեկան, և այն բաղում աղաչանօք։

Թէպէտեւ Յոյնք խոստացան տալ նմա 30,000 դահեկան, զի գրեսցէ զնոսա հետեւակ Յունաց եւ քաղաքապետն բռնադատէր զնոսա խոստովանիլ այնպէս, մինչեւ արդեալ զնոսա չերթալ բնաւ 'ի վանս Հայոց. բայց դատաւորն ոչ մատոյց ունկն բանից նորին։ Եւ միշտ հակառակութեամբ վարէր ընդ Թարգմանին Հայոց, և պատճառելով զայլ և այլ իրս կեղեքէր զնա, մինչեւ եհաս գումարն 2000, այլ նա ոչ ասէր երբէք բաւ. և առաւել դրդռեալ արգել նախատանօք զԹարգմանն մտանել յապարանս կառավարութեան, եւ սպառնայր կացուցանել պահակս 'ի դուռն վանաց. եւ 'ի միում նուագի մտեալ ուղտուք 'ի վանս սակս կրի՝ եւ բռնաւորել զնոսա բռնութեամբ, և առ այս ոչ ինչ կարացին ընդդիմանալ միաբանք, եւ այլ սոցին նման անկարգութիւնք բազում, զորս աւելորդ է գրել. Թէպէտեւ սաստեաց նմա Դատաւորն քանիցս, այլ նա ոչ անայր բանից նորա, յոյր սակս գրեաց առ Կուսակալն և ընկէց զնա յիշխանութենէ և կացոյց 'ի տեղի նորա զՀին քաղաքապետն, որ էր 'ի ժամանակի հրդեհին Ս. Յարութեան։ Իսկ վանցի Աւետիս Թարգմանն ճանաչեալ 'ի պաշտօնէ իւրմէ հրաժարեցաւ, և 'ի տեղի նորա եդին զՄկրտիչ վարդապետ զմն, այր անվարժ եւ անհմուտ. լուեալ զայս գլխաւորաց ազգին գրեցին առ նա գիր սիրոյ և յորդորանաց, անտեղի համարել զոր ինչ լուեալն էր, և վարել զպաշտօն իւր խոհեմութեամբ յօգուտ Ս. Աթոռոյն, և նորա ստիպեալ աստի և 'ի յորդորական բանից Պատրիարքին և միաբանաց՝ վերստին յանձն առ զպաշտօնն։

Պարտատերք՝ որոց բազումք էին յազգէ Յունաց՝ յաւելին զտոկոս դրամաց՝ և պահանջէին զընծայս, և ապա սկսան խնդրել իսկ զմայր գումարն, որով տագնապէր Թէոդորոս Պատրիարք։ Եհաս գիր հրամանի յԵրուսաղէմ առ երիս ազգս 'ի Կուսակալէն Դամասկոսի, առաքել անդ մէն մի բանիբուն անձինս՝ և ընդ նոսա վաւերական դրեանս, տնօրինել և հրամայել ըստ մտաց նոցին, և ըստ հրամանի Սրբային կարգաւորել զամենայն գործս։ Յոյնք և Լատինք յղեցին, իսկ Հայք գրեցին գիր աղերսական ներել ինքեանց, զի վաւերական դրեանքն էին 'ի Կոստանդինուպոլիս։

Թէոդորոս Պատրիարք առաքեաց ընդ Հեծեալն, որ վասն երից հետեւակ ազգաց զայլ հրովարտակս եւ կարեւոր դրեանս, զորս առեալ էին յառաջին նորոգութեան բաժնին Հայոց 'ի տաճարին Ս. Յարութեան յաւուրս Շղթայակրի, որպէս խնդրեալ էր Փոխանորդ Պօղոս վարդապետն. երանի թէ 'ի դատաստանի անդ լեալ էին նոքա 'ի ձեռս ազգին, որով անպատճառ Հայք չինէին զտեղիս իւրեանց. ահա արդիւնք առանց վաւերական գրոց 'ի դատ մտանելոյ։ Գրեաց նաեւ զայլայլութիւն շինութեան Ս. Յարութեան, այլ անօգուտ։ Յոյնք մտին նորոգել զեկեղեցին Լատինաց 'ի Ս. Յարութեան՝ որ չէր այրեալ, և կասկած մտանելոյ 'ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին Հայոց։ Կուսակալն Եուսուֆ Փաշայ փախուցեալ 'ի Դամասկոսէ ապաստանեցաւ առ թափառական Արաբացիս, որում տուեալ էր Պատրիարքն Հայոց 25,000 դահեկան, նոյնպէս Լատինք և Յոյնք, և աշխատէին առնուլ զդրամն 'ի Կոստանդինուպոլիս, եւ Սիւլէյման Փաշա կարգեցաւ 'ի տեղի նորա ('ի 23 Օգոստոսի)։

Նեղութիւն պատերազմի և տագնապ նուազութեան հացի 'ի Կոստանդինուպոլիս, (1810. Նոյեմբեր)։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վարդապետն շինութեան Ս. Յարութեան։ Խափանումն տեղւոյն Հայոց։ Մէհմէտ Ագուլոպուրթ։ Երիցս կաթուղիկոս։ Նեղութիւնք միաբանաց։ Ժողով 'ի դուռն մեծի դենպետին և հրաման Արքային։ Ծախք շինութեան տաճարին։ Դարձեալ ժողով 'ի դուռն դենպետին։

Յոյնք յԵրուսաղէմ արդելին զՀայս 'ի գերեզմանէ Ս. Աստուածածնի յաւուր տօնի Վերափոխման եւ յայլ տօնս նորին, զի ասէին թէ 'ի շաբաթու երկիցս ունիք պատարագել 'ի վերայ Սեղանոյ ձերոյ. նեղեալ աստի Թէոդորոսի առաքեաց գրով 'ի Կոստանդինուպոլիս զՍարգիս անուն ոմն 'ի միաբանաց, ծանուցանել ազգայնոց ընդ խնդիրն՝ և դատանել զհնարն։

Աւարտեցին Յոյնք զչինութիւն տաճարին, զտեղիս իւրեանց յարդարեցին փառաւոր և շքեղ որպէս և կամեցան, իսկ զայլոցն թողին թերի և անշուք։ Եւ այսոքիկ են խափանեալ տեղիքն Հայոց, զորս ոչ կամեցան շինել. 3 սենեակ 'ի Վերնատունն և 'ի վերայ նոցա Պատրիարքարանն իւր պարագայիւք՝ որ ձգէր 'ի Վերնատանէ մինչեւ յորմն եկեղեցւոյն Յունաց՝ որ անկանի 'ի վերայ Պատանատեղւոյն, և 'ի տեղի սենեկի Տեսչին արարին կրկնայարկ և զմի սենեակն խափանեցին, զսենեակն Եաղուպ աղային, և զմի սենեակ 'ի վերայ գերեզմանի Յովսեփայ յԱրեմաթացւոյն, և զայլ տեղիս զորոց ունիմք յիշել. Ծեփեցին նաեւ զսուրբ Լուսաւորիչ եկեղեցին, թէպէտ ջանացին Հայք արգելուլ զայն՝ այլ չեղեւ հնար։

Եւ 'ի տօնի Վերացման Խաչի կատարեցին զՀանդէս նաւակատեաց եւ օծին զեկեղեցիս իւրեանց. կախեցին զկանթեղս 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի (1810. 'ի 14 Սեպտեմբերի)։

Եւ Դատաւորն աղդ արար Հայոց 'ի ձեռն Դպրապետին իւրոյ, և խոստացաւ տալ կախել զպատկերս և զկանթեղս նոցին, համաձայն գրոց առաջին Դատաւորին և Բդեշխին, և յանձն առին Հայք, և եռուն 3500 դահեկան, և նա առաքեաց զգիրն և թոյլտուութեամբ Յունաց կախեցին 6 կանթեղ 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի. 4 'ի Հրեշտակի Վիմին՝ զոր Խաշէ կոչեն. 1 'ի վերայ դրան, և 1 'ի Պատանատեղն։ Յոյնք արգելին դնել զպատկեր Լուսաւորչին 'ի վերայ դրան Գերեզմանին, և չինել խաչկալ և պատկեր յիւզարերից սեղանն՝ զոր չէին շինեալ, և կախել 4 կանթեղ 'ի շրջապատ որմն Գերեզմանին, և 1 'ի Պատանատեղին. և ասէին՝ հրովարտակն մեր եկեալ է, և ձերն եւս գրեալ 'ի նոյն միտ, 'ի հասանիլ նորին, որ ինչ գրեալն է՝ զայն թոյլ տամք, և զայլ ոչ ինչ. մուռացարուք զառաջինն՝ աւելի ոչ պատկեր՝ ոչ կանթեղ՝ ոչ սեղան Իւզարերից և ոչ պատարագ անդ այսուհետեւ։ Եւ 'ի ծանուցանելն Հայոց զայսոսիկ առ Դատաւորն, յետս եկաց և նա թէ ընդդէմ հրամանի չկարեմ առնել ինչ, և եթէ կամիք՝ տաց Իլամ, և 'ի դալստեան հրամանին անթերի կատարեմ զոր խնդրէքդ։ Ապա Դատաւորն գաղտագողի կատարէ

զքննութիւնն չյիշելով երբէք 'ի գրի անդ զպակաս տեղիս Հայոց, և տայ Հէօճէմէթ Յունաց՝ զոր առեալ Խոճաքեանն և ճարտարապետն մեկնեցան յԵրուսաղէմ։

Կուսակալն Դամասկոսի ոչ կամեցաւ ինքնին եկանել յայցելութիւն դատաւորին և դալ յԵրուսաղէմ ըստ սովորութեան, այլ հրամայեաց Ապուլօպութ Մէհէմմէտ աղային՝ որ եկեալ եմուտ յԵրուսաղէմ 3000 զօրօք և մեծ հանդիսիւ ('ի 29 Հոկտեմբերի). և զկնի միոյ ամսոյ մեկնեցաւ 'ի Քերրան։ Նախ քան զդալուստ սորա եկն հրաման սատակ 'ի Կուսակալէն Դամասկոսի՝ ձեռամբ Ալի աղայի՝ որ նստէր յԱքքէ՝ առ քաղաքապետն Երուսաղէմի, զկարդեալ ինքն ոստիկան՝ զի հատուցցն Հայք իբրեւ պարգեւ Կուսակալին 400 քսակս արծաթոյ առանց ինչ յայտնելոյ ումեք, և քաղաքապետն ոտիպէր զվանականս, և 'ի յայտնել նոցա զաղքատութիւնս իւրեանց՝ ասէ, եթէ աղքատ էք, ընդէ՞ր բնակիք յայդպիսի վայելուչ տեղիս՝ թողէք զայն այլոց՝ որք կարող են կատարել զիտս Կուսակալին, և յետ բաղմադիմի աղաչանաց և պաղատանաց և կրելոյ զնախատինս՝ հազիւ ուրեմն կարացին տալ ընդունել 300 քսակս միայն Բդեշխին, զի Յոյնք տուեալ էին 500 քսակս, և յետ այնորիկ պահանջէր 18000 դահեկան իբր պաշար պահապան զօրաց քաղաքին, զոր բազում նեղութեամբ կարացին հերքել. և միաբանք դեգերելով 'ի քաղաքն ժողովեցին տոկոսիւք դրամս կրելով զանտանելի տառապանս, և հատուցին զոր պահանջէրն, որոց ամրողջ գումարն եղեւ 194,475 դահեկան, որպէս գրէ զայսոսիկ Թէոդորոս Պատրիարք 'ի նամակին իւրում ողբալով և կոծելով զթշուառ վիճակ ծերութեան իւրոյ. և զի գլխաւորք ազգին սատէին նմա չառաքել փոխանակագիրս 'ի վերայ նոցա, որոյ վասն կայր պաշարեալ 'ի տարակուսանս ('ի 5 Դեկտեմբերի)։

Եփրեմ եպիսկոպոս մեկեալ 'ի սահմանաց Ռուսաց եհաս 'ի Տփղիս՝ և առեալ ընդ իւր զՄկրտիչ վարդապետ Մեղրիկ կոչեցեալ, որ նստէր անդ 'ի գործ Նուիրակութեան Երուսաղէմի, եկն 'ի Ս. Էջմիածին, եւ օծեալ Կաթուղիկոս մեծահանդէս փառօք, նստաւ յԱթոռ Հայրապետութեան ամենայն Հայոց (1810. 'ի 6 Նոյեմբերի)։ Գրեցին առ նա գիր շնորհաւորութեան Ամիրայք Կոստանդինուպօլսոյ, և

Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի, յայտ առնելով զառաքելական իւր և զվանդ Աթոռոյն և սեփհական ժառանգութեանց ազգին յերեսաց ատելութեան Ցունաց։ Ապա խնդրեցին ձեռնտու և օգնական լինիլ Նուիրակացն Երուսաղէմի Հայրապետական կոնդակաւ յորդորելով զրարեպաշտ ժողովուրդն։ Եհաս անդ և Ստեփաննոս վարդապետ Նուիրակն Կարնոյ, և պատմեաց նմա զամենայն հանգամանս Աթոռոյն։ Եւ յետ այնորիկ ձեռնադրեաց զնա յասիճան Եպիսկոպոսութեան յաւուր Ծննդեան Տեառն մերոյ և գրեաց կոնդակ յորդորական բանիւք առ ժողովուրդս Կարնոյ, Կարսայ և Պայեզիտայ վիճակացն, օգնական լինել առատաձեռն ողորմութեամբ Աթոռոյն Երուսաղէմի 'ի սէր մարդասիրելոյ Փրկչին՝ յազատութիւն Տնօրինական Տեղեաց և սեփհական ժառանգութեանց ազգին, և 'ի թեթեւութիւն ծանր պարուց, ուր յետոյ յաւելուսաել «Ստուգութեամբ ասեմ և ոչ ստեմ. զի եթէ ոչ էր Ս. Աթոռս 'ի տարաբաղդ վիճակի՝ որպէս և գիտէք, մեք եւս յօժար էաք ամենայն կարողութեամբ մերով արդիւնամատոյց լինիլ յաղագս այցելութեան Ս. Յակոբայ հրաշալի Աթոռոյն»։ (1811. 'ի 20 Ցունվարի)։

Գրեաց նաեւ գիր օրհնութեան առ ամենայն ազգն Հայոց, որք բնակեալ էին 'ի սահմանս Օսմանեան պետութեան մանաւանդ 'ի Կոստանդինուպոլիս, եւ առաքեաց 'ի ձեռն Գրիգորի Եպիսկոպոսի։ և նորա հասեալ 'ի Կարին՝ արգելաւ անդ՝ զի գլխաւորք ազգին գրեցին առ նա չմըտանել 'ի թագաւորական քաղաքն, զի յեկեղեցիս տակաւին ոչ յիշէին զանուն Եփրեմի, այլ նախորդի նորին սակս պատերազմին Օսմանցւոց ընդ Ռուսս։

Իսկ Թէոդորոս Պատրիարք խնդրեաց 'ի դատաւորէն Երուսաղէմի տալ Իլամ վասն այլայլութեան ձեւոյն Սուրբ Ցարութեան, այլ նա ոչ կամեցաւ, զի յառաջագոյն դաղտնի 'ի Հայոց և 'ի Լատինաց՝ և գիտութեամբ քանի մի այլազգեաց, որք էին 'ի ատորին կարգէ, տուեալ էր Իլամ Ցունաց, թէ չինուածքն ոչ են հակառակ առաջին դրից։ Այլ փոխանակ այնր եւ երիս Իլամս ծանր ծախիւք, մին վասն Ս. Ցարութեան, զի խափանեցին Ցոյնք զզարդս և զարարողութիւնս Հայոց։ Երկրորդ՝ վասն դերեզմանի սուրբ

Աստուածածնի, զի արգելին խապառ զպատարագն, եւ երրորդ՝ վասն Բեթղեհէմի եկեղեցւոյն և Այրին Ծննդեան, զի 'ի գնալ անդ ուխտաւորացն Հայոց՝ ոչ բանային զդրուսն նորա և անարգանօք դարձուցանէին զնոսա յետս։ Խնդրեաց Թէոդորոս նաեւ հանրագիր յայլազգեաց Երուսաղէմի վասն սոցին իրաց, այլ նոքա ոչ առին յանձն, ակն ածեալ 'ի տրոցն Ցունաց։ Ցետ այսր ամենայնի գրեաց Թէոդորոս Պատրիարք առանձին, և միաբանք վանաց առանձին հանրագիր առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս՝ յայտ առնելով զանտանելի նեղութիւնս իւրեանց զոր կրէին յօտարաց, զի մինչեւ ցայն վայր մնացեալ նոցա առանց հրովարտակի, այլազգիք և Ֆէլլահք կողոպտէին զնոսա, զի բաց 'ի սովորական տրոց (դրամոց և ագանելեաց) պահանջէին դարձեալ մուչտակ, ջուխայ կոչիկ և գուլպայ։ Ցետ առնլոյ զսահմանեալ գլխահարկն, առին նաեւ 9500 դահեկան կոտոր կամ մնաս ասելով։ Այլ վասն Կուսակալին՝ Դատաւորին՝ Բաղաքապետին Ցոպէի Մէհէմմէտ Ապուլսպութին և այլոց՝ չիք ինչ ասել, զի ահերեւ ունէին տեսանել 'ի տուսարին՝ զոր առաքէին առ ազգային, զի իւրաքանչիւր ամի չէր բաւական նոցա 500 քսակս արծաթոյ, որոյ վասն խորհէին հանապազ և ոչ կարէին գտանել զելս իրաց։ վասն զի հոգք պատրաստելոյ զտարեկան պարեն վանաց։ գալուստ նոր Դատաւորի և Կուսակալին՝ հատուցումն տեսանեաց պարտուց, և ինքեանք կային 'ի յետին չքաւորութեան։ Գրպթիք յուսահատեալ 'ի Հայոց դարձան առ Ցոյնս, զի ձրի չինեցին ասէին զտեղիս մեր, և վասն մասնաւոր տրոց ինչ պահանջէին զհաչիւ, որ և եւտուն զայն՝ և նոքա լուեցին։ Ասա չերկարելով զբանս՝ առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս զԳաբրիէլ վարդապետ, զի իբրեւ կենդանի գիր պատմեսցէ նոցա զամենայն անցս Երուսաղէմի։ և ապա սաղաչէին տնօրինել զարժանն և ծանուցանել ինքեանց։ զի 'ի սէր Ս. Տեղեաց մնացեալ անդ հասին տառապանաց և վշտաց, վանդեցաւ տունն, աղարտեցաւ պատիւ ազգին։ զի արհամարհեալ իմն էին Հայք յաչս այլազգեաց և այլոց։ Թէպէտ և խորհեցան միաբանք խոյս տալ յԵրուսաղէմէ և դէպ ուղիղ գնալ 'ի Կոստանդինուպոլիս՝ և կամ յայլ ուր,

զի ոչ ոք կարէ այսուհետեւ մնալ ասա ասէին՝ ոչ Մեծաւոր և ոչ Միաբան՝ կամ ջանադիր լինիլ դատանել հնարս աղատութեան, և կամ առաքել զայլս ոմանս 'ի տեղի նոցա, տիրել հայրենի ժառանգութեանց՝ զի մի կորիցէ, ահա մերձեալ է ժամանակ գալստեան Կուսակալին։

Իլամն դատաստանին Հայոց եւ Ցունաց առաքեցին յայնժամ ատենակալք առ Արքայ՝ որպէս գրեցաք։ Եւ 'ի սոյն աւուրս (1811· 'ի 13 Փետրվարի) եհան զայն Արքայ և առաքեաց 'ի Դուռն մեծի դենպետին հանդերձ կայսերական հրովարտակաւ, և եղեւ ուրախութիւն և ցնծութիւն մեծ ազգին Հայոց։ Եւ կաղմեցաւ Ատեան մեծ 'ի Դուռն Դենպետին, ('ի 27 Փետրվարի) ուր ժողովեալ էին ամենայն Նախարարք և գործակալք Տէրութեան մեծ և փոքր · գնացին 'ի կոչն Հայք եւ Ցոյնք, ուր նախ ընթերցան զիլամն, և ապա զհրաման Արքային, որոյ իմաստն էր « Հիմն եդեալ զհրովարտակս նախնեաց իմոց Սէլիմայ Արքայի՝ որ տիրեաց Պաղեստինոյ, եւ ըստ մտաց նոցին հրամայեցի տալ հրովարտակ Հայոց և Ցունաց, զի որպէս տիրէին յառաջագոյն տեղեաց իւրեանց եւ կատարէին զուխտս, նոյնպէս արասցեն և այժմ չնեղելով զիրեարս, զի զերկոսին ազգսն հաւասար ճանաչեմ · զի թէպէտ եւ Ցոյնք հրամանաւ իմով չինեցին զտաճարն, այլ զրաժին ծախուց տեղեացն Հայոց հատուսցեն նոքա Ցունաց, ըստ կէս ծախուց բաժանորդ տեղեաց՝ և զրովանդակ ծախսն սեփհական տեղեաց, և հաստատեսցի այս օրինօք Դատարանի, զի մի յետոյ հակառակեսցին ընդ միմեանս · զի յայտնի լիցի թէ Ցոյնք միայն չինելոյ ունին հրաման, և ոչ բոլորին տիրելոյ, և ամենայն հրովարտակք՝ զորս առեալ են երկոքին ազգքն, ամենեքեան անվաւեր և խափանեալ համարեսցին, և միայն յարգեսցին հրովարտակքն Սէլիմայ, տուեալ 'ի թուին Հիճրէթի ՈՀՓ։ Եւ նոր հրովարտակքն՝ զորս հանդերձեալ եմք տալ երկոցունց, արձանագրեսցին յամենայն Դիւանս, և մի օրինակն պահեսցի 'ի գանձն Արքայի »։

Լուեալ Հայոց զհրաման Արքային՝ խոնարհեալ յերկիր բարեմաղթութեամբ չնորհս կալան բարերար յԱրքայէ։ Դատաւորք հարցին ցՑոյնս, ասացէք՝ ո՞րքան է ծախք

չինութեան տաճարին Ս · Յարութեան, զի տացեն Հայք զրաժինս իւրեանց · պատասխանի ետուն և ասեն՝ մեք ոչ գիտեմք, այլ Պատրիարքն և ազգն մեր · Դատաւորք ասեն՝ ուրեմն ստուգեցէք 'ի նոցանէ և գրով ծանուցէք մեզ, զի տացեն Հայք։ Ասացին Ցոյնք, Հայք միայն ուխտին բաժանորդ են և ոչ տիրելոյն։ Այսոքիկ բանք ծանր թուեցան Ատենակալաց, նմին իրի կշտամբեցին զնոսա և ասեն՝ ապա դուք զի՞նչ իցէք, ո՛չ ապաքէն ընդ նոսին հաւասար ուխտաւորք, զի երկիրն Արքային է, և զերկոսին ազգսդ հաւասար ճանաչէ նա, չունիք տեղի խրոխտալոյ 'ի վերայ միմեանց՝ Ցոյնք անդէն լռեցին, չունելով զայլ պատասխանի։ Հայք ասեն՝ արդարեւ սոյն այս բարեկամք մեր չինեցին զՍ · Յարութիւն և յարդարեցին զտեղիս իւրեանց փառաւոր և վայելուչ, իսկ զտեղիս Հայոց յամենայնի պակաս և խանգարեալ, և ըստ ամենայնի հակառակ առաջին ձեւոյն, առ այս զի՞նչ հրաման առնէք · Դատաւորք ասեն՝ պակաս տեղիքն Հայոց լրասցին, և հակառակ չինուածքն քակեսցին և կարգեսցի Միւվելլա քննել ըստ չինութիւնն և դարձուցանել զայն 'ի ձեւն առաջին։ Եւ 'ի վախճանի ժողովոյն՝ ասաց Տեղապահն, տեսէք զտուսմար 'ի վախճանի ժողովոյն՝ ասաց Տեղապահն, տեսէք զտուսմար ծախուց չինութեան և 'ի միջի ձերում իրաւախոհ լերուք, փակեցաւ Ատեանն։

Հայք ուրախութեամբ եւ զուարթ դիմօք մեկնեցան անտի, իսկ Ցոյնք ընդ հակառակն և խորհրդականք նոցին ժողովեալ խորհէին դատանել զելս իրաց, զի զամօթի հարան ազգովին, և փութացին 'ի դրունս մեծամեծաց շրջել կամելով զվիաս նոցա և զԱրքայի, խոստանալով զմեծ գումարս ոսկւոյ, որչափ և կամեսցին, այլ ոչ ոք համարձամարս ոսկւոյ, որչափ և կամեսցին, այլ ոչ ոք համարձակէր յայնժամ մերձենալ առ նոսա վասն այնպիսի իրաց, երկուցեալ 'ի պատուհասից Արքայի։ Իրրեւ տեսին Հայք թէ ոչ զիջանին Ցոյնք խօսիլ ինչ վասն ծախուց՝ և եղեալ են 'ի մտի չընդունել զայն, կոչեցին զերկուս ոմանս 'ի գլխաւորաց նոցին, և բանս արկեալ խօսեցան քաղցրութեամբ հոգալ և տնօրինել զայն 'ի միջի իւրեանց ըստ հրամանի Արքային · և նոքա ծանուցին զայն խորհրդարանի իւրեանց · սակայն և ոչ պատասխանի տալոյ արժանի վարկան։ Լանց ամսօրեայ ժամանակ, և 'ի Նախարարաց

ոչ ոք իշխէր խօսել ինչ զայսմանէ, զի մի՛ բամբասեսցին իբրեւ զկաշառառուս, զի եթէ 'ի հաճոյս Հայոց խօսէին՝ Յոյնք բամբասէին, և եթէ Յունաց՝ Հայք. և այնպէս մնայր գործն անկատար. զայս ամենայն Փոխանորդ Պօղոս վարդապետն գրեալ ծանոյց յԵրուսաղէմ 'ի բանից Ամիրայից, և պատուէր սատիկ՝ լինիլ նոցա խորհրդապահ, և չհանել երբէք զբանն 'ի վեր մինչ ցվախճան գործոյն, գուցէ Յոյնք պատրաստեսցեն զնիւթ կռուոյ եւ առիթ լիցին խռովութեան, և կամ յայտնապէս զրկեսցեն 'ի սովորական արարողութենէ մերմէ. մի և մի իւիք տայցէք պատճառս 'ի կողմանէ ձերմէ, որպէս չետուք մինչև ցարդ, զի ինքեանք անկան 'ի գուրն զոր փորեցին. զի դատաստան Արքայի արդարութեամբ է, ուրեմն մեք մեզէն մի՛ փոյուք վրէժխնդիր, եւ երեւեսցուք պարտաւոր առաջի Տէրութեան և գայթակղեցուսցուք զնա, այլ յամենայնի խնամով վարիլ ընդ Յոյնս, զի մի առիթ առեալ զիրաւունս մեր՝ յայլ եղանակ ամբաստանեսցեն զմեզ և պարտաւորեսցեն, և այլ սոցին նման բանք.

Եւ յետ այնորիկ մատուցին Հայք զերկուս գիրս աղաչանաց, մին առ Դենպետն մեծ, և երկրորդն առ Տեղապահն (Գայմագամ), և խնդրեցին զհրովարտակն որպէս հրամայեալ էր Արքայի. Եւ 'ի վերայ այսր կազմեցաւ ժողով մեծ քան զառաջինն 'ի Դուռն Դենպետին ('ի 23 Ապրիլի). գնացին անդ ամենայն գլխաւորք Հայոց, եկին և Յոյնք բազմութեամբ մեծաւ, ընդ որս էին Պատրիարքն Երուսաղէմի եւ երեւելի Պոյարք, որք յայլում նուագի չէին եկեալ 'ի ժողովն. Եւ իբրեւ հրաւիրեցան յԱտեան Դատաւորաց՝ Յոյնք խնդրեցին բազմութեամբ մոռանել, որ յայլում պահու չէին համարձակեալ, եւ ըստ ներելոյ Աստենին՝ մտին յերկաքանչիւր կողմանց 15 ոգիք, ընթերցան դարձեալ յականջս նոցա ըստ առաջնոյն զիլամն եւ զհրաման Արքային. Դատաւորք ասեն՝ ահա լուայք զհրաման Արքայի, ուրեմն՝ ըստ բարեհամ կամաց նորին մեծութեան՝ պարտիք առնուլ հրովարտակ, խաղաղիլ և օրհնել զԱրքայն. Խոնարհեցան Հայք եւ գոհութեամբ չնորհս մատուցին և օրհնեցին զԱրքայ. Իսկ Յոյնք լռեալ դադարեցին և ոչ օրհնեցին, ապա ասեն՝ աղգն մեր ոչ

համի ընդ այս, և մատուցեալ բազմակնիք հանրագիր ինչ 'ի դիմաց ազգի իւրեանց՝ ասեն, խնդիր արկանէ ազգն առաջի մեծութեան ձերոյ՝ ընթեռնուլ և իմանալ զայս գիր. Դատաւորք ասեն՝ զի՞նչ է այն, Յոյնք ասեն՝ հանրագիր յաղագէն առ Տէրութիւն ձեր. Դատաւորք՝ զի՞նչ կամիք ասել՝ ասացէք, զի ոչ ընթեռնանի այդ գիր. Յոյնք ասեն՝ ոչ կարեմք խօսիլ՝ այլ ընթերցցի և ծանիցի. Դատաւորք ասեն՝ ո՞չ ապաքէն դուք գրեալ էք զդա, որպէս գրեցիք՝ նոյնպէս բանիւ ասացէք զի իմասցուք. Յոյնք՝ չէ արժան մեզ խօսիլ. Դատաւորք՝ եթէ ոչ կարէք խօսիլ զգրեալն 'ի միջի դորա, ընդէ՞ր բերիք. Քեահեայ Պէյն ասէ՝ եթէ կորուսեալ էր ձեր զդա 'ի ճանապարհի, զի՞նչ ունէիք ասել, այժմ ասացէք՝ զոր ինչ եղեալ էք 'ի մտի, եւ այլ սոցին նման բանք բազում. Դենպետն ասէ բարկութեամբ, ընդէ՞ր տայք խօսիլ դոցա, զի ամենայն ինչ ըստ հրամանի Արքային պարտ է կատարիլ. Ոմանք յԱտենականաց յորդորէին զՅոյնս 'ի հնազանդութիւն, և ոմանք բարկութեամբ սաստէին և յանդիմանէին, խնայեցէք 'ի ձեզ ասէին՝ զի յոժարութեամբ ձերով պատժոյ ցանկայք. Եւ յետ այսքան վիճաբանութեան՝ թեւարկողն Յունաց Իզզէթ Պէյ՝ խորհելով ընդ Դենպետին եւ ընդ Տեղապահին՝ ասէ, արժան է ձեզ զայս խնդիր առանձին տնօրինել և զԱտեանն արձակել, զի փոքու իմն դուցէ մարդ վնասեսցի 'ի Յունաց. Հաճոյ թուեցաւ այս բան Տեղապահին՝ զի ջատագով էր Յունաց, եւ ասէ՝ 'ի վաղիւ անդր Յոյնք զգիրս Օմարայ և Սէլիմայ, նոյնպէս և Հայք զհրովարտակն Սէլիմայ բերցեն առ Բէյիզ Էֆէնտին, և մեր բաղդատեալ զնոսա ընդ միմեանս՝ գտցուք զմիջին ճանապարհն, և կատարեսցուք զհրաման Արքայի. փակեցաւ Ատեանն, Հայք և Յոյնք 'ի միում աւուր տարեալ մատուցին զհրովարտակն առ Բէյիզ Էֆէնտի, եւ Նախարարք երկար քննութեամբ՝ զի մի իսպառ ստոր անկցին Յոյնք՝ որպէս թէ գտեալ լցեն զմիջին ճանապարհն, գրեցին օրինակ ինչ հրովարտակի և առաքեցին առ Արքայ. Իսկ նորա տեսեալ թէ միոք Նախարարաց հաստատեալ է ոչ 'ի կողմն իրաւանց՝ այլ 'ի հաճել զմիտս Յունաց, նմին իրի սրբագրեալ փոխեաց զգիրն և այնպէս դարձոյց յետս,

պատուիրեալ թէ պարտ է 'ի սոյն օրինակ գրել հրովարտակաց։ Եւ ապա ըստ հաճութեան նորին կայսերական կամաց՝ գրեցին զերկուս հրովարտակս, մին Հայոց և միւսն Յունաց, և նկարեալ զթուղթսն արձանագրեցին 'ի Դիւանի անդ, և առաքեցին առ Արքայ (1811· յ2 Յունիսի)։ Զի ձեռամբ իւրով վաւերացուցեալ (Խաթթի Շէրիֆ) դարձուցէ 'ի Դուռն, տալ անտի զմին Հայոց եւ զերկրորդն Յունաց, և բառնալ 'ի միջոյ զվէճն և զխռովութիւնն։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ֆրա Մանուէլ Լատին։ Զայրոյթ Յունաց։ Մկրտիչ վարդապետ։ Մեհեմմէտ Ապուլտուլթ։ Նաւ ուխտաւորաց։ Հրովարտակք Հայոց եւ Յունաց։ Թարգմանութիւն հրովարտակին Հայոց։

ԻՍԿ Լատին կրօնաւորն Ֆրա Մանուէլ՝ որ 'ի ժամանակէ հետէ դեգերէր 'ի Կոստանդինուպոլիս, վերջապէս յաջողեցաւ առնուլ հրովարտակ յԱրքայէ տիրել դարձեալ սեփհական ժառանգութեանց եւ կատարել զսովորական պաշտամունս իւրեանց 'ի տաճարին Ս· Յարութեան, եւ դիմեալ անտի յԱքքէ և 'ի Դամասկոս՝ էառ 'ի Բդեշխից գիր հաստատուն առ Դատաւորս Երուսաղէմի· եւ ապա եկն եմուտ ընդ Փոխանորդին իւրեանց 'ի Ս· Քաղաքն ('ի 20 Մայիսի)· և զկնի աւուրց ետուն ընթեռնուլ Լատինք զհրովարտակն իւրեանց 'ի դատարանի առաջի մեծամեծաց քաղաքին, ուր էին Թարգմանք և Փոխանորդք Հայոց եւ Յունաց։ Եւ ապա գնացին բաղմութեամբ 'ի Ս· Յարութիւն, յանձն արարին Լատինաց զԳերեզմանն Քրիստոսի, հանեալ անտի զԼուսարար նոցին՝ կախեցին զվարագոյրս 'ի ներքս և յարտաքս Գերեզմանին և 'ի միջնէս, որպէս ունէին զնոսա նախ քան զհրդէհն· նոյնպէս կախեցին զ՝ կանթեղս առաջի Գերեզմանին, յարքունի մեծ կամաբէ՝ զորս բարձեալ էին Յոյնք· հաստատեցին զաշտանակս՝ զպատարագն և զայլ հանդէսս՝ զորս կամեցան,

բարձին զաւելորդ կանթեղս և զաշտանակս Յունաց, եւ արգելին պատարագելոյ նոցա 'ի Գերեզմանն, և կացուցին անդ զԼուսարարն իւրեանց։ Սոխպեցին զՀայս կախել ըստ պատկերն իւրեանց 'ի վերայ դրան Գերեզմանին· բայց Հայք ոչ առին յանձն, զի մի տացեն տեղի կռուոյ, այլ սպասէին գալստեան հրովարտակին։ Բարձին նաեւ Լատինք զաշտանակս և զկանթեղս և զխաչքարն զորս եդեալ էին Յոյնք 'ի Խաչ Գիւտն, և եդին զիւրեանցն· զկնի այսր կամեցան եղծանել զգիրս և զպատկերս զոր դրոշմեալ էին Յոյնք 'ի վերայ քարանց Գերեզմանին Քրիստոսի· առնուլ զգերեզմանն Ս· Աստուածածնի, և զեկեղեցին Բեթղեհէմի, այլ արգել զնոսա Կուսակալն Դամասկոսի։ Եւ յետ այնորիկ առին Իլամ 'ի Դատաւորէն և հանրագիր յայլազգեաց ծախեալ ընդ այն 150 քսակս դրամոց, սակս փոխելոյ Յունաց զառաջին ձեւս տաճարին Ս· Յարութեան։ Առեալ զայսոսիկ գրեանս Ֆրա Մանուէլ վերստին մեկնեցաւ յԱքքէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս· գնացին նա և 'ի կողմանէ Յունաց դատիլ անդ, զի Լատինք ընդէին քակել զաւելորդ չինուածս տաճարին, Յոյնք ասէին թէ ոչէ գրեալ 'ի հրովարտակին, այլ միայն յանձնել զտեղիս նոցա, որ և կատարեցաւ· քանզի Լատինք ընդ հրովարտակին իւրեանց ոչ էին բերեալ ոստիկան 'ի Դրանէ եւ յուսադրէին զՀայս, որ յայնժամ սիրով վարէին ընդ նոսա, մինչ երկայնամիտ, զի վախճանն բարի լինի ասէին։

Յոյնք կարի խմն զայրացան 'ի վերայ այսր գործոյ և հանին աղմուկ· երթամք ասէին 'ի քաղաքէ աստի, բայց այլազգիք ոխացեալ ընդ նոսա յաւուրց անտի չինութեան, ունչս առնէին բանից նոցա, ապա գրեցին գիր բողոքոյ և առաքեցին պատգամաւորս առ Կուսակալն, և տեսեալ թէ արհամարհեցան յաչս այլազգեաց, սկսան նախատել թէ արհամարհեցան յաչս այլազգեաց, զի յանիրաւի և ինքնահաւան կամօք յափըշտակեալ էին զիրաւունս այլոց, որոյ վասն գտին ըստ արժանւոյն զպատուհաս իւրեանց։

Մկրտիչ վարդապետ Մեղրիկ կոչեցեալ՝ թողեալ ընդ գործ ժողովելոյ զնպաստ, նստէր յԷջմիածին՝ ակն ունելով առնուլ վկայական յերուսաղէմէ և ձեռնադրիլ եպիսկոպոս· և եղեւ 'ի ծանուցանելն զայս Պօղոս վարդապետի

առ Թէոդորոս Պատրիարք, ծանր թուեցաւ յաչս նորա, և սպառնայր առնուլ զկնդակն Նուիրակութեան 'ի ձեռաց նորին, քանզի ասէր՝ են ասա արք արժանաւորք բազմավաստակք և հաւատարիմք քան զսոյն, այլ 'ի մէջ-նորդելոյ Պօղոսի ձեռնադրեցաւ նա յասորիման Եպիսկոպոսութեան։

Յոյնք վերստին կացուցին զԽուսարարն Խրեանց 'ի Գերեզմանն Քրիստոսի։

Հրդէհ 'ի Կոստանդինուպօլիս 'ի թաղն Պալատու տեւեալ ժամ իրրև 16, յամիսն դարձոյց զբազմաթիւ տունս՝ ընդ որս և 2 զեկեղեցիս Յունաց։ Իսկ Հայոցն զերծաւ բազում աշխատութեամբ և ծախիւք (1812։ 'ի 14 Սեպտեմբերի), և զկնի 5 աւուրց 'ի Դալաթիա Ազապ Դարուսի կոչեցեալ տեղին։ Ժանտ ախտ անդ 'ի մայրաքաղաքին։

Իսկ Մէհէմմէտ աղա Ապուլսուլթ քաղաքապետն Յոսպէի նորոգեաց զմարտկոցն արեւմտեան մերձ 'ի սրբարանն Հայոց (¹), եւ գրաւեալ զտանիս մթերանոցայ՝ լինեաց պարիսպ շուրջանակի ուր զետեղեաց զչրանօթս (²)։ Եւ զնաւամատոյցն Հայոց անդ արար սրճարան։ Եւ 'ի ժամանակս ուխտաւորաց ելից առաջի դրան վանաց զվաճառողս այլ և այլ իրաց, զոր հրովարտակաւ Արքայի արգիլեալ էր, թող զնեղութիւնս ուխտաւորաց տակս մաքսի, զբեռինս վանաց արգելոյր անդ ամսօրեայ ժամանակաւ, և ոչնչացեալ՝ լինէր ինաս մեծ։ Սա յառաջագոյն յատկեալ էր 25 մթերանոցս, 1 խանութ, 2 տուն՝ յոր նստէին ծովային պաշտօնեայք, և մի մեծ տուն արարեալ տեղի Կառավարութեան, որպէս գրեցաք։ Յորմէ պահանջէր Տեսուչ տեղւոյն Ղազար վարդապետ զվարձս երից ամաց 4627 դահեկան, բայց փոխանակ դրամոց լսէր բանս անարգանաց։ Վասն սոցին իրաց բազում անգամ գրեցին

(¹) Զայս արձանն զկնի ժամանակաց մին յայլազգեաց Եուսաղէմի Ալի Մուհիւն կոչեցեալ յափշտակեալ 'ի ձեռաց Հայոց տիրեաց ինքն։ և զկնի իւր ցարդ տիրին սերունդք նորին։ Թէպէտեւ զկնի ժամանակաց յաւուրս Խալրահիմ Փաշայի էշխանին Եգիպտոսի՝ յարուցին վէճս Հայք վասն այնր։ այլ չեղեալ յաջողութիւն։

(²) Զայս տեղի յետոյ 1875 թուին վերստին գնեցին Հայք ծանր գնով 'ի Տէրութենէ։

Թէոդորոս Պատրիարք և Ղազար վարդապետ՝ առ Փոխանորդն Պօղոս վարդապետ, թերեւս կարասցեն ազատել զնոսա 'ի ձեռաց նորին՝ այլ չեղեւ հնար, զի մնաց երկար ժամանակ 'ի ձեռս այլազգեաց։ զորս յետոյ բազում աշխատութեամբ և ծախիւք հազիւ կարացին ազատել 'ի սոյն կարգի էր և տունն յոր նստէր Հանա Տիմեան իբր փոխ Հիւպատոս Անգղիոյ։

Նաւ ուխտաւորացն Հայոց մեկնեալ 'ի Կոստանդինուպօլսոյ՝ և հասեալ 'ի կողմանս Շամ Թարասպուլուս քաղաքի՝ հանդիպեցաւ փոթորկի մեծի, եւ վտանգեալ նաւն անկաւ 'ի ցամաք, և հեղձան 'ի ծով անդր անձինք 36 յուխտաւորաց, և եղեւ վնաս մեծ և առիթ վնասու, սուգ և տրտմութիւն Թէոդորոս Պատրիարքի և միաբանացն Եբուսաղէմի, և վիշտ անհնարին մերձաւորաց և ընտանեաց ծովամոյն եղելոց։ Ի սոյն նաւի էր և մայր Արքունի ճարտարապետ Գրիգոր Գալֆայի՝ Խաթուն անուն, և հիւրընկալ վարդապետ, բայց սոքա անվնաս զերծան 'ի վտանգէ (1813)։

Եհան Արքայ արտաքս զհրովարտակն վաւերացեալ Կայսերական վերնագրով (Խաթթի Շէրիֆ) (1812։ 'ի 13 Դեկտեմբերի) յետ մնալոյ 'ի ներքս ամիս 18, և առաքեաց 'ի Դուռն տալ զմին Հայոց և զմիւսն Յունաց։ Սակայն հրովարտակքն արգելան անդ ամսօրեայ ժամանակաւ, և բազում անցք անցին զգլխով նոցին՝ զի թերեւս խափանեսցին։ Եւ ապա կոչեալ զՀայս առանձին և զՅոյնս առանձին՝ եւտուն զհրովարտակն ('ի 13 Յունվարի) երկոքեանն գրեալ 'ի մի եւ նոյն միտս, զի մին ընթեռնլով՝ իմանի և միւսն։

Ապա ուրախութեամբ օրհնեցին Հայք զԱստուած եւ զԱրքայն արդարասէր և զՏէրութիւն նորին, և զամենայն աշխատաւորս եւ զերախտաւորս աղդին, որոց անունքն գրեալ են 'ի գպրութեան կենաց։ Այս երկոքին հրովարտակքն արձանագրեցան յամենայն Դիւանս Արքունեաց և 'ի դատարանս Կոստանդինուպօլսոյ ըստ հրամանի Արքային։ և ապա զարդարեցին զայն ոսկենկար ծաղկով՝ և հանեալ զօրինակս նորին առաքեցին 'ի հեռաւոր յայլ և այլ տեղիս՝ և զմի պատճէն յԵգիպտոս, յուրախութիւն

գլխաւորաց ազգին, որք 'ի Նեղուբեան տրամակից էին, և թախանձանօք խնդրէին լսել լուր ինչ աւետեաց։ Ահաւասիկ թարգմանութիւն հրովարտակին տուեալ Հայոց։

Ուղղեալ առ Կուսակալն Դամասկոսի՝ առ Դատաւորն Երուսաղէմի, առ գլխաւոր կրօնապետս տաճկաց, և առ ամենայն պաշտօնեայս Տէրութեան։ Ի հասանիլ Կայսերական հրովարտակիս գիտութիւն լիցի՝ բարեյիշատակ նախնին իմ Սուլթան Սէլիմ առաջին, 'ի տիրել իւրում Երուսաղէմի տուեալ է Կայսերական հրովարտակ ազգին Հայոց 'ի թուին Հիճրէթի ९२३, վասն ուխտի տաճարին Ս. Յարութեան, որ ունի օրինակ զայս։

Օգնութեամբ բարձրելոյն Աստուծոյ և առաքելոյ նորին՝ 'ի ২০ Սէֆէր ամսոյ յԵրուսաղէմ 'ի տունն Աստուծոյ եկեալ՝ յաղթանակաւ մտաք 'ի քաղաքն։ Սարգիս Պատրիարքն Հայոց առեալ ընդ իւր զրոլոր միաբանս եկն 'ի հնազանդութիւն եւ 'ի հպատակութիւն ինձ՝ աղաչանօք խնդրեաց զՇնորհս և զպարգևս իմ. տիրել Պատրիարքացն Հայոց ըստ վաղեմի դաշնադրութեան իւրեանց՝ եկեղեցեաց վանօրէից և այլ ուխտատեղեաց թէ 'ի ներքս և թէ յարտաքս, որպէս տիրեալ և ժառանգեալ են 'ի վաղ ժամանակաց։ Եւ ըստ տրամադրութեան դաշնագրոյն մեծին Օմարայ և 'ի ժամանակէ Մէլիք Սալահատտինի տուեալ հրովարտակաց, տիրել և ժառանգել այսոցիկ տեղեաց, որք են՝ 'ի տաճարին Ս. Յարութեան, 'ի Բեթղեհէմ Այրն և գուռն հիւսիսային, մեծ եկեղեցին Ս. Յակոբայ, Սուրբ Հրեշտակապետ, Ս. Փրկիչ, Նապլուս։ Եւ եկեղեցւոյ նոցին հետեւողք և համազգայինք, Հապէշք, Գոլթիք՝ և Ասորիք, տիրել և ժառանգել Պատրիարքացն Հայոց, որք նստին 'ի վանս Ս. Յակոբայ՝ և չլինիլ երբէք ձեռնամուխ յօտարաց։ Ուստի ետու զայս Կայսերական երջանիկ նըշանս եւ հրամայեցի առնել ըստ զօրութեան սորին, զի Պատրիարքունք Հայոց որք նստին 'ի մեծ վանքն Սուրբ Յակոբայ, տիրեսցեն և ժառանգեսցեն ըստ օրինաց իւրեանց թէ 'ի ներքս և թէ յարտաքս եկեղեցեաց, վանօրէից և այլ ուխտատեղեաց, հետեւակ և համազգայնոց իւրեանց, որք են Հապէշք, Գոլթիք և Ասորիք։ Եւ մի ոք յօտարաց հակառակեսցի 'ի անօրինելն զգործս նոցին կար-

գել 'ի պաշտօն և հանել անտի, 'ի պարագայս կալուածական խնդրոց, և 'ի դրաւելն զստացուածս վանականաց Առաջնորդաց, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից և հետեւակաց և ազգին Հայոց, Եկեղեցեաց, Վանօրէից, Խորանաց և այլոց Ուխտատեղեաց՝ հետեւակ և համազգայնոցն իւրեանց, որք տիրեալ եւ ժառանգեալ են 'ի սկզբանէ անտի։ Եւ Պատրիարքունք Հայոց տիրեսցեն եւ ժառանգեսցեն զայսոսիկ տեղիս, որք են՝ 'ի կեդրոնի տաճարին Ս. Յարութեան Գերեզմանն եւ արտաքոյ Երուսաղէմի գերեզմանն Ս. Աստուածածնի, և 'ի Բեթղեհէմ Այրն Մանկեան Քրիստոսի, և զրանալի հիւսիսային դրան։ Եւ 'ի ներքս 'ի դուռն Ս. Յարութեան 2 աշտանակք եւ կանթեղք, եւ 'ի դուռն Գերեզմանին եւ 'ի ներքս կանթեղք մոմեղէնք և խունկ. և 'ի մէջ տաճարին Ս. Յարութեան մոմեղէնք և խունկ. և 'ի մէջ տաճարին Ս. Յարութեան, ըստ օրինաց իւրեանց յելանելն Լուսոյն ընդ հեթեան, ըստ օրինաց իւրեանց յելանելն Լուսոյն ընդ հեթեան տեւակ համազգայինս իւրեանց մտանել 'ի Գերեզմանն և Թափօր առնել շուրջ զնովաւ։ Եւ 'ի ներքս մեծի դրան վերին և ստորին տեղիքն, և երկու պատուհանքն, խորանք և ուխտատեղիք 'ի ներքս անդ՝ և ջրհորն, և 'ի գաւթի տաճարին Ս. Յարութեան եկեղեցին Ս. Յովհաննու, եւ յարտաքս մերձ եկեղեցւոյն Ս. Յակոբայ, Ս. Փրկիչ, եւ այլ վանօրայք, գերեզմանատունք, սենեակք և հիւրանոցք 'ի Բեթղեհէմ՝ մերձ յԱյրն Մանկեան, այգիք՝ պարտէզք ձիթենիք, և այս ամենայն եկեղեցիք վանօրայք, խորանք ուխտատեղիք, և հետեւակ համազգայինք, և այլ ստացուածք և նախնական պարագայք նոցին, որպէս սահմանեալ է։ Եւ մի ոք երբէք 'ի պաշտօնէից Տէրութեանս և կամ յայլոց միջամուխ լեալ նեղեսցէ զուխտաւորս Հայոց որք գնան 'ի Յորդանան գետ, 'ի տօնավաճառս և յայլ տաճարս և յուխտատեղիս, առնել ըստ մտաց կայսերական երջանիկ նշանիս, որպէս գրեցաւ 'ի վեր անդր, եւ մի թողուլ զոք յօտար ազգաց լինիլ միջամուխ և նեղել զնոսա։ Վասն այսորիկ մի ոք 'ի Կայսերական տոհմէս կամ 'ի Նախարարաց՝ և կամ առհասարակ ամենայն պաշտօնէից Տէրութեանս 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս մի և մի իւիք յինչ և իցէ պատճառս իրաց միջամտեալ հակառակեսցին և փոփոխեալ այլայլեսցեն, և եթէ ոք

ձեռնամուխ լեալ հակառակեցի և փոխոխեալ այլայլեսցէ՝ 'ի կարգէ ամբարշտաց և 'ի թուոյ մեղաւորաց համարեսցի։ Որք միանգամ տեսանեն զկայսերական վճիռս զարդարեալ տիեզերահռչակ սեաւ Թուղթայիւ, զմիտս և զնշանակութիւնս նորին ստոյգ՝ և զզօրութիւն նորին ճշմարիտ գիտասցեն, և պատուական նշանին հաւատասցեն։

Նմանապէս 'ի Կայսերական հրովարտակին բարեյիշատակ նախնոյն իմոյ Սէլիմայ Արքայի՝ զոր տուեալ է աղգին Յունաց, յորում բացայայտ գրեալ են ուխտատեղիք եւ օթեւանք նոցին՝ այսպէս։ Օգնութեամբ բարձրելոյն Աստուծոյ եկեալ 'ի լեառն Երուսաղէմի 'ի տունն Աստուծոյ 'ի ՀՕ Սէֆէր ամսոյ յաղթանակաւ մտաք 'ի քաղաքն։ Աթալիա Պատրիարքն Յունաց հանդերձ բոլոր միաբանութեամբ իւրով 'ի հպատակութիւն և 'ի հնազանդութիւն եկեալ աղաչաւոր եղեն ինձ՝ տիրել և ժառանգել Պատրիարքին զվաղէմի զեկեղեցիս զվանօրայս և զուխտատեղիս՝ թէ 'ի ներքս և թէ յարտաքս, որպէս տիրեալ են յառաջագոյն։ Եւ յաղագս տիրելոյ և ժառանգելոյ ըստ տրամադրութեան դաշնադրոյն մեծին Օսմարայ և հրովարտակաց առաջին Թագաւորաց, հրամայեցի ըստ զօրութեան հրովարտակիս տիրել և ժառանգել։ որք են՝ Պատանատեղն Քրիստոսի յանդիման դրան տաճարին Ս. Յարութեան, մշտնջենաւոր 2 աշտանակք և կանթեղք, և 'ի նոյն տեղւոջ Պատրիարքութեան իւրոյ յատկացեալ վերին և ստորին կողմն և կամարաց Գողգոթայի (այժմ 2 կամարքն 'ի ձեռս Լատինաց)։ Վերին և ստորին կողմն եօթն կամարաց Ս. Կուսին (վերին յարկն այժմ ամբողջ սերիական Լատինաց)։ Կեդրոն մեծի եկեղեցւոյն եւ Գերեզմանն և ընդ նմին ամենայն ուխտատեղիք նոցա։ Եւ 'ի գաւթի տաճարին Ս. Յարութեան երեք եկեղեցիքն, և յանդիման նորին Ս. Յովհաննէս եկեղեցին (յարդ 'ի ձեռս Հայոց, և այս 'ի նշան նենգութեան Յունաց)։ Եւ Պատրիարքական եկեղեցին Հեղինեայ, Ս. Նիկողոս, Սրբուհի, Ս. Աֆթեմիոս, Ս. Կատարինէ, Ս. Միքայէլ, Ս. Գէորգ, Ս. Յովհաննէս և պարտէզ, Ս. Վասիլ, Ս. Նիկողոս, Ս. Տիմիդրի, Ս. Մարիամ, և այլ Ս. Յովհաննէս եկեղեցի, Ս. Յակոբ վանք Վրաց, Ս. Գէորգ եկեղեցի՝ և արտաքոյ Երուսաղէմի գերեզմանն

Ս. Աստուածածնի, Ս. Սիոն, Բանտն Քրիստոսի (Ճենանիտունն, սովաւ կամին ասել զվանքն Ս. Փրկչի, այժմ 'ի ձեռս Հայոց)։ Ի դաշտին գերեզմանատունն։ Խաչավանքն Վրաց։ ('ի սմին ժամանակի Վրք տակաւին էին յԵրուսաղէմ), Ս. Սիոն, Ս. Եղիսայ վանք Վրաց, այգի և ճիթենիք։ վանք Ս. Յակոբայ Վրաց առ դրան Ս. Յարութեան։ Պէյթճալայ գիւղն Ս. Գէորգ, 'ի Բեթղեհէմ Այրն Ծննդեան Քրիստոսի, և յեկեղեցւոջ բանալիք հիւսիսային եւ հարաւային դրանց, երկու կտոր պարտէզ շուրջ զնոսա, (այժմ մի մասն 'ի ձեռս Լատինաց)։ ճիթենիք, գերեզմանատունն, եկեղեցիք եւ վանօրայք յայլ գիւղս։ Եւ Պատրիարքութեան հետեւողք Վրք, Հայէշք, և Սրպք, և այլք որք լեալ են վագի, Առաջնորդք եւ Վարդապետք։ Դրաւեսցէ զինչս վանքանեալ Առաջնորդաց, Եպիսկոպոսաց և Վարդապետաց, բոլորովին ազատ լիցին 'ի ՀՓԻԼԷ Արաբացւոց 'ի դուռն Երուսաղէմի 'ի Յորդանան 'ի նաւամատոյցս 'ի քննութեան մաքսատեսաց՝ 'ի մաքսէ և 'ի բաժէ՝ և յայլ պաշտօնէից հարկէ՝ զնա մի որ յօտար ազգաց միջամտեալ նեղեսցէ՝ ըստ մտաց հրովարտակիս, որպէս գրեցաւ, եւ Պատրիարքն Յունաց առաջին լիցի 'ի միւս ազգաց ըստ զօրութեան դաշնադրոյն մեծին Օսմարայ և հրովարտակաց առաջին Թագաւորաց։ Եւ ես ես ետու և հրամայեցի որ այսուհետեւ յաջորդք իմ և կամ մեծամեծ Նախարարք և տահասարակ բովանդակ պաշտօնեայք Տէրութեանս 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, եթէ որ կամիցի 'ի սոցանէ եղծանել՝ Աստուածային բարկութեան հանդիպեսցի, զայս Կայսերական վճիռս թողեալ 'ի ձեռս նորա պատուական նշանիս հաւատասցեն։

Զի թէպէտեւ պարտ էր երկոցունց ազգաց վարել ըստ մտաց երկուց հրովարտակաց և զզոյշ լինել զընդդէմն գործելոյ, այլ սակս ուխտի տաճարին Ս. Յարութեան խռովութիւն ծագելով 'ի մէջ երկուց ազգաց, տուեալ են հրովարտակս հակառակ իմաստիւք երկուց կողմանց, եւ յառաջագոյն 'ի պատճառս այրման տաճարին, խռովութիւն ծագեցաւ 'ի մէջ երկուց ազգաց, և յաղագս լուծման խնդրոյն այնորիկ՝ յառաջագոյն Կայսերական հրո-

վարտակաւ և գիտութեամբ մեծի Դենպետին դատաւոր կարգեցան, Բումէլի Գաղասքէրի Միր Իզզէթ, եւ նոյն պատուով Խալիլ՝ և Անատոլի Գաղասքէրի Մէհէմմէտ, և ընդ նոսին Դենպետն մեծ Տիւրրի Զատէ Ապտուլլահ յառաջին Դենպետութեան իւրում. նոյնպէս 'ի պաշտօնէից Արքունի դրան վերատեսուչ փողերանոցի Ահմէտ Շաքիր Փաշա, և մեծ Նախիպն Զէյն էլ Ապիտին, Ֆէթվա էմինի Առպանի Զատէ Մէհէմմէտ Բաշիտ, Գուլէլի Սիւլէյման, եւ յարքունուստ՝ Մուստաֆա Մաղհար, Իպրահիմ Նուիրակապետն Արքայի, Պէյլիքճի Ահմէտ Ագիֆ, Ամէտճի Մէհէմմէտ, և քսակատարք Դիւանաց։ Սոքա ամենեքեան 'ի ժողովի գումարեալ, սակայն 'ի նմին ժամանակի չեղեւ հնար բառնալ զխռովութիւնս երկուց ազգաց և վերջապէս 'ի ժամանակի Դենպետութեան Օմար Խուլուսի էֆէնտեայ վասն խնդրոցս այսոցիկ կազմեցաւ ժողով առաջի Երեսփոխանաց երկուց ազգաց. Երեսփոխանք Հայոց՝ Փոխանորդն Երուսաղէմի Պողոս վարդապետ Գրիգորեան, Դիոնէսիոս վարդապետ Կարապետեան, Բեահէայ Կարապետ Գասպարեան, Յովհաննէս Երկանեան, Գրիգոր Գէորգեան, Գասպար Գէորգեան, Անտոն Գլճեան, Ճանիկ Սիմոնեան, Խաչատուր Մարտիրոսեան, Մանուէլ Մկրտչեան։

Երեսփոխանք Յունաց, Երասիմոս Առաջնորդ Թեսաղոնիկեայ, Աթանասիոս՝ Նիկոմիդեայ, Աթանասիոս Բեահէայ Պատրիարքին Երուսաղէմի, Կեսարիոս գանձապետ նորին, Տիմոթէոս Մանոլեան, Ռումելի Գարամեան, Եօրգի Սուլիպիեան, Խրիսթոֆ Մուրատեան, Անանիայ Բիրեաքոյեան, Անիսսի Պարաչքոյեան, Թէոդոս Խատիմատեան, Բանայոտ Թոսորեան. սոքա ամենեքեան էին 'ի ժողովի։ Հայք ամբաստան լինէին զազգէն Յունաց, որպէս յառաջագոյն գիր աղաչանաց մատուցեալ առ Թագաւորութիւնս իմ աղաչանօք խնդրեալ էին։ Հետեւելով հրովարտակացն Սէլիմայ Արքային տուեալ 'ի թուին Հիճրէթի ९२३ 'ի ժամանակս տիրելոյ Ս. Երկրին այնորիկ, և դաշնագրոյն մեծին Օմարայ տուեալ 'ի ձեռս Յունաց։ Ընտրեցին հիմն դնել զերկոսին հրովարտակն տուեալ Հայոց և Յունաց, որպէս պարզ և բացայայտ գրեալ են 'ի նոսին. 'ի մեծ եկեղեցին Ս. Յարութեան երկոքին ազգքն ըստ օրինաց իւրեանց բաժա-

նորդութեամբ՝ պայմանաւ առաջնութեան Պատրիարքին Յունաց, և 'ի տեղիս արտաքոյ նորին՝ որք յականէ եւ յանուանէ բացորոշ գրեցան, անկախութեամբ և առանց խռովութեան կատարել զուխտս, զի մի կողմն ճշմարիտ խոստովանութեամբ ստոյգ համարեցաւ զհրովարտակս միւսոյ կողման և ընկալաւ։ Եւ առաջին 'ի խնդրոց խռովութեան էր, սեփհական և բնակութեան տեղիքն 'ի Սուրբ Յարութիւն, և այնորիկ ևս 'ի հրովարտակս երկուց կողմանց յականէ յանուանէ գրեալ են. համեցան երկաքանչիւր ազգ սեփհականութեան և անկախութեան տեղեաց 'ի տաճարին Ս. Յարութեան ըստ նախնի պայմանաց զորս ունէին յաւուրց անտի Սուլթան Սէլիմայ։ Եւ երկրորդն 'ի խնդրոց խռովութեան, Հայք պնդէին թէ 'ի սկզբանէ անտի Հապէշք, Ղպտիք և Ասորիք՝ մեզ հետեւողք և համազգային սահմանեալ են, Յոյնք ընդդէմ հրովարտակին հակառակեալ՝ թէ ինքեանց են հետեւող. սակայն հետեւակ յորջորջեալ ազգքն՝ նայելով յուխտաւորութիւնս եւ 'ի բացականութիւնս նոցին 'ի ժողովոյ, գրեցաւ հրաման առ Դատաւորն Երուսաղէմի՝ ստուգել զխնդիրն 'ի տեղւոջ իւրում. որպիսի եղանակաւ լեալ իցէ առաջին սովորութիւնն՝ այնպէս առնել, որոյ վասն հարկ եղեւ յանձն առնել 'ի տեղի իւրում, և այս ծանուցաւ երկուց կողմանց։ Եւ վերջին խնդիրն էր՝ զի խնդրէին Հայք 'ի տաճարին Ս. Յարութեան, որ նախ քան զայս այրեցաւ, զսեփհական և զբաժանորդ տեղիս, զորս յայտնապէս ունէին, ըստ բաժանորդ տեղիս բաժանորդութեամբ եւ զսեփհական տեղիս անկախութեամբ չինել։ Սակայն վասն նորոգութեան և չինութեան ոչ ոք ունի իրաւունս լինել ձեռնամուխ, այլ միայն Թագաւորական բարձր կամեցողութեան սեփհական է, և ըստ ներելոյ Շէրիի օրինաց, յորժամ նորոգութեան պէտս ունի ըստ առաջին ձեւոյն, առ որ կամիմ 'ի հպատակաց Տէրութեանս՝ նմա յանձն առնելով կատարի. ուստի մի ոք համարձակեսցի ամբաստան լինել վասն չինութեան, զի յայսմ նուազի չինութիւնն տուաւ ազգին Յունաց, և ընդհանուր նորոգութիւնն նոցին ձեռամբ եղեւ, սակայն երկու ազգք չունին մրցումն և ըստ յամառութիւն տիրելոյ գրաւելոյ զիւրաքանչիւր սեփհա-

կան տեղիս և կառուցոյ։ Ի սկզբանէ անտի և ըստ մտաց հրովարտակաց Սէլիմայ Արքայի, երկու ազգք ընկերովի տեղիս՝ ընկերութեամբ ուխտ առնել՝ եւ բնակութեան տեղիքն իւրաքանչիւր ազգ անկախութեամբ ժառանգել. վերջապէս յայտնի ծանուցաւ երկուց կողմանց վարիլ ըստ իմաստից և զօրութեան հրովարտակաց Սէլիմայ Արքայի. և երեսփոխանք իւրաքանչիւր ազգաց հաճեցան և ընկալան յանձն առին և խոստացան՝ առնել այնպէս. և այսպէս բոլորովին բարձաւ խռովութիւնն և տեղի ետ ատելութիւնն, և Դենպետն միաբանութեամբ արար Իլամ եւ մատոյց Թագաւորութեանս իմոյ, ըստ զօրութեան գրեալ Իլամին, եւ զհրովարտակս բարեյիշատակ նախնոյն իմոյ Սէլիմայ Արքայի տուեալ երկուց ազգաց հանդերձ ոճովն օրինակեալ արձանացան, զհաստատութիւն նոցին, զհանգամանս դատաստանին և զիմաստս Իլամին բովանդակելով՝ տուաւ երկուց ազգաց հրովարտակ, և ապա արձանագրեցաւ յամենայն Դիւանս և 'ի Դատարանս, և կայսերական հրամանաւ նշանակեցաւ 'ի վերին կողմն արձանագրութեանց սակս գործադրութեանց նոցին, և հրամայեցաւ գործել և առնել ըստ մտաց Իլամին Դատաւորաց, և զգուշանալ 'ի հակառակէ նորին։ Որոյ վասն եւ 'ի կայսերական Սենեկէս պատուական հրովարտակս եւ տուաւ 'ի ձեռս ազգին Հայոց։ Սրդ՝ զհրովարտակս Սէլիմայ Արքայի հիմն ընտրելով՝ եւ գործելոյ ըստ մտաց Իլամին, երկուքին ազգք 'ի տաճարին Ս. Յարութեան սեփհական տեղիս անկախութեամբ՝ եւ ընկերովի տեղիս ընկերութեամբ, 'ի սկզբանէ անտի որպիսի եղանակաւ ուխտ արարեալ լցեն՝ ըստ առաջնոյն ուխտ արասցեն և բնակեսցին, եւ վասն սոցին իրաց մի' լիցի երբէք խռովութիւն 'ի միջի իրերաց 'ի պատճառս որ և իցէ իրաց, յինչ և իցէ ժամանակս, և եթէ լիցի, երբէք ունկնդրութիւն մի' լիցի։ Սակս գործադրութեան և կամօք բարձրելոյն Աստուծոյ՝ Իլամին այնորիկ հարկ էր Կայսերական ազգու հրամանիս, 'ի հաստատութիւն դաշնագրոյն Օսմարայ տուեալ Յունաց, և հրովարտակին Սէլիմայ, և զիլամն այն բովանդակելով։ Նմանապէս ըստ իմաստից հրովարտակիս այսմիկ՝ տուաւ այլ հրովարտակ 'ի ձեռս ազգին Յունաց։ Եւ յետ այնորիկ

զպատմէնս նոցին արձանագրեալ հաստատեցաւ 'ի Դիւանս և 'ի Դատարանս։ Դուք որ վէզիր, Դատաւոր, Բաղաքապետ, և այլք էք, 'ի ժամանելն և 'ի գիտելն ձեր՝ արձանագրեսջիք 'ի Դատարանի և տաջիք 'ի ձեռս ազգին Հայոց. զի զհրովարտակս Սէլիմայ տուեալ երկուց ազգաց հիմն ընտրելով ըստ զօրութեան Իլամին առնել և մշանջենաւորապէս գործադրել, զգուշութեամբ խնամ կալջիք, զի և ոչ 'ի միւսմ ժամանակի հակառակն երեւեսցի և մի համարձակեսջիք Կայսերական հրովարտակիս ընդդէմ գործելոյ. հրամայեցի՝ 'ի հասանիլ սորին հնազանդիլ և հետեւիլ՝ որպէս գրեցաւ 'ի վեր անդր, գործադրութեան խնամ կալջիք, եւ հակառակելոյ կարի զգոյշ լինիջիք. (١٢٢٨, 'ի \ Մուհարրէմի)։

Գ Լ Ո Ւ Խ Ի Է.

Որոշումն գործակալաց Դրան վասն խնդրոյն Հայոց գնալ նոցա Ներսուանզէմ Բանք Նուրի Էֆենտայ և Կուսակալին Դամասկոսի։ Գործ Դատաւորին։ Ժողով 'ի Դատարանի երկիցս։ Փնտռութիւն Հաղեշոյ՝ ընդդիմութիւն Դատաւորին։ Ժողով 'ի Ս. Յարութիւն։

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ զկնի տալոյ Արքային Մահմուտայ զհրովարտակս երկուց ազգաց, որոշեաց ըստ խնդրոյ Հայոց, իբր դատաւոր գործոյն (միւֆթիլոյ) հարամէյն միւֆթիթիլի Պաշմագճի զատէ Զէքի Էֆենտի. բայց երթալ նորին անկարելի գոլով, որոշեցաւ փոխանորդաբար 'ի տեղի նորա Սատմպօլ Դատրոը վարդայէ քեաթիպլի Մէհէմմէտ Նուրի Էֆենտի. Բաշիտ Մուստաֆա Էֆենտի Խօճաքեան. Մէհէմմէտ Էֆենտի ճարտարապետ, հրովարտակաւ Արքայի երթալ յԵրուսաղէմ գործադրել զհրովարտակն Հայոց. արձանագրել 'ի դատարանի, որոշել զբաժանորդ և զսեփհական տեղիս, քննել ընդնորոգեալ և զշինեալ տեղիս 'ի Յունաց, ստուգել զհետեւակ զերիս ազգս, թէ որոյ ազգի են հետեւողք, զի Յոյնք սնդէին թէ մեր են։

Իսկ զՀրովարտակն որ տուաւ երկուց ազգաց յառաջին դատին յաւուրս Էմին Պէյի, գրեալ 'ի Թուին Հիճրէթի ՌՄԵ, յետս պահանջեցին 'ի Դրանէ. Հայք ունելով զայն առ ինքեանս, ետուն անմիջապէս, իսկ Յոյնք զպատճէնն միայն. զի իսկն յերուսաղէմ առաքեցաք ասէին, որոյ վասն տուաւ հրովարտակ մի եւս Խօճաքեանին առնուլ զայն 'ի ձեռաց Յունաց, եւ ջնջել զարձանագրութիւնս նորին 'ի դատարանաց Երուսաղէմի, Դամասկոսի և այլ տեղեաց, և թողուլ անգործադրելի եւ խափանեալ, որպէս արարեալ էին 'ի Կոստանդինուպօլիս։

Գործակալք վասն ծախուց ճանապարհի ազգ արարին Հայոց և Յունաց՝ ժողովիլ ետուն Զէքի Էֆէնտեայ, եւ տնօրինել զայն 'ի միասին. սակայն Յոյնք ոչ ետուն հաճութիւն վասն գնալոյ նոցա յերուսաղէմ, ուստի գործակալք գրով ծանուցին 'ի Դուռն վասն ծախուց, և 'ի ձեռն Թարգմանին (տիվան թէրճիմանի) ազգ արարին Հայոց տալ նոցա 12,500 դահեկան. նոյնչափ եւս Յոյնք, այլ նոքա հեստեցին եւ ոչ բնաւ ճանաչել կամէին զմ-ոպէէն և զայլսն։ Եւ 'ի հարցանել նոցա Նուրի Էֆէնտեայ, թէ ո՞յք ոմանք ունին գնալ ընդ մեզ յերուսաղէմ. ետուն պատասխանի, ոչ ոք, զի ունիմք սահն անդ զարս՝ որք կարող են խօսիլ ընդ ձեզ։ Սակայն Թէոդորոս Պատրիարք եւ գործակալ Եպիսկոպոսունք թախանձէին զգլխաւորս ազգին, առաքել ընդ հրովարտակին զՊողոս և զԻիոնէսիոս վարդապետս և զոմանս 'ի գլխաւորաց ազգին, զի մի ինչ դժուարութիւն ելցէ ընդ առաջ գործոյն 'ի նենգութենէ Յունաց և յայլազգեաց տեղւոյն. քննել և խմանալ նաեւ զել և զմուտ Աթոռոյն և զգործս բռնաւորաց, ապա ըստ այնմ փոյթ տանել թեթեւութեան պարտուց և ազատութեան Աթոռոյն. զի մի յետոյ զրպարտութիւնս ինչ կըրեսցեն կառավարիչքն։ Այսոքիկ բանք կարի պատշամ թուեցան առաջի Ամիրայիս, այլ ոչ ոք 'ի նոցանէ յանձն առ երթալ յերուսաղէմ, պատճառելով իւրաքանչիւր ոք զգործս իւր. որոշեցին զՍտեփաննոս Եպիսկոպոս՝ եկեալ 'ի Նուիրակութենէ Կարնոյ՝ եւ զԻիոնէսիոս վարդապետ Դարթալցի, որ եկաց անդ 'ի մայրաքաղաքին ամս իբրեւ 4, վաստակեալ ընդ այլոց 'ի գործս Աթոռոյն, և գտեալ

ընդ երեսփոխանաց 'ի դատին. հմուտ և տեղեակ բովանդակ գործոց եւ խորհրդոց Դատաւորաց, լեալ ախանատես, եւ զԱդամ Գալֆիա յազգէն Հայոց 7 գործաւորք. զի ըստ արհեստին իւրոյ զգուշացի 'ի քննութեան եւ 'ի չափելն եւ հոգալ զայլ կարեւոր պէտս։ Յետ այնորիկ պատրաստեալ սոցա զամենայն ինչ եւ առեալ զՀրովարտակն՝ մտին 'ի Նաւ (1813. 'ի 22 Մարտի). և յետ երկուց աւուրց՝ ելին յայլ նաւ գործակալք Տէրութեանն սպասաւորք և պարագայիւք իւրեանց եւ նաւեալ յաջողակ հողմով հասին 'ի Կիպրոս ('ի 11 Ապրիլի). և 'ի վաղուց կալեալ վարդապետաց զայլ նաւ՝ մտին անդ, առին ընդ ինքեանս զսպասաւորս և զկարասիս Նուրի Էֆէնտեայ, և նաւեալ անտի հասին 'ի Յոպպէ, և անտի ելին յերուսաղէմ ('ի 15 Ապրիլի)։ Իսկ գործակալքն Արքունի հասեալ 'ի Պէրութ, գնացին 'ի Դամասկոս տեսանել զկուսակալն, արձանագրել զՀրովարտակն Հայոց, զորոյ պատճէնն ունէին ընդ ինքեանս, առնուլ գիր հրամանի 'ի Կուսակալէն, և հոգալ զայլ կարեւոր իրս։

Փոխանորդ Պողոս վարդապետ և այլ թեւակիցք նորին 'ի Կոստանդինուպօլիս, յորժամ խմացան թէ չէ գրեալ 'ի հրովարտակն ոստիկանին չինել զպակաս տեղիսն Հայոց, մատուցին զերկուս ազերսագիրս, մին 'ի Դուռն և միւսն առ Դենպետն. զի 'ի լրումն ածցեն զթերի մնացեալ տեղիս Հայոց, սակայն ոչ ետուն հրաման. զի յանձն արարեալ էին զայն 'ի քննութիւն Գործակալաց, եւ յետ այնր հոգալ զպակասորդն. առ այս լռեալ Հայոց սպասէին դալստեան Իլամին յերուսաղէմ։

Յետ հասանելոյ վարդապետաց 'ի Ս. Աթոռն՝ մատուցին զՀրովարտակն Արքայի առ Թէոդորոս Պատրիարք, առ որ ժողովեալ էին Եպիսկոպոսունք եւ Վարդապետք, և ուրախացեալ առ ժամն՝ օրհնեցին զԱրքայն և զվաստակաւորս գործոյն։ Բայց առաջի կայր նոցա դժուարութիւն մեծ սակս գործադրութեան հրովարտակին. և կոչեալ զքաղաքապետն ցուցին նմա զայն առանձին և խօսեցան բազում ինչ՝ փոյթ տանել գործադրութեան հրովարտակին, եւ զմի պատճէնն առաքեցին առ Դատաւոր քաղաքին, որ 'ի նոյն աւուրս եկեալ էր յերուսաղէմ, և

նա յուսադրեաց զնոսա լինել անկասկած, զի պատուէր ունիմ ասէր՝ 'ի Կոստանդինուպօլսոյ. գնացին եւ առ այլ մեծամեծս քաղաքին շահել զմիտս նոցա։

Այլ Ցոյնք յառաջագոյն որսացեալ էին 'ի կողմն իւրեանց զկամս Դատաւորին 'ի ձեռն հանդերձապետի (Քիւրքճի Պաշի) նորին որ էր ազգաւ Ցոյն. նոյնպէս զքաղաքապետն և զայլ երեւելի այլազգիս։ Իսկ Արքունի պաշտօնեայք կատարեալ զգործս իւրեանց 'ի Դամասկոս՝ մեկնեցան անտի, եւ հասեալ յԵրուսաղէմ իջին արտաքոյ քաղաքին 'ի տեղի ինչ, և գրեցին առ քաղաքապետն պատրաստել տեղի իջեւանի Խօճաքեանին և դաբուհիլէր քեահեսի Մէհէմմէտ Պէյին, որ կարգեալ էր ոստիկան 'ի կողմանէ Կուսակալին. զի Մուվէլլայ Վէֆիկի և Մէյմար Գուշ ֆուէն եղեալ էին 'ի մտի իջեւանիլ 'ի տուն Նախրպին. այլ քաղաքապետն պատուէր արձակեաց 'ի վանս Հայոց պատրաստել տեղի եկելոց եւ նոքա արարին պատասխանի, թէ սոքա կարգեալ են գործակալ 'ի Տէրութենէ 'ի վերայ երկուց ազգաց. մեզ միայն չէ անկ հոգալ զնոսա, մանաւանդ թէ նոքա ոչ առնուն յանձն իջեւանիլ 'ի վանս քրիստոնէից. եւ Ցոյնք խսպառ մերժեցին զնոսա, զի 'ի Կոստանդինուպօլիս ազգայինք նոցա ոչ ունէին առ այդ հաճութիւն։ Գնացին ընդ առաջ նոցա Դիոնէսիոս վարդապետ եւ դանձապետ քաղաքապետին. և 'ի լինել բանից, ասեն. ոչ է պարտ պաշտօնէից Տէրութեան իջեւանիլ 'ի վանս օտարաց, եթէ փոյթ իցէ քաղաքապետին պատրաստեսցէ մեզ տեղի. եւ ապա եկեալ բազմութեամբ մտին 'ի քաղաքն ('ի 10 Մայիսի)։ Մուվէլլայն և Ճարտարապետն պարագայիւք իւրեանց օթեցան 'ի տուն Նախրպին, որպէս ասացաք. Խօճաքեանն յայլ տեղի, և ոստիկան Կուսակալին առ քաղաքապետն. և 'ի վաղիւն 18 սպասաւորօք եւ գրաստուք եկեալ եմուտ 'ի վանս Հայոց, զի առաջին տեղին աւերակ էր, և նոցա սիրով ընկալեալ հոգային զպէտս նոցա։ Խօճաքեանն ազգ արար քաղաքապետին հոգալ զպէտս իւր եւ իւրոցն ամենայն պարագայիւք 'ի վանս Հայոց և Ցուսնաց. զի 'ի վերայ նոցա ոստիկան կարգեալ էմք ասէ 'ի Տէրութենէ։ Ի մերժելն Ցուսնաց, ոստիկէր քաղաքապետն զՀայս, որոց հարկ եղեւ նորոգել զիջեւանս

նորին՝ և նոր 'ի նորոյ զարդարել ամենայն պիտոյիւք, եւ պատրաստել զնա իբրեւ օթեւան Կուսակալի, և սահմանել յամիսն 2000 դահեկան 'ի պէտս խոհանոցի. նոյնպէս 1900 դահեկան Մուվէլլային և Ճարտարապետին՝ ակն ունելով թերեւս օգնութիւն գտանել 'ի նոցանէ։ Յետ այնորիկ՝ պատմէր Նուրի Էֆէնտի առանձին Պատրիարքին և միաբանացն Հայոց զանցս Դամասկոսի. թէ ո՞րպէս չյաժարէր Կուսակալն խմանալ զմիտս հրովարտակին, և հանապազ երկրորդէր, թէ զարմանալի իմն է գործ Տէրութեան. զի յառաջագոյն Ցուսնաց եւ հրովարտակ, այժմ Հայոց. և զկնի աւուրց ինչ դարձեալ Ցուսնաց 'ի թախանձելն նոցա։ Առ այս տայ պատասխանի Նուրի. թագաւորն 'ի միջոցի չորից ամաց եւ դատ վարել 'ի 12 նիստս եւ ունկնդիր եղեւ. և յետ այնորիկ հրովարտակօք առաքեաց զմեզ 'ի կողմանս յայսոսիկ. իսկ դուք ո՞րպիսի եղանակաւ կամիք խմանալ զմիտս նոցին. և որպէս վայելէ մեծի իշխանութեան ձերոյ, գրով (պույրիլդի) եւ ոստիկանաւ առաքեցէք զմեզ յԵրուսաղէմ և զհրովարտակն տուք արձանագրել ասա 'ի Դատարանի, եւ ընդել զարձանագրութիւնն առաջին հրովարտակին տուեալ 'ի թուին ١٢٢٤ և նշանակելով զայն 'ի հրամանագրի ձերում. ապա թէ ոչ, տուք մեզ պատասխանի՝ Իլամ և նամակ. զի մեք դարձցուք առ Արքայն որ առաքեացն զմեզ։ Զարմացեալ Կուսակալին ընդ համարձակ բանս առնն, հրամայէր կատարել զամենայն ինչ ըստ հրամանի Արքային։ Ապա գրեաց հրաման սաստիկ և կարգեաց ոստիկան զհաւատարիմն իւր։ Յետ այնորիկ ազգ արար նմա Նուրի զդաւանութիւն Խօճաքեանին. փորձեալ զնա յընկերակցութեան իւրում 'ի ճանապարհի, և ուսուցանէր զդուշանալ 'ի նմանէ. եւ մեք սիրով վարիմք առէ՝ ընդ նմա. զի թերեւս կարասցուք հասանիլ 'ի նպատակ գործոյս։

Խօճաքեանն յԵրուսաղէմ միայն պատիր բանիւք 'ի վերին երեսս յուսադրէր զՀայս. իսկ ոստիկան Կուսակալին յայտնի համարձակ խրախոյս տայր չերկնչիլ բնաւ. զի ամենայն ինչ ասէր՝ ըստ հրամանի Արքային և տեառն իմոյ Կուսակալին ունի կատարիլ։ Եւ եղեւ վերատին շօշափել Հայոց զերակ դատաւորին, զտին զնա դեղեալ, հիւանդ

առ Հայս՝ և առողջ առ Ցոյնս։ Ապա գնացին Հայք 'ի տեսութիւն Գործակալացն պատրաստեալ իւրաքանչիւրոց զարժանաւոր ընծայս. 'ի նմին աւուր առաջադրէ Խօճաքեանն Հայոց, թէ եղեալ եմ 'ի մոլ տալ բերել առ զՑոյնս. մի լոցի ձեզ վիրաւորիլ յերթեւեկութենէ նոցին, մանաւանդ դիւրութիւն լինի գործոց ձերոց։ Հայք ասեն. ազգ արարաք նոցա գալ 'ի միասին, այլ նոքա ետուն պատասխանի. թէ չխառնիմք 'ի գործս ձեր, այլ թէ մեզ չէ ինչ ինչս. տայր Աստուած չպակասիլ նոցա ստի 'ի տուէ և 'ի գիշերի։ Այսպիսի եղանակաւ յայտնեաց փոքուքին զներքին դիտաւորութիւն իւր։ Եւ յետ դադարելոյ Գործակալաց զաւուրս 6 գնացին յայցելութիւն Դատաւորին. եւ 'ի լինել բանից 'ի վերայ խնդրոց ազգաց ասէ Դատաւորն. թող զայլ ամենայն խնդիրս. չիք երբէք հնար կատարելոյ զվէճն Բեթղեհէմի. գործակալքն լուեցին իսպառ, ապա խնդրեաց զհրովարտակս պաշտօնէութեան նոցին՝ ընթեռնուլ առանձին, յորմէ վշտացեալ՝ առաքեցին 'ի դառնալն 'ի տեղիս իւրեանց, նոյնպէս և Հայք ըզպատմէն հրովարտակին։ Եւ իբրեւ գնացին պահանջել զայն յետս. ողբէին զվիրս նորա աղաչանօք անթերի կատարել զհրաման Արքային՝ խոստացեալ նմա առնել բարիս 'ի վախճանի, այլ նորա զայրացեալ ասէ. ընդէ՞ր բերիք զգործակալս, միթէ չէի՞ կարող կատարել զգործս ձեր, զուցէ ոչ ընդունիք զդատաւորութիւնս իմ։ Հայք ասեն. Արքայն որպէս կամեցաւ, այնպէս արար. Դատաւորն ասէ. ուրեմն ընթերցցի յատենի հրովարտակք գործակալաց և 'ի գործ դիցի, եւ ձերն մնասցէ. յետ մեկնելոյ նոցա ստի ընթեռնուլ և գործադրել զայն ըստ արժանոյն օրինօք Շէրիի։ Իմացեալ Հայոց զվիրս նորա՝ աղաչէին ընթեռնուլ 'ի ժողովի զհրովարտակս Հայոց և Ցունաց. ընդ այս հաճեցաւ թէեւ՝ բայց պատճառէր թէ չեւ է եկեալ հրովարտակն Ցունաց։ Հայք հաստատէին թէ հրովարտակն Ցունաց եկեալ է, հրաման տուք բերել զայն. իսկ եթէ ոչ, մերն բաւական է. զի երկոքեան 'ի մի և նոյն միտս գրեալ են, մանաւանդ վաւերեալ պատճէն նորին են առ գործակալս։

Ի լսել գործակալաց զայս ամենայն բանս Դատաւորին՝

ստիպեցին զՑոյնս բերել զհրովարտակն, և նոքա սպասէին հրամանի Դատաւորին, ստիպեցին նաև զԴատաւորն գրով, եւ ահա դումարեցաւ ժողով մեծ 'ի Դատարանի ('ի 20 Մայիսի), ուր էին ամենայն մեծամեծք քաղաքին, գնացին և Հայք բազմութեամբ՝ բաց 'ի Պատրիարքէն, եկին եւ Ցոյնք. նախ ընթերցան զհրովարտակն Ցունաց, զոր թողեալ էին անպատճոյճ իբր արհամարհեալ յաչս նոցա, և ապա զՀայոցն։ Ցետ այնորիկ զհրովարտակս Խօճաքեանին և Մուվէլլայ Վէքիլին յանուն երից գործակալաց, և 'ի վերջոյ զհրաման Կուսակալին Դամասկոսի՝ համաձայն մտաց հրովարտակաց, և պատուէր սաստիկ կատարել ըզհրամանն։ Դատաւորն ասէ՝ այսօր բաւականացուք ընթերցմամբ հրովարտակաց՝ և յայլում աւուր ձեռնարկեսցուք 'ի կատարումն հրամանին, զի մի աճապարելն՝ անկցուք 'ի դատապարտութիւն։ Խօճաքեանն եւ ոստիկան Կուսակալին ըստ հրամանին՝ ստիպմամբ պահանջէին 'ի Ցունաց զհրովարտակն տուեալ 'ի Թուին ١٢٢٤, նոքա ասեն թէ առաքեցաք զայն 'ի Կոստանդինուպոլիս. Խօճաքեանն ըստ բանից նոցին խնդրեաց Իլամ 'ի Դատաւորէն, այլ նա ետ բերել զտումարն և կարեալ 'ի բաց եհան զայն անտի, եւ ջնջեցաւ արձանագրութիւն նորին, և ցրուեցաւ ժողովն։

Ցետ երկուց աւուրց վերստին դումարեցաւ՝ լուծանել զխնդիր հետեւակ երից ազգաց, որպէս գրեալ էր 'ի հրովարտակին քննել զայն 'ի տեղւոջ իւրում։ Եւ իբրեւ կամէին կոչել զնոսա 'ի ժողով անդր և լսել բան 'ի բերանոյ նոցա, ընդդէմ եկաց Դատաւորն և հարցանէր ցբազմականս թէ՝ սոքա ո՞ր ազգի հետեւողք են, ամենեքեան լուեցին և ոչ ետուն պատասխանի։ Նուրի Էֆէնտին ասէ՝ ըստ որում սոքա ոչ գտան 'ի մեծի դատին 'ի Կոստանդինուպոլիս, Տէրութիւնն զքննութիւն սոցա սահմանեաց լինել յԵրուսաղէմ. զարմանք են թէ ո՞րպէս ոչ կամիք կոչել զնոսա 'ի ժողով որք 'ի քաղաքի աստ են. Դատաւորն երկարէր զխօսս իւր և տքնէր չկոչել զնոսա. և 'ի սաստկանալ վիճմանց՝ մին 'ի գործակալաց եմոյծ ըզնոսա 'ի ներքս. և 'ի հարցանել Դատաւորին նախ ցՀապէշս պատ 'ի պատ բանիւք, ասէր՝ մնաց այրն, զի ոչ կարէր 'ի միտ առնուլ զլրութիւն բանից նորին, և 'ի

հարցանել այլոց պարզ բանիւ՝ արար պատասխանի 'ի բարբառ Արարացւոց՝ թէ հաւատով քրիստոնեայ եմք և 900 ամաց հետէ յերուսաղէմ հետեւակ Հայոց, կերակուր և հանդերձ մեր 'ի վանաց նոցին, որպէս վկայեն այլազգիք և հրեայք իսկ։ Մատեան Ղպթիք և ասեն՝ քրիստոնեայ եմք և ազգ ինքնագլուխ, և 'ի լինել տարաձայնութեան 'ի վերայ բանից սոցա՝ զօրացեալ Ցունաց դոչէին, զի՞նչ միաբանութիւն է սոցա ընդ Հայս, զի զգլխաւոր տօնս իւրեանց ընդ Ցունաց տօնեն և պատկանին նոցա, զնոյն ասէր և Դատաւորն։ Քանզի յառաջագոյն մինչ դատաստան լինէր 'ի Կոստանդինուպոլիս 'ի վերայ այսր խնդրոյ, Ցոյնք ծախեալ գումարս ինչ, առեալ գիր 'ի Կուսակալաց Դամասկոսի. նոյնպէս և զարդիս 'ի Սիւլէյման Փաշայէ՝ լինիլ հետեւակ երից ազգաց և տեղեաց նոցին Ցունաց։ Եւ 'ի հարցանել վերստին բազմականաց՝ խոստովան եղեն Ղպթիք, թէ 'ի դաւանութիւնս՝ եկեղեցւոյն Հայոց և 'ի Թափօրս 'ի տաճարին Ս. Յարութեան հետեւին նոցա։ Զնոյն ասացին և Ասորիք և յաւելին եւս թէ Պատրիարքն մեր հաստատի 'ի Տէրութենէ գրով Պատրիարքին Հայոց։ Իբրեւ ետես Դատաւորն թէ վրիպեցաւ 'ի խորհրդոց իւրոց, եհարց դարձեալ ցրազմականսն, և նոքա ամենեքին լուցին, և մի ոմն 'ի նոցանէ ասէր՝ չգիտեալ խոպառ բազմելոց։ Ցայնժամ Նուրի էֆէնտի գրեաց զանուանս ժողովելոցն և ասէ երիցս՝ հարցմանս այսմիկ չգիտել պատասխանէք, սակայն 'ի հարցանելն այլով եղանակաւ 'ի կողմանէ Ցունաց, գիտել խոստովանիք՝ ոչ երբէք լսեմ։

Ընդ այս զայրանային Դատաւորն և ժողովն, մանաւանդ զի տիրարար դատէր՝ խօսէր և գրէր զամենայն ինչ, որոյ վասն զօրացաւ բարբառ Դատաւորին 'ի վերայ Նուրեայ։ Եւ զկնի այսր կոչեցին զայլազգի դռնապանս Սուրբ Յարութեան, որք և ասացին՝ Ղպթիք և Ասորիք 'ի տաճարի անդ 'ի Թափօրս և 'ի Ճրագալուցի Զատկին 'ի միասին ընդ Հայոց չրջին ելանեն և մտանեն։ Իսկ վասն Հապէշաց ոչ գիտեմք, զի նոքա ոչ ունին տեղի և Թափօր 'ի տաճարի անդ։ Արձանագրեցան բանք երից ազգաց և վկայութիւնք դռնապանաց, եւ որոշեցաւ երից ազգաց լինել հետեւակ Հայոց, և արձակեցաւ ժողովն։

Տեսեալ Հայոց զյայտնի հակառակութիւնս Դատաւորին՝ ազգ արարին նմա լռելեան չվարիլ այնպէս խոտորնակ և չզինիլ ընդդէմ Կայսերական հրամանին, և մի վայրապար համարել զհրովարտակն, զի դատաստանաւ եւ երկար քննութեամբ տուեալ է։ Այլ նա յամառեալ 'ի բանս իւր ասէր՝ թէ ատ վերստին 'ի դատ մուծանեմ, գործակալքն ինձ ոչ ինչ կարեն առնել, արտաքոյ գրոց ոչ գործեմ, զի առաւել քան զամենեսին հմուտ և տեղեակ եմ. վարդապետ Մուվէլլայի և դասասաց պալատականաց առաջի Արքայի՝ և Զինակիր նորին բարեկամ ինձ, որ եւ 'ի միջնորդելոյ նորա եռուն զդատաւորութիւնս վասն գործոյս այսորիկ. նա պատուիրեալ է ինձ չվարիլ 'ի կաշառաց և չխոտորիլ յուղիղ շաւղացն գրոց Արքային չլինի հաւատարմութիւն. այլ զայս դատաստան պարտ է տեսանել օրինօք Շէրիի, և այլ սոցին նման բանք սնոտիք։ Առ որ ասացին Հայք՝ այս գործ օրինօք և դատաստանաւ վերջացեալ է, և չէ գրեալ առ քեզ վերստին դատել, ո՞ւր արդեօք ընթերցեալ է ձեր՝ թէ Ս. Տեղիքն Ցունաց անկանի՝ եւ Հայոց ոչ. Դատաւորն ասէ՝ որովհետեւ դուք գործակալ բերիք՝ ես արարից զոր ինչ եղեալ եմ 'ի մտի, եւ նոքա արասցեն զոր ինչ կարեն առնել՝ մեկնեցան 'ի միմեանց։

Դատաւորն կազմեաց ժողով 'ի Ս. Յարութիւն ('ի 22 Մայիսի) յաւուր տօնի Համբարձման Քրիստոսի, ուր էին և պաշտօնեայք Տէրութեանն. գնացին բազմութեամբ միաբանք Հայոց և Ցունաց։ Հարցին ցՑոյնս, թէ ո՞յք իցեն սեփհական տեղիքն Հայոց. նոքա ցուցանէին մի առ մի՝ ճարտարապետն չափէր, և Նուրի էֆէնտի գրէր, նոյնպէս և գպրապետ Դատարանի. Դատաւորն և այլք կային 'ի զննին։ Հայք ասեն. քննեսցի նաեւ թերի մնացեալ և գողացեալ տեղիքն Հայոց 'ի Ցունաց։ Աղաղակեցին Ցոյնք և Դատաւորն ընդ նոսա թէ՝ չիք հրաման առ այդ յԱրքայէ։ Հայք ասեն՝ այժմ ոչ խնդրեմք զգողացեալ տեղիս մեր առնուլ 'ի Ցունաց և տալ մեզ, այլ քննել և նշանակել 'ի դիւութիւն, և յետոյ սպասել հրամանի Արքային։ Դատաւորն չմատուցեալ ունկն բանից նոցա սկսաւ կռուիլ և կագել ընդ գործակալս դրդեալ 'ի կուսակցացն Ցու-

նաց. մինչ զի մերձ լինիլ հանել աղմուկ չվոթի և խռովութեան։ Եւ յերկրորդելն Հայոց քննել զտեղիս և որոշել, սրտմտեալ Դատաւորին բարկութեամբ եւ անտի եւ եմուտ յեկեղեցին Ցունաց, առեալ ընդ իւր զԲաղաքապետն և զհամախոհս իւր։ Սակայն գործակալքն ակնարկէին Հայոց լռել և համբերել, և ինքեանք չափեցին ըզյայտնի տեղիս նոցա և նշանակէին զնոր չինեալսն և զնորոգեալսն 'ի բանից Ցունաց, ուր էր և Թարգմանն Լատինաց. Հայք յառաջագոյն պատրաստեալ էին անդ զպատկերս, զի ակն ունէին դնել զնոսա յիւրաքանչիւր տեղիս զկնի քննութեան. տեսեալ զնոսա Դատաւորին՝ մատնութեամբ Ցունաց և քաղաքապետին՝ զայրացաւ յոյժ, եւ կոչեալ զոմանս 'ի Հայոց, սկսաւ յանդիմանել զնոսա բարկութեամբ առաջի բազմութեան, զի՞ոդ համարձակեցայք ասէ մուծանել զնոսա 'ի ներքս, և ո՛վ ետ ձեզ հրաման, մի և մի երբէք լիցի ձեզ յուսալ՝ թէ թողուցի կալեալ ըզկուռս ձեր և պաշտել զնոսա ասա, զի ես Միւսլիման եմ գիտեմ զօրէնս իմ եւ երկնչիմ յօրինաց։ Հայք ասեն՝ պատրաստեցաք զայնս կալեալ ըստ հրամանի ձերում. զի սովորութիւն է քրիստոնէից դնել պատկերս յեկեղեցիս, և համարձակ պաշտել զօրէնս, որոց հրամայեալ են թագաւորք և Դատաւորք, և դու զիա՞ոդ արգելուս զմեզ յօրինաց մերոց։

Դատաւորն աղաղակէր՝ ես յաւուրս իմ չթողուցի կալեալ զպատկերս, այլ նոքա ամենեքին որք յառաջ քան զիս եկին և հրաման ետուն, ոչ են Իսլամք և օրէնագէտ. զի եթէ Արքայն իսկ հրամայեսցէ, այլ ես ոչ թողուցի։ Հայք ասեն. տրգելումդ վասն ամենայն քրիստոնէից է, թէ միայն Հայոց, Դատաւորն. ընդէ՞ր եւ զայլս 'ի մէջ բերէք, զձեզ այժմ այսպէս գտի՝ և այսպէս թողուցի, Հայք. ո՞չ-ապաքէն հաւատակիցք մեր ամենեքեան կախեալ են, նոյնպէս եւ մեք 'ի տեղիս տեղիս. այլ զոմանս ոչ կարացաք կալեալ զկնի չինութեան, այժմ տեղիքն մեր որոշեցան և պատկերքն պատրաստք։ Այլ նա եւս քան զեւս զայրացեալ սկսաւ զանպատեհս խօսիլ և նախատել զազգն՝ եւ այսպէս անկատար թողեալ զքննութիւնն մեկնեցան անտի։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Ժողով 'ի Ս. Յարութիւն և քննութիւն տեղացն Հայոց։ Յամառութիւն Դատաւորին։ Ընդդիմութիւն Ցունաց։ Ոստիկանի Կուսակալին մեկնիլ։ Ժողով 'ի Դատարան։ Գիր Կուսակալին։ Դարձ Ոստիկանին 'ի Դամասկոս։ Ժողով 'ի Դատարանի յի խռովութեամբ։

ԺՈՂՈՎԵՑԱՆ դարձեալ 'ի Ս. Յարութիւն ('ի 24 Մայիսի). Եւ քննեցան մնացեալ տեղիքն Հայոց և արձանագրեցան, և Դատաւորն նստէր յեկեղեցին Ցունաց իւրովքն հանդերձ։ Եւ իրրեւ մտեան 'ի քննութիւն տեղացն Ղպթոց և Ասորւոց հետեւակացն Հայոց՝ բարկացեալ Ցունաց աղաղակ բարձին առ Դատաւորն. Եւ նա սրտմտեալ դոչէր և յանդիմանէր զնուրի Էֆէնտի իբր հակառակող հրամարտակին. և իրրեւ չանսաց նա բանից նորա, առաւել զայրացեալ աղաղակէր. հակառակ է քննութիւնդ կայսերական հրամանին. և այնու բարկութեամբ ել և գնաց 'ի տաճարէ անտի իւրովքն հանդերձ և մնացին անդ գործակալքն, Բաղաքապետն, Նախիպն և Միւֆթին, և որքան կարելի էր հարեւանցի իմն քննեցին և տեսին. զի տեղիքն յատկացեալ Ասորւոց, խորանքն և կանթեղքն մեծաւ մասամբ անկեալ էին 'ի ձեռս Ցունաց. և իրր թէ աւարտեալ զգործն մեկնեցան և նոքա։ Եւ յայտնի եղեւ ատելութիւնն որ 'ի մէջ Դատաւորին և գործակալաց. զի Մուվէլլին և ոստիկան Կուսակալին դուն գործէին կատարել զհրաման Արքային և Դատաւորն ընդդիմացեալ կոչէր ընդ նոսա։ Խօճաքեանն և Բաղաքապետն արտաքուստ զհրաման Արքայի կատարել ձեւանային, այլ 'ի ներքուստ ընդ Դատաւորին էին։ Հայք զիւրաքանչիւրսն ողոքէին առանձին սիրով աւարտել զգործն, այլ նոքա մտմրեալ ոգորէին ընդ միմեանս. ապա աղաչէին զնուրի Էֆէնտի թախանձանօք խոնարհիլ 'ի հաշտութիւն, գնալ առ Դատաւորն և քաղցրութեամբ ցածուցանել զբարկութիւն նորին, որ և արար իսկ։

Եւ նորա զիջեալ 'ի կամն նորա 'ի վերին երեսս և գուսմարեաց ժողով մեծ 'ի Ս. Յարութիւն ('ի 29 Մայիսի)։

Հարցին ցՀայս թէ ունիցի՞ն զայլ տեղիս քննութեան, և նոքա ասեն՝ քննել զդողացեալ տեղիս, թերի և այլատարազ չինուածս. կամ հրաման տալ ինքեանց չինել զայնս ըստ առաջին ձեւոյն, և կամ գրեալ ծանուսցեն 'ի Դուռն։ Վերսին գրգռեցաւ բարկութիւն Դատաւորին և սկսաւ գոչել, զայդ ոչ է հրամայեալ Արքայի։ Եկին և ժողովեցան ամենեքեան 'ի դուռն տաճարին, Հայք ասեն. որովհետեւ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային կամիք գործել, 'ի հրովարտակի Արքային Սէլիմայ յայտնապէս գրեալ է. 'ի ներքս մեծի դրան վերին եւ ստորին կողմն, զորս այժմ Յոյնք եւ Լատինք հակառակ հրամանին գրաւեալ և զմեզ զրկեալ են իսպառ յաւելածութենէ։ Աղաղակեցին Յոյնք. մինչդեռ Հայք յառաջագոյն սեփհական տեղիս ոչ ունէին, այժմ կամին բովանդակ եկեղեցւոյն տիրել։ Գործակալք և գլխաւորք քաղաքին զայս իրաւունս Հայոց գիտէին, և ստիպէին զԴատաւորն իշխել Յունաց զի լռեսցեն, եւ թողցեն զայն տեղի։ Յոյնք բարձրացուցին զձայնս և յայտնապէս սկսան խօսիլ ընդդէմ Տէրութեան. բարկացեալ գործակալաց ստիպէին զԴատաւորն 'ի գործադրութիւն. այլ նորա թեւարկեալ զՅոյնս, հարցանէր ցայլազգի դռնապանս, թէ ո՞րպէս գիտեն զառաջին սովորութիւնն. և նոքա ասեն՝ զերիս ազգս գիտեմք ստ գլխաւոր՝ եւ նոցա է առնել չինութիւն բանալ ըզդուռն այլովքն հանդերձ, բայց Լատինք և Յոյնք ածեն աւել ստ. իրրեւ երկարեցաւ վէճն, Լատինք ոչ կամեցան յետս մնալ 'ի չարաթէ իւրեանց։ Հայք ասեն. չուրնիմք դատ այժմ ընդ Լատինս, այլ կամիմք ըստ մնաց հրովարտակին թափել զսեփհական տեղիս մեր 'ի ձեռաց Յունաց. եւ յայս բան սատակացաւ վէճն 'ի մէջ երկուց ազգաց՝ Հայոց և Յունաց. եւ 'ի նեղիլ Հայոց, հաճեցան ունել Լատինաց զիւրեանց ամբողջ չարաթն. և բաժանորդ լինել չարաթուն Յունաց. հաւանեցան ընդ այս ժողովն և Դատաւորն իսկ, և ստիպէին զՅոյնս հաւանիլ և վախճան տալ կռուոյն։ Այլ նոքա իրրեւ 'ի միոյ բերանոյ աղաղակէին՝ չտամք տեղի Հայոց մատնաչափ։ Դատաւորն՝ ահա ասացի, բայց Յոյնք ոչ հաճին. ոստիկան Կուսակալին ասէ՝ 'ի բաց թողեալ զհրաման Արքային. ունկնդի՞ր լի-

նիս բանից երկուց կողմանց, ընդդէմ է հրամանի նորին զմի կողմն պաշտպանել եւ զմի կողմն առաթուր կոխել. այլ ըստ հրովարտակին՝ արդարութեամբ կատարել զգործն. երկիր 'ի քէն, գուցէ արտասահմանեսցիս 'ի մեռաղ, և Յոյնք ոչ կարեն փրկել զքեզ։ Բարկացեալ Դատաւորին ընդ խիստ բանս նորա, հարցանէր սրտմտութեամբ ցՀայս. զի՞նչ ունիք ասա այլ եւս 'ի կատարել. և նոքա ցուցին զմի պատկեր Պատանատեղւոյն յախչտակեալ 'ի Յունաց, զչորեսին կանթեղս 'ի շրջապատս Գերեզմանին և յայլ տեղիս, և ըզպատկերան. լի եղեւ սրտմտութեամբ և գոյն երեսաց իւրոց շրջեցան, և խոժոռեալ գոչէր 'ի վերայ Հայոց, և նովին բարկութեամբ ել և գնաց 'ի տաճարէ անտի. մեկնեցան և այլքն զկնի նորա, և փակեցաւ դուռն։

Զոքան Հայք առանձին առ Դատաւորն և աղաչէին զնա կատարել զգործն, զնոյն առնէին և գործակալք Տէրութեանն, այլ բնաւ չառնոյր յանձն, յուսացեալ 'ի մեծամեծ խոստմունս Յունաց, ոչ կաշառօք, այլ օրինօք ասէր՝ կատարել զգործն, թէպէտեւ Հայք յառաջ բերէին զվճարումն գործոյն դատաստանաւ առաջի գիտնականաց օրինօք և հրամանաւ Արքայի, այլ նա յամառեալ 'ի բանս իւր ասէր, գիտեմ զօրինականս Կոստանդինուպօլսոյ, զի տգէտ են։ սնոտի և ընդունայն գրեալ են մի Իլամ, և Արքայն սակս պատրելոյ զմեզ տուեալ է (Խաթթի Շէրիֆ), սակայն ես այր ընթերցող եմ և հմուտ՝ դասատու պալատականաց, աներկիւղ յամենայնի, և վասն սոցին իրաց տաց պատասխանի առաջի Արքայի, և այլ սոյնպիսի բանք։ Ոստիկան Կուսակալին յանկարծ ձայն եհան 'ի քաղաքին, որպէս թէ Բդեշխն խնդրեալ է զինքն 'ի Դամասկոսէ, գնալ եւ անդրէն դառնալ, և Հայք թախանձանօք խնդրեալ էին 'ի նմանէ լինիլ միջնորդ առ Կուսակալն և առ Բեահեայ նորին, սակս խնդրոյ Բեթղեհէմի և գերեզմանին Սուրբ Աստուածածնի. գրեցին նաեւ գիր աղաչանաց առ Բեահեայ Պէյն և առ գանձապետ նորին Կիւչիւք Յարութիւն Հայապէի, որ 'ի սոյն ամի եկեալ էր յԵրուսաղէմ յուխտ, և վերահասու լեալ գործոյն, և խոստացեալ էր ըստ կարելութեան լինել ձեռնտու, և մեկնեցաւ Ոստիկանն իւրովքն հանդերձ յԵրուսաղէմէ ('ի 6 Յունիսի)։

Գործակալք առանձին վարատեցին զտարակուսանս Հայոց վասն տարաժամ մեկնելոյ Ոստիկանին, զի խորհրդով եւ գրով իւրեանց առաքեալ էին զայն ծանուցանել Կուսակալին զպատճառս երկարելոյ գործոյն և դյամառութիւն Դատաւորին, և վերստին դառնալ հրամանագրով նորին, կատարել զգործն ըստ հրամանի Արքային։ Ի սոյն խորհուրդ դասն նաև Խօճաքեանն և Քաղաքապետն, թէպէտ և նոքա 'ի ներքուստ էին 'ի կողմն Ցունաց, այլ յայտնի չկարէին խօսիլ ինչ, զի երկնչէին 'ի Նուրի Էֆէնտիէ։ Իսկ Դատաւորն գանկատանս գրեալ էր ծածկաբար զՄէհէմմէտ Պէյէն, յաւուր յորում կռուեցան 'ի տամարին Ս. Յարութեան ('ի 29 Մայիսի) և 'ի ձեռն Քաղաքապետին յղեալ էր զթուղթն առ Բդեշխն։

Յետ մեկնելոյ Ոստիկանին, եհաս գիր 'ի Կուսակալէն առ Դատաւորն, ընդ նմին եւ գիր հրամանի (յ8 Ցունիսի), և կազմեցաւ ժողով 'ի Դատարան. ընթերցաւ հրամանագիրն և յայտնեցաւ դանկատ Դատաւորին, և զգործն կատարել ասէր ըստ հրամանի Արքային օրինօք Շէրիի առանց պաշտպանելոյ զոք։ Սակայն աքանչանային որք անտեղեակք էին, թէ զիա՞րդ մեկնեցաւ ասսի Ոստիկանն հրամանաւ Բդեշխին, եւ անուն նորա գրեալ է 'ի գիրն ընդ այլ Գործակալս։ Դատաւորն ասէ. լուա՞յք արդեօք զհրաման Կուսակալին, ահա այսօր ունկնդիր եղէց բովանդակ ամբաստանութեանց ձերոց և կատարեցից զայնս օրինօք Շէրիի։ Եհարց երիցս ցՀայս, զի՞նչ են դատ ձեր, լուութիւն, և 'ի չորրորդին ասեն. հարցմանդ հարկ եղեւ տալ պատասխանի, սակայն բազմականք բարւոք 'ի միտ առեալ արձանացուցեն լինել վկայ 'ի ժամանակի իւրում։ Նախ չունիմք դատ, երկրորդ չհամարձակիմք վերստին 'ի դատ մտանել ասա. զի վճարեալ է այն առաջի մեծի Դենղեարին և Նախարարաց՝ եւ հաճութեամբ երկուց ազգաց տուեալ հրովարտակ և հրամանաւ Արքայի առաքեալ են Գործակալքս այսոքիկ՝ զարժանն դուք գիտէք, և ըստ հրաման Արքային բարւոք իմանայք առաւել քան զմեզ։ Եհարց ցՑոյնս, դուք զինչ ասէք, Ցոյնք ասեն. վասն դատաստանին եղելոյ 'ի Կոստանդինուպօլիս չունիմք գիր ինչ 'ի Պատրիարքէն եւ յաղէն մերմէ, և մեք ինքնագլուխ

չկարեմք պատասխանել ինչ։ Նուրի Էֆէնտին ասէ. բարեկամք՝ միթէ թագաւորն սո՞ւտ գրեաց, եւ առաքողք հրովարտակիդ չգրեցի՞ն ինչ առ ձեզ. միթէ ուրացութեամբ ձերով կարծէք յետս մնալ հրամանի Արքային. զի Տէրութիւնն ոչ ասաց մեզ անսալ գրոյ Պատրիարքին Ցունաց և չգործել ընդդէմ հրամանի նորին, այլ զգուշանալ չգործել ընդդէմ հրամանի իւրոյ, և յետ պատուիրելոյ բանիս բերանոյ՝ գրեաց նաեւ Խաթթի Շէրիֆ, և 'ի ձեռն պաշտօնէից հարկադրեաց գործադրել զգրուածս նորին։ Ցոյնք ասեն՝ եթէ անհրաժեշտ է գործադրութիւն հրովարտակաց, պարտ է դատանել զկորուստն մեր և յանձնել մեզ. յառաջ բերին ստանօր զՍ. Յակոբ վանք Վրաց, ակնարկելով 'ի վանս Հայոց, զՍ. Փրկիչ և զՀրեշտակապետ այլովք անուամբք, որոց զարժանաւոր պատասխանիս ետուն Հայք, յառաջ բերելով զհրովարտակն Սէլիմայ եւ զերկար դատաստանն Կոստանդինուպօլսոյ և զհաճութիւն երկուց ազգաց սակս ընկերոյն եւ սեփհական տեղեաց, զվերջանալն ատելութեանց և խռովութեանց. ուստի՞ ըստիպեալ ասա վերստին 'ի դատ մտանել Պատրիք ընդ մեզ հակառակ հրամանի Կայսեր, որոյ գործադրութեան փոյթ մեծ ունիմք 'ի ձեռն պաշտօնէից։ Դատաւորն գժկամակեալ ընդ բանս նոցա լսեցոյց զնոսա, և առաջի եդ Հայոց գնալ 'ի Ս. Աստուածածին երիցս 'ի շաբաթս, և 'ի Բեթղեհէմ երիցս 'ի տարւոջ գրով Ցունաց, և պատարագել 'ի վերայ արտաքին խորանաց։ Հայք ասեն՝ եթէ այդպէս առնել պարտ էր, ընդէ՞ր ետ ջնջել զարձանագրութիւն առաջին հրովարտակին իւր հակառակ. և վասն է՞ր գրեաց հրովարտակ վարիլ ըստ մտաց հրովարտակին Սէլիմայ, յորում յիշեալ են ամենայն բաժանորդ տեղիքն. յայտ է թէ հաւասար լինել Ցունաց։ Դատաւորն ասէ. դուք Հայքդ ըստ ախորժակաց ձերոց մեկնէք զգիրս, բայց Իլամն եւ Թագաւորն ցուցանէ 'ի բաժանորդ տեղիս ուխտ առնել, և ոչ զօրէնս կատարել։ Հայք ասեն՝ երկուց ազգաց հրովարտակքն 'ի մի և 'ի նոյն միտս գրեալ են, զի եթէ մեզ ուխտ՝ ապա և նոցա, առ այս ասէ՝ Ցոյնք 'ի բնէ ունէին։ Հայք ասեն՝ այն էանց, այժմ ըստ մտաց հրովարտակին զոր ինչ առնեն Ցոյնք 'ի բաժանորդ տեղիս, զնոյն և մեք

ունիմք առնել։ Դատաւորն ամբաստանել կամէր զՀայս իբրև զապերախտ։ զի հրաման տայր երթալ ըստ առաջնոյն 'ի Ս. Աստուածածին, յորմէ արգելեալ էին Յոյնք հրովարտակաւ, ոչ յիշելով զՆՀՈՒՄն նորին և զնորն։ և սպառնայր գրել 'ի Դուռն ամբաստան լինելով իբրեւ զանհնազանդից հրամանի Արքային, և կարի ընդդիմանալ նոցին՝ նախատել և անարգել զնոսա, և ոչ տալ թոյլ մտանել 'ի Սուրբ Աստուածածին և 'ի Ս. Ծնունդ, թէեւ Արքայ հրովարտակաւ հրամայեսցէ։ ընդ այս ցասուցեալ Նուրի Էֆէնտեայ կշտամբէր զնա՝ զի լաւ է ասէր տալ Իլամդ մեզ քան Հայոց, զի մեկնեսցուք աստի, զի ոչ երեւի 'ի քեզ հնազանդութիւն Արքայի, այլ կամակորութիւն և պաշապանութիւն, զմին բարձրացուցանել և զմիւսն առնել կոխան ոտից։ և 'ի սաստկանալ վիճման և խռովութեան 'ի մէջ երկոցունց՝ ցրուեցաւ ժողովն։ Հայք աղաչէին զԴատաւորն և միջնորդ կացուցանէին զՄՕՀԱՔԵԱՆՆ և զԲԱՂՔԱՊԵՏՆ, այլ նա տատանեալ մտօք վարանէր 'ի խորհուրդս իւր։ խոստմունք Ցունաց, պահանջ Հայոց և գործակալաց, և երկիւղ Թագաւորին ցնորեալէին զմիտս նորա։ Հայք Թախանձէին տալ զԱյրն Ծննդեան և զբանալի հիւսիսային դրան, որոյ հետեւիլ ունէր ճանապարհ երթեւեկելոց, զի ոչ էր ընդդէմ օրինաց։ և եկեղեցին այն չէր սեփհական Ցունաց, այլ գեղջ։ եւ նոքա առեալ էին 'ի ձեռաց Լատինաց։ Այլ խոժոռեալ նորա մերժէր զբանս Հայոց՝ հայեցեալ 'ի տհաճութիւնս Ցունաց, զի յանձն արարին ասէ օրինաց խմոց, որոյ վասն անկարելի է ինձ բաժանորդ առնել զձեզ Բեթղեհէմի և Ս. Աստուածածնի, յայս բան ծիծաղէին այլազգիք ամենեքեան։ հանդերձապետ Դատաւորին Եմանտի քաջալերէր զնա 'ի կողմանէ Ցունաց, չհակիլ 'ի կողմն Հայոց, եւ գործակալքն նկատէին 'ի հեռուստ։ Վերատին առաքեցին առ նա Հայք զարս հաւատարիմս և յորդորէին կատարել զգործն, գուցէ եկեալ Ոստիկան Կուսակալին 'ի հարկէ կատարեսցէ, եւ ինքն վիրաւորեսցի։ այլ նա յառաջ բերէր զգիր Կուսակալին, զգանկատանս իւր զՈստիկանէն, թէ առաջի բազմութեան նախատեաց զիս, և զասաս Փաշային առ Ոստիկանն, եւ զչգառնալ նորա անդրէն յԵրուսաղէմ, զի ոչ

գիտէր զգաղտնի խորհուրդս նոցա։ մի յուսայք ասէր օգնութիւն գտանել 'ի նմանէ, հնազանդեցարուք ինձ և մի շփոթէք զբանն։ զի Մուվէլլայն առանց իմ ոչ ինչ կարէ առնել, այլ պատրանօք ակն ունի առնուլ 'ի ձէնջ ինչս, եւ ՄՕՀԱՔԵԱՆՆ բարեմիտ՝ գիտելով զանհիմն գործս ձեր լուութեամբ վարի, եւ այսպիսի բանք բաղում յերկուց կողմանց, և խստասրտութիւն Դատաւորին յուսարեկ արար զՀայս։ Թէպէտև Նուրի Էֆէնտի ասէր գրել 'ի Դուռն զարարս Դատաւորին, այլ Հայք չաւին յանձն, մի գուցէ երկարութիւն ժամանակին խոչ լիցի գործոյն։

Դարձաւ Ոստիկան Կուսակալին 'ի Դամասկոսէ, և ուրախութեամբ եմուտ յԵրուսաղէմ, ('ի 21 Յունիսի), եւ 'ի վաղիւն կազմեցաւ ժողով 'ի Դատարան։ ընթերցաւ հրամանագիր Կուսակալին, որ հրամայէր առնել զամենայն ինչ ըստ հրովարտակին, և վասն Բեթղեհէմի մի ումեք ընդդիմանալ, և ոչ առնել կուսակցութիւն։ Դատաւորն կորագլուխ եւ լուռ նստէր փակեալ զաչս իւր։ Ոստիկանն ասէ՝ զի՞նչ ունիս ասել ով Դատաւոր առ այս։ տա՞ս Հայոց բաժանորդութեամբ զԲեթղեհէմ ըստ մտաց հրովարտակին։ Լռութիւն։ Նուրի Էֆէնտի, յառաջագոյն ասէր՝ թէ վճռեցի։ ոչ տամ, այսօր ո՞րպէս կարէ ասել թէ վճռեցի և տուս, և ստիպէին զնա թողուլ զլռութիւնն եւ պատասխանել, և ըստ արժանոյն գործել, և նա պատճառէր զանկարութիւն իւր։ Ահաւասիկ կեսաւուրք՝ զոր ինչ արժանն է խոստացարուք և հրաման տուք, ինձ ոչ է անկ։ զի դուք էք գործակալք Տէրութեանն։ Ոստիկանն ասէ՝ ստիպեցեր զիս գնալ 'ի Դամասկոս։ սակայն մի կարծեր թէ զիս Բդեշխն կոչեաց, որպէս ասացեալ ես ամենեցուն, այլ հրամանաւ և դրով գործակալաց Տէրութեան գնացի պատմել զամենայն գործս քո, և զոր ինչ գրեալ էիր զինէն՝ լուայ անդ։ այլ ինչ և իցէ, անցեալն էանց, այժմ զոր ինչ առնելոց ես, արա՛։ Երբայ Դատաւորն զփակեալ բերան իւր և սկսաւ խօսիլ զանպատեհս Տէրութեան՝ Կուսակալին և գործակալաց՝ բովանդակ մի ժամ։ Նուրի Էֆէնտի մեղմով ինն կշտամբեաց զնա, թէ դուք իբրեւ Դատաւոր Արքայի այսպէս հրապարակաւ անարգես զնա եւ զդիր նորին, ո՞րպէս պատկառեսցին ժողովականք։ և մի-

թէ չհամարձակի՞ն խօսիլ զառաւելն։ Դատաւորն ասէ. ըռէ՛ անզգամ անպատկառ, ո՛վ ես դու որ համարձակիս բանալ բերան առաջի իմ։ Թէպէտեւ Նուրի կամէր զնա առաւել անպատուել, բայց պատկառէր 'ի Ժողովրդոյն, եւ զի մի արատաւորեսցի ինքն, վասն որոյ ասէ. զվայելուչն լեղուի քո ասացեր, մնայ արդ միմիայն ձեռամբ հարկանել. ուրեմն հա՛ր, զի կատարեսցի։ Ոստիկանն ասէ. ըստ բազում Դատաւորս տեսեալ է մեր, բայց ոչ որպէս զքեզ. եւ նորա բարկացեալ գոչեաց իբրեւ զառիւծ 'ի վերայ նորա, Զէլէպի, չհաւանեցա՞ր. ինձ նման այր խմաստուն 'ի հարիւրաւոր ամս հազիւ տեսանի, եւ 'ի վերայ երկրի չէ ոք հաւասար ինձ. եւ իբրեւ այսպէս զայրացեալ կագէին ընդ միմեանս, Քաղաքապետն կամեցեալ հանդարտել զնոսա. ասէ. մեք դատաւորք եւ պաշտօնեայք Տէրութեան, չէ օրէն կռուիլ յամօթ եւ 'ի նախատինս մեր առաջ քրիստոնէից. այլ տեսցուք թէ երկոքին ազգքն զինչ ասեն։ Դատաւորն ասէ, զինչ ունին ասել. զի 'ի Պասարիարքէն Ցունաց գիր ինչ չէ եկեալ վասն դատին եւ զոչպիսութենէ նորին, ուստի ոչ կամին տալ և առնել ինչ. Գործակալք ասեն, Դատաւորդ չյարգեալ զգիր Արքայի, զայդ ասես՝ եւ լինես ուսուցիչ. 'ի հարկ է զօրացեալ դոցա 'ի բանից քոց, հակառակին և ոչ կամին։ Դատաւորն, տուք, եթէ տալոց էք ինչ։ Ցոյնք գրան Դատաւորին կրկնէին։ Ոստիկանն ասէ, զանհնազանդսն հրամանի Արքային ունիմ իշխանութիւն կապանօք տանել 'ի Դամասկոս։ Ցոյնք ասեն, չունիմք պէտս կապանաց, ինքնին երթամք տալ պատասխանի Կուսակալին։ Ոստիկանն, չերկնչի՞ք 'ի Թագաւորէն. Ցոյնք, այո՛ երկնչիմք. այլ առաւել յազգէ մերմէ. զի ոչ կարէ ազատել զմեզ 'ի յանդիմանութենէ նոցին. Ոստիկանն, ուրեմն ազգն ձեր մեծ է քան զթագաւորն, և ցդատաւորն ասէր. դու եղեր լեզու 'ի բերանս այդոցիկ վատ կեավուրաց. ապա թէ ոչ զի՞րդ համարձակէին դոքա զայդպիսիս բարբառել. Փոխանորդն Ցունաց ասէ, նիստ ծանր 'ի տեղի քում, զի չէ արժան խօսիլ 'ի Ժողովի ասատ զրառդ վատ։ Ոստիկանն, ո՞վ արդեօք իցէ դուք զի յանդգնիք տալ զայդպիսի պատասխանի. Փոխանորդն յորմէ 'ի գնալ, և Քաղաքապետն իբր յանդիմանութիւն

ասէ. զի՞ պիտոյ են այդպիսի բանք 'ի Ժողովի ասատ։ Ոստիկանն, երկու Դատաւորք այնքան կռուեցան և անարգեցին զմիմեանս 'ի Ժողովի ասատ, չիշխեցեր ասել թէ անվայել է, այժմ այս ... վատ ասելս անվայե՞լ եղեւ. ահա յայտնեցաւ թէ դու եւս 'ի կողմն Ցունաց ես, տակայն 'ի վաղիւ պահանջեմ 'ի քէն զդոսա տանել 'ի Դամասկոս. և բարկութեամբ մեկնեցաւ 'ի Ժողովոյն, եւ ցրուեցաւ Ժողովն լի խռովութեամբ։

Գ Լ Ո Ի Խ Լ Թ.

Պահանջ Հայոց։ Անպիտանութիւն Դատաւորին։ Գանկտա Ցունաց առ Կուսակալն։ Նոյնպէս Ոստիկանին զազգն Ցունաց։ Ցամառութիւն Դատաւորին չկատարել զգործս Հայոց։ Մանր պահանջ Նորին։ Ժողով 'ի Ս. Ցարութիւն։ Քննութիւն տեղւոյն Ցովսեփայ Աբեմաթացւոյն։

Իբրեւ ցրուեցաւ Ժողովն և զնաց իւրաքանչիւր 'ի տեղի իւր, մատուցեալ մի ոմն 'ի բարեկամաց Դատաւորին մեղադրէր զնա առանձինն և ասէր. զի՞նչ գործեցեր այր դու, եթէ յառաջագոյն մի կամ երկու ունէիր թշնամիս, այժմ բազում եղեն՝ դուցէ միաբանեալ խորհեսցին չարիս զքէն եւ անկանիցես 'ի վտանգ մեծ. և նորա վարանեալ 'ի միտս իւր ասէր, որպէս յառաջագոյն գանկատանօք ասացեալ էր Հայոց. թէ Նուրի Լիֆէնտի է այր խորամանկ, զի եթէ արարից ըստ հայցուածոցն Հայոց, նշանակէ զիս 'ի Կոստանդինուպօլիս Թաֆէր կոչելով, և առաջի պաշտօնէից Տէրութեան կաշառակուր. և տաքնապեալ 'ի միտս իւր, կոչեաց առ ինքն զՔաղաքապետն եւ առաքեաց առ գործակալս լինիլ միջնորդ հաշտութեան. եւ նոցա ժողովեալ 'ի միասին առաքեցին առ նա զդպրապետն դատարանի, և խնդրեցին զայր 'ի նմանէ ասկս կատարելոյ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային. և նա խոստացաւ բանիւ միայն կատարել որպէս հրամայեն. եւ դպրապետն դարձ արարեալ անտի պատմեաց նոցա. ապա ապդ արարին Հայոց երթալ առ նա առանձին եւ չահիլ,

զի սկիզբն արասցեն գործոյն, եւ բարձցի խռովութիւնն
'ի միջոյ. և մնացեալքն հետեւասցէս կատարեն գրով Բը-
դեշխին և կամ Տէրութեան։

Գնացին Հայք առ Դատաւորն և յետ բազում բանից՝ խոստանայր կատարել զոմանս ըստ հրովարտակին, և զոմանս 'ի վկայս առնէր ապատան։ Հայք առաջի եդին նմա զայսոսիկ խնդիրս, առ ժամն սոքօք բաւականացեալ, զբանալի հիւսիսային դրան Այրին Ծննդեան Քրիստոսի, և զմին յերից դրանց 'ի մի կարգ եղելոց յեկեղեցւոջ անդ, զբանալի վայտեայ միջնադրան, որ արձանագրութեամբ սեփհական էր Հայոց. ճանապարհ 'ի վանաց մինչեւ յԱյրն, դնալ 'ի Ս. Աստուածածին ըստ առաջնոյն. կախել զմի շար կանթեղս, և զայլ չորս մշտակայ կանթեղս 'ի Ս. Յարութիւն, զմի կանթեղն 'ի Գատանատեղին՝ զոր յափշտակեալ էին Յոյնք. կանգնել 'ի հիմանէ զիւղաբերից սեղանն, զոր խոլառ անհետ արարեալ էին, կախել զզատկերն 'ի վերայ դրան Գերեզմանին, և զչորեսին կանթեղս 'ի շրջապատս նորին, և յայլ տեղիս նոյնպէս զզատկերս և զկանթեղս, և չինել զնաչկալս խորանաց. թափել 'ի ձեռաց Յունաց՝ զտեղիս և զկանթեղս 'ի կողմն Յովսէփայ Արիմաթացւոյն, կնքել զդուռսարն քննութեան, և զդիրն հաստատութեան երից հետեւակ ազգաց, և տալ գիր անթերի կատարելոյ զամենայն ինչ՝ զորս գրեցաք. զի թէպէտեւ Հայք կամէին ըստ մտաց նոր հրովարտակին ամենայն իրօք հաւասար լինիլ Յունաց 'ի Ս. Ծնունդ և 'ի Ս. Աստուածածին, զի այն իսկ էր դիտաւորութիւն Արքայի. սակայն Դատաւորն չառնոյր յանձն կատարել զայնոսիկ՝ և հաւասար բաժանորդութեան հրաման տալ. Յետ խօսելոյ 'ի վերայ առաջարկութեանցս այսոցիկ, ասէ Դատաւորն՝ զի՞նչ տայք, թէպէտ կաշառ ոչ ընդունիմ, այլ վասն կատարելոյ զգործս ձեր պարտ է առնել հաստատ սակարկութիւն, և այն եթէ յօժարեսցին սիրտք ձեր, և վերջապէս առաջարկէ նոցա տալ 100,000 դահեկան. Հայք առաջի եդին նմա զկարութիւնս եւ զաղքատութիւնս իւրեանց, եւ աղաչէին վարիլ խնամով և գթութեամբ. այլ նա ոչ աղաչանաց ընդ ոչ 'ի պահանջից զիջանէր. և յետ բազում բանից իմացեալ զկամակոր միտս նորա, եկեալ պատմեցին Թէոդորոս Պատրիարքի

և ծերունեաց, և 'ի վաղիւն գործակալաց, բայց զզլահանջ Դատաւորին ոչ յայտնեցին, զի մի գրգռեսցեն զդգահութիւնս այլոց։ Եւ նոքա սակն՝ հնազանդեցարուք առ այժմ խոստման Դատաւորին, և այլքն հետեւարար կատարին, միայն սկիզբն արասցուք գործոյն։ Եւ մինչդեռ Հայք խորհէին 'ի վերայ այսոցիկ իրաց, լուան յանկարծ թէ երկրորդ Թարգմանն Յունաց և այլք գնացին 'ի Դամասկոս՝ ամբաստան լինիլ զՈստիկանէն և զՀայոց, և Քաղաքապետն կամակից նոցին՝ տուեալ զօրականս և վասն երկիւղի ճանապարհին։ Եւ խմացեալ զայս գործակալացն՝ հարցին ցՔաղաքապետն, և նա ուրացաւ և չգիտէլ ձեւանայր, բայց զզօրականս խոստովանէր տուեալ 'ի խնդրոյ Յունաց. բայց նոքա ստուգեցին լեալ գիտութեամբ Քաղաքապետին, որովհետեւ գիտէր զբանս ժողովոյն, եւ գրեալ էին գիր ինքն և Դատաւորն եւ գիտութեամբ իւրեանց առաքեալ զԱխախարեայն։ Իսկ Ոստիկան Կուսակալին բարւոք տեղեկացեալ այսոցիկ իրաց՝ զայրացաւ յոյժ, և ինքն ևս գրեաց դանկատանս զՅունաց առ Բդեշխն, և զԱխախարեայն կացուցանէր յանցաւոր յամենայն ժողովս իբրեւ ընդդիմախօս Տէրութեան, և փութացոյց զայն հեծելաւ 'ի Դամասկոս։ Եւ 'ի վաղիւն գործակալք առաքեցին զոմանս առ Դատաւորն հարցանել թէ ընդէ՞ր գաղարեաց 'ի գործոյ, և ստիպէին սկիզբն առնել և կատարել զխոստացեալսն։ Եւ նա արար պատասխանի, թէ Հայք առաւել խնդրեն քան զխոստացեալս իմ, ուստի և ես յետս կացի. բայց ըզպահանջ իւր ծածկեաց. կոչեցին զՀայս և ստիպէին զնոսա շտապել այնքանեօք, և նոքա տատանեալ 'ի միտս ոչ կարէին յայտնել զծածկեալն. ասէ Մուվէլլայն՝ երեւի թէ պահանջ Դատաւորին ծանր է եւ Հայք անկարող՝ և այսպէս պատճառանօք յերերի կայ գործն, սակայն Հայք ոչ կարեն յայտնի խօսիլ, զի երկնչին 'ի Դատաւորէն և յայլոց, այլ որպէս և իցէ պարտ է շահել զմիտս նորա, եւ սկիզբն առնել գործոյն. գուցէ յանցանել աւուրց, զզլաստցի նաեւ զխոստացեալսն անդամ չկատարել, և անկցի ատելութիւն 'ի մէջ մեր և նորա և լիցին պատճառ խռովութեան։ Գնացին Հայք դարձեալ առ Դատաւորն և աղաչէին զնա ստէպ, այլ նա ոչ երբէք զիջանէր 'ի բանից

իւրոց։ Եւ 'ի Թախանձելն նոցա առնել հաւասար Յունաց ըստ ծիսից և արարողութեանց, և ապա հոգալ զպահանջ նորին. նա յայտնապէս ասէր թէ չտամ աւելի քան ըստ խոստացեալն իմ։ Եւ 'ի մեկնիլ նոցա անտի, կոչեցին ըստ նոսա գործակալքն, եւ իբրեւ յանդիմանութիւն ասէին թէ չատացարուք առ այժմ, յետոյ ամենայն ինչ կատարի շնորհիւ Արքայի, այլ դուք ոչ կամեցայք լսել, և այսպէս վատթարացուցիք զգործն։ Տարակուսեալ էին Հայք՝ զի յողդողդ միտք եւ անհաստատ խոստմունք Դատաւորին չտային վստահութիւն մթել 'ի գործ. սակայն Խօճաքեանն առեալ տարաւ զնոսա առ Դատաւորն, և 'ի ճանապարհին յորդորէր շահել զմիտս նորա, եւ յաղագս փոքր իրաց չխանգարել զգործն։ Եւ իբրեւ յանդիման եղեն ասէ՝ Էֆէնտի, ընդէ՞ր ոչ կատարես զգործս ոցա. և նա ասէ. դոքա խաղ արարին զիս պահանջելով զաւելորդ իրս, եւ յանձն առ կատարել զառաջին խոստմունս իւր, և այրն երաշխաւոր եղեւ, յետոյ ասէր Դատաւորն թէ՝ յետ դնալոյ Սախարեային 'ի Դամասկոս, եթէ հրաման ելցէ անտի յայլ կերպ՝ չմիջամտեմ. առ այս չփոթեալ Հայոց ասեն, ուրեմն որոգայթ պատրաստես մեզ դառնալով 'ի խոստմանէդ, այլ նա ասէր՝ զայս իրբեւ զուարճութիւն խօսեցայ ընդ ձեզ, ոչ դառնամ 'ի բանից իմոց, և Խօճաքեանն քաջալերէր զնոսա չերկնչիլ, այլ փոյթ տանել 'ի կատարումն գործոյն, զի ինքեանք եւս մեկնեսցին 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ յետ մեկնելոյ նորին, սկսան կատարել զգործ սակարկութեան. եւուն նմա գրել և հաստատել կնքով իւրով կատարել զամենայն ինչ զոր խոստացաւն եւ ինքեանք եւուն նմա մաւրհակ պարտուց կնքով Պատրիարքին, հատուցանել զգումարն սակարկեալ յետ կատարման գործոյն, այսպէս իրր բարեկամացեալ ընդ նմա մեկնեցան անտի։

Ի վաղիւ անդր կազմեաց Ժողով մեծ 'ի Ս. Յարութիւն, հրաւիրեալ անդ զԳործակալս եւ զԱւագանին քաղաքին. գնացին և գլխաւորք Հայոց և Յունաց. բազմեցաւ Դատաւորն ուրախ եւ զուարթ 'ի սրահ Գերեզմանին իւրովքն հանդերձ, և ասէր իրր յանդիմանութիւն Յունաց. զամենայն տեղիս ձեր չինեցիք չքեղ և պայծառ եւ զխորանն

Հայոց անհետ արարիք. ապա հրամայեաց չինել զայն. Հայք նոյնհետայն կանգնեցին զիւզաբերից սեղանն, կախեցին պատկերս և կանթեղս 'ի սիւնս և յայլ պատշաճաւոր սեփհական տեղիս. զարմացեալ էին ամենեքեան ընդ փոփոխումն Դատաւորին, զի յառաջագոյն ապառնալեօք զոչէր չթողուլ կախել զկուռս եւ պաշտել, զի ընդդէմ ասէր օրինաց. իսկ այսօր նատեալ 'ի ներքոյ պատկերաց հրամայէ կանգնել խորան, եւ ձայնէր՝ եթէ ունիք զայլ պատկերս՝ ածէք և դիք 'ի տեղիս իւրեանց։ Յանձն արար Հայոց զբանալիս Յովսէփայ Արեմթացւոյն, և բացեալ դարն զայն միայն փոքր սենեակ ինչ եւ այն եւս մթին, և զայլ տեղիս առեալ 'ի կողմն իւրեանց. և 'ի լինիլ վիճմանց եւ խռովութեանց, ծերունի փոխանորդն Յունաց կամեցաւ տեսանել զայն տեղի, այլ միաբանք նոցին ասէին դնալ առանձին՝ եւ մի առնուլ ընդ իւր զոք յօտարաց, զի մի յայտնեսցեն զգործն. զի 'ի չորից մասանց զմի մասն միայն թողեալ էին. յետ տեսանելոյն նորա զայն ընդ Տեսչի իւրեանց, հարցանէ ցՀայս. զի՞նչ ասէք վասն տեղւոյն այնորիկ. և նոքա ասեն, բարձէք 'ի միջոյ զանկրպետ օրն, եւ ըստ առաջին չափոյն յանձնեցէք մեզ. նոքա ասեն, չափն չէ յայտ, զի ոչ է չինեալ ըստ առաջին ձեւոյն։ Առ այս պատասխանի էտուն Հայք, 'ի բերանոյ ձերմէ դատեսցուք զձեզ. զի 'ի Կոստանդինուպոլիս աղաղակ բառնայիք, թէ ըստ առաջին ձեւոյն չինեցաք, այժմ յայտ յանդիման խոստովանիք զանգթութիւնս ձեր. գնացեալ տեսին նաեւ գործակալքն և մեղադրէին զանողջրմ գործս Յունաց։ Դատաւորն աղաչէր զՀայս սիրով կատարել զգործն, և նոքա ասեն թէ մեք արք եղբարք եմք և չիք խորութիւն 'ի միջի մերում, այլ ոչ է պարտ թողուլ զգթութիւն 'ի ձեռաց։ Ցայնք խոստացան տալ զերիւս կամարս միայն, եւ զմին չկամէին տալ և աղաչէին զանց առնել զնովաւ. զի դուռ սենեկի նոցին առաջի նորա է, սակայն Հայք ոչ հաճեցան. եւ վերջացաւ այն օր վէճն և փակեցաւ դուռն։

Եւ 'ի վաղիւն կարգեցան արք 'ի կողմանէ Դատաւորին և Քաղաքապետին, ընդ որս էին և այլազգի դռնապանք. կային նաեւ ոմանք 'ի Հայոց և 'ի Յունաց. Հայոց՝ հոգալ

զկարեւոր գործս, և Ցունաց քակել և բառնալ զմիջնորմն, և չինել զայն տախտակամած 'ի նշանագրեալ տեղին, որ և արարին իսկ, և որոշեցաւ սահման տեղւոյն Յովսէփայ Արեւմթացւոյն։

Այլ իբրեւ ձեռնարկին Հայք կախել զշար կանթեղս 'ի մէջ կամարին, յորոյ վերայ լեալ էր վէճն եւ որոշեալ, Յոյնք արգելին զնոսա, թէ կամարն այն մեզ չնորհեցաւ, և Հայք եւս խափանեցին զշինութիւն նոցին. և 'ի բաղմանալ բանից սկսան հարկանել զիրեարս, և 'ի վերայ հասեալ այլազգեացն որոշեալ հանդարտեցուցին զնոսա։ Իսկ հանդերձապետ Դատաւորին Եմանեան՝ չոքաւ առ Դատաւորն և ամբաստան եղեւ զՀայոց, թէ դան հարին զիս և զոմանս 'ի Ցունաց, ոչ հայեցեալ 'ի պատիւ տեառնդ իմոյ։ Լուեալ Հայոց զաղմուկն զայն առաքեցին զոմանս առ Դատաւորն և ծանուցին նմա թէ, Յոյնք դրժեալ խոստմանց իւրեանց յարուցին խռովութիւնս. և նա ասէ՝ ոմանք 'ի ձէնջ դան հարեալ են զհանդերձապետն իմ, սակայն արժանի է. զի ոչ եդաւ նա վերատեսուչ 'ի կողմանէ իմմէ և ոչ յազգէ իւրմէ. զի՞ փոյթ էր նմա մնալ անդ, իսկ նա կոծէր զանձն իւր թէ 'ի չնորհս տեառնդ իմոյ անպատիւ եղէ 'ի Հայոց, և Դատաւորն վարեաց զնոսա 'ի խաղաղութիւն. թէպէտեւ Հայք ուն էին իրաւունս գանկատելոյ, զի գտաւ 'ի ձեռս Ցունաց ուրագ և այլ գործի չինուածոյ, որոյ վասն ազդ արարին Քաղաքապետին. զի և Յոյնք յառաջագոյն ամբաստան լեալ էին նմա։ Իսկ նորա սաստկացուցեալ զբան իւր յանդիմանէր զՀայս իբրեւ յանցաւորս 'ի գրգռելոյ գանձապետին իւրոյ, եւ յասել Հայոց թէ յանցաւոր Յոյնք են. ասէ՝ դան հարեալէք զհանդերձապետ Դատաւորին, և նա բողոքէ զձէնջ. թէպէտ յորդորեցի զնա 'ի խաղաղութիւն, այլ Դատաւորն ոչ լուէ, մանաւանդ 'ի կռուին ձեր եթէ լուեալ էին զբրաց և քաղաքացւոց, խուժէին 'ի ներքս յաւար և յափշտակութիւն, և ես լինէի յանցաւոր առաջի Կուսակալին։ Հայք ասեն՝ զայդ ամենայն խօսեցաք Դատաւորին, և նա դատապարտեաց զայրն, զի չէր օրէն գնալ նորա անդ։ Քաղաքապետն ասէ՝ զայս և զայն ոչ գիտեմ, այլ իբրեւ լուայ ըզչփոթն, ետու փակել զդուռն տաճարին, եդեալ 'ի նմա

պահապան զբրս, մինչ ցաւարտումն չինուածոյն, և 'ի լինել դատաստանի յայտնեսցին յանցաւորքն։ Լուեալ Հայոց զմեծարանութիւնս նորին, ազդ արարին Դատաւորին, և նա առաքեաց առ նա զմին 'ի պաշտօնէից իւրոց հանել զզբրս 'ի տաճարէն, զի չէր մնաս ինչ յերկուստեքէ, եւ մնալ թէ ուր կայանայ խնդիրն։ Ի վաղիւ անդր բացաւ դուռն և գնացին անդ քննել զվէճն և սահմանել. զմնի բաղումս բանից իբրեւ տեսին Հայք թէ անհնարին է Ցունաց թողուլ զայն կամար բոլորովին, ակամայ կամօք հաճեցան լինիլ բաժանորդ, և կախեցին զկէս շար և 'ի վերայ նորա կանթեղք 3. կախեցին և Յոյնք կէս շար՝ նոյնպէս 'ի վերայ նորա կանթեղք 3, և մնաց այնպէս։

Իսկ Քաղաքապետն ոխացեալ ընդ Հայս՝ սպասէր դիպող ժամու դաւանանել զնոսա. Հայք զխաչկալս խորանին և զայլ կարեւոր իրս Վերնատան չեւ եւս էին պատրաստեալ, նմին իրի խնդրեցին 'ի Դատաւորէն և 'ի գործակալաց, 'ի պատարաստելն գնել զայնս 'ի տեղիս իւրեանց անարգել, և նոքա յանձն առին և ետուն հրաման, փակեցաւ դուռն։

ԳԼՈՒԽ Լ.

Խնդիր Ս. Աստուածածնի և Ս. Ծննդեան։ Արգելումն գործոյն Հայոց 'ի կողմանէ Կուսակալին։ Գիր Նաբի Էֆենտեայ։ Մեկնիլ յԱրուսաղէմ Խոճաբեանին։ Ճարտարապետին և Ոսոիկանի Կուսակալին։ Սարգիս և Դիոնէսիոս վարդապետաց երթալ 'ի կոչ Կուսակալին։

Յետ կատարելոյ զայսոսիկ 'ի տաճարին Ս. Յարութեան, Հայք եւ գործակալք առաջի եդին Դատաւորին սկիզբն առնել գործոց Ծննդեան և Ս. Աստուածածնի։ և նա ասէ՝ ազաչեցին զիս Յոյնք սպասել մինչեւ առնուլ լուր ինչ 'ի Դամասկոսէ, զի վասն այն առաքեալ են ըզ Սաֆարեայն։ Տարակուսեալ Հայոց 'ի վերայ այսր բանի, ասեն՝ կատարեա՛ դու գիտութեամբ ամենեցուն զոր խոստացարդ, և 'ի գալստեան հրամանի Կուսակալին յայնժամ

ըստ այնմ խորհրդոյ. ոչ հաճեցաւ նա՝ այլ ստիպէր սպասել։ Եհաս Թղթաբերն 'ի Դամասկոսէ ('ի և Ցուլիսի), այլ ոչ ինչ յայտնեցին առ ժամն. Հայք դիմեցին առ Մուվէլլայն խնամալ ինչ, և նա ասէ՝ ստուգեցէք 'ի Դատաւորէն, զի յառաջագոյն ասացի ձեզ գրել 'ի Կոստանդինուպոլիս, դուք ոչ գրեցիք և զիս սրդելիք 'ի գրելոյ, դնացէք ուրեմն հոգալ զգործն ձեր։ Ցետ աւուրց ինչ փոքու իմն յայտնէր Դատաւորն զմիտ գրոյն չլինիլ ձեռնամուխ 'ի գործն Ծննդեան եւ Աստուածածնի ըստ առաջադրութեան Ցունաց, եւ սպասել նորոյ հրամանի Արքային։ Հայք ասեն՝ դու զի՞նչ ասես վասն այսր. Դատաւորն՝ կամէի կատարել զգործն ձեր և չահիլ 'ի ձենջ եւս, այլ զի՞նչ ասացից՝ Բդեշխն այնպէս գրեալ է, որպէս առ գործակալն։ Դնացին Հայք առ Ոստիկան Կուսակալին, և նա առ զայրոյթ սրտին չկամէր պատասխանել և կամ յայտնել ինչ, այլ ասէր թէ՝ յետ ընթեռնլոյ զգիրն՝ պատասեցի զարմացեալ ընդ գործս Բդեշխին. զի յետ տալոյ նորա կնքով իւրով քանիցս հրամանագիր, և ինձ եւս առանձին՝ կատարել զգործն ըստ մտաց հրովարտակին, այժմ զի՞ եղեւ նմա, որ զհակառակն գրէ. սակայն այս հարուած յայլմէ ումեքէ է, զի ինքն ոչ առնէ այսպէս, այլ մի երկնչիք զի խնդիրս այս դարձեալ լուծանի 'ի Դամասկոս, և ոչ անկանի 'ի Կոստանդինուպոլիս, զի նախատինք են նմա, և այլ սոցին նման բանք։ Մատեան ապա առ Նուրի էֆէնտի, և թախանձանօք ետուն ընթեռնուլ նմա զգիր Կուսակալին, որ ունէր օրինակ զայս. « Ցոյնք գրեալ են առ իս թէ 'ի դատին Կոստանդինուպոլսոյ ոչ է լեալ դատաստան ինչ վասն Բեթղեհէմի և Աստուածածնի, և չունին գիր ինչ 'ի Պատրիարքէն և յազգէն իւրեանց վասն այնց խնդրոց, որք տեղեակք էին դատին. նմին իրի չհամարձակին Ցոյնք ղսեփհական և զբաժանորդ տեղիս յանձնել, և դուք եւս թողեալ զգործն այնպէս 'ի վիճակի իւրում՝ գրեցէք Իլամ և հարցումն 'ի Դուռն, և 'ի դալստեան նորոյ հրամանի ըստ այնմ գործեցէք »։ Նուրի էֆէնտի տարար նմա պատասխանի այսպէս, « Դուք յառաջագոյն հմուտ գոլով մտաց Արքունի գրոց՝ գրեցիք քանիցս դիր հրամանի վասն գործադրութեանց նոցին, իսկ որովհետեւ

կասկածեալ էք այժմ 'ի բանից Ցունաց, գրեցէք 'ի Դուռն որպէս վայելէ մեծութեան ձերում, ես ոչ կարեմ գրել թէ Պատրիարքն Ցունաց չէ գրեալ, եւ թէ 'ի դատին այնպիսի բանք չեն լեալ »։

Ցետ այսր ամենայնի կոչեաց նաեւ Դատաւորն զՀայս, և եցոյց նոցա զգիր Կուսակալին, եւ պատուէր առ ինքն բաւական լինել և դադարիլ, զգործ Ծննդեան և Աստուածածնի 'ի ժողովի վճարել, գրել Իլամ և առաքել առ ինքն և ծանուցանել Տէրութեան, թէ այսպէս պարտ էր լինիլ։ Եւ յաւել ասել Դատաւորն. Հայք ընդդէմ իրաւանց Տէրութեան՝ և հրամանաց նորին խօսիլ և գործել համարձակին։ Նոքա ասեն. հպատակ եմք Տէրութեան և հնազանդ հրամանի նորա, երկնչիմք ինքնագլուխ գործել ինչ, որպէս գիտէք այնպէս գրեցէք, սակայն եթէ ըստ հրամանի Կուսակալին առնէք վճիռ ինչ 'ի ժողովի, չտամք երբէք պատասխանի ընդդէմ հրամանի Արքային, այլ գրեմք առ աղդն մեր 'ի Կոստանդինուպոլիս և ծանուցանեմք Թագաւորին, և զոր ինչ հրամայեսցէ նա՝ այնպէս առնեմք։ Առ այս Դատաւորն ոչ կարաց խօսիլ և ոչ ժողով գումարել, և Մուվէլլայն հրաժարեցաւ երթալ 'ի ժողով Դատարանի. սակայն չեղեւ յայտնի թէ զի՞նչ գրեաց Դատաւորն Կուսակալին, և յորդորէր զՀայս տալ Իլամ վասն բաժանորդութեան հիւսիսային դրան Բեթղեհէմի, և Ս. Աստուածածնի ըստ հրովարտակին Սէլիմայ. զի գիտեմ ասէր, Ցոյնք օգնութեամբ Բդեշխին առնուն յինէն Իլամ և հանրագիր 'ի քաղաքացեաց չունել իրաւունս Հայոց. զի ամենեքեան վկայեն թէ դուցէ տեսեալ եւ կամ լուեալ իցէ մեր՝ Հայոց տիրել Ծննդեան տեղւոյն. նախ քան զգրել Բդեշխին ինձ զայսմանէ, տաց ձեզ Իլամ, և յետ այնորիկ չէ հնար ումեք այլայլել զայն։ Ասեն ցնա Հայք. դու զմեզ կարեւէր խոցեալ վիրաւորեցեր զսիրտս մեր, և արկեր զմեզ 'ի վտանգս յայս, և այժմ կամիս զվերս մեր պատել. սակայն բարւոք 'ի միտ առեալ ծանեաք, որ այսու հետեւ չլինի երբէք օգնութիւն 'ի քէն, զի դու իսկ ըստ հրամանն Արքայի արհամարհեցեր, զո՞րպիսի Իլամս տալ խոստանաս, մնացէ առ այժմ այդ։ Զի ծանեան զխարդախ միտս նորա, որով զխոստացեալն Հայոց, կամէր ան-

թերի թափել 'ի նոցանէ։ Սակայն Հայք գիտէին թէ առանց կնքոյ եւ գրոյ Մուվելլային՝ չգործէր օգուտ ինչ Իլամ Դատաւորին. զի նա էր վերատեսուչ գործոյն հրամանաւ Արքայի, և յայտնի գիտացեալ թէ չունի կատարիլ գործն ձեռամբ նորին, 'ի բաց կացին 'ի նմանէ։

Կոչեալ զնոսա առաջի իւր Նուրի Էֆէնտի, յայտնապէս ասէր՝ թէ գործս այս չկատարի ասա. զի 'ի տուրս առաւել են Յոյնք քան զՀայս, և ակներեւ տեսանի թէ Կուսակալն, Դատաւորն և այլազգիք քաղաքիս առաւել ոնին նեղել զձեզ պաշտպանելով զՅոյնս, և դանձիւք վճարել զգործն ընդդէմ է հրամանի Արքային, վասն որոյ դուք գրեցէք առանձին մի ըստ միոջէ զամենայն զեղեալսն առ գլխաւորս ազգին ձերոյ, և ես գրեցից զամենայն զոր միանգամ տեսի և լուայ առ գլխաւոր վերատեսուչ գործոյս Պաշմագճի Զատէ Զէքի Էֆէնտի և նա անխտիր խորհրդակցելով ընդ մեծի Դենպեսին, և 'ի միասին զամենայն ինչ յանդիման կացուցանեն առաջի Արքայի. յայնժամ ելանէ անտի հրաման հզօր և կատարին ամենայն խնդիրք ձեր։ Հաճոյ թուեցաւ այս բան Հայոց, և գրեցին։

Ի սին ժամանակի յարեաւ Խոճաքեանն գնալ 'ի Կոստանդինուպօլիս. Հայք մեղադրէին զնա եւ ասէին. դու Ոստիկան կարգեալ 'ի կողմանէ Տէրութեան, զիա՞րդ անկատար թողեալ զգործն փութաս մեկնիլ ասա։ Եւ նա պատասխանէր զերկարիլ գործոյն, զանհաստատ միտս Դատաւորին, երթալ ծանուցանել զայս ամենայն ասէր Կուսակալին. եթէ ոչ կատարեսցի անդ, փութալ 'ի Կոստանդինուպօլիս եւ յայտ առնել Արքայի և ապասել հրամանի նորին. չծանրանալ իւր ծախիւք 'ի վերայ Հայոց, և զժամանումն աւուրց հասանելոյ իշխանութեան, զոր խոստացեալ էին 'ի Դրանէ, այլովքն հանդերձ։ Յորդորէր զնա եւ Նուրի Էֆէնտի ունկնդիր լինիլ բանից իւրոց, չթողուլ զգործն անկատար եւ տարաժամ մեկնիլ, թերեւս բարկասցի Արքայ. այլ նիստ ասա ասէր, զի ծանուցցուք Արքայի և ըստ հրամանի նորին գործեսցուք. այլ ես ասէ ոչ մեկնիմ ասի յուսացեալ 'ի զօրութիւն առաքչին խմբ, այլ ծանուցանեմ եւ ապասեմ պատասխանւոյ։ Զէր հնար Խոճաքեանին մնալ յերուսաղէմ. զի գիտութեամբ Դատաւորին, Քաղաքապետին և այլոց՝ որոյացեալէր 'ի կողմն Յունաց եւ յագեալ։ Պատրաստեցաւ 'ի չուս եւ Ոստիկան Կուսակալին՝ յառաջ բերեալ զմիջնորդութիւն իւր առ Բդեչան վասն Հայոց, չպատրիլ 'ի բանից Յունաց. զպարտուղի գրել 'ի Դուռն, եւ զպարտաւորիլն առաջի Արքայի։ Հայք եռուն զվարձ ծառայութեան Խոճաքեանին յորդորմամբ Մուվելլային. զկնի բազում վիճմանց և խռովութեանց հոգալով և զայլ կարեւոր սիւս նորին, որդւոյն և ծառայից։ Իսա նաեւ Ոստիկանն. հոգացին զծառայութիւն Ճարտարապետին, գիտութեամբ Նուրի Էֆէնտեայ. զի արդարութեամբ կատարեաց զգործ իւր 'ի չափելն և 'ի քննելն։ Իսկ Նուրի Էֆէնտի կարգաւորեաց զտումար քննութեան և որոշեաց զծախսն Հայոց վասն շինութեան տեղեաց նոցին, որ է 34,516 դահեկան 20 փարայ և 6 ասակ. իսկ բովանդակ ծախուց գումարն է 4,141,986 դահեկան։ Գրեաց Իլամ առ Տէրութիւնն վասն կատարեալ և անկատար գործոց, և յետ կնքելոյ զնոսա, ետ կնքել նաեւ Դատաւորին, և պատրաստեաց զայլ գրեանս առ այլ և այլ անձինս, յորս յայտնի ցուցանէր զհաւատարմութիւն Ճարտարապետին. իսկ զտարաժամ վերադարձ Խոճաքեանին՝ ինքեան հարցանել ասէր. զայսոսիկ գրեանս յանձն արար Նուրի՝ Ճարտարապետին, զորմէ Հայք եւս գոհութեամբ գրեցին։ Արդ՝ առքս ամենեքեան անձինք իրրեւ 38 մեկնեցան յերուսաղէմէ 'ի Դամասկոս ('ի 10 Յուլիսի)։

Իսկ Նուրի Էֆէնտի մնացեալ միայն յերուսաղէմ՝ սկսաւ գրել առ Զէքի Էֆէնտի բարերար իւր զամենայն հանդամանս գործոյն 'ի սկզբանէ մինչեւ ցօր մեկնելոյ նոցա յերուսաղէմէ, զհակառակութիւն Դատաւորին, զխարդախութիւն Խոճաքեանին, զպակաս և 'ի Յունաց զդողացեալ տեղիս Հայոց 'ի Ս. Յարութեան, այլովքն հանդերձ, և անհնարին 'ի գլուխ ելանել գործոյն առանց հրովարտակի, որոյ վասն իսկ սպասէր. գրեցին նաեւ Պաարիարքն և միաբանք առ գլխաւորս ազգին պարագայիւք ('ի 21 Յուլիսի)։ Երանի թէ յայսմ ամի եւս մնացեալ էր Արքունի հրովարտակն ասէին՝ զի անկեալ էին 'ի ներքոյ բաղմագումար պարտուց. զայսոսիկ գրեանս յանձն տարին Աղամ Գալֆիային և միաբան Սարգսին, ընդ որս էր եւ բարեպաշտուհի Խաթուն

տիկին մայր Գրիգորի Գալֆայի, որք եւ իջին 'ի Ցոպկ նաւել անտի 'ի Կոստանդինուպոլիս։

Զկնի մեկնելոյ սոցա, 'ի նմին աւուր եհաս թղթաբեր 'ի Դամասկոսէ, գրեալ հրաման Կուսակալին առ Քաղաքապետն՝ փութանակի առաքել զերկու գլխաւոր վարդապետս Հայոց։ Գրեալ էր նաեւ առ Թէոդորոս Պատրիարք վասն այսր։ Նոյնպէս գրեալ էին Քեահեայ Պէյն և Նորին գանձապետ Ցարութիւնն և Մէհէմմէտ Պէյ Ոստիկանն, որ յերուսաղէմ էր։ Թէպէտեւ յառաջագոյն խնդրեալ էր Կուսակալն առաքել զոմանս, այլ Թէոդորոս զանց արարեալ էր զնովաւ, զի մի բացցի Դուռն մեծամեծ ծախուց։ Եւ յայս նուազ ստիպեալ 'ի հարկեցուցիչ բանից Կուսակալին և Քաղաքապետին, ընտրեաց զԿիպրացի Սարգիս և զԴիոնէսիոս վարդապետս, եւ զերկրորդ Թարգման զՑովհաննէս սարկաւագն։ Սակայն Քաղաքապետն ոխացեալ ընդ Հայս, առաջի եդ նոցա զինդիր կուսոյն Ցովսէփ Արեմաթացւոյ տեղւոյն 'ի Ս։ Ցարութիւն, և պահանջէր 25,000 դահեկան, որպէս առեալ էր 'ի Ցունաց։ զի լուեալ Կուսակալին ոչ լուէ ասէր վասն այսր։ Հայք զանց արարեալ զնովաւ ասէին՝ դան հարեալ զմիաբանս եւ զտեղիս մեր եւտուք յափշտակել, այժմ խնդրէք տուգանել եւս զմեզ։ լուեալ Քաղաքապետին զբանս Հայոց, գրեալ ազդ արար Կուսակալին, և ընկալեալ զպատասխանն իբր յանդիմանութիւն ինքեան անփոյթ լեալ զգործէ իւրմէ, եւ ոչ ծանուցեալ 'ի ժամանակին զդիպուածսն։ զայս գիր ցուցանէր Հայոց իբր սպառնալիք թէ՝ դուք ոչ լուայք յայնժամ բանից իմոց, այժմ գրեցից զեղեալսն առ Բդեշխն և զընդդիմանալն ձեր։ Եւ 'ի գնալն անդ առնել ընդ ձեզ ըստ կամաց իւրոց։ Ծանեան Հայք զմիտս նորա և զառաջակայ վտանգն, որոյ վասն խոստացան լինիլ իրաւախոհ ընդ նմա։

Ապա կոչեալ զնոսա Դատաւորին ասէր։ Կուսակալն ըստ ձեզ և զՑոյնս յանդիմանառնէ ատենի իւրում, և զգործն ըստ հրամանի Արքային կատարէ, եւ Խօճաբեանն անդ օգնէ ձեզ։ այլ Նուրի Էֆէնտի զկակառակն պնդէր, լինել Բդեշխին 'ի կողմն Ցունաց, եդեալ 'ի մտի կեղծել նաև զՀայս։ բայց պարտ է ջանալ և երկարել զգործն, մինչ 'ի

գալուստ պատասխանի գրոց 'ի Կոստանդինուպոլսոյ։ Ցետ այնորիկ գրեաց Թէոդորոս Պատրիարք գիր աղաչանաց առ Կուսակալն, առ երկրորդ Նորին և առ այլ կարեւոր անձինս, պատրաստեալ իւրաքանչիւրոց զարժանաւոր ընծայս, և յանձն արար վարդապետաց։ Եւ նաեւ զպատճէն հրովարտակին և մեկնեցան յերուսաղէմ ('ի 23 Ցուլիսի)։ Ուղեկցութեամբ երկուց զինուորաց և սուրհանդակին, ճանապարհ արարեալ սոցա հասին 'ի վերջին իջեւանս Սաղսաղա կոչեցեալ, և մինչ պատրաստէին ելանել անտի՝ ահա եկեալ մտին 'ի նոյն իջեւան Խօճաբեանն և Ճարտարապետն իւրովք հանդերձ՝ և զարմացեալ ողջունեցին ըզնոսա, և 'ի հարցանել զպատճառ ճանապարհի նոցա, ասէ Խօճաբեանն՝ Բդեշխն չուենի հանութիւն կատարել զգործն Հայոց, որոյ վասն ճամապարեմ 'ի Կոստանդինուպոլիս ծանուցանել զիրսն Արքայի։ Իսկ Ճարտարապետն առանձին եցոյց նոցա չհաւատալ կեղծ բանից նորին, զի առաջի Բդեշխին արդարացոյց զՑոյնս, և նորա առեալ գաղտ 'ի Ցունաց 5000 դահեկան և յայտնապէս ետ ցնա իբր չնորհ մինչ 'ի կողմանէ իւրմէ։ լուեալ զայս Վարդապետաց գրեցին գիր առ Ադամ Գալֆայն և առ ընկերս Նորին՝ փութալ հասանիլ 'ի Կոստանդինուպոլիս չմնալ ուխտաւորաց։ զի Բդեշխն 'ի բանից Ցունաց ճգեալ է զգործն 'ի Դուռն, եւ զմեզ կամի նեղել, եւ զայս գիր չյայտնել ումեք, (1813։ 'ի 29 Ցուլիսի, ժամ 7 գիշեր)։ զայս գիր ետուն Ճարտարապետին հասուցանել նոցա յԱքքէ, և կամ ուր և պատահեսցին։

Թէպէտ վարդապետքն կամէին դառնալ յերուսաղէմ, այլ երկեան 'ի Բդեշխէն և 'ի զօրացն, և 'ի նմին աւուր եկեալ անտի մտին 'ի Դամասկոս եւ օթեւանս կալան 'ի վանս Հայոց Ս։ Սարգսի եւ զգալուստ իւրեանց ազդ արարին կիւչիւք Ցարութիւն գանձապետին, և 'ի վաղիւն չոքան առ Քեահեայ Պէյն և մատուցին զգրեանս, և նորա 'ի վերին երեսս սիրով ընկալեալ զնոսա հարցանէր զողջունէ Պատրիարքին և ծերունեաց, ապա եհարց զգործոյն, եւ նոքա պատմեցին զեղեալսն, և զանկատարսն ըստ մտաց հրովարտակին եւ դատին։ Դուք ասէ յերուսաղէմ երկու կերպ սակարկութիւնս արարիք ընդ Մէհէմմէտ Պէյին,

առաջինն 500 քսակ, և երկրորդն 750, այժմ զինչ ունիք առնել ասա։ Եւ նոքա ասեն, ոչ այդպէս, զի 'ի կատարիլ գործոյն, յորժամ հանդերձեալ էր Ոսմիկանն դիմել 'ի կողմանս յայսոսիկ, աղաչեցին զնա ծերունիքն փոյթ տանել կատարման գործոյն խոստացեալ հաճել ըստ կարեաց զմիտս Կուսակալին, նոյնպէս եւ յերկրորդ նուագի 'ի դիմել նորա յերուսաղէմ ասասիկ հրամանաւ, և 'ի լինել բանից 'ի ժողովի ծերուանեաց, թէ զինչ ունիք տալ, եւ նոքա ամենեքեան ետուն պատասխանի թէ՝ ոչ երբէք կարիմք յետս 'ի ծառայութենէ, այլ միայն կատարեսցի գործն և վերջասցի խռովութիւնն։ Եւ 'ի վերջոյ սահմանեցաւ յետ լրանալոյ գործոյն տալ Կուսակալին 400 քսակ, և զոր ինչ յառաջագոյն վասն ձեր խոստացեալ էին։ Իսկ 'ի Թախանձել Մէհէմմէտ Պէյին հատուցանել 500 քսակ, ծերունիք չառին յանձն հայեցեալ յաղքատութիւնս իւրեանց, եւ սակարկութիւնն մնաց 'ի մէջ 5—400 քսակաց։ Սակայն այժմ աղաչեմք 'ի կողմանէ ծերունեաց առանց 'ի մէջ բերելոյ զանուն դրամոց, հրամայել ըստ մտաց հրովարտակին կատարել զգործն, յայնժամ ծերունիք եւս 'ի հարկէ ճանաչեն զպարտաւորութիւն իւրեանց, և խոստացեալ դրամարն այն՝ լիցի հատուցանել 'ի պայմանեալ ժամանակի փոխանակագրով։ Եւ նորա կոչեալ զՍողոմոն հրէայ սեղանաւոր Բդեչխին՝ հեգնելով և ծիծաղելով պատմեաց նմա զբանս վարդապետաց, եւ նորա կեղծաւորեալ ասէ՝ վանօրայք պատրաստ են միշտ ծառայել Տէրութեան՝ Կուսակալին և ձեզ։ այս գործ բազում անգամ խոստակցելոյ զմիտս ունի, եւ ոչ միանգամ եւ երկիցս։ Տար ուրեմն ասէ զոսսա համբուրել զքղանցս տեառն իմոյ, և ասա խօսիմք։ Եւ եմոյծ զնոսա յատեան Կուսակալին և մատուցին զգիր Պատրիարքին, եւ նորա ընթերցեալ զայն, եհարց զգործոյն, և նոքա պատմեցին համառօտիւ։ Ընդէ՞ր նրատեալէ ասէ Մուվէլլայն յերուսաղէմ, և նոքա ետուն պատասխանի, ներքին դիտաւորութիւն նորին մեզ անդիտելի է իսկ զոր ինչ լուեալ է մեր 'ի բերանոյ նորին, այս է թէ 'ի ճանապարհորդել նորին՝ Տէրութիւնն պատուիրեալ է նմա, յետ լրանալոյ գործոյն Իլամ առնել եւ ապասել հրամանի, և այժմ գործն մնաց անկատար, նմին իրի ըստ

պիսկեալ է սպասել։ Կուսակալն ասէ, զարմանք, Խոճաքեանն և Ճարտարապետն աւարտեալ զպաշտօնս իւրեանց՝ առին զդրեանս եւ մեկնեցան անտի, Մուվէլլայն սպասէ թէ տակաւին գործն թերի՛ է՝ այլ եւս զի՞նչ խնդրիք։ վարդապետք ասեն, ըստ հրամանի արքային եւ հաճութեան երկուց ազգաց 'ի դատատանին Հայք եւս բաժանորդ լինել ընդ Ցունաց յորոշեալ տեղիս, երկարեցան բանք 'ի վերայ այսր խնդրոյ իբր կէս ժամ։ Կուսակալն ասէ՝ իրաւունքն 'ի ձեռս Ցունաց է, զի յառաջագոյն 'ի դատին ընդ Լատինս ցուցին ինձ զդաշնագիրն Օսմանայ և զՍէլիմայ հրովարտակն, զորս դուք ոչ ունիք։ Վարդապետք, 'ի մեծի դատին առաջի Դենպետին և Նախարարաց 'ի ժողովի անդ ընթերցան զայնոսիկ, եւ ըստ այնմ գրեցաւ Իլամ և տուաւ Արքայի, և ել ասա արտաքս նշանակեալ կարմրագեղով տալ հրովարտակ երկուց ազգաց ըստ մտաց եւ 'ի նոսին բովանդակեցան բանք հրովարտակացն Սէլիմայ, եւ Հայք ըստ մտաց նորին Իլամին պահանջեն։ սակայն ոմանք ագահութեամբ միոյ կողմանն պաշտպան եղեն ընդդէմ հրովարտակին, եւ միւսոյ կողմանն բռնութեամբ պատասխանեցին։ այլ դուք որ երեք թուղով Վեզիր և Իշխան գաւառիս էք և մին 'ի պալատականաց Արքայի, յուսամք թէ առաւել փոյթ տանիք 'ի կատարումն եւ 'ի գործադրութիւն կայսերական հրամանին՝ զի Հայք եւս հպատակ են Տէրութեան։ Ապա եհարց թէ ո՞րպէս եղեւ քննութիւնն՝ և որոշումն ո՞ր եղերեցաւ։ Ասացին՝ առաջի բաղմութեան այլազգեաց, և գրեցաւ, և մեք եւս 'ի զնին կայաք ընդ այլոց, եւ յորժամ կամեցաք լինել վերահասու, ասացին, թէ չէ պարտ գիտել ձեզ նախքան զառաքելն զայն առ Տէրութիւնն և գալ պատասխանի նորին։ Կուսակալն, եթէ այդպէս է զի՞նչ արարիք 'ի Ս. Ցարութիւն։ Ասացին, զկնի չինութեան Տաճարին այնորիկ, ոչ էին կախեալ պատկերք և կանթեղք մեր, այժմ զնոսա միայն կարգաւորեցաք։ սակայն ունիմք տակաւին պակասութիւն բազում անդ։ իսկ 'ի Բեթղեհէմ և 'ի Ս. Աստուածածին յուսամք թէ հրամանաւ մեծութեան ձերոյ կատարին ամենեքեան։ Քարտուղարն ասէ՝ որոյ հրամանաւ կախեցան կանթեղքն և պատկերքն այնոքիկ։

Նոքա ասեն, զհետ գնալով հրամանի Արքային և Կուսակալին՝ ձեռամբ Դատաւորի եւ Գործակալաց՝ առաջի բազմութեան այլազգեաց, ոմանք կատարեցան, և մնացեալոց ետուն հրաման առնել ըստ օրինաց մերոց, այլ գործք Բեթզեհէմի և Ս. Աստուածածնի ոչ կատարեցան։ Կուսակալն, միթէ Յոյնք յօժարի՞ն տալ զիսկանս եկեղեցւոյն իւրեանց 'ի Բեթզեհէմ։

Ասեն՝ եկեղեցին ոչ է սեփհական Յունաց, որպէս ոչ է գրեալ 'ի գիրս Սէլիմայ Արքայի, այլ առ հասարակ Բեթզեհէմ գիւղի։ Եւ Յոյնք առին զայն 'ի ձեռաց Լատինաց յամին 1758։ և այլ սոյնպիսի բանք երկար։ Կուսակալն՝ 'ի միոյ կողմանէ ունիք իրաւունս։ զի հպատակ էք Տէրութեան։ եւ Հրեայ Սողոմոնն 'ի շնորհս Վարդապետաց եւ իւր նախածանօթ Պատրիարքին, ասէ՝ սոքա զշնորհս տեառնդ խմոյ խնդրեն։ Ի վիճաբանութենէ ատի յայտնապէս երեւի թէ բովանդակ հարցմունք Բդեշխին են 'ի բանից Յունաց։ զի Սախարեայն յառաջագոյն էր անդ, և 'ի ձեռն միջնորդաց և խոստմանց ձգեալ զնա 'ի կողմն իւրեանց, եւ նորա խոստացեալ կատարել զենդիրս նոցա և ընդ Խաճաքեանին գրեալ 'ի Կոստանդինուպոլիս։

Եւ ելեալ Վարդապետաց յԱտենէ Կուսակալին՝ պատմեցին Բեհահեայ Պէյին զամենայն բանսն զոր խօսեցան եւ լուան, և ասա Մէհէմմէտ Ոստիկանին, և նորա քաջալերեալ զնոսա՝ խոստացաւ և ինքն եւս խօսիլ ընդ Բդեշխին և ընդ երկրորդի նորին։ Իսկ հայազգի գանձապետ Յարութիւնն գտեալ զՎարդապետսն անդ՝ ծանոյց նոցա զմեկնիլ իւր գործով իւիք 'ի հայրենիս իւր, և ապա առաջի եդ նոցա 'ի դիմաց Բեհահեային բերել փութով 250 քսակ վասն Կուսակալին և 20 վասն Բեհահեային իւր թերհաշիւ, որով համարձակեսցի մոռանել առ Բդեշխն վասն գործոյն, զի Յոյնք բազումս խոստացեալ են։ և թէ՝ աղաչեցի ասէ զԲեհահեայ Պէյն չպահանջել 'ի ձէնջ առաւել քան զխոստացեալն ձեր։ Եւ նոքա ետուն պատասխանի՝ ցաւ է մեզ բաժանումն ձեր 'ի մէնջ, զի Պատրիարքն եւ ծերունիք յուսացեալ 'ի միջնորդութիւնս քո առաքեցին զմեզ, եւ այժմ այսպէս թողեալ գնաս, այլ վասն դրամոցն զոր պահանջես՝ չունիմք երբէք ընդ մեզ դրամ, և 'ի կատարիլ

գործոյն տամք բերել յԵրուսաղէմ եւ հատուցանեմք, միայն Բեհահեայ Պէյն աչխատ լիցի 'ի գլուխ տանել ընդ գործն, մեկնեցան Վարդապետքն 'ի վանս, և Յարութիւնն 'ի Պօռ։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վիճաբանութիւն Վարդապետաց ընդ Բեհահեայ Պէյին վասն դրամոց։ Դարձեալ վէճ եւ պահանջ Բեհահեային վասն Բեթզեհէմի և Աստուածածնի։ Գրեանք Կուսակային 'ի պաշտպանութիւն Յունաց։ Զգենուլ Վարդապետաց սամուրէնի և տալ մուրհակ պարտուց։

Ի ՎԱՂԻՒ անդր մինչ երթային Վարդապետքն առ Բեհահեայ Պէյն, զինուորաց գտեալ զնոսա 'ի ճանապարհի փութացուցանէին, որպէս թէ զայրացեալ իցէ նորա։ իրրեւ յանդիման եղեն՝ խոժոռեալ Բեհահեային ասէ՝ ո՞ւր էք զի ոչ երեւիք, ընդէ՞ր ոչ հոգայք զգործն ձեր, եւ ո՞ւր է բերեալ դրամն։ Նոքա ասեն՝ դրամ ոչ ունիմք ընդ մեզ, կատարեցէք զգործն, խոստանամք և տամք մուրհակս, զի այս է պատուէր ծերունեաց, և նոքա հատուցանեն։ Ասէ, զի՞նչ ունիք տալ, ասեն 400 քսակս արծաթոյ։ Եւ նորա լցեալ բարկութեամբ ասէ, խաղալիք են գործք ձեր, զի միայն վասն գործոց կատարելոց յաւուրս Խաճաքեանին խոստացայք 'ի ձեռն Մէհէմմէտ Պէյի տալ միայն Կուսակալին 500 քսակս, այժմ զի՞նչ տայք վասն կատարման այլոց խնդրոց ձերոց։ Նոքա ասեն՝ ոչ այդպէս, զի սակարկութիւնն այն մնաց 5—և 400 քսակի, և այն զկնի կատարելապէս վերջ տալոյ գործոյն, եւ այժմ եկեալ յոտս ձեր աղաչեմք ներեցուցանել զդրամարն զայն։ զի ծերունիք յուսացեալ 'ի գթութիւնս ձեր առաքեցին զմեզ, և խնդրեմք չառնել զմեզ ամօթապարտ։ և նա ասէ՝ վասն այնորիկ փութամ զի կատարեսցի գործն և գուք խնդութեամբ դարձջիք 'ի տեղիս ձեր։

Եւ իրրեւ աղերս արկեալ աղաչէին զնա՝ ասէ, ոչ այնչափ աղաչանք և պաղատանք օգնել ինչ կարեն, որչափ դրամն, 'ի կարի թախանձել եւ 'ի ժտելն, ասէ՝ զի՞նչ

տայք · առացին 500 քսակ , որպէս խոստացան ծերուն-
ներքն , եթէ գործն կատարեալ վերջասցի ։ Բեահէայն
ասէ , ոչ ապաքէն ասացի թէ խաղալիք են գործք ձեր ,
զի զ500 քսակն վասն եղեալ իրաց խոստացայք , այլ վասն
Բեթղեհէմի և Աստուածածնի զի՞նչ ունիք տալ , եւ պա-
հանջէր 750 քսակ , եւ Հրեայ Սողոմոնն էր միջնորդ , զի
ծանօթ իմ ասէր Պատրիարքին և գրեմ առ նա , զի եթէ
ոչ հաճեսցի , ես հատուցից փոխան նորա , միայն գործք
ձեր կատարեսցին ։ Իսկ վարդապետաք ոչ կարէին խոստա-
նալ աւելի քան զոր խոստացեալ էին ծերունիքն , և Սար-
գիս վարդապետ պարզութեամբ ասէ՝ միայն 50 քսակ ա-
ւելի խոստանալոյ ունիմք հրաման , վասն որոյ տամք 550
քսակ , և ոչ աւելի · Երկարեցան բանք 'ի վերայ այսր իր-
բեւ ժամ մի մերթ սիրով և մերթ բարկութեամբ ։ Տե-
սեալ վարդապետաց թէ չիք ազատութիւն , ասեն , ակն
ունիցաք 'ի շնորհս ձեր վինել իրաւախոհ ընդ Ցունաց ,
այլ բաց 'ի քսակաց զայլ ինչ ոչ լսեմք , զի՞նչ ունիք տալ
մեզ , որ այսքան քսակս պահանջիք , Ասեն՝ ըստ մտաց
հրովարտակին զրանալի հիւսիսային դրան Բեթղեհէմի ,
և զրաժանորդութիւն ուխտի Այրին , եւ զերեզմանի Ա-
ստուածածնի ընդ Ցունաց ։ Ասացին , Դատաւորն Երուսա-
ղէմի առաւել քան զդոսա խոստացաւ տալ մեզ , այլ մեք
ոչ առաք յանձն , զի առանց ծանրութեան պարտ է կա-
տարել մեզ զօրէնս և ունել պատկերս և կանթեղս ընկե-
րութեամբ Ցունաց · զարմանք են՝ զի հրովարտակք երկուց
ազգաց 'ի մի միտս 'ի մի թուականի եւ 'ի մի յԱրքայէ
գրեալ և տուեալ են , ընդէ՞ր ունիցին Ցոյնք զամենայնն ,
և զրկեսցին Հայք , և ո՞ւր են իրաւունք բաժանորդութեան ,
երկարատեւ դատասաանն և հրաման Աքքայի ։ Բեահէայն
ասէ՝ զի՞նչ ասէք , ո՞վ յիմարք՝ հայեցարուք 'ի տուրս և 'ի
պահանջս ձեր ։ Ասացին՝ Հայք ոչ կարեն տոկալ պահանջից
ձերոց , և Արքայն ոչ եւ ակն ընչից մերոց , այլ արդարու-
թեամբ լուաւ զդատաստանս մեր և հաճութեամբ երկուց
ազգաց եւ հրովարտակ · Եթէ յօժարիք խնամով 'ի գոր-
ծադրութիւն նորին , պատրաստ եմք ճանաչել զզարտա-
ւորութիւնս մեր , ապա թէ ոչ՝ ողջ լիցի Թագաւորն , և
'ի սաստկանալ բանից՝ խոժորեալ Բեահէային ասէ՝ դիցուք

թէ ոչ կարացիք առնել զրանալին Բեթղեհէմի և զայլ պա-
հանջս ձեր , չպարտաւորի՞ք սպաս հարկանել տեառն ի-
մոյ · նոքա ասեն՝ առ ի՞նչ պատճառի , կատարեսցէ ըզ-
գործն , և ապա սպաս տարցուք ։ Բեահէայն , եթէ գործ
ձեր չկատարեցաւ , որպէս ասէքդ · ընդէ՞ր ետուք առա-
տապէս Դատաւորին , Գործակալաց եւ մեծամեծացն Ե-
րուսաղէմի , եւ Խոճաքեանն մեկնեցաւ իբր կատարեալ
զգործն , որում միայն տուեալ էք 160 · եւ այլազ-
գեաց Երուսաղէմի 430 քսակս , որոց տումարն յղեալ են
առ Կուսակալն ։ Ասեն , Խոճաքեանն խաբեաց զմեզ թէ
գործն ասա չկատարի՝ երթամ ծանուցանել Կուսակալին ,
զի եթէ անդ ելս չյաջողի , բողոքեցից առ Արքայ , այլ
վասն տրոցն զոր ասէք՝ արդարեւ մեք հոգացաք զամե-
նայն պէտս նորա , եւ ծերունիքն հաղիւ կարացին տալ
10.000 դահեկան , եւ զայն ելս ծանուցին գլխաւորաց
ազգին 'ի Կոստանդինուպոլիս՝ առնել զարժանն , էառ
նաեւ Ոստիկանն ձեր , այլ Դատաւորին տակաւին չեմք
տուեալ ինչ , և այլազգեաց Երուսաղէմի դուն ուրեք , այլ
ոչ որպէս կարծէքդ , զի չունիմք առ մեզ դանձ դիպեալ ։
Խոճաքեանն երդմամբ հաստատեաց ասէ՝ առաջի Բդեշխին
թէ 'ի Հայոց առի 40.000 դահեկան և տումար յղեալ են
առ Բդեշխն , ուստ զինչ ետուք և խոստացայք · զայս Հրեայն
ելս հաստատէր ։ Ասացին՝ 'մեք այդ ասոիճան նուէրս
չեմք տուեալ և չունիմք կարողութիւն , իսկ եթէ Ցոյնք
տուեալ լցեն՝ չդիտեմք ։ Այլ Բեահէայն պնդէր միշտ
զնոսն ։

Ի սուգ տրտմութեան պաշարեցան Վարդապետքն եւ
ոչ ուստեքէ ունէին մխիթարութիւն և օգնութիւն , եւ
զայս ամենայն սատդ գիտէին 'ի նենգութենէ Խոճաքեա-
նին , զի որպէս մխաբանեալ էր յԵրուսաղէմ ընդ Դատա-
ւորին և ընդ Քաղաքապետին 'ի շնորհս Ցունաց , նոյնպէս
գնացեալ 'ի Դամասկոս շրջեաց զմիտս նոցա ։ Եւ իբրեւ
ոչ կարացին գտանել զելս իրաց՝ ազաչէին զԲեահէայն և
զՀրեայն վասնամն տալ գործոյն՝ խոստանալով հատուցա-
նել 600 քսակս , որպէս պահանջէին ։ Ապա ասէ՝ զի՞ ելս
կերպարանիք կեցծել · Ցոյնք խոստացեալ են և մեզ բա-
նիւ պատրաստ են տալ 1000 քսակ Բդեշխին , 200 ինձ ,

և 200 պալատականաց, այլ փութամ զի գործն ձեր կատարեսցի, և օրն տարաժամեալ մեկնեցան վարդապետքն։

Եւ 'ի վաղիւն չոքան առ Ոստիկանն Մէհէմմէտ Պէյ և պատմեցին նմա զամենայն եղեալսն, և նորա յուսադրեալ զնոսա խոստացաւ խօսիլ ընդ Բդեշխին և ընդ երկրորդին, որ և արար իսկ չհայեցեալ 'ի խօթութիւն իւր։ Իսկ Քեահեայն վերսին 'կոչեալ առ ինքն զՎարդապետսն ասէ՝ վասն Մենդեան և Աստուածածնի 1500 քսակս խնդրէ 'ի ձէնջ Բդեշխն, ապա թէ ոչ՝ միայն վասն Ս. Յարութեան 100 քսակ. եւուն պատասխանի՝ Ծերունիքն զայդ ոչ հրամայեցին մեզ, ասէ՝ ընդէ՞ր եկիք. ասեն՝ Կուսակալն և դուք գրով խնդրեալ էիք և Ծերակոյտն զմեզ առաքեաց, զի ոչ երբէք յուսային թէ առանց քննութեան և իրաւանց առնէք զայդ։ Ասէ՝ մի լիցի ձեզ 'ի մէջ բերել զՄենդեանդ և զԱստուածածին, մոռացեք զայնս, և վասն այլոց հոգացէք զԲդեշխն. նոքա ասեն՝ զի՞նչ արարիք զի հոգացուք, միթէ Յոյնք հանեա՞լ էին զմեզ 'ի վանաց մերոց՝ և վերըստին մուծէք զմեզ անդր, և կամ չինեցա՞ք ինչ 'ի տաճարին Ս. Յարութեան, այլ միայն 'ի բաժին տեղիս մեր ըստ բնականին կախեցաք պատկերս և կանթեղս և այլքն մնացեալ են. Քեահեայն ասէ՝ այդոքիկ բանք ձեր չեն ինչ, զի զոր ինչ արարիք յաւուրս Խօճաքեանին, կարող եմք աւերել զամենայն, և առնուլ 'ի ձէնջ զոր կամիմքս և տալ պատասխանի Տէրութեան՝ (դիտաւմն Քեահեային էր տալ քանդել զիւղաբերից սեղանն և նշաւակել զայդն)։ զի հակառակորդք ձեր առ այս ջանան միշտ և աղաչեն և խոստանան բազում ինչ։ Ասացին՝ մեք ընդ հրամանաւ և հղատակ Տէրութեան եմք, արարէք որպէս վայելէ մեծութեան ձերում։ Եւ նորա բարկացեալ ասէ՝ կատարեմք, զոր ասեմքս՝ առնումք՝ զոր պահանջեմքս, դուք ընդէ՞ր եկիք այսր, միթէ 'ի խնճոյս հրաւիրեցայք, և բարկութեամբ ելեալ գնաց անտի։

Իսկ Հրեայ Սողոմոնն սկսաւ մթիթարել եւ յորդորել զնոսա. չկամիմ ասէ թափիլ ձեզ 'ի դրամոց, և ոչ վշտանալ Պատրիարքին եւ Ծերունեաց, սակայն սոքա բռնութեամբ առնուն 'ի ձէնջ զդրամն, և յառակ նշաւակի կացուցեալ զձեզ, աւերեն զոր ինչ արարիք 'ի Ս. Յարու-

թիւն։ Եւուն պատասխանի, ոչ դրամ ունիմք և ոչ հրաման 'ի Ծերունեաց, պատրաստ եմք 'ի բանտ և 'ի մահ, ողջ լիցի Թագաւորն. զի ազգն Հայոց ոչ երբէք լքանէ զդատաստան իւր վասն երկուց ոմանց լքելոց. միթէ լուէ՞ Տէրութիւնն առ այս։ Եւ ապա միջնորդութեամբ Հրէին գնացին առ Քեահեայն ներումն խնդրել և տալ միջոց ժամանակի գրել յԵրուսաղէմ և սպասել պատասխանի։ Եւ նա ասէ՝ արք երեւելիք և պատգամաւոր եկեալ էք ասա 'ի կողմանէ վանաց, որպէս մեք՝ և Ծերունիքն իսկ գրեալ էին։ Նոքա ասեն՝ յուսացեալ նոցա յԱստուած և 'ի ձեզ գրեցին և առաքեցին զմեզ վասն գործոյ Մենդեան և Աստուածածնի, և զխոստացեալ դրամն մուրհակաւ հատուցանել 'ի պայմանեալ ժամանակին։ Ասէ՝ ահա առաջի ձեր է ճանապարհ Երուսաղէմի, որպէս եկիք, այնպէս գնացէք. Գիտեմ զեղանակն առնլոյ զդրամն, և թերեւս աւելի. ելէ՛ք ելէ՛ք ասի։ Նոքա ասեն եթէ սիրով չարձակես զմեզ, ո՞րպէս կարեմք ելանել, և բաց 'ի քէն առ ո՞վ երթիցուք։ Եւ ելեալ նոցա արտաքս մինչ խորհէին առանձին, կոչեաց Քեահեայն զՍարգիս վարդապետ միայն 'ի ներքս և հարցանէր զԳիւոնէսիոս վարդապետ, թէ ո՞վ իցէ այրն՝ այնքան համարձակ և ճարտար 'ի բանս իւր. և նա ասէ մին 'ի բազմամեայ վանականաւորաց Հարց Աթոռոյն, և ամս է վաստակեալ ընդ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպոլիս 'ի դատին Յունաց, հմուտ ամենայն եղելոց իրաց. ասէ՝ ասա չզօրէ ինչ ճարտարութիւն բանից։ Այս եղեւ 'ի մատնութենէ Յունաց, զի 'ի վաղուց անտի ոխացեալ էին ընդ նմա և կամէին արկանել զնա 'ի վտանգ, այլ նոցա զանց արարեալ զնովաւ գնացին առ Ոստիկանն։ Եւ պատմեցին նմա որ ինչ եղեւն. և նա ասէ՝ բազում ինչ խօսեցայ ընդ Բդեշխին, այլ այժմ 'ի ծանրութենէ տկարութեանս ոչ կարեմ պատմել, յորժամ եկեսջիք 'ի վաղիւ՝ պատմեցից, մեկնեցան 'ի վանս։

Եւ 'ի գիշերին յայնմիկ ծածկապէս խմացան զպատրաստիլ գրոցն Յունաց և 'ի վաղիւն տալ նոցա 'ի ձեռն Քարտուղարի Հրէի, որոյ առանձին գրեալ էր փոխանորդն Լատինաց յԵրուսաղէմ դիտել զգործս Յունաց։ Եւ ընդ առաւօտն ամաչարեալ գնացին առ Ոստիկանն, և նա ա-

սէ։ սոքա եդեալ են 'ի մեջ առնուլ 'ի ձէնջ զ500 քսակն
և չկատարել զգործն ձեր։ զի Յոյնք 'ի ձեռն արոց դար-
ձուցեալ են զգործն 'ի կողմն Իւրեանց և եւ վասն այսր
կռուեցայ ընդ Բդեշխին եւ ընդ երկրորդին՝ և մեկնեցայ
խակ 'ի պալատէն։ զկնի աւուրց ինչ դիմել 'ի Կոստանդի-
նուպոլիս, և անդ զոր ինչ արժանն է արարից։ զի երկուս
հրամանագիրս եւ սակս գործադրութեան հրովարտակին,
և ինձ առանձին պատուիրեաց կատարել զինդիր Բեթղե-
հէմի և Աստուածածնի, եթէ տայցեն ինձ այսքան, այժմ
մասն ինչ եւս յաւելիք դուք 'ի վերայ։ այլ նորա չկատա-
րեալ զգործն, դարձաւ 'ի կողմն Յունաց ընդդէմ հրա-
մանի Արքային։ և թէ ո՛վ խառնակեալ չփոթեաց զգործն։
նա տացէ պատասխանի։ Եւ յաղաչել Վարդապետաց լինիլ
միջնորդ առ Բեահէայն։ նա հրաժարեալ ասէ՝ 'ի կոչել
նորա օգնեմ ձեզ իբրեւ բարեկամ։ Եւ գնացին անտի առ
Բեահէայն, և տեսին զթարգմանն Յունաց 'ի սենեակ Հր-
էին։ սղջունեալ նստան, և բերեալ Հրէին զգրեանս եւ
զթարգմանն, և նորա առեալ ուրախութեամբ մեկնեցաւ։
Եւ մնեալ Վարդապետաց առ Բեահէայն աղաչէին զնա,
և նա ասէ չիք հնար այդմ, այժմ ընդ Հրէին աղաչեցաք
զԲդեշխն, ոչ լուաւ, և 'ի կրկնել նոցա զաղաչանս՝ բար-
կացեալ՝ զառաւելն խնդրէր, եւ ոչ մատուցանէր ունկն
բանից նոցա։ և յերկարիլն վերսաին առաքեաց զՀրէայն
առ Բդեշխն, եւ սա դարձեալ եբեր զայս պատասխանի,
50 քսակն չնորհեալ, զ500 հատուցանել այժմ, և ոչ նե-
րէր նոցա գրել յԵրուսաղէմ։ Նեղեալ աստի Վարդապե-
տաց՝ ասեն ցՀրէայն, ո՞յր աղագաւ պահանջէ 'ի մէնջ
Բդեշխն զայսքան դրամս։ մինչդեռ ըստ կամաց Յունաց
եւ զամենայն գրեանս, եթէ կամի տուգանել զմեզ՝ ցուց-
ցէ զյանցանս մեր։ զի հրամանաւ նորին եկեալ եմք։ Եւ
նա ասէ՝ Յոյնք 'ի ձեռն բազմագումար արոց առին զեր-
կուս հրամանագիրս վասն Բեթղեհէմի եւ Աստուածածնի
մնալ ըստ առաջին կերպին, և չթողուլ Հայոց առնել ինչ
մինչ ցգալուստ նոր հրամանի։ Եւ գիր մի եւս առանձին
առ Բաղաքապետն Երուսաղէմի լինիլ պաշտպան Յունաց
և գործոց նոցին զի մի նեղեսցին յումեքէ։ բաց յայսցանէ
խոստացան բազում ինչ վասն քակելոյ զիւղսերէրից սեղանն

և բառնալոյ զպատկերս և զկանթեղս զոր եդիք 'ի Ս. Յա-
րութիւն։ Եւ Բդեշխն հաճեալ երեւի կատարել զայս։
Եթէ չկատարեսցէ զգործն ընդ ձեզ սիրով։ թշնամին ձեր
հզօր և 'ի տուրս առատ։ Ասա առեալ զՀրէայն մտին առ
Բեահէայն, զի թերեւս շահեսցին ինչ, այլ լուան զան-
կարելին և զխստութիւն Բդեշխին, եւ յերկարիլ բանից
սկսաւ նախատանօք թշնամանել զնոսա։ Եւ նոցա յանձն
առեալ զամենայն ինչ ասեն, որոյ իրաւամբ զայսքան քը-
սակս պահանջէք, միթէ մեղս ի՞նչ գործեցաք։ զի խընդ-
բեցաք կատարել զգործն ըստ հրամանի Արքային։ Եւ նա
ասէ՝ չգիտեմք զայդպիսի իրս։ զի որպէս ետուք Դատա-
ւորին, Խոճաքեանին եւ այլոց, Բդեշխն եւս պահանջէ։
գուցէ զղջացիք յետոյ, ասացաք ձեզ թէ բաց է ճանա-
պարհ Երուսաղէմի ընդէ՞ր ոչ գնացիք, ա՛հ եթէ երթա-
յիք։ և 'ի կարի թախանձելն զնա Վարդապետաց, վերըս-
տին յղեաց զՀրէայն առ Բդեշխն, եւ նորա եկեալ ասէ՝
բարկացաւ ինձ և քեզ, միայն 50 քսակն չնորհեալ է։ Եւ
լուեալ զայս ելին տրտմութեամբ արտաքս։ Եւ մինչ խոր-
հէին զորպէսն, եկին հրաւիրակք և ստիպէին զնոսա եր-
թալ առ Բդեշխն և զգենուլ զխիլայս։ Հրէայն յորդորէր
զնոսա չապականել տրտմութեամբ զերեսս իւրեանց առա-
ջի ամենեցուն, զի չէր ինչ օգուտ անտի։ Եւ իբրեւ յան-
դիման եղեն, եւ բերել զսամուրենիս և զգեցոյց Վարդա-
պետաց և Սարկաւագին, և 'ի խոնարհիլ նոցա 'ի յարգանս,
ասէ ցԲեահէայն՝ յոյժ բարկացեալ էի սոցա զի ոչ ծանեան
զիս, եւ առանց հրամանի իմոյ մարսել կարծէին զգործն
Ս. Յարութեան, սակայն այժմ ներեցի։ և հանին զնոսա
արտաքս։ Իբրեւ հարցին ցԲեահէայն, հրամայեաց նոցա
գրել մուրհակ 450 քսակի։ և 'ի պատճառել նոցա զկեղե-
քումն՝ զայլ և այլ պահանջս Գանձապետին յԵրուսաղէմ
'ի Պատրիարքէն։ գրել առ նա գիր յանձնարարական, ա-
սէ՝ դուք զգործ տեղւոյս հոգացէք և ոչ զԵրուսաղէմին,
մեկնեցան 'ի վանս։ Յետ երկուց աւուրց կնքեցին զմուր-
հակն պարտուց Դիոնէսիոս և Սարգիս Վարդապետք եւ
Յովհաննէս Սարկաւագ (1813։ 'ի 4 Օգոստոսի)։ Եդին
պայման հատուցանել զայն զկնի 41 աւուրց, որպէս արա-
րեալ էին Յոյնք։ Եւ առին զերկուս հրամանագիրս մին

վան Ս. Յարութեան եւ մին վանս պաշտպանութեան Հայոց։ Եւ գրեցին զայս ամենայն անցս զոր կրեցին՝ առ փոխանորդ Պօղոս վարդապետն 'ի Կոստանդինուպոլիս և յԵրուսաղէմ, և ինքեանք մնացին անդ իբրեւ 'ի պատանդ, և զգրեանս առաքեցին յԵրուսաղէմ ձեռամբ Սարկաւագին, զի չէր հնար մեկնիլ նոցա անտի. ժանտախտն տարածեալ էր 'ի Պաղեստին և յԱսորիս և հասեալ մինչ 'ի Կոստանդինուպոլիս. բայց բարձաւ յԵրուսաղէմէ ('ի 12 Օգոստոսի)։ Իսկ Թէոդորոս Պատրիարք ընթերցեալ ըզգրեանս, գրեաց առ գլխաւորս ազգին եւ առ Արքունի Ճարտարապետն 'ի Կոստանդինուպոլիս, եղեալ 'ի միջի և զգիրս Վարդապետաց. յայտ արար նաեւ զդառն տառապանս իւր զոր կրէր յերեսաց գանձապետի Կուսակալին, զի փոխան նորա եկեալ էր 'ի շրջիլ՝ եւ բնակեալ արտաքոյ քաղաքին, պահանջէր զտարեկան հարկս 450 քսակ, թող զայլ ընծայս և զծախս բանակին՝ պահանջ Դատաւորին, այլազգեաց քաղաքին՝ և Բդեշխին Աքքէի՝ այլովքն հանդերձ, յորոց պաշարեալ կային 'ի մեծի տառապանս։ Գրեցին զպատասխանիս գրոց Վարդապետաց, այլ թղթատարն հասեալ 'ի Սամարիա մեռաւ 'ի ժանտախտէ. Զհրամանագիրս Կուսակալին ոչ եդին 'ի գործ խորհրդով Մուվէլլային։

Եւ 'ի սատակացուցանել Գանձապետին զխստութիւն հարկապահանջութեան, անկան 'ի դրունս այլազգեաց և Հրէից խնդրէին դրամս, և կոչեալ Թէոդորոսի զՀրէայ Ռափայէլն սեղանաւոր բանակին՝ պատուեաց զնա սիրով և ընծայիւք, և խնդրեաց 'ի նմանէ միջնորդ լինիլ առ Կուսակալն թեթեւացուցանել զպարտսն Դամասկոսի եւ արձակել զվարդապետսն, և 'ի տեղի պարտուց ընդունիլ ձուլեալ ոսկի և արծաթ փոխանակ դրամոց, տալ ինքեան տոկոսիւք դրամ և գտանել փոխանակագիր 'ի Կոստանդինուպոլիս։

Եւ եկեալ 'ի դառնալ բանակին 'ի Դամասկոս, զիջեալ Կուսակալն յաղաչանս Հրէին շնորհեաց զ50 քսակն, և յանձն առ ընդունիլ արծաթ և ոսկի ըստ արժողութեան, և յանձն արար զայն գործ Պաղատացի վաճառականաց տնօրինել, զի ինքն հանդերձեալ էր մեկնիլ յուխտագնացութիւն Մէք-

քէի։ Գտին փոխանակագիր 45,000 դահեկանի 'ի Կոստանդինուպոլիս կնքով Պատրիարքին, ապա Վարդապետքն ստորագրեալ առաքեցին զայն։ Կուսակալն մեկնեցաւ 'ի Դամասկոսէ և սեղանաւորքն ընդ նմա ըստ սովորութեան մինչեւ 'ի Միւզէրիպ, և Վարդապետքն ելին 'ի Դամասկոսէ (յ2 Հոկտեմբերի)։ Իսկ Դիոնէսիոս ախտացեալ տենդիւ 'ի Դամասկոս, և հասեալ 'ի Նաղարէթ կրկնեաց հիւանդութիւնն, և հազիւ հասեալ 'ի Ռէմլէ անկաւ 'ի մահիճս. լուեալ Թէոդորոսի առաքեաց զոմանս՝ և ետ տանիլ զնա յԵրուսաղէմ։

ԳԼՈՒԽ Լ Բ.

Բդեշխն Աքքէի։ Փոխանորդն Յունաց։ Յովհաննէս Պատրիարքի անկումն։ Աքսորումն Խոճաբեանին եւ Դատաւորին Երուսաղէմի։ Հանդերձապետ Աբրայի։ Նոր Դատաւոր Մուսայ Էֆէնտի։

Բդեշխն Աքքէի որ Միւթեվէլլի էր տաճարին Ս. Յարութեան, իբրեւ լուաւ զոր ինչ էառ 'ի Հայոց Կուսակալն Դամասկոսի, խնդրէր և ինքն նոյնչափ դանձս։

Փոխանորդն Յունաց առաքեաց զոմանս յԵրուսաղէմ 'ի Հայոց և ասէ՝ բաւական լիցի այսքան տարաձայնութիւն 'ի մէջ երկուց ազգաց՝ երթայք պատարագեցէք ըստ առաջին սովորութեան ձերոյ 'ի վերայ գերեզմանի Ս. Աստուածածնի յաւուր չորեքշաբաթի. այլ Հայք եւս ասացին պատասխանի. եթէ թոյլ տայք առնել մեզ որպէս դուք առնէք, զի տեղին ընկերովի է, երթիցուք, ապա թէ ոչ՝ մնասցէ. այլ նոքա խորշեալ 'ի բաժանորդ բառէն, յառաջ բերէին նախ քան զ40 աւն. զի այնպէս հրամայեալ է ասէին՝ Արքայի։ Եւ 'ի չզիջանիլ այսմ Հայոց, առին գիր 'ի Դատաւորէն և յայլազգեաց քաղաքին վասն Բեթղեհէմի, թէ Հայք բնաւ չունին իրաւունս 'ի վերայ եկեղեցւոյն այնորիկ ոչ պատարագի եւ ոչ այլ իրաց. բայց Նախայն եւ Միւֆթին ոչ կնքեցին զգիրն, չկամիմք սուտ լինել սուտ վկայ. նմին իրի Յոյնք ամբաստան եղեն զսոցանէ 'ի Կոստանդինուպոլիս և Նուրի Էֆէնտի, որ նպս-

տեալ էր յԵրուսաղէմ և սպասէր առնուլ զպատասխանիս գրոցն, զամենայն արարս նոցա գրեալ ծանուցանէր 'ի պատշաճաւոր տեղիս։

Յետ դառնալոյ Հրեայ սեղանաւորաց 'ի Միւղերիպայ 'ի Դամասկոս, գրեցին առ Թէոդորոս Պատրիարք վասն հաշուոյ դրամոց, զոր ոչ ժամանեցին աւարտել զայն ընդ Վարդապետաց։ գրեալ է նաեւ Կուսակալն, թէ զհաշիւն մեր կատարեցաք ընդ սեղանաւորաց մերոց եւ զգուշար պահանջիցն ամբողջ ընկալաք 'ի նոցանէ, այսուհետեւ հաշիւն ձեր ընդ նոսա է։

Երկոցունց գումարն, այսինքն Գանձապետին եւ Կուսակալին եղեւ 900 քսակ, որոյ հատուցումն եղեւ կարի դժուարին եւ տաժանելի։ Ապա երկար բանիւք գրեաց Թէոդորոս Պատրիարք առ փոխանորդ Պօղոս վարդապետն և առ Աղնաւորեան Կարապետ Ամիրայ և առ այլս։ հասանել նոցա և օգնել և փրկել զինքն 'ի տառապանաց, որպէս է տեսանել 'ի նամականիս նորին, զորս աւելորդ էր երկրորդելն ասա (յ8 Հոկտեմբերի)։ Գրեալ էր նաեւ Թէոդորոս վասն Պօղոս վարդապետի եւ այլոց ոմանց երթալ 'ի Ս. Էջմիածին և արժանի լինիլ Առաքելական աստիճանի Եպիսկոպոսութեան, սակայն ընդդէմ կացին Ամիրայք այսմ։ զի տակաւին էր 'ի գլուխս ելեալ գործ Երուսաղէմի, և Պօղոս էր 'ի գլուխս գործոյն և թեւակից Իշխանաց, որոյ վասն անյարմար դատեցին տարաժամ մեկնիլ նորա 'ի քաղաքէն, եւ գրեցին առ Պատրիարքն։ զի զկնի խաղաղութեամբ աւարտելոյ զգործն, երթիցեն 'ի Ս. Էջմիածին, և Թէոդորոս հաճութեամբ ընկալաւ զխոհական խորհուրդս նոցա։ Զայսոսիկ այսպէս ծանուցեալ վերստին դարձցուք 'ի կարգ Պատմութեանս։

Յովհաննէս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ էր կարի յոյր և անձնեայ՝ մինչ չզօրեալ շարժիլ 'ի տեղւոջէ իւրմէ առանց օգնականի, եւ յառաւել զօրանալ ծանրութիւն մարմնոյն, նստէր յԱթոռ 'ի ժամ Ս. Պատարագի ընթեռնուլ զերկար աղօթս և կատարել զՍ. Խորհուրդն։ տեսեալ բազմաց տարօրինակ գործս նորին, հատան 'ի տրտունջ։ այլ նա ոչ կամէր անսալ, և մանաւանդ ասէր, թէ հեղինակ Պատարագին 'ի Ս. Վերնատան բազմեալ աւանդեաց զայն Խորհուրդ։ Եւ եւս 'ի համարձակիլ ոմանց՝, գանկատէր զնոցանէ իբրեւ զանիրաւէ, որպէս փոխանորդն Երուսաղէմի Պօղոս վարդապետ ասէր՝ թէ չեն իրաւունք նըստելով պատարագելն։ այլ նա ասէր մինթէ ո՞չ գիտեմ ըզկանոնս։ Սակայն ընդ տարութեան մարմնոյն՝ տկարացեալ էր և Պատրիարքական իշխանութիւնն, և չէր ոք որ երկնչէր 'ի նմանէ։ թէպէտեւ զայս ամենայն հաստատանէին յունկն նորա, բայց նա անհոգացեալ ասէր։ զի՞ փոյթ է այլոց զկառավարութենէ իմմէ, մինթէ չունի՞մ իշխանութիւն առնել զոր կամիմ։ Իսկ 'ի գործս զյայտնիսն միայն հարցանէր գլխաւորաց ազգին, և զգաղտնիսն ինքն միայն 'ի ծածուկ կատարէր, եւ 'ի հրապարակիլն չգիտեալ ձեւանայր։ Նմին իրի բազումք ցրտացեալ էին 'ի սիրոյ նորա, և գործք Պատրիարքութեան անյաջող յամենայն տեղիս, և տաղտկացեալ գլխաւորք ազգին։

Եւ 'ի ժամանակիս յայսմիկ Փոխանորդն Երուսաղէմի կամէր տալ զհաշիւն իւր ազգին՝ զի բազումք բամբասէին զնա թէ զարդիւնս Երուսաղէմի ետ յափշտակել Ամիրայից, մանաւանդ թէ ծախեաց զայն փոխան պարտուց Աղնաւորեան Քեահեայ Կարապետ Ամիրայի, և այնպէս բամբասէին զմեծ բարերարն Երուսաղէմի զայրն բարեպաշտ։

Սակայն գործ Երուսաղէմի չեւ էր աւարտեալ, որոյ վասն մեայր հաշիւն։ Իսկ 'ի սաստկանալ բամբասանաց, ստիպեաց զԱմիրայս Պօղոս՝ եւ առաջի եդ նոցա զՏուփար հաշուոց եւ նոքա խոստացան տեսանել զայն բազմութեամբ ('ի 1 Սեպտեմբերի)։ Եւ 'ի նմին աւուր եկին ըստ խոստմանց իւրեանց, ընդ որս էին և գլխաւորք արհեստաւորաց։ տեսեալ Պատրիարքին եւ Փոխանորդի նորին զժողովին այնքան խուռն բազմութեան՝ զարմանային, զի ոչ գիտէին ինչ։ Ոմանք 'ի գլխաւորաց առեալ զՊատրիարքն մուծին 'ի փոքր սենեակն և ստիպէին զնա գրել զհրաժարական իւր, և նորա ոչ մատուցեալ ունկն բանից նոցա, զպատճառն հարցանէր, և նոքա ստիպէին կամ հրաժարիլ և կամ տալ պատասխանի։ զի դնացեալ 'ի Դուռն կատարեսցեն զոր կամէին։ տեսեալ նորա թէ ոչ կարէ կալ ընդդէմ նոցա՝ յանձն առ կատարել զկամս ազգին, եւ խնդրեաց 'ի նոցանէ չվտարել զինքն յաքսոր և չթողուլ

յանկեան ուրեք անխնամ և անդարման, զի ընդ տկարութեան մարմնոյ իւրոյ, ունէր նաեւ աղքատութիւն։ Ամիրայք խոստացան տալ յիւրաքանչիւր ամիս 250 դահեկան, վճարել զամենայն պարտս նորին, և հանգիստ նստուցանել զինքն 'ի վանքն Իւսկիւտարու, և չհասուցանել վիշտս ինչ ինքեան և իւրոցն։ Յետ այնորիկ յանձն արարին նմա ընտրել զոք Պատրիարք 'ի տեղի իւր զո և կամեսցի, և նա ընտրեաց զՏաթեւացի Մելիքեան զԱբրահամ Եպիսկոպոս, որ էր յայնժամ 'ի Ս. Խաչ եկեղեցին Իւսկիւտարու, և առաքեալ զոմանս ածին զնա և բազմեցուցին առ Պատրիարքին, և նա լու 'ի լու բազմաց յանձն արար նմա օրհնութեամբ զիշխանութիւն Պատրիարքութեան, և նստուցեալ 'ի տեղի իւր խոնարհեցոյց զգլուխն, և ամենեքեան ուրախութեամբ մատեան 'ի համբոյր աջոյ նորին, և կոչեցեալ զԱտենադպիրն եռուն գրել 'ի Դուռն զառաջնոյն հրաժարիլն և զերկրորդին ընտրութիւնն, և կնքեալ զայն առաքեցին 'ի ձեռն Փոխանորդ Պօղոս վարդապետին եւ երկուց աշխարհականաց։

Ապա յանձն արարին Ամիրայք զնոր Պատրիարքն Փոխանորդին Երուսաղէմի՝ պահել զնա առ իւր մինչեւ ըզգեցցի վերարկու պատուոյ։ Եւ յերեկոյին գնաց Արբահամ ընդ Փոխանորդին առ Յովհաննէս, և զնի ուրախութեան, ետ ընծայս առաջինն յաջորդին իւրոյ պատուական գորգ մի, զմրուխտ աղնիւ մատանի Զաքարեայ Պատրիարքի և զերկոսին դաւազանս իւր և խնդրեաց անդորր և հանգիստ պահել զինքն և զպատաւորս իւր մինչ 'ի վախճան։ Եւ զնի 5 աւուրց գնացին հրաւիրանօք 'ի Դուռն մեծաւ բազմութեամբ եկեղեցականք եւ աշխարհականք մեծահանդէս փառօք, և 'ի հասանիլն 'ի Դուռն Փաշային մուծին զնա յԱրքաբուէ, ուր էր Տեղապահն։ անդ զգեցուցին վերարկու պատուոյ Պատրիարքին, Աստուածատուր և Կարապետ Եպիսկոպոսաց, Երուսաղէմի Պօղոս և Սահակ, և Ս. Կարապետի Փոխանորդ Վարդապետաց, և Գաբրիէլ Քեահէայսի Դէորդայ ըստ սովորութեան ժամանակին, և անտի գնացին առ Քեահէայ Պէյն, որ 'ի պատիւ նոցին ետ բերել խնկանոց և վարդի ջուր, զի աւուրք ծոմապահութեան էին, և ապա չոքան առ Բէյիզ Էֆէնտին

և առ Զաւուշ Պաշին, և իջեալ անտի 'ի դաւիթն տեսին պատրաստեալ նժոյգս ոսկիսանձս և զարդարեալ ծանրագին ոսկեթել ծածկութիւ, յորս աշտանակեցին Պատրիարքն, և այնքիկ որք ունէին զվերարկու պատուոյ, և ոմանք յերեւելի Վարդապետաց և յաշխարհականաց, եւ գնացին շքեղ փառօք 'ի Պատրիարքարան, ուր ընկալան զնոսա դասք եկեղեցականաց մեծաւ հանդիսիւ զարդարեալ զգեստուք ըստ իւրաքանչիւր աստիճանի, ուր խընեալ էին անթիւ բազմութիւն արանց և կանանց, եւ Պատրիարքն մտեալ յեկեղեցին Օրհնեաց զժողովուրդն և արձակեաց։ Եւ 'ի վաղիւն որ էր շաբաթ, բերեալ հանդիսիւ նստուցին զնա յԱթոռ Պատրիարքութեան, և նախորդն չոքաւ 'ի վանքն Իւսկիւտարու իւրովքն հանդերձ, և Ամիրայք պատուէր ետուն Փոխանորդին Երուսաղէմի չխնայել ինչ 'ի նմանէ, և ամենեքեան գոհացեալ փառս ետուն Աստուծոյ զի առանց խռովութեան կատարեցաւ այս փոփոխութիւն Պատրիարքի։

Իսկ Դատաւորն Երուսաղէմի տակաւին կացեալ 'ի յամառութեան իւրում ստիպէր զՀայս առնուլ Իսլամ վասն Ծննդեան և Աստուածածնի, և առաքել առ Տէրութիւնն։ այլ Հայք ոչ առին յանձն խորհրդով Նուրեայ, եւ սպասէին առնուլ զպատասխանիս գրեանց։ Հասին 'ի Կոստանդինուպոլիս գրեանք Թէոդորոս Պատրիարքի, Նուրի Էֆէնտեայ, Դիոնէսիոս և Սարգիս վարդապետաց, զորս գրեցին 'ի Դամասկոսէ։ Դուռն բարձրագոյն ծանեաւ զանցս Երուսաղէմի և Դամասկոսի 'ի գրոց Նուրեայ, և խնդրեցին ըզգրեանս Հայոց, եւ Պօղոս վարդապետ մատոյց զնոսա։ 'ի նոցանէ եւս առաւել պարզ և բացայայտ երեւեցաւ խընդիրն, և եհաս մինչեւ յունկն Արքայի եւ մերկապարանոց յայտնեցաւ դաւաճանութիւն Խոճաքեանին, եւ բարկացեալ Արքայի հրամայեաց գլխատել զնա, այլ հազիւ զերծաւ նա 'ի միջնորդելոյ ուրումն, եւ դատապարտեցաւ յաքսոր յԱնաբայ։ Գրեցաւ հրովարտակ եւ այլ կարեւոր գրեանք 'ի Դրանէ, եւ առաքեցաւ յատուկ սուրհանդակաւ (յ30 Սեպտեմբերի) աքսորել զԴատաւորն Երուսաղէմի։ գրեցաւ նաեւ առ Կուսակալն Դամասկոսի և առաքեցաւ այլ սուրհանդակաւ գործադրել զհրովարտակն

Արքայի առանց նուաղեցուցանելոյ եւ նշանախեց մի անդամ, զայսոսիկ ասէ Պօղոս վարդապետ 'ի նամակի իւրում, եւ ինքնին լուայ 'ի բերանոյ մեծամեծաց Տէրութեանն։ Եւ գլխաւորք ազգին, որք ժողովեալ էին 'ի սենեակ Լօնտայի, ետուն գրել փոխանորդին յԵրուսաղէմ, թէ յընդդիմանալ հակառակորդաց, չէ պարտ այլ եւս մաքառիլ ընդ նոսա, և առաւել քան զչափն թափիլ 'ի գրամոց, այլ 'ի ձեռն սուրհանդակի փութապէս ծանուցանել պարագայիւք, զի թարգմանեալ զգիրսն տացեն Արքայի, եւ վասն առաւել ազդեցութեան՝ տացեն գրել նաեւ Նուրի Էֆէնտիայ։

Մինչդեռ Թէոդորոս Պատրիարք տատանեալ կայր 'ի խորհուրդս իւրովքն հանդերձ վասն անյաջող ելից իրաց, ահա եհաս յԵրուսաղէմ Նուիրակապետն Արքայի հրովարտակաւ ('ի 26 Հոկտեմբեր) ուղղեալ առ Բաղաքապետն Երուսաղէմի Սպտիւլ Բէրիմ Աղա, յորում յետ այլոց բանից ասէր։ որովհետեւ Մուսաննէֆ Դատաւորն Երուսաղէմի այլ և այլ մեկնութիւնս տուեալ բանից Կայսերական հրովարտակին հակառակ եկաց Նմին եւ ոչ կամեցաւ գործադրել զնա, որոյ վասն աքսորեսցի 'ի Կիպրոս կղզին։

Ահ պատեաց զԲաղաքապետն և դողայր, զի համախոհ էր Դատաւորին, եւ կոծէին զանձինս իւրեանց։ զի ընդդէմ կացին հրամանի Արքային։ Զահի հարան նաեւ Ցոյնք և կուսակիցք նոցին 'այլազգիք, եւ բարւոք ծանեան թէ Սուլթան Մահմուտ Բ. ինքնին կացեալ է 'ի գլուխ գործոյն, եւ Դատաւորն սկսաւ հանել 'ի վաճառ զկարասիս իւր եւ 'ի չքմեղս լեալ ասէր՝ թէ զինակիր Արքային պատուիրեաց ինձ պաշտպան լինիլ Ցունաց, և չթողուլ Հայոց յափշտակել տեղի ինչ 'ի ձեռաց նոցին, որոյ վասն առաքեցայ ասա։ զի չեւ էր հասեալ ժամանակ դատաւորութեան իմոյ։ Բայց Բաղաքապետն յորդորէր զնուիրակապետն չաճապարել։ գուցէ Արքայն փութացուցեալ ասէ զգիր ազատութեան նորին 'ի ձեռն միջնորդաց, մանաւանդ զինակրին։ Այլ նա ասէր։ յետ տալոյ ինձ զգիրս 'ի Դրանէ, պատուիրեաց զինակիրն փութանակի հանել զնա յԵրուսաղէմէ։ զի Խոճաքեանն արդելաւ 'ի բանս և դատի, եւ վրէժխնդիր են սակս անկատար թողլոյ նորա

զգործն, և պահանջեն զհամար գումարացն առեալ 'ի Ցունաց։ և ապա երթալ 'ի տեղի աքսորանաց և նորոգել զամբոցս յընչից իւրոց, և այս եւս 'ի միջնորդելոյ ոմանց, ապա թէ ոչ՝ գլխապարտ էր նա։ Ի բանից աստի կրկնապատկեցան երկիւղ Բաղաքապետին։ զի ինքն չրջեալ էր զմիտս նորին 'ի կողմն Ցունաց։ Եւ մինչ դանդաղէր Դատաւորն ելանել 'ի քաղաքէն, հասին անդ երկու սուրհանդակք եւս, եւ հանդերձակիր Արքայի (Ջուխատար) և ընդ նոսա մարան Սարգիսն, բերեալ գիրս առ Նուրի Էֆէնտի և առ Պատրիարքն եւ հրամանաւ Արքայի կարգեցաւ Դատաւոր Երուսաղէմի 'ի տեղի աքսորելոյն Նախկին Բարտուղար դատարանի Մուսայ Էֆէնտի։

Այրս այս էր 'ի քաղաքէն Երուսաղէմի եւ Դպրապետ դատարանի (1806), և գժտեալ ընդ Միւֆթի քաղաքին տարագրեցաւ 'ի Կոստանդինուպոլիս իբր ամս 10, և եմուտ անդ յայլ և այլ պաշտօնս, մինչեւ լինիլ Բարտուղար բանակի, և լեալ սիրելի յաչս Տիւրրի Զատէ մեծի Դենպէտին, ակն ունէր խնամով նորին լինիլ Դատաւոր Երուսաղէմի։ 'ի մեռանիլ հակառակորդին իւրոյ, առաւել եւս ջան եւ յայն։ Սա յառաջագոյն բարեկամ էր Հայոց, այլ վասն խռովութեան իրիք թշնամացեալ ընդ նոսա բազում ջնասուք՝ յարեցաւ 'ի Ցոյնս, եւ եղեւ առիթ նորոգելոյ զհին հրովարտակս նոցա հակառակ Հայոց։ Եւ ապա եւ առնուլ նոցա զհրովարտակսն ١٢١٦–١٨ թուականաւ, որով Ցոյնք մերժել փութային իսպառ զՀայս յԵրուսաղէմէ։ Եւ յետ անցանելոյ ժամանակաց (1813) Սուլթան Մահմուտ խնդրեաց 'ի Դենպետէն տալ բերել յԵրուսաղէմէ զՇէյխ Ապու Սէօյիւտն, ժառանգել զօրհնութիւն նորա, և նա առաքեաց զայս Մուսայ, բերել զնա անտի։ բայց 'ի մեկնիլ նորա 'ի մայրաքաղաքէն՝ Ցոյնք ծանրագին ընծայիւք և տրօք որսացին զնա 'ի կողմն իւրեանց, որպէս գրէ ականատես Դիոնէսիոս վարդապետ։ Եւ հասեալ նորա յԵրուսաղէմ դնաց 'ի տաճարն Ս. Յարութեան, ուր 'ի նկատի էառ զչինուածսն։ տեղիքն Ցունաց փառաւոր, եւ Հայոցն խաթարեալ։ Եւ Թէոդորոս Պատրիարք պատուեալ զնա ընծայիւք հրաւիրեաց դալ 'ի վանս, և նորա եկեալ հաշտեցաւ ընդ նմա։ Պատրիարքն աղաչէր զնա

արդարութեամբ խօսիլ 'ի Կոստանդինուպոլիս, և նա երդմամբ հաստատէր չառնել թշնամութիւն ինչ, այլ բարիս։ Եւ ապա առեալ զՇէյխն մեկնեցաւ յԵրուսաղէմ, և 'ի հասանիլ նորա 'ի թագաւորական քաղաքն, Դիոնէսիոս վարդապետ, որ տակաւին էր անդ, գնաց առ նա ընծայիւք 'ի կողմանէ Փոխանորդին։ Եւ զկնիկ բանից ասէ ցվարդապետն, թէպէտ հրովարտակն ձեր եկ, եւ ունին գնալ Գործակալք յԵրուսաղէմ, սակայն գործ ձեր չկատարի, մինչեւ ոչ եղէց ես դատաւոր քաղաքին. Եւ թէ՝ սիրա իմ ոչ բաժանի 'ի Ցունաց. այլ արարից ձեզ և թոյլտուութիւն ինչ վասն սիրոյ Պատրիարքին եւ ստէպ աղաչանաց նորին։ Էառ զդատաւորութիւնն 'ի միջնորդելոյ Շէյխին, որ և մեռաւ անդ, և եկեալ յԵրուսաղէմ նստէր 'ի տան իւրում, ապասելով լրման ժամանակի նախորդին իւրոյ։

Տեսցուք արդ թէ զինչ ունի գործել սա 'ի դատաւորութեան իւրում,

Յետ այնորիկ ընթերցան զգիրս Փոխանորդին, յորս մի առ մի պատմէր զամենայն անցս Դրան. թէ որպէս հրամայեաց Արքայ պատուիրել նոր Դատաւորին գործակցութեամբ Նուրի Էֆէնտեայ կատարել զգործն Հայոց, և թէ որպէս կոչեցին 'ի Ժողով Նախարարաց զգործակատարն Կուսակալին Դամասկոսի եւ յանդիմանեցին զնա վասն անուղղայ գործոց Բդեշխին, և սաստիկ հրովարտակ առ նոյն Կուսակալ՝ այլովքն հանդերձ։ Գրեալ էր նաեւ Դենպետն մեծ առ Մուսայ Էֆէնտի, ուր ասէր՝ գրեմ առ քեզ հրամանաւ Արքայի կատարել զգործն արդարութեամբ ընդ Նուրի Էֆէնտեայ, որպէս ցուցանէ քեզ հրովարտակն, և եթէ դու եւս հակառակեսցես ըստ նախորդին քում, մի կարծեր թէ միայն յաքսորս դատապարտիս։ Նոյնպէս գրեալ էին և մեծամեծք Դրան և Զէքի Էֆէնտի առ Նուրի, զի զմտաւ ածեալ զվախճանն՝ արթնութեամբ կատարեսցեն զգործն։ Հանդիսիւ ընթերցեալ զգիր Դատաւորութեան Մուսայի՝ հաստատեցին զնա յիշխանութեան իւրում ('ի 29 Հոկտեմբերի)։ Իսկ Ջուխատարն եմուտ առ Դատաւորն եւ ասէ՝ Դենպետն զայլ ոք ունէր կացուցանել 'ի տեղի աքսորելոյն, այլ զիջեալ նորա 'ի խնդիրս Հայոց զքեզ կացոյց, սոյնպէս և գրեալ էր Փոխանորդն։ Նուիրակապետն խնդրէր 'ի նախկին Դատաւորէն զվարձ ծառայութեան իւրոյ, եւ նա ոչ կամէր՝ իբր աղքատ և գիտնական, և 'ի բազմանալ բանից և երթեւեկելոյ 'ի վանս Հայոց, Քաղաքապետն 'ի մէջ մտեալ՝ էառ զմի մասն 'ի Հայոց և զմնացեալն 'ի Ցունաց և արձակեաց զնա։ Իսկ նախկին Դատաւորն Մուսաննէրի ձեռամբ Դըզրապետի Դատարանի խնդրէր 'ի Հայոց զառաջին խոստացեալ գումարն ըստ մուրհակին եւ նոքա առաջի եդեալ զարարս նորին և զմեծամեծ ինչսն, դարձուցին զնա յետս ունայն, և պահանջէին 'ի նմանէ զոր առեալ էր յառաջագոյն. և 'ի յայտնել նորա զխնդիրն նոր Դատաւորին, կոչեալ զՀայս ցուցանէ զմուրհակն և պահանջէ 'ի նոցանէ զամբողջ գումարն, և յընդդէմ դառնալն Հայոց բազմացան բանք յերկուց կողմանց, եւ ապա զիջեալ 'ի կամս նոր Դատաւորին էտուն նմա 10,000 գահեկան և առին 'ի նմանէ զմուրհակն, եւ Նուիրակապետն առեալ զնա տարաւ 'ի Կիպրոս յաքսոր։ Այսպէս վտանգեցաւ Դատաւորն Երուսաղէմի Մուսաննէրի յաղթեալ 'ի կրից եւ 'ի կամակոր բռնութենէ իւրմէ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Գործ նոր Դատաւորին՝ յանուն Ութիւն և ագահութիւն նորին։ Երկար վէճ ընդ Հայոց։ Բանք Նուրի Էֆէնտեայ։ Գալուստ նոր հրովարտակի։ Ընթերցումն նորին յԵկեղեցին Բեթղեհէմի։

Յանցանել 'ի գլուխս պաշտօնի իւրոյ նորոյ Դատաւորի մատեան առ նա Ցոյնք իբրեւ նախածանօթ բարեկամ իւրեանց, և սկսան որսալ զմիտս նորին և խոստանալ նմա աւելի քան 200 քսակս դրամոց. զի պատճառանօք երկարեսցէ զգործն, մինչեւ մարթասցին գտանել հնարս կամ 'ի Կոստանդինուպոլսոյ եւ կամ 'ի Կուսակալէն, յուշ առնելով նմա զառաջին բարերարութիւնս իւրեանց. ապա թէ ոչ՝ տալ տարագրել զինքն յանդարձ յօտարութիւն, որպէս Հայք եւտուն աքսորել զնախորդն իւր։ Սակայն

գիտաւորութիւն Դատաւորին էր իրաւախոհ առնել զերկուս ազգս, և նոքաւ կատարել զհրաման Արքային։ Դնացին և Հայք առ Նուրի Էֆէնտի, առ Դատաւորն եւ առ Քաղաքապետն եւ յորդորէին զնոսա սկիզբն առնել գործոյն։ Դատաւորն միայն բանիւ յուսադրէր զՀայս, ամենայն ինչ կատարի ասելով՝ այլ սիրտ Նորա էր ընդ Ցունաց։ Եւ զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն զգլխաւորս Հայոց և Ցունաց (՝ի 6 Նոյեմբերի), ուր եղեն բազմադիմի բանք՝ ՝ի վերայ խնդրոյն։ Հայք յեցեալ էին՝ ՝ի բառն բաժանորդ, Ցոյնք անհնարին վարկանէին զայն, եւ ապա ասեն չունիմք գիր՝ ՝ի Կոստանդինուպօլսոյ, և թէ՝ բաժանորդք եմք վանաց Ս. Յակոբայ. և թէ չիք յատուկ հրովարտակ՝ ՝ի Դրանէ վասն այսր, եւ թէ՝ Դենպետն չէ ձերընհաս այսպիսի գործոց, և այլ սոցին նման ծանր բանք՝ կամելով երկեղուկս առնել զՀայս և զԴատաւորն։ Թէպէտ եւ Հայք ետուն նոցա զարժանաւոր պատասխանիս, այլ Դատաւորն յորդորէր զնոսա միաբանիլ սիրով ըստ օրինի քրիստոնէից եւ հնազանդիլ Թագաւորին. զի հաւատով քրիստոնեայք և հպատակ Արքային էք ասէ՝ միաբանեցէք սիրով. մինդ՝ ՝ի ձէնջ ասցէ փոքր ինչ եւ միւսդ այնու չատասցի, և այլ բանք. իբրեւ չերեւեցաւ նշոյլ ինչ հաճութեան յերկուց կողմանց, ասէ՝ ես գոլով այլազգի՝ յորդորեմ զքրիստոնեայսդ միաբանիլ եւ բառնալ զխռովութիւնն՝ ՝ի միջոյ, եւ չվատնել ընդունայն զինչս ձեր, ապա թէ ոչ, առաւել կամիմք զխռովութիւնն ձեր. զի չահ բաղումք է մեզ անտի, որովհետեւ ոչ կամիք լսել բանից իմոց, քաւեալ եմ ես։ Իսկ Նուրի և Ջուխատարն՝ ՝ի հեռուստ դիտէին, թէ զինչ կամի առնել Դատաւորն. թուի թէ վերսին հարկ լինի մեզ գրել՝ ՝ի Դուռն և ըստասել պատասխանւոյ։ Եւ զնացեալ Ջուխատարին ասէ ցնա՝ ընդէ՞ր երկարես և ոչ սկիզբն առնես գործոյն. զի առաքիչքն իմ սպասեն պատասխանւոյ և սուրհանդակքն ասա են։ Եւ նա ասէ կամիմ հաճութեամբ երկուց ազգաց վճարել զգործն, զի մի վերսին ճանձրացուսցեն զԱրքայ և զպարագայս Նորին. և նա յառաջ եբեր զբան հրովարտակին և զդատն երկուց ազգաց. եւ զիա՞րդ հաճութիւն որոնես ասա, և թէ՝ չէ գրեալ վերսին դատել և հաճութիւն ստանալ։ Ցեսեալ Հայոց եւ բարւոք խմացեալ թէ սա ես կալաւ զճանապարհ նախորդին իւրոյ, ասեն յայտնապէս, կամ անթերի կատարեա զգործն, կամ տուր պատասխանի, զի գրեսցուք առ որ հարկն է։

Եւ նա ասէ՝ կատարեմ զհրաման Արքայի, բայց զոր ինչ գրեալ է զայն առնեմ. տամ զբանալիս Ծննդեան և Աստուածածնի, բայց կանթեղ, պատկեր կախել և կատարել զօրէնս ոչ հրամայեմ. ասեն Հայք՝ նախորդն քո վասն այդոցիկ բանից գնաց յաքսորս, եթէ՝ ՝ի նոյն չէր մտրթ կատարել զօրէնս մեր, ընդէ՞ր աչխատ արարաք զՏէրութիւնն զամն է՝ ՝ի լսել զդատաստանս երկուց ազգաց, եւ վասն է՞ր ջնջեցաւ հրովարտակն ՌՄԷ։ Ասա՝ ՝ի մէջ բերին զիմաստ հրովարտակին մի առ մի, և եթէ՝ ՝ի հրովարտակին Հայոց պատարագ պատկեր և կանթեղ չեն գրեալ, նոյնպէս և՝ ՝ի Ցունացն, և եթէ Ցոյնք ունէին զայս, Հայք ևս ունէին, բայց ժամանակ առ ժամանակ յաղթահարեալ զնոսա ատելութեամբ և մախանօք՝ բարձին զայն, այլ այն ամենայն էանց, այժմ ամենայն ինչ հաւասար Ցունաց պարտ է լինիլ. ասա բացատրեն զոմանս՝ ՝ի բառից հրովարտակին, ըստ օրինաց իւրեանց կատարել զՏէս և չլինիլ խափան իրեարց. թէպէտեւ Դատաւորն երկնչիլ ձեւանայր՝ ՝ի սրոյ Թագաւորին, և առաջի աչաց ունէր զդատապարտութիւն նախորդին իւրոյ, բայց սիրտ նորա յարեալ էր՝ ՝ի գանձս Ցունաց, նմին իրի իրաւախոհ բառն կրկնէր միշտ։

Ցոյնք խնդրէին երկամեայ միջոց ժամանակի բերել հրովարտակ արքունուստ առ՝ ՝ի խափանել զխնդիրն Հայոց. սակայն միտք նոցա էր սպասել դարձի Կուսակալին յուխտադնացութենէ իւրմէ։ Ապա կոչեալ Դատաւորին առանձին զՑոյնս ասէր՝ Հայք ըստ հրամանի Արքային ունին իրաւունս լինիլ ձեզ հաւասար՝ ՝ի Բեթղեհէմ և յԱստուածածին, այլ՝ ՝ի սէր ձեր փութամ սակաւ իրօք հաճեցուցանել զնոսա. նոյնպէս կոչեալ զՀայս ասէր՝ թէ Ցոյնք բնաւ ոչ հաճին ձեռն մխել ձեզ՝ ՝ի տեղիսն յայնոսիկ, այլ ես վաստակիմ փոքու իւիք մասնակից առնել զձեզ, զի կատարեսցին կամք ձեր։ Այսպէս խորամանկութեամբ կամէր որսալ զերկոսին կողմն՝ ՝ի շահ անձին իւրոյ։ Նուրի Էֆէնտի և Ջուխատարն թէ և գիտէին զերթեւեկութիւն

Հայոց և Յունաց առ Դատաւորն, բայց չգիտէին ինչ՝ եւ ըստ թեամբ 'ի զնին կային եւ վշտացեալ ամն էին 'ի նմանէ, զի չյայտնէր ինչ նոցա։ Հայք յորդորէին զԴատաւորն կոչել երբեմն զնուրի Էֆէնտի 'ի խորհուրդ, զի պաշտօնեայ է և ըստ գրելոյ Դենպետին գործակից նմա։ Իսկ նա ասէր, իմ գոլով Երուսաղէմացի՝ գիտեմ զորպիսութիւն երիրիս և զհանգամանս երկուց ազգաց. նախ՝ կարգաւորեցից զամենայն ինչ ըստ եղանակին, եւ ապա ազգ արարեալ նմա սկիզբն արարից գործոյն։ Այլ իբրեւ գանկատ ասացին Հայք ցնուրի թէ ընդէ՞ր երկարէ նա զգործն. ասէ՝ երկայնամիտ լերուք տեսանել թէ զի՞նչ Դատաւորն եւ քաղաքացիք ունին առնել, այնուհետեւ կամ սկիզբն առնեմք գործոյն, կամ գրեմք 'ի Կոստանդինուպոլիս, կամ երթամք անդ, զամենայն ինչ մի առ մի պատմել Տէրութեան, կամ Տէրութիւնն զմեզ աքսորէ, և կամ հզօր զօրութեամբ վերատին դառնամք այսր։ Առ այս 'ի կասկածի եղեն Հայք՝ զի մի ծանրասցի գործն, և հանդիպեսցին ցասման Սրբայի՝ որպէս առաջինքն։ Զի թէպէտ գրեալ էր Փոխանորդն ծանուցանել զհակառակողն, բայց 'ի վերջոյ յաւելոյր վարիլ խոհեմութեամբ, զի յայս նուազ եւս չելանել գործոյն 'ի գլուխ՝ ունէր ծանրանալ։ Ապա յորդորանօք Հայոց գնաց Զուխատարն առ Դատաւորն հարցանել զգործոյն, զի պատուէր ունիմք ասէր զկնի չորից աւուրց դարձուցանել զսուրհանդակն, և այս իններորդ օր է չտեսաք նշան ինչ։ Իսկ նա շողքորդ բանիւք ամոքեալ զմիտս նորա՝ արձակէ խաղաղութեամբ յինքենէ, և կոչեալ առանձին զմին 'ի ժողովրդոցն Հայոց զԳէորգ Պոտուռեան՝ պատմէ զանցս Զուխատարին, և յայտ առնէ զխնդիր իւր, և նորա եկեալ պատմէ Պատրիարքին։ Եւ 'ի վաղիւն Հայք իբր յանդէպս գնացին առ նա (յ8 Նոյեմբերի) և 'ի լինիլ երկար բանից՝ դարձեալ առաջի եւ նոցա զխնդիր իւր, և 'ի վերայ այսր տարապայման երկարէր զխօսս իւր։ և 'ի վերջոյ ասէ յայտնապէս 300 քսակ մայն ինքեան։ Այլ նոքա չառին յանձն, զի 'ի լսել Պատրիարքին և Ծերունեաց վշտանան, և անպատճառ գրեալ ծանուցանեն 'ի Դուռն. և 'ի յառաջ բերել նորին զմուրհակ նախորդին իւրոյ, ասեն՝ եթէ կամիս

լինիլ նման նմա՝ խոստանամք, բայց վախման նորա ուր եկաս՝ ձեզ թողումք խմաստասիրել, և ճանաչել զՍուլթան Մահմատ։ Ես ոչ առնեմ ասէ ըստ նախորդին իմոյ՝ զի նա յիմարութեամբ իւրով էանց անդ քան զչափ, ոչ զխոստացեալն կատարեաց և ոչ զպահանջն էառ 'ի ձէնջ, և 'ի վերջոյ վտանգեցաւ, այլ ես 'ի գլուխս տարեալ զգործն առնում զինչս ձեր եւ տամ պատասխանի հարցանողաց։ Միայն մի յայտնէք զգումարն, զի մի այլք ագահեսցին։ և նոքա ասեն՝ դիւրին արտասանին բանք այլ կարի դժուարին է տալ պատասխանի յիւրում տեղւոջ, մանաւանդ զի ոչ կամիս կատարել զգործն հաւասար, այլ զայսոսիկ ծանուսցուք Ծերունեաց եւ Պատրիարքին, եւ դուք մի վշտացուցանէք զնուրի։ Դուք կատարեցէք ասէ զգործն իմ։ դիւրին է որսալ զկամս նորա, այլ արժան է ձեզ երթալ առ նա և ասել թէ միտք Դատաւորին է 'ի կողմն թալ առ նա և ասել թէ միտք Դատաւորին է 'ի կողմն Յունաց, և 'ի պահանջելն մեր զրաժանորդութիւն հաւասար Յունաց, վարանի 'ի միտս իւր՝ թէ եկեղեցին է 'ի ձեռս Յունաց եւ Տէրութիւնն չէ դրեալ յայտնապէս վասն իրաց ձերոց, և կամ բառնալ զՅունացն. վասն որոյ հարկ է մանդամ խորհիլ ընդ Դատաւորին և կատարել զգործն։

Եւ նոքա գնացին առ նուրի և պատմեցին նմա ըստ բանիցս այսոցիկ, բայց զտին զնա վշտացեալ 'ի նմանէ սակս չյայտնելոյ և չխօսելոյ ինչ զգործոյն. և ցուցանէր գրել 'ի Կոստանդինուպոլիս եւ կամ գնալ անդր։ Եւ 'ի կարի թախանձելն Հայոց, յանձն առ երթալ առ նա և խօսիլ. բայց 'ի կարծիս անկեալ ասէր. զի՞նչ ինչ խօսիք 'ի գնալն ձեր առ նա. մի գուցէ պահանջէ 'ի ձէնջ զյոլով դրամս. եւ ձեր ոչ կարացեալ յանձն առնուլ այսպէս տատանի գործն։ Եւ նոցա չհամարձակեալ զտոյգն պատմել, ասեն՝ մերթ մարթ ինչ իցէ համարձակիլ յայդ ասելման, որ եւեթ զվտանգ նախորդին իւրոյ, սակայն միտք նորա է իրաւախոհ առնել զմեզ. եւ երբեմն 'ի բանս իւր յայտնէ երթալ 'ի Բեթղեհեմ 'ի քննութիւն։

Դարձ արարեալ անտի պատմեցին զայս ամենայն Պատրիարքին և Ծերունեաց, և խորհուրդք ամենեցուն 'ի մի կայացան, չտալ ինչ նախ քան զկատարումն գործոյն, զի

երկեան 'ի Թագաւորէն և 'ի Նախատանաց ազգին եւ առաքեցին զԴէորդ Գոտուռ առ Դատաւորն, և յայտ արարին նմա զհրաժարումն իւրեանց 'ի գործոյ։ Եւ նա պատուիրեաց նմա երթալ ասել, առանց ինչ առնելոյ լինիմ ձեռնամուխ 'ի գործն։ եւ եթէ ոչ հաճեսցեն զկամս իմ, նուազեցուցանեմ քան զոր խոստացայ առնել յառաջագոյն, և այնպէս կնճռեցից զանդիրն որ յաւիտեանս ոչ ոք կարասցէ մաքրել և կարգաւորել։ և եթէ 'ի ամին ժամանակի պատահեսցի խռովութիւն ինչ, չլինիմ երբէք միջամուխ, և դուք երբէք չունիք դատանել հանգիստ։ և այլ սոցին նման բանք ստառնալեաց։ Լուեալ Վարդապետաց զայտոսիկ վերատին դնացին առ նա, և փոքր ինչ հանդարտեցին զմիտս նորա, և զդուտարն պահանջեալ նուազեցուցին։ բայց նա չկամէր առնուլ ինչ առաւել քան զոր պահանջէրն, եւ այն իբր յանդգնութիւն Հայոց, զի մի խաղաղ վչտացեալ Ցունաց յարուսցեն ազմուկ խռովութեան և մշանջենաւոր տեւեսցէ այն, և զկնի այլոց բանից ամոքեցին զմիտս նորա, եւ յանձն առին շատանալ առ ժամն խոստումամբ նորին եւ մեկնեցան։ Եւ ապա ըստ ազգ արարելոյ նորին դարձեալ դնացին առ նա (Նոյեմբեր 8), ուր էին Նուրի Էֆէնտի և Ջուխատարն, եւ ծանեան 'ի կերպարանաց նոցին թէ գժտեալ են ընդ միմեանս։ Ասէ Դատաւորն՝ երբ ասացի ձեզ երթալ 'ի քննութիւն Բեթղեհէմի, զի ամբաստանեալ էք զինէն առ եղբայրն իմ։ Եւ նորա վշտացեալ յանդիմանէ զիս, եւ նոքա ասեն. եղեն այդպիսի բանք, երթալ անդ եւ բարւոք քննել զտեղիս արդարութեամբ՝ տալ զրաժինս Հայոց։ Նուրի Էֆէնտի ասէ՝ այսքան ժամանակ չծանուցանես ինչ ինձ, և զերկոսին ազգսն լուսաւոր կոչեալ առ քեզ ազաչանօք եւ իրաւախոհութեամբ կամիս զգործն կատարել, և զԲեթղեհէմ 'ի քննութիւն առնուլ, զոր չէ գրեալ Արքայի։ Եւ եթէ միայն քեզ յանձն արարին զգործս Թագաւորն և Դենդեան, կատարեա ըստ կամաց քոց։ զի յառաջագոյն կարգեցայ հրովարտակաւ Փոխանորդ Մուվէլլայի և յայս նուազ գործակից քեզ։ ուստի հարկ անհրաժեշտ համարիմ ըստ պաշտօնիս իմանալ զամենայն ինչ։ զի պատասխանի տաց որոց հարցանեն զիս։

Դատաւորն պաշարեալ սկսաւ շփոթիլ։ որպէս կամիք այնպէս արասցուք։ ընդէր վշտացուցանեմք զիրեարս վասն գործոց կեսվուրաց։ Նուրի ասէ՝ գործս չէ կեսվուրի, այլ Թագաւորի, և չէ արժան նուազեցուցանել զհրաման Արքայի։ զի տեսայք զօրինակն, և եթէ են տակաւին ցանկացողք, իջցեն յասպարէզ։ և եթէ կամիս գիտել զճշմարիտն, չէ հարկ երթալ 'ի Բեթղեհէմ, եւ կամ հաւանութեամբ նոցին գործ կատարել, այլ իրրեւ Դատաւոր նստեալ ատ՝ ժողովով վճռեսցուք զհրաման Արքային և աւարտեսցուք զգործն։ Եւ եթէ 'ի հաճութիւնս Ցունաց ակնարկես, զայն դու գիտես, և եթէ կրօնաւորք նոցին բռնաւորք իցեն, պարտ է ծանուցանել Արքայի։

Դատաւորն ասէ՝ քաւ լիցի, Ցոյնք ոչինչ ունին ասել, այլ կամիմ զի հաշտեսցին ընդ միմեանս, զի վէճք սոցա ոչ վերջանան։ ուրեմն 'ի վաղիւ խնդրեսցուք 'ի ժողովէ զբանալի հիւսիսային դրան եւ յանձն արասցուք Հայոց, եւ տացուք հրաման վասն ուխտի Այրին ըստ հրովարտակին։ Հայք ասեն, յառաջագոյն պաշտօնեայք Տէրութեան կամէին գնալ յուխտ 'ի Բեբրոն, եւ 'ի վերադարձի իւրեանց հանդիպել 'ի Բեթղեհէմ, այլ իրրեւ լուան թէ խըռովայոյզ Բեահեայ Փոխարքային Եգիպտոսի Մէհէմմէտ Ալեայ, 'ի դրդմանէ Ցունաց ժողովեալ զընակիչս գիւղին պատուիրեալ է նոցա 'ի սկսանիլ գործակալաց 'ի գործ, ազաղակ բառնալ, թէ Հայք ոչ ունին իրաւունս ոչ եկեղեցւոյն և ոչ Այրին, եւ եթէ բռնացին նոքա, ընդդէմ կալ զինու եւ աներկիւղ պատերազմիլ։ Եւ ապա յասել Դատաւորին, թէ Նուրի Էֆէնտի եթող զգնալն, զի մի 'ի պատճառս իւր լիցի խռովութիւն ինչ։ Նուրի Էֆէնտի՝ ասէս ոչ երկնչիմ յերթալոյ, սակայն կարելի է Ցունաց պատրաստել զգիւղական և յարուցանել վէճս և առիթ մինչ ազմկի մեծի և ճայթման զինուց։ մեք թերեւս գանակոծեալ փախուցեալ ապրեսցուք, և քանիք ոմանք անկցին 'ի Հայոց, և այս ամենայն հասանիցի յականջս Տէրութեան, և 'ի գնալն մեր անդ չգիտեմ թէ զինչ պատասխանի տացուք։ զի առ Ցոյնս մարդասպանութիւնն ոչինչ է, որպէս 'ի չինութեան տաճարին Ս. Յարութեան այնքան Իսլամաց մահուան առիթ եղեն։ Ցրուեցաւ ժողովն։

Դատաւորն կոչեալ զԳէորգ Գոտուռ առանձին յանցաւոր դատէ զՀայս, և դառնայ յառաջին խոստմանէ իւրմէ չտալ Հայոց այնքան ինչ, և չգնալ 'ի Բեթղեհէմ, եւ նա տայ նմա պատշաճաւոր պատասխանի՝ յայտ առնելով զինքնահաւանութիւն իւր, և զթեւարկելն Ցունաց. եւ ինքն կարէր խոհեմութեամբ չտալ տեղի խուովութեան 'ի Բեթղեհէմ, այլովքն հանդերձ։ Ապա յորդորէ զնա Դատաւորն զի հնարեսցէ առաքել առ ինքն զՆուրի, զի հաճութեամբ Նորին եղիցի գնալն, և Հայք բաղում թախանձանօք հաճեցուցին զնա, երթալ և դառնալ անվնաս երաշխաւորութեամբ դատաւորին, և ապա խորհրդակցեալ ընդ միմեանս որոշեցին գնալ, և Հայք սկսան պատրաստել զհարկաւորեալսն։ Լուեալ զայսոսիկ Ցունաց դիմեցին առ Քաղաքապետն եւ աղաչէին զնա յայս նուազ եւս ձեռնտու լինիլ ինքեանց և խափանել զգործն, որպէս արարեալ էր յառաջագոյն, մինչ ցգալուստ Կուսակալին եւ պատասխանի Թղթոց իւրեանց 'ի Կոստանդինուպօլսոյ. զի առանց հրովարտակի ասէին, միայն գրով Դենպետին չէ հնար լուծանել զայսպիսի խնդիրս։ Եւ նա ասէ՝ Դենպետն Արքայի գրեալ է առ Դատաւորն և առ Միւմէլլայն կատարել զամենայն ինչ օրինօք Շէրիի, միթէ չիցէ՞ մեզ հրովարտակ սակս աքսորման Դատաւորին և Խօճաքեանին, ուստի ոչ կարեմ լինիլ ձեռնտուխ՝ երկնչիմ 'ի Թագաւորէն, և եթէ Դատաւորն կոչեսցէ 'ի ժողով՝ անյապաղ գնամ։ Եւ անտի չոքան առ Դատաւորն եւ մեղադիր լինէին նմա թէ զի՞նչ գործ գործեցեր ընդ մեզ, կործանեցեր զտուն Ցունաց. լաւ էր մեռանիլ քան տեսանել զայսպիսի օրս, օտար դատաւոր օք ախոյեան եկաց Հայոց և խափանեաց զգործադրութիւն հրովարտակին, իսկ դու Երուսաղէմացի եւ բարեկամ մեզ՝ առանց հրովարտակին արկեր զմեզ 'ի տագնապ տառապանաց. բարւոք խորհեաց եւ 'ի միտ առ զոր առնեսդ, և ապա զոր ունիս կրել, համբերեա մինչ ցգալուստ Բդեշխին եւ պատասխանի գրոց. եթէ սակաւ իցէ խոստումն, յաւելումք 'ի նոյն։ Դատաւորն ասէ. չէ հնար այժմ լինել, եթէ 1000 քսակ եւս տայցէք, զի Դենպետն հրամանաւ Թագաւորին գրեալէ կատարել զգործն գործակցութեամբ Մուվէլլային, սակայն չզրկեմ զձեզ, այլ բարեկամութեամբ ասեմ լուել, զի տեսի զնախատինս նախորդին խմոյ։ Եւ անտի գնացին առ խախամագլուխն Հրէից Աղբիանուպօլսոյ, որ 'ի նոյն աւուրս եկեալ էր յուխտ յԵրուսաղէմ, զնա առաքեցին առ Նուրի իբրեւ միջնորդ, որ էր նախածանօթ նորին, եւ խոստացան տալ նմա 200 քսակ, միայն անփոյթ լինել 'ի գործն, որպէս Դատաւորն։ Եւ նորա կշտամբեալ զբարեկամ իւր եհան արտաքս. զի առիթ լինէր անկանելոյ յաչս Թագաւորին և աղարտելոյ պատուոյն և լինիլ պատժապարտ իսկ։ Եւ մինչդեռ այսպէս իւրաքանչիւր օք տագնապէր 'ի խորհուրդս իւր ոմն այսպէս և ոմն այնպէս. եհաս թղթաբերն 'ի Դամասկոսէ ('ի 12 Նոյեմբերի), եւ Քաղաքապետն կոչեալ ընդ Թարգմանն Հայոց՝ յայտ արար նմա զգալուստ զօրաւոր հրովարտակին վասն Հայոց. նամականիք 'ի Դենպետէն, 'ի Գայմագամ Բդեշխէն Կոստանդինուպօլսոյ առ Կուսակալն եւ 'ի Նորին իսկ Գործակատարէ, յորս խստագոյնս պատուիրէին, 'ի հասանիլ հրովարտակին անթերի կատարել զամենայն գրեալսն. զի ցասուցեալ է Արքայի թէ զիա՞րդ մինչեւ ցայժմ հրաման Նորին մնաց անկատար, կարծելով թէ դառնայ Արքայ 'ի բանից իւրոց։

Այսոքիկ գրեանք հասեալ 'ի Դամասկոս առ Տեղապահն և Նորա մնացեալ գալստեան Բդեշխին, եւ սճապարեալ գրեաց հրաման առ Դատաւորն և առ Քաղաքապետն Երուսաղէմի՝ փութացուցեալ զնոսա 'ի գործ, զի մի այլ ինչ մրրիկ յարիցէ 'ի կողմանէ Արքայի։ Եւ Նորա եկեալ պատմեաց զայս ամենայն Պատրիարքին և միաբանաց, և նոցա լցեալ անպատմելի ուրախութեամբ՝ փառս եւուն Աստուծոյ, օրհնեցին զԱրքայ եւ զերախտաւոր բարերարս ազգին. եւ 'ի ծանուցանելն զայս Նուրի Էֆէնտեայ, ասէ՝ լուայ նախ քան զձեզ, եւ սպասեմ կոչման Դատաւորին, որ և հրաւիրեալ գնաց ուրախութեամբ՝ արկեալ զվարտագոյն կոչիկն 'ի նշան ասոյնի պատուոյն։ Եւ գարձեալ անտի պատմեաց Հայոց զզօրութիւն հրովարտակին. սա միայն ասէ սպասէի համբերութեամբ, և ակն ունէի անպատճառ գալստեան նորին, որպէս ոմն 'ի մտերմաց իմոց ազգ արարեալ էր լեռ, այժմ ուրախութեամբ երթամ 'ի Բեթղեհէմ։

Յետ այնորիկ ազգ արարին Հայք Դատաւորին 'ի ձեռն Գէորգ Պատուական թէ ոչ հաճիմք առաջին խոստմանդ, զի բաց 'ի հրովարտակին և այլոց գրոց, գրեալ են նաեւ Փոնորդն և գլխաւորք ազգին մերոյ. լինել հաւասար բաժանորդ ընդ Յունաց 'ի Բեթղեհէմ եւ յԱստուածածին ըստ մասաց հրովարտակաց, զի այնպէս հրամայեալ է Արքայի չլինել փոքու իւիք նուազ 'ի Յունաց 'ի նոյն տեղիս, եւ զընդդիմացողսն փութով ծանուցանել 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ նա ասէ՝ պատուել քան զիսոստացեալն իմ ոչ տամ, և եթէ տիպեալ անպատճառ պահանջեն, յայնժամ մեկուսացեալ 'ի բաց որոշիմ. եթէ պատահեսցի արդեալք ինչ 'ի կողմանէ Յունաց կամ 'ի Կուսակալէն և յայլոց։ Սովաւ տայր խմանալ թէ՝ Յոյնք ոչ ունին դադարիլ 'ի յուզելոյ զխռովութիւն. նմին իրի յակամայս ընդեցին Հայք, զի մի զայրացի Նուրի էֆէնտի և վերստին գրեսցէ 'ի Կոստանդինուպօլիս և գործն երկարեսցի։ Ապա զկնի աւուրց ազգարար Դատաւորն գլխաւորացն Հայոց, Լատինաց և Յունաց երթալ 'ի Բեթղեհէմ. Լատինք փակեալ 'ի ներքս յահէ ժանտախտի՝ առաքեցին միայն զԹարգմանն իւրեանց. իսկ Յոյնք հրաժարեցան երկիցս և երիցս՝ այլ 'ի պատուիրելոյ և 'ի յորդորելոյ Դատաւորին յանձն առին գնալ, որք էին 1 Եպիսկոպոս, 2 Վարդապետ, գանձապահն Մեսրոպիանոս և Թարգման Սալարեան։ Թէոդորոս Պատրիարք առաքեաց զփոխանորդ Ստեփան Եպիսկոպոս, զՄարկոս Եպիսկոպոս Եւդոկեացի, զնախկին փոխանորդ Ծերունի Կիրակոս վարդապետն Մարաշցի, լուսարար Սիմէոն եւ Դիոնէսիոս Վարդապետք, Թարգման Աւետիս՝ Պոտուռեան Գէորգ և այլք. գնացին և այլազգիք։ Դատաւորն Մուսայ Էֆէնտի Խալիտի, Նուրի Էֆէնտի, Բաղաքապետն Ապտիւլ Քէրիմ, Եէնիչէրի Աղասի, Միւֆթի Թահիր Էֆէնտի, Նախիլ Օմար Էֆէնտի և այլք 'ի մեծամեծաց քաղաքին, 'ի Կոստանդինուպօլսոյ, եւ 'ի Դամասկոսէ եկեալ Մ--գ-ՀԷ+ սպասաւորք և զօրք իւրեանց, և ամենեքեան իբրեւ անձինք 300։ Ի հասանիլ սոցա 'ի Բեթղեհէմ, ընդառաջ ելին 3 ազգք խնկօք եւ մոմեղինօք, եւ տարեալ բազմեցուցին 'ի մէջ մեծի եկեղեցւոյն։ Զկնի պատուոյ և մեծարանաց, 'ի բաց եդին զծխախոտսն, և հրամայեցին

բազմիլ գլխաւորաց երից ազգաց։ Եւ Դատաւորն զհրովարտակն ցնուրի էֆէնտի ընթեռնուլ զայն 'ի լուր ամենեցուն։ Եւ նորա բացեալ զբերան իւր ասէ՝ ընթերցան առաջին Խաթթի Շէրիֆք և արձանագրեցան 'ի Դատարանի, որոց պատճէնքն են առ մեզ. այժմ հարկ է ընթեռնուլ ունկնդիր լինիլ եւ ուշադրութեամբ 'ի միտ առնուլ զբան նոր հրովարտակիս, զոր չնորհեալ է բարերար Արքայն. և սկիզբն արարեալ ընթերցաւ, եւ զարմացեալ ամենեցուն ընդ ոմս հրովարտակին, բարիս մաղթեցին Արքայի, և զոր ինչ հրամայեալ է՝ հարկ է կատարել ասէին։ Զորոյ զթարգմանութիւնն դիցուք 'ի տորեւ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Թարգմանութիւն երկրորդ հրովարտակին։ Որոշումն դրանց և եկեղեցւոյն Հայոց։ Վիճաբանութիւն ընդ դատաւորին վասն բաժանորդութեան Աստրին։ Կախումն կանթեղաց Հայոց։

ՈՒՂԵԱԼ առ Կուսակալն Դամասկոսի Սիւլէյման Փաշայ, առ Դատաւորն Երուսաղէմի, առ Նուրի Էֆէնտի Մուվէլլայ, առ չորս գլխաւոր Կրօնապետս, առ Բաղաքապետն, և առ այլս։ Ի հասանիլ Կայսերական հրովարտակիս՝ գիտութիւն լիցի, բարեյիշատակ Նախնին իմ Սուլթան Սէլիմ առաջին, 'ի տիրել իւրում յաղթանակաւ քաղաքին Երուսաղէմի, տուեալ է որիշ որիշ Հայոց և Յունաց Կայսերական հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) վասն ուխտի տաճարին Ս. Յարութեան, որոց պարտ և արժան էր, զգուշութեամբ վարել նոքօք և չառնել ինչ հակառակ նոցին. սակայն ժամանակ առ ժամանակ 'ի պատահիլ խռովութեանց 'ի մէջ երկուց ազգաց սակս նոյն տաճարի, տուեալ են հրովարտակք երկուց կողմանց հակառակ իմաստիւք։ Եւ 'ի հրդեհիլ տաճարին՝ վերստին անկեալ է խռովութիւն 'ի մէջ նոցին, որոյ վասն յառաջին նուագի կազմեցաւ ժողով Կայսերական հրամանաւ, յորում էին

Դենղեան մեծ Տիրրի Զատէ, Նախարարք և այլք։ բայց յայնժամ ոչ լուծաւ խնդիրն և ոչ բարձաւ խռովութիւնն երկուց ազգաց։ Եւ յերկրորդում նուազի կազմեցաւ ժողով մեծ 'ի Դենղեաութեան Օմար Խուլխի էֆենտեայ, յորում էին մեծամեծք Տէրութեանն, դասք գիանականաց, և Երեսփոխանք Հայոց և Ցունաց, յառաջ բերեալ զհրովարտակն Սէլիմայ Արքայի։ որպէս Ցոյնք զդաշնագիրն Օմարայ։ Արդ՝ երիցքին հրովարտակքն Սէլիմայ, տուեալ Հայոց և Ցունաց, հիմն ընտրեցան, յորս բացայայտ գրեալ են երկուց ազգաց ըստ օրինաց իւրեանց՝ ընկերութեամբ կատարել զուխտս 'ի տաճարին Ս։ Յարութեան, պայմանաւ առաջնութեան Պատրիարքին Ցունաց։ և արտաքոյ նորին եղեալ տեղեաց, որոց անուանքն եւս բացորոշ գրեալ են 'ի նոյն հրովարտակն, առանց կռուոյ անկախութեամբ տիրել։ երկաքանչիւր ազգք 'ի ժողովին ընկալան զհրովարտակս միմեանց։ Մին 'ի խնդրոց խռութեան էր սեփհական տեղիքն 'ի Ս։ Յարութիւն, որք դարձեալ յականէ յանուանէ բացայայտ գրեալ են 'ի հրովարտակս երկաքանչիւրոց, որք եւ հաճեցան անկախութեամբ տիրել սեփհական բնակութեանց իւրեանց, որպէս տիրեալ են 'ի ժամանակս Սէլիմայ և անդր։ Եւ երկրորդ խնդիրն էր Հապէշք, Դպիրք և Ասորիք, որք 'ի սկզբանէ անտի սահմանեալ են լինիլ համազգային և հետեւող ազգին Հայոց, և Ցոյնք ընդդէմ Կայսերական հրամանի հակառակեալ՝ թէ մեզ են հետեւողք։ Սոքա բացակայ գոլով 'ի ժողովոյն՝ ծանուցաւ երկուց ազգաց, գրել առ Դատաւորն Երուսաղէմի քննել անդ և ստուգել, զի որպէս էին նոքա յառաջագոյն, այնպէս եղիցին և առ յապայն։ Եւ վերջինն 'ի խնդրոց՝ բաժանորդ և սեփհական տեղիքն 'ի Ս։ Յարութիւն, որ նախ քան զայս հրդեհեալ էր, զբաժանորդ տեղիսն՝ ընկերութեամբ, և զսեփհական տեղիս անկախութեամբ չինել և նորոգել։ Սակայն չունի որ իրաւունս միջամուխ լինիլ 'ի խնդիրս չինութեան, զի այն պատկանի միայն Կայսերական մեծութեանս։ զի ըստ նեռելոց Շէրիի օրինաց համաձայն (առաջին ձեւոյն, առ որ կամիմ 'ի հպատակաց Տէրութեանս՝ նմա յանձն առնեմ զայն։ վասն այսր չունի որ իրաւունս ամբաստան լինելոյ։

և 'ի սմին նուազի զհրաման ընդհանուր նորոգութեան եաւ Ցունաց, չտիրելոյ՝ չգրաւելոյ՝ չյափշտակելոյ պայմանաւ զտեղիս իւրաքանչիւր ազգաց։ ըստ զօրութեան հրովարտակացն Սէլիմայ՝ ընկերովի տեղիսն ընկերութեամբ, և զսեփհական բնակութիւնս՝ անկախութեամբ ժառանգել։ և վերջապէս ծանուցաւ երկուց կողմանց վարիլ ըստ որոմադրութեան նորին։ Եւ նոքա յանձն առեալ ընկալան, որով վերջացաւ խղաւ վէճն և խռովութիւնն։ և Դատաւորքն Իլամ արարեալ մատուցին առ Թագաւորութիւնս և գրեցաւ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) երկուց ազգաց։ յորս բովանդակեցան խնամաք Իլամին և հրովարտակացն Սէլիմայ ոճովք իւրեանց՝ և զհանգամանս գատին, 'ի հպատութիւն նորին։ Եւ արձանագրեցան 'ի Դիւանս և 'ի Դատարանս, և սակս գործադրութեանցն նշանակեցան 'ի Գլուխս նոցունց։ Սակայն հարկ էր քննել զսեփհական տեղիս Հայոց՝ թէ որքան ծախս լեալ իցէ վասն չինութեան ձեռամբ Ոսթիկանի, Մուվէլլայի՝ և Ճարտարապետի, ծանուցանել զՀշմարիտն ատ։ զհրովարտակն արձանագրել 'ի Դատարանի տեղւոյն և փոյթ առնել գործադրութեան, և վարիլ ըստ որոմադրութեան նորին, և վասն այսոցիկ իրաց Կայսերական հրամանաւ և ակնարկութեամբ մեծի Դենղետին որոշեցան Մուստաֆա Բաշիա Ոսթիկան (մուպաշիր)։ Մէհէմմէտ Գալֆայ Ճարտարապետ եւ առաքեցան յԵրուսաղէմ առնել ըստ մտաց հրովարտակին, եւ իւրաքանչիւրոց զգուշութեամբ հոգ տանիլ գործադրութեան հրովարտակին Հայոց։

Զի թէպէտ նուիրական պարտաւորութիւն էր ամենեցուն չմիսիլ յայնպիսի գործս, որք արտաքոյ են իշխանութեան իւրեանց, եւ հեռի մնալ պաշտպան և տէր լինելոյ միոյ կողման։ զի Բեթղեհէմ եւ գերեզմանն Ս։ Աստուածածնի բացայայտ գրեալ է 'ի հրովարտակս Սէլիմայ, այլ Դատաւորն Երուսաղէմի ագահութեամբ իւրով զմի կողմն պաշտպանելոյ ջանիւք, խռովութիւն հանեալ է վասն Բեթղեհէմի և գերեզմանի Ս։ Աստուածածնի, և առիթ առեալ հակառակ խմաստիւք գրեալ զարձանագրութիւնս Հէլոճէլթից, զորս Դատաւորքն Երուսաղէմի ժամանակ առ ժամանակ տուեալ են երկուց ազգաց։ Զոմ և

զգրութիւն Կայսերական հրովարտակաց, զորս եառու յայս նուագ Հայոց եւ Յունաց 'ի հաստատութիւն հրովարտակացն Սէլիմայ, կամակորելով և զիմաստս նոցին չարաչար մեկնելով, անվոյթ եղեալ են զգործադրութենէ նոցին, որպէս եհաս յայս անգամ յականջս իմ. և զի Կայսերական կամքս իմ էր բան առ բան գործադրել զհրովարտակսն, զորս եառու 'ի հաստատութիւն հրովարտակացն Սէլիմայ, սակայն պաշտպանել միոյ կողմանն և հակառակիլ խմաստից հրովարտակացն գործ իմն է ընդդէմ Շէրիֆի օրինաց եւ Կայսերական կամացս։ Այլ 'ի մասին Բեթղեհէմի և գերեզմանի Ս. Աստուածածնի, ըստ պահանջման Շէրիֆի օրինաց երկու աղգք բաժանորդ լինելոյ եւ այսուհետեւ խաղաղ բառնալոյ զխռովութիւնն, տուան Կայսերական հրովարտակք. և յաղագս վարելոյ ըստ զօրութեան նոցին՝ յատկապէս Կայսերական դիւանէս գրեալ առաքեցաւ սոյն հրովարտակս։

Արդ՝ դուք որ Վէզիր, Դատաւոր, Մուվէլլայ եւ այլ ոմանք էք, Կայսերական հրամանս է, ջնջել և բառնալ 'ի դատարանէն Երուսաղէմի զարձանագրութիւնս հակառակ խմաստիւք գրեալ Հէօճէթէից, զորս տուեալ են Դատաւորք վասն ագահութեան իւրեանց։ Զտալ հակառակ մեկնութիւնս հրովարտակաց, եւ չթիւրել զրարձրագոյն խմաստս նոցին, որք գրեցան համաձայն մտաց հրովարտակացն Սէլիմայ եւ չտալ կարեւորութիւն խռովութեանց պատահելոց յերկուց կողմանց։ Իսկ 'ի մասին Բեթղեհէմի և գերեզմանի Ս. Աստուածածնի ըստ պահանջման Շէրիֆի օրինաց՝ երկու աղգք բաժանորդ լիցին, չտալով համարձակութիւն խռովութեան վասն սոցին իրաց։ Կայսերական կամքս այս է՝ միաբանութեամբ ջանալ եւ փոյթ տանիլ բառ առ բառ գործադրութեան հրովարտակաց. չվիճել 'ի կողմն ագահութեան, չսիրել կաշառս և չվնասել առիթ յարուցանելոյ նորանոր խռովութեանց, պաշտպան և տէր լինելով միոյ կողման։ Եւ եթէ փոքր ինչ չարժուսն եւս եղիցի հակառակ հրովարտակին այնմիկ, այնպէս գիտասջիք թէ համարձակողաց և հրամայողաց անտարակոյս պատիժ և պատուհաս պատրաստեալ են, այլ առնել որպէս գրեցաւ, եւ զհրովարտակսն մշտնջենաւոր բառ առ բառ

դնել 'ի գործադրութեան, եւ զգուշանալ 'ի հակառակէն և զընդդէմն գործելոյ, որոյ վասն գրեցաւ Կայսերական հրովարտակս, 'ի հաստատիլ սորա եւ այլն. 'ի ١٥ Շէվվալ ամսոյ. ١٢٢٨։

Յետ ընթեռնլոյ զհրովարտակն՝ եհարց Դատաւորն զԲՈՅՆՍ. ո՞ւր է հիւսիսային դուռն Այրին և բանալի նորին։ Նոքա ցուցին զայն, բայց զբանալին ոչ. դարձեալ ասէ՝ 'ի հրովարտակին դուռն և բանալի նորին գրի եւ Այրն բաժանորդ երկուց ազգաց, եւ դուք տիրեալ էք երից դրանց եկեղեցւոյն եւ բանալեաց նոցին, Հայք ուստի՞ մոցեն եւ ելցեն յԱյրն. զի ըստ օրինի պարտ է ցուցանել նոցա ճանապարհ. վասն որոյ տուք զմի բանալի հիւսիսային դրան եւ միւսն մնասցէ առ ձեզ։ Հայք ոչ առին յանձն, այլ խնդրէին զայն դուռ միայն սեփհականել, այլ խնդրէին զայն դուռ միայն սեփհականել հինգեանց. բայց Դատաւորն լուեցոյց զնոսա, և նոքա դարձեալ պնդէին, թէ եկեղեցին ոչ է սեփհական Յունաց. այլ գիւղին Բեթղեհէմի եւ միջնորմն այն նորաստեղծ սակս անկարգութեան Ֆէլլահից, և չիք յիշատակութիւն նորին 'ի հրովարտակս երկուց ազգաց. կամ պարտ է բառնալ զայն և կամ զդուռն սեփհականել Հայոց։ Դատաւորն ոչ մատուցեալ ունկն բանից նոցա, ասէ ցՅոյնս բերել զբանալիս դրան, և նոքա ասեն՝ մի է բանալի նորին, և յարտաքուստ չունի տեղի բանալւոյ։ Հրամայեաց Դատաւորն բառնալ զայն. Յոյնք ոչ ունէին զայլ փականս, այլ Հայք յառաջագոյն պատրաստեալ էին զայն և հիւսն, քակեցին զհինն և բեւեռեցին զնորն երկու բանալեօք, եւ բերին յարտաքուստ տեղի բանալոյ և փակելոյ, եւ բերեալ զերկոսին բանալիսն եդին առաջի Դատաւորին. և նորա առեալ զմին եւ ցփոխանորդն Յունաց եւ զմիւսն ցփոխանորդն Հայոց Ստեփան եպիսկոպոս, պատուիրելով ցփոխանորդն Հայոց Ստեփան եպիսկոպոս, պատուիրելով զամենայն ինչ։

Զկնի կերակրոյ մինչ շրջէին 'ի սիւնազարդ դաւթի եկեղեցւոյն, մատուցեալ Հայք առ Դատաւորն ասեն վասն փայտեայ միջնադրան, կամ խաղաղ բառնալ զփականս նորա, և կամ տալ զմի բանալի ըստ Յունաց. զի 'ի փակել

զարտաքին երկաթեայ դուռն, զայն ևս աղխէին յետուստ, որով խափանէր ճանապարհ Հայոց յԱյրն. Դատաւորն կամէր տալ զմի բանալի նորին, այլ Ցոյնք խոստացան թողուլ զայն բաց, ընդ այս թէ և հաճեցան Դատաւորք, այլ Հայք սիրէին խօսքառ բառնալ զկուպղն, ընդդէմ կացին Ցոյնք. այլ 'ի զնդելն Հայոց, հրամայեաց Դատաւորն և քակեցին զայն; եւ մնաց այնպէս. խնդրեցին Հայք զբանալի արտաքին երկաթեայ դրան, և բաժանորդութեամբ աւել ածել 'ի սիւնաղարդ գաւթին. սակայն 'ի զօրանալ աղաղակին Ցունաց, եթող զայնս դատաւորն. Եւ ապա մտին ամենեքեան 'ի հիւսիսային կողմն եկեղեցւոյն, ուր էին խորանք երկու, եհարց դատաւորն, որոյ են խորանքս այսոքիկ, յառաջեցին Ցոյնք և ասեն. մին Ղպթոց և միւսն Ասորւոց, բայց Հայք երկիցս 'ի տարւոջ եկեալ կատարեն ապա զօրէնս իւրեանց. եհարց դատաւորն ցկատինս և նոքա ասեն՝ թէ երկոքին սեղանքն ևս Հայոց են. Ասէ՝ Դատաւորն. խորանքս Հայոց են, զի Ղպթիք և Ասորիք հետեւող են Հայոց, և ոչ եթէ Հայք նոցա, ուրեմն բարձցեն Ցոյնք զսպասկերս և դիցեն Հայք և կատարեսցեն զօրէնս իւրեանց. Այլ Հայք ասէին, ոչ միայն զսպասկերս խորանացն բառնալ, այլ և զարմոցն, զի սկսեալ 'ի հիւսիսային դրանէ մինչ ցդուռն Այրին լցեալ էին պատկերօք. Ա՛ռ այս բազմացան աղաղակք Ցունաց և Աւետիս Թարգմանն առաւել ևս բարձրացոյց զձայն իւր, ոչ միայն զսպասկերս, այլ և զկանթեղս, և միանգամայն ամփոփել զձեռս իւրեանց 'ի տեղւոջէս յայսմանէ, ապա թէ ոչ չմերձենամք 'ի խորանն և ծանուցանեմք Արքայի. բաւական լիցի զոր կրեցաք 'ի սոցանէ մինչեւ ցայժմ խրրեւ դերի. Դատաւորն, ընդէ՞ր աղաղակէք, այսուհետեւ չունիք խնդրել Թուղթս 'ի Ցունաց, այլ միշտ համարձակ կատարել զօրէնս ձեր. Քաղաքապետն որ միշտ 'ի կողմն Ցունաց էր, ասէ, խակզրանէ անտի վշտացեալ է սիրտ Հայոց, զի յայրման և 'ի չինութեան տաճարին Ցոյնք սիրաբար խրոխտային 'ի վերայ Հայոց, այժմ եհաս սոցա կարգ եւ ժամանակ. Նուրի էֆէնտի ասէ ցԹարգմանն, հապիւ զերծաք 'ի մոլեգին աղաղակէ Մուսաննրի Դատաւորին, այժմ դո՞ւ ըստկլսար, թէպէտ առանձին քաջալերէր չթուլանալ. Դատաւորն, երկոքեանքդ քրիստոնեայ և հաւատակից էք, չէ՞ ինչ վնաս 'ի պատկերաց ում և լիցի. համարձակեալ ասի Ցունաց ասեն՝ ահա ըստ հրամանի ձեր ակամայ տամք զխորանսն, բայց սոքա եղեալ են 'ի մոլ սիրել նոսա յատակին և շրջապատ օրմոցն. Նուրի, եթէ թողուցք 'ի կամս ձեր չտայք մատնաչափ տեղի, այլ ըստ հրամանի Արքային և հաստատ որոշման, տեղիս այս Հայոց է՝ եթէ 'ի վերայ խորանի կանգնեալ կատարեսցեն զօրէնս, ճշմարիտ են բանք ձեր, իսկ եթէ 'ի վերայ յատակի եւ ժողովուրդքն զկնի, յայնժամ ամենայն իրօք յատակն ևս Հայոց լինի, Ցոյնք յանհնարինս մտեալ՝ ասեն՝ եթէ այդպէս է՝ ուրեմն բաժանորդ եղիցի տեղին այն, որպէս դուռն եղեւ. Ճայնակից էր սմին և Դատաւորն. Իսկ Հայք աղաղակէին թէ անմարթ է այդմ լինիլ, և 'ի բազմանալ աղաղակաց երկուց կողմանց, Դատաւորն ըստ ցոյց զնոսա և ասէ՝ Ղպթիք և Ասորիք ունին յատուկ սեղանս յեկեղեցին Բեթղեհէմի, իսկ Հայք եւ ոչ քայլ մի ոտին. զնոյն ասէին եւ այլազգիքն. եւ թերի թողեալ զխնդիրն՝ ի՛ջին բաղմութեամբ յԱյրն. եհարց Դատաւորն ցՀայս, ունի՞ք ապա կանթեղս և աշտանակս, նոքա ասեն՝ ունէաք յառաջագոյն, որպէս տեսանի 'ի հրովարտակս և 'ի գիրս Դատարանի, այլ այժմ և ոչ մի ինչ, հոգոց եհան Դատաւորն և եհարց ցՑոյնս, դուք և Հայք Քրիստոնեայ էք, ասեն այո, լինի՞ զնաս քրիստոնէութեան ձերում եթէ Հայք ևս ունիցին ապա քանի մի կանթեղս, ըստ ցոյնք, և 'ի տիպել Դատաւորին՝ ասեն որ մինչեւ ցայժմ չէ լեալ, այժմ նորասահման ինչ չլինի, և բանք բաղում, ոչ ինչ ասացեալ ելին բազմութեամբ 'ի վեր եւ բաղմեցան. Դատաւորն յետ խորհելոյ ընդ Նուրի էֆէնտեայ առանձին՝ ասէ, Հայք ևս կանգնեսցեն 5 կանթեղս յԱյրին, և վերջապէս խնդիրն. Բարձրացոյց Թարգման Աւետիս զձայն իւր և ըստ ցոյց զամենեսեան և սկսաւ յառաջ բերել զդատն Կոստանդինուպօլսոյ՝ եղծանիլ հրովարտակին, զիմաստս երկուց հրովարտակաց՝ զբառն բաժանորդ՝ այլազգն հանդերձ, և 'ի վերջոյ ասէր՝ երկնչիմք 'ի Թագաւորէն, զի տեսաք զպատիժ հակառակողաց հրովարտակին եւ չարաչար մեկնողաց զիմաստս նորին, և 'ի այն նուագի ևս սպառնացեալ է Արքայ պատիժս ոչնչի-

սեաց, որպէս ընթերցայք եւ լուայք, ուրեմն արդարութեամբ գործադրեցէք զրառն բաժանորդ, ապա թէ ոչ՝ չհամարձակիմք հաւանիլ փոքու իրաց, զի յայտնապէս պատճառ լինիք բողոք բառնալոյ առ Տէրութիւնն և ճանձրացուցանելոյ զնա։ Սրամտեալ Դատաւորին գոչէր, ոչ կարեմ լուծանել զիմդիրս ձեր, գրեցից առ Տէրութիւնն զի 'ի բաց արասցէ յինէն զգործս։ զի պաշտօնն իմ էր տալ զբանալի հիւսիսային դրան և զուխտս Այրին բաժանորդ առնել երկուց աղղաց, որպէս և արարի իսկ, և դարձեալ առեմ 'ի լուր ամենեցուն ըստ մտաց հրովարտակին Սէլիմայ, և երկուց հրովարտակաց Մահմուտայ՝ երկու աղգք բաժանորդ էք Այրին և հիւսիսային դրան։ Հայք, զբաժանորդ բառն իմանամք 'ի բաժանորդ տեղիս ընդ Յունաց կատարել զօրէնս մեր պատարագօք, կանթեղօք և այլ եկեղեցական սպասուք, որպէս եւ գրեալ է։ 'ի կատարել զօրէնս չլինել արդեալ միմեանց, դուք այժմ հակառակ հրամանի արգելուք կատարել զօրէնս մեր, և այսպիսի բանիւք համարձակութիւն տալ երեւիք Յունաց, որոյ վասն եւս գրեալ է։ Դատաւորն՝ զիս եւս յանցաւոր դատէք, որպէ՞ս հրամայեցից զոր չէ գրեալ Թագաւորն, պատարագ կանթեղ պատկեր, միթէ քահանայ կեավուրաց իցեմ գիտել զհանգամանս օրինաց ձերոց և հրամայել, զի ոչ ներեն օրէնք մեր գիտել զայն, զոր դուք պատարագն անուանէք, եւ հրաման տալ, այլ որպէս գիտէք զօրէնս ձեր այնպէս արարէք։ Հայք ոչ երբէք կամէին խաղաղիլ, այլ ստիպէին ասել՝ թէ զոր ինչ ունին Յունք զնոյն արասցեն և Հայք։ Եւ նորա վարանեալ 'ի միտս իւր ասէր՝ ոչ է գրեալ Թագաւորին խափանել զօրէնս Յունաց, և հաստատել զՀայոց։ Հայք՝ ոչ այդպէս, այլ Հայք յամենայն պարագայս ըստ Յունաց կատարեսցեն զօրէնս։ Դատաւորն, որպէս կամիք այնպէս արարէք, զմիջամտեմք։ Հայք՝ ոչ այդպէս, այլ պարտ է հրամայել ձեզ բերանով, հրամայեցաք ասէ վասն ուխտին ձերոյ, զի զոր ինչ Յունք և Հայք առնէին յառաջագոյն այնպէս արասցեն։

Հայք՝ ունէաք յառաջագոյն զսովորութիւն պատարագելոյ, բայց այժմ Յունք արգելուն։ զի՞նչ արարից ասէ։ զի Յունք սկզբանէ մինչեւ ցայժմ ունին զամենայն ինչ, այլ

վասն Հայոց միայն ուխտ գրեն։ Հայք՝ եթէ այդպէս իցէ ո՞ւր դիցուք զհրաման Արքային, թէ ժամանակ առ ժամանակ 'ի պատահիլ խռովութեանց հակառակ իմաստիւք հրաման տուեալ են, այլ վարեսցին ըստ հրովարտակացն զոր 'ի սոյն նուազի ետու երկուց ազգաց։ զի եթէ մի են հրովարտակք երկոցունց, աւելորդ են այդպիսի բանք, և ոչ դատանեն տեղի 'ի լսելիս մեր։ զի զոր ինչ կատարեն Յունք ըստ օրինաց իւրեանց, զնոյն և Հայք կատարեսցեն։ Զանձրացուցիք զմեզ ասէ, զի շնչասպառ պարտասեցաք, այլ բանք ձեր ոչ սպառեցան։ Հեռացան փոքր ինչ Հայք և Յունք, Դատաւորն և Մուվէլլայն սկսան խորհիլ, ապա կոչեալ զՅոյնս խօսեցաւ յունկանէ, և յորդորէր զՀայս հնազանդիլ։ Սակայն Հայք ասային, ոչ ինչ օգտին աղաչանք, զի այս հրաման Արքային է և գործ ազգային, մեք իբրեւ Երեսփոխանք նոցին, զոր ինչ պարտն է զայն խօսիմք, և ոչ երբէք բաժանիմք 'ի բաժանորդ բառէն։ Եթէ կատարէք ըստ հրամանի Արքային՝ բարի՝ եւ եթէ ոչ՝ որպէս գիտէք այնպէս արարէք։ Ապա ասէ ցՆուրի Էֆէնտի, սոքա երկոքեան չունին տալ երբէք հաճութիւն, ելեալ կարգադրեսցուք, եթէ հաճին՝ բարի, իսկ եթէ ոչ՝ ինքեանք գիտասցեն։ Եւ եկեալ առաջի խորանին Հայոց, խօսէր ընդ նոսա բարկութեամբ, և 'ի չտալ նոցա տեղի շողոքորդ բանից նորին, կոչեաց առ ինքն զԳէորգ Պոտուռ, և սկսան կապել ընդ միմեանս վասն բառնալոյ անտի ըզպատկերս Յունաց եւ կախելոյ կանթեղս յԱյրն։ Եւ զնի բանից և վիճմանց՝ իջին ամենեքեան յԱյրն։ յայնժամ ասէ Դատաւորն՝ ահա ետու ձեզ հրաման կախելոյ զտասն կանթեղս, զի բաժանորդ էք ընդ Յունաց, զչորսն 'ի վերայ Ծննդեան տեղւոյն եւ զվեցն յառաստաղէ Այրին 'ի պատշաճաւոր տեղիս, և յաղաղակելն Հայոց թէ անմարթ է մեզ պակաս ինչ ունիլ՝ քան զոր ունին Յունք, Դատաւորն մեղմով աղաչէր զնոսա շատանալ նոքօք, ապա հարեալ բեւեռս կախեցին զչորս կանթեղս 'ի վերայ Ծնընդեան տեղւոյն 'ի վառս մանկացելոյն Յիսուսի և 'ի պատիւ աղղին Հայոց։

Իբրեւ կամեցան կախել զմի կանթեղ 'ի վերայ ասպուճանաց հիւսիսային դրան, ընդդէմ կացեալ Լատինաց ա-

սեն՝ Յոյնք և Լատինք բաժանորդ են դրանս այսմիկ, եթէ Յոյնք թողուն կախել զմի կանթեղ 'ի վերայ աստիճանաց հարաւային դրան, թողումք ապա և մեք. ընդ այս յօժար էին Հայք. այլ Դատաւորն դառնացաւ յոյժ՝ թէ հարաւային դուռն միայն Յունաց սեփհական է, և Հայք չունին անդ իրաւունս. իսկ հիւսիսային Հայոց և Յունաց բաժանորդ դրեալ է։ Զօրացեալ Յունաց 'ի բանից աստի ընդդէմ զինեցան Հայոց, և ոչ թողին մերձենալ 'ի նոյն տեղի, նոյնպէս և Լատինք 'ի միւս կողմն։ Սաստեաց Դատաւորն Լատինաց, թէ 'ի մասինս յայսմիկ չճանաչեմ զձեզ, զի երկոքին ազգք բաժանորդ են Այրին և հիւսիսային դրան, Հայք չունին մասնակցութիւն ինչ հարաւայնոյն։ Եւ սկսան կռուիլ երեք ազգք 'ի մէջ Այրին. Լատինք ասէին՝ մեք և Յոյնք 'ի բազում ժամանակաց հետէ բաժանորդութեամբ եւ հաստատուն պայմանաւ ունիմք զայս տեղի մինչեւ ցայսօր. իսկ Հայք որ բաժանորդ եղեն ընդ Յունաց, պարտ է առնուլ զմի մասն Յունաց և տալ Հայոց. զի երկոքեան մի օրինակ լիցին բաժանորդ, և Լատինք միայնակ երկոցունց. յուսալով թէ Հայք տիրեն միոյ բաժնին Յունաց, և ինքեանց ինչս ինչ ոչ հասանէ, բայց վրիպեալ 'ի յուսոյ անտի թշնամացան ընդ Հայս, որ յառաջագոյն իբր բարեկամ էին։ Վերստին զայրացեալ Դատաւորին 'ի վերայ Լատինաց, հրաման ետ Հայոց ըստ պատշաճի յարմարիլ և կախել զկանթեղսն, և ինքն եկ 'ի վեր. եկին և Հայք զկնի նորա աղաղակաւ, դուք հրամայէք ասեն կախել զկանթեղս, Լատինք և Յոյնք ընդդէմ կացեալ արգելուն. մնացեալ եմք տարակուսեալ թէ՝ օրպիսի դատաստան լցէ այս, զպատկերս եւ զկանթեղս Յունաց ոչ տայք բառնալ 'ի հիւսիսային կողմանէ եկեղեցւոյն, զի եթէ Յոյնք կամին բաժանորդ լինել մասին այնորիկ, Հայք եւս կամին իրաւամբ բաժանորդ լինել բոլոր եկեղեցւոյն. մեք հաճեցաք տասն կանթեղաց Այրին, զմեզ լուեցուցիք բաժանորդ էք ասելով՝ զայն եւս չթողուն այժմ, զի ոչ միայն պատկերս, կանթեղս և վարագոյրս ունիմք կախել անդ, այլև դնել 'ի խորանն զսպաս պատարագի, և մի աշտանակ 'ի յատակն՝ որպէս Լատինք և Յոյնք եդեալ են։

Կոչեաց Դատաւորն զՅոյնս եւ ասէ ցնոսա քաղցրութեամբ՝ 'ի սէր Աստուծոյ բարձէք զպատկերս և զկանթեղս ձեր որ 'ի կողմն Հայոց, եւ նոքա բարձին զնոսա որոմութեամբ, և Հայք եդին 'ի տեղիս նոցա սկսեալ 'ի դրանէ եկեղեցւոյն մինչեւ 'ի դուռն Այրին, և յերկոսին սեղանսն, և կախեցին զկանթեղս՝ ըստ թուոյն՝ զորս բարձին Յոյնք. իբրեւ իջին յԱյրն կախել զկանթեղսն 'ի մէջ կանթեղաց երկուց ազգաց 'ի մի շար յարեւելից յարեւմուտս. չգտին անդ բեւեռ, եւ զնորն հարկանելոյ արգելին Լատինք, և յորոնելն գտին յաջմէ եւ յահեկէ շար կանթեղացն, բայց Լատինք դարձեալ արգելին 'ի հարաւային կողմանէ, զի առաջի Մարոյ տեղւոյն էր, եւ զկնի բազմադիմի բանից կախեցին զվեց կանթեղսն, եդին եւ աշտանակ մի 'ի կարգս աշտանակաց Լատինաց և Յունաց, և 2 պատկերս յաջմէ և յահեկէ խորանին, այլ 'ի բարձրացուցանել Յունաց զձայնս իւրեանց, Դատաւորն արգել զՀայս, զի խնդրէին կախել նաեւ զվարագոյրս, ապա կախեցին զմի կանթեղ ըստ Յունաց առաջի դրան Այրին, խնդրեցին և բաժանորդ լինիլ վարագուրին որ 'ի վերայ դրան, այլ Դատաւորն արգելու Յետ այնորիկ եկեալ կացին առաջի պաշտօնէից լուութեամբ. Դատաւորն ասէ՝ գնացէք կենցաղավարեցէք իբրեւ եղբայր եւ օրհնեցէք զԱրքայ։ Օրհնեցին Հայք զԱրքայն, զորդիս նորին, և զաշխատաւորս, ապա ասէ՝ գնացէք ընդէ՞ր կայք. Հայք ասեն՝ ո՞ւր երթիցուք՝ Թագաւորն բաժանորդութեամբ ետ մեզ զԱյրն, և դուք թերի թողիք ամենայն իրօք, բայց յուսամք չնորհիւ Արքայի և ձեր կատարեսցին, այլ ո՞րպէս պարտ է առնել զգործ պատարագին. յերից մասանց եկեղեցւոյն մի մասն տուաւ ձեզ 'ի սեփհականութիւն գիտութեամբ այլազգեաց և վկայութեամբ երկուց ազգաց, խորանօք, պատկերօք և ամենայն սպասուք, և այսուհետեւ չունի ոք լինիլ միջամուխ յայն տեղի, յամենայն ժամ կատարեցէք զաղօթս և զպատարագս ձեր. Հայք խնդրէին հրամայել զպատարագն Այրին եւ յայտնապէս պատուիրել Յունաց զի մի լինիցին խոչ։

Դատաւորն ասէ՝ այս երիցս եղեւ զի կրկնէք, Այրն բաժանորդ է 'ի մէջ երկոցունցդ ըստ օրինաց ձերոց ծիսից մի լինիք արգելք միմեանց. Յոյնք ասասցեն բերանովք

իւրեանց թէ՝ ոչ արգելումք զՀայս յորժամ պատարագեն յԱյրին, որպէս մեք։ Դատաւորն, ոչ գիտեմ, և ոչ իմանամ զպատարագն, եւ որպէս առնեն Յոյնք զայն եւս ոչ գիտեմ եւ ձեզ եւս ոչ կարեմ հրամայել, զի ընդդէմ է օրինաց իմոց։ Հայք առաւել բարձրացուցին զձայնս · որովհետեւ չգիտել ձեւանաս զայն և ընդդէմ օրինաց քոց քարոզես, զոնէ հրամայեցէք թէ զոր ինչ առնեն Յոյնք յԱյրին, զնոյն և Հայք արասցեն։ Վարանեալ տատանէր 'ի միտս իւր Դատաւորն, թիւրել հերքել թերի թողուլ զգործն չէր կարելի՝ յիշէր զնախորդն իւր · անմարթ էր փոքու իւիք հաւանեցուցանել զՀայս և չկամէր վշտացուցանել զՅոյնս, օրն տարաժամեալ այլազգիք կամէին մեկնիլ, Հայք զպատասխան խնդրէին։ Ապա յետ խորհելոյ Դատաւորին ընդ Նուրի Էֆէնտեայ, թողին զխնդիր պատարագին լուծանել յերուսաղէմ, զի երկնչէին Նուրի և ամենեքեան · մի գուցէ գիւղական ֆէլլահք դրդմամբ Յունաց յարուսցեն աղմուկ մեծ մինչեւ լինիլ մարդասպանութիւն, զորոյ զկարծիս առեալ էին յառաջագոյն, որոյ վասն ցայն վայր չխօսէր ինչ Նուրի, և ոչ առ Դատաւորն առնել այսպէս կամ այնպէս։ Աղաչեցին Հայք զՆուրի յայտնի խօսիլ զբանն զոր խօսեցաւ յուենկանէ՝ զի լուիցեն ամենեքեան։ Յայնժամ ասէ լու 'ի լու բազմութեան, ահաւասիկ տեսիք ամենեքեան թէ Հայք առին զմին 'ի բանալեաց, և զմի մասն եկեղեցւոյն սեփհական ինքեանց ըստ հրամանի Արքային և ըստ բանի վկայից, անարգել կատարել զպաշտամունս իւրեանց եւ Այրն բաժանորդ 'ի մէջ երկոցունց, այլ այժմ դնամք յերուսաղէմ, խորհիլ անդ 'ի վերայ խնդրոյ Պատարագին ըստ օրինաց Շէրիի, որպէս գրեալ է 'ի հրովարտակին, և զոյն եւս կարդաւորեսցուք, լուիցեն ամենեքեան։ Ի սոյն միջոցի ոմանք 'ի Հայոց բերին զմի պատկեր եւ զմի լապտեր կախել 'ի վերայ փայտեայ դրան ըստ Յունաց · յաղաղակէն նոցա, յանդիմանեաց Դատաւորն և արգել զՀայս, և ապա մեկնեալ անտի գընացին յերուսաղէմ։ Հայք մնեալ յեկեղեցին · լուցին զկանթեղս և պաշտեցին զկանգնատեան աղօթս, եւ 'ի գիշերին կատարեցին զժամերգութիւն և պատարագ՝ փառաւորելով զտուիչն պարգեւաց։ Կային 'ի զննին ֆէլլահ ժողովուրդք

գիւղին, Յոյնք, Լատինք ընդ որս և Հայք · եւ մեկնեալ անտի եկին յերուսաղէմ, և պատմեցին զամենայն զոր ասարարին և զոր ինչ պարգեւեաց Տէր ազգին Հայոց, որք են, հիւսիսային մասն եկեղեցւոյն, բանալի դրան ընկերովի ընդ Յոյնս · 10 կանթեղ, 2 պատկեր, 1 աշտանակ յԱյրին, և աւել ածել անդ · 1 կանթեղ և 1 պատկեր 'ի վերայ հիւսիսային դրան Այրին · բացայայտ ծանուցումն բաժանորդութեան Այրին · խստաւ բարձումն կուսղին 'ի փայտեայ դրանէ (1813 · 'ի 13 Նոյեմբերի)։

ԳԼՈՒԽ ԼԵ·

Բաժանումն եկեղեցւոյն Ս· Աստուածածնի։ Կարգադրութիւն զարդուց և պատարագի և աւել ածութեան և այլ ամենայն իրաց հաւասար Յունաց։ Բանք կարգադրութեան Պատարագին · Այրին և այլ սպասուց։ Խռովութիւն 'ի մէջ միաբանաց և ուխտաւորաց։ Պատասխանի թղթոյն Պօղոսի։

Զկնի անցանելոյ աւուրց ինչ՝ չոքան Դատաւորք եւ բազմութիւն այլազգեաց 'ի ձորն Դեթսէմանի, ուր է եկեղեցին և գերեզմանն Ս · Աստուածածնի · դնացին և գլխաւորք Հայոց եւ Յունաց։ Բազմեցան յեկեղեցւոջ անդ կատարել եւ զգործ բաժանորդութեան նորին, Դատաւորն եւ դրել զսեփհականութիւնս Հայոց և Յունաց, եւ տեսին զի ամենայն ինչ յատկացեալ էր Յունաց, և սակաւ ինչ Հայոց · ապա եւ Դատաւորն ինքնին շրջիլ տեսանել զտեղիսն, և ապա ըստ պատշաճի տնօրինել · եմուտ նախ 'ի սենեակն Յունաց 'ի կողմն Հիւսիսոյ · 'ի վերայ աստիճանաց, և յատկացոյց զայն միայն Յունաց, եւ ապա 'ի սենեակն Հարաւային Յարեւմուտս 'ի ներքոյ աստիճանաց, որ ընկերովի էր Հայոց և Յունաց, և յատկացոյց զայն միայն Հայոց, հրամայեաց բառնալ անտի ըստ կարասիս Յունաց։ Գնացին 'ի դուռն Գերեզմանին, յայտարարին Հայք զառաջին սովորութիւնս և զիրաւունս իւրեանց զոր ունէին։ Սակայն Դատաւորն ասէ եւս կամեցաւ վարիլ նենգութեամբ եւ վնասել զՀայս, որպէս արար 'ի

Բեթղեհէմ. երբեմն յորդորէր շատանալ փոքու իւիք, և երբեմն սպառնայր առաջի եդեալ զապագայն՝ թէ խանդարեմ զամենայն գործս ձեր, յորդոր լինէր նաև Ցունաց, ունիլ Հայոց իրաւունս, և զինքն ցուցանէր իբրեւ պաշտպան նոցին և աշխատաւոր, սակաւուք գոհ առնել զՀայս՝ և պահել զյարգ մեծութեան Ցունաց, և այլ այսպիսի բանք սնոտիք։ Նուրի Էֆէնտի կոչեաց զնա առ իւր 'ի ձեռն Ջուխատարի և բարկութեամբ ասէ ցնա, եթէ ժողովեալ զԲրիստոնեայս առանձին կամիս հոգալ զգործն, չէ պարտ մնալ մեզ աստ. միթէ գրեա՞լ իցէ Տէրութիւնն ժողովել զերկուս ազգս և աղաչանօք գործ վճարել, արժա՞ն իցէ Դատաւորի երթալ յոտս Բրիստոնէից և աղաչել, միթէ քե՞զ միայն յանձն եղեւ այս գործ, ո՞չ ապաքէն Բաղաքապետն և բոլոր այլազգիք աստ են, և ունին իրաւունս վերահաս լինել բովանդակ գործոյն, այլովքն հանդերձ։ Ջանամ ասէ տալ եղբայացութիւն ինչ գործոյն առանց խռովութեան, և ապա յանդիման կացուցանել քեզ զբովանդակութիւն նորին։ Նուրի՝ զի՞նչ արդեօք իցէ ջանք քո և բովանդակութիւն գործոյն, հրամանաւ Ցունաց տալ սակաւ ինչ Հայոց և հակառակիլ հրամանի Արքային, կարծեմ թէ մոռացեալ իցէ քո զդատապարտութիւն Մուսաննրճի Դատաւորին, և լռեաց։

Ապա դարձուցեալ զրանս իւր առ Բրիստոնեայս ասէ, հրամանաւ բարերար տեառն իմոյ Արքայի երկու ազգքդ բաժանորդ էք 'ի տեղւոջ յայսմիկ ամենայն պարագայիւք. երթայք խորհեցարուք առանձին, եւ ապա եկեալ պատմեցէք մեզ. 'ի բաց հանէք 'ի մտաց ձերոց զայն ամենայն զոր եդեալ էք, զի ըստ հրովարտակին պարտ է կատարիլ ամենայն իրաց. Ցոյնք տակաւին կացեալ նկատէին յերեսս Դատաւորին, և նա ակնարկէր կատարել զհրամանն, այլ նոքա յամառեալ ասէին, երթալ խորհիլ ընդ ծերունիս վանաց, որոց ետ պատասխանի Նուրի, գլխաւորք ազգին ձերոյ ետուն հաւանութիւն 'ի դատին Կոստանդինուպօլսոյ լինիլ այսպէս, և դուք իբրեւ անձինք երեւելիք եկեալ էք աստ 'ի կողմանէ Վանաց, ուրեմն վախճան տուք բանից ձերոց, դարձեալ նշան ետ Դատաւորն, և գնացին գլխաւորք երկուց ազգաց յետ կոյս գերեզմանին։ Զկնի բազում

բանից և վիճմանց, տեսեալ Ցունաց թէ անհնարին է շատանալ Հայոց փոքու իւիք, այլ յեցեալ կան 'ի բանս հրովարտակին և 'ի բառն բաժանորդ, յանձն առին լինել հաւասար ընկեր ընդ Հայոց ամենայն իրօք 'ի նոյն տեղի որպէս հրամայեալ էր Արքայի։ Յետ այնորիկ սկիզբն արարին յերկաթի արտաքին դրանէ մինչ 'ի գերեզմանն և 'ի շրջապատս նորին եւ յայլ տեղիս, բաժանեցին զամենայն ինչ հաւասարութեամբ, և եկեալ պատմեցին Դատաւորաց թէ կատարեցաւ ամենայն ինչ բաց 'ի պատարագէն, եւ թողին զայն խօսիլ 'ի վերայ այնր յայլումս պահու, և մեկնեալ անտի գնաց իւրաքանչիւր ոք 'ի տեղի իւր։ Եւ յաւուրն չորեքշաբաթու ըստ առաջին սովորութեան պատարագեցին Հայք 'ի վերայ Գերեզմանին Ս. Աստուածածնի ('ի 19 Նոյեմբերի) եւ զկնի Պատարագին կախեցին կանթեղս, ջահս, պատկերս, վարագոյրս և զայլ ամենայն սպասս եկեղեցւոյ հաւասար Ցունաց թէ յեկեղեցին և թէ 'ի Գերեզմանն, զթիւս և զորքանութիւնս նոցին, տես 'ի պատմութիւնս Դիոնէսիոս վարդապետի ձեռագիր, երես 191։ Իսկ Գերեզմանքն Ցովակիմայ և Աննայի ծնողացն Ս. Աստուածածնի, որ էր 'ի միջնատեղի աստիճանաց յարեւելս. անկաւ 'ի բաժնին Ցունաց, յոր յաւուր տօնի սրբոցն Հայք առնէին նախատօնակ եւ պատարագ հրամանաւ Ցունաց, այժմ բարձաւ այս սովորութիւն 'ի տհաճութենէ Ցունաց։ Եղին պայման աւելածութեան, մի շաբաթ Ցոյնք եւ մի Հայք. գնացին դարձեալ Հայք և Ցոյնք յատեան Դատաւորին, ուր էին Նուրի Էֆէնտի, Բաղաքապետն եւ այլք, և 'ի լինել բանից վասն պատարագին Հայոց, ասացին Դատաւորք երթալ երկուց ազգաց 'ի միասին խորհիլ և տնօրինել։

Ցառանձնանալ գլխաւորաց երկուց կողմանց, Ցոյնք ասէին բառնալ և կամ բաժանորդ առնել զուղղաձիգ շրջթայն 'ի հարաւոյ 'ի հիւսիս առաջի դրան գերեզմանի Ս. Աստուածածնի, յորոյ վերայ էին 3 կանթեղք Հայոց, և կամ կախել փոքր շարան տախտակի առաջի խորանին Հայոց. և բառնալ զկամարաձեւ շարանն որ առաջի խորանին, եւ կախել 'ի կարգի չորից շարանաց հաւասար Ցունաց, ընդ այս հաճեցան Հայք։ Եւ ապա բան արկեալ խօսեցան

վասն պատարագի · Յոյնք առաջադրէին կատարել զայն ըստ առաջնոյն երկիցս 'ի շարաթու · Հայք ոչ առին յանձն, երկնչիմք ասեն 'ի հրամանէ Թագաւորին, զի ըստ գրոյն բաժանորդ լինելով մեր, մի օր Հայք եւ մի օր Յոյնք · Նոքա ոչ հաւանեալ ընդ այս ասեն, մեք հանապազօր գԸնամք եւ պատարագեմք պայմանաւ առաջնութեան ըստ հրովարտակին, և ապա դուք զկնի մեր, չիչխելով երբէք իրերաց · Չկարացեալ Հայոց հակառակիլ՝ հաւանեցան։ Եւ ապա առաջի եդին զբան պատարագելոյ յԱյրին Ծնընդեան։ Յոյնք ասեն՝ ամենայն ինչ կատարեալ է վասն Բեթղեհէմի · զի կալայք զհիւսիսակողմն եկեղեցւոյն ամենայն պարագայիւք սեփհական ձեզ, ուր կատարէք հանապազօր զպաշտօն և զպատարագն ձեր, այլ վասն պատարագելոյ յԱյրին չհամիմք եւ չթողուցուք երբէք · զի ոչ ոք լուաւ և ետես մինչեւ ցայժմ թէ Հայք պատարագէին անդ։ Հայք ասեն՝ զի ոչ եթէ հրամանաւ ձերով, այլ Արքային՝ իրրեւ բաժանորդ անարգել ունիմք կատարել զամենայն ինչ ընդ ձեզ · միայն խորհրդակցութեամբ հարկ է սահմանել զժամանակն, զի անհնարին է առանց պատարագի մնալ անդ Հայոց · զի հինն էանց եւ գրեանքն ուռնայնացան · ձեր եւ մեր նոր հրովարտակքն 'ի մի և նոյն միտս գրեալ են, և մինչ վիճէին 'ի վերայ այսր խնդրոյ, Յոյնք զայլ ինն բան առաջի եդին, կատարել Հայոց յեկեղեցի իւրեանց զժամերգութիւն, և 'ի ժամ պատարագին Ցունաց յԱյրին՝ դալ պատարագել 'ի վերայ խորանաց · զի գիշերային եւ երեկոյեան ժամերգութիւնն գոլով 'ի միասին, ճայնք երգեցողաց խափանէին զպաշտօնն · ընդ որ դժկամակեալ Հայոց ասեն՝ ուրեմն և ձեզ պարտ է կատարել զժամերգութիւնն յեկեղեցիս ձեր · և յերկարիլ բանից 'ի վերայ այսր, վերջապէս Յոյնք ոչ ետուն հաւանութիւն պատարագելոյ Հայոց յԱյրին · եւ ելեալ գնացին յատեան Դատաւորաց և զնոյն խնդիր երկրորդեցին անդ, և նոքա ասեն, անմարիմ է Հայոց մնալ առանց պատարագի, խօսեցարուք ընդ միմեանս և անօրինեցէք։ Այլ նոքա պնդէին չտալ հաւանութիւն, և ելին արտաքս · եւ միաբանք Հայոց եկեալ պատմեցին զամենայն անցս Պատրիարքին և խորհրդականաց։

Ոմանք 'ի միաբանաց անտեղեակ մնաց հրովարտակաց, դատաստանական գործոց, եւ այլ ամենայն անցից որք անցին 'ի Կոստանդինուպոլիս և Յերուսաղէմ, որք և անկարող արտասանել բառ ինչ յատեանս Դատաւորաց՝ ոկսան որանջել և քրտնջել, որպէս սովորութիւն է այս տգիտաց եւ յաշաղկոտաց՝ ունայնացուցանել զարդիւնս ջանից եւ վաստակոց աշխատաւորաց, թէ ընդէ՞ր ետուն հաճութիւն և կամ սահմանեցին յամենայն օր պատարագել 'ի Ս. Աստուածածին և 'ի Բեթղեհէմ՝ մնալով զկնի Յունաց եւ բառնալ զշարանն կանթեղաց · և թէ ո՞ր գրեալ իցէ 'ի վերայ մոյ խորանի երկիցս պատարագել յաւուրն, և այլ այսպիսի բանք անոտիք · զի յառաջագոյն ոմանք 'ի Խորհրդականաց ատելութեամբ գրեալ էին զԴիոնէսիոս վարդապետէ առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպոլիս · որպէս թէ ասացեալ իցէ նա չլինիլ ուժիք ձեռնամուխ յայս գործ, և Պօղոս վարդապետ գրեալ բանս մեղադրանաց, յորմէ զօրացեալ Խորհրդականաց ոմանց տարածեցին ըզպատուհասն 'ի մէջ միաբանաց, և նոքա ուխտաւորաց, և 'ի վաղիւ անդր որ էր տօն Ընծայման Կուսին, և այլազգեաց Պարսք, նմին իրի անագան ուրեմն բացան դրուանք քաղաքին՝ և յետս մնաց պատարագն Հայոց, յորմէ առիթ առեալ առաւել զայրացան ժողովուրդք և յորդորէին զմիմեանս յուզել խռովութիւն · գնացին Փոխանորդն և Դիոնէսիոս 'ի Ս. Աստուածածին ըստ ազգ արարելոյ Յունաց կարգաւորել զթերի մնացեալ գործս, և 'ի լինել բանից շարանին Հայոց՝ Տեսուչ տեղւոյն Մահալիճցի Խաչատուր վարդապետ յանդիմանէ զՅոյնս · ո՞րպէս հրամայէք բառնալ 'ի տեղւոջէ իւրմէ զվաղեմի շարանն, առանց խախտելոյ զկրս ինչ 'ի սպասուց ձերոց · առ այս լսէ պատասխանի · եթէ հաճեալ էիք յառաջին սովորութիւն ձեր, ընդէ՞ր յաւելիք այժմ զայս քան զարդս, յայտ է թէ ամենայն ինչ նոր 'ի նորոյ պարտ է կարգաւորել, որպէս ետուն հաւանութիւն գլխաւորք ձեր և մեր։ Տեսեալ Փոխանորդին Հայոց թէ երկարին բանք նոցա՝ հրամայէ գործաւորաց սկիզբն առնել գործոյն, և նոցա գոլով խորհրդակից խռովչաց, պատճառելով զգործս իւրեանց՝ ելեալ գնացին, յետ սպասելոյ վարդապետաց՝ ընդունայն

դարձան յետս, և զկնի նոցա եկեալ միաբանաց պատմեցին
'ի Պատրիարքարանն զբանակուին իւրեանց ընդ Յոյնս,
և Թէոդորոս Պատրիարք ժողովեաց զգլխաւոր միաբանս
և զամենս յուխտաւորաց, և Դիոնէսիոս ծանոյց նոցա ըզ-
հանդամանս գործոյն, եւ յորդորեաց ուղղել զվիտս հա-
սարակաց. նոյնպէս և 'ի վաղիւն յառաջի եկեղեցւոյ, թէ
պարտ է օրհնել զԱրքայ և զբարերարս ազգին, չտալ տեղի
խռովութեան, և սիրով վարիլ ընդ Յոյնս՝ այլովքն հանդերձ։
Լուեալ Յունաց զայսպիսի տարադէպ գործս Հայոց, 'ի
նմին աւուր մնացին ոմանք յուխտաւորաց նոցին յԱստուա-
ծածին զկնի պատարագին. զի եթէ Հայք ձեռնարկեսցեն
լուցանել զչարանն զայն՝ խորտակեսցեն և յարուսցեն խը-
ռովութիւն։ Իսկ ոմանք յուխտաւորաց Հայոց դարանեալ
'ի ճանապարհի՝ սպասէին Դիոնէսիոսի վտանգել զնա, եւ
կամ վնասել յեկեղեցւոջ անդ. իբրեւ ոչ հասին խորհրդոց
իւրեանց՝ ժողովեցան 'ի գաւիթ եկեղեցւոյն Ս. Յակոբայ
'ի սադրելոյ անզգաստից ոմանց, և յարուցին աղմուկ մեծ,
և աղաղակէին խառնաձայն՝ Դիոնէսիոս կործանեաց զազգն,
ըստ հաճոյից իւրոց բառնալ կամի զչարանն, գերի արար
զմեզ Յունաց, և այսպէս անլսելի հայհոյութեամբ դիմել
կամէին 'ի Պատրիարքարան. հասեալ Փոխանորդին եւ
Թարգմանին հալիւ կարացին ցրուել զխուժանն։ Եւ զկնի
անցանելոյ սուղ ինչ միջոցի՝ յանկարծ վերստին կուտեցան
անդ բազմութեամբ, և սկսան նախատական բանիւք աղա-
ղակել և խնդրել տալ զԴիոնէսիոս 'ի ձեռս նոցա. զի իբրև
անհաւատարիմ ազգին յօշել զնա անդամ անդամ, զի ա-
ռեալ զկաշառս 'ի Յունաց կորոյս զերաւունս ազգին ա-
սէին, և այսպէս այր զարամբ ելանելով խուժէին և գո-
չէին, որոց պարագլուխ էր Իւսկիւտարցի Պշրեռդ կոչե-
ցեալ քահանայի սարկաւագ որդին, և միաբանք երկըն-
չէին գուցէ լուեալ այլազգեաց, բացցեն դուռն մեծի
տուդանաց. վասն որոյ աղաչանօք լուեցուցեալ ցրուեցին
զնոսա 'ի տեղիս իւրեանց։ Եւ վաղ քաջ ընդ առաւօտն
ժողովեալ նոցա 'ի մի վայր՝ խորհեցան չթողուլ զգործն.
ոմանք գնացին յԱստուածածին յուզել խռովութիւն անդ,
եւ իբրեւ ոչ կարացին, դիմեցին 'ի վանքն, եւ կամէին
խուժել 'ի Պատրիարքարանն, և չհանդուրժեալ Թէոդորոսի

սաստեաց նոցա 'ի պատուհանէ անտի, և հրամայեաց գրել
զանուանս ստահակաց և ցուցանել Կառավարութեան, եւ
հասեալ Թարգմանն վերստին ցրուեաց զնոսա, եւ զորդի
քահանային աքսորեաց Եէնիշէրի Աղասին, եւ Թէոդորոս
Պատրիարք կազմեաց ժողով մեծ 'ի միաբանաց և յուխ-
տաւորաց՝ հարցանել ցխուժանն՝ թէ զի՞նչ կամիցին, եւ
նոքա այլ և այլ բանիւք զմիմեանս մեղադրէին, եւ հան-
դարտեալ ցրուեցան։ Իսկ Դիոնէսիոս վարդապետ որ 'ի
Գրի հարեալ է զայսոսիկ՝ զանուանս գլխաւոր խռովչաց
չէ կամեցեալ յայտնել, այլ թողեալ է յայտնիլ 'ի Տիեզե-
րական ատենին եւ ինքն կամէր հրաժարիլ 'ի գործոյն,
այլ 'ի յորդորանաց ոմանց՝ վերստին յանձն առ վաստակիլ
'ի փառս Աստուծոյ և 'ի պատիւ ազգին Հայոց։ Թէոդորոս
Պատրիարք գրեաց պատասխանի թղթոյն Պոլսոյ վարդա-
պետի, յորում ասէ՝ Թարգման Աւետիսն վաստակի 'ի ժո-
ղովս Դատարանի, 'ի Ս. Յարութիւն ընդ Փոխանորդին
և ընդ Դիոնէսիոս վարդապետին, այլ վասն դատաստա-
նական գործոց՝ մեկնութեան և բացատրութեան բառից
և խմաստից հրովարտակաց, և առանձին երթեւեկութիւն
առ Դատաւորս Դիոնէսիոս վարդապետն կատարէ հաճու-
թեամբ Խորհրդականաց, գոլով տեղեակ ամենայն եղե-
լութեան. եւ Գէորգ Պոտուս առաւել քան զմեզ վաս-
տակէր 'ի պատշաճաւոր գործս։

Ո՛վ արդեօք առ նախանձու զայլ և այլս ցուցեալ է սի-
րոյդ՝ միթէ Դիոնէսիոս զփառս անձին իւրոյ խնդրելով,
այլոց չմիջամտել ասացեալ է. զի նա զնիհարութիւն եւ
զտկարութիւն անձին իւրոյ 'ի բաց եդեալ, անդադար
գնայր 'ի հարկաւորեալ տեղիս և վաստակէր, թէպէտ ցաւ
եղեւ նմա, այլ չհանեալ 'ի վեր. վաստակեցաւ եւ վաս-
տակի, մինչեւ գործն 'ի գլուխ ելցէ։ Ոմանք յաչաղկոտք
'ի խորհրդակցաց մերոց 'ի գրոյդ նիւթ եւ զօրութիւն
առեալ, յարուցին աղմուկս և չխոթ 'ի վերոյ նորա, մին-
չեւ յայտնի աղաղակել թէ կաշառեալ 'ի Յունաց արար
նենգութիւն ազգին և հայրենի ժառանգութեան, տուք
'ի ձեռս յօշել զնա. Թարգմանն միայն ձեռնամուխ լիցի
գործոյն. զայս ասէին, որք զԴիոնէսիոս ոչ ճանաչէին,
որպէս յետոյ խոստովան եղեն. առաջնորդ ամբոխին աք-

սորեցաւ, թէեւ կոյին երկուք ոմանք ընդ նմա, իսկ 'ի միաբանացն դրդռիչք նոցին Լուսարարեան Սարգիսն եւ Կարապետն ձեր էին։ Սարգիսն գտեալ զհամարձակութիւն զկարապետն յանկոյց յինքն։ զի եթէ 'ի գիշերին յայնմիկ ելեալ էր արտաքս ձայնն, մինէր վտանգ և տուգանք։ Թէպէտ հանդարտեցաւ խռովութիւնն, բայց են ոմանք որք չիսթեն զպարզամիտս, իրրու թէ յամենայն օր յԱստուածածին և 'ի Ս. Ծնունդ պատարագելն է անտանելի, մաքառելով ընդդէմ հրովարտակին և բանից Դատաւորաց։ Եւ գլխաւոր նիւթ խռովութեան էր կարգադրութիւն շարանի, որպէս եղեւ յարմարութեամբ։ Այսպէս օրէնսդիրք բաղումք եղեն յազգի եւ 'ի միաբանութեան մերում, զծէսս Երուսաղէմի փոխել ջանան։ Տես սիրելի, եթէ հնարն գտանիցի աշխատեցէք մի օր մեզ և մի օր Ցունաց պատարագել յԱստուածածին և 'ի Ս. Ծնունդ, թէպէտ անհնարին ասացին մեզ Գործակալքն։

Ժողովեցան դարձեալ 'ի դատարան գլխաւորք Հայոց և Ցունաց, ուր էին Նուրի Էֆէնտի, Քաղաքապետն եւ մեծամեծք քաղաքին 'ի լուծանել զխնդիրն պատարագելոյ Հայոց յԱյրին Ծննդեան, և բանս արկեալ Դատաւորին հարցանէր վասն կարգաւորութեան գործոց Ս. Աստուածածնի։ և 'ի մինիլ փոխադարձ բանից 'ի մէջ Հայոց և Ցունաց վասն շարանին, վերջապէս Հայք եառուն հաւանութիւն կախել Ցունաց անդ զմի շարան եւս, թէպէտեւ Լոյս հանող Պետրոս Եպիսկոպոս նոցին քամահրելով զբանս Հայոց յանդգնաբար խօսէր, թէ սոքա հիւր են մեզ, որպէս ասացեալ էին 'ի մեծի դատին։ այլ Դատաւորն կըշտամբեաց զնա մեղմով ինն չխօսիլ զանպատեհս, այլ վարիլ սիրով։ Ցետ այնորիկ Նուրի Էֆէնտի վերստին ընթերցաւ զնոր հրովարտակն Հայոց, բառ առ բառ մեկնելով եւ թարգմանելով զիմաստս նորին, և զդիտաւորութիւն Արքայի։ և յաւարտիլն ասէ՝ լուա՞յք արդեօք, զի երկոքին ազգքդ բաժանորդ էք 'ի Բեթղեհէմ և յԱստուածածին առանց ընդդիմանալոյ միմեանց։ զի զոր ինչ առնէ մին, զնոյն առնել պարտ է և միւսոյն։ երթայք խորհեցարուք և խօսեցարուք 'ի մէջի ձերում զպարտուպատշաճն, եւ ապա ծանուցէք մեզ։ Ցոյնք ոչ կամեցան գնալ, այլ

Պետրոս Եպիսկոպոս նոցին ասաւ զանպատեհս խօսիլ ընդդէմ հրովարտակին Գործակալաց և Հայոց իսկ, զորս Սախարեան իրրեւ անօգուտ ոչ թարգմանեաց, այլ միայն թէ ուխտին անարգել բաժանորդ են, եւ թէ եդին անդ կանթեղս և պատկերս, և առին զմի մասն եկեղեցւոյն երկու խորանօք, ուր կատարեսցեն զօրէնս իւրեանց։ այլ վասն պատարագելոյ յԱյրին չունիմք երբէք հաւանութիւն։ իսկ եթէ դուք հրաման ասէք՝ չկարեմք ասել ինչ։ Որոց եառուն պատասխանի Դատաւորք։ դուք եւս կարէք կատարել զուխտս ձեր։ զի հրովարտակ երկոցունցդ մի են և Տէրութիւնն ոչ է դրեալ մեզ հաճեցուցանել զձեզ եւ ոչ համարձակիմք վերստին դատել զձեզ։ զի 'ի մեծի դատին հաւանութեամբ երկուց կողմանց ամենայն ինչ վճարեալ է, ոչ վճիռ և ոչ հրաման կարեմք տալ։ այլ ջանամք ըստ պատշաճի պաշտօնի մերում գործադրել զհրաման Արքայի, և արդարութեամբ կատարել զամենայն ինչ։ Զի զոր ինչ եդեալ էք 'ի միտս ձեր, թողէք 'ի բաց։ այլ ծանիք զոր այժմ ընթերցաք, իսկ եթէ ունիք զայլ ինչ բանս, ասացէք։ զի Նուրի Էֆէնտի այլ ոչ եւս սպասէ ասա՝ զի ճանձրացեալ է, և Տէրութիւնն սպասէ պատասխանւոյ։ մի այլ եւս յամառիք 'ի բանս ձեր։ զի ըստ իրաւանց բաժանորդութեան չունիք ընդդիմանալ միմեանց, որովհետեւ քրիստոնեայ էք։ դիտեմք ըստ վճռոյ մեծի Դենպետին՝ 'ի բաժանորդ տեղիս զոր ինչ առնէ մին, զնոյն ունի առնել եւ միւսն։ Հայք պնդէին 'ի վաղիւ սկիզբն առնել պատարագելոյ յԱյրին, զի գրով ազդ արասցեն Ցոյնք տեսչին իւրեանց չընդդիմանալ։ Նոքա առանց պատասխանի տալոյ մեկնեցան անսի տրտմութեամբ։ դարձ արարեալ Հայոց պատմեցին զամենայնն Տերունեաց, եւ առաքեցին 'ի Բեթղեհէմ զԿիւմիւշխանեցի Տերունի Ստեփաննոս վարդապետն։ և զկնի գիշերային ժամերգութեան և պատարագին Ցունաց՝ զարդարեցին զխորանն որ 'ի վերայ Ծննդեան տեղւոյն Փրկչին մերոյ, եւ մատոյց Ստեփաննոս վարդապետ զառաջին փրկագործ պատարագն վասն փրկութեան հոգւոյ կենդանեաց և ննջեցելոց օրհնեալ ազգիս Հայոց (1813։ 'ի 25 Նոյեմբերի)։

Սակայն Լատինք ոչ կամեցան մնալ զկնի Հայոց, զի

անմիջապէս պատարագէին նոքա զկնի Յունաց, ուստի ոչ կամեցան խախտել զսովորութիւնս իւրեանց, որոյ վասն եղեն ոչ սակաւ բանք և վէճք 'ի մէջ երից ազգաց, և 'ի վերջոյ յանձն առին Հայք մնալ զկնի պատարագին Լատինաց։ Իսկ վասն խորանի Ծննդեան տեղւոյն սահմանեցին ընդ Յոյնս այսպէս, Յունաց՝ զկնի պատարագին իւրեանց բառնալ 'ի խորանէ անտի զպատկերս և զաշտանակս և չընթողուլ ինչ անդ, և դնել զնոյնս Հայոց, նոյնպէս և Հայոց՝ զկնի պատարագին բառնալ զամենայնն անտի, և մնալ խորանին զտիւ և զգիշեր առանց պատկերի եւ աշտանակի։ Եւ յետ այնորիկ կարգաւորեցին զթերի մնացեալ զիրս 'ի Ս. Աստուածածնին հաճութեամբ միմեանց և հանդարտեցան։ Յետ կատարելոյ զգործ բաժանորդութեան Բեթղեհէմի եւ Աստուածածնի՝ մնայր մաքրել զկնճիռն Տաճարին Ս. Յարութեան։

Սակայն Դատաւորն դանդաղէր զայլ և այլ պատճառելով, և Մուվէլլայն ասէր մինչև ոչ արձանագրեսցի հրովարտակն 'ի Դատարանի, ոչ մտանեմ ասէր անդ. Զուխատարն և Սուրհանդակն Հայոց փութացին դառնալ 'ի Կոստանդինուպօլիս։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Կարգաւորութիւն սեփհական իրաւանց Հայոց 'ի Ս. Յարութիւն։ Յոտիշտակեալ և պակաս չինեալ տեղիքն։ Ագահութիւն այլազգեաց Երուսաղէմի և Դատաւորին։ Խռովութիւն Յունաց յԱստուածածին։ Բանութիւն Քաղաքապետին։ Խռովութիւն 'ի Բեթղեհէմ։

ՅԵՏ այսր ամենայնի հաղիւ ուրեմն յորդորեցին Հայք զԴատաւորն և զՄուվէլլայն և ժողովեցան 'ի Ս. Յարութիւն (1813. 'ի 1 Դեկտեմբեր). Եկին և դլխաւորք Հայոց և Յունաց։ Եհարց Դատաւորն, զի՞նչ է վէճն ձեր ասա։ Հայք ետուն պատասխանի, ըստ հրովարտակին Սէլիմայ յատկացուցանել մեզ զվերին եւ զստորին կողմն 'ի ներքս մեծի դրան։ Յոյնք ասեն չունիք անդ իրաւունս՝ զի տեղին այն որ դրեալ ասէք՝ եկեղեցին ձեր է, իսկ զոր այժմըդ ցուցանէք, այն եկեղեցի մեր է, եւ անուն եկեղեցւոյն ձերոյ չէ դրեալ, ուրեմն դատարկեցէք զեկեղեցիս ձեր։ Հայք ասեն՝ գործ հրամայելոյ և զեկեղեցի դատարկելոյ՝ է Տէրութեան, և ոչ վայել իսկ է բերանոց ձերոց, զի եկեղեցին այն յատկացեալ է մեզ, եւ ներքին կողմն դրան, որպէս 'ի ժամանակս քննութեան դուք ցուցիք ըստ սեփհական տեղիս մեր, մանաւանդ չիք անուանք 'ի գիրս բազում տեղեաց, որոց տիրեալ էք այժմ։ Եւ Նուրի էֆէնտի հանեալ ընթերցաւ զհրովարտակն դատին, եւ ելեալ դնայցին 'ի դուռն, և հաստատեցաւ վերին և ստորին կողմն 'ի ներքս մեծի դրան լինել Հայոց։ Բայց Դատաւորն առաջադրէր լինել բաժանորդ երից ազգաց, զի որպէս Լատինք և Յոյնք շաբաթաւ աւել ածէին անդ, նոյնպէս մի շաբաթ եւս ածցեն Հայք. Լատինք և Յոյնք ոչ կամէին թողուլ զշաբաթս իւրեանց, մանաւանդ Յոյնք պնդէին թէ մատնաչափ տեղի չտամք ասի Հայոց։ Հայք ասեն՝ զայս տեղի Արքայն Սէլիմ յատկացուցեալ է մեզ, այլք անիրաւութեամբ յափշտակեալ են զայն, և այժմ հաստատեցաւ Կայսերական հրովարտակաւ, բայց ոչ կարեմք տիրել, եւ դուք Դատաւորքդ ոչ առնէք իրաւունս, որոշեցէք ըստ օրինաց Շէրիի և Կայսերական հրովարտակին, յետոյ խօսիմք զպատշաճն ընդ երկոսին ազգդ։ Այլ Յոյնք դժկամակեալ աղաղակէին թէ յիշատակութիւն անգամ չունին Հայք յերուսաղէմ 'ի ժամանակս Օմարայ և Սէլիմայ, այժմ համարձակին զդուռն յափշտակել, ուրեմն այսուհետեւ արդարդ է մեկնիլ ասի։ Դատաւորն պնդէր լինել բաժանորդ, և նոքա բացասէին, ուստի խնդիրն մնաց անորոշ։ Յետ այնորիկ առաջի եդին Հայք զխնդիր ջրհորոյն, որ գրեալ է 'ի հրովարտակին Սէլիմայ, զի Յոյնք տիրապետեալ էին այնմ պարագայիւք, այժմ խնդրէին Հայք դարձուցանել զսոյն յինքեանս, և դնել զջրահան գործին։ Առ այս սրամտեալ Յունաց ասէին, եթէ Հայք տիրեսցեն ջրհորոյն, անհնարին է մեզ այնուհետեւ ըմպել ջուր անտի։ Դատաւորն պնդէր անպատճառ բաժանորդ լինել 'ի մէջ երից ազգաց, թէպէտ Հայք ընդդիմացան, բայց խնդիրն մնաց անկատար։ Դարձեալ խնդրեցին Հայք իրաւամբք

բաժանորդութեան կացուցանել Լուսաբար 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, որպէս Յոյնք, Դատաւորն անկընարին վարկաւ զայն խնդիր, զի Յոյնք վասն այնր ուներին Խ-ՐՐԻ ՇԵՐՏՔ, և չեղեւ։ Առացին Հայք վասն տեղեաց ոմանց, զորս խառնեալ էին Յոյնք 'ի տեղիս իւրեանց, և վասն փայտակերպ վերնատան կանանց եւ սենեկաց, զորս չէին չինեալ, եւ զայլս խափանեալ հաստ որմովք։ Այլ Դատաւորքն ասացին թէ արտաքոյ իշխանութեան մերոյ են այդպիսի խնդիրք, որպէս գրեալ է 'ի հրովարտակին, որ և մնաց անկատար, մինչ չհամարձակիլ Իլամ Եւս տալ։ Սակայն զոր ինչ խօսեցան Յոյնք 'ի ժողովի ասա ընդդէմ Տէրութեան եւ հրովարտակին չհամարձակիմք գրել, զի լուութիւն Դատաւորաց առաւել համարձակութիւն տայր նոցա, 'ի հարցանել վերստին Դատաւորաց՝ թէ այլ եւս զի՞նչ ունիք։ Հայք ասացին, ընդէ՞ր է ձեզ հարցանել եւ մեզ տալ պատասխանի ընդունայն, զի ոչ զեկեղեցական տեղիս և ոչ զբաժանորդս հատատեցիք և եառաք մեզ, և եթէ կամիք ձգել ակնարկութիւն ինչ 'ի վերայ եկեղեցւոյն մերոյ 'ի Վերնատան, հրամայեցէք։ Ելին անդ բազմութեամբ և ուշի ուշով զննեալ զամենայն տեղիս ծանեան զնեան, եւ զարմացեալ ընդ անխիղճ անգթութիւնս Յունաց չարժէին զդլուխս իւրեանց, մանաւանդ Դատաւորն, զի դիտէր զառաջին դիրս տեղւոյն, այլ չէին ձեռնհաս առնել ինչ, այլ միայն հրամանաւ եւ վերակացութեամբ նոցին չինեցին Հայք զխաչկալս երկուց խորանաց, եւ զերկաթի վանդակս դասուց, և զհամառօտ խաչկալս Յովսէփ Արեմթացւոյ և Հանդերձ բաժանման խորանաց, և այլն ամենայն մնաց անկատար, ոչ պահարան և ոչ դարան։

Ահաւասիկ այլայլեալ և յաւիշտակեալ տեղիքն 'ի Յունաց, Մատուռն Ադամայ 'ի ներքոյ Գողգոթայի, ուր էին գերեզմանք Լատին Թագաւորաց, կամարաւ ծածկեալ՝ 2 կանգուն երկարեցին, և զսենեակ տեսչին Յունաց անդ 1 կանգուն 'ի լայն և 2 յերկայն ընդարձակեցին։ Արտաքոյ որին 'ի ներքոյ սեղանատան Հայոց մի սրճարան արարին, եւ զտեղի աղբիւսին 'ի յետուստ մեծի դրան, չինեցին քարեայ աստիճան ելանել 'ի տարածման տեղին։ Նոյնպէս

'ի վերայ գերեզմանի Թագաւորաց, ելանել անտի 'ի Գողգոթայ։ զառաջին աստիճանս խափանեալ, արարին ջրմուղ։ Զգողգոթայն և զՏարածման տեղին երկարեցին 2 կանգուն դէպ 'ի Պատանատեղն, և 'ի մէջ սորա բացին կրկին դրունս։ զսենեակս Գողգոթային խառնեալ ընդ կոչնակատեղւոյն՝ երկար դարսաս արարին, և 'ի մէջ սորա բացին կրկին դրունս։ Ի ներքս զչին սեղանատունն նորոգեցին և զմի սենեակ չինեցին, նոյնպէս և զվերին յարկս սոցին յարդարեցին՝ ընդարձակեցին զՊոխանորդարանն առեալ տեղի 'ի Ղպթոց։ մերձ 'ի խորանն Փուշ պսակի բացին մի դուռն։ Փուշ պսակի, Ղուսկիանոսի և Հանդերձ բաժանման խորանաց վանդակս (տրապիզին) քարեայ արարին, զի յառաջագոյն փայտեայ էր։ զսեղանն Հանդերձ բաժանման այլանդակ չինեցին։ 'ի մէջ Ղուսկիանոսի և Հանդերձ բաժանման խորանաց բացին դուռն, եւ 'ի վիճակէ Ղպթոց գողացեալ տեղի 1 խուց արարին, և զդուռն դանձատան որ էր 'ի կողմն Բանտին, փոխեցին մերձ 'ի Ղուսկիանոսի խորանն։ զմի մասն Բանտին կամարաւ հաղորդեցին մերձ 'ի Ղուսկիանոսն, 2 կանգուն բարձր։ 'ի վերայ սորա 2 մեծ սենեակ։ զկամարն կոչնակատեղւոյն 1 կանգուն երկարեցին 'ի կողմն Փուշ պսակի։ և զտաճարն իւրեանց յերկայնութեան յերկուց կողմանց 4 և 'ի լայնութեան 1 կանգուն ընդարձակեցին, և կողմնակի զերկոսին պարիսպն կրկնակի բարձրացուցին, և զյետինն 1 կանգուն, և 'ի տեղի երկաթի վանդակաց 'ի կողմն Գերեզմանին 'ի քարէ չինեցին բարձր քան զառաջին։ զխաչկալն կրկնապատիկ բարձր, և զայլ տեղիսն տաճարին դեղեցկութեամբ զարդարեցին։ Ի շրջապատս կաթուղիկէին երկաթեայ վանդակս արարին, նոյնպէս 'ի շրջապատս տաճարին իւրեանց կրկնակի։ զՄուրբ Գերեզմանն յերկայն 2, 'ի լայն 1, և 'ի բարձր 2, զվրոքր կաթուղիկէն կրկին բարձր։ զՍ. Գերեզմանն ցած, և 'ի տեղի առաջին պատկերի՝ մարմարիոն երեւոյթ ինչ կանգնեցին, և 'ի խաղնէ անուանեալ տեղին փոքր կաթուղիկէ 12 մարմարիոն սեամբ, և մասն ինչ 'ի կերդրոնի սոր կանգնեալ էր Հրեշտակն, որ այժմ ասի Հրեշտակի վեմ։ զբոլոր կերաեալ հին քարինս Գերեզմանին ներքոյ և արտաքոյ բարձին, և զվեմ զմրեթն քան զառաջինն բարձրացուցին,

զՀրջապատ սիւնս 'ի վերուստ մինչ 'ի վայր հաստարակ քարիւ հաստ չինեցին, զսենեակ Սարկաւագին Հայոց անյայտ արարին. զտեղիս 'ի նոյն շար կրկին և երեքկին ընդարձակեցին. զսենեակ երկրորդ Տեսչի նոցին, որ առ Իւղաբերից սեղանին. 'ի կամարի սենեկացն Հայոց տեղ առեալ՝ 'ի վայր և 'ի վեր պատշգամաք մեծացուցին, և 'ի վիճակէ Ղալթոց առեալ 2 կանգուն լայնեցին զտեղի այլազգի դռնապանաց. զսենեակն Տեսչին Հայոց հաստ որմովք չինեցին իբրեւ այր քարափոր՝ մթին և խոնաւ միով պատուհանաւ, զկրկնայարկ սենեակս Եաղուպ Աղային՝ որ 'ի վերայ նորա՝ մի յարկ արարին մթին, զՊատրիարքարանն և զսենեակս վարդապետաց ոչ չինեցին, զկէս սեղանատան և սրճարանին որմով որոշեալ խանդարեցին, միայն 2 փոքրիկ տեղի թողին 'ի վայր և 'ի վեր առաջի մեծի պատուհանին այլանդակ սանդխաք, և 'ի միջոյ սեղանատան և սրճարանի 1 կանգուն առին 'ի կողմն իւրեանց, խանդարեցին զերիս պատարագամատոյց սեղանս, զառաջին տեղի խորանին երաշխաւոր Ս. Աստուածածնի որմով պատեցին 'ի վերուստ մինչ 'ի վայր՝ թողեալ դուռն գնալ 'ի սեղանատուն, եւ առաջի դրան զտեղի խորանին որոշեցին. և 'ի վերայ աստիճանաց Վերնատան մինչ 'ի սահման ջրմղին՝ կանանց փոքրիկ վերնատուն յօրինեցին, և այլ ամենայնն նեղ և անճուկ, եւ զիւղաբերից սեղանն ոչնչացուցին սեամբ, որոյ տեղն այժմ չերեւի, եւ զորմն մերձ 'ի սենեակ Տեսչին Հայոց՝ յորոյ վերայ է պատկեր Յարութեան՝ կէս կանգուն յառաջ բերին, և զերկոսին սենեակսն որ 'ի վերայ կամարին ոչ չինեցին։ Զտեղիս Լատինաց ըստ առաջնոյն քարամբք չինեցին, և յետուստ կողմանէ Երդեհոնին մինչ 'ի սահմանս Յովսէփ Արեմթացւոյն կրկնայարկ արարին իբր տեղի կանանց, և կանանց հին վերնատանն Հայոց կէս բոլորակ շրջանակաւ, որ հայէր 'ի վերայ Գերեզմանին՝ խանդարեցին խապառ։ Ահա այսպէս իբրու թէ աւարառեցան խնդիրք երից տեղեաց, Ծննդեան, Աստուածածնի, եւ Ս. Յարութեան։

Իսկ այլազգիք երուսաղէմ բռնացեալ 'ի վերայ Հայոց պահանջէին տուրս փոխարէն աշխատութեան իւրեանց, որոց թէպէտ և տուեալ էին 'ի սկզբան գործոյն, սակայն այժմ

դարձեալ պահանջէին, և ազահութիւն Դատաւորին էր անտանելի, որոց չահեալ զմիտս լուցուցին. և թէոդորոս Պատրիարք գանկատանօք գրէ զսոցանէ 'ի նամակի իւրում առ Զլատաւորս աղգին 'ի Կոստանդինուպօլիս։ Բայց Քաղաքապետն յետս դարձոյց զպարգեւս նորին, եդեալ 'ի մտի չարիս հասուցանել Հայոց, որպէս պարծանօք խօսէր 'ի ժողովս 'ի գրգիռ ատելութեան Յունաց։ Իսկ միարանք և ուխտաւորք նոցին, յայտնապէս զինեալ ընդդէմ Հայոց՝ անդադար անարգէին զնոսա անպատշաճ բանիւք, եւ թէ՝ երկամեայ ժամանակս միայն ունիք առնել ըստ կամաց ձերոց։ Եւ յայսպիսի նախատանաց դադարեցան Հայ ժողովուրդք գնալ 'ի Ս. Աստուածածին, թէպէտեւ Հայ կղերք յորդորէին զնոսա, լինիլ զգաստ և մի կալ հակառակ չարին։ Եւ 'ի տօնի անարատ յղութեան Ս. Կուսին երկարեցաւ պատարագն Յունաց՝ մինչեւ ճանճրանալ Հայոց արտաքս, և իբրեւ իջին յեկեղեցին՝ կին ոմն անզգամ ձայն երարձ եւ սկսաւ անպատեհ բանիւք նախատել զազգն, մինչև յե՞րբ ոչ դադարիք ասէ 'ի գալ այսր, զի 'ի մերձ ժամանակիս ունիմք արտաքսել զձեզ ասսի. եւ ժայթքէր անպատկառ զայլ խօսս, եւ յասել ոմանց 'ի նոցանէ թէ պարտ է դանել զՀայս և խայտառակել. Զմիւռնացի ուխտաւորք ծանօթ լեզուի նոցա՝ ասեն, ո՞րպէս կարէք գանել. 'ի գրգռիլ եւ 'ի բազմանալ բանից, պատրաստեցան հարկանել զիրեարս, մի ոմն յուխտաւորացն Հայոց, ասէ՝ 'ի բաց թողէք զկինն, զի խրատեալ է, եւ նոցա առեալ դնացին։ Ի նմին աւուր Քաղաքապետն կոչեալ զթարգմանն Հայոց, տայ պատմել կնոջն զեղեալսն 'ի Ս. Աստուածածին՝ թէ ոմն 'ի վարդապետացն Հայոց եհար զիս բռնցի. եհարց Քաղաքապետն, թէ ճանաչե՞ս զայրն՝ որ եհար ըզքեզ, և նա ասէ՝ երկայնահասակ եւ նորամորուս, և այր կնոջն ընդ նմա վկայէր. ցասուցեալ Քաղաքապետին իբր յանցաւոր գտեալ զՀայս, յանդիմանէ զթարգմանն, իբր անպատեհ կրօնաւորական կարգի առնել զայդպիսի իրս, և ստիպէ 'ի վաղիւ տանել առ նա զվարդապետն զի եթէ ծանեաւ ասէ՝ կինն և հաստատեաց 'ի վերայ նորա, յայնժամ ..... և եթէ ոչ՝ զկինն անզգամ պատժեցից, և երանի թէ մեր վարդապետն լինէր ըստ նշան տալոյ կնոջ.

(Դիոնէսիոս)։ Եւ եկեալ Թարգմանին պատմեաց խորհրդական, և նոքա ծանուցին զիրս Դատաւորին և Նուրի Էֆէնտեայ. և 'ի սիպել Քաղաքապետին, գնացին Հայք բազմութեամբ անձինք իբրեւ 30. և նորա կոչեալ զկինն, ցուցանել ասէ զհարկանողն, և նորա հայեցեալ ասէ, չէ 'ի միջի սոցա, եւ Ցոյնք ջանացին վկայութեամբ հաստատել զբան կնոջ, թէպէտեւ Հայք պատմեցին զարարս լկտի կնոջ. բայց Քաղաքապետն ոչ անսացեալ բանից նոցա ասէ՝ 2 վկայիւք կախի մի ոք, ահա ամբաստանողն և վկայքն, չունիմ պէտս այլոց վկայից, անպատճառ տուք 'ի ձեռս իմ զվարդապետն զայն. չհանդուրժեալ Հայոց, աղաղակ բարձին, լուեալ իսկ է մեր ասեն՝ զդարանն զոր գործեն ոմանք՝ և կինս այս եղեւ գործի չարութեան նոցին, և վասն միոյ անզգամի աղարտեցեր զպատիւ վանաց, առաթուր հարէր զկրօնաւորս, թերեւս այսուհետեւ այլ ինն տարօրինակ ամբաստանութիւն յարուցցեն 'ի վերայ մեր. ուստի չէ արժան մեզ այսուհետեւ մնալ 'ի քաղաքիս յայսմիկ, առեալ գիր 'ի Դատաւորէն փութացուք մեկնիլ ասեն։ Եւ ելեալ անտի գնացին առ Դատաւորն, և նա յղեաց զսպասաւոր իւր և զկինն արամբ, այլ վկայքն փախեան 'ի ճանապարհի. Դատաւորն հարցեալ տեղեկացաւ ամենայն հանգամանաց գործոյն, և ապա խրատեաց զկինն ամօք բանիւք՝ թէ չէ արժան առն քրիստոնէի եւ ուխտաւորի գործել զայդպիսիս՝ եւ դիմել 'ի դրունս, և եթէ պատահեսցի եւս, պարտ է դիմել առ գլխաւորս վանաց, և այլ յորդորական բանիւք հանդարտեալ արձակեաց զնա։ Իսկ Հայք ամբաստան եղեն զանպատշաճ գործոց Քաղաքապետին և խնդրէին գիր մեկնիլ յԵրուսաղէմ. զի զնախատինս զայս 'ի դրդմանէ Ցունաց արար, և թերեւս արասցէ. Դատաւորն բարեյորդոր բանիւք հանդարտեաց զՀայս եւ դարձոյց զնոսա 'ի վանս իւրեանց։ Եւ առաքեաց զմի ոմն յիւրոց ասել ցՔաղաքապետն՝ թէ Պատրիարքունք քրիստոնէից հրովարտակաւ Սրբոյն ունին իշխանութիւն կառավարել զմիաբանս և զուխտաւորս իւրեանց, և որոց չիցեն ձեռնհաս՝ առաքել առ Դատաւորն եւ նորա տնօրինել ըստ օրինաց զգործն։ Կոչեաց նաեւ զՄէհէմմէտ ոմն հաւատարիմ նորին, փախուցեալ յերեսաց Փոխարքային Եգիպտոսի, որ էր այր ժանտագործ և խռովայոյզ, եւ պատուիրեաց նմա ասել ցՔաղաքապետն դադարիլ յայնպիսի գործոց և սիրով հաշտիլ ընդ Հայս. բայց նա ըստ բնարոյս բարուց իւրոց առաւել յուզեաց զխռովութիւնն, և Հայք նկրտէին խսպառ հերքել յինքեանց զբռնութիւն Քաղաքապետին. եւ այսպէս երկար խռովութեամբ և ատելութեամբ հակառակեալ՝ հաշտեցան ապա միջնորդութեամբ Դատաւորին։ Ցետ այնորիկ կոչեաց զՔաղաքապետն և զնուրի Էֆէնտի եւ զգլխաւորս երկուց ազգաց և պատուիրեաց նոցա զսպել զստահական, և զանհնազանդսն մատնել Դատաւորին եւ Քաղաքական իշխանութեան, եւ այլ բանք երկար. թէպէտեւ Քաղաքապետն կսկեմ կորեմ ասէր, այլ Նուրի Էֆէնտի նըրբախօս բանիւք յորդորէր զերկոսին կողմանս հնազանդիլ կամաց Սրբոյն և հրամանաց նորին. եւ ապա ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս։ Իսկ փոխանորդ Ստեփաննոս եպիսկոպոս պատուիրեաց ժողովրդոց յատենի եկեղեցւոյ դադարիլ այնուհետեւ 'ի վիճելոյ եւ 'ի խօսելոյ ընդ Ցոյնս. այլ լռութեամբ զոհանալ զԱստուծոյ եւ օրհնել զԱրքայ, և եթէ պատահեսցի ինչ՝ ազգ առնել Փոխանորդին։ Զնոսն խոստացան և Ցոյնք պատուիրել ուխտաւորաց իւրեանց։

Հայք սակս կախելոյ զպատկերն 'ի խորանն Ծննդեան տեղւոյն, հարին զմի բեւեռ, որպէս արարեալ էին Ցոյնք, այլ նոքա չառեալ յանձն, սկսան խօսիլ բանս զկծանաց, թէ յորմէ՞ առիք հրաման, չունիք իրաւունս առնել զայդպիսի իրս, զի տեղին մերէ, և դուք իրրեւ հիւր կատարեցէք զպաշտօնն ձեր և ելէք արտաքս, իսկ Հայք ասէին թէ տեղն Թագաւորին է և մեք բաժանորդ ընդ ձեզ. եւ 'ի բազմանալ բանից, եհաս խնդիրն առ Դատաւորն, չեւ 'ի բազմանալ բանից, յարեաւ այլ ինն չիոթ անդ՝ զի մի ոմն 'ի միաբանացն Հայոց աւել ածէր առաջի դրան վանաց՝ Ցոյնք 'ի վերայ հասեալ արդելին զայն և զաւելն փշրեցին. բազմացաւ վէճն յերկուց կողմանց, Հայք ազգ արարին Դատաւորին, և նորա կոչեալ զԹարգմանն Ցունաց, յանդիմանեաց զնա վասն բեւեռին, և առաջի արար զիրաւունս բաժանորդութեան, և պատուիրեաց չածել աւել 'ի դուռն վանացն Հայոց՝ վարիլ սիրով և խաղաղութեամբ։ Եւ 'ի

վաղիւն Յոյնք եկեալ աւելեն զայն տեղի, եւ Հայք ընդ-
դիմանան, եւ ոմանք 'ի գիւղականաց վկայեն թէ տեղին
Հայոց է. լուեալ զայսոսիկ միաբանք գնացին առ Դա-
տաւորն կարգաւորել զիրան, ահա եհաս նամակ 'ի տես-
չէն Բեթղեհէմի և գուժկան, և Պօղոս վարդապետ ոմն վի-
րաւորեալ յերեսս, զի աւել ածելն դռնապանին Հայոց
'ի տեղին յայն, հասեալ Յունաց սկսան գանակոծել զնա,
լուեալ միաբանաց փութացին ազատել զայն 'ի ձեռաց նո-
ցա, Յոյնք հարին զնոսա եւս և զՊօղոս վիրաւորեցին, և
զի մի երեւեսցին իրրեւ յանցաւոր, ամենայարեալ հարին
զկոչնակն հասանել գիւղականաց յօգնութիւն, որպէս թէ
Հայք հուր եղեալ են յեկեղեցին Յոննդեան. և նոցա ըն-
թացեալ խառնեցան անդ բազմութեամբ զինուք և բրօք,
և Տեսուչ նոցին գոչէր. հարկանել զՀայս 'ի սուր սուսերի
և մի երկնչիլ. 'ի սաստկանալ խռովութեան և 'ի խառնիլ
ընդ միմեանս գիւղականաց, զի ոմանք 'ի նոցանէ 'ի կողմն
Հայոց էին, Հայք մոլն 'ի ներքս և փակեցին զդուռն, և
ցրուեցան ամենեքեան։

Դատաւորն պատուիրեաց թարգմանին Յունաց դադ-
րիլ յայնպիսի անպատեհ գործոց, և չաւելել զտեղին զայն,
և 'ի վաղիւ գալ ծերունեաց եւ վախճան տալ խռովու-
թեանց։ Գնացին Հայք եւ Յոյնք առ Դատաւորն, ուր էր
և Նուրի Էֆէնտի, և 'ի լինել բանից 'ի վերայ այսր խընդ-
բոյ, Յոյնք բարկութեամբ և յանդգնութեամբ ետուն պա-
տասխանի, դիւրին է մեզ խպառ թողուլ զեկեղեցին Բեթ-
ղեհէմի, այլ զտեղին զայն ոչ երբէք, զի յաւուր յորում
առաք զրանալի արտաքին դրան 'ի ձեռաց Լատինաց, տի-
բեալ եմք բովանդակ եկեղեցւոյն, զի թէպէտ յայսմ նուա-
գի ասացեալ է Թագաւորն վասն Այրին լինել բաժանորդ,
այլ վասն այլոց տեղեաց չունի ոք իրաւունս, թէպէտ Հայք
յառաջ բերէին թէ յառաջ քան 30 ամս աւել ածէաք յայն
տեղի, բայց ոչ ոք էր որ լսէր. եւ 'ի բողոքելն առ Դա-
տաւորս առնել իրաւունս, նոքա ասեն թէ 'ի հրովարտակս
և 'ի գիրս մեր չէք ինչ գրեալ վասն այդպիսեաց, իրաւա-
խոհ լերուք 'ի միջի ձերում, այլ այսքան գիտեմք, զի
Յոյնք չունին իրաւունս աւել ածելոյ առաջի դրան Հայոց,
բայց որովհետեւ Յոյնք ընդդիմացեալ չթողումք ասեն,

դուք եւս մի յարուցանէք վէճս սակս դոյզն իրաց, միայն
աւել ածելով տեղն չգրաւի։ Տեսեալ Հայոց թէ չէք օ-
գուտ ինչ 'ի խօսելոյ, մեկնեցան անտի 'ի տեղիս իւրեանց։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Մեկնիլ Նուրի Էֆենտեայ Յերուսաղէմ։ Բգէշին Սիգանի։ Լատինք։
Խաչկալք Յոննդեան եւ կարգաւորութիւն Պատարագի։ Հանգէս Հայոց
'ի Յոննդեան։ Ատելութիւն Լատինաց եւ վէճ վասն Ճանապարհի նոցին։
Գնալ 'ի Բեթղեհէմ վասն կարգադրութեան նորին խնդրոյ։

Մ ՈՒՎԷԼԱՑ Վէքիլի Մէհէմմէտ Նուրի Էֆէնտի զկնի
աշալուրջ հսկողութեամբ եւ հաւատարմութեամբ կատա-
րելոյ զպաշտօն իւր, պատրաստեցաւ 'ի չու, և քաղաքա-
վար խոհեմութեամբ առաջի առնէր Հայոց զվարձ ծառա-
յութեան իւրոյ, իրրեւ ստիպեցին նոքա ինքն որոշել զայն,
նա ըստ խոհեմութեան իւրոյ առնէր պատասխանի, զոր
ինչ սահմանեսցէ Տէրութիւնն, և որքան արժան համարիք
դուք և գլխաւորք ազգին ձերոյ՝ զայն առնում, և միա-
բանք հաճեալ ընդ բանս նորա, գրեցին առ գլխաւորս ազ-
գին տնօրինել զայն քաղցրութեամբ և սիրով և Փոխանոր-
դին հատուցանել անթերի, միայն ետուն յերուսաղէմ 5000
դահեկան վասն ծախուց ճանապարհի, բաց յուտելեաց և
ըմպելեաց, ընծայից և այլ ամենայն պիտոյից, զորս հոգա-
ցին Հայք յերուսաղէմ ամիս 8, և օրս 8, ետուն նաեւ
զվարձս սպասաւորաց նորին ըստ որոշման իւրոյ։ Գրեցին
և գիր առ ամենայն ազգային Կոստանդինուպոլսոյ, համա-
ռօտ իմն պատմելով՝ 'ի սկզբանէ գործոյն մինչև ցաւարտումն
նորին. եւ թէ ո՛րպէս Նուրի Էֆէնտի հնազանդութեամբ
հրամանի Արքային՝ համբերութեամբ և հաւատարմութեամբ
կատարեաց զգործն, զորմէ գոհունակութիւն և շնորհակա-
լութիւն մեծ յայտնելով. յայս գիր ձեռնարկեալ կնքեցին
ինքն Թէոդորոս Պատրիարք, Եպիսկոպոսունք և Վարդա-
պետք անձինք 27, և ետուն 'ի ձեռս նորա իբրեւ վկայ հա-
ւատարմութեան իւրոյ, (1813. 'ի 28 Դեկտեմբերի)։ Եւ

այսպէս սիրով և խաղաղութեամբ մեկնեցաւ Նուրի Էֆէնդի իւրովքն հանդերձ 'ի Ցոսպէ՝ նաւել անտի 'ի Կոստանդինուպօլիս. բայց զԻլամն և զՀէօճմէթն զորս չարագրեաց 'ի միասին ընդ Դատաւորին համաձայն մտաց առաջին եւ երկրորդ հրովարտակաց, միայն զԻլամն արար 2 օրինակ, զմին առաքեաց առ Կուսակալն Դամասկոսի, և զմիւսն ընդ սուրհանդակին 'ի Կոստանդինուպօլիս, և զՀէօճմէթն էառ ընդ իւր ցուցանել 'ի պատշաճաւոր տեղիս. իբրեւ խնդրեցին Հայք զպատճէնս նոցին, ոչ ետ, ասելով թէ չէ ձեզ հարկաւոր։ (Երանի թէ տուեալ էր)։

Իսկ Թէոդորոս Պատրիարք գրեաց առ Փոխանորդ Պօղոս վարդապետն, զի խորհրդով ազգայնոց Ջանասցին հընարս գտանել կանգնելոյ լուսարարին Հայոց փոփոխակի ընդ լուսարարին Յունաց 'ի Գերեզմանն Քրիստոսի, զի յերուսաղէմ անկարելի եղեւ առնել զայն։

Բդեշխն Սիդոնի որ նստէր յԱկռաղն, Միւթէվէլլի դրան տաճարին Ս. Յարութեան պահանջէր գումարս 'ի Հայոց հաւասար Կուսակալին Դամասկոսի, եւ Փոխանորդ նոքին որ նստէր 'ի Յոպպէ՝ խնդրէր 25,000 դահեկան, և վասն սոցին կային վարանեալ Հայք, զի մի չարիս հասուցեն ուխտաւորաց և դոյից վանաց, որպէս արարին 'ի Զմիւռնիոյ և յԵգիպտոսէ եկեալ բեռանց, զի զկնի 50 աւուրց հաղիւ կարացին ազատիլ 'ի ձեռաց նոցա։ Յոյնք արդէն եալէին հրամանաւ Կուսակալին զնուագարանն Լատինաց 'ի Ս. Յարութիւն, և 'ի սոյն աւուրս 'ի միջնորդելոյ Դատաւորին, հրաւիրեցին նուագել զայն և սիրով միաբանել ընդ ինքեանս 'ի վնաս Հայոց, զի Լատինք մինչեւ ցայսվայր իբրեւ թէ սիրով վարէին ընդ Հայս, այլ յորժամ շահեցան Հայք զերաւունս բաժանորդութեան 'ի Ս. Տեղիս, վշտացան յոյժ, զի նոքա ճոխացեալ պանծային յերուսաղէմ Տէրութիւնս, և այնպէս ոչ կարացին վերատին թափել 'ի ձեռաց Յունաց զկենդանեցին Բեթղեհէմի և Ս. Աստուածածնի, թէպէտեւ յաջողեցան առնուլ հրովարտակ 'ի Մուլթան Մահմուտէ, այլ ոչ կարացին առնել ինչ. նրին իրի թէ առ նախանձու և թէ առ վշտի օրոց իւրեանց, մանաւանդ հակամէտ 'ի գրգռութիւն Յունաց, սկսան հակառակիլ վասն ժամանակի Պատարագին 'ի Բեթղեհէմ,

թէպէտ և Հայք Ջանացին միշտ հաստատուն պահել զվաղէմի բարեկամութիւնս իւրեանց, եւ բազում անգամ 'ի կարեւոր իրս և 'ի դէպս ձեռնտու և օգնական եղեն նոցա մուացեալ զնեղութիւնս իւրեանց. բայց նոքա վաղ ընդ փոյթ մուանային զնոսա, եւ բազում անգամ խօսեցան ընդ Ֆրա Մանուէլ Փոխանորդի նոցին և եդին պայմանս. բայց միաբանք Ծննդեան անլսող լեալ բանից նորին, ոչ ընկալան, և պնդէին պատարագել Հայոց զկնի Լատինաց. և եղեւ 'ի բազմանալ վիճմանց՝ հարկ եղեւ գնալ յերկուց կողմանց 'ի Բեթղեհէմ և կարգաւորել զխնդիրն, որ եւ Յոյնք յանձն առին կէս ժամ յառաջ կանխել, և որոշեցաւ խնդիրն պայմանագրով՝ 'ի վնաս Հայոց։

Թէոդորոս Պատրիարք ետ գրել զհամարաւորութիւն պատմութեան անցից Ս. Տեղեաց, և առաքել առ Եփրեմ Կաթուղիկոս 'ի Ս. Էջմիածին գիտութեամբ Ամիրայից ոմանց. զի եթէ արժան դատեսցէ, տացէ թարգմանել զայն 'ի Ռուս բարբառ, առաքել 'ի պատշաճաւոր տեղիս, իմանալ թէ Հայք ոչ ինչ առին 'ի ձեռաց Յունաց, այլ քրիստոնէաբար հաւասար եղեն 'ի բաժանորդ տեղիս, (1813. 'ի 29 Դեկտեմբերի)։

Զկնի տիրելոյ Հայոց հիւսիսային մասին եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ բաց յայլոց կարեւոր իրաց արժան էր առ ժամն կանգնել խաչկալս երկուց խորանաց, կազմել դարանս և պահարանս 'ի պահպանութիւն եկեղեցական զարդուց, որպէս հրաման տուեալ էին յառաջագոյն Դատաւորք. այլ յորժամ պատրաստեալ զպահարանն եդին 'ի կողմն յարեւմտից 'ի կամարաձեւ յարմն, 'ի տեղի նախկին դրան եկեղեցւոյ, զայն տեսեալ Յունաց դիմեցին առ Դատաւորն, թէ Հայք առանց հրամանի շինեցին սենեակ յեկեղեցւոջ անդ։ Եւ նորա կոչեալ զՀայս խօսի ընդ նոսա կշտամբանօք, և ստիպէ փութանակի բառնալ զայն անտի և փակել զդռեղին՝ երկուցեալ 'ի բնակչաց երկրին և 'ի մեծամեծաց Տէրութեան. Թէպէտ Հայք ասէին թէ ոչ է այն սենեակ՝ այլ պահարան սակս եկեղեցական զարդուց, և առաքել զմի ոք յիւրոց և իմանալ զատոյգն, և տակաւին փեղկք նորա ոչ էին ագուցեալ, և այլ բազմազիմի բանք. այլ նա ոչ ինչ անսայր բանից նոցա, զնոյն ասէր

և Քաղաքապետան, այլ ընկալաւ զարժանաւոր պատասխանիս. և զկնի աւուրց ինչ հաղիւ ուրեմն ցածուցին զխըստութիւն Դատաւորին և չինեալ աւարառեցին զպահարանն և կանգնեցին զսաչկալս խորանաց, (1814. յ2 Յունվարի)։ Գնացին Փոխանորդն Հայոց և ոմանք 'ի Վարդապետաց 'ի վանս Յունաց. զկնի բանից և շնորհաւորութեան նոր տարւոյ, խօսեցան վասն խռովութեան գիւղականաց Բեթղեհէմի և Քաղաքապետի, զի զտուգանս նոցին պահանջէր յերից վանաց։ Գնալ Հայոց 'ի Բեթղեհէմ հանդիսիւ յաւուր տօնի Ծննդեան, զի Յոյնք ոչ գնացին. բառնալ ըզնոր վարագոյրն 'ի սեղանոյ Ծննդեան, զոր եդեալ էին Յոյնք, և չսահմանել անդ նորանոր խրս, և 'ի ժամ պատարագին զոր ինչ կամիցեն դիցեն՝ և ապա բարձցեն զամենայնն։ Բառնալ 'ի խորանէ անտի զթել վանդակն, և զանպետ աստիճան պատկերին. Յոյնք խոստացան բառնալ, թէպէտ մինչեւ ցայժմ կայ մնայ վանդակն, և 'ի ժամանակս մեր յաւելին փականս 'ի վերայ նորա. եդին պայման չվիճել միաբանաց 'ի Բեթղեհէմ, այլ զամենայն ինչ ազդ առնել յերուսաղէմ։ Ի տօնի Ծննդեան Հայոց ըստ առաջին սովորութեան Հայոց մուտ և ել առնել յերկուց դրանց Այրին 'ի Թափորին և 'ի վերաբերման, Յոյնք ոչ հաճեցան, զի յառաջագոյն 'ի տարւոջ երկիցս միայն երթային Հայք անդ, իսկ այժմ մշտնջենաւորեցին, և երկուցեալ թէ 'ի պատճառս ուխտաւորաց և 'ի պատիւ Պատրիարքին՝ մի լիցի սովորութիւն, ուստի միանգամ 'ի տարւոջ առնել խոստացան, (յետոյ զայն եւս խափանեցին)։ Աւել ածել առաջի դրան Հայոց՝ ոչ կամեցան Յոյնք։ Կարգաւորեցին զժամանակ պատարագելոյ, պատարագել Յունաց զկնի «Փա'ռք 'ի բարձունս» Հայոց, նոյնպէս և Լատինաց։

Զի թէպէտ Թէոդորոս Պատրիարք ոչ գնաց 'ի Բեթղեհէմ 'ի տօնի Ծննդեան վասն խռովութեան գիւղականաց և Քաղաքապետին՝ որպէս գրեցաք, այլ առաքեաց զպաշտօնեայս ընդ ուխտաւորաց։ Եւ 'ի նմին գիշերի կախեցին Հայք լապտերս 'ի պատուհանէ առաջի դրան 'ի լուսաւորել զտեղին, Յոյնք ընդդիմացեալ բարձին զայն երիցս և 'ի չորրորդին խորտակեցին, և դատաստան առ Դատաւորին, հակառակիլ Յունաց բանից և յորդորանաց նորին։

Հայք վերստին կախեցին զլապտերն և ցրուեցան գիւղականք որք պատրաստեալ էին 'ի կռիւ. ընդ այս զայրացեալ Յունաց՝ արգելին զՀայս ելանել և մտանել յերկուց դրանց Այրին, բայց նոքա կատարեալ զպաշտօնն դարձան յերուսաղէմ։ Յոյնք առ նախանձու առելութեամբ վարէին ընդ Հայս՝ և խնդրէին գտանել զառիթս խռովութեան և պատրաստ մինչեւ ցհեղուլ զարիւնս, զի բացցի դուռն դնել բարուրանս 'ի վերայ Հայոց. սակայն նոյն իսկ գիւղական ծէլլահք այսպանէին զնոսա, չյուսալ Դատաւորին և յայլազգիս Երուսաղէմի. զի ոչ կարեն կալ նոքա ընդդէմ հրամանի մեծի Արքային։ Իսկ Թէոդորոս Պատրիարք գտեալ զմիջոց հաշտութեան գիւղականաց ընդ Քաղաքապետին, գնաց բազմութեամբ ուխտաւորաց և միարանաց 'ի Ս. Ծնունդ յաւուր տօնի Անուանակոչութեան Տեառն ('ի 12 Յունվարի), որոյ ուղեկից եղեւ Քաղաքապետն բազմութեամբ զօրաց. գլխաւորք և Շէյխք գիւղին ընդ առաջ ելին նմա ամբոխիւ զինուք և երիվարօք, եւ ուրախութեամբ մուծին զնա 'ի Բեթղեհէմ, յերեկոյ եւ յառաւօտ փառաւոր կատարեցին զհանդէս Տօնին։ Թէոդորոս ինքն մատոյց զՍ. Պատարագն 'ի վերայ Ծննդեան տեղւոյն ջերմեռանդ փափաքանօք 'ի փրկութիւն հոգւոց կենդանեաց և ննջեցելոց ազգին։ Եւ 'ի գիշերին յայնմիկ Յոյնք փակեալ էին զհարաւային դուռն Այրին ըստ հրամանի Փոխանորդին Իւրեանց, բայց Թարգման նոցին եկեալ յերուսաղէմէ եւ բանալ զնա, և ոտիպէր բառնալ զզարդս խորանին որ յԱյրին, այլ ոչ 'անուացին նմա Հայք, և մնաց յերեկոյէ մինչեւ ցժամ պատարագի նոցին, թէպէտեւ եղեւ գժտութիւն և բանք 'ի մէջ երկուց ազգաց եւ Հայք ըստ վաղէմի սովորութեան իւրեանց 'ի ժամ պատարագին ելեալ Թափորիւ 'ի հիւսիսային դրանէ Այրին, և անցեալ 'ի միջոց մեծի եկեղեցւոյն դարձեալ իջին յԱյրն 'ի հարաւային դրանէ, նոյնպէս և 'ի վերաբերման և յայլ ժամանակս. և այսպէս փառաւորութեամբ կատարեալ զհանդէս տօնին, դարձան ուրախութեամբ յերուսաղէմ։ Իսկ բազումք 'ի գիւղականաց Բեթղեհէմի Յոյնք և Լատինք յայտնապէս խնդրէին լինել Հայ և յաւելուլ 'ի ժողովուրդ նոցա, որոյ վասն նախանձեալ Յունաց ասէին. թէ Թագա-

ւորն միայն զԱյրն բաժանորդ ասաց, իսկ Հայք տիրեցին միոյ մասին եկեղեցւոյն. բայց 'ի մերձ ժամանակի ըստ զօրութեան հրովարտակին, որով առաք զայն 'ի ձեռաց Լատինաց, արտաքսեմք նաեւ անտի զՀայս. զայս և Դատաւորն ծանուցանէր ծածկապէս լուեալ 'ի գլխաւորացն Ցունաց։ Զայսոսիկ գրէ Թէոդորոս 'ի Կոստանդինուպօլիս և պատուիրէ արթուն լինիլ, եւ եթէ հնար իցէ առնուլ նոր հրովարտակ. զի յերկաթեայ դրանէ մինչեւ ցԱյրն լինել բաժանորդ, որպէս գրի յերկրորդ հրովարտակին։ Ցոյնք յառաջագոյն զարդարեալ էին կանթեղօք զուսնազարդ գաւիթն եկեղեցւոյն եւ 'ի ժամանակս բաժանորդութեան Դատաւորն ոչ եթող Հայոց կախել կանթեղս և վարագոյրս հաւասար Ցունաց, որով այժմ բռնացեալ արգելին նաեւ զկանթեղն 'ի վերայ դրան վանաց։

Զկնի մեկնելոյ Նուրի Էֆէնտեայ յերուսաղէմ, բռնացան այլազգիք 'ի վերայ Հայոց և պահանջէին 'ի նոցանէ զգուսարս դրամոց, որոց պարագլուխ էր դռնապանն Ս. Յարութեան, որպէս թէ զնոյն տաճար ինքեանք շնորհեալ են Հայոց, և յայտնապէս ասէին. Թէպէտեւ Թագաւորն ետ ձեզ հրովարտակ, սակայն Տէր երկրին մեք եմք։ Զայս ամենայն գրեալ ծանոյց Թէոդորոս առ գլխաւորս ազգին 'ի Կոստանդինուպօլիս, և խնդրէր գտանել հնարս ազատութեան. զի եթէ ասէ գիտէաք թէ ոչ բարկանայ Տէրութիւնն և չարգելուն զմեզ փոխատուք, թողեալ զամենայնն 'ի բաց ելանէաք աստի, ('ի 24 Յունվարի)։ Փոխանորդ Պօղոս վարդապետն ըմբռնեալ 'ի ժանտախտէ՝ աղատեցաւ 'ի ձեռն դարմանի բժշկաց։

Հայք 'ի սկզբան անդ ոչ կամեցան թշնամանալ նաեւ ընդ Լատինս, և լուեցին յորժամ ընդդէմ կացին նոքա 'ի կախել զմի կանթեղ 'ի վերայ աստիճանաց հիւսիսային դրան Այրին, և տեղի ետուն քրամնջանաց նոցին վասն պատարագին, եւ եդին պայման կատարել զայն զկնի նոցին առանց խռովութեան։ Եւ ոչ կամէին ցրտանալ 'ի բարեկամութենէ, զոր ունէին յաւուրց անտի այրելոյ Ս. Յարութեան. նոքա եւս վչտացեալ էին 'ի Ցունաց վասն բազմադիմի վնասուցն զոր կրեցին. զի 'ի չինութեան տաճարին այլայլեցին զձեւ Գերեզմանին, և խափանեցին զպատարագն նոցա, միայն պատարագէին 'ի վերայ Հրեշտակի վիմին ամիսս 8. եւ դեգերեալ 'ի դրունս մեծամեծաց բազումս աշխատ եղեն, մինչեւ առին հրովարտակ արքունուստ. բայց ոչ որպէս կամէին, միայն զԳերեզմանն կարացին մտանել և պատարագել։

Իսկ 'ի սմին ժամանակի 'ի բաց թողեալ զառաջին բարեկամութիւնն դարձան յատելութիւն, գրգռէին նաեւ ըզՑոյնս ընդդէմ Հայոց։ Վասն զի 'ի տարածեալ Հայոց զբփռոցն յատակս եկեղեցւոյն Բեթղեհէմի, ցուցին նոցա ճանապարհ յետուստ կողմանէ, և առ այն չյօժարէին բնաւ, զի մի լիցին ընդ իշխանութեամբ Հայոց, եւ բռնագատէին զնոսա բառնալ զայն և բանալ զճանապարհն, և այսպէս մախալով եւ քրամնջելով անցանէին ժամանակս ինչ։ Եւ զի Փոխանորդ նոցին Ֆրա Մանուէլ ունէր բարեկամութիւն ընդ Թէոդորոս Պատրիարքի, զի բազում անգամ գաւալ էր գրամական օգնութիւն 'ի նմանէ։ Եւ եղեւ 'ի մեկնիլ նորա յեգիպտոս 'ի խնդիր դրամոց, զի էին 'ի մեծի նեղութեան. միաբանք նոցին 'ի Բեթղեհէմ սկսան յուզել զկռիւ։ Գնացին առ Լատինս Լուսարար Սիմէոն վարդապետ և Դիոնէսիոս՝ խօսիլ ընդ նոսա 'ի վերայ այսր խնդրոյ, բայց Փոխանորդ նոցին սկսաւ վարիլ ընդ նոսա խրոխտ բարկութեամբ և սրտմտութեամբ և խնդրել զհրովարտակն տեսանել թէ զինչ իցէ գրեալ 'ի նմա, և թէ Լատինք պայմանաւ վարին ընդ Ցոյնս 'ի Բեթղեհէմ. և հիւսիսային դուռն Այրին իցէ սեփհական նոցա, զոր Հայք իւրացուցին պատկերաւ եւ կանթեղիւ, եւ զճանապարհն խափանեցին, և այլ սոցին նման բանք։ Տեսեալ վարդապետաց զմեծաբանութիւնս նոցին, ասեն՝ գտանել զհրովարտակն 'ի Դատարանի և ընթեռնուլ զայն, եւ գնալ 'ի Բեթղեհէմ և անօրինել զխնդիրն, այլ նա պնդէր բանալ զճանապարհն։ Հայք ոչ ընկալեալ զխնդիր նորին մեկնեցան անտի, և ազդ արարին Դատաւորին, իսկ 'ի Բեթղեհէմ Տեսուչ և Լուսարար նոցին ժողովեալ զդիւղական դիւնեալ Ֆէլլահս բռնութեամբ և կռուով բառնան զսփռոցն, եւ եղեգամբ չափեալ ցուցանեն թողուլ զայնքան տեղի բաց, զի 'ի Թափօրս և 'ի Պատարագի 3 Քահանայք 'ի մի կարգ երթիցեն յԱյրն, եւ այս ճանապարհ լինէր առաջի

խորանին Հայոց, Հայք տարածեցին զսփռոցն մինչեւ չորիցս անդամ, և նոքա բարձին. ապա ժողովեալ այլազգի Շէյխք տեղւոյն կամեցան խաղաղացուցանել զնոսա, այլ նոքա ոչ առին յանձն, մինչեւ այլազգեաց ձեռօք իւրեանց բանալ զճանապարհն ըստ կամաց նոցին. Հայք դարձան յԵրուսաղէմ և պատմեցին Դատաւորին զեղեալն, և նորա կոչեալ զԹարգմանն Լատինաց՝ կշտամբեալ յանդիմանէ զնա վասն դրան և ճանապարհին. և թէ Հայք և Ցոյնք բաժանորդ եղեն անդ հրամանաւ Արքայի, և զձեզ ոչ ոք գիտէ ունել տեղի անդանօր և դուռն ձեր նորասահման է, եւ ոչ յատուկ մուրհակաւ, և զի՞րդ համարձակիք զեկեղեցին Հայոց առնել ձեզ ճանապարհ օգնութեամբ արիւնարբու Ֆէլլահաց, դուք ասէք թէ Փոխանորդն ձեր չէ ասա, և ոչ տայք տուրս Տէրութեան, ապա զի՞նչ են արարք ձեր. այսուհետեւ չունիք հրաման կոդել ընդ Հայս վասն հիւսիսային դրան և եկեղեցւոյ, մինչեւ ունիցիք վաւերագիրս այլովքն հանդերձ։

Եւ յերեկոյին յայնմիկ եկն Լատին վարդապետ մի թարգմանաւ 'ի վանս Հայոց, և իբր չքմեղս լեալ ասէր թէ՝ Տեսուչն և Ծերակոյտն չունին հաճութիւն ընդ այն, և թէ՝ Փոխանորդ տեղւոյն եւ այլք ինքնագլուխս արարեալ են զայն, և ապա աղաչէր հանդարտել 'ի բարկութենէ և անոխակալ լինիլ. զի Փոխանորդն մեծ չէր անդ, և միաբանք Բեթղեհէմի ստահակք եւ անհնազանդ մեզ, ասէ թէ 'ի դրդմանէ Ցունաց է այն. սակայն ճանապարհաւ իւիք հանդարտեմք զնոսա։ Հայք ընկալան զբանս նորա, և խօսեցան հաշտութիւն, և թէ՝ չյարուցանել միւսանգամ վէճս վասն դրան Այրին եւ ճանապարհին, աղաչէր զնոսա Վարդապետն գնալ 'ի Բեթղեհէմ, տեսանել զտեղին եւ բառնալ զխռովութիւնն, թէպէտ Հայք յառաջագոյն հրաւիրեցին զնոսա գնալ անդ՝ բայց նոքա ոչ կամեցան, եւ մեկնեցաւ Վարդապետն սիրով երթալ պատմել իւրոցն։ Իսկ Հայք առին գիր 'ի Դատաւորէն և 'ի Քաղաքապետէն առ գիւղացի Ֆէլլահս, զի մի ոք իշխեսցէ բառնալ ըսփռոցս Հայոց յեկեղեցւոջ անդ (յ3 Փետրվարի)։ Տեսուչն Հայոց եւս ընթեռնուլ զգիրս 'ի լուր ամենեցուն, և նոցա ամբաստանեալ զմիմեանս քակեցան 'ի միաբանութենէ

Լատինաց։ Եւ 'ի նմին աւուր հանդերձեալ էր Լատին վարդապետն գնալ 'ի Բեթղեհէմ, և ազգ արար Հայոց, եւ նոքա առաքեցին զԴիոնէսիոս վարդապետն և զայլս։ Լատին վարդապետն յանդիմանէ զՓոխանորդ տեղւոյն, եւ նա ասէ՝ զամենայն ինչ խրատով եւ հրամանաւ ձեր արարի, եւ այժմ ընդէ՞ր նշաւակէք զիս առաջի Հայոց եւ Ֆէլլահաց, եւ բարկացեալ էլ եւ գնաց յԵրուսաղէմ առ փոխանորդն իբր 'ի գանկատ։ Լատին վարդապետն ասէ՝ ահա խռովայոյզ Փոխանորդն յանդիմանեալ 'ի մէնջ հալածեցաւ, եւ այլ ոչ եւս ունի դառնալ այսր. ժամ է արդ կարգաւորել զխնդիրն։ Ապա սկիզբն առնէ չողոքորդ բանիւք յորդորել զՀայս դարձեալ բանալ զճանապարհն, և բանք յերկուստէք տեւեաց ժամս 2. եւ 'ի վերջոյ չհանդուրժեալ Դիոնէսիոսի ասէ, միաբանք ձեր խենդութեամբ և բռնութեամբ ջանային, այժմ դու սիրով կամիս խաղանել զեկեղեցիս մեր. եթէ դուք վասն միոյ վայրկենի անցանելոյ այդքան պնդէք 'ի վնաս մեր, որ հանապազ կանգնիմք ասա կատարել զհոգեւոր պաշտօնս մեր, որ տեղին մեզ յատկացեալ է, զի ասէք թէ յամենայն ժամանակի զեկեղեցին զայն ճանապարհ արարեալ եմք, բայց յորժամ պարապ էր առնէիք զայն, այլ այժմ հրամանաւ Արքայի և 'ի ձեռն ժողովոյ կալաք զիրաւունս մեր ըստ բնականին, միթէ հնար է այժմ եւ առնել, որպէս առնէիք յառաջ, զի ասէք թէ միաբանք մեր են յայլ և այլ ցեղէ, և իւրաքանչիւրն, զայլ և այլս պատճառելով յարուցանեն վէճս և կռիւս, միթէ միաբանք Հայոց չիցե՞ն այնպէս, եւ այլ սոցին նման բանք բազումք։ Եւ իջեալ յեկեղեցին գտին զտեղին արդարեւ անպատեհ և վնասակար Հայոց. բայց նոքա յամառեալ աղաչէին առնել ըստ կամաց նոցին, որով չմնայր տեղի կանգնելոյ ուխտաւորաց և կարգաւորացն Հայոց, ուստի յորդորեցին զլատինս յետս կալ 'ի խնդրոյն յայնմանէ, այլ կարգաւորք միայն անցցեն 'ի վերայ սփռոցաց, իսկ ժողովուրդքն 'ի նշանագրեալ ճանապարհէն։ Այսպէս մնաց խնդիրն մինչ 'ի գալուստ Ֆրա Մանուէլի, բայց ներքին դիտումն նոցին էր գրել 'ի կոստանդինուպոլիս, որպէս գրեաց զայս ամենայն Թէոդորոս Պատրիարք առ գլխաւորս ազգին։

Գլխաւորկ միաբանացն Հայոց եւ ժողովրդոցն Երուսաղէմի յառաջագոյն սահմանեալ էր տալ 1348 դահեկան, իսկ 'ի քանի ամաց հետէ Կուսակալք Դամասկոսի պահանջէին եւ առնուին 12,416 դահեկան. չկարացեալ տանել դժանրութիւնն զայն, ետուն նորոգեալ զհրովարտակն հարկին բաժանել զթուղթս ըստ առաջին սովորութեան միաբանաց և ժողովրդոց եւ ըստ մարդաթուի ժողովել ըստ հարկն, զայս հրովարտակ ցուցեալ Բաղաքապետին աղաչեցին առնել ըստ հրամանի Արքային. իսկ նա ոչ կարացեալ առնել ինչ՝ գրեաց 'ի Դամասկոս, նոյնպէս և Հայք, առաքելով զպատճէն հրովարտակին. այլ Կուսակալն ոչ ընկալեալ զբանս հրովարտակին, գրեաց հրաման սաստիկ առ Բաղաքապետն անպատճառ առնուլ զսահմանեալ գումարն. և նորա բռնացեալ 'ի վերայ Հայոց էառ զայն անթերի, էառ նաեւ 650 դահեկան ծախս թղթաբերի. Պատճառ այսմ զի հարկահանք ոչ բաժանէին զթուղթսն 'ի գիւղօրայս Պաղեստինոյ, յորս բնակին Լատինք և Յոյնք, եւ 'ի Հայոց և ոչ մի ոք՝ եւ զյաւելեալ թուղթսն արկանէին 'ի վերայ երից վանօրէից, Յոյնք եւ Լատինք ոչ կրէին վնաս անտի. զի ժողովէին 'ի ժողովրդոց իւրեանց, բայց Հայք վնասէին, որոյ վասն գրեցին 'ի Կոստանդինուպոլիս բառնալ զժանրութիւնն զայն։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Հրամանագիրք Կուսակալին Դամասկոսի։ Պահանջ և բռնութիւն նորին։ Նենգութիւն Բաղաքապետին խորհրդով Յունաց։ Սահմանն Կուսակալին խանգարել զգործս Հայոց։

Իբրեւ դարձաւ Կուսակալն 'ի Դամասկոս յուխտագնացութենէ իւրմէ, գրեաց առ Բաղաքապետն և առ Դատաւորն Երուսաղէմի հարկեցուցիչ բանիւ գրել և ծանուցանել ինքեան զոր միանգամ արարեալ էին յերուսաղէմ 'ի բացակայութեան իւրում։

Այսոքիկ գրեանք ընթերցան 'ի ժողովի այլազգեաց, և Բաղաքապետն ստիպէր զԴատաւորն կատարել զհրաման Բդեշխին. և 'ի չառնուլ նորա յանձն՝ ցրուի ժողովն։

Եւ ապա կոչեալ առանձին զՀայս ցուցանէ նոցա ըստ զիրն, և զարժանաւոր պատասխան նորին։ Ի վաղիւ անդ կոչեաց զնոսա Բաղաքապետն և ընթերցաւ առաջի նոցա զգիր Կուսակալին, եւ խնդրեաց զտուրմար կանթեղաց, պատակերաց, չինուածոց և այլոց իրաց, որք եղեն յերիս տեղիս։ Հայք ետուն պատասխանի՝ չիք մեր արարեալ նորասահման ինչ՝ այլ որ ինչ միանգամ եղեն հրամանաւ Արքայի և 'ի ձեռն պաշտօնէից և ձեր եղեն և կատարեցան, և գրեցաւ Իլչ և Հեշեմէ և առաքեցան 'ի պատշաճաւոր տեղիս թէ՝ ըստ հրովարտակին Սէլիմայ երկու աղգք բաժանորդ են 'ի նոյն տեղիս, զամենայն ինչ դուք արարիք՝ որպէս գիտէք, այնպէս գրեցէք. զի մեք 'ի սեփական տեղիս մեր՝ անկախ, և 'ի բաժանորդս՝ բաժանորդ եմք, զի եթէ է ոք դատաւոր՝ ինքն յայտնասցէ խօսեսցի, զի աւելի ինչ ոչ եմք արարեալ՝ և եղեալքն հրամանաւ ձեր եղեն։ Եւ սենեակն Բեթղեհէմի, որպէս գրեալ է Կուսակալն, ոչ է այն սենեակ, այլ պահարան 'ի պահպանութիւն անօթոց, եւ այն եւս դարձեալ գիտութեամբ ձեր, այլ զտուրմար կանթեղաց և այլոց իրաց ոչ կարեմք տալ, զի Արքունի գրեանք ոչ յայտնեն զայդպիսի ինչ։ Իսկ Բաղաքապետն ստիպէր զնոսա ասել՝ որ ինչ եղեւն 'ի ժամանակի բաժանորդութեան, և զայնոսիկ համարեսցի նորասահման իրս, և որսացեալ բան ինչ 'ի բերանոյ նոցին՝ արկցէ զնոսա յորոգայթ իւր, և այնպէս պատասխանի արասցէ Կուսակալին։ Այլ նոքա միշտ զնոյն բան երկրորդեցին, հրամանաւ Արքայի 'ի բաժանորդ տեղիս հաւասար լինել Յունաց. իսկ որ գրեալ եցոյց Բդեշխին հաւաստեաւ զթիւ պատակերաց և այլոց իրաց՝ իբր նորասահման՝ նա վկայեսցէ և ամոքեսցէ զնա։ Ընդ այս չառագուշէին երեսք Բաղաքապետին, եւ ինքն երդնոյր թէ չէ գրեալ ինչ. իբրեւ ոչ կարաց որսալ բան ինչ 'ի բերանոյ նոցա, սկսաւ թախանձել զԴատաւորն և զմեծամեծս այլազգեաց գրել Իլչ և հանրագիր վասն եղելոց, զի մի ինքն ստախօս երեւեսցի։ Դատաւորն զայս միայն առնէր

պատասխանի. ըստ հրամանի Արքային դիտութեամբ ամենեցունցս և օրինօք դատարանի երկու ազգք բաժանորդ եղեն. գրեցան Իլամ և Հեբեմեն և առաքեցան առ Տէրութիւնն և 'ի Դամասկոս, բաց յայսցանէ ոչ ինչ դիտեմ և ոչ ինչ գրեմ։ Եւ ապա կոչեալ առանձին զՈստիկան Բդեշխին՝ պատուիրէ նմա չքերքրել զանդիրն՝ զի Սուլթան Մահմուտ ինքնին վերակացու լեալ է գործոյս. որպէս աքսորեաց զնախորդն իմ 'ի Մավուսայ, և ես երկնչիմ գործել հակառակ հրամանի նորին. զի եթէ երկու ազգք ոակս աւելի և պակաս իրաց ունին դատս ինչ, զայն ես լսեմք և զստոյգն գրեմք Կուսակալին, այժմ ոչ ամբաստանող և ոչ նորատահման իր ինչ տեսանի։ Ի սոյն միտս գրեաց նաև առ Կուսակալն, այլ չեղեւ յայտնի թէ զի՞նչ գրեաց Բաղաքապետն։ Սակայն Դատաւորն կոչեաց առանձին ըզՑոյնա և առաջի եդ զօգուտ և զվնաս դանկատաւոր լինելոյն նոցա առ Բդեշխն. և նոքա մեծաւ երդմամբ հաստատէին թէ չէին գրեալ բան ինչ՝ զի չէր օգուտ, մանաւանդ չէին մոռացեալ զդառնութիւն նորին՝ զոր ճաշակեցին յառաջին նուագին. զի՞րդ փութացին միւսանգամ անկանիլ 'ի ծուղակս նորա, թէպէտ կամեցին զտուգանելն Հայոց այլ ինքեանք առաւել քան զնոսա վնասէին, այսպիսի բանիւք թագուցին զնենգութիւնս իւրեանց, ('ի 21 Փետրվարի)։

Թէպէտ և գրեաց յայնժամ Դատաւորն պատշաճաւոր պատասխանի գրոց Կուսակալին, այլ նա ոչ հանդարտեալ՝ վերստին գրեաց առ մեծամեծս քաղաքին եւ առ Դատաւորն, ընդ որս էր եւ Տումար ('ի 10 Մարտի)։ Կոչեաց Դատաւորն զՓոխանորդն և զԹարգմանն, զԴիոնէսիոս եւ զՊատուռեան Գէորգ և ընթերցաւ առաջի նոցա զգրեանսն, յոր ասէր՝ խռովութիւնք քրիստոնէից վասն եկեղեցեաց և Ս. Տեղեաց Երուսաղէմի ճանճրացուցին զԹագաւորն 'ի լսել զդատաստանս նոցա. զի ոչ կամէին շատանալ բնականին, սորին վասն Կուսակալք Դամասկոսի ըզգուշութեամբ արգելեալ էին զնոսա չառնել ինչ ըստ կամաց իւրեանց, որպէս եւ մեք առնէաք. այլ յուղեւորիլ մերում 'ի Մէքքէ, Հայք պատեհ առիթ գտեալ եւ յագահութենէ ոմանց համարձակութիւն առեալ, սահմանեալ են նորանոր չինուածս՝ պատկերս եւ կանթեղս 'ի Ս. Յարութիւն, 'ի Բեթղեհէմ և յԱստուածածին, որպէս տումարաւ եւ տոյգ քննութեամբ ցուցանեն մեզ։ Արդ՝ այն ամենայն զորս արարին, բարձցի և քակեսցի օրինօք դատարանի. ապա թէ ոչ՝ պարտաւորին եւ վնասին մեծապէս՝ որք հրաման տան և հակառակին հրամանի մերում։ Յայտնապէս ծանուցաւ որ զտումարն զայն գրեալ են Յոյնք մանրամասն՝ և գրով իւրեանց յղեալ առնա 'ի ձեռն Բաղաքապետին։ Եհարց Դատաւորն ցՅոյնս՝ զի թերեւս գիտութեամբ և յօժարութեամբ նոցին եղեալ իցէ այն ամենայն, բայց նոքա դարձեալ յուրատ եկին, և այնպիսի ձեւ եւուն բանից թէ՝ գործ նոցին տեսանի յԱրքունիս։ Յետ այնորիկ ասէ ցՀայս, չիք իմ արարեալ նորատահման ինչ, այլ ըստ հրովարտակի Արքային և դիտութեամբ ամենեցուն երկու ազգք բաժանորդ եղեն. և թէ՝ չունիմ այժմ հրաման յԱրքայէ քննել զայնս, քակել և կամ այլ ինչ գործել. հարկ է սպասել հասանելոյ Մուվէլլայի 'ի Կոստանդինուսպոլիս եւ ընդունելոյ զգրեանս. իսկ եթէ Բդեշխն կամի բռնութեամբ գործել, ոչ կարեմ ընդդէմ կալ, թէեւ կարեմ առնել ըստ հրամանի նորին և զամենայն գրեանս առաքել առ Տէրութիւնն, սակայն ըստ օրինայ որքան կարեմ արգելում մինչեւ ծանուցանել ձեզ 'ի Կոստանդինուսպոլիս, և բերել գիր հրամանի, զի 'ի յաջորդել այլ Դատաւորի գոլով անտեղեակ իրացս այսոցիկ, հանդիպիցք նեղութեանց և վնասուց։ Եւ ետ նոցա զպատճէնս գրոց Կուսակալին առաքել առ որ անկնէ, և մեկնեցան անտի։ Զկնի երկուց աւուրց գնացին Հայք առ Բաղաքապետն ըստ խնդրելոյ նորին, եւ ընթերցաւ առաջի նոցա զգրեանս Կուսակալին, եւ 'ի լինել բանից 'ի վերայ նոցա զգրեանս Կուսակալին, եւ 'ի լինել բանից 'ի վերայ խնդրոյ, Հայք ետուն պատասխանի՝ Կուսակալն յառաջագոյն գրեալ էր թէ 20 կանթեղ յԱստուածածին, 1 սենեակ 'ի Բեթղեհէմ, և 1 խորան 'ի Ս. Յարութիւն նոր սահմանեալ է, և խնդրէր ծանուցանել ինքեան թէ ո՞ր ազգ 'ի քրիստոնէից արարեալ իցէ զայն, և դուք յայնժամ ո՞րպիսի եղանակաւ ետուք պատասխանի՝ չէ մեզ յայտ. իսկ այժմ զամենայն ինչ տումարաւ յայտ արարեալ ասէ՝ թէ Հայք 'ի քացակայութեան իմում պատեհ ժամանակ գտեալ՝

ժողովուրդը քարին մասնաւոր այս հանգամանքէն տարուելով՝ երեւակայեց որ կատաղի սողուն մը յանկարծ դուրս ելած է քարերէն այն պահուն՝ երբ եկեղեցիին քանդիչները գործի սկսան։ ԺԲ–ԺԼ դար այս զրոյցը շարունակուած է ուխտաւորներու պատմութիւններուն մէջ անկարեւոր տարբերակներով։ Greffin Affagart կը կարծէ թէ Երուսաղէմի մէկ մզկիթին շինութեան համար էր որ այս քանդումին ձեռնարկուեցաւ։ Ահա անոր խօսքերը. «Պատին մէջ կային գեղեցիկ մարմարներ, այնպէս որ Սուլթանը տեսնելով այս քարերուն դեղեցկութիւնը՝ հրամայեց որ անոնք հանուին և Երուսաղէմ տարուին իր մզկիթին շինութեան համար որ կը կառուցուէր իր պալատին մօտ։ Գործաւորները երբ Սուլթանին ներկայութեան գործի ըսկըսան, խոշոր օձ մը դուրս ելաւ իր կոկորդէն կրակ ժայթքելով, և որ մեծ ուժգնութեամբ մը կը ցնցէր պատերը ու կը կոտրտէր մարմարեայ քարերը, և օձը կ'այրէր այն ամէնը՝ որոնց վրայէն կը քալէր։ Կը ըսպաննէր ներկաներէն շատերը, ուրիշներ ալ կը փախչէին խելագար և զգայազրկ։ Այս դէպքէն յետոյ ոչ ոք համարձակեցաւ եկեղեցիին մօտենալ, որ կը մնայ մինչև այսօր»։ Այս զրոյցը կը պատմեն նաև Bureh (էջ 79), Fabri (էջ 475), Jean Poloner (էջ 248) (B. S. N. էջ 180–191)։

ե) Յովհաննէս Տուեցին եւ Բեթղեհէմի եկեղեցիին պատկերները. — ԺԳ. դարուն Յովհաննէս եպս. Տուեցին ուխտի կ'երթայ Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքը եւ անոր կը պատահի հետեւեալ դէպքը զոր այսպէս կը պատմէ. «Երբ Ս. Բեթղեհէմ ուխտի գացի, տեսայ որ Ս. Առաքելոց պատկերները հոն՝ եկեղեցիին պարիսպին վրայ նկարուած եւ թշմամիները անարգութեան համար անոնց աչքերը փորած էին։ Շատ տրտմեցայ, աղօթեցի Ս. Առաքելոց և աղաչեցի որ ինձ յայտնեն թէ իրենց հաճո՞յ է ամէն տեղ իրենց պատկերը նկարել. երբ Երուսաղէմ դարձայ, նոյն գիշերը տեսիլքի մը մէջ տեսայ երկու փառաւոր մարդեր որ ինծի կուգային և ես անոնց առջևն ելլելով ըսի թէ ո՞վ էք դուք Աստուծոյ սուրբեր։ Ու անոնք ըսին, Պետրոս և Յովհաննէս, դուն էիր որ մեզի աղաչեցիր որպէսզի քրիստոնեաներուն՝ մեզ ձեւակերպելու կամ նկարելու մասին մեր կամքը յայտնենք. այդ բանը մեզի բնաւ հաճոյ չէ, ձանձրացած ենք և տեղ տեղ ալ կը յայտնենք, բայց մտիկ չեն ըներ մեզի» (Վար. էջ 201–4(*))։

Եկեղեցիին աւանդութիւնները աւարտելով այժմ պիտի գրենք բուն իսկ Բեթղեհէմի մէջ գտնուած աւանդութիւնները. իսկ Ս. Աստուածածնի մայր տաճարին հիմնարկութեան պատմութեան և Խաչակիրներու կողմէ կատարուած զարդարանքներուն, որմանկարներուն և մոզայիքներուն նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. (էջ 217–248)։

ը) Բառանից այրը. — Վանքէն դուրս, եկեղեցիին հարաւային կողմը կայ անկանոն ձեւով այր մը՝ ուրկէ կ'իջնեն 13 աստիճան սանդուղէ մը։ Արաբացիք զայն կը կոչեն Մաղարեղ ես սիրրի Մարիամ որ շատ հին սրբավայր մըն է, ամէն քրիստոնեայ հա-

(*) 1500–1524 եղնովիs ընդօրինակուած **Ոսկեփորիկ-հաւաքածոյի մը** յիշատակագրութենէն (Տե՛ս **Տաշեան ցուցակ**, էջ 485) կը հասկցուի թէ Բեթղեհէմի տաճարին մէջ կը գտնուին «**Ծ. սիւն մարմարեայ եւ մի սիւն խաչ նկարեալ ձեռամբ Լուսաւորչին Գրիգորի, զոր Լուսաւորչի սիւն կոչեն**»։

կանոնցի այնու Բդեշխն, արտոյէ որպէս և կամի։ Զոյս ամենայն դէպս գրեաց Թէոդորոս Պատրիարք երկար բանիւք առ Գլխաւորս աղգին 'ի Կոստանդինուպօլիս, և խընդրէր զտանել հնարս աղատութեան, եւ թափել զինքն 'ի բռնութենէ Կուսակալին և 'ի դաւանանութենէ Քաղաքապետին ('ի 17 Մարտի)։ Կուսակալն Սիդոնի Սիւլէյման Փաշա Մ—Ռեվիլ դրան տաճարին Ս. Յարութեան, խնդրէր յառաջագոյն զմեծ գումարս 'ի Հայոց, որում խոստացեալ էին տալ մինչև 40,000 դահեկան, և նորա չէր հաճեալ, այլ 'ի սմին ժամանակի գրեաց առ Թէոդորոս չպահանջել ինչ, զի ընելով զնեղութիւնս նորին 'ի գութ շարժեցաւ, և հրամայեաց յետս դարձուցանել զ10,000 դահեկանն, զոր առեալ էր Յոսպէի Մէհէմմէտ աղայն, որ և արար իսկ, և ինքն եւ 30,000 դահեկան և էառ փոխանակագիր հատուցանել Փոխանորդին 'ի Կոստանդինուպօլիս։ Գրեաց Թէոդորոս Պատրիարք առ Փոխանորդն առնուլ հրաման յԱրքայէ եւ առաքել տաղձ եւ զայլ կարեւոր պէտս եւ զգործաւորս վասն շինութեան Թերի մնացեալ տեղեացն Հայոց 'ի Ս. Յարութիւն, զի գործաւորքն որք եկեալ էին յառաջագոյն ընդ Ադամ Գալֆայի մեկնեցան, զորոց զծախսն հոգաց նա ինքն Թէոդորոս, և պատրաստեաց թաւիշ վարագոյրս կախել ըստ առաջնոյն 'ի սեփհական տեղիս Հայոց 'ի վերայ սեանց 'ի Ս. Յարութիւն, այլ Յոյնք ընդդէմ կացեալ արգելին զայն, և մնաց խափանեալ մինչեւ ցայսօր։ Խնդրեաց նաեւ զզատմութիւնս անցիցն որք անցին յաւուրս իւր 'ի Կոստանդինուպօլիս, զոր գրեալ էր անդ Փոխանորդ Պօղոս վարդապետն, որպէս եւ Դիոնէսիոս զանցս Երուսաղէմի. զի միաւորեալ զերկոսեանն տայէ տպագրել։ Սակայն գրուածք Պօղոսի չերեւին 'ի միջի, այլ միայն որ գրեցաւ յերուսաղէմ, յորմէ քաղեալ եդաք 'ի կարդ պատմութեանս, զոյգ ընդ նմին ունելով և զնամականիս Թէոդորոսի։ Սակայն առանձին գրեալ և համառօտեալ գրքոյկն վասն բաժանորդութեան Բեթղեհէմի բարձաւ 'ի միջոյ Աթոռոյն 'ի ձեռն անհաւատարիմ ոմանց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Աքսորումն Մուսայ Դատաւորին։ Ընդդիմութիւն Լատինաց վասն Ճանապարհի։ Պահանջ Քաղաքապետին։ Քնահեծ Կուսակալին եւ բռնութիւն նորին։ Բողոք Հայոց վասն այնր։

ՄՈՒՍԱՑ Էֆէնտի Խալիտի յորժամ կարգեցաւ Դատաւոր Երուսաղէմի փոխանակ Մուսանէրիի աքսորելոյ, յանձն եղեւ նմա կատարել զգործս Հայոց ըստ հրամանի Արքային. Նուրի Էֆէնտի 'ի դէպս ինչ վշտացեալ 'ի նմանէ, մի՝ զի միշտ 'ի կողմն Յունաց հակեալ էր, երկրորդ՝ ոչ կամեցաւ յայտնել նմա զդաղտնիս իւր, և այնպէս խէթ 'ի սրտի մեկնեցաւ յերուսաղէմէ։ Հայք 'ի Կոստանդինուպօլիս ամրաստան լինէին զնմանէ՝ թէ զոմանս 'ի գործոց անտես արար և զոմանս թերի եթող, և նախիսլ քաղաքին թշնամացեալ ընդ նմա՝ չարախօս լինէր 'ի Կոստանդինուպօլիս 'ի ձեռն Քիլիսցի Օսման Էֆէնտեայ ուրուք։ Պօղոս վարդապետ գրէր սնտի յերուսաղէմ չխարիլ 'ի բանս նորին և չանկանիլ տարապարտ 'ի տուդանս, զի անպատճառ ունէր չարժիլ աշտանակ նորա յերուսաղէմէ. բայց գրեանք մեծի Դենպետին և այլոց մեծամեծաց հաստատէին լինիլ նորա Փոխանորդ Դատաւորի նոր տարւոյ, և պահանջէին 'ի նմանէ 55,000 դահեկան փոխանակի առաքել իւր ծախս։ Ընթերցեալ Դատաւորին զայսոսիկ գրեանս, կոչեաց զոմանս 'ի Հայոց և ասէ՝ Իշխանութիւնս այս յոգուտ ձեր է՝ զի Դատաւորն գոլով անտեղեակ հանգամանաց գործոյն, եւ թելադրութեամբ թշնամեաց ունի նեղել զձեզ և տագնապել, զի ոչ կարէ ընդդէմ կալ բռնութեան Կուսակալին, ուստի պարտ է ձեզ յանձն առնուլ վճարել փոխանակագրով զդումարն զայն 'ի թագաւորեալ քաղաքին եւ ես ասա սակաւ առ սակաւ հաշուեցից զայն փոխարէն պարգեւաց եւ այլոց տրոց և գործոց՝ զորս ունին Դատաւորք 'ի ձէնջ. զի եթէ ոչ հաճիք՝ ազդ արարից Յունաց, զի նոքա յօժարութեամբ ընդունին, յայնժամ պարտաւորիմ գործել 'ի նպաստ նոցա և 'ի վնաս ձեզ։

Միաբանք Հայոց տարակուսեալ էին 'ի վերայ այսր խնդրոյ, զի գիր Փոխանորդին իբր ստոյգ յաղբերէ յուսադրէր զնոսա, գրեանք այլազգեաց յայլ ինն եղանակ չրջին զբանն։ Զկնի երկար խորհելոյ յանձն առին, եւ գրեցին առ Փոխանորդն ցուցանել զգիր Դատաւորին 'ի պատշաճաւոր տեղիս և 'ի պահանջել հարկին հատուցանել զգումարն. չեւ եւս առեալ սոցա զպատասխանիս գրեանց, եհաս յԵրուսաղէմ Նուիրակապետն հրովարտակաւ Արքայի ('ի 18 Յունիսի), յորում գրէր. Դատաւորն Երուսաղէմի Մուսայ Էֆէնտի, արտաքոյ կամաց եւ հաճութեան իմոյ գտեալ յանարժան գործս, և 'ի պատիժ նորին ազդարարութեամբ մեծի Դենպետին աքսորեսցի 'ի կղզին Սանքիոյ. լուեալ զայս Դատաւորին պատրաստեցաւ 'ի չու, և առաքեաց զհաւատարիմ իւր 'ի Ջանս Հայոց չհոգալ ինչ վասն իւր, զի գիտէր զպատճառ աքսորման իւրոյ որ էր Կուսակալն Դամասկոսի, զի ոչ կատարեաց զհրաման նորին, եւ ոչ գրեաց Իլամ որպէս պահանջէրն, որոյ վասն բարուրանս եղեալ ամբաստանեալ է զնա 'ի Դուռն, եւ Տէրութիւնն 'ի չնորհս նորին այնպէս արարեալ. ապա թէ ոչ պարտ էր բացայայտ գրել 'ի հրովարտակին զպատճառ աքսորմանն, որպէս նախորդի նորին. եւ թէ զկնի մեկնելոյ իւրոյ ունէր ահացուցանել Բդեշխն զՀայս, այլ չերկնչիլ երբէք 'ի նմանէ, զի ամենայն ինչ հրամանաւ Արքայի և գիտութեամբ մեծամեծաց եղեալ է. զի 'ի հասանիլ իմ 'ի տեղի աքսորանացս, ցուցից զամենայն ինչ Տէրութեան 'ի ձեռն մեծի Դենպետին և այլոց բարերարաց իմոց։ Սակայն Հայք միշտ առաջի աչաց ունէին զգիր Փոխանորդին, զթշնամութիւն Օսմանայ և Նուրեայ և այլոց եւ վարանէին 'ի միտս, զի 'ի հեռանալ սորա՝ թշնամիք ժամ գտեալ յարիցեն 'ի վերայ նոցա, որպէս ակներեւ տեսանէին. զի իւրաքանչիւր օր սկսաւ ըստ հաճոյից իւրոց խօսիլ և առնել, մանաւանդ Բաղաքապետն և Ցոյնք. զի եթէ իմացեալ էր նորա թէ 'ի կողմանէ Հայոց լեալ է աքսորումն իւր, գործէր բազում չարիս և վնասս։

Ապա կարգեաց 'ի տեղի իւր փոխանորդ զԴպրապետն Դատարանի, զի ոչ էին բարձեալ 'ի նմանէ զպատիւ Դատաւորութեան, զի էր նա այր յիմար և դիւարաղիս. սատանայն պատուիրեալ նմա և որդւոց նորին, զի մի երկուցեալ 'ի Բդեշխէն և կամ խարեալ 'ի կաշառաց այլոց, այլազգ ինն գործեսցեն, գրել կամ կնքել վասն գործոց Հայոց, զի մի յետոյ Թագաւորն հատեալ զգլուխս անձէտ արասցէ զինքեանս։

Եւ ապա մեկնեցաւ ընդ Ոստիկանին 'ի Ցոպպէ, որոյ ծախուց ձեռնտու եղեն Հայք ըստ խնդրանաց նորին, զնալ անտի 'ի տեղի աքսորման իւրոյ ('ի 21 Յունիսի)։ Եւ մինչդեռ Դատաւորն նստեալ էր 'ի Ցոպպէ՝ եհաս գիր 'ի Կուսակալէն, և ընդ նմա պատճէն հրովարտակին առ Բաղաքապետն՝ յորում փութացուցանէր տարագրել յԵրուսաղէմ զԴատաւորն, և եթէ պատճառանօք երկարեսցէ զժամանակն, կապանօք առաքեսցէ զնա 'ի տեղի իւր։ Եւ զկնի աւուրց ինչ իբրեւ տեսին Բաղաքապետն և զինակիր Կուսակալին թէ Դատաւորն նստեալ էր 'ի Ցոպպէ, յարմարեցին զայլ ինն բան, իբր 'ի դիմաց Կուսակալին, ըմբռնել զնա և կապանօք առաքել 'ի Դամասկոս, զի գիտացից ասէ թէ՝ յո՞ յուսացեալ է, բայց ոչ կարէին հանել զնա անտի բռնութեամբ. զի Ցոպպէ չէր ընդ իշխանութեամբ նոցին, եւ ետուն բերել զորդի դպրապետին, որ գնացեալ էր ընդ նմա, և իբրեւ սպառնացան նմա, արար պատասխանի՝ թէ նա վաղ մեկնեցաւ 'ի քաղաքէ անտի, և ես մնացի ընդունել զնոր Դատաւորն և ուղեկից լինիլ նմա, որպէս սովորութիւն է։

Իսկ Լատին կղերք ոչ հանդարտեալ վերստին յուզեցին զխռովութիւն 'ի Բեթղեհէմ վասն ճանապարհին (յ8 Յունիսի). զի պնդէին անցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց՝ նաեւ Ֆելլահ ժողովրդոց, մինչեւ անհանգիստ առնել զկրօնաւորս 'ի ժամերգութեան՝ հարկանել զնոսա, կործանել զգրքակալն և անցանել 'ի միջոյ նոցին։ Հայք յԵրուսաղէմ երիցս անգամ ազդ արարին Փոխանորդի նոցին զսպել զստահակսն, և չթողուլ սերմանել խռովութիւն 'ի մէջ երկուց ազգաց, այլ նոքա իբր յանգիտս, մերթ խոստանային գրել՝ զի մնասցէ այնպէս մինչեւ ցնոր անօրէնութիւն, և մերթ չկամէին ելանել արտաքս յերկիւղէ ժանտախտին, սակայն միաբանք նոցին 'ի Բեթղեհէմ ոչ դադարէին 'ի թշնամանելոյ զՀայս, սուտ և յար-

մարական կոչելով զհրովարտակն Արքայի. և 'ի սատականալ վիճմանց՝ Լատինք դիմեցին առ Դատաւորն, յանցաւոր ցուցեալ զՀայս իբրու թէ արգելուլ կամին զճանապարհ նոցին. ցուցանելով զհին հրովարտակս իւրեանց, և ապա յաւելին զմեծութիւնս կանթեղացն Հայոց յԱյրին, զսփռոցն անդ 'ի ժամ պատարագի, զհիւսիսային դուռն եւ զպատկերն 'ի վերայ նորա, եւ թէ յառաջագոյն չէր սփռոց, այժմ սիրեալ Հայոց եկեղեցւոյն՝ խափանեցին ըզճանապարհն, և այլ սոցին նման բանք. որոց Դատաւորն արար պատասխանի՝ չունիլ իրաւունս և ոչ միոյ իւիք 'ի նոցանէ՝ զի հրովարտակ նոցին էր հին, այլ վասն ճանապարհին խոստացաւ նոցա կոչել զՀայս և տնօրինել, զի ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ. ապա կոչեալ զՀայս մեղադիր լինէր նոցա, թէ ընդէ՞ր ոչ ազդ արարին ինքեան զհակառակութիւնս Լատինաց, ապա յորդորէր ըզնոսա սիրով վճարել զգործն, զի Բդեշխն ատելութեամբ էր ընդ Հայս. զի մի 'ի բողոքել Լատինաց քաջալերութիւն գտեալ արկցէ զնոսա 'ի տուգանս, այժմ պարտ է ասէր խօսիլ միայն վասն ճանապարհին, մինչեւ դարձցի Բդեշխն 'ի տեղի իւր, և ապա զամենայն ինչ յօգուտ ձեր կարգաւորեցից։

Ակամայ կամաք խոնարհեցան Հայք ընդ այս՝ յահէ Բդեշխին, զի մի բազմասցին թշնամիք։ Լատինք յուսացեալ էին 'ի բանս Դատաւորին, եւ նա ակն ունէր իւրոց իրաւանց. և այսպէս յերերիլ գործոյն՝ տարագրեցաւ Դատաւորն, որպէս գրեցաք. Լատինք վերստին յուղեցին զկռիւն 'ի Բեթղեհէմ, զինեալ զՄէլլահ ժողովուրդս բարձին և 'ի բաց ընկեցին զսփռոցն՝ և հարեալ զմիաբանս անցին 'ի միջոյ նոցա. լուեալ զայս միաբանացն Հայոց յԵրուսաղէմ, ազդ արարին Լատինաց. բայց նոքա բարկացեալ չեռուն պատասխանի, ուստի հարկ եղեւ դիմել առ Քաղաքապետն, զի մի հեղցի արիւն և կամ միաս ինչ գործեսցի՝ եւ բացցի դուռն տուգանաց։ Քաղաքապետն կամեցաւ պատժել զմիաբանս Լատինաց Բեթղեհէմի, այլ Հայք ոչ եռուն թոյլ. զի միաս մեծ լինէր այն ինքեանց 'ի կողմանէ Բդեշխին, այլ պատուիրել գլխաւորաց նոցին յԵրուսաղէմ։ Եւ եղեւ 'ի խօսիլ նորա ընդ Թարգմանի նո-

ցին՝ խոստանայ բերել զհրովարտակս. այլ նա խորհէր կոչել 'ի միասին զերկու ազգսն և խաղաղութեամբ վճարել զիրսն։ Սակայն անդէն անդ եհաս գուժկան 'ի Բեթղեհէմէ՝ թէ Լատինք սատակացուցին զվէճն և անարգեցին զԹագաւորն եւ զԴատաւորն, և դառն լուտանօք վարեցան ընդ Հայս։ Լուեալ Քաղաքապետին զայսոսիկ՝ գրեաց առ քրիստոնեայս և առ այլազգիս Բեթղեհէմի չիշխել ումեք նեղել զՀայս՝ և բառնալ ինչ յեկեղեցւոյ անտի թելադրութեամբ այլոց, որք կարգաւորեալ են հրամանաւ Արքայի, եւ անհնազանդից սպառնալիք պատժոյ։ Իբրեւ եկն Թարգմանն Լատինաց, յանդիմանեաց զնա վասն անկարգութեանցն, և սպառնայր գրել և ծանուցանել Բդեշխին զյանդգնութիւնս և զանհնազանդութիւնս նոցա, և կամ մնալ խնդրոյն 'ի վերայ առաջի պայմանին, մինչեւ ինքնին երթիցէ անդ և կարգաւորեսցէ։ Զի յորժամ եկեղեցին այն գիտութեամբ ամենեցուն և ձեր յանձն եղեւ Հայոց, ընդէ՞ր ոչ ասացիք ինչ. եւ ոչ շատացեալ ճանապարհին սահմանելոյ, այլ իմն ճանապարհ կամիք տրուել այժմ ըստ կամաց ձերոց և անցանել անտի Ֆէլլահ ժողովրդովք, և թէ որո՞վ իշխանութեամբ գործէք զայդ խօսելով զայլ և այլ բանս ընդդէմ Տէրութեան։ Եւ Թարգմանն չկարացեալ ասել ինչ՝ մատոյց նմա զերկուս հրովարտակս. առաջին գրեալ 'ի Թուին Հիմրէթի ١١٠١ յորում պատմէ զվէճս Ցունաց ընդ Լատինաց վասն կանթեղաց և պատկերաց Բեթղեհէմի եկեղեցւոյն, և սուտ հանէ զդաշնագիրն Օմարայ, որ 'ի ձեռս Ցունաց։ Եւ երկրորդն ١٢٢٠ յորում պատուիրէ չլինել ումեք ձեռնամուխ տեղեաց Լատինաց։ Որոց պատասխանին արարին Հայք չլինիլ 'ի նոսա յիշատակութիւն ճանապարհին այնորիկ. և մին հրովարտակաց հին, յորում ժամանակի եկեղեցին Բեթղեհէմի էր 'ի ձեռս Լատինաց, յորոց առին Ցոյնք, և 'ի վերջոյ ըստ հրովարտակին Սէլիմայ բաժանորդ եղեն ընդ նոսա Հայք, այլ մեք ասեն չեմք քննող հրովարտակաց, և ոչ ունիմք վէճս ընդ ումեք, միայն Լատինք պատճառանօք մի հակառակեսցին մեզ։ Քաղաքապետն յօժար էր յառաջագոյն գնալ 'ի Բեթղեհէմ, այլ 'ի վերջոյ մնալ ասէր մինչ ցգալուստ նոր Դատաւորի. զի օրինօք վճա-

ռեսցի ամենայն ինչ, և մեկնեցան իւրաքանչիւր 'ի տեղի իւր։

Ապա Բաղաքապետն առաքեաց 'ի Բեթղեհէմ զԳանձապետ իւր զՄուսդաֆա. գնացին և 'ի Հայոց Դիոնէսիոս և Եւդոկիացի Կարապետ Վարդապետք, եւ 'ի Լատինաց մեծ Տեսուչն եւ այլք։ Եւ ժողովեալ յեկեղեցին Եհարց Գանձապետն ցԼատինս զպատճառ խռովութեան իւրեանց, և նոքա ցուցին զպատկերն 'ի վերայ դրան նոցին 'ի ներքուստ, և զճանապարհն 'ի միջոյ եկեղեցւոյն. Գանձապետն ցուցանէր չունել իրաւունս Լատինաց. զի Հայք որոշեալ էին զճանապարհ ժողովրդոց և եկեղեցականաց նոցին չանցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց, եւ պատուիրէր մնալ այնպէս մինչ ցգալուստ նոր Դատաւորի, այլ Լատինք պնդէին՝ հասարակութեամբ անցանել 'ի միջոյ նոցին, թէեւ իցեն 'ի Պատարագի, եւ բռնադատէին բառնալ զսփռոցն զի յատկացի ճանապարհն, և խնդրէին գիր 'ի Բաղաքապետէն որ ինքն արգելեալ իցէ զԼատինս 'ի տեղւոջէ յայնմանէ. զի պարտաւոր ցուցնեն զնա իբր խափանիչ օրինաց նոցին, այլ Գանձապետն ոչ ընկալաւ զրանս նոցա. զի ոչ էր եկեալ սահմանել և գրել ինչ, այլ տեսանել եւ պատուիրել դադարիլ 'ի հակառակութենէ։

Ցետ այնորիկ իջին յԱյրն, և Լատինք խօսէին զանծութենէ եւ զցածութենէ կանթեղացն եւ զսփռոցէն Հայոց, և Լուսարարն Ցունաց ասէ՝ թէ եկեղեցին Հայոց ունի սովորութիւն սփռել 'ի ժամ պատարագի և ապա բառնալ, նոյնպէս և Գանձապետն ասէր՝ չունել իրաւունս խօսելոյ 'ի վերայ պաշտամանց իւրաքանչիւր ազգի։ Սակայն Լատինք լռեցին 'ի վերայ այսոցիկ իրաց և չունէին ինչ ասել, և վասն ճանապարհին ոչ երբէք յանձն առին լռել, և ոչ անսային բանից Գանձապետին, եւ հնազանդիլ կարգադրութեան Հայոց, այլ անարգել անցանել անտի ժողովրդոց իւրեանց. զայս ասացեալ մտին 'ի վանս իւրեանց։ Իսկ Գանձապետն ելեալ արտաքս ժողովեաց զգլխաւորս գիւղին և ընթերցաւ առաջի նոցա զհրաման Բաղաքապետին, և նոցա հնազանդեալ խոստացան չանցանել 'ի վերայ սփռոցացն Հայոց թէ և Լատինք բռնի ձգեսցեն զինքեանս։ Եւ ապա կոչեցին Լատինք առանձին զԳանձապետն և տարեալ յեկեղեցին տան նմա թուել զկանթեղս և զպատկերս և զայլ իրս Հայոց, և նորա եկեալ պատմէ վարդապետաց զոր արարին Լատինք, բայց զոր ինչ խօսեալ էին 'ի միջի իւրեանց, զայն ոչ եհան 'ի վեր։ Թէպէտ և Հայք մեղադրեցին զնա. թէ չէր օրէն ինքնաբերաբար և առանց գիտութեան նոցին, միայն բանիւ Լատինաց թուել զարդս եկեղեցւոյն Հայոց, և ապա դարձ արարին յԵրուսաղէմ, (յՁ Ցուլիսի)։ Լատինք յամառեալ 'ի բանս իւրեանց ոչ անսացին բանից Բաղաքապետին և փոխանակի Դատաւորին, և դարձեալ՝ ըստ առաջնոյն սկսան յանդգնութեամբ վարիլ ընդ Հայս, խթել զկարգաւորս, կործանել զզրդակալն և անցանել 'ի միջոյ նոցա, և 'ի տաճարին Ս. Ցարութեան աւել ածել 'ի սեփհական տեղիս Հայոց։

Բաղաքապետն խնդրէր գրամ 'ի Հայոց իբր օգնութիւն զի պատուիրեալ էր նմա Կուսակալն պատրաստել տիկս զի պատուիրեալ էր նմա Կուսակալն պատրաստել տիկս ջրոյ վասն ճանապարհի ուխտագնացութեան։ Եւ 'ի բացակեալն Հայոց՝ 'ի մէջ բերէր զխռովութիւնն Բեթղեհէմի՝ թէ որպէս դադարեցոյց զաղմուկս Ֆէլլահաց, եւ աղատեաց զինքեանս 'ի տուգանաց, և իբրեւ այնու ոչ կարաց շահիլ ինչ, գրեաց գիր յորդորական առ Թէոդորոս Պատրիարք, և յուսադրէր զնա չհոգալ ինչ վասն Լատինաց, եւ թէ՝ յանդիմանեալ իցէ զԹարգման նոցին, եւ պատուիրեալ չյուսալ զխռովութիւն, և թէ՝ չիք խոր 'ի մէջ մեր և ձեր, զի որպէս հոգամ զհանգիստն ձեր, պարտիք հոգալ և դուք զմերն և այլ սոցին նման բանք։ Եւ իբրեւ ոչ կարաց որով և իցէ իւիք թակարդել զնոսա, առաքեաց զԳանձապետն և խնդրէր դոնէ առ նուազն տալ 10,000 դահեկան, և այն իբր բարութիւն մեծ։ Տեսեալ Հայոց թէ ոչ կարեն զերի

ցին առ նա, և 'ի կարդս բանից յառաջ բերեալ զՀայս ասէր, թէ զի՞նչ գործեն դոքա յԵրուսաղէմ, և յո՞ յուսացեալ են, զի երկիցս գրեաց Կուսակալն քակել և բառնալ զիրսն, զոր սահմանեցին, նոքա անսասա դտեալ հրամանին՝ յուսացան 'ի Դատաւորն Մուսայ, որ դատապարտեալ Հոգաւ յաքսորս, այլ 'ի մտանել իմում յԵրուսաղէմ՝ քակեալ աւերեցից զայն ամենայն և կատարեցից զՀրաման տեառն իմոյ։ Եւ նոցա զարհուրեալ 'ի բանից նորա՝ ոչ կարացին տալ պատասխանի որպէս արժան էր, միայն խոստացան ծանուցանել զայն ամենայն Ծերունեացն Հայոց. և Իպրահիմ յանձն արար նոցա լինել միջնորդ եւ անօրինել ինչ։ Եւ նոցա դարձ արարեալ անտի պատմեցին Պատրիարքին և Ծերունեաց զծանրացասում լինելն Բդեշխին, և զսպառնալիս փոխանակի նորին, եւ ստիպէին զնոսա գրել աղաչանս և առաքել զմն 'ի վարդապետաց առ 'ի հաշտ առնել զերեսս նորա։ Սակայն Հայք առ ոչ ինչ հոգարեցան զսպառնալիս նորա, զի ամենայն ինչ հրամանաւ Արքայի, հրապարակաւ և գիտութեամբ ամենեցուն եղեալ էր, նմին իրի անտես արարին զբանս նոցա, զի եթէ դուք այլազգիդ ասեն՝ ոչ կամիք ասել զճշմարտութիւնն, մեք ոչ երբէք երկնչիմք, այլ զամենայն գրեալ ծանուցանեմք Արքայի և պաշտօնէից նորին։ Տեսեալ այլազգեաց զՀաստատուն միտս Հայոց, երկեան, դուցէ եւ ինքեանց պատահեսցի ինչ՝ որոյ վասն սկսան յորդորել զՀայս գրել առ փոխանակ Բդեշխին և շահիլ զմիտս նորա սնոտիւք, զի ոչ կարէ ասեն չիւղ ինչ խաղտեալ յեղելոց։ Ապա 'ի սաղրելոյ Հայոց ինքեանք գրեցին առ նա, թէ զբանս ձեր յայտնեցաք Ծերունեաց, ամենայն ինչ հրամանաւ Արքայի լեալ ասեն, այժմ որպէս վայելէ մեծութեան ձերում այնպէս արարէք, և թէ՝ սոքա հպատակ են Օսմանեան Պետութեան, 'ի տուրս և 'ի հարկս առ Բդեշխն ոչ երբէք կասեալ յետս, և այլ սոցին նման բանք. գրեաց և ինքն Թէոդորոս Պատրիարք գիր ողջունի, և 'ի վերջոյ յաւել ասել՝ գլխաւորք քաղաքիս գրեցին առ ձեզ վասն խնդրոյն մերոյ, յուսամք վայելել զարի պարգևս բարեկամութեան ձերոյ։ Առաքեցին զայսոսիկ գրեանս, այլ զպատասխանիսն ոչ ընկալան։ Թէոդորոս Պատրիարք յառաջագոյն գրեալ էր առ

Փոխանորդ Պօղոս վարդապետն և առ իշխանաւորս ազգին զբռնութենէ և զանհանգիստ նեղութենէ և զծանր հարկապահանջութենէ Կուսակալին Դամասկոսի, և զնենգամիտ չարութենէ Քաղաքապետին Երուսաղէմի հանդամանօք, որպէս գրեցաք, և նոքա ծանուցեալ էին 'ի պատշաճաւոր տեղիս, և պաշտօնեայք Դրան իսկապէս գիտէին թէ քաղցր ակնարկութեամբ հայի Արքայ 'ի վերայ Հայոց։ Եւ 'ի ժողովի կոչեալ զգործակատար Կուսակալին պատուիրեցին նմա գրել առ տէր իւր, դադարիլ յանպատեհ գործոց, որ ընդդէմ է իրաւանց և կամաց Արքայի, և թէ հաստատութիւն Հայոց կացեալ յոտին պատրաստ են մատուցանել առ Արքայ գիր աղաչանաց, այլ պաշտօնեայք Տէրութեան յուսադրեալ դադարեցուցին զնոսա, եւ թէ փութանակի առաքել զտուսարն, զոր ինչ առեալ է 'ի Հայոց յերկուց ամաց հետէ, զի խնդրէ Արքայ տեսանել զայն, և թէ չընեղել զՀայս Երուսաղէմի։ Զայս ամենայն ականատես գրէ Պօղոս վարդապետ առ Թէոդորոս Պատրիարք, և ինքն եւս խնդրեաց զտուսարն զոր ինչ առեալ էին Կուսակալքն Դամասկոսի և Քաղաքապետն Երուսաղէմի և այլք, թէ կանոնեալ և թէ անկանոն, նոյնպէս եւ զտուսար նախորդ Բդեշխից, զի սահմանեսցի միջասահման ինչ։ Եւ նորա պատրաստեալ զայնս առաքեաց առ նա ('ի 23 Յուլիսի)։

Իսկ փոխանակ Բդեշխին նստեալ 'ի Նային Ժողովէր ընդ սահմանեալ հարկս, և 'ի պահանջել նորա զ-ամենի և զայլ աւելորդ իրս, ընդդէմ կացին նմա լեռնականք Սամարիոյ գինուք, և սկսան պատերազմիլ ընդ նմա։

ԳԼՈՒԽ Խ.

Գալուստ Նոր Դատաւորի։ Վէճ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Երկից Ժողով 'ի դատարանի։ Վրդովումն Լատինաց։ Փոխանակ Բդեշխին Իշխանի՞ աղա։ Բռնութիւն Լատինաց։

ԵՀԱՍ Նոր Դատաւորն Երուսաղէմի Մուֆթի Զատէ Մուսդաֆա Բազի Էտին Էֆէնտի 'ի Յոպպէ, ծանօթ Բիշմիշեան Միքայէլ Ամիրայի, որոյ պատուիրեալ էր սիրով վարել ընդ Հայս։ Սա 'ի սկզբան ոչ կամեցաւ գնալ՝ այլ 'ի տեղի իւր փոխանորդ կարգել խնդրէր զնուրի Էֆէնտի, և յետոյ գրեթէ բռնի առաքեցին հրամանաւ Արքայի ըստ կարգի իշխանութեան իւրոյ։

Քաղաքապետն կոչեալ զորդի Դպրապետի դատարանին, որ պատրաստ էր գնալ 'ի Յոպպէ յընդունելութիւն Դատաւորին, բանարկութեամբ պատուիրէ նմա ասել ցԴատաւորն՝ հաւատարիմ մնալ Բդեշխին, եւ համախոհ իւր։ և կեալ անդորրութեամբ և մի խոտորիլ զհետ չաւղաց Մուսայ Դատաւորին։ պահեալ նմա առաջին որս ընդ խնդիր Բեթղեհէմի, որ 'ի մէջ Հայոց եւ Լատինաց, այլովքն հանդերձ։

Թէպէտ գրեալէր առ նա, այլ պատուիրէր բերանացի եւս պատմել նմա։ Իսկ այրն որ ուսաւ զգաղտնիս նորա, եկեալ առանձին 'ի վանս Հայոց պատմեաց Մերուենեաց զբանս նորա եւ լուեալ զարժանաւոր պատասխանիս խաղաղութեամբ մեկնեցաւ անտի։

Եւ հասեալ 'ի Յոպպէ՝ գրեաց առ Թէոդորոս Պատրիարք թէ նախ քան զխօսիլն իւր, Դատաւորն զգուշացուցեալէ զինքն չխօսիլ ինչ վասն խնդրոյ Հայոց։ զի լուեալ էր զամենայն ինչ 'ի Նուրի Էֆէնտեայ, և թէ Արքայն և մեծամեծք Դրան խնամով վարին ընդ Հայս։ Ապա եղեալ անտի Դատաւորն եմուտ յԵրուսաղէմ հանդիսիւ ըստ սովորութեան ժամանակին ('ի 22 Յուլիսի)։

Զեւ եւս մաքրեալ զխնդիրն Բեթղեհէմի՝ Լատինք յարուցին զայլ ինն վէճ տարօրինակ 'ի Ս. Յարութիւն։ զի

սկսան աւել ածել 'ի ներքոյ սեան, յորոյ վերայ է խաչելութեան մեծ պատկերն Հայոց՝ հանդէպ Գերեզմանին։ 'ի հարցանել միաբանաց զպատճառն՝ ցուցանեն զհրաման մեծաւորի իւրեանց։ և իրրեւ ոչ կարացին արդելուլ ըստ նոսա անտի՝ դնացին մաքրել զդուռն Գերեզմանին եւ զվարագոյրս նոցա, ընդ որ ցատուցեալ Լատինաց՝ ածին սանդուխս և մաքրեցին զսիւնն 'ի վերուստ մինչ 'ի վայր, եւ յընդդիմանալն Հայոց՝ սպառնացան նոցա բրօք, բայց նոքա չունէին զայնպիսի հրաման 'ի մեծաւորէն իւրեանց, և խոնարհեցին զգլուխս եւ մանչեալ մեկնեցան 'ի տեղւոջէ անտի, Հայք համբերութեամբ տանէին այսոցիկ, զի աւարտեսցի գործ Բեթղեհէմի, բայց և այնպէս աղէ արարին Դատաւորին առանձին, և նա քաջալերէր զնոսա չերկնչիլ, այլ համբերել սակաւ ինչ։ և 'ի գիշերին յայնմիկ դարձեալ գնացին առ նա Դիոնէսիոս եւ Կարապետ վարդապետք, կարգաւ պատմել զխնդիրն եւ խելամուտ առնել զնա, և չխարիլ 'ի բանս Քաղաքապետին։ Եւ նա յորդորեաց զնոսա չհոգալ, զի պատուէր ունիմ ասէր 'ի մեծամեծաց Տէրութեան տալ հաստատութիւն գործոց Նուրեայ և հոգամ զգործս ձեր, բայց ծածկարար աղէ արարէք ինձ։ Լատինք ոչ դադարէին 'ի յանդգնութենէ իւրեանց 'ի Բեթղեհէմ և 'ի Ս. Յարութիւն, և խորհրդով Քաղաքապետին բոլորք բարձին զՀայոց վասն Խաչելութեան պատկերին, և նա իր յանդգնաս առաքեաց զԳանձապետ իւր առ Հայս զանց առնել զխնդրովն՝ ցուցանելով զրողոքն Լատինաց, և թէ նոքա ոչ են իրրեւ զՀայս լսող բանից, այլ բիրտ եւ յանդուգն։ ուստի պարտ է դադարիլ 'ի խնդրոյն մինչեւ դասնել զհնարն։ Հայք արարին նմա պատասխանի՝ թէ սիւնն այն սեփհական է Հայոց, որպէս յայտ առնեն պատկերն և կանթեղքն, նոյնպէս մաքրել և սրբելն, Լատինք երբէք չունին իրաւունս ձեռն մխել 'ի նա, զի նոքա դիտմամբ յարուցին զայս խնդիր և խառնեցին ընդ խնդրոյն Բեթղեհէմի, զի 'ի դատաստանի գոնէ զմին չահեսցին, բայց և այս յայտնի լիցի։ Լատինք ոչ կարէին յանչսախս ձկտիլ, եթէ ոչ էին լեալ նոցա զօրավիդ դլխաւորք քաղաքիս։ Եւ 'ի պատմելն զայսոսիկ պատգամաւորին՝ նա ասէ՝ Լատինք ասեն՝ թէ յայնժամ խարեաց զմեզ Մու-

սոյ Դատաւորն, այլ այժմ ոչ թողումք. և ապա բողոք բարձին առ Քաղաքապետն՝ չմաքրել զսիւնն ոչ Հայք եւ ոչ Լատինք, եւ խնդրեաց բերել 'ի վաղիւ զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ և դատ վարել ընդ Լատինաց։ Հայք ընդդէմ կացին բանից Քաղաքապետին, զի չէր օրէն յայնժամ թողուլ զԴատաւորն, և դատիլ առաջի քաղաքական իշխանութեան. դուցէ զայրացեալ Դատաւորին ամրաստան լիցի առ Տէրութիւնն, և լինիցի վնաս երկուց կողմանց։ Եւ 'ի գիշերին յայնմիկ Հայք գնացեալ պատմեցին Դատաւորին զպատգամս Քաղաքապետին։ Եւ 'ի վաղիւ անդ կազմեցաւ ժողով մեծ, ուր էր և Քաղաքապետն. կոչեցան անդ Հայք և Լատինք՝ 'ի գիրս զոր մատուցին Լատինք՝ ոչ դատաւ յիշատակութիւն ինչ վասն սեանն, այլ միայն գմբեթն եւ կամարն մեծ. իսկ 'ի գիրս Հայոց յիշատակէր սիւնն, պատկերն և կանթեղն՝ այլոքն հանդերձ, որով պարտաւորեցան Լատինք (յ30 Ցուլիսի)։ Բայց 'ի սադրելոյ Քաղաքապետին ոչ իսպառ որոշեցաւ խնդիրն, մինչեւ վերստին կազմեցաւ ժողով (յ3 Օգոստոսի) յորում սահմանեցաւ սիւնն Ս. Յարութեան և ճանապարհ եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլ իրաւունք Հայոց. զայրացեալ ընդ այս Լատինաց սկսան խօսիլ բանս անպատեհս զժողովոյն, եւ սպառնային նոցա չարիս 'ի Թագաւորէն և 'ի Կուսակալէն, և մեկնեցան անտի։ Եւ ժողովն պատուիրեաց երկուց վանաց յարգել զվճիռ ժողովոյն և ըստ այնմ վարիլ։ Հայք առին զերկուս Հէօճմէթս 'ի մի օրինակ ստորագրութեամբ այլազգեաց. բայց Դատաւորն կտրեցաւ 'ի Քաղաքապետէն և 'ի Լատինաց, զի մի չարախօս լիցին առ Կուսակալն և առ Դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ ապա առին 'ի նմանէ զայլ իմն գիր, զի մի Լատինք ժողովրդովք իւրեանց անցանիցեն 'ի վերայ սրբոցացն Հայոց, և ըստ մտաց նորին գիր մի եւս 'ի Քաղաքապետէն։

Սակայն Լատինք անսասան դտեալ հրամանին վերատին մաքրեցին զսիւնն. Հայք բողոք բարձեալ առ Քաղաքապետն եւ առ Դատաւորն, բացայայտ ասէին լինել նոցա համախոհ Լատինաց՝ եւ դատաստանք նոցին առ երեսս. բողոքել առ Տէրութիւնն և յայտ յանդիման կացուցանել

զթիւրելն նոցա զիրաւունն, ապա թէ ոչ՝ սատել Լատինաց չմերձենալ 'ի սիւնն յայն, եւ հրապարակաւ ընթեռնուլ զգրեանս 'ի Բեթղեհէմ, զոր ետուն։ Եւ 'ի պատուիրել նոցա, Լատինք լռեցին առ ժամն, եւ ապա գնացեալ առ Քաղաքապետն աղաչէին զնա չգնալ 'ի Բեթղեհէմ եւ ոչ արգելուլ զսիւնն. այլ նորա անկարելի վարկուցեալ զիրսն արձակէ զնոսա, իսկ Հայք բազմութեամբ այլազգեաց գնացին 'ի Բեթղեհէմ, կոչեցին եւ զԼատինս, բայց նոքա ոչ երեւեցան 'ի միջի. և նոքա ընթերցան զգրեանս առաջի մեծի և փոքրու, եւ պատուիրեցին նոցա առնել ըստ հրամանին. թէպէտ նոքա հնազանդէին, այլ զոր ինչ ուսուցանէին Լատինք, զայն առնէին. զի խորհրդով Քաղաքապետին և գիտութեամբ Բդեշխին գործէին։ Եւ ապա դարձան անտի յԵրուսաղէմ։

Սակայն Լատինք յաղդմանէ Քաղաքապետին գրեցին գիր բողոքոյ առ Դատաւորն, և առաքեցին զայն 'ի ձեռն Թարգմանին և Խոստովանահօր, որ էր 'ի Նմին պահու 'ի տուն Նախիպին և Միւֆթեայ, և մատուցեալ զգիրն ասեն. եթէ էիր 'ի դատարանն, կրօնաւորք բազմութեամբ ունէին գալ առ քեզ, այլ ըստ որում հրաւիրեալ 'ի տուն այլոց, զմեզ միայն առաքեցին, ընթերցիր զսա և բարւոք 'ի մտի առ. թէպէտ Դատաւորն սասանեալ արար նոցա պատասխանի, բայց երկիւղն սակաւ առ սակաւ տիրէր սրտի նորա, և նոցա նշմարեալ՝ առաւել վիրաւորեցին զնա բանիւք և մեկնեցան։ Ցանուտարք տեսեալ զնա 'ի տխրութեան, թէպէտ եւ սփոփեցին և հանգուցին զնա անդ, բայց աննինջ եւ անհանգիստ, և 'ի ժամու աղօթից ելեալ անտի գնաց 'ի դատարան, և կոչեալ զԴիոնէսիոս վարդապետ պատմէ նմա զամենայն անցս գիշերին, եւ ցուցանէ զգիր Լատինաց, պարսաւելով զանհեթեթ բանս և զչարժմունս նոցա. եւ 'ի կարգս բանից ասէ՝ զի՞ փոյթ էր ինձ գալ յայս քաղաք եւ վասն Հայոցդ անկանիլ յորդայթ. դուք ոչ կարէք հոգալ զամենայն պէտս իմ, որով զօրացեալ գործեցից զմեծամեծս յօգուտս ձեզ և ոչ 'ի ձեռաց Լատինաց ազատել, ուստի հարկ լինի դառնալ 'ի կղզին Լատինաց՝ զի մի վտանգեցայց։ Իսկ վարդապետն մեղմով իմն առաջի եդ նմա զհրամարտակ Արքային, զկատարումն

գործոց 'ի ձեռն պաշտօնէից նորին, գրեալ Իլամ և Հէօճէթ, որով տեղեկացան Սրբոյ և պաշտօնեայք նորին ամենայն հանդամանաց գործոյն, և 'ի վերջոյ 'ի հաստատութիւն նոցին՝ զդումարելն ժողով նորին ինքեան և զտալն զերկուս Հէօճէթս, որոց մին առաքեցաւ 'ի Կոստանդինուպոլիս միւսանդամ տեսանել Տէրութեան, դարձեալ գիր, եւ համաձայն նմին հրաման Քաղաքապետին վասն Բեթղեհէմի. և զնամակն զոր գրեաց առ Դենպետան. այսոքիկ չե՞ն բաւական մեզ ասէ մարտնչիլ ընդ քեզ յատենի Տէրութեան, դա՛րձ յոր կողմն եւ կամիս։ Դատաւորն փոխեալ զեղանակ բանից իւրոց ասէ. ընդ խաղս ասացի, սակայն և զիս մի թողուք անմխիթար։

Լատինք չոքան առ Քաղաքապետն, ուր ժողովեալ էին Դատաւորն և գլխաւորք քաղաքին, և նախատական բանիւք անարգեցին զնոսա, առաւել յանդգնելով ընդդէմ Քաղաքապետին եւ յաւելին ասել՝ միւսանդամ կաղմեցէք ժողով 'ի դատապարտութիւն Լատինաց։ Զի դաւադրութեամբ Քաղաքապետին որսացեալ էին զոմանս յայլազգեաց, և խոստացեալ ցրել զառաջին վճիռն։ Սակայն Դատաւորն խորագէտ ծանուցեալ զխորհուրդս նոցա, կերպիւ իւիք դարձոյց զնոսա յետս, և անարդութիւն համարեալ ինքեանց գրեալ ծանուցին Կուսակալին զյանդգնութիւնս Լատինաց։ Այլ նոքա բացեալ զդուռն տաճարին Ս. Յարութեան հանին արտաքս զվիրանս իւրեանց, եւ կնքեցին զդուռն եկեղեցւոյն, և Թողին անդ միայն զերկուս սպասաւորս, և համբաւեցին 'ի քաղաքին թէ Լատինք մեկնին յերուսաղեմէ, զի Հայք տիրեսցեն տեղեաց նոցին, 'ի բերկրութիւն այլազգի կուսակցաց նոցին, և պատրաստ լիցին տալ պատասխանի Տէրութեան և Դեսպանին։ Բայց ոչ ոք հարցանէր 'ի նոցանէ թէ զինչ գործէք։

Եւ յերեկոյին 'ի բանալ Հայոց զդուռն Տաճարին, մուծին 'ի Ներքս զերկուս կարգաւորս իբր պահապան կնքոյ դրանն։ Եւ 'ի նմին երեկոյի ածին յերուսաղէմ զրազմաթիւ լեռնականս հարեալ 'ի շղթայս, զորս առաքեալ էր փոխանակ Բդեշխին Իպրահիմ 'ի կողմանց Սամարիոյ 'ի յաղթանակել իւրում 'ի պատերազմին։

Դատաւորն և այլազգիք մինչ ժողովեալ էին յապարանս

Քաղաքապետին յընթրիս, Թարգմանն Լատինաց դիմեաց անդ և սկսաւ կապել ընդ նոսա, սպառնացեալ զմեծամեծս, եդեալ 'ի մոլ զերկուս իրս, կամ բարկացեալ նոցա յարուցեն կռիւ, և կամ ջնջեսցեն զառաջին վճիռն, բայց նոքա լուռ և եթ կային, և նորա առաւել զայրացեալ եւ անոի և գնաց, և 'ի ձեռն երկրորդին իւրոյ առաքեաց զվիականս Լատին վանաց, և նորա ընկեցեալ առաջի Դատաւորին ասէ, ծերունիք Լատինաց առաքեցին զնոսա առ քեզ, զի ինքեանք ունին մեկնիլ ասոլ 'ի վաղիւ, զի չէ օրէն այսուհետեւ մնալ նոցա ասա, եւ եթէ էիք 'ի Դատարանն, ամենեքեան ունկին դալ առ քեզ. Դատաւորն ոչ ընկալեալ զնոսա, ասէր՝ տալ ցՔաղաքապետն, զի 'ի տուն նորա էր, մինթէ չեղե՞ւ ժամանակ ասէ դատանել զիս 'ի տեղւոջէր, մինթէ չեղե՞ւ ամանակ ասէ դատանել զիս 'ի տեղւոջ խմում, այլ լրտեսեալ զճանապարհս իմ յարուցանէք վէճս 'ի տուն այլոց, զի անպատճառ գիտութեամբ եւ զօրութեամբ հրաւիրողաց գործին այսոքիկ։ Ընդոստուցեալ Քաղաքապետին ասէ՝ քաւ լիցի տէր իմ, զի կրօնաւորք սոցա յամառ և կամակոր են եւ գործեն զայսպիսի անարժանս. իբրեւ եառս Թարգմանն թէ չմերձենայ Դատաւորն՝ եթող անդ զվիականս և մեկնեցաւ, և նորա առաքեալ ընկեցին 'ի տուն նորա։

Եւ 'ի վաղիւ անդ յաւելին Լատինք զյանդգնութիւնս իւրեանց անպատեհ բանիւք, եթէ Հայք և Յոյնք ասեն՝ եառուն աքսորել զմէն մի Դատաւորս 'ի պատճառս կռուոյ իւրեանց, այլ Լատինք ոչ միայն զԴատաւորն, այլ և ըզՄիւֆթին, զնախիպն և զայլս բազումս տացեն տարագրել ասոլ։ Զհանդուրժեալ այլ եւս այլազգեաց այսպիսի մեծարանութեանց, գրեցին զերկուս հանրագիրս յայտնի պատմելով 'ի նմա զյոյզս եւ զխռովութիւնս Լատին կրօնաւորաց, զմեծարանութիւնս նոցին և զսպառնալիս աքսորանաց, զխնդիր Բեթղեհէմի և Ս. Յարութեան, այլովսորանաց, զխնդիր Բեթղեհէմի և Ս. Յարութեան, այլովքքն հանդերձ, և եառուն կնքել ամենայն գլխաւորաց քաղաքին, ընդ որս և Քաղաքապետին, և Դատաւորն առանձին գրեաց առ Դենպետան մեծ, զմի օրինակն առաքեցին 'ի Դամասկոս, և զմիւսն 'ի Կոստանդինուպոլիս ('ի 20 Օգոստոսի)։

Իսկ փոխանակ Բդեշխին Երկթուղեան Իպրահիմ Փա-

Հայ նուամեալ զլեռնական ապստամբս 'ի կողմանս Սամարիոյ, 'ի նմին աւուր եհաս յԵրուսաղէմ և բանակեցաւ արտաքոյ քաղաքին, յաւուրս Ծոմապահութեան նոցին, եւ զգերեալսն արգել կապանօք 'ի բերդն։ Գնացին առ նա յայցելութիւն ըստ սովորութեան Փոխանորդք և Թարգմանք երից ազգաց, և նորա սիրով ընկալեալ դարձոյց ընտսա 'ի տեղիս իւրեանց։ Եւ զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն զԱւետիս Թարգմանն Հայոց, և եդ առաջի նորա զառաջին սպառնալիս եւ զբարկութիւն Կուսակալին վասն չանսալոյ հրամանաց նորին, և այժմ քանդել եւ աւերել զգործս Մննդեան և Ս. Աստուածածնի, Հայք կրեցին բազմադիմի տառապանս վասն այսր, զի 'ի դերեւ ելին յաւսադրական բանք Փոխանորդին և Գլխաւորաց ազգին, զի բռնաւորն չունէր երբէք երկիւղ ինչ և կամ ակնառութիւն յումեքէ. Նմին իրի երթային և դային առ նա միարանք 'ի գիշերի և 'ի տունջեան, և զկնի բազում աղաչանաց ետուն նմա և սակս հաշտութեան Բդեշխին և Քաղաքապետին դահեկանս 145,000 և հաղիւ զերծան 'ի ձեռաց նորա։ Մինչեւ ցաստ Ս. Յարութեան Ս. Աստուածածնի, և Բեթղեհէմի բովանդակ ծախուց գումարն եհաս 899,564 դահեկան միայն յԵրուսաղէմ, բաց 'ի ծախուց որք եղեն 'ի ձեռն Փոխանորդին Կոստանդինուպօլսոյ, այլ մեք թողեալ զայսոսիկ տեսցուք թէ զինչ գործեցին Լատինք 'ի Բեթղեհէմ։

Լատին կղերք ոչ երբէք յանձն առին դադարիլ 'ի խըռովութենէ և յատելութենէ ընդդէմ Հայոց, արհամարեալ զպատուէր Դատաւորին աներկիւղ և համարձակ գործէին զամենայն ինչ, զի յետ մեկնելոյ փոխանակի Բդեշխին յԵրուսաղէմէ՝ յարուցին զայլ իմն խնդիր նոր 'ի Բեթղեհէմ. սկսան աւել ածել 'ի ճանապարհն որ 'ի մէջ եկեղեցւոյն։ Հայք գնացին առ Դատաւորն, կոչեաց նաեւ զՅոյնս, այլ նոքա հրաժարեցան 'ի կռուոյ անտի. և ինքն յայտնապէս ասէր ցքաղմականս թէ՝ կամք Լատինաց ոչ միայն վասն աւելածութեան և ճանապարհին է, այլ վասն ամենայնի, զի եթէ այսօր հրաման տացուք աւելելոյ, վաղիւն ստիպեն բառնալ զկանթեղս, սակայն պատուէր ունիմ 'ի Կոստանդինուպօլսոյ ոչ եղծանել ինչ 'ի սահմանելոցն Մուվէլլային, և յառաջագոյն գրեցաւ Աչ և Իլմ առ Տէրութիւնն, եւ այժմ ոչ կարեմ սահմանել նորոգոյն ինչ ('ի 21 Սեպտեմբերի)։ Լատինք ոչ խրատու Դատաւորին անսային և ոչ գալստեան հրամանին համբերէին. արգելին զաւել ածելն Հայոց յԱյրին Մննդեան, զոր սահմանեալ էին յաւուր բաժանորդութեան. և մինչ պատաղեալ էին Հայք զաղմըկաւ սորա 'ի դատարանն, ժողովեալ նոցա զՁիկլլահս Բեթղեհէմի ստիպէին զնոսա բռնի անցանել 'ի վերայ սիւռոցացն Հայոց։ Դատաւորք յորդորէին զՀայս թողուլ Լատինաց անցանել ժողովրդովք 'ի տեղւոջէ անտի, լռել առ ժամանակ մի մինչեւ դադարիլ խռովութեան, խոնարհեցան Հայք 'ի բանս նոցա և ջանային հաշտիլ ընդ Լատինս, այլ նոքա ոխացեալ 'ի սրտէ ոչ երբէք մերձենային, և առեալ զոմանս 'ի Դատաւորէն եւ 'ի Քաղաքապետէն գնացին 'ի Ս. Յարութիւն և խօսէին վասն սեան եւ խաչելութեան պատկերին, այլ Հայք ընդդէմ կացին, եւ մնաց խնդիրն որպէս և էրն։ Եկին 'ի սոյն աւուրս յԵրուսաղէմ Երկոքին Փոխանորդք նոցին՝ Կղեմէնթ 'ի Դամասկոսէ և Ցրա Մանուէլ յԵգիպտոսէ, որ իրր բարեկամ էր Հայոց, բայց ոչ կարէին մերձենալ առ նոսա ըստ առաջնոյն յերկիւղէ միարանաց նոցին։

Եւ զկնի աւուրց ինչ յաւելին Լատինք և զայլ իմն խըժդրժութիւն (28 Նոյեմբերի)։ Զի յերեկոյի կիւրակէի նըստեալ եկեղեցականացն Հայոց յեկեղեցւոջ ընթեռնուին զՅայտնութիւն, ոմանք 'ի Լատինաց եկեալ ստիպէին զնոսա յառնել, զի եկեղեցականք նոցին հանդիսիւ ուներին անցանել անտի, և նոցա ցուցեալ զմանապարհն ասէին բաւական լինել նոքաւ. սրտմտեալ ընդ այս Լատինաց՝ ժողովեցին անդ զՁիկլլահս և խափանեցին զժամերգութիւնն Հայոց և սկսան կռուել ընդ նոսա։ Եւ Փոխանորդ նոցին կորզեալ զսուր այլազգւոյ ուրուք Մէհեմէտ Շախտուր ասացեալ, որ դիպաւ անդ 'ի նմին ժամանակի՝ յարձակեցաւ 'ի վերայ Հայոց, և քաջալերէր զՁիկլլահսն և ասէր. հարէք մի երկնչիք, և խառնեցան երկոքին կողմն և հարկանէին զմիմեանս, եւ վիրաւորեալ Տիգրանակերտցի Յարութիւն վարդապետի անկաւ անդ, և Լատինաց տեսեալ զարիւնն՝ խոյս ետուն անտի՝ և ազդ արարին Տեսչի իւրեանց։ Վիրա-

ւորքն հասին յերուսաղէմ արիւնաթաթաւ. առին զնոսա Փոխանորդ և Թարգմանն գնացին 'ի դատարան, ընդ որս էին և բազումք յուխտաւորաց. և եղեւ անդ աղմուկ և ձայն խռովութեան. իբրև ետես Դատաւորն՝ թէ ոչ կարէ հանդարտել զնոսա, փութանակի կոչեաց զՔաղաքապետն և զայլս յայլազգեաց. ձայն աղաղակին Հայոց բարձրանայր, դատ արարէք ընդ մեզ և ընդ Լատինս. եկին 'ի նմին ժամու և Լատինք և ջանային պարտաւոր կացուցանել զՀայս, որպէս թէ Հայք դիտմամբ յաւելեալ են զթիւս միարանաց Բեթղեհէմի և պատրաստեալ 'ի կռիւ ընդ Լատինս. Աւետիս Թարգման կալեալ զձեռանէ Ցարութիւն վարդապետի հրաման ցուցանէր նոցա զարիւնաթաթաւ զերեսս նորա և զայլոց. զայն տեսեալ Լատինաց կարկեցան, մանաւանդ Ֆրա Մանուէլ Թոթափէր ձեռս իւր, եւ այլք ուրանային զարարս իւրեանց. իսկ Աւետիք և այլք դոչէին առնել իրաւունս՝ զի եթէ ոչ էր տուեալ ձեր զզօրութիւնդ, Լատինք ոչ կարէին առնել ինչ. և ասա յարձակեցան 'ի վերայ Քաղաքապետին, որ լռութեամբ նստէր անդ, և կշտամբէին զնա հարկանելով յերեսս նորա զդաւաճանութիւնն եւ զխարդախութիւն նորին, և նա չառնէր ինչ պատասխանի. խառնաձայն իմն հնչէր աղաղակն 'ի դատարանի և ոչ լինէր լսելի բարբառ իւրաքանչիւրոց. ոմանք յորդորէին լռել. Դատաւորն կանգնեալ յոտին գոչէր՝ լռեցէք նստարուք՝ 'ի վաղիւ տեսանի դատաստան ձեր. այլ Հայք ասէին, եթէ 'ի սոյն ժամու ոչ տեսանի, վաղիւ յայլ իմն եղանակ դառնայ դատն։ Տեսեալ Լատինաց թէ ոչ դոյ ազատութիւն՝ իբր փախստեայ խոյս ետուն 'ի դատարանէ, և Դատաւորն հրամայեաց քննել զվիրաւորս Հայոց։ Ցարութիւն վարդապետ վիրաւորեալ 'ի յոտս և 'ի քիթս հարուածովք դաւազանի և արիւն հոսէր 'ի բերանոյն. Ռափայել վարդապետ վիրաւորեալ 'ի դանկէ յետ կոյս ականջաց. Խաչատուր վարդապետ 'ի ձախոյ ձեռին։ Խոստացաւ Դատաւորն 'ի վաղիւ ժողովով քննել զվնդիրն և արձակեաց զնոսա։ Արար ժողով ըստ խոստման իւրոյ, գնացին Հայք և սպասեցին ցմեծ ժամն դալստեան Լատինաց, երկիցս հրաւիրեաց զնոսա Դատաւորն եւ ոչ եկին. զի ասէին թէ բաւական է երեկեան խայտառակութիւնն,

այժմ ոչ դամք. դարձեալ հրաւիրեաց զնոսա Դատաւորն, թէ չեղեւ ինչ խայտառակութիւն և չլինի. ապէն դադարին պատմական բանք Դիոնէսիոս վարդապետի։ Այլ Դատաւորն 'ի ժողովի անդ արար քննութիւն մանրամասն ամենայն իրաւանցն Հայոց թէ վասն սեան Ս. Ցարութեան, և թէ վասն բաժանորդութեան Բեթղեհէմի, վասն արգիլելոյ զաւելն Հայոց յԱյրէ անտի ըստ տրամադրութեան Կայսերական հրովարտակաց և գործադրութեանց նոցին 'ի ձեռն պաշտօնէից և ըստ վկայելոյ բազմութեան այլազգեաց, և դրեալ ծանոյց 'ի Դուռն զի հրովարտակաւ բարձցի ընդդիմութիւն և ատելութիւն Լատինաց, ՌՌԳ 'ի Ի. Զիլհիճէ, (1814)։ Դտին Լատինք զայլ իմն առիթ ատելութեան, զի փակեալ աղխեցին զհիւսիսային պղնձի դուռն Այրին Ծննդեան, որ յատկացեալ էր Հայոց, զի մի իջցեն յԱյրն կատարել զպաշտամունս իւրեանց։ Եւ զկնի պատուիրելոյ Դատաւորին եւ բանալոյ զդուռն, գրեաց առ Տէրութիւնն և վասն այսր, որպէս ծանուցեալ էին Հայք, զի հրամանաւ Արքայի մնասցէ բաց դուռն մշտընջենաւոր 'ի դիւրութիւն Հայոց, (յԺ. Զիլհիճէի)։

Կոտորած ժանտախտի 'ի կողմանս Զմիւռնիոյ և Ադրիանուպոլսոյ ('ի 18 Մայիսի)։ Կայսերք Ռուսիոյ և Գերմանիոյ և զօրապետն Անգղիոյ եւ այլք կալան զնաբոլիոն Պոնապարդ և աքսորեցին զնա 'ի կղզին Ս. Հեղինէ, անջատեալ 'ի նմանէ զկին և զորդին իւր, և եդին յաթոռ Թագաւորութեան Գաղղիոյ զԼուի 18դ, եւ 'ի Կոստանդինուպոլիս 'ի Պէյ օղլու բարձին զգինադրոշմ նորին 'ի պալատէ Դեսպանին Գաղղիոյ, և 'ի տեղի նորա եդին զնչան նոր Թագաւորին մեծ հանդիսիւ եւ ուրախութեամբ, (1814. յ7 Մայիսի)։

Գ. ԼՈՒԽ ԹԱ.

Յովհաննէս Եպիսկոպոս Կարբեցի։ Դարձ Պողոսի Յէջմիածնէ։ Գժտութիւն ազգին։ Մխիթարութիւն և խորհուրդ վասն Աթոռոյն Երուսաղէմի։ Հրաւէր Վարդապետաց ոմանց 'ի Թագաւորեալ քաղաքն։ Ընտրութիւն Պողոսի 'ի Պատրիարք Կոստանդինուպոլսոյ։ Վախճան Թեոդորոս Պատրիարքի։ Ազգային Ժողով 'ի Կոստանդինուպոլիս։ Կուսակալ Դամասկոսի և Քաղաքապետ Երուսաղէմի։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Եպիսկոպոս Կարբեցի հրամանաւ Եփրեմ Կաթուղիկոսին Էջմիածնի, կարեւոր և ազգօգուտ գրեամբք եկն եհաս 'ի Կողմանս Եւդոկիոյ, ուր խմացեալ զիսոփոխութիւն Պատրիարքին Կոստանդինուպոլսոյ՝ գնաց 'ի Կիսարիա, և անտի գրեալ ծանոյց ոմանց 'ի գլխաւորաց ազգին զգալուստ իւր, և նոքա գրեցին առ նա մնալ 'ի Կիսարիա, և յայտ առնել ինքեանց թէ վասն որոց իրաց եկեալ իցէ։ Եւ նորա գրեալ եցոյց նոցա զանդիր իւր, եւ էին այսոքիկ, «1°. Ի սենեակն Լօնճայի յատկացուցանել զոք յազգէն գործակատար Էջմիածնի. 2°. Ընտրել զարս երիս ժողովել և անօրինել զարդիւնս և զծախս Էջմիածնի, և այլ ամենայն վանօրէից, բաց յԵրուսաղէմէ, և զյաւելեալն պահել զգուշութեամբ. 3°. Մասնաւոր վանօրէից կառավարիլ արդեամբք թէմի իւրեանց, և մի ելանել և շրջիլ յայլ տեղիս և խնդրել նպաստս. 4°. Զերկուս յաջորդս պահել Կաթուղիկոսին Էջմիածնի՝ զի 'ի վախճանել նորին, վիճակաւ ընտրեսցի մին և օծցի 'ի Կաթուղիկոս ամենայն Հայոց. 5°. Տպագրել կանոնական բանից Դանիէլի Կաթուղիկոսի, զոր գրեալ է յարգելանս Մարաղայի վասն բարեկարգութեան Աթոռոյն Էջմիածնի. 6°. Ի կաթուղիկոսական պէրաթն Օսմանեան տալ յիշատակել և զանուն Սինոդին, որպէս յիշեալ է 'ի հրովարտակս Ռուսաց և Պարսից. 7°. Եպիսկոպոսունք սակաւ լիցին 'ի մէջ ազգին, բաց յէջմիածնէ եւ յԵրուսաղէմէ, զի մի ձեռնադրութեամբ նոցին ելցեն անարժանք 'ի կարգ Քահանայութեան. 8°. Ժողովարարք մի շրջեսցին առանց կոնդակի Կաթուղիկոսին և Պատրիարքին Կոստանդինուպոլսոյ, և մի շրջեցուսցեն ընդ ինքեանս զմասունս սրբոց. 9°. Ձեռնադրել առաջնորդաց քահանայ 'ի

վիճակս առաւել քան զբաւականն, զի մի թափառեսցին վասն աւուրն պարենի. 10°. Բանալ վարժարան 'ի Կոստանդինուպոլիս յանուն Ս. Էջմիածնի եւ ծախիւք նորին 'ի դաստիարակութիւն ազգային մանկանց։ Զայսոսիկ 16 գլուխս բանից և զայլ կարեւոր խնդիրս, զորս խոստանայր Յովհաննէս Եպիսկոպոս ծանուցանել ազգին 'ի գալստեան իւրում։ Իսկ Գլխաւորք ազգին սահմանեցին 'ի ժողովն Պատրիարքարանի չյուզել այժմ զայդպիսի խնդիրս, և շնպահանջել հրովարտակ 'ի դրանէ վասն Կաթուղիկոսին, զի չէր ժամանակ, և գրել առ Յովհաննէս Եպիսկոպոս դառնալ անդրէն յէջմիածնի։ Ի ժողովի աստ խօսեցաւ Պողոս վարդապետ վասն այցելութեան Երուսաղէմի, այլ չեղեւ ինչ համաձայնութիւն, (1814)։

Պողոս վարդապետ Փոխանորդ Երուսաղէմի գնաց յէջմիածին և ձեռնադրեցաւ Եպիսկոպոս յԵփրեմ Կաթուղիկոսէ, և 'ի դառնալ իւրում անտի 'ի Կոստանդինուպոլիս, ետես զի տարածեալ էր ցաւ Ս. Աթոռոյն 'ի մէջ ազգին, և սկսաւ այնուհետեւ հետեւիլ վասն այցելութեան նորա, բայց չեղեւ ինչ օգուտ, զի յառաջագոյն խոյս տուեալ էր ինքն յէջմիածին 'ի պատճառս խռովութեան Ամիրայից սակս ոչինչ իրաց. զի մի առիթ համարեսցեն զինքն, թէպէտ ոմանք 'ի նոցանէ ուխտեալ էին ոչ ուտել և ոչ ըմպել մինչեւ սպանցեն զՊողոս, և այժմ դարձեալ եդիտ զնոսա 'ի նոյն կիրս վարակեալ, զի զնա համարէին արմատ դառնութեան և շառաւիղ ատելութեան վերընձիւղեալ 'ի մէջ ազգին, թէպէտ անագան ուրեմն 'ի միտ առին զտարաձայն կարծիս իւրեանց։ Զանայր Պողոս ածել զնոսա 'ի մի միաբանութիւն սիրոյ, և չլինէր հնար, որպէս ուսաւ զպատճառն 'ի նոցանէ, զի համաւ իմն հանեալ էին զԲեսահեայ Ամիրայէն և չարաչար բամբասէին զնա իբր անհաւատարիմ Տէրութեան և բարեկամ Ռուսաց, եւ զՊատրիարքն նախարար նորին, զայս արարին զի բարձցեն զնա 'ի միջոյ, կամ ընկեսցեն 'ի պատուոյ բարեկամաց և ծանօթիւք նորին, այլ վրիպեցան 'ի յուսոյ իւրեանց։ Եւ Աբրահամ Պատրիարք Մելիքեան 'ղկեան մտեալ էր հանել արքունուստ հրովարտակ վասն Եփրեմ Կաթուղիկոսի, բայց և ոչ այն յաջողեցաւ, զի ոչ ոք համարձակէր խորհիլ եւ կամ խօսիլ 'ի վերայ այնր։

Հաստատեցին Սինոդ, և այն եւս մնաց անգործադրելի։ Պօղոս Եպիսկոպոս աղաչէր զՊատրիարքն խորհիլ ընդ գԼԸ խաւորս ազգին վասն Աթոռոյն Երուսաղէմի, այլ նորա ոչ մատուցեալ ունկն՝ զնոյն ինքն զՊօղոս ասէր պատճառաւերման Աթոռոյն, և 'ի հարցանել նորա զվասն էրն. ասէ՝ ընդէ՞ր առաքեցեր ասսի զԻրինէոսիոս վարդապետ, ո՞ գիտէ որքան կաշառս տուեալ ես և տալ ետուր. Պօղոս ասէ՝ ազգն յղեաց զնա՝ եւ ամենեքեան գիտէին զգնալ նորա, բայց ոչինչ ասացին յայնժամ, ո՞ւմ վասն էր տըւեալ եմ զկաշառն՝ եթէ այնու եղանակաւ յղեալ եմ զնա, չգիտեմ զպատճառն, յորմէ երեւի թէ նա անդ գողանայ և ես ասա, և ընկերութեամբ բաժանեմք զինչս Աթոռոյն, զի եթէ ետու զկաշառս՝ յայտ է թէ Ճարտարապետին և Ռեահեայ Սվիրային տուեալ եմ. զի հրամանաւ նոցա գնաց նա յերուսաղէմ, և նոքա էին խորհրդակից Աթոռոյն. այս անցք անցին 'ի Պատրիարքարանի յերեկոյի Բուն բարեկենդանի յետ ընթրեաց. զայս ամենայն ծանոյց նոցա Պօղոս և այլոց եւս. և չվհատեալ երբէք դեգերէր հանապազ 'ի դրունս մեծամեծաց գտանել զհնարս աղատութեան Աթոռոյն, և թեթեւացուցանել զծանր լուծ կեղեքիչ բռնաւորաց, մինչ պատրաստիլ տալ գիր աղաչանաց առ Տէրութիւնն և այսպէս յամենայն ուրեք պատմէր զվասնդ Աթոռոյն՝ եւ պարտատերք պաշարեալ զնա ելհանջէին զդրամս, և նա ոչ գիտէր թէ ուստի հատուցէ, և ոմանք մեղադրէին զնա իբրեւ զբռայլս և զանխոհեմս։ Աղաչէր Պօղոս զմեծամեծս արձակել զինքն 'ի պաշտօնէն յայնմանէ, զի լաւ էր ինձ ասէր մեռանիլ՝ քան տեսանել զԱթոռն յայնպիսի նեսմութեան, այլ նոքա ոչ լսէին, զի անմիաբան էին. առաջի եդ նոցա գնալ յերուսաղէմ և եթէ ոչ հաճին՝ յիշմիածին, հրաժարիլ 'ի պաշտօնէն՝ փակել զԳոխանորդարանն եւ տալ զբանալին ժողովրդոց. սակայն երկնչէր 'ի հասարակութենէ, զի ամենայն ոք հառաչէր 'ի վերայ թշուառութեան Երուսաղէմի և Էջմիածնի. նմին իրի թողեալ զամենայնն 'ի բաց՝ զկետ եղեւ միաբանել զգլխաւորս ազգին, զի գոնէ սատարութեամբ նոցին մարթասցի սանձել զբռնութիւն Կուսակալին Դամասկոսի, որպէս սկիզբն եղեւ ժողովելոյ նոցա 'ի տուն Ճարտարապետին 'ի կատարել զնաւակատիս նորակառոյց տան նորին, (1815. յ5 Ապրիլի)։

Նարոլէոն Պոնաբարդ զերծեալ յարգելանոցէ իւրմէ զորաժողով եղեւ դիմել 'ի վերայ Գերմանիոյ ջնջել և բառնալ զայն 'ի միջոյ, Պապն Հռոմայ փախուցեալ զերծաւ իւրովքն հանդերձ, տրտունջ ռամկաց և սպառնալիք խսպառ կործանելոյ զՊապութիւնն. նոյն ձայն հնչէր 'ի կողմանց Սպանիոյ, զի հասարակութիւնք նոցին ըմբոստացեալ էին ընդդէմ եկեղեցական իշխանութեան։ Գերմանք, Ռուսք և այլ դաշնաւորք դումարին ընդդէմ Պոնաբարդին ('ի 1 Մայիսի)։

Զիջեալ գլխաւորաց ազգին 'ի թախանձանս Պօղոսի՝ դումարեցան 'ի Պատրիարքարան (յ7 Յունիսի) խորհիլ վասն աղատութեան Աթոռոյն Երուսաղէմի. կոչեցին անդ զՊօղոս Եպիսկոպոս և զՄկրտիչ վարդապետ, և զկնի բազմագիմի բանից ասեն՝ չէ պարտ տալ զայդքան դրամս Կուսակալին, թէպէտ նա խնդրէ և չգիտէ ասել բաւ որպէս սովորութիւն է նոցա. այլ ընդդիմանալ և ոչ տալ առաւել քան զսահմանեալն, յանձն առնուլ զտառապանս և զբռնութիւնս նորին, տագնապիլ, նեղիլ եւ չարչարիլ համբերութեամբ մինչեւ ցմահ 'ի սէր Ս. Տեղեաց. և 'ի լսել զայն ամենայն ազգին համարձակեսցին բողոք բառնալ առ Արքայ եւ գտանել զհնարն աղատութեան Աթոռոյն. ո՞վ կարէ բառնալ զայդքան ծանրութիւն պարտուց, որ զլսողս անդամ լքանէ։ Կուսակալք չկարեն այդքան խստութեամբ տագնապել զվանականս, եթէ տեսանիցեն 'ի նոսա զարիութիւն ոգւոյ. զի եթէ ունին տացեն ըստ կամաց իւրեանց, և եթէ ոչ, ուստի՞ և ընդէ՞ր տան. ո՞չ-ասաքէն տոկոսարարդ լեռնակուտակ յոլովութիւն պարտուց դուշակութիւն է կործանման, և կարեվէր խոցեալէ սիրտ ազգին 'ի վերայ այսպիսի թշուառութեան Աթոռոյն. զի տեսանեն զնա վիրաւորեալ յոտից մինչեւ ցգլուխ և չիք 'ի նմա առողջութիւն։ Եւ առ զայրոյթ սրտից իւրեանց զկծեցուցիչ բանիւք նախատէին զՊոխանորդն եդեալ զնա նպատակ բանից, իբրեւ սրեալ սլաքաց, այլ միտք ամենեցուն խոկայր զվերկութիւն Աթոռոյն. և ապա սահմանեցին վարիլ այսպիսի եղանակաւ։ Ի գալստեան Կու-

սակալին տալ միայն զսահմանեալն, որք էին ասայէ, սահմանէէ, Խորոմ սահմանեալ։ 4000 դահեկան իբր ծախս 'ի չորս նուագս տարւոյն, և Ֆէրմէյ 1375 դահեկան, որ եհատ յաւուրս Ճէզար Փաշայի 25,000։ գոնէ այսուհետեւ զսոյն գումար հատուցանել։ իսկ 'ի բաղմանալ վիճմանց եւ նեղութեանց, ազգ արասցեն 'ի Կոստանդինուպօլիս։ զի նոքա գտցեն զհնարն, ապա պատուիրեցին փութով ժամանել 'ի մայրաքաղաքն Մարկոս և Ցարութիւն եպիսկոպոսաց և թարգման Աւետիսին, գրել առ Սիմէոն, Դիոնէսիոս եւ Կարապետ վարդապետս, որք գնացեալ էին յէջմիածին, զի զկնի ձեռնադրութեան նոցին յաստիճան Եպիսկոպոսութեան սճապարեսցեն դառնալ 'ի թադաւորեալ քաղաքն, նոյնպէս առ Գաբրիէլ եպիսկոպոս Նուիրակն Զմիւռնիոյ, եւ առ Մկրտիչ եպիսկոպոս Նուիրակն Տփխիսու, թողեալ զգործս իւրեանց փութացեն անդ։ զի գլխաւորք ազգին խորհեցին ընդ նոսա իբր երեւելի գործակալս Աթոռոյն, և տնօրինեսցեն զօգուտ նորին։ բերել յԵրուսաղեմէ զտումարս պարտուց, զի առաջի ամենեցուն բացցին վէրք տանն, զի մարթասցին հնարել զօրեղ սպեղանիս։ Սկիզբն խորհրդոյն կամեցան հրաւիրել զնոյն ինքն զԹէոդորոս Պատրիարք, այլ հայեցեալ յալիս ծերութեան նորին խնայեցին 'ի նա, և զի մի վտանգ ինչ դիպեսցի 'ի պարտաւորց անպատուել զնա իբր փախստական։ այլ բաւական համարեցին կոչել զեօթն եպիսկոպոսունս և զթարգմանն, և զոր ինչ սահմանեսցեն 'ի խորհրդեան, լիցի ընդունելի ամենեցուն։

-Զայս ամենայն դրեալ ծանոյց Պօղոս եպիսկոպոս առ Թէոդորոս Պատրիարք, և յորդորէր զնա փութանակի հանել 'ի ճանապարհ զվարդապետս եւ մի ընդդիմանալ կամաց ազգին, զի մի յետս կացցեն, յայնժամ չլինի օգնութիւն յուստեքէ, որով լինի վտանգն չարաչար և խորտակումն մեծ։ ոչ Պատրիարքն եւ ոչ Ամիրայք գրեցին գիր առ Թէոդորոս, զի տակաւին տիրէր երկպառակութիւն 'ի միջի նոցա։ և ոմանք իսկ չկամէին յուզել զխնդիրն Երուսաղէմի, այլ ակամայ կամօք զկնի յայս խորհուրդ (1815։ յ9 Յունիսի)։

Իսկ երեքին վարդապետքն հասեալ յէջմիածին ձեռ-

նադրեցան Եպիսկոպոս յԵփրեմ Կաթուղիկոսէ։ Այլ Աբրահամ Պատրիարք և Փոխանորդ Պօղոս եպիսկոպոս խորհրդով ազգին գրեցին առ Կաթուղիկոսն, պահել զԴիոնէսիոս եպիսկոպոս անդ յէջմիածին 'ի խնամս իւր, մինչեւ կազմեսցի ժողով 'ի Կոստանդինուպօլիս վասն օգտի Աթոռոյն Երուսաղէմի, և ապա սահմանեսցի գնալ նորա յԵրուսաղէմ։ իսկ Սիմէոն և Կարապետ եպիսկոպոսունք մեկնեցան անտի (յ9 Սեպտեմբերի) և հասեալ 'ի Կարին զէմ եդին գնալ ուղղակի յԵրուսաղէմ։ լուեալ զայս Պօղոսի գրեաց 'ի Բերիա, 'ի հասանիլ գրոյն առանց զայլ և այլ խորհելոյ դարձուսցեն զընթացս իւրեանց 'ի Կոստանդինուպօլիս, և մի բամբասեսցին իբրեւ զանհնազանդս, ապա թէ ոչ՝ բռնադատին գալ յԵրուսաղէմ։ Գաբրիէլ եպիսկոպոս յանձն արարեալ զպաշտօն Նուիրակութեան Զմիւռնիոյ Յակոբ վարդապետի՝ գնաց յԵրուսաղէմ վարել զպաշտօն Փոխանորդութեան։ զի Նախորդ Նորին Ստեփաննոս եպիսկոպոս Եւդոկիացի, Աջ կոչեցեալ՝ վախճանեալ էր 1815։ 'ի 19 Մայիսի։ Մկրտիչ եպիսկոպոս մեղրիկ ոչ կամեցաւ մեկնիլ 'ի Տփխիսէ եւ երթալ 'ի կոչն, պատճառելով զգործ Նուիրակութեան իւրոյ։ և յԵրուսաղէմ Մարկոս և Ցարութիւն եպիսկոպոսունք ոչ կամեցան գնալ։ և կամ Թէոդորոս Պատրիարք ոչ եթող զնոսա, այլ առաքեցին միայն զթարգման Աւետիսն։ և նորա հասեալ անդ անկաւ 'ի մահիճս ծանր հիւանդութեամբ, եւ չգըտեալ դարման 'ի բժշկաց՝ վախճանեցաւ։

Պօղոս Եպիսկոպոս ընկալեալ զտումար պարտուց Աթոռոյն զոր բերեալ էր թարգմանն, խնդրէր նաեւ զտումար եկամտից և եկեղեցական զարդուց, ցուցանել ազգին 'ի դէպ ժամանակի, և զայրանայր 'ի վերայ այնոցիկ որք արհամարհեցին զհրաւէր նորին և ոչ կամեցան գնալ 'ի քաղաք անդր, որոց վասն ստիպմամբ և բաղում յորդորանօք և երբեմն եւս սպառնալեօք գրեաց երկար առ Թէոդորոս փութանակի առաքել զնոսա առ 'ի տնօրինել նոքօք զօգուտ Աթոռոյն։ Ցայսպիսի ծանրատաղտուկ գործս և 'ի խնդիրս ընկեցին 'ի Պատրիարքութենէ զԱբրահամ եպիսկոպոս Մէլիքեան, և 'ի տեղի նորա ընտրեցին զՓոխանորդն Երուսաղէմի զԱդրիանուպօլսեցի Պօղոս Արք Եպիսկո-

պոսն, (1815· 'ի 1 Դեկտեմբերի)։ Սա հետեւեցաւ հանել 'ի Դրանէ զՀրովարտակն Եփրեմ Կաթուղիկոսին Էջմիածնի, այլ դժուարանայր, զի յաւուրս նախորդին իւրոյ կնճռեալ էր խնդիրն։ Վասն բռնութեան Կուսակալին Դամասկոսի յառաջագոյն մատուցին գիր աղաչանաց 'ի Դուռն Փաշայի, այլ օգտեցան և ոչ ինչ, և ապա մատուցին առ Արքայ, և 'ի սոյն աւուրս դատաւ 'ի դիւանս արձանագրութիւն հին հրովարտակին վասն այնր տրոց, և սկսան հետեւիլ կարգաւորել զայն գործ։ Պօղոս Պատրիարք կամեցաւ դարձուցանել զառաջնորդութիւն Կիպրոսի 'ի վերայ Երուսաղէմի, որոյ և զհրովարտակն էառ, և խոստանայր օրինագրել և տալ միշտ յիշել 'ի Պէրաթն Պատրիարքաց Երուսաղէմի, որպէս յառաջագոյն Յովակիմ Պատրիարք խնդրեալ էր 'ի Զաքարիայ Պատրիարքէ Կաղզվանցւոյ, գրելով առ Սարգիս փոխանորդ իւր 'ի Կոստանդինուպոլիս։

Ակնցի, Կարնեցի և Վանեցի ուխտաւորք դարձ արարեալ յԵրուսաղէմէ 'ի հայրենիս իւրեանց, հասին 'ի կողմանս Մելտինոյ Հայոց· յափշտակեցան 'ի Ռշտուն կոչեցեալ Քիւրտ ցեղէ, ընդ որս էր և Թորոս վարդապետ Նուիրակ Ակնայ, որոց վնասքն հաշուեցան 48,000 դահեկան, (1817)։

Այլազգիք Սիոնի ճանապարհ արարեալ էին 'ի վանաց Ս· Հրեշտակապետի, յորոց հասանէր չարիք և վնաս մայրապետաց և միաբանաց, Հայք քննութեամբ եւ Արքունի հրովարտակաւ եդին փականս մեծ դրան և աղխէին զայն, և յաւուրս Թէոդորոսի վերստին սկսան այլազգիք անցանել անտի եւ ստիպէին թողուլ բաց զդուռն զայն, այլ Թէոդորոս ետ նորոգել զհրովարտակն եւ արգել օրինօք Դատարանի զբռնութիւնս նոցա։ Դարձեալ վէճ Ցունաց ընդ Հայոց վասն երից հետեւակաց, որք են Հապէշք, Դըպթիք եւ Ասորիք· եւ 'ի լինել քննութեան 'ի Դատարանի ընթերցան զվաւերական դրեանս Հայոց, և արգելին ըզՑոյնս 'ի հակառակութենէ, և Դատաւորն գրեալ ծանոյց 'ի Դուռն, (1817)։

Իսկ Թէոդորոս Պատրիարք Երուսաղէմի, որ տարաւ բազմադիմի վշտաց և համբեր դառն նեղութեանց և տառապանաց իւրոյ անբարի ժամանակին, հասեալ 'ի բարւոք ծերութիւն, ալեւորեալ լի աւուրքք, հանդեաւ խաղաղութեամբ 'ի Քրիստոս (1818) 'ի 22 Օգոստոսի, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան, յետ ընտրութեան իւրոյ ամս 18 և յետ նստելոյ յԱթոռն ամս 16, զորոյ զմարմինն թաղեցին պատուով 'ի վանս Ս· Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց։ Եւ յետ այնորիկ ժողովեալ եպիսկոպոսաց եւ վարդապետաց Աթոռոյն՝ գրեցին գիր հանրական առ Իշխանաւորս աղգին և առ Պօղոս պատրիարք, եւ թախանձանօք խնդրէին զնոյն ինքն զՊօղոս գալ նստիլ յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և կառավարել զմիաբանութիւնն հայրական սիրով, զի բաղում էին երախտիք նորին 'ի վերայ Աթոռոյն, լեալ պատճառ ազատութեան, շինութեան և պայծառութեան։ Եւ ապա յաւելուն ասել, զի եթէ Պօղոս զանկարելիութիւն ցուցեալ հրաժարեսցի, և կամ ազգն ոչ կամիցի մեկնիլ նորին 'ի Կոստանդինուպօլսոյ, փոյթ մեծ կալցին՝ զի մի ոք արտաքուստ օտարական եկեալ գահակալեսցէ, որ 'ի նախնեաց անտի և 'ի Կարապետ Կաթուղիկոսէ նեղովիւք արգիլեալ է, և լինել պատճառ կործանման Աթոռոյն և ցրուելոյ միաբանութեան, և լինիլ առակ նշաւակի առաջի օտար ազգաց, այլ մի միայն 'ի միաբանութենէ և յերեւելի եպիսկոպոսաց Աթոռոյն զը և կամիցին ընտրել, խոստանային ամենեքեան որդիական հպատակութեամբ հնազանդիլ նմա։ Եւ թէ՝ մի լիցի իբրեւ զառաջինն միացուցանել զՊատրիարքութիւնն Երուսաղէմի ընդ Կոստանդինուպօլսոյ, որ նոյնպէս արգելեալ է, եւ որք ավորժեն և պատճառ լինին, հաղորդ են նզովից և աւիթ կործանման Աթոռոյն։ Եւ թէ գրել յամենայն վիճակս, զի մի 'ի պատճառս վաճառի Պատրիարքին արգելցեն զնուիրակունս 'ի սպաշտանէ իւրեանց· յայսոսիկ գիրս ստորագրեալ կնքեցին 8 Եպիսկոպոսունք, 27 վարդապետք, և 17 աշխատաւոր միաբանք, բաց 'ի սարկաւագաց և 'ի դպրաց· 'ի սոյն միտս գրեցին նաեւ առ Փոխանորդն Երուսաղէմի Յակոբ վարդապետ։ Քանզի 'ի կենդանութեան Թէոդորոս Պատրիարքի ոմանք յանզգաստից բամբասեալ էին զնա յականջս աղգին, իբր պահեալ առ իւր զմեծ գումարս դրամաց· նմին իրի Խորհրդական Եպիսկոպոսունք զկնիք 8 աւուրց թաղման նորին, բացին զգանձարանն Պատրիարքարանին՝ զոր կնքեալ էին նախ քան զաւանդումն հոգւոյ

նորին եւ 'ի հաշիւ արկեալ զանձնական դրամն նորին, զոր 80,000 դահեկան, զորս ժողովեալ էր 'ի դպրութենէ իւրմէ մինչեւ ցվախճան իւր, զորս եդին յարկղն հատարակաց, և դարձեալ կնքեցին զՊատրիարքարանն, թողեալ զկահս և զկարասիս իւրաքանչիւր 'ի տեղւոջ իւրում։

Գումարեցաւ ժողով մեծ ազգային 'ի Մայր Եկեղեցին Կոստանդինուպօլսոյ, ուր ընթերցան հանքագրութիւնք միաբանաց Երուսաղէմի, որք վասն ընտրութեան նորոյ Պատրիարքի, ('ի 20 Սեպտեմբերի)։ Եւ 'ի ժողովի ասա թողեալ զմնդիր Պատրիարքութեան, նախ՝ ընտրեցին 'ի միաբանութենէ զարժանաւոր անձինս լինիլ Խորհրդական, որք էին՝ Գաբրիէլ Եպիսկոպոս Փոխանորդ, Մեղրիկ Միքրոտիչ Եպիսկոպոս Լուսարար, Եղիա Եպիսկոպոս Դարպասընկալ և Աւագ Թարգման. նախկին Լուսարար Սիմէոն Եպիսկոպոս, (զոր ընկեցեալ էր Պօղոս 'ի պաշտօնէ). Կարապետ Եպիսկոպոս Ճառահի, Մինաս Եպիսկոպոս Մոմաշէն, Կիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմցի. Ծերունի Սարգիսանոս վարդապետ, և գրեցին եօթն կանոնական բանս, յաւելեալ 'ի վերայ 12 կանոնական բանից վասն բարւոք կառավարութեան Աթոռոյն, և բազմակնիք գիր մահսերական, եւ ընտրեցին զՓոխանորդն Երուսաղէմի զՑակոր վարդապետ իբր Փոխանորդ 'ի կողմանէ ազգին, եդեալ 'ի տեղի նորա զՄարիոս Եպիսկոպոս։ Մեկնեցաւ Ցակոր այսոքիկ գրեամբք 'ի մայրաքաղաքէ անտի ('ի 1 Հոկտեմբերի) եւ հասեալ յԱքքէ՝ կատարեաց անդ զգործն ընդ Կուսակալին՝ և եհաս յԵրուսաղէմ (1819. 'ի 13 Յունվարի)։ Եւ յետ երկուց աւուրց բացեալ զդրեանս ընթերցաւ առաջի ամենեցուն, որոշեաց զԽորհրդարանն և հաստատեաց զազգընակիր Խորհրդականս, և ամենեքեան հնազանդեալ հաճութեամբ ընկալան զհրաման ազգին, և սկսան սիրով և յօժարութեամբ հոգալ զՍ. Աթոռն. Եւ 'ի նմին ամի վճարեցին 663,000 դահեկանս 'ի պարտուց։ Եհարց Ցակոր վարդապետ վասն ընչից հանգուցեալ Պատրիարքին, որպէս պատուիրեալ էին նմա ազգայինք. և Խորհրդականք պատասխանեցին նմա մի ըստ միոջէ՝ որպէս արարեալ էին՝ զորմէ գրեցաք։ Յետ կարգաւորելոյ զայսոսիկ՝ գրեաց թա-

խանանօք Ցակոր վարդապետ առ գլխաւորս ազգին՝ ընտրել զարժանաւոր ոք Պատրիարք Աթոռոյն, զի մի խսպառ նախատեսցի ազգն առաջի օտարաց, որպէս թէ չիցէ ոք արժանաւոր այնմ պատուոյ։ Նախ քան զայս ջանիւք եւ աշխատութեամբ գլխաւորաց ազգին Արքունի հրովարտակաւ թեթեւացեալ էր բռնութիւն եւ հարկապահանջութիւն Կուսակալին Դամասկոսի, եւ սահմանեալ էր տալ իւրաքանչիւր ամի մեայն 4000 դահեկանս. զայն տեսեալ Կուսակալին եւ Բաղաքապետին Երուսաղէմի՝ հնարիւք պատճառս որոնէին կողոպտել զՀայս. զի 'ի նախընթաց ամի 'ի պատճառս կռուոյ իմիք Յունաց ընդ Լատինաց՝ առաքեաց Ոստիկանս և մատնեաց զնոսա 'ի տուգանս, եւ ոչ գտեալ պատճառս՝ զնոյն առնել եւ Հայոց. նախկին Բաղաքապետն Երուսաղէմի ետ քակել 'ի դիշերի զչորս քարինս 'ի պարսպէ Ս. Փրկչի վանաց, Հայք բողոքեցին առ Դատաւորն եւ առ նա ինքն, և հրամանաւ նոցին եդին զքարինս 'ի տեղիս իւրեանց. զայս լուեալ Կուսակալին գրեաց յԵրուսաղէմ, թէ առանց հրամանի իմոյ չինեալ են զայն, որոյ վասն խնդրէր զգուշմարս դրամոց, և սպառնայր քակել զպարիսպն. նեղեալ Հայոց ետուն 25,000 դահեկան և հազիւ ղերծան 'ի ձեռաց նոցա։

Ի սմին ամի հանդերձեալ էր Բդեշխն ինքնին ելանել և ժողովել զՀարկս երկրին, և զի Յոյնք և Լատինք ակն ունէին առաջի նորա դատիլ վասն հակառակութեանց իւրեանց, նմին իրի եւ Հայք անկեալ էին 'ի կասկածանս, գուցէ հնարիւք և 'ի նոսա արկցէ զձեռն, որպէս արարեալ էր յառաջագոյն. ուստի աճապարեալ Խորհրդականաց գրեցին առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին առնուլ զերկուս յանձնարարական գիրս, զմին առաքել առ Բդեշխն և զմիւսն յղել առ Խորհրդականս, զի 'ի գալստեան նորին մատուցցեն զայն, զի մի նեղեսցէ զնոսա ընդդէմ Կայսերական հրամանին, և թերեւս ապրեսցին 'ի հնարից նորին։

Իսկ Նոր Բաղաքապետն Երուսաղէմի 'ի չրջանի 7 ամսոց առեալ էր միայն 'ի Հայոց 14,000 դահեկան, երբեմն ընծայ և երբեմն պատիւ. ասցին վասն աղաչէին զնոսա չառ-

նել զանց, զի մի սակաւ առ սակաւ եւցէ յառաջին ատաւիճանն։ Գրեցին նոյնպէս և առ Բեահէայ Կարապետ Սամիրայ լինել ձեռնտու, ('ի 22 Փետրվարի)։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Ատելութիւն Լատինաց 'ի Բեթղեհէմ։ Փակումն դրան Լատինաց։ Հակառակութիւն ցուցեալ Այրին Մենդեան եւ վանն եկեղեցւոյն։ Երկաթեայ դուռն և սախտակեան քիւ 'ի վերայ նորա։ Ընտրութիւն Գաբրիել Եպիսկոպոսի Յառուն Երուսաղէմի։ Գերեզմնատուն Ղեռատրակեանց։ Զանք Լատինաց վասն դրան։

ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ դտեալ Լատին կղերաց առնէին ըստ յօժարութեան իւրեանց յեկեղեցին Բեթղեհէմի. զի յաւուր միում յանկարծ զեղեալ 'ի ներքս, կալեալ զսրիւոցն Հայոց ընկեցին 'ի բաց, և խանգարեալ զժամերգութիւնն, իջին Այրն, և երբեմն ժողովեալ զՔրիստոս գիւղին զարս և զկանայս և զմանկտիս և խառնիճաղանճ բազմութեամբ անցանէին անտի, եւ զոր միանգամ դտանէին 'ի ճանապարհին առաթուր կոխէին և կամ բարձեալ ընկենուին 'ի բաց. և 'ի պատահիլ միաբանաց և ուխտաւորաց տապալէին զնոսա, և այլ սոցին նման անարգանօք զզուէին զՀայս. և 'ի բողոքել նոցա առ Դատաւորն, գրեալ յայտ արար նա 'ի Դուռն զնեղութիւնս Հայոց, զոր կրէին յերեսաց Լատինաց, որպէս գրեալ էին զայնմանէ նախորդք իւր, և չէր լեալ օգուտ ինչ։

Ի սմին ամի Կուսակալն Դամասկոսի Սալէհ Փաշա ինքնին եկ յայցելութիւն դաւառին, եւ եհաս յԵրուսաղէմ. և 'ի գնալ իւր 'ի Բեբրոն յուխտ 'ի գերեզման Հայր Աբրահամու, հանդիպեցաւ 'ի Բեթղեհէմ, կատարել զուխտս 'ի տեղի Մենդեան Քրիստոսի, եւ տեսեալ զանվայելուչ ճանապարհն Լատինաց 'ի մէջ եկեղեցւոյն, եհարց զՀայս, և նոքա յայտ արարին նմա թէ որպէս սահմանեցաւ 'ի սկզբան գնալ Լատինաց յետուստ կողմանէ, և թէ որքան չարիս եւ նեղութիւնս հասուցին Հայոց՝ մինչեւ վերաւորել զեկեղեցականս, զանհնազանդ և զըմբոստ բարս նոցա, այլ

ամենքն հանդերձ։ Կուսակալն խոստացաւ 'ի վերադարձին իւրում առնել դատաստան, և քննել զայն օրինօք դատարանի։ Իբրեւ դարձաւ 'ի Բեբրոնէ 'ի բանակն, կազմեցաւ ժողով 'ի վրան Բեահէայ Պէյին, ուր էին Դատաւորն եւ գլխաւորք այլազգեաց Երուսաղէմի. կոչեցին անդ զՀայս և զԼատինս, և յետ բազմադիմի բանից և ասութեանց յերկուց կողմանց, հարցին Դատաւորք զԼատինս, թէ ունի՞ն Արքունի հրովարտակ վասն բացման դրան այնորիկ, թէպէտ ասէին ունել, բայց ոչ կարացին բերել, զի ոչ ունէին. տեսեալ Դատաւորաց թէ առանց Արքունի հրամանի բացեալ է դուռն եւ լեալ պատճառ խռովութեան 'ի մէջ երկուց ազգաց, հատին վճիռ զի Հէօճճէթի Շէրիով փակեսցի դուռն քարամբք, եւ Լատինք մտցեն և եւցեն 'ի յատկացեալ դրանէ իւրեանց որ 'ի մէջ Այրին, մինչեւ եկեսցէ Արքունի հրովարտակն։ Եւ Կուսակալն առաքեաց զՔաղաքապետն Երուսաղէմի եւ Դատաւորն, զԲեահէայն իւր ընդ Հայոց 'ի Բեթղեհէմ. հասեալ անդ մտին յեկեղեցին, խնդրեցին զբանալի դրան 'ի Լատինաց. իբրեւ ոչ ետուն նոքա պատճառելով զպատճառս՝ քակեալ հանին զդուռն 'ի տեղւոջէ իւրմէ, եւ տարեալ ընկեցին զնա 'ի վանս նոցին, եւ արկեալ քարինս հիւսեցին զտեղի դրան և ծեփեցին յերկուց կողմանց, (1819. 'ի 16 Ապրիլի) յաւուր նոր կիւրակէի՝ և դարձան յԵրուսաղէմ։ Իսկ Կուսակալն առեալ զԻլամ Դատաւորին եւ զՀանրագիրս այլազգեաց՝ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս առ գործակատար իւր, զի ըստ մտաց նոցին շնորհեսցի Հայոց հրովարտակ արքունուստ։ Եւ Խորհրդականք վանաց Ս. Յակոբայ գրեալ յայտ արարին առ Պօղոս Պատրիարք և առ Իշխանաւորս ազգին, զոր միանգամ արար Կուսակալն, և մեծահայց պաղատանօք աղաչէին զնոսա հոգ տանել վասն հրովարտակին և փութացուցանել զնա յԵրուսաղէմ. զի փակեալ մնասցէ դուռն, և մի թշնամիք կանխեալ այլ և այլ բանիւք ծանուսցեն զայն 'ի Դուռն։ Իսկ Կուսակալն յորժամ դարձաւ 'ի Դամասկոս՝ գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի, զի ըստ որոշման ժողովոյն փակեալ մնասցէ դուռն մինչ 'ի գալուստ հրովարտակին. զայս գիր առեալ Յակոբ վարդապետի դիմեաց առ Բդեշխն Աբքէի Սիւլէյման Փա-

չայ, որում եւ գրեալ էր Պօղոս Պատրիարք վասն այնր խնդրոյ, և էառ 'ի նմանէ եւս գիր առ մեծամեծս Երուսաղէմի հաստատուն պահել զվճիռն, որ տուաւ վասն դըրան Բեթղեհէմի հրամանաւ Կուսակալին Դամասկոսի։

Հակառակութիւնք Ցունաց անվերջանալի էին 'ի Բեթղեհէմ, զի կամէին խափանել զպատարագն Հայոց յԱյլէն Ծննդեան Քրիստոսի և արտաքսել յեկեղեցւոյ անտի, բառնալով զկանթեղս, զպատկերս և զայլ եկեղեցական սպասս։ և 'ի բողոքելն Հայոց առ Դատաւորն, և 'ի ցուցանել նոցա զամենայն գրեանս վասն այնր, կոչեալ զնոսա պատուիրեաց չհակառակիլ ընդդէմ Կայսերական հրամանին և բազմաթիւ գրեանց, եւ չյարուցանել վէճս ընդ Հայոց, և 'ի հաստատութիւն բանից նորին ինքն եւս գրեաց գիր, և Հայք առաքեցին զայն աղերսագրով առ Կուսակալն Սալէհ Փաշայ, և նա գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի բառնալ զհակառակութիւնս Ցունաց և լինիլ պաշտպան իրաւանցն Հայոց, որք սահմանեալ են արքունի հրովարտակաւ, լինիլ բաժանորդ եկեղեցւոյն Բեթղեհէմի եւ գերեզմանին Ս. Աստուածածնի։ Ի վերայ այսորիկ լուեալ Ցունաց ժամանակս ինչ, դարձեալ յարուցին խռովութիւն մեծ, զի բովանդակ եկեղեցին Բեթղեհէմի սեփհական Ցունաց ասէին, եւ 'ի սատել Դատաւորաց՝ դարձեալ լուեցին, եւ զկնի միոյ տարւոյ վերստին խռովութիւն մեծ, զի կամէին փականս դնել 'ի վերայ փայտեայ դրան եկեղեցւոյն, որ 'ի սիւնազարդ գաւթին, և զի չէին համեալ ընդ կարգադրութիւն Նուրի Էֆէնտեայ, որ լեալ էր Արքունի հրովարտակաւ և գիտութեամբ ամենեցուն, և այսպէս օր քան զօր զայրանայր խռովութիւնն, և այն յաւէտ 'ի փոփոխիլ Դատաւորաց քաղաքին։ Իսկ Հայք դարձեալ դիմեցին առ Դատաւորն, և մատուցեալ զգրեանս ամբաստան եղեն զանիրաւութենէ Ցունաց, եւ 'ի հարցանել նորա ցայլազգիս, ետուն պատասխանի, թէ սիւնազարդ գաւիթ եկեղեցւոյն Բեթղեհէմի բաժանորդութեամբ է երից ազգաց, և Հիւսիսային կողմն յատկացեալ Հայոց, և Գերեզման Ս. Կուսին բաժանորդ 'ի մէջ Հայոց եւ Ցունաց։ Արգել Դատաւորն զՑոյնս չխափանել զճանապարհն և չվիճել վասն եկեղեցւոյն և այլոց իրաց։ Եւ 'ի փոխիլ Դատաւորին դարձեալ առեալ

լութիւն Ցունաց վասն սոցին իրաց, և Հայք բազում ջանսիւք պաշտպանեցին զիրաւունս իւրեանց, (1820–21)։ Ցոյնք յաւելին յարուցանել զայլ ինն վէճ, զի բանալի արտաքին երկաթեայ դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլով 'ի ձեռս նոցա, 'ի գնալ անդ ուխտաւորացն Հայոց, տային սպասել առաջի դրան, և հուսկ ուրեմն բանային զդուռն թշնամանելով զնոսա։ Եւ ապա հնարեցին զայլ ինն նենգութիւն։ չինեցին 'ի վերայ երկաթեայ դրան տախտակամած քիւ (սաչադ), պատճառելով զզօրս արքունի, որպէս թէ 'ի նստիլ նոցա առաջի դրան պատսպարեսցին յարեւոյ եւ յանձրեւէ, այլ Հայք ամբաստան եղեն զնմանէ, թէ դողք և աւազակք ելեալ անտի մտանեն 'ի վանս նոցա, և զկնի քննութեան ետուն քակել զայն (1819։ 'ի 20 Փետրվարի), եւ քարամբք յարդարեցին զյատակ արտաքին դաւթի եկեղեցւոյն սակաւ ինչ իբր բաժին Հայոց, հաւասարութեամբ պարսպի վանաց, և այն եւս բազում խռովութեամբ և վիճմամբ, զի Ցոյնք կամէին զբովանդակն յարդարել, որպէս և արարին իսկ ('ի 23 Նոյեմբերի)։

Արդ՝ իշխանաւորք ազգին եւ Պատրիարքն հանդարտեալ 'ի վանդաւոր հոգոյ, զի զբաղեալ էին վասն աղաւութեան Տ. Կիրակոս Կաթուղիկոսին տանն Կիլիկիոյ, որ արդիլեալ էր անդ 'ի Կոստանդինուպօլիս Արքունի հրամանաւ։ Ապա յորդորանօք Պօղոս Պատրիարքի դումարեցան 'ի Պատրիարքարան ('ի 12 Յուլիսի) կարգաւորել զխնդիր Երուսաղէմի։ Նախ անպատշաճ վարկան զընտրութիւն Պօղոսի 'ի Պատրիարքութիւն Աթոռոյն Երուսաղէմի, զի կարի պիտոյ էր նա ինքեանց, և չէր արժան թողուլ նմա զայն Աթոռ, և համակամ հաճութեամբ ընտրեցին զՆիկոմիդացի Գաբրիէլ եպիսկոպոս, որ յայնժամ Փոխանորդ էր յԵրուսաղէմ, եւ գրեցին առ նա գիր շնորհաւորութեան, ծանուցանելով նմա զընտրութիւն իւր, յոր ստորագրեցին անձինք 17 և պատուիրեցին նմա հաստատուն պահել զՄորհրդականս և զկանոնադրութիւնն, զոր ազգովին հաստատեալ էին յաւուրս Թէոդորոսի։ Պահել առ իւր իբր օգնական զՑակոբ վարդապետ Լիւսդրացի մինչ 'ի Զատիկ, զոր առաքեալ էին իբրեւ Փոխանորդ 'ի կողմանէ իւրեանց, մինչեւ պարզեսցի խնդիրն Բեթղեհէմի, և ապա տալ վը-

կայական գնալ յԷջմիածին, եւ ձեռնադրեալ Եպիսկոպոս դարձցի անդրէն 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ զԱնդրէաս վարդապետան, որ էբեր զՊատրիարքական հրովարտակն, պահել առ իւր զաւուրս 20, և յետ կատարելոյ զուխտս, դարձուցանել զնա անդրէն 'ի Կոստանդինուպոլիս։ Այս նամակ Ամիրայից և Արքունի հրովարտակն եհաս յԵրուսաղէմ 'ի ձեռն Անդրէաս վարդապետի (1819 · 'ի 6 Օգոստոսի), և նստաւ Գարրիէլ Եպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան Երուսաղէմի, և գրեաց դիր շնորհակալութեան և հնազանդութեան առ ազգն, և թախանձանօք խնդրէր առաքել զհրովարտակն դրան Բեթղեհէմի (յ3 Սեպտեմբերի) մեծ յուսով ակնկալեալ սպասէին միաբանք դալստեան հրովարտակին վասն փակեալ դրան նախ քան զդալուստ Կուսակալին, այլ 'ի զուր և ընդունայն եղեն այնչափ ջանք և աշխատութիւնք նոցին, որ մեծամեծ ծախիւք կրկին անգամ առին Իլամ և հանրագիր յայլազգեաց, եւ առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս, զի թերեւս հնարս գտցեն, այլ չէղեւ ինչ։

Իբրեւ եհաս Կուսակալն յԵրուսաղէմ (յ3 Ապրիլի)։ Եւ ոչ եգիտ զհրովարտակն, ասէ՝ նախորդն իմ ընդդէմ իրաւանց եւ սակս ագահութեան իւրոյ փակեալ է զայն դուռն՝ և սպառնայր բանալ 'ի նախատինս Հայոց · զի Լատինք խոստացեալ էին տալ նմա 75,000 դահեկան, այլ նա ոչ առ յանձն, և ետ դիր Հայոց զի փակեալ մնասցէ դուռն, և Դատաւորն Իլամ առ Տէրութիւնն, զոր և առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս ընդ Յակոբ վարդապետին։

Ի հասանիլ Կուսակալին՝ Յոյնք մեծամեծ ընծայիւք դիմեցին յոտս նորա, և հաճեալ զկամս նորին առին հրաման 'ի գիշերի։ զի յամենայն տեղիս նոցա լիցի առաջնութիւնն, այսինքն 'ի Ս · Յարութիւն, յԱտուածածին և 'ի Բեթղեհէմ, նախ Յունաց կատարել զուաշտամունս իւրեանց եւ ապա Հայոց · լուեալ զայս վարդապետաց, մատուցին առ նա գիր բողոքոյ, և յանդիման եղեն երկոքին ազգք առաջի Նորա 'ի դատաստան · Յոյնք մատուցին զհրովարտակն \২২৮, նոյնպէս և Հայք զերկուս հրովարտակս 'ի նոյն թուականի, եւ ասեն՝ եթէ ըստ հրամանի Արքային լիցի

հաւասար բաժանորդ եկեղեցին Բեթղեհէմի, պարտ է մընալ զկնի նոցա, իսկ եթէ ոչ՝ 'ի յատակացեալ տեղիս մեր կատարեմք զուաշտամունս մեր · այլ Կուսակալն ասէր, զոր միանգամ եւտու, ոչ առնում յետս, զի առաջնութիւնն Յունաց է ամենայն ուրեք, եւ 'ի նոյն գիշերի մեկնեցաւ յԵրուսաղէմ · եւ Հայք չոքան առ Դատաւորն եւ յայտարարին նմա զվնասակար դատաստանս Բղեչխին եւ առին 'ի նմանէ Իլամ և հանրագիր յայլազգեաց, և առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս, և զկատարեալն լսել 'ի բերանոյ Յակոբ Եպիսկոպոսի։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս դիպաւ գործ աղետալի, զի վրդովեալ իմն էր անդ հասարակութիւն Հայոց, զի մատնութեամբ ուրացեալ սարկաւագի ումեմն ըմբռնեցան ոմանք 'ի գլխաւորաց Հայոց և եդան 'ի բանտի, որք էին Գարաքեհեայ Աբրահամ, Արփիարեան Մկրտիչ, Կելկելեան պապա Պողոս, որպէս թէ գիտութեամբ սոցա լեալ իցէ աղմուկն (1820 · 'ի 26 Օգոստոսի)։ Եւ դարձեալ մատնութեամբ նոյն ուրացելոյ արքունի զինուորք և Ոստիկանք եկին 'ի ճանապարհ երթալ 'ի Կարին, որոնել և ըմբռնել զՅովհաննէս և զԲարսեղ վարդապետս Էջմիածնի։ Եւ հասեալ խնդրակաց 'ի Նալբանդ Խան կոչեցեալ տեղին, կալան զՏ · Կիրակոս Կաթուղիկոսն Սսոյ հանդերձ Յովհաննէս Եպիսկոպոսիւ և Գրիգոր վարդապետիւ Նորին, որ այն ինչ մեկնեալ էին 'ի մայրաքաղաքէն գնալ 'ի տեղիս իւրեանց, և բանութեամբ ածին 'ի Կոստանդինուպոլիս (յ8 Սեպտեմբերի), և զկնի 10 աւուրց հաշիւ կարացին աղատել զնա Պատրիարքն և Գլխաւորք ազգին, և առեալ հրաման առաքեցին յԱթոռն իւր 'ի Սիս։ Եւ 'ի նմին աւուր 'ի 18 Սեպտեմբերի, օրն շաբաթ, ժամ 11, մինչ ժողովուրդն էր յեկեղեցին յերեկոյի պաշտամանն, բերեալ դահճաց զՍագայեան ծերունազարդ Մարտիրոս, ըստ ոմանց Գրիգոր Ամիրայն հրամանաւ Արքայի գլխատեցին առաջի դրան Մայր եկեղեցւոյ, որ անպարտն էր 'ի չարեաց, սորա յիշատակն է ծանրագին վարագոյրն 'ի խորանի Գլխադրի։ Կախեցան 'ի Պարմագ գարու դէմ յանդիման միմեանց երկոքին ուրացեալքն, Սարկաւագն և մանկահասակ Ազարեանցն։ Տէլի Պաղտասար և Թաւուգճի օղլու (եղբայր Երեմիա Եպիսկոպոսի), գլխատեցան 'ի

Սամոթիա։ Կեսարայի Բարուճճի օղլու, եւ ոմն ալեւոր, որ զտեսարակն շուրջ ածեալ 'ի քաղաքին ամբոխ յարուցեալ է, գլխատեցան 'ի Տիբիլի Թաշ, 3 Ամիրայք և 2 Եպիսկոպոսունք հանեալ 'ի բանտէ դատապարտեցան յաքսորս ('ի 19 Սեպտեմբերի)։ անկաւ ահ մեծ 'ի վերայ ազգին Հայոց 'ի Թագաւորեալ քաղաքի անդ, զի ոչ կարէին առնել ինչ, ոչ Պատրիարքն և ոչ իշխանաւորք, զի սիրտ Արքայի ծանրացեալ էր 'ի վերայ նոցա (1820)։

Ցոյնք յափշակեցին զգերեզմանատեղիս Նեսդորականաց և Վրաց, զորս յառաջագոյն գնեալ էին Հայք յայլազգեաց՝ յանհետանալ նոցին յերուսաղէմէ, փոխանորդն Հայոց Եղիա Եպիսկոպոս զեգերէր 'ի դրունս այլազգեաց։ Ցոյնք դիմեցին առ Կուսակալն Դամասկոսի Տէրվիշ Փաշայ, և ամբաստան եղեն զազգէն Հայոց թէ՝ քակեալ զնախնի սահմանս գերեզմանատանց, տիրեալ իցեն մեր մասին գերեզմանատան նոցին, հակառակ դաշանց եւ պայմանացն։ Իսկ Կուսակալն գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի, բառնալ զխռովութիւնն, քննել զտեղին և ծանուցանել ինքեան, Եղիա Եպիսկոպոս թէպէտ էառ գիր 'ի Քաղաքապետէն Երուսաղէմի մնալ մասին այնմիկ 'ի ձեռս Հայոց ըստ տրամադրութեան Հէօճէթի Դատարանի, այլ չեղեւ ինչ օգուտ, զի Ցոյնք տիրեցին տեղւոյն և եղին նոր սահման (1821)։

Իսկ Գաբրիէլ Պատրիարք գրեաց առ Փոխանորդ Մարկոս Եպիսկոպոս 'ի Կոստանդինուպոլիս, յանձն առնել ըստ պաշտօն փոխանորդութեան Ցակոբ Եպիսկոպոսի Լիւսդրացւոյ, որպէս յորդորեալ էր զնա նախ քան զմեկնիլն յերուսաղէմէ, զի գուցէ դադարեսցին Ցոյնք ասէր՝ 'ի չարութեանց իւրեանց, այլ նա ոչ ընկալեալ զայն, դարձոյց յետս զկոնդակն առանց խախտելոյ զկնիք նորին, և գրեաց առ Գաբրիէլ տալ զայն պաշտօն Ցարութիւն վարդապետի Եդեսացւոյ, աշակերտի Մարկոս Եպիսկոպոսի, որպէս և եղեւ իսկ։ Եւ զկնիք աւուրց ինչ մեկնեցաւ ինքն անտի 'ի քաղաք իւր 'ի Լիւսդրա։ Գաբրիէլ Պատրիարք քանիցս գրով ստիպեաց զնա դալ յԱթոռն, իսկ նա այլ եւ այլ պատճառանօք դեգերէր 'ի կոստանդնուպոլիս, յերկիւղէ ճանապարհին և 'ի պակասութենէ ծախուց, և Գլխաւորք

ազգին նախ գրեցին առ նա երթալ յԵրուսաղէմ, և յետոյ ազգ արարին նմա մնալ 'ի տեղի իւր ուր և է, և մի երթալ յԵրուսաղէմ, և նա առաքեաց 'ի ձեռն հաւատարմի զթղթեանս, զհրովարտակս վասն խարամի և վասն աքսորանաց Եղիա Եպիսկոպոսի, եւ ինքն արդելաւ անդ վասն ապստամբութեան Ցունաց և խռովութեան աշխարհի, և սպասէր հրամանի Պատրիարքին, եւ յետ առաքելոյ ընդ այլ թղթեանս և զպատճէնս գրոց Ամիրայից, ասէ՝ 'ի ժամանել գրոց ըստ պատշաճին տնօրինել, զի անդուսպ եւ խարդախ ապստամբքն լուիցեն, խմացին և ծանիցեն թէ մարդիկ են յաշխարհի։ սատեա միոյն, զի այլքն երկիցեն, և ոչ ոք կարէ կալ հակառակ յԱստուծոյ պարգեւեալ իշխանութեանդ։

Գաբրիէլ Պատրիարք գրեաց կոնդակ յորդորական բանիւ առ ժողովուրդս Եգիպտոսի, եւ առաքեաց 'ի ձեռն Ցակոբ վարդապետի, յորում պատուիրէր հայրական խրատիւք հնազանդիլ առաջնորդի իւրեանց Սահակ վարդապետի իբրեւ իւրոյ փոխանորդի, և յանձն առնել նմա զհասոյթս եկեղեցւոյ եւ զայլ իրաւունս առաջնորդի։ Եւ տալ առատ նուէրս և ողորմութիւնս Ցակոբ վարդապետին իբրեւ օգնութիւն 'ի նեղութեան Աթոռոյն, չզարհել առ իւրեանս զպանդուխտ քահանայս, զի զրովանդակ հոգեւոր պէտս նոցին խոստանայր ընուլ յԱթոռոյն, (1821։ յ8 Նոյեմբերի)։

Տեսեալ Լատինաց թէ յետ անցանելոյ երկուց ամաց Հայք ոչկարացին բերել զհրովարտակն վասն փակման դրան, բղջաք բարձին առ Կուսակալն Տէրվիշ Փաշա, և խնդրէին բանալ զդուռն, և նա գրեաց առ Դատաւորս Երուսաղէմի, ելանել 'ի քննութիւն տեղւոյն, եւ ստուգել զխնդիրն ամենայն պարագայիւք և ծանուցանել ինքեան, որ և արարին իսկ, սակայն չեղեւ անտի օգուտ ինչ Լատինաց։

ԳԼՈՒԽ ԹԳ.

Աքսոր Եղիա Եպիսկոպոսի։ Գերիլ Նաւուն ուխտաւորաց և Յովհաննէս վարդապետի։ Զայրութ ամիրայից։ Հրովարտակ Արքայի վասն կաթոլիկ Հայոց։ Ժողով 'ի Մայր եկեղեցին։ Ընտրութիւն նոր խորհրդականաց Երուսաղէմի։ Խմբագրութիւն կանոնական բանից։

Ի ՀԱՄԱՆԻՀ հրովարտակի Արքային յերուսաղէմ, Գարրիէլ Պատրիարք առաքեաց զԵղիա Եպիսկոպոս ընդ Պոլուսի Յակոբ վարդապետի 'ի Կեսարիա, Եղիա յաքսոր, և Յակոբ 'ի Նուիրակ, յանձն արարեալ նմա զհրովարտակն պատուիրելով առանձին, 'ի հասանիլ նոցա 'ի Կեսարիա տալ զայն Ստեփաննոս Եպիսկոպոսի առաջնորդի տեղւոյն 'ի դործադրութիւն։ Սոքա նաւեալ հասին 'ի Տարսոն Կիլիկեցւոց, ուր դժուեցաւ Եղիա ընդ Յակոբայ, նախատելով զնա բազմադիմի բանիւք՝ և մնաց ինքն անդէն 'ի քաղաքին, և Յակոբ մեկնեալ 'ի նմանէ գնաց 'ի Կեսարիա, եւ եդիտ զժողովուրդն 'ի տառապանս յերեսաց հարկապահանջութեան և 'ի սաստիկ սովոյ՝ յորմէ մեռանէին բազումք, եւ Բղեչիս երկրին ցասուցեալ ընդ Աւետիս Եպիսկոպոսի վանահօր վանաց Ս. Կարապետի՝ կամէր կործանել զնոր շինուածս վանաց, և զլխաւորք ազգին մոռացեալ ընդունելութիւնս իւրեանց, ետուն նմա 25,000 դահեկան տուդանս և զերծան 'ի ձեռաց նորա։ Տիւզեան Կարապետ, Յակոբ և Պողոս-Չելեպիք, որք աքսորեալ էին 'ի վանս Ս. Կարապետին, տեսեալ զՅակոբ վարդապետ մխիթարեցան, եւ հարցանէին զվիճակէ Աթոռոյն, զողջունէ Պատրիարքին և զմիաբանութեան, և խոստացան առնել բարիս զկնի ազատութեան իւրեանց, (1821. 'ի Նոյեմբերի)։ Իսկ Եղիա Եպիսկոպոս նստեալ 'ի Տարսոն քաղաքի գրեաց բազում անգամ 'ի Կոստանդինուպոլիս առ Պողոս Պատրիարք, եւ թախանձանօք աղաչէր զնա ազատել զինքն յաքսորանաց, խոստանայր հրաժարիլ 'ի միաբանութենէ Աթոռոյն, եւ խնդրէր վիճակ առաջնորդական, և Պողոս դրեաց առ նա գալ 'ի Կոստանդինուպոլիս, և նորա ընկերացեալ ընդ Գրիգոր Գալֆայի, այն ինչ ազատելոյ յաքսորանաց, զնացին

'ի Կեսարիա և անտի 'ի Կոստանդինուպոլիս ('ի 25 Մայիսի), և 'ի ճանապարհին խօսեցաւ Եղիա Գրիգորի բազում ինչ, քամահրելով և բասրելով զանհմուտ և զանխոհեմ կառավարութիւնս Գաբրիէլ Պատրիարքի, միշտ արդարացուցանելով զինքն, և նորա գոլով անտեղեակ բարուց եւ բնաւորութեան նորին, զորմէ գրեալ էր Գաբրիէլ Պատրիարք առ ազգայինս Կոստանդինուպոլսոյ, փոքու իմն հաւանէր բանից նորա, և 'ի հասանիլ 'ի մայրաքաղաքն Գրիգոր Գալֆա մեղադրէր զՊատրիարքն, եւ Եղիա չարախօս մինէր զնմանէ առ Ամիրայս, և Պողոս Պատրիարք առաքեաց զնա 'ի վանս Իսակիւտարու հանդարտիլ անդ ժամանակս ինչ և ապրիլ ծախիւք իւրովք։

Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի հիւրընկալ, զկնի տօնի Պասեքին բազմութեամբ ուխտաւորաց մեկնեցաւ 'ի Յոպպէ քաղաքէ ('ի 27 Ապրիլի) եւ նաւեալ անտի հասին անվնաս 'ի կղզին Հռոդոս, և արգելան անդ աւուրս 40. զի ապստամբեալ էին Յոյնք, և էր խռովութիւն եւ երկիւղ մեծ 'ի ծովու. 'ի սպառիլ դրամոց և 'ի կարօտիլ ամենեցուն ծախուց եւ պարենից, էառ Յովհաննէս վարդապետ մուրհակաւ յայլազգի Իպրահիմ անուն նաւապետէ 11,000 դահեկան, եւ բաժանեաց ուխտաւորաց ըստ իւրաքանչիւր պիտոյից. եւ մեկնեալ անտի գտին ճանապարհ 'ի ցամաքէ արք իբրեւ 400 հասին խաղաղութեամբ 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ Յովհաննէս վարդապետ նախ քան զմեկնիլ իւր անտի՝ ետ զբեռինս վանաց և զ40 ուխտաւորս 'ի նաւ ինչ Աւստրիոյ, և 'ի մեկնիլ անտի նաւապետին զկնի աւուրց հասին 'ի վերայ նորա ծովապատակք Յունաց, առին զնաւն և կողոպտեցին որ ինչ 'ի նմա, եւ դերի վարեցին զարս 16 յազգէ Հայոց 'ի ԶամբՀայ կղզին. և ետուն գիր ինչ 'ի ձեռս նաւապետին եւ արձակեցին։ Ի հասանիլ նորա 'ի Կոստանդինուպոլիս, բողոք բարձին Հայք առ Տէրութիւնն և առ Դեսպանն Աւստրիոյ և խընդրէին 'ի նմանէ զինչս և զարս. և 'ի բազմանալ բանից եւ վիճմանց յանձն առ Դեսպանն բերել զայնս, եւ խնդրեաց 'ի նոցանէ զտուրմար ընչից և արանց. և նոքա ետուն՝ որ էր 88,072 դահեկան. գրեաց առ Հիւպատոսն Զմիւռնիոյ գըտանել զնաւն կորուսեալ. զայս գիր առեալ Հայոց հրա-

մանաւ Տէրութեան և յանձնարարական թղթովք առաքեցին զՅովհաննէս վարդապետ ցամաքաւ 'ի Զմիւռնի. 'ի հաստանիլ նորա անդ և ընթեռնուլ Հիւպատոսին զդրեանս, եհան 'ի ճանապարհ զերկուս նաւս մին մեծ և միւսն փոքր, և Յովհաննէս վարդապետ 'ի նմա ('ի 11 Յուլիսի), և դնացին դէպ 'ի կղզիս Յունաց 'ի խնդիր դերելոց և ընչից։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս համբաւեալ էր 'ի մէջ հասարակաց թէ Գաբրիէլ Պատրիարք առաքեալ է յեգիպտոս զերկուս Վարդապետս վասն կարեաց Աթոռոյն, եւ առնուլ 'ի Կուսակալէ երկրին տոկոսիւք 2000 քսակս արծաթոյ յանուն Երուսաղէմի. լուեալ էր զայս և Գրիգոր Գալֆայ 'ի Կեսարիա, զնոյն հատատէին և նամականիք Եգիպտոսի գրեալ առ ոմանս յԱմիրայից։ Եւ 'ի սասականալ չշնչմանց՝ զայրացան յոյժ Ամիրայք, և կոչեցին զՓոխանորդ Յարութիւն վարդապետն, եւ նորա գոլով անտեղեակ իրացն, մնաց անպատասխանի առաջի նոցա. եւ նոքա կշտամբէին զնա, թէ զի՞նչ կամիք առնել՝ առանց խորհելոյ զվախճանն, կամի՛ք արկանել զազգն ողջոյն 'ի վտանգ մեծ, զի 'ի պատահիլ փոփոխութեան Կուսակալի երկրին՝ ո՞չապաքէն ազգն այրի և տոչորի 'ի Տէրութենէ, և կամ զայս եւս փակեալ դրան Բեթղեհէմի՞ նմանեցուցանէք, որ առանց հարցանելոյ արարիք, և այլ սոցին նըման բանք։ Արդարեւ կրեցին և կրէին զպէսպէս նախատինս 'ի Դրանէ՝ վասն դրան այնորիկ 'ի խնդրել նոցա հրովարտակ վասն այնր. զի Լատինք և Դեսպանն Գաղղիոյ ընդդէմ զինեալ էին՝ և Դուռն ոչ կամէր լսել զբանս Հայոց, այլ 'ի ստիպելն՝ ասացին դատաստանաւ վճարել զիրսն, Հայք ոչ առին յանձն՝ զի դատ նորին վճարեալ էր յերուսաղէմ, այլ ներքին միտք Նախարարաց էր երկարել զբանն եւ շահիլ յերկուս կողմանց, որպէս արարին 'ի դատին Յունաց։

Ապա ստիպեցին Ամիրայք զՅարութիւն վարդապետ հարկեցուցիչ բանիւ գրել յերուսաղէմ և իմանալ զստուգութիւն խնդրոյն։ Խնդրեցին նաեւ զպատասխան մահսերական գրոյն իւրեանց, զոր չեւ եւս էին ընկալեալ, զտումար պարտուց Աթոռոյն, զհաշիւս ելից և մտից, յորմէ յորմէ նստաւ Գաբրիէլ յԱթոռ Պատրիարքութեան, անյապաղ առաքել։ Գրեաց զայս ամենայն Փոխանորդն եւ առաքեաց յերուսաղէմ։ Խափանեցաւ ծովային ճանապարհորդութիւն յապստամբութենէ Յունաց, եւ արգելան ուխտաւորք գնալ յերուսաղէմ (1822)։

Յակոբ Եպիսկոպոս Լիւսդրացի (Ագչէհիր) եկն յերուսաղէմ, և կացեալ անդ զաւուրս ինչ մեկնեցաւ անտի՝ և Գաբրիէլ Պատրիարք ծանոյց զայս Փոխանորդին 'ի Կոստանդինուպոլիս։

Ի զայրանալ խռովութեանցն Հայոց Կաթոլիկ անուանելոց 'ի մայրաքաղաքի անդ, Սուլթան Մահմուտ Արքայ առաքեաց հրովարտակ առ Պօղոս Պատրիարք Հայոց, անհետ առնել 'ի քաղաքէն զկաթոլիկ քահանայս, չպատարագել նոցա 'ի տունս, եւ հնազանդիլ ամենեցուն Պատրիարքին Հայոց, և զանհնազանդսն ծանուցանել 'ի Դուռն՝ զի պատժեսցին, ինչք եւ ստացուածք նոցին գրաւեսցին յարքունիս։ Եւ նորա կոչեալ զդիւաւորս երկուց կողմանց արար ժողով մեծահանդէս, ուր ընթերցաւ առաջի ամենեցուն հրովարտակն Արքայի, և զկնիք ճոխ ատենաբանութեան Պօղոսի, ամենեքեան հնազանդեալ ընկալան զդատանութիւն եկեղեցւոյն Հայոց, եւ ձեռն արկին 'ի գիրն զոր պատրաստեալ էր Պօղոս. զնոյն արարին և հաստատութիւնք նոցին. աքսորեցան 6 քահանայք, և 11 եկին 'ի հնազանդութիւն, և այլքն հանդարտեցան 'ի տեղիս իւրեանց։ Եւ ժողովել Արքայ զամենայն եկեղեցական ըստպաս և զզգեստս, որք դուռն 'ի տունս նոցա և առաքեաց առ Պատրիարքն Հայոց, պատուիրեալ նմա առնուլ 'ի նոցանէ 1000 քսակս արծաթոյ և առաքել առ ինքն, և նա կատարեաց զհրաման նորա։ Զայս արար Արքայ վասն Տիւզեան գերդաստանին, որք էին 'ի բանտի առ Պօստանճի Պաշի, և կանայք նոցա 'ի Պատրիարքարանն. վճռեաց Արքայ զտունս և զընակութիւնս նոցին, և գրաւեաց զամենայն ինչս և ստացուածս և մերկացոյց յամենայնէ. 'ի պատճառս սոցա երկարեցաւ գործ Բեթղեհէմի դրան։

Իսկ Գաբրիէլ Պատրիարք առաքեաց զտումար հաշուոյ Աթոռոյն 'ի ձեռն Փոխանորդին իւրոյ Զմիւռնացի Յարութիւն վարդապետի, որ էր այր անհանճար եւ առանց դպրութեան, գրեալ գիր առ իւրաքանչիւր Ամիրայս։

և Նորա հասեալ անդ Թէպիտեւ բաժանեաց զդիրս նոցա, այլ ոչ ընկալաւ որոշ պատասխանիս և յամախէր ստէպ առ Կելկելեան Պօղոս, և Պատրիարքն այլ և այլ բանիւք հայեցուցանէր զնա 'ի դումարումն ազգային ժողովոյ։

Յառաջագոյն ըստ հրաւիրելոյ Իշխանաւորաց ազգին գնացեալ էին 'ի Կոստանդինուպօլիս Եղիա, Կիրակոս եւ Դիոնէսիոս Եպիսկոպոսունք, ուր էր և Զմիւռնայի Յարութիւն վարդապետն, եւ 'ի դումարիլ ազգային ժողովոյն ընտրեցին զեօթն Խորհրդականս Աթոռոյն եւ-վասն դիւրութեան և բարւոք կառավարութեան Աթոռոյն, խմբագրեալէր յառաջագոյն Պօղոս Պատրիարք կանոնական բանս գիտութեամբ ազգայնոց, և 'ի մատուցանել զայն յատեան, ամենեքեան հաճեալ ընդ խմբասս նորին և ձեռն արկեալ կնքեցին, զորոյ զպատճէնն ունիմք դնել 'ի ստորեւ։ Եւ սպա խորհրդով գրով և կանոնական բանիւք դարձուցին զԽորհրդականս յԵրուսաղէմ, ծանուցանել զմիտս նոցա միաբանաց վասն օգտի Աթոռոյն։ Եւ նոցա հասեալ յԻկոնիոն հիւանդացան ոմանք 'ի նոցանէ, եւ մնացին անդ մինչեւ գտին զառողջութիւնն։ Իսկ զՅարութիւն վարդապետ եւ զայլս առաքեցին ընդ կարավանին 'ի Դամասկոս, սպասել նոցա անդ, զի 'ի միասին մտցեն յԵրուսաղէմ ըստ պատուիրելոյ Ամիրայից։ Եւ անտի ազդ արարին միաբանաց չմարիլ 'ի տիրողաց երկրին, և չվատնել յուր պէտս զդրամս, սակս առնլոյ զդրեանս, զի չէին ինչ օգուտ, այլ սպասել գալստեան նոցին (Սեպտեմբեր 15)։ Եւ յետ այնորիկ չորեքին խորհրդականքս այսոքիկ մտին խաղաղութեամբ յԵրուսաղէմ, և որքան կարելի էր խոնարհութիւն ցուցեալ՝ ընկալեալ եղեն 'ի Պատրիարքէն և 'ի միաբանութենէ, որ և յետոյ բազում ինչ գրեցին առ ազգապետս։ Եւ յետ ընթեռնլոյ 'ի ժողովի միաբանաց զդիրս ազգին եւ Պատրիարքին, մատուցին նաեւ զկանոնագիրն որ ունէր օրինակ զայս։

Որովհետեւ հոգելոյս նախնիք մեր իրրեւ յատուկ հոգեւոր պարտաւորութիւն իմն համարելով յԱստուծոյ ինքեանց տնօրինեալ և պատուիրեալ ջանային 'ի չինութիւն և 'ի պայծառութիւն քրիստոսական փրկագործ տեղեաց, և տիեզերական Աթոռոյն Երուսաղէմի և 'ի բարեկարգու-

թիւն նորին միաբանութեան, եւ առ բարւոք եւ անշնաս կառավարութիւն նորին Ս. Գահին որոշէին զոմանս բանագէտս եւ գործունեայս անձինս խորհրդաւոր թուով զեօթն Խորհրդականս, որպէս և մեք քանի ամօք յառաջ յաւուրս Տեառն Թէոդորոսի բազմամեայ միաբանի եւ մեծավաստակ Պատրիարքի կարգեալ հաստատեցաք, որով ոչ սակաւ օգուտ մեծի Աթոռոյն և ուրախութիւն ազգին եւ հանդարտութիւն մեզ երեւէր։ Բայց յետ վախճանի նորին Սրբազնութեան՝ ոմանք 'ի կառավարչաց հանգուցեալ, և ոմանք յախորժակս իւրեանց սրտին բերեալ, և Սրբազան Պատրիարքին եւս եւ ոչ զմի 'ի նոցանէ համարեալ, և այսպէս տարաձայնութեամբ և հակառակելով միմեանց՝ խանգարեցաւ խորհրդականութիւնն, և ամենայն ոք ըստ դատողութեան մտաց իւրոց և ախորժակաց՝ յանօգուտս վատնէր և մխսէր 'ի գիշումն պարտուց և յաւելումն վաշխից։ Եւ մինչ ըստ ներկայականի իրր տիեզերական սասանութեանց գնացք ուխտաւորաց խափանեցան, և հեռաւորք չկարացին և չկարեն իսկ և ոչ սակաւուք տրօք ինչ օգնել առ այժմ (ըստ որում ամենայն ոք ծանրացաւ 'ի պարտս), ուստի և Ս. Աթոռն առաւել եւս բեռնաւորեցաւ պարտուք և տոկոսի մոնկլոնք։ և առ այս իրր 'ի բուժ ախտից դժուարափարատից, զայս մի ինչ դտաք, այս ինքն ընտրել և որոշել զեօթն անձինս անձնադիրս և իրր կարողս 'ի կառավարութիւն Ս. Տանն եւ միաբանութեան նորին, եւս և հարկաւորապէս զընդդէմ կացողս բռնի պահանջողաց դլխաւորաց և հասարակաց։ Զորս և յանուանէ ըստ կարգի նշանագրեալ կարգեցաք և հաստատեցաք մեք հոգածու և հոգաբարձուքս, և յանձնեցաք նոցա զամենայն կերպ կառավարութիւնս Սրբոյ Տանն ըստ հոգեւորին և ըստ մարմնաւորին, ըստ արտաքնոյն և ըստ ներքնոյն, ըստ եկամտից և ըստ ծախուց և ամենայնն ըստ ամենայնի։ Եւ վճռեցաք եւս, թէ Սրբազան Պատրիարքն ձեռնամուխ չլինիլ 'ի գործս նոցա, զի մի ապա պատճառ ինչասուց եւ անկարգութեանց գալ դատեսցի։ Եւ յայս միտ սահմանեալ կանոնեցաք զհարկաւորսն 'ի մշանջենաւոր գործառնութիւն եօթն Խորհրդականաց՝ և արձանագրեցաք այսպէս։

1°. Խորհրդարան անուամբ տեղի մի յատկացուցանել, յորում միշտ հաւաքեալ եօթն Խորհրդականաց՝ բարեմըտութեամբ խորհիլ, տնօրինել եւ կարգաւորել զօգտակարն Սրբոյ Տանն՝ ըստ ներքնոյն եւ ըստ արտաքնոյն, ըստ հոգեւորին և ըստ մարմնաւորին, ըստ եկամտից և ըստ ծախուց. այլ և ընտրել զարժանաւորս 'ի միաբանութիւն և յեկեղեցականութիւն 'ի դպրութենէ ցաստիճան Եպիսկոպոսութեան. 'ի ներքս և յարտաքս գործակալութեան՝ և այլոց ամենից, զի յայսմհետէ 'ի նոցանէ՝ այսինքն յեօթն Խորհրդականաց ունի ազգն հարցանել և որոնել և գիտել զամենայն կերպ կառավարութիւն Սրբոյ Աթոռոյն։

Իսկ Սրբազան Պատրիարքն միայն յիւրաքանչիւր հոգատար լիցի և կատարեսցէ, այսինքն՝ յորժամ Խորհրդականք ընտրեսցեն զոք 'ի միաբանութիւն 'ի գործակալութիւն, 'ի Նուիրակութիւն, յաստիճան և այլն, զպահպանիչն ասել և զկոնդակսն կնքել։

2°. Ի Խորհրդարանի անդ դիցի «էմ»այ որկղն արդեանց երեք կերպ բանալեօք, և իւրաքանչիւր առ մի 'ի Խորհրդականաց մնասցէ, և եօթն Խորհրդականք 'ի միասին եկեալ բացցեն և փակեսցեն, և զեղեալ և հանեալ դրամն 'ի տումար անցուսցեն։

3°. Ի Խորհրդարան անդր նստցի Խորհրդական գրագիրքն, և որոց ինչ վէճ կամ խնդիր լիցի 'ի միաբանից՝ յուխտաւորաց և 'ի քաղաքացի ժողովրդոց՝ 'ի Խորհրդարանն գիմեսցեն (և ոչ այլուր), և զխնդիրն 'ի գիր առեալ՝ 'ի ժողովիլ Խորհրդականաց՝ բարւոք քննութեամբ արասցեն զիրաւունս զրկելոյն, եւ վճռեսցեն զդատն 'ի բուժ ախտացելոյն։

4°. Ի մէջ Ս. Աթոռոյն եղեալ արքունական Խաթի Շէրիֆք և Ֆէրմանք և սէնէտք ձեռամբ Խորհրդականաց ըստ իւրաքանչիւրոց սէնէդից մտաց հաւանութեամբ ծանօթութեամբք յատուկ նուիրայիւ 'ի տումար անցուցեալ՝ 'ի Խորհրդարան անդր պահեսցեն զգուշութեամբ 'ի ներքոյ երից փականաց և կնքոց Խորհրդականաց։

5°. Եթէ վասն սաստիկ հարկաւորութեան Ս. Աթոռոյն դէպ լիցի փոխ դրամ առնուլ՝ Խորհրդականք գտցեն, եւ

մուրհակն անպատճառ Խորհրդական գրագիրի գրովն լիցի, և Ս. Պատրիարքն կնքեսցէ. նոյնպէս և փոլիցայք գրեանքն լիցին, բայց յատուկ ողջունագիր նոցա կնքով Խորհրդականաց լիցի։

6°. Եթէ ըստ եկեղեցականութեան և եթէ ըստ քրիստոնէութեան կամիցի ոք միաբանիլ, և կամ Մերունեաց և գործակալաց պիտոյանայցէ սպասաւոր, գիտութեամբ Խորհրդականաց լիցի ընտրութիւն նոցա. մի ընկալցին 'ի միաբանութիւն զստահակս և զարբեցողս, և մի զանմօրուս պատանիս հանցեն 'ի դաս, զի այնպիսիք առիթ են աւերման կարգաց Ս. Տանն, և անուան բոլոր միաբանութեան. այլ զայնպիսիսն մերժել և արտահալածել զայժմեանսն, և յառաջակայէն զգուշանալ։

7°. Զանգէտս, զանկիրթս, զանփորձս և զանուղղայս մի կոչել յաստիճան և 'ի գործակալութիւն, եւ մի բնաւ հանել 'ի վիճակս յԱռաջնորդութիւն և 'ի Նուիրակութիւն, զի նոցին այնպիսեաց անուղղայ դնացիւքն, և բռնի անկանոն տիրելով և իշխելովն և անչափ պահանջելովն զզուին ժողովուրդք վիճակաց, և ցրտանան 'ի սիրոյ Ս. Աթոռոյն և եկեղեցականաց, եւ յառաջանայ վնաս մեծ յարդիւնս, և գայթակղութիւն 'ի հաւատս։ Այլ պարտ է Նուիրակաց սիրաշահս լինել եւ համեղախօս և քաղցրաքարոզ. զի մի ինքեանք այնքան աշխատեսցին 'ի պահանջելն, որքան տուողքն 'ի սէր նոցին վառեալ փութացին 'ի տալ յօժարութեամբ և փափաքանօք։

8°. Նուիրակունք 'ի վճարել գործոց իւրեանց դնացեալ 'ի Ս. Աթոռն ամենայն հարազատութեամբ և մտերմութեամբ տացեն զհաշիւ արդեանց և ծախուց յանուանէ տումարիւ 'ի ներկայութեան Խորհրդականաց. մի լիցի խորել և իւրացուցանել ինչ 'ի գոյից որք տուեալ լինին նոցա 'ի ժողովրդոց թէ յայտնի և թէ 'ի ծածուկ յանուն Ս. Տեղեաց և Մեծի Աթոռոյն, մտաբերելով զԱնանիայն և զՍափիրայն և զանցս նոցին, այլ ըստ իրաւանց շատ լիցի նոցա ժամուցն իւրեանց և դաւազանապտուղն։ Եւ այսպէս հարազատութեամբ գործակատարքն վարձատրեսցին յԱտուծոյ և ըստ արժանեաց պատուեսցին 'ի միաբանութեան, և յառաջեսցեն յայլ եւս մեծ գործակատարութիւն։ Իսկ

եթէ զիւրեանցն նախազատիւ համարելով ժխտեսցեն, և 'ի Ս. Տունն չմնայեսցեն, պատժեսցին և յանարգս դասեսցին, և զայնպիսիսն անպատճառ առանց ակնառութեան միաբան կնքով նշանագրեսցեն Խորհրդականքն, և ցուցցեն մեզ զի գիտասցուք և մեք, և ըստ արժանոյն վարձատուր լիցուք։ Սոյն կարգ եղիցի և ամենայն Ռէյիզաց վանօրէից ներքնոց և արտաքնոց։

9°. Նուիրակութեան մեծ կոնդակն՝ Ս. Աթոռոյն եւ Պատրիարքի կնքովն լիցի (ըստ նախնեաց), բայց յիշեսցի 'ի կոնդակին թէ (խորհրդով և միակամ ընտրութեամբ Սրբոյ Աթոռոյս եօթն Խորհրդական անուանեալ եղբարց՝ առաքեցաւ այս անուն Նուիրակն), եւ բաց յայնմանէ նոքին իսկ Խորհրդականքն տացեն 'ի ձեռս Նուիրակաց կնքով եւ ստորագրութեամբ իւրեանց գիր ինքնանուն Առաջնորդաց իւրաքանչիւր վիճակաց և Քահանայից և Իշխանաց յատկապէս յիշելով համառօտ զնեղութիւն Ս. Տանն, և յորդորելով 'ի հոգատարութիւն Նուիրակին և յարդիւնաւորութիւն տրոց և այլն և այլն։ Նոյնպէս և Պատրիարքն ուրոյն ուրոյն գրով և կնքով իւրով գրեսցէ յանձնարարութիւն և 'ի սէր թէ 'ի մեծն Պօլիս, եւ թէ յայլ ամենայն տեղիս։

10°. Ցանուն Ս. Աթոռոյն իւղագին և մոմագին, եկաւ հասաւ, օրհնութիւն կոնդակաց անուանեալ զողորմութիւնսն ուխտաւորք մատուսցեն Սրբազան Պատրիարքին, և նա յանուանէ արձանագրեսցէ 'ի տումար և 'ի ժամանակին ըստ տումարին յանձնեսցէ Խորհրդականաց 'ի հաշիւ Ս. Աթոռոյն։ Իսկ յանուն Ս. Ցարութեան տաճարին, Գերեզմանին Քրիստոսի եկեալքն և եղեալքն՝ նորին Ռէյիզին տացեն, և նա օրհնութեան գիր տացէ ըստ սովորութեան։ և յետ Ս. Զատկին ընդ այլ արդեանց տացէ զհաշիւն Խորհրդականաց։ Նոյնպէս և յանուն ժամարարաց եկեալ եւ եղեալ քառասնից և յիշէք և ժամուց պատարագի ողորմութիւնքն տացեն Աւագ Լուսարարին, որ և ըստ սովորութեան 'ի տումար առեալ տացէ գիր օրհնութեան և զկնիկ Ս. Զատկին բաժանեսցէ ժամարար վարդապետաց և սարկաւագաց առանց զրկողութեան արժանաւոր մշակաց գիտութեամբ Խորհրդականաց։

11°. Ի ժամանակի դարպասի ողորմութեան, Խորհրդականք և Ներուանիք պարտին դատանիլ։ և Խորհրդական Գրագիրն անպատճառ գրեսցէ զանուանս ուխտաւորաց և զսուրս նոցա ըստ որքանութեան յատուկ տումարաւ։ և 'ի տալ ուխտաւորաց զդրամն նշանագրեսցէ միշտ և Դարպասին և Ս. Ցարութեան Ռէյիզն և Ճառանին առանձին մի ինչ առցեն առանց Խորհրդականաց եւ գրագրին գիտութեան եւ գրութեան, և այնպէս տումարքն պարտին երկու լինիլ։ և յետ Զատկին յատկապէս 'ի մայր տումարն արձանագրել յանուանէ և ըստ դումարիցն յիրատ գրել։

Բայց և յաւուր եկեալ դարպասական և իւղագին դրամքն քսակով կնքեալ յամենայն երեկոյի յօրթայի սընտուկն դիցեն անպատճառ նշանագրութեամբ որքանութեան և տեսակին։ Եւ որքան հնար է սիրով և յորդորելով զուխտաւորսն ջանասցեն Ս. Հարքն շահել և յօժարեցուցանել 'ի տուրս, որ առաւել արդիւնաւոր լինել երեւի։ զի լաւ է սիրով զսիրտ ժողովրդոց գրաւել, քան բռնութեամբ։

12°. Ի մէջ Ս. եկեղեցւոյ եղեալ ամենայն կերպ անօթք եւ թախտքմք ձեռամբ Խորհրդականաց 'ի տումար առեալ յանձնեսցեն Աւագ Լուսարարին, և մին 'ի տումարաց կացցէ 'ի խորհրդարանին, և հետ զհետէ եկեալ յիշատակիքն յերկուս տումարս եւս արձանացցին։ Նոյնպէս և Զուխտանն և Մաղազայից և Մոմատան և գրքատան և ամենայն եկեղեցեաց լիցի անպատճառ։

Եւս և մեռեալ միաբանից և անժառանգ ուխտաւորաց ինչք և դրամք Խորհրդականքն կալցեն, եւ գրեսցեն յարդիւնս ըստ սովորութեան Ս. Աթոռոյն։

13°. Թէ վէքիլ թէ Զուխտաւի թէ Թերմիման և թէ ով ոք և իցէ 'ի գլխաւոր գործակալաց եւ հասարակաց, բաց 'ի յատկացեալ կանոնական տրոց, մի իշխեսցէ ինքնագլուխ տալ ինչ կամ առնուլ կամ գործել, եթէ չիցեն տեղեակ կամ գիտակ եօթն Խորհրդականք։ Նոյնպէս եւ ինքեանք իսկ Խորհրդականք մի՛ համարձակեսցին վասն ինչ եւ իցէ պատճառաց 'ի տուրս չափազանցս առ Փաշայս և առ Մոլլայս և առ ո՞և իցէ բռնաւորս, մինչչեւ իցեն ծանուցեալ մեզ։

14°. Եթէ ոք 'ի Խորհրդականաց ընդդէմ օգտի Սուրբ Աթոռոյն և հակառակ կամաց ազգին զերկպառակութիւնս և ատելութիւնս կամիցի արկանել 'ի մէջ Խորհրդական եղբարց, և կողմնապահութեամբ ի՛մն միայն զօգուտն անձին իւրոյ և իւրայնոցն ջանասցի յառաջացուցանել, զայնպիսին (ըստ Աւետարանական բանին) յետ երկիցս և երիցս սիրով խրատելոյ եղբարց, 'ի չգալն յուղղութիւն, անպատճառ բարեմիտ միւս Խորհրդականքն հանեալ 'ի պաշտօնէն, և զարժանաւորն կարգեալ 'ի տեղի նորա, ծանուցեն ասա մեզ։

15°. Ցաղագս Աթոռոյն հարկաւոր գործոց Մաքսիմէ մի ոք 'ի Խորհրդականաց առանձին գրեսցէ 'ի Պոլիս առ մեզ հասարակ, կամ առ մի ոք 'ի մէնջ, կամ առ բարեկամս և ծանօթս և ազգականս իւր, այլ միակամ խորհրդով եօթանեքին կնքով իւրեանց և ստորագրութեամբ զմի միայն գիր գրեսցեն, եւ զպատասխանին 'ի մէնջ առցեն մերս գրով և կնքով 'ի ձեռն տեղւոյս Վէքիլին Ս. Աթոռոյդ, ապա թէ ոչ՝ անընդունակ լիցի և դատեսցի։

16°. Ըստ սովորութեան Նախնեաց՝ Պատրիարքն միակամութեամբ Խորհրդականաց ժողով արասցէ 'ի տարին երկիցս յատեան Ս. Եկեղեցւոյն, ուր ըստ աստիճանաց իւրաքանչիւր դասուց միաբանութեան սիրով և ահացուցիչ բանիւք խրատ եւ պատուէր տացէ, լինել համեստս, պարկեշտս, ուսումնասէրս, պաշտօնասէրս, կարգապաշտս, սպասաւորս սրբութեանց տեղեաց ըստ կարգի եւ աստիճանի, և մի՛ լինել ծոյլ, պղերգ, դիւնեմոլ, կուսարար ընդ եղբարս և ընդ ուխտաւորս, և ընդ այլ ազգս (և եթէ 'ի նոցանէ դրդիցի ինչ խռովութիւն կռուառիթ, ցուցցեն և ծանուսցեն իսկոյն Խորհրդարանին)։ Մի լինել սգնասէր, անվայել հանդերձիւք մի շրջիլ 'ի սենեակս ուխտաւորաց եւ 'ի տունս Քաղաքացւոց, մի անուղղայ գնացիւք իւրեանց և անպատեհ խօսիւք դայթակղեցուցանել զպարզամիտս, մի գրել առ իւրեանցսն և առ այլս զայն, որ չէ անկ ինքեանց և այլն։ Այլ սիրով և յօժարութեամբ հնազանդիլ Ս. Աթոռոյն և աթոռական Վերակացուաց, այսինքն Ս. Պատրիարքին եւ անձնադիր Խորհրդականաց, դոհութեամբ ընթրել յառաւօտ և յերեկոյ 'ի սեղանատան միաբանութեամբ, (եթէ չիցեն ոմանց կարեւոր արգելք գործոց կամ հիւանդութեանց)։ Եւ այսպէս սիրով Աստուծոյ գովանի բարեկարգութեամբ ցուցեալ և փայլեալ 'ի տես մերայնոց և օտարաց, լիցին պատճառ փառաւորելոյ զԱստուած, և գովութեան ինքեանց, և ամենայն կերպիւ օգտի Ս. Աթոռոյն։

Եւ որ կարեւորն է և գլուխ ամենայն աստուածահաճոյ գործոց և յօգուտ հոգւոց 'ի փրկութիւն և Ս. Տեղեաց 'ի պայծառութիւն, և Ս. Աթոռոյն 'ի շինութիւն, եւ սէր, և ողջոյն ազգին յուրախութիւն և 'ի պարծանս, Ս. Պատրիարքն, և 'ի մէնջ արդ նշանագրեալ և կարգեալ եօթն Խորհրդականք և Ծերունի Ս. Հարք, զսէր և զիրաղաղութիւն բարեմտութեամբ ընդ միմեանս ունելով, ջանասցին զհասարակութիւնսն միաբանութեան եւ զուխտաւորսն, իբրեւ զեղբայր եւ զորդի շահել և հանոզել 'ի բարեկարգութիւն և 'ի հնազանդութիւն, և զմեզ եւ զազգս բոլոր կենդանեաց եւ ննջեցելովք յիշատակել մաքուր աղօթիւք 'ի սրբութեան փրկաւէտ տեղիս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որոյ եմք յետին ծառայք։

Պօղոս Արքեպիսկոպոս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։
Կարապետ Աղնաւորեան։
Յովհաննէս Մահտեսի Արիստակիսեան։
Մահտեսի Յակոբ Լաթիֆեան։
Ճարտարապետ Գրիգոր։
Մահտեսի Աբրահամ։
Վառօդապետեան Վառօդապետ Սիմոն։
Մկրտիչ Արփիարիսն։
Յարութիւն Նորատունկեան։
Յարութիւն Արզումանեան։
Ճանիկ Մահտեսի Սիմոնեան։
Գրիգոր Մահտեսի Գրիգորեան։
Խաչատուր Մարտիրոսեան։
Մկրտիչ Աշնանեան։
Պօղոս Մարգարեան։
Մահտեսի Պօղոս Կելկելեան։
Բարունակ Մատինեան։
Պետրոս Յովհաննէսեան։

Մահտեսի Յարութիւն Մահտեսի Ղուկասեան։
Մահտեսի Մարտիրոս Պաղտասարեան։

Յամի Տեառն 1823, և Հայոց ՌՄՀԲ, 'ի 11 Օգոստոսի, յԱրքայապերճն Կոստանդինուպոլիս։

Իսկ Յարութիւն վարդապետ Եղեսիոյ, որ 'ի սմին ժամանակի վարէր զպաշտօն Փոխանորդութեան Աթոռոյն Երուսաղէմի 'ի Կոստանդինուպոլիս, առաքեաց զհրովարտակն 'ի ձեռն Կարապետի ուրուք, որոյ զրաղում դրամս առեալէր 'ի ճանապարհի պարտեօք յանուն Երուսաղէմի, և յաւուրսն յայնոսիկ Քաղաքապետն Երուսաղէմի պահանջէր 1500 դահեկան նորասահման տուրս վասն պատրաստելոյ Ծուխ Կուսակալին. Հայք ընդդէմ կացեալ ոչ ետուն, և առաքեցին զհրովարտակն հանդերձ աղերսագրով և այլ յանձնարարական թղթովք առ Կուսակալն 'ի ձեռն Յակոբ վարդապետի, զի առցէ զիր 'ի նմանէ ըստ մտաց հրովարտակին, չպահանջել ինչ այլազգեաց առաւել քան ըստ սահմանեալն։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Հրաժարական Պօղոսի։ Ընտրութիւն Կարապետի 'ի Պատրիարք։ Կանոնական բանք նորին։ Բանութիւն Քաղաքապետին։ Ապտուլլահ Փաշայ Աքքէի։ Գնալ Գաբրիել Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս հրամանաւ ազգին և Տէրութեան։

ՊՕՂՈՍ Պատրիարք Կոստանդինուպոլսոյ դուռմարեաց ազգային ժողով մեծ 'ի Պատրիարքարանն (1823· 'ի 18 Հոկտեմբերի)· եւ առաջի ամենեցուն ինքնակամ յօժարութեամբ հրաժարեցաւ 'ի պաշտօնէ Պատրիարքութեան, պատճառելով զտկարութիւն անձին իւրոյ· թէպէտ եւ Ամիրայք յորդորեցին զնա չթողուլ զայն պաշտօն, այլ նա մատոյց նոցա զգիր հրաժարման իւրոյ և նոքա յանձն արարին նմա ծանուցանել զինդիրն մեծի Վէզիրին։ Եւ 'ի վաղիւ անդ յղեաց զհրաժարականն 'ի Դուռն, եւ Նախարարք մատուցին զայն Արքայի, և նա դարձոյց վերստին առ նոսա, խստիւ պատուիրեալ՝ ճշդիւ քննել զպատճառս հրաժարման նորին, գիտել և իմանալ զյաջորդն, թէ ո՞րպիսի ոք իցէ, և թէ ունի՞ զձիրս առաջնոյն 'ի կառավարել զժողովուրդն։ Կոչեցին Նախարարք զՊօղոս 'ի Դուռն ('ի 24 Հոկտեմբերի), և նա եկ 'ի ճանապարհ հետի· և իմացեալ նոցա հասուցին նմա 'ի ճանապարհի երիվար զարդարեալ, և նստուցեալ զնա տարան 'ի Դուռն, և 'ի հարցանել Նախարարաց զպատճառս հրաժարման իւրոյ, նա յառաջ երեր միայն զտկարութիւն անձին իւրոյ· նոքա բազմադիմի բանիւք թախանձէին և յորդորէին զնա չթողուլ զիշխանութիւնն զայն, յայտնապէս զոհանալով զխոհեմութենէ և զբարւոք կառավարութենէ, և զծանօթութենէ բարուց Արքայի, իսկ նա համեղ և արդահատական բանիւք յօժարեցոյց զնիրս նոցա Ապա հարցին զյաջորդէ նորին, և նա արար պատասխանի թէ՝ է մին 'ի ձեռնասուն աշակերտաց իմոց· եւ դարձաւ անտի շքով 'ի Պատրիարքարանն, և կազմեաց տեսան մեծ 'ի Մայր Եկեղեցին, և համակամ խորհրդով ընտրեցին յԱթոռ Պատրիարքութեան զկարապետ Եպիսկոպոս Ամասիոյ, միաբան Երուսաղէմի և Նուիրակ Աժտէրխանու· և Պօղոս յետ ասելոյ զՊահպանիչն՝ կալեալ զձեռանէ նորին կացոյց յԱթոռն, ետ զգաւազանն 'ի ձեռս, ապոյց զմատանին 'ի մատն՝ և արկ զվիլանն 'ի թիկունս նորին՝ և շնորհաւորեալ մեկնեցաւ։

Եւ 'ի վաղիւ անդ ('ի 27 Հոկտեմբերի) գնաց Կարապետ 'ի Դուռն և զգեցաւ վերարկու պատուոյ ըստ սովորութեան, և մեծահանդէս փառօք դարձաւ յեկեղեցին։ Իսկ Պօղոս Եպիսկոպոս կամօք Արքային և Ամիրայից գնացեալ նստաւ 'ի վանս Իւսկիւտարու։

Սեւերէկցի Պետրոս անուն ոմն Արեղայ՝ խաբէյութեամբ ձեւացեալ Եպիսկոպոս ձեռնադրեալ էր զն Քահանայս յերկնկայ քաղաքի՝ խարտաֆիլակութեամբ յիմարեալ եւ թմրեալ Առաջնորդի տեղւոյն, զոր լուեալ Կարապետ Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս եւ ստուգեալ 'ի հանդիսի քննութեան 'ի բերանոյ նորին խաբեբայի՝ ելոյծ 'ի կարգէն՝ և ընդ բանիւ արարեալ սահմանեաց ապաշխարանս և արգել զնա 'ի վանս ինչ։ Եւ յետ այնորիկ խորհրդով բարձրաստիճան եկեղեցականաց՝ գրեաց առ ամենայն

վիճակաւոր Առաջնորդս զկանոնական բանս 6 գլխոց 'ի զգուշութիւն նոցին և 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, որք համառօտին այսպէս։

1°. Ժառանգաւորք եկեղեցւոյ առանց ստոյգ վկայական գրոց՝ մի ընկալցին 'ի կարգս եկեղեցականաց ուր և իցէ։

2°. Եպիսկոպոսունք ձեռնադրեսցեն միայն զնուիրեալս 'ի վիճակէ իւրեանց, և զեկեալսն յարտաքուստ մի ձեռնադրեսցեն առանց մահսերական գրոց։

3°. Առաւել քան զրաւականն եկեղեցեաց մի ձեռնադրեսցեն զոք 'ի Քահանայ՝ զի մի 'ի պատճառս շահու թափառեսցին այսր անդր իբրեւ մուրացիկ 'ի նախատինս Սուրբ Կարգին։

4°. Մի ձեռնադրեսցեն զկուսակրօն Սարկաւագ կամ Աբեղայ՝ զորս ոչ կարեն շահել և պահել առ իւրեանս։

5°. Առանց ստոյգ քննութեան և վկայականի մի տացեն պսակել զպանդուխտս։

6°. Յամենայն տեղիս 'ի վիճակի իւրեանց փոյթ կալցին հաստատել դպրոցս 'ի կրթութիւն մանկանց եկեղեցւոյ, (1824· 'ի 10 Յուլիսի)։

Մարկոս վարդապետ Նուիրակ Աժէրիանու՝ առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս արկղս 10, յորս էին 5 մեծ ջահ· 6 մեծ աշտանակ· 8 մեծ կանթեղ· 200 փոքր, և այլ աշտանակք եւ սպասք եկեղեցւոյ, ամենեքեան պղնձեայ և արծաթաջոծ, և 230 բիւրեղ կանթեղ, զորս պատուիրէր փութով հասուցանել յԵրուսաղէմ· սակայն ամենեքեան այրեցան 'ի մեծի հրդեհին 'ի Կոստանդինուպոլիս։ Հաշտութիւն Օսմանցւոց ընդ Ռուսաց։

Քաղաքապետն Երուսաղէմի Իսմայիլ Պէյ՝ հրամանաւ Կուսակալին Դամասկոսի առնոյր չորիցս 'ի տարւոջ յերից վանաց 1500 դահեկան իբր գին ծխախոտի· Հայք յեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին ոչ եառուն՝ կրեալ նախատինս և արհամարհանս· Քաղաքապետն առաքեաց զինեալ զօրականս, պատուիրեալ նոցա չելանել 'ի վանաց մինչեւ առցեն զդրամն· այլ զօրութեամբ հրովարտակին և 'ի ձեռն Նախկին հաղիւ կարացին զերծանիլ 'ի տրոց անտի եւ եառուն ՅՆՋԵԼ զայն 'ի տումարէն, զի և մի այլ եւս պահանջեսցեն· այլ զկնի աւուրց ինչ զանազան պատճառանօք խնդրէր ընուել զադահութիւն իւր, որպէս և միւս ազգաց։

Եւ իսպառ ընդդիմանալն Հայոց՝ եւ քակել 'ի գիշերի զքարինս 'ի պարապէ վանաց Ս· Փրկչի, և 'ի վաղիւ գնաց բազմութեամբ 'ի քննութիւն, հրապուրէր և զԴատաւոր քաղաքին՝ և 'ի չանսալ նորա բանից Քաղաքապետին՝ կոչեաց զՓոխանորդն Հայոց և սպառնայր բառնալ զքարինս 'ի գերեզմանաց եւ հանել զոսկերս մեռելոց· որպէս թէ արտաքս ելեալ իցեն 'ի սեփհական սահմանացն, եւ թէ մերձ 'ի գերեզմանն Բագոսի թաղեալ իցեն զմեռեալս, և առ այս ՅԱՆՈՅՐ գրգռել զայլազգիս Սիոնի, այլ նոքա վկայեցին թէ այսոքիկ տեղիք 'ի բաղում ժամանակաց անտի են 'ի ձեռս ազգին Հայոց վաւերական գրովք, յորմէ եւս չչահեալ ինչ դարձաւ յետս ունայն եւ ամօթալի։ Ապա հրապուրէր միշտ զԴատաւորն լինիլ կուսակից ինքեան 'ի կեղեքել զՀայս, այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, եւ ոչ թողոյր առնուլ ինչ յանիրաւի, մինչեւ անկեալ յիշխանութենէ զնաց յԵրուսաղէմ։

Յետ նորա Իպրահիմ Աղա ումն եկն 'ի Դամասկոսէ Քաղաքապետ Երուսաղէմի։ Սա զառաջինն պահանջէր 'ի Հայոց 10,000 դահեկան, և յանկանիլ յիշխանութենէ Կուսակալին՝ լուեաց առ ժամն, եւ տեղապահ նորին գրեաց առ սա Իպրահիմ ժողովել զմնացեալ հարկս յԱրաբացւոց, և ընդ նորոգիլ իշխանութեան իւրոյ, գրեաց 'ի վանս Հայոց տալ 12,500 դահեկան իբր փոխ, որոյ զփորձն առեալ գիտէին, թէ փոխն ինչ ունի դառնալ յետոյ։ Հայք ոչ եառուն, եւ տղաչեցին չտալ նեղութիւն վասն այսպիսեաց, զի Արքայն տուեալէր հրովարտակ՝ գիտելով զաղքատութիւնս նոցա և զնուազութիւն արդեանց։

Զայրացեալ ընդ այս Քաղաքապետին կարգեաց Ոստիկան զումն 'ի հաղարապետաց և խնդրէր 7500 դահեկան։ Եւ Եղիա եպիսկոպոս տարեալ եցոյց զհրովարտակն Արքայի, և յայտ արար զչքաւորութիւն միաբանաց, և եթէ հնար իցէ զ40,000 եւս փոխառնակադրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, եւ նորա ոչ անսացեալ, ստիպեաց զՓոխանորդն անպատճառ հատուցանել զդրամն· Եղիա խնդրեաց ժամանակ խորհիլ ընդ Պատրիարքին և ընդ Խորհրդականս։

Եւ եղեւ 'ի դառնալ նորա 'ի վանս՝ հասին զկնի նորա 12 զրահաւորեալ հայթայ, և կացին 'ի դուռն վանաց, և սկըսան աղաղակել և հայհոյել. 28 անձինք եւս դան զկնի մեր, զատրաստեցէք 40 արանց կերակուր եւ անկողին, զի ոչ ելանեմք ասի մինչեւ առցուք զդրամն. և յաղաչել դըռնապանին և Թարգմանին հանդարտիլ, նոքա զզէնս ցուցանէին, եւ զոմանց կալեալ զմօրուս, կախեմք կարեմք ասէին, ապա թէ ոչ, փութով դրամ. փութաց Փոխանորդն 'ի Դուռն և ողբէր զնոսա 'ի խաղաղութիւն, և նոցա թողեալ զայլս՝ կալան զնա և սկսան անարգել և հայհոյել. զայն տեսեալ Փոխանորդին էառ ընդ իւր և զոմանս 'ի վարդապետաց փութաց առ Քաղաքապետն, և աղաչէր զնա բառնալ անտի զզօրսն մինչեւ պատրաստեսցեն զդրամն. չեւ եւս աւարտեալ Փոխանորդին զրան իւր, համարձակ բանիւք յարձակեցաւ 'ի վերայ նորա, եւ սկսաւ նախատել զնա անասելի բանիւք, անարգելով զկարգ, ըստ կրօն և զհաւատս իսկ, մինչեւ ժայթքել 'ի բերանոյ իւրմէ անարգական բանս այնոցիկ, որ զհրովարտակն ետ, գրեաց և ընթերցաւ, եւ այսպիսի անարգութեամբ արտաքսեաց զնա 'ի սենեկէ անտի. Մինչչեւ հեռացեալ նոցա անտի, հասին անդ և այլ վարդապետք և միաբանք բոլոր բարձեալ զանկարգութենէ զօրաց եղելոց 'ի վանս, և լուեալ զբանս նոցա, դիմեցին առ Դատաւորն՝ ժամ 12, և բոլոր կալեալ աղաչէին զնա տալ Իլամ. զի այլ եւս անհնարին էր մնալ նոցա 'ի քաղաքի անդ։ Իսկ այրն խոհական՝ ողբական բանիւք աղաչէր զնոսա հանդարտիլ, եւ ետ կոչել զզօրապետն, որոյ եկեալ առաւել քան զվարդապետսն պատմեաց զանպատեհ գործս Քաղաքապետին, և հարկադրեալ զնա առաքեաց ընդ պաշտօնէի իւրոյ, և ետ հանել զհայթայ զօրս 'ի վանաց 'ի գիշերի ժամ 2, և միաբանք դարձան 'ի տեղիս իւրեանց։ Եւ 'ի վաղիւն պատուէր տուեալ միաբանաց եւ ուխտաւորաց ոչ բացին ըզդուռն վանաց, և պատրաստեցան բոլոր միաբանիւք ելանել 'ի ճանապարհ. իբրեւ լուս եղեւ Քաղաքապետին, փութացին Նախիսն և Դպրապետ դատարանի 'ի դրանէ Հրեշտակապետի մտին 'ի ներքս, և սկսան աղաչել 'ի կողմանէ Դատաւորին և ամենայն այլազգեաց բանալ զդուռն և հան-

դարտիլ. աղաչէին զնոսա իբրեւ ժամ 2 եւ երաշխաւոր եղեն չհասանել միւսանգամ վնաս ինչ 'ի Քաղաքապետէն, եւ ետուն բանալ զդուռն վանաց 'ի հինգերորդ ժամու. եւ ըստ խնդրանաց նոցա ետուն 5700 դահեկան 'ի ձեռն Դատաւորին, հաշուեալ 'ի ժամանակին 'ի հարկս Բդեշխին։

Ի սմին ժամանակի Կուսակալն Սիդոնի Ապտուլլահ Փաշայ ժողովէր զծանր հարկս եւ 'ի Յոպպէ պահանջէին 'ի Հայոց քսակս 10, եւ Հայք ոչ ունէին անդ ժողովուրդս, բաց յերից աղքատաց. Քաղաքապետն խնդրէր զդուռնարն զայն 'ի վանաց, որոյ Տեսուչն անճարացեալ եթող զվանքն և խոյս ետ յԵրուսաղէմ, և Քաղաքապետն ակն ունէր առնուլ զդրամն յերուսաղէմէ. իբրեւ ետես թէ նոքա անփոյթ են զայնմանէ, արտաքսեաց զմիաբանս 'ի վանաց, փակեաց զդուռն եկեղեցւոյն և զվանաց և էառ զմիականս նոցին, և մնաց փակեալ 'ի 10 Յունվարէ մինչեւ 'ի Մարտ 21. 'ի մի կողմն վանաց նատոյց զօրս, և բացեալ զդրունս մթերանոցաց արար ախոռս ձիոց. եօթն Խորհրդականք բազումս վաստակեցան վասն այսր, այլ ոչ կարացին թափել զնա 'ի ձեռաց նորին. անկեալ էին 'ի տագնապ մեծ, զի ոչ կարէին վճարել զտոկոսս պարտուց որոց գումարն հասեալ էր 5000 քսակ։ Ուստի հարկադրեալ գրեցին 'ի Կոստանդինուպոլիս առ իշխանաւորս աղդին, գտանել զելս հնարից. 'ի հասանել Փաշեկին 'ի քաղաքն Շէպին Դարահիսար՝ կալաւ զնա Դատաւոր տեղւոյն իբրեւ լրտես և եդ 'ի բանտի, և զթղթեանս առաքեաց 'ի Դուռն. և նոցա թարգմանեալ ծանեան զմիտ բանին և առաքեցին առ Պատրիարքն Հայոց. և նորա գրեալ խնդրեաց հրովարտակ գատարկել զվանս Յոպպէի և տալ զբանալի նորին վանականաց։ Յետ առնլոյ զհրովարտակն բազում դժուարութեամբ՝ նոցա։ Յետ առնլոյ զհրովարտակն Ապտուլլահ Նաւէ դիր յանձնարարական 'ի գործակատարէ Ապտուլլահ Փաշայի և առաքեցին յերուսաղէմ զպատմէն նորին, և զհրովարտակն 'ի ձեռն գործակատարի նորին յղեցին առ Ապտուլլահ Փաշայ յԱքքէ գործադրել զայն եւ զպատասխանն գրել 'ի Դուռն. զի այնպէս պատուիրեալ էր Տէրութիւնն. և 'ի Դրանէ գրեցին առ Դատաւոր Շէպին Դարահիսարու արձակել 'ի բանտէ զթղթատարն, (1824. 'ի 23 Յունվարի)։

Գրեցին Խորհրդականք առ Կարապետ Պատրիարք յորդոր լինիլ ուխտաւորաց գնալ Յերուսաղէմ. զի 'ի նուազիլ նոցա 'ի դառն ժամանակին յայնմիկ, առաւել ծանրանայր պարտքն 'ի վերայ Աթոռոյն։

Ի սմին ամի եկեալ էր Յեգիպտոսէ Յերուսաղէմ յուխտ Խաչէր աղա, հայր Ալէքսան աղայի, և տեսեալ զողորմելի վիճակ Աթոռոյն, յայտ արար Խորհրդականաց, թէ են կալուածք Երուսաղէմի Յեգիպտոս տունք իբր 38, եթէ վաճառեսցին նոքա Վ.=էՖԼ օրինօք, բերէ 200 քսակս դրամաց, և թէ պատրաստ են ունանք յազգայնոց տեղւոյն գնել զայնս, որով դիւրութիւն լինի վճարելոյ զպարտս Աթոռոյն. և նոքա ծանուցին զայս առ Ամիրայս. գրել ըստ արժանւոյն առ իշխանաւորս Յեգիպտոս, այլ որպէս երևի այս խորհուրդ մնաց ապարդիւն։

Յայսպիսի տառապանս և 'ի նեղութիւնս Խորհրդականաց, Գաբրիէլ Պատրիարք ոչ երբէք եցոյց նոցա գոհութիւն ինչ, այլ գաղտ 'ի նոցանէ գրեաց բանս դանկատանաց առ ազգայինս 'ի Կոստանդինուպօլիս 'ի ձեռն Կարապետին այնմիկ, զորմէ գրեցաք. խմացեալ զայն Խորհրդականաց, գրեցին և ինքեանք, յայտ առնելով թէ որպիսի ոք իցէ նա, որպէս բարւոք գիտէին զայն ազգայինք, եւ գոհունակութիւն զմիարանութենէ։

Դիոնէսիոս եպիսկոպոս՝ մին յազգընտիր Խորհրդականաց, և Խորհրդական գրագիր, ետ զհաչիւն իւր (1824. 'ի 3 Փետրվարի), և 'ի 29 ինքնակամ էլ յԱթոռոյն և մեկնեցաւ գնալ 'ի Կոստանդինուպօլիս, զոր և ծանուցին Խորհրդականք Պատրիարքին և Ամիրայից։

Ի հասանիլ ազգընտիր Խորհրդականաց Յերուսաղէմ կանոնադրութեամբ նոցին, ոչ որպէս յուսային կարացին լինել ձեռնամուխ 'ի գործ կառավարութեան Աթոռոյն, զի բազում անգամ արդել և խոչ լինէին նոցա Գաբրիէլեանք, և ելք իրացն մնայր անյաջող, ուստի հարկեցան գրել երկիցս առ իշխանաւորս ազգին, զի հնարս գտցեն բառնալ յԱթոռոյ առ ժամանակ ինչ զդահակալ նորին, զի թերեւս կարասցեն անարգել հոգալ զկարիս նորին, և նոցա զիջեալ 'ի կամս Խորհրդականաց՝ բազում դժուարութեամբ կատարեցին զխնդիր նոցա. մանաւանդ տեսեալ զթշուառութիւն

Աթոռոյն եւ զծանրութիւն պարտուց, ուստի յազգային ժողովի սահմանեցին լինել ծայրագոյն կառավարիչ Երուսաղէմի Նախկին Պատրիարք Կոստանդինուպօլսոյ Պօղոս Արք Եպիսկոպոսի, և գնալ անդ Արքունի հրովարտակաւ ընդ Մարկոս Եպիսկոպոսի, բառնալ յԱթոռոյն զԳաբրիէլ Պատրիարք եւ տանել 'ի Կոստանդինուպօլիս. այս աւետեաց լուր զոր գրեաց Կարապետ Պատրիարք Յերուսաղէմ, ուրախացոյց յոյժ զմիարանս, և անհամբեր հոգւով սպասէին գալստեան նորա։

Ապա ծանուցեալ զխնդիրն Արքայի՝ հանին հրովարտակ, և Ոսկիկան Ահմէտ Աղա. գրեցան թուղթք յանձնարական 'ի Դամասկոս և Յերուսաղէմ ըստ մտաց հրովարտակին, և առ այլ և այլ անձինս 'ի տեղեկութիւն, գրեաց և Կարապետ Պատրիարք առ համօրէն միաբանական դասս, յորում յետ յայտ առնելոյ զդառնութիւն ժամանակին, զպակասութիւն ուխտաւորաց, զառաւելութիւն պարտուց և տոկոսաց, զպաշարիլն Աթոռոյն 'ի պէս պէս նեղութեանց և ձախորդութեանց, ասէ՝ «Ուստի անչափ և անապատ նեղութեան Ս. Աթոռոյն ոչ տոկալով սիրտ ազգասէր Ամիրայից, բազմիցս 'ի խոյզ և 'ի խնդիր ելանէին մեծահանդէս ժողովով հանդերձ արհեստաւորօք գտանել զելս բարելաւութեան, որ եւ ըստ բերման ժամանակիս յօգուտ Ս. Աթոռոյն յարմար դատեցին զԳաբրիէլ Պատրիարք Ս. Եղբայրն մեր կոչել 'ի Կոստանդինուպօլիս, խորհիլ 'ի միասին գտանել զհնարս դիւրութեան, և յաջողութիւն պարտուց. թէպէտ և գրով ազգին և եթէ կարելի էր հրաւիրել զնա աստ, սակայն 'ի ճանապարհի ոչ կարէր հանդիպել ժամանել 'ի խառնակութենէ կողմանց, 'ի Ղափար, և այլ անկանոն տրոց, ըստ մեծութեան անուան իւրոյ, վասն որոյ արժան դատեցաւ առնուլ հրովարտակ, եւ Տէրութիւնն յօժարութեամբ ետ զայն, և առաքեցաւ ընդ Արքունի առն 'ի կողմանէ ազգին իբր հրաւիրակ Ագրիանուպօլսեցի Մըկըրտիչ վարդապետ։ Արդարեւ հրաւէրս տարօրինակ եւ չէ պատահեալ ցարդ. բայց եղանակն ստիպեաց առնել արտաքոյ օրինաց, զի ո՞ր սիրտ կարէ տոկալ, յորժամ զԱթոռն յայս մեծավիշտ տագնապի տեսանէ, մեք և օրհնեալ ազգն մեր գոլով հեռի անձամբ և միջոցաւ, հաշիմք 'ի տա-

ռապանս վչտաց, քանի՞ արդեօք միաբան եղբայրութիւն ձեր, զոր աչօք տեսանէք զիսեղմ և զողորմելի կեանս ձեր, և թէպէտ 'ի վերայ այսր ցաւոց յաւելաք և զցաւ ելանելոյ Ս. Հօր ձեր և մեր եղբօր յԱթոռոյն, սակայն մի բերիցէք 'ի միտս ձեր մնալ իբր որբ առանց Պատրիարքի, զի գալ նորին ոչ է հրաժարիլ յիշխանութենէ, այլ խորհիլ ընդ ազգին զկարեւորսն եւ զբարին տնօրինել։ Որպէս պատահեալ է առաջին Պատրիարքաց, զի յաղաղակել նոցա առ ազգն, արձակեցան 'ի լծոյ տառապանաց։ Մի լիցի ոմանց միաբանաց զայլ և այլ խորհուրդս ածել զմտաւ, և տալ մըտացածին մեկնութիւնս տնօրէնութեան և կամաց ազգին, և կամ չյօժարիլ գալստեան նորին, զի վերջինն չար լինի քան զառաջինն, և ազգն այնուհետեւ չյիշէ զանուն Աթոռոյն, և յետս կասի 'ի գործոց և յօգտակար տնօրէնութենէ նորին։ Որք ցանկացողք էք չինութեան եւ պայծառութեան Աթոռոյդ · ուրեմն խնդրեմք սիրով եւ քաղցրութեամբ ճանապարհորդ առնել զՍրբազանն ըստ հրամանի Տէրութեան և Ազգին, եւ դուք կանխել արթնութեամբ 'ի պաշտօն Աթոռոյն, և անլուծանելի սիրով միանալ ընդ ազգընտիր Խորհրդականս, որք հարկադրեալ են զամենայն կառավարութիւնս բարւոք դնել 'ի գործ ըստ ազգային կանոնադրութեանց, և հպատակ կալ նոցին սիրով և յօժարութեամբ, որոց և ձեզ միանդամայն յետ սակաւ աւուրց ունին առաքել առ ձեզ զնախկին Պատրիարք Պօղոս և Ծերունազարդ Մարկոս Արք Եպիսկոպոսունս 'ի Ս. Աթոռն մխիթարել զձեզ մինչեւ դարձցի առ ձեզ հովիւն ձեր, (1824 · 'ի 23 Յունիսի)։

Գրեաց եւ առ Խորհրդականս քաջալեր բանիւք արիանալ և զօրանալ ընդդէմ դառնութեան ժամանակին, եւ իբրեւ բազմավաստակ հոգեւոր մշակս գործել յայգի Տեառն զօրութեանց · ապա յայտ առնէ նոցա զտնօրէնութիւն ազգին, տանել Արքունի հրովարտակաւ զԳաբրիէլ Պատրիարք 'ի Կոստանդինուպօլիս · զի և ինքեանք սիրով եւ խաղաղութեամբ ճանապարհորդեսցեն զնա, և փոյթ կալցին զի մի ծագեսցի դժուութիւն եւ վրդովումն ինչ, որպէս եւ 'դրեալ էր առ նոյն ինքն Գաբրիէլ աներկմիտ խնդութեամբ ելանել 'ի քաղաքէն, և յանձնել Խորհրդա-

կանաց զկնիք կոնդակաց, եւ զայլ անձնական դոյս թողուլ 'ի Ս. Աթոռն ընդ բանալեաւ · առեալ ընդ իւր միայն զհարկաւորեալսն՝ չկնքել զՊատրիարքարանն, այլ միայն փակել և զբանալի նորին դնել 'ի դանձարան եկեղեցւոյ 'ի ձեռն Լուսարարի · և 'ի ծառայութիւն 'ի ճանապարհի առնուլ միայն զԴաւիթ վարդապետ իւր եւ զայլ ոմն · զի ազգայինք առաւել քան զայս յարմար սպեղանի ոչ կարացին տնօրինել, ուստի՝ մի ոք հակառակեսցի եւ կամ խափանեսցէ զելանել նորին յԱթոռոյ՝ պատճառելով զպատճառս, զի մինչեւ ոչ ելցէ նա 'ի քաղաքէն, դառնութիւնք հարկապահանջ բռնաւորաց ոչ դադարին, որով հանդիպի Աթոռն մեծամեծ ընասուց և պարտուց անվճար։ Եւ 'ի խոժոռիլ պարտատերաց և կամ 'ի պահանջել զառնելիս իւրեանց 'ի Պատրիարքէն՝ յանձն առնուլ Խորհրդականաց զայն՝ թէ պարտքն Աթոռոյն է և մեր · զայս ամենայն գրեանս յանձն արարեալ Ոստիկանին և Մկրտիչ վարդապետին առաքեցին յԵրուսաղէմ։ Եւ ճանապարհ արարեալ սոցա հասին անվնաս յԵրուսաղէմ (յ9 Օգոստոսի) · և 'ի նմին աւուր իջին 'ի Դատարան և եռուն կոչել անդ ընդ Գաբրիէլ Պատրիարքն հանդերձ Ծերօք և Խորհրդականօք, ուր ընթերցան առաջի բազմութեան զհրովարտակն Արքայի, եւ յանձն առ Գաբրիէլ հնազանդիլ հրամանի Արքային և Ազգին, ապա ել 'ի ճանապարհ ունելով ընդ իւր զՄուսպաշիրն և զարս 4 դնալ 'ի Կոստանդինուպօլիս ('ի 19 Օգոստոսի)։ Եւ զկնիկ ամսօրեայ ժամանակի ըստ յորդորանաց գլխաւորաց ազգին, և խնդրանաց Աթոռայնոց դիմեաց Պօղոս Եպիսկոպոս միայն 'ի Ս. Երուսաղէմ ընդ ուխտաւորաց · դիտել քննել, և զննել լաւելայն զկարեւոր պարագայս Աթոռոյն տեղւոյն և ժամանակին, և ըստ այնմ հոգալ զհարկաւորսն, և մնալ անդ որքան ախորժիցէ · և յելանել նորին մի գուցէ ոք բռնադատեսցէ մնալ · զի քաջ գիտէր նա խորհիլ զօգուտ Աթոռոյն եւ զհարկաւորսն տնօրինել, այնպէս Պօղոս եւ 'ի Կոստանդինուպօլսոյ եւ Գաբրիէլ յԵրուսաղէմ։

Եհաս Պօղոս յԵրուսաղէմ ('ի 4 Նոյեմբերի), արար ժողով յեկեղեցի Ս. Յակոբայ ('ի 16 Նոյեմբերի) · մեկնեցաւ Երթալ յԵգիպտոս Բեթղեհէմի ճանապարհաւ ('ի 14 Դեկ-

տեմբերի) առեալ ընդ իւր զՄուրատ աղա, զԳարրիէլ վարդապետ, զՍարկաւագն իւր և զՎարդան։

ԴԼՈՒԽ ԽԵ.

Պարտաւորք։ Լատինք։ Բռնութիւն Քաղաքապետին։ Նամականիք Դիոնէսիոսի և պահանջ նորին։ Յակոբ վարդապետ։ Հարկապահանջութիւն Կուսակալին։ Տառապանք Խորհրդականաց, փախուստ նոցա ի Քեբրոն, և դարձ նոցին անդրէն յԱթոռն։

ՅԵՏ մեկնելոյ Գաբրիէլ Պատրիարքի յԵրուսաղէմէ՝ պարտաւորեալք անկեալ 'ի կասկածանս սկսան վիշտս հասուցանել միաբանաց, որպէս թէ հանեալ անուն սնանկութեան, այլ ոչ եւս ունին հատուցանել զտոկոսս դրամոց, որոյ վասն խնդրէին և զմայր գումարն և առանց դրաւի ոչ ոք հաւատայր տալ նոցա դրամ. աստի կրկնապատկեցան տառապանք Խորհրդականաց, մանաւանդ յորժամ փոխանակագիրք յետս դառնային 'ի Կոստանդինուպօլսոյ։

Լատին կղերք ոչ երբէք դադարեալ էին յաշխատութենէ յօրէ յայնմանէ փակելոյ դրան Բեթղեհէմի, և 'ի սոյն աւուրս չորս նուիրակունք նոցին դարձան յԵրուսաղէմ մեծաւ հարստութեամբ բերեալ գանձս ոսկւոյ և արծաթոյ, և զհետ մտեալ էին վրդովել զԴատաւորն և զայլազգիս քաղաքին՝ առնուլ Իլամ և հանրագիր խոստմամբ դրամոց. զայս առիթ առեալ նոցա սկսան ծանրանալ 'ի վերայ Հայոց լցուցանել կամելով զանկոպար ագահութիւնս իւրեանց, այլ նոքա երբեմն զհրովարտակն վասն որոց յառաջ բերէին, և երբեմն զբանս պալատականաց՝ չտալ ումեք զիրս ինչ։

Բազում անգամ գրեցին Խորհրդականք առ Իշխանաւորս ազգին զանխնայ կեղեքումն Քաղաքապետացն Երուսաղէմի, որք մի քան զմի գերազանց գտան 'ի բռնութիւնս, և բազմադիմի հնարիւք ջանային կողոպտել զՀայս։ Այլ քան զամենեսին առաւել եղեւ Իսմայիլ Պէյն՝ եղբայր Կուսակալին Դամասկոսի, կուսակից ունելով ինքեան զնախիպ

Օմարն, 'ի միջոցի 5 ամսոց էառ 'ի նոցանէ առաւել քան զ10,000 դահեկանս աւելորդ դրամ, երբեմն հնարագիտութեամբ կուսակցին իւրոցն զայլազգիս քաղաքին յարուցանէր 'ի վերայ նոցա, և զրպարտութեամբ վարէր 'ի դատաստան, որպէս արար վասն պարտիզի փոխանորդին, և յարոյց զայլ ոմն թէ 'ի 40 ամաց հետէ զկանոնական ընծայս Խանքէի չիցէ առեալ, որոյ վասն իբր 'ի պաշտպանութիւն Հայոց, առնոյր ինքն ագահութեամբ. նոյնպէս և Նախիջն և այլք, և երբեմն կալեալ զՀայազգի ժողովուրդս քաղաքին մատնէր 'ի չարաչար գանս և 'ի բանտս. զայս ամենայն համբերութեամբ տանէին՝ և սպասէին յուսով դալստեան Բդեշխին, թէ նա աւելի ինչ ոչ առնու, ըստ հրովարտակի Արքային, եւ զնոյն պատուիրէ Քաղաքապետին։

Դիոնէսիոս եպիսկոպոս Կարապետեան, որ մեկնեցաւ յԱթոռոյն գնալ 'ի Կոստանդինուպօլիս, որպէս գրեցաք 'ի վեր անդր, այլ խոտորեալ նորա 'ի ճանապարհէ իւրմէ գնաց 'ի Սիդոն, այն է Սայտայ, և զկնի աւուրց ինչ եգնաց 'ի Պերութ զՅակոբ եպիսկոպոսն Լիւդրացի, որ արդէն մեկնեալ էր յԱթոռոյն. սոքա որոշեալ անջատեցան յեկեղեցւոյն Հայոց, և յարեցան 'ի կրօնս զոր սահմանեալ էր Լուտեր Մարտինոս, և ամուսնացան երկոքեանն։ Դիոնէսիոս ընկալաւ զփոխ հիւպատոսութիւն Նափոլիթանի Տէրութեան 'ի Սայտայ, և Յակոբ Բրիտանիոյ, որ և արարին հանդէս մեծ յաւուր հաստատութեան 'ի պաշտօնի իւրեանց, ուր պատահեցաւ և Գրիգոր եպիսկոպոս Սսոյ, որ գնայր յԵրուսաղէմ։ Իսկ յետոյ Դիոնէսիոս գրեաց անտի առ Խորհրդականս Աթոռոյն իբր արդարացուցանել կամելով զինքն, ուր ասէ՝ «Զկամելով մեր զինաս Ս. Աթոռոյդ, ամապարեցաք ելանել այսր, և զի մի ումեք 'ի ձէնջ վտանգ ինչ յառաջասցի 'ի պատճառս մեր՝ ցուցանելով զարարս ոմանց յարգոյիցդ՝ մեծաշուք ազգապետաց կազմողաց զայդ Խորհրդականութիւն՝ արգել տուաք մեզ 'ի գընալոյ 'ի Կոստանդինուպօլիս, և ոչ եւս յօժարեցաք գրով մանք առնել և որպէս դուք եւ յոյժ բազումք վկայեն։ Իսկ եթէ սրբութիւն ձեր 'ի վերասին հաստատելն զնոյն

եօթն թիւ խառնելով ընդ ձեզ զՊատրիարքն 'ի վնաս Նորին սրբազնութեան և 'ի ձեր հանդստութիւն. գրեցէք ինչ զոր կամիք զմինչ 'ի Կոստանդինուպոլիս ըստ հաճոյից ձերոց, դուք գիտասջիք, միայն թէ բառնալ 'ի միջոյ զխարդախն և զխարդախամիտն ըստ ներքնոյն և ըստ արտաքնոյն գործադրութեան. թէպէտ ինքն միշտ ջանայ դաղել եւ երդմամբ զինքն արդարացուցանել։ Միթէ չգիտէի՞, միթէ ո՞չ գիտացի որ գործեցաւն եւ որ գործելոցն էր, եթէ մնայի յայդր, բայց պարտաւոր լիցի որ եղեւ պատճառ Նորին համարձակութեան։ Շատ քաջութիւն Աթոռայնոցդ մեծաց եւ փոքունց, եթէ յայսմ հետէ անվնաս և հանդարտ մնայցէք, որքան երկոքին դոքա ըստ առաջնոյն վարեսցին, զորոց երբեմն ճաշակեցաք զպտուղ եւ արդ իսկ։ Զայսքանս վասն այնորիկ գրեցի առ եղբայրութիւն ձեր, զի և դուք վկայիցէք թէ գիտեմ եւ լեմ»։ Եւ ապա թախանձանօք խնդրէ զ10,000 դահեկանն զոր պայմանաւ տուեալ էր յառաջագոյն Աթոռոյն, առնուլ զչահ Նորին 'ի տարին 1000 դահեկան, և զկնի մահուան իւրոյ մայր գումարն մնալ Ս. Աթոռոյն. այժմ խնդրէր միայն զ10 տարեկան չահ 10,000 դահեկան, և զմայր գումարն թողոյր դարձեալ ըստ կտակին իւրոյ Աթոռոյն, և աղաչէր սիրով կատարել զայս խնդիր իւր, զի մի վերըստին ծագեսցի ատելութիւն, և ինքն խոստանայր կատարել զգործ Աթոռոյն եթէ ծանուսցեն։

Գրեաց և առ Կիրակոս եպիսկոպոս մտերիմ բարեկամ իւր, և խնդրէր առաքել զդոյս իւր զոր թողեալ էր յԵրուսաղէմ, 'ի Կիպրոս, 'ի Զմիւռին և 'ի Կոստանդինուպոլիս, յորոց զոմանս ընկալեալ էր ինքն 'ի Պերութ ընդ գոյից Նորին (1824. 'ի 1 Ապրիլի)։ Գրեաց առ նա Կիրակոս եպիսկոպոս գիր յանդիմանութեան և մեղադրանաց, որում պատասխանէ այսպէս. «Աստուած և զքեզ աղատեսցէ յանել որոգայթէդ. ոչ ուրացայ զհաւատս, ոչ փոփոխեցի զկրօնս, ոչ 'ի բաց թողի զկարգս, ոչ լքի զաստիճանս, ոչ արհամարեցի զՎէքիլութիւն Տէրութեանն քրիստոնէի. այլ սովիմբ պաշտօնիս Վէքիլութեան քրիստոնէի Մեծի Տէրութեան Նափոլիթանու առաւել համարձակութեամբ պաշտեմ և յարգեմ զամենայնն. երանի որ ոչ գայթակղեսցի յիս, այլ առաւել եւս հաստատեսցի 'ի հաւատս փառաւորելով զԱստուած»։

Ոչ անտի պատճառանօք և ոչ տղայական մտօք ելաք յայտի. մեծախորհուրդ խոհեմութեամբ մտարերեա եւ մի մեղանչեր մեղադրելով ինձ. 'ի մէջ երկսայրի սրոյ եթող զիս որ եթողն, եւ յետ ոչ բազմաց ինչ աւուրց տարաժամ մահուամբ երեւէր ինձ ելանել յաշխարհէ, յորմէ վնաս մեծ ազգին և Աթոռոյն։ Լաւ չլինէր 'ի գնալոյ իմ 'ի Կոստանդինուպոլիս. զի քանի մի անձանց կամ տունն բնակութեան եւ կամ հոգւոյն, ինձ արարի և ոչ տունն բնակութեան եւ կամ հոգւոյն։ Ինձ արարի և ոչ յոլոց՝ զոր արարի։ Եւ ապա գանկատ զեղիա եպիսկոպոսէ։ Զեպիսկոպոսական Թագն և զվկական եթող յԱթոռն 'ի յիշատակ հոգւոյ Զմիւռնացի հանգուցեալ Էքիզեան Յարութիւն Աղայի։

Դարձեալ խնդիր դրամոց ('ի 23 Ապրիլի), և 'ի սմին մեղադրէ զԿիրակոս եպիսկոպոս, իբրեւ Խորհրդական գրագիր, որ յառաջագոյն ինքն էր, «Արժան էր և ձեզ զայլ ինն վկայել ընդ Ս. Գահակալին և Տ. Եղիայի, որ գրողն էիր գրոյն. այլէ բարեկամութիւն, աղգականութիւն, ընկերութիւն և եղբայրութիւն, և այլէ ըստ իրաւանց վկայութիւն կամ դատողութիւն. թէպէտ և դու բարկացեալ ես և խռովեալ յինէն, բայց դարձեալ հաշտեսցիս և ուրախ լիցիս ընդ արարս իմ, զոր ոչ վայրապար արարի. եղեւ, որ եղեւն»։ Միթէ իրաւո՞ւնք են միոյ հօր որդւոց ոմանց յղփանալ հարիւրաւորօք և ոմանց անինչ ելանել, մեք եթէ չիցեմք տէր 10,000 դահեկանի, միւսոյն ուստի՞ են այնքան քսակք. եթէ կարելի է աղաչեմք յօր յառաջ ղձայնս մեր կարել վճարելով զտասն հազարն ցՑուլիս վերջ, յետ այնորիկ եւ ձայնք մեր հանտանին յականջս ձերոց (յ3 Յուլիսի)։

Թէպէտ արարք մեր խոչ երեւին ազգին, մանաւանդ ծանօթից և սրտակից եղբարց եւ կարեւոր բարեկամաց, այլ նոքին ըստ իւրեանց կամաց միայն դատեն, Յունացն դգերելով. զհաւատ Երրորդութեան, զեկեղեցի, զկրօն, զկարգ չեմ ուրացեալ և ոչ 'ի Ֆրանկութիւն փոխարկեալ, բայց եթէ զգլխահարկի թուղթն 'ի ֆրանկերէն փոխարկեալ, և զսեւազգեստութիւնն 'ի պայծառս, եւ զպաշտօն

Եպիսկոպոսութեան առ ժամանակ մի լռեցուցեալ, որպէս եւ յայդր, զի զինչ պատիւ Եպիսկոպոսին։ Եւ յետ այլոց բանից ասէ, եթէ Տէր կամեսցի գտեալ զմիմեանս արտաքոյ Երուսաղէմիդ համբուրեսցուք եւ ցաւակցեսցուք, ոչ եթէ իշխանութեան և փառաց ցանկանալով ձեռն արկի յայս պաշտօն, այլ միայն գիտասցի թէ 'ի մէջ այլոց ազգաց կարեմք Աստուծով երեւիլ և անուանիլ, եւս եւ ազատ մնալ 'ի Բոֆորէ ազգին և 'ի նենգապատիր խարդախանաց սուտ եղբարց։ Յետ և այլ բազում դանկատանաց դարձեալ խնդրէ զ10,000 դահեկանն, որ 'ի պատասխանի դրեն Խորհրդականք, առաքել նախ զմուրհակն եւ ապա առնուլ զդրամն. թէպէտ նա դպրացաւ առ այս, զի ընդդէմ էր օրինաց, բայց առաքեաց զայն 'ի Յոպպէ առ թարգմանն Անգղիոյ առնուլ զդրամն 'ի Տեսչէ տեղւոյն և տալ զմուրհակն։ Եւ զի ինքն յորդորմամբ ոմանց եգեալ էր 'ի մտի հրաժարիլ 'ի պաշտօնէ իւրմէ և մեկնիլ անտի, առաւել վստահացեալ 'ի գիրս Նոցա՝ դնաց 'ի Պերութ եւ ձեռնտուութեամբ բարեկամաց իւրոց յաջողեցաւ թողուլ զպաշտօնն զայն։ Ահա ընկալաւ գիր յերուսաղէմէ հակառակ առաջին գրութեան, խոստանային հատուցանել նմա ամ յամէ 1500 դահեկան շահ դրամոց նորին, եւ հրաւիրէին զինքն դալ մնալ յերուսաղէմ. և Յակոբ եպիսկոպոս յառաջագոյն գրեալ էր առ Խորհրդականս հատուցանել զգումարն յաղատութիւն երկուց կողմանց, զի դադարեսցին բանք և գրութիւնք, եւ խոստացեալ էր պահել առ իւր զԴիոնէսիոս շահիւ նոյն դրամոյ, այլ 'ի չ'յաջողիլ գործոյն արար Դիոնէսիոս պատասխանի. տեսեալ թէ այլ և այլ պատճառանօք երկարեն զժամանակն, միթէ ես մեա՞ն էի թշնամի Գաբրիէլ Պատրիարքին, միթէ ի՞նձ ընդդիմացաւ, այլ որ արարն տացէ զպատասխանին, չնորհակալեմ զհրաւիրմանէ ձերմէ զմեզ, բայց գիտէք, թէ ոչ կարեմ դալ և մնալ յերուսաղէմ որով կերպիւ և իցէ, միթէ հնա՞ր իցէ մարդոյ յանձուկ յորովայն մօր իւրոյ մտանել եւ մեռանիլ, չէ այդ մահ վասն Աստուծոյ արքայութեան և հաւատոյ, այլ յիմարաբար կրել զմիշտս 'ի պարտատերաց, բռնապահանջ յանողորմից, և յազգէն, և յազգաց և 'ի սուտ եղբարց, որոց կատարածն յուսահատութիւն է։ Ի հասանիլ գրոյս հասուցէք զ10,000 և զանցեալ 5 ամսեայն՝ 'ի Յոպպէ՝ և առէք զձեռագիրն, և յայնմ հետէ կացջիք բարեաւ և խաղաղութեամբ։ Իսկ եթէ դարձեալ ժխտէք բանից ձերոց զայլ և այլս գրելով և գործելով, ես անպարտ եմ, դուք տաջիք պատասխանի որում պէտք է (1824. 'ի 15 Սեպտեմբերի)։

Եւ 'ի սոյն աւուրս Պոլսոյ Յակոբ վարդապետ կատարեալ զգործ նուիրակութեան՝ դարձ արար 'ի Կոստանդինուպօլսոյ, և հասեալ 'ի Կիպրոս եթող անդ զբեռինս, որք էին կապերտք և շալք և այլ ինչ յիշատակ Աթոռոյն, և գնացեալ 'ի Պերութ յարեցաւ առ Լիւսդրացին Յակոբ, եւ ետ նշանս ամուսնութեան, եւ դարձ արար 'ի Կիպրոս յափշտակել զբեռինս, այլ գործակատար Աթոռոյն Սիմոն աղա ոչ ետ զայնս ըստ ազգարարութեան Խորհրդականաց Աթոռոյն։

Եկաս Կուսակալն Դամասկոսի մեծաւ զօրութեամբ յերուսաղէմ, կալաւ զտեսուչն Յունաց Ս. Եղիայի վանաց և զոմանս 'ի ժողովրդոցն Լատինաց, եւ մատնեաց զնոսա 'ի գանս մինչեւ ցսպառումն շնչոց նոցին, և երկաթի կապանօք արգել 'ի բանտի, որպէս թէ զինչս ոմանց փախստէից Բեթղեհէմի Ֆէլլահից պահեալ իցեն առ իւրեանս, որոյ վասն 65,000 'ի Յունաց եւ 40,000 դահեկան 'ի Լատինաց տուգանս էառ, 'ի Հրէից 100,000, թող զայլազգիս Երուսաղէմի, յոմանց 5, եւ յոմանց 10,0000 դահեկան։ Յետ ամենեցուն ձեռն արկ 'ի Հայս, և չգտեալ բնաւ տեղի ինչ յանցանաց եւ զրպարտութեան, զայս միայն առաջի եդ՝ թէ 'ի ժամանակի յայսպիսի սղութեան եկեալ իմ այսչափ բազմութեամբ զօրաց եւ ծանր ծախիւք, արարէք ինձ զաւելի պատիւ և ծառայութիւն ինչ։

Հայք միջնորդ կալեալ զոմանս աղաչէին զնա ներել՝ յայտ առնելով զաղքատութիւնս իւրեանց, այլ նա բնաւ ոչ անսայր. ապա տարեալ ցուցին զհրովարտակն, և նորա ցասուցեալ ասէ՝ գիտեմ զհրաման Թագաւորին, և ընդդէմ այնմ չգործեմ ինչ. ահա զկոնոնաւոր Ռոդոսէն 'ի 40,000 դահեկանէ աւելի ոչ առնում. այլ միթէ ծանր ի՞նչ թուի ձեզ առնել ծառայութիւն ինչ, և սկսաւ ահացուցիչ բանիւք սպառնալ. միթէ ո՞չ կարէի գտանել յանցանս ինչ

'ի վերայ ձեր, և յետ կիսամեհ առնելոյ զձեզ դանիւք, բռնութեամբ առնուլ զկիրկնապատիկն. և առաքեաց զնոսա 'ի վրան Բեահեային, ուր մնացին յարգելանս յառաւօտէ մինչեւ ցերեկոյ։ Ապա խնդրեցին իմանալ զկամս Բդեշխին, ասէ ցնոսա Բեահեայն 150,000 դահեկան խընդրէ 'ի ձէնջ. մինչեւ ոչ խոստանայք ոչ կարէք ելանել աստի։ Ապա բաղում պաղատանօք եւ միջնորդութեամբ ոմանց հայազգի սպասաւորաց Բդեշխին, մինչեւ ցկէս գիշեր հազիւ կարացին համեցուցանել զնա մինչ ց40,000, և զերծան անտի։ Յառաւօտեան կանուխ պաշարեցին Ոստիկանք զդուռն վանաց, մին խնդրէր դրով 40,000 --դ--դէն. 4422 դահեկան 30 փարայ Բեթղեհէմի Հայոց բաժին --դ--դէն. 4500 դահեկան 3 անգամ Բդեշխին ծուխ պատրաստելոյ --այ, զոր յառաջագոյն արդիւնաւ էին. այժմ սա բռնութեամբ ա'ռ։ Իսկ միւսն պահանջէր 40,000 դահեկան էրդ-դէ. 4000 Բեահեային. 3000 եղբօր Բդեշխին. 3000 Բիլէր էմինին. 1000 Գանձապետին. 2000 յանուն Դատաւորին, բայց ոչ էտ նմա եւ ոչ դանկ մի։ Այսպէս աւուրս 6 չրջէին Ոստիկանք 'ի մէջ վանաց, խրատիւ և բռնութեամբ պահանջէին, խորտակեալ զդրուն սենեկաց մտանէին 'ի ներքս. միաբանք չկարացեալ վճարել զայնքան գումարն, թագուցեալ էին 'ի սենեակս, և հնարս խնդրէին գոնէ զմի փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, այլ Ոստիկանք որում և դիպէին՝ կալեալ գանէին և հայհոյէին։ Տեսեալ Խորհրդականաց թէ թագստեամբ չվճարի ինչ, ժողովեցին զդրամս որչափ և կարացին, և եռուն բաղում ջանասուք, զի զմահմուտիէ ոսկին եռուն 27 1/2, որ արժէր 35 դահեկան. նոյնպէս եւ զայլսն. 41,865 տրամ ձուլեալ արծաթ, 44 փարայ հաշուելով զտրամն։ Իբրեւ դիւրացաւ այս վճարումն, դարձեալ բռնութեամբ էառ 3600 դահեկան վասն երկուց Ոստիկանաց, 2000 դահեկան յանուն զահրէֆիի, 500 մի ժամացոյց 350 մի մատանի, 300 մի սեռէֆքեարի արկղիկ Բեահեային, 350 մի ժամացոյց Բդեշխի որդւոյն, և այլոց և այլոց։ որոց ամբողջ գումարն եհաս 128,000. և ոչ մնաց դրամ հոգալ զպէտս միաբանաց եւ տալ զտոկոսիս, եւ չունէին ակնկալութիւն առնուլ մուրհակաւ։ Եւ յետ մեկնելոյ

Բդեշխին՝ նոր Բաղաքապետն Երուսաղէմի կալեալ զոմանս 'ի բնակչաց քաղաքին առանց յանցանաց մատնէր 'ի գանս եւ 'ի բանս, եւ պահանջէր 'ի նոցանէ զծանր տուգանս։ Ուստի Խորհրդականք Աթոռոյն զայս հնարս միայն գտին. ճանապարհ եռուն 25 միաբան վարդապետաց, սարկաւագաց և այլոց՝ գնալ յո՞ և կամիցին, և ոմանց եւս պատուէր եռուն գնալ 'ի Ռէմլէ և 'ի Յոպպէ և մնալ անդ 'ի վանս։ Ապա զամենայն եկեղեցական անօթս, բաց 'ի հասարակ կարեւորաց, ժողովեալ տումարաւ եդին 'ի գանձարան տաճարի Ս. Յակոբայ, եւ զդուռն փակեալ քարամբք և կրիւ անյայտ արարին, և թողին բաւական պարէնս մնացեալ միաբանաց եւ 2000 դահեկան, զոր առին յուխտաւորէ ումեմնէ, եւ եռուն ժամ օրհնող Իսահակ վարդապետին, և ընդ առաւօտն կանխեալ ելին 'ի վանաց չորս Խորհրդականքն, որք էին Մկրտիչ, Եղիա, Կարապետ և Կիրակոս եպիսկոպոսունք (1825. 'ի 11 Ապրելի), և խոյս եռուն 'ի Բերրոն, պատուիրեալ միաբանաց չբանալ այլ եւս զմեծ դուռն վանաց։ Լուեալ մեծամեծաց քաղաքին զփախուստ նոցա՝ կալեալ զայլազգի դռնապան վանաց դան հարեալ եդին կապանօք 'ի բանտ 'ի բերդն, և առաքեցին զկնի նոցա 50 զօրականս դարձուցանել զնոսա յետս։ Բաղաքապետն եւ նոր Նախիպն առաքեցին գրով զբերդապահ քաղաքին և հրաւիրեցին զնոսա դառնալ յԵրուսաղէմ. այլ մեծ Շէյխն տեղւոյն, առ որ ապաստանեալ էին, ոչ եթող տանել զնոսա։ Խորհէին գնալ անտի յԵգիպտոս եւ մնալ անդ ժամանակս ինչ մինչեւ հասցէ օգնութիւն իշխանաւորաց։ Յուսամք ասէ նամակագիրն թէ վասն այսորիկ ոչ մեղադիր լինիք մեզ, քանզի ոչ կարէաք մնալ 'ի Ս. Աթոռն և ընդդիմանալ այնչափ ծանր հարկապահանջութեանց։ Զի ամ յամէ բաց յեկեալ արդեանց՝ վեց եօթն հարիւր քսակ պարտքն յաւելաւ վասն հարկաց և շահուց պարտատերաց։ Որպէս եւ յայսմ ամի զկնի բովանդակ արդեանց և ձուլեալ արծաթոց և այլ վաճառեալ իրաց, 600 քսակ յաւելեալ է պարտքն։ Մանաւանդ զի այլ եւս մեծ վտանգի 'ի տուգանաց դուռն բացեալ լինէր, եթէ մնայաք ասէ 'ի Ս. Աթոռն։ Քանզի կալեալ Բդեշխին

զերդայր Ապուղօշ Իպրահիմի՝ կապանօք տարաւ ընդ իւր
'ի Դամասկոս, և պահանջէր 'ի նմանէ հարիւրաւոր քսակս
և ապա թողուլ։ Եւ եղեւ յիջանել 280 ուխտաւորացն Հա-
յոց յԵրուսաղէմէ 'ի Ռեմլէ, ընդ առաջ ելեալ Ապուղօշն՝
կալաւ 'ի նոցանէ 29 երեւելի անձինս և եդ 'ի բանտի, և
զայլս առաքեաց 'ի Ռեմլէ. ապա գրեաց առ Խորհրդակա-
նըս, թէ տուք բերել զերդայրն իմ, եւ ես արձակեցից
զուխտաւորսն։ Եթէ ձեռնամուխ լինէին, առաջի կայր նո-
ցա դոնէ հատուցանել 50,000 դահեկանս, վասն որոյ թո-
ղին այնպէս. ուխտաւորք մնացին 'ի չարչարանս, և այլքն
'ի դաշտն Ռեմլէի անտանելի խղճութեամբ սպասէին։ Պօ-
ղոս Եպիսկոպոս 'ի գնալն յԵգիպտոս ականատես է այսմ
թշուառութեան ուխտաւորաց, այլ ոչ ձեռնհաս։ Ապա
յաւելին խնդրել 'ի Պատրիարքէն և յազգապետաց հասա-
նել 'ի Թիկունս օգնականութեան Ս. Աթոռոյն, բողոքել
առ Տէրութիւնն, և յետս պահանջել զաւելի առեալ դը-
րամն 'ի գործակատարէ Նորին, և զօրաւոր հրովարտակաւ
շամ եւ կոպար դնել հարկաց Բդեշխին եւ Դատաւորին,
և բառնալ զանկանոն պահանջս այլազգեաց, և հոգալ վա-
սըն թեթեւութեան պարտուց, եւ կամ իսպառ բառնալ
զտոկոսս, որով լիցի հնար բանալ վերստին զդուռն վա-
նաց և մնալ միաբանաց։ Զայս նամակ գրեցին 'ի Բերրոնէ
առ Կարապետ Պատրիարք և առ Գլխաւորս ազգին 'ի Կոս-
տանդինուպօլիս, եւ ընդ նմին առաքեցին զցուցակ տրոց
գրեալ յականէ յանուանէ, եւ խնդրեցին զպատասխանիս
թղթոց առաքել յԵգիպտոս, և խորհէին յղել առ նոսա զմի
ոմն յինքեանց պատմել զամենայն ինչ բերանով։ Ի հասա-
նիլ այսոցիկ նամակաց, ետ թարգմանել Պատրիարքն զա-
մենայն անկանոն գործս Բդեշխին եւ զտառապանս միա-
բանաց և ժողովրդոց, յետս պահանջելով զաւելորդ դրամն
զոր էառ Կուսակալն, այլովքն հանդերձ, եւ մատոյց 'ի
Դուռն։

Իսկ այլազգիք Երուսաղէմի գնացեալ զկնի Եպիսկոպո-
սաց 'ի Բերրոն բռնադատէին զնոսա դառնալ անդրէն յԵ-
րուսաղէմ, եւ 'ի չանալ նոցա, երդմամբ դաշինս հաս-
տատէին՝ այնուհետեւ չնեղել զնոսա և չպահանջել ինչ։
և 'ի դէպ ժամանակի լինել օգնական, և այսպէս յորդո-

րեալ զնոսա ածին յԵրուսաղէմ. բայց ոչ կացին 'ի պայ-
մանի ուխտի իւրեանց, եւ բռնացեալ խնդրէին զկանո-
նաւորս եւ զանկանոնս, եւ նոքա կային 'ի չքաւորու-
թեան։ Եւ Պօղոս Եպիսկոպոս, որ էր յԱղէքսանդրեա,
գրեաց յԵրուսաղէմ և հարցանէր զորպիսութենէ վանաց և
զզալստենէ Բդեշխին։ Իսկ սոքա հանին 'ի ճանապարհ ըն-
կերակս Եպիսկոպոս (յ8 Մայիսի) գնալ 'ի Կոստանդինու-
պօլիս և պատմել զանցն Բդեշխին և զտառապանս իւրեանց
յերեսաց այլազգեաց և պարտատերաց, որպէս եւ գրեալ
էին յառաջագոյն. առաքեցին ընդ նմա և զցուցակ միաբա-
նաց՝ տեսանել թէ զո՞ք 'ի նոցանէ արժան լցէ պահել։
Եւ եղեւ 'ի դադարիլ տոկոսեաց պարտուց, յարեան պար-
տատերք 'ի վերայ վանաց, և միաբանք փախուցեալ թագ-
չէին սենեակ 'ի սենեկէ, և 'ի պատահիլ Փոխանորդին կա-
լեալ զնա գանիւք եւ խոշտանգանօք վարէին 'ի գատաս-
տան, և 'ի ճանապարհի պատահեալ ոմանց 'ի բարեկամաց
միջնորդ լեալ աղաչանօք թափէին զնա 'ի ձեռաց նոցա,
իսկ ոմանք 'ի միաբանաց անզգաստ և անխորհուրդ՝ պեղէին
զչարիս 'ի կորուստ անձանց իւրեանց, հրապուրելով զայ-
լազգիս, թէ մի հաւատայք բանից Խորհրդականաց, զի
նոքա միայն կարող են վճարել զտոկոսիս և պահել զվանս,
և այլ այսպիսի անասելի բանք, զորս չէ արժան դրոշմել
'ի գիր, որոյ վասն արտաքսեալ 'ի վանաց առաքեցան 'ի
Ռեմլէ։ Զհանդուրժեալ Խորհրդականաց՝ խորհեցան խոյս
տալ յԵրուսաղէմէ և փակել առ ժամանակ մի զդուռն վա-
նաց, որպէս պատրաստեալ զպաշար ճանապարհի առաքե-
ցին 'ի Բեթղեհէմ. գնացին Կարապետ Եպիսկոպոս և Ցա-
կոբ վարդապետ, և մնային գալստեան այլոց, այլ հասեալ
առ նոսա գիր Կարապետ Պատրիարքի՝ արգել զնոսա 'ի
խորհրդոցն, թէպէտ և Պօղոս Եպիսկոպոս յորդորեալ էր
բազմիցս գրով տանել վչտաց և չթողուլ զԱթոռն, այլ սո-
քա արարին պատասխանի թէ՝ համբերեմք մի ամիս եւս,
այնուհետեւ չէ հնար մնալ. զի լուեալ էին զսպառնալիս
Բդեշխին Դամասկոսի. եթէ նորոգեսցի ասէր իշխանու-
թիւն իմ, զփոխանորդն Լատինաց եւ զկրօնաւորս Հայոց
հանդերձիւք իւրեանց հանից 'ի փայտ 'ի դրունս վանաց։
Եւ 'ի սոյն աւուրս ոմանք 'ի պարտատերաց բռնութեամբ

առին զբանալի դրան Ս. Աստուածածնի 'ի ձեռաց Լուսաբարին, եւ Խորհրդականք անկեալ 'ի դրունս այլազգեաց հազիւ կարացին դարձուցանել զայն յետս, և էին 'ի կասկածի վասն այլ Ս. Տեղեաց եւ կալուածոց, (1825. 'ի 19 Հոկտեմբերի).

Գ Լ Ո Ւ Խ Թ Զ.

Առաջնորդ Եգիպտոսի Կիրակոս. Ներքին խռովութիւն վանաց. Նուիրակութիւնք Եթովպիոյ. Հոգեաւուն Լաւոդիկիայ. Անկումն Եղիա Եպիսկոպոսի. Խնդիր առաջնորդութեան Եթովպիոյ.

ԻԲՐԵՒ եհաս Կիրակոս Եպիսկոպոս 'ի Կոստանդինուպոլիս սակս պատմելոյ ազգին զաղէտս Երուսաղէմի, որպէս գրեցաք, որոշեցաւ լինիլ Առաջնորդ Եգիպտոսի. կոչեցին և զՁաքարեայ վարդապետ Կոբեցի 'ի Նուիրակութենէ, եւ եդին Փոխանորդ Աթոռոյն 'ի Կոստանդինուպոլիս եւ զՑարութիւն վարդապետ Եդեսիոյ առաքեցին Առաջնորդ 'ի Զմիւռին քաղաք. Հասեալ Կիրակոսի յԵգիպտոս 'ի վիճակ իւր, առ 'ի անբասիր կացուցանելոյ զանձն յամենայնէ՝ ըստ օրինադրութեան Պօղոս Եպիսկոպոսի՝ ծայրագոյն կառավարչի Աթոռոյն և կամեցողութեամբ ազգապետաց, ձեռն արկ բարեկարգ տնտեսութեամբ կառավարել զեկեղեցին. ընտրեաց զերիս անձինս յերեւելեաց քաղաքին խորհրդական և հոգաբարձու առաջնորդական գործոց, զԱրեւելից Պօղոս վարդապետ փոխանորդ, զմն հաւատարիմ եկեղեցական, սահմանեաց արկղ արդեանց եւ տումար ելից և մտից. վերատեսուչ դպրոցի և հիւանդանոցի, և զայլ բարեկարգութիւնս, ըստ տանելոյ տեղւոյն և ժամանակին. յաւել զվարձս տանց, զարկղն և զտումարն պահեաց առ իւր և զբանալին ետ ցՓոխանորդ իւր. Սակայն Աթոռն Երուսաղէմի ոչ երբէք եդիտ զխաղաղութիւն, զի բաց յարտաքին թշնամեաց, յարուցեալ էր և ներքին ընտանի երկպառակութիւն 'ի մէջ միաբանաց. զի նենգաւոր և դաւաճան լեալ ատէին և թշնամանէին զմի-

մեանս. Քանզի Եղիա Եպիսկոպոս՝ որ Փոխանորդ էր Աթոռոյն, պատճառ եղեւ մեծաւ մասամբ ապստամբութեան քաղաքացի այլազգեաց և տիրելոյ ամրոցին, և 'ի գուշակել իւրում թէ՝ գան հասանեն զօրք 'ի Տէրութենէ 'ի վերայ քաղաքին, ելից երկիւղիւ զսիրտ Կարապետ Եպիսկոպոսի և խորհրդական գրագիր Յակոբ վարդապետի և առաքեաց զնոսա 'ի Բեթղեհէմ (Հոկտեմբեր) որպէս գրեցաք 'ի վեր, և ինքն սկսաւ մարանչիլ ընդ Լուսաբար Մկրտիչ Եպիսկոպոսի, կամ բանալ զգանձարան Եկեղեցւոյն և տալ ինքեան որ ինչ 'ի նմա ոսկի և արծաթ, զի տացէ պահանջողաց, և կամ ելեալ գնասցեն 'ի Բեթղեհէմ ապաստանիլ անդ ընդ ասպատամբ գիւղականս, ապա թէ ոչ՝ մատնեսցեմ ասէ զքեզ յայտնապէս պարտատերաց և բռնաւորաց, թէ 'ի ձեռս սորա են բազմագումար գանձք ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց՝ զորս թագուցեալ ոչ տայ. Անճարացեալ Ծերունւոյն յակամայ կամս ընկերացաւ նմա և գնացին 'ի Բեթղեհէմ. Զմիւռնացի Յարութիւն վարդապետն թաքեաւ 'ի վանս Յունաց ամիս Զ. Զանգրցի Թարգման Յակոբ, Արեւելցի Գէորգ, Երկար Կարապետ, Բարդուղիմէոս և Միքայէլ վարդապետք փախեան 'ի Ռէմլէ և 'ի Յոպպէ, զորոց գրէր Եղիա առ ազգայինս Կոստանդինուպօլսոյ իբր ստահակս և արտաքսեալս 'ի վանաց, և մնացեալքն անօրինակ անկարգութեամբ վարէին՝ լեալ աւուրն մէն մի իշխող հասարակաց.

Քաղաքապետն որ նոր հասեալ էր յԵրուսաղէմ 'ի Կոստանդինուպօլսոյ՝ գրեաց հրամանագիր եւ առաքեաց 'ի ձեռն սպասաւորին իւրոյ առ Փոխանորդն Եղիա՝ զի եկեսցէ յԱթոռն, և նորա առեալ զգիրն պատառեաց առաջի գրաբերին, և բազում հայհոյութեամբ դարձոյց զնա յետս. դարձեալ գրեաց առ նա Դպրապետ դատարանի, զի եկեսցէ՝ ապա թէ ոչ՝ 'ի վախճանի չարագոյն եւս լինի. իսկ նա նոյն օրինակ անարգութեամբ դարձոյց զսպասաւոր նորին։ Ի վերայ այսորիկ ժողովեալ պարտատերաց դիմեցին 'ի դատարան, և իւրաքանչիւր ոք բողոք բարձեալ գոչէր՝ թէ միաբանք Հայոց առին զայսքան դրամս մեր, այժմ գըլխաւորք նոցին փախուցեալ են 'ի քաղաքէս և զտոկոսս դրամոց մերոց ոչ հատուցանեն, կամ առեալ 'ի նոցանէ

տուք զդրամս մեր, եւ կամ հրաման՝ երթալ կողոպտել զվանս նոցա և տիրել տանց և ստացուածոց, և իւրաքանչիւր ոք բաժանել ըստ իւրոց առնելեաց որ ինչ և անկանիցի· Դպրապետ դատարանի ելեալ ընդ առաջ նոցա ասէ՝ ես երաշխաւոր եմ ազգին Հայոց, համբերեցէք մինչեւ ամիս չորս, զի գրեցից Պատրիարքաց և մեծամեծաց նոցին 'ի Կոստանդինուպոլիս, եթէ նոքա ոչ հատուցցեն ձեզ զպարտս իւրեանց՝ ես հատուցից լիովին փոխանակ նոցա, և այսպէս դարձոյց զնոսա յետս։ Եւ ապա ժողովեալ գԸԸ խաւորք և դատաւորք քաղաքին խորհեցան 'ի միասին 'ի վերայ վատթարութեան Փոխանորդին Հայոց՝ որ յայս վիճակ թշուառութեան հասոյց զվանքն, և սահմանեցին 'ի ժողովի անդ գրել 'ի Կոստանդինուպոլիս, զի կարգեսցեն զայլ ոք Փոխանորդ, եւ արգելցեն զերիա մտանելոյ 'ի վանս· կոչեցին յայն առեան և զսմանս 'ի վարդապետաց և ասեն, մեք զերիայն ոչ ընդունիմք և ոչ այլ եւս կամիմք գալ նորա և մտանել 'ի վանս, դուք զի՞նչ ասէք· զի այսպիսի և այնպիսի ոք է նա· նոքա ետուն պատասխանի՝ թէ չունիմք ինչ ասել, այլ հրամանաց եւ կամաց ձերոց հնազանդ եմք, որպէս կամիք և առնէք՝ հաճոյ է մեզ· ապա ասացին երթալ գրել առ գլխաւորս ազգին և ծանուցանել նոցա զամենայն գործս եղիայի՝ ընդհակառակ նոցա ամիս չորս, գրեցին նաեւ ինքեանք· գրեանք երկոցունց կողմանց՝ յատուկ սուրհանդակաւ առաքեցան 'ի Կոստանդինուպոլիս 'ի վերայ Աքքէի, ('ի 27 Նոյեմբերի)։ Իսկ նոր Դատաւոր քաղաքին եկեալ դեղերէր 'ի Դամասկոս, 'ի Յոպպէ և 'ի Ռեմլէ վան ապստամբութեան քաղաքացւոց, և ապա եկ յերուսաղէմ ('ի 23 Դեկտեմբերի)։ Եկին ընդ նմա եւ վարդապետքն՝ որ խոյս տուեալ էին յերուսաղէմէ· եկ և Յարութիւն վարդապետ 'ի վանացն Յունաց։ Այս հրամանաւ Դատաւորին և գլխաւորաց ոմանց այլազգեաց կարգեցան կառավարիչ գործոց Աթոռոյն Զմիւռնացի Յարութիւն և Զանգրցի Յակոբ վարդապետ՝ մինչ 'ի գալուստ պատասխանւոյ գրեանց 'ի գլխաւորաց ազգին։ Ահա յայսպիսի անարգութիւն հասեալ էր յայնժամ Աթոռն Երուսաղէմի, (1826· 'ի 22 Յունվարի)։

Մխալիճցի Յակոբ և Զմիւռնացի Ստեփաննոս վարդա-

պետք՝ 2 այլ ընկերօք եկին յերուսաղէմ գնալ յաշխարհն Եթովպացւոց, իբր գտանել օգնութիւն Աթոռոյն· և իբրեւ հասին 'ի Քեբրոն, զի ճանապարհ Ապուզոչի և Գազայու խափանեալ էր, կալան զնոսա Շէյխք տեղւոյն եւ արգելին և առեալ 'ի նոցանէ 180 դահեկան՝ արձակեցին· և նոցա ընկերացեալ ուղտապանաց հասին 'ի Սվէյշ և անտի նաւեցին 'ի Ճիտտէ· տագնապեցան անդ 'ի սատիկ ջերմութենէ կլիմայի երկրին եւ 'ի նուազութենէ հացի, եւ անտի նաւեալ հասին 'ի Նաւահանգիստն Մասուայ· զինի երից ամսոց ծախեալ ըռեալս 400, եւ կարօտեալ դրամոց վաճառեցին 'ի կէս գին զերիսս մատանիս և զմի ժամացոյց, 300 ըռեալ, և անտի դէմ եդին գնալ 'ի սահմանս Հապէշաց, ուտելով զալիւր Բէջ անուն խոտոյ, սեաւ և ժահահոտ։ Տեսուչ վարդապետն Հապէշաց՝ Ապտիւլ Մէսիհ, որ նստէր յերուսաղէմ, գրեաց յԵգիպտոս առ Պատրիարքն Ղպթոց, թէ գնացին աստի ոմանք 'ի վարդապետաց Հայոց յԵթովպիա յափշտակել զեշխանութիւն ձեր և զվիճակ՝ և աքսորել զեպիսկոպոսն որ անդ, և իբրու թէ իշխանք երկրին գրեալ իցեն յերուսաղէմ առ Հայս և խնդրեալ 'ի նոցանէ զառաջնորդ, չընդունիլ այնուհետեւ զոք 'ի Ղպթոց։ Պատրիարքն փութանակի ազդ ուղարկիրան եպիսկոպոսի տեղւոյն, որոյ անունն էր Գէորգ, և պատուիրեաց նմա ըմբռնել զվարդապետն, չարչարանօք և լկանօք դարձուցանել յետս· զայս ամենայն յետոյ պատմեաց վարդապետաց Թարգման եպիսկոպոսին Միքայէլ անուն։ Եպիսկոպոսն առաքեաց 'ի սահմանագլուխն զարս երիս, եւ կալեալ զնոսա կապեցին երկաթի կապանօք եւ թողին անդ 'ի լեառն, յետ քառասուն աւուրց լուեալ իշխանին Ատուայի ազատեաց զնոսա և տարաւ 'ի քաղաք իւր կողոպտեալ զինչս նոցա, բաց 'ի հանդերձից, զոր ընդգեցեալ էին· ետ ընթեռնուլ զկոնդակ նոցա, և իմացեալ ծանեաւ թէ յոր գործ եկեալ էին, և պահեաց զնոսա խնամօք առ իւր, և տայր նոցա մի եզ 'ի կերակուր բաւական երկուց աւուրց, և երբեմն հրաւիրէր զնոսա 'ի սեղան իւր։ Լուեալ զայս եպիսկոպոսին կատաղեցաւ խստաւ, և ելեալ գնաց առ իշխանն, և խնդրէր զվարդապետան տալ 'ի ձեռն իւր զի կուրացուցցէ զաչս նոցա, եւ նա ոչ էառ

յանձն, ապա չնորհեաց նմա մուրհակաւ և յետարիւ 500 գիւղս 'ի կալուածոց իւրոց, որոց տարեկան չահն էր 1200 քսակ ըստ վկայելոյ Թարգմանին, տարադրել զվարդապետս կապանօք 'ի սահմանաց անտի, եւ զինչս նոցա տալ ինքեան. դիւրաւ զիջաւ իշխանն 'ի բանս եպիսկոպոսին, մերկացուցին զնոսա և եռուն 'ի ձեռս չորից զինուորաց, տուեալ ըռեալս 50 'ի պէտս ճանապարհի, եւ զկնի 48 աւուրց հասին 'ի Մասուայ, ընդ իշխանութեամբ եգիպտոսի, և քաղաքապետն առեալ զնոսա 'ի ձեռաց զինուորաց պահեաց առ իւր զաւուրս 20 կերակրելով և մխիթարելով, և տուեալ ըռեալս 10 առաքեաց զնոսա 'ի Ճիտտէ. Գրիգոր և Ստեփան սպասաւորք նոցին հիւանդացեալ մնացին յԵթիոպիա, եւ նաւեալ անտի հասին 'ի լեառն Սինա, եւ ապա ուղղուք յԵգիպտոս, զոր ընկալեալ Կիրակոս եպիսկոպոսի Առաջնորդի տեղւոյն, եւ դարմանել զհիւանդութիւնս նոցա բժշկեաց և մխիթարեաց. զայս ամենայն համառօտիւ գրէ 'ի նամակի իւրում նա ինքն Յակոբ վարդապետ առ Պօղոս եպիսկոպոս, և յաւելու թէ անպատմելի են չարչարանքն զոր կրեցաք յԵթիոպիա (1826. 'ի 1 Մայիսի)։ Յակոբ վարդապետ զկնի աւուրց ինչ վախճանեցաւ աղետալի մահուամբ անդ յԵգիպտոս դիպուածով իւիք։

Բդեշխն Լաւոդիկեայ յետ երկուց ամաց բռնացեալ 'ի վերայ հոգեւոր Հայոց՝ եղեալ էր զօրս, և հոգեւոր Տեսուչն ոչ կարացեալ տոկալ բռնութեանց և աղաղակի նոցին փակեալ զեկեղեցին խոյս ետ անտի, և ոմանք 'ի ժողովրդոց տեղւոյն մնացեալ անմխիթար ցրուեցան, և մնացին քանի մի աղքատք, իսկ զօրքն քակեալ հանէին զմարմարիոն քարինս զերկաթս եւ զայլ կազմածս տանն և վաճառէին, և ոչ ոք իշխէր նոցա ասել ինչ, և 'ի նմին ամի եկեալ ուխտաւորաց իջեւանեցան ասա և անդ և հանդիպեցան բազում մնասուց և նեղութեանց. տեսեալ զայսոսիկ Մկրտիչ և Մելքոն, որք էին անդ սեղանաւորք, մանաւանդ թէ օր քան զոր աւերի և քանդի հոգեւոր տունն, գրեալ աղդ արարին 'ի Կոստանդինուպոլիս. և Կարապետ Պատրիարք մատոյց գիր 'ի Դուռն, զի հրամարտակաւ ելցեն անտի զօրքն, և Բդեշխք կողմանցն այնոցիկ մի իշխել

միւսանգամ մուծանել անդ զօրս, զի պատճառ եղեն աւերման տեղւոյն եւ ցրուելոյ ժողովրդոց, (1826. 'ի 21 Յուլիսի)։

Տեսեալ երից Եպիսկոպոսաց թէ անպատասխանի մնացին նամականիք իւրեանց յԱզգապետաց և 'ի Պատրիարքաց, և ինքեանք տագնապէին 'ի տանջանս և 'ի նեղութիւնս յերեսաց պարտատերաց և պահանջողաց, առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս զԽորհրդական գրագիր Յակոբ վարդապետս՝ ծանուցանել զայսոսիկ, և միաբանք երկպառակեալ ոչ մերձենային առ նոսա, թէպէտեւ հրաւիրէին զնոսա 'ի խորհուրդ։

Իսկ վանք Ս. Յակոբայ տատանէր 'ի միջի խառնութեանց իրրեւ նաւ վարեալ 'ի մրրկի, և այն յաւէտ յանմիաբանութենէ և յերկպառակութենէ գլխաւորաց. գլուխ չարեաց և վրդովիչ ամենեցուն ցուցանէն զոլ Եղիա եպիսկոպոս՝ որ փոխանորդն էր։ Այլ իրրեւ հասին գրեանք այլազգեաց և միաբանաց 'ի Կոստանդինուպոլիս, որպէս գրեցաք, և ընթերցեալ ծանեան զմիտս նոցա, կոչեաց առ ինքն Գաբրիել Պատրիարք զտանն յայլազգեաց Երուսաղէմի որք էին անդ, եւ պատուիրեաց նոցա գրել յԵրուսաղէմ առ մեծամեծս՝ թէ ինքն հաստատեալ է 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի և զեղիա հանեալ 'ի պաշտօնէ փոխանորդութեան, և 'ի մօտոյ ուրի կարգել զայլ ոք 'ի տեղի նորա։ Երեքին Խորհրդականքն առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս 18,000 դահեկան պարտս փոխանակագրով հատուցանել անդ, իսկ Գաբրիել Պատրիարք դարձոյց զնա յետս, և գրեաց առ Խորհրդականս, թէ ներքին եւ արտաքին գործք Աթոռոյն և Փոխանորդութիւն Կոստանդինուպոլսոյ ինձ յանձն է, եւ պատուիրէ նոցա զի եթէ յաւելցին առաքել զփոխանակագիրս՝ դարձուցանէ յետս, որպէս եւ արարն։ Իրրեւ հասին գրեանքն յԵրուսաղէմ, ժողովեցան պարտատերք 'ի վերայ Խորհրդականաց և նախատակոծ բանիւք այպանէին և հայհոյէին ըզնոսա, որպէս է տեսանել 'ի բազմաթիւ նամականիս նոցին, զոր գրեցին 'ի Կոստանդինուպոլիս, և պահանջէին զկրկնապատիկս դրամոց սակս յետս դարձուցանելոյ ըզմնուրհակսն. և ոմանք 'ի պարտատերաց տարեալ մատու-

ցին զպարտամուրհակն առ Դատաւորն, և նա արձանագրէր զԲԹիւ գումարաց և 'ի վերջոյ պահանջէր 'ի Հայոց զ10,000 դահեկանս իբր տասանորդ· ապա յաւելեալ 'ի վերայ նորա զայլ և այլ պահանջ՝ եհաս գումարն 18,000, յաւելին եւ միւս այլազգիք 'ի վերայ նորա 18,000 եւս, եղեւ գումարն 36,000, որոյ վասն եառուն Խորհրդականք փոխանակագիր հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, և եթէ յետս դարձցի, եղիցի գումարն 70,000, և այլազգիք 'ի վաճառ հանեալ զկալուածս Հայոց առցեն զդրամս իւրեանց։ Յետ այնորիկ ժողովեալ այլազգեաց 'ի դատարան՝ ընթերցան զգիր ազգականաց իւրեանց եւ հռչակեցին 'ի քաղաքին թէ՝ Եղիա եպիսկոպոս Հայոց, որ ինասակար էր քաղաքին եւ վանաց, անկեալ է 'ի փոխանորդութենէ· զայս լուեալ Եղիայի տխրեցաւ յոյժ յոյժ, և գրեաց բաղում անգամ առ Պատրիարքն և առ ազգապետս զհրաժարումն իւր 'ի պաշտօնէ, յորս յառաջ բերեալ զտառապանս եւ զնեղութիւնս իւր, իբր պաշտպան Աթոռոյն, և կուսակիցք Գաբրիէլի՝ կործանիչք, և ապա մեղադիր լինի, թէ այսքան գրութեանցս և ոչ միոյ պատասխանի արժանի եղէ՝ այլ անկումն իմ լուայ յայլազգեաց ոմանց, որ կողոպտիչ են Աթոռոյն, և այլ սոցին նման երկար բանք· և 'ի վերջոյ աղաչէ չտարագրել զինքն յԱթոռոյ, այլ հեռացեալ յամենայն գործոց իբրեւ զմի 'ի միաբանաց կացցէ աղօթաւոր 'ի սենեկի իւրում։ Ապա Մկրտիչ և Կարապետ եպիսկոպոսունք թերեւս 'ի սգրելոյ բանից Եղիայի, որպէս երեւի, ժողովեալ զմիաբանս վանաց հրաժարեցան և նոքա 'ի գործոց, և այնպէս գրեցին 'ի Կոստանդինուպոլիս թախանձելով զնոսա՝ ընտրել զայլս 'ի տեղի իւրեանց, և կամ տէր լինիլ վանաց և բառնալ զծանրութիւն նորին, բաւական համարելով զվիշտս և զնախատինս զոր կրեցին 'ի սէր Ս. Աթոռոյն և ազգին, և թէ՝ յետս դարձուցանէք զփոխանակագիրն ասեն՝ ցուցէք զտեղի դրամոց, և այլ այսպիսի բանք լցեալ 'ի նամականիս նոցա, ('ի 25 Օգոստոսի)։

Իսկ 'ի Կոստանդինուպոլիս Պատրիարքունք և Ազգապետք ոչ կարացին առ ժամն պատասխանի առնել նամակաց նոցին, զի զբաղեալ էին ամենեքեան վասն բարեկարգութեան Աթոռոյն և ազատութեան 'ի պարտուց, և 'ի

վերայ այսր ամենայնի եհաս սուգ մեծ և տարաժամ տխրութիւն 'ի վերայ ազգին, զի անկաւ հրդեհ 'ի մայրաքաղաքի անդ եւ յածիւն դատեաց զբաղմութիւն տունս Հայոց՝ այրեցան նաեւ Մայր Եկեղեցին, Պատրիարքարանն և Փոխանորդարանն Երուսաղէմի, որով անկան Պատրիարքունք և գլխաւորք ազգին 'ի տարակուսանս, որպէս պատահեալ էր յաւուրս Գրիգորի Շղթայակրի և Յովհաննու Կոլոտի, զի առաջի կայր նոցա հոգալ զբաղմութիւն զաղքատս ժողովրդեան, որք խսպառ մերկացեալ էին յամենայն գոյից։

Կիրակոս Եպիսկոպոս գրեաց առ Փոխանորդ Զաքարիա վարդապետ՝ հանել հրովարտակ արքունուստ վասն Առաջնորդութեան Եգիպտոսի, ոչ վասն իւր, այլ վասն ապագայ ժամանակին, զի արձանագրութիւն ինչ դցի 'ի գլուխն, զի ինքն հանգիստ էր շնորհիւ Փոխ Արքային Մէհէմմէտ Ալէայ· թէպէտ նա ետ պատրաստել աղերսագիր 'ի Դուռն, զորոյ զպատճէնն ընթերցեալ իսկ եմ, թէ մին 'ի վիճակաց Երուսաղէմի է Եգիպտոս, այլ յետոյ յոր եղանակ շրջեցաւ խնդիրն չէ յայտ։

Հուսկ ուրեմն ժամ պարապոյ գտեալ խորհրդով և կամօք ազգին գրեցին Պատրիարքունք Գաբրիէլ, Կարապետ և Պօղոս առ Խորհրդականս Աթոռոյն և առ նոյն ինքն Եղիա եպիսկոպոս ('ի 11 Օգոստոսի) թէ դադարեալ է նա այնուհետեւ 'ի պաշտօնէ իւրմէ· յանձնել զամենայն իրս փոխանորդութեան Խորհրդականաց, և գնալ յԵւդոկիա եւ կամ 'ի Կեսարիա, և մնալ անդ· զայսոսիկ գրեանս բերեալ մատուցին անձամբք Նախիպն և Դպրապետն, եւ ընթերցեալ Եղիայի եցոյց ուրախութիւն մեծ, եւ գոհութիւն զազգէն, որ ազատեաց զինքն 'ի վշտաց, եւ յանձն էառ գնալ 'ի սահմանեալ տեղիս, որպէս և ինքն յայտ առնէր 'ի գրի իւրում առ Ազգապետս· ապա յանձն արար զինիք 'ի գրի իւրում առ Ազգապետս· ապա յանձն արար զինիք փոխանորդութեան և զբանալի փոխանորդարանին, և զամենայն ինչ որ ընդ իշխանութեամբ նորա էր· բայց տումարք, հրովարտակք, մուրհակք և այլ սոցին նման իրք՝ էին 'ի խորհրդարանն (յ30 Հոկտեմբերի)· եւ ապա գրեաց 'ի Թղթի զել և զմուտ երից ամաց Աթոռոյն 'ի ժամանակս իշխանութեան իւրոյ, և ետ կնքել զայն Խորհրդականաց և

պահեաց առ իւր։ և զկնի աւուրց ինչ ել և գնաց 'ի Բեթ-
ղեհէմ առեալ ընդ իւր զՅովհաննէս արեղայն, զկարապետ
սարկաւագ և զՅարութիւն ոպասաւորն։ Եւ անտի նոքօք
հանդերձ գէմ եղեալ գնաց յեգիպտոս, ('ի 21 Հոկտեմ-
բերի)։

Եէնիչէրիք Երուսաղէմի 'ի ժամանակէ հետէ ապստամ-
բեալ և ոտրեալ էին ամրոցի քաղաքին, և ծանրացեալ յոյժ
'ի վերայ բնակչաց իշխէին նոցա եւ դատէին զդատաստան։ Իսկ Ապտուլլահ Փաշայ, որ նստէր յԱքքէ, հրա-
մանաւ Թագաւորին առաքեաց 'ի վերայ նոցա զԲեհահեայ
իւր բաղմութեամբ զօրաց, և պաշարեցաւ քաղաքն, եւ
տեւեաց պատերազմն աւուրս իրրեւ 15, այլ քաղաքին և
բնակչաց չեղեւ ինչ վնաս, զի մարտն ընդ ամրոցին էր։
յոր ձգէին արաաքուստ զհրանօթս։ Զօրավարն զգօնամիտ
թողեալ զմարտն կոչեաց առ ինքն զվեծամեծս քաղաքին
և 'ի ձեռն նոցա նուաճեաց զապստամբսն և ոտրեաց բեր-
դին, և զգլխաւորս նոցա առաքեաց առ Բդեշխն, և նորա
պատուեալ զնոսա դարձոյց վերստին յԵրուսաղէմ։ այլ
նոքա անկեալ 'ի կասկածանս՝ բազումք 'ի նոցանէ խոյս
տուին անտի 'ի Քեբրոն և յեգիպտոս։ Եւ զօրավարն յանձն
արարեալ զբերդն Քաղաքապետին, որ կարդեալ էր 'ի Կուս-
սակալէն Դամասկոսի, դարձ արար անդրէն յԱքքէ։ Նուա-
զութիւն հացի Երուսաղէմ, չափ ցորենոյ (36 օքա) վաճառէր
60 դահեկանի, եւ այն հազուագիւտ, նոյնպէս իմա
և զայլ վաճառս, (1826։ 'ի 25 Հոկտեմբերի)։

Պատմեցաք յառաջագոյն համառօտիւ զանցս Յակոբ
վարդապետի և ընկերաց նորին, ուղեւորելոց յԵթովպիա։
զկնի վերադարձի նոցին, եկին անտի յամսեանն Սեպտեմ-
բերի տնձինք 2, մին քրիստոնեայ Գէորգ անուն, և միւսն
մահմետական հանի Մէհէմմէտ՝ գրով Թագաւորի Լուրանց
առ մեծազօր փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, թէ
յառաջ քան զայս վարդապետ ոմն յաղգէ Հայոց կամելով
գալ 'ի մեր Տէրութիւն, անկեալէ 'ի ձեռս ապստամբելոց
'ի մէնջ Բդեշխին Ամայու, և 'ի մէնջ աքսորեալ Ղպթոց
եպիսկոպոսին, զոր անարգութեամբ արտաքսեալ են անտի։ Վասն որոյ խնդրեմք 'ի ձէնջ կամ զնոյն վարդապետ
կամ զայլ ոմն 'ի Հայոց ազգէ անպատճառ առաքեցես

առ մեզ։ զի ճանճրացեալէ մեր յանկարգութենէ Ղպթոց
եպիսկոպոսաց, արտաքսեցաք զայն 'ի մերմէ Տէրութենէ։
Եւ արդ ըստ օրինաց մերոց կարօտ եմք յոյժ եպիսկոպոսի
միոյ յազգէ Հայոց, զի մեծ հարկաւորութիւն ունի մեզ։
Իբրեւ ել փոխարքայն յեգիպտոս յԱղէքսանդրիայ՝ հրաման
արար գլխաւորաց Հայոց գտանել զոմն և առաքել անդ։
և 'ի ծանուցանել նոցա զայս Կիրակոս եպիսկոպոսի առաջ-
նորդի տեղւոյն, նա յանձն առ յօժարութեամբ գնալ անդ։
այլ նոքա ոչ կամեցան թողուլ զնա, որպէս և փոխարքայն
չէր տուեալ հրաման մեկնելոյ նորա անտի։ Ապա խորհե-
ցան առաքել զՊօղոս վարդապետ Կեսարացի, որ նստէր
անդ իրրեւ ամիս 4, 'ի Սիս ձեռնադրիլ եպիսկոպոս եւ
գնալ յԵթովպիա։ Եւ 'ի նոյն աւուրս հասեալ էր յեգիպ-
տոս Եղիա եպիսկոպոս Լուրովքն հանդերձ։ և 'ի ծանուցա-
նել նմա զկնդիրն, 'ի սկզբան յանձն առ յօժարութեամբ
գնալ ծախիւք Լուրովք։ բայց ապա լուեալ յոմանց զդժուա-
րութիւն ճանապարհաց և զաղքատութիւն երկրին՝ յետս
եկաց։ Եւ Փոխարքայն վերստին հարկեցուցիչ բանիւ հրա-
ման արար անպատճառ գտանել զոք և առաքել։ և եթէ
չգուցէ յեգիպտոս, տալ բերել Երուսաղէմ։ և ժողովեալ
իշխանք քաղաքին առ առաջնորդն, գրեցին Երուսաղէմ
առ Պորտրդականս, զՀնդկաց Նուիրակ Աբրահամ վարդա-
պետն և կամ զայլ ոք՝ առաքել 'ի Սիս ձեռնադրիլ եպիս-
կոպոս և գնալ յեգիպտոս։ Քանզի եօթն ամաց հետէ ազգն
Հասկէշաց մնացեալ էին առանց եպիսկոպոսի, և զայն ըս-
պասէին յազգէն Հայոց օծանել զԹագաւոր նոցա և ձեռ-
նադրել զնուիրեալն։ գրեցին վասն այսր առ Պատրիարք-
քունս 'ի Կոստանդինուպոլիս, որպէս և Կիրակոս եպիսկո-
պոս առ Զաքարիա վարդապետ, զի ակն ունէր չահիլ վի-
պոս առ Զաքարիա վարդապետ։ միայն պարտ է ասէր՝ եպիսկո-
ճակ ինչ յեղր աշխարհի։ միայն պարտ է ասէր՝ եպիսկո-
պոսին մնալ անդ ամս երիս, և յետ այնորիկ առաքել զայլ
ոք, ցուցանել նաեւ զդիւրութիւն ճանապարհին։ զաւուրս
երիս 'ի Սըվէյիշ, անտի նաւով 'ի Ճիատէ և ապա 'ի Սամա-
քին հանդէպ Ճիատէի։ և յետ 15 աւուրց ցամաքային ճա-
նապարհաւ 'ի Կէօնտէր Թագաւորական մայրաքաղաք Հա-
պէշաց։

Եղիա Եպիսկոպոս մնացեալ յեգիպտոս զաւուրս իրրեւ

26 էջ յԱղէքսանդրիա նաւել 'ի Կոստանդինուպոլիս։ Իսկ Կիրակոս եպիսկոպոս ձեռնտուութեամբ ազգայնոց արդիւնաւորէր զկալուածս բարեկարգ կառաւորութեամբ, և 'ի նմին ամի առաքեաց յԵրուսաղէմ պարէնս 5,300 դահեկանի, եւ ունէր առ իւր պատրաստ 14,000 դահեկան, զի յորժամ այցելութիւն գտցէ Աթոռն, առաքեսցէ զայն։ (1827 · 'ի 27 Յունվարի)։

Այլ վասն եպիսկոպոսին երթալոյ յԵթովպիա, զոր գրեցին վասն Աբրահամ վարդապետի, ընկալան պատասխանի թէ Գաբրիէլ Պատրիարք՝ պատուիրեալ էր նոցա, թէ 'ի կարգել նուիրակունս ծանուցանել ինքեան, և չէին կարող առանց հարցանելոյ նմա առաքել զոք յեպիսկոպոսութիւն։ այսպիսեաւ խափանեցաւ խնդիրն։ Իսկ հրաւիրակքն՝ Քրիստոնեայն գնաց յԵրուսաղէմ մնալ անդ 'ի վանս Հայոց, եւ այլազգին դարձաւ յերկիր իւր։ Եւ 'ի սոյն աւուրս եկեալ էր յԵգիպտոս Շամ Դարապուլուսցի ոմն Յոյն Հռոմէական, կեցեալ յԵթովպիա զամս 19, և պատմեաց Կիրակոս Եպիսկոպոսի՝ թէ երեւելի մեծ Վէզիր նոցա, զոր Հայլի Մարիամ կոչէին, նա էր որ ջանայ եւ առաքեաց յԵգիպտոս գիրս և հրաւիրակս, և այրն այն վախճանեալ, և հակառակորդք նորա այլ Բդեշխք Հապէշոց 'ի սուր մաշեալ զընտանիս և զզաւակունս նորա, տիրեցին երկրի նորին, ուստի չէր պատշաճ առ ժամն դնալ ումեք անդ, այլ նախ գրել առ Թագաւորն, եթէ հաճեսցի, ապա առաքել։ Եւ Կիրակոս Եպիսկոպոս էտ գրել առ Թագաւորն 'ի բարբառ արարացւոց, պատմելով 'ի նմա զանցս Յակոբ վարդապետի և զվնասիլ նորա անձամբ և ընչիւք։ զպատճառ տարագրելոյ անտի եպիսկոպոսին Դպթոց։ Բանզի Եպիսկոպոսունք որք գնային անդ, ըստ ամենայնի հետեւելով կամաց նոցա՝ ըստ սովորութեան նոցին կատարէին զամենայն եկեղեցական ծէս։ իսկ վերջինս այս կամեցեալ է փոփոխել ինչ ինչ եւ նոր ծէս մուծանել յեկեղեցիս նոցա, և 'ի չընդունելն Հապէշոց՝ բանադրէ զնոսա, եւ Հապէշք վառեալ բարկութեամբ հանդերձ Թագաւորաւն կամեցեալ են խլաւ 'ի բաց կալ 'ի քրիստոնէական սուրբ հաւատոյ և պաշտել զկուռս, այլ ոմանք 'ի խոհեմագունից նոցին այսուիկ չիջուցանեն զբորբոք բարկութեան նոցա,

զի բովանդակ եկեղեցականք Հապէշոց բիւրաւոր անձինք, ամենեքեան նզովս կարդան 'ի վերայ եպիսկոպոսին Դպթոց և աքսորեն զնա 'ի Թագաւորական քաղաքէն։ Եւ նորա եկեալ յԱտվա քաղաք 'ի սահմանս Հապէշոց, Բդեշխ նորին ինքնիշխան և ապստամբ 'ի Թագաւորէն, ընդունի զեպիսկոպոսն և պահէ առ իւր։ Բայց ռամիկ դասն ժողովրդեան օր քան զօր 'ի քաղաքաց քաղաքաց առաքէին զհարիւրաւոր անձինս առ այն բանադրեալ եպիսկոպոս ձեռնադրել 'ի կարգ քահանայութեան։ զի ասեն թէ 'ի բովանդակ Թագաւորութեան Հապէշոց են եկեղեցիք աւելի քան զ10,000, եւ գտանի յիւրաքանչիւր եկեղեցի գոնէ 70—80 քահանայ, ոչ այնչափ 'ի հարկաւորութիւն քահանայագործութեան, այլ առ 'ի վայելել զեկամուտս եկեղեցեաց, զի իւրաքանչիւր եկեղեցիք և վանօրայք, ունին բաւական եկամուտս կերակրելոյ զրազմաթիւ անձինս, և տան եպիսկոպոսին զարդիւնս 120 քաղաքաց, այլ թէ որչափ ինչ կարէ լինել՝ չէ յայտ, միայն եթէ գնացողն իբրեւ Հապէշ վարեսցի հանդերձիւք և կերակրով, բազում ինչ յաւելանայ, զի բաց յարդեանց 120 քաղաքաց, մեծամեծ անձինք արք եւ կանայք ըերեն առ եպիսկոպոսն զկոտորակս ոսկւոյ 'ի խնդիր օրհնութեան։

ԳԼՈՒԽ ԽԷ։

Վիճակ Աթոռոյն Երուսաղէմի։ Պարտաւորք։ Յակոբ և Դիոնէսիոս։ Տառապանք միաբանից 'ի ղօրաց Կուտակալին։ Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի։ Նեղութիւն և դժուարութիւն վասն Իլամի Դատաւորին։ Ըստ հրամանաց Աբբային։ Ծախք Իլամին։ Մեկնիչ Յովհաննու 'ի Կոստանդինուպոլիս։

ԿԻՐԱԿՈՍ եպիսկոպոս առաքեաց առ Պօղոս եպիսկոպոս յարդեանց կալուածոց 4000 ռուպիէ ոսկի՝ թէպէտ և դժուեցան ընդ այն իշխանաւորք տեղւոյն, զի Պօղոս եպիսկոպոս յառաջագոյն պատուիրեալ էր նոցա չառաքել ինչ յԵրուսաղէմ, մինչեւ արդեամբք բազմացին կալուածք

Աթոռոյն, այլ կիրակոս չինեաց զմիտս նոցա, զի ծախեալ էր 10,000 դահեկան 'ի վերայ կալուածոց, եւ զմի տուն գնեալ 'ի նոյն չափ գումար, և արժան իսկ էր օգնել Աթոռոյն յայնպիսի նեղութեան։

Պատրաստութիւն պատերազմի յԵդիպտոս, հաւաքումն բազմագումար գանձուց, բնակիչք երկրին հասին 'ի յետին չքաւորութիւն, արկան 'ի բանտ և 'ի կապանս ոմանք եւ 'ի Հայոց, որք պարտաւորք էին յառաջագոյն։

Զանխորհուրդ կառավարութիւնս երից Խորհրդականաց Աթոռոյն բազմօք բամբասէին այսր անդր, զի իւրաքանչիւրն ըստ վաղէմի սովորութեան իւրեանց մտեալ 'ի սենեակս բուծանէին զանձինս, իսկ միաբանք մնացեալ զուրկ յամենայնէ, և կարօտ չափաւոր հացի և կերակրոյ։ Թէպէտ ինքեանք զայլ և այլ բանիւք երկար գրէին զնեղութիւնս իւրեանց 'ի Կոստանդինուպօլիս, որպէս տեսցի արդ (1827։ 'ի 11 Մարտի)։

Արդ՝ Գաբրիէլ Պատրիարք 'ի Կոստանդինուպօլիս ճանաչեալ 'ի յամախելոյ փոխանակագրոց՝ որք հասանէին յԵրուսաղէմէ մի զկնի միոյ, հրաժարեցաւ յիշխանութենէ Պատրիարքութեան, եւ 'ի հրաւիրել ազգայնոց յայն պաշտօն զՊօղոս եպիսկոպոս, ոչ առ նա յանձն, բաւական համարելով զբովանդակ կառավարութիւն Աթոռոյն, որ ընկալեալ էր զայն այսչափ և ծայրագոյն կարողութեամբ, յորմէ չեգիտ ընդունելութիւն հրաժարումն Գաբրիէլի։

Ապա խորհրդով Գլխաւորաց ազգին գրեաց Զաքարիա վարդապետ յԵրուսաղէմ առ Խորհրդականս, շահել և յանդորրու կալ զմիաբանս, չտալ զտոկոսիս պարտուց, այլ յօրէ յօր ձգելով երկարել։ Առաքել զհաչիւ ելից և մտից Աթոռոյն երկուց ամաց, ծանուցանել զարդիւնս Նուիրակաց, և զայլ կարեւոր իրս։ Որոց մի առ մի գրեցին պատասխանի Խորհրդականք, նուազութիւն հացի, դառնութիւն ժամանակին ոչ տային թոյլ շահել զմիաբանս ըստ արժանւոյն, այլ միայն իբրեւ զաղքատս, և զդրամն նոցա ինքեանք առեալ էին մուրհակաւ, պարտատերաց հատեալ էր համբերութիւն։ Թէպէտ յառաջագոյն գրեալ էր Գաբրիէլ Պատրիարք առ Դպրապետն դատարանի յորդորել զնոսա 'ի համբերութիւն, այլ նոքա ոչ անսային, և 'ի սոյն

աւուրս բազումք 'ի հրէից և յայլազգեաց՝ դիմեցին առ Դատաւորն։ Թէպէտ նա սատեաց նոցա, այլ 'ի լրման ժամանակի իւրոյ էառ 'ի Հայոց փոխանակագիր 17,200 դահեկանի՝ հատուցանել 'ի Կոստանդինուպօլիս։ Իբրեւ եկն նոր Դատաւորն, վերստին յարեան պարտատերք, և զի յօժար էր նա 'ի լսել զդատաստանս նոցա, և 'ի լուցուցանել զնա և զԲաղաքապետն՝ դիմեցին պարտատերք 'ի դուռն վանաց որդւովք և ընտանեօքն, մանաւանդ հրէայք, և մտեալ 'ի դաւիթ եկեղեցւոյն և 'ի սենեակս միաբանաց աղաղակէին և նախատանօք խնդրէին զառնելիս իւրեանց, և այս ոչ միանգամ և երկիցս, այլ բազում անգամ։ Մինչեւ անճարացեալ միաբանաց ելին արտաքս աղաչէին զնոսա, և 'ի ձեռն Խաչամագլխի նոցին դարձուցին 'ի տեղիս իւրեանց, և 'ի յառնել այլոց պարտատերաց, և 'ի դիմել առ Դատաւորն՝ հազիւ կարացին չիտեարց, և 'ի դիմել առ Դատաւորն՝ հազիւ կարացին չիջուցանել զհրդեհ բարկութեան նոցին 'ի ձեռն Դատաւորին, և այլ այսպիսի խառն 'ի խուռն տագնապ և յուսարեկ նեղութիւն, զորոց երկար գրեն։ Գրեցին եւ վասն հաշուոց և արդեանց Նուիրակաց՝ և այլոց իրաց։ Ոմանք յերեւելեաց ուխտաւորաց տարւոյն, որք եկեալ էին յայլ և յայլ քաղաքաց, տեսեալ զԱթոռն առանց գլխոյ և գահակալի, զիշխանութիւնս միաբանաց, զառնութիւնս դժնեայ պարտատերաց, միաբանեալ ցաւ 'ի սիրտ գրեցին գիր բազմակնիք 'ի Կոստանդինուպօլիս առ գլխաւորս ազգին, և աղաչանօք թախանձէին զնոսա դարձուցանել առ վայր մի զաչս իւրեանց յԵրուսաղէմ, բառնալ զնախատինս ազգին, և այցելութեամբ դարմանել զվէրս նորա, զի մի առաւել զայրասցի անհոգութեամբ։

Լիւսդրացի Յակոբ եպիսկոպոս՝ որ նստէր 'ի Սիդոն փոխ հիւպատոս Անգղիոյ, 'ի սոյն ամի ա՛ռ գիր 'ի Բգեշխից Դամասկոսի և Աքքէի, և առաքեաց Ոսիկանս յԵրուսաղէմ և խնդրէր 'ի Խորհրդականաց զտոկոսս 50,000 դահեկանի առնելեաց իւրոց, և Ոսիկանն կամէր 'ի գլուխս տանել զայս գործ 'ի ձեռն Դատաւորին՝ այլ խնացեալ Հայոց 'ի բարեկամաց, ծանուցին նմա զաղքատութիւն վանաց, եւ որպալով զմիտս Ոսիկանին դարձուցին ունայն յետս։ այլ յետոյ խնացան զի Յակոբ պատրաստէր զայլ

ոք հզօրագոյն քան զառաջինն։

Յառաջնում ամի Բեահեայ Բդեշխին Դամասկոսի եկն մինչ 'ի Սամարիա, և Դիոնէսիոս եպիսկոպոս ընդ նմա, եւ լուեալ զապստամբութիւն Եէնիչէրեաց Երուսաղէմի, ոչ կամեցաւ գնալ անդ, այլ առաքեաց զսեղանաւոր իւր յաղդէ Հայոց՝ ժողովել զհարկ երկրին։ Սմա պատուիրեալ էր Դիոնէսիոս վասն առնելեաց իւրոց, և 'ի լինել բանից՝ պատմեալ էր Եղիա եպիսկոպոս զԴիոնէսիոսէ և զաղքատութենէ վանաց, և նորա գրեալ առ Բեահեայն, և նա այնպէս մեկնեցաւ յայնժամ 'ի տեղի իւր։ Իսկ 'ի ամին ամի եկեալ յԵրուսաղէմ իջեւանեցաւ 'ի վանս Յունաց, և գրեաց անտի զերկուս գիրս առ Խորհրդականս Աթոռոյն, յորս առաջի դնէր նոցա գալ 'ի վանս և դէմ յանդիման խօսիլ ընդ նոսա, յայտ արարեալ 36 ամեայ զաշխատութիւնս իւր, և խնդրէր զ10,000 դահեկանն ամբողջ տոկոսիւք, և զծախսն անցելոյ ամին, որոյ եռուն պատասխանի՝ չմոռանել 'ի վանս 'ի գայթակղութիւն ժողովրդոց, և վասն առնելեաց իւրոց սպասել դալստեան Մայրագոյն կառավարչի Աթոռոյն, զի ինքեանք չէին ձեռնհաս տալ ումեք պարտս կամ տոկոսիս։ այլ 'ի հասանիլ բանակի Բըդեշխին Դամասկոսի լուեաց առ ժամն։

Կուսականն Դամասկոսի գրեալ էր առ մեծամեծս բանակին, 'ի հասանել նոցա յԵրուսաղէմ, պահանջել յիւրաքանչիւր վանաց 60,000 դահեկանս իբր նպաստ։ Լատինք և Յոյնք հոգացին զգործս իւրեանց։ Հայք գոլով 'ի չքաւորութեան՝ առաջի եդին զհրովարտակն, այլ նոքա ոչ ընկալան զայն։ զի որպէս յառաջագոյն առեալ էր Մուսդաֆա Փաշայ, նոյնպէս և այժմ պահանջէին, թէպէտեւ Հայք ասէին թէ զայն յետս առին 'ի Կոստանդինուպօլիս։ այլ նոքա ասէին, այժմ մեք առնումք, ապա դուք յետս առէք անդ։ Եւ զկնի տօնի Զատկին առաքեցին 'ի վանս 30 Մղրպի զօրս, և զի աւուրքն ծոմապահութեան էին նոցա, յերեկոյին դիմեալ 'ի խոհանոցն կալան զխոհարարն, և սկսան խոշտանգելով պահանջել 'ի նմանէ զհամագամ կերակուրս, և ելեալ անտի հարկանէին զդրունս սենեկաց։ Եւ զորս միանգամ դտանէին՝ դան մահու լուծանէին 'ի վերայ նորա, նախատելով և հայհոյելով, յանկարդութենէ ասսի խառնաձայն աղաղակն հնչէր զգիշերն ողջոյն։ Եւ իբրեւ յանձն առին միաբանք տալ զոր պահանջէինն, եհաս այլ լուն հրաման 'ի Բդեշխէն, և խընդրէին յուխտաւորացն Հայոց զ10,000 դահեկան գլխահարկ, որ խափանեալ էր յառաջագոյն, և իբրեւ մատուցին ըզհրովարտակն նորին, զայն եւս ոչ ընկալան, և 'ի սադրելոյ այլազգեաց՝ յանձն առին վճարել և զայն, բայց զամենայն այլազգեաց՝ յանձն առին վճարել և զայն, բայց զամենեսին փոխանակագրով 'ի Կոստանդինուպօլիս։ իսկ եթէ ոչ հաճեսցի ընդ այն Բդեշխն, տարեալ ընկեսցեն 'ի դատարան զփականս վանաց և ինքեանք մեկնեսցին յԵրուսաղէմ։ ահա այս է ասեն վիճակ մեր նամակագիրքն, (1827։ 'ի 21 Մարտի։ յ8 Ապրիլի)։

Տաղտկացեալ էին երեք Խորհրդականք Աթոռոյն յերեսաց բռնաւորաց և պարտատերաց և գրելոյ 'ի Կոստանդինուպօլիս, և խնդրելոյ այցելութիւն և օգնութիւն, և ոչ գտանելոյ։ առաւել տագնապէին յորժամ յետս դառնային փոխանակագիրք պարտուց։ կամէին փակել խսպառ զդուռն վանաց եւ խոյս տալ անտի խմբովին, բայց զայն եւս ոչ կարէին, զի ընդդէմ դառնային նոցա այլազգիք և պարտատերք։ Զայրանային 'ի վերայ փոխանորդ Զաքարիա վարդապետի՝ և մեղադրէին զնա, որպէս թէ ըզտառապանս իւրեանց ոչ յայտնէր գլխաւորաց ազգին։ զի թերեւս ոմանք 'ի նոցանէ 'ի գութ շարժեսցին 'ի վերայ Աթոռոյն և մի լիցի կործանումն չար։ այլ միայն ինքն ընթերցեալ զնամականիս նոցին՝ և ըստ սխորժակաց իւրոց գրէ զպատասխանիս, ուստի յայս նուազ՝ եւս ասեն յետս դարձցին փոլիցայքն։ դադարեսցին գրութիւնք մեր առ քեզ։ Գրեսցուք առ բեռնակիրս, առ աղքատս և առ այլ աշխատաւորս ազգին մայրաքաղաքիդ, եւ այլ և այլ քաղաք։ զի նոքա ծանուսցեն քեզ զարժանն։ Յետ այնորիկ գրեցին դարձեալ զչարիս զօրաց զոր գործեցին 'ի վանս, ասակս 6000 դահեկանի Ղաֆարի Ս։ Յարութեան, թէ որպէս յարձակեցան 'ի սենեակ Թարգմանին և չգտեալ զնա անդ՝ ելին 'ի Խորհրդարանն, խորտակել զդուռն, զքարշել երկրորդ Թարգմանին այր և անդր սակս դարմանի երկվարաց, տապարաւ հարկանել զերկաթեայ դրունս եկեղեցւոյ, զի աւարի առցեն զայն, խոշտանգել զվաստարարն,

ցրուիլ արեղաթաղն, մնանել 'ի սենեակ Ծերունի Սահ-
փաննոս վարդապետի, դանակածել զդրագիր վարդապետն,
հարկանել զգեանի զվերակացու վանաց և պահանջել 'ի նը-
մանէ Բ-խալվոյ, և այսպէս զոմանս ապտակէին և զայլս նա-
խատէին և հայհոյէին, և համարձակ շրջելով 'ի մէջ վանաց
բաղխէին զդրունս սենեկաց լախտիւ և տապարաւ, և այն
միայն վասն 6000 դահեկանի, զորմէ գրեցաք· 'ի վերջոյ
'ի նեղ մտեալ Խորհրդականաց կողոպտեցին զմիաբանս,
բայց ոչ գումարեցաւ այն 100 դահեկան· և յուսահատեալ
խնդրէին զմահ և ոչ գտանէին· զայս ամենայն դառն ար-
տասուօք նկարագրեն 'ի նամակի իւրեանց առ Փոխանորդն,
զի հնարս գտցէ աղատելոյ 'ի տառապանաց։ Յետ ամենե-
ցուն ետուն 31,000 դահեկան, և 30,000 եւս խոստացան
փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս·
40,000 սահմանեալ տարեկան տուրքն, 15,000 Ճեղեխ Ֆ-
ր-ը, 6000 Ս· Յարութեան Ղափարն։ Այս 'ի սաստկա-
նալ այսպիսի տարօրինակ բռնութեանց և հարկապահանջ
նեղութեանց և տիրելոյ անկարգութեանց պարտատերց,
մինչեւ գալ նոտիլ 'ի դուռն եկեղեցւոյ Հրէից և այլազ-
գեաց, և խօսիլ բանս անպատեհս զորս ոչ տանին լսելիք,
և պաշարել զդրունս սենեկաց Խորհրդականաց եւ այլոց,
'ի խնդրել զառնելիս և զտոկոսիս նոցին։

Ժողովեալ ընդհանուր միաբանաց մինչեւ ցգռնապանն
եւ ցաւելածուն գրեցին զիր բազմակնիք երկար բանիւք
առ Պատրիարքունս, առ ազգապետս և առ ամենայն գըլ-
խաւորս արհեստաւորաց 'ի Կոստանդինուպոլիս, յորում
յետ յայտ առնելոյ զազգի ազգի նեղութիւնս և զչարչա-
բանս իւրեանց, արտասուախառն պաղատանօք կողկողէին
եւ աղաչէին հասանիլ յօգնութիւն, բառնալ 'ի թիկանց
զլուծ ծանրութեան պարտուց, ազատիլ 'ի ձեռաց կեղե-
քիչ բռնաւորաց և 'ի նեղչաց, մանաւանդ 'ի ձեռաց Նա-
խիլ Օմար Էֆէնտեայ, որ գլուխն էր ամենայն չարեաց·
հնարիչ աղեաց, բանսարկու և թելադրիչ ամենեցուն 'ի
չարիս, և հաշտ ակամբ հայիլ 'ի սուրբ տունն, և մի թո-
ղուլ առնել կոխան ոտից օտար թշնամեաց· բաւական հա-
մարել զտառապանս զոր կրեցին և կրեն, և զմրուր դառ-
նութեան զոր քամեցին· եւ այլ սոցին նման մրմնջիչ

բանք, զոր երկար լինի մի առ մի 'ի մէջ բերել աստ, (1827·
'ի 22 Յունիսի)։

Սաստիկ կոտորած Ժանտախտի 'ի Կարին և 'ի սահմանս
նորա, մինչեւ 'ի միւմ աւուր մեռանիլ միայն յազգէ Հա-
յոց 60–70 անձանց, թող զայլակրօնս։

Կարապետ և Պողոս Պատրիարքունք յանձնարարական
գրովք իւրեանց սուրհանդակաւ առաքեցին յԵգիպտոս
զՅովհաննէս վարդապետ Զմիւռնացի սակս կարեւոր գոր-
ծոյ, եւ նորա պատահեալ 'ի ճանապարհի ուխտաւորացն
Հայոց 55 անձանց արգիլեալ 'ի տեղին Խան Կոչեցեալ, եւ
քահանայ մի բանտարկեալ 'ի Պուլտուր· եւ առեալ 'ի նո-
ցանէ Դատաւորն և Հիւսէին Պէյ 1780 դահեկան տուգանս
և արձակեալ, որպէս թէ ուխտաւորք 'ի ճանապարհի իջե-
ւանեալ իցեն 'ի մզկիթն այլազգեաց, որ է աւերակ և կա-
րաւանատեղի հասարակաց· Յովհաննէս վարդապետ ար-
գել զսուրհանդակն Ժամմի և մխիթարեաց զնոսա, գրեաց
զդէպսն պարագայիւք առ Զաքարիա վարդապետ, զի յետս
պահանջեսցեն զայն տուգանս զոր առեալ էին յանիրաւի·
եւ ապա նաւեալ յԱտալիայէ եհաս յԵգիպտոս ('ի 22
Սեպտեմբերի)։ Եւ զի խնդրեալ էին Պատրիարքունք յե-
րեւելեաց տեղւոյն լինիլ ձեռնտու պարտուց Աթոռոյն,
որպէս պատուիրեալ էր նոցա Պողոս եպիսկոպոս յառաջ-
դոյն 'ի գնալն իւր անդ· այլ նոքա ասէին՝ յորժամ սկիզբն
արասցեն յԱմիրայից Կոստանդինուպոլսոյ, յայնժամ և մեք
օգնեմք· այլ այժմ պատաղեալ է իւրաքանչիւր ոք 'ի գոր-
ծըս իւր, և այսպէս յետս կացին 'ի խոստմանց իւրեանց։
Իսկ Կիրակոս եպիսկոպոս միջնորդութեամբ բժշկապետ
Ճիվանիայ առ յանձնարարական գիր 'ի Մէհէմմէտ Ալեայ
Փոխարքայէն Եգիպտոսի առ Դատաւորն Երուսաղէմի·
զի ըստ հրովարտակի Արքային և խնդրանաց ազգին տացէ
Իլամ՝ բաժնիւ (թագսիտ) վճարելոյ զպարտս Աթոռոյն,
և Յովհաննէս վարդապետ առեալ զգիրն դարձ արար ան-
տի եւ եհաս յԵրուսաղէմ (յ9 Հոկտեմբերի)· եւ մատոյց
Խորհրդականաց զգիրս Պատրիարքաց· և նոցա ընթերցեալ
միաբանութեամբ ուրախ եղեն յոյժ· զի սահմանեալ էին
'ի բաժինս վերածել զպարտսն։ Եւ 'ի վաղիւն կոչեցին ըզ-
Դպրապետ դատարանի և մատուցին նմա զգիրս Պատրի-

արքայ, և նորա ուրախութեամբ ընկալեալ ընթերցաւ. գովեաց զհրովարտակն և զգրեանս Դատաւորին, խոստացեալ կատարումն տալ գործոյն, և մեկնեցաւ։

Եւ 'ի վաղիւ անդր ըստ աղդարարելոյ նորին չոքան 'ի Դատարան և մատուցին զգրեանս Դատաւորին, և նորա ընթերցեալ համբուրեաց զհրովարտակն, և յանձն առ սիրով կատարել զհրաման Արքային, և զկնի բանից մեկնեցան անտի։ Յետոյ եկեալ Դպրապետին 'ի վանս խնդրէր հաճել զկամս Դատաւորին, և Յովհաննէս վարդապետ ետ նմա 3000 դահեկան. և յորդորեաց զնա կատարել զգործն. զի Պատրիարքունք և աղդապետք 'ի քէն պահանջեն ասէր զայս գործ։ Սակայն միտք Դատաւորին հայէր 100,000 դահեկանի, և սոքա ոչ կարէին տալ աւելի քան զ10,000։ Քաղաքապետն լուեալ զգալուստ Յովհաննու և զգնալ նորին 'ի դատարան, դժուարեցաւ, և կոչեալ զթարգմանն յանդիմանէ զնա, և յետ երկուց աւուրց ըստ խնդրոյ նորին գնաց առ նա Յովհաննէս վարդապետ, և 'ի մեղադիր լինել նորա թէ ընդէ՞ր ոչ եկիր առիս, զի ես եմ տէր երկրին, արար նմա պատասխանի, թէ ճարտարապետ Արքայի Գրիգոր Գալֆայ տարաւ զիս առ Եպարքոսն, և նորա տուեալ զմակեալ գրեանս պատուիրեաց գնալ յԵրուսաղէմ և մատուցանել առ Դատաւորն, և առնուլ 'ի նմանէ զպատասխանն, և ինձ պարտ էր կատարել զհրաման նորին, այլ 'ի կոչելդ փոյթ եկի առ քեզ. Քաղաքապետն յայտ արար զգրելն իւր առ Բդեշխն զգալստենէ նորին, եւ պատուիրեաց Դատաւորին չտալ Իլամ մինչեւ եկեսցէ պատասխան գրոյն։ Յելս Հոկտեմբերի եհաս Ոստիկան ոք տասն արամբք 'ի Դամասկոսէ, պատուէր առ Դատաւորն չտալ Իլամ Հայոց մինչ ցգալուստ Բդեշխին, կամք Քաղաքապետին էր իջեւանել նոցա 'ի վանս Հայոց, այլ արդել Դատաւորն։ Եւ զկնի աւուրց եկն եհաս Կուսակալն յԵրուսաղէմ ըստ սովորութեան ('ի 5 Դեկտեմբերի)։ Եւ յետ առնլոյ զսահմանեալ հարկս իւր, մատեան առ նա Յովհաննէս վարդապետ և այլք, և առաջի եդին նմա զգործ հրովարտակին վասն Իլամի և պարտուց, և ետուն նմա 25,000 դահեկան, եւ 2 ժամացոյց 'ի ձեռն Արապկերցի Ղուկաս աղայի յազգէ Հայոց, սեղանաւորի Նորին, 2500 և մի մատանի Բեահեայի նորին, մնացեալ 'ի Մինաս եպիսկոպոսէ այն ինչ հանգուցելոյ, 5500 վարձ Ոստիկանին եկելոյ։ Բդեշխն պատուէր ետ առանձին չտալ Դատաւորին աւելի քան զ10,000 դահեկանս։ Եւ յետ այնորիկ արար ժողով մեծ Բդեշխն 'ի պալատի Քաղաքապետին, կոչեաց զՅովհաննէս վարդապետն եւ զայլս, եւ ետ ընթեռնուլ զհրովարտակն Արքայի 'ի լուր ամենեցուն, ապա եհարց, թէ ունի՞ք զայդչափ պարտս. նախ քան զպատասխանել Յովհաննու, յառաջեաց Դատաւորն և ասէ՝ պարտք սոցա հընչակեալ է յամենայն տեղիս և մեծամեծք քաղաքիս իսկ վկայեն. իցէ՞ մինչեւ 36000 քսակ, և յասելն այո՛, դարձեալ ասէ Դատաւորն, զպարտս եթէ ոչ որոշեսցուք Իլամաւ ըստ հրամանի Արքային 'ի բաժինս, ոչ կարեն հատուցանել. բարւոք է ասէ՝ արարէք Իլամ, և բազմականքն գրեսցեն գիր բազմակնիք, և այրս այս ելեալ երթիցէ 'ի տեղի իւր, և ցրուեցաւ ժողովն ('ի 26 Դեկտեմբերի)։ Դարձ արարեալ Դատաւորին 'ի տեղի իւր, ձայն եհան 'ի քաղաքին 50,000 դահեկանի. Հայք ծածկարար ազդ արարին Բդեշխին, և խոստացան տալ նմա 15,000, և նա քանիցս ազդ արար նմա 'ի ձեռն հաւատարմին իւրոյ չնեղել զՀայս, զի Թագաւորն գթացեալ 'ի թշուառ վիճակ սոցա, տուեալ է հրովարտակ, պարտ է և մեզ գթութեամբ վարիլ ընդ նոսա, զի հպատակ են Արքայի. և լուեալ նորա զայս՝ դիմեաց առ Բդեշխն, և անկեալ առաջի նորա պաղատի, թէ այր մի տառապեալ և աղքատ եմ ես, տունն իմ հրկիզեալ է, և յետ քառասնամեայ աշխատութեանս հազիւ հասեալ եմ յիշխանութիւնս յայս, խնայեա՛ յիս. և նա դարձեալ յորդորէր զնա ունին դնել բանից իւրոց, զի մի լուեալ Արքայի պատուհասեսցէ զինքն։ Եւ նորա մեկնեալ անտի արձակեաց զԴպրապետն 'ի վանս Հայոց և պահանջէր զնոյն գումար, առաջի եդեալ զտասանորդս պարտուց, և նոքա արարին պատասխանի, եթէ դիմեսցին առ նա պարտատերք առնել դատաստան, ունի իրաւունս տասանորդի, ապա թէ ոչ, միայն զծախս Իլամի կարէ խնդրել 'ի մէնջ։

Իբրեւ ծանուցին զայս Բդեշխին, զայրացաւ յոյժ, եւ գրեաց գիր հրամանի չնեղել պարատատերց զՀայս, և կո-

չեալ առ ինքն զնոր Քաղաքապետն՝ պատուիրեաց նմա չըլինել ունկնդիր բանից, որք մատուցանեն զպարտամուրհակս, եւ ցՀայս ասէ, գրեցից 'ի Դուռն թէ Դատաւորն յետ վճռոյ ժողովրդն ոչ կամեցաւ տալ զիլամն։ Եւ յաւուր միւսմ չոքան Կարապետ Եպիսկոպոս եւ Յովհաննէս վարդապետ 'ի տուն Նախիջեւանն, ուր էր Դատաւորն, զի միջնորդութեամբ նորին ողոքեսցեն զնա տալ զիլամն, և սկիզբն արարեալ բանից, խօսէին. սրամտեալ նորա սկսաւ նախատել զնոսա անպատեհ բանիւք, եւ ընթացեալ արտաքս բոկոտն երթալ փակել զդատարանն, զի ոչ երկնչիմ ասէր 'ի Բգեշխէն եւ ոչ ունկնդիր լինիմ բանից նորա։ Սակայն այլազգիք ողոքանօք դարձուցին զնա յետս, եւ վարդապետքն մեկնեցան անտի։

Եւ 'ի սոյն աւուրս, մինչդեռ Բգեշխն յերուսաղէմ էր, եկաս անդ և Լիւսդրացին Յակոբ, և մատուցեալ դիր աղաչանաց խնդրէր 'ի Հայոց զառնելիս իւր և զերիս ամաց տոկոսիս նորին, և ապա յաւելոյր ասել, թէ անիրաւութեամբ խնդրեն դոքա զիլամ վասն պարտուց իւրեանց, զի 'ի վասն դոցա ձեռամբ իմով եղեալ և կնքեալ եմ զինչս աւելի քան զ10,000 քսակի, և զայլ բաջաղանս։ Եւ կոչել Բգեշխն և զՅովհաննէս վարդապետ, կոչեաց և զՅակոբ, և իրրեւ եկարց թէ զինչ խնդրես, յայտ արար թէ 50,000 դահեկան զառնելիս իւր՝ առաջի եղեալ գրեանս 5, որք էին անդորրագիրք Պօղոս և Գաբրիէլ Պատրիարքաց. զայն տեսեալ Յովհաննու կշտամբեաց զնա, թէ այս ատեան Վէզիրի է և ոչ խանութի փէրէզակի թոթափել զանպէտ թղթեանս, և 'ի սաստել Բգեշխին՝ ժողովեալ զայնս եկան զմուրհակն բազմակնիք. և 'ի բազմանալ բանից յերկուց կողմանց, եկան զնա Բգեշխն յատենէ իւրմէ՝ պատուիրեալ նմա սպասել ժամանակի բաժնի, և ապա ասէ ցՅովհաննէս վարդապետ, թէ Յոյնք վասն այսպիսեաց առին հրովարտակ արքունուստ, եթէ ոք թողեալ զկայրենի կրօնս եւ յարեսցի յայլ, ինքն գլխատի եւ ինչք նորա յարքունիս գրաւին։

Եւ յետ այնորիկ առեալ Բգեշխին ընդ իւր զՅովհաննէս վարտապետ դարձ արար 'ի Դամասկոս (յ31 Դեկտեմբերի)։ Զկնի մեկնելոյ Բգեշխին զկետ եղեն Խորհրդա-

կանք առնուլ զիլամն 'ի Դատաւորէն, բայց նա յամառեալ 'ի բանս իւր ոչ զիջանէր 'ի խնդիր նոցա, թեւակից ունելով ինքեան զնախիջն։ Բգեշխն և Յովհաննէս վարդապետ տիպէին 'ի Դամասկոսէ առնուլ զայն գիր, զի հրովարտակն ուղղեալ էր միայն առ Դատաւորն, և այլազգիք 'ի մէջ մտեալ յորդորէին զԽորհրդականս շահել զմիտս Դատաւորին, զի եթէ 'ի ծախուց մոյ Իլամի այսքան խորշիք ասեն, զի՞ գործէք յառնել պարտատերաց և բողոքել առ Դատաւորն, մանաւանդ զերծ մնայք 'ի տոկոսից մինչեւ ցամս 8. իսկ եթէ ոչ անսայք բանից մերոց, գրեմք 'ի Դուռն և ծանուցանեմք թէ Հայք ոչ միայն չունին այդքան պարտս, այլ նա և մթերեալ դանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց 'ի փակեալ Պատրիարքարանն. յայնժամ լինի յետինն չար քան զառաջինն։ Ապա միջնորդութեամբ Դպրապետին հաճեցուցին զԴատաւորն՝ տալով նմա 27,500 դահեկան, և այլազգեաց 15,000, թող զԲաղաքապետն և զնախիջն, և առին զիլամն, և յետ այնմ՝ խորհրդով Դպրապետին գրեցին Հայք առ Դենպետն մեծ 'ի Կոստանդինուպոլիս, թէ չէր արժան Դատաւորին վասն մոյ թղթոյ առնուլ զայսքան դրամս յայսպիսի տարակուսելի նեղութեան մերում. զայսոսիկ գրեանս առաքեցին 'ի ձեռն միաբանի ուրուք 'ի Դամասկոս առ Յովհաննէս վարդապետ տանել 'ի Կոստանդինուպոլիս։

ԳԼՈՒԽ ԽԸ.

Ապստամբութիւն Գիւզականաց Բեթղեհէմի։ Գաբրիէլ պատրիարք առաքի 'ի Զմիւռնի։ Հրովարտակ վասն պարտուց։ Պարտատերք. Նեղութիւն Խորհրդականաց։ Հասանիլ Պօղոս Եպիսկոպոսի յԵրուսաղէմ։ Այլազգիք քաղաքին։ Սկիզբն վճռման պարտուց։

ԱՌԱՍԱԿԱՆ Դամասկոսի նախ քան զմեկնիլ իւր յերուսաղէմ՝ սահմանեալ էր հարկս Բեթղեհէմ գիւղի 45 քսակս արծաթոյ, եւ կոչեալ առ ինքն զՔաղաքապետն պատուիրեաց նմա առաջի գլխաւորաց վանօրէից, առնուլ

զգուշարն զայն 'ի գիւղականաց և չթողուլ պահանջել ինչ 'ի վանականաց, և գրեաց վասն այսր հրաման, և նորա կալեալ զարս 8 'ի քրիստոնէից և 'ի տաճկաց Բեթղեհէմի և եդ 'ի տուն Նախիվին իբր 'ի պատանդ մինչեւ հատուցցեն զհարկն։ Իսկ նոքա զկնի տօնի Ծննդեան բռնացան 'ի վերայ երից վանաց որ անդ, և ստիպէին զնոսա հատուցանել զհարկն, և 'ի բացասել նոցա՝ լցան բազմութեամբ նախ 'ի վանս Լատինաց և խափանեցին զպաշտամունս և զպատարագս նոցա, նեղէին և չարչարէին. կամեցան փախչիլ՝ այլ ոչ կարէին, զի փակեալ էին զճանապարհս, և չգըտեալ զայլ հնարս ետուն 15 քսակս և զերծան 'ի ձեռաց նոցա։ Անտի խուժեցին 'ի վանս Ցունաց, և կալեալ զերիս գիւղացի քահանայս արկին 'ի բանտ, զորս թողեալ էին միաբանք սակս պաշտաման եկեղեցւոյ եւ ինքեանք փախուցեալք։ Եւ ապա եկեալ բազմութեամբ մտին 'ի վանս Հայոց, եւ կալեալ զՏեսուչն տագնապաւ պահանջէին 'ի նմանէ զ15 քսակն, և նա խոստացաւ երթալ բերել զայն յերուսաղէմէ, և այնպէս զերծաւ 'ի ձեռաց նոցա։ Իբրեւ տեսին թէ ոչ դարձաւ նա 'ի քաղաքէն և ոչ եկաց 'ի խոստման իւրում, կալան զԼուսարար Պետրոս վարդապետն և մատնեցին 'ի դանս և 'ի չարչարանս. խափանեցին զժամերգութիւն և զպատարագն, և ժողովեալ զամենայն միաբանս եդին 'ի միում սենեկի, և լուցին անդ հուր, զի շնչասպառ մեռցին 'ի ծխոյ անտի, եւ ինքեանք մտեալ յեկեղեցին կողպեցին զսպասս նորա, ապա խորտակեցին զդուռն սենեկի Տեսչին և զդարանս որ անդ՝ և յափշտակեալ զոր միանգամ գտին անդ և ելեալ գնացին։ Իբրեւ լուան զեղեալսն Խորհրդականք յերուսաղէմ՝ չոքան պատմեցին Փաղաքապետին, եւ նա արար պատասխանի թէ արտաքոյ պարսպի քաղաքին չկարեմ իշխել, ձեզ պարտ է հոգալ զգործս ձեր. ապա խոստացան հատուցանել զ15 քսակն զկնի 40 աւուրց, եւ գրեալ ծանուցին զիրսն Կուսակալին, թէ այնչափ համարձակութիւն գիւղականաց 'ի Նախիվէն էր՝ որ միաբանեալ էր ընդ Փաղաքապետին։

Ի սոյն աւուրս յորդ անձրեւաց քակեալ էր որմն պարտիզի իմիք, և 'ի շինելն զայն Հայոց առանց շաղախի, կա-

լեալ Փաղաքապետին զճարտարապետն եւ զորմնադիրս եդ 'ի բանտի, և առեալ 1500 դահեկան տուգանս 'ի Հայոց՝ արձակեաց զնոսա, որոյ վասն առաքեցին 'ի Դամասկոս զերկուս հրամանագիրս 'ի նորոգել, մին վասն Ցորդանանու, և միւսն վասն վերանորոգութեան, (1828. 'ի 1 Փեբրվարի)։

Ի հասանիլ թղթոց յերուսաղէմէ առ Յովհաննէս վարդապետ 'ի Դամասկոս, դարձ արար անտի 'ի Կոստանդինուպոլիս, և ըստ զօրութեան Իլամի Դատաւորին Երուսաղէմի տուաւ հրովարտակ 'ի Դրանէ վճարել բաժնիւ զպարտս Աթոռոյն 'ի միջոցի 8 ամաց. ապա խորհրդով գլխաւորաց աղգին առաքեցաւ Դարբիէլ Պատրիարք 'ի Զմիւռնի, ժողովել անդ եւ 'ի վիճակս նորա զկամաւոր տուրս աղգին 'ի նպաստ պարտուցն Երուսաղէմի, և նորա հասեալ անդ ձեռնադրեաց զՔահանայս 5 ('ի 20 Ցունիսի), և յետ սակաւու սկիզբն արար գործոյն. անտի առաքեաց զվկայականն Զաքարիա վարդապետի լինել Եպիսկոպոս, եւ Ծարագոյն կառավարչի Աթոռոյն Պօղոս Եպիսկոպոսի երթալ յերուսաղէմ։ Ապա գրեցին Կարապետ և Պօղոս Պատրիարքունք յորդորական բանիւք առ ամենայն վիճակաւոր Առաջնորդս քաղաքաց, եւ առ նոյն ինքն Եփրեմ Կաթուղիկոս Էջմիածնի խրատել Աւետարանական և հոգեւոր բանիւք զժողովուրդս, եւ հաւաքել յիւրաքանչիւր անձնէ զերկուս և զերիս դահեկանս մինչեւ ցութն ամ, 'ի նպաստ վճարման պարտուց Աթոռոյն։ Զնոյն գրեալ էին եւ առ Կարնոյ Առաջնորդ Կարապետ Եպիսկոպոսն, յորմէ ընկալան պատասխանի, թէ 'ի գիւղօրայս վիճակի նորին յամենայն տեղիս լցեալ էին Արքունի զօրք, և բնակիչք Կարնոյ քաղաքին առհասարակ թողեալ զամենայն գործս իւրեանց պարապեալ էին 'ի պաշտպանութիւն քաղաքին բրելով խրամ 'ի շրջապատս նորա վասն պատերազմին Օսմանցւոց ընդդէմ Ռուսաց. սակայն խոստանայր զամին Օսմանցւոց ընդդէմ Ռուսաց. սակայն խոստանայր 'ի դիպող ժամու հասանել յօգնութիւն Աթոռոյն 'ի սէր Ս. Տեղեաց։

Իսկ յերուսաղէմ Խորհրդականք Աթոռոյն կային 'ի մեծի տառապանս, զի Կուսակալն Դամասկոսի դրդեալ 'ի պարտատերաց ստէպ ստէպ գրէր հրամանագիրս առ Փա-

զաքաղեան և առ մեծամեծս, և առաքէր Ոստիկանս, զի տացեն վճարել Հայոց զոլարաս բաժնիւ ըստ հրամանի Արքային և առցեն զտառանորդս, և եթէ ընդդիմացին՝ զբռեսցեն զիր բաղմակնիք՝ զի առաքեսցէ 'ի Դուռն. իբրեւ ոչ առին յանձն Խորհրդականք և ոչ մատուցին ունկն յորդորական բանից նոցին, առաքեցին զՈստիկանս հանդերձ զօրականօք 'ի վանս, և նոցա եկեալ սկսան տալ ազգի ազգի նեղութիւնս և չարչարանս մտեալ 'ի սենեակս միաբանաց, և իշխողք քաղաքին անարգանօք և նախատանօք տանէին և բերէին զԽորհրդականս 'ի դատարան, եւ լուեալ պարտաւորց խուռն բազմութեամբ զեղանս լցան 'ի դաւթի եկեղեցւոյն, դոչումն և աղաղակ, արհամարհանք և բանք նախատանաց անասելի. տեսեալ Քաղաքապետին և Դատաւորին թէ այսու եւս չվճարի ինչ, կազմեցին ժողով մեծ եւ կոչեցին անդ զԽորհրդականս, ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրամանս Բդեշխին, և ապա սկսան բռնադատել զնոսա վասն պարտուց, և իբրեւ տեսին թէ չիք հնար՝ արտաքսեցին զնոսա յատենէ անտի, և գրեցին առ Բդեշխն զիր բազմակնիք, որպէս խնդրեալն էր. Եւ հրեայք իսկ բերեալ էին հրովարտակ բաժնիւ պահանջել զառնելիս իւրեանց. Բայց ապասէին գալստեան նորոյ Դատաւորի, և այսպէս մնացեալ միաբանաց 'ի յետին տառապանս լային և կոծէին զանձինս իւրեանց, փախչիլ ոչ կարէին, զի պահէին զճանապարհս նոցա զտիւ և զգիշեր, այլ միայն թագչիլ 'ի սենեակս, և Թարգման Մուրատ դողդոջուն շրթամբ կակաչէր զանհեղեղ պատասխանիս իշխողաց, եւ վառէր զնոսա 'ի բարկութիւն կացուցանել զինուորս 'ի դուռն վանաց. Ապա 'ի միում նուագի արիացեալ Խորհրդականաց չոքան 'ի Դատարան և 'ի ժողովի այլազգեաց ետուն պատասխանի, թէ չեն ինքեանք տեարք Աթոռոյն, այլ Պատրիարքունք և Ազգապետք, և թէ չունին դրամս 'ի վճարումն պարտուց, և նոքա ոչ առաքեցին 'ի Կոստանդինուպոլսոյ, և 'ի Տէրութենէ ոչ եկն կրկին հրաման վասն այնր, և ապա ծախեալ իբր 10,000 դահեկանս առին զիր 'ի նոցանէ, և ինքեանք եւս գրեալ առաքեցին 'ի Թագաւորեալ քաղաքն, և այսպէս զերծան առ ժամն 'ի ձեռաց նոցա, այլ ոչ էին յապահովի, զի իշխողք երկրին պահան-

ջին հարկս Սեֆէր աֆէնդի անուամբ, եւ վասն տարեկան գլխահարկի 'ի նեղ լծեալէին զնոսա կարդեալ զՈստիկանս 'ի դուռն վանաց.

Ի սմին ժամանակի Լատին կղերաց գտեալ պատեհ առիթ, մանաւանդ թէ դրդեալ յայլազգեաց իսկ, յարուցանէին խաւսութիւնս 'ի տաճարին Ս. Յարութեան, աւել ածելով 'ի բաժին տեղիս Հայոց, եւ 'ի միում նուագի 'ի հարցանել նոցա Լուսարարին, թէ ընդէ՞ր աւելէք զսեփհական տեղիս մեր, հարին զնա չարաչար և անկաւ իբրև մեռեալ, և բացեալ զդուռն հանին արտաքս (1828. 'ի 21 Սեպտեմբերի). Քանզի Լատինք ոչ միայն ընդդիմանային Հայոց, այլ նաեւ Յունաց, զի Ջանային գրաւել ըստ Սուրբ Տեղիս.

Թէպէտ յառաջագոյն գրեալ էին առ վիճակաւոր առաջնորդս փութով առաքել 'ի Կոստանդինուպոլիս առ Զաքարիա վարդապետ զնպաստս զոր հաւաքէին 'ի ժողովրդոց, այլ յետոյ անօրէնութեամբ ազգային ժողովոյ և գրով Կարապետ Պատրիարքի արժան համարեցին առաքել 'ի քաղաքս քաղաքս զՅովհաննէս վարդապետ Զմիւռնացի, ժողովել և ընդունիլ 'ի նոցանէ զհաւաքեալ նպաստս և զարդիւնս դանձանակաց և փութով հասուցանել առ Զաքարիա վարդապետ.

Իսկ Պօղոս Եպիսկոպոս ծայրագոյն կառավարիչ Աթոռոյն՝ ինքնին անձամբ շրջեցաւ յամենայն եկեղեցիս Կոստանդինուպոլսոյ, խրատելով և յորդորելով զժողովուրդն հոգեշահ բանիւք եւ ընդունելով զկամաւոր նուէրս նոցին կայազատութիւն Աթոռոյն, չնայելով զնեղութիւնս դառնավիշտ ժամանակին, և ապա եկ 'ի Թագաւորեալ քաղաքէն ('ի 19 Սեպտեմբերի) եւ եհաս յԵգիպտոս ('ի 28 Հոկտեմբերի), ուր սիրայորդոր բանիւք շարժեաց զսիրտ ժողովրդոց 'ի գութ սիրով եւ յօժարութեամբ նոցին ժողովեցաց զողորմութիւնս եւ զկամաւոր նուէրս նոցին 'ի փրկութիւն Աթոռոյն, որոյ գումարն եհաս 26,400 դահեկան, և յաւել 'ի վերայ նորա Կիրակոս Եպիսկոպոս զայլ և այլ գումարս արդեանց, որ եղեւ 49,043 դահեկան, և մատոյց նմա նաեւ զերիս մատանիս և զմի տուփ ոսկի եւ զմի մուշտակ իբր 6000 դահեկանի տալ 'ի տեղի պարտուց,

զի ոչ ունէր անձնական դրամ. դիտուն Պօղոսի էր առ-
նել սմին նման ամենայն միաբանից, բայց նոքա յառաջա-
գոյն մերկացեալ էին, բաց յոմանց։ Մինչեւ ցայսօր ոմանք
ստուգեամբ յերիւրեն թէ Պօղոս բացեալ իցէ զսենեակս
միաբանաց և դատարկեալ զնոսա, և այս ասեն յաւէտ 'ի
նպաստ ընչաքաղց ագահութեան և անխիղճ բռնաւորու-
թեան իւրեանց. զի այրն հաւատարիմ երբէք չէ արար-
եալ զայդպիսի տարօրինակ գործս։ Եւ զի կարի դժուարին
երեւէր 'ի սմին ժամանակի ազատութիւն Աթոռոյն, զի
յամենայն կողմանց հնչէին ձայն պատերազմաց, հարկա-
պահանջութեանց, տառապանաց և նեղութեանց, և չլինէր
յաջողութիւն գնալ ուխտաւորաց յերուսաղէմ։ Պօղոս ե-
պիսկոպոս մինչդէռ էր յԵգիպտոս՝ կամեցաւ տանել ընդ
իւր զԿիրակոս եպիսկոպոս 'ի Ս. Աթոռն իբր օգնական ին-
քեան, այլ ժողովուրդ տեղւոյն ոչ թողին զայն, եւ նա
մեկնեցաւ անտի իւրովքն հանդերձ ('ի 15 Նոյեմբերի),
և եհաս յերուսաղէմ (1828. յ3 Դեկտեմբերի) և ետես զի
պաշարեալ էր բոց նեղութեան եւ տառապանաց, եւ առ
տագնապ սրտին և 'ի տաժանմանց երկար ճանապարհաց,
անկաւ խօթ 'ի մահիճս. եկին առ նա Գլխաւորք քաղաքին
և խնդրէին 'ի նմանէ ընծայս, կարծելով զնա Պատրիարք
Երուսաղէմի, և իբրեւ ծանեան թէ չէ՝ դարձուցին զքանս
իւրեանց, թէ երբեմն լեալ է Պատրիարք 'ի Թադաւորեալ
քաղաքի. ապա ասէ՝ չունիմ ինչ տալ ձեզ, եթէ վասն
իմ են բանք ձեր, ելանեմ յերուսաղէմ։ Ապա առաքեաց
զհրովարտակն ընդ Կարապետ եպիսկոպոսի 'ի Դամասկոս
առ կուսակալն՝ բերել անտի գիր հրամանի։ Եւ նորա սի-
րով ընկալեալ զնա եցոյց գութ եւ խնամ, եւ գրեաց առ
Քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի ըստ մտաց
հրովարտակին (Պույրուլդէ), և խոստացաւ լինիլ ձեռնտու
'ի գործս Աթոռոյն, եթէ գտցին հաւատարիմ 'ի բանս
իւրեանց, զի կարի ատելի էր նմա ստախօսութիւն, այ-
սինքն, զի մի յետս դարձցի փոխանագիր նորին 'ի Կոս-
տանդինուպօլսոյ, զի զհարկ տարւոյն այնորիկ սահմանեալ
էին անդ վճարել, և սոքա թախանձանօք գրեցին առ Զա-
քարիա վարդապետ լինել արթուն և զգոյշ, եւ հայկազն
Յովհաննէս. որ էր առ Բդեշխին 'ի Դամասկոս ձեռնտու

եղեւ յամենայնի 'ի գործս Աթոռոյն, եւ խոստացաւ եւս,
և Կարապետ եպիսկոպոս դարձաւ յերուսաղէմ գրով Բդեշ-
խին, (1828. 'ի 26 Դեկտեմբերի)։

Ի հասանիլ Պօղոսի՝ Խորհրդականք սիրով և հոգւով կա-
պեցան ընդ նմա և վաստակէին 'ի գործն յառաջակայ. մի-
բանք զուարճացեալ՝ թէ և յաղքատութեան եւ զուրկ 'ի
մարմնաւոր մխիթարութենէ, այլ շնորհ մեծ համարէին
լինել Պօղոսի հայր և տեսուչ ինքեանց, և ոմանք ինքնա-
յօժար կամօք մատուցին առ նա զմուրհակս և զպահեստի
դրամս, և բազում ինչ ազատեցին յեկեղեցական զարդուց։
Սակայն Պօղոս և Խորհրդականք իւր կային 'ի տարակուսի,
զի այլազգիք քաղաքին անդադար մաշէին զսեամս դրան,
խնդրելով պարգեւս և աւսյիտս, թէ դու Պատրիարք ես.
և իբրեւ հաւանեցոյց զնոսա թէ չէ՝ ապա ասեն թէ մեծ
և իբրեւ հաւանեցոյց զնոսա թէ չէ՝ ապա ասեն թէ մեծ
ոմն ես և համբաւաւոր, չազատիս 'ի ձեռաց մերոց, և նո-
ցա տաղտկացեալ յերեսաց նոցա, եւ պատրաստել զանկո-
ղին իւր 'ի Խորհրդարանի, և 'ի գալ առ նա ուժեք բռ-
նութեամբ, ձեւանայր հիւանդ մինչև կարծել իւրոցն թէ
արդարեւ հիւանդ է։ ԶԳրիգոր և զԵրեմիա վարդապետս
կարգեաց ժողովել տումարաւ զարծաթեղէնս յեկեղեցեաց
'ի հալել, ('ի 19 Դեկտեմբերի)։

Եւ ինքն սկիզբն արար հատուցանել բաժնիւ զպարտս
Աթոռոյն, բայց անտանելի նեղութեամբ. զի պարտատէրքն
իբրեւ զմեղու խուռն ամբոխիւ կուտեցան 'ի գլուխ նորա,
ոմանք հաճեցան մտանել ընդ բաժնիւ և ոմանք ոչ առին
յանձն, և դրամն զոր բերեալ էր ընդ իւր, առ ի՞նչ այն-
քան պարտուց, որոյ վասն ձեռնարկ խորտակել զոսկեղէն
և զարծաթեղէն անօթս եկեղեցւոյ, այլ այնոքիկ ևս չէին
բաւական (1829. 'ի 10 Յունվարի)։ Առաքեաց յԵգիպտոս
զպղնձեղէնս և զայլ կարասիս վաճառել 'ի ձեռն Կիրակոսի
եպիսկոպոսի, յորոց գոյացան իբր 20,000 դահեկան։



ԳԼՈՒԽ ԽԹ.

Հրովարտակ դրան Բեթղեհէմի։ Խնդիր Գաբրիէլ պատրիարքի։ Եղիա Եպիսկոպոս։ Կիրակոս Եպիսկոպոս. առաջին բաժին պարտուց։ Նորոգութիւն հրովարտակին վասն Գերեզմանին Քրիստոսի։ Պատարագել Հայոց 'ի Վերայ Գերեզմանին Քրիստոսի։ Հեռացնել վասն հաւասար բաժանորդութեան։

ԶԴՈՒՌՆ Բեթղեհէմի 'ի մէջ եկեղեցւոյն, զոր եւ փակել Կուսակալն Դամասկոսի Սալէհ Փաշայ օրինօք Շէրիի, եւ արգել զհանապարհն Լատինաց 'ի միջոյ եկեղեցւոյն, եւ պատուիրեաց յայնժամ բերել հրովարտակ յԱրքայէ վասն հաստատութեան գործոյն, որպէս գրեցաք։ Հայք մինչեւ ցայսվայր ոչ կարացին առնուլ զայն հրովարտակ յԱրքայէ. 'ի փոխանակ Կուսակալաց Դամասկոսի եւ Դատաւորաց Երուսաղէմի ամ յամէ՝ պարտաւորեալ էին Հայք ծախիւք եւ աշխատութեամբ տալ նորոգել զհրամանս նախորդաց նոցին, և Դատաւորք Երուսաղէմի հապիւ ուրեմն հաճէին 5000 դահեկանաւ կնքել եւ հաստատել զայն Հէօճճէթ, և երբեմն սակս ագահութեան իւրեանց, իբր 'ի շնորհս Լատինաց սպառնային բանալ զդուռն զայն, որով նեղէին և կեղեքէին զկրօնաւորս Հայոց։

Եւ վասն թաղման ննջեցելոց քրիստոնէից յիւրաքանչիւրէ առնուին 3 դահեկան, եւ 'ի բոլորիլ շրջանի տարւոյն 5000 դահեկան։ Եւ սակս արձանագրելոյ 'ի դատարանի զհրովարտակս եւ զայլ հրամանս, պահանջէին զմեծ գումարս դրամոց, որ սահմանեալ էր տալ միայն 100 դահեկան։ Զաքարիա վարդապետ սակս խափանելոյ զայսպիսի անկարգութիւնս և զրռնութիւնս ժամանակին՝ էառ հրովարտակ արքունուստ (Խաթիէ Շերիֆ) ՌՄԷԷ 'ի ՀԼ Զիլգատէ ամսոյ, և առաքեաց զայն յԵրուսաղէմ, զի փակեալ մնասցէ դուռն Բեթղեհէմի, և բարձցին տարապայման պահանջք Դատաւորաց։

Գրեցին միաբանք Աթոռոյն առ հասարակ գիր բազմակնիք առ Պատրիարքն և առ իշխանաւորս աղդին 'ի Կոստանդինուպոլիս, և աղաչանօք խնդրէին վերստին դարձուցանել յԱթոռն զԳաբրիէլ Պատրիարք 'ի մխիթարութիւն ինքեանց եւ 'ի սփոփանս ծերութեան նորին. զի չէր արժան թողուլ զԱթոռն առանց Գահակալի և զմիաբանութիւնն առանց Գլխոյ, ('ի 13 Մայիսի)։ Թէպէտ եւ ինքն Պօղոս եպիսկոպոս ձեռնարկեալ եւ կնքեալ էր զայն գիր, այլ յետոյ առանձին գրեաց առ Զաքարիա վարդապետ, ուր ասէ՝ թէպէտ ցանկամք բարեկարգութեան Աթոռոյն, այլ առանց Պատրիարքի ոչ յաջողի և ոչ հաստատի, ուստի արժան է տալ նմա հրաման դառնալ յԱթոռն, որպէս գրեցին միաբանք, զի չէր արժան անհոգութեամբ 'ի բաց թողուլ զբարեկարգութիւն միաբանաց. և յուսայր նա դիւրաւ ստանալ զայն 'ի գալստեան նորին, եթէ մընայր անշարժ 'ի խոստմունս իւր, որպէս խոստացեալ էր 'ի Կոստանդինուպոլիս, մինչ էրն ընդ Պօղոսի, և մի լիցի զկնի գալստեան իւրոյ ժխտել և վարիլ ներհակօքն, որոյ վասն պարտ էր վերստին պատուիրել նմա Ամիրայից, զի զամենայն գործս կառավարութեան Աթոռոյն համակամ հաճութեամբ Խորհրդականաց վարել, և մի պատրիլ իբրեւ զտղայ ըստ առաջնոյն 'ի փառասիրութենէ կենցաղոյս. ապա պատուիրէ ցուցանել ազգապետաց զայս գիր և զմիաբանացն, եւ յանձն առնել 'ի կամս նոցա զտնօրէնութիւնն ըստ վայելչութեան յօգուտ Ս. Աթոռոյն։ Ի վերայ այսր խնդրոյ տնօրինեցին ազգայինք, զի Գաբրիէլ Եպիսկոպոս Պատրիարքական շքով և Զմիւռնիոյ առաջնորդութեան իշխանութեամբ նստիլ անդ ուրախութեամբ և հանդարտութեամբ ժամանակ ինչ, և Յարութիւն վարդապետի տեղւոյն երթալ Առաջնորդ 'ի Պրուսայ և 'ի Կուտինայ, (1829. 'ի 1 Յուլիսի)։

Կուսակալն Դամասկոսի Օսման Փաշայ ըստ Արքունի հրովարտակին կալաւ 'ի Դամասկոս զԿաթոլիկ քահանայս, Տ. Յովհաննէս, Տ. Յովսէփ 'ի Գաղատիոյ, Տ. Պետրոս 'ի Կարնոյ և Տ. Գաբրիէլ 'ի Տիգրանակերտ, և կապանօք աքսորեաց զնոսա 'ի Շամ Թարապուլուս, եւ Յովհաննէս վարդապետ առաջնորդ տեղւոյն կրեաց սաստ 'ի Բդեշխէն վասն անտեղեակ գոլոյ զնոցանէ ('ի 13 Յունիսի)։

Իսկ Եղիա եպիսկոպոս որ գեղերէր 'ի Կոստանդինուպոլիս խնամք եւ պաշտպանութեամբ հպեւոր հօր իւրոյ

Մարկոս եպիսկոպոսի, մեկնեալ անտի եհաս յԱտանա քաղաք Կիլիկիոյ ունելով ընդ իւր զպատճէն հրովարտակին զաֆարու, և ձեռնտուութեամբ Իշխանաց քաղաքին և գրով Քաղաքապետին տայ արձանագրել զայն 'ի պատշաճաւոր տեղիս ծախիւք ժողովրդոց։ Եւ անտի յղեաց զրեւելինս իւր 'ի Ցոպպէ, գրեալ առ Խորհրդականս գնալ 'ի Դամասկոս եւ անտի դառնալ յԵրուսաղէմ, զի ունէր խորհուրդ ինչ յայտնել նոցա, և անտի դիմեալ 'ի Բերիա, աշխատ եղեւ վասն բարձման Ղաֆարի ուխտաւորաց 'ի կողմանցն-և էառ Իլամն 7. եւ ապա ժողովեալ զազգայինս տեղւոյն բանս արկ յականջս նոցա, որպէս թէ անօրէնութեամբ ազգապետաց թագաւորեալ քաղաքին 'ի վաճառ հանել զամենայն կալուածս Աթոռոյն որ անդ, զորմէ միաբանք Աթոռոյն եւ Պօղոս եպիսկոպոս չունէին տեղեկութիւն, այլ միայն Զաքարիա վարդապետ և Գլխաւորք ազգին, զոր և լուեալ յետոյ Պօղոսի և Խորհրդականաց հաճեցան. սակայն տեսեալ զթշուառ վիճակս քաղաքացեաց յերեսաց ծանր հարկապահանջութեանց, յորմէ մեկնէին բազումք, եթող զայն խորհուրդ և գնաց 'ի Դամասկոս և անտի յերուսաղէմ։ Լուեալ զայս Կիրակոսի եւ Զաքարիա զայրանային յոյժ, զի մին գրէր 'ի գալստեան Եղիայի՝ պարտ է Պօղոսի ելանել արտաքս, գողով անտեղեակ բարուց և բնաւորութեանց նորին, և միւսն գրէր առ Պօղոս, «Արտասուօք աղերսեմք չելանել Աթոռոյն, այլ եթէ տկարութիւնն ստիպէ՝ զԿիրակոս եպիսկոպոսն բեր և նմա յանձնեա զկառավարութիւնն, զի օգնական լիցի. զնոյն գրեաց և առ Կիրակոս եպիսկոպոս երթալ յԱթոռն, իսկ եթէ սխալիս ասէ՝ վերստին բերել զեղիա յԱթոռն, պատճառ լինիս կործանման նորին, իսկ եթէ վասն առնելեաց իւրոց խնդրէ գալ յԱթոռն, նախ առաքեսցէ զմուրհակսն 'ի նշան հաւատարմութեան իւրոյ, եւ ինքն մնասցէ ժամանակս ինչ 'ի Սիս, որպէս խնդրէր երբեմն. ծերունի Մարկոս եպիսկոպոսն տակաւին հակառակութեան ոգւով նստեալ 'ի վանս Իւսկիւտարու պաշտպանել կամի զիւրսն»։ Իսկ Կիրակոս եպիսկոպոս դժկամակ լինէր գնալ յԱթոռն, պատճառելով զտհաճութիւն ժողովրդոց տեղւոյն, որպէս տեսեալ էր Պօղոս եպիսկոպոս յառաջագոյն, և եթէ մեկնէր անտի ընդդէմ կամաց նոցին,

ընդունայն լինէր վաստակ և աշխատութիւն նորին վասն բարեկարգութեան տեղւոյն եւ կալուածոց Աթոռոյն, եւ չէր դիւրին աղատել 'ի ձեռաց պարտատերաց, և գալուստ նորին չէր ինչ օգուտ Աթոռոյն, գիտելով զբարս հնագունից. զի եթէ Պօղոս տկարանայր 'ի նուաճել եւ 'ի բարեկարգութիւն ածել զնոսա, և պատճառանօք ելանել խորհէր յԱթոռոյն, ուր մնայր նմա, որ ըստ ամենայնի արհամարեալ էր յաչս նոցա և վատթար քան զամենեսին Քաղաքացի անուամբ, թող զի Եղիա եպիսկոպոս որ եկեալ էր յԱթոռն ըստ գրութեան Պօղոսի, չի թողայր ումեք ձեռնամուխ լինել գործոց Աթոռոյն։ Ուստի աղաչանօք թախանձէր զԶաքարիա մտերիմ իւր չխորհիլ զայսպիսիս և չստիպել գնալ յԱթոռն, եթէ իբրեւ հասարակ միաբան և անգործ ծերունի, յօժարութեամբ յանձն առնու երթալ յերուսաղէմ և լինել 'ի կարգս աղօթաւորաց։ Ի վերջոյ առանձին թղթով աղաչէ զնա չթախանձել զինքն գործով իւիք գնալ յԱթոռն, և արկանել 'ի ներքոյ անտանելի լծոյ, առաւել քան զկարողութիւն իւր, դուցէ զանհնազանդութեան անուն ժառանգեալ՝ իսպառ 'ի բաց կացցէ 'ի միաբանութենէ, և այլ սոցին նման բանք։ Այս ամենայն միտք եւ գրուածք ծանօթ էին Պօղոսի, բայց սիրով ընկալաւ զեղիա, զի հանդարտութեամբ վարէր, և կարգեաց զնա Նուիրակ Զմիւռնիոյ վիճակին, եւ պատրաստէր ելանել 'ի ճանապարհ. զի եթէ ասէ այսու եղանակաւ վարի Եղիա, բարի է, իսկ եթէ փոխեալ զբարս իւր մարտիւ վարեսցի, յայնժամ հարկ լինի հակառակօքն դիմադիր լինել նմա։

Ասասցուք և վասն պարտուցն, թէ զինչ արար Պօղոս եպիսկոպոս զկնի գալստեան իւրոյ յԱթոռն. զառաջին բաժինս պարտուց վճարեաց Պօղոս բազում նեղութեամբ և տառապանօք.

148,321 Դահեկան բաժնիւ (թագսիտ)։
248,257 Աւանց բաժնի զի բռնաւորք էին։
108,315 » Փոխանակագրով վճարեալ 'ի Կոստանդինուպոլիս։
504,893 Այս է առաջին բաժինն՝ և վասն երկրորդին վարանէր մինչ Պօղոս 'ի միտս իւր, թէ օ՞րպիսի եղանակաւ 'ի գլուխ տարցէ զայն. զի առնուազն 600 քսակ արծաթոյ պէտս ունէր, և ինքն դատարկացեալ էր 'ի դը-

բանց։ Եւ 'ի միւս կողմանէ տաղտկացեալ և զզուեալ էր 'ի բռնութենէ այլազգեաց, և կոչէր զԵրուսաղէմ ասպարէզ ազատաց և զրկողաց, և կամք իւրաքանչիւրոց՝ օրէնք, և բռնութիւն զիրաւունս ոչ ճանաչէ, և թէ ուր բռնութիւն՝ անդ չիք արդարութիւն, զի չէր հանդիստ գոնէ ժամ մի ինքեան և կառավարչաց Աթոռոյն յերեսաց կեղեքչաց։ ոչ աղաչանաց լսէին, ոչ աղքատութեան ողորմէին, չգիտէին զայլ ինչ, բայց միայն խնդրել զարդեւս որում չէր կէս և սահման, զի զոր կամէին՝ զայն խնդրէին։ եթէ ընդդիմանային՝ բանային դրունս մեծամեծ վնասուց յայտնի և ծածուկ՝ յորոց վերայ զարմանայր Պօղոս՝ զի ոչ գիտէր, բայց եռեսս և ուսաւ։ երանի թէ ասէ՝ յառաջագոյն ուսանէի, զի թերեւս ոչ անկանէի յայս վիշտ անտանելի։ Եւ զի զկնի ամսոյ ինչ պիտոյ էր նմա 258,255 դահեկան միայն վասն երկրորդ բաժնի պարտուց, թող զայլս որք ոչ կամէին մատանել ընդ բաժնիս, և 'ի Կոստանդինուպօլսոյ չեղեւ ինչ օգնութիւն, որպէս խոստացեալն էին, Եւ Յովհաննէս վարդապետ ոչ ինչ առաքեաց յԵրուսաղէմ զոր ժողովեաց 'ի վիճակաց։ և 'ի չքաւորութենէ յամախսէին փոլիցայք 'ի վերայ Փոխանորդին՝ յորոց բազմացան նեղութիւնք և տրտունջք յերկուց կողմանց, զի փոխանակ չահելոյ՝ առաջի կայր նոցա վնաս մեծ, նմին իրի ստիպէին զազգայինս դրել առ Առաջնորդս վիճակաց հասուցանել դրամ։ և Զաքարիա վարդապետի ժողովել 'ի Կոստանդինուպօլիս։ զի եթէ ոչ կամէին տալ ազգայինք մէն մի դրամ 'ի տարին վասն պարտուց Երուսաղէմի, զի՞նչ կարէին առնել որք բարձին զայն ծանր լուծ 'ի թիկունս իւրեանց այսպիսի անօրինակ խռովեալ ժամանակի։ զի աղաղակ և տրտունջ Առաջնորդաց և ժողովրդոց առհասարակ զերկինս գրաւէին 'ի դառնութենէ ժամանակին։ Այլ յուսացեալ 'ի խնամս և 'ի գթութիւնս հոգեսէր ժողովրդոցն Հայոց, առաքեցին յԵրուսաղէմ Վարդապետս 'ի կողմանս Դաղատիոյ, Եւդոկիոյ և յայլ քաղաքս՝ և յաշխարհն Կիլիկիոյ, գրեալ գիր աղաչանաց և յորդորանաց հոգալ վասն երկրորդ բաժնին։ Սակայն ոմանք 'ի պարտուց էին տեսակ ընդ տեսակի՝ որոց տուեալ չահն անցեալ էր քան զմայր գումարն, Եւ եթէ այնպիսեաց չիցէ փոխեալ մուրհակն՝

տուեալ չահն համարեսցի փոխան մայր գրամոց, իսկ եթէ տուեալ չահն քան զմայր գումարն՝ յետս դարձցի տուեալ չահն։ Վասն այսպիսեաց առեալ էին վճիռ 'ի Դենպետէն, և Իլամ 'ի Դատաւորէն, և ըստ մտաց նոցին խնդրէին հանել հրովարտակ արքունուստ։

Փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի Զաքարիա վարդապետ ջանիւք և աշխատութեամբ Բիշմիշեան Մեծապատիւ Եւ հոգեսէր Միքայէլ Ամիրայի նորոգեաց զհրովարտակն վասն պատարագելոյ Հայոց 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։ զայս հրովարտակ առեալ էր Եղիազար Կաթողիկոս 'ի ժամանակս իշխանութեան իւրոյ յԵրուսաղէմ՝ զորմէ գրեալ եմք յառաջագոյն։ Եւ առաքեաց փութանակի զորինակս նորին յԵգիպտոս առ Կիրակոս Եպիսկոպոս հաստատանել յԵրուսաղէմ 'ի ցնծութիւն Պօղոսի և միաբանաց, գրեալ թուղթ աղաչանաց և աւետեաց։ զի մի 'ի հակառակելոյ օտար ազգաց և 'ի ծանրութենէ պարտուց վիրաւորեսցի, և մի երբէք տրտմիլ թէ չէր ժամանակ այսպիսի իրաց։ ահա օր ընդունելի և ժամանակ փրկութեան, զի Աստուած է որ յաջողէ զամենայն յամենայնի, որում կըրկնեսցի ծունր գոհութեան և երկրպագութեան, որ արժանի արար զազգն այսպիսի երկնապարգեւ շնորհաց, մի երկընչիլ տարապարտ ահարկութեան և խրոխտանաց հակառակորդաց, զի 'ի զուր եւ ոչ ինչ են շնորհիւ մեծազօր Աբգային և հաւատարիմ նախարարաց նորին, և ոչ կարեն կալ հակառակ մեզ։ զի ժամ իսկ է քաջութեամբ պատահելոյ՝ խոհեմութեամբ և լուութեամբ գործն կատարելոյ։

Գրեաց և Կիրակոս Եպիսկոպոս յԵգիպտոսէ ընդ հրովարտակին բանս ուրախութեան և աւետեաց, որոյ սիրտն անպատում ուրախութեամբ զուարճացեալ և բերկրեալ էր, և աղաչէր զՊօղոս չելանել յԱթոռոյն՝ առաջի եդեալ նորա զանրաւ վնասն և զանդարմանելի վտանգն և կորուստանելոյ զհամբաւ իւր։ Իսկ Զաքարիա վարդապետ առեալ էր զայլ եւս երկուս հրովարտակս սակս այլոց կարեւոր իրաց, Եւ զյանձնարարական գրեանս վասն ներկայ խնդրոյն 'ի Դայմագամ Փաշայէ առ Կուսակալն Դամասկոսի, առ Դատաւորն և Քաղաքապետն Երուսաղէմի։ Նոյնպէս և 'ի մեծէ Դենպետէն և 'ի Սեղանաւորէ նորին, և 'ի Քեահեայ Պէյէն

առ Բդեշխն Աքքէի։ գրեաց և առ աղնուաբարոյ Յովհան-
նէս աղայն 'ի Դամասկոս առնուլ գիր 'ի Բդեշխէն։ զայս
ամենայն գրեանս և զհրովարտակս յանձն արար Զաքարիա
հաւատարմին իւրոյ Կարապետին, և ընդ վստահելի սուր-
հանդակին եհան 'ի ճանապարհ հասանիլ 'ի Դամասկոս,
զի պատրաստ գտցին անդ նախ քան զվերադարձ Կուսա-
կալին յուխտագնացութենէ։ Եհան 'ի նաև նաև զՄան-
տամեան Մարգար աղայն՝ լինիլ օգնական գործոց Աթոռոյն
և զսպել զանիրաւութիւնս Դատաւորին զօրաւոր բանիւք՝
զի ոսկերիչ նորա էր՝ յանձն արարեալ նմա 21,000 դահե-
կան վասն պարտուց Աթոռոյն։ Գրեաց և առ Պօղոս Եպիս-
կոպոս՝ զի զայլ բաժինս յառաջակայ պարտուց տնօրինել
'ի մնացեալ զարդուց եկեղեցւոյ, և զՀայոցն թողուլ յետս,
եւ խնամով առաքել վուլիցայ՝ զի մի նեղեսցեն, մինչեւ
բացցին դրունք ողորմութեանն Աստուծոյ, և ապա խնդրեաց
առաքել առ ինքն զհին վաւերական գրեանս Գողգոթայի
լուսաւորչայն։ Եւ 'ի սմին ժամանակի 'ի Կոստանդինուպօլիս
'ի գլխաւորաց Ազգին բաց 'ի Միքայէլ Ամիրայէ ոչ ոք իշ-
խէր մերձենալ առ Զաքարիա վարդապետ, զի յերկիւղէ
և 'ի սպառնալեաց Տեառն նորա սարսէին ամենեքեան, և
նա էր որ յորդորէր զնա միշտ 'ի բարին։ Եւ զի կարի
սաստկացեալ էր գայթակղութիւն Հրէից, և բազումք մը-
կըրտեցան, եւ շատք եւս ընտանեօք ցանկային 'ի նոյն.
բայց յերկիւղէ առնն ոչ ոք համարձակէր մկրտիլ, զի ըս-
տիպմամբ նորին գրեաց Կարապետ Պատրիարք, և աքսո-
րեցան Տ. Պաղտասար 'ի Պալատու, Տ. Զաքարիա 'ի Ղալա-
թիոյ, եւ ոմանք յաշխարհականաց 'ի պատճառս Հրէից
հաւատացելոց։

Պօղոս Եպիսկոպոս որ 'ի վեր քան զմարդկային միտս
համարէր զայս գործ, գրեաց 'ի Դամասկոս առ Յովհաննէս
Աղայն և առ առաջնորդ տեղւոյն, ուր էր և Եղիա Եպիս-
կոպոս։ զի 'ի հասանիլ Կարապետին անդ՝ խնամով զգու-
շացեալ առցեն գիր 'ի Կուսակալէն։ Սակայն Կարապետն
հասեալ 'ի մէջ Համա և Համս քաղաքաց՝ հարեալ 'ի խորշակէ
մեռաւ, եւ գրեանքն ամբողջ հասին 'ի Դամասկոս առ
Յովհաննէս Աղայն։ Նախ քան զժամանել հրովարտակաց
յերուսաղէմ, բաղմացաւ չչուն հակառակորդաց, զի թէ-

պէտ Յոյնք լռեալ էին խորտակեալ և ընկճեալ 'ի զօրու-
թենէ, այլ Լատինք զօրաւոր յոյժ, զի 'ի սոյն աւուրս
դարձեալ էին ճոխ նուիրակունք նոցին, և վրդովեալ ան-
կան այսր եւ անդր։ գրեցին առ Բդեշխս Դամասկոսի եւ
Աքքէի շրջել զբանն 'ի կամս իւրեանց եւ տալ խափանել
զհրովարտակն, հանին և յատուկ սուրհանդակ 'ի Կոստան-
դինուպօլիս, զի այլ և այլ պատճառանօք հնարս գտցեն
հակառակելոյ Հայոց, թէպէտ նոքա զգուշանային 'ի Դու-
ռքն։ Եւ Պօղոս եպիսկոպոս ոչ երկնչէր 'ի չարժանէ սո-
ցա, այլ խորհէր։ զի այս անակնուելի գործ բազումք գը-
բամոց պէտս ունէր, զի այլազգիք ոչ այլ ինչ գիտէին,
բայց միայն դրամ եւ զամենայն ինչ առնէին ըստ կամաց
իւրեանց իբր համաձայն օրինաց Շէրիի, այլ արծաթն գիւ-
բաւ շրջէր զմիտս նոցա, զի բարւոք գիտէին թէ վանա-
կանք Երուսաղէմի, բաց 'ի Հայոց, զմիմեանս խորտակել
եւ նուաճել ջանային, մանաւանդ Լատինք, որ հնարիւք
պատրաստեալ էին կեղծ և չինծու Հէօճէթթ վասն դրան
Բեթղեհէմի, որ 'ի ժամանակի փակման նորին ոչ կարացին
մատուցանել, այժմ իբրև գտեալ զայն, պատրաստեալ են
'ի վէճ և բանալ զդուռն, զի յաւուրց անտի փակելոյ զհետ
մտեալ անդադար աշխատէին, մանաւանդ յայսոսիկ յեր-
կուս ամս 'ի գալստեան Բդեշխից, պնդէին թէ դուռն այն
ոչ է նորասահման, այլ հրամանաւ, ցուցանելով զգտեալ
գիրն եւ ստիպէին բանալ զայն։ Նմին իրի գրեաց Պօղոս
առ Զաքարիա վարդապետ, հանել հրովարտակ ըստ վըճ-
ռոյ Դենպետին, զի 'ի մատուցանել Լատինաց հին կամ նոր
գրեանս, անընդունելի լիցի, գիր և պատուէր առ Դատա-
ւորն, զի մի ունկն դիցէ բանից Լատինաց, զի անհամար
գումարս դրամաց վատնեալ էին Հայք վասն այնր։ Պօղոս
Եպիսկոպոս երկնչէր, գուցէ 'ի ժամանել հրովարտակին մի-
այն պատարագելոյ հրաման տացեն, և զինքիր բաժանոր-
դութեան երկարեսցեն, որոյ վասն գրեաց ցուցակ ինչ առ
Զաքարիա, այլ ոչ օգնէր այն առանց Իլամի և Հէօճէթթի,
զորոց ունիմք գրել զկնի, զի Գերեզմանն Քրիստոսի իբր
միայն Լատինաց յատկացեալ էր և նոքա եղեալ էին պատ-
կեր, ապա կիսաբաժին եղեն ընդ Յունաց, այժմ հարկ էր
լինել երեք բաժին։ Հուսկ ուրեմն հասին գրեանքն 'ի Դա-

մասկոսէ, և կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի, ուր էին Քաղաքապետն, Դատաւորն և ամենայն Գլխաւորք այլազգեաց, հրաւիրեցան Յոյնք և Լատինք, գնացին և 'ի Հայոց Պօղոս, Մկրտիչ, Կարապետ և Եղիա եպիսկոպոսունք, Աբրահամ եւ Յակոբ վարդապետք, Թարգման Մուրատ, եւ Խանտամեան ոսկերիչ Մարգար, ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրովարտակն Արքայի, և զհրամանագիրս Բդեշխից Դամասկոսի և Աքքէի Ռաղուպ և Ապոլլահ Փաշայից, և Դատաւորն յայտ արար ամենեցուն զիմաստս գրոց, ապա խնդրեցին Հայք կարգաւորել զխնդիրն 'ի տեղւոջ իւրում, և ելեալ անտի բազմութեամբ գնացին 'ի Տաճարն Ս. Յարութեան, և բազմեցան հանդիպեալ առաջի Դրան Գերեզմանին, և 'ի լինիլ բանից բաժանորդութեան՝ հակառակեցան բազմօք Յոյնք եւ Լատինք, բայց Դատաւորն պնդէր անթերի կատարել զհրաման Արքայի. Լատինք մատուցին հրովարտակ ինչ, զի նոքա մաքառեսցին, բայց գտաւ 'ի նմա թէ Գերեզմանն և ոչ միոյ ազգի սեփհական է, ապա սկսան Հայք կարդալ գնել զամենայն սպասս հաւասար Յունաց եւ Լատինաց, 2 զոյգ աշտանակ մեծ եւ միջակ 'ի Դուռն Գերեզմանին, և մի պատկեր յորմն Հրեշտակի վիմին, և Գերեզմանն Քրիստոսի երեք բաժին եղեւ, որոց մի մասն Հայոց, մի պատկեր և վեց աշտանակ, և յաւելին կալեալ 7 կանթեղս 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, որով եղեւ 13 հաւասար երկուց ազգաց, յատակս 'ի փոքր գըմբեթն, 'ի մակատն եւ 'ի շրջապատս Գերեզմանին ամենայն պարագայիւք զարդարել հաւասար Յունաց եւ Լատինաց կանթեղօք, աշտանակօք և այլ ամենայն զարդուք յաւուրս յատկացեալ տօնից. սահմանեցաւ մի շաբաթ եւս Հայոց լուանալ եւ մաքրել զԳերեզմանն և զշրջապատս նորին եւ տարածել պաստառս, նոյնպէս եւ 'ի Պատանատեղին. 'ի մէջ գիշերի նախ պատարագել Յունաց ժամ 1½, և զկնի նոցա անմիջապէս Հայք, եւ ապա յարշալուսին Լատինք. եւ 'ի ժամ պատարագին հարկանել կոչնակ, դնել Աթոռ տարածել սիւռոցս, և 'ի շրջանի տարւոյն յաւուրս հանդիսաւոր տօնից բանալ զԴուռն Տաճարին 5 անդամ ըստ նմանութեան երկուց ազգաց, եւ զայլ հանգամանս հաւասար ընկերութեան, տես 'ի Հէօճմէթն և 'ի հրովարտակն Արքայի։ Հայք խնդրեցին 'ի բանալ Դրան Տաճարին կանգնել 'ի Գերեզմանն Լուսարարին Հայոց, և եթէ ընդ Յունաց լինի, երկու Լուսարարք 'ի միասին կանգնեսցին, այլ Յոյնք ընդդէմ կացին այսմ, զի յատուկ հրովարտակ ունէին կանգնել Լուսարարի նոցա 'ի Գերեզմանն պահպան անուամբ՝ պահել զքարինս նորին, զի մի Լատինք գողացեալ փոխադրեսցեն զնոսա յԵրուսաղէմ, որոյ վասն զայս խնդիր թողին յետոյ, բայց լուելեայն եւտուն Իլամ զի եւ Լուսարարն Հայոց կանգնեսցի ըստ Լուսարարին Յունաց. բայց ոչ եւ հրովարտակ վասն այնր։ Եւ յետ այնորիկ գրեաց Դատաւորն Հէօճմէթ, յոր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան և Իլամ, եւ եւտուն հրաման պատարագելոյ Հայոց 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։

Ապա միաբանք Հայոց յետ կարգաւորելոյ զամենայն ինչ եւ զարդարելոյ զԳերեզմանն, գնացին բազմութեամբ ուխտաւորաց և քաղաքացի ժողովրդոց 'ի տաճարն Ս. Յարութեան, և յետ աւարտելոյ պատարագին Յունաց, մատեան Հայք, զարդարեցին սպասուք զԳերեզմանն, և մեծահանդէս փառօք մատոյց զանմահ եւ զփրկագործ պատարագն Ադրիանուպոլսեցի Պօղոս Արք Եպիսկոպոսն՝ ծայրագոյն կառավարիչ Ս. Աթոռոյն (1829. յՀ Սեպտեմբերի, երկուշաբթի գիշեր, ժամ 7). յիշելով զննջեցեալս և ըզկենդանիս օրհնեալ ազգիս Հայոց. եւ եդին յիշատակարան մշանջենաւոր յանուն Բիշմիշեան Միքայէլ և Պէզճեան Յարութիւն Ամիրայից, որպէս խնդրեալ էր Զաքարիա վարդապետ, և եղեւ ուրախութիւն մեծ եւ անպատմելի ցնծութիւն Հայոց. օրհնեցին զմեծ բարերարն ազգին ըզ Սուլթան Մահմուտ Արքայ և զկայսերազուն որդիս նորին և զնախարարս և զիշխանաւորս ազգին, որք անխոնջ ջանիւք և ջերմեռանդ սիրով հոգաբարձու լեալ՝ աշխատեցան վասն այսպիսի երկնապարգեւ բարութեան՝ պայծառացուցեալ զանուն և զպատիւ ազգին առաջի աշխարհի։

Իսկ Պօղոս եպիսկոպոս առեալ զդրեանս Դատաւորին առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս առ Զաքարիա վարդապետ, ըստ տրամադրութեան նոցին խնդրել հրովարտակ յԱրքայէ, և յայտ առնել գլխաւորաց ազգին զբարեխութիւնս եւ զցնծութիւնս իւրեանց, որ 'ի տարաժամ

և յանակնուելի պահու մխիթարեալ էին զազգն եւ զինքեանս, և զգոհունակութիւնս բոլոր միաբանաց հանդերձ օրհնութեամբ։

Երբեմն Լատին կղերք ամբաստան եղեն 'ի կարեւոր տեղիս զազգէն Հայոց, որպէս գրեցաք. այլ 'ի սոյն ժամանակի չհանդարտեալ՝ առաքեցին զոմն 'ի Կոստանդինուպոլիս, եւ նոյն ինքն Տեսուչ վանաց նոցին հանդերձեցաւ գնալ անդ. զի հնարս գտցեն խափանել զգործն Հայոց, որպէս հակառակութեամբ իւրեանց առիթ եղեն բազմադիմի վնասուց 'ի գալատեան հրովարտակին, զի նախատինս դիցեն Հայոց արտաքսելով 'ի Գերեզմանէն. և իրրեւ տեսին թէ չեհաս հրովարտակն ըստ մտաց Իլամին և Հէօճճէթին, որպէս գրեցաւ յաւուրս բաժանորդութեան, սկըսան դեգերիլ 'ի դրունս այլազգեաց և ստիպէին զԴպրապետ դատարանին առնուլ Իլամ 'ի Դատաւորէն հակառակ Հայոց, զի գիւրաւ վարեսցեն զնոսա արտաքս 'ի Գերեզմանէն, նաեւ զՑոյնս. և Հայք զահի հարեալ վարանէին. թէպէտ նա բացասէր և ընդդիմանայր նոցա, բայց առանձին ազգ արարեալ Հայոց, բանայր զդրունս մեծամեծ ծախուց, որպէս արարեալ էին երբեմն վասն դրան Բեթղեհէմի. և կարի դժուարին էր 'ի նեղ ժամանակին յայնմիկ լցուցանել զանզուսպ ագահութիւնս նոցա, որոյ վասն Պօղոս Եպիսկոպոս և Խորհրդականք բազում անգամ թախանձանօք գրեցին փութացուցանել զհրովարտակն. զի դադարեսցին Լատինք 'ի խլրտելոյ, և ինքեանք ազատեսցին 'ի ձեռաց զրկողաց, և շնորհ Արքայի լիցի հաստատուն և անկորուստ մշանջենաւոր։ Լուեալ զայսոսիկ բանս իշխանաւորաց ազգին՝ պատուիրէին համբերել և սիրով գընալ ընդ օտարս, եւ զգուշանալ 'ի կռուոյ, թէեւ Հայք չէին այնքան կռուասէր, որքան խաղաղասէր և համբերող. բայց դատաստանն տարօրինակ ըստ տեղեաց. զի մեծամեծք այլազգեաց զհետ էին գտանել միայն կռուան ոսից իւրեանց, եւ 'ի փոքր կայծէ յարուցանէին հրդեհ մեծ, թափել զքրիստոնեայս 'ի դրանց 'ի յագուրդ իւրեանց. և Հայք գիտելով զայս ամենայն 'ի սէր Ս. Տեղեաց և ազգին համբերութեամբ տանէին ամենայնի։

ԳԼՈՒԽ Ծ.

Աստուածին Լատինաց։ Ղաֆար տուրքն։ Պարոն Մուրատ և յիշատակիք նորին։ Խնդիր Գողգոթայի։ Աքսոր Զաքարիա վարդապետի։ Փախանորդ Յովհաննէս վարդապետ։ Ազգային ժողով 'ի Կոստանդինուպոլիս։ Խնդիր հաշուոց Ս. Աթոռոյն՝ ելից և մտից։

ԲԱՆԶԻ Լատինք նախ քան զժամանել հրովարտակին վասն պատարագի Գերեզմանին Քրիստոսի՝ այնպիսի անարգութեամբ վարէին ընդ միաբանս Հայոց, մինչ ասել յայտնապէս չունել նոցա տեղի ինչ 'ի Ս. Յարութիւն, և այսպիսի բանք առաւել զայրանային 'ի ժամ աւելածութեան. և յաւուր միում այնքան գան հարին զժամարար վարդապետն եւ ծաղէին զհերս գլխոյ և մօրուաց նորին՝ մինչեւ ասել բազմաց թէ մեռաւ, զոր լուեալ Պօղոսի լուեաց խոպատ, թէպէտ Քաղաքապետն եւ այլազգի դռնապանք գրգռէին զնա լինիլ ամբաստան եւ մտանել 'ի դատ, այլ նա արար պատասխանի թէ՝ չէք խռովութիւն 'ի միջի մերում, բազում անգամ պատահեալ է այսպիսի դէպք, որոց համբերեալ են Հայք, այժմ Լատինք դադարեալ են սակաւ ինչ այնպիսի եղեռնութեանց. զի փոյթ միաբանացն Հայոց էր պաշտպանութիւն իրաւանց և ժառանգութեան ազգին՝ եւ ոչ յափշտակելոյ զայլոցն, զի թմրութիւն եւ տարտամութիւն միշտ զկորուստ գուշակեն. նմին իրի արտասուօք գրէր Պօղոս առ Զաքարիա, իբր 'ի կաթսայ եռանդեան, զի վիշտն 'ի վեր քան զկար մարդոյ էր, և եթէ չլինէր օգնութիւն, ընդունայն էր ճիգն երկուց կողմանց, զի ստացան զանուն պարծանաց և յամենայն ուրեք հընչակեցաւ, և ուրախ եղեն ընդ երկնաձիր պարգեւս Տեառն։ Ուրեմն պարտ էր ջանալ վասն հրովարտակին, զի մի ուրախութիւնն 'ի սուգ դարձցի. չեղեւ ինչ այլոց վնաս՝ զի զոր ինչ ունէին, զնոյնս ունին դարձեալ անթերի. զի՞նչ վնաս եթէ Հայք ևս կատարեսցեն զպաշտամունս իւրեանց, որք այնքան զծախս և զծանրութիւնս բառնային։ Տրտունջ հատան ազգայինք՝ իբր թէ միաբանք դիտմամբ յարուցանեն զվէճս, և թէ խարդախութիւն և անհամաձայնութիւն

տիրեալ է 'ի միջի նոցա. լուեալ զայսոսիկ Պօղոսի՝ բարիս մաղթէր այնպիսեաց զի ոչ գիտէին զոր խօսէին, և քաջալերական բանիւք յորդորէր զՋաքարիա վարդապետ լինիլ անյողդողդ եւ չվշտանալ 'ի բանից և 'ի գործոց ոմանց, այլ ստանալ զսիրտ արիութեան, եւ մի լքանիլ՝ զի գիտեմք ասէ՝ թէ ո՞ւմ ծառայեմք և վասն ո՞յր ճգնիմք. զի եթէ յուսաբեկ լինել հարկ էր, կարգն իմ է ասէ. այսպէս երբեմն նա քաջալերէր զսա տոկալ ամենայն վշտաց, եւ երբեմն սա զնա, զի տանջանք և նեղութիւնք որ վասն Ս. Տեղեաց և Ս. Աթոռոյն էր՝ փառս համարէին ինքեանց։ Ապա բազմիցս յորդորէր զնա զսահմանեալ տուրս մարդաթուի վասն հատուցման երկրորդ բաժնի պարտուց, զոր կիսով չափ վճարեալ էր. զի մի 'ի ժամանակին պաշարեսցի 'ի նեղութեանց և 'ի զղջանաց պարտատերց. զի չունէր ակնկալութիւն յուսաբէ՝ եւ գոյք եկեղեցւոյ և վանաց սպառեալ էին, ուստի հարկ էր ծանուցանել գվաստրաց աղքին։

Ի գիմել ուխտաւորաց յԵրուսաղէմ 'ի ճանապարհի տեղիս տեղիս բռնաւորք ոմանք պահանջէին և գրեթէ բռնի կորզէին 'ի նոցանէ զՀաքար անուանեալ տուրս, յորոց հասանէր ուխտաւորաց բազմադիմի վիշտ և զրկանք։ Թէպէտ բազում անգամ հանեալ էին հրովարտակ 'ի բառնալ զայսպիսի բռնապահանջ հարկս, այլ նոքա 'ի բազում տեղիս ոչ անասային հրամանին, որոյ վասն Պօղոս և Զաքարիա բազում աշխատութեամբ հանին հրովարտակ արքունուստ և առաքեալ յամենայն քաղաքս և 'ի պատշաճաւոր տեղիս՝ եւուն զայն արձանագրեալ առեալ Իլամ 'ի Դատաւորաց, որով խսպառ բարձաւ Հաքար կոչեցեալ տուրքն 'ի դիւրութիւն ուխտաւորաց։ Բարձին նաեւ զ5000 դահեկան տուրքն զոր պահանջէին Դատաւորք Երուսաղէմի՝ 'ի լրման ժամանակի իւրեանց՝ իբր ծախս ճանապարհի ինքանել 'ի Յոպպէ։ Սովորութիւն էր Կուսակալին Դամասկոսի 'ի գալստեան նորին յԵրուսաղէմ, և գլխաւոր այլազգեաց Երուսաղէմի առնուլ իւրաքանչիւր ամի 'ի վանօրէից ըստ ծանրագին ծրարս ագանելեաց, որպիսիք էին՝ մուշտակ, հանդերձեղէն, կոշիկ, մինչեւ ուել եւ դրդալ եւ զայլ կարասիս. և զայսոսիկ վանականք տային բերել ամ յամէ

'ի Կոստանդինուպօլսոյ և բաժանել նոցա. զի եթէ արատ ինչ տեսանէին 'ի նոսա, դարձուցանէին յետս և խնդրէին զկրկնապատիկ գին նոցին. իսկ յորժամ փակեցան ծովային ճանապարհք յերեսաց պատերազմաց եւ խռովութեանց ժամանակին՝ և դադարեցան նաւք ուխտաւորաց, փոխանակ ընծայից առնուին դրամս, և 'ի բանալ ճանապարհաց վերստին դարձան յառաջին սովորութիւնս, և Պօղոս արդեալ զայս հրամանաւ Արքային, և ժամանակ ինչ 'ի տեղի ընծայից որ խափանեալ էր՝ ետ դրամս, և ապա տակաւ առ տակաւ նուազեցաւ և այն, այլ ոչ խսպառ բարձեալ անհետ եղեւ։

Յաւուրց անտի Պատրիարքութեան Թէոդորոսի երեւելի հանդիսանայր յարաբերութեամբ իւրով ընդ վանականս Զմիւռնացի Պ. Մուրատ Յարութիւնեան 'ի բնակչաց քաղաքին Երուսաղէմի. իսկ յետ մահուան Թէոդորոսի առաւել մտերմանայ ընդ Խորհրդականս Սրբոյ Աթոռոյն և 'ի հարկաւորեալ դէպս իւրովք խորհրդովք ձեռնտու և օգնական լինի յամենայն կարեւոր գործս վանաց. մանաւանդ շնորհին հայրենակցին իւրոյ Պօղոս Պէյի Եուսուֆեան՝ հասանելով 'ի պաշտօն Հիւպատոսութեան Սարտինեայ և Նարոլիթանի՝ և եւս ճոխացաւ աղքեցութեամբ և պատուով։

Պօղոս Պատրիարք Ադրիանուպօլսեցի, ըստ բնատուր շնորհաց իւրոց՝ գիտաց զբարեպաշտ ազգասիրութիւն Պ. Մուրատայ յօգուտ Ս. Աթոռոյն 'ի կիր առնուլ և 'ի կենդանութեանն յաւերժական յիշատակաւք եւ կտակաւ պանծալիս կացուցանել զանուն նորին։ Այսոքիկ են կըտակաւ աւանդեալքն 'ի Պ. Մուրատայ Սուրբ Աթոռոյս, 1°.—Տուն մի 'ի շրջապատս փոքրիկ գետնով, 'ի գիւղն Բեթղեհէմի. 2°.—Մեծ պարտէզ մի արտաքոյ քաղաքին Յոպպէի գեղեցկակերտ տամբք, ջրհորովք, անկովք եւ ընդարձակ գետնով (*). 3°.—Արտաքոյ քաղաքին Յոպպէի գերեզմանատունն Հայոց, նոյնպէս ընդարձակ պարտիզեաւ

(*) Այս պարտեզ ակն արդիւնաւորելոյ՝ Զմիւռնացի Տ. Յովհաննէս Պատրիարք Իոդիոդով օրինաւ փոխանակեաց յԵրուսաղէմ տանց և կրպակաց։

և ծառատնկովք. ԿՀ.—Եւս մի տուն 'ի քաղաքին Ցոպպէի, որ ցարդ ՀՐԱՆԿ դուռն կոչի յօտարաց։

Իսկ աստուածասէր և բարեպաշտուհի համեստ տիկին նորին Հեղինէ, դուստր Պատուական Գէորգեայ, ոչ ինչ ընդհատ երեւեցաւ յառաքինական շաւիղս բարեգործ լծակցին իւրոյ 'ի կենդանութեան իւրում, տալով չինել մշանշենաւոր յիշատակ հոգւոց իւրեանց եւ նախնեացն 'ի տաճարն Ս. Ցակոբայ մեծի Առաքելոյն, մարգարտայեռ և գոհարազարդ եպիսկոպոսական պատուական թագն եւ վկաան, և մեծագին խաչն ձեռաց, և զայլ ձեռագործ աշխատութիւնս, այլովքն հանդերձ, որոց յիշատակքն և կատակ միշտ և հանապազ օրհնութեամբ եղիցին։

Ի սմին ժամանակի Քաղաքապետն կալաւ զերկուս Ֆէլլահս 'ի գեղջէ Ղազարոսի պատճառաւ իւիք և եդ 'ի բանտի, և 'ի գիշերին յայնմիկ գիւղականք նոցին քակեցին զորմն եկեղեցւոյն գերեզմանի Ս. Աստուածածնի 'ի ձորն Գեթսէմանի, և հանին անտի քարինս աւելի քան զ20 և խախտեցին 'ի տեղւոջէն զդուռն երկաթի, այլ ոչ մտին 'ի ներքս, և այնպէս մեկնեցան անտի. և ընդ առաւօտն եղեւ քննութիւն, և Քաղաքապետն խոստանայր տալ չինել զոր քակեցին Ֆէլլահք, այլ յայտ է թէ քանի ծանրանալ ունէր նա վանօրէից. նմին իրի տաղտկացեալ Պօղոսի յերեսաց այսպիսեաց ասէր՝ թէ ոչ է արժան կալ մնալ անդ՝ ուր իշխողք ոչ կարեն 'ի գործ դնել զօրինաւոր իշխանութիւնս իւրեանց։ Իսկ Փոխանորդ Զաքարիա վարդապետ զհետ պնդեալ էր որսի մտօք լինիլ բաժանորդ ընդ Ցունաց 'ի Գողգոթայ 'ի տեղի Խաչելութեան Փրկչին, որոյ վասն խնդրէր յերուսաղէմ զդաշնագիրն Սալահատտինի, զի 'ի ժամանակս նորին 'ի ձեռս Հայոց էր սրբավայրն այն. թէպէտ Պօղոս Եպիսկոպոս եցոյց նմա դիւրին ճանապարհ առանց այնր կատարել ըզգործն, զի Արքայն Մահմուտ ՌՉՉԸ թուին հրովարտակաւ բաժանորդութեամբ վայելել սահմանեալ էր զՍ. Տեղիս, այլ Զաքարիա յեցեալ 'ի բանս դաշնագրոյն՝ մատոյց գիր աղաչանաց առ Արքայ, և խնդրեաց տալ հրովարտակ հաւասար բաժանորդութեան Գողգոթայի տեղւոյն ընդ Ցունաց, և 'ի պատճառէ խմբէջ բարկացեալ Արքայի հրամայեաց տարադրել զԶաքարիա 'ի Կիպրոս կղզին յաքսորս։

Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի, որ չրջէր 'ի կողմանս Եալովայի սակս ժողովելոյ զսահմանեալ ողորմութիւնս ազգին, եռուն բերել զնա Իշխանաւորք և եդին 'ի տեղի Զաքարիա վարդապետի իբր Փոխանորդ, և նա մեկնեցաւ 'ի Թադաւորեալ քաղաքէ 'ի սահմանեալ տեղի (1830. յ3 Մարտի)։ Առաքեաց Պօղոս Եպիսկոպոս զՑակոբ վարդապետ Զանկրցի 'ի Շամ Թարապուլուս՝ որոնել անդ զՅիսթենիս Ս. Աթոռոյն, որ և նա էառ տեղեկութիւն 'ի Լիւսդրացի Ցակոբայ, և գիր յանձնարարական, այլ չչահեցաւ ինչ՝ զի տիրեալ էին օտարք այնց ձիթենեաց, եւ տեղիքն անյայտ եւ կորուսեալ։

Մինչ բացան ճանապարհք ուխտաւորաց և ամ ըստ ամէ յաւելոյր թիւ նոցա, Կարապետ Պատրիարք և Ամիրայք ժողովեցան 'ի Պատրիարքարանի ('ի 10 Հոկտեմբերի), ուր զկնի բազում բանից և վիճմանց 'ի վերայ եւ մասից Աթոռոյն՝ սահմանեցին 'ի ժողովի անդ գրել եւ խնդրել 'ի Պօղոս Արք Եպիսկոպոսէ զի փութացուսցէ զսուտմար արդեանց եւ ծախուց Աթոռոյն ըստ ամենայն մասանց որոշ որոշ, զարդիւնս Ս. Ցակոբայ, Ս. Ցարութեան, արտաքին վանօրէից, Կոնդակադրամ, Նուիրակաց՝ 'ի վիճակս ժողովեալ ողորմութեանց սակս պարտուց, և ըզգինս 'ի գանձարանէ Աթոռոյն վճառեալ իրաց, այլովքն հանդերձ, մի առ մի օրինակել 'ի մայր տուսմարէ. նոյնպէս և զծախուցն, որ ինչ տուեալ են Բդեշխին, Քաղաքապետին, Դատաւորին և այլոց, և որքան բաժնիւ պարտս վճարեալ են, և զայլ արտաքին և զներքին ծախս Աթոռոյն. զայս ամենայն գրել եւ հաստատել կնքով Պօղոս Եպիսկոպոսի և Խորհրդականաց, և առաքել 'ի ձեռն խոհեմ եւ հաւատարիմ վարդապետի ումեմն, զի կարող լիցի տալ պատասխանի հարցմանց նոցին, և լուծանել զտարակուսելի խնդիրս, ըստ այսմ առնել եւ յիւրաքանչիւր տարիս զկնի Զատկին։ Զի եթէ ազգին է ասեն Աթոռն և նոքա բառնան զծանրութիւն հոգոց նորին, արժան է գիտել զարդիւնս և զծախս և զայլ ամենայն պարագայս նորին։ Որոշեցաւ նաեւ 'ի ժողովի անդ պատուիրել՝ զի այլ ևս մի առաքեսցեն Նուիրակունս յարտաքին գաւառս,

մինչեւ տնօրինեսցեն զարժանն եւ ծանուցեսցեն ինքեանց, զի հանգիցեն ժողովուրդք սակաւ ինչ. յայս գիր ձեռնարկեալ կնքեցին նա ինքն Կարապետ Պատրիարք և 15 գԼԸ խաւոր Ամիրայք, (1830. յ30 Հոկտեմբերի)։

ԳԼՈՒԽ ԵԱ.

Ազգի դռնապանք Ս. Յարութեան։ Կալուածք վանօրէից։ Անելութիւն Յունաց 'ի Բեթղեհեմ։ Զարարիա վարդապետ Փոխանորդ Յերուսաղէմ։ Ուղեւորիլ Նորին Այնմիածին։ Բանալի երկոքեանց դրան Բեթղեհեմի։ Շինութիւն Վերնատան. Զարժարան, Տպարան, Երկրաշարժ, այլոքն հանգերձ։

Ազգի դռնապանք Տաճարին Ս. Յարութեան զմի փեղկն արտաքին դրան միայն բանային. զայս սահմանեալ էր նա ինքն Սալահատտին 'ի նախատինս Քրիստոնէից 'ի տիրել Նորին Երուսաղէմի, որպէս ասեն՝ 'ի ժամանակս ուխտաւորաց և յաւուրս հանդիսի Տօնից չնչային ժողովուրդք զերծ 'ի վտանգէ յելանելն եւ 'ի մտանելն անդ՝ մանաւանդ կանայք և մանկունք, որոյ վասն Հայք եւ Յոյնք եռուն գրել 'ի ձեռն Դատաւորի քաղաքին 'ի Դուռն, զի հրամանաւ Արքայի բացցեն երկու փեղկ դրան 'ի կարեւոր ժամանակս (1831)։ Սակայն ոչ ժամանեաց այն հրաման; մինչեւ տիրեաց Պաղեստինոյ Փոխ Արքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, և որդի նորա Իպրահիմ Փաշա եւ բանալ զայն։ Սուլթան Սէլիմ առաջին՝ 'ի տիրելն Երուսաղէմի սահմանեալ էր, զի իւրաքանչիւր ուխտաւոր 'ի մտանելն 'ի Ս. Յարութիւն տացէ մի փարայ այլազգի դռնապանաց. իսկ ոմանք Արքունի գործակալաց հնարիւք հանեալ հրովարտակ յաւշտակեցին զպաշտօն դռնապանութեան, և պահանջէին աւելի քան զսահմանեալն, եւ բռնացեալ 'ի վերայ վանօրէից՝ խնդրէին զպէս պէս պարգեւս, և բարձաւ այս 1078, 'ի 10 Մուհարրէմի հրովարտակաւ։ Եւ յետ այսորիկ ընկալան զպաշտօն դռնապանութեան վերատեսուչք կալուածոց Խասեքի Սուլթանի՝ և այլազգի գիտնականք որք ընթեռնուին զկուրանն 'ի

մզկիթն Օմարայ վասն հոգւոյ Սուլթանին, եւ թոշակս առնուին յարդեանց դռնապանութեան տաճարին։ Սոքա եւս եղծին զառաջին սահմանն, զի յիւրաքանչիւր յամիսս խնդրէին 30 դահեկան, եւ 'ի տարեգլուխն գումար ինչ դին զգեստու և չուխայի, և յոչ տալն ոչ բանային ըզդուռն եւ տային Քրիստոնէից զպէս պէս նեղութիւնս. և այս եւս բարձաւ 1150. 'ի 1 Բէպիլ էվվէլ հրովարտակաւ։ Եւ 'ի սոյն աւուրս վերատին մուացեալ այլազգեաց զայն ամենայն, սկսան բռնանալ 'ի վերայ քրիստոնէից, եւ յաւուրս հանդիսից եկեալ բազմութեամբ նստէին 'ի դուռն, եւ բաց 'ի սահմանեալ թոշակաց պահանջէին մեղրամոմս, և 'ի տօնի Զատկին զմեծամեծ ընծայս եւ զայլ իրս, և այսպէս պատճառանօք ծանրանային 'ի վերայ քրիստոնէից, և 'ի ծանուցանել Խորհրդականաց գԼԸ խաւորաց ազգին յաւուրս Ստեփաննոս Պատրիարքի՝ նորոգեցաւ հրովարտակն եւ բարձան անկարգութիւնք այլազգեաց սակաւ ինչ, 1245։

Սուլթան Մահմուտ Արքայ խնդրեաց զտուփարս կալուածոց (վագֆ) ամենայն քրիստոնէից, ընդ որս և Հայոց և Երուսաղէմի, զի գործողութիւնք և դարձուածք նոցին լիցին 'ի ձեռն Վերատեսչի կալուածոց Տէրութեան (Էվգաֆ Նազրի), այլ 'ի խնդրանաց Պէղճեան Յարութիւն Ամիրայի և այլ գլխաւորաց ազգին վերատին չնորհեաց զայն Արքայ, այնու պայմանաւ զի 'ի տարւոջ միանգամ քննեսցին տուփարք կալուածոց 'ի Դուռն 'ի ձեռն Վերատեսչին. այսպէս զերծան 'ի վտանգէ կալուածք եկեղեցեաց և վանօրէից, ընդ որս Հայոց և Երուսաղէմի (1832. 'ի 12 Փետրվարի)։ Տուաւ հրովարտակ արքունական ըստ մտաց Հէֆզէթին և Իլամի Դատաւորին վասն հաւասար բաժանորդութեան և պատարագելոյ Հայոց 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի 1245 'ի 10 Բէպիլ էվվէլ ամսոյ, որով հանդարտեցան միաբ Խորհրդականաց և միաբանաց, և բարձաւ խսպառ կաղ և կոիւ 'ի Տաճարէ անտի։

Այլ յեկեղեցին Բեթղեհէմի անպակաս էր ընդ Յունաց խաւսութիւնն և վէճն. զի 'ի ժամանակին յայնմիկ միաբանք Հայոց թէպէտեւ կրեցին զրազմադիմի չարչարանս և զնեղութիւնս 'ի Նենգութենէ Դատաւորաց՝ զորոց եր-

կար գրեցաք, այլ իշՀ ուրախութեան ոչ ետ ճանաչել նոցա բովանդակապէս զբարս Յունաց, և ոչ կարացին լի ու լի յագեցուցանել զաղահութիւնս զրկողաց· զի Դատաւորք և աւագանիք քաղաքին յաւէտ 'ի գանձս Յունաց հայէին քան յիրաւունս ազգի և հրամանի Արքային· Նմին իրի յօրէ յայնմանէ ոչ պահեցան օրէնք և կարգ բաժանորդութեան, այլ անվերջանալի վէճ և խռովութիւն, որ տեւեաց և տեւէ ցարդ, զի այնքան բռնացան Յոյնք 'ի վերայ Հայոց մինչեւ չթողուլ կախել վարագոյր 'ի խորանս, և առնել զայլ կարեւոր իրս 'ի բաժնի իւրեանց, եւ չթողուլ բանալ զպատուհանս և աւել ածել, և 'ի սմին ամի գանեցին զլուսարարն Հայոց 'ի մաքրելն զեկեղեցին ըստ սովորութեան· ազգ արարին նոցա չլինիլ առիթ խռովութեան եւ ՀԱասու, զի չէր աւելածութիւնն նորասահման ինչ· այլ նոքա մերժեցին թէ չիք ձեր սովորութիւն աւել ածելոյ անդ· Հայք ծանուցին զիրսն Դպրապետի դատարանի՝ և նա ծանոյց նոցա զիրաւունս բաժանորդութեան, այլ նոքա ոչ երբէք զիջան 'ի բանս նորա և ոչ կամէին զմաքրելն Հայոց զտեղին զայն, և սպառնային գրել 'ի Կոստանդինուպոլիս։

Դարձեալ անտի Դպրապետին քաջալերէր զՀայս աւել ածել և սրբել՝ և առնել զամենայն ինչ որպէս եւ նոքա ըստ իրաւանց բաժանորդութեան· թէպէտ կամէին Հայք խսպառ բառնալ զհետս խռովութեան օրինօք դատարանի, և 'ի լրումն ածել զթերի մնացեալն, սակայն բազում ծախուց և աշխատութեանց պէտս ունէր, վասն որոյ ծանուցին Աղգապետաց 'ի Կոստանդինուպոլիս վերստին առնուլ հրովարտակ վասն եկեղեցւոյն Բեթղեհէմի, զի ազատեսցին 'ի բռնութենէ Յունաց· և այս լինի յաւէտ յորժամ իւրաքանչիւր դրանց լիցի զոյգ բանալի՝ մին Հայոց և մին Յունաց, և յեկեղեցին և յԱյրին հաւասար նոցա ունիլ կանթեղս, պատկերս և զայլ ամենայն զարդս, զի յայտնի լիցի թէ բաժանորդ են Հայք 'ի նոյն տեղւոջ, ապա թէ ոչ յաւիտեան տեւէ խռովութիւնն։ Խնդրեցին հրովարտակ արքունուստ վասն նորոգութեան Ս· Յակոբայ, Ծննդեան և այլ վանօրէից· զի չէր հնար առանց հրամանի դնել քար 'ի վերայ քարի· մանաւանդ վասն չի-

նելոյ և նորոգելոյ զբաժին տեղիս 'ի տաճարին Ս· Յարութեան, զի որպէս Տէրութիւնն յայնժամ Յունաց չնորհեաց զՀրաման նորոգութեան, գուցէ և այժմ չնորհեսցէ Հայոց Ջանիւք Ազգապետաց, զի կարի նեղեալ էին 'ի բռնութենէ Յունաց, առաւել 'ի տուգանաց, զի անմարթ էր բեւեռ ինչ հարկանել 'ի տեղի ուրեք· որպէս խորտակեցին ըստմարմարիոն քարն զոր եդին 'ի տեղի Ուժաթափման Սուրբ Աստուածածնի 'ի յիշատակ 36 անձանց Ծովմոյն եղելոց, (1832· 'ի 23 Օգոստոսի)։ Իպրահիմ Փաշա որդի Մեհէմմէտ Ալեայ Փոխարքային Եգիպտոսի պաշարեաց զքաղաքն Աքքէ և ետ պատերազմ ընդ Ապտուլլահ Փաշայի, եւ առեալ զքաղաքն եհաս մինչեւ 'ի կողմանս Կուտինայի։

Իսկ Զաքարիա վարդապետ եկեալ Յերուսաղէմ կարգեցաւ Փոխանորդ Աթոռոյն։

Գաբրիէլ Պատրիարք Երուսաղէմի որ Նստէր տակաւին 'ի Զմիւռնի քաղաք, գրեաց առանձին 'ի Կոստանդինուպոլիս առ Յարութիւն Ամիրայ Պէզճեան, խնդրելով 'ի Նմանէ դարձուցանել զինքն յԵրուսաղէմ յԱթոռն, այլ նա խորհրդաբար արար նմա պատասխանի թէ՝ անօրէնութիւն այդպիսի գործոց անկանի Պատրիարքին և ընդ հանուր ժողովոյ ազգին, և չէր օրէն անձամբ անձին անօրինել զայդպիսի խնդիր առանց գիտութեան և հաւանութեան նոցին։ ուստի պատուիրէ նմա գրել զերիս գիրս, որպէս գրեալ էր առ նա ծածկաբար, առ Պատրիարքն, առ ժողովս Ամիրայից և առ նոյն ինքն Ճանիկ Ամիրայ, բացայայտ ծանուցանելով 'ի նոսին զխնդիր ճանապարհորդելոյ իւրոյ յԵրուսաղէմ, ոչինչ յիշատակելով զառաջին Նամակէն· յայնժամ և մեք ասէ ջանացուք ըստ բարեխորհուրդ կամաց նոցին անօրինել զբարին 'ի մխիթարութիւն եւ 'ի սփոփանս ծերութեան ձերոյ։

Ուղեւորեցան 'ի Ս· Էջմիածին Զաքարիա եւ Աբրահամ վարդապետք 'ի ձեռնադրիլ Եպիսկոպոս, և 'ի ճանապարհի պատահեցաւ Աբրահամու հիւանդութիւն կաթուածոյ, յորմէ ծանրացաւ լեզու նորա և խօսէր կապկապելով, և ոչ կարէր համարձակ շարժել զաջ ձեռն իւր· իբրեւ հասին յԷջմիածին, Յովհաննէս կաթուղիկոս Կարբեցի, որ նստաւ յԱթոռ Հայրապետութեան Հայոց (1831), առաքեաց զնա

յԵրեւան առ հայազգի ճարտար բժիշկս 'ի դարմանել զնա։ Ապա ձեռնադրեաց զՋաքարիա վարդապետ մեծաշուք հանդիսիւ յառաջման Եպիսկոպոսութեան յաւուր տօնի Պայծառակերպութեան Տեառն (1833 · յ9 Յուլիսի), եւ պատուեաց զնա բաց կապոյտ ծաղկեայ փիլոնաւ, և վերադարձոյց յԱթոռն Երուսաղէմի, խոստացեալ ձեռնադրել և զԱբրահամ յառողջանալն։ Գրեալ էին առ նա Խորհրդականք Աթոռոյն, յետ ձեռնադրելոյ զԱբրահամ առաքել 'ի Տփղիս 'ի գործ Նուիրակութեան, այլ Յովհաննէս Կաթուղիկոս յայտ արար նոցա զդժուարութիւն գործոյն, զի առանց հրամանի Կուսակալին Վրաստանի ոչ էր կարելի, որպէս գիտէին զայն առաջին Նուիրակունք Երուսաղէմի, որ միայն արտաքոյ վիճակի նորին շրջեցան, և անկարելի եղեւ նուիրակել 'ի քաղաքին, և Մինաս Եպիսկոպոս Նուիրակն էջմիածնի նստեալ անդ սպասէր վասն այսր գործոյ, եւ թէպէտ խոստանայր ցրել զդժուարութիւնն յօգուտ Ս. Աթոռոյն։ Ընդ կոնդակին իւրոյ առաքեաց և զպատմէն երդմնագրի Զաքարիա Եպիսկոպոսի, յոր յաւելեալ են յետոյ զԱիս և զԱխթամար հանդերձ և հեռաբեալ բառս։ Եւ Աբրահամ վարդապետ ձեռնադրեցաւ ապա Եպիսկոպոս եւ հասեալ յԵրուսաղէմ վախճանեցաւ նովին հիւանդութեամբ։

Իպրահիմ Փաշա յետ տիրելոյ Գազայի, Յոպպէի և այլոց տեղեաց՝ դէմ եդ ելանել յԵրուսաղէմ եւ հասեալ 'ի կիրճն, որ ըստ Արաբացւոց ասի Պոդ էլ Վադ, վտանգեցաւ յոյժ, զի կալեալ էին զայն Արաբացիք, և կոտորեցան բազումք 'ի զօրաց նորա, և ապա ցրուեալ զնոսա եմուտ յԵրուսաղէմ։ Յովհաննէս վարդապետ Փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի 'ի Կոստանդինուպօլիս, ակնարկութեամբ Պէզճեան Յարութիւն, Բիշմիշեան Միքայէլ եւ Ճանիկ Սմիրայից՝ ձեռնարկ և չինեաց զՓոխանորդարանն անդ, որ ասի Տուն Երուսաղէմ · տես ոտանաւոր յիշատակարանն անդ, որոյ սկիզբն է, «Յոդ գթութեան Փրկչին խնամոց»։ Հաճութեամբ գլխաւորաց ազգին դարձաւ Գաբրիէլ Պատրիարք յԵրուսաղէմ յԱթոռն իւր (1834 · 'ի 19 Օգոստոսի)։

Յոյնք ձգեցին կամար յեկեղեցին Բեթղեհէմի 'ի հիւսիսային կողմն 'ի վերայ խորանին Հայոց և կամէին շինել

'ի վերայ նորա սենեակ Լուսարարի, այլ Հայք ընդդէմ կացեալ եւուն քակել և խափանել զայն ('ի 13 Դեկտեմբերի)։ Անկարելի եղեւ բառնալ զատելութիւնս Յունաց որ և իցէ եղանակաւ, քանզի բանալի արտաքին դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլով 'ի ձեռս նոցա, ըստ սովորելոյ իւրեանց բանային և փակէին, և 'ի գալստեան ուխտաւորացն Հայոց հասուցանէին նոցա զպէսպէս նեղութիւնս և հանէին աղմուկս։ Իսկ փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի Զաքարիա Եպիսկոպոս գրեաց գիր աղաչանաց առ Փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի, եւ խնդրեաց 'ի նմանէ ըստ իրաւանց բաժանորդութեան, որ լեալ էր կայսերական հրովարտակաւ, տացի եւ մի բանալի դրան այնորիկ ազգին Հայոց։ Թէպէտ գրեաց նա առ Դատաւորն Երուսաղէմի քննել զիրսն, եթէ ստոյգ իցէ բաժանորդութիւնն Հայոց տեղւոյն այնորիկ՝ տացի և մի բանալի եւս նոցա, բայց այս հրաման նորին ոչ գործադրեցաւ, ՌՄԷՁ։

Հայք առին հրաման 'ի Փոխարքայէն Եգիպտոսի սակս ծեփելոյ զեկեղեցին Ս. Յակոբայ և չինելոյ զՎերնատունն կանանց։ Թէպէտեւ լուեալ էին յայնժամ այլազգիք Երուսաղէմի և չհամարձակէին պահանջել ինչ, այլ 'ի զգուշութիւն ապագայ ժամանակի, խնդրեցին նաեւ հրովարտակ յԱրքայէ։ Եւ Զաքարիա Եպիսկոպոս որ վերատեսուչն էր շինուածոց ('ի 1 Մայիսի) սկիզբն արար քակել զորմն եկեղեցւոյն և բանալ զմէջ կամարաց։ Ելին յորմոյ անոր մեծամեծ խաչքարք հայկական գրով, է՛ որ կանգուն և կէս բարձրութեամբ՝ և է՛ որ կիսով չափ նոցին, և 'ի կեդրոնի իւրաքանչիւրոց մնեալ հատ բեւեռ պղնձեայ, 'ի նշան հին սովորութեան ազգին, որոց թուականն ոմանց 600 և ոմանց 602 թուին Հայոց։

Կիրակոս Եպիսկոպոս առաքեցաւ 'ի Յոպպէ ('ի 20 Յունիսի) որոշել զտեղի քառասնօրեայ զգուշութեան (քարանթին) 'ի պէտս ուխտաւորաց, որոշեցաւ տեղին պարտէզն Սեղբոս Սմիրայի, զոր կտակեալ էր Աթոռոյն, և հրամանաւ Փոխարքային Եգիպտոսի չինեցաւ տեղին ծախիւք Ս. Աթոռոյն (1835)։ Շինեալ աւարտեցաւ վերնատունն մեծամեծ պատուհանօք եւ 2 պատարագամատոյց սեղանաւ 'ի վերայ դաւթի մեծի տաճարին Ս. Յակոբայ, ծեփեալ

պայծառացուցին զեկեղեցին ընդարձակելով զլուսամուտս նորին, ծածկեցին զպատուհանն ուղղահայեաց 'ի գըմբեթին, զի ապակեայ կանթեղաց ծածկեալ էր յառաջագոյն, և իջանէր ջուր յանձրեւի. արարին փոքր գմբեթ 'ի վերայ նորա, և ընդարձակեցին զեռ պատուհանս նորին, բարձրացուցին զկամարն ամպիոնին, շինեցին նաև զսենեակս Տորհրդականաց, որ կոչի Ս. Մինասի Բաղ՝ և քարիւ յատակեցին զարտաքին դաւիթ վանաց, և նորոգեցին զայլ կարեւոր տեղիս։ Բացին զպատուհանս ամենայն սենեկաց Բեթղեհէմի վանաց, և նորոգեցին զերիս սենեակս քայքայեալ 'ի շարժէն։ Մեփեալ սպիտակացուցին և զեկեղեցին Հրեշտակապետի, ընդարձակեցին զաւագ դուռն ըստ առաջին ձեւոյն, և զպատուհանսն։

Ի բողոքել Զաքարիա եպիսկոպոսի առ Փոխարքայն Եգիպտոսի վասն անկարգութեան այլազգի դռնապանաց Տաճարին Ս. Յարութեան անսատուելոյ հրամանի Արքային՝ գրեաց նա պատուէր առ Դատաւորն Երուսաղէմի, զի լիցին դռնապանք միայն անձինք 3 մնալ մշտնջենաւոր բանալեաց 'ի ձեռս նոցա։ Վասն պատարագի 7½, ուխտի 2, յաւուրս հանդիսաւոր տօնից 39 դահեկան առնուլ 'ի քրիստոնէից և բանալ զդուռն։ Ի ժամանակի բազմութեան բանալ զերկու փէղս, բաց 'ի սահմանեալ իրաւանց չպահանջել 'ի վանօրէից պարգեւս և զայլ նորանոր իրս, և 'ի պատուի ունել զուխտաւորս քրիստոնէից։

Ի պատահիլ երկրաշարժի յԵրուսաղէմ խախտեցան բազում եկեղեցիք և այլ հոյակապ շինուածք. անկաւ և գըմբեթն որ 'ի վերայ ոտնատեղւոյն Հմբարձման Տեառն մերոյ 'ի լեառն Ձիթենեաց։ Լատինք խնդրէին հրաման 'ի Դատաւորէն շինել զայն ըստ առաջին ձեւոյն, Հայք ունելով զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ, ընդդէմ կացեալ նոցա Ջանային ինքեանք շինել զայն, և մինչդեռ վիճէին երկու ազգք, յարեան և Յոյնք եւ խնդրէին լինել բաժանորդ շինութեանն։ Լատինք մատուցին 'ի ժողովի անդ Հէօճճէթ գրեալ ՌԼԹ. թուէն, յորում էր հրաման 'ի տարւոջ միանգամ պատարագել նոցա 'ի ներքոյ գմբեթին, զի այլ Քրիստոնեայք պատարագէին 'ի դաւթի անդ 'ի ներքոյ վրանի՝ 'ի վերայ իւրաքանչիւր սեղանի իւրոյ, և 'ի սաստ-

կանալ վիճմանց և հակառակութեանց՝ հրաման ետ Դատաւորն երից ազգաց 'ի միասին շինել, և բաժանորդութեամբ վճարել զծախսն, և մնալ դարձեալ ըստ առաջին սովորութեան. թէպէտ Հայք ընդդիմացան բազմօք այսմ դատաստանի, զի կորուսին զառաջին իրաւունս իւրեանց, այլ անմարթ էր յայնժամ շրջել զմիաս Դատաւորին։ Եւ զկնի շինութեան գմբեթին տուաւ երից ազգաց Հայոց, Յունաց Լատինաց մի մի բանալի, և Դատաւորն գրեաց գիր հաստատութեան և բարձաւ վէճն ՌՀԵ.։

Այլ վասն նորոգութեան և շինութեան բաժնին Հայոց 'ի Տաճարին Ս. Յարութեան նեղեալ էին Հայք 'ի Յունաց, որպէս գրեցաք, զի զհրաման շինութեան ինքեան վերապահեալ էր Արքայ, և յառաջին նուագի Յունաց ետ զայն, որք ոչ շինեցին զտեղիս Հայոց, մանաւանդ թէ խանդարեցին և գողացան, և 'ի սմին ժամանակի խնդրեցին Հայք զայն հրաման շնորհել ինքեանց, որոյ վասն տուաւ հրովարտակ ՌՀԹ թուին, զի զբաժանորդ տեղիս շինեսցեն ընկերութեամբ և զսեփական տեղիս անկախութեամբ։

Եւ վասն փակեալ դրան Բեթղեհէմի Դատաւորք Երուսաղէմի 'ի սադրելոյ Լատինաց պէսպէս մեկնութիւնս տային առաջին հրովարտակին իբր անզօր, և երբեմն սպառնային բանալ զդուռն, որով լինէր ինքս մեծ Հայոց, և 'ի ծանուցանել զայսոսիկ Արքայի, տուաւ վերատին հրովարտակ ՌՀՌ թուին 'ի հաստատութիւն առաջնոյն, զի մի բացցի դուռն այն. և վասն շինութեան Համբարձման տեղւոյն ըստ մտաց հին վաւերական գրոց եւ Իլամի Դատաւորին Երուսաղէմի դարձեալ տուաւ հրովարտակ ՌՀՌ թուին. և 'ի հակառակիլ Լատինաց և Յունաց, դարձեալ տուին Հայք հրովարտակ ՌՀԲ թուին 'ի հաստատութիւն առաջնոյն։ Զայսոսիկ հրովարտակս առեալ Յովհաննու վարդապետի սատարութեամբ Սահիանոս Պատրիարքի և գըլխաւորաց ազգին առաքեաց յԵրուսաղէմ։

Եղիա եպիսկոպոս Եւդոկիացի մեկնեցաւ յԱթոռոյն, առեալ ընդ իւր Եւդոկիացի Յակոբ և Յովհաննէս և Կիսարացի Կարապետ վարդապետս, որք էին աշակերտք իւր, եւ 'ի Նաւէն 'ի Կոստանդինուպօլիս՝ վախճանեցաւ 'ի ճանապարհի, և աշակերտք նորին թաղեցին զնա 'ի կղզին

Միգուօզ 1835 · 'ի 5 Նոյեմբերի · Յովհաննէս վարդապետ միայն դարձաւ յԱթոռն, և յետ ժամանակաց եւս բերել զոսկերս Եղիայի և Թադեայ 'ի գերեզմանատան Ս· Փրկչի, 1848 · 'ի 4 Օգոստոսի ։

ԴԼՈՒԽ ԾԲ.

Առաքումն Կիրակոս Եպիսկոպոսի 'ի Կոստանդինուպոլիս ։ Հիմնարկութիւն Ճեմարանին ։ Գիր Ամիրայից առ Պօղոս Եպիսկոպոս ։ Պարոյր Փոխանորդին ։ Խնդիր Աստուծոյ ։ Սկիզբն շինութեան Համբարձման եկեղեցւոյն ։ Ընդդիմութիւն Յունաց և Լատինաց ։ Բացումն դրան Լատինաց 'ի Բեթղեհեմ ։ Ջանք Հայոց վասն շինուածոց Համբարձման ։ Հրովարտակք Լատինաց ։

ԾԱՑՐԱԳՈՅՆ Գործակալ Աթոռոյն Երուսաղէմի Պօղոս Եպիսկոպոս յետ կատարելոյ զտօն Ս· Պասեքին առաքեաց ընդ ուխտաւորս տարւոյն 'ի Կոստանդինուպոլիս զՏ· Կիրակոս Եպիսկոպոս՝ յաղագս կարեւոր գործոց Աթոռոյն, յանձն արարեալ նմա զտուսմար արդեանց և ծախուց վանաց, զորս բազում անգամ թախանձանօք խնդրեալ էին Ամիրայք, զկնի խսլաւ աղաւելոյ Աթոռոյն 'ի պարտուց, և բարեկարգելոյ զվիճակ միաբանութեան ։ Եհաս Կիրակոս 'ի Թագաւորեալ քաղաքն, եւ զորս 'ի համբաւոյ լուեալն էր իսկապէս ետես աչօք իւրովք զպայծառութիւն եկեղեցեաց, զբարեկարգութիւն դպրոցաց և զխոհական կառավարութիւնս նոցա, զհոգ և զխնամածութիւն հիւանդաց, աղքատաց և այլոց, որք չինեալ և հաստատեալ էին ազգասէր ջանիւք և աշխատութեամբ բարենախանձ ազգայնոց, ուրախ եղեւ յոյժ ։

Եւ քանզի իշխանաւորք ազգին երկնչին հանապազ 'ի միտս իւրեանց և փափաքանօք տենչային հաստատել ազգային ուսումնարան մեծ 'ի դաստիարակութիւն մանկտւոյն, զի մի յաճախեսցեն առ օտարս, եւ փոխանակ վարդապետութեան հայրենի եկեղեցւոյ, ուսանիցեն զդաւանութիւն օտարին և զայլ և այլ սովորութիւնս նոցին, որ 'ի սմին ժամանակի սկսեալ էր տարածանիլ։ Եւ յարդիւնս

ածել զայս խորհուրդ փրկարար՝ դումարեցան ամենեքեան առ Ստեփան Պատրիարք ('ի 26 Օգոստոսի, 1836), ուր գտաւ Կիրակոս Եպիսկոպոս եւ Փոխանորդ Յովհաննէս վարդապետն։ Եւ 'ի ժողովի ասա հաճութեամբ ամենեցուն սահմանեցաւ կառուցանել զՈւսումնարանն յիւսկիւսար՝ 'ի տեղի խարխալեալ վանաց Երուսաղէմի, ուսանիլ մանկանց նախ զդպրութիւն հայրենի լեզուի և զդաւանութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց, եւ ապա մարզիլ յայլ և այլ լեզուս և 'ի կարեւոր գիտութիւնս օտար ազգաց։

Զսի Ուսումնարանին սահմանեցաւ լինել 2500 կանգուն քառակուսի՝ կրկնայարկ եւ բազմասենեակ ամենայն պիտոյիւք · զրովանդակ ծախս տարեկան պիտոյից Ուսումնարանին յանձն առին Իշխանաւորք ինքեանք հոգալ, բայց զվնութեան ծախսն հանել յերուսաղէմէ, եւ յայլ երեւելի վանօրէից և յԱռաջնորդաց ըստ իւրաքանչիւր կարի, և զհակառակողսն դատեսցեն իրրեւ ոմերիմ թշնամի գիտութեան, և ընկեսցեն յԱթոռոյ՝ առաքելով զայլ ոք 'ի տեղի նոցա։

Ապա խնդրեցին նախ յերուսաղէմէ 'ի ձեռն Փոխանորդին 200,000 դահեկան, եւ առաքեցաւ Փոխանակագիրն յԵգիպտոս առ երեւելի վաճառական Ստեփանէ Զիշինեան, զի 'ի լրանալ պայմանաժամին, անթերի ուցէ զդումարն յԱթոռոյն։ Եւ յետ ամենայնի գրեցին Իշխանաւորք գիր բազմակնիք առ Պօղոս Եպիսկոպոս յերուսաղէմ վասն այսր խնդրոյ, գրեցին նաև առանձին առանձին Ստեփան Պատրիարք, Կիրակոս Եպիսկոպոս և Փոխանորդ Յովհաննէս վարդապետ, յորս ապաչանօք և բարեսէր մտօք յորդոր լինէին յարգել զորոշումն Ազգապետաց, և վաղ ընդ վոյթ վճարել զդումարն 'ի պայմանեալ ժամանակին 'ի սէր ազգին և 'ի յառաջադիմութիւն մանկանց եկեղեցւոյ։ Եւ զի առաւել եւս ջերմասցին սիրտք Ամիրայից 'ի վերայ Աթոռոյն՝ լինիլ խնամակալ, որ 'ի ձեռս նոցին կատարեցան և կատարին ամենայն գործք և խնդիրք նորին։ Գրիգոր և Յովհաննէս ճարտարապետք, թէպէտ եւ էին 'ի ժողովի ասա եւ կնքեալ զգիրն, այլ առանձին մտերմաբար իմն գրեցին առ Պօղոս, զարթուցանել զմիտս նորին 'ի գործադրութիւն խնդրոյն, յուշ ածեալ զրանս նորին, որ ասացեալ էր եր-

բեմն յաւուրս փոխանորդութեան իւրոյ 'ի խնճոյս 'ի տուն Ճարտարապետին 'ի Լանկայ, թէ 'ի լինել այնպիսի շահաւէտ Ուսումնարանի՝ խոստացեալ էր ինքնին անձամբ կալ պաշտպան նմին, և չխնայել բնաւ ոչ 'ի տուրս դրամոց և ոչ 'ի քրտունս աշխատութեան. ահա ասեն, եհաս ժամանակ լինել այնմ, և նպաստաւորութեամբ ձերով կանգնել յոտին, եթէ կայ անչէջ 'ի սրտի քում բոց տենչանացն այնորիկ։ Եւ զկնի սուղ աւուրց սկիզբն արարին բանալ զհիմունս Ուսումնարանին յիւսկիւտար 'ի տեղին որ կոչէր վանք Երուսաղէմի ('ի 18 Սեպտեմբերի)։

Ի սմին ժամանակի Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի՝ որ վարէր զպաշտօն Փոխանորդութեան Երուսաղէմի 'ի Կոստանդինուպոլիս, անկեալ էր ընդ պարտեօք աւելի քան զ100,000 դահեկանի, զորոյ զտոկոսն վճարէր ամ ըստ ամէ. զայն տեսեալ Կիրակոս Եպիսկոպոսի՝ աղաչէր զՊողոս բառնալ զայն լուծ 'ի պարանոցէ Նորին, զի վնաս մեծ էր այն Աթոռոյն, զի զի՞նչ օգուտ այնքան հոգ և աշխատութիւն 'ի վճարումն պարտուց, մինչդեռ աստ ասէ՝ արմատ ճգեալ ամէ և զօրանայ օր ըստ օրէ. և 'ի վերջոյ աղաչէ վճարել զպարտն, թերեւս յետոյ բարւոք տնօրէնութիւն ինչ արասցեն Ամիրայք վասն կառավարութեան Փոխանորդարանին Երուսաղէմի։

Սուլթան Մահմուտ Արքայ՝ յորժամ ետ հրովարտակ Կաթոլիկ անուանեալ ժողովրդոյ, գրեալ էր 'ի նմին Ասորւոց լինիլ հետեւակ Պապականաց. զայն լուեալ Կաթողիկոսին Ասորւոց՝ որ նստէր 'ի Տիգրանակերտ, գրեաց գիր աղաչանաց բազմակնիք առ Տէրութիւնն և առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս առ Պատրիարքն Հայոց, յորում յայտ առնէր թէ ինքեանք լեալ են կրօնակից և հետեւող ազգին Հայոց 'ի վաղ ժամանակաց, որպէս յայտնի տեսանի 'ի հրովարտակս Պատրիարքաց Երուսաղէմի, բայց Կաթոլիկք գոլով հակառակ ինքեանց՝ ստութեամբ խաբեալ են զՊուռն և առեալ հրովարտակ, զինիլ նովաւ ընդդէմ Ասորւոց և որսալ զժողովուրդն 'ի հնազանդութիւն Հռոմայ եկեղեցւոյն, և այս այպանելի ստութիւն յայտնի գոլով ամենեցուն՝ խնդրէր ջնջել զարձանագրութիւնս հրովարտակին այնմիկ՝ և շնորհել նոր հրաման ըստ առաջնոյն, և

ազատել զազգաս ազգն Ասորւոց 'ի բռնութենէ նոցին։ Եւ 'ի Դամասկոս զօրացեալ Պապականաց արկեալ էին 'ի բանտ զեպիսկոպոսունս Ասորւոց, և յազգ առնել Պողոսի Եպիսկոպոսի՝ գրեաց 'ի Կոստանդինուպոլիս վասն ազատութեան նոցին։ Ի հասանիլ այսոցիկ թղթոց, գրեաց և ինքն Ստեփաննոս Պատրիարք և յայտ արար զխնդիրս 'ի Դուռն եդեալ 'ի նմին եւ զազերսագիրն Կաթուղիկոսին Ասորւոց, եւ էառ նոր հրովարտակ վասն ազատութեան նոցին։

Ճարակումն ժանտախտին 'ի Կոստանդինուպոլիս և 'ի սահմանս նորա։

Զայսու ժամանակաւ անկեալ էր Երուսաղէմ ընդ իշխանութեամբ Եգիպտական Կառավարութեան, ուստի զառաջին հրովարտակն շինութեան Համբարձման տեղւոյն առաքեցաւ առ Փոխ Արքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի Փաշայ, և նա յետ վաւերելոյ զայն՝ գրեաց և ինքն հրաման առ Դատաւորս Երուսաղէմի, զի անարգել գործադրեսցեն զհրամանն։ Ի հասանիլ թղթոյն եղեւ ժողով 'ի դատարանին Երուսաղէմի, ուր էին կղերք Հայոց, Յունաց և Լատինաց, և ընթերցան 'ի լուր ամենեցուն զհրովարտակն և զհրաման Փոխ Արքային, և հրաման ետուն Հայոց սկիզբն առնել շինութեան, և առեալ զլիսկանս տեղւոյն 'ի ձեռաց Յունաց և Լատինաց և ետուն ցՀայս, և պատուիրեցին չհակառակիլ նոցա։ Իսկ Պողոս Եպիսկոպոս կացոյց վերատեսուչ 'ի վերայ գործոյն զԳաղատացի Իսահակ վարդապետ Տ. Գրիգորեան, որ վարէր յայնժամ ընդպաշտօն Թարգմանութեան Աթոռոյն, եւ էր ինքն այր բանիբուն և ճարտար 'ի խօսս և սիրելի ամենեցուն։ Եւ նորա սկիզբն արարեալ շինութեան, նախ մաքուր քարամբք ետ յատակել զրովանդակ գաւիթ Համբարձման եկեղեցւոյն 'ի չրջապատս գմբեթին. ետ փորել ջրամբար մեծ 'ի կողմն հիւսիսոյ՝ որ և չինեալ աւարտեցին. նորոգեցին զհին փոքր ջրամբարն 'ի հարաւ, և զգմբեթն Համբարձման ներքոյ և արտաքոյ. ապա զարդարեցին ջահիւք և լապտերօք և ամենայն եկեղեցական սպասուք, կանգնեցին սեղան պատարագի 'ի վերայ չորից մարմարիոն սեանց, և եդին երկփեղկ դրունս ամուր փակաղակօք և

նգօք, եւ զառաջին պատարագն Փոխանորդ Եւդոկիացի Կարապետ Եպիսկոպոսն եւ սահմանեցաւ այնուհետեւ 'ի հինգշաբթի և 'ի կիրակէ աւուրս անխափան պատարագել 'ի ներքոյ գմբեթին 'ի վերայ այնր սեղանոյ ('ի 17 Յուլիսի · 1836)։ Մինչեւ ցայս վայր զօրութեամբ առաջին հրովարտակին։ Եւ 'ի ժամանել երկրորդին եւ յընթեռնուլ 'ի դատարանի ըստ առաջնոյն, քակեցին զարտաքին դուռն դաւթի, և շինեալ բարձրացուցին, եդեալ 'ի նմա դուռնս երկաթապատ, և 'ի վերայ բարաւորի նորին հայեցի վերտառութիւն · և 'ի դրանէ աստի մինչեւ 'ի դուռն գմբեթին՝ ձեղուն տախտակամած 'ի պատսպարումն ժողովրդոց յարեւէ և յանձրեւէ 'ի ժամ պաշտամանն · եւ 'ի ներքս 'ի դաւթի անդ շինեցին մի սենեակ կրկնայարկ 'ի պէտս Լուսարարի և կարասեաց, և քարեայ սանդուխտ վերելից երկաթի յենարանաւ։ Իսկ արտաքոյ պարսպի եկեղեցւոյն կառուցին սենեակ մեծ 'ի պէտս անանոց, զորոյ տեղին յառաջագոյն գնեալ էր Եփրեմ վարդապետ 'ի գիւղականաց, և բացին դրունս երկուս, մին 'ի դաւթի եկեղեցւոյն և միւսն 'ի փողոցի · և 'ի վերայ նորա սենեակս երկուս, որոց պատուհանքն հայէին յարեւմուտս դէպ 'ի քաղաքն Երուսաղէմ, և զայլ կարեւոր տեղիս ըստ պատշաճին, և 'ի վերայ իւրաքանչիւր շինուածոյ լինէր քննութիւն 'ի դատարանէ տուեալ Հէօճճէլթս։

Զեւ եւս աւարտեալ այսոցիկ շինուածոց՝ առաքեցին Հայք զառաջին և զերկրորդ Հէօճճէլթս շինութեան 'ի Կոստանդինուպօլիս՝ ստիպեալ յընդդիմութենէ Լատինաց, առնուլ 'ի Դրանէ եւ զերրորդ հրովարտակ։ Այլ 'ի մատուցանել զայնս 'ի Դուռն գլխաւորաց ազգին և աղերսագրով Ստեփաննոս Պատրիարքի, դարձաւ յետս, զի յերկուս տեղիս՝ հաւասար Արքայի պատուանունս տուեալ էին Փոխարքային Եգիպտոսի, որոյ վասն չհամարձակէին մատուցանել զայն առ Արքայ, որ սովոր էր զայնպիսի գրեանս ինքնին ընթեռնուլ, այլ փոխանակ նոցին խնդրէին Իլամ 'ի նոյն Դատաւորէ ըստ մտաց Հէօճճէլթն երկրորդի։

Իշխանաւորք ազգին առեալ էին յառաջագոյն հրովարտակ յԱրքայէ ՌՅԱ թուին վասն նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, եւ կամէին ոկիզբն առնել շինութեան անդ, նաեւ 'ի Տաճարին Ս. Յարութեան, զորոյ հրամանն ունէին 'ի ձեռին, և կատարել զթերի մնացեալ սպասս եկեղեցւոյն Համբարձման · բայց Յոյնք յամենայնի հակառակ կացեալ ոչ ապային թոյլ մերձենալ 'ի նոյն տեղիս · որսացեալ էին նաեւ 'ի կողմն իւրեանց զԴատաւորն եւ զմանս յայլազգեաց Երուսաղէմի։ Յայսպիսի պարագայս պաշարեցան Հայք 'ի տարակուսանս յամենայն կողմանց, եւ ոչ կարէին գտանել զելս հնարից, զի Լատինք ստիպէին քակել զշինուածս Համբարձման, և Յոյնք ընդդէմ զինէին Արքունի հրովարտակաց, յոյր սակս հարկ եղեւ Պօղոս Եպիսկոպոսի առաքել զԴաւիթ վարդապետ յԱղէքսանդրիա կարեւոր գրեամբք առ Պօղոս Պէյ Եուսուֆեան, զի թերեւս մարթասցի հնարս գտանել և բառնալ զհակառակութիւնս երկուց ազգաց։

Սակայն չեւ եւս մեկնեալ Դաւիթ վարդապետի 'ի Յոպպէ Քաղաքէ՝ ըստ անդ 'ի Տեսչէ Լատինաց և յայլոց զբանալ փակեալ դրան Լատինաց 'ի Բեթղեհէմ, յորմէ զանգիտէր գնալ յԵգիպտոս, զի գուցէ կրեցից ասէ՝ անարգանս և պարսաւանս 'ի Բգեշխէն և 'ի Պօղոս Պէյէն, այլ 'ի քաջալերելն զնա Պօղոս Եպիսկոպոսի, կալաւ զմանապարհ իւր։

Իսկ Դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպօլիս անդադար թախանձէր զԴուռն վասն բացման դրան այնորիկ, որպէս թէ նեղութիւն մեծ լինէր Եւրոպական ուխտաւորաց եւ կղերաց նոցին, և Տէրութիւնն ունէր յայնժամ բարեկամութիւն ընդ Գաղղիացիս, և բարկացեալ իսկ էր 'ի վերայ Հայոց 'ի սկզբանէ անտի, զի առանց հրամանի նորին, միայն Հէօճճէլթի շէրիով փակեցին զայն, որոյ վասն ետ հրաման բանալ զայն, չհայեցեալ յինչ և ինչ պատճառս և 'ի վնասս։ Եւ ըստ այնմ գրեաց և Փոխարքայն Եգիպտոսի Մէհէմմէտ Ալի առ Դատաւորս Երուսաղէմի՝ ընդ նմին առաքելով և զպատճէն հրամանագրոյն Արքայի։ Յետ այնորիկ Քաղաքապետն, Դատաւորն և Գլխաւորք այլազգեաց, եւ Լատինք, եւ 'ի Հայոց Պօղոս Եպիսկոպոս և այլք, գնացին 'ի Բեթղեհէմ, և քակեալ բացին զփակեալ դուռն զայն և շինեալ ետուն զբանալի նորին 'ի ձեռս Լատինաց, և սահ-

մանեցաւ յօրէ յայնմանէ, մաքրել և աւել ածել զմանապարհն զայն 'ի դրանէ անտի մինչ 'ի դուռն Այրին, եւ վասն այսր բազում անգամ եղեւ վէճ և կռիւ արիւնահեղ 'ի մէջ Լատինաց եւ Հայոց։ Յետ կատարելոյ զայս ամենայն, գրեալ ծանուցին առ Փոխարքայն Եգիպտոսի ըզգործադրութիւն Արքունի հրամանին։ Արդ՝ բացաւ դուռն Լատինաց ըստ առաջնոյն եւ դարձեալ եղեւ ոտնակոխ եկեղեցին Հայոց ('ի 20 Հոկտեմբերի, 1836)։ Ոչինչ եղեն և ապարդիւն մեծագումար ծախք և բազմադիմի աշխատութիւնք և տառապանք Հայոց։

Զայսմ հրամանագրէ՝ զոր էառ Դեսպանն Դաղղիոյ, չունէին տեղեկութիւն ոչ Ամիրայք և ոչ Փոխանորդն Երուսաղէմի, այլ զկնի բացման դրան՝ յԵրուսաղէմ լուան, և պատուէր եառուն միաբանաց չընդդիմանալ հրամանաց Արքայի որքան բանն պահանջէ։

Իսկ Դաւիթ վարդապետ հասեալ յԱղէքսանդրիա՝ մատոյց զգրեանս Պօղոս Պէյի, և նորա ընթերցեալ ծանեաւ զմիտս նոցին. ընկալաւ զԴաւիթ 'ի տուն իւր, և խոստացաւ աշխատիլ որքան կարելի է, և ապա ազգ արար Փոխարքային 'ի Դահիրէ եւ ընկալաւ անտի զպատասխանն, և պատրաստեաց զգրեանս առ նա. գրեաց և առ մտերիմ նորին և ներքին Խորհրդակից Սամի Պէյ, և առ Յարութիւն Պէյ Թարգման և Ստեփան Էֆէնտի, լինիլ ձեռնտու վարդապետին։ Զեւ եւս մեկնեալ Դաւիթ յԱղէքսանդրեայ, եհաս առ նա գիր յԵրուսաղէմէ, յորում պատուիրէին ըզգրեանս վասն Համբարձման առաքել 'ի Կոստանդինուպօլիս, եւ յընթեռնուլն զայն առաջի Պէյին, վշտացաւ յոյժ ընդ գործս Դատաւորին եւ Յունաց, մանաւանդ թէ Լատինաց, որ զեկեղեցին Հայոց վերստին արարին ճանապարհ, այլ յուսագրէր զնա, զի թերեւս բարի լիցի վախճանն։ Պաշտպանն Յունաց անդ յԵգիպտոս էր Թօսիցա անուն ոմն մեծատուն, և Լատինաց՝ Հիւպատոսն Դաղղիոյ. օրքա հակառակութեամբ զինեալ զբաղում շարիս խօսէին զՀայոց։

Մինչդեռ Հայք դեգերէին 'ի դրունս Այլազգեաց յԵրուսաղէմ, յԵգիպտոս և 'ի Կոստանդինուպօլիս և ջանային հաստատուն պահել զչինուածս Համբարձման տեղւոյն,

Դեսպանն Դաղղիոյ ստիպեալ 'ի թախանձանաց Լատին կղերից, մատոյց գիր ամբաստանութեան 'ի Դուռն զազգէն Հայոց վասն Համբարձման տեղւոյն յեցեալ յԻլլամն, զոր տուեալ էր Էսսէյիտ Ալի Դատաւորն Երուսաղէմի, յորում յիշէր և զհրովարտակն նոցին տուեալ 'ի թուին ١١٩٠։

Թէպէտ և Հայք եւս ունէին զչին և զնոր վաւերական գրեանս, սակայն Դուռն ոչ կամէր դարձուցանել զերեսս յերկուց կողմանց, և մինչ այսպէս յերերի կայր խնդիրն, փութացոյց Դեսպանն զերկրորդ թուղթ իւր խիստ քան զառաջինն, և ստիպէր յանձնել զրովանդակ տեղին 'ի ձեռս Լատին կղերց, և յաւել ասել՝ թէ զարմանք են զի ոչ գործադրին նամականիք, միթէ Դեսպանն ինքնի՞ն եկեսցէ։ Թէպէտ և ծանեան Հայք հաւատեաւ զկամաւորութիւնս և զարիաջան աշխատութիւնս նորին առ այս գործ, սակայն ոչ երբէք լքան 'ի խորհրդոց իւրեանց, և վերըստին մատուցին գիր աղաչանաց 'ի Դուռն՝ տալ հրովարտակ 'ի հաստատութիւն առաջնոցն։ Խլրտէին և Յոյնք և կամէին 'ի ձեռս բերել մասն ինչ 'ի տեղւոյն. զի Դուռն յառաջագոյն ծանուցեալ էր նոցա։ Յուսկ ուրեմն զկնաւ Տէրութիւնն 'ի խնդիր Դեսպանին և ետ հրովարտակ վասն Լատինաց ١٢٥٢ Զիլհիճէ վերջ, և ընթերցաւ 'ի Դատարանն Երուսաղէմի առաջի բազմութեան Այլազգեաց և Քրիստոնէից (յ7 Յունիսի, 1837), որոյ իմաստքն են «Ի կործանիլ Գմբեթի Համբարձման տեղւոյն յերկրաշարժէ, Հայք եւ Յոյնք բաժանորդ եղեն 'ի շինութեան, զի Լատինք 'ի տարւոջ միանգամ 'ի ներքոյ նորին պատարագէին, և այլք 'ի գաւիթս 'ի վերայ իւրաքանչիւր սեղանոյ. եւ 'ի լինել խռովութեան 'ի մէջ երից ազգաց վասն ծախուց շինութեան, Դատաւորն ետ Հէօճճէթ Լատինաց և զրկեաց զերկուս ազգս։ Այլ յորժամ առին Հայք հրովարտակ սակս շինութեան Տաճարին Ս. Յարութեան, կամեցան նովաւ յափշտակել և զՀամբարձման տեղին՝ յոր կատարէին Լատինք զպաշտամունս ըստ Հէօճճէթի դատարանի. և Դեսպանն Դաղղիոյ խնդրեաց վերստին դարձուցանել զայն առ նոսա։ Յարձանագիրս Արքունի դիւանին գտաւ հրովարտակ տուեալ Լատինաց զկնի հրդեհի Տաճարին Սուրբ Յարութեան, յաղագս յափշտակելոյ Յունաց զմասունս

ինչ 'ի տեղեաց նոցին. և 'ի ծանուցանելն զայս Դեսպանին Գաղղիոյ, հրաման եղեւ դարձուցանել 'ի վիճակն առաջին։ Եւ Օսմանեան Պետութիւնն զոլով բարեկամ Գաղղիոյ, եղեւ հրաման՝ զի Լատին կղերք և ամենայն հետեւողք նոցին՝ յորմէ ազգէ և իցեն՝ անարգել կատարեսցեն զուխտս իւրեանց, և խաղաղութեամբ բնակեսցին 'ի ներքս Երուսաղէմի և արտաքոյ նորին, և յատկացեալ տեղիքն ըստ առաջնոյն մնասցեն 'ի ձեռս նոցա. և ըստ հրովարտակացն ١٠٨٤։ ١١٥٣, եւ դաշնագրոյն չլինել ուժեք հարկապահանջ. և 'ի պատճառս չինութեան և այլ առթիւ չհակառակիլ ուխտին և յատկացեալ բնակութեանց և տեղեաց նոցին, ըստ զօրութեան դաշնագրոյն և այլ հրովարտակաց, եթէ նորոգեալ իցեն, դարձցին 'ի վիճակն առաջին, որոյ վասն տուեալէ հրովարտակ ١٢٢٥ 'ի ١ Շապան ամսոյ, դարձեալ և 'ի նոյն թիւ 'ի ١ Զիլհիճէ ամսոյ։

Եւ վասն չգործադրելոյ զնոսա՝ դարձեալ հրովարտակ ١٢٢٧ 'ի հաստատութիւն նոցին, այսոքիկ արձանագրեալ կան վասն ուխտին և բնակութեան Լատինաց։ Եւ յԵրուսաղէմ ծանուցանեն թէ՝ Համբարձման դմբեթն, Սուրբ Յարութիւն և արտաքոյ նորին ուխտատեղի և բնակարանք նոցին. սակայն անուանք նոցա բացայայտ ոչ են գրեալ 'ի դիւանին. և Հէօճէթէն Երուսաղէմի չգտաւ համաձայն դաշնագրոյն, որոյ վասն անտես եղեւ։ Եւ գրեցաւ վերստին հրովարտակ 'ի հաստատութիւն առաջնոյ, զի 'ի պատճառս նորոգութեան Հայք և Յոյնք մի հակառակեսցին ուխտին Լատինաց»։ Առեալ էին Լատինք եւ զիր հրամանի 'ի Փոխարքայէն Եգիպտոսի համաձայն մրոտաց հրովարտակին։ Հայք ոչ երբէք ցուցին ընդդիմութիւն պատարագին Լատինաց, զոր 'ի տարւոջ միանգամ կատարէին 'ի ներքոյ գմբեթին. սակայն ոչ չատացեալ այնու, խնդրէին բառնալ իսպառ 'ի տեղւոջէ անտի ըստ եղանն, զկանթեղս և զպատկերս և զայլ ամենայն զարդս, կործանել և անհետ առնել զրովանդակ շինուածս Հայոց, արտաքսել զնոսա անտի և թողուլ զտեղին 'ի վիճակն առաջին աւերակ, և զբանալին տալ 'ի ձեռս այլազգի Իսմէ տեղւոյն։ Թէպէտեւ խնդիրք նոցին հակառակ էր Կայսերական հրամանին, այլ որսացեալ էին 'ի կողմն իւրեանց

զԲաղաքապետն և զտանս յայլազգեաց, և կամէին բռնի գործել զամենայն ինչ և վարել անտի զՀայս. բայց Դատաւոր քաղաքին ընդդէմ եկաց նոցա թէ՝ այսու հրամանաւ ոչ կարեմ առնել ինչ, միայն պատուիրեմ Հայոց չարդելուլ զսովորական կանոնս և զպատարագն ձեր, որպէս ոչ արգելին մինչեւ ցայսօր։ Լատինք խնդրեցին գիր 'ի Դատաւորէն սակս չկատարելոյ զհրաման Այրքայի, եւ նա գրեաց ըստ մտաց հրովարտակին մին՝ 'ի Դուռն Տէրութեան և միւսն առ Փոխարքայն Եգիպտոսի, յորս 'ի վերջոյ յաւելոյր թէ՝ Լատինք ցանկային և խնդրէին կործանել զրովանդակ շինուածս Հայոց՝ և միայն ինքեանց սեփհականել զտեղին, այլ հայեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին՝ որ 'ի ձեռս նոցա, չհամարձակեցայ տալ կործանել զայնս, (١٢٥٣ յԲրկպիլ էվվել ամսոյ)։

Գ Լ Ո Ւ Խ ԾԳ.

Գրեանք Դատաւորին տուեալ Հայոց։ Բողոք Լատինաց։ Ի ժողովի քննութիւն խնդրոց երկուց ազգաց։ Վաւերական թղթեանք Հայոց. զոր մատուցին 'ի ժողովն։ Խորհուրդ Ամիրային եւ Նամակ նոցին առ Պողոս Եպիսկոպոս վասն խնդրոյ իրիք։

ՏԵՍԵԱԼ Հայոց զմեծարանութիւնս և զխրոխտանս Լատինաց՝ և զանհանդիստ աշխատութիւնս նոցին, առին Իլամ 'ի Դատաւորէն, յորում ետուն պատմել զրովանդակութիւն գործոյն 'ի սկզբանէ մինչեւ ցվախճան, յայտ առնելով եւ զընդդիմութիւնս Լատինաց, եւ առաքեցին զայն ընդ Սարկաւագ Սարգսի 'ի Կոստանդինուպոլիս 'ի վերայ Եգիպտոսի, և զՀէօճէթէն այլ ճանապարհաւ ընդ Սարկաւագ Յովսէփայ, զի հնարեսցեն Գլխաւորք ազգին առնուլ հրովարտակ սակս անկործան մնալոյ շինուածոց, և իւրաքանչիւր ազգաց ըստ առաջին սովորութեան կատարել զպաշտամունս, զի 'ի կողմանէ Հայոց երբէք չէ լեալ ընդդիմութիւն՝ այլ յարգանք եւ պատիւ։

Զի եթէ անմարթ լցէ առնուլ հրովարտակ՝ հայեցեալ 'ի պարագայս ժամանակին, տացեն արձանագրել 'ի դիւանին զիլամն և զէջօճէլթն, զի մի տացեն հրովարտակ հակառակ Հայոց. քանզի Լատինք 'ի դատին ոչ հանին յերեւան զդաշնագիրն, յոր գրեալ է 'ի տարեոջ միանգամ պատարագել նոցա 'ի ներքոյ դմբեթին։ Զայսոսիկ յոյզս և զխռովութիւնս թէեւ անցուցին Հայք առ ժամն՝ այլ ծանր եղեւ՝ եւ առաջի կայր նոցա այլ իմն մեծ աղմուկ և փոթորիկ 'ի կողմանէ Ցունաց, ոչ միայն վասն Ս. Յարութեան և Ծննդեան, այլ եւ վասն Համբարձման, զի չէնչէին տալ քակել զսենեակսն, զորմէ տեսցուք յետոյ։ Իբրեւ տեսին Լատինք թէ ոչ կարացին վճարել ինչ հրովարտակաւն, դիմեցին առ Փոխարքայն Եգիպտոսի, եւ խնդրեցին 'ի նմանէ կարգել պաշտօնեայս 'ի քննութիւն խնդրոց որ 'ի մէջ Հայոց և Լատինաց։ Եւ նա գրեաց առ Կուսակալն Դամասկոսի՝ առաքել զոք յԵրուսաղէմ. եւ 'ի դալստեան նորա կազմեցաւ ժողով 'ի դատարանի և արձանագրեցան բանք յերկուց կողմանց, զոր թարգմանեալ համառօտելով դիցուք առաջնոր։

Նիստ Առաջին, 'ի ՀԲ Ռիպիլ ամսոյ, ՌՀՄԲ։

Փոխանորդն և Վարդապետք Հայոց յանդիման եղեն Դատաւորաց եւ խնդրեցին 'ի նոցանէ ծանուցանել ինքեանց թէ՝ քանի են խնդիրք Լատինաց, տալ զպատճէնս հրամանագրոյն Գաւառապետին և պաշտօնական բողոքագրոյն, տեղեկանալ իմաստից նոցին և 'ի միտ առնուլ ըստ խնդիրս, և ըստ այնմ պատրաստել զվաւերական գրեանս և զպատասխանիս արձանագրել ըստ իւրաքանչիւր կարգի։

Դատաւորք ասեն, խնդիրք Լատինաց են այսոքիկ, Գերեզմանն Քրիստոսի և դահլիճն առաջի նորա, մեծ եւ փոքր կապարապատ դմբեթն, Պատանատեղին Քրիստոսի, գերեզմանն Ս. Աստուածածնի ընդ եկեղեցւոյն. Այրն Ծննդեան Քրիստոսի և Մսուրն՝ և բանալիք երից դրանց և մեծ եկեղեցին. փակեալ դուռն Լատինաց. չինութիւնք Համբարձման տեղւոյն 'ի լեառն Զիթենեաց՝ այլովքն հանդերձ, եթէ ունիք վասն սոցին հրովարտակս, Էջօճէլթս և զայլ թուղթս՝ մատուցէք այսր, զի ընթերցեալ քննեսցին, և ըստ պատշաճին արձանագրեսցին. լուեալ զայսոսիկ Հայոց՝ մեկնեցան անտի։ Եւ 'ի վաղիւ անդր յանդիման լեալ ատենին մի առ մի ետուն պատասխանի որ ունէր օրինակ զայս։

1°.—Գերեզմանն Քրիստոսի իւր սարօք բաժանորդութեամբ էր 'ի մէջ Հայոց և Ցունաց՝ զօրութեամբ դաշնագրոյն Օմարայ և Սալահատտինի, և հրովարտակաց Սէլիմայ և այլոց առաջին Թագաւորաց, և Սուլթանացն Եգիպտոսի. Լատինք յետ ժամանակաց եղեն բաժանորդ նոցա, և այսօր է 'ի ձեռս երից ազգաց՝ ըստ հրովարտակաց Մահմուտայ Արքայի։

2°.—Պատանատեղին Քրիստոսի, դարձեալ զօրութեամբ նոյն գրոց սեփհական էր ազգին Հայոց. Ցոյնք և Լատինք զկնի ժամանակաց եղեն բաժանորդ նմին հրովարտակաւ, և այսօր է ընդ հսկողութեամբ երից ազգաց։

3°.—Գերեզմանն Ս. Աստուածածնի, զօրութեամբ դաշնագրոց եւ հրովարտակաց 'ի Սէլիմայ մինչեւ ցՄահմուտ Արքայ, ընկերութեամբ է 'ի մէջ Հայոց եւ Ցունաց. Լատինք չունին անդ իրաւունս, և 'ի հրովարտակի նոցին չերեւի յիշատակութիւն ինչ, եւ այսօր չունին հաղորդութիւն տեղւոյն այնորիկ։

4°.—Այրն Բեթղեհէմի ընկերութեամբ է 'ի մէջ Ցունաց և Հայոց՝ զոր հաստատեն բազմաթիւ վաւերական գրեանք. իսկ Մսուրն սեփհական էր ազգին Հայոց, և ունիմք վասն այնր վաւերեալ թղթեանս, բայց Լատինք նենգութեամբ յափշտակեցին զայն 'ի ձեռաց Հայոց, այժմ պահանջեմք զիրաւունս մեր. այսօր բաժանորդ են Այրին Հայք և Ցոյնք, և Մսուրն 'ի ձեռս Լատինաց, և հիւսիսային դուռն յատկացեալ Հայոց։

5°.—Եկեղեցին Բեթղեհէմի՝ յերկաթեայ դրանէ մինչեւ 'ի տեղին Ծննդեան ընկերութեամբ է Հայոց եւ Ցունաց, որպէս հաստատեն զայս բազմաթիւ հրովարտակք և Էջօճէլթք դատարանի. Լատինք չունին անդ իրաւունս, թէ և ամբաստանեցին քանիցս՝ այլ ոչ եղեն լսելի։

6°.—Փակեալ դուռն 'ի հիւսիսային կողմն եկեղեցւոյն սեփհական է Հայոց. Լատինք յառաջագոյն դռեալ պա-

տեհ ժամանակ բացեալ են զայն առանց հրամանի, եւ 'ի պատճառս ճանապարհին այնորիկ յարուցին բազմադիմի խռովութիւնս ընդ Հայս, և 'ի միում նուագի վիրաւորեցին զվարդապետս, և 'ի դատաստանին առաջի Կուսակալին Դամասկոսի, Դատաւորին և այլազգեաց Երուսաղէմի՝ ոչ կարացին մատուցանել գիր վասն այնր. և համարեալ զայն նորասահման ինչ փակեցաւ օրինօք դատարանի, և ըստ մտաց Հէօճմէթին եւ հրովարտակ արքունուստ եւ վաւերեալ զայն Փոխարքային Եգիպտոսի՝ հրամայեաց ըզգործադրութիւն նորին։

7°.—Շինութիւնք և նորոգութիւնք Համարձման տեղւոյն յատկացեալ են Հայոց, և Մահմուտ Արքայ տեսեալ զհրովարտակն ١٠٢٣ թուին, հրամայեաց նորոգել զայն, եւ ապա եւ հրովարտակ շինութեան և նորոգութեան, պատարագի և եկեղեցական զարդուց. և վասն սեփհականութեան տեղւոյն ունիմք զհին հրամանս։

8°.—Գողգոթայն տեղի Խաչելութեան Քրիստոսի՝ սեփհական էր և ժառանգութիւն Հայոց ազգին, որպէս հաստատեն զայս դաշնագիրք եւ հրովարտակք Սուլթանաց Եգիպտոսի, իսկ ազգն Վրաց նենդութեամբ յափշտակեաց զայն 'ի ձեռաց Հայոց. եւ եղեւ բազմադիմի վէճ եւ դատաստան 'ի մէջ երկուց ազգաց, և 'ի վերջոյ հաստատեցաւ իրաւունք Հայոց, և եղաւ պայման 'ի միջի՝ զի 'ի հակառակիլ վերատին Վրաց՝ անկցին ընդ տուգանօք։ Սակայն Վիրք անսատեալ հրամանին և զօրութեամբ Թագաւորի իւրեանց՝ վերստին գրաւեցին զայն տեղի, եւ զկնի ժամանակաց յափշտակեցին Լատինք զմի մասն 'ի ձեռաց նոցա. և անհետանալ Վրաց յԵրուսաղէմէ՝ Ցոյնք տիրեցին Գողգոթային. այլ բնականապէս ամբողջ Գողգոթայն է Հայոց. Ցոյնք և Լատինք չունին անդ իրաւունս, այժմ պահանջեմք զայն. զի յաւուրս արդարութեան իշխանին մերոյ լիցի արդարութիւն և իրաւունք։

9°.—Այրն Քառասնից, որ և կոչի Այր կ՝Ռին, արտաքոյ գիւղին Բեթղեհէմի, որում բաժանորդ էին երեք ազգք և 'ի թուին ١١٩٠ եղին անդ Լատինք զսպասս եկեղեցւոյ, և սահմանեցին նոր դուռն, և Դատաւորն յետ քննութեան եւ բառնալ զայնս և ելից զդուռն, թողեալ

զայն յառաջին վիճակին, և գրեաց Հէօճմէթս երից ազգաց հաւասար կատարել զուխտս իւրեանց։ Այլ Լատինք յետ ժամանակի դարձեալ սահմանեցին զայն եկեղեցի առանց հրովարտակի, և արգելին անտի զՀայս եւ զՑոյնս. այժմ պահանջեմք ունել զբանալի և դնել սպասս և պատարագել անդ ըստ օրինակի նոցին։

10°.—Հայք ունէին վանս 'ի գիւղն Յովհաննու Ծնընդեան, յանցանել աւուրց եւ ժամանակաց աւերեցաւ 'ի բարբարոսաց, և Հայք չկարացեալ նորոգել զայն թողին 'ի վիճակի իւրում։ Եւ 'ի սմին ժամանակի Լատինք միջոց գտեալ տիրեցին այգեաց և ձիթենեաց մնացորդաց շինութեան և հնութեան վանաց. պնդեն եւ հակառակին թէ ընդ ժառանգութեամբ իւրեանց իցէ։ Հայք վասն այնր տեղւոյն ունին հրովարտակս 'ի Սուլթանաց Եգիպտոսի, եւ ծերունի բնակիչք գիւղին վկայեն ցարդ վասն այնր՝ պահանջեմք զվանս մեր։ Փակեցաւ առեանն։

Նիստ Երրորդ, 'ի ١٨ Բեպիլ ախր ամսոյ։

Դատաւորք ասեն. որովհետեւ խոստացան Հայք մատուցանել զվաւերական գրեանս վասն խնդրոց Լատինաց, զոր պահանջէին 'ի նոցանէ, Հայք յարուցին զերիս խընդիրս եւս ընդդէմ նոցա. այն է խնդիր Գողգոթայի, Այրին Քառասնից և վանաց Յովհաննու Ծննդեան։ Սակայն այժմ քննեսցին գրեանքն, որ վասն դատին Լատինաց եւ արձանագրեսցին յիւրաքանչիւր կարգի ըստ հրամանի Գաւառապետին և յետ այնորիկ քննեսցին երեքին խնդիրքն։

Հայք մատուցին ժողովոյն զչորս դաշնագիրս, որք էին մարգարէին Արարացւոց, Օմարայ, Ալիա, և Սալահատինի, եւ հրովարտակս 20 յՕսմանեան Թագաւորաց, գրեալ կարգաւ յիւրաքանչիւր ժամանակի, և 6 Հէօճմէթս դատարանի. սոքա միայն վասն Գերեզմանին Քրիստոսի, որոց խնդիրքն արձանագրեցան. վասն Պատանատեղւոյն հրովարտակս 5 և Հէօճմէթս 8. վասն գերեզմանի Ս. Աստուածածնի բաց 'ի հրովարտակացն՝ զորս գրեցաք, մատուցին նաեւ հրովարտակս 3 և Հէօճմէթս 4. վասն Այրին Ծննդեանն Քրիստոսի, բաց 'ի հրովարտակաց զորս

գրեցաք, առաջի եղին հրովարտակս 3, և Հէօճմէթս 8· վասն փակեալ դրան Լատինաց՝ հրովարտակս 2, և Հէօճմէթ 1· վասն Համարձման տեղւոյն շինութեան, հրովարտակս հին և նոր 5, և Հէօճմէթս հին 3· վասն Գողգոթայի՝ բաց 'ի դաշնագրոց՝ հրովարտակս 3 'ի Սուլթանաց Եգիպտոսի, մին թերի, և Հէօճմէթս 2· վասն Բառասանից այրին՝ Հէօճմէթ 1· վասն վանաց Յովհաննու Ծընընդեան՝ հրովարտակս 2 'ի Սուլթանացն Եգիպտոսի։ Իսկ վասն Մարոյ տեղւոյն ասեն թէ՝ այն էր սեփականութիւն Հայոց՝ և գտեալ պատեհ ժամանակ հնարիւք յափշտակեցին զայն Լատինք· խորտակեցին զարկեղունս և զդարանս յԱյրի անդ, և յափշտակեցին զոր միանգամ գտին 'ի նոսա, բարձին անտի և զկանթեղունս Հայոց, այժմ պահանջեմք զիրաւունս մեր, եւ վասն այնր ունիմք հրովարտակ 'ի Սուլթան Մուսդաֆայէ՝ և Հէօճմէթս 2։ Զայսոսիկ վաւերական գրեանս զորս մատուցին Հայք, զոմանց խմաստս, և զոմանս բառ առ բառ օրինակեցին յօրագրի անդ· փակեցաւ Ատեանն։

Այլ մինչդեռ տակաւին 'ի Կոստանդինուպօլիս էր Կիրակոս Եպիսկոպոս, կոչեցին զնա 'ի Նոր Խան 'ի սենեակ Յովհաննէս աղայի, որ էր քուերորդի Բիշմիշեանի, ուր ժողովեալ էին միայն Բեռահեայ ճանիկ, Բիշմիշեան Միքայէլ, և Երկանեան Յարութիւն Ամիրայք· եւ յառանձնութեան անդ տեսին զհաշէոյ տումար ելից և մտից Սուրբ Աթոռոյն, զոր առաքեալ էր Պօղոս Եպիսկոպոս՝ և բարւոք դիտողութեամբ 'ի նկատի առեալ վերահասու եղեն ամենայնի, ուրախ եղեն յոյժ եւ գովեցին զիսոհական կառավարութիւն նորին։ Ապա հարցին ցԿիրակոս Եպիսկոպոս՝ թէ յի՞նչ միտս են գլխաւորք միաբանաց և զի՞նչ կամին առնել զյաւելեալ գումարն։ Եւ նա արար պատասխանի՝ յաջողութեամբ Տեառն յաւուրս ձեր Ջանիւք նորին Սրբազնութեան աղատեցաւ Աթոռն 'ի պարտուց՝ եւ յաւելաւ ինչ՝ այլ այսպիսի աւուրք յաջողութեան ոչ մնան միշտ· գուցէ 'ի պատահիլ պատերազմաց և այլ ճախորդութեանց, նուազեսցի թիւ ուխտաւորաց՝ յայնժամ հարկ լինի 'ի նեղութեան պահու ձեռն արկանել յայն գումար։ Եւ յայսոսիկ երկուս ամս բազում տեղիք չինեցան յերուսաղէմ, 'ի Յոպպէ եւ 'ի Դամասկոս, եւ տակաւին պէտս ունիմք բազում տեղեաց շինութեան եւ նորոգութեան։ Այլ նոքա ետուն պատասխանի՝ ոչ բարւոք թուի մեզ այնքան դրամոց մնալ անգործ յերուսաղէմ, հայեցեալ 'ի փոփոխմունս և 'ի պատահմունս աշխարհի, գուցէ մատնեսցի 'ի ձեռս անխոհեմաց ոմանց, որպէս երբեմն վասն փակման Բեթղեհէմի դրան վատնեցիք աւելի քան 200 քսակս դրամոց՝ զոր վերստին բացին։ Ուստի մշանջենաւոր մնալոյ այնց դրամոց կամիմք առնել տնօրէնութիւն ինչ եւ չահեցուցանել։ Եւ զկնի այսր խորհրդոյ դրեցին գիր առ Պօղոս Եպիսկոպոս յերուսաղէմ, և զի մի անկցի այս խորհուրդ 'ի բերանս այլոց՝ զայն գիր ետուն գրել Կիրակոս Եպիսկոպոսի, որ ունէր օրինակ զայս։

«Ի բազմապատիկ փորձոյ ակն յայտնի տեսաւ և տեսանի՝ զի խոհական տնտեսութիւն կառավարչաց ծնող է օգտի հասարակութեան և աղբիւր յորդառատ բարեաց, որով ոչ միայն զաւուրս իւրեանց կառավարութեան բարերջանիկս հանդերձեն, այլ և հոգարարձու գտեալ ապագայից, անմահ յիշատակ կանգնեն յաշխարհի, և յետնոցն իսկ լինին առիթ և սատար բարօրութեան։ Այսպիսի խոհական տընտեսութեամբ գերազանց հանդիսացաւ սրբութիւն ձեր, զի աքանչելի իմն առաքինացեալ 'ի բազմափորձ կառավարութեան և հասուն կատարելութեամբ ծերացեալ 'ի նմին՝ քաջ գիտացեր զանգարեալ կարգս Ս· Աթոռոյն բարեկարգել՝ զբազմադէզ պարտսն հատուցանել՝ չափաւորել զծախսն, և պաշտպանել զարդիւնս։ Արդարեւ տնտեսութիւն աքանչելի՝ ոչ յառատութեան զեղիս վարեցար՝ զի մի և 'ի ճշդութեան նկուն կացեալ մնացէ Ս· Տունդ։

Որպէս ահա՛ դիտեալ մեր յառանձնութեան երեքին ստորագրեալքս զվեց ամեայ Ս· Աթոռոյդ արդեանց և ծախուց հաշիւն, զոր ընդ Կիրակոս Եպիսկոպոսի առաքեալ էիք, գովեցաք յոյժ զքոյոյ գովելի աշխատասիրութեան արդիւնս, արդարեւ զանազանութիւն մեծ եւ բազում 'ի մէջ առաջնոցն և վերջնոցս։ Ուստի և պարտաւորիմք երախտագէտ մնօք շնորհակալու լինել զիսոհեմազարդ տնտեսութենէդ, և մաղթել յամենարարի Արարչէն զանգին կենացդ երկարութիւն և զհատուցումն բազմապատիկ 'ի հան-

գստեան երկնային երանաւէտ կենաց։ Այլ այս մի ինչ է՝ որ վրդովէ զսիրտս մեր, որպէս յուսամք թէ և զձեր խակ նախադէտ միտդ, և այն է փոփոխութիւն իրաց աշխարհիս։ Է երբեմն՝ զի 'ի փոփոխիլ կառավարչաց՝ փոփոխին և կառավարութիւնքն, և ըստ ամենայնի 'ի հակառակ կոյս շրջին, է երբեմն, զի որ բաղում հոգաբարձութեամբ ժողովեալ գանձեցաւ, շռայլութեամբ վատնին յումպէտս և յանօգուտս 'ի ձեռն անխոհեմ կառավարչաց, է երբեմն, զի յապստամբութենէ եւ 'ի վրդովմանէ երկրին, յաւար մատնին, որպէս եղեւ Տարոնոյ Ս։ Ռուխտին քանի ամօք յառաջ։ Ուստի երկնչիմք, թէ 'ի պատահիլ այսպիսեաց, այսքան մեծաջան աշխատութեան ձեր արդիւնք և մթերք զկնի ձեր դուցէ այսպիսեաց ինչ դիպեսցին, և դարձեալ Ս։ Տունդ հանդերձ միաբանութեամբ տառապեսցի 'ի կարօտութեան և ընդ պարտեօք հեծեսցէ։ Այլ քանզի մեք՝ որ ամենայնիւ խորհիմք և կամիմք զօգուտն Ս։ Աթոռոյդ և զանդորրութիւն միաբանութեան եթէ 'ի ներկայիս եւ եթէ յապագայն, ընդ Կիրակոս Եպիսկոպոսի հարազատի Ս։ Աթոռոյդ յաղագս ապահովութեան գումարեալ արդեանց՝ այսպէս խորհեցաք։ Զի զայն՝ զոր տեսաք 'ի հաշուէդրի, և այն՝ որ յետ այնմ յայս երկուս ամս յաւելաւ, և որ զկնի այսորիկ ամ յամէ յաւելցի, զմեծ մասն այնց արդեանց, որով եղանակաւ և դիւրին իցէ՝ յայս կոյս փոխադրեսցես, եւ զայն առ այն օգ հասուսցիք՝ զոր կամիք և ընտրէք յայս զէտս և եթ վերակացու, և մերով երիցս դիտութեամբ փակեալ եւ կնքեալ արկեղ զետեղեսցի 'ի ներքին Քարուկիր Գանձատան Մայր եկեղեցւոյս։ Եւ որ ինչ հոգ և փոյթ իցէ անկորուստ մնալոյ այնր դրամոց, կամ շահեցուցանելոյ՝ զամենայնն խորհրդակցութեամբ ընդ վերակացուին առ 'ի ձէնջ կարգելոյ յանձնառու եմք կատարել յօգուտ Ս։ Աթոռոյդ և յանմահ յիշատակ սրբութեան ձերում։ Իբր զի կամ շահարեր քարուկիր կալուած պատահէ ստանալ աստ կամ Իզմիւռին, կամ հին դրամ գանձեսցին, գնեսցին անդամանդեայ ակունք, որք միշտ յամուսմն գնոյ և դրամոց բնաւորեալ են։

Ի տնտեսութիւն այսր ամենայնի հարկաւոր է աստ օգ 'ի պատուաւոր հարազատ միաբանաց Ս։ Տանդ, վասն որոյ

առ ժամն ոչ առաքեցաք զՆիրակոս Եպիսկոպոսն, զոր եթէ արժան համարիք՝ զնա կացուսջիք աստ վերակացու գործոյն, և եթէ զայլ օգ արժանաւոր առաքէք, զնա առաքեմք 'ի Ս։ Աթոռդ։ Զայս ամենայն ուղիղ մտօք ծանուցեալ՝ մնամք առ 'ի ձէնջ պատասխանւոյ։ ողջ լեր երկար կենօք։

Ի 20 Յունիսի, 1837։	Ս։ Տ։	Ս։ Տ։	Ս։ Տ։
Ի Կոստանդի-	Յարութիւն	Միքայել	Ճանիկ
նուպոլիս։	Երկարեան։	Փիլիպեան։	Բեռնեայ։

Գրեաց և ինքն Կիրակոս առանձին թուղթ առ Պօղոս Եպիսկոպոս, յորում յորդորէր զնա լինել համախոհ կամաց և խորհրդոց նոցին, զի չէր ինչ տեղի կասկածանաց։ Եւ յետ բաղում բանից յաւելու ասել՝ «Գիտես Տէր իմ, եթէ չէաք տեսեալ զցուցակ գանձեալ դրամոց հոգելոյս Տ։ Գրիգորի Շղթայակրի հայրապետին, ոչ իսպառ գիտէաք՝ զի չէք ուրեք յիշատակութիւն ինչ, այլ ո՞ւր մնաց այն դրամ, զի՞նչ եղեւ, առ ի՞նչ վատնեցաւ, ոչ օգ գիտէ։ ապա գրէ կարդել զմին Միւթէվէլլի Աթոռոյն՝ եւ զերկուսն Նաղր և Վերակացու՝ տեսանել զհաշիւն և հոգալ զգործս Աթոռոյն։ Այլ այս խորհուրդ՝ որպէս երեւի՝ ոչ եհաս յարդիւնս յայնժամ, զի բացեալ էր դուռն խռովութեան և հակառակութեան 'ի մէջ ազգաց՝ և Պօղոս բաղում դրամոց պէտս ունէր, եւ չէր հնար հանել զայն արտաքս։

ԳԼՈՒԽ ԺԴ։

Գիր մեծի Վեղիրին առ Դատաւորն։ Զնշանն երից հրովարտակացն Հայոց։ Հակառակութիւն Յունաց։ բողոք նոցին առ Հիւպատոսն Ռուսաց։ Պատճէն թղթոց Հիւպատոսին։ Փոխարքային։ Գաւառապետին։ Ժողով 'ի դատարանի վասն քննութեան ինդրոց Հայոց և Յունաց։

ՅԵՏ ընթերցման հրովարտակին Լատինաց սակս Համբարձման տեղւոյն, որպէս գրեցաք, գրեանք Դատաւորին հասին 'ի Կոստանդինուպոլիս 'ի ձեռն Սարկաւագաց, թէ

վասն անիրաւ պահանջմանց Ցունաց, և թէ վասն հակառակութեան Լատինաց, և համաձայն մտաց նոցին՝ գրեաց և ինքն Ստեփաննոս Պատրիարք 'ի Դուռն, և աշխատութեամբ Գլխաւորաց ազգին՝ Վէզիրն մեծ՝ 'ի շնորհս արտաքին գործոց պաշտօնէին՝ գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի՝ չկործանել զչինուածս Հայոց՝ մինչեւ ելցէ հրովարտակ, թէեւ Լատինք ասէ՝ առին հրովարտակ սակս ուխտին իւրեանց յԵրուսաղէմ եւ 'ի լեառն Զիթենեաց, սակայն զանազան մեկնութիւնս տուեալ այնմ, կամեցեալ են քակել զսեփհական տեղիս Հայոց՝ և ինքեանք չինել, եւ վասն այսր առեալ են պայմանաժամս ամիսս երիս 'ի Փոխարքայէն Եգիպտոսի. եթէ ոչ ժամանեսցէ 'ի միջոցիս յայսմիկ հրովարտակ յԱրքայէ՝ փոյթ կալցեն կատարել զկամս ցանկութեան իւրեանց։ Իսկ Պատրիարքն Հայոց՝ ասա 'ի մայրաքաղաքիս Թախանձանօք խնդրեաց նոր հրովարտակ 'ի հաստատութիւն առաջնոցն, և 'ի խափանումն ընդ միշտ հակառակութեան Լատինաց, որպէս յայտ առնէ Իլամն ձեր։ Ցարձանագիրս կայսերական Դիւանին թէպէտ և գտանի տուեալ հրովարտակ Լատինաց, այլ ոչ նշմարի 'ի նմա կէտ ինչ սակս չինութեան տեղւոյն այնորիկ, այլ անարգել կատարել զուխտս. և յակնարկելն մեր յաղերսագիրն, ակներեւ տեսանի թէ խնդիրն առիթ է մեծի զրկանաց Հայոց։ Ուստի հարկ եղեւ համեմատել ընդ արձանագրութիւնս և զպարտ ու պատշաճն գործադրել, և զօրինակ կայսերական հաւանութեան առ մեծութիւն ձեր բացայայտ գրել։ Ի հասանիլ գրոյս առ ձեզ՝ փութասջիք խոհեմութեամբ զկարեւորն գործադրել, 'ի ՀԹ Շէվվալ ամսոյ՝ ՌՄԾԲ։

Ի հասանիլ այսր նամակի մեծի Վէզիրին յԵրուսաղէմ՝ Լատինք լուեցին առ վայր մի, այլ ոչ կացին յետս խորհելոյ և նիւթելոյ զչարիս։ Իսկ Ցոյնք որ մինչեւ ցայս վայր յայտնի և ծածուկ հակառակէին Հայոց, և մեծամեծ ջանիւք վաստակէին 'ի դրունս մեծամեծաց, և երբեմն խըրոխտանօք արհամարհէին զՀայս, թէ տամք եղծանել զհրովարտակս ձեր, եւ կործանեմք զչինուածն, յետ կարդաւորելոյ զամենայն ինչ՝ բողոք բարձին 'ի Դուռն Պատրիարքունք և ժողով Մետրապոլտաց նոցին՝ և ետուն

ընդել յԱրքունի Դիւանէ զարձանագրութիւնս երից հրովարտակացն Հայոց։

1°.—Սակս նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան, տուեալ 'ի թուին ՌՄԽԹ։

2°.—Վասն նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, ՌՄԾԱ։

3°.—Վասն չինութեան Համբարձման տեղւոյն, ՌՄԾԲ։ Եւ տուաւ նոր հրովարտակ վարիլ ըստ մտաց հրովարտակացն տուեալ 'ի թուին՝ ՌՄԾԸ, յորում յառաջ բերի իբր պատճառ, թէ հրովարտակքն զոր գրեցաք 'ի վեր՝ տուեալ են միայն 'ի խնդրոյ Պատրիարքին Հայոց։ Սակայն գիտել գիտացին թէ ծածկապէս ուժգին ընդդիմանալ հիւսիսային հողմոյ, փոթորկեաց և սասանեցոյց զդուռն, և յայս եղանակ շրջեաց զխնդիրն։

Եւ յետ այնորիկ՝ ըստ Իլամի Դատաւորին Երուսաղէմի՝ զոր առեալ էին Ցոյնք, առին 'ի Դրանէ նոր հրովարտակ 'ի ՀԱ Զիլգատէ ամսոյ՝ ՌՄԾԲ, ('ի 21 Փետրվարի. 1837), եւ վերստին ինքեանց սեփհականեցին զընդհանուր չինութիւնն Ս. Տեղեաց։

Յետ այնորիկ չորան Ցոյնք առ Դատաւորն Երուսաղէմի Համատուլլահ Էֆէնտի եւ ասեն. եթէ քակես զչինուածս Համբարձման՝ և բառնաս զամենայն եկեղեցական սպասս, եւ խափանես զպատարագն եւ զարարողութիւնս Հայոց՝ բերեալ մատուսցուք ասա զհրովարտակն Արքունի. իսկ եթէ ոչ՝ դարձուցանեմք զայն առ Տէրութիւնն, և բողոք բառնամք զքէն վասն ոչ գործադրելոյ զայն։ Դատաւորն ոչ ետ տեղի բանից նոցա, այլ վերստին գրեաց 'ի Դուռն հրովարտակաւ հաստատել զիրաւունս Հայոց՝ զի անկործան մնասցեն չինուածքն։ Սակայն Ցոյնք ոխացեալ ընդ Դատաւորն՝ գրեցին գիր ամբաստանութեան զնմանէ եւ զազգէն Հայոց առ Հիւպատոսն Ռուսաց, եւ առաքեցին զայն յԱղէքսանդրիա 'ի ձեռն պատգամաւորի, եւ միջնորդութեամբ նորին խնդրեցին 'ի Փոխարքայէն Եգիպտոսի՝ առնել քննութիւն ծանուցեալ խնդրոց, որպէս տեսցի 'ի սորեա։

Ընթերցեալ Հիւպատոսին զնամակ միաբանացն Ցունաց, գրեաց առ ատենական Թարգման Պօղոս Պէյ օրինակ զայս։ «Զգանկատանս միաբանացն Ցունաց զԴատաւորէն Երու-

սաղէմի՝ յերեկեան գիշերի բերանացի պատմեցի նորին Բարձրութեան, և նա հրամայեաց գրով մատուցանել զայն։ Ուստի հարկ եղեւ վերատին կոչել զպատգամաւորն Յունաց եւ հարցանել, ահաւասիկ բանք նորին։ Դատաւորն Երուսաղէմի սակս գործադրելոյ զհրովարտակն Արքայի՝ խնդրեաց 'ի մէնջ 100,000 դահեկան, թէպէտ և յօժարեցաք տալ նմա 20,000 կանխիկ, և 10,000 փոխանակագրով հատուցանել 'ի Կոստանդինուպոլիս, այլ նա ոչ կամեցաւ, և խնդիրն մնաց 'ի վիճակի իւրում։ Իսկ Հայք համարձակութիւն առեալ յընթացից Դատաւորին, անցեալ զանցին քան զչափն, զի ընդդէմ նախնական սովորութեան բացին դրունս յեկեղեցին Բեթղեհէմի եւ զարդարեցին պէսպէս պատկերօք, և 'ի թոյլ տալոյ Դատաւորին՝ նորոգեցին զեկեղեցին Համբարձման, և յանդգնեցան առնել զքանի մի աւելորդ իրս, մինչ զեկեղեցին անգամ նորոգելոյ չունէին հրաման, այժմ չինեալ հաստատեցին մի նոր վանք, և գրաւեցին զբանալի տեղւոյն, որ յատկացեալէր Հայոց, Յունաց և Լատինաց։ Եւ 'ի հրամանագիրս Փոխարքային յայտնապէս յիշեալ է լեառն Զիթենեաց, և ջնջումն երից հրովարտակացն Հայոց, և այս կարծիս տուեալ է. այսոքիկ են բանք պատգամաւորին։ Յետ ճանաչելոյ մեծութեան ձերում զեղանակ գործոյն, հաճեցէք մատուցանել յոտս նորին Բարձրութեան։ Արդ՝ խնդրեմք զպատիժ Դատաւորին, զվերժումն Հայոց 'ի տեղեացն այնոցիկ, յորս չունին իրաւունս, և զհաստատութիւն իրաւանցն Յունաց։ Եւ որպէս զի մի յանդգնեսցին մուսանդամ յայսպիսի խնդիրս, կարգեսցի Ոստիկան 'ի քննութիւն դատին, և 'ի նկատի ունել զտեղիս, որք կարօտ են չինութեան, և յայտնել զճշմարտութիւն իրին, զի վախճան լիցի այսպիսի վիճմանց և խօսակցութեանց, խոնարհ աղերսանօք և յարգանօք ծանուցանեմ նորին Բարձրութեան, 'ի \ Շէվվալ ամսոյ \ ՌՅԾ \։ Պատճէն Նամակի Փոխարքային գրեալ առ Գաւառապետն։

Զթարգմանութիւն Նամակի Ռուսիոյ տէրութեան ընդհանուր Հիւմատոս Գունիէմում բարեկամին մերոյ, ուղղեալ առ Թարգման Պէյն, սակս Դատաւորին Երուսաղէմի, եւ զպատճէն Կայսերական հրովարտակին ծարեալ 'ի ծոց հրամանագրոյս առաքեցի առ ձեզ, զի ընթերցեալ բարւոք

տեղեկասջիք հանդամանաց գործոյն, զի խնդրեալ են լինել քննութեան ամբաստանեալ իրաց 'ի տեղւոջ իւրում։ ուստի առաքեցէք 'ի կողմանէ ձերմէ զայր ոք հաւատարիմ և խոհեմ, քննել և ստուգել պարագայիւք զգործն, և իմանալ թէ ո՞րպիսի եղանակաւ լեալ իցէ հակառակութիւն հրովարտակին, զի կամիմ փոյթ մեծ ունել գործադրութեան նորին, ՅՇէվվալ ամսոյ, ՌՅԾ։

Պատճէն Նամակի Գաւառապետին գրեալ առ Միւֆթի և առ Քաղաքապետն Երուսաղէմի։ Գրամատոյց մեծապատիւ Փոխանորդ և Թիկնապահ որդեակն մեր Հաֆըզ Ըէշիտ Էֆէնտի առաքեցաւ առ ձեզ՝ ընդ իւր ունելով զպատճէնս հրամանագրի Փոխարքային, Կայսերական հրովարտակին, և նամակի Հիւպատոսին մատուցեալ առ Փոխարքայն, և հրամայեալ է նորին Բարձրութիւնն քննել յԵրուսաղէմ զդատս Հայոց և Յունաց, որ ունի լինել 'ի ձեռն որդեակին մերոյ և Միւֆթի Էֆէնտեայ՝ առաջի Փոխանորդաց երկուց աղգաց, եւ զկնի աւարտելոյ քննութեանն՝ ըստ պահանջման օրինաց կնքել ամենեցուն զարձանագրութիւն և դարձուցանել այսր ընդ որդեակին մերոյ։ Ի վերջ Զիլգատէ ամսոյ՝ ՌՅԾ։

Կազմեցաւ ժողով յապարանս Քաղաքապետին, որոյ անդամք էին՝ Մէհէմմէտ Թահիր Էֆէնտի Միւֆթի քաղաքին, Մուստաֆա աղա Քաղաքապետ, Հաֆըզ Ըէշիտ Էֆէնտի՝ Թիկնապահ Գաւառապետին, Քիրիլլոս՝ Փոխանորդ՝ և Սոֆրոնիոս Թարգման 'ի Կողմանէ Յունաց։ Կարապետ Եպիսկոպոս Փոխանորդ, և Իսահակ վարդապետ Թարգման 'ի կողմանէ Հայոց։

Նիստ Առաջին։

Նախ ընթերցան զնամականին, զոր գրեցաք, և ապա եհարց Ըէշիտ Էֆէնտի ցՀայս, իմացաք զվիտս ընթերցեալ գրոց, և թէ ջնջեցան երեքին հրովարտակք Հայոց, և ընդհանուր նորոգութիւնն տուաւ Յունաց, որպէս գրեալ է 'ի հրովարտակին, ուրեմն զի՞րդ համարձակեցայք չինել և նորոգել զծանուցեալ տեղիսն՝ ոչ հնազանդելով հրամանին, զպատճառս եւ զհանդամանս գործոց իւրաքանչիւր տեղւոյ պատմեցէք ճշդութեամբ։

Հայք ետուն պատասխանի։

1°.—Զհրովարտակն, զոր ետուն բերել Ցոյնք, ոչ է տեռնալ մեր, և ոչ ընթերցեալ 'ի Դատարանի, և մեք ոչ երբէք հակառակ կացեալ եմք Նմին, զի չէ օրէն հպատակ ազգի անասանել հրամանի Տէրութեան, եթէ հարցցի ցՕգլխաւորս քաղաքին, յայտնի լինի ճշմարտութիւնն եւ ստութիւնն։ Մին 'ի խնդրոց, զորմէ ամբաստանեն Ցոյնք՝ է Տաճարն Ս. Յարութեան, ուր ոչ է լեալ նորոգութիւն և զարդարանք։

2°.—Եկեղեցին Բեթղեհէմի, Հիւսիսային կողմն յատկացեալ Հայոց, և բաժանորդ Այրն, յայսոսիկ տեղիս եւս չէ լեալ նորոգութիւն ինչ՝ այլ թերի մնացեալ 'ի բաժանորդութենէ, կախեալ եմք քանի մի պատկեր և կանթեղ՝ քննութեամբ Օմար Նասիպ Նախկին Դատաւորի և այլազգեաց քաղաքիս, և ոչ եղեւ ինչ 'ի ժամանակս Համտուլլահ Դատաւորի։ Սուտ է և այն բողոքն Ցունաց, թէ Հայք դրունս բացին յեկեղեցին Բեթղեհէմի։

3°.—Լեառն Զիթենեաց։ յետ լրանալոյ խնդրոյն Բեթղեհէմի, տացուք պատասխանի եւ վասն այնր յիւրում տեղւոջ։

Փոխանորդն Ցունաց՝

1°.—Այս է պատճառն ոչ ընթեռնլոյ հրովարտակին մերոյ 'ի դատարանի՝ ընթերցաւ յառաջագոյն հրովարտակն Լատինաց վասն Համբարձման տեղւոյն, եւ Դատաւորն խոստացաւ գործադրել զայն, ապա զիջեալ յաղաչանս Հայոց՝ զանց արար զնովաւ։ Եթէ հարցցի ցՕգլխաւորս քաղաքին՝ որք էին 'ի Նմին Ժողովի՝ յայտնի ճշմարտութիւնն։ Եւ 'ի ժամանել հրովարտակին մերոյ՝ կոչեալ զԲեթխուտայ Էֆէնտի տուաք Նմա ընթեռնուլ զայն, և նա ծանոյց Դատաւորին զբովանդակութիւն նորին, յետ որոյ ետես եւ Դպրապետն, նոյնպէս և նա յայտ արար Նմա, բայց նա ոչ ընկալաւ, միջնորդ կացուցաք զԱլի Միւհսին Էֆէնտի՝ չեղեւ ինչ օգուտ, երկիցս գնացեալ առ Դատաւորն խընդրեցաք զգործադրութիւն հրովարտակին, զառաջինն խընդրեաց 200,000 դահեկան, և յերկրորդումն 100,000։ Թէպէտ խոստացաք տալ Նմա 30,000 իբր ծախք Իլամի եւ Հէօճմէթի, այլ նա ոչ հաճեցաւ, և գործն մեր եղեւ այնպէս, որպէս գիտէաք զգործս Լատինաց, այժմ ծանիցեն Հայք թէ յի՞նչ պատճառս ոչ ընթերցաւ հրովարտակն 'ի դատարանի։

2°.—Տաճարն Ս. Յարութեան՝ ուր ոչ է լեալ նորոգութիւն, որպէս ասացին Հայք, և ոչ եմք բողոքեալ վասն այնր, և 'ի Նամակի Հիւպատոսին չիք յիշատակութիւն։

3°.—Եկեղեցին Բեթղեհէմի հիւսիսային կողմն սեփհական Հայոց, և բաժանորդ Այրն, յորս արդարեւ ոչ եղեւ նորոգութիւն, սակայն Հայք զպատկերս եւ զկանթեղս զորս կախեցին՝ պակասորդ ասեն 'ի բաժանորդութենէ, թէպէտ եղեն նոքա 'ի ձեռն Նախկին Դատաւորի և գիտութեամբ այլազգեաց քաղաքիս, այլ ոչ որպէս սեփհական իրաւունք նոցա, զի տհաճութեամբ մեր եւ պաշտպանութեամբ Դատաւորին եղեն։ որպէս ծանեաւ յետոյ առանց իրաւանց լինելն, և կոչեալ զերեւելիս քաղաքին կամեցաւ խանգարել, այլ 'ի պատճառս բացակայութեան Քաղաքապետին՝ մնաց այնպէս։

Բանալի Հիւսիսային դրան եկեղեցւոյն էր 'ի ձեռս Ցունաց, եւ 'ի ժամանակի ընկերութեան եւ Դատաւորն եւ զմի բանալի Հայոց, և պատուիրեաց այնպէս գործադրել և նորասահման պատկեր և կանթեղ և այլն։ եթէ իրաւամբ էր, տուեալ լինէր յայնժամ Հայոց օրինաւոր Էֆէնտի 'ի դատարանէ, և զի ոչ տուաւ, նշանակէ չունել իրաւունս։ Յետ սահմանելոյ զայսոսիկ՝ ետուն բառնալ նաեւ զվարագոյրն որ 'ի վերայ հիւսիսային դրան Այրին, և զխաչվարս որ 'ի վերայ որմոյն կից Նմին, և նորասահման իրքս, որք ասեն Հայք թէ, բաժանորդութիւն մեր է, սուտ է, զի բաժանորդութիւնն եղեւ ՌՄԸ թուին 'ի ձեռն Նուրի Էֆէնտեայ և հաճութեամբ երկուց կողմանց, և տուաւ Էֆէնտի 'ի Դատարանէ երկոցունցս սակս բառնալոյ զխռովութիւնն։ Ահա այսպէս է եղանակ բաժանորդութեան, թէպէտ Հայք կախեցին զաւելորդ կանթեղս ՌՄԲ թուին, հակառակ սահմանի բաժանորդութեան, այլ յայնժամ տքուաք բառնալ 'ի ձեռն Դատաւորին։ Եթէ այսպէս է խնդիրն, սոքա ուստի՞ եղեն կատարեալ բաժանորդ, և ստացան զիրաւունս ընկերութեան, մինչդեռ որմքն և կապարապատ ձեղունն հիւսիսայի կողման, մեր են, և այս հաստատեցաւ

Հէօճմէթիւ դատարանի 'ի ժամանակս քննութեան Միւնլիպ Էֆէնտեայ, առաքեալ 'ի Փոխարքայէն Եգիպտոսի։ Եթէ Հայք սակս կատարեալ բաժանորդ լինելոյ եդեալ են զայսոսիկ, ուրեմն խոստովանին զբաժանորդութիւնն, որ եղեւ հաճութեամբ երկուց կողմանց՝ ՀԸ թուին։

4°.—Զիք բացեալ գրունք յեկեղեցին Բեթղեհէմի արտաքոյ սովորութեան, յայսմ ճշմարիտ են բանք Հայոց, և ոչ եմք գրեալ 'ի Նամակին, այլ թէ կամին սեփհականել Հայք զբաժանորդ դուռն հիւսիսային նոր բանալեօք, և այս վրիպակ Հիւպատոսին է։

5°.—Հայք ասացին թէ Նորասահման իրքս յեկեղեցին Բեթղեհէմի եղեւ յաւուրս նախկին Դատաւորի, և ոչ այժմեան։ արդարեւ այնպէս է, սա ետ Հէօճմէթս վասն Զիթենեաց լերին, և արդեալ զգործադրութիւն հրովարտակացն Լատինաց և Ցունաց, և 'ի նամակին գրեալ էր, թէ Հայք ազաւինեալ 'ի շնորհս Դատաւորին գտին յաջող ժամանակս, այդ ոչ միայն վասն արդի Դատաւորին է, այլ և վասն առաջնոյն, որ հակառակ հրովարտակին նորանոր իրս սահմանել ետ Հայոց յեկեղեցին Բեթղեհէմի և 'ի լեառն Զիթենեաց։ Հաֆըզ Բէչիտ Էֆէնտի ասէ, ծանեաք զբանս Փոխանորդին Ցունաց, զՀրովարտակն ձեր, որով փութացեալէք 'ի Դատաստան, չյայտնել ձեր փութանակի և ոչ տալ ընթեռնուլ զայն, հաստատէ զբանս Փոխանորդին Հայոց, և 'ի ձեռն միջնորդի ծանուցանելն Դատաւորին, զնոյն յայտ առնէ։ Նոյնպէս և ամբաստանեալ իրքն ոչ ենք լեալ յաւուրս Համուլլահ Դատաւորի, այլ նախորդի նորին, և 'ի կողմանէ Հայոց չէ պատահեալ ինչ, և դուք խնդիր մատուցեալէք չինութեան և նորոգութեան, վասն ոյր խոստացայք տալ Դատաւորին 30,000 դահեկան։ Եւ Նորասահման իրքն Հայոց յեկեղեցին Բեթղեհէմի և յԱյրին, հակառակ ասէք առաջին բաժանորդութեան, և 'ի նմին ժամանակի լեալ է իրաւունք հաճութեամբ երկուց կողմանց, և 'ի ժամանակէն յայնմանէ զոր ինչ ունէին երկու ազգք, մնացեալ են 'ի վիճակի իւրեանց, և ոչ է լեալ վէճ, և կամ աւելի եւ պակաս իրք, միայն ՀՅԲ թուի՞ն պատահեցաւ չափազանցութիւնս այս։

Միւնլիպ Էֆէնտի յորո՞մ ժամանակի, եւ վասն ո՞յր

պատճառի եկն, եւ զո՞ր տեղիս 'ի քննութիւն էառ, եւ ո՞ղպիսի եղեւ վախճան գործոյն։ Եւ Համուլլահ Դատաւորին վասն Զիթենեաց լերին տուեալ Հէօճմէթքն 'ի հաստատութիւն առաջնոյ Դատաւորի՞ն էին, եթէ 'ի ժամանակս իւր վասն չինութեան եւ նորոգութեան տեղեաց տուեալ են։ այսոքիկ բացատրութեան պէտս ունին։

Փոխանորդն Ցունաց։

1°.—Վասն այնորիկ խոստացաք տալ Դատաւորին 30,000 դահեկան՝ կործանել զչինուածս Հայոց, զի մեք չինեսցուք զայն որպէս արժանն է, զի գործ չինութեան մեզ յանձն եղեալ է, որովհետեւ ջնջեցան արձանագրութիւնք հրովարտակացն Հայոց, խնամատիւք նոցին չինեալ իրքն խափանեալ համարին, յոր սակս խնդրեցաք զկործանումն նոցին։

2°.—Ի բաժանորդութեան Բեթղեհէմի 'ի ՀԸ թուականէ մինչեւ ՕՀ թուականն միակերպ ընթացեալ եմք, եւ ոչ երբէք լեալ է հակառակութիւն ինչ սահմանի բաժանորդութեան 'ի կողմանէ Հայոց, միայն ՌՀՅԲ թուին աւելորդ իրքն Հայոց խափանեցան 'ի ձեռն Դատաւորի։

3°.—Պատճառ գալստեան Միւնլիպ Էֆէնտեայ, զի 'ի ՌՀՈ թուին խարխալեալ էր հիւսիսային որմն եկեղեցւոյ յատկացեալ Հայոց, և յաղագս պատսպարելոյ զայն չինեցաք կէս կամար 'ի վերայ եկեղեցւոյն Հայոց, և նոքա վիճեալ ընդ մեզ, ետուն քակել զայն օրինօք Դատարանի։ Եւ 'ի ժամանակին յայնմիկ պատահեցաւ յեկեղեցին Բեթղեհէմի Աղէքսանդրիայ ընդհանուր Հիւպատոսն Ռուսաց Գոնդրմիտիմ, և 'ի դառնալ նորա 'ի տեղի իւր՝ ծանուցուցեալ է Փոխարքային զհանգամանս գործոյն, և նա առաքեաց զՄիւնլիպ Էֆէնտի 'ի քննութիւն։ Եւ եղեւ 'ի հասանիլ նորա Յերուսաղէմ, մատոյց 'ի քննութիւն զտեղիսն առաջի Դատաւորին եւ այլազգեաց քաղաքիս, և 'ի նմին ժամանակի հաստատեցաւ օրինօք թէ Հայոց եկեղեցւոյ կապարապատ ձեղունն, տանիսն և օդն, նորոգութիւն կապարին, աւելածութիւնն, եւ հիւսիսային որմոց մինչ 'ի կապարն լինել սեփհական Ցունաց։ և վասն այսր տուաւ մեզ Հէօճմէթ 'ի Դատարանէ, այս էր պաշտօն Միւլիպ Էֆէնտեայ։

4°.—Հէօճմէթքն Հայոց՝ որոց մին տուեալ է նախկին

Դատաւորն սակս նորոգութեան Զիթենեաց լերին, և ըստ միւսն սակս չգործադրելոյ զհրովարտակն Լատինաց։

Փոխանորդն Հայոց, բողոք բառնան Ցոյնք թէ կանթեղք և պատկերք որք կախեցան յեկեղեցին Բեթղեհէմի, իցէ լեալ միայն չնորհիւ Դատաւորին, և ոչ իրրեւ սեփհական իրաւունք Հայոց, և չէ տուեալ Հէօճմէթ 'ի Դատարանէ։ Այլ սակայն վասն գործադրութեան բաժանորդութեան Հայոց՝ ոչ երբէք պակասեցան վէճք և խռովութիւնք 'ի կողմանէ Ցունաց։ Եւ 'ի ՌՂԹ թուին եղեալ արձանագրութիւնն մատուցաւ առ Փոխարքայն Եգիպտոսի, և նա գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի գործադրել զբաժանորդութիւնն ըստ մտաց հրովարտակին Հայոց։ Եւ իրրեւ ընթերցաւ այն 'ի Դատարանի՝ Ցոյնք վերստին յարուցին վէճս և խռովութիւնս, և եղեւ քննութիւն յերկուց կողմանց, եւ Դատաւորն առաքեաց զարձանագրութիւնս դատաստանին առ Փոխարքայն, և 'ի պատճառս խռովութեան պատերազմին անկարելի եղեւ ընդունիլ ըստ պատասխան նորին իրրեւ զամ մի։ Եւ 'ի կարգիլ Դատաւոր Երուսաղէմի Օմար Նասիպ էֆէնտեայ 'ի ՌՂԵ թուին՝ մատուցաք նմա զհրամանագիր Փոխարքային, եւ ապա խնդրեաց զհրովարտակն բաժանորդութեան, եւ յետ ընթեռնլոյ առաջի մեծամեծաց քաղաքիս եւ Ցունաց՝ հաճութեամբ և հաւանութեամբ նոցին, կախեաց զկանթեղս և զպատկերս։ Ցոյնք ունէին Յայրին Ծննդեանն Քրիստոսի պատկերս 11, Հայք բողոքեցին ըստ իրաւանց բաժանորդութեան տալ ինքեանց զկէս նոցին, ընդ որ տհաճեալ՝ կախել տալ կամեցան 'ի ներքոյ պատկերաց նոցին, այլ Հայք ոչ առին յանձն՝ և մնաց այնպէս։

Եւ պատճառ չտալոյ մեզ Հէօճմէթ 'ի Դատարանէ՝ զի ոչ կարացաք լցուցանել զթերին բաժանորդութեան, զի զմանս արար, և զայլս եթող, եւ մեք ոչ կամեցաք ընդունիլ զՀէօճմէթն, թէպէտ Դատաւորն քանիցս ազդ արար մեզ առնուլ։ Եւ իրրեւ մերձեցաւ ժամանակ մեկնելոյ նորա յԵրուսաղէմէ՝ կամեցաւ խանդարել զոր արար յեկեղեցւոջ անդ, և Քաղաքապետն ոչ կամեցաւ երթալ 'ի կոչ նորա, այլ արար պատասխանի՝ թէ գիտութեամբ և հաւանութեամբ ամենեցուն եղեալ իրաց չկամիմ լինել

խափանարար։ Հայք բաժանորդ էին հիւսիսային դրան Այրին՝ և հարկ էր տալ նոցա զմի բանալի նորին, այլ ոչ ետ, և դուռն արեւմտեան 'ի կողմն հիւսիսոյ յառաջագոյն սեփհական տուեալ էր մեզ, յետոյ կամօք և հաճութեամբ իւրով բաժանորդ արար՝ տուեալ երկաքանչիւրոց մէնմի բանալի։ Յեկեղեցին Բեթղեհէմի չեն միայն 2 դրունք, այլ՝ 10 'ի ներքս և յարտաքս, յորոց 2 'ի ձեռս Լատինաց, եւ այլոց տիրեալ են Ցոյնք, եւ մի բանալի արեւմտեան դրան 'ի ձեռս Հայոց։ Ցոյնք ասեն թէ՝ իրաւունք բաժանորդութեան կատարեցաւ 'ի ժամանակս Նուրի էֆէնտեայ, սակայն չէ այդ ճշմարիտ։ Թէպէտ 'ի թուականին յայնմիկ եղեւ կազմութիւն բաժանորդութեան հաճութեամբ երկուց կողմանց, այլ ոչ եղեն բանք և քանակութիւնք պատկերաց և կանթեղաց, զի ոչ էր կարգեալ նա լինել Լուսաբար, այլ գործադրիչ հրովարտակի բաժանորդութեան և բարձող խռովութեան, որպէս և 'ի Հէօճմէթին որ եղեւ 'ի ձեռն նորին՝ չիք թիւ և քանակութիւն կանթեղաց և պատկերաց։ Նուրի էֆէնտի միով հրովարտակաւ երկուց տեղեաց բաժանորդ արար, եկեղեցւոյն Բեթղեհէմի եւ գերեզմանի Ս. Աստուածածնի, զի որպէս գործադրեցաւ բաժանորդութիւնն գերեզմանի Ս. Աստուածածնի, նոյնպէս եղեւ և եկեղեցւոյն Բեթղեհէմի, և հիւսիսային կողմն յատկացաւ Հայոց։ զի որպէս Ցոյնք 'ի յատկացեալ տեղիս իւրեանց ըստ պահանջման հարկին և ժամանակին յաւելուն և նուազեն զթիւս կանթեղաց և պատկերաց իւրեանց, հարկ է նոյնպէս առնել և Հայոց 'ի յատկացեալ տեղիս իւրեանց, զի 'ի ժամանակս արդարասէր Իշխանին մերոյ մի ոք լիցի արգել և խափան, խելամուտ լինել պարտ է 'ի վերայ պարագայիցս այսոցիկ՝ զի չէ արդարութիւն և վայելուչ մարդկութեան ընդ միշտ վիճել Ցունաց ընդ ազգին Հայոց։

Նիստ Երկրորդ։

Քաղաքապետն ասէ՝ որովհետեւ կախեալ իրքն յեկեղեցին Բեթղեհէմի ըստ տրամադրութեան հրամանագրոյն և հրովարտակին բաժանորդութեան եղեալ է 'ի ձեռն նախ-

կին Դատաւորի, որպէս ասացին Հայք, բերցեն ասա զայնոսիկ, զի ընթերցեալ մուծցի յարձանագրութիւնն։

Մատուցին Հայք զհրամանագիրն Փոխարքային, գրեալ 'ի ١٥ Շապան ամսոյ ١٢٥٣, և զՀՀՀՀԷՆ տուեալ երկուց աղգաց 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ, հիմնեալ 'ի վերայ հրովարտակի բաժանորդութեան։ Միւֆթի Էֆէնտին ասէ՝ 'ի բաժանորդութեան ՀՀՀՀԷՆ Նուրի Էֆէնտեայ չիք ինչ պայման թուոյ և քանակութեան պատկերաց և կանթեղաց երկուց կողմանց, թէպէտ Բեթղեհէմի եւ Աստուածածնի բաժանորդութիւնն մի միայն լոկ բառէ բաղկացեալէ, այլ Հայք ասացին թէ բաժանորդութիւնն Բեթղեհէմի նման է բաժանորդութեան Ս. Աստուածածնի, եւ պահանջեն զի եղիցի եկեղեցին Բեթղեհէմի, որպէս լեալ է Աստուածածնին։ Եւ ո՞րպէս լեալ իցէ բաժանորդութիւնն Աստուածածնի 'ի ٢٨ թուականէ մինչեւ ٥٢ թուականն, յաւելեալ իցէ անդ իր ինչ, թէ ըստ Բեթղեհէմի միակերպ ընթացեալ են, հարկ է բացատրել։

Փոխանորդն Հայոց ասէ, 'ի նախընթաց ժամանակս չէ լեալ անդ նոր ինչ յերկուց կողմանց, որ ինչ էր 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ, նոյն է և այժմ, և եթէ լեալէ, և այն առանց խառնութեան և հաճութեամբ երկուց կողմանց։

Փոխանորդն Ցունաց, այնպէս է որպէս ասացին Հայք, եթէ լինէր նոր ինչ 'ի միոյ կողմանէ, 'ի հարկէ չլուեալ միւսոյ կողման, բողոքէր և դատն հասանէր 'ի դատարան. նայեցարուք յարձանագիրս, և հարցէք ցերեւելիս քաղաքին, եթէ գիտեն ինչ՝ պատմեսցեն։ Երբեմն դնին մամ շուրջանակի կանթեղաց և բառնին, եւ այս չէ ինչ նորասահման և խափանիչ օրինաց բաժանորդութեան և առիթ վիճման։ Փոխանորդն Հայոց, ոչ եղեւ վէճ, և եթէ աւելի իր ինչ լեալ իցէ՝ առանց խառնութեան եւ հաճութեամբ երկուց կողմանց եղեալ է։

Միւֆթի Էֆէնտի, վկայեմ առ այս թէ ոչ եղեւ վէճ և նորասահման ինչ յԱստուածածին, որպէս ասացին Հայք և Ցունք։ Ալի Միւհսին Էֆէնտի հաստատեաց զբանս նորին։

Հաֆիզ Բաշիտ Էֆէնտին ընթերցաւ հրամանագիր Փոխարքային և ՀՀՀՀԷՆ բաժանորդութեան, և մուծաւ յար-

ձանագիրս։ Թէպէտ և յայտնի եղեն բանք երկուց կողմանց սակս Ս. Աստուածածնի, սակայն Հայք 'ի նախընթաց նըստին ասացին թէ, 'ի ١٢٥٢ թուին 'ի կախել պատկերաց և կանթեղաց յեկեղեցին Բեթղեհէմի, անդ էին և Ցունք և հաճութեամբ նոցա եղեւ, և 'ի գանկատանս Ցունաց չերեւի հաճութիւն նոցին, և գործն լեալ է առաջի երեւելեաց քաղաքին, եւ 'ի նոցանէ աստ են Միւֆթի եւ Ալի Միւհսին Էֆէնտիք, պատմեսցեն, որպէս տեսին եւ գիտեն։ Միւֆթի Էֆէնտի, 'ի թուին ١٢٥١ Հայք բերին հրովարտակ և ըստ զօրութեան նորին ընդ Դատաւորի քաղաքիս գնացաք 'ի Բեթղեհէմ 'ի քննութիւն եկեղեցւոյն՝ զի նորոգեսցեն Հայք. ընթերցաւ անդ հրովարտակն, եւ 'ի քննութեան պահու ծագեցաւ խռովութիւն 'ի մէջ երկուց աղգաց. Հայք մատուցին զհրովարտակն բաժանորդութեան 'ի ժամանակս Նուրի Էֆէնտեայ, այն եւս ընթերցաւ։ Հայք յեցեալ 'ի զօրութիւն հրովարտակին այնմիկ՝ խնդրեցին լինել կատարեալ բաժանորդ. քննեցաւ Այրն և եկեղեցին. և 'ի կախելն զպատկերս և զկանթեղս թէպէտ անդ էին Հայք եւ Ցունք, սակայն Փոխանորդն Ցունաց՝ ոմանց լռեաց և ոմանց հակառակեցաւ, և 'ի վերջոյ խռովեալ մեկնեցաւ անտի, և Դատաւորն կատարեաց զմնացեալսն. ոչ բաւականացան Հայք այնու, եւ Դատաւորն աւելի իրաց ոչ եւս հրաման, և Հայք եւս ոչ հաճելով թողեալ գնացին՝ եւ գործն մնաց 'ի վիճակի իւրում։

Ալի Միւհսին. Անդ էի եւ ես, այնպէս եղեւ որպէս պատմեաց Միւֆթին։

Քարտուղար դատարանի. Այնպէս եղեւ որպէս ասացին, ոչ հաճեցան երկոքին կողմն, եւ Դատաւորն արար իլամ և առաքեաց առ Փոխարքայն Եգիպտոսի և խնդրեաց առաքել 'ի Կոստանդինուպոլիս, այլ յաղագս ոչ սպասելոյ հրամանի Արքային՝ յետս դարձաւ Իլամն։

Հաֆիզ Բաշիտ Էֆէնտի. 'ի թուին ١٢٤٩ հրամանագիր Փոխարքային ուղղեալ առ Դատաւորն Երուսաղէմի՝ ըստ բողոքելոյ Հայոց. յընթեռնուլն զայն 'ի դատարանի՝ հակառակութիւն լեալ է 'ի կողմանէ Ցունաց, և Դատաւորն քննեալ զվէճն՝ Իլամ արարեալ մատուցեալ է առ Փոխարքայն, այլ պատահեալ 'ի ժամանակս պատերազմի՝

անկարելի լեալ է ընդունել զպատասխան նորին, որպէս պատմեցին Հայք յառաջագոյն. 'ի ժամանակին յայնմիկ ո՞րպէս եղեւ վէճն և ամբաստանութիւնն, և յի՞նչ միտս գրեցաւ մատուցեալ Իլամն. եթէ ունիք զպատճէն նորին՝ մատուցէք, ապա թէ ոչ, ակնարկեսցի յարձանագրութիւն դատարանի և գրեսցի աստ։

Փոխանորդն Ցունաց, ունիմք զպատճէն նորին վաւերեալ կնքով Դատաւորին, և յընթերցմանէ նորին իմանի հանգամանք դատին. եւ երկրորդ օրինակն վաւերեալ 'ի թուին ՌՀՈ 'ի Եահեայ Թէվֆիգ Էֆէնտի Դատաւորէն Երուսաղէմի։

Բաղաքապետն, Ծանուցաւ իմաստ Իլամին և ամբաստանութիւն Ցունաց, և 'ի քննութենէ յայտնի երեւեցաւ թէ յեկեղեցին Բեթղեհէմի կանթեղք եւ պատկերք կախեալ են 'ի ձեռն Օմար Նասիլ Էֆէնտեայ 'ի թուին ՌՀՈՀ։ Որովհետեւ ոչ են նշանակեալ թիւք եւ քանակութիւնք նոցին, եթէ արժան իցէ մատուցէ աստ Փոխանորդն Ցունաց զցուցակս նոցին, զորոց ինքն ամբաստան լինի։ Փոխանորդն Ցունաց, եթէ հաճոյ թուի ձեզ՝ ամենեքեան երթիցուք 'ի Բեթղեհէմ և անդ առաջի երկուց ազգաց և պաշտօնէից քննեսցուք և ստուգեսցուք զամենայն ինչ, յայնժամ չմնայ ումեք ասել ինչ, հաճոյ թուեցաւ պաշտօնէից և Հայոց։

Ի թուին ՌՀՁ գնացին 'ի Բեթղեհէմ Պաշտօնեայք քննութեան, ընդ որս Հայք և Յոյնք, և հաճութեամբ ամենեցուն սկիզբն արարին քննութեան և արձանագրեցին, որք են.

Ի մէջ Այրին և 'ի վերայ Մննդեան տեղւոյն պատրաստ գտեալ իրքն.

Կանթեղ.	Պատկեր.	
4	—	Լատինաց։
6	3	Ցունաց։
4	—	Հայոց 'ի թուին ՌՀՈՀ։
2	3	Դարձեալ Հայոց կախեալ 'ի թուին ՌՀՈՀ։

Ի շրջապատս Այրին պատրաստ գտեալքն.

Պատկեր.

1 Լատինաց։

Պատկեր.

6 Ցունաց։

3 Հայոց 'ի թուին ՌՀՀՈ։

3 Հայոց 'ի թուին ՌՀՈՀ։

Ի խորանէ Մննդեան տեղւոյն մինչեւ յարեւմտեան դուռն Լատինաց պատրաստ գտեալքն.

Կանթեղ.

9 Լատինաց։

11 Ցունաց։

6 Հայոց 'ի թուին ՀՈ։

5 Հայոց 'ի թուին ՕՀ։ Ի թուին ՌՀՀՈ հիւսիսային կողմն սեփհականեալ Հայոց. յորում 'ի թուին ՌՀՈՀ կախեալ կանթեղաց թիւն.

3 Ծանգիման դրան Այրին (այժմ 4 և 'ի միջի նոցա 1 փոքր ջահ)։

3 Հիւսիսային կողմն սեան (այժմ 6)։

3 Հարաւային կողմն սեան (այժմ 6)։ Ցաւելեալ 1842 յամին։

Այրին պատուով 'ի կողմն հիւսիսոյ 'ի վերայ արեւմտեան բաժանորդ դրան պատրաստ գտեալքն.

2 Պատկեր 1 փոքր, 'ի թուին ՌՀՀՈ 'ի ժամանակս բաժանորդութեան։

1 Կանթեղ 'ի թուին ՌՀՈՀ նոր կախուած։

2 Շղթայք չարան կանթեղաց մին 'ի հարաւ և միւսն յարեւելս, կախեալ 'ի թուին ՌՀՈՀ, (ցարդ կայ մնայ անգործածելի)։

1 Վարագոյր առաջի խորանին Հայոց։

Ի վերայ հիւսիսային դրան Այրին ունէին Յոյնք ծածկոցս, և 'ի թուին ՌՀՈՀ խնդրեցին Հայք լինել բաժանորդ այնմ. և 'ի չկամիլն Ցունաց, երարձ իսպառ Դատաւորն։ Նոյնպէս եւ զխաչվարս Ցունաց յորմոյ անտի կից դրան Այրին, ուր կախեալ են Հայք զերիս պատկերս, մին նոր և մեծ. երկրորդն 'ի ներքոյ խաչվարաց 'ի միջնատեղի որմոյն բարձրացեալ 'ի տեղի խաչվարաց հաւասար որմոյն, եւ երրորդն եղեալ է 'ի տեղի վարագուրին։ Պաշտօնեայք քննութեան ասեն. Նկարագրութիւն վիճին Ցունաց ընդ Հայոց վասն եկեղեցւոյն Բեթղեհէմի, որպէս

յայտնի երեւի 'ի բովանդակութենէ արձանագրութեանս. զի յառաջագոյն բազում անգամ վէճս և խռովութիւնս յարուցեալ են 'ի միջի իւրեանց վասն եկեղեցւոյն, Այրին Ծննդեան և գերեզմանի Ս. Աստուածածնի. և Օսմանեան Տէրութիւնն 'ի թուին ١٢٢٨ առաքեալ է Դատաւորս եւ Ոստիկանս յԵրուսաղէմ և հրովարտակաւ բաժանորդ արարեալ զերկուս տեղիս՝ երկաքանչիւրոց տուեալ Հէօճմէթս։ Եւ 'ի նոյն թուականէ մինչեւ ١٢٥٢ թիւն, զոր ինչ ունէր ոք՝ այնու շատացեալ է, և առանց հակառակելոյ միակերպ ընթացեալ են։ Սակայն յեկեղեցին Բեթղեհէմի և յԱյրին եկեղեցական ազգաք և զարդարանք Ցունաց առաւել են քան զՀայոցն. եւ 'ի բաժանորդութեան Հէօճմէթս ոչ են գրեալ յայնժամ բացորոշ եկեղեցական սպասս իւրաքանչիւր ազգաց. և մի միայն 'ի բաժանորդ բառէ բաղկացեալ։ Կամեցեալ Հայոց հաւասար բաժանորդ լինել Ցունաց, 'ի թուին ١٢٥٢ 'ի ձեռն Դատաւորին առաջի Քաղաքապետին և գլխաւորաց այլազգեաց քաղաքին կախեալ են ըզպատկերս և զկանթեղս, զորս գրեցաք 'ի վեր անդր։

Յայնժամ Ցոյնք ոչ են տուեալ հաճութիւն, եւ Հայք ոչ են շատացեալ, թէ տակաւին ոչ եղեւ կատարեալ բաժանորդութիւն. և 'ի լինել գժտութեանս այսմիկ՝ Փոխանորդք երկուց ազգաց եւ ժողովականք թողեալ զգործն 'ի վիճակի իւրում մեկնեալ են անտի, և վասն այսր ոչ են տուեալ Հայոց Հէօճմէթ 'ի դատարանէ։ Եւ թէպէտ յետոյ կամեցեալ է Դատաւորն եղծանել զկրոն զոր արար, այլ դադարեալ 'ի պաշտօնէ իւրմէ՝ մեկնեալ է անտի։ Եւ 'ի քննութենէս յայսմանէ յայտնի եղեւ թէ գործն մնացեալ է այնպէս 'ի վիճակի իւրում. և ոչ են հակառակեալ Հայք հրովարտակին Ցունաց, որ զկնի պատահմանցս ելեալ է։ Նոյնպէս և գործն լեալ է 'ի ժամանակս Օմար Նասիպ Դատաւորին, և ոչ ամբաստանեալ Համուլլահ Դատաւորին, որ 'ի ժամանակի քննութեանս լրացաւ պայմանեալ ժամանակ նորին և մեկնեցաւ ասի։ Այս է նկարագրութիւն դատին եկեղեցւոյն Բեթղեհէմի։

Նիստ Երրորդ։

Հաքըզ Բաշիտ Էֆէնտի։ Վերջացաւ քննութիւն դատին Բեթղեհէմի, հարկ է սկիզբն առնել քննութեան Զիթենեաց լերին. որպէս խոստացան Հայք յառաջագոյն տալ զպատշաճաւոր պատասխանիս զնմանէ, այժմ պատմեսցեն ճշդութեամբ զչինուածոց եւ զնորասահման իրաց 'ի տեղւոջ յայնմիկ։

Փոխանորդն Հայոց. Վասն չինութեան և նորոգութեան լերին Զիթենեաց՝ տուեալ է մեզ հրովարտակ արքունուստ 'ի թուին ٥١ և ապա 'ի հաստատութիւն նորին, վասն Զիթենեաց լերին եւ ընդհանուր նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան 'ի ձեռն Հայոց, դարձեալ հրովարտակ 'ի թուին ٥٢, որ մին է ընչեալ հրովարտակաց։ Սակայն առաջինն ոչ է ընչեալ, չինութիւնք և նորոգութիւնք Զիթենեաց լերին հիմնեալ են 'ի վերայ երկուց հրովարտակաց՝ և լեալ հրամանաւ նախկին Դատաւորի և երեւելեաց քաղաքիս, եւ այնուհետեւ ոչ ուրեք լեալ է չինութիւն և նորոգութիւն։ Իսկ նոր հրովարտակն Ցունաց՝ որ տուեալ է յամսեան Զիլհիճէ և 'ի թուին ٥٢ և բովանդակէ զհարցումն նորոգելի տեղեաց, թուական նորին յետոյ է քան զթուականն հրովարտակաց մերոց, որովք արարաք զչինութիւնն և զնորոգութիւնն, և չեմք հակառակ նոցին հրովարտակի։ Ցոյնք ծանուցեալ են Հիւպատոսին Ռուսաց թէ՝ Հայք ոչ ունին հրաման չինութեան Զիթենեաց լերին, և թէ՝ տեղին այն ուխտատեղի է Հայ, Ցոյն և Կաթոլիք կրօնից, եւ թէ զրանալի տեղւոյն գրաւեալ են Հայք. անտեղի են այսոքիկ՝ զի լեառն Զիթենեաց, ոչ է յատկացեալ միայն երից ազգաց կատարել զուխտս, այլ համայն Քրիստոնէից. զի տեղի է Համբարձման Քրիստոսի յերկինս. և դուռն նորա ոչ երբէք փակեալ է, զի Քրիստոնեայք ըստ նախնի սովորութեանց կատարեն զուխտս և զպատարագս, որպէս Լատինք 'ի տարւոջ մի անգամ 'ի ներքոյ գմբեթին հրովարտակաւ, Ցոյնք առանց հրովարտակի 'ի գաւթին երկիցս 'ի տարւոջ. Խպտիք և Ասորիք ըստ սովորութեան, և ոչ ումեք ընդդիմացեալ են Հայք։ Եւ ըստ մտաց հրովարտակին տուաւ մեզ Հէօճմէթ 'ի դատարանէ, սակս պահպանութեան եկեղեցական սպասուց և յանդորրութիւն Լուսարարաց՝ առնուլ զբանալին 'ի ձեռաց այլոց և մնալ 'ի ձեռս Հայոց. զի իւրաքանչիւր

ազգ ունի յԵրուսաղէմ զիւր սեփհական տեղիս, և վաւերական գրեանքն մեր յայտ առնեն թէ, լեառն Զիթենեաց սեփհական է Հայոց. եթէ Յոյնք ունին հրաման ինչ սակս այնր տեղւոյ՝ մատուսցեն։ Եկեղեցին Բեթղեհէմի բաժանորդութեամբ է երկուց ազգաց, և հարկ էր զմի բանալի արտաքին դրան ունիլ Հայոց իրրեւ սեփհական իրաւունք. բայց Յոյնք անիրաւութեամբ զլացան և ոչ կամեցան տալ զայն. այժմ զհետ մոռեալ են առնուլ և զմի բանալի Զիթենեաց լերին՝ որ սեփհական է Հայոց, եւ այս-չէ իրաւունք։

Փոխանորդն Յունաց. Պատասխանիք Հայոց վասն Զիթենեաց լերին, և չինութիւնքն ըստ մոաց հրովարտակաց, և սեփհականութիւն տեղւոյն լինիլ Հայոց, 'ի հարկէ ոչ են ճշմարտութեամբ. զի լեառն այն 'ի վաղ ժամանակաց անտի բաժանորդ և ուխտաւորեալ է երից ազգաց և Մահմետականաց եւս. զի նախ քան զքայքայիլ դմբեթի Նորին 'ի շարժէ՝ բանալին էր 'ի ձեռս դիւղական այլազգւոյ միոյ, և չինեցաւ համահամ հաւանութեամբ երից ազգաց՝ օրինօք Դատարանի և հաստատուն էլօճմէթիւ, եւ տուաւ յայնժամ իւրաքանչիւրոց մէն մի բանալի, և մին եւս մնաց 'ի ձեռս այլազգեաց. ոչ երբէք լինէր այսպիսի միաբանութիւն, եթէ տեղին լինէր մի միայն սեփհական ազգին Հայոց, և չէր հնար տալ իւրաքանչիւրոց բանալի, յետ այսպէս որոշելոյ զկնդիրն, Հայք 'ի Կոստանդինուպոլիս խարէյութեամբ մատուցին աղերսագիր և առին հրովարտակ, և այն միայն էր վասն նորոգութեան և պատարագի, և ոչ նորահնար չինութիւնս սահմանել, որք են տախտակամած ճեղունն, նոր սենեակք, կախել պատկերս և կանթեղս, տարածել սիւռոցս, և դնել աշտանակս, եւ մշանջենաւոր թողուլ անդ, որ միայն 'ի ժամ պատարագին պարտ էր մնալ, այս ամենայն հռչակեալէ 'ի լեզուս հասարակութեան։ Եւ այսոքիկ յորժամ քննեցան 'ի ժամանակս վէճին Լատինաց առաջի Բաղաքապետին և գլխաւորաց քաղաքին Ալէպ կոչեցելոց, որոց մենասանն կից է տեղւոյն՝ Ճարտարապետին և Զիթենեաց լերին Շէյխին և այլոց. յայնժամ յայտնի եղեւ թէ Հայք ոչ են վարեալ ըստ մոաց հրովարտակացն, այլ արտաքոյ նոցին և նորա-

սահման։ Որովհետեւ ջնջեալ է արձանագրութիւն հրովարտակին, խափանեալ է և զօրութիւն նորա, չինեալ և սահմանեալքն լինին առանց հրամանի, ուստի պարտ է քակել եւ դարձուցանել յառաջին դիրս։ Այլ որ ասեն Հայք, թէ համեմատ հին հրովարտակին մերոյ լեալէ չինութիւնն, անտեղի է, զի 'ի նմա գրեալ է 'ի վերայ նախնի դրից։ Եւ յայսքան դարուց 'ի վեր և ոչ 'ի միում ժամանակի լեառն Զիթենեաց լեալ է սեփհական ազգին Հայոց։ Եւ տակաւին ասեն թէ բաց 'ի ջնջեալ հրովարտակէն, ունիմք այլ հրովարտակ սակս նորոգութեան. այլ զի ջնջեալ է արձանագրութիւն իսկական հրովարտակին, և վերջինն հիմնեալ է 'ի վերայ նորա, առաջինն որ ունի իսկապէս զօրութիւն, նա եւս ջնջեալ և անգործադրելի համարի։ Ասեն դարձեալ թէ՝ ոչ երբէք փակեալ եմք զդուռն և արգելեալ զուխտաւորս, սակայն յառաջնում ամի ես ինքնին անձամբ գնացի ունելով ընդ իս զմն իշխանազուն Տէրութեան Ռուսաց՝ և գտաք փակեալ զդուռն, բաղխեցաք՝ և ոչ բացին. սպասեցաք անդ վայրկեանս 15, և առանց ուխտի դարձաք յետս, և Իշխանն բարկացեալ բողոք բարձեալ է. լուեալ է զայս և գիտէ Ալի Միւհսին Էֆէնտի։

Փոխանորդն Հայոց. Անկաւ դմբեթն 'ի շարժէ, և 'ի ձեռն Դատաւորին նորոգեցաւ ծախիւք երից ազգաց, և տուաւ իւրաքանչիւրոց մէն մի բանալի՝ որպէս ասացին Յոյնք։ Սակայն յայնժամ ոչ ընկալան Հայք զառաջարկութիւնս Դատաւորին, և բողոք բարձեալ մատուցին զվաւերական գրեանս զոր ունէին՝ և նոքօք հաստատէին թէ՝ նորոգութիւն տեղւոյն միայն սեփհական է Հայոց, այլ Դատաւորն ոչ մատոյց ունկն բանից նոցա, և զրկեալ ըստ Հայս, յառաջ վարեաց զհրաման իւր, և մեք ծանուցաք 'ի Դուռն Տէրութեան և խնդրեցաք զնորոգութիւն գրոց մերոց. գթացեալ Արքայի չնորհեաց հրովարտակ 'ի թուին ՌՀՕԱ յամսեանն Բէպիլ էվվէլի, և ըստ մոաց նորին եղեւ չինութիւնն, պատարագն և եկեղեցական սպասքն, և արձանագրութիւն նորին ոչ է ջնջեալ, այլ երկրորդին, որ ոչ միայն պարունակէ զգործ չինութեան Զիթենեաց լերին, այլ և զընդհանուր նորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան. որովհետեւ ջնջեցան հրովարտակք Տաճարին

այնմիկ՝ ջնջեցաւ ընդ նոսին և սա, այլ միայն վասն Տաճարին խմացեալ լինի, և ոչ վասն լերին Զիթենեաց, զի նորոգութիւն նորին սեփհական է Հայոց և այլք չունին իրաւունս։

Հաֆըզ Բաշիտ Էֆէնտի. Լուաք զբանս երկուց կողմանց, հայեցեալ 'ի պատմութիւնս Հայոց, երևի թէ նորոգութիւն Զիթենեաց լերին ըստ մտաց հրովարտակին որ ՀԱ թուին, հրամանաւ Դատաւորին և Շէրիի Օրինաց, և արձանագրութիւն նորին ոչ է ջնջեալ, այլ երկրորդին, եւ այն 'ի պատճառս պարունակութեան նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան. իսկ Յոյնք պնդեն թէ առաջին հրովարտակն եւս ջնջեալ համարի, զի երկրորդն 'ի վերայ նորա հիմնեալ է. աստի ծագեցաւ անհամաձայնութիւն, զի մին պնդէ թէ ոչ է ջնջեալ, և միւսն զնորին հակառակն։ Եւ 'ի հրովարտակս Յունաց յիշեալ է թէ ՀԱ—ՀԲ թուականաւ Հայոց տուեալ երից հրովարտակաց արձանագրութիւնքն ջնջեալ են. յայս հայեցեալ երկոքին հրովարտակքս այսոքիկ ջնջեալ համարին եւ Փոխանորդք հակառակութեամբ զմին թողուն և զմիւսն ջնջեն, և յանհամաձայնութենէ նոցին խնդիրն եղեւ անխմանալի, ուստի հարկ է բացատրել։

Փոխանորդն Հայոց. Այսոքիկ են ջնջեալ հրովարտակքն 'ի թուին ՀԱ Բէպիլ ախբր, սակս նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան. ՀԱ Բէպիլ ախբր, սակս նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի. ՀԲ Սէպէր, սակս նորոգութեան Զիթենեաց լերին. ՀԱ թուականի հրովարտակին նորոգութիւնն (թէճտիտ) ճառէ զընդհանուր նորոգութենէ Սուրբ Յարութեան։ Առաջին հրովարտակն սակս նորոգութեան Զիթենեաց լերին՝ ոչ է ջնջեալ, և այս բացայայտ երևի 'ի հրովարտակն Յունաց. «Թէպէտ ջնջեցան երեքին հրովարտակքն Հայոց, այլ յարդեսցին հրովարտակք և հրամանագիրք, որք են 'ի ձեռս երկուց ազգաց»։

Յայտնէ նորոգեալ համարին գրեանք մեր՝ զոր ունիմք վասն նոյն տեղւոյ, և մատուցանեմք զայնս՝ զի ընթերցեալ ծանիջիք զողջամիտ պատմութիւնս մեր. 'ի թուին Հիճրէթի՝ ՉԶԷ, ՈՀԲ, ՈՀԳ, ՌՀԱ, ընդ ամենայն հրովարտակք Դ։ Եթէ ունին Յոյնք թուղթս ինչ՝ մատուցցեն, եթէ հարկ էր երկուց հրովարտակացն 'ի միասին ջնջիլ, որպէս պնդեն Յոյնք, Ս. Յարութեան հրովարտակն եւս ջնջեալ է. յայնժամ պարտ էր ամբողջ և անեղծ համարիլ զհրովարտակն Բեթղեհէմի, զի իւրաքանչիւր տեղւոյ մէն մի հրովարտակ ջնջեալ է. ուստի անտեղի է հակառակութիւնն Յունաց, թէ առաջին հրովարտակն եւս ջնջեալ է։

Փոխանորդն Յունաց. Հայեցեալ յիմաստս հրովարտակին մերոյ բացայայտ ծանուցանէ թէ՝ վասն երից տեղեաց յորոց վերայ լեալ է խռովութիւնն, ջնջեալ են արձանագրութիւնք երից հրովարտակացն Հայոց, և 'ի ձեռս նոցա լեալ է հրովարտակս Դ, երեքն ՀԱ թուականաւ վասն Տաճարի Ս. Յարութեան, Բեթղեհէմի, և Զիթենեաց լերին, և չորրորդն ՀԲ թուին վասն Համբարձման, որ հաւատարիմ և 'ի վերայ առաջնոյն հիմնեալ հրովարտակն է, յայտնի է թէ երկու հրաման միով իմաստիւք եղեալ է, եւ վերջինս խափանէ զզօրութիւն առաջնոյն. օրէնք աշխարհի է, եթէ վասն միոյ խնդրոյ լիցի կրկին հրաման թէ միոյն իսկն, և թէ միմեանց հակառակ լիցին, վերջին հրամանն 'ի պատուի է, և ըստ այնմ գործի. ուստի չէ հարկ վերատին կրկնել, բաւական է ջնջումն վերջին հրովարտակին, որով ջնջեալ է և առաջինն։ Յայտնի է ամենեցուն թէ մինչեւ 'ի թուականն ՌՀԲ և ոչ մի ժամանակ լեառն Զիթենեաց սեփհական լեալ է Հայոց, և ոչ ուղիղ համարի պատասխան նոցին, թէ ջնջումն երկրորդ հրովարտակին Համբարձման վասն բառի Ս. Յարութեան է, և ոչ Զիթենեաց լերին. նախ 'ի հրովարտակին մերոյ բացայայտ գրեալ է թէ՝ վասն Ս. Յարութեան, Բեթղեհէմի և Զիթենեաց լերին, Հայոց տուեալ երեք հրովարտակքն ջնջեալ են։ Երկրորդ յեղծանիլ միոյ հրովարտակին, որ բովանդակէ զերկուս գործս, կարելի՞ է միոյն մնալ և միւսոյն խափանիլ, որ հակառակ է օրինաց և իմաստուն մըտաց։ Երրորդ՝ բովանդակ չինութիւնք լերին Զիթենեաց հակառակ են հրովարտակաց, յորս յեցեալ են Հայք. զի 'ի նոսին հրամայեալ է նորոգել 'ի վերայ նախկին գրից, և զի եղծեալ են հրովարտակքն, խափանեալ են և զօրութիւնք նոցին. քննեսցին էջ օճճէթք նախկին Դատաւորի և 'ի նոցանէ յայտնի երևի թէ հակառակեալ են Հայք

հրովարտակաց և 'ի պատճառս երկու իրացս այսոցիկ խափանեալ են շինուածքն։

Արդ՝ խնդրեմք զի քակեսցին բովանդակ շինութիւնք Հայոց, և տեղին դարձցի 'ի վիճակն առաջին, որպէս էր նախ քան զթուականն ՌՅՕՂ։

Ընթերցան 2 հրովարտակքն եւ 5 Հէօճմէթքն Հայոց սակս շինութեան Զիթենեաց լերին, և մուծան յարձանագիրն։

Հաթիզ Բաշիա Էֆէնտի. Շինութիւնք Զիթենեաց լերին հիմնեալ են 'ի վերայ երկուց հրովարտակաց. մին մեծագոյն և միւսն 'ի հաստատութիւն նորին. և երկոքեանն պարունակեն զխնդիր նորոգութեան, ըստ խնդրանաց Հայոց. նորոգել 'ի վերայ բնական դրից, եւ մի ոք արգելուլ զպատարագս և զկանթեղս նոցա. ոչքա են իմաստք հրովարտակաց, և 5 հատոր Հէօճմէթք տուեալ 'ի Դատաւորաց, առաջին՝ հիմնեալ 'ի վերայ առաջին հրովարտակին, յորում հրաման տայ Հայոց շինել սեղան 'ի ներքոյ գըմբեթին և դնել զսպաս նորին, և ուղիղ զրանալի տեղւոյն։ 2. և 3. Հէօճմէթքն հրաման տան սալել զյատակս գաւթին, ծեփել զորմն, շինել ջրամբար 'ի կողմն հիւսիսոյ, և նորոգել զհարաւայինն, շինել զարտաքին դուռն, և ճգել անտի ձեղուն տախտակամած մինչ 'ի դուռն գմբեթին, շինել սենեակ լուսարարի։ 4. Շինեալ են սենեակքս 'ի վերայ ճիթահանին, զորոյ զտեղին գնեալ են 'ի գիւղականաց, հրամանաւ Դատաւորին՝ մի 'ի ներքոյ 2 դրամբք և 2 մեծ և փոքր սենեակ 'ի վերայ նորա, և յետ աւարտելոյ զշինութիւնն տուեալ է հինգերորդ Հէօճմէթն Համտուլլահ Դատաւորն, և բացայայտ գրեալ է թէ, ոչ է վաստակար ուժեք։ Սակայն Ցոյնք բողոքեն թէ շինութիւնքն ոչ են ըստ մտաց հրովարտակաց և Հէօճմէթից, այլ նորասահման և ինքնահնար, ուստի հարկ է բացայայտ որոշել, թէ ո՞ր 'ի նոցանէ համեմատ հրովարտակին է եւ ոյք ոմանք հրամանաւ Դատաւորին. զի երկոքին կողմն միաբանին 'ի վերայ եղծման միոյ հրովարտակին և 'ի վերայ միոյն հակառակին, քննեցան իմաստք հրովարտակաց. եթէ արդարեւ ըստ բողոքելոյ Ցունաց ջնջեալ գոլով վերջինն, հարկ լինի՞ առաջնոյն եւս ջնջիլն, թէ ըստ ծանուցանելոյ

Հայոց անեղծ մնալ։ Միւֆթի, Բաղաքապետն և Դպրապետ դատարանի, 'ի ձեռն որոյ գրեալ են Հէօճմէթքն, ընթերցին զգրեանս և մանրամասն քննութեամբ որոշեալ մաքրեսցեն շինութիւնք տեղւոյն այնորիկ։

Միւֆթի Էֆէնտի. Երկոքին հրովարտակքն պարունակեն զխնդիր շինութեան, պատարագելոյ եւ զկանթեղս կախելոյ. վերջինն 'ի հաստատութիւն առաջնոյն է տարբեր թուականաւ և արձանագրութիւնն ջնջեալ. և 'ի մասին շինութեան չունի զօրութիւն. այլ բարւոք թուի որոշել, թէ ոյք համաձայն հրովարտակին են, եւ ոյք հրամանաւ Դատաւորին. հրովարտակք հրամայեն 'ի վերայ նախկին դրից, ո՞ր տեղիքն 'ի վերայ նախնի հիմանն՝ և ո՞ր տեղիքն արտաքոյ նորին են. որովհետեւ բողոքողք Ցոյնք են, նոցա պարտ է որոշել եւ պատմել. եթէ Հայք հաստատեսցեն զնոսին, բարի, իսկ եթէ հակառակեսցին, ըստ մտաց հրովարտակաց վարիմք և համոզեմք զերկոսին կողմն։ Դպրապետ դատարանի ասէ՝ երկոքին հրովարտակքն Հայոց զխնդիր նորոգութեան պարունակեն, որպէս ասաց Միւֆթին, և գործ շինութեան յանձնեալ է Ցունաց, արգելեալ զՀայս, ուստի հարկ է ջնջեալ համարիլ զառաջին հրովարտակն Հայոց, և եթէ չլինի եւս, չունի զօրութիւն վասն շինութեան։ Սակայն նախ պատմեսցեն Ցոյնք զգործ շինութեան, և յետ այնորիկ խօսեսցուք։

Փոխանորդն Ցունաց. Աւելորդ և արտաքոյ Հէօճմէթից շինուածքն են այսոքիկ. երես արտաքին դրան երկթապատ լինիլն, և 'ի վերայ դրան այնորիկ 'ի ներքին կողմն Հայկական արձանագրութիւնն. կանթեղք կախեալ 'ի տախտակամածէ, պատկերն 'ի վերայ դրան գմբեթին, երկաթի ծորակաւ փոքր լուսցարանն 'ի դաւթին. վերին յարկն 'ի վերայ սենեկի լուսարարին եւ դուռն նորին, քարեայ սանդուխն երկաթի յենարանաւ. մի փոքր սրճարան կից սենեկաց 'ի վերայ ճիթահանին, եւ ներքին մեծ սենեկի արտաքին դուռն երկաթապատ. այսոքիկ շինուածովք ձեւացեալ է մի փոքր վանք. Տեսուչն եւ սպասաւորքն յայտ առնեն զմնջենաւորութիւն նորին. և եթէ քննեսցին, դիւրաւ յայտնի ճշմարտութիւնն, և ոչ է պարտ մեզ քննել և որոշել զամենայն մի ըստ միոջէ, այլ պաշ-

տօնէից քննութեան պէտս ունի, եթէ արժան իցէ՝ քննեալ որոշեսցեն։

Փոխանորդն Հայոց. Շինուածքն 'ի դմբեթին և արտաքոյ նորին ամենեքեան գրեալ են 'ի հրովարտակս և համաձայն են Հէօճմէթից, այլ Ցոյնք բողոքեն ընդդէմ նոցին. երկաթն յերեսս արտաքին դրան չունի տարբերութիւն 'ի փայտէ, բաւական է որ միայն դուռ է, և ամրութիւն նորին է սակս պահպանութեան և զգուշութեան ներքին կարասեաց։ Հայկական արձանագրութիւնն ուսեալ եմք 'ի Ցունաց. զի 'ի նորոգութեան տաճարին Ս. Ցարութեան լցին յամենայն ուխտատեղիս Ցունական արձանագրութեամբ. Հայոց երեք տող արձանագրութիւնն նորոգութեան տեղւոյն չունի վնաս ունեք, լուացարանն 'ի պէտս ուխտաւորաց և այլոց է, քարեայ սանդուխքն սակս ելանելոյ 'ի վերին սենեակս յակամայից չինեալ, կանթեղք տախտակամած ձեղուն յիշեալ է 'ի հրովարտակին, պատկերն 'ի վերայ դրան գմբեթին՝ մին 'ի սպասուց պատարագին է. կրկնայարկ սենեակն լուսարարին, ներքինն 'ի պատսպարել զկահս և զկարասիս, եւ վերինն ննջարան նորին։ Սենեակքն 'ի վերայ ձիթահանին, արտաքոյ է դաւթին և ոչ ունեք վնաս։

Ցետ այնորիկ պաշտօնեայք և երեսփոխանք համահամ հաւանութեամբ 'ի միասին քննեցին զտեղիսն, բաղդատելով ընդ հրովարտակս և ընդ Հէօճմէթս, և յերիս մասունս որոշեցին։

Մասն Առաջին՝ համաձայն հրովարտակի և Հէօճմէթից։

Հայք ունին հրաման պատարագելոյ 'ի ներքոյ գմբեթին եւ կատարել զպաշտամունս, ուստի հարկ է ունել զսպասս։ Սեղանն 'ի ներքոյ գմբեթին, կանթեղք, պատկեր, աշտանակ, սփռոց, սոքա անհրաժեշտ են 'ի ժամ պատարագի ըստ օրինաց իւրեանց։

Նորոգութիւն արտաքին դրան, ծեփ որմոց դաւթին. նորոգութիւն հին ջրամբարին 'ի կողմն հարաւոյ. սալիւ յարդարել զդաւիթն։

Մասն Երկրորդ արտաքոյ հրովարտակին և համաձայն Հէօճմէթից։

Սեփհականել Հայոց զրանալի արտաքին դրան. Սա-

դաչն տախտակամած ձեղունն, ներքնայարկ սենեակն լուսարարի, ընդարձակումն արտաքին դրան 'ի բարձր և 'ի լայն, նոր ջրամբարն 'ի կողմն հիւսիսոյ, ներքնայարկ սենեակն 'ի վերայ ձիթահանին կրկին դրամբք՝ մին յարտաքս եւ միւսն 'ի դաւիթն, և 'ի վերայ նորա երկու սենեակք։

Մասն Երրորդ՝ արտաքոյ հրովարտակաց և Հէօճմէթից։

Երկաթապատ երեսն արտաքին դրան, Հայկական արձանագրութիւնն 'ի վերայ նորա, կանթեղք կախեալք 'ի ձեղունսն, մի պատկեր 'ի վերայ դրան գմբեթին, երկաթի ծորակաւ փոքրիկ լուացարանն, վերնայարկ սենեակն լուսարարի, քարեայ սանդուխտն երկաթի յենարանաւ, երկաթապատ երեսն արտաքին դրան սենեկի ձիթահանին։

Փոխանորդն Հայոց. Շինութիւնք եւ նորոգութիւնք լերին Զիթենեաց թէպէտեւ բաժանեցաւ յերիս մասունս, այլ Ցոյնք 'ի պատասխանիս իւրեանց՝ յառաջոյ եւ զկնի՝ միշտ պնդեցին թէ շինուածքն հակառակ են հրովարտակի իւրեանց, և խնդրեցին զկործանումն նոցին. սակայն նոքա կանխագոյն են քան զթուական հրովարտակին, որպէս յայտնի եղեւ 'ի Հէօճմէթից. զի շինութիւնքն աւարտեալ են 'ի թուին ١٢٥٢ յամսեանն Շապանի, եւ հրովարտակ նոցին եղեալ է 'ի թուին ١٢٥٢ յամսեանն Զիլհիճէի. ասի յայտնի երեւի թէ նոքա 5 ամսեայ ժամանակաւ յառաջ աւարտեալ են քան զթուական հրովարտակի նոցին, որոյ չեղեւ ընդդիմութիւն, եւ չիք ինչ յիշատակութիւն 'ի նմին սակս քակելոյ և աւերելոյ եղեալ շինուածոց, այլ քննութիւն տեղեաց որք կարօտ են նորոգութեանց. այսուհետեւ նոցա յանձն եղեալ է շինութիւնն. բառդ այսուհետեւ՝ ոչ նշանակէ անցեալ եւ զներկայ ժամանակս, այլ զապառնին, ուստի յանիրաւի եւ հակառակ հրովարտակի նոցին է թախանձումն Ցունաց զկործանումն շինուածոց։

Որպէս այժմ Ցոյնք, նոյնպէս և յառաջագոյն Լատինք 'ի Դատարանի զնոյն պահանջեցին. այլ 'ի ծանուցանելն մեր 'ի Դուռն Տէրութեան, եկն հրամանագիր զի մնասցեն շինուածքն. ընթերցեալ մուծաւ յարձանագիրն եւ սոյն հրամանագիր։

Փոխանորդն Յունաց. Հայք օրինաւոր ոչ դատին ըղ-պատասխանիս մեր, և թէ չինուածքն աւարտեալ են նախ քան զթուական հրովարտակին. այլ զի մեզ յանձնեալ է ընդհանուր նորոգութիւնն, որոյ վասն խնդրեմք զաւերումն չինուածոց, որք ամրոխեալ կրիւք ասեն թէ հակառակ վարին հրովարտակին, և զի յիշեալ է 'ի նմին թէ ջնջեցան երեքին հրովարտակք Հայոց. բառդ ջնջեալ՝ նշանակէ իմաստիւք նոցին չինեալ իրաց խափանումն, և բառդ այսուհետեւ՝ եթէ միայն վասն ապառնի ժամանակի լինէր, չէր հարկ ջնջումն հրովարտակաց, այլ զի կան տակաւին կանգուն չինուածքն, պարտ է կործանել։ Հայք յեցեալ են 'ի բառն այսուհետեւ, և ոչ ակնարկեն 'ի ջնջումն հրովարտակաց իւրեանց, զի յորմէ խուսարեն՝ 'ի նոյն ըմբռնին։ Եւ հրամանագիրն վասն դատին Լատինաց է, եւ ոչ կարէ խափանել զգործադրութիւն հրովարտակին։

Հաֆիզ Բաշիա Էֆէնտի. Բովանդակ չինութիւնք լերին Զիթենեաց՝ կանխագոյն է քան զթուական հրովարտակին Յունաց, և Հայք ասեն՝ թէպէտև նորոգութիւնն յանձնեալ է Յունաց, այլ այն այսուհետեւ է, և ոչ վասն անցեալ և ներկայ ժամանակաց։ Յոյնք պնդեն թէ ջնջեալ են հրովարտակքն, խափանեալ են եւ չինուածքն, եւ թախանձեն զկործանումն նոցին. այդ կախեալ է 'ի հրամանէ և 'ի կամաց մեծի Տէրութեան, ուստի չէ հարկ երկուց կողմանց կուտակութեամբ բառից վէճս յարուցանել 'ի կորուստ ժամանակին։ Յետ այսր՝ հարցումն ուղղեաց առ Փոխանորդն Յունաց և ասէ, բացայայտ գրեալ է 'ի նամակին զոր գրեցիք առ հիւպատոսն Ռուսաց, որ ապա մատուցաւ յոտս նորին Բարձրութեան Փոխարքային Եգիպտոսի, թէ վասն ոչ գործադրելոյ զհրովարտակն ձեր Համայուլլահ Դատաւորն Երուսաղէմի, պատեհ ժամանակ գտեալ Հայոց զարդարեցին զեկեղեցին Բեթղեհէմի և չինեցին վանս 'ի լեառն Զիթենեաց։ Եւ 'ի քննութիւնէս յայտնի է յայտնի եղեւ թէ՝ բովանդակ իրքն լեալ են 'ի ժամանակս Օմար Նասիլ Դատաւորի, եւ ամբաստանեալ Համայուլլահ Դատաւորն չունի ինչ տեղեկութիւն 'ի նոցանէ, եւ եղեալ իրքն նախ քան զհրովարտակն ձեր է, յորում ոչ են ընդդիմացեալ Հայք, և գործն Բեթղեհէմի բաղկանայ մի միայն

'ի զարդարանաց, և հրովարտակն ձեր պարունակէ զգործ չինութեան, և ոչ մի իր ոք ունի յարաբերութիւն ընդ գործոյն Բեթղեհէմի, միայն խնդիր ձեր այս է՝ որոյ ըստ հետ մտեալ էք, որովհետեւ ջնջեալ են հրովարտակք Հայոց, նոցին խմատիւք չինեալքն ևս խափանեալ են, ուստի քակտեցին և աւերեցին, և տեղին դարձցի 'ի վիճակն առաջին, եթէ կամք ձեր և տենչանք այս էր, ընդէ՞ր ոչ այդպէս գրեցիք առ Հիւպատոսն, այլ՝ այլ խմն եղանակաւ ծանուցիք զգործն, պարտ է ծանուցանել զպատճառն՝ զի արձանագրեսցի։

Փոխանորդն Յունաց ասէ. Բողոք և իսկական պահանջք մեր առ Հիւպատոսն՝ համաձայն է պատմութեան մերում, որ արձանագրեցաւ. իսկ գանկատն զՀամայուլլահ Դատաւորէն՝ որ ոչ գործագրեաց զհրովարտակն մեր, այսինքն ոչ կործանեաց զչինուածսն, և Հիւպատոսն այնպէս խմացեալ է թէ՝ բովանդակ եղեալ իրքն ձեռամբ նորին՝ և 'ի չգործադրելոյ զհրովարտակն յաջողեալ է, եւ ինքն ևս այնպէս գրեալ։ Սակայն մեք 'ի նամակին գրեալ խնդրեցաք զկործանումն չինուածոց, և դարձումն 'ի վիճակն առաջին, եւ այժմ յայտնի եղեւ ճշմարտութիւնն առաջի ձեր. և եղեալքն յեկեղեցին Բեթղեհէմի առանց հրովարտակի և հէօճէթի է, և միայն յեցեալ 'ի հրովարտակն բաժանորդութեան արարեալ են. չինութիւնք լերին Զիթենեաց հակառակ են հրովարտակաց, և նոքա ևս ջնջեալ՝ զօրութիւնքն խափանեալ են, ուստի խնդրեմք զկործանումն նոցին, և այսպէս գրեալ եմք առ Հիւպատոսն, (1838)։

Զարձանագրութիւն դատաստանական վիճաբանութեանս թարգմանեալ 'ի Տաճիկ բարբառոյ եղեւ 'ի կարգի պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Շաթր Զատէ Արիֆի Էֆէնտի. քննութիւն և Իլամ նորա։ Հրովարտակ Լատինաց։ Կործանումն չինուածոց Համբարձման տեղւոյն։ Խաթ-թի Հիւմայուն Կիւլհանէի։ Գաբրիել եպիսկոպոս Եղիպտոսի։ Պարոյր Ճէմարանին Իւսկիւտարի։ Մահ Գաբրիել Պարիարքի։ Հրաբուխ ի Մասիս։ Յայտնութիւն Նշխարաց Սրբոց ի Խարբերդ։

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ քննութեանն, զոր գրեցաք 'ի վերանդը, ամբողջապէս առաքեցաւ յԵգիպտոս առ Փոխարքայն, եւ անտի առ Տէրութիւնն 'ի Կոստանդինուպոլիս։ Դուռն Օսմանեան յետ տեսանելոյ զայն, որոշեաց վերըստին առաքել զայլ ոք յԵրուսաղէմ տեսանել եւ բարւոքիմանալ զհանգամանս իւրաքանչիւր տեղեաց, յորոց վերայ վիճէին քրիստոնեայք, իսկ Դեսպանն Գաղղիոյ 'ի Թախանձելոյ Ֆրանչիսկեան կրօնաւորաց, ստիպէր զԴուռն անպատճառ խնդրելով զկործանումն չինուածոց։ Գրեցաւ Դէֆթէրտէ սոմ առ Դատաւորն Երուսաղէմի։ Յապաղել ըզխնդիրն մինչ ցորոշումն խնդրոյն, զորոյ պատճէնն տեսին Հայք։ Փոխանորդն Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոս, գիտութեամբ գլխաւորաց աղգին՝ պատրաստեաց վերըստին 'ի գիր աղաչանաց մատուցանել 'ի Դուռն, վասն բաժանորդութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, 'ի մէջ բերելով զնմաստս երկոքին հրովարտակացն Մահմուտայ Արքային, առեալ 'ի թուին ՌՄԽԸ, զորոյ մի պատճէնն առաքեալ էր յԵրուսաղէմ առ Խորհրդականս։

Յետ այնորիկ առաքեցաւ 'ի Դրանէ իբր Ոստիկան Շաթր Զատէ Արիֆի Էֆէնտի, 'ի քննութիւն չինուածոցն Համբարձման եւ այլոց տեղեաց (1838 · Օգոստոս)։ Հասեալ նորա յԵրուսաղէմ շրջեցաւ ինքն անձամբ և 'ի քննութիւն էարկ զչինուածն, եւ ստորագրեաց զայն աղօթատեղի Իսլամաց (Մէսճիտ), և ըստ այնմ մատաց գրեաց Իլամ եւ ետ ցլատինս յղել 'ի Կոստանդինուպոլիս։ Ապա գնաց 'ի Բեբրոն յուխտ 'ի գերեզման Հայր Աբրահամու, և 'ի ճանապարհին յանդիպեալ 'ի Բեթղեհէմ ետես և զկեղեցին, ուր ժողովեալէին Լատինք և Յոյնք և ցուցանէին նմա ըզ-

փոքր տեղին Հայոց · թէպէտ գտան անդ ոմանք և 'ի Հայոց, և նորա բարւոք զննեալ 'ի նկատի էառ զամենայն տեղիս եկեղեցւոյն։

Եւ յաւուր տօնի Վարագայ Խաչի ('ի 26 Սեպտեմբերի) զկնի պատարագին Հայոց չոքաւ 'ի Ս. Յարութիւն, և շրջեալ ետես զամենայն զտեղիս և տեղեկացեալ գիտաց թէ ո՛ր տեղի որ ազգի սեփհական իցէ։ Թէպէտ ոմանք 'ի հակառակորդ այլազգեաց ազգ արարին նմա և թախանձանօք խնդրեցին իսկ փակել զդուռն Համբարձման և դնել զբանալին 'ի դատարան, այլ նա ոչ կամեցաւ։" զայս բարիս միայն վայելեցին Հայք։ Եւ վասն այլ տեղեաց, յորոց վերայ վիճէին քրիստոնեայք, որպէս ծանուցին նմա ոմանք յայլազգեաց, բնաւ առարկայ ոչ եղաց։ Հայք նախ քան զվճիռ նորին վասն Համբարձման, ցուցեալ էին նմա տեղեկագիր ինչ, որոց ասացեալ էր գրել գիր աղաչանաց առ ինքն և այնու խնդրել զգրեալսն · բայց Հայք ուշարերեալ ոչ ինչ խնդրեցին 'ի նմանէ · մի գուցէ հանդիպեցէ խնդիրն 'ի կնճիռն անլուծանելի · Թէպէտ յետ վճռոյն մնաց ինքն 'ի քաղաքին աւուրս 15, և ապա մեկնեցաւ 'ի Պերութ ('ի 26 Սեպտեմբերի)։ Ի վերջոյ իմացան Հայք թէ այրն գրեաց յիլամին կործանել զչինուածն Համբարձման, յորոյ վերայ վշտացեալ ազգային անմխիթար, զի յաւմ պէտս վատնեցան այնքան քսակք դրամոց, և ինքեանք ակն ունէին կրել զամօթ առաջի աշխարհի։

Եւ եղեւ 'ի ժամանել Իլամին 'ի Կոստանդինուպոլիս, զոր գրեաց Շաթր Զատէ, տուաւ հրովարտակ յԱրքայէ ցլատինս, զի կործանեսցին չինուածք Համբարձման տեղւոյն՝ ձանձրացեալ 'ի թախանձանաց Դեսպանին Գաղղիոյ և Ֆրանչիսկեան կրօնաւորաց, որոց ոչ սակաւ ստտար եղեն նաեւ Յոյնք։ Փութով եհաս հրովարտակն յԵրուսաղէմ, ժողովեցան գլխաւորք այլազգեաց առ Փաղաքապետն Տիզտար Ահմէտ աղա, ուր էր եւ Դատաւորն, եկին անդ բազմութեամբ Լատինք և Յոյնք · և յետ ընթեռնլոյ ըզհրովարտակն, սահմանեցին զի անվթար կատարեսցի հրաման Արքային · ապա ելեալ անտի խուռն բազմութեամբ Լատինք և Յոյնք, եկեղեցականք, քրիստոնեայ ժողովուրդք և գիւղական Ֆելլահք գործի քանդման 'ի ձեռին դիմեցին

'ի Լեառն Զիթենեաց, և սկիզբն արարին քակել և աւերել զբովանդակ շինուածս, կործանեցին զսեղանն 'ի ներքոյ գմբեթին, եւ վաստակեալ զաւուրս երկուս հիմն 'ի վեր տապալեցին սենեկաց և այլոց իրաց. և չթողին նշմարանք ինչ ասել թէ 'ի շինուածոց Հայոց է. լուսաբար կարասլեան՝ որ միայն գտաւ անդ 'ի Հայոց, հազիւ կարաց զերծուցանել զսպասս եկեղեցւոյն և զայլ կարասիս, եւ դարձուցեալ զտեղին յաւեր և յապականութիւն՝ եկեալ անցանէին թմբկօք և պարուք իբրեւ յաղթանակաւ առաջի վանաց Ս. Յակոբայ 'ի նախատինս Հայ կղերաց – այսպէս կործանեցին Լատինք և Յոյնք զբովանդակ շինուածս Հայոց, զոր բազում աշխատութեամբ կառուցին 'ի Լեառն Զիթենեաց, ուր պատարագէին 'ի հինգշաբթի եւ 'ի կիւրակէ աւուրս 'ի մխիթարութիւն ժողովրդոց, եւ թողին զայն յառաջին աւերակ վիճակին ('ի 11 Սեպտեմբերի, 1839). Իսկ աւագ թարգման Սահակ վարդապետ, որ ինքն վերակացու շինութեան և պատասխանատու յամենայն դատաստանական քննութիւնս, չդտաւ 'ի վերջին ժողովի ատ. զի գնացեալ էր բերել զգործիս և զքարինս հողմաղացի, և եղեւ 'ի մօտիլ նորա յերուսաղէմ՝ եռեսս 'ի հեռուստ զի ելանէր եւ դիպանայր փոշի քանդման իբրեւ մրրիկ ծխոյ. սկսաւ լալ և կոծել զանձն իւր, զի ընդունայն եղեն ջանք և վաստակք իւր, այլ անցեալ էր ժամանակն և ամենայն ինչ կատարեալ. եւ յանցանել աւուրց՝ Դատաւորն և Քաղաքապետն եռաւն չինել և կարկատել զդրունս եւ զայլ տեղիս ըստ առաջին դրից, եւ զծախսն առին յերից վանաց. Յետ կործանելոյ զշինուածս Համբարձման տեղւոյն Գաբրիէլ Պատրիարք Երուսաղէմի եւ Խորհրդական հարք, դրեցին 'ի Ս. Էջմիածին առ Յովհաննէս Կաթուղիկոս Կարբեցի զամենայն հանգամանս գործոյն՝ մի առ մի պատմելով 'ի սկզբանէ մինչեւ ցվախճան, զի մի օտարազգիք բարուրանս եղեալ այլ և այլ բանիւք ամբաստանեսցեն զմիաբանութիւնս Հայոց, եւ այսպիսի եղանակաւ ծանուցեալ զշմարտութիւն անցիցն խնդրեցին 'ի նմանէ թուղթ մխիթարական.

Եւ զի Յովհաննէս Կաթուղիկոս ամօք յառաջ գրեալ էր առ Խորհրդականս, հայրական սիրով յորդորելով և պա-

տուիրելով եղբայրական և քրիստոնէական սիրով վարիլ ընդ օտարազգի քրիստոնեայս, որում արժանավայել յարգանօք գրեալ էին պատասխան. Այս լուր կործանման չեւ էր հասեալ 'ի Կոստանդինուպոլիս, և գլխաւորք աղգին Ջանային, այլ ոչ կարէին մերձենալ առ Նախարարս Տէրութեան. զի ժամանակ խռովութեան և պատերազմաց էր, եւ մանաւանդ հասեալ վախճան կենաց Մահմուտայ Արքայի՝ մարմին նորա կայր անթաղ 'ի տան, որոյ վասն գրէ Փոխանորդն համբերել սակաւ ինչ, զի չէր հնար 'ի վերայ ազգս առարկայ խնամոյց բանալ. Եւ ապա 'ի 28 Հոկտեմբերի արարին մասնաւոր ժողով, թէ վասն Համբարձման եւ թէ վասն խնդրոյ Աստուծոյ, եւ որոշեցին Միքայէլ, Ճէզայիրցի Մկրտիչ՝ եւ Կելկելեան Յարութիւն Ամիրայք խորհիլ 'ի միասին և խնդրել յարքունի Դիւանէ զպատճէն հրովարտակին՝ զոր ընկալեալ էին Լատինք, եթէ գացեն 'ի նմա օգտաւէտ բանս ինչ, մատիցեն առ Նախարարս եւ առ սմանս արքունեաց, որք կարողք են առնել որպէս և կամին. այլ 'ի հասանիլ նամակաց յԵրուսաղէմ լռեալ դադարեցին 'ի գործոյ.

Ինքնակալն Օսմանեան Պէտութեան Սուլթան Ապտիւլ Մէճիտ Խան արար մեծահանդէս ժողով 'ի պալատն Թոփ Գարու 'ի Կիւլհանէ ասացեալ տեղին, ուր ինքն մեծազօր Արքայն 'ի վերին դստիրոնի հանդէպ լուսամտի բազմեալ 'ի գահոյս երեւեցաւ առաջի խուռն բազմութեան, ուր էին Սատրազամն և բոլոր Նախարարք Տէրութեան և Փաշայք հանդերձ զօրականօք, Շէյխ իւլ Իսլամն դասուք գիտնականաց, Գլխաւորք արհեստաւորաց, Դեսպանք Տէրութեանց, Պատրիարքունք քրիստոնեայ ազգաց, ընդ որս եւ Խախամագլուխն Հրէից, թող զայլ հասարակ ժողովուրդս. յաշխարհաժողով հանդիսի ատ արտաքին գործոց պաշտօնեայն ընթերցաւ 'ի լուր ամենեցուն զկայսերական հրովարտակն (Խթթի Հիւմայուն Հոկտեմբեր).

Ասասցուք կարճ 'ի կարճոյ վասն Եգիպտոսի. զի 'ի ընկղմանել անտի հոգեւոր տեսչութիւն Հայ ժողովրդոց երկրին այնորիկ վիճակեալ էր Երուսաղէմի, որպէս յայտ առնէ զայս հրովարտակն Մարտիրոս Պատրիարքի՝ տուեալ 'ի Սուլթանաց Եգիպտոսի և զայլ և այլ պարագայս գոր-

ծոց այնր ժամանակի, զորս գրեցաք յիւրաքանչիւր կարգի, և զկնի տիրելոյ Օսմանեաց աշխարհին սյնորիկ, դարձեալ ասի զնային Առաջնորդք եւ ժամարար Վարդապետք, որպէս ցուցանեն նամականիւք և հաշուական տուամարք նոցին, մինչ 'ի Կիրակոս եպիսկոպոս որ վարեաց զայն պաշտօն ամս իբր 10 ամենայն բարեկարգութեամբ, ջանիւք և խաղաղասէր միտք յաջողեցաւ յաւելուլ զթիւ կալուածոց Ս. Աթոռոյն եւ եկեղեցւոյ տեղւոյն, զսանս գնեալ դրամօք, և զայլս բարեյորդոր խրատիւք ետ կըտակել իբրեւ նուէր հոգեւոր բարեպաշտ ժողովրդոց տեղւոյն։ Եւ յորժամ հարկ եղեւ նմա հրաժարիլ 'ի նոյն առաջնորդական պաշտօնէ եւ վերստին դառնալ յերուսաղէմ 'ի Ս. Աթոռն, կարգեաց 'ի տեղի իւր իբր առաջնորդական Փոխանորդ Գերմանիկցի զԳաբրիէլ վարդապետ՝ տալով նմա զիշխանութիւն Ծայրագոյն վարդապետութեան՝ պատուիրելով զգուշութեամբ հովուել զժողովուրդ Տեառն, անխախտ պահել զսահմանեալ կարգադրութիւնն, արթնութեամբ հսկել կալուածոց և պաշտպան կալ իրաւանց Ս. Աթոռոյն իբրեւ որդի հարազատ նմին։ ԵՒ ամ ըստ ամէ առաքել զպէտս նորին 'ի գոյացեալ արդեանց կալուածոց, որպէս առնէր ինքն։ Այլ Գաբրիէլ վարդապետ միայն բանիւ խոստացաւ առ ժամն կատարել զկրաման նորին, և յետ մեկնելոյ նորա՝ 'ի մոռացօնս արկ զամենայնն։ Զգացեալ աթոռայնոց զանուղղայ գնացս նորին, ազգ աբարին նմա քանիցս ճանաչել զինքն և կամել 'ի վնասակար ընթացից իւրոց, չքանալ դուռն խռովութեան և առիթ լինել մեծամեծ վնասուց, այլ նա ունչս արարեալ բանից նոցին՝ թելադիր լինէր ժողովրդոց եւ յորդորէր իսկ յետս կալ 'ի խնամոց Աթոռոյն, դրաւել զկալուածս առ 'ի պէտս եկեղեցւոյ եւ առաջնորդարանի տեղւոյն։ Իմացեալ զայսոսիկ Պօղոս եպիսկոպոսի եւ Խորհրդականաց, զկնի յորդորանաց հարկ եղեւ կոչել զնա յերուսաղէմ։ Յբմբոստանալ նորին՝ առաքեցին անդ իբրեւ առաջնորդ զԳաբրիէլ վարդապետ Կարնեցի, որ և խրատական բանիւք յորդորէր զժողովուրդն հնազանդիլ անօրէնութեան Աթոռոյն, և 'ի բաց կալ 'ի Գաբրիելէ։ Զսոյն յայտ առնէր և բանք նամակին Պօղոսի, ընդունիլ զԳաբրիէլ վարդապետ

զայրն զգաստ և գիտնաւոր եւ զնա ճանաչել ինքեանց հովիւ հոգեւոր, որ զիտէր անտեսել զամենայն պէտս նոցին։ այլ ժողովուրդն յուզեալ 'ի Գաբրիելէ ոչ կամէին թողուլ զԳաբրիէլ և ընդունել զԳաբրիէլ անհնարին ասէր դառնալ յերուսաղէմ, զի եթէ առաւել եւս բռնասցին 'ի վերայ իմ, առաջի կայ ինձ լինիլ կրօնափոխ՝ և կամ լինիլ դահիճ անձին։ զայս ամենայն անցս իշխանաւորք տեղւոյն և Դաւիթ վարդապետ գրեցին յերուսաղէմ և ինքն ստիպեցաւ դառնալ յերուսաղէմ, և զԳաբրիէլ թողուլ 'ի տեղի իւր։

Ի սորա աւուրս 'ի հրդեհին այրեցան ոմանք 'ի կալուածոց Աթոռոյն, և յանհոգութենէ նորին տեղիք նոցին կորեան՝ մնացեալ յաւերակի, այլք կարօտեալ նորոգութեանց՝ մնացին այնպէս, և ոմանք եւս փոփոխեալ սյլայլեցան։ Ապա 'ի խնդրոյ ազգապետաց տեղւոյն առաքեցաւ յերուսաղէմ 190,000 դահեկանս սակս նորոգելոյ զհրդեհեալ տունս։ 'ի հասանիլ այսր գումարի 'ի ձեռն Թէոդորոս վարդապետի և Սարկաւագ Յովսէփայ, զանց արարին զխնդրուքք նորոգութեան, և առաւել շահաբեր և օգտակար վարկանելով՝ գնեցին այնու յԱղէքսանդրիա տունս ԺԷ և կից նմին պարտէզ ընդարձակ, որպէս յայտ առնէ զայս նամակ նորին Գաբրիէլ վարդապետի, և յետկար կալուածոյն (Հէօճէքթ) գրեցաւ յանուն աղքատաց վանաց Ս. Յակոբայ, կտակեալ Շէրիի օրինօք անփոփոխելի և անվաճառելի։ Եւ զի մինչեւ ցայս վայր Ս. Սարգիս եկեղեցին Հայոց, որ 'ի խորշս Խպիի վանաց 'ի Գահիրէ, փոխանակեալ ընդ մատրան Խպիոց 'ի սնարս Գերեզմանին Քրիստոսի, 'ի Ս. Յարութիւն, որպէս ասի, և վերանորոգեալ յառաջնորդութեան Գրիգոր վարդապետի յամի Տեառն 1606, որպէս յայտ առնէ արձանագրութիւն տեղւոյն, այս եկեղեցի կարի փոքր հնացեալ և խրթին, եւ անյարմար ժամանակին, ուստի Գաբրիէլ վարդապետ ետ 'ի մտի հիմն արկանել նորոգ եկեղեցւոյ, եւ առ այս ձեռնարկութիւն պէտս ունէր բազմագումար դրամոց։ ընդ նուէրս ժողովրդոց խառնեաց եւ զարդիւնս կալուածոց Աթոռոյն, և 65,000 դահեկանս՝ ընդ այլ գոյից Սամուէլ վարդապետի վախճանելոյ 'ի Հնդիկս, Նուիրակի Ս. Աթո-

ռայն, և այսպիսի հնարիւք հիմնարկեալ կանգնեաց զայն եկեղեցի մեծ և վսեռաւոր, և այսպիսի եղանակաւ խաւ-
փանեցան արդիւնք կալուածոցն երուսաղէմի։ Եւ հուսկ ուրեմն 'ի կարի թախանձելոյ Զաքարիա Պատրիարքի առաքել զոնէ զհաշիւս նոցին, և նա յղեաց տասնամեայ ելից և մտից զհաշուետուսարն, և դարձեալ պահանջ Աթոռոյն մնաց անդ։ Բայց յեկեղեցեաց ասի՝ է և այլ եկեղեցի յանուն Ս. Մինասայ կառուցեալ 'ի գերեզմանատան։ Եւ յետոյ էառ Գաբրիել 'ի կառավարութենէ զմի մասն հողաբերայն կոչեցեալ Գոմէ Էրդէ, ուր բնակեալ են յառաջագոյն գերեալքն Հայոց։ Էառ նաեւ 'ի Մէհէմմէտ Ալի Փաշայէ՝ ընդարձակ գետին յԱղէքսանդրիա, և խառնեաց 'ի պարտէզն, որոյ Հէօճէկթն գրեցաւ յանուն Ս. Յակոբայ։ Եւ յետոյ առ 1000 արտավար (Ֆէտանէն) վարելահող 'ի Կուսակալէն Եգիպտոսի վասն աղքատաց, մնացին անդ և կալուածք Գրիգորի և Պօղոս վարդապետաց։ Յետ աւարտման շինութեան եկեղեցւոյն՝ ժողովուրդք վիճակին կամեցան վարձատրել և պատուել զհոգեւոր հովիւն իւրեանց։ ուստի գրեցին յԵրուսաղէմ առ Պօղոս Եպիսկոպոս և Խորհրդական հարս՝ Պօղոս Պէյ Եուսուֆեան, Սալիքսան և Միքայէլ յարգելիք, և թախանձանօք խնդրէին 'ի նոցանէ տալ զթուղթ վկայութեան Գաբրիել վարդապետի, զի գընացեալ 'ի մայրաքաղաքն Սիս՝ ձեռնադրեսցի Եպիսկոպոս։ Իսկ նոքա ոչ ընկալան առ ժամն զխնդիր նոցա, զի չէր ժամանակ նորա, մանաւանդ առաւել արդիւնաւոր քան զնա էին յԱթոռն արք արժանաւորք այնմ պատուոյ։ Եւ երկնչէին մի գուցէ անկցի երկպառակութիւն 'ի մէջ միաբանաց, և երկրորդ զի Գաբրիել միշտ ապատամբութեամբ վարէր ընդ Աթոռոյն, որոյ վասն առ 'ի շահել զսիրտ ժողովրդոյ և իշխանաւորաց տեղւոյն, գրեցին կոնդակ, յորում հրաման տային իբրեւ Առաջնորդի ունել աթոռ եւ գաւառան և թագ Եպիսկոպոսի, այլ նոքա ոչ ընկալան զայն և ոչ զկոնդակն հանին յերեւան։ զի զայդ ամենայն յառաջագոյն Կիրակոս Եպիսկոպոս շնորհեալ էր նմա, եւ ինքն ունէր և կատարէր զամենայնն անթերի, և այսպէս մերժելով մերժեցին զպատճառանս նոցա, և վերստին գրեցին երկիցս և երիցս և սիրելին զնոսա վաղ ընդ փոյթ առաքել զվկայական Գաբրիէլի, զի զեկեղեցին զոր հիմնարկեալ կատարոյց՝ ինքն օծցէ ձեռամբ իւրով, զի հովիւ քաջ է եւ արթուն վասն ժողովրդոց Եգիպտասի, և արժանի այնմ պատուոյ, թէեւ գտանիցի 'ի նմա մանաւանդ ինչ թերութիւն, այլ մեզ յամենայնի ընդունելի և արժանի է եւ քաջ արժանի, և զի հաշակեցաւ 'ի վիճակիս թէ Գաբրիել ունի ամբառնալ յաստիճան Եպիսկոպոսութեան, եւ այլ ասցին նման բանք երկար, տես 'ի նամականիս 1838—39, 1 Յունվար։ և 'ի 6 Հոկտեմբեր։

Ի վերայ այսր նամակաց զիջաւ Պօղոս Եպիսկոպոս 'ի թախանձանս նոցա, մանաւանդ ակնածէր 'ի Պօղոս Պէյէ։ գրեաց առ նոսա պատասխանի նամակաց և ընդ նմին առաքեաց զվկայականն Գաբրիէլի, և նա էլ 'ի ճանապարհ և գնաց 'ի Սիս և ձեռնադրեցաւ յաստիճան Եպիսկոպոսութեան 'ի Տ. Միքայէլ Կաթուղիկոսէ 'ի ցեղէ Աջապահից, ('ի 15 Յունիսի, 1839) եւ դարձաւ 'ի վիճակն իւր յԵգիպտոս, և վարեաց զիշխանութիւն իւր մինչ ցլախման կենաց իւրոց անկախ յԱթոռոյն Երուսաղէմի, կոչելով զինքն ՓէՌիէ։ Էառ նաեւ հրովարտակ յՕսմանեան Դրանէ միջնորդութեամբ Յակոբոս Պատրիարքի Կոստանդինուպօլսոյ, սակս անկասկած վարելոյ զիշխանութիւն իւր։ Եւ այսպիսի եղանակաւ որոշեցաւ Գաբրիել յիրաւասութենէ Աթոռոյն Երուսաղէմի եւ վախճանեալ թողեցաւ 'ի մէջ եկեղեցւոյն, ուր յառաջագոյն պատրաստեալ էր զդերեզման իւր։ Եւ զինի մահուան նորա ծագեցան վէճք մեծամեծք 'ի վերայ թէմական և կալուածական խնդրոց, զորս թողումք արձանագրել յայլսմ տեղւոջ և ժամանակի։

Ձեմարանն որ կառուցաւ յիւսկիւտար ծախիւք Ս. Աթոռոյն, որպէս գրեցաք կանխագոյն, կամեցան իշխանաւորք ազգին, զի Աթոռն նպաստեսցէ նաեւ օրական ծախուց նորին, ուստի խորհրդով սահմանեցին զի Փոխանորդն Երուսաղէմի անխափան վճարեսցէ յիւրաքանչիւր ամիս 10,000։ եւ 'ի տարին 60,000 դահեկան՝ և վասն այսր ժողովք Ամիրայից գրեցին առ միաբանութիւնս Աթոռոյն, և 'ի մասնաւորի Ճարտարապետ Յովհաննէս Ամիրայ առ Պօղոս Եպիսկոպոս, տալ յարգել միաբանութեան զխորհուրդ Ամիրայից, եւ շահել զմիտս նոցա զի մի ընդդիմասցին,

պատուիրել Փոխանորդին անյապաղ վճարել զսահմանեալ գումարն. իսկ Յովհաննէս Եպիսկոպոս գուշակելով զապագայ վտանգն, բաղում անգամ զգուշաւոր բանիւք ազդարար Խորհրդականաց Աթոռոյն, աղաչանօք և կամ աղերսագրով անհետ առնել զգումարն զայն, և խսպառ բառնալ զլուծն զայն ծանր 'ի պարանոցէ Աթոռոյն. սակայն այսոքիկ բանք նորին ոչ միայն չեղեն լսելի, և ոչ եգիտ յաջողութիւն, այլ առաւել եւս ծանրացաւ. զի զկնի ժամանակի եհաս տարեկան տրոց գումարն 120,000. զոր վճարէր Աթոռն ամ ըստ ամէ, և դժուարին եղեւ այնուհետեւ բառնալ զայն բեռն 'ի թիկանց միաբանութեան յանյաջողութենէ ժամանակին. Եւ մինչ այսպէս տարուբերեալ ծփէին Խորհրդականքն 'ի վերայ այսր խնդրոյ, թէ որով եղանակաւ հնար իցէ ազատիլ յայդց պարտուց. եհաս առնոսա այլ ինն գիր 'ի գլխաւոր Ամիրայէ ումեմէ՝ յոր թախանձէր զնոսա վճարել զմնացեալ պարտս չինութեան ճեմարանին, զորոյ զպատճէնն դիցուք աստանօր.

Բարձր կառավարիչ Սրբոց Յակովբեանց Մեծի Աթոռոյ Աստուածարեալ Տ. Գողոս Արք Եպիսկոպոս Ս. Հայր. և համվաստակ և բաղմարդիւն Խորհրդական Հարք.

Զանօրինակն մինչեւ ցայսօր ընդհամօրէն լրութիւն ազգիս, զճեմարանն յանուն Ս. Աթոռոյդ կանգնեալ յիւսկիւտար 'ի յաւերժական պարծանս գիտեմք ազգիս, եւ մանաւորապէս՝ ձեզ, որ ըստ ամենայն գլխոց սատար կառուցման սորին ցուցայք և յառաջադիմութեանն. Յառաջադիմութիւն անստելի՝ եթէ և աստի եւ անդր ձերդ սատարութիւն տիւեալ՝ ձեռնկալու եղիջիք. զի համօրէն ազգասիրացս տենչ ձեօք լցեալ՝ բովանդակ կալջիք զյաղթանակ վարձուն հոգեւորական. Ոչ ինչ է 'ի սրբութեանց ձերոց թագուն. զի ծախուց յողովից պէտք եղեն յօրէ անտի հիմնարկութեան տեղւոյս մինչեւ ցայսօր. զայս խոհական դատողութիւն ձեր անշուշտ ցուցանէ. Իսկ զամենայն ծախուցն և զարդեանց՝ որ վասն չինութեան և եթ եղեն, զմանրամասին ստորագրութիւն ուսեալ 'ի թղթիդ զոր 'ի դրիս եդեալ առաքեմք առ ձեզ, ակներեւ տեսջիք, եթէ որչափ ինչ պարտիք. դեռ եւս ծանրացեալ կան այսօր 'ի հաշուէ չինութեան.

Եւ որ հասոյթքն են՝ սահմանեալք 'ի Ս. Աթոռոյդ և 'ի ձեռնտուութենէ լրութեան ազգիս 'ի Կոստանդինուպօլսոյ կամ արտաքուստ, հազիւ բաւեն յօր ըստ օրէն պիտոյս. Իսկ պարտիք չինութեան, եթէ վստահ 'ի հասոյթսն լինիցիմք ցայս վայր հայթայթեալս, յաւիտեան մնասցեն անվճարելիք. Եւ անմարթ է ծանրաբեռնել 'ի վերայ ազգիս և զայս բաժ 'ի վճար պարտուցն. որ ոչ դոյզն ինչ է, որպէս տուժար հաշուին ակներեւ ցուցանէ զամենայնն. քանզի տուրք ծանրացեալ են 'ի վերայ ազգին և ծանրանային օր քան զօր. տուրք բազմատեսակք թէ 'ի քաղաքական սակի, և թէ յազգային, և այս եւս բաժին յաւելեալ յամենայնին վերայ. քանզի զոյժ նոցա առ հասարակ, և զամենեցուն բերան բանայ 'ի տրտունջ ծանր, եւ ուստանց հետեւութիւն ատելի յոյժ լինի այնուհետեւ առ մեծամեծս և առ փոքունս.

Առ այս խորհուրդ կալեալ ազգովին պատշաճ դատեցաւ, Սրբոյ Աթոռոյդ սեպհականեալ և զայս պարծանս ազատելոյ զճեմարանս 'ի պարտուց անտի չինութեան, որ այլազգ անվճարելի է. Վասն այսորիկ ձեռամբ Բարձր արժանապատիւ Փոխանորդի Ս. Աթոռոյդ Տ. Յովհաննու Արք Եպիսկոպոսի, գրամ գումարի պարտուցն երեք հարիւր եօթն հազար ղուրուշ ընկալեալ եղեւ աստ ամբողջ 'ի Սինեօր Զիչինեա Բանտեա վաճառականէն, եւ տուաւ նմա թուղթ Փոլիցայի յանուն Ս. Աթոռոյդ, վճարելի առ եղբայր նորա Սինեօր Իստիֆանաքի Զիչինեա վաճառականն բնակեալ յԱղէքսանդրիա, երեսուն և մի աւուրքք յետ տեսութեան Փոլիցային. Անհերկայ գիտեմք, զի որպէս առաջին սատարող գտայք գործոյս, ոչ ինչ վերջնայք 'ի ձեռընկալութենէ աստի. Ընկալջիք և զատարագրութիւն մեր ընկալութենէ աստի. Ընկալջիք և զատարագրութիւն մեր զամենայնի ազգիս. Ողջ լերուք յաւերժ կենօք 'ի փառս ազգիս, և 'ի պարծանս Ս. Աթոռոյդ, (յ30 Մայիսի. 1839).

Գաբրիէլ Եպիսկոպոս Նիկոմիդացին, Պատրիարք Ս. Աթոռոյն Երուսաղէմի՝ հասեալ 'ի բարւոք ծերութիւն՝ վախճանեցաւ ('ի 25 Ապրիլի, 1840) և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց, կրելով զանուն Պատրիարքութեան եւ եթ զամս 21, կացեալ 'ի վտարանդութեան

'ի Կոստանդինուպոլիս եւ 'ի Զմիւռնիա զամս 10, եւ յետ դարձին իւրոյ 'ի Ս. Աթոռն՝ եկաց լուութեամբ 'ի սենեկի իւրում մինչեւ ցմահ իւր, զի ծայրագոյն կառավարիչ Աթոռոյն էր Պօղոս Եպիսկոպոս։

1840 'ի 20 Յունիսի, ժամ 11 ½, երկրաշարժ և հրաբուղխ 'ի Լեառն Արարատ, քանզի յանկարծ դղրդեալ սասանեցաւ երկիր, պատառեցաւ Վանք Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին, ուր էր բարեհամ աղբիւր նորին, կորեան վանահայր Պետրոս վարդապետ և կրօնաւորք, և 'ի լեռնէն Մասեաց ծխեալ հրաշունչ և ծծրախառն հուր, հոսեցաւ մի թեւ լերին ճիւնախառն եւ ծածկեաց զգիւղն Ակռի հանդերձ բնակչօք և անասնօք, և կորեան անձինք 4500։ 600 Քիւրտք վրանարնակ 2000 ոչխարօք եւ զերծեալքն էին 107 անձինք, որք գտան յայգիս եւ յայլ տեղիս։ Ի 24 Յուլիսի, դարձեալ երկրաշարժ, յորմէ բաղում տեղիք աւերեցան յԵրեւան քաղաքի։

Գրիգոր վարդապետ Կոստանդինուպոլսեցի գտեալ ձեռագիր Աւետարան 'ի վանս Ս. Գէորգայ, որ կոչի Ղուլէ Վանք 'ի Խարբերդ, գրեալ ՈՂԷ (1248) 'ի Հռոմկլա, յորում գրեալ էր, առին այլազգիք զթագաւորութիւնն Բիւզանդիոյ 'ի ձեռաց Բրիատոնէից, վանն երկիւղի նոցին հողով ծածկեցաք զգերեզման Ս. Վկային Գէորգայ, որ եւ մեզ Միքայէլ Եպիսկոպոս Առաջնորդ ուխտիս ընդ Մելքոն Ամիրայի, որ 'ի ցեղէն Լեւոնի Թագաւորին Կիլիկիոյ, որ յուղի անկեալ էր 'ի մենաստանս Ղուլէոյ։ լուաք զի զՍ. Եկեղեցիս մզկիթ արարին, գուցէ քակեսցեն զանգին գանձն զոսկերս Ս. Գէորգայ, որ բաղում փափաքանօք գտեալ թագեցաք 10 կրօնաւորքս յաջ կողմն մեծի խորանին և 'ի փոքրիկ մատրան եդաք գերեզման նոր (ՉԿԳ) (1344) ընդ հուպ այս ինչ քարի։ Գրիգոր և Գէորգ վարդապետք բերեալ զնշանակեալ տեղին գտին մի արկղ 2 թզուչափ, կըրկին պատեալ մոմպատ կաւօք, և իրրեւ բացին զարկղն բուրեաց անսի հոտ անուշ, և գտին 'ի նմա Մասունս սրբոց կնքեալ մեծամեծ կնքով, եւ զանուանս Սրբոց գրեալ 'ի մագաղաթի և պատեալ մոմպատ կաւօք, և այլ մի վկայ երեք սեաւ մեծամեծ կնքով, թէ ո՞րպէս եկն եւ ո՞րպէս եկաց անդ։ (յ3 Յուլիսի, 1839)։

Զաւետարանն գրեալ է Զըմչկածակցի Գէորգ Եպիսկոպոս վանահայր Ղուլէ վանաց, ուր ասէ՝ միաբանք վանաց յերկիւղէ Լէնկ Թիմուրա փախուցեալ թագեան 'ի ծով յերկիւղէ Լենկ Թիմուրա փախուցեալ թագեան 'ի ծով դղեակ 'ի Վանս Խարտեշարու եւ 'ի կարմիր վանս Ս. Կարապետի, և յետոյ վերստին դարձան անդ։ ապա գրէ զարդարակս և զհողս վանաց, և զայլ դէպս ժամանակին որք երկար լինին գրել աստ։ Կնիք 'ի վերայ Ս. Միւռոնին, Ներսէս կաթուղիկոս (ՈԺԵ) (1166), Հեթում (ՌՀԵ) (1226), Միքայէլ Եպիսկոպոս, և չորրորդն անընթեռնլի։ Ի վերայ մասանց Ս. Կիրակոսի, Կիրակոս Եպիսկոպոս Արապկերու։ Վկայականն, Ս. Կիրակոսի ճակատն է։ Թումայ առաքելոյ, կնիք Միքայէլ Եպիսկոպոսի (ՉԴ) (1253)։ Վկայական՝ Թովմայի փոքր աջ մասն է։ Կնիքն 'ի վերայ մասանց Ս. Թէոդորոսի անծանօթ։ Վկայական, Ս. Թորոսի մասունքն է, չէ յայտ թէ որ տեղւոյ։ Կնիք Ս. Կարապետի մասանց, ողորմութեամբն Աստուծոյ Արքայ Հեթում (ՈՀԵ) (1226), եւ միւսն Միքայէլ Եպիսկոպոսի, վկայականն, ողորմութեամբն Աստուծոյ որք ապագային վայելէք զթագաւորութիւնս Հայոց 'ի տանն Կիլիկիոյ, զգանձն զոր պարգեւեաց Աստուած անարժանիս, յիշեսջիք զհայրն իմ Կոստանդին և զեղբայրն իմ զՊարոն Սմբատն և զսիրելի որդիս Լեւոնն և զԹորոսն և զՌուբենն, և զկողակիցս Զապել թագուհին, որ տառապանօք հոգայ զաղքատս և զկրօնաւորս, և եւ Արքային դանձուց պարգեւեցի Ս. Մասն դագաթան Կարապետին Բրիատոսի։ Եւ եւս պարգեւ մխիթարութեան ընդ կողակցոյս և դեռաբոյս Պարոն Մելքոնին Աստուած վայելուցեսցէ ամէն (ՉԲ) (1253)։ Եւ այլ բեկորք ոսկերաց, և Ս. Գէորգայ բոլոր մասունքն, և 13 ոսկեայ մամ հանդերձ խնկօք և բամբակօք։ Եւ զմեծ վկայականն կնքեալ են, Կիրակոս և Միքայէլ Եպիսկոպոսունք, և Գէորգ քոռ Եպիսկոպոս, յորում գրեալ է։ Արդ ողորմութեամբն Աստուծոյ կառուցաւ գերեզմանս Ս. Գէորգայ ձեռամբ ծառայ ծառայիցն Աստուծոյ Միքայէլ Արք Եպիսկոպոսի, որ շնորհեաց անարժանիս բարեպաշտ Պարոն Մելքոն իշխանն, որ է 'ի գանձուց արքային Լեւոնի, եւ հեթմոյ առեալ է պարգեւ 'ի ձեռաց Յունաց, որ եւ տեսի կնքով զմուրհակն եւ վկայեմ, և հարիւր դահեկան պարգեւեաց ինձ որ նորոգեցի

զեկեղեցին, և փոխեցի յանուն Ս. Գէորգ, որ էր մաս վանացս յիշատակ Մելքոն Ամիրայի թագաւորաղն։ Կայ եւս յիշատակ Պարսն Մելքոնի եւ շիշ մի Ս. իւղ, որ Ներսիսի Հռոմկլայու Ս. Հայրապետի օրհնած Ս. Իւղն է, որ քսրն Բ. Հեթմոյ փախոյց 'ի Հռոմկլայէ, յորժամ Աչրաքի Ամիրայն Եգիպտոսի կործանեաց զկաթողիկոսարանն։

Ի սմին ժամանակի աւերեալ էին արտաքին սահմանքն գաւթի եկեղեցւոյն Ս. Աստուածածնի, և անկեալ էր որմն արեւելեան. 'ի ծանուցանել Փոխանորդաց Դատաւորին՝ եղեւ քննութիւն, եւ ապա հրաման՝ և շինեցին զաստիճանսն Հայք եւ Յոյնք ընկերութեամբ 'ի միասին. իսկ արեւելեան որմն՝ մինչ ցնչանն, եւ անտի 'ի վեր Լատինք միայնակ, (յ30 Մարտի. 1840)։

Հայք և Յոյնք 'ի միասին եդին 'ի տեղիս իւրեանց զերկաթեայ փեղկս դրան եկեղեցւոյն Ս. Աստուածածնի, զոր Արաբացիք թշնամութեամբ 'ի գիշերի խլեալ տարին 'ի վայր. այս եւս զկնի քննութեան և հրամանի Դատաւորին եղեւ։

ԳԼՈՒԽ ԾԶ.

Ընտրութիւն Զաքարիա Եպիսկոպոսի։ Խնդիր Հայոց վասն եկեղեցւոյն Բեթղեհեմի. քննութիւն նորին եւ Ս. Յարութեան։ Կորոգութիւն եկեղեցւոյն Բեթղեհեմի 'ի ձեռն Յունաց։ Բողոք Հայոց։ Հրովարտակ Աբքային և կաթգաւորութիւն խնդրոյ։

Զկնի վախճանի Գաբրիէլ Պատրիարքի՝ Ծայրագոյն կառավարիչ Աթոռոյն եւ Խորհրդական հարք գրեցին 'ի Կոստանդինուպօլիս առ Պատրիարքն և առ գլխաւորս ազգին, ծանուցանելով զմահ Գաբրիէլի, և զթափուր մնալն Պատրիարքական Աթոռոյն, գրեցին զանուանս Եպիսկոպոսաց, որք գտան յայնմ ժամանակի 'ի վանս Ս. Յակոբայ, եդին նաեւ զանուն Յակոբ Եպիսկոպոսի Պատրիարքին Կոստանդինուպօլսոյ, և յայտ արարին թէ յեպիսկոպոսաց ասի զոր և ընտրեսցէ ազգային ժողովն 'ի Պատրիարքութիւն, հաճելի և ընդունելի է միաբանութեան։ Զայսոսիկ

գրեանս առաքեցին 'ի թագաւորեալ քաղաքն 'ի ձեռն Գաղատացի Սահակ վարդապետի։ Իսկ գլխաւորք ազգին ընթերցեալ զգրեանս՝ ծանեան զամենայն իրս, եւ ձեռն արկեալ 'ի գործ ընտրութեան՝ ընտրեցին նախ զնիրակոս Եպիսկոպոս, այլ նա կանխագոյն պատրաստեալ զհրաժարական իւր՝ տուեալ էր 'ի Սահակ վարդապետի. և 'ի լինել բանից 'ի վերայ նորա, մատոյց նա զայն թուղթ 'ի ժողովն, և նոքա ընկալեալ զայն, ընտրեցին զԶաքարիա Եպիսկոպոս Տարոնոյ 'ի կոր գեղջէ։ Եւ ապա ծանուցեալ 'ի Դուռն, տուին զՊատրիարքական Պէրատն և յանձն արարին Սահակ վարդապետի հանդերձ գրովք։ Եւ նորա մեկնեալ անտի եհաս յԵրուսաղէմ, եւ մատոյց զգրեանս, եւ յաւուր տօնի վարդագայ Խաչի նստաւ հանդիսիւ Զաքարիա Եպիսկոպոս յԱթոռ Պատրիարքութեան, ('ի Սեպտեմբերի 26. 1841)։

Հայք յառաջագոյն առեալ էին հրովարտակ սակս նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի. այլ 'ի ժամանակս խռովութեան, որ յաղագս շինուածոցն Համարձման տեղւոյն՝ խափանեցին Յոյնք և զայն ընդ այլ հրովարտակաց, որպէս գրեցաք, եւ Դատաւոր տարւոյն՝ զի մի զայրացի տեսլութիւն և խռովութիւնն 'ի մէջ երկուց ազգաց, դադարեցոյց զգործ նորոգութեան։ Իսկ այժմ Հայք 'ի ձեռն Համուելլահ Դատաւորին Երուսաղէմի վերատին խնդրեցին 'ի Տէրութենէ՝ յեղեալ 'ի բանս հրովարտակաց։ Զի Այրն Ծննդեան ներքոյ և արտաքոյ, և գերեզմանն Ս. Աստուածածնի, ըստ օրինակի Գերեզմանին Քրիստոսի բաժանել 'ի մէջ երկուց ազգաց. հիւսիսային կողմն եկեղեցւոյն հանդերձ դրամբ սեփհականել Հայոց. միջին և հարաւային կողմն Յունաց. սիւնազարդ սրահն՝ յերից դրանց մինչ արտաքին յերկաթեայ դուռն հանդերձ բանալեաւ նորին, հաւասար բաժանել Հայոց եւ Յունաց. նորոգութիւն եկեղեցւոյն ներքոյ եւ արտաքոյ, փոփոխութիւնք կատարաց ձեղուան լինել ընկերութեամբ. իւրաքանչիւր ազգ 'ի բաժնի իւրում կամել կանթեղս եւ պատկերս. կանգնել սեղան, աւել ածել եւ մաքրել, որպէս առնն 'ի տաճարին Ս. Յարութեան, որով բարձեալ լինին ամենայն վէճք և խռովութիւնք, 'ի \ Զիլհիճէ, ١٢٥٢։

Սակայն Ցոյնք յետ խափանելոյ զհրովարտակս Հայոց, դարձեալ ինքեանց սեփհականեալ էին զընդհանուր նորոգութիւնն Ս. Տեղեաց, եւ ամբառնալ Սուլթան Մէճիտ Արքայի 'ի գահ Կայսերական Օսմանեան Պետութեան, ետուն նորոգել զայն հրովարտակ, և առին Ոստիկան 'ի Դրանէ, եւ եկեալ յԵրուսաղէմ ետուն առնել քննութիւն առաջի Դատաւորին և բազմութեան այլազգեաց, 'ի Տաճարին Ս. Յարութեան և յեկեղեցին Բեթղեհէմի, յորս միայն ներկայ գտան Հայք և Ցոյնք, և Լատին կղերք ոչ երբէք երեւեցան 'ի միջի՝ և ոչ ետուն թոյլ մերձենալ եւ քննել զտեղիս իւրեանց, և ստորագրեալ արձանացան իւրաքանչիւր տեղիքն, որք կարօտ էին նորոգութեան և շինութեան։ Տեսեալ Հայոց թէ առաջի կայ ինքեանց զրկիլ յիրաւանց իւրեանց, մատեան առ Դատաւորն և յայտ արարեալ նմա զգանկատանս՝ ետուն գրել 'ի Դուռն, զի նորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան և եկեղեցւոյն Բեթղեհէմի Կայսերական հրովարտակաւ հրամայեալ էր յառաջագոյն լինել 'ի ձեռն Հայոց, և 'ի հակառակութենէ միաբանացն Ցունաց՝ խափանեցան նոքա, և գործ շինութեան վերատին սեփհականեցաւ Ցունաց։ և ամօք յառաջ հրովարտակն այն նորոգեցաւ, և զայս գիտամբ ոչ յայտնեցին Ցոյնք, զի բաժինք Հայոց մնասցեն աւերակ։ և նովաւ այժմ կատարեցին զկարեւոր քննութիւնս, եւ ըստ այնմ գրեցաւ Իլամ։ Սակայն եթէ նորոգութիւնն մի միայն ձեռամբ Ցունաց լինիցի, անտարակոյս զտեղիս իւրեանց ըստ ամենայն պիտոյից յարմարեալ զարդարեն, և զտեղիս Հայոց հարեւանցի հայեցուածով փոքր նորոգութեամբ բաւ համարին։ որպէս նախ քան զհրդեհ Տաճարին Հայք ունէին զերկուս սենեակս 'ի Վերնատան և երկու 'ի վերայ կամարի Իւղարերից։ Ցոյնք հաճեցան շինել զերկոսին սենեակս Վերնատան, այլ 'ի վերայ կամարին ոչ։ և 'ի ժամանակի քննութեան ոչ ետուն թոյլ մուծանել յարձանագիրս, թէեւ Հայք ստիպէին բազմօք, և 'ի շինութեանն ոչ կամեցան շինել։ եւ այս հաստատեցաւ վկայութեամբ այլազգեաց, և վճիռ մեծի Դենպետին հրամայէ շինել զայնս։ Հայք 'ի սկզբանէ անտի գոլով հաւատարիմ հպատակ Օսմանեան Պետութեան, և ոչ 'ի միում ժամանակի հակառակ

կայսերական կամաց գործեալ են ինչ, այժմ անարժան գործն Ցունաց նախատինս բերէ 'ի վերայ նոցա։ Զի 'ի հրովարտակս Հայոց բացայայտ գրեալ է բաժանորդութիւն գերեզմանի Ս. Աստուածածնի և 'ի Բեթղեհէմի, ուստի հարկ է հաւասարաբաժին լինիլ երկոցունց։ յերից դրանց եկեղեցւոյն, երկուքն սեփհական են Ցունաց, և հիւսիսային Հայոց։ սակայն 'ի ժողովի քննութեան յայտ արարին Ցոյնք թէ իրաւամբ բաժանորդութեան փակել զայն։ զի եթէ հարկ լինի փակել, ուստի՞ մտցեն Հայք յԱյրն Մընընդեան, զի խափանի ճանապարհն՝ զրկին 'ի պաշտամանց ինքեանք և ուխտաւորք նոցա։ և միջնադուռն փայտեայ, 'ի վաղ ժամանակաց չինեալէ 'ի Հայոց։ արտաքին երկաթեայ դուռն, որոյ փականքն են 'ի ձեռս Ցունաց, և բաց յայնմանէ Հայք չունին այլ ճանապարհ 'ի վանս իւրեանց, և 'ի փակելն զայն՝ Հայք մնան արտաքոյ դրան։ Եւ յայսմ նրւագի խնդիրն վերանորոգութեան 'ի հակառակութենէ յառաջ եկեալէ։ Զպատկերս և զկանթեղս յԱյրն Մընընդեան և 'ի կողմն հիւսիսոյ, եղեալ են Հայք յառաջագոյն ըստ օրինակի գերեզմանի Ս. Աստուածածնի, այժմ Ցոյնք իբրեւ նորահնար զիրս վարկանելով զնոսա կամին բառնալ։

Արդ՝ Փոխանորդն, Թարգմանն եւ Մերակոյսն Հայոց խնդրեն չձգել Ցունաց զձեռս իւրեանց 'ի պատկերս, 'ի կանթեղս և յայլ սպասս եկեղեցւոյ, լեալ իրաւամբ բաժանորդութեան։ յԱյրին Մընընդեան և յեկեղեցին և 'ի սիւնազարդ սրահն կախել կանթեղս և պատկերս, զարդարել, աւել ածել և մաքրել, արտաքին դրան լինել բաժանորդ, հիւսիսային սեփհականել, և յեկեղեցին կանգնել սեղան։ Եւ ըստ պահանջման արդարութեան՝ վերանորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան և Եկեղեցւոյն Բեթղեհէմի լինել ընկերութեամբ։ զսեփհական տեղիս՝ անկախութեամբ, և զբաժանորդս ընկերութեամբ, եւ չինել զչորեսին սենեակս Ս. Յարութեան զոր գրեցաք, ١٥٢٧ Բէպիլ էվվէլ վերջ։

Սակայն այսպիսի գրեանք Դատաւորաց, խնդիրք եւ ջանք Հայոց՝ ոչ ինչ օգնեցին գործոյն, զի չէր հնար Արքայի յետս կոչել զհրովարտակն ընդհանուր նորոգութեան Ս. Տեղեաց՝ զոր տուեալ էր Ցունաց։ Յետ այսր ամենայ-

նի՝ պատրաստեալ Ցունաց զամենայն նիւթս չինութեան, սկիզբն արարին վերանորոգութեան, զկապարապատ ձեղունն և զյատակ եկեղեցւոյն և զայլ տեղիս. և սպիտակացուցեալ ծեփեցին ամբողջ զեկեղեցին, կամեցան և ձեռքն մխել յԱյրն Մենդեան, բայց ընդդէմ կացին նոցա Լատինք, զի ինքեանք ևս բաժանորդ էին տեղւոյն։ Եւ 'ի նորոգութեան պահու եղծին և ծածկեցին զհայելի խաչքարս և զարձանագրութիւնս՝ զոր դոին, որպէս կից միջնադրան դասուն 'ի վերայ հարաւային սեան զհին տառս հայկական. եղծին նաեւ և զբաղուստ 'ի մուզայից և ծածկեցին, որոց մնացորդքն ցարդ երեւին յորմն, կամեցան Ցոյնք հնարիւք խախտել եւ ձգել զսամատակեայ միջնադուռն, պատճառելով զյարդարումն սալից յատակին, այլ Ջանիւք Զաքարիա Պատրիարքի, հնարք նոցին 'ի դերեւ ել, և դուռն մնաց 'ի տեղի իւր, (1842)։

Յետ վերանորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի, խոպառ տիրապետեցին Ցոյնք սյնմ, և սկսան բռնանալ եւ չարիս հասուցանել Հայոց. որք խնդրէին սեփհականել զհիւսիսային դուռն, կախել կանթեղս 'ի սիւնազարդ գաւիթն եւ աւել ածել, որպէս Ցոյնք. ունել զբանալի երկաթեայ դրան. և վասն սոցին իրաց եռուն զրել Դատաւորին 'ի Դուռն՝ խնդրելով զդատաստանութիւն հրովարտակին, եւ բաւնալ զբռնութիւնս Ցունաց։ 'ի ԺԸ Բամազան ՌՄԸ։ Գրեցին նաեւ ինքեանք գիր աղաչանաց, յորում յայտ առնէին թէ՝ Ցոյնք զհրովարտակն ընդհանուր նորոգութեան կալեալ իբրեւ անկեղի օրէնք՝ տիրեցին բովանդակ եկեղեցւոյն, 'ի մառացոնս արկեալ զիմաստս առաջին հրովարտակաց՝ ուրացեալ զիրաւունս բաժանորդութեան, տիրաբար եւ ըստ կամաց իւրեանց զարդարեցին զբովանդակ եկեղեցին կանթեղօք և պատկերօք, և ջանան բառնալ զսպասս եկեղեցւոյն Հայոց, արդել եւ խափան լինելով ելից և մտից նոցին յարտաքին և 'ի ներքին դրանց։ Վերջապէս ոչ կամին Ցոյնք կանգնել սեղան Հայոց, եւ ըստ պահանջման հարկին պատրաստել զսպասս եկեղեցւոյ և զայլ իրս մինչեւ ցբեւեռ մի։ Այս գիր ընդ Իլամի Դատաւորին Երուսաղէմի մատուցաւ 'ի Դուռն գրով Պատրիարքին եւ ազգին։

Եւ յետ անցանելոյ աւուրց ինչ, ել հրովարտակ յԱրքայէ վասն եկեղեցւոյն Բեթղեհէմի՝ և տուաւ Հայոց, յորում պատմին երկար բանիւք բովանդակ իմաստ հրովարտակին Սկլիմայ և Մահմուտայ Արքայից, և զանցս մեծի դատին Ցունաց։ Սակայն 'ի մէջ բերէ զհրովարտակն նորոգութեան, յորում դարձեալ յականէ և յանուանէ որոշելով զտեղիս իւրաքանչիւր ազգաց, զբաժանորդս և զսեփհականս, բայց 'ի Լատինաց, թէ 'ի տառարին Ս. Յարութեան եւ թէ յեկեղեցին Բեթղեհէմի, յաւելու ասել՝ «Զի թէպէտ ընդհանուր նորոգութիւնն յանձն եղեւ Ցունաց՝ այլ ոչ երբէք տիրել, սեփհականել և բռնաբարել զիրաւունս իւրաքանչիւր ազգի, եւ ոչ զդուղնաքեայ իրս ինչ. այլ կալ մնալ իւրաքանչիւր ոք 'ի սեփհական տեղիս իւր, որպէս եւ էին, կատարել զօրէնս 'ի բաժանորդ տեղիս ընկերութեամբ՝ և 'ի սեփհական տեղիս անկախութեամբ։ Բայց յեկեղեցիս և 'ի բնակարանս Լատին կղերաց չմերձենալ. զի ոչ յանձն առին նոքա 'ի ժամանակի քննութեան լինել ներկայ, և զտեղիս իւրեանց ոչ կամեցան տալ նորոգել Ցունաց»։ Յետ գրելոյ զայս ամենայն բացորոշ, դարձուցանէ զբանս իւր առ Դատաւորս Երուսաղէմի եւ ասէ. «Արդ եթէ Ցոյնք զընդհանուր նորոգութիւնն պատճառելով, և իբրեւ ամուր ապաստանի և նեցուկ անխորտակելի յեցեալ 'ի նա, 'ի սկզբան նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի զառաջին ձեւն այլայլեալ էն, և նորանոր իրս հնարեալ, զբաժանորդութիւնն ընդ Հայոց բոլորովին ուրացեալ, զայս և զայն տեղի մերէ ասելով՝ զբովանդակ եկեղեցին յափշտակելոյ եւ տիրելոյ դուն դործեն և 'ի սիւնազարդ սրահն եկեղեցւոյ նորանոր կանթեղս կախեն, ուր չէ լեալ այնպիսի ինչ 'ի սկզբանէ անտի. եթէ արդարեւ այնպէս լցէ, որպէս ծանուցին Դատաւորն եւ կրօնաւորք Հայոց, բառնալ և խափանել զանզգամութիւնս ազգին Ցունաց, և այսուհետեւ չտալ տեղի կռուոյ և հակառակութեան. զի ընդդէմ է օրինաց եւ կայսերական հրամանիս։ Եւ եթէ 'ի նորոգութեան պահու յեկեղեցին Բեթղեհէմի, նորահնար իրս ինչ արարեալ լցեն՝ կարգաւորել զայն ըստ առաջին դրից, և ըստ մտաց հրովարտակաց, որ 'ի ձեռս երկաքանչիւր ազգի՝ բաժանորդութեամբ

եւ անկախութեամբ վարիլ։ և 'ի սկզբանէ որպիսի օրինակաւ կանթեղս կախեալ և զորէնս կատարեալ իցեն եւ իւրաքանչիւր ոք 'ի սեփհական դրանց իւրեանց եղ և մուտ արարեալ իցեն, դարձեալ ըստ վաղեմի սովորութեան արասցեն։ և մի լինիցին իրաւանց և տեղեաց միմեանց ձեռնամուխս, բառնալով զպատճառս բանակռուութեանց եւ վիճմանց։ Եւ յետ կարգաւորելոյ զայս ամենայն բացայայտ և ընդարձակ մանրամասն գրով ծանուցանել 'ի Դուռն, զի արձանագրեսցի 'ի Դիւանս»։ Վերջ Մուհարիմ, ١٢٥٩։

Ի հասանիլ այսր հրովարտակի յԵրուսաղէմ՝ կազմեցաւ ժողով 'ի Դատարանի առաջի մեծամեծացն այլազգեաց, ուր էին նաև Գլխաւորք միաբանութեան Հայոց և Ցունաց, և ամենեքեան լուեալ զհրաման մեծի Արքային, խոնարհեցան 'ի նշան հնազանդութեան։ Եւ զկնի աւուրց ելեալ գնացին բազմութեամբ 'ի գիւղն Բեթզեհէմ, և յեկեղեցւոջ անդ վերստին կազմեցաւ ժողով մեծ, եւ դարձեալ ընթերցան զհրովարտակն, եւ ծանուցին զիմաստ նորին երկաքանչիւր ազգաց, ապա խնդրեցին 'ի Հայոց զառաջին հրովարտակս, ընթերցան և զայնս, խնդրեցին և ըզ Ցունացն, այլ նոքա ոչ եւուն, պատճառելով թէ հրովարտակք իւրեանց են յԵրուսաղէմ։ Յետ այնորիկ հրաման եւուն Հայոց կախել կանթեղս 'ի վերայ երկոքին շղթայից, զոր եդեալ էր յառաջագոյն 'ի հիւսիսակողմն 'ի բաժնին Հայոց, բանալ և փակել զպատուհանս՝ անդ, զոր արգելեալ էին Ցոյնք, քակել և զերկար աստիճանս, զոր շինեալ էին 'ի հարաւ և 'ի հիւսիս, բառնալ զկանթեղս 'ի սիւնազարդ սրահէն, տալ զմի բանալի արտաքին երկաթեայ դրան 'ի գործադրութիւն Հայոց։ Եւ յետ կատարելոյ զայսոսիկ իբրեւ մերձեցան քակել և փոխել զփականս հիւսիսային դրան եկեղեցւոյն Հայոց, լինել սեփհական նոցին, աղմկեալ Ցունաց աղաղակ բարձին եւ յարուցին խռովութիւն մեծ։ Մինչեւ ճանճրանալ Դատաւորաց եւ անկատար թողուլ զգործն, զի տակաւին պահանջէին Հայք զամբողջ գործադրութիւն հրովարտակին, խնդրէին անպատճառ զբանալի հիւսիսային դրան միայն ինքեանց սեփհական, և 'ի սիւնազարդ սրահն կախել կանթեղս, դնել պատկերս եւ կանթեղս 'ի վերայ փայտեայ դրան, աւել

ածել եւ մաքրել յԱյրն Ննդեան ըստ օրինակին Ցունաց և Լատինաց։ Ցոյնք կարի յոյժ ընդդէմ դառնային, Դատաւորք իբրու թէ զահի հարեալ յաղմկէ Ցունաց, թերևս թելադրութեամբ նոցին էր, ոչ ինչ կարացին ասել կամ առնել, այլ միայն երթիցուք 'ի քաղաքն, և անդ վերատին լիցի քննութիւն հրովարտակաց, և թէ, այդոքիկ պահանջք ձեր Բարձրագոյն հրամանի պէտս ունին, և այնպէս անկատար թողեալ զգործն դարձան յԵրուսաղէմ։ Եւ զկնի աւուրց ինչ եկն Բդեշխն Գաղայու Մէհէմմէտ Բաշիտ Փաշա, զոր յանկուցեալ էին Ցոյնք 'ի կողմն իւրեանց, եւ վերստին կազմեցաւ ժողով մեծ յատենի նորա, եւ եղեւ վէճ սաստիկ։ Ցոյնք մատուցին զէին հրովարտակս իւրեանց, որովք տքնէին զդէմ ունիլ Հայոց, և նոքա ընդդէմ զինէին թէ այդոքիկ հնադոյն են ժամանակաւ քան զմեծ դատն որ ընդ Ցունաց, այլ այսոքիկ բանք չեղեն լսելի։ Թէպէտ և դրեցաւ վասն շղթայից և պատուհանաց Իլամ և Հէօճճէթ, սակայն 'ի նմին յառաջ բերին, թէ հայեցեալ 'ի հրովարտակս Ցունաց, չհամարձակեցան հրամայել զգործադրութիւն բանալոյ արտաքին դրան, մինչ 'ի դալուստ Բարձրագոյն հրամանի։ զայս Հէօճճէթ եւուն վաւերել Հայք մեծի Դենպեսին։

Իսկ Զաքարիա Պատրիարք տրտմեալ յոյժ 'ի վերայ այսպիսի ձախող ելիցն իրաց, ցաւօք սրտի գրէ առ Փոխանորդն 'ի Կոստանդինուպոլիս, մանաւանդ զգուշեալ յազգային չփոթութենէ, ուր յետ այլոց բանից ասէ։ «Ես անարժանութեամբս նոր դարձոյ Պատրիարք, մինչեւ ես զիս չճանաչեմ, զայլս ոչ կարեմ ճանաչել։ Եթէ չհաւանին իմ կառավարութեան, եւ չկամին ընդունիլ, ես ոչ հակառակիմ, ոչ խարդախութեամբ խօսիմ կամ գրեմ, այլ իմ յօժարութեամբս գրեմ զիմ հրաժարական առանց խղճի, թող հակառակորդք մտածեսցեն, կորուսի զիմ երջանիկ հանգստութիւն, եթէ չկթիցեմ անուշահոտ պտուղ, զի՞ է ինձ աշխատիլ և տնկել անպտուղ ծառ տերեւալի՝ միայն համբաւ և ոչ այլ ինչ։ Ջանամ ըստ տպարանն պայծառացուցանել, դպրատուն մի օրինաւոր կարգադրութեամբ հաստատել, այս ըստ իմն ըղձի։ բաց 'ի սոցանէ ըստ այժմեան կառավարութեան, հարկաւոր է

Քարանդինայի տեղի և հիւանդանոց, որք սիրելիք են եւ հաճոյ կամաց աղնուական Ազգապետաց, այլ եթէ 'ի մէջ մեր լինի հակառակութիւն, զիա՞րդ լինիցեն սոքա »։

Գ. ԼՈՒԻ ԺԷ.

Խնդիր բանալեաց արտաքին և ներքին դրանց։ զոգ տաճկանաց Բեթ-ղեհեմի եկեղեցւոյն և շրջեալ սենեկաց 'ի Ս. Յակոբեանս։ Բարձումն կանթեղաց Հայոց յեկեղեցւոյն Բեթղեհեմի, և վերատին կախել զՅունանցն։

ԹԷՊԻՏԵԻ Հայք տրամեցան ընդ ճանող ելիցն իրաց, մանաւանդ ընդ խափանումն բանալոյ արտաքին դրան, այլ սուղ ինչ մխիթարեցան 'ի վերայ կանթեղաց և այլոց իրաց՝ զորս գրեցաք՝ և նոքա եւս ոչ եղեն յարատեւ, որպէս ունիմք գրել 'ի տարեւ։ Սակայն ոչ թուլացեալ դադարեցան 'ի խնդրոյն։ զի մեծաջան վաստակօք զհետ մըտեալ էին կամ վերատին ստանալ զայն բանալի, և կամ բանալ դուռ նորոյ կից նմին, որոյ տեղին նշմարի, և միայնակ սեփհականել զհիւսիսային դուռն։ զի Յոյնք առ չարութեան երբեմն աղխէին զայն 'ի յետուստ։ վասն որոյ 'ի ձեռն Դատաւորին Ետուն գրել 'ի Դուռն, և ինքեանք եւս առ գլխաւորս ապրին, զի հնարս դացեն աղատել զմիաբանս և զուխտաւորս 'ի թշնամանացն Յունաց։ Եհաս գիր Դատաւորին 'ի Դուռն։ գրեաց եւ Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ վասն այսց խնդրոց։ Եւ զկնի աւուրց ինչ Փոխանորդն Երուսաղէմի Յովհաննէս Եպիսկոպոս գընաց ընդ նախորդին իւրոյ առ պաշտօնեայն արտաքին գործոց։ Եկին և 'ի Յունաց ոմանք, ընդ որս էր եւ այրն Երեւելի Ստեփանաքի Պէյ։ եւ եղեւ վէճ յատենի անդ վասն դրանց ժամս իբր 2, և հուսկ ուրեմն որոշեցաւ՝ եթէ հաճեսցին Յոյնք՝ տացեն Հայոց զմի բանալի արտաքին դրան։ իսկ եթէ ոչ, տացեն հրաման Հայոց բանալ զայլ դուռն մերձ նմին։ Իսկ յաղագս ներքին երկոց դրանց՝ ոչ գտաւ 'ի Դիւանս արձանագրութիւն ինչ, ուստի համարեցան դրուռնքն այնոքիկ նորահնար և 'ի վերջոյ բացեալ։

Յոյնք պնդէին թէ ունիմք հրաման և դիր վասն այնոցիկ։ Բդեչան ասէր։ զի եթէ գոյի այնպիսի դիր ինչ 1813 թուականէն զկնի, մնասցեն դրուռնքն որպէս և էին, իսկ եթէ ոչ, քակեսցին եւ բարձցի նորահնար որմն 'ի միջոց։ բայց զքակումն միայն բանիւ ուսանէաց և ոչ 'ի դիր արձանացոյց, որպէս զասացս։ Ստեփանաքի Պէյն՝ որ ունկն դնէր վիճմանց երկուց ազգաց վասն հիւսիսային դրան՝ ասէ ցիւրն 'ի Յոյն բարբառ։ զի՞ այդչափ վիճէք և յամառեալ կայք 'ի բանս ձեր։ զի՞նչ օգուտ կամ վնաս հասանէ ձեզ 'ի դրանէդ յայդմանէ, յետս կացէք։ իսկ նոքա դարձեալ հաստատուն կացեալ 'ի բանս իւրեանց, ասեն։ Թափորին մերոյ է հարկաւոր։ Փոխանորդն Հայոց՝ իրաւէիկ ելեալ բանից նոցին ասէ։ Յոյնք 'ի տարուջ միանգամ ունին Թափոր։ 'ի ժամուն՝ բացցուք՝ եւ կամ բնաւ ոչ փակեսցուք 'ի գիշերին յայնմիկ։ զի Հայք եւս ունին Թափոր յատուր ծոնի Ծննդեան իւրեանց, որ երբեմն ելեալ 'ի հարաւային դրանէ Սիրոն, դառնային զառաջեաւ եկեղեցւոյն Յունաց, դուք ընդէ՞ր փակէք յայնմ զիշերի զայն դուռս։ առ այս խոստացան բանալ զդուռն և շրջիլ Հայոց։

Յովհաննէս Եպիսկոպոս գրեալ ազդ առնէ զայսոսիկ յԵրուսաղէմ առ Զաքարիա Պատրիարք և պատուիրէ զդուշանալ յամենայնի։ զի մի խարդախանօք և կամ հնարիւք ինչ յարմարեսցին դիր 'ի ձեռն Քարտուղարի դատարանին վասն դրանց եկեղեցւոյն Բեթղեհէմի։ Իսկ Պաշտօնեայն արտաքին գործոց ոչ կարացեալ յայնժամ անձամբ անձին վճարել ինչ, և կամ լուծանել զխնդիրն, յղեաց յատեան արդարութեան։ ընդ նմին և զայլ կարեւոր խնդիրս, զորոց պատճեսցուք յետոյ։ Անդ 'ի քննութեան 'ի միտ առին՝ զի Հայք խնդրէին բառնալ զրաժանարդութիւնն 'ի հիւսիսային դրանէ, եւ միայն սեփհականել ինքեանց։ Յոյնք դժկամակեալ պատճառէին զարգելումն Թափորին։ Եւ վասն արտաքին դրան Յոյնք պնդէին ըստ մտաց հրովարտակին ՌՉՌ թուին սեփհական ինքեանց, եւ ոչ կամէին լինել ընկերովք։ Հայք ընդդէմ դարձեալ ասէին։ զի որովհետեւ հրովարտակին Սէլիմայ Արքայի հիմն ընտրեցաւ, եւ զհրովարտակն զոր յառաջ բերին Յոյնք, երիցագոյն է ժամանակաւ քան զհրովարտակն առեալ զկնի մեծի դատին,

նորա զօրութիւնն բարձեալ և արձանագրութիւնն ջնջեալ համարի · զի մինչ 'ի թուականն յայն՝ մին 'ի բանալեաց էր 'ի ձեռս Հայոց եւ միւսն Ցունաց։ Ուստի կախեալ գոլով այս 'ի հաճութենէ Կայսերական կամաց, մինչ 'ի ժամանումն Բարձրագոյն հրամանի պատուիրեալ են Ցունաց անգործադրելի թողուլ զբանալին Հայոց, որպէս յայտ առնեն զայս գրեանքն եկեալ յԵրուսաղէմէ։

Իսկ 'ի խնդրոց մին էր, զի 'ի նորոգել Ցունաց զեկեղեցին Բեթղեհէմի, փոխեցին զդիրս աստիճանաց 'ի հարաւային կողմն՝ որ հանէ 'ի վանս Ցունաց, զի յառաջագոյն էր 'ի միոյ կողմանէ ելեթ, որպէս ցուցանէ հին յատակագիծն · յետոյ քակեալ զայն չինեցին զոյգ յերկուց կողմանց։ Առ այս թէպէտեւ բողոք բարձին Հայք և Լատին կղերք, թէ փոխեցին զնախնական ձեւն եկեղեցւոյ հակառակ Կայսերական հրամանի, սակայն Ցոյնք յառաջագոյն հաճեալ էին զկամն Դատաւորին Երուսաղէմի եւ մեծամեծացն այլազգեաց, և առեալ էին դիր 'ի նոցանէ, թէ դոյզն ինչ փոփոխութիւն ոչէ հակառակ օրինաց եւ հրամանի։ Եւ զի յառաջագոյն 'ի քակել սանդխոցն 'ի հարաւ և'ի հիւսիս՝ զանց արարեալ էին զայնու իրր անվնասակար · իրրեւ հարցումն եղեւ 'ի մեծէ Դենդեւէն, նա եւս եթող զայն իրր անվնաս։

Երկրորդ խնդիրն է չորս սենեակք Հայոց 'ի Ցամարին Ս. Ցարութեան, որք ոչ մուծան յարձանագիրս 'ի քննութեան պահու՝ ակնարկութեամբ Ցունաց, և ոչ չինեցան · թէպէտեւ յառաջագոյն բողոք բարձին վասն այսոցիկ Պատրիարքն և միաբանք Հայոց, և'ի ձեռն Դատաւորին խնդրեցին հրովարտակ վասն չինութեան նոցին, այլ խնդիրն կնճռոտեալ կարի երկարեցաւ։ Այժմ որոշումն առնին արդարութեան եղեւ այսպէս · ընդհանուր նորոգութիւնն Ս. Ցարութեան առեալ է Ցունաց, այլ յաղագս չինութեան սենեկացն Հայոց, 'ի Կայսերական կամաց կախեալ է · սակայն օրինօք Դատարանի առաջի երկուց ազգաց առուգեսցի, եթէ յայտնի լինիցի թէ ոչ մուծան նոքա յարձանագիրս, յայնժամ 'ի ձեռն Դատաւորին, Ճարտարապետին և հսկողութեամբ Վերակացուին քննեսցի, և յօրինեսցի յատակագիծ նոցին 'ի թղթի եւ առաքեսցեն

'ի Կոստանդինուպոլիս · յայնժամ անօրինեսցի՝ որ ինչ հարկն է, և չէ ինչ վնասակար եթէ գրեսցի վասն այսր հրովարտակ, ըստ որոշման առենին գրեցաւ հրովարտակ, և'ի հասանելն յԵրուսաղէմ՝ ընթերցաւ 'ի Դատարանի։

Յայնժամ Կուսակալն Ալի Փաշա, Ոստիկան Նէպի Էֆէնտի՝ Դատաւորն և մեծամեծք այլազգեաց, Հայք և Ցոյնք ժողովեցան 'ի Ս · Ցարութիւն, վերստին քննեցին ըստ հրամայելոյ հրովարտակին, եւ ստուգեալ հաստատեցաւ թէ՝ սենեակքն սյնոքիկ էին նախ քան զհրդեհն, և թէ յետոյ ոչ չինեցան, և'ի քննութեան ոչ մուծան յարձանագիր, և վասն այսր Դատաւորն Համուլլահ առեալ էր դիր Հայոց, մատուցին և զայն։ Դատաւորն զանց արար զնովաւ և առեալ զմեծամեծս այլազգեաց մեկնեցաւ անտի, և առանց վճռման տալոյ գործոյն, եւ Ցունաց Իլամ և Էֆոնտէթ · իսկ Պատրիարքն Հայոց վերստին գրեաց 'ի Կոստանդինուպոլիս՝ առաքելով զդիր նախկին Դատաւորին և զյատակագիծ տեղւոյն, և մատուցաւ 'ի Դուռն, և դարձեալ խնդրեցին հրաման վասն չինութեան սենեկաց։ Եպարքոսն հրամայեաց ակնարկել յարձանագրութիւնս Դիւանին եւ գտին՝ զոր ինչ գրեալ էին յայնժամ յԵրուսաղէմէ, թէ ըստ հրովարտակին եղեւ քննութիւն վասն սենեկացն Հայոց · այժմ նոքա չերեւին 'ի միջի, զի այրեցան 'ի հրդեհին, և յետոյ Ցոյնք ոչ չինեցին · Ցոյնք յայտնապէս ուրացան, և'ի ձեռս երկաքանչիւր ազգաց են թղթեանք հակառակ միմեանց, ուստի հարկ եղեւ անտես առնել, եւ'ի դիրս նախկին Բդեշխին ոչ նշմարին, որ տրեալ է Ցունաց յետ աւարման չինութեան · նոյնպէս և'ի դիրս Դատաւորին, և'ի տեղեկագիրս Նէպի Էֆէնտեայ, գործն համեմատ Կայսերական հրամանին աւարտեցաւ ասէ, իսկ գրեանք նախկին Բդեշխին, Դատաւորին և Վերատեսչին միմեանց հակառակ են, նաեւ Կայսերական հրովարտակին, և այս եւս յայտնի տեսանի՝ զի դոյութիւնք սենեկաց նախ քան զհրդեհն էին, և զկնի այնր ո՞վ արդեօք խնդրեաց հրաման չինութեան, եւ ո՞ր ազգ տիրեաց · 'ի նմանս և'ի ծանուցագիրս չնշմարի կէտ ինչ, ուստի խնդիրն վերստին հարցման և քննութեան պէտս ունի · այս է արտադրութիւն արձանագրութեան կայ-

սերական Դիւանին։ Եւ Եպարքոսն զարձեալ առաքեաց զայս խնդիր յարդարութեան առեանն, որ 'ի քննութեան որոշեցաւ, սենեակքն մշանջենաւոր էին նախ քան զՀերդեհն, ընդդիմանալ Յունաց չինութեանց նոցին, է գործ մեծի զրկանաց հակառակ օրինաց եւ հրամանի, պարտ է վերստին հարցանել 'ի տեղւոջէ իւրմէ։

Ի վերայ այսր գրեաց Եպարքոսն առ Բդեշխն Երուսաղէմի Մէհէմմէտ Փաշա, բացատրելով զխնդիրն զոր գրեցաք։ Եւ 'ի վերջոյ ասէ։ Սուեալ ընդ քեզ զերեւելիս քաղաքիդ, զՓոխանորդս և զԹարգմանս երկուց ազգաց, օրինօք Շէրիի եւ գիտութեամբ ամենեցուն զխնդիրն վերբաստին առնուլ 'ի քննութիւն և ստուգել, յորոց վերայ է վէճն։ Եթէ արդարեւ սենեակքն 'ի Ս. Յարութեան նախ քան զՀերդեհն էի՞ն՝ թէ ոչ։ յառաջագոյն Յոյնք հաճեալ՝ և 'ի վերջոյ արգելեալ են մուծանել զայն յարձանագիր, որպէս պատմէ Նէպուլէիթէնտ։ զայս ամենայն քննութեամբ ստուգեալ 'ի հաւատարիմ արանց, զի մի վերստին հարցման կարօտ լիցի։ զհշմարտութիւն իրին բացայայտ և պարզագոյնք Իշլամաւ Դատաւորին, եւ հանրագրութեամբ եւ ձեր իսկ գրով ծանուսջիք ասա։ երբէք մի լիցի ձեզ պաշտպանել զմին և զմիւսն, եւ կամ զիջանել 'ի հաճոյս եւ 'ի շնորհուկս ուրուք։ զի մի վերստին արծարծեսցի վէճն։ յուսամք թէ աջալրջութեամբ կատարէք զայս, 'ի ՃՁ Զիլգատէ։ ՌՃԼ (Բառոփ)։

Վերջին որոշումն։ քակել զերկու երկայն աստիճանս, և չինել ըստ առաջնոյն։ զոյդ առաիճանաց որ հանէ 'ի փանս Յունաց, մնալ այնպէս, զի չէ վնասակար։ Յոյնք ոչ կամեցան տալ զբանալի հիւսիսային դրան պատճառելով զԹափօրն։ իսկ բանալի արտաքին դրան, որոյ մին էր 'ի ձեռս Հայոց եւ միւսն Յունաց մինչ 'ի թուականն ՌՃԼՁ, Գործակալք յանձն առին զեկուցանել Արքայի, և պատուէր ետուն Հայոց չգործածել զբանալին մինչ 'ի դալուստ նոր հրամանի։ Շինութիւն սենեկաց, կախեալ է Կայսերական կամաց եւ Վերատեսչին չէր հարկ մնալ յերուսաղէմ, զի աւարտեալ էր գործ նորոգութեան, և պատուէր ետ առանց հրամանի չլինիլ ձեռնամուխ 'ի շինութիւնս, և մեկնեցաւ 'ի Կոստանդինուպոլիս։ այսպիսի հրաման եղեւ 'ի

Դրանէ, եւ եթէ հարկ լիցի՝ Պատրիարքանք ծանուսցեն առ Պաշտօնական արտաքին գործոց, և յետ այնորիկ անօրինել զպարտ ու պատշաճն։ Իսկ արտաքին պաշտօնական յաղագս բառնալոյ զրաղմամեայ խռովութիւնս երկուց ազգաց, կոչեաց քանիցս զեկեղեցականս երկուց կողմանց, զի իրաւախոհ լինիցին։ և զկնի բազում բանից՝ Հայք թողին և 'ի բաց կացին 'ի խնդրոյ զոյդ ոանդխոց։ իսկ վասն մնացելոց հարցանել Արքայի։ և նա հրամայեաց ըստ որոշման առաջնին արդարութեան լինել հրամանաւք, եւ ըստ այնմ գործադրել։

Մինչդեռ Հայք պատազեալ զայսոսիկ խնդրովք գեղերին 'ի դրուանս մեծամեծաց և յատեանս Տէրութեան, և խնդիրքն կարեւորք մերժ էին գտանել զլուծումն։ այլ միաբանք Յունաց արագեցին եւ կանխեցին այլ ինն չիրութեամբ խափանել զայն և կապել 'ի ինձիրն անլուծանելի։ դիմեցին մեծամեծ պատարագաւք առ Կուսակալն Սիդոնի (Սայտայ Վալիսի) Էսատ Փաշա, եւ բամբասանս բարեբանաց եղեալ՝ մեծամեծ գանկատանաւք ամրոստան եղեն զՊատրիարքէն եւ զմիաբանութենէ Հայոց։ թէ որպէս յանդգնեցան առանց Բարձրագոյն հրամանի կախել զկանթեղս յեկեղեցին Բեթղեհէմի։ բանալ զպատուհանս, առնուլ զբանալի արտաքին դրան, և 'ի սիւնազարդ սրահէ եկեղեցւոյն իջուցանել զկանթեղս Յունաց, այլոքն հանդերձ։ եւ նորա զիջեալ 'ի կամն նոցա գրեաց առ Դատաւորն և առ մեծամեծս Երուսաղէմի։ իջուցանել զկանթեղս Հայոց, չբանալ և չփակել զպատուհանս, և զառնել ածելն վերստին յանձնել Յունաց, և 'ի սիւնազարդ սրահն վերստին կախել զկանթեղս։ Ի հասանել այսր հրամանի յերուսաղէմ, որոյ ոչ Յոյնք զմիտս Դատաւորին և մեծամեծաց։ գնացին բազմութեամբ 'ի Բեթղեհէմ։ բարձին զկանթեղս 'ի ջրթայլոյն Հայոց, եւ կախեցին զկանթեղս Յունաց 'ի սիւնազարդ սրահն եւ խափանեցին զոր մնանդամ կարգաւորեալ էր հրովարտակաւ Արքայի։ եւ պատուէր ետուն Հայոց չլինել ձեռներէց յիրս ինչ 'ի պատճառս որև իցէ իրաց։ Այս հակառակ և անակնուելի հրաման Կուսակալին առիթ եղեւ միարանացն Հայոց դառն վշտաց եւ ախորութեան, այլ ոչ եղեն յաւասակաւոր մեան-

դամայն, գրեցին առ Պատրիարքն և առ գլխաւորս աղգին 'ի Կոստանդինուպոլիս ամենայն ինչ որ միանգամ գործեցաւ յԵրուսաղէմ, և խնդրեցին դարմանել զկիրսն. և նոքա գրեալ ծանուցին 'ի Դուռն, և խնդրեցին վերստին հրովարտակաւ հաստատել զայն ամենայն, զոր եռուն եղծանել Յոյնք։

Իսկ մեծ եպարքոսն զարմացեալ 'ի վերայ այսր, խընդրեաց զարձանագրութիւնս կայսերական դիւանին, և եգիտ անդ զամենայն ինչ կարգադրեալ ըստ Շէրիի օրինաց և հրովարտակաւ Արքայի առաջի Բդեշխի, Դատաւորին և բազմութեան այլազգեաց քաղաքին և Վերատեսուչ Նէպի Էֆէնտեայ, և այլ ամենայն ինչ ընդարձակ և բացայայտ գրեալ էին անդ, սակայն բողոքագիր Պատրիարքին Հայոց, և տեղեկագիր Նէպի Էֆէնտեայ, զոր մատոյց եպարքոսին 'ի վերադարձին իւրում, զհակառակ նորին յայտ առնէին. զի տակաւին նոյն հրամանաւ արգելեալ կային ամենայն ինչ։ Ուստի հարկ եղեւ եպարքոսին վերըստին գրել առ Բդեշխն Երուսաղէմի Մէհէմմէտ Փաշա և տեղեկութիւն խնդրել 'ի նմանէ. «Ո՞յր աղգաւ է ասէ պատահմունք իրացդ, և ո՞րպիսի իրք սքանչելիք և զարմանալիք դիպեցան, որ հրովարտակաւ Արքայի և օրինօք Շէրիի առաջի բազմութեան այլազգեաց կարգադրեալ խնդիրն՝ յանկարծ այսպէս մի միայն հրամանաւ Կուսակալին Սիդոնի դադարեալ խափանեցաւ, և Յոյնք վերըստին բռնացեալ 'ի վերայ իրաւանցն Հայոց՝ կախեցին զփափանեալ կանթեղս, և զայլ իրս որք ոչ էին յառաջ ժամանակաւ. զայսոսիկ ամենայն պարագայիւք քննեալ և ստուգեալ 'ի հաւատարիմ արանց գրովք Դատաւորին եւ ձեր փութանակի ծանուսջիք մեզ»։ 'Ի Է Մուհարրէմ. ١٢٦٢։ (Բառիք)։

Ի ժամանակս Նորոգութեան եկեղեցւոյն Բեթղեհէմի Յոյնք խցին զերկուց խողովակս Ջրոցն որ ի Ջանէր 'ի տանեաց անտի 'ի Վանս Հայոց, ուր վասն այնր Մարկոս Եպիսկոպոս Քիլիցի չինեալ էր ջրամբար։ Զաքարիա եւ Մատթէոս Պատրիարգունք ծանուցին 'ի Դուռն եւ խնդրեցին բանալ զխողովակսն ըստ առաջնոյն, և զի ոչ գտաւ յարձանագիրս Դիւանին վասն այնր, թէպէտեւ հարցեալ ըստուգեցին 'ի Նէպի Էֆէնտեայ, որ Վերատեսուչն էր գործոյն, այլ ոչ բաւականացան այնու. գրեցաւ հրովարտակ ուղղեալ առ Կուսակալն Սիդոնի և առ Բդեշխն և Դատաւորն Երուսաղէմի, զի բազմութեամբ և առանց կողմնակցութեան քննեսցեն և վերահասու լեալ իրացն փութանակի ծանուսցեն 'ի Դուռն։ ١٥ Զիլգատէ, ١٢٦١։

Այսոքիկ խնդիրքս հասանեն մինչեւ ցայս վայր, այնուհետեւ չերեւին գրութիւնք ինչ, թէ որպիսի եղանակաւ պատասխանի ետուն Բդեշխն եւ Դատաւորն, եւ թէ ո՞յր աղգաւ լուեալ դադարեցին միաբանք Հայոց՝ յետ այսքան տառապանաց և աշխատութեանց և մեծագումար ծախուց, զի խնդիրքն Հայոց խափանեալ մնացին իսպառ, և կանթեղք եւ այլ իրք Յունաց մնացին 'ի տեղւոջ իւրեանց, պատճառ ո՛չ այլ ինչ գտանեմք, եթէ ոչ տարաժամ մահ Զաքարիա Պատրիարքի, և խռովութիւն աղգայնոց 'ի Կոստանդինուպոլիս։

ԳԼՈՒԽ ԾԸ.

Դռնապանք Ս. Յարութեան։ Վէճ Յունաց վասն Եկեղեցւոյն Ս. Յովհաննու։ Կայսերական Նշան Ռուսաց և Օսմանցւոց։ Վախճան Զաքարիա Պատրիարքի։

ՅԱՂԱԳՍ անդորրութեան և առատութեան ուխտաւորաց, յառաջագոյն սրդի Փոխարքային Եգիպտոսի Իպրահիմ Փաշա, տուեալ էր բանալ զմի փեղկ դրան Տաճարին Ս. Յարութեան, զի այնպէս օրինադրեալ էին 'ի ժամանակս Մէկիք Սալահատտինի, և յաղագս բառնալոյ զայլ անկարգութիւնս այլազգի դռնապանաց խնդրեալ էին Գըլխաւորք Քրիստոնէից 'ի Տէրութենէ. 'ի հասանիլ այսր հրովարտակի յԵրուսաղէմ, կոչեցան դռնապանքն 'ի դատարան, ուր էին Փոխանորդն Հայոց, Կիրակոս Եպիսկոպոս և Յունացն Քիրիլոս. յետ ընթեռնլոյ զայն, խորհեցան բարւոք կարգաւորել զպաշտօն նոցա, չպահանջել այնուհետեւ յուխտաւորաց իրրեւ մուտք մի մի փարայ, զի

բաղում անգամ 'ի պահանջել նոցա 'ի կանանց և 'ի աղջկանց և յօտարաց, որք ոչ էին հպատակ Օսմանեան Տէրութեան, լինէր վէճ և խռովութիւն. ուստի առ 'ի բառնալ զայս անկարգութիւն, Փոխանորդք յանձն առին 'ի տասն ամաց հետէ զսահմանեալ տուրս վճարել դռնապանաց, և փոխանակ մի մի փարայի, զկնի Զատկի տալ 2000 դահեկան յերկուց վանաց եւ դռնապանաց չպահանջել այլ եւս ինչ ոչ յուխտաւորաց և ոչ 'ի միաբանաց, և ոչ յայլոց ով ոք և ի՛ցէ. 'ի հաճիլ երկուց կողմանց այսմ պայմանագրութեան՝ Դատաւորն գրով հաստատեաց 'ի ١١ Շաբաթն. ١٢٥٩.

Ի սմին ժամանակի Յոյնք որսացեալ 'ի կողմն իւրեանց զԲդեշխն Երուսաղէմի զՀայտար Փաշա, առին հրաման 'ի նմանէ նորոգել զվանօրայս Թուով 6. Յետ նորոգելոյ զմին՝ ձեռն արկին նորոգել զՎանս Հայր Աբրահամու, որ յառաջագոյն Վանք էր Հապէշաց. 'ի նորոգութեան ասա քակեցին զտանիս Ս. Յովհաննէս եկեղեցւոյն Հայոց և բարձին զքարինս նորա, կամելով հաւասարել զայն տանեաց իւրեանց, եւ զի տանիք Ս. Յովհաննու բարձր էր կանգնաւ չափ քան զայլս, և 'ի կամել հաւասարել զայն, Նրբանայր առաստաղ եկեղեցւոյն, և յեղանակի ձմրան անձրեւաց հեռուէր քանդումն և աւերումն. Զաքարիա Պատրիարք բողոք երարձ առ Դատաւորն զայսմ անիրաւ յափշտակութենէ Յունաց, զնոյն արար և առ Հայտար Փաշա, այլ նա մերժեաց յերեսաց իւրոց զպատգամաւորս նորին, պատճառելով թէ ծախք նորոգութեանց յարքունուստ են. այսպիսի հնարիւք յառաջացուցանէ զգործ Յունաց, և նոքա 'ի ծածուկ վճարէին զդրամս. Տեսեալ Հայոց զհնարս Բդեշխին, դիմեցին առ Դատաւորն, և վաւերական գրովք ցուցին զիրաւունս, և թէ ո՞ղջէ՞ տիրեալ են եկեղեցւոյն, և 'ի ժամանակս ժամանակս նորոգեալ եւ չինեալ 'ի ներքուստ եւ արտաքուստ, Դատաւորն երկիցս չոքաւ բազմութեամբ 'ի տեղին, և արար մանրամասն քննութիւն, ընդ որս էր և Բդեշխն, և քաջ ծանեաւ զիրաւունս Հայոց 'ի գրոց և 'ի դրից տեղւոյն. խնդրեցաւ գիր և 'ի Յունաց, եւ նոքա ոչ կարացին մատուցանել ինչ, այլ պնդէին թէ օդն և տանիս եկեղեցւոյն մեզ պատկանի, զի կից է տանեաց մերոց.

թէպէտ զիջան ընկերութեամբ չինել զտեղին, այլ Հայք ոչ առին յանձն. Դատաւորն ետ էլօճէթ Հայոց, թէ եկեղեցին սեփհական է նոցա, և նորոգութիւնն եւս նոցա պատկանի, և թէ հրամայեն օրէնք ելանել 'ի տանիս նորա անարգել 'ի վանացն Յունաց. սակայն Յոյնք և Բդեշխն ոչ հաճեցան այսմ, նմին իրի յաւելոյր վէճն օրքան զօր. Տեսեալ Հայոց թէ ոչ կարեն վճարել ինչ յերուսաղէմ, գրեցին զխնդիրն պարագայիւք առ ազգային Պատրիարքարանն, եւ առ Կուսակալն Ասորեաց Էսատ Փաշա. Մատթէոս Պատրիարք գրով ծանոյց առ Եպարքոսն զգանկատանս Պատրիարքին եւ միաբանութեան Երուսաղէմի. Յակնարկել նորա յարձանագիրս Կայսերական դիվանին վասն նորոգութեան եկեղեցւոյս՝ ոչ գտաւ ինչ տուեալ Յունաց, ուստի գրեցին առ Կուսակալն Ասորեաց, առ Դատաւորն Երուսաղէմի, եւ առ Վերատեսուչն չինութեանց Նէպի Էֆէնտի, քննել զտեղին պարագայիւք և ծանուցանել 'ի Դուռն, և նոքա յետ քննութեան գրեցին ամբաստան լինելով զանկարգութենէ և զագահութենէ Հայտար Փաշայի. թէ ո՞րպէս ընդդէմ օրինաց և կանոնաց թիւրէ զդատաստանս, և առանց հարցանելոյ ումեք ինքնագլուխ հրաման տայ Յունաց նորոգել զվանօրայս իւրեանց. զի այսպիսի նորոգութիւնք առանց Կայսերական հրամանի չըլինին, և ոչ ումեք տեսեալ կամ լուեալ իցէ թէ ծախք նորոգութեան վանօրէից յարքունուստ լեալ իցեն, որպէս պարծէր նա, և հարեալ յագահութենէ ոչ լուաւ զաղաչանս Հայոց, և հանդիպեցոյց զնոսա մեծի վնասուց, և թէ եկեղեցին այն սեփհական է նոցա. և այլ այսպիսի բանք երկար։ Հասին այսոքիկ գրեանք 'ի Դուռն, և Զաքարիա Պատրիարք հանեալ զպատճէնս հին վաւերական գրոց, ընդ Իլամի Դատաւորին առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս, եւ Մատթէոս Պատրիարք առաքեաց զայնս գրով իւրով առ Եպարքոսն։ Եւ 'ի սմին ժամանակի անկան 'ի պաշտօնէ Հայտար Փաշա, և Կուսակալն Ասորեաց Էսատ Փաշա, և Նէպի Էֆէնտի կատարեալ զպաշտօն իւր դարձեալ էր 'ի Կոստանդինուպոլիս։ Եպարքոսն զայսոսիկ գրեանս առաքեաց առ Մուդաղայն վերատին ակնարկել յարձանագրութիւնս. գտին անդ զերկոսին հրովարտակս տուեալ Հայոց և Յուն-

նաց 'ի թուին ١٢٢٨, յորս գրեալ էին Ս. Յովհաննէս Եկեղեցին. իսկ 'ի հրովարտակին տուեալ Յունաց 'ի թուին ١٢٥٧ սակս նորոգութեան Ս. Յարութեան և Բեթղեհէմի, ոչ գտին բառ ինչ վասն եկեղեցւոյն Ս. Յովհաննու, և Յոյնք անդադար յուզէին զայս խնդիր 'ի Թագաւորեալ քաղաքի անդ. ուստի հարկ եղեւ վերստին հարցումն ուղղել առ Բդեշխն Երուսաղէմի Ալի Փաշա, զի բարւոք քննեսցեն զեկեղեցին զայն առաջի այլազգեաց և միաբանաց Հայոց և Յունաց, և ստուգեալ ծանիցեն թէ՝ արդարեւ Հայք ինքեա՞նք նորոգեն զսեփհական տեղիս և զվանօրայս իւրեանց, եւ թէ Յոյնք՝ ընդէ՞ր ձեռնամուխ եղեն 'ի շինութիւնս եւ 'ի նորոգութիւնս վանօրէից՝ առանց Բարձրագոյն հրամանի, վասն որոյ երկարեցաւ վէճն եւ խնդիրն մնաց առկախ. և վերջապէս Յոյնք ոչ եւս թոյլ չինել Հայոց զտանիս եկեղեցւոյն, և մնաց այնպէս որպէս եւ էրն։

Կայսրն ամենայն Ռուսաց Նիկողայոս առաքեաց նշան պատուոյ առ Զաքարիա Պատրիարքն Հայոց Երուսաղէմի, եւ զի չէր նամակ կամ վկայական վասն այնր, ուստի ոչ կամեցաւ ընդունել զայն առանց գրի. և մնաց նշանն ամիս երիս 'ի Պերութ՝ մինչեւ եկն գիր, և ապա ընկալաւ զայն. և ապա գրեաց 'ի Կոստանդինուպոլիս առ Պատրիարքն և առ Գլխաւոր Ամիրայս զորպիսութենէ նշանին. սակայն նոքա դժգոհ իմն էին զայնմանէ, թէ ընդէ՞ր առանց հարցանելոյ մեզ ընկալաւ զայն, որոյ վասն գրէ Զաքարիա՝ առ Փոխանորդն և ասէ՝ «Կայսերական նշանին ես ոչ երբէք հետեւեցայ. միթէ փառք չէ՞ ազգին եւ Աթոռոյն. յե՞րբ Ֆրանսայու Կայսրն հուսաս ընծայեաց Հայոց պատարագին, յինէն աղերսանօք խնդրեցին. և յապուշ կըրթեցան կրօնաւորք Ֆրանկաց և պապադաւանք. այս տընօրէնութիւն յԱստուածուստ է և ոչ 'ի մարդկանէ, էջմիածինցիք յե՞րբ Աթոռ համարէին զերուսաղէմ. այժմ Ներսէս Սրբազանն և Սինոդականք՝ պանծանօք Առաքելական Աթոռ գրեն յամենայն գիրս իւրեանց։ Արդ՝ եթէ յարգելիք ոչ կամէին ընդունիլ մեր զկայսերական պարգեւն, ընդէ՞ր ոչ ծանուցին մեզ՝ յորժամ զհրաժարական գիր մեր թարգմանեալ եւս ուն 'ի Դուռն Արքունի ըստ քոյդ գրութեան. լուութիւն նոցա՝ զարեհամութիւն կամաց նոցա ցոյց մեզ։ Երկրորդ զիա՞րդ կարէի ժամանակ խնդրել հարցանելոյ. ընծայաբերն միթէ համբերէ այլ եւս երեք ամիս։ Տէրութիւնն յե՞րբ եհարց վասն Կայսերական պարգեւին, պարտ էիք՝ բանիւ կամ գրով ասել՝ թէ սովորութիւն է բարեզաշտ Թագաւորաց եւ Իշխանաց աղօթք օրհնութիւն խնդրել, և սմանք ընծայ առաքեն եկեղեցական անօթ՝ Խաչ և այլն։ Գեղեցիկ էր Տաճկական յայտարարութիւն, որ վասն Կայսերական պարգեւին. բայց Տէրութիւնն ոչ բնաւ պատասխանի տայ։ Եւ բոլոր ցիք բաղմացան ասա. դան առ մեզ՝ հարցանեն վասն մեր եկեղեցւոյ դաւանութեան, վասն պաշտամանց՝ և խորհրդոց, մեք կարդաւ իբրեւ դնեմք առաջի նոցա զամենայն պարագայիւք և բացատրութեամբ, խոստովանին թէ՝ յառաջին դարս՝ ամենայն եկեղեցիք Քրիստոնէից այսպէս պաշտէին. բայց հետ զհետէ հեշտասիրութիւն և ագահութիւն եկեղեցականաց՝ նորանոր նորաձեւութիւն եմոյծ յեկեղեցական պաշտամունս, և եղեն պատճառ այսչափ հերձուածողութեան և հակառակութեան, այլ ձեր եկեղեցին՝ խոստովանիմք, անարատ կացեալ է ուղղափառ և առաքելական. վասն այնորիկ սիրելի էք ամենայն ազգաց, և ցանկամք միշտ ընդ ձեզ խօսիլ և հարցանել, և հաւատամք անկեղծ բանից ձերոց»։ (1845)։

Յետ ընդունելոյ Զաքարիա Պատրիարքի զնշանն Կայսէր Ռուսաց, տուաւ նաեւ նշան պատուոյ 'ի Սուլթան Մէճիտ Արքայէ Օսմանցւոց, զոր առաքեաց Մատթէոս Պատրիարք յԵրուսաղէմ 'ի ձեռն Վրթանէս վարդապետի աշակերտին իւրոյ։

Տուն մի 'ի կալուածոց վանաց Յոպպէի յափշտակեալ յայլազգեաց, արարեալ էին զայն տեղի կառավարութեան. միաբանք Հայոց բազում աշխատ եղեն վասն ազատութեան նորին, այլ չեղեւ հնար. զի այլազգիք Յոպպէի ասէին, ուստն է 'ի կալուածոց Հայոց, բայց Տէրութիւնն վճարէ զտարեկան վարձն, եւ բաց յայսմանէ ոչ գոյ այլ տեղի. և Բդեշխքն երկարէին զխնդիրն, այլ յետոյ աղատեցաւ ձեռնտուութեամբ և ջանիւք Ճանիկ Ամիրայի՝ յորժամ եկն յուխտ յԵրուսաղէմ եւ դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս։

Փոխանորդ Յովհաննէս Եպիսկոպոս խնդրէր Իլամ նանեւ վասն ազատութեան Քարանդինայի, այլ յայնժամ չյաջողեցաւ այս, և յետոյ եւս մեծամեծ ջանից և ծախուց հանդիպեցան։

Զաքարիա Պատրիարք հաստատեաց դպրոց ժառանգաւորաց յԵրուսաղէմ, եւ ապա փոխադրեաց զայն յաւանն Ռէմղէ, յոր ուսանէին աշակերտք իրրեւ 30 դասատուութեամբ Մուրատ վարժապետի, այլ այս ուսումնարան չեղեւ տեւական։

Տեսեալ Զաքարիա Եպիսկոպոսի զանյաջողութիւն եւ զձախող եղս ձեռն արկեալ գործոց՝ տրտմէր եւ տխրէր յոյժ. զի չեղեւ հնար կարգաւորել յաւուրս իւր զխնդիրս Ս. Տեղեաց, մանաւանդ եկեղեցւոյն Բեթղեհէմի, և սենեկաց Ս. Յարութեան, որք և մնացին այնպէս մինչեւ ցաւուրս մեր. անկաւ 'ի մահիճս ջրգողութեան ախտիւ, եւ չերկարեալ 'ի նմին, հանգեաւ խաղաղութեամբ (յ7 Մայիսի. 1846) վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ ամս 5 և ամիսս 6, և թաղեցաւ 'ի վանս Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց։

Գ Լ Ո Ւ Խ Ն Թ.

Ընտրութիւն Կիրակոս Եպիսկոպոսի։ Նորոգութիւն Խաչիալաց։ Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ։ Լոյս 'ի Ս. Յակոբ։ Քառասնից Այրն։ Շինութիւն Պաղչայ Թաղին։ Մահ Կիրակոսի։ Ընտրութիւն Յովհաննու Պատրիարքի։

ԲՕԹԱՌԻԹ լուր մահուան Զաքարիա Պատրիարքի փութով եհաս յականջս Մատթէոս Պատրիարքի և գլխաւորաց ազգին 'ի Կոստանդինուպօլիս, զորմէ գրեալ էին ըստ սովորութեան Պօղոս Եպիսկոպոս և Խորհրդական Հարք։ Իսկ Մատթէոս Պատրիարք ժողովեաց զգլխաւորս ազգին 'ի Պատրիարքարան 'ի 27 Յունիսի, և յետ երկար խորհելոյ գրեցին թուղթ բազմակնիք առ Պօղոս Եպիսկոպոս, ուր զկնի մխիթարական բանից ասեն. «Արժան դատեցաւ

հաճութեամբ լրութեան ազգիս, զի յօժարեսցի գալ 'ի մայրաքաղաքս Տ. Կիրակոս Ս. Արք Եպիսկոպոսն, ընդ իւր ունելով զմի կամ զերկու խոհական վարդապետս, սակս ընտրութեան Պատրիարքի Ս. Երուսաղէմի՝ խորհրդակցութեամբ միմեանց, բերելով ընդ իւր թէ զանձնական տուսմար ելից և մտից Զաքարիա Պատրիարքի եւ թէ Ս. Աթոռոյդ, տեսանել զհաշիւն, որպէս գրեալ եմք ինքեան։ Եւ մինչ 'ի վերադարձ Կիրակոսի, Խորհրդական Հարք կառավարեսցեն և հոգասցին զպէտս միաբանաց և ուխտաւորաց՝ սիրով չահելով զամենեսեան ըստ իւրաքանչիւրոց արժանաւորութեան, սակայն որպէս և գրեալ եմք նոցին համակամ միաբանութեան. զի զամենայն գիտութեամբ և բարձու հրամանաւ ձեր ունին կատարել զկարեւոր իրողութիւնսն, եւ առանց ինչ ձեր ակնարկութեան մի ինչ արասցեն, որով յուսամք սիրով և խաղաղութեամբ մնալ ամենեցուն՝ մինչեւ 'ի հանդիսանալ մեզ հովուի յաջողութեամբ Տեառն»։

Յայս գիր ձեռնարկեալ կնքեցին ամենեքեան որք էին 'ի Ժողովին.

Մատթէոս Արքեպիսկոպոս	Մանտեսի Ճանիկ
Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։	Մանտեսի Սիմոնեան։
Յարութիւն	Միքայել
Մանտեսի Յարութիւնեան։	Փիշմիշեան։
Վարդապետ Յովհաննէս	Վարդապետ Պօղոս
Տատեան։	Տատեան։
Ճարտարապետ Կարապետ	Ճարտարապետ Յովհաննէս
Գրիգորեան։	Յարութիւնեան։
Պետրոս	Միսաք
Քիւրքճի խանեան։	Միսաքեան։
Մազսուտ	Մանտեսի Յարութիւն
Սարիմեան։	Կելկելեան։
Գէորգ	Պօղոս
Երամեան։	Աշնանեան։
Յակոբճան	Պետրոս
Միսաքեան։	Խորասանճեան։
Արզուման	Գէորգ
Արզումանեան։	Յովհաննէս
	Նազրճեան։
	Պարտիզպանեան։

Թէպէտեւ հրաւիրեցին աղգայինք զԿիրակոս Եպիսկոպոս գալ 'ի Կոստանդինուպոլիս, այլ նա ոչ կամեցաւ երթալ 'ի կոչ նոցա այլ և այլ պատճառանօք, եւ զկնի աւուրց ինչ ընտրեցաւ Պատրիարք Աթոռոյն Երուսաղէմի 'ի նոյն իսկ 'ի գլխաւորաց աղգին՝ ակնարկութեամբ Պօղոսի եւ հաճութեամբ Խորհրդականաց։ Եւ 'ի սոյն միջոցի աղգային տուրքն յանուն Ճեմարանի բարձրացաւ 120,000 դահեկանի։

Կիրակոս Եպիսկոպոս որդի Մնացականի Երուսաղէմացի, աշակերտ հոգելոյս Միքայէլ Եպիսկոպոսի Առաջնորդի Ադրիանուպոլսոյ, ուր էր և եղբայր իւր Գէորգ վարդապետ (1811)։ Ձեռնադրեալ է Կիրակոս յամին 1807, և յամին 1811 եղանէ յԱդրիանուպոլսոյ յաջորդել Մեսրովբ Եպիսկոպոսի և գայ յԵրուսաղէմ։

Իսկ Միքայէլ Եպիսկոպոս էր աշակերտ Յակոբ Պատրիարքի Կոստանդինուպոլսոյ, որ հանդեաւ 1810։ Իսկ Ամիրայք յետ ընտրութեան Կիրակոս Եպիսկոպոսի, առին 'ի Դրանէ զՊատրիարքական Պերաթն եւ առաքեցին զայն յԵրուսաղէմ 'ի ձեռն Յովհաննէս վարդապետի Զէյթինեան, և Կիրակոս նստաւ յԱթոռ Պատրիարքութեան յաւուր տօնի Քառասնօրեայ դալստեան Տեառն 'ի Տաճարն, ('ի 14 Փետրվարի։ 1847)։

Կիրակոս Պատրիարք խնամ կալաւ գլխաւորել զչինութիւն Պաղչա Թաղին, զոր հիմնարկեալ էր նախորդն իւր Զաքարիա Պատրիարք, 'ի պէտս բնակութեան ուխտաւորաց։ Սա ետ ոսկիզծել մաքուր ոսկով զբովանդակ խաչկալս խորանաց և ամպիոնաց Ս. Յակոբայ, Հրեշտակապետի, և Ս. Ծննդեան, որք մնացեալ էին յաւուրց անտի բարեյիշատակ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքի։ Եւ 'ի սոյն միջոցի դարձեալ գայր 'ի նուիրակութենէ աշխարհին Հընդկաց լի արդեամբք Գաղատացի Սահակ վարդապետ, զոր առաքեալէր Զաքարիա Պատրիարք, ընդ սարկաւագ Սարգսի ('ի 12 Մայիսի։ 1842)։ Եւ նորա հասեալ 'ի Ճիտէ քաղաք ծովեզերեայ՝ յանկարծ դիպուածով վախճանի անդ, 1847։ 'ի 10 Մայիսի, և թաղի յօտար երկիր, զորոյ ոսկերս յետ ժամանակաց բերին յԵրուսաղէմ և ամփոփեցին 'ի դերեզմանս հասարակաց։ յ30 Օգոստոս, 1856։ Լուեալ Կիրակոսի զայս լուր աղետալի, առաքեաց զմանս 'ի միաբանաց և ետ ածել զրեռինս նորա յԵրուսաղէմ։ Յաւուրս Կիրակոսի նորոգեցաւ եւ ծեփեցաւ եկեղեցին Յովհաննու Աւետարանչի՝ 'ի դաւիթ Տաճարին Ս. Յարութեան, զորոյ պատկերազարդ մարմարիոն քարինս արար յիշատակ Պուլանլոյսի Թադէոս վարդապետ։ Սովորութիւն է միաբանութեան Ս. Աթոռոյն Երուսաղէմի, յետ կատարելոյ զտօն Ս. Պասեքին 'ի Տաճարին Ս. Յարութեան, յաւուրն երկրորդի առնել հանդէս նաեւ 'ի Տաճարի Ս. Յակոբայ, օրհնել զտէրունական ուխտաւորս, եւ մաղթել նոցա բարի ճանապարհ, և 'ի նմին աւուրն Պատարագիչն լինի նոյն իսկ Գահակալ Ս. Աթոռոյն, և զկնի Պատարագին Թափօր մեծահանդէս 'ի միխիթարութիւն ժողովրդոց։ Եւ 'ի սին ամի յետ կատարելոյ Կիրակոս Պատրիարքի զվերկարար խորհուրդն և զհանդէս Թափօրին և մեկնելոյ ժողովրդոց յիւրաքանչիւր տեղիս, և ահա յերիր ժամու աւուրն ճառագայթեցաւ Լոյս պայծառ 'ի մատրանէ Ս. Գլխագրի Ս. Յակոբայ և անտի տարածեցաւ 'ի բովանդակ եկեղեցին, եւ սկսան լուցանիլ չիջեալ կանթեղքն։ Լուեալ զայս բազմութեան ուխտաւորաց դիմեցին յեկեղեցին, և բազումք եւս դարձան յետս 'ի ճանապարհէ։ Եկին նաեւ յայլազգեաց և յօտարաց և խառնեցաւ բազմութիւն մեծ, և աքանչանային 'ի տեսիլ ահաւոր նշանին, և Կիրակոս Պատրիարք ընդոր և միաբանք Աթոռոյն երկուցեալ 'ի բազմութենէ ետուն փակել զդրունս եկեղեցւոյն, զի մի դուցէ վնաս ինչ պատահեսցի, սակայն լուցան նաեւ լապտերքն որք էին 'ի դաւթի անդ, և այսպէս տեւեալ աքանչելիքն ժամս երբ երեք, և հանդիսականք փառս տուեալ Աստուծոյ դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց, ('ի 12 Ապրիլի։ 1848)։ Կիրակոս Պատրիարք յատուկ կոնդակաւ հրատարակեաց զհրաշալի պատահումն 'ի հայաբնակ գաւառս և 'ի քաղաքս։

Յաւուրս սորա Լատինք քակեցին զորմն Քառասնից Այրին 'ի Բեթղեհէմ, զոր ինքեանք կոչեն Կ-ՐԻՆ Այր, և կամէին վերայնակ շինել զայն եւ սեփականել ինքեանց։ Իսկ Պատրիարքունք Հայոց եւ Յունաց բոլոր բարձին 'ի Դուռն և առ Կուսակալն Ասորեաց, թէ՝ Այրն է ուխտատեղի երից աղգաց, և ուխտաւորք նոցին ոչ պակասին

անտի, և թէ՝ չէ օրէն սեփհականել զայն Լատինաց. զարդարեցաւ շինութիւնն, և յետ աւուրց եկն հրաման՝ եւ եղեւ քննութիւն օրինօք Շէրիի, եւ ըստ հրամանի մեծի Եպարքոսին ընկերութեամբ շինեցաւ՝ ըստ առաջին գրից ոչ աւելի և ոչ նուազ, դնելով մէն մի վերակացու յերից վանաց, և զծախս շինութեան հաւասար բաժանեցաւ, և յետ այնր պատուէր եղեւ 'ի Դատաւորէն մնալ Այրին 'ի վիճակն առաջին. չլինել ումեք սեփհական, այլ ընկերութեամբ երից ազգաց, եւ դուռ նորին մնալ բաց առանց փականաց. ՌՅԶՕ (1849). Բայց յանցանել ժամանակի եւ տարուց Լատինք տիրեցին բովանդակ Այրին շինութեամբ եւ նորոգութեամբ, ամրացուցին դրամբք և բանալեօք, և զարդարեցին եկեղեցական սպասուք։

Կիրակոս Պատրիարք՝ այր մեծահանճար, փառահեղ, պատկառելի և համեղ 'ի բանս և 'ի գրիչս, որոյ հանճարն փայլի 'ի բովանդակ նամականիս և յայլ գրուածս նորին. թէպէտ և հասեալ 'ի բարձր ծերութիւն, այլ ոչ այնչափ յաղթահարեալ յալեւոյթ հասակէն, որքան բնաւորեալ 'ի նմա չարատանջ յախտէ, զոր կրէր 'ի ստամոքսի իւրում, կարծեցեալ ախտ թանչից, որ բազմիցս նեղէր և տագնապէր զնա, եւ 'ի վերջին նուազի առաւել ընկճեալ նուաճեցաւ 'ի բռնութենէ նորին և աւանդեաց յանկարծ զհոգին իւր առ Աստուած, ('ի 25 Մայիսի. 1850) 'ի հասակի 68 ամաց, վարեալ զիշխանութիւն Պատրիարքութեան ամս 3 և ամիս իբր 4. և միաբանութիւնն շքեղութեամբ կատարեալ զոխտուր հանդէս յուղարկաւորութեան, տնփռեցին զմարմին նորա 'ի գաւիթ եկեղեցւոյն Ս. Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց, յորոյ վերայ կանգնեցաւ յետոյ շերիմ փառաւոր։

Սա յետ ժամանելոյ 'ի Ս. Աթոռն յաւուրս Թէոդորոս Պատրիարքի, վաստակաւոր եղեւ արիութեամբ եւ խոհեմութեամբ 'ի զանազան պաշտօնս յօգուտ ազգին, որպէս յիշեցաք 'ի տեղիս տեղիս 'ի կարգի պատմութեանս, և 'ի վերջոյ վարեաց զՏեսչութիւն Ճեմարանին Իւսկիւտարու։ և անտի եկեալ յերուսաղէմ զպաշտօն Փոխանորդութեան Զաքարիա Պատրիարքի, որ և եկաց յաջորդ նորին, և 'ի կենդանութեան իւրում եւ նորոգեալ զվանս Ս. Փրկչի՝

ընդարձակեալ 'ի նմա սենեակս և զխուցս 'ի բնակութիւն միաբանաց։

Յետ վախճանի Կիրակոս Պատրիարքի, Խորհրդական հարք եւ միաբանք Ս. Աթոռոյն գրեալ ծանուցին 'ի Կոստանդինուպօլիս առ Պատրիարքն եւ առ իշխանաւորս ազգին զվախճան Կիրակոսի և զընտրութիւն Յովհաննու Եպիսկոպոսի Մովսիսեան Զմիւռնացւոյ, որ Փոխանորդ էր 'ի մայրաքաղաքի անդ։ Եւ 'ի ժողովի հաւանեալ ազգայնոց ընդ ընտրութիւն նորին՝ ծանուցին 'ի Դուռն և առին զՊերաթն Պատրիարքական ('ի 4 Յուլիսի. 1850). և նորա կարգաւորեալ զգործս իւր անդ՝ մեկնեցաւ գնալ յերուսաղէմ ուղղկցութեամբ հրաւիրակ վարդապետաց, զորս յղեալ էին Աթոռայինք, եւ հասեալ նորա յերուսաղէմ, նստաւ հանդիսիւ յԱթոռ Պատրիարքութեան յաւուր տօնի Սրբոց Հրեշտակապետաց, ('ի 11 Նոյեմբեր ամսոյ), և ընկալաւ զիշխանութիւն Պատրիարքութեան իւրոյ։

ԳԼՈՒԽ Կ.

Գործք Յովհաննու. Վախճան Փոխոր Եպիսկոպոսի։ Խնդիր Ս. Տեղեաց։ Ապիտ Պէյ։ Ժողով 'ի Ս. Յարութիւն և յապարանս Բգեշխին։ Հրավարակ Արքայի 'ի Ձեռս Յունաց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Պատրիարք յառաջին ամի գահակալութեան իւրոյ ետ հիմն արկանել ընդարձակ եւ հոյակապ Պատրիարքարանի 'ի Թաղն Ս. Մինասայ, ձգեալ կամարս 'ի վերայ ճանապարհի և երկայնեալ 'ի պարտէզն դէպ յարեւմուտս. 'ի բարձրանալ հիմանց նորին, դժպատեհ իմն երեւեցաւ գործն յաչս Գլխաւորաց այլազգեաց, և կամեցեալ խափանել զայն՝ պատճառս յօդէին, թէ չէ օրէն առն այլազգւոյ անցանել 'ի ներքոյ կամարաց՝ յորոց վերայ բնակին քրիստոնեայք, թէպէտեւ առաջի արար նոցա զհրաման Արքային վասն այնր՝ այլ չեղեւ լսելի. հարկ եղեւ 'ի ձեռն միջնորդաց չահել զնոսա, եւ յամախել ընծայից, զիջան 'ի խաւութենէ 'ի պատիւ երեսաց Պատ-

րիարքին , եւ եռուն հրաման կանգնել զայն չինուած հոյակապ յոր ձեռնարկեալն էր։ Եւ ապա վերստին սկիզբն արարին գործոյն , յոր աշխատ եղեն գործաւորք իբր ամս երիս , և 'ի կատար հանեալ աւարտեցին զրոմանդակ չինուածն , ընդարձակ և գմբեթարդ դահլճիւ սենեկօք զարդարեալ կարեւոր պիտոյիւք , (1853 · Ապրիլ վերջ)։

Յետ որոյ ձեռն արկ չինել զիջեւանս 'ի պէտս ուխտաւորաց , որ կոչի Զ-մէջ Ռաշ, զհիմնարկեալն 'ի Կիրակոս Պատրիարքէ , զորոյ հրամանն առեալ էին յանուն Հիւանդանոցի · զայն եւս կատարեաց կրկնայարկ մաքուր և կոփածոյ քարամբք , բաժանեալ 'ի սենեակս 1855։

Պօղոս Սրբ Եպիսկոպոս Գրիգորեան Ադրիանուպօլսեցի , զորմէ 'ի բազում տեղիս բանք եղեն յընթացս պատմութեան , աշակերտ Պետրոս Պատրիարքի Եւդոկիացւոյ , յետ վախճանի նորին յաղագս պարտուց Ս · Աթոռոյն դնացին չորս վարդապետք՝ յորոց մին էր և Պօղոս 'ի Կոստանդինուպօլիս և յայլ քաղաքս դտանել օգնութիւն։ Սա դառնայ յԱթոռն (1805), վերստին երթայ 'ի Բիւզանդիոն , և անտի Նուիրակ 'ի վիճակն Զմիւռնիոյ · հասեալ 'ի Մխալմ , հրաւիրի լինել Փոխանորդ 'ի Կոստանդինուպօլիս , 'ի տեղի Յակոբ Եպիսկոպոսի վախճանելոյ , (1809)։

Ընտրի Պատրիարք անդ (1815 · Դեկտեմբերի) · հրաժարի յիշխանութենէ (1823 · Հոկտեմբերի)։

Կարգի Ծայրագոյն կառավարիչ Երուսաղէմի Աթոռոյն (1828 · Նոյեմբերի) · ազատէ 'ի պարտուց զՍ · Աթոռն՝ հանդիսացեալ իմաստուն տնտես, խոհեմ և հանճարեղ կառավարիչ · 'ի ժամանակս Պատրիարքութեան Զաքարիայի Կայսին աչքն 'ի տեսանելոյ , բայց դարձեալ ամենայն ինչ ակնարկութեամբ նորին տնօրինէր , և յետ վախճանի Զաքարիայի խոպառ նուաղեալ 'ի զորութենէ և ընկճեալ 'ի բազմամեայ ծերութենէ հասակին, անկաւ 'ի մահիճս խոթ , ուր համբերութեամբ եկաց ամս իբրև 7, պարապեալ յաղօթս և 'ի փառաբանութիւնս Աստուծոյ ընդ Պաշտօնէից և Սարկաւագաց իւրոց , չհեղգացեալ և ոչ միւսմ 'ի սահմանեալ աղօթից , մինչեւ 'ի կէտ կոչման իւրոյ · ջերմեռանդ 'ի կրօնս , պարկեշտ 'ի վարս , ժիր և վառ աշխոյժ նորին յուսմունս և 'ի գիտութիւնս , վարժ և հմուտ 'ի քաղաքական և 'ի տնտեսական

յանձանձանս · Եւ այսպիսի քաղաքավարութեամբ հասեալ 'ի խոր ծերութիւն հանգեաւ խաղաղութեամբ 'ի Քրիստոս 'ի 4 Մայիսի , (1853) 'ի հասակի 90 ամաց · զորոյ ըստ մարմնոյն բարձեալ թաղեցին 'ի դաւիթ եկեղեցւոյ Սուրբ Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց · Թողեալ յիշատակ եկեղեցւոյ զերիս հատոր գիրս կոչեցեալ Զանազանութիւն հինգ դարուց , համառօտ Պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց հանդերձ բարոյական յորդորանօք գրեալ 'ի բարբառ Տաճկաց , Եւ զգիրս Թանգարան խրատու յոճ հայկական ոսկեղ բանիւ , համառօտեաց նաեւ զայլ գիրս և զմեկնութիւնս Ս · Գրոց՝ ձեռագիր · բազում են գործք սորին , այլ գոլով արտաքոյ նպատակի մերոյ՝ թողաք 'ի բաց։

Յերկրորդ ամի իշխանութեան Յովհաննու Պատրիարքի զարթեաւ խնդիրն Ս · Տեղեաց , և վէճ Լատինաց ընդ Յունաց։ Քանզի Յովսէփ Վալերիայ Լատին Պատրիարքն Երուսաղէմի օժանդակ գտեալ զՏէրութիւնն Գաղղիոյ՝ խնդրէր 'ի Դրանէ Օսմանեան Պետութեան կորզել զսմանս 'ի Ս · Տեղեաց 'ի ձեռաց Յունաց՝ և տալ Լատինաց , և պահանջք նոցին էին այսոքիկ · մեծ եկեղեցին Բեթղեհէմի դրամբք և բանալեօք , և մասն ինչ պարտիզօք յետուստ կողմանէ · եկեղեցին Ս · Աստուածածնի 'ի ձորն Գեթսէմանի՝ ուր է գերեզման նորին · տեղի Համբարձման Տեառն 'ի լեառն Ձիթենեաց · Պատանատեղին · մեծ և փոքր գըմբեթքն 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի , և զեօթն կամարս Ս · Կուսին 'ի Ս · Յարութիւն , այլովքն հանդերձ։ Իսկ Քիրիլոս Պատրիարքն Յունաց առեալ 'ի Թիկունս ըզկայսրն Ռուսաց զՆիկողայոս՝ ընդդէմ եկաց յամենայնի խնդրոց Լատինաց։

Եւ այս երկու հակակիր մարմինք յարուցեալ ընդդէմ միմեանց՝ չեղեւ հնար լինել իրաւախոհ 'ի միջի իւրեանց · Եւ 'ի բազմանալ բանից և վիճմանց՝ Օգոստափառ Կայսրն Օսմանեան Սուլթան Մէճիտ Արքայ , կամեցեալ խաղաղել զնոսա և բառնալ զվէճն 'ի միջոյ , առաքեաց հրովարտակաւ զոմն յերեւելեաց Արքունի Դրան Աֆիֆ Պէյ յերուսաղէմ , կարգաւորել անդ զխնդիրն։ Եւ եղեւ 'ի հասանիլ Նորա 'ի քաղաքն Սուրբ , կազմեցաւ ժողով մեծ 'ի Ս · Յարութիւն 'ի դահլճի Գերեզմանի Տեառն , ուր էին Պատուի-

բակ Արքային, Բդեշխն, երեւելի այլազգիք քաղաքին, Բիրիլլոս Պատրիարքն Յունաց իւր պարագայիւք, Յովհաննէս Պատրիարքն Հայոց Եպիսկոպոսօք և Վարդապետօք, եւ Յովսէփ Վալերկայ Լատին Պատրիարքն Հիւպատոսիւ Գաղղիոյ · ուր զկնի քաղաքական պատուոյ և յարգանաց՝ սկիզբն արարին խօսիլ 'ի վերայ ծանուցեալ խնդրոյ։ Յոյնք ոչ երբէք կամեցան զիջանիլ 'ի պահանջս Լատինաց · զի և հրովարտակ Արքային զնոյն հրամայէր, պատուիրելով չխախտել զիրս ինչ 'ի տեղւոջէ իւրմէ՝ և խանգարել զառաջին կարգն։ Այսպէս յետ ընդ երկար վիճելոյ, Աֆիֆ Պէյ գործադրեաց զհրաման Արքային թէ 'ի Ս· Յարութիւն և թէ 'ի Ս· Աստուածածին · մի միայն ետ բերեալ 'ի տեղի Ծննդեան Քրիստոսի աստղանիշ ճաճանչն, զոր առաքեալ էր Սուլթան Մէհմետ Արքայն, և ետ նոցա զմի բանալի արտաքին դրան եկեղեցւոյն Բեթղեհէմի, բայց զիրաւունս բանալոյ եւ փակելոյ 'ի սահմանեալ ժամանակին եթող վերատին 'ի ձեռս Յունաց, և յեկեղեցին որ և իցէ հոգեւոր պաշտօն կատարելոյ զիրաւունս ոչ ետ Լատինաց։ Մնաց միայն որոշումն կարգին, թէ ո՞յք 'ի Ս· Աստուածածին առաջին լիցին, ո՞յք միջին, և ո՞յք յետին 'ի պատարագել, որոյ վասն յետ երկուց աւուրց Աֆիֆ Պէյն, Դատաւորն և ամենայն անդամք քաղաքական ժողովոյն հանդերձ Պատրիարգօք երից ազգաց և Հիւպատոսիւ Գաղղիոյ իջին յապարանս Բդեշխին, ուր կազմեցաւ ժողով · անդ զկնի այլ և այլ բանից շուրջ զխնդրովք՝ առաջարկեաց Աֆիֆ Պէյն թէ՝ Բարձրագոյն հրովարտակի որոշումն ոչ այլ ինչ վախճան ունի, եթէ ոչ առաջին կարգն անխախտ մնալով՝ միայն Լատինք հանդերձ սպասուք պատարագի իւրեանց զկնի միւս ազգաց մոցեն յեկեղեցին մատուցանել զԱստուածածին պաշտօնն, և 'ի լրանալն՝ առեալ կրկին զամենայն կահս իւրեանց ելցեն արտաքս։ Լատինք ոչ երբէք յանձն առնուլ կամեցան մնալ յետին, եւս և խնդրեցին հաւասար Հայոց եւ Յունաց ունել բանալի մի դրան տաճարին, որ վասն բազում ինչ խօսեցան Լատինք 'ի ժողովի անդ · և յետ երկար բանից՝ պատասխանի ընկալան թէ՝ «Պահանջք ձեր չիք յորոշման անդ»։ Յայնժամ կըրկնեաց Լատին Պատրիարքն և ասէ՝ «Եթէ Հայք եւ Յոյնք

յօժարին ունել և մեզ բանալի առանձին, մեծաղոր Տէրութիւնն ոչ ինչ դժուարի»· առ որ պատասխանի արար Բդեշխն թէ՝ «Այդ խնդիր 'ի միջի ձերում է կարգադրելի· մեք ոչ կարեմք հրամայել թէ տուք»։ Լատինք խնդրեցին զի Բդեշխն հարկադրեսցէ զՀայս առնել պատասխանի Նոցին խնդրանաց, և Նոցա հարկ եղեւ ըստ հրամանի Փաշային ասել զայս օրինակ· «Սակս վիճելոյ մեզ 'ի Բարձրագոյն հրամանի ոչ տեսաք լոյս ինչ, բայց միայն հարցմանս այսմիկ պաշտօնեայ Էֆիէնտին է պատասխանատու, զոր ինչ որոշում ունի 'ի հրովարտակին՝ եթէ զայն գործադրեսցէ՝ մեք հնազանդիմք»։ Եւ Փաշայն իբրու չկամելով զանց առնել զխնդրանօք Նոցին՝ «Ասաց Հայոց և Յունաց, եթէ հնարաւոր ինչ իցէ իրաւախոհ լինիլ 'ի միջի ձերում, այն ձեզ է գիտելի, խօսեցարուք 'ի միջի ձերում»։

Յայս բան Լատին Պատրիարքն խնդրեաց 'ի Փաշայէն հրաման տալ Հայոց խօսիլ ընդ Նոսա, և Նոքա ետուն պատասխանի օրինակ զայս· «Զմեզ Տէրութիւնն և ազգն ոչ երբէք կացուցեալ են գործադրիչ որոշման բարերար Արքային մերոյ, որպէս Նորոդ վէճս յարուցանեմք 'ի վերայ Կայսերական հրամանաւ որոշեալ խնդրոյ՝ Տէր կեանս պարգեւեսցէ· խնդիրս այս յատուկ պաշտօնեայ ունի՝ տուեալ որոշման գործադրութեան, և 'ի մասին յայսմիկ ըստ որոշման, գործադրութեանն՝ բաց 'ի հնազանդութենէ ոչ այլ ինչ ունիմք ասել։ Զայս պատասխանի առեալ Լատինաց՝ յետս ընկրկեալ ասեն· անվայել է մեզ յետին լինել երկուց հպատակ ազգաց, և առանց բանալի ունելոյ, իբրեւ հետեւակ մտանել յեկեղեցին։ Ահա յայս վերջացեալ բանիցն իւրաքանչիւր ազգք դարձան 'ի վանս իւրեանց։ Իսկ յետոյ 'ի լրոյ տեղեկանայ Յովհաննէս Պատրիարք՝ եթէ Լատին Պատրիարքն բոլորքէ առ 'ի չընդունիլ, և նա խնդրամատոյց լինի Փաշային և Աֆիֆ Պէյին գրել 'ի Կոստանդինուպոլիս երկուստէք տեղեկութիւնս մինչեւ վերատին եկեսցէ գիր · իսկ Աֆիֆ Պէյն զայս պատասխանի տուեալ է Նոցա · թէ գուք ինքնին գրեցէք, 'ի ձեր կամն է ապաստան, ես ոչ գրեմ զոր խընդրէքդ · զի հրաման հրովարտակին կրկին վիճաբանութեան

կարօտութիւն չունի։ Այլ Լատինք գրեցին առ Դեսպանն Գաղղիոյ տհաճութեամբ յետս պահանջել իւրեանց մոռանելոյ 'ի Ս. Աստուածածին առանց յատուկ բանալւոյ. 'ի հարկ է և Աֆիֆ Պէյն հարկադրեցաւ գրել։ Եւ երից ազգաց Պատրիարքաց լուր ետ Փաշայն զվերոսին գրելն. զի նախ կամէր կրկին անգամ ժողով կազմել և 'ի չհնազանդիլ Լատինաց, գրեցաւ 'ի կողմանէ Փաշային և Աֆիֆ Պէյին 'ի Դուռն Արքունի։

Մինչեւ ցայս վայր առանց գործադրութեան մնայ գործն, եթէ չերկարեսցին վէճքն, մինչեւ ըստ կամաց Լատինաց և Յունաց կատարեսցին խնդիրք թէ 'ի Ս. Յարութիւն, թէ 'ի Ս. Աստուածածին, թէ 'ի Ս. Ծնունդ, և թէ 'ի Ս. Համբարձումն, եթէ ոչ կրկնեսցի հրաման Արքունի, եւ կամ 'ի Գաղղիոյ Դեսպանատան չասատեսցին Լատինք, որք մինչեւ անգամ առաջարկեցին 'ի Ժողովի անդ, զի իւրաքանչիւր ազգ 'ի մէն մի աւուր պատարագեսցեն կարգաւ։ Եթէ Լատինն յետս կասեսցի խնդրելոյ բանալի, թէպէտ Յոյնն ոչ բանալի կամի տալ և ոչ զառաջնութիւն, և ոչ իսկ 'ի կարգի մտանել 'ի մէն մի աւուր կարգաւ պատարագելոյ։

Ի Դուռն Փաշային նոր հրաման մի ընթերցաւ, որով հրաման տայր Լատինաց չինել տեղի մի առ ընթեր եկեղեցւոյ Ս. Աստուածածնի առ 'ի պահել անդ զկահս և ըզկարասիս սպասու իւրեանց, Յոյն Պատրիարքն չունէր ըզնմանէ ծանօթութիւն, և յայնմ աւուր լուեալ հոգոյ եհան։ Զայս ամենայն Յովհաննէս Պատրիարք գրէ 'ի Կոստանդինուպօլիս առ Գլխաւորս ազգին, և 'ի վերջոյ յաւելու. ահա մինչեւ ցսատ եթէ յայտնի ատենիւ տեղեկացեալն մեր և եթէ 'ի լրոյ լուեալն ծանուցաք 'ի տեղեկութիւն, և մնամք սպասեալ վերոսին հրամանաց և ազդարարութեանց 'ի կողմանէ Բ. Դրան։ Բայց եւ այնպէս ոչ տեղւոյս կեղեքիչք դադարին յերթեւեկելոյ առ ամենայն ազգս Քրիստոնեայս, և ոչ Յոյնն և Լատինն հանդարտկան 'ի ձեռս բերելոյ զխնդրելիս իւրեանց, քանզի Յոյնն արտաքոյ հրամանի Տէրութեան կամի կանգնել յատուկ սեղան մի 'ի մէջ Գմբեթի 'ի վերայ ոտնատեղւոյն Քրիստոսի 'ի Համբարձման Լերին։ Ասա պատուիրէ Փոխանորդին

զայս ծանօթութիւն հաղորդել Պատրիարքին եւ ազգային գերագոյն ժողովոյն 'ի տեղեկութիւն, ('ի 15 Հոկտեմբերի. 1852)։

Այսու եղանակաւ կարգաւորեալ Աֆիֆ Պէյին դարձարար 'ի Կոստանդինուպօլիս, և տուաւ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) Յունաց, զորոյ թարգմանութիւնն զօդեմք առատանօր։

Միացեալ նահանգաց Երուսաղէմի Հաֆիզ Ահմէտ Փաշայի, Դատաւորին, Դենպետին, և այլոց անդամոց ժողովոյն հրաման։

Յաղագս լուծելոյ և կարգաւորելոյ զվէճս և զհակառակութիւնս Յունաց և Լատինաց, 'ի պատճառս Ս. Տեղեաց ոմանց, որք գտանին 'ի Քաղաքին Երուսաղէմի և արտաքոյ նորին ՌՅՂՈ յամին եւ 'ի վերջ ՃԷՄԷԼ ԷՎԷԼ ամսոյ թուականաւ գրեալ եւ Կայսերական ձեռագրով վաւերեալ առ քեզ և առ այլս ուղղեալ հրովարտակիս ոմանք 'ի յօդուածոց նորին տակաւին անգործադրելի մնալն այս անգամ Տէրութեանս յայտ արարին, որովհետեւ Կայսերական մեծութիւնս նոյն հանգամանաց գործադրութիւնն պահանջէ, քննեալ 'ի ժողովի Նախարարաց, 'ի բացայայտութիւն և 'ի հաստատութիւն և կատարեալ որոշումն նոյն հրովարտակին, 'ի վեց յօդուածէ բաղկացեալ և յօրինեալ 'ի վերայ թղթի միոյ։ Թէպէտ և տուաւ Լատինաց Բեթղեհէմի եկեղեցւոյ մեծի դրան մի բանալի, բայց նոցա ըստ առաջին սովորութեան իւրեանց 'ի միջոյ եկեղեցւոյն անց ուդարձի իրաւունքն ոչ է տուեալ, եւ 'ի մէջ եկեղեցւոյն օրինաց կատարում, եւ 'ի ժառանգութեան ընդ Յունաց ընկերովի իրաւունքն ոչ է տուեալ, եւ ընդ սմին սակս չխանգարելոյ զարդի վիճակ եկեղեցւոյն այնորիկ, և 'ի մէջ նորին Լատին ազգին օրինաց կատարում, վերջապէս 'ի միջոյ եկեղեցւոյն Յայրն երթեւեկելոյ մասին, և յայլ կողմանէ, և ոչ միոյ կողման 'ի նորոյ զիրս ինչ հնարելով, 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր գործադրեալ սովորութիւնն փոխելոյ հրաման ոչ է տուեալ։ Որովհետեւ գռնապան եկեղեցւոյն այնորիկ 'ի վաղուց անտի հպատակ Տէրութեանս Յոյն քահանայ գոլով, այլ սոյն գռնապանն չունի երբէք իշխանութիւն արգելուլ զայնոսիկ ազգս որք 'ի սկզբ-

բանէ անտի անց ուղարձի իրաւունս ունին, այսուհետեւ
եւս ըստ առաջնոյն պարտ է գործադրել։ Յեկեղեցին Բեթ-
ղեհէմի 'ի մէջ Այրին 1847 յամին կորուսեալ աստղին յար և
նմանն 'ի Կայսերական մեծութենէս իբրև հրամարակական
յիշատակ Քրիստոնէից, և իսպառ բառնալոյ զխռովութիւնն,
նոր 'ի նորոյ բեւեռեալ աստղին։ Ի Քրիստոնեայ ազգաց
և ոչ միոյն յատուկ և նոր իրաւունք ոչ է տուեալ, և ոչ
'ի միում ժամանակի չունի կրել փոփոխութիւն։ Քրիստո-
նեայ ազգք, որք արժանացեալ են կատարել զօրէնս եւ
զուխտս իւրեանց 'ի վերայ Դերեզմանի Ս. Աստուածածնի,
յամենայն աւուր պարտին կատարել զօրէնս եւ զուխտս
իւրեանց, պայմանաւ չչինել արգել օրինաց և ուխտին այ-
լոց ազգաց։ Յամենայն ատաւոտու սկսեալ 'ի ծագմանէ
արեգական, Յոյնք, ապա Հայք, և յետ այնոցիկ Լատինք,
իւրաքանչիւր ազգք 1½ ժամ պարտին կատարել զօրէնս,
և այս բարեկարգութեան յօրինումն հրամանաւ եւ թոյլ-
տուութեամբ Տէրութեանս գործադրեալ է։

Ի գիւղն Բեթղեհէմի կից Լատին վանաց երկու հատոր
պարտիզաց տեսչութիւնն Յոյնք և Լատինք պարտին վա-
րել, և ոչ ունեք աւանդական իրաւունք լինելու պայմա-
նաւ, մինչեւ ցայսօր ո՛րպէս գործադրեալ է, նոյն եղա-
նակաւ պարտ է գործածել։ Բաց յայսցանէ եւ ոչ միոյ
ազգի պաշտօնական դրօվք նորոգ գործադրելի թոյլտուու-
թիւն չլինելոյ սակս, ամենեքեան պարտին մնալ 'ի վերայ
ներկայ վիճակին։ Մինչեւ ցայսօր յԵրուսաղէմ Յոյն, Լա-
տին եւ Հայ ազգք զՍ. Տեղիս, թէ ընկերովի եւ թէ անկախ, զորս ունին 'ի ձեռս իւրեանց պարտին հաստատուն
մնալ 'ի ձեռս նոցա, որպէս և էին։ Այսուքիկ ամենեքեան
գոլով գրեալ և կարգաւորեալ, զբովանդակութիւնս նորին
յայտ արարեալ ծանուցին Կայսերական մեծութեանս։ Հա-
մաձայն գրելոց 'ի վեր անդր, և 'ի մասին գործադրութեան
'ի հաճութենէ Բարձր կամաց Տէրութեան կախեալ գոլով՝
թագաւորական հրամանաւս և Բարձր կարողութեանս հա-
մեմատ Արքայական դիւանէս Կայսերական ձեռագրով վա-
ւերեալ տուաւ բարձրագոյն հրովարտակ, գուք՝ որ Բը-
դեշխ, Դատաւոր և այլն էք, խնամեալ զորպիսութիւն հան-
դամանացն, ոյն հրովարտակս արձանագրեսջիք 'ի Դատա-

բանի եւ համաձայն փառաւոր վճռոյ նորին, անփոփոխ,
մշանջենաւոր և հաստատուն կերպիւ գործադրեսջիք։ Բէ-
հէղ վերջ ՌՅԹ, (1852—53)։ Այս հրովարտակ է 'ի հաս-
տատութիւն առաջնոյն։

Սոյն արծաթեայ աստղն յառաջագոյն բեւեռեալ էին
Լատինք յԱյրն Բեթղեհէմի 'ի տեղի Ծննդեան Քրիստոսի
Փրկչին մերոյ, որպէս յայտ առնէ հին թուական նորին։
Սակայն 'ի թուին 1847 յանկարծ անյայտ եղեւ աստղն
'ի տեղւոջէ անտի, յորմէ ծագեցաւ վէճ եւ խռովութիւն
'ի մէջ Յոյն և Լատին կղերց։ ուստի հարկ եղեւ Սուլթան
Մէհմիտ Արքայի առ 'ի բառնալ զխռովութիւնս երկուց ազ-
գաց՝ տալ վերստին չինել և կերտել ըստ առաջին ձեւոյն
զաստղն զայն, և իբրեւ յիշատակ ընդհանուր քրիստոնէից,
որպէս յայտ առնեն բանք նորին հրովարտակին, և առա-
քեալ էտ վերստին բեւեռել 'ի տեղւոջ իւրում ըստ թա-
խանձանաց Լատինաց յամի Տեառն 1853, յորոյ շուրջն
գրեալ է վերառութիւն 'ի Լատին բարբառ այսպէս։
HICDE VIRG INE MARIA IESUS CHRITUS NATUS
EST 1717. Այսինքն Սուրբ Կոյսն Մարիամ զՅիսուս Քրիս-
տոս ծնաւ։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Մաքսիմիլեան մեծ դուքն։ Արեւելեան պատերազմ։ Կոլիս Ի Տաճարին Ս. Յարութեան։ Վանք Ռուսաց։ Կոստանդին մեծ դուքն։ Կատարած Դամասկոսի։ Վանքն Յովհաննու Պատրիարքի։ Տեղակալ Վրդանէս վարդապետ։ Յակոբ Պատրիարք։ Ընտրութիւն Եպսկոպոս վարդապետի։ և վերջ։

Ի ՍՄԻՆ ժամանակի եկն յուլիսի և յերկրպագութիւն
Յերուսաղէմ Տնօրինական Ս. Տեղեաց Քրիստոսի Մաքսիմի-
լիէն մեծ Դուքն, եղբայր Յովսէփ Ֆրանչիսկոս Կայսեր
Աւստրոյ—Հունգարիոյ, ուրում արար արժանաւոր ընդու-
նելութիւն Կուսակալն Երուսաղէմի զօրականօք և Քաղա-
քական տեսչութեամբ։ Իսկ Լատին Պատրիարքն Յովսէփ

Վալերկայ և կղերականք իւր ընկալան զնա եկեղեցական մեծ հանդիսիւ 'ի դրանէ քաղաքին մինչ 'ի Տաճարն Ս. Յարութեան խուռն բազմութեամբ ժողովրդոց. չրջեցաւ նա ջերմեռանդութեամբ յամենայն տնօրինական տեղիս, պատուեաց զեկեղեցիս եւ զեկեղեցականս ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի, շնորհեաց Յովհաննու Պատրիարքին Հայոց իբրեւ ընծայ մատանի ծանրագին, յորոյ վերայ գրեալ էր անուն Նորին մեծութեան, և այսպիսի ուրախութեամբ դարձ արար անդրէն 'ի Յոպպէ, և անտի յաշխարհն իւր։ Սա եղեւ Կայսր Մեքսիքայի, բայց թշնամիք նորա սպանին 'ի հարուածս հրացանի։

Քիրիլլոս Յոյն Պատրիարքն Երուսաղէմի յետ ընդունելոյ զերկոսին հրովարտակս (Խաթթի Շէրիֆ) 'ի Սուլթան Մէհմետ Արքայէ, զոր անուանեցին Statu-quo, յորոց երկրորդին թարգմանութիւնն եղաք 'ի նախընթաց գրքի, հակառակ լատինական պահանջմանց դարձ արար յԵրուսաղէմ. և միաբանք իւր եկեղեցական փառօք և հանդիսիւ ընկալան զնա՝ տարեալ 'ի Տաճարն Ս. Յարութեան, ուր կատարեցան աղօթք և խնդրուածք վասն կենաց Արքայի։ Իսկ Հայք թէպէտեւ գրեցին յայնժամ 'ի Դուռն վասն այսր դիպուածոյ, և խնդրեցին պաշտպանութիւն սեփականութեան իւրեանց, այլ շահեցան եւ ոչ ինչ, միայն Թէ-կէրէէ- Եպարքոսին շատացան. որոյ վասն Յոյնք յամենայն դէպս զինեցան և զինին ցարդ ընդդէմ Հայոց՝ յեցեալ 'ի զօրութիւնս այնր հրովարտակաց։ Սակայն ասի առաւել սաստկացաւ վէճն վասն Ս. Տեղեաց Երուսաղէմի, զի Պիոս Թ. Պապն Հռոմայ խորհրդով Լատին Պատրիարքին Երուսաղէմի ստիպէր զԿայսրն Գաղղիոյ ընդ Նաբոլիոն Գ. առնուլ զբանալիս Ս. Տեղեաց՝ խոստացեալ նմա օծանել զինքն Կայսր Գաղղիոյ, եւ Նաբոլիոն թախանձէր զԴուռն Օսմանեան. բայց Նիկողոս Կայսրն Ռուսաց 'ի պաշտպանութիւն եկեղեցւոյն Յունաց ոչ երբէք զիջաւ 'ի կամս Օսմանեանց, այլ միշտ ընդդէմ եկաց խորհրդոց եւ բանից նոցա. զի Դուռն պնդեալ կայր 'ի բանս իւր թէ՝ իմ է երկիրն՝ ում կամիմ նմա տամ ընդ Ս. Տեղիս, որպէս յառաջագոյն ետու Յունաց, այժմ կամիմ տալ Լատինաց։ Այսպէս երկու Պատրիարքունք յե-

ցեալ 'ի զօրութիւնս երկուց Կայսերաց, մին թախանձէր՝ եւ միւսն ժխտէր. եւ 'ի սաստկանալ բանից եւ վիճմանց՝ Օսմանեանք հրատարակեցին պատերազմ ընդդէմ Ռուսաց, որ կոչեցաւ Արեւելեան պատերազմ. նիզակակից եղեն նմա Անգղիա, Գաղղիա, և Սարտինիա, որ յետոյ միացաւ ընդ Իտալիայ։ Եւ եղեւ 'ի յաղթանակել զօրացն Օսմանեանց և դաշնակից Տէրութեանց 'ի Սեվաստարօլ, եղեւ ընդհանուր ուրախութիւն 'ի Պետութեան Օսմանեանց, մանաւանդ յԵրուսաղէմ զերիս գիշերս ճրագավառութիւն և հրավառութիւն, մանաւանդ 'ի բերդն, 'ի զօրանոցս և յայլ կարեւոր տեղիս. եւ յետ երկուց ամաց մահուամբ Նիկողայոսի Կայսեր Ռուսաց խաղաղացան հաշտութիւն, եւ կնքեցաւ դաշնադրութիւն 'ի Փարիզ, (1856)։ Եւ Ս. Տեղիքն մնացին ըստ առաջին վիճակի 'ի ձեռս իւրաքանչիւր ազգի, որպէս եւ էին, ըստ տրամադրութեան վերջին հրովարտակին։ Ի միջոցի սոյն երկուց ամաց Նուազեցաւ թիւ ուխտաւորաց՝ և Յովհաննէս Պատրիարք կրեաց զբժուարութիւն ինչ 'ի կառավարել զԱթոռն, բայց յամենայնի խորշեցաւ 'ի պարտուց՝ զի գիտէր զառաջին անցսն Աթոռոյն։

Յետ դադարելոյ Արեւելեան պատերազմին՝ յամախեցին ուխտաւորք բազմութեամբ յԵրուսաղէմ, և յերեկոյի ճրագալուցի Զատկին՝ յորում կատարի հանդէս Լուսաւորութեան 'ի Տաճարին Ս. Յարութեան, ծագեցաւ կռիւ մեծ 'ի միջ երկուց ազգաց և այն յաւէտ 'ի գրգռութենէ Յունաց, և եղեւ աղմուկ և խռովութիւն. զի Հայ և Յոյն ուխտաւորք խառնեալք ընդ միմեանս հարկանէին զիրեարս սուսան խորտակել զկանթեղս և պատառել զպատկերս, առանց գիտելոյ թէ ո՛ւմ իցէ, և 'ի վայր հոսեցին զբովանդակ զարդարանս Գերեզմանին Քրիստոսի. բազումք յուխտաւորաց և 'ի միաբանաց վիրաւորեցան, և եղեւ ինչս մեծ երկուց կողմանց, ապա միջամտութեամբ քաղաքական զինուց դադարեցաւ կռիւն, և Հայք կատարեցին զԹափօրն իւրեանց, և այնպէս դարձան տրտմութեամբ 'ի վանս Ս. Յակոբայ, (1856)։

Ի սմին ժամանակի դնեցին Ռուսք ձեռամբ Յունաց

ընդարձակ տեղի արտաքոյ քաղաքին Երուսաղէմի, և ապա ձեռն արկին շինել զայն վանք յանուն Ռուսաց. նախ պարսպեցին զտեղին շուրջանակի՝ և ապա հիմն արկին հոյակապ եկեղեցւոյ կաթուղիկէիւ և զանգակատամբ, շինեցին և զայլ փոքր եկեղեցի, կանգնեցին ընդարձակ Առաջնորդարան, հիւրատուն, իջեւանատեղի ուխտաւորաց, Հիւպատոսարան բոլոր պարագայիւք, պարտիզօք և ջրամբարօք, և այլ ամենայն կարեւոր պիտոյիւք արքայավայել ճոխութեամբ, ծախեալ գանձս բազումս, յոր աշխատեղեն գործաւորք բազում. և յետ անցանելոյ ժամանակաց եկն յԵրուսաղէմ մեծ Դուքսն Ռուսաց Նիկողայոս, որդի Նիկողայոսի Կայսեր, և ետ օծանել մեծ եկեղեցին Քրիստոսի Ցոյն Պատրիարքի, և զկնի հանդիսաւոր պատարագի մեկնեցաւ 'ի Ցոսպէ, (1872).

Կոստանդին մեծ Դուքսն որդի Նիկողայոսի Կայսեր Ռուսաց եկաց 'ի Ցոսպէ, ունելով ընդ իւր զերիս մեծամեծ պատերազմական նաւս, բաց յերեւելի անձանց ընկերակցեալ էին նորին մեծութեան կինն եւ մանկահասակ որդին իւր. Պաշտօնեայք Օսմանեան Պետութեան, և եկեղեցականք քրիստոնէից սիրով և յարգանօք ընկալան զնա 'ի նաւահանգիստն, որ եւ իջեւանեցաւ 'ի վանս Ցունաց, ուր 'ի սենեկի սպասէր Երուսաղէմի Ռուս եպիսկոպոսն խաչիւ. իսկ մեծ Դուքսն յերեկոյեան ընկալաւ զայցելութիւնս այլ և այլ ազգաց, ընդ որս և զեկեղեցականս Հայոց՝ զորս առաքեալ էր Յովհաննէս Պատրիարք յԵրուսաղէմէ՝ յողջոյն և 'ի պատիւ Նորին մեծութեան. եւ 'ի վաղիւ անդր եկ 'ի ճանապարհ բազմութեամբ գնալ յԵրուսաղէմ, ուղեկից ունելով ընդ իւր զկղերս Ցունաց և Հայոց, և 'ի հասանիլ նորա 'ի դուռն քաղաքին՝ եդեալ ընդունելութիւն մեծ 'ի կողմանէ Քաղաքական իշխանութեան եւ 'ի կրօնական դասէ՝ և ուղղակի գնաց 'ի տաճարն Ս. Յարութեան և յետ երկրպագելոյ Գերեզմանին Քրիստոսի և Գողգոթայի, իջեւանեցաւ 'ի վանս Ցունաց. ապա եկն յուխտ եւ յայցելութիւն 'ի վանս Ս. Յակոբայ, զոր Յովհաննէս Պատրիարք եւ միաբանք ուխտին եկեղեցական հանդիսիւ եւ մեծ շքով ընկալան յեկեղեցին՝ ապա 'ի Պատրիարքարանն, անտի 'ի Ս. Հրեշտակապետ և 'ի Ս. Փրկիչ՝ յաւուրս Զատկի, և ապա ուրախութեամբ դարձաւ 'ի Ցոսպէ և անտի 'ի Կոստանդինուպոլիս (1859). Եւ 'ի հասանիլ նորա յաշխարհ՝ առաքեաց Նիկողայոս Կայսրն նշան պատուոյ, այլ զի Յովհաննէս Պատրիարք վախճանեալ էր՝ դարձաւ յետս.

Ի սմին ժամանակի Արարացիք Դամասկոսի և Լիբանանի լերին յարեան 'ի վերայ քրիստոնէից, և կոտորեցին զբազումս 'ի նոցանէ, յայտնապէս կողոպտեցին և աւարի առին զտունս, զեկեղեցիս և զվանօրայս, եւ հրձիգ լեալ այրեցին զնոսա, զքահանայս զոր կալան՝ սպանին և եղեւ ողբ, աղաղակ և տագնապ մեծ. ընդ որս կողոպտեալ այրեցաւ և հիմնայատակ կործանեցաւ Ս. Սարգիս վանքն Հայոց առաջնորդարանաւ եւ սենեկօք ուխտաւորաց, եւ Առաջնորդ տեղւոյն Գաբրիէլ վարդապետ մաղապուր զերծաւ իւրովքն հանդերձ 'ի բերդն. քրիստոնեայք պաշարեալք յայսպիսի յաղէտս տարակուսանաց, ապրեալք 'ի սրոյ թշնամեաց՝ սկսան խումբ խումբ փախչիլ 'ի Պերութ մերկ և կողոպուտ, տանջեալք 'ի քաղց և 'ի ծարաւ. գործ դժնդակ դառնութեանս այսորիկ հնչեաց յականջս Եւրոպիոյ, արշաւեաց Գաղղիական զօրքն հրամանաւ Նաբոլիոնի Երրորդի՝ 'ի Պերութ և անտի սփռեցան 'ի լերինս Լիբանանու հետամուտ լեալ Տէ-ղէյ կոչեցեալ ցեղին. Հասին զօրք եւ պաշտօնեայք 'ի Դրանէ Օսմանեան Պետութեան, որոց գլուխ էր նա ինքն Ֆուատ Փաշայ. պատժեցան բազումք 'ի չարագործաց 'ի Դամասկոս, յուղեցան տունք այլազգեաց՝ եւ ժողովեալ ամբարեցաւ 'ի մի վայր կողոպուտք քրիստոնէից, սահմանեցաւ պարէն թշուառ մերկացելոց. ապա հատուցաւ 'ի գանձէ Տէրութեան ինչք քրիստոնէից, բայց տեւեաց ժամանակս ինչ. ապա վերստին շինեցան և հաստատեցան եկեղեցիք և վանօրայք իւրաքանչիւր ազգի՝ եւ կացին ըստ առաջնոյն 'ի տեղիս իւրեանց. բայց վանքն Հայոց եկաց մնաց յաւերակի իւրում եւ չինեցաւ միայն եկեղեցին. էին եւ ընդ Ֆուատ Փաշայի պաշտօնեայք յազգէն Հայոց, ընդ որս էր և բժիշկ Սէրվիշէն Էֆէնտի, որ եւ ընդ որդւոյ Փաշայի եկն յԵրուսաղէմ սակս ազգային խնդրոյ իրիք, եւ Յովհաննէս Պատրիարք արար նոցա ընդունելութիւն մեծ, բայց չե-

զեւ հնար կատարել զմոնգիր Սէրվիչէնի՝ եւ ապա դարձան 'ի տեղիս Իրեանց։

Այլ յետ ոչ բազում աւուրց վախճանեցաւ Յովհաննէս Պատրիարք՝ հարեալ 'ի կաթուածէ (1860· Դեկտեմբեր 23), 'ի տօնի Դաւթի մարգարէի և Յակոբայ առաքելոյն կատարեցաւ տխուր հանդէսն յուղարկաւորութեան ամենայն շքեղութեամբ, եւ թաղեցաւ 'ի վանս Ս· Փրկչի 'ի կարգս առաջին Պատրիարքաց։ Եւ ժողովեալ միաբանաց գրեցին զամենայն հանգամանս գործոյն 'ի Կոստանդինուպօլիս յազգային Պատրիարքարանն եւ առ Փոխառնորդն Սահակ վարդապետ։ Սա 'ի կենդանութեան իւրում չինեաց զփառաւոր Պատրիարքարանն, դնեաց զայդին 'ի վերայ Փիլիպպոսի տզրեր, զոր Արարացիք կոչեն Հանէ, մերձ 'ի գիւղն Վէլէճէ։ Գնեաց նաեւ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի արտորայս առ 'ի կառուցանել չինուածս, յորոց 'ի վերայ մոյ մտին կատոյց չինուածս ինչ մեծ նեղութեամբ և դժուարութեամբ, ստացաւ նաեւ զմեծամեծ տունս 'ի մէջ քաղաքին 'ի կալուած, 'ի հիմանէ կատոյց զփառաւոր Ուսումնարանն գմբեթարդ մերձ 'ի Զամ Բաշ, զոր ինքն ետ կառուցանել։ և այսպէս լի արդեամբ և ազգաշէն բարեգործութեամբ վախճանեաց զկեանս իւր վըշտացեալ 'ի դաւանաց և 'ի նենգութեանց ընտանի նախանձաւորաց իւրոց, որոյ յիշատակն եղիցի օրհնութեամբ։

Յետ վախճանելոյ Յովհաննու Պատրիարքի միաբանք վանաց խոհական կացուցանել զոմն 'ի միաբանացն վանաց յԱթոռ Պատրիարքութեան ըստ առաջին կարգի և սովորութեան Աթոռոյն· և զի 'ի սմին ժամանակի բաց յԱւագ Լուսարար Գէորգ Եպիսկոպոսէ չէր այլ ոք Եպիսկոպոս յԱթոռն, նա եկաց յայնժամ Գլուխ միաբանութեան եւ զնա յօժարեցուցանէին լինել Պատրիարք· սակայն փութով եհաս օրհաս նմին, վախճանեցաւ եւ 'ի նմին աւուր Մկրտիչ վարդապետ Դարպասընկալ։ Գէորգ Եպիսկոպոս Աւագ Լուսարար Տէր Յարութիւնեան Ռոմանցի 'ի տոհմէ Թաթարեանց, այր զգօն կրօնասէր եւ զգուշաւոր 'ի բանս, կարգեալ 'ի պաշտօն Լուսարարութեան (1849· Ապրիլ 9)· վախճանեցաւ (1861· Յունվար 6)։

Եւ զկնի այսմ կարգեցին ընտրանօք Տեղակալ զՎրթա-

նէս վարդապետ Հասանմանուրցի՝ խոստովանահայր արանց, և զժողովն Տնօրէն, և ըստ այնմ սկսան կառավարել զԱթոռն։ Վէճն որ ծագեցաւ 'ի մէջ միաբանաց և ազգայնոց Կոստանդինուպօլսոյ՝ յայտնի է ամենեցուն· զի միաբանք կամէին պահել զաւանդութիւնս Աթոռոյն, իսկ ազգայինք կամէին զմի ոմն յեպիսկոպոսաց արտաքոյ միաբանութեան կարգել յԱթոռ Պատրիարքութեան· աստի սկսաւ և վէճն և երկարեցաւ խռովութիւնն· Տէր Յովհաննէս քահանայ Հիւնքեար Պէյենտեան եկն յԵրուսաղէմ վասն այսր խնդրոյ՝ ոչ չշահեալ ինչ դարձաւ յետս։ Եւ զի միաբանք կամէին ընտրել զՍահակ վարդապետ Բարերդցի Փոխանորդ 'ի Կոստանդինուպօլիս, ուստի հարկ եղեւ նմա գնալ յԵրզիմաձին և ձեռնադրիլ յեպիսկոպոս, եւ 'ի վերջին ընտրութեան նա շահեցաւ 'ի միաբանաց զաւանել քուեայս, բայց ձախորդութիւն և անյաջողութիւն գործոյն երկարեաց զխնդիրն։

Ի սմին ժամանակի նախկին Պատրիարք Կոստանդինուպօլսոյ Յակոբ Եպիսկոպոս՝ այր ալեւոր և ծերացեալ, եկն յԵրուսաղէմ 'ի պատճառս ուխտի, ընդ իւր ունելով զգ· Յովհաննէս վարդապետ Սէթեան· որ եւ 'ի հասանելն 'ի Յոպպէ՝ հանին զնա պատուով 'ի նաւէ, և յարգանօք ընկալան 'ի վանս· եկեալ էին և յԵրուսաղէմէ Վարդապետք 'ի յարգանս և յողջոյն նորին, զոր առեալ տարան փառօք 'ի քաղաքն Սուրբ և պատրաստեցին նմա արժանաւոր տեղի 'ի վանս, և զկնի աւուրց ինչ դիպուածով վախճանեցաւ և թաղեցաւ 'ի վանս Ս· Փրկչի (1862· Նոյեմբեր 6)։

Մարաշցի Մեսրովբ Եպիսկոպոս միաբան Սսոյ և Երբեմն Առաջնորդ Անտիոքայ եւ Անթէպի՝ միաբանեցաւ 'ի վանս յաւուրս Յովհաննու Պատրիարքի, և սա միայն էր Եպիսկոպոս յաւուրս յայսոսիկ և ինքն կատարէր զեկեղեցական պաշտօնս և զհանդէսս 'ի Ս· Տեղիս, և սա ետս վախճանեցաւ (1863· Մարտ 14)։

Իսկ 'ի գումարման վերջին անգամ միաբանական ընդհանուր ժողովոյ սակս ընտրութեան Պատրիարքի Ս· Աթոռոյն, զկնի քուէարկութեան ազգային սահմանադրութեան օրինօք, արդիւնք քուէից հանրական գրով առաքեցաւ 'ի Կոստանդինուպօլիս, և անդ յազգային ժողովի ընտ-

րեցաւ Պատրիարք միաբան Ս. Աթոռոյն Կեսարիոյ Թալաս գեղջ. Եռայի վարդապետ Կարապետեան, եւ հեռագրով աւետեցին միաբանութեան ընտրութիւն նորին (1864. Օգոստոս 28)։ Եւ սկիզբն Սեպտեմբերի եկ յԵրուսաղէմ 'ի ճանապարհ դնալ 'ի Թադաւորեալ քաղաքն, եւ ապա անտի ուղեւորեցաւ յԷջմիածին, ուր ձեռնադրեցաւ յաստիճան Եպիսկոպոսութեան 'ի Մատթէոս Կաթուղիկոսէ եւ դարձաւ 'ի Կոստանդինուպոլիս, և դադարեալ անդ աւուրս ինչ էառ զՊէրատն Պատրիարքական 'ի Սուլթան Ազիզ Արքայէ, և դարձ արարեալ անտի եհաս յԵրուսաղէմ յաւուրս Զատիկի երկուշաբթի, զոր ընկալեալ փառօք և պատուով միաբանից՝ նստուցին հանդիսիւ յԱթոռ Պատրիարքութեան (1865. Ապրիլ)։ Որ և վարէ ցարդ զիշխանութիւն Պատրիարգութեան Աթոռոյն Երուսաղէմի։

Ցայս վայր հասուցեալ զընթացս պատմութեան մերոյ, ասասանօր կնքեմք զբանս մեր, զանց արարեալ զմանրամասն դէպս վերջին ժամանակիս, թողլով զայնս այլոյ ճարտարագոյն գրչի, և մեք աւանդեմք զայս երկար և դժուարաքիրան վաստակս յօգուտ և 'ի շինութիւն Ս. Աթոռոյս միաբանական դասուն և համայն օրհնեալ ազգիս, և 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

ՎԵՐՋ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅ



ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՅ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Ա. Մեկնիլ Եղիազարի 'ի Կոստանդինուպոլսոյ. Ժամանել Նորա 'ի Բերիա և անտի յԵրուսաղէմ։ Բարեկարգութիւն Ս. Յակոբայ։ Ուխտաւորք Յոպպէյու։ Կարապետ Կաթուղիկոս։ Կանոնք Ս. Յակոբայ. 5

Բ. Նորոգութիւն տաճարի Ս. Յակոբայ։ Սեղբոս Ամիրայ և բարեգործութիւնք նորին։ Այլազգիք Սիոնի. 12

Գ. Մուսուտիկ. Բանակցութիւն Յունաց ընդ Հայոց 'ի վերայ այսր խնդրոյ և միաբանութիւն նոցին։ Նամակ Խրիմեանոս Պատրիարքին Յունաց։ Հրովարտակ Աբդայի և Ոսմիկան. Առանձին կատարել զոսն Պասքին երկուց ազգաց. 15

Դ. Ղենդութիւն Յունաց։ Խռովութիւն ժողովրդոց յարեւելեան գաւառս։ Վէճ Լատինաց։ Մահ Աթոռակալ Հաննա վարդապետի։ Վիշտ Գրիգոր Պատրիարքի. 25

Ե. Այլազգիք Սիոնի։ Վէճ Յունաց ընդ Հայոց սակս մնանելոյ 'ի Գերեզմանն եւ հետեւակ երից ազգաց։ Վէճ Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Խռովութիւն Յունաց վասն Ս. Յակոբայ. 35

Զ. Ուղեւորութիւն Գրիգորի Պատրիարքի 'ի Կոստանդինուպոլիս։ Կարեւոր գէպք որք պատահեցան անդ։ Պայմանագիր Յունաց։ Բնագիր Գաղղիարէն նամակի Կարտինալի Ֆլորեայ։ Վէճ Լատինաց։ Դարձ Գրիգորի 'ի Կոստանդինուպոլսէ յԵրուսաղէմ. 48

Է. Զարութիւն Յունաց։ Ֆելուսէք Պէյի ճալա գիւղի։ Այլազգի գունապանք։ Սեղան Հայոց 'ի Ս. Աստուածածին։ Մահ Յովհաննու Պատրիարքի. զգեստ նորին։ Վանք Ս. Փրկչի։ Կաթ. Լատինաց 'ի Ս. Յարութիւն։ Նամակ Գրիգորի Պատրիարքի առ Դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպոլիս։ Խնդիր Լատինաց վասն գմբեթի Գերեզմանին. 62

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

Ը. Կոտակ Գրիգորի Պատրիարքի. Գիւղականք Բեթղեհեմի. Նորոգութիւն Ս. Հրեշտակապետի. Մահ Գրիգորի. Ընտրութիւն Յակոբ Պատրիարքի Նալեան. Եաղուպ Աղա. Այլազգիք Սիոնի. 74

Թ. Վեհ Յունաց ընդ Լատինաց. Տիրել Յունաց գերեզմանի Ս. Աստուածածնի եւ մեծի եկեղեցւոյն Բեթղեհեմի. Զրկանք Հայոց եւ նեղութիւնք վասն այնց տեղեաց. եւ վերսին հաստատել իրաւանց Հայոց. 81

Ժ. Բռնութիւնք այլազգեաց. Տառապանք վանօրէից յերեսաց Կաւակալացն Դամասկոսի. Ապստամբութիւն Բեթղեհեմ գիւղի. Վերջին կոտակ Թէոդորոսի եւ մահ նորին. 90

ԺԱ. Կարապետ վարդապետ Գանձակեցի. Ժառանգք վախճանեալ միաբանաց. Հակառակութիւն Յունաց. Կաւակալն Դամասկոսի. Այլազգիք Սիոնի. Նորոգութիւնք վանօրէից. Վախճան Կարապետ Պատրիարքի. 98

ԺԲ. Պատրիարքութիւն Պօղոսի. Կենսագրութիւն նորին. Ապուտահայ. Կոտորած Յոպպէի. Սաղ. Մահ Պօղոսի. Ընտրութիւն Յովակիմ վարդապետի. Վեհ ընդ Լատինաց վասն գերեզմանատան որ ի Սիոն. 104

ԺԳ. Այրն քառասնից. Կանոնական բանք. Նուիրակութիւնք Յովակիմայ եւ մահ նորին. Նեղութիւն Դատաւորին վասն թաղելոյ զմարմին նորա ի Ս. Փրկիչ. 114

ԺԴ. Ընտրութիւն Պետրոս Եպիսկոպոսի. Դռնապանք Ս. Յարութեան. Նաւ ուխտաւորաց. Մաքսապետ Յոպպէի. Այլազգիք Երուսաղէմի. Կաւակալն Դամասկոսի. Գիւղական Ֆելլահք. Մաքսապետն Յոպպէի. 120

ԺԵ. Համբաւ Գաղղիական զօրաց. Դղրդումն Ասիոյ. Վրդովումն այլազգեաց եւ զինուորիլ նոցա. Նեղութիւն քրիստոնէից. Սակալի տառապանք վանականաց. Բանտարկութիւն միաբանաց. ուխտաւորաց եւ ժողովրդոյ քաղաքին. Տիրել Գաղղիացւոյ Յոպպէի եւ Գազայի. 126

ԺԶ. Անդք Ռիմէ առանի. Վանք Ս. Փրկչի. Քեօր Եուսուֆ Փաշա. Անոն Ամիրայ. Մահ Պետրոս Պատրիարքի. Գործ Բդէշխին. Մեհեմմէտ Ապու Մէրագ. Նեղութիւն միաբանաց. Այլազգիք Սիոնի. Թողուլ միաբանաց զվանս Ս. Յակոբայ եւ մեկնիլ ի քաղաքէն. 132

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԺԷ. Ընտրութիւն Թէոդորոսի. Շփոթութիւն Բդէշխին. Պաշարումն Յոպպէի եւ պատերազմ. Վեհ Լատինաց. Կիրակոս Կաթուղիկոս Սսոյ. Վեհ Յունաց ի Ս. Աստուածածին. 140

ԺԸ. Դարձ ճեղոր փաշայի. Ֆելլահք գիւղ Յաֆանու ծննդեան. Խռովութիւն Յունաց. Օթման Ապուզոշ գիւղի. Նեղութիւն ուխտաւորաց ի Ճանապարհի. Հոգեւոր Լատինիկայ. Դարձ Մեհեմմէտ փաշայի Ապու Մէրագ կոչեցեալ. եւ բռնութիւնք նորին ի Յոպպէ. 147

ԺԹ. Ընդդիմութիւն Լատինաց. Ոսմիան սակ Ապու Մէրագի. եւ փախուստ նորա. Ապստամբեալն Փաշա. Խռովութիւն եւ վեհ Յունաց. Նեղութիւն Հայոց վասն Հլրվաբատակաց. Դիտաւորութիւն փախչելոյ Թէոդորոսի նեղեալ յայժ ի տառապանաց. 156

Ի. Խռովութիւն այլազգեաց Երուսաղէմի. Հաշիւ Ս. Աթոռոյն. Միաբանութիւն Հայոց ընդդէմ Յունաց. Քաղաքական գեկդ. Հրդեհ ի տաճարին Ս. Յարութեան. 165

ԻԱ. Մահ Յակոբ Եպիսկոպոսի. Փոխանորդ Պօղոս վարդապետ. Տուանդք Աթոռոյն. Գաբուձի պաշի. Նիւթք շինութեան. Գրգռութիւն Յոյն ժողովրդոյ. Խռովութիւն այլազգեաց սակս շինութեան տաճարին. Զինակիր Կաւակալին Դամասկոսի. 175

ԻԲ. Աղերսագիր Հայոց առ Սուլթան Մահմուտ Բ. Բերել Վահիա էֆենտի. Դատ Հայոց ընդ Յունաց ի Փաշա դաբուսին վասն Ս. Տեղեաց. ի 4 նիստս. 182

ԻԳ. Առելութիւն Յունաց յԵրուսաղէմ. Կաւակալ Դամասկոսի. Շինութիւն Ս. Գերեզմանին. Մղծպի ղրաք և Եենիչէրիք. Խռովութիւն ի մէջ զօրաց. Վանք Ս. Փրկչի. Ժողով ի դատարան վասն շինութեան Ս. Յարութեան. Գործ զօրավարին Ապուզուբեան. 192

ԻԴ. Աղերսագիր Հայոց առ Այրքայ. որոնել զարձանագրութիւնս. Դատաստան վերսին ի Դուռն մեծի Դենպետին. Խնդիր երից հետեւակ ազգաց. Բռնութիւն քաղաքապետին. Հրաման Կաւակալին Դամասկոսի. Նոր Կաւակալ. 201

ԻԵ. Աւարտումն շինութեան Ս. Յարութեան. Խափանումն տեղացն Հայոց. Մեհեմմէտ Ապուլօղլութ. Եփրեմ Կաթուղիկոս. Նեղութիւնք միաբանաց. Ժողով ի Դուռն մեծի

Գենդեսին և Հրոման Ակրային։ Ծախք շինութեան տաճարին։ Դարձեալ ժողով ի գուռն Դենդեսին. 209

ԻԶ. Ցքա Մանուել Լատին։ Զայրոյթ Յունաց։ Մկրտիչ վարդապետ։ Մեհկմեկ Ապուլոպսեթ։ Նաև ուխտաւորաց։ Հրովարտակք Հայոց եւ Յունաց։ Թարգմանութիւն հրովարտակին Հայոց. 218

ԻԷ. Ուրշու�գործակալաց Դրան վասն խնդրոյն Հայոց գնալ Նոցա Յերուսաղէմ։ Բանք Նուրի Էֆենտեայ եւ Կուսակալին Դամասկոսի։ Գործ Դատաւորին։ Ժողով ի Դատարանի երկիցս։ Քննութիւն Հաղեշաց՝ ընդդիմութիւն Դատաւորին։ Ժողով ի Ս. Յարութիւն. 229

ԻԸ. Ժողով ի Ս. Յարութիւն և քննութիւն տեղեացն Հայոց։ Յամառութիւն Դատաւորին։ Ընդդիմութիւն Յունաց։ Ոսոիկանի Կուսակալին մեկնին։ Ժողով ի Դատարան։ Գիր Կուսակալին։ Դարձ Ոսոիկանին ի Դամասկոս։ Ժողով ի Դատարանի լի խռովութեամբ. 239

ԻԹ. Պահանջ Հայոց։ Անպիտանութիւն Դատաւորին։ Գանկատ Յունաց առ Կուսակալն։ Նոյնպէս Ոսոիկանին զողդէն Յունաց։ Յամառութիւն Դատաւորին չկատարել զգործս Հայոց։ Ծանր պահանջ նորին։ Ժողով ի Ս. Յարութիւն։ Քննութիւն տեղւոյն Յովսէփայ Արեւմտացւոյն. 247

Լ. Խնդիր Ս. Աստուածածնի եւ Ս. Ծննդեան։ Արգելումն գործոյն Հայոց ի կողմանէ Կուսակալին։ Գիր Նուրի Էֆենտեայ։ Մեկնիլ Յերուսաղէմէ Խոճաքեանին, Ճարտարապետին և Ոսոիկանի Կուսակալին։ Սարգիս և Դիոնէսիոս վարդապետաց երթալ ի կոչ Կուսակալին. 255

ԼԱ. Վիճաբանութիւն Վարդապետաց ընդ Քեահեայ Պէյին վասն դրամոյ։ Դարձեալ վէճ եւ պահանջ Քեահեային վասն Բեթղեհէմի և Աստուածածնի։ Գրեանք Կուսակալին ի պաշտպանութիւն Յունաց։ Զգենուլ Վարդապետաց սամուրէնի և տալ մուրհակ պարտուց. 263

ԼԲ. Բգեշին Աքքէի։ Փոխանորդն Յունաց։ Յովհաննէս Պատրիարքի անկումն։ Աքսորումն Խոճաքեանին և Դատաւորին Երուսաղէմի։ Հանդերձապետ Աբբայի։ Նոր Դատաւոր Մուսայ Եֆենտի. 271

ԼԳ. Գործ Նոր Դատաւորին՝ յամառութիւն և ագահութիւն Նորին։ Երկար վէճ ընդ Հայոց։ Բանք Նուրի Էֆենտեայ։ Գալուստ Նոր հրովարտակի։ Ընթերցումն Նորին յեկեղեցիսն Բեթղեհէմի. 279

ԼԴ. Թարգմանութիւն երկրորդ հրովարտակին։ Ուրշումն գրանց և եկեղեցւոյն Հայոց։ Վիճաբանութիւն ընդ Դատաւորին վասն բաժանզգուութեան Այրին։ Կախումն կանթեղաց Հայոց. 289

ԼԵ. Բաժանումն եկեղեցւոյն Ս. Աստուածածնի։ Կարգադրութիւն զարգուց և պատարագի և աւելածութեան եւ այլ ամենայն իրաց հաւասար Յունաց։ Բանք կարգադրութեան Պատարագին։ Այրին եւ այլ ոգաստուց։ Խռովութիւն ի մէջ միաբանաց և ուխտաւորաց։ Պատասխանի Թղթոյն Պոզսի. 301

ԼԶ. Կարգաւորութիւն սեփհական իրաւանց Հայոց ի Ս. Յարութիւն։ Յարիշտակեալ և պակաս շինեալ տեղեաց։ Ագահութիւն պալատականաց Երուսաղէմի և Դատաւորին։ Խռովութիւն Յունաց յԱստուածածնին։ Բռնութիւն Քաղաքապետին։ Խռովութիւն ի Բեթղեհէմ. 310

ԼԷ. Մեկնիլ Նուրի Էֆենտեայ Յերուսաղէմէ։ Բգեշին Սիգոնի։ Լատինք։ Թաչկալք Ծննդեան և կարգաւորութիւն Պատարագի։ Հանգէս Հայոց ի Ծնունդ։ Աստելութիւն Լատինաց և վէճ վասն ճանապարհի նոցին։ Գնալ ի Բեթղեհէմ վասն կարգադրութեան Նորին խնդրոյ. 319

ԼԸ. Հրամանագիրք Կուսակալին Դամասկոսի։ Պահանջ և բռնութիւն նորին։ Ենդութիւն Քաղաքապետին՝ խորհրդով Յունաց։ Սոխպումն Կուսակալին խանգարել զգործս Հայոց. 328

ԼԹ. Աքսորումն Մուսայ Դատաւորին։ Ընդդիմութիւն Լատինաց վասն ճանապարհի։ Պահանջ Քաղաքապետին։ Քեահեայ Կուսակալին և բռնութիւն նորին։ Բողոք Հայոց վասն այնր. 335

Խ. Գալուստ Նոր Դատաւորի։ Վէճ Լատինաց ի Ս. Յարութիւն։ Երկիցս ժողով ի դատարանի։ Վրդովումն Լատինաց։ Փոխանակ Բգեշին Իսրահիմ աղա։ Բռնութիւն Լատինաց. 344

ԽԱ. Յովհաննէս Եպիսկոպոս Կարբեցի։ Դարձ Պոզսի Յէջմիածնէ։ Գժտութիւն ազգին։ Միաբանութիւն և խորհուրդ վասն Աթոռոյն Երուսաղէմի։ Հլուէր Վարդապետաց ոմանց

Ի Թագաւորական քաղաքն։ Ընտրութիւն Պօղոսի Ի Պատրիարք Կոստանդինուպոլսոյ։ Վախճան Թէոդորոս Պատրիարքի։ Աղգային Ժողով Ի Կոստանդինուպոլիս։ Կուսակալ Դամասկոսի և Քաղաքապետ Երուսաղէմի. 354

ԽԲ. Առելութիւն Լատինաց Ի Բեթղեհեմ։ Փակումն դրան Լատինաց։ Հակառակութիւն Յունաց Ս. Այրին Ծննդեան և վասն եկեղեցւոյն։ Երկաթեայ դուռն եւ սախտակամած քիւ Ի վերայ նորա։ Ընտրութիւն Գաբրիել Եպիսկոպոսի Ս. Աթոռն Երուսաղէմի։ Գերեզմանատուն Նեստորականաց։ Զանք Լատինաց վասն դրան. 364

ԽԳ. Աքսոր Եղիա Եպիսկոպոսի։ Գերիլ Նաւուն ուխտաւորաց և Յովհաննէս վարդապետի։ Զաքարիայ։ Հրամայական Աբբայի վասն կաթողիկէ Հայոց. Ժողով Ի Մայր Եկեղեցին. ընտրութիւն նոր խորհրդականաց Երուսաղէմի։ Խմբագրութիւն կանոնական բանից. 372

ԽԴ. Հրաժարական Պօղոսի։ Ընտրութիւն Կարապետի Ի Պատրիարք։ Կանոնական բանք նորին։ Բռնութիւն Քաղաքապետին։ Ապտուլլահ Փաշայ Աքքէի։ Գնալ Գաբրիել Պատրիարքի Ի Կոստանդինուպոլիս հրամանաւ ազգին եւ Տերութեան. 384

ԽԵ. Պարտաւորք։ Լատինք։ Բռնութիւն Քաղաքապետին։ Նամականիկ Դիմեէսիսի և պահանջ նորին։ Յակոբ վարդապետ։ Հարկապահանջութիւն Կուսակալին։ Տառապանք Խորհրդականաց, փախուստ նոցա Ի Քերբան, եւ դարձ նոցին անդրէն Ս. Աթոռն. 394

ԽԶ. Առաջնորդ Եգիպտոսի Կիրակոս։ Նեղքին խուսափութիւն վանացս։ Նուիրակութիւն Եթովպիոյ։ Հոգեւոր Լաւոդիկիայ։ Անկումն Եղիա Եպիսկոպոսի։ Խնդիր առաջնորդութեան Եթովպիոյ. 404

ԽԷ. Վիճակ Աթոռն Երուսաղէմի։ Պարտաւորք։ Յակոբ եւ Դիմեէսիս։ Տառապանք միաբանաց Ի զօրաց Կուսակալին։ Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի։ Նեղութիւն և ընդդիմութիւն վասն Իլամի Դատաւորին ըստ հրովարտակի Աբքային։ Ծախք Իլամին։ Մեկնիլ Յովհաննու Ի Կոստանդինուպոլիս. 415

ԽԸ. Ապստամբութիւն Գիւղականաց Բեթղեհեմի։ Գաբրիել Պատրիարք առաքի Ի Զմիւռնի։ Հրովարտակ վասն պարտուց։ Պարտաւորք։ Նեղութիւն Խորհրդականաց։ Հաստատիլ Պօղոս Եպիսկոպոսի Յերուսաղէմ։ Այլազգիք քաղաքին։ Սկիզբն վճարման պարտուց. 425

ԽԹ. Հրովարտակ դրան Բեթղեհեմի։ Խնդիր Գաբրիել Պատրիարքի։ Եղիա Եպիսկոպոս։ Կիրակոս Եպիսկոպոս. առաջին բաժին պարտուց։ Նորոգութիւն հրովարտակին վասն Գերեզմանին Քրիստոսի։ Պատարագել Հայոց Ի վերայ Գերեզմանին Քրիստոսի։ Հեռանալ վասն հաւատոյ բաժանորդութեան. 432

Ծ. Առելութիւն Լատինաց։ Ղափար տուրքն։ Պարոն Մուրատ և յիշատակիք նորին։ Խնդիր Գողգոթայի։ Աքսոր Զաքարիա վարդապետի. Փոխանորդ Յովհաննէս վարդապետ. Ազգային Ժողով Ի Կոստանդինուպոլիս։ Խնդիր հաշուոյ Ս. Աթոռոյն՝ Էլչից և մուրց. 445

ԾԱ. Այլազգի դռնապանք Ս. Յարութեան։ Կալուածք վանուրէից։ Առելութիւն Յունաց Ի Բեթղեհեմ։ Զաքարիա վարդապետ Փոխանորդ Յերուսաղէմ։ Ոգեւորիլ նորին Յիշմիածին։ Բռնալի երկաթեայ դրան Բեթղեհեմի։ Շինութիւն Վերնատան. Վարժարան. Տպարան. երկրաշարժ. ազգային հանգերձ. 448

ԾԲ. Առաքումն Կիրակոս Եպիսկոպոսի Ի Կոստանդինուպոլիս։ Հիմնարկութիւն Ճեմարանին։ Գիր Ամիրայից առ Պօղոս Եպիսկոպոս։ Պարտք Փոխանորդին։ Խնդիր Աստուծոյ։ Սկիզբն շինութեան Համբարձման եկեղեցւոյն։ Ընդդիմութիւն Յունաց և Լատինաց։ Բացումն դրան Լատինաց Ի Բեթղեհեմ։ Զանք Հայոց վասն շինուածոց Համբարձման։ Հրովարտակք Լատինաց. 456

ԾԳ. Գրեանք Դատաւորին տուեալ Հայոց։ Բողոք Լատինաց։ Ի Ժողովի քննութիւն խնդրոց երկուց ազգաց։ Վաւերական թղթեանք Հայոց. զոր մատուցին Ի Ժողովն։ Խորհուրդ Ամիրայից եւ նամակ նոցին առ Պօղոս Եպիսկոպոս վասն խնդրոց իրիք. 465

ԾԴ. Գիր մեծի Վեզիրին առ Դատաւորն։ Ջնջումն երից հրովարտակացն Հայոց։ Հակառակութիւն Յունաց. բողոք նոցին առ Հիւպատոսն Ռուսաց։ Պատճէն թղթոյ Հիւպատոսին. Փոխարքային. Գաւառապետին։ Ժողով Ի դատարանի վասն քննութեան խնդրոց Հայոց և Յունաց. 473

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԾԵ. Շաթը Զաուէ Ալիֆի Էֆենտի. քննութիւն և Իլամ նորա։ Հրովարտակ Լաուենց։ Կործանումն շինուածոց Համբարձման տեղւոյն։ Խաթթի Հիւմայուն Կիւլհանէի։ Գաբրիէլ Եպիսկոպոս Եգիպտոսի։ Պարոք Ճեմարանին Իւսկիւտարի։ Մահ Գաբրիէլ Պատրիարքի։ Հրաբուխ ի Մասիս։ Յայտնութիւն Նշխարաց Աբգոց ի Թարգեարդ. 450

ԾԶ. Ընտրութիւն Զաքարիա Եպիսկոպոսի։ Խնդիր Հայոց վասն եկեղեցւոյն Բեթղեհեմի. քննութիւն նորին և Ս. Յարութեան։ Նորոգութիւն եկեղեցւոյն Բեթղեհեմի ի ձեռն Յունաց։ Բաղդք Հայոց։ Հրովարտակ Աբբային և կարգաւորութիւն խնդրոյ. 512

ԾԷ. Խնդիր բանալեաց արտաքին և ներքին դրանց, զոր ասոմիճանոց Բեթղեհեմի եկեղեցւոյն և չորից սենեկաց ի Ս. Յարութեան։ Բարձումն կանթեղացն Հայոց յեկեղեցւոյն Բեթղեհեմի, և վերստին կախել զՅունացն. 520

ԾԸ. Դռնապանք Ս. Յարութեան։ Վէճ Յունաց վասն եկեղեցւոյն Ս. Յովհաննու։ Կայսերական նշան Ռուսաց և Օսմանցւոց։ Վախճան Զաքարիա Պատրիարքի. 527

ԾԹ. Ընտրութիւն Կիրակոս Եպիսկոպոսի։ Նորոգութիւն Թաշկալաց։ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ։ Լայս ի Ս. Յակոբ։ Քառասնից Աւրն։ Շինութիւն Պաղչայ Թաղին։ Մահ Կիրակոսի։ Ընտրութիւն Յովհաննու Պատրիարքի. 532

Կ. Գործք Յովհաննու։ Վախճան Պօղոս Եպիսկոպոսի։ Խնդիր Ս. Տեղեաց։ Ալֆիֆ Պէյ։ Ժողով ի Ս. Յարութիւն և յապարանս Բդեշխին։ Հրովարտակ Աբբայի ի ձեռս Յունաց. 537

ԿԱ. Մաքսիմիլեան մեծ Դուքսն։ Արեւելեան պատերազմ։ Կռիւ ի Տաճարին Ս. Յարութեան։ Վանք Ռուսաց։ Կոստանդին մեծ Դուքսն։ Կատրած Դատեակոսի։ Վախճան Յովհաննու Պատրիարքի։ Տեղակալ Վրդանէս վարդապետ։ Յակոբ Պատրիարք։ Ընտրութիւն Եսայեայ վարդապետի. և վերջ. 545

ՊԵՏ ԿԱՌ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՍՐ-ԱՄ ՍՍՀ
Ա. ԳԱՄ Մասնաճյուղ
Ս. ՍՊԱՍԿԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0408862